ՐԱՖՖԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՐԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

տասներկու հատորով

Խմբագրական կազմ

Թոփչյան Ստ. Է., Խանզադյան Ս. Ն.,
Հակոբյան Պ. Հ., Պետրոսյան Վ. Հ.,
Ջրբաշյան Էդ. Մ., Սամվելյան Խ. Ե.,
Սարինյան Ս. Ն., Ֆելեքյան Հ. Հ.

ԵՐԵՎԱՆ

ՐԱՖՖԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր ութերորդ

ՍԱՄՎԵԼ

A 74390

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», 1986

Բնագիրը հրատարակության պատրաստեցին
Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ և Մ. ԸՐՂԱԹԲԱՇՅԱՆԸ

Ծանոթագրեց
Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Հատորի խմբագիր՝
Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

ՐԱՖՖԻ

Երկերի ժողովածու 12 հատորով /Խմբ. կոլեգ.՝ Թոփչյան Ստ. Է. և ուրիշ.— Եր.: Սովետ. գրող. վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Աբեղյանի անվ. ինս-տ.: Հրատ. է 1983 թ.:

Հ. 8. Սամվել: 1986 /Բնագիրը պատրաստեցին Գ. Գասպարյանը, Մ. Ըրղաթբաշյանը, ծանոթագր.՝ Գ. Գասպարյանի: Հատորի խմբ.՝ Սարինյան Ս. Ն.— Եր.: «Սովետ. գրող»: 608 էջ:

Հատորում զետեղված է «Սամվել» պատմավեպը:

Ր $\frac{4702080100(520)}{705(01)86}$ 77.86 «Տ»

© *«Սովետական գրող» հրատարակչություն, խմբագրելու և ձևավորման համար, 1986*

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է։ Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել է և որպես գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորությունները, պատկերացնում է նրա մտավոր ու բարոյական հատկությունները, մի խոսքով, ներկայացնում է հնադարյան մարդուն յուր բուն, նախնական կերպարանքով, որը ժամանակների ընթացքում փոխվել և ներկա սերնդի համար մոռացվել էր։

Գրելով «Սամվելը», ես նպատակ եմ ունեցել ներկայացնել մի այդպիսի նկարագիր մեր պատմական անցյալից։

Պատմական վիպասանին նյութ է մատակարարում ինքը պատմությունը և այն հիշատակարանները, որ պահել են իրանց մեջ անցյալի հիշատակները և ավանդել են ապագա սերնդին։

Բայց ի՞նչ է տալիս հայ վիպասանին հայոց պատմությունը։

Մենք կարդում ենք նրա մեջ մեր թագավորների, մեր իշխանների անունները, ծանոթանում ենք նրանց ներքին կռիվների ու արտաքին պատերազմների հետ, գիտենք, թե որը որքան տարի տիրեց, կամ ինչ լավ և ինչ վատ գործեր կատարեց,— այդ բոլորը գիտենք մենք։ Բայց թե ինչպե՞ս էր կազմակերպված նրանց ընտանեկան կյանքը, ի՞նչ սովորություններ ունեին, ինչպե՞ս էին հագնվում, ի՞նչ տեսակ տների մեջ էին ապրում, մի խոսքով, իբրև մարդ, նրանց ընտանեկան և հասարակական կենցաղավարության մասին՝ մեր պատմությունը, եթե չասեմ խուլ, կարող եմ ասել մեծ մասամբ լռում է։

Բայց վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանքը յուր

բոլոր երևույթներով, և ոչ թագավորների կամ իշխանների աշխարհակալության կամ պարտության չոր ու ցամաք տարեգրությունը։

Մեր պատմության մեջ գրեթե բոլորովին մոռացված է ամբոխը: Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ, որ յուր տները, հանդեսները և ցնծությունները ուներ, և որի հոգեկան և բարոյական հակումները արտահայտվում էին այս և այն հասարակության երևույթների մեջ։— Մեր պատմության մեջ ժողովուրդը չկա, կան միայն տիրապետողներ։ Մենք չգիտենք, ինչպե՞ս էր ապրում հայոց շինականը, ի՞նչ տեսակ հարաբերությունների մեջ էր յուր տերերի հետ, կամ ի՞նչ էր ուտում և ի՞նչ էր հագնում, և ի՞նչ տեսակ զվարճություններ ուներ։ Մենք չգիտենք, թե ի՞նչ էր շինում հայոց արհեստավորը, ո՞ր երկրների հետ առևտուր ուներ հայոց վաճառականը, կամ ի՞նչ տեսակ անասուններ էր սնուցանում հայոց խաշնարածը։ Մեր պատմությունը լուռ է այդ բոլորի մասին։ Բայց վեպի համար դրանք կարևոր են։

Մեր պատմության մեջ մոռացված է և մեր ժողովրդի մի նշանավոր տարրը— կինը: Մենք ծանոթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն, իսկ նրանց կյանքը յուր բոլոր մանրամասներով մեզ անհայտ է: Ի՞նչ էր հայ կինը, որպես ամուսին, ի՞նչ էր նա, որպես մայր, ի՞նչ դեր էր խաղում, որպես ընտանիքի և հասարակության անդամ,— այդ մենք չգիտենք։ Մենք չգիտենք նաև, թե ինչպես էր հայտնվում նա ժողովրդական տոների և հանդեսների մեջ, կամ ո՞ր աստիճան մասնակցում էր նրա ուրախություններին և տրտմություններին։ Իսկ առանց կնոջ վեպ կարող չէ լինել. կինն է նրա ոգին և կենդանությունը։

Եվ այդպես, մեր պատմությունը, իբրև չոր ու ցամաք տարեգրություն, խիստ նվազ նյութ է տալիս մի վիպասանի, որով կարող լիներ նա նկարել անցյալի ճիշտ պատկերը յուր բոլոր երևույթներով։

Ինչ որ թերի է թողել պատմությունը, կարող էին լրացնել բանաստեղծական գրվածքները, եթե մեզ հասած լինեին։ Բայց մենք չունենք ո՛չ Էսքիլեսի և Սոֆոկլեսի ողբերգությունները, և ո՛չ Հոմերոսի և Վիրգիլիոսի դյուցազնական հայրերգությունները։ Մեր հին գրականությունը դուրս չեկավ եկեղեցական շրջանակից։ Մեր հեղինակները գրեցին մեկնության ստվար գրքեր, հռետորական ճառընտիրներ, գրեցին փիլիսոփայական և աստվածաբանական աշխատություններ, բայց ո՛չ մի վեպ, ո՛չ մի դրամա կամ կոմեդիա չտվեցին մեզ։

Մի հին գրականության մեջ, թեև կյանքի և սովորությունների, ընտանեկան և հասարակական կազմակերպության լիակատար նկարագիր-

ներ չկան, բայց կան հազիվ նկատելի նշմարներ, փոքրիկ բեկորներ, որոնք ի մի ամփոփելով, պարզելով և դասավորելով, կարելի էր, եթե ոչ բոլորովին ամբողջական, գեթ մասնավոր գաղափար կազմել պատմական հայի կյանքի մասին։

Այդ աշխատանքը պետք է մեր արդի հնախոսության գործը լիներ։ Բայց մեր հնախոսությունը այդ մասին դեռ շատ աննշան գործ է կատարել։ Մեր հնախոսությունը դեռ չէ դուրս եկել այն նեղ, սահմանափակ շավիղից, ինչ շավիղով որ ընթացել է պատմությունը։ Պատմությունը խոսում է միայն թագավորների, իշխանների և հոգևորականության մասին, հնախոսությունը նույնպես զբաղված է նրանցով։ Մեր հնախոսության մեջ կյանքի քննադատությունը, յուր բոլոր երևույթներով, խիստ աննշան տեղ է բռնում։ Կարդալով Ինճիճյանի երեք պատկառելի հատորները, չէ կարելի մի պարզ հասկացողություն կազմել նախնական հայի կրոնի, պաշտամունքների, սովորությունների և ծեսերի մասին,— չէ կարելի տեղեկանալ, թե ինչպե՞ս էր ապրում հայը յուր տան մեջ և հասարակության մեջ։

Այդ բոլորից հետո, ինքնըստինքյան հասկանալի է, թե ո՛րքան դըժվար է հայ վիպասանի համար պատմական վեպ գրել։ Թե հին և թե նոր գրականությունը նրա համար բավականացուցիչ նյութ չէ պատրաստել։ Նա ինքը պետք է բոլորը ուսումնասիրե, նա ինքը պետք է բոլորը պատրաստե։ Բայց որտեղի՞ց։

Արդյոք ունե՞նք մի մուզեում, որտեղ հայ վիպասանը մտնելով տեսներ, թե ի՛նչ տեսակ զգեստ ունեին նախնի հայերը, ի՛նչ տեսակ զարդեր ու զենքեր ունեին, կամ ի՛նչ տեսակ տնային կարասիք էին գործածում։ Արդյոք մենք ունե՞նք մեր հին արձանները, մեր հին նկարները։— Ոչինչ չունենք։ Իսկ այդ բոլորը պետք են պատմական վեպի համար։ Եթե Վալտեր Սկոտը և Էբերսը գրեցին գեղեցիկ պատմական վեպեր, որոնց մեջ յուր բոլոր մանրամասներով պատկերանում է վաղեմի մարդու կյանքը,— այդ հաջողությունը պետք է վերաբերել ո՛չ այնքան նրանց տաղանդին, որքան նյութերի այն առատ պաշարին, որ պատրաստել էր նրանց համար նախընթաց գրականությունը։ Այդ երջանիկ վիպասաններին մնում էր միայն օգուտ քաղել արդեն պատրաստի նյութերից։ Բայց հայոց դժբախտ վիպասանը ի՞նչ ունի։ Նա պետք է ուժ տա յուր երևակայությանը, իսկ լոկ երևակայությունը մի ճիշտ պատմական վեպ նկարել չէ կարող։

Մեր գրականության չքավորության մեջ, անհրաժեշտ նյութերի պակասության մեջ, խոստովանվում եմ, որ իմ կողմից մեծ վստահություն էր՝ ձեռնարկել մի վեպ գրել, որ նա պատմական ճիշտ նշանակություն

ունենար։ Բայց «Սամվելը» վաղուց իմ մտածությունների առարկան էր դարձել։ Խրախուսվելով այն գաղափարով, թե ո՛րքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլությունները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սխալներից,— այդ միտքը քաջալերեց ինձ։ Ես սկսեցի գրել։ Բայց թե ի՛նչ աղբյուրներից եմ օգուտ քաղել, ավելորդ չեմ համարում բացատրել իմ ընթերցողներին։

Նախ, ես օգուտ եմ քաղել այն հիշատակարաններից, որքան հաջողվել է ինձ գտնել մեր ազգային և օտարազգի գրականության մեջ։ Երկրորդ, իմ ճանապարհորդությունների ժամանակ, ես օգուտ եմ քաղել ներկա հայի կյանքից, այն չափով միայն, ինչ չափով պահպանվել է նա յուր նախնական ձևի մեջ։ Եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենոփոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապատ նավակները Եփրատ գետի վրա, ինչո՞ւ պետք է չմտածել, որ դեռ շատ բան չէ փոխվել հայոց աշխարհում։ Նոր քաղաքակրթությունը կարող էր ոչնչացնել, ինչ որ նախնական էր, ինչ որ հին դրոշմ էր կրում։ Բայց Հայաստանում դեռ մնացել են այնպիսի առանձնացած տեղեր, ուր ժողովուրդը դեռ ապրում է յուր վաղեմի ավանդական սովորություններով։ Այդ տեղերը ես առիթ եմ ունեցել տեսնելու և նրանց կյանքը ուսումնասիրելու։

Համարելով հայերին միևնույն ցեղին պատկանող և ոչ այնքան տարբեր կյանքով ապրող մի ժողովուրդ, որպիսին էին հին պարսիկները և և մեդացիները, ես առել եմ շատ բան պարսիկների և մեդացիների կյանքից, իհարկե, զանազանելով, ինչ որ ազգային առանձնահատկություն է և ինչ որ օտարամուտ է։

Հայոց կյանքի և սովորությունների վրա ոչ սակավ ազդեցություն են գործել և այն մեծ գաղթականությունները, որ հին դարերում կա՛մ ինքնակամ եկել են և կա՛մ իբրև գերի բերվել են Հայաստան։ Դրանցից մեծ տեղ են բռնել քաղդեացիք, ասորեստանցիք, պարթևները, հնդիկները, ճենացիք և հրեաները։ Ես ի նկատի եմ ունեցել և դրանց սովորությունները։

Այդ բոլորը բացատրված է առանձին ծանոթություններով, որ կցված է գրքիս վերջում։

«Դավիթ Բեկից» և «Պարույր Հայկազնից» հետո, «Սամվելը» իմ երրորդ պատմական գրական փորձն է։ Այդ վեպի նյութը առնված է մեր պատմության Դ-րդ դարու անցքերից։

ՐԱՖՖԻ

364·400

«Այնուհետեւ Վահանն Մամիկոնեան եւ Մեհրուժանն Արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեան, եւ զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին. սկսան այնուհետեւ յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից... Ատրուշանս շինէին ի քաղաքս տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց... եւ զորդիս եւ զազգայինս իւրեանց տային յ ո ւ ս ո ւ մ ն Մազդեզանցն: Այս որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, եւ զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին»:

ՓԱՒՍՏ. ԲԻՒԶԱՆԴ. Դ-րդ դպր. գլ. ԾԹ.

«Յետ մահուանն Արշակայ զումարեաց Շապուհ զօր բազում ի ձեռն Մեհրուժանայ (Արծրունւոյ) և արձակեաց ի Հայս... Եւ տուեալ նմա կին զքոյր իւր զՈրմիզդուխտ... Եւ խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով՝ ի դեն Մազդեզանց զաշխարհս դարձուսցէ: Որոյ յանձն առեալ եւ եկեալ... Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել... Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, եւ հրաման տայր մի ուսանիլ զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ. եւ մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել... Զի յայնժամ գիր դպրութեան հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք»:

ԽՈՐԵՆԱՑԻ. Հատ. Գ-րդ. գլ. ԼԶ.

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ի Ր Ք

Ա․

ԵՐԿՈՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ

Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե[1] լեռան ետևում, և Տարոնը[2] ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ։ Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երևում։ Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուռ և Նեմրութ[3] լեռների կողմերը և, այնտեղ կուտակվելով, թանձրանալով, միգային-սև կերպարանք էին ստանում։ Այդ կողմից երբեմն փայլատակում էր կայծակը, և լսելի էր լինում որոտման խուլ գլորյուն, որ գուշակում էր հորդ անձրև։

Գիշերային այդ տագնապալի պահուն երկու ձիավորներ անցնում էին Մուշի դաշտով[4]։ Նրանք գալիս էին հեռվից, շատ հեռվից։ Մի ամիս առաջ դուրս եկան Տիզբոնի[5] երկաթյա քաղաքադռնից, անցան Խուժիստանի անապատները[6], անցան Ասորեստանը[7], անցան Հայկական Միջագետքը[8] և մի օր առաջ ոտք դրեցին Մուշի դաշտի վրա։ Դրանք երկու սուրհանդակներ էին։

Երկու սուրհանդակներից մեկի ձին սևագույն էր, մյուսինը՝ կապուտակ։ Կապուտակ ձիավորը առաջինի ուղևորության մասին տեղեկություն ուներ, ամենայն զգուշությամբ հետևում էր նրան և երբեք յուր նկատողությունից բաց չէր թողնում։ Իսկ առաջինը չգիտեր, որ իրան հետևում են։ Այդ էր պատճառը, որ նրանք, երկու մոլորակների նման, թեև գնում էին միևնույն ուղղությամբ, բայց այնպիսի զուգահեռական գծերով, որ բնավ միմյանց չէին հանդիպում։ Երկուսն էլ ճանաչում էին միմյանց։

Նրանք արդեն հասել էին Արածանիի[9] ափերին։

Կապուտակ ձիավորը այստեղ կանգ առավ։ Նա նայեց դեպի երկինքը, նայեց դեպի յուր շուրջը։ Կամենում էր գիտենալ, թե ո՛րքան ժամանակ էր մնացել, մինչև լույսի բացվիլը։ Ոչ մի աստղ ցույց չտվեց նրան գիշերային ժամը։ Ամեն ինչ խորասուզված էր անվերծանելի մթության մեջ։

Բայց պետք էր շտապել…

Երկու մտածություններ մի քանի րոպե պահեցին նրան անվճռականության մեջ. գետո՞վ անցնել, թե՞ կամուրջով[10] գնալ։ Կամուրջով— դա շատ հեռու կտաներ և գուցե կհանդիպեր Նրան… և գուցե կբռնվեր կամուրջի գիշերային պահակներից… Վճռեց անցնել գետով։

Հեզ և արծաթափայլ Արածանին գարնանային հեղեղներից կատաղել էր և պղտոր հորձանքներով ծածկել էր յուր ափերը։ Բայց մեր ուղևորը ծանոթ էր նրա ծանծաղուտների հետ։ Նա ցած իջավ ձիուց, ձեռքով փայփայեց յուր կապուտակի գեղեցիկ բաշը, փոքրիկ գլուխը, ասելով. «Դու քաջությամբ կտրեցիր Տիգրիսի ահռելի ալիքները, այժմ հայրենի երկրի Արածանին ինչո՞ւ պետք է վախեցնե քեզ»։ Նա ձիու սանձը հանեց բերանից, որ լողալու միջոցին ազատ շունչ առնե, նստեց և, երեսը խաչակնքելով, քշեց դեպի գետը։

Գետը, մի ահագին վիշապի նման, գոռում էր, գոչում էր։ Գիշերային մթության մեջ՝ նրա պղտոր հոսանքը ավելի մռայլ կերպարանք էր ստացել։ Ձին, ամբողջ մարմնով խորասուզված ջրի մեջ, միայն գլուխը վեր բարձրացրած, մռնչելով և փնչալով, պատերազմում էր ալիքների հետ։ Նրա ոտները հատակին չէին դիպչում, անցնում էր լողալով։ Ձիավորը սանձի փոխարեն բռնած ուներ նրա բաշից, և ձեռքով ուղղություն էր տալիս ընթացքին։ Մի քանի պտույտների մեջ՝ թե ձին և թե ձիավորը սկեցին ջրի տակ։ Կրկին դուրս հայտնվեցան։ Երբեմն անցնում էին նրանց մոտով ծառի կոճղներ, գերանի կտորներ, որ ծփալով տարվում էին կոհակների հետ։ Ձիավորը շտապում էր խույս տալ դրանցից։ Բայց ահա՛ հեռվից մի ինչ-որ որոտում էր։ Տագնապը մոտենում էր։ Ձիավորը չկորցրեց յուր սառնասրտությունը և խորին ուշադրությամբ նայեց դեպի այն կողմը։ Մի մթին, անորոշ կույտ լողում էր ջրի երեսին։ Որքան մերձենում էր, այնքան աճում էր նա, այնքան սոսկալի ձև էր ստանում։ Կարծես մի ամբողջ բլուր դանդաղ ընթացքով շրջում էր գետի վրա։ Մերթ անհայտանում էր նա, մերթ երևան էր գալիս ավելի ահագին կերպարանքով։ Ձիավորը հասկացավ նրա ինչ լինելը։ Նա մի ակնթարթում ձիու թամբից սողաց դեպի գավակը, որ նրա բեռը

թեթևացնել։ Բանից ադիից, սկսեց շտապեցնել նրան։ Օրհասական ժամը մոտենում էր, քանի որ թանձր, այլանդակ հրեշի նման մոտենում էր մթին կույտը։ Նրա որոտը խլացնում էր ամեն ձայն։ Պետք էր փախչել նրանից, եթե ոչ, մի թեթև տաշեղի նման յուր հետ կտաներ թե ձիուն, թե ձիավորին։ Ձին անգամ զգաց մոտալուտ վտանգը և կրկնապատկեց յուր ուժերը։ Անհնարին արագությամբ կտրում էր նա կոհակները։ Հրեշը անցավ։ Դա ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ մերձակա անտառների մի մասը, որ հեղեղը արմատախիլ անելով, յուր պտույտների մեջ կծկել էր, գալարել էր, և մի աննման այլանդակ գունդի ձև էր տվել։

Ձիավորը կրկին անգամ զոհությամբ երեսը խաչակնքեց, երբ ոտք դրեց ցամաքի վրա։

Նա յուր հաղուստը քամեց, ցամաքացրեց, հետո սանձը դրեց ձիու բերանը, և շարունակեց ճանապարհը, ինքը գնալով ոտով, իսկ ձիուն յուր ետևից քարշ տալով, որ փոքր-ինչ հանգստանա։ Բայց ձին դժվարությամբ էր հետևում նրան։ Որքան նա ջրի մեջ արագընթաց էր, այնքան ցամաքի վրա դանդաղոտ դարձավ։ Տերը վերաբերում էր այդ նրա հոգնածությանը։

Գետեզերքից բավական հեռանալով, այժմ մոտեցավ նա Քարքե լեռան բարձրավանդակներին։ Ճանապարհը զառիվեր էր, ոլորվում էր սարերի լանջաց վրայով, իջնում էր խորին ձորերի, փապարների մեջ, և դարձյալ բարձրանում էր բլուրների վրա։ Նա ծանոթ էր այդ անտառապատ լեռների հետ, գիտեր նրանց դժվարին անցքերն ու շավիղները, երեխայությունից սովել ու մեծացել էր այդ խոնավ ծմակների մթության մեջ, ուր ցերեկի լույսը երբեք չէր թափանցում։ Նա ապառաժների ու անտառների որդի էր[11]։

Կայծակը շանթեց մոտակա ծառերի կատարներին և մերձակայքը լուսավորվեցավ բաց-վարդագույն փայլով։ Որոտի ձայնը ահեղ դղրդյունով տարածվեցավ մթին ձորերի մեջ։ Ուղևորը նայեց դեպի ամպամած երկինքը և շտապեցրեց յուր քայլերը։ Նա չվախեցավ գետից, բայց վախենում էր փոթորիկից։ Փոթորիկը մեծ արհավիրք է գործում այդ կուսական անտառների մեջ, մանավանդ գիշերային պահուն։ Ժայռերի բարձրությունից խլում է նա ոլորված, մերկարմատ ծառերը և նետում է ճանապարհի վրա։ Ծառերի հետ փուլ են գալիս և քարերի ահագին բեկորներ։ Ամեն մի ճանապարհորդ կանհետանար այդ փլատակների տակ, եթե դժբախտություն ունենար հանդիպելու։

Կրկին լսելի եղավ որոտման ահեղ դղրդյունը, և նրա հետ անձրևի խոշոր կաթիլները սկսեցին մաղվել երկնքից։ Քամին մռնչում էր, և անձրևային տարափը, կարկուտի գնդակների նման, զարկում էր նրա

բորբոքված երեսին։ Բայց նա ոչինչ չէր զգում։ Նրա միտքը, նրա զգացմունքները լարված էին դեպի մի նպատակ, որ կլանել էր նրա ամբողջ գոյությունը, որ ամենայն եռանդով առաջ էր մղում նրան, որպես մի մարմնացած փութաջանություն։ Նա շտապում էր մի քանի ժամ առաջ տեղ հասնել, քան կհասնեին սև ձիավորները։

Բայց ձին դժվարությամբ էր հետևում նրան։ Այժմ միայն նկատեց, որ ետևի ոտքից կաղում էր նա։ Անշուշտ դեպի հոսանքի հետ տարվող կոճղերից մեկը դիպչելով, վնասել էր նրան։ Այդ դեպքը սաստիկ վրդովեցրեց անվեհեր ուղևորին։ Նա շտապում էր։ Իսկ այժմ զրկվեցավ յուր սրընթաց երիվարից։ Ի՞նչ պետք էր անել։ Թողնե՞լ նրան և այնպես ոտքով շարունակել ճանապարհը։ Բայց ինչպես թողնել այն սիրելի նժույգին, որը այնքան տարիներ թե պատերազմի դաշտում, թե յուր ճանապարհորդությունների ժամանակ լավ ընկեր էր եղել նրա հետ։ Մի քանի րոպե մնաց նա մտածության մեջ։ Հետո թողեց մեծ ճանապարհը, բռնեց մի շավիղ, որ տանում էր դեպի Աշտիշատի վանքը[12]։

Վանքը շատ հեռու չէր այնտեղից. մեկ ժամից հետո հասավ նա։ Դարեր, նվիրական ծառաստանի խորքում, վաղեմի սրբազան բարձրությունների վրա, հանգչում էր Տարոնի այդ հին սրբավայրը, յուր վսեմ, մեծափառ վեհության մեջ։ Պատսպարված բարձր շրջապարիսպներով և բրգաձև աշտարակներով, գիշերային մթության մեջ ներկայանում էր նա որպես մի անմատչելի ամրոց։ Կատաղի մրրիկը, քամու մռնչյունը, անձրևի տարափը չէր վրդովեցնում նրա խաղաղ բարեպաշտական նիրհը։

Շրջապարիսպներից դուրս, մի առանձին շինվածքի նեղ լուսամուտից լույս էր երևում։ Ուղևորը դիմեց դեպի այն կողմը, մոտեցավ փակ դռներին։ Այստեղ, դռան մի կողմում, փայտյա սյունից քարշ էր ընկած մի տախտակ, իսկ սյունի պատվանդանի մոտ դրած էր նույնպես փայտյա փոքրիկ օթակ։ Ուղևորը վեր առեց օթակը, երեք անգամ զարկեց տախտակի վրա։ Կոչնակի ձայնից լուսամուտը բացվեցավ, մեկը ներսից քնաթաթախ գլուխը դուրս մեկնեց և վերևից հարցրեց.

— Ո՞վ ես։

— Ճանապարհորդ եմ,— եղավ պատասխանը։

Վանքի պարիսպներից դուրս, այդ շինվածքը տարաժամ ճանապարհորդների, օտարականների և պանդուխտների օթևան էր։ Դռնապանը բավականացավ ուղևորի պատասխանով, բաց արեց դռները և ճրագը ձեռին հայտնվեցավ սյամի վրա։

— Դու բոլորովին թրջված ես,— ասաց նա մի առանձին հոգատարությամբ,— ներս համեցիր, ես իսկույն կրակ կվառեմ, քո հագուստը չորացրու։

— Շա՜տ շնորհակալ եմ քո բարեսրտության համար,— պատասխանեց ուղևորը,— բայց ես կխնդրեի քեզանից ընդունել ձեզ մոտ, որպես հյուր, իմ ձիուն միայն։

— Ինչո՞ւ քո ձիուն միայն,— հարցրեց դռնապանը զարմանալով։

— Նա կաղում է, վնասել է ոտքը... իսկ ես պետք է շարունակեմ իմ ճանապարհը։

— Գոնե ներս մտիր, մի փոքր տաքացիր, ես իսկույն կրակ կվառեմ։

— Չեմ կարող... ես շտապում եմ...— պատասխանեց ուղևորը և մոտեցավ ճրագին։

Նա ծոցից հանեց յուր սանրը, որ կիսալուսնի ձև ուներ, շինված էր գոմեշի եղջյուրից, և ցույց տալով դռնապանին, ասաց.

— Ճանաչի՛ր այդ սանրը, մի կողմի երկու ատամները կոտրած են, եթե ես չվերադարձա, ով որ քեզ ցույց տալու լինի, ձին նրան կհանձնես։

— Իսկ դու ո՞վ ես,— հարցրեց դռնապանը, փոքր-ինչ կասկածելով։

— Ես զինվոր եմ...— պատասխանեց ուղևորը։

Դռնապանը բավականացավ ուղևորի անորոշ պատասխանով, որովհետև այդ տագնապալի ժամանակներում զինվորի հետ շատ հեռուն գնալ՝ փոքր-ինչ դժվար էր։

Ուղևորը բաց արեց ձիու թամբին կապած ճանապարհորդական թեթև խուրջինը, ձգեց յուր ուսին և, բարի գիշեր ասելով, հեռացավ։

Դռնապանը, ճրագը ձեռին, դեռ կանգնած սյամի վրա, ապշությամբ նայում էր նրա ետևից, մինչև անհայտացավ գիշերային խավարի մեջ։ Քամու մռնչյունը խլացրեց նրա վերջին քայլերի ձայնը։

Հեռանալով վանքից, ուղևորը բռնեց այն ճանապարհը, որ տանում էր դեպի Ողական ամրոցը[13]։

Բ

ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ

Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առավոտը։ Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մնում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով։ Սար ու ձոր, դար ու դաշտ պատած էր անթափանցելի մառախուղով։ Օդի մեջ լողացող ջրային շիթերը, արեգակի առաջին ճառագայթներից, վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման։ Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների

նախշուն ծաղիկները, ցողված անձրևային կաթիլներով, կարծես սփռված լինեին գույնզգույն գոհարներով։

Այդ գեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի, հանդիսավոր առավոտներից մեկը, երբ Աստղիկը, Տարոնի դիցուհին[1], դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից[2] և, շրջապատված յուր անթառամ նաժիշտներով, իջնում էր Քարքե լեռան բարձրություններից Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու։ Այդ միջոցին հայոց երիտասարդ դյուցազունները թաքչում էին Աշտիշատի դիցանվեր անտառի մթին ծառաստանի մեջ, հեռվից դիտելու գեղեցիկ աստվածուհու լոգարանը։ Բայց Աստղիկը Մուշի ամբողջ դաշտը վարագուրում էր մառախլապատ մշուշով և յուր լոգարանը անտեսանելի էր կացուցանում անհամեստ հետաքրքրությունից[3]։

Վաղորդյան մառախուղը հետզհետե նոսրանում էր, նրբանում էր, որքան արեգակը բարձրանում էր հորիզոնի վրա։ Այժմ մշուշի միջից, որպես թափանցիկ շղարշի միջից, սկսվեցան նկարվել հեռավոր պատկերները։ Երևում էր Սիմ լեռան[4] կանաչազարդ շղթան, մեղմ ալիքներով և ձյունապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթների առջև փայլում էին վարդագույն ներկով։ Իսկ ավելի հեռու, դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը, մանիշակագույն ժապավենի նման, երևում էր Բզնունյաց ծովակի[5] միայն նեղ շերտը։ Երևում էին Քարքե լեռան բարձրությունները իրանց մթին ծմակներով և մայր անտառներով, որոնք իրանց անմատչելի թավուտների մեջ սնուցանում էին մի մայր ժողովուրդ[6]։ Հիշյալ լեռների հսկայական շրջանակի մեջ, որպես մի սքանչելի պատկեր, երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը, հարթ, հավասար, իբրև մի լայնածավալ, նախշուն գորգ։ Այդ կանաչազարդ գորգի վրա սփռված էին Տարոնի բազմաթիվ գյուղերը, ավանները, հոյակապ քաղաքները։ Ահա՛ Մուշը[7] խորին պատկառանքով բազմած է Տավրոսի[8] լանջաց վրա։ Ահա՛ Մեղտի գետի[9] օձապտույտ ափերի մոտ երևում են Օձ[10] քաղաքի բարձր աշտարակները։ Ահա՛ Վիշապ քաղաքը[11], վիշապի լայն բերանի պես բացված ահարկու դռներով։ Ահա՛ Կավկավ քաղաքը... Ահա՛ սպիտակ Ձյունակերտը[12]...

Արածանին կես է կիսում Մուշի լայնատարած դաշտավայրը։ Նրա արգավանդ ափերի մոտ, բացի բնիկներից, ապրում էր մի ժողովուրդ, որ ասպնջականություն էր գտել այստեղ Գանգեսի ափերից[13], և հնդիկ ժողովրդի արորի խունկը փայլում էր հայոց արեգակից, և հնդիկ հերկավարի հայկական երգը հնչեցնում էր Տարոնի լուսապայծառ առավոտի լռությունը։

Արածանիի ափերի մոտ ապրում էր և մի այլ ժողովուրդ, որ հյուրասիրվել էր այստեղ Գանգեսի ափերից[14], և դեղնակաշի սինեացին, բոլորովին հայկական դեմք ստանալով, մշակում էր Հայոց երկիրը։ Նրանց բազմաթիվ անասունները արածում էին Արածանիի շամբուտ ափերի մոտ, նրանց գեղեցիկ կանայքը բորոցներով «որդան կարմիր[15]» էին հավաքում կանաչ, ցողազարդ մարգագետիններից, որ իրանց նուրբ ձեռագործներով զարդարեն Հայոց իշխանուհիների ապարանքները[16]։

Զայրացած է այս առավոտ Արածանին։ Բայց նրա զայրույթը մայրական է, չի վախեցնում հարազատ որդուն։ Ահա նրա զորեղ կոհակները տանում են իրանց հետ մի ամբողջ նավատորմիղ — նախնական մարդու նավատորմիղը։ Բարեկամները ափերի մոտ կանգնած՝ «հաջողություն» են բարեմաղթում։ Նավորդները գետի միջից «մնաք բարյավ» են ասում։ Եվ թեթև մաշկապատ նավակների խումբը[17], բեռնավորված Հայոց երկրի բարիքներով, լողում է դեպի հեռավոր աշխարհ, դեպի Բաբելոն։ Նավորդների երգը, նրանց ուրախաձայն աղաղակները, միախառնվելով գետի խուլ որոտման հետ, թնդեցնում են շրջակայքի խորին անդորրությունը։

Մուշի դաշտավայրը, չորեքկողմից շրջապատված լինելով բարձր լեռներով[18], այդ բնական ամրությունները, հսկայական շրջապարիսպի նման, պաշտպանում էին երկիրը թշնամու հարձակմունքներից։ Բացի բնական ամրություններից, նույն լեռների բարձրավանդակների վրա դրած էին Տարոնի իշխանների անմատչելի բերդերը և նրանց ահռելի ամրոցները, որպիսիք էին՝ Եղնուտը, Մեծամոր ամրոցը, Աստղաբերդը, Այծից բերդը և Ողականը[19]։

Աշտիշատի վանքից շատ հեռու չէր Ողական ամրոցը. նա կանգնած էր Քարքե լեռան ապառաժների վրա և խրոխտ, վեհապանծ դեմքով նայում էր դեպի յուր ստորոտով հոսող Արածանին։ Զանազան գաղտնի անցքեր, ստորերկրյա ճանապարհներով, իջնում էին ամրոցի բարձրությունից կամ դեպի գետը, պաշարման ժամանակ ջուր ստանալու համար, և կամ տանում էին դեպի անտառի խորքերը, դրսի հետ գաղտնի հաղորդակցություն ունենալու համար։ Այդ անցքերի մուտքերը հայտնի էին միայն ամրոցի տերերին։ Ամրոցի բարձր շրջապարիսպը, ահագին բուրգերը, բարձր աշտարակները դարերով մարտնչում էին բնության արհավիրքի և թշնամու հարձակման դեմ, և միշտ մնում էին անպարտելի։ Նա հովանավորված էր հին, հսկա կաղնիներով, որոնց վերամբարձ կատարները մրցում էին ամպերի հետ։

Այդ ամրոցը ամենահին ժամանակներում, Քրիստոսից շատ դարեր

A 74390

ՀՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ

առաջ, պատկանում էր Սլկունյաց իշխաններին[20], որոնք Տարոնի նախկին տերերն էին։ Իսկ Վաղարշակ Ա-ինի օրերում, Քրիստոսից 150 տարի առաջ, Սլկունիները ավելի նշանակություն ստացան, որովհետև Վաղարշակը, հայոց բոլոր նախարարությունները կարգի դնելով, Սլկունիների քաջ և որսորդության մեջ հաջողակ իշխաններին ևս նախարարության կարգն անցուց և նրանց հանձնեց արքունի որսորդության գլխավորությունը[21]։ Բայց Տրդատի օրերում, 320 թվին Քրիստոսից հետո, Սլկունիները ապստամբվեցան թագավորի դեմ։ Տրդատը խոստացավ, թե Սլկունիների ամբողջ ժառանգությունը, Տարոնը, նրան կնվիրե, եթե մեկը կձերբակալե ապստամբ Սլուկին։ Ճենացի Մամգոն իշխանը հանձն առեց կատարել թագավորի ցանկությունը և դավաճանությամբ սպանեց Սլուկին։ Նրա բոլոր տոհմը սրի ճարակ եղավ Ողական ամրոցի մեջ[22]։ Իսկ Մամգոնը այդ ծառայության համար ստացավ, որպես ժառանգություն, թե Ողական ամրոցը և թե Տարոնը։ Մամգոնից առաջ եկավ Մամիկոնյան մեծ նախարարությունը, որոնք որդոց որդի ժառանգեցին Տարոնը[23]։

Այս առավոտ, դեռ լույսը չծագած, երկու անձինք մուտք գործեցին Ողական ամրոցում։ Մեկը առջևի մեծ դռնից, մյուսը անտառի մեջ թաքնված գաղտնի անցքից։ Առաջինը սև ձիավորն էր, իսկ երկրորդը՝ կապուտակ ձիավորը։

Գ.

ԳՈՒԺԿԱՆ

Ողական ամրոցի սենյակներից մեկի մեջ, թանկագին գորգով պատած գահավորակի վրա, որի երեք կողմը դրած էին շքեղ կերպասներով պատած բարձեր, նստած էր մի երիտասարդ։ Նա, ինչպես երևում էր նրա քնած դեմքից, դեռ նոր էր դուրս եկել յուր քնարանից և դուրս էր եկել յուր զարթնելու ժամից շատ վաղ։ Ոչ հագնվել էր, ոչ լվացվել էր և ոչ սանդրվել էր։ Մի լայն, ասրյա նուրբ վերարկուի մեջ սփածված էր նա, և բաց գլխի երկար գիսակները, գագաթից իջնելով, մեղմ ալիքներով սփռվել էին թիկունքի վրա, և երբեմն սքողում էին նրա գեղեցիկ, գունաթափ դեմքը։ Նրա անհանգիստ մատները անդադար ոլորում էին՝ փոքր-ինչ ուռած, կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը, թեև ոլորելու շատ պաշար չէին գտնում։ Այդ ցույց էր տալիս սրտի խորին խառ-

վությունը։ Իսկ սևորակ, նշաձև աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք։ Քսանհինգ տարեկան հազիվ կլիներ նա, նուրբ կազմվածքով և փոքր-ինչ մույգ-դեղնագույն դեմքով, որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից[2]։

Երիտասարդը Վահան Մամիկոնյանի որդի Սամվելն էր։

Սենյակը, որտեղ նստած էր նա, ներկայացնում էր նրա ընդունարանը։ Հատակը պատած էր նախշուն, բրդեղեն օթոցներով. անկյուններում դրած էին՝ զանազան ձևով, ծանր և թեթև նիզակներ, տեգեր, գեղարդներ, շիշաներ, աշտեններ և երկաթյա ահագին լախտեր[3], բոլորը գեղեցիկ քանդակներով զարդարված, բոլորը ոսկեհուռ դրվագներով ագուցած։ Իսկ սենյակի այն ճակատի վրա, որ կողմը դրած էր նրա գահավորակը, պատի վրա մեխած էր մի լայն վագրի մորթի։ Այդ գազանին նա ինքն էր սպանել որսորդության ժամանակ, երբ դեռ տասնևութ տարեկան էր։ Նրա վրայից բարձ էին ընկած զանազան զենքեր. կապարճ՝ լի նետերով, աղեղ՝ լայնալիճ, տապարներ՝ երկաթյա երկար կոթով, թեթև վահան՝ ուղտի թափանցիկ կաշվից պատրաստված, ծանր ասպար՝ պողպատից շինված և խոշոր կոճակների նման բևեռներով զամված, սաղավարտներ՝ կամ անգղի պես սուր կատարներով և կամ մազե ցցունքներով, զրահ՝ երկաթյա մանր օղակներից գործված, պղնձյա հաստ լանջապան, որի մեջտեղում բարձրաքանդակ գիրքով դուրս էր նայում մի գալարված վիշապ, զանազան թրեր, դաշույններ, վաղրներ՝ երկար և կարճ, ուղիղ և կեռ, միասայրի և երկսայրի, որոնց պատյանները պատած էին ոսկով ու արծաթով, որոնց կոթերը զարդարած էին ականակուռ գոհարներով, և որոնցից շատերը երկաթահատ էին ու դեղած[4]։

Այդ սենյակը ավելի զինարանի նմանություն ուներ, քան թե ընդունարանի։ Երիտասարդ իշխանը սիրում էր իրան շրջապատել այն առարկաներով, որ յուր սրտին շատ մոտ էին։ Միակ առարկաները, որ հիշեցնում էին, թե դա և հյուրանոց էր, էին մի քանի փառավոր բազմոցներ, որ դրած էին պատերի մոտ, պատվավոր հյուրերի համար։

Սենյակի դռները ներսից փակած էին և լուսամուտների ծիրանեգույն վարագույրները, զարդարած ծանր, ոսկեթել ծոպերով, ցած էին թողած։ Մի դուռ միայն բաց էր մնացել, որ տանում էր դեպի քնարանը։ Այդ դռան մոտ կանգնած էր մի տղամարդ, երկու ձեռքերը յուր դաշույնի կոթի վրա դրած։ Նա հագած ուներ սուրհանդակի թեթև զգեստ. մի կարճ մուշտակ, որի մորթեղեն կողմը դեպի ներս, իսկ մաշկեղենը դեպի դուրս էր թողած. մեջքը պնդած էր կաշվյա լայն գոտիով, որ պատել էր կուրծքի մի մասը՝ մինչև փորի ստորին մասները, որպեսզի ձիու սրարշավ ցնցումներից փորոտիքը չխախտվեին։ Կաշվյա նեղ վարտիքը՝ սրունք-

ների վրա՝ ամրացված էր նույնպես կաշվյա լանկապաններով։ Ոտներին հագած ուներ մաշե բարձր տրեխներ, նույնպես մաշե ասկերով[5]։ Գլխին դրած ուներ թաղիքյա բոլորակ գլխարկ, որի վրայի կերպասյա փաթոթի ծայրերը ծածկում էին միրկ պարանոցը և ծածանվում էին լայն թիկունքի վրա։ Նրա տարիքը դեռ չէին անցել երեսունհինգից, բայց կարճ զանգրահեր մորուքի մեջ արդեն նկատվում էին սպիտակ մազեր։ Բնականից թուխ դեմքը ավելի մուգ գույն էր ստացել եղանակների խստությունից և երկար ժամանակ արևի տակ այրվելուց։ Բայց այդ արտաքին դեմքի մռայլ արտահայտությունը մեղմանում էր, պայծառանում էր երկու լուսափայլ աչքերով։

— Ուրեմն քեզ նամակ չտվի՞ն, Սուրեն,— ասաց իշխանը, շարունակելով ընդհատված հարցափորձը։

— Չտվին, տեր իմ,— պատասխանեց սուրհանդակը,— զգուշացան, որ նամակը կարող էր ընկնել ճանապարհին։ Իսկ ես հազիվ կարողացա հասցնել ինձ իմ տիրոջ մոտ, որպես կենդանի նամակ։ Ամեն ինչ պատմեցի ձեզ, դուք այժմ գիտեք բոլորը...

— Բայց դու լավ չբացատրեցիր ինձ, Սուրեն,— հարցրեց իշխանը խռովված ձայնով,— թե ի՞նչը հրապուրեց իմ հորը ուրանալ յուր կրոնը և հանձն առնել մի այդպիսի ամոթալի գործ... Մի՞թե Մերուժան չարագործը խելքից հանեց նրան... Ես Արծրունիներին ճանաչում եմ... նրանք իմ քեռիներն են[6]... փառքի, իշխանության և պատվի համար ամեն սրբություն կվաճառեն նրանք... Բայց իմ հա՜յրը... այդպես չէր իմ հայրը... մի՞թե նա էլ խաբվեցավ...

Վերջին խոսքերի միջոցին երիտասարդի ձայնը սկսեց դողալ, ձեռքը տարավ դեպի ճակատը, գլուխը խոնարհեցրեց և մի քանի րոպե մնաց տխուր մտախոհության մեջ։ Սուրենը խորին ցավակցությամբ նայում էր նրա վրա։ Երբ կրկին գլուխը վեր բարձրացրեց նա, Սուրենը պատասխանեց։

— Չխաբվեցավ, տեր իմ։ Այլ այն օրից, որ ձեր հորեղբորը[7] բերեցին Տիզբոն, և այն օրից, որ Շապուհ արքան[8] այնպիսի չարաչար մահով սպանել տվեց ձեր հորեղբորը,— ձեր հայրը հետամուտ եղավ ստանալ հայոց սպարապետությունը[9]. Շապուհը տվեց նրան այդ, և ձեր հայրը կատարեց Շապուհի կամքը...

— Այժմ հասկանում եմ...— խոսեց երիտասարդը ինքն իրեն։— Պատմի՛ր, Սուրեն, ինչպե՞ս եղավ իմ հորեղբոր մահը։

Սուրհանդակը դժվարանում էր պատմել քաջ հերոսի մահը, որի թիկնապահներից մեկն էր եղել ինքը, որի կռիվների մեջ այնքան երկար

տարիներ մասնակցել էր ինքը։ Բայց երբ երիտասարդը կրկին թախանձեց նրան, պատմեց.

— Ձեզ հայտնի է, տեր իմ, թե որպիսի՜ խաբեությամբ[10] Շապուհ արքան մեր Արշակ թագավորին և ձեր հորեղբորը հրավիրեց Տիզբոն։ Թագավորին երկաթյա շղթաներով աքսորեց Անհուշ բերդը[11]։— Այդ ես պատմեցի ձեզ։— Հետո բերել տվեց ձեր հորեղբորը դահլիճ։ Այն օրը Շապուհի դիվանի ամբողջ հրապարակը[12] լի էր բազմությամբ։ Ներկա էի և ես։ Երբ կանգնեցրին ձեր հորեղբորը դիվանի առջև, երբ Շապուհը նայեց նրա վրա և, տեսնելով անձով փոքրիկ[13], արհամարհանքով հարցրեց.— «Դո՞ւ էիր, որ այդքան տարի կոտորում էիր արիներին (պարսիկներին), դո՞ւ էիր, որ այդքան ժամանակ անհանգըստացնում էիր մեզ»։ Ձեր հորեղբայրը համարձակությամբ պատասխանեց.— «Այո՛, ես էի, արքա»։— «Ավա՜ղ,— ասաց Շապուհը զայրանալով,— ավելի մահով[14] սպանել կտամ քեզ»։ Ձեր հորեղբայրը այսպես պատասխանեց արքայի սպառնալիքին. «Այժմ դու տեսնելով ինձ անձով փոքրիկ, արհամարհում ես. մի՞թե այդքան ժամանակ չհասկացար իմ մեծության չափը։ Մինչև այսօր ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս։ Լսի՛ր, արքա, ես այն Վասակն եմ, որ մի հսկա էի, մեկ ոտս մեկ լեռան վրա էր դրած, մյուս ոտս մի այլ լեռան վրա. երբ աջ ոտիս վրա էի հենվում, աջակողմյան լեռը գետնի տակն էի տանում, իսկ երբ ձախ ոտիս վրա էի հենվում, ձախակողմյան լեռը գետնի տակն էի տանում»։ Շապուհը հարցրեց.— «Ասա՛ ինձ, որո՞նք են այն երկու լեռները, որ դու գետնի տակն էիր տանում»։ Նա պատասխանեց.— «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը[15]։ Քանի որ Հայոց նախարարների մեջ միաբանություն կար, քանի որ նրանք կապված էին իրենց թագավորի հետ, և քանի որ մենք պահում էինք մեր Հայր Ներսեսի[16] խրատները,— այնքան ժամանակ աստված մեզ հետ էր, և մենք կարողանում էինք խրատել մեր աշխարհի թշնամիներին, որոնց թվում և քե՜զ, արքա՛։ Բայց երբ մեր նախարարների երկպառակությունը մատնեց մեր թագավորին քո ձեռքը, այն օրից մենք ինքներս մեր կործանումը պատրաստեցինք... Այժմ, ինչ որ կամենում ես, արա՛, ես պատրաստ եմ, արքա»։ Հրապարակի վրա հավաքված ամբողջ բազմությունը զարմանում էր ձեր հորեղբոր համարձակության վրա, զարմացավ և ինքը՝ Շապուհ արքան և գովեց նրա քաջությունը։ Բայց հետո հրամայեց մորթել նրան, կաշին տիկ հանել, լցնել խոտով և տանել Անհուշ բերդը։ Այնտեղ դրված է նա, իբրև նախատինք, շղթայակապ Արշակ թագավորի աչքի առջև, և դժբախտ թագավորի աչքից արտասուքը չէ պա-

կասում, քանի որ նայում է յուր քաջ, հավատարիմ սպարապետի վրա[17]։

Երիտասարդը, լսելով ցավալի պատմությունը, Թաշկինակը տարավ դեպի լճացած աչքերը և ծածկեց յուր արտասուքը։

— Հերո՞սը հերոսի նման մեռավ,— բացականչեց նա։— Նրա որդին, Մուշեղը[18], կարող է պարծենալ հոր մահով։ Բայց ե՞ս... ես ինչո՞վ կարող եմ պարծենալ... ես պետք է հավիտենական նախատինքի տակ մնամ... Իմ հայրը յուր եղբոր սպարապետությունը ստանալու համար դառնում է նրան սպանել տվող Շապուհի ձեռքում մի անարգ գործիք... և այժմ պարսից զորքով գալիս է ողողելու Հայաստանը արյունով... Թշվա՜ռ եմ ես, թշվա՜ռ... ինչո՞վ պետք է քավեմ այդ նախատինքը...

Արեգակի առաջին ճառագայթները, ընկնելով ծիրանեգույն վարագույրների վրա, լցրին սենյակը ծիրանեգույն լուսով։ Երիտասարդը սակայն նկատեց, որ օրը լուսացել էր։ Նա դարձավ դեպի սուրհանդակը, խոսելով.

— Շնորհակալ եմ, Սաբեն, ես քո ծառայությունը չեմ մոռանա։ Այժմ կարող ես գնալ, քանի որ ամրոցում դեռ քնած են։ Երբ հարկավոր լինես, կրկին կկանչեմ քեզ։

Սաբենը, մինչև հատակը խոնարհվելով, գլուխ տվեց։

— Դու, իհարկե, ձեր տա՞նը կմնաս,— հարցրեց երիտասարդը։

— Ոչ, տեր իմ, ես երդվել եմ իմ կնոջ, իմ զավակների երեսը չտեսնել, մինչև...

Նա չավարտեց խոսքը, բայց երիտասարդը հասկացավ, թե ինչ էր կամենում ասել։ Բարի և քաջ զինվո՜ր, ամբողջ հինգ տարի հայրենիքից տարակա էր նա, ծառայում էր Պարսկաստանի հայկական հեծելազորքի մեջ[19], մասնակցել էր շատ արշավանքների քուշանաց դեմ[20], իսկ այժմ վերադարձել էր յուր հայրենիքը։ Նրա հայրենի ավանը, Խորնին[21], շատ հեռու չէր Ողականի ամրոցից, նա չէր ցանկանում յուր ընտանիքը տեսնել, որովհետև նրան զբաղեցնում էր մի գործ, որ ավելի մոտ էր նրա սրտին, քան թե կինը, որդին, բարեկամը...

— Ուրեմն դու որտե՞ղ կմնաս։

— Աշտիշատի վանքում,— պատասխանեց նա,— այնտեղ չեն ճանաչի ինձ, կմնամ, որպես մի օտարական։ Ես իմ ձին այնտեղ եմ պահ տվել։

Երիտասարդը ցած իջավ պահավորակի վրայից և, ավելի պինդ փաթաթվելով յուր լայն վերարկուի մեջ, անցավ քնարանը։ Սաբենը հետևեց նրան։ Նա մոտեցավ յուր մահճակալին և ձեռքով մի կողմ ծալեց մահճակալի առջև փռած գորգը։ Հետո մատը սեղմեց երկաթյա հավիճ

նշմարվող զսպանակի վրա, իսկույն հատակից տախտակամածը բարձրացավ, և հայտնվեց մի քառակուսի ծակ[22]։

— Դու ծանո՞թ ես այս անցքի հետ,— դարձավ նա դեպի Սուրենը։

— Ինչպես ծանոթ չլինել, տեր իմ,— պատասխանեց Սուրենը մի առանձին զգացմունքով,— այդ սենյակը հանդուցյալ սպարապետի[23] ննջարանն էր. ես դեռ պատանի էի, իմ երեսին մի մազի հետք անգամ չկար, երբ այդ սենյակի հատակը ավլում էի...

Սուրենը մանկությունից սկսել, մեծացել էր այդ ամրոցում։ Մամիկոնյանների գյուղացին լինելով, իբրև մի շնորհալի և մաքուր տղա, նրան բերեցին ամրոցը։ Երբ բավական վարժվեցավ, սենեկապետի պաշտոն էր կատարում։

Երիտասարդը պատուհանից վեր առեց պողպատի կայծհանը, կայծքարը և աբեթը, զարկեց միմյանց, կայծերը ցայտեցին, աբեթը վառվեցավ, նրանով վառեց ծծումբի լուցկին[24], իսկ վերջինով վառեց մոմպատի կծիկը[25] և տվեց Սուրենի ձեռքը, ասելով.

— Դե՛, անցի՛ր։

Սուրենը կրկին անգամ լռությամբ գլուխ տվեց և, յուր սովորության համեմատ, երեսը խաչակնքեց, հետո ցած իջավ քառակուսի նեղ ծակից, որտեղից մի մարդ հազիվ կարող էր անցնել։ Երիտասարդը ցած թողեց տախտակյա փոքրիկ դռնակը և անցքը ծածկեց գորգով։

Այդ ամրոցի հատակի տակ կային բազմաթիվ ստորերկրյա անցքեր, որոնք, ցանցատեսակ լաբյուրինթոսի նման, տանում էին դեպի զանազան կողմեր։ Գլխավոր սենյակները, որոնց մեջ բնակվում էին ամրոցի տերերը, ունեին իրանց առանձին գաղտնի անցքերը, որոնք հատակի խորքերում միանում էին և այդպիսով պահպանում էին հաղորդակցություն թե միմյանց մեջ և թե դրսի հետ[26]։

Դ

ՄԻ ԱՂՈՏ ՄԻՏՔ ԾԱԳՈՒՄ Է ՆՐԱ ՄԵՋ

Սամվելը կրկին մտավ յուր ընդունարանը։

Այս առավոտ այդ կոկիկ, ընդարձակ սենյակը, կարծես, խեղդում էր նրան։ Նա մոտեցավ լուսամուտին, ետ քաշեց ծանր կերպասյա վարագույրը և բաց արեց փեղկերից մեկը, որ փոքր-ինչ թարմ օդ ներս թողնե։ Հետո բաց արեց դռները սպասավորի համար։ Սպասավորի փո-

խարեն ներս մտավ նրա գեղեցիկ, ոսկեզույն բարակը։ Այդ խնկացի անասունը կարծես նախասենյակում սպասում էր դռների բացվելուն։ Նա այն աստիճան քնքուշ և նրբակազմ էր, որ դրսից կարելի էր բոլոր կողքերը համբարել։ Երկար պարանոցի վրա կրում էր արծաթյա օղամանյակ։ Նա մոտեցավ և, կանգնելով հետի թաթիկների վրա, առջևի թաթիկները բարձրացրեց, դրեց յուր տիրոջ կուրծքի վրա, և մի առանձին քաղցրությամբ նայում էր նրա երեսին, աշխատելով գուշակել, թե ինչո՞ւ էր նա այնքան տխուր։ Երիտասարդը ձեռքով փայփայեց նրա սիրուն գլուխը, երկար ականջները, նուրբ դունչը, և բարակը մխիթարվելով այդ փաղաքշանքից, ցած թողեց թաթիկները, հեռացավ սենյակի մի անկյունում և այնտեղ պառկեց, չդադարելով յուր հեզ աչքերով հետևել, թե ո՛րպես յուր սիրելի տերը դանդաղ, անհավասար քայլերով շարունակում էր անցուդարձ անել սենյակի մեջ։

Նրա սիրտը ալեկոծության մեջ էր. երիտասարդական ջերմ արյունը եփ էր գալիս նրա մեջ։ Որքան մտածում էր գալոց աղետների մասին, այնքան չարիքը յուր բոլոր զարհուրանքներով մեծանում էր նրա աչքում։ Հայաստանը մնացել էր բոլորովին անտեր և անպաշտպան։ Հայոց Արշակ թագավորը, երկաթի շղթաների մեջ, հեծում էր Խուժիստանի Անհուշ բերդում։ Հայոց թագաժառանգը, Պապը, յուր կնոջ՝ Զարմանդուխտի և երկու որդիների՝ Արշակի և Վաղարշակի հետ, պահված էին Կ. Պոլսում[1]։ Թագավորին աքսորել էր պարսից Շապուհ արքան, իսկ թագաժառանգին կալանավորել էր հունաց Վաղես կայսրը[2]։ Հայաստանի քահանայապետը, հայրենիքի հզոր պաշտպան Ներսես Մեծը, նույն կայսրի հրամանով աքսորված էր Պատմոս անբնակ կղզում[3]։ Հայաստանը մնացել էր անտեր։ Նրա երկու պաշտպանները — թագավորը և քահանայապետը — չկային։ Հունաց կայսրը մեկ կողմից, պարսից արքան մյուս կողմից, երկու անհագ վիշապների նման, բերանները բաց արած, սպասում էին միմյանց հետ, թե ո՞րը ավելի շուտ կկլանե անտեր մնացած երկիրը...

Այդ ցավալի մտածություններն էին, որ ալեկոծում էին երիտասարդի սիրտը, և նա սոսկալով տեսնում էր յուր հայրենիքի մեծ տագնապը— Նրա մոտալուտ օրհասը...

Մյուս կողմից, տեսնում էր նա հայոց նախարարների մեջ երկպառակություն. ոմանք ցանկանում էին ընդունել հունաց գերիշխանությունը և հարկատու լինել հույներին, իսկ ոմանք ցանկանում էին ընդունել պարսից գերիշխանությունը և հարկատու լինել պարսիկներին։ Հայրենիքի անկախությունը սիրող և նրա ինքնակալությանը նվիրված նախարարները տառապում էին անհնարին հուսահատության մեջ, թե ի՞նչ մի-

ջոցով ազատեն հայրենիքը անդառնալի կորուստից։ Չկար մեկը, որ նրանց մեջ համաձայնություն կայացներ։— Չկար թագավորը, չկար քահանայապետը…

Մնացին դավաճաններ։

Եվ այդ դավաճանները հայոց երկու ամենահզոր նախարարությունների ներկայացուցիչներն էին— Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին։ Մեկը երիտասարդի հայրն էր, մյուսը երիտասարդի մորեղբայրն էր… Երկուսն էլ ուրացել էին քրիստոնեությունը, երկուսն էլ ընդունել էին պարսից կրոնը և Շապուհ արքայի ձեռքում դարձել էին մի սոսկալի զենք, ոչնչացնելու ամեն ինչ, որ սուրբ էր, որ նվիրական էր Հայաստանում…

Այդ սարսափեցնում էր երիտասարդին և միևնույն ժամանակ նրա սիրտը լցնում էր մի անբացատրելի կատաղությամբ։— «Մոգերով ու մոգպետներով է գալիս իմ հայրը…»— մտածում էր նա խորին դառնությամբ,— «և յուր հետ բերում է, որպես օգնական, պարսից զորությունը… գալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը… գալիս է պարսկացնելու մեզ… Նա գալիս է ձեռք-ձեռքի տված Մերուժանի հետ… Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազգությունը, կրոնը… Մենք այսուհետև պետք է պարսկերեն խոսենք և պարսկերեն աղոթենք… Եվ իմ հայրը մի այդպիսի եղեռնագործության պետք է մասնակից լինի, հավիտենական նզովք գնելով Մամիկոնյանների տոհմի վրա…»։

Նրա վարդագույն շրթունքները բոլորովին գունաթափվեցան, ծնկները դողացին, աչքերի առջև մթնեց և հազիվհազ կարողացավ իրան հասցնել գահավորակի վրա և ծանրացած գլուխը բաց թողնել բարձերի վրա։ Երկար նա, երկու ձեռքով գլուխը բռնած, գանվում էր մի տեսակ տենդային շփոթության, մի տեսակ հիվանդոտ այլայլության մեջ։ Մթին մառախուղի նման՝ անորոշ մտքեր պտտվում էին նրա բորբոքված երևակայության մեջ։ Հանկարծ ցնցվեցավ նա և կրկին վեր թռավ պառկած տեղից, ինքն իրան խոսելով.

«Մամիկոնյանը ծնում է դավաճաններ… Մամիկոնյանը ծնում է և հերոսներ… Երբ իմ հորեղբայր Վարդանը արքայական Տիրիթի հետ[4] ապստամբվեցան մեր Արշակ թագավորի դեմ և դիմեցին պարսից Շապուհ արքային,— դարձյալ իմ հորեղբայր Վասակն էր[5], որ գնաց նրանց ետևից և, ճանապարհին բռնելով, սպանեց թե՛ Տիրիթին, և թե՛ յուր եղբորը… Նրա ձեռքը չդողաց թափել յուր հարազատի արյունը, որ դավաճանում էր յուր թագավորին և յուր հայրենիքին… Իսկ ե՞ս…»։

Վերջին խոսքը արտասանելու միջոցին, կարծես նրա շրթունքները

կրակով այրեցին, նա չկարողացավ վերջացնել, կրկին ընկավ գահավորակի վրա և, աչքերը բռնելով, սկսեց դառն կերպով հեկեկալ։ — «Ա՜խ, հայր իմ... ա՜խ, հայր իմ...» — կրկնում էր նա, և արտասուքը հեղեղի նման թափվում էր աչքերից։

Նա սիրում էր յուր հորը, սիրում էր որդիական ջերմ, անկեղծ սիրով։ Բայց սիրում էր և յուր հայրենիքը։ Նրա կրթությունը այնպիսի անձանց խնամքով էր կատարվել, որ պատրաստել էին նրանից մի անձնանվեր որդի՝ նախ հայրենիքի և ապա ծնողաց։

Ընդունարանի դուռը բացվեցավ, ուշիկ քայլերով ներս մտավ մի պատանի, նայեց երիտասարդի վրա և, սառածի նման, կանգնած մնաց դռան մոտ։

Պատանին լավ հագնված սենեկային մանկլավիկի տպավորություն էր գործում։ Միածանի բոլոր գույները կային նրա հագուստների վրա. գունավոր էր գլխի թեթև ապարոշը[6], որ թեք կերպով կապած էր թասակի[7] վրա, ծածկում էր աջ կողմի հոնքը, իսկ ձախ կողմի հոնքը ճակատի մի մասի հետ բաց էր թողած. գունավոր էին նրա երկար, ոսկյա զանգուրները, որ սփռված էին ուսերի վրա. գունավոր էր բեհեզյա գոտին, որ, խորշավոր փաթթոններով մի քանի անգամ բարակ մեջքից անցնելուց հետո, անփույթ վերջավորություններով ծածանվում էր ծնկների վրա. գունավոր էր նրա բաճկոնակը[8], կուրտիկը[9], վարտիքը[10], որ մանր ծալքերով իջնում էր մինչև ծնկները և այնտեղ կապված էր նույնպես գունավոր սռնապաններով[11] և յուր ծալքերի շարունակությամբ ծածկում էր սռնապանները, իջնելով մինչև սրունքները։ Գունավոր էին և նրա նախշուն տրեխները, որ պատրաստված էին գույնզգույն մետաքսյա թելերից, և կատվի թաթիկների նման, ոտքերը գետնին դնելու ժամանակ ձայն չէին հանում[12]։ Ձախ ականջին կրում էր արծաթյա օղակ. դա արդեն նշան էր, որ նա իշխանական սենյակի սպասավոր է[13]։

Նա դեռ ապշած նայում էր յուր տիրոջ վրա։ Նրա գեղեցիկ, խաժ աչքերը արտահայտում էին և՛ զարմանք, և՛ հեզություն։ Զարմանում էր, թե ի՞նչ էր պատահել, որ նա այնպես շուտ էր զարթնել և, առանց լվացվելու, առանց հագնվելու, դուրս էր եկել քնարանից։ Նա երբեք սովորություն չուներ այդքան վաղ վեր կենալու յուր անկողնից։ Յուր մտքում ծիծաղում էր, թե յուր միշտ ուրախ, միշտ զվարթ տերը անպատճառ մի «փորձանք» կունենար, որ այդպես տխուր էր և, սգավորի նման, ընկած էր երեսի վրա, գլուխը չէր բարձրացնում։ Այդ բոլորը բացատրում էր նա յուր տեսակետից։

Երբ նկատեց, որ յուր վրա ուշադրություն չեն դարձնում, և յուր ներկայությունը զգալ տալու խորամանկությամբ, կամաց մոտեցավ

բարակին և նրա ոտքը պինդ կոխեց։ Շունը մի օտարոտի հառաչանք արձակեց, որ նշան էր սաստիկ վիրավորանքի։ Իշխանը գլուխը վեր բարձրացրեց, նայեց դեպի այդ կողմը։

— Հուսիկ, այդ դո՞ւ ես։

— Այո՛, տեր իմ,— պատասխանեց սպասավորը, գլուխ տալով։

Ժամանակի սովորության համեմատ, սպասավորը ամեն ծառայության համար պետք է յուր տիրոջ աչքին երևար միայն. նա համարձակություն չուներ յուր կողմից առաջարկություններ անելու, այլ պետք է լուռ սպասեր տիրոջ հրամանին[14]։ Այժմ նրա լվացվելու և հագնվելու ժամանակն էր։ Սպասում էր, արդյոք յուր տերը կբարեհաճե՞ր ջուր պահանջել։ Այդ մասին ոչինչ պատվեր չստացավ պատանին. մտածեց փարատել իշխանի տխրությունը։

— Գիտե՞ք, տեր իմ, այս գիշեր ի՞նչ է պատահել ամրոցում,— ասաց նա խորամանկ ժպիտով։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց իշխանը։

— Մկները Պապիկի մորուքի մի կողմը կրծոտել են։

Ամրոցի ծերունի դռնապանի մասին էր խոսքը։

— Երեկ երեկոյան,— շարունակեց պատանին,— նա օծվել էր, յուղվել էր, պճնացել էր յուր փեսային տեսնելու. այնտեղից հարբած եկել ու պառկել էր, գիշերը մկները մի լավ ընթրիք էին անուշ արել նրա բարձերի վրա...

Իշխանը նայեց պատանու անհանգիստ, վառվռուն աչքերի մեջ և բարկությամբ ասաց.

— Չարաճճի, այդ անպատճառ քո գործը կլինի։

— Չէ՛, աստված է վկա։

— Իմ գլխովը երդվի՛ր[15]։

Պատանին կարմրելով կանգ առավ։

— Տեսնո՞ւմ ես, անպիտան, մյուս անգամ այդպիսի հիմարություն չանես։

Կատակը անհաջող անցավ։

— Ասա ի՞նչ անեի...— ամոթից գլուխը քարշ ձգած մրմնջաց պատանին,— այնպես հարբած եկել, քնել էր, գիշերը մարդ է մտնում ամրոցը, նա չէ զարթնում։

— Ի՞նչ մարդ,— հարցրեց իշխանը ավելի լուրջ կերպով։

— Մի սուրհանդակ. ես բաց արի նրա համար դուռը. նա ուղղակի գնաց տիկնոջ մոտ։

— Դու այդ ժամանակ արթո՞ւն էիր։

— Ես ամբողջ գիշերը չեմ քնել...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին պատանու դեմքը ավելի կարմրեցավ։

— Երևի «նրա» սենյակի շուրջը քծնվում էիր...— հարցրեց իշխանը ավելի մեղմ ձայնով։

— Ինչպե՞ս իմ տիրոջ աչքե մեղքս ծածկեմ... այդպես էր...

Պատանին սիրահարված էր իշխանի մոր աղախիններից մեկի վրա, և այդ գիտեր նրա տերը։ Եվ նրա վարմունքը ծերունի դռնապանի մորուքի հետ՝ այդ սիրահարության հետևանքներից մեկն էր, որովհետև անհամբեր ծերունին շատ անգամ արգելք էր լինում պատանու գիշերային արշավանքներին... Բայց իշխանը թողեց այդ խնդիրը և, խոսքը փոխելով, հարցրեց նրանից.

— Դու ճանաչեցի՞ր սուրհանդակին։

— Սատանայի պես։

— Ո՞վ էր։

— Պարսիկեցի[16] Ոսկանն էր. նա, որ յուր կնոջը սպանեց և յուր եղբոր կինն առեց. մեծ իշխանից նամակ էր բերել։

— Նա մնա՞ց տիկնոջ մոտ։

— Ոչ, նամակը հանձնեց, բավական խոսեցին, հետո էլի մթնով դուրս գնաց։ Դուռը ես բաց արի։

— Այդ մասին լեզուդ լուռ կպահես։

— Խուլ ու մունջի պես։

Այդ ուրախ, պարզամիտ պատանին ոչ սակավ անգամ վանում էր յուր տիրոջ թախծությունները նրա տխրության րոպեներում, և ոչ սակավ անգամ յուր ծիծաղաշարժ բանարկություններով, որ սովորություն ուներ գործ դնել ամրոցի հասարակության մեջ, զվարճություն էր պատճառում նրան։ Բայց այս անգամ դոհ չմնաց յուր վարպետություններից։ Նրա տերը դարձյալ տխուր էր, դարձյալ գտնվում էր մի անսովոր, մռայլ մտախոհության մեջ։

Նա սպասավորից շատ բան չիմացավ սուրհանդակի մասին, որքան ինքը գիտեր. միակ բանը, որ հետաքրքիր էր նրա համար, այդ այն էր, թե ինչո՞ւ յուր մայրը հեռացրել էր սուրհանդակին։ Ամեն անգամ, երբ պատահում էր սուրհանդակ ընդունել, նա սովորաբար կմնար ամրոցում, այնքան ժամանակ, մինչև բերած նամակի պատասխանը կստանար, հետո կգնար։ Իսկ այժմ ի՞նչն էր ստիպել յուր մորը թաքցնել սուրհանդակին, և թաքցնել ամրոցից մոտակա մի գյուղում։

Նա դարձավ դեպի սպասավորը այս խոսքերով.

— Հուսիկ, եթե սուրհանդակը մյուս անգամ գալու լինի տիկնոջ մոտ, դու կարո՞ղ ես այդ իմանալ։

— Կարող եմ,— պատասխանեց պատանին վստահությամբ։

— Ումի՞ց։

— «Նրանից», «նա» ամեն բան կասե ինձ։

Խոսքը տիկնոջ աղախնի մասին էր, որ սաստիկ սիրում էր պատանուն։

— Կարո՞ղ ես իմանալ և ա՛յն, թե սուրհանդակը ի՛նչ կխոսի տիկնոջ հետ։

— Այդ էլ կարող եմ։

— Ի՞նչ միջոցով։

— «Նրան» կասեմ, «նա» դևի նման կմտնի մի ծակում, ականջ կդնե, հետո կգա, բոլորը կպատմե ինձ։

— Բայց «նա» չի պիտի գիտենա, որ դու ինձանից պատվեր ես ստացել։

— Հուսիկը երեխա չէ, նա այդ կարող է հասկանալ։

— Իսկ եթե «նա» լեզուն չպահե՞։

— «Նա» այնպիսի աղջիկ չէ. ես «նրան» կասեմ՝ բերանդ փակ պահիր, և «նա» էլ չի բաց անի։

Տիկնոջ մոտ եկած սուրհանդակը հասարակ մարդ չէր։

Նա Տարոնի տանուտերներից[17] մեկն էր. նրա մասնավոր խոսակցությունը տիկնոջ հետ՝ շատ բան կարող էր պարզել իշխանի համար, և այդ էր, որ հետաքրքրում էր նրան։

Արեգակը արդեն բավական բարձրացել էր հորիզոնի վրա և իշխանի սենյակը լցրել էր ջերմ, ոսկեփայլ ճառագայթներով։ Նա ցած իջավ գահավորակի վրայից և հրամայեց պատանուն, որ լվացվելու ջուր տա։

Նա մտավ քնարանը։ Այնտեղ, սենյակի մի կողմում, հատակի վրա տարածված էր փափուկ, թանկագին օթոց. պատանին փռեց նրա վրա մի պատառ բամբակյա մաքուր գործվածքից, որի վրա ծալապատիկ նստեց իշխանը։ Այդ պատառը նրա համար էր, որ ջուրը չսրսկվի օթոցի վրա։ Հետո պատանին տարածեց իշխանի ծնկների վրա կտավյա, սպիտակ ղենջակը և արծաթյա լագանը դրեց նրա առջև։ Գեղաքանդակ լագանը բոլորակ տաշտի ձև ուներ, անհավասար, ալիքավոր շրթունքներով, որոնք բութ սղոցի ատամների էին նմանում։ Իսկ շրթունքների մեջ ագուցած էր մի տափակ, ցանցատեսակ խուփ, մանր ծակտիքներով, որ զանազան նկարներ էին ներկայացնում։ Հեղած ջուրը ծակտիքներից մաղվում էր լագանի մեջ և լվացվողը յուր անմաքրությունը չէր տեսնում։ Պատանին ծնկների վրա չոքած էր յուր տիրոջ առջև, աջ ձեռքով ջուր էր ածում, իսկ ձախ ձեռքում բռնած ուներ մի փոքրիկ, ար-

ծաթյա թաս, որի մեջ դրված էր անուշահոտ օճառը[18]։ Արծաթյա ջրածիկը ագին լայն բաց արած սիրամարգի ձև ուներ[19]։ Պատանին բռնել էր թևերից, և մաքուր ջուրը հոսում էր գեղեցիկ թռչունի կտուցից։ Սիրամարգը Մամիկոնյանների սիրած թռչունն էր. այդ հիշատակը նրանք բերել էին իրանց նախկին հայրենիքից — Չինաստանից։

Երբ իշխանը լվացվեցավ, պատանին ջրածիկը և լագանը մի կողմ դրեց, հետո մաքուր անձեռոցիկով, որ պատրաստ ուներ ուսի վրա, սկսեց սրբել յուր տիրոջ երեսը, պարանոցը և ձեռքերը։ Եվ ապա վեր առեց փղոսկրյա սանրը, սկսեց գլուխը սանրել։ Գլխի բոլորտիքը սափրած էր, միայն գագաթի վրա ճոխ երկարությամբ աճել էին սև գիսակները[20]։ Գագաթի բոլորովին միջակետում, մի դրամի մեծությամբ, նույնպես ածիլած էր[21]։ Գիսակները սանրելուց հետո, պատանին պատրաստվում էր օծել անուշահոտություններով[22]։

— Հարկավոր չէ,— ասաց իշխանը։

Պատանին զարմացավ։ Այդ առաջին անգամն էր, որ յուր տիրոջ մազերը սանրելուց հետո, նա պետք է թողներ առանց օծելու։

«Ես պետք է թաքցնեմ իմ տխրությունը...»— մտածեց իշխանը և թույլ տվեց սպասավորին, որ շարունակե սովորական պչրանքը։

Գլուխը օծելուց հետո, նա գիսակները հատ-հատ հանգույցներով հավաքեց գագաթի շուրջը, իսկ նրանց ծայրերը արձակ գանգուրներով բաց թողեց ականջների ու պարանոցի վրա։ Հետո սկսեց կապել գլխի զարդերը։ Դրանք բաղկացած էին մի խույրից[23], որ բանված էր գեղեցիկ անկվածներով, և գույնզգույն մետաքսյա ապարոշից[24], որ կապեց խույրի վրա։ Ապարոշի առջևի կողմում, ուղիղ ճակատի վրա, կապեց արծաթյա մահիկը[25], որ կիսալուսնի ձև ուներ և քանդակված էր զանազան խորհրդավոր նշանագրերով։ Երկու բարակ շղթաներ ամրացված էին մահիկի երկու եղջյուրներից, և նրանց ծայրերը, ապարոշի բոլորտիքով անցնելով դեպի ծոծրակը, այնտեղ փակվում էին արծաթյա ճարմանդներով։ Ճարմանդների յուրաքանչյուրի վրա փայլում էր մի խոշոր ակն։ Մնում էին աչքերը, որ պետք էր սուրմայել ծարիրի սև փոշիով։ Պատանին դուրս հանեց յուր ծոցից մի մաշկեղեն փոքրիկ պարկ[26], որ լցված էր սուրմայով։ Հետո վեր առեց ոսկյա դեղձիրը, որ բարակ ձողի ձև ուներ, նախ մոտեցրեց յուր շրթունքներին, բերանի գոլորշիով փոքրինչ խոնավություն շնչեց նրա վրա, և ապա թաթախեց պարկի մեջ։ Դեղձիրը ընդունեց յուր վրա պարկի միջի սև փոշիից նույն չափով, որչափ խոնավություն ուներ։ Սկսեց նրանով սուրմայել աչքերը։ Ամենայն

զգուշությամբ և շնորհալի ձևերով տանում էր նա գեղձիրը կոպերի միջով, որոնց եզրերը, ընդունելով իրանց վրա սև փոշին, այնպիսի տպավորություն էին գործում, կարծես սև գծերով եզերավորված լինեին[27]։

Այժմ պետք էր հագցնել իշխանին։

Նախ հագավ մետաքսյա, ծաղկավոր պատմուճանը[28], կողքերից ճղած փեշերով, որ իջնում էին մինչև սրունքները։ Պատմուճանի լայն թևերի ոսկյա կոճակները, որոնք պոչից կախ ընկած կեռասի ձև ունեին, ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե բազուկները կոճկելու համար։ Բաց կուրծքը կոճկեց նա նույնպես ոսկյա կոճակներով, որոնք չափռաստների[29] ձև ունեին։ Մեջքին կապեց ծանր, ականակուռ ոսկյա քամարը[30], որի ծայրերը, փակվելով միմյանց հետ, ներկայացնում էին մի բարձրաքանդակ աստղ՝ սփռված ճաճանչներով։ Աստղի մեջտեղում վառվում էր մի խոշոր, վարդագույն գոհար, որ շրջապատված էր ավելի մանր գոհարներով։ Քամարից, ձախ կողմի ազդրի վրա, քարշ տվեց յուր անբաժան նրանը[31], որի ծայրը հասնում էր մինչև ծունկը։ Այդ երկաթի զենքի թե պատյանը, և թե կոթը պատած էր ոսկով և զարդարված էր գեղեցիկ նկարներով։ Պատմուճանի վրա հագավ ասրյա կարճ թիկնոցը[32], որ նախշած էր ոսկեթել անկյուններով։ Կարմիր վարտիքի[33] միայն ստորին մասներն էին երևում երկար պատմուճանի տակից, և այդ մասները, տակից հավաքված լինելով գունավոր սրունքակապերով, ուռուցավոր ծալքերով իջնում էին կարմիր կոշիկների վրա[34]։ Նրա իշխանական պաճուճանքը լրացրին երկու ոսկյա գնդեր, որ քարշ տվեց ականջներից[35]։

Նա այս առավոտ հակամայից այդպես հագնվեցավ։ Նա գիտեր, որ յուր մայրը անպատճառ կկանչե նրան, հայտնելու հորից ստացած նորությունները։ Այդ պատճառով կամեցավ երևալ մոր աչքին այնպես, որպես սովորաբար տեսել էր նրան, որպեսզի նա առիթ չունենար կասկածելու, թե որդին վատ տեղեկություններ է ստացել։

Նա կրկին դուրս եկավ ընդունարանը, սկսեց մոլորված կերպով անցուդարձ անել սենյակի մեջ։ Նրան զբաղեցնում էր այն միտքը, թե ի՞նչպես պահե իրան մոր մոտ, երբ նա կսկսե խոսել Տիզբոնից ստացված լուրերի մասին։ Նա սարսափում էր, մտածելով, թե այնքան ուժ և կամքի զորություն կունենա՞ արդյոք, որ սառնասրտությամբ լսե մորից յուր հոր վարմունքները։ Մի անզգույշ խոսք, մի անզգույշ շարժում կարող էր մատնել նրան...

Սպասավորը պատրաստվում էր նախաճաշիկ մատուցանել։ Այդ միջոցին դռները բացվեցան, ներս մտավ մի մարդ, որ խորին կերպով գլուխ տալով, լուռ կանգնած մնաց ոտքերի վրա։ Նրա լերկ, անմորուս երեսից, որ պատած էր վաղահաս կնճիռներով, նրա հանդած, նեղ աչ-

քերից, որ սեղմված էին կարմիր կոպերի մեջ՝ առանց թերթերունքների և, վերջապես, նրա դեղին ատամներից, որ դուրս էին ցցված անգույն շրթունքների միջից, իսկույն երևում էր, որ այդ մարդը ներքինի է[36]։

— Ի՞նչ կա,— հարցրեց իշխանը։

Ներքինին կրկին անգամ գլուխ տվեց, ասելով.

— Տիկինը հրամայեց հայտնել իմ տիրոջը, որ շնորհ բերե նրա մոտ։

Իշխանը ամբողջ մարմնով ցնցվեցավ, բայց զսպելով յուր տհաճությունը, պատասխանեց.

— Լավ, ասա՛, որ կգամ։

Ներքինին դարձյալ գլուխ տվեց և հեռացավ։

Պատանի Հուսիկը մի առանձին զզվանքով նայեց նրա ետևից, և, աջ ձեռքի մատները լայն բաց անելով, «մըճիկ հանեց[37]»։ Այդ նկատեց իշխանը։

— Դու ե՞րբ պետք է խելոքանաս, Հուսիկ,— հանդիմանեց նրան։

— Ճշմարիտ, սուտ չեմ ասում,— պատասխանեց պատանին կիսահեգնական և կիսաերկչոտ ձայնով,— երբ առավոտյան այդ մարդու երեսը տեսնում եմ, գիտեմ, որ այն օրը բանս չի հաջողի, անպատճառ կամ մի բան կկոտրեմ, կամ մի բան կվիթեմ, և կամ մի ուրիշ վատ բան կպատահի[38]։

Իշխանը ժպտաց։

Ե

ՄԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

Առավոտյան մառախուղը չքացել էր։ Դրսում տիրում էր ջերմ, լուսապայծառ օր։ Օդի մեջ բուրում էր շրջակա եղևինների բալասանական խնկահոտությունը։ Ամեն ինչ ժպտում էր, ամեն ինչ ուրախություն էր շնչում, միայն Սամվելի սիրտը լցված էր խորին, անմխիթար տրտմությամբ։

Նա դուրս եկավ յուր բնակարանից, անցնում էր ամրոցի ընդարձակ բակով։ Պատանի Հուսիկը, կանգնած սենյակի դռան մոտ, մի առանձին ցավակցությամբ նայում էր նրա ետևից։ Նրան հայտնի չէին յուր տիրոջ վշտերը, նա չգիտեր, թե ինչու էր նա այնքան տխուր, բայց նկատելով նրա տխրությունը, ինքը նույնպես տխրեց։ Անկեղծ պատանին սիրում էր

յուր տիրոջը, յուր բարի և ազնիվ տիրոջը, որը այնքան ներողամիտ էր դեպի նա, որը երբեք չէր վշտացրել նրան։

Սամվելը ծածկված էր գարնանային թեթև վերարկուով, առանց թևերը հագնելու, որ ծածանվում էին վերարկուի լայն ծալքերի հետ։ Սպիտակ վերարկուն՝ գունավոր հագուստի հետ՝ մի առանձին վայելչություն էին ընծայում բարձրահասակ երիտասարդի գեղակազմ իրանին։ Նա ամրոցի ուրախությունն էր, երբ առավոտյան յուր օթևանից դուրս էր գալիս և հայտնվում էր բակում։ Ամեն կողմից ամեն աչքեր հիացած նայում էին նրա վրա։

Նա գնում էր առանց աջ ու ձախ նայելու,— գնում էր, գլուխը դեպի ցած խոնարհեցրած,— գնում էր, որպես մի ստվեր։ Այսպես ոչ ոք չէր տեսել նրան։ Ի՞նչ գիրք բռնել մոր մոտ... կեղծե՞լ, խաբե՞լ նրան... թե՞ բացարձակ կերպով դատապարտել հոր վարմունքը...— այդ վարանմանց մեջ էր նա, այդ մտքերն էին տանջում նրան։

Ամրոցում կյանքը արդեն զարթնել էր. ամեն ինչ շարժողության մեջ էր։ Աղավնիները ցած էին իջել աշտարակների բարձրությունից, խմբերով պտտվում էին բակում և սիրաբորբոք տարփանքով քծնվում էին միմյանց շուրջը։ Իշխանական աղախինները, գույնզգույն հագուստներով, ուրախ, զվարթ, կատակներ էին անում միմյանց հետ, ծիծաղում էին, և կուտ էին ցրում սիրելի թռչուններին։ Ներքինիները ծանր, հոգատար դեմքով, մի սենյակի դռնից դուրս էին գալիս և, լուռ ու մունջ ուրվականների նման, անցնում էին, մտնելով մի այլ սենյակ։ Մի գեղեցիկ տղա խաղում էր եղջերվի ձագի հետ, որի պարանոցը զարդարված էր արծաթյա օղամանյակով։ Դա Սամվելի փոքր եղբայրն էր։

Ցերեկվա լույսով ամրոցը ներկայանում էր յուր ահեղ, հսկայական կերպարանքով։ Թանձր, քարաշեն շրջապարիսպը մրցում էր շրջակա ժայռերի և ապառաժների բարձրության հետ։ Կարծես կիկլոպների ձեռքը շարել էր այն ահագին քարերը միմյանց վրա և կազմել էր այդ վիթխարի շրջապարիսպը։ Նրա մեջ զետեղված էին բոլոր շինվածքները, որ ծառայում էին մի մեծ իշխանական տան բնակության համար։ Նա այնքան ընդարձակ էր, որ վտանգի ժամանակ կարող էր այնտեղ պատսպարվել շրջակա գյուղացիների մեծ մասը։ Այդ կետից, Ողականը ավելի մի բերդ էր, քան թե ամրոց։ Դեպի ամեն կողմ, ուր որ նայում էիր, տիրապետում էր ոչ այնքան նրբություն և գեղեցկություն, որքան պարզություն և անխորտակելի ամրություն։ Նա ուներ այնքան շատ բաժանմունքներ, որքան շատ պետքերի էր ծառայում։ Սամվելն անցնում էր այն բաժանմունքի բակով, որտեղ զետեղված էր կանանոցը։

Մի քանի րոպե կանգ առեց նա, խոսում էր եղջերվի ձագի հետ խա-

ղացող եղբոր հետ։ Գեղեցիկ երեխան ուրախանալով ցույց էր տալիս, թե որքան աճել էին յուր «սիրունիկի» եղջյուրները։ Այդ միջոցին մանկահասակ ալախինները շրջապատեցին նրան։ Մի սևաչյա օրիորդ մինչև անգամ համարձակվեցավ ձեռքը մեկնել և ուղղել նրա պատմուճանի օձիքը։

— Շնորհակալ եմ, Նվարդ,— ասաց իշխանը ժպտելով,— իմ Հուսիկը շատ անշնորհք է, չգիտե լավ հագցնել յուր տիրոջը։

— Այո՛, անշնորհք է... տեր իմ,— կրկնեց օրիորդը և ամոթխածությունից նրա գունատ թշերը ներկվեցան վարդի գույնով։

Դա նույն աղջիկն էր, որին սիրում էր պատանի Հուսիկը։

Մի քանի րոպե ևս Սամվելը զբաղված էր յուր եղբորով, նրա սիրուն եղջերվով և լսում էր ուրախ, անհոգ օրիորդների հանաքները։ Դրանով աշխատում էր ժամանակ վաստակել, որպեսզի լավ որոշե յուր խաղալու դերը մոր մոտ։

Այդ միջոցին կանանոցի շքեղ դահլիճներից մեկում մի կին կանգնած էր մետաղյա հղկված հայելու առջև[2], և ինքն յուր վրա սիրահարվածի նման նայում էր, ժպտում էր, և մի առանձին հրճվանքով ուղղում էր գլխի զարդերը։ Արդեն մի քանի անգամ նա մոտեցել էր այդ հայելուն և, չհավատալով յուր աչքերին, այդ վերջին փորձն էր անում, ստուգելու համար, արդյոք այնքան սա՞զ էին գալիս այդ նոր զարդերը, որքան նա կարծում էր։

Նախասենյակում լսելի եղան ոտքի ձայներ։ Նա շտապով թողեց հայելին, անցավ գահավորակի վրա, նստեց և, թիկն տալով թավիշյա բարձերին, լուրջ դեմք ընդունեց։ Նա յուր հասակից ավելի թարմ և անթառամ էր մնացած։ Նրա տարիքը վաղուց մոտեցել էին հիսունին, բայց դեռ մի մանկահասակ հարսի տպավորություն էր գործում։ Եթե գիրությունը և ճարպի անհամեմատ պարարտությունը կոշտացրած չլինեին նրա մարմինն ու դեմքը, նրան կարելի էր մինչև անգամ գեղեցիկ համարել։ Խոշոր աչքերի մեջ վառվում էր գոռոզություն և տոհմային հպարտություն, որը բոլորովին անհետացնում էր նրանց մեղմ քաղցրությունը։

Այդ փառահեղ տիկինը Սամվելի մայրն էր, որին կոչում էին Տաճատուհի[3]։

Ներս մտավ երիտասարդը բանի ժպիտը երեսին։

— Բարի լո՛ւյս, սիրելի մայրիկ,— ասաց նա և, յուր սովորության համեմատ, մոտեցավ ձեռքը համբուրելու։

Բայց երկու քայլ հեռավորության վրա կանգ առեց և կիսահեգնական ու կիսազարմացական ձայնով բացականչեց.

— Այդ ի՞նչ եմ տեսնում... Աստված է վկա, առանց հարցնելու կարող եմ ասել, որ հայրս գալիս է։

— Ինչի՞ց իմացար,— հարցրեց մայրը, քաղցր կերպով ժպտելով։

— Այդպես զարդարվել ես... հոնքերդ ներկել ես... ձեռքերդ ներկել ես... Այդ բոլորը ո՞ւմ համար է[4]...

Մայրը գրկեց որդուն, ճակատը համբուրեց և, նստեցնելով յուր մոտ՝ պահավորակի վրա, ասաց.

— Այո՛, գալիս է, Սամվե՛լ։ Հիմա տո՛ւր «ավետչեքս»[5]։

Վերջին խոսքերի միջոցին մայրը ձախ ձեռքով գրկեց որդու պարանոցը, իսկ աջ ձեռքով բռնեց նրա ականջից[6], կրկնելով.

— Ասա, ի՞նչ ես տալիս։

— Մի զույգ համբույր,— պատասխանեց որդին, աշխատելով ականջըն ազատել նրա ձեռքից։— Դրանից ավելի լա՞վ ավետչեք։ Էլ ի՞նչ ես ուզում։

— Հենց այդ եմ ուզում,— ասաց մայրը և, սեղմելով նրան յուր կուրծքի վրա, համբուրեց երկու թշերից։

Որդու ողջագուրանքը, մոր սիրալիր փաղաքշանքը բոլորովին անկեղծ էին։ Մայրը ուներ սիրող սիրտ, մանավանդ դեպի յուր զավակները, իսկ որդին հնազանդ, ծնողասեր զավակ էր։ Այժմ այդ անարատ սիրո մեջ մտել էր մի դև, մի չար միտք, որ պիտի երկպառակեր ընտանեկան խաղաղությունը, որ պիտի դժտություն, ատելություն և, գուցե, ավելի ողբալի թշնամանք սերմաներ որդու և ծնողների մեջ։ Ամեն անգամ, որ այդ մտածությունները պաշարում էին Սամվելին, նա ամբողջ մարմնով դողում էր։

Նույն մտածությունները, ոչ սակավ սաստկությամբ, հուզում էին և մոր սիրտը։ Նա գիտեր Սամվելի ամուր հավատը, գիտեր նրա կրոնական ջերմեռանդությունը, նրան ծանոթ էին յուր որդու հայրենասիրական ջերմ զգացմունքները։ Այժմ ի՞նչպես հայտներ որդուն, թե նրա հայրը ուրացել է յուր կրոնը և պարսից զորքերով գալիս է ոչնչացնելու ամեն ինչ, որ հայկական է։

Մայրը դեռ շատ առաջ կամակից էր յուր ամուսնի հետ։ Նրանք պատկանում էին հայոց ազնվականների այն խստասիրտ և պարսկամոլ կուսակցությանը, որ ատում էին հույներին, ատում էին և բնիկ Արշակունի թագավորներին։ Բայց մոր պարսկամոլությունը մինչև այնօր դեռ չէր արտահայտվել ազգային կամ քաղաքական խոշոր խնդիրների մեջ։ Մայրը միայն սիրում էր ընտանիքի մեջ մտցնել պարսկական լեզու, պարսկական սովորություններ, թեև այդ բոլորի համար միշտ հանդիպում էր որդու խորին տհաճությանը։ Այդ ընտանեկան խուլ կռի-

մը վաղուց սկսվել էր նրանց մեջ, և վաղուց Սամվելը նախապատրաստված էր, որպես մի ընդդիմադիր ուժ, արգելք դնելու մոր ձգտումներին։ Բայց դեռ երևույթներն այնքան անմեղ էին և առիթներն այնքան մեղմ էին, որ երբեք պատճառ չէին տվել ընտանեկան ծայրահեղ երկպառակության։ Իսկ ա՛յժմ, այժմ ի՞նչ պետք էր անել։ Այժմ ներկայանում էր մի սարսափելի պատճառ, որ կա՛մ միանգամայն պետք է խորտակեր ընտանեկան բոլոր կապերը, կա՛մ որդուն հնազանդեցներ ծնողաց կամքին։ Մայրը այդ հույսը չուներ. նրան հայտնի էր որդու համառությունը, նրան հայտնի էր որդու և հաստատամտությունը։ Ամբողջ գիշերը մտածում էր նա այդ մասին և ոչինչ ելք չէր գտնում։ Վերջը վճռեց աղետավոր խռովության կեսը միայն հայտնել որդուն, իսկ մնացած կեսը պահել ավելի բարեհաջող ժամանակի համար։

Այժմ սկսեց ավելի թեթև խոսակցություններով զբաղեցնել որդուն, որ մի առանձին զվարճությամբ նայում էր նրա վրա։

— Ինչպե՞ս ես գտնում այդ նոր զարդարանքը,— հարցրեց Սամվելից։

— Հորս գլուխը վկա, սքանչելի է,— պատասխանեց որդին,— միայն դու մոռացել ես ներկել քո շրթունքները, այն ժամանակ կատարելապես մի պարսկական թագուհու կնմանեիր։

— Դու հեգնում ես, Սամվե՛լ։

— Ի՞նչ հեգնելու բան կա,— ծիծաղելով ասաց որդին և, ձեռքը տանելով, մոր զարդարանքները մի առ մի շոշափելով, շարունակեց.

— Բոլո՛րը գեղեցիկ է, բոլո՛րը հրաշալի է։ Ահա այդ արծաթյա մանյակը[7], զարդարած խոշոր ադամանդներով, որ կապել ես լայն ճակատիդ, դա փայլում է, որպես նորածին կիսալուսինը փայլում է պարզ երկնակամարի վրա. դա կթափե քո վրա այն բոլոր բարիքները, ինչ որ լուսինը թափում է արարածների վրա։ Իսկ այդ ադամանդները, որ սփռված են մահիկից շուրջը, մշտական ուրախություն կշնչեն քո սրտին, հաղթող կհանդիսացնեն քեզ ամեն ձեռնարկության մեջ և թագավորների աչքում սիրելի կկացուցանեն[8]։ Ահա այդ սիրուն բաճաճ[9], որ կրում ես քթիդ վրա, յուր մեխակի ձևով՝ միշտ անուշահոտությամբ կհրապուրե քո հոտառելիքը, իսկ յուր երկնագույն փիրուզայի ակնով կլցնե քո արկղները ոսկով ու արծաթով, քո խոսքը, քո խնդիրքը ընդունելի կանե ամենի մոտ և քեզ հեռու կպահե թագավորների պատուհասներից։ Ահա այդ ոսկյա գնաերը[10], որ վառվում են զույնզգույն զմրուխտներով, կպահպանեն քո լսելիքը անախորժ ձայներից և միշտ ուրախալի համբավներով կզվարճացնեն քեզ։ Իսկ այդ զմրուխտները կհուրացնեն օձի ու վիշապի աչքերը և քո անձը անխոցելի կպահեն ամեն թունավոր գե-

ռունների ու միջատների խայթոցներից։ Ահա այդ մարգարտաշատ մանճ-յակը[11] յուր խորհրդավոր ճատուրճներով[12], դրանց մեջն է ամփոփված քո բախտը, քո թովիչ գորությունը և քո կախարդիչ հրապուրանքը, որոնք կնոջ համար անհրաժեշտ են...

Նա առեց մոր ձեռքերը յուր ափերի մեջ և շարունակեց.

— Այդ օձաձև ապարանջանները[13] որքա՜ն գեղեցիկ են, որքա՜ն խորհուրդ կա դրանց մեջ... դրանք կտան քո բազուկներին հաջողություն և օձի իմաստություն, ինչպես տվեց օձը մեր նախամայր Եվային... Իսկ այդ մարջանով (բուստ) և գույնզգույն հուլունքներով զարդարված բեա-կալները[14], որոնց մեջ պահվում են, ո՛վ գիտե, ինչ տեսակ բալխամա-ններ,— դրանք հեռու կպահեն քեզ չար աչքից և չար պատահարից, դրանք կպահպանեն քեզ դևերի, քաջքերի և բոլոր աներևույթ ոգիների պատ-րանքներից։ Ես համոզված եմ, որ այդ թևակալների մեջ ամփոփված են մի ոսկեցե մոգի գրվածքներ...

Մայրը խոժոռ դեմք ընդունեց։ Որդին շարունակեց, ցույց տալով մատանիների նշանակությունը.

— Այդ մատանին կարմիր յագուրի (հակինթ) քարով ամեն մարդ-կանց մոտ հաճելի կանե քեզ։ Այդ մյուսը՝ սարդիոնի (սեյլան) քարով՝ փարատում է արյունհեղությունը։ Այդ երրորդը՝ վարդագույն սուտակի (լալ) քարով՝ փարատում է վշտերը և հալածում է դևերին։ Այդ չորրոր-դը՝ խայտաճամուկ օձաքարով՝ թույների ներգործությունը ոչնչացնում է։ Այդ հինգերորդը՝ հակինթի գեղնագույն քարով՝ ոչնչացնում է մարդ-կանց չար մտքերը[15]...

Մայրը հասկացավ, որ որդին ծաղրում էր նրա սնահավատությունը և հեթանոսական նախապաշարմունքները, այդ պատճառով ընդհատեց նրա բացատրությունները խիստ և վիրավորված ձայնով.

— Բավական է, ես գիտեմ քո թերահավատությունը... դու այդպիսի բաների չես հավատում...

— Ինչու ես այդպես կարծում, սիրելի մայրիկ,— պատասխանեց Սամվելը անվրդով կերպով,— ես կամենում եմ ցույց տալ, որ այնքան տգետ չեմ, այլ բոլորի նշանակությունը հասկանում եմ...

— Մի՞թե ես առաջ այդպիսի զարդեր չէի կրում, և մի՞թե մեր նա-խարարների բոլոր կանայքը այդպիսի զարդեր չեն կրում։

— Ճշմարիտ է, դու կրում էիր... այն ևս ճշմարիտ է, որ մեր նա-խարարների կանայքը նույնպես կրում են, բայց ձևերի մեջ մեծ զանա-զանություն կա։ Քո կրածները կատարելապես նմանեցրած են պարս-կական ձևերին...

— Թո՛ղ այդպես լինի, ի՞նչ կա

— Ոչինչ... Ես միայն զարմանում եմ, թե ինչպե՞ս շուտ դու պատրաստել տվեցիր այդ բոլորը։

— Ես վաղուց պատրաստել էի տվել... Ես միայն սպասում էի...

— Որ հորս գալուստը տոնի պես լինի... Այդպես չէ՞։

Մայրը ոչինչ չպատասխանեց, և նկատելով, որ այդ խոսակցությունը անախորժ կերպարանք է ստանում, խոսքը փոխեց.

— Գիտե՞ս, Սամվել, քեզ ինչու համար կանչեցի։

— Ես ոչինչ չգիտեմ...

— Հորից նամակ ստացա, կանչեցի, որ հայտնեմ քեզ։

— Նամա՞կ ստացար,— բացականչեց Սամվելը,— այդ ուրախալի՜ է... շա՜տ ուրախալի... Ե՞րբ ստացար։

— Այս գիշեր Սուրհանդակն եկավ։

Տիկինը ցած իջավ գահավորակի վրայից, հագավ կապտագույն մաշիկները[16], որ դրած էին գահավորակի առջև, անցավ գահլիճի միջով և մոտեցավ պատուհաններից մեկին[17], վեր բարձրացրեց մետաքսյա վարագույրը։ Այդ ժամանակ միայն, երբ նա երեսը շուռ տվեց, Սամվելը ուշադրություն դարձրեց մոր ծամկալի[18] վրա, որի մյուս զարդարանքների թվում նկատեց բարենու ճյուղից շինված մի հուռութք[19], որ բանված էր արծաթի կանթի մեջ։

Տիկինը վերադարձավ, ձեռքում բերելով մագաղաթի մի գալարված փաթոթ[20], որ կապված էր մետաքսյա, գույնզգույն նարոտով։ Նա տվեց մագաղաթը որդուն, ասելով.

— Հորդ նամակն է։

Սամվելը ուրախությամբ բաց արեց մագաղաթի փաթոթը և, նայելով նրա վրա, ասաց.

— Դա պարսկերեն է գրված...

Մայրը կիսախրատական և կիսահանդիմանական եղանակով նկատեց նրան.

— Ա՜յ, քեզ որ միշտ ասում էի, որդի, սովորի՛ր այդ լեզուն, դու ինձ ականջ չէիր դնում, խելքդ ու միտքդ տվել էիր այն անիծված հույներենին և ասորերենին։ Հիմա տեսնո՞ւմ ես, հորդ նամակն էլ չես կարողանում կարդալ։ Դու մինչև անգամ աշխատում էիր քո փոքր եղբորը, Վահանին ևս դժբախտացնել, արգելում էիր նրան պարսկերեն սովորել։ Բայց նա այժմ ո՛չ միայն վարժ խոսում է, այլև գրում է։

Մոր հանդիմանությունը սաստիկ վրդովեցրեց Սամվելին, բայց նա, զսպելով իրան, ասաց.

— Դու, իհարկե, կարդացած կլինես, պատմի՛ր, ի՞նչ է գրում հայրս։

Տիկինը պատմեց այն, ինչ որ արդեն գիտեր Սամվելը, թե Շապուհ

արքան շնորհել է յուր ամուսնին Հայոց սպարապետությունը, իսկ յուր եղբորը, Մեհրուժանին, խոստացել է Հայոց թագավորությունը, և յուր քույր Որմիզդուխտին[21] արքան կնության է տվել Մեհրուժանին։ Եվ այժմ թե Մեհրուժանը, և թե յուր ամուսինը ճանապարհի վրա են, պարսից զորքերով գալիս են, մեկը Հայոց թագավոր դառնալու համար, մյուսը՝ Հայոց սպարապետ։

Այդ պատմության բոլոր ժամանակ տիկնոջ դեմքը փայլում էր անսահման ուրախությամբ, իսկ Սամվելը խորին վրդովմունքով լսում էր նրան, ավելի և ավելի պինդ գալարելով յուր ձեռքում մագաղաթի թերթը, որ բռնել էր աղոտավոր լույսը։ Բայց Սամվելը նախապատրաստված էր այդ բոլոր դառն և ամոթալի եղելությունները լսելու, որոնց մեջն էր տեսնում յուր հայրենիքի կործանումը։

Տիկինը յուր ստացած տեղեկությունների մի մասը միայն պատմեց, և նամակի մեջ այնքանը միայն գրված պետք է լիներ։ Բայց նա թաքցրեց Սամվելից, թե նրա հայրը և Մեհրուժանը ուրացել են քրիստոնեությունը, ընդունել են պարսից կրոնը և խոստացել են Շապուհին նույնը մտցնել և Հայաստանում, և այդ մտքով բերում են իրենց հետ մոգերի ահագին բազմություն, որ եկեղեցիների փոխարեն ատրուշաններ հիմնեն, և ամեն տեղ բաց անեն պարսից դպրոցներ, նախարարների և ազնվականների թե տղաներին և թե աղջիկներին պարսկական ոգով և պարսկական կրոնի հրահանգներով կրթություն տալու համար[22]։ Նա ծածկեց Սամվելից և նրա հորեղբոր, Վասակի չարաչար մահը Շապուհից, ծածկեց և Արշակ թագավորի աքսորվիլը Անհուշ բերդում։ Այդ բոլորը, իհարկե, գիտեր տիկինը, այդ բոլորը, անտարակույս, բերանացի հաղորդած կլիներ նրան նամակը բերող սուրհանդակը։

Տիկինը նկատեց այն վատ տպավորությունը, որ յուր պատմությունը գործեց որդու վրա, բայց իրան չգիտենալ ձևացնելով, գրկեց որդուն և, սեղմելով յուր կրծքի վրա, ասաց.

— Դու այժմ կարող ես շնորհավորել ինձ, սիրելի Սամվել,— եղբայրս՝ Հայոց թագավոր, իսկ քո հայրը՝ Հայոց սպարապետ...

Սամվելի դրությունը աննախանձելի էր։ Նա կամ բացարձակ կերպով պետք է հայտներ յուր զզվանքը հոր և Մեհրուժանի վարմունքի դեմ, պատմելով բոլորը, ինչ որ ինքը գիտեր նրանց դավաճանությունների մասին, և կամ պետք է լռեր, որ միգուցե յուր անզգուշությամբ գործը փչացներ, և յուր արդեն խորհած, վճռած նպատակները մնային անկատար։ Բայց լռել չէր կարող նա, պետք էր մի բան պատասխանել։ Այդպիսի դժվարին րոպեներում նրան օգնության էր հասնում յուր սովորա-

կան թերահավատությունը մի կողմից, և յուր կծու հեգնությունը, մյուս կողմից։

— Այդպես շուտ ուրախանա՞լ, դեռ վաղ է, սիրելի մայր,— ծիծաղելով պատասխանեց նա, դուրս պրծնելով մոր գրկից։

— Ինչո՞ւ,— հարցրեց մայրը և նրա ձայնը դողաց սրտի հուզմունքից։

— Դեռ հայոց թագավորը կենդանի է...

Տիկինը չկարողացավ իրան զսպել, հայտնեց այն, ինչ որ ծածկել էր աշխատում։

— Հայոց թագավորը աքսորված է Անհուշ բերդում, որտեղից մարդիկ այլևս չեն վերադառնում։

— Այդ ես գիտեմ, որ այնտեղից մարդիկ այլևս չեն վերադառնում, բայց հայոց թագաժառանգը Կ. Պոլսումն է, բյուզանդյա կայսրի մոտ...

— Նրան ո՞վ կբերե և յուր գահը կնստացնե։

— Հունաց զորքերը և հայոց նախարարները...

— Մինչև նրանց գալը, հայոց երկիրը գրավված կլինի պարսից զորքերով, իսկ իմ եղբայրը՝ թագավոր։

— Հաջողություն եմ ցանկանում...

— Դու չես հավատում, Սամվել, բայց շուտով կտեսնես, որ այդ բոլորը կկատարվի,— ասաց մայրը, աշխատելով համոզել որդուն։— Դու ասում ես, որ հայոց թագաժառանգը կայսրի մոտ է, հունաց զորքերով կգա և յուր հոր գահը կժառանգե։ Բայց գիտե՞ս ո՛վ է հունաց այժմյան կայսրը։— Հայերի թշնամի Վաղեսը։ Նա արդեն հայոց քահանայապետ Ներսեսին, որ գնացել էր Կ. Պոլիս կայսրից օգնություն խնդրելու, ոչ միայն մերժել է յուր երեսից, այլ աքսորել է Միջերկրականի Պատմոս կղզում[23]։ Այդ դու գիտե՞ս

— Առաջին անգամն եմ լսում...

Բայց նա գիտեր հալածանք Վաղեսի[24] անիրավ վարմունքը Ներսես Մեծի հետ։ Նա ամենայն ուշադրությամբ հետևում էր բոլոր աղետավոր անցքերին, որ այդ ժամանակ կատարվում էին յուր հայրենիքի վերաբերությամբ։ Եվ նրա զգայուն սիրտը բազմաթիվ վերքերով խոցված էր կատարվող չարիքներից։

Նա մտածեց կշտամբել մոր համակրությունը դեպի Վաղեսի վարմունքը։ Նա մտածեց հայտնել յուր խորին անհաճությունը դեպի յուր հոր և Մերուժանի գործողությունները, բացատրելով, թե որպիսի՛ ազգակործան հետևանքներ կարող էին ունենալ նրանց ձեռնարկությունները և, վերջապես, նա մտածեց խոստովանվել մոր առջև, թե ինքը, որքան կարող է, ամեն հնարներ գործ կդնե՝ ոչնչացնելու հոր դիտավորությու-

նը։ Բայց նա գիտեր յուր մոր անսահման փառասիրությունը։ Նա ցանկանում էր Հայոց սպարապետի տիկին լինել և Հայոց թագավորի քույր։ Ամեն մի ապացույց այդ մոլեգին ցանկության առջև կկորցներ յուր ազդեցությունը։

Խոհեմությունը փականք դրեց նրա լեզվին։

Զ

ԵՐԿՈՒ ԵՂԲՈՐ ՈՐԴԻՆԵՐ

Մամիկոնյան նախարարները, վաղեմի ժամանակներից, վայելում էին Հայոց սպարապետության արտոնությունը։ Այդ բարձր պաշտոնավարության իրավունքը անցնում էր նրանց տոհմի մեջ ժառանգաբար, որդին փոխարինում էր հորը, նրա վախճանից հետո[1]։ Թեև եղել են բացառություններ, որ Հայոց մյուս նախարարական տներից ևս սպարապետներ են ընտրվել, բայց այդ եղել է այն ժամանակ միայն, երբ թագավորի և Մամիկոնյանների մեջ որևէ թշնամություն է տեղի ունեցել։

Տարոնի ամբողջ գավառը Մամիկոնյանների ժառանգությունն էր։ Այստեղ՝ Գլակա վանքում[2] դրած էին նրանց տոհմային շիրիմները, այստեղ՝ Ողական ամրոցը ներկայացնում էր նրանց իշխանական Ոստանը[3]։ Բայց Մամիկոնյաններից մի ճյուղ, բաժանվելով, ապրում էր Տայոց երկրի ամրությունների մեջ և այնտեղ ուներ յուր անմատչելի բերդը, որ կոչվում էր Երախանի[4]։

Բացի սպարապետության պաշտոնից, իբրև քաջ, առաքինի, հայրենասեր և ամեն ազնիվ հատկություններով հայտնի մի տոհմ, գլխավորապես Մամիկոնյաններից էին ընտրում Հայոց թագաժառանգների դաստիարակները և նրանց սնուցանող դայակները։ Այնքան մեծ էր այդ տոհմի բարոյական ազդեցությունը, որ Հայոց մյուս նախարարները միշտ խորին հարգանքով էին վերաբերվում դեպի Մամիկոնյանները, և ինքը, թագավորն անգամ մի առանձին ակնածություն ուներ նրանցից։ Այդ էր պատճառը, որ Հայաստանում, ամեն մի դժվարին դեպքերում, ոչ մի գործ հնարավոր չէր համարվում, եթե Մամիկոնյանները չմասնակցեին։ Անձնազոհությունը, բարձր առաքինությունը, հերոսական քաջասրտությունը այդ տոհմի հատկանիշն էր։

Արշակ թագավորի օրերում Մամիկոնյաններից հայտնի էին երկու

եղբայրներ՝ Վասակ և Վահան։ Վասակը, որ Արշակի մանկության դայակն էր, հետո սպարապետության աստիճան ստացավ, իսկ Վահանը հազարապետի պաշտոն[5] էր վարում։

Այդ երկու եղբայրներից Ողական ամրոցում ոչ մեկը չէր մնացել։ Վերջին երկու սուրհանդակները երկու եղբայրների մահվան բոթը բերել էին Տիզբոնից։ Վասակը սպանված էր պարսից Շապուհ թագավորից, իսկ Վահանը մահացել էր բարոյապես... Ամրոցում մնացել էին երկու եղբոր որդիները միայն՝

Սամվելը՝ Վահանի որդին և

Մուշեղը՝ Վասակի որդին։

Գիշեր էր։ Ամրոցի այն բաժնում, որտեղ Վասակի ընտանիքն էր բնակվում, բոլոր սենյակների ճրագները մարած էին։ Միայն մի սենյակի լուսամուտների թանձր վարագույրների ետևից աղոտ լույս էր երևում։ Այստեղ դեռ չէին քնել։ Մի տղամարդ, անհանգիստ կերպով, երբեմն անցուդարձ էր անում սենյակի մեջ, երբեմն նստում էր բազմոցի վրա, և նրա անհամբեր աչքերը դառնում էին դեպի դուռը։ «Այդ ի՞նչ է նշանակում...— մտածում էր նա,— Սամվելը խնդրել է ինձանից գաղտնի տեսություն... ի՞նչ է պատահել, ի՞նչ խոսելիք ունի... մի՞թե դարձյալ վատ լուրեր են ստացվել... եթե մի ուրախալի բան լիներ, ինչո՞ւ էր նա գիշերով գալիս ինձ մոտ»։

Այդ տղամարդը Մամիկոնյան Վասակի որդի Մուշեղն էր։ Վեց կամ յոթն տարով միայն մեծ կլիներ Սամվելից։ Մի հոյակապ և բարեկազմ տղամարդ, որի ամեն մի գծերից երևում էր լավ պատերազմողի վեհությունը։

Սենյակը, որի մեջ գտնվում էր նա, զուրկ էր առանձին շքեղությունից։ Կոշտ մազե օթոցներով ծածկված էր հատակը, և պատերի մոտ դրած էին մի քանի բազմոցներ, որոնք նույնպես պատած էին կոշտ գորգերով։ Այստեղ և այնտեղ երևում էին զենքեր, որոնք զուրկ էին հարուստ զարդարանքներից։ Դեպի ամեն կողմ, ուր և նայում էիր, աչքի էր զարկում պարզություն և անփառասիրություն։ Երևում էր, որ այդ սենյակի բնակիչը, յուր իշխանական տան մեջ անգամ, սիրում էր պահպանել զինվորական կյանքի խստակեցությունը։ Նրա հագուստի պարզությունը բոլորովին համապատասխանում էր յուր օթևանի անշքությանը։ Նրանց մեջ նկատվում էր ավելի ամրություն և դիմացկունություն, քան թե նրբություն կամ ճաշակ։

Նա մոտեցավ լուսամուտին, ետ քաշեց վարագույրը և բաց արեց փեղկերից մեկը։ Երկար, անշարժ կանգնած, նայում էր դեպի դուրս։ Ոչինչ չէր երևում, ոչինչ չէր լսվում։ Ամեն ինչ ննջում էր խորին մթու-

թյան մեջ։ Նայում էր դեպի այդ մթությունը, և նրա սրաթռիչ միտքը սլանում էր հեռու և հեռու, դեպի Տիզբոնի արքունիքը։ Այնտեղ էր նրա սիրելի հայրը, այնտեղ էր և նրա սիրելի թագավորը։ Այն օրից, որ գնացել էին նրանք, ոչինչ տեղեկություն չուներ։ Ի՞նչ էր այդ լռության պատճառը... մի՞թե խաբե՞ց Շապուհը... մի՞թե բոլոր ճանապարհները փակված էին... Նա ոչինչ չգիտեր, նրան ոչինչ հայտնի չէր։ Եվ նրա տխուր մտածությունները նույնպես խարխափում էին անստուգությունների մեջ, որպես նրա բարկությամբ լի աչքերը խարխափում էին գիշերային խավար մթության մեջ։

Այդ դրության մեջ գտավ նրան Սամվելը, երբ սենյակի դուռը կամաց բաց անելով ներս մտավ և, ետևից ձեռքը դնելով նրա ուսի վրա, սթափեցրեց խորին մտահոգությունից։ Նա ետ նայեց, ասելով.

— Դու բավական տանջեցիր ինձ, Սամվել։

— Մորս լրտեսներով շրջապատված է իմ բնակարանը,— պատասխանեց Սամվելը վրդովված կերպով։— Հազիվ կարողացա դուրս պրծնել։

— Ուրեմն մի բան կա, որ քո մայրը լրտեսներ է դնում,— ասաց Մուշեղը և նրա թախծալի դեմքը ընդունեց ավելի մռայլ կերպարանք։

— Նստենք, կպատմեմ բոլորը։

Երկու եղբորորդիները նստեցին գահավորակի վրա, և Սամվելը մի քանի բոպե տատանվում էր, թե որտեղի՞ց և ինչպե՞ս սկսե յուր պատմությունը, որ Մուշեղին մեծ ցավ կպատճառեր։ Նա սկսեց մի փոքր հառաջաբանով, թե ինքը համոզված է, որ Մուշեղը այնքան կամքի զորություն և սրտի ամրություն ունի, որ սառնությամբ կլսե բոլորը, և միասին կխորհեն աղետավոր պատահարների առաջը առնելու։ Բայց Մուշեղը անհամբերությամբ ընդհատեց նրան, ասելով.

— Ի սեր աստծո, առանց այդ ավելորդությունների, պատմի՛ր, ինչ որ ասելու ունիս. դու կարող ես վստահ լինել, որ ես կնոջ նման արտասուք չեմ թափի։

Սամվելը պատմեց սուրհանդակի բերած լուրերը, թե ինչպես յուր հայրը և Մերուժանը միաբանվել են, ուրացել են քրիստոնեությունը, ընդունել են պարսից կրոնը, և պարսից մոգերով ու զորքերով գալիս են նվաճելու Հայաստանը։ Պատմեց և այն, որ Շապուհը յուր քույր Որմիզդուխտին կնության է տվել Մերուժանին և խոստացել է նրան հայոց թագավորությունը, եթե նա կհաջողացնե հայոց նախարարներին ու նշանավոր եկեղեցականներին կալանավորել և Պարսկաստան ուղարկել, և այնուհետև տարածել հայոց երկրում պարսից կրակապաշտությունը։ Պատմեց և այն, որ յուր հայրը ստացել է հայոց սպարապետությունը, իսկ Արշակ թագավորը արգելված է Անհուշ բերդում։

— Իսկ իմ հա՞յրը,— ընդհատեց Մուշեղը։

Սամվելը շփոթվելով կանգ առեց, և ապա պատասխանեց.

— Քո հայրը նույնպես...

— Աքսորվա՞ծ է։

— Այո՛, աքսորված է...

— Թագավորի՞ հետ։

— Այո՛, թագավորի հետ...

Սամվելը սուտ չխոսեց։ Բայց այնտեղ, Անհուշ բերդում, աքսորված էր, և շղթայակապ թագավորի աչքի առջև դրել էին նրա հոր հարդով լցրած պաճուճապատանքը միայն։ Դեռ չտեսնված Մուշեղի հետ, Սամվելը ամբողջ օրը տանջվում էր այն մտքով, թե ինչպե՛ս հայտնի նրան հոր չարաչար մահը Շապուհից։ Այդ կարող էր սաստիկ ծանր ներգործություն ունենալ նրա հայրասեր սրտի վրա և անմխիթար սուգի մեջ դնել նրան։ Վերջը ընտրեց երկու հարվածներից փոքրագույնը, հայտնելով, թե հայրը աքսորված է թագավորի հետ։

— Խաբեբա պարսի՛կ,— բացականչեց նա սրտմտությամբ լի ձայնով,— քեզ համար խոսքի և խոստմունքի սրբություն չկա... Վարազագիր մատանիով աղ կնքեցիր դու, որ քո կրոնի մեջ ամենամեծ երդումն է[6], և ուղարկեցիր, կոչելով իմ հորը և նրա թագավորին քո մոտ, իբր հաշտության ուխտ դնելու, բայց տարար և վատությամբ աքսորեցիր։ Անամո՛թ...

Այդ խոսքերը վերաբերում էին Շապուհ արքային, որ նենգավոր խոստումներով հայոց թագավորին և հայոց սպարապետին Տիզբոն հրավիրեց։

Նա դարձավ դեպի Սամվելը։

— Իրավ է, իմ հայրը ամբողջ երեսուն տարի անընդհատ պատերազմեց Շապուհի զորքերի հետ և ամեն անգամ ջարդեց նրանց։ Բայց պատերազմեց ազնիվ կերպով։ Եթե Շապուհը փոքր ի շատե մարդավարություն ունենար, նա չի պիտի մոռանար այն մեծահոգությունը, որ իմ հայրը ցույց տվեց նրան։ Երբ նա հաղթված, խորտակված, փախչում էր իմ հոր առջևից, նրա ամբողջ բանակը և ամբողջ կանանոցը գերի ընկավ իմ հոր ձեռքում։ Բայց հայրս նրա կանանցը պատվով և ժանավարներով ետ ուղարկեց պարսից արքունիք[7]։ Այդ բոլորը մոռացավ նա։ Դավաճանեց յուր երդմանը և խաբեց... Վա՜տ մարդ...

Այսպես, լի մաղձային դառնությամբ թափվում էին խոսքերը վշտացած երիտասարդի շրթունքներից, և նրա սիրտը բորբոքվում էր վրեժխնդրության բոցով։ Նա զայրացած դեմքով վեր կացավ և, կանգնելով յուր հորեղբորորդու առջև, ասաց.

— Լսի՛ր, Սամվել, մենք մեր հայրերի ղալախը չենք լինի, մենք պոռնկորդի պիտի համարվենք, եթե այդ բոլոր անիրավությունները կմնան անպատիժ։ Համբերությամբ բաժակը լցվեցավ, թշնամին մինչև ծայրը հասցրեց յուր վատությունը...

Նա մի քանի քայլ անցավ սենյակի միջով, նկատեց, որ լուսամուտը բաց էր մնացած, փակեց և ցած թողեց վարագույրը։ Անհնարին էր նայել այդ մարմնացած սրտմտության վրա, որի խոշոր աչքերից կրակ էր ցայտում, որի շրթունքները դողում էին անհագային ատամով։ Գունաթափ էր այրական դեմքը, գունաթափ, որպես մարմարինը։ Նա կրկին կանգնեց Սամվելի առջև և, ուղիղ նրա թախծալի աչքերի մեջ նայելով, հարցրեց.

— Ինչո՞ւ ես լռում, ինչո՞ւ չես պատասխանում։

— Դու ավելի բախտավոր ես, քան թե ես, Մուշեղ,— ասաց Սամվելը,— քո հայրը մի հերոս էր և հերոսի վախճան ունեցավ... Նա յուր ամբողջ կյանքը անցկացրեց, պատերազմելով հայրենիքի թշնամիների հետ, և վերջը յուր անբախտ թագավորից չբաժանվեցավ... Սուրհանդակը պատմում էր ինձ, թե ինչպես նա յուր բոլոր վեհությամբ կանգնած էր Շապուհի առյանում և հանդիմանում էր ուխտադրուժ թագավորի խաբեությունը։ Ամբողջ ատյանը և ինքը թագավորը զարմացած էին մնացել նրա համարձակության վրա։ Բայց ես անբախտ որդի եմ։ Իմ հա՛յրը, արժանավոր հարազատի անարժան եղբայրը, դավաճանեց յուր հայրենիքին, դավաճանեց յուր թագավորին։ Այժմ, Շապուհի ձեռքում մի անարգ գործիք դարձած, գալիս է ծածկելու հայրենի երկիրը հրով և արյունով... գալիս է ոչնչացնելու այն եկեղեցիները, որոնց մեջ ինքը մկրտված է և որոնցից շատերը յուր նախնիքն են կառուցել... գալիս է մեզ ստիպելու, որ պարսիկներն ալթենք և պարսից աստվածներին երկրպագենք...

Արտասուքը թույլ չավեց նրան ավարտել յուր խոսքերը, երկու ձեռքով բռնեց աչքերը և սկսեց դառն կերպով հեկեկալ։ Նա չուներ Մուշեղի խստասրտությունը և ոչ նրա ամուր բնավորությունը։ Նրա սիրտը այնքան քնքուշ էր և նրա զգացմունքները այնքան նուրբ էին, որ ամենաթեթև պատահարներն անգամ սաստիկ ազդում էին նրա վրա։ Բայց Մուշեղը ուշադրություն չդարձրեց նրա արտասուքի վրա և կատաղությամբ գոչեց.

— Այո՛, քո հայրը դավաճանեց... և Մամիկոնյանների տոհմի վրա մի մեծ բիծ դրեց... պետք է մաքրե՛լ այդ բիծը...

Նա երեսը շուռ ավեց, և նրա աչքին ընկավ յուր պապի՝ Վաչեի պատ-

կերը[8], որ քարշ էր ընկած պատից։ Մի քանի րոպե կանգնեց պատկերի առջև, խորին պատկառանքով նայում էր նրա վրա։ Հետո դարձավ դեպի Սամվելը և, ձեռքը մեկնելով դեպի պատկերը, խոսեց.

— Երբ այդ հերոսը ընկավ պատերազմի դաշտում, այն արյունահեղ կռվի մեջ, որ մղում էր պարսիկների դեմ, այդ ժամանակ հայոց ամբողջ աշխարհը սուգի մեջ մտավ։ Լաց էր լինում թագավորը, լաց էր լինում զորքը, լացում էին և շինականները։ Նրա թաղման հանդեսում հայոց մեծ քահանայապետ Վրթանեսը, Գրիգոր Լուսավորչի որդին, յուր ճառի մեջ այդ խոսքերով մխիթարեց ժողովրդին.

«Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, դա մեռավ, բայց յուր մահվամբ անմահացավ։ Որովհետև դա յուր անձը զոհեց մեր աշխարհի, մեր եկեղեցիների և մեր աստվածադիր կրոնի համար։ Դա մեռավ, որպեսզի մեր աշխարհը, գերի դառնալով, չքանդվի, որպեսզի սուրբ եկեղեցիների կարգը չխանգարվի, և մեր տաճարների սրբությունները անօրենների ձեռքը չընկնեն։ Եթե մեր թշնամիները տիրելու լինեին մեր աշխարհին, անշուշտ իրանց անաստված կրոնը կհաստատեին այստեղ։ Իսկ այդ բարեպաշտ նահատակը դրա համար պատերազմեց, որ չարությունը հալածե, հեռացնե մեր աշխարհից, և դրա համար նա մեռավ, որ մեր աստվածասեր երկրում անօրենությունը մուտք չգործե։ Քանի որ կենդանի էր դա, միշտ արդար վաստակով պատերազմեց, իսկ յուր մեռնելու ժամանակ՝ յուր անձը զոհեց տերի ճշմարտության համար և նրա հոտի փրկության համար։ Նա՛, որ յուր հայրենիքի, յուր եղբայրների և յուր սուրբ եկեղեցու համար յուր անձը չխնայեց, նա՛, կրկնում եմ, դասակից կլինի Հիսուս Քրիստոսի նահատակների հետ։ Արդ, լաց չլինենք այդ մեծ կորուստով, այլ հարգենք հանգուցյալի անձնազոհությունը, օրենք դնելով մեր աշխարհում, որ դրա քաջության հիշատակը, հավիտենից հավիտյան, Քրիստոսի սուրբ նահատակների հետ, անխափան տոնվի մեր եկեղեցիներում»[9]։

Վերջացնելով այդ ճառը, որ Մամիկոնյանները անգիր գիտեին, որ նրանց ուխտի ավանդական հանգանակն էր, Մուշեղը ավելացրեց.

— Հայոց եկեղեցին յուր սուրբ սեղանի վրա, պատարագի ժամանակ, յուր նահատակների թվում հիշում է և մեր պապին. բայց այսուհետև նույն եկեղեցին անեծք կկարդա նրա անարժան թոռան վրա...

— Եվ դա իմ հա՞յրն է...— գոչեց Սամվելը ողբալի ձայնով։

Մուշեղը պատասխանեց.

— Հայրենիքի թշնամին, հայրենիքի դավաճանը ո՛չ քո հայրը կարող է համարվել, և ո՛չ իմ հորեղբայրը։ Այսուհետև նա մեզ համար

օտար է և ավելի օտար, քան թե մի պարսիկ։ Համաձա՞յն ես, Սամվել։

— Բոլորովին։

— Տո՛ւր ինձ ձեռքդ։

Սամվելը մեկնեց յուր դողդոջուն ձեռքը[10]։

— Վճռված է...— ասաց Մուշեղը և նստեց նրա մոտ։— Այժմ խորհենք, թե ի՛նչ պետք է անել։

Երկար երկու կողմից ևս տիրում էր լռություն։

— Լսի՛ր, Սամվել,— խոսեց Մուշեղը,— երբեք Հայաստանը այսպիսի ճգնաժամի մեջ չէ գտնվել, որպես այժմ։ Թագավորը աքսորված է, հայրապետը աքսորված է, իմ հայրը՝ սպարապետը աքսորված է։ Թշնամիները այդ անտիրությունից կարող են ամեն տեսակ օգուտներ քաղել։ Ներքին երկպառակությունը ավելի մեծ վտանգ է սպառնում, քան թե արտաքին թշնամին։ Իմ ստացած տեղեկությունների համեմատ, մեր նախարարներից, մեր գավառներից շատեր ապստամբել են, մտածում են թոթափել հայոց թագավորի լուծը։ Ապստամբել է Աղձնյաց բդեշխը[11] և, Զորո կոչված ահագին պարիսպը[12], կառուցանելով, յուր աշխարհը բաժանել է մեր երկրից։ Ապստամբել է Նոր-Շիրականի բդեշխը[13]։ Ապստամբել են՝ Մահկեր տան, Նիհորականի, Դասնորեի բդեշխները[14]։ Ապստամբել է Գուգարաց բդեշխը[15]։ Ապստամբել են՝ Ջորոց գավառի տերը, Կողբա գավառի տերը և Գարդմանաձորի տերը[16]։ Ապստամբել են՝ Արցախի ամուր գավառը[17], Տմորյաց ամուր գավառը[18], Կորդուաց ամուր աշխարհը[19] և Կորդվաց գավառի տերը[20]։ Ապստամբել են՝ ամբողջ Ատրպատականը[21], Մարաց ամուր աշխարհը[22] և Կասպից աշխարհը[23]։ Ապստամբել են Անձևացյաց և Մեծ Ծոփաց իշխանները[24]։ Պարսից սահմանակիցները բռնել են պարսից կողմը, իսկ հունաց սահմանակիցները բռնել են հունաց կողմը։

Սամվելը, որ խորին վրդովմունքով լսում էր այդ բոլորը, ընդհատեց Մուշեղի տեղեկությունները, բացականչելով.

— Անիրավնե՜ր, նրանք, որ մեր հայրենիքի կողմնակալներն ու սահմանապահներն են, այժմյան ընդհանուր ճգնաժամի ժամանակ, փոխանակ պաշտպանելու երկիրը արտաքին թշնամիներից, նախ իրանք են լինում, որ ապստամբում են և բարեկամական ձեռք են մեկնում թշնամուն։ Այլևս ի՞նչ է մնում մեզ, երբ գլխավոր ուժերը ապստամբել են...

— Մեզ մնում է ժողովուրդը,— պատասխանեց Մուշեղը խրոխտալի ձայնով։— Թշնամին մի մեծ սխալ գործեց, և մենք այդ սխալից կարող ենք օգուտ քաղել։ Թշնամին դիպավ ժողովրդի ամենասրբազան

զգացմունքներին — նրա եկեղեցուն։ Եթե քո հայրը և Մեհրուժան Արծրունին ճանաչած լինեին հայի սիրտն ու հոգին, նրանք պետք է ձեռնամուխ չլինեին դեպի եկեղեցին, այն ժամանակ, գուցե, կարող էին նվաճել Հայաստանը։ Իսկ այդ ձեռնարկության մեջ, ես վստահ եմ, որ նրանք անպատճառ տանուլ կտան։

— Բայց ժողովուրդը դեռ ոչինչ չգիտե։

— Այդ դեպքում հոգևորականությունը մեր զորեղ դաշնակիցը կլինի։ Դու, Սամվել, ավելի մոտ հարաբերություններ ունես Աշտիշատի վանքի հետ, էգուց, առանց ժամանակ կորցնելու, կգնաս այնտեղ և ինչ որ պետք է, կկարգադրես։ Իսկ ես իմ կողմից բոլոր վանքերը մարդիկ կուղարկեմ։

— Բայց ես չգիտեմ՝ ինչպե՞ս վարվել իմ մոր հետ։ Նա բոլորովին կաշկանդել է ինձ։

— Քո մայրը, Սամվել, մի սարսափելի կին է, նա կարող է շատ բան փչացնել, եթե նրա հետ զգուշությամբ չվարվես։

— Որպիսի՞ զգուշությամբ։

— Դու պետք է քեզ այնպես ձևացնես, որ կամակից ես նրա հետ։

— Ուրեմն ես պետք է կեղծավորվե՞մ։ Դա շատ ծանր կլինի ինձ համար։

— Առայժմ ուրիշ ճար չկա։

Է

ՊԱՏՐՎԱԿ

Առավոտյան, չնայելով որ օրից բավական անցել էր, բայց Սամվելը դեռ չէր դուրս եկել յուր քնարանից։ Գիշերը նա շատ ուշ վերադարձավ Մուշեղի մոտից և անկողին մտավ համարյա լուսաբացին։ Պատանի Հուսիկը արդեն մի քանի անգամ մոտեցել էր նրա քնարանի դռանը, ականջը անհամբերությամբ տարել էր կողպեքի մոտ, և երկար զգուշությամբ լսել էր յուր տիրոջ շնչառության ծանր հառաչանքները։ «Չլինի թե հիվանդ է»... մտածեց նա վերջին անգամ, և բարեսիրտ պատանու պայծառ դեմքը մռայլվեցավ խորին տխրությամբ։

Նրա դուրս գնալուց հետո ընդունարանը ներս մտավ մի ծերունի, չոր ու ցամաք, որպես կմախք։ Մորուքի և գլխի ճերմակ մազերի միջից դուրս էր նայում նրա մագաղաթի գույնով սառն դեմքը, որ յուր խոշոր

գծերով արտահայտում էր մի ամուր բնավորություն։ Թե ինչո՞ւ համար մտավ նա, ինքն էլ չգիտեր, բայց շուտով յուր համար գործ գտավ։ Մոտեցավ սենյակի այս և այն առարկային, նայեց, զննեց, մեկը վեր առեց, մյուսի տեղը դրեց, մյուսը առաջինի տեղը դրեց։ Մոտեցավ անկյուններում դրած նիզակներին, աշտեններին, մեկը վեր առեց, այս անկյունից այն անկյունը տարավ, այնտեղինը այստեղ բերավ, դրեց, նայեց, տեսավ, որ փոքր-ինչ ծուռն էր կանգնած, ուղղեց, և դարձյալ շարունակեց նայել։ Ահա այդ տեղափոխություններով էր զբաղված, երբ պատանի Հուսիկը կրկին ներս մտավ, և նրա ձեռքը բռնելով, ասաց.

— Այդ ի՞նչ քո գործն է։ Էլի եկար ամեն բան խառնելու։

— Սո՞ւս, լակո՛տ,— պատասխանեց ծերունին և ձեռքով այնպես սաստիկ հրեց նրան, որ եթե Հուսիկը կատվի առաձգական ճարպկությունը չունենար, կարող էր ծեփի նման թափվել հատակի վրա։

— Կամա՜ց, սիրելի Արբակ,— վշշացրեց պատանին,— մեր տերը քնած է։

— Քնա՞ծ է,— կրկնեց ծերունին ծաղրական ձայնով,— քնած է, կզարթնի, հիմա ո՞վ է քնում։

Եվ իրավ, ընդունարանի աղմուկը զարթեցրեց Սամվելին։

Ծերունի Արբակը Սամվելի դայակն էր. երեխայությունից սնուցել էր նրան յուր բազուկների վրա. այդ էր պատճառը նրա չափազանց ընտանիության։ Նա մի հին զինվոր էր, զինվորի կոշտ և մաքուր սրտով։ Մինչև այդ հասակը նա դեռ պահպանել էր յուր վաղեմի քաջազնական հոգու թարմությունը։ Սամվելը հարգում էր այդ մարդուն, հարգում էր նրա ծերությունը, հարգում էր և նրա անծերանալի արիությունը։ Այդ հասակում ևս նրա նետը երբեք չէր վրիպում նպատակից. այդ հասակում ևս նա խիստ հաջողակ ձեռք ուներ։ Դեռ պատանեկության հասակից կրթում էր նա Սամվելին որսորդության և զանազան զինվորական մարզությունների մեջ. սովորեցնում էր վազել, լայն վիհերի վրայից թռչել, ձիարշավ լինել և խստերախ նժույգներին սանձահարել։ Սովորեցնում էր նետաձիգ լինել և նետերով երկաթյա զրահներ պատռել։ Այդ փորձերը նա անել էր տալիս պղնձյա տախտակների վրա։ Սովորեցնում էր սրի մի հարվածով մարդկանց գլուխը թռցնել, կամ նրանց մեջտեղից կես կիսել։ Այդ փորձերը նա անել էր տալիս անասունների վրա։ Սովորեցնում էր քաղցի ու ծարավի դիմանալ և գիշերը առանց անկողնի բացօթյա տեղում պառկել։ Մի խոսքով, սովորեցնում էր այն բոլոր մարզությունները, որ այդ ժամանակ ընդունված էին նախարարների որդիների կրթության համար, և որոնք անհրաժեշտ էին լավ մարդ և լավ զինվոր լինելու համար[1]։ Սամվելի դայակի բարոյական կրթության

ծրագիրը շատ սահմանափակ էր։ Նա բովանդակում էր յուր մեջ մի քանի հիմնական խրատներ միայն. սուտ չխոսել, տված խոստումները կատարել, ողորմած լինել դեպի աղքատները, հավատարիմ լինել Թագավորին և Հայրենիքին, սակավապետ լինել և ժուժկալ։ Իսկ ավելի ընդարձակ բարոյական և հոգևոր կրթությունը հանձնված էր առանձին վարժապետների, որ միևնույն ժամանակ սովորեցնում էին նրան կրոն, լեզուներ և դպրություն։ Այդ վարժապետները հրավիրվում էին ամբողջ մերձակա Աշտիշատի վանքից[2]։

Արբակը շատ համեստ մարդ էր, սիրում էր, որ ուրիշները խոսեին յուր մասին, բայց երբեմն, երբ բարկացնում էին նրան, նա հարկանցի կերպով հիշեցնել գիտեր յուր տոհմային ազնվականությունը, ասելով. «Ինձ խո պատի տակից չեն գտել»... Խիստ հաճախ սովորություն ուներ խոսել այն ճակատամարտի մասին, թե ի՛նչպես պարսիկները կտրեցին Եփրատի նավակամուրջը, արգելեցին Հուլիանոսի անցքը, իսկ իրանք պարսիկներին վանելով, Հուլիանոսի համար ճանապարհ բաց արին[3]։ «Ա՜խ, եթե ես գիտենայի, որ Հուլիանոսը այնպես վատ մարդ էր»... միշտ այդ խոսքերով էր վերջացնում յուր պատմությունը։

Պատմիր Արբակին ամեն տեսակ պատերազմական հրաշալիքներ, նա քեզ կպատասխաներ. «Ա՜յ, այն ժամանակ, երբ մենք կռվում էինք Եփրատի մոտ»... և կսկսեր նավակամուրջի պատմությունը։ Նա մոռանալ չէր կարող ուրացող կայսրի վարմունքը յուր թագավորի՝ Տիրանի հետ, որ պատճառ դարձավ հայոց մի հզոր քահանայապետի մահվանը[4]։

Սամվելը դուրս եկավ ննջարանից և, տեսնելով այնտեղ Արբակին, ողջունեց, ասելով.

— Բարով, Արբակ, ի՞նչ կա։

— Քո ողջությունը,— պատասխանեց ծերունին, նստելով հատակի վրա տարածված օթոցի վրա։

Նա չէր սիրում նստել բարձր բազմոցի կամ դահավորակի վրա, համարելով այդ մի ծիծաղելի սովորություն։ «Փայտե ձի եմ նստում, որ երբեք չէ շարժվում»— մի այդպիսի հանելուկի ձև էր ստացել նրա բերանում այդ սովորությունը։

— Լավ է, որ եկար, Արբակ,— ասաց Սամվելը.— ես այս առավոտ կամենում եմ որսի գնալ։

Ծերունին ժպտալով պատասխանեց.

— Որսի գնացողի՞ն նայեցեք... որսի գնացողը հիմա՞ է վեր կենում... արևը հինգ ջիդայից ավելի բարձրացել է։

Այսինքն՝ նիզակի հինգ երկարությամբ բարձրացել է հորիզոնի վրա։ Նիզակը մի չափ էր Սրբակի համար, որ ամեն տարածություն անխտիր նրանով էր չափում։

Դայակի հանդիմանությունը իրավացի էր. նախ, որ Սամվելը երբեք սովորություն չուներ այնպես ուշ վեր կենալու. երկրորդ, որ որսի էին գնում դեռ արևը չծագած։

Նա արդարացրեց իրան, ասելով, որ գիշերը շատ ուշ քնեց, երկար անհանգիստ էր, և լուսաբացին միայն քունը տարավ։ Բայց այդ բոլոր պատճառները ոչինչ համոզել Սրբակին չկարողացան։ Նա մնաց այն կարծիքի մեջ, թե երբ մի երիտասարդ գիշերը քնել չի կարողանում, նա անպատճառ մի որևիցե «սատանայություն» կունենա, և այդ, Սրբակի հայացքով, շատ անվայել էր։

Սրբակը սովորել էր նայել Սամվելի վրա, որպես մի երեխայի վրա, որը մի ժամանակ մոռանում էր մոր տված թաշկինակով քիթը սրբել։ Նա բնավ հաշտվել չէր կարողանում այն մտքի հետ, թե այն երեխան աճել էր, մեծացել էր, և յուր կամքը ու ցանկություններն ուներ։ Թեև Սամվելը վաղուց դուրս էր եկել նրա հոգաբարձության տակից, բայց պահպանելով ծերունու պատիվը, երբեմն նրա խորհրդին էր դիմում։ Բայց երբ Սրբակի խորհրդին էին դիմում, այդ միջոցում նա շատ խըստապահանջ էր դառնում։

Վերջապես, զիջանելով յուր սանիկի թախանձանքին, ասաց նա.

— Հիմա որ գնում ես, ես կպատվիրեմ կարմիր ձին պատրաստեն։

— Ինչո՞ւ կարմիրը, Սրբակ, դու գիտես, որ ես ճերմակն եմ սիրում,— հակառակեց Սամվելը։

— Ճերմակը դեռ նստելու չէ,— պատասխանեց Սրբակը գործագետ մարդու եղանակով.— այդ անիրավը, որպես տեսնում եմ, խելքի գալու միտք չունի. նա մի օր քեզ փորձանքի մեջ կձգե։

Սամվելը ընդունեց ծերունու խորհուրդը, միայն խնդրեց, որ երկու ծառայից և երկու բարակից ավելի չլինի յուր հետ։ Այդ ցանկությունը խիստ օտարոտի երևաց Սրբակին, որովհետև նա, ինչ որ որսորդության էր վերաբերում, այդ սովորություններին ու կարգերին սաստիկ նախանձախնդիր էր։ Ամեն անգամ, երբ Սամվելը որսորդության էր գնում, նրան ուղեկցում էին տասն-քսան ձիավորներ և նույնքան շներ։ Մի քանի օր առաջ հարևան ավատականների որդիները հրավեր էին ստանում մասնակցելու որսորդությանը։ Եվ վերջապես, որոշվում էր տեղը, ժամանակը, ուր կանխապես նախապատրաստություններ էին տեսնում[5]։ Իսկ այս առավոտ հանկարծ Սամվելի խելքին փչում էր որսի գնալ, այն ևս երկու ձիավորով։ Ի՞նչ կմտածեին տեսնողները։ Դա անվայել չէ՞ր լի-

նի։ Բայց Սամվելը հանգստացրեց ծերունուն, ասելով, թե ավելի մի թեթև զբոսանք կատարելու ցանկություն ունի, քան թե որսորդության, որովհետև իրան վատ է զգում և կամենում է փոքր-ինչ զվարճանալ։

Ամրոցում արդեն գիտեին սպարապետի վերադարձը Տիզբոնից, իհարկե, ոչ այն մանրամասներով, որպիսի լուրեր բերեցին վերջին երկու սուրհանդակները։ Սամվելը կամեցավ գիտենալ, թե ի՛նչ տպավորություն էր գործել այդ համբավը ծերունու վրա։

— Դու գիտե՞ս, Արբակ, որ հայրս գալիս է, և գալիս է Հայոց սպարապետի պաշտոնով։

Ծերունին փոխանակ պատասխանելու, ձեռքը տարավ դեպի գլուխը, ճակատը շփեց, կարծես թե դժվարանում էր պատասխան գտնել։

— Ինչո՞ւ չես խոսում։

— Այդ բանից լավ հոտ չէ գալիս...— պատասխանեց պարզախոս ծերունին, և այժմ ավելի պինդ կերպով սկսեց շփել յուր ճակատը։

— Ինչո՞ւ, Արբակ, այդ ի՛նչ ասելու բան է,— հարցրեց Սամվելը իրան վիրավորված ձևացնելով։

Ծերունին ձեռքը տարավ դեպի ճերմակ մորուքը և բռնելով, ասաց.

— Այդ մազերից ամեն մեկը մի փորձանքի մեջ է սպիտակել, Սամվել... Ես շատ բան եմ տեսել և շատ բան եմ փորձել...

Նա լռեց, այլևս ոչինչ չասաց, բայց նրա վշտալի դեմքը շատ բան ասաց Սամվելին։ Ծերունին, իհարկե, չգիտեր, թե որպիսի՛ չար հանձնարարություններ ստացած ուներ Սամվելի հայրը Շապուհ արքայից, որ պետք է կատարեր յուր հայրենիքում։ Բայց նրան անհանգստացնում էր այն աղոտ կասկածները, թե ինչո՞ւ Հայոց սպարապետությունը Սամվելի հորը տվեցին, քանի որ այդ պաշտոնը տոհմային օրենքով վայելում էր նրա եղբայրը՝ Վասակը, կամ ի՛նչ իրավունքով պարսից Շապուհ արքան ձեռնամուխ էր լինում այն կարգադրությունների մեջ, որ Հայոց թագավորի իրավունքից միայն կախումն ունեին[6]։ Այդ կասկածները արտահայտեց ծերունին, երբ վեր կացավ և, յուր քայլերը ուղղելով դեպի սենյակի դուռը, ասաց դառնացած ձայնով.

— Ես շատ ուրախ կլինեի, երբ մեր տերը յուր թագավորի հետ կվերադառնար Տիզբոնից, և ոչ թե Մերուժան Արծրունու հետ...

Նա դուռը սաստիկ բախեց յուր ետևից և մրթմրթալով անցավ նախասենյակից։

Արբակի վրդովմունքը սաստիկ ազդեց Սամվելի վրա։ «Որպիսի՜ սուգ պետք է տիրե ամրոցում, երբ գործի իսկությունը բոլորին հայտնի կլինի,— մտածում էր նա,— ոչ ոք, բացի իմ մորից, գոհ չի պիտի

մնա իմ հոր վարմունքից... Նա կբերի յուր հետ աղմուկ, կռիվ, նախանձ, ատելություն յուր տան մեջ...»։

Բոլոր խոսակցության ժամանակ Հուսիկը, ոտքի վրա կանգնած, լսում էր։ Նա ո՛չ Աբրակի ճերմակ մորուքն ուներ և ո՛չ նրա փորձերը։ Բայց նա ևս մի բան զգում էր, թեև բացատրել չէր կարողանում, թե ինչո՞ւ յուր տերը, հոր գալուստը լսելով, փոխանակ ուրախանալու, միշտ տխուր էր։

Այս առավոտ, կարծես, կորցրել էր նա յուր սովորական զվարթությունը և գտնվում էր մի տեսակ մելամաղձության մեջ։ Սամվելը նկատեց այդ և կարեկցությամբ հարցրեց.

— Ի՞նչ կա, Հուսիկ, ինչո՞ւ ես այդպես լուռ։

Պատանին զգուշությամբ նայեց յուր շուրջը և, մի քանի քայլ մոտենալով Սամվելին, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Գիտե՞ս, տեր իմ, ինչ իմացա...

— Ի՞նչ իմացար,— հետաքրքրությամբ հարցրեց Սամվելը։

— Այն մարդը այս գիշեր դարձյալ եկել էր տիկնոջ մոտ։

— Ո՞ր մարդը։

— Սուրհանդակը, որ մեծ տերից նամակ էր բերել։

— Քեզ ո՞վ ասաց։

— «Նա» ասաց.

— Նվա՞րդը։

— Այո՛, Նվարդը։ Ասաց, որ գիշերից բավական անցել էր, երբ ներքինի Բագոսը բերեց նրան տիկնոջ սենյակը։ Մինչև այդ ժամանակ տիկինը նստած սպասում էր։ Հետո սենյակի դռները կողպեցին, առանձնացան, սկսեցին երկար ու երկար խոսել։

— Ի՞նչ խոսեցին։

— Նվարդը բոլորը լսել չէր կարողացել. ասում էր, որ շատ կամաց էին խոսում, միայն դռան ճեղքից տեսել էր, որ տիկինը հանձնում էր նրան զանազան նամակներ։ Նա պետք է շատ տեղեր գնար, շատ երկրներից անցներ, շատ մարդկանց հետ տեսնվեր, և այն նամակները պետք է հասցներ նրանց։

— Այն տեղերի կամ այն մարդկանց անունները Նվարդը չասա՞ց քեզ։

— Ես հարցրի, Նվարդը չէր հիշում, ասում էր, որ անծանոթ անուններ էին, չկարողացա մտքումս պահել։ Միայն այսքանը լսել էր, որ տիկինը խստիվ պատվիրում էր սուրհանդակին, որ առանց մի բոպե կորցնելու, աշխատե երկու շաբաթվա ընթացքում բոլոր տեղերից անցնել և բոլոր նշանակած մարդկանց հետ տեսնվել։

— Այդ մարդկանց և ո՞չ մեկի անունը չէր հիշում։

— Հա՛, մոռացա, մեկի անունը հիշում էր։ Նա ասաց, որ տիկինը պատվիրեց, որ սուրհանդակը գնա ամենից առաջ «արևորդիների» քրմապետ Վարազդատի մոտ[7]։

Այդ անունը լսելով, Սամվելը խիստ զուարթացավ։ Միայն այդ անունը բավական էր Սամվելին գաղափար տալու յուր մոր վտանգավոր ձեռնարկությունների մասին։ Տարոնում մինչև այդ ժամանակ դեռ գոյություն ուներ հին արևապաշտություն։ Նրա հետևողներին նոր անունով կոչում էին «արևորդիք»։ Նրանք ազգով հայ էին, բայց քրիստոնյա հայերի հալածանքից վախենալով, թեև առերևս իրանց քրիստոնյա էին ձևացնում, բայց գաղտնի կերպով պաշտում էին հին կրոնը, և որպես նեղված ու հալածված մի հասարակություն, միշտ մի հարմար առիթի էին սպասում ապստամբվելու։ Իսկ այժմ առիթը ներկայանում էր։ Մամիկոնյան տիկինը, Տարոնի տիրուհին, ավետիս էր ուղարկում նրանց քրմապետին և հրավիրում էր աջակցել իրան։ Եվ ովքե՞ր, եթե ոչ «արևորդիները», ցույց կտային ամեն պատրաստակամություն ընդունելու տիկնոջ հրավերը։ Նրա ամուսինը, Տարոնի տերը, գալիս էր Տիզբոնից ոչնչացնելու քրիստոնեությունը և բերում էր յուր հետ պարսից արևապաշտությունը։ Եվ ովքե՞ր, եթե ոչ «արևորդիները», գրկաբաց կընդունեին նրան։ Իսկ «արևորդիների» թիվը Տարոնում, մանավանդ Միջագետի սահմաններում, փոքր չէր։ Ուրեմն, հողը պատրաստ էր, որի վրա Սամվելի մայրը արդեն սկսել էր սերմանել ներքին երկպառակության սերմերը։

Այդ բոլորը պարզ էր Սամվելի համար։

Այդ առավոտ մոր սուրհանդակը ճանապարհ ընկավ դեպի «արևորդիների» քրմապետը։ Իսկ ինքը՝ որսորդության պատրվակով, պատրաստվում էր ճանապարհ ընկնել դեպի Աշտիշատի վանքը՝ Հայաստանի Մայր եկեղեցին[8]։ Այնտեղ էին կենտրոնացած քրիստոնեության նշանավոր ուժերը։ Գնում էր ազդարարելու տեղային հոգևորականությանը գալոց վտանգի մասին, գնում էր հորդորելու նրանց, որ նրանք ևս իրանց կողմից պատրաստվեին հուզելու քրիստոնյա ժողովուրդը։ Երկու համացեղ, համազգի հայ հասարակությունների կրոնական ներկայացուցիչները պետք է մրցեին, պետք է մաքառեին միմյանց հետ։ Մեկի նախաձեռնությունը տալիս էր մայրը, մյուսինը— որդին։

Ընդունարանից մի դուռ բացվում էր դեպի հանդերձատունը, որ այլ անունով կոչվում էր «պատմուճանաց» տուն[9]։ Այնտեղ պատուհաններում, մեծ և փոքր կապոցների մեջ, դրած էին Սամվելի զգեստները։ Իսկ սամույրի մուշտակները[10] և զանազան վերարկուները, հարմարաց-

բած տարվա եղանակներին, քարշ էին տված ավելի ընդարձակ պատուհաններում և ծածկված էին վարագույրներով։ Առանձին տեղ էին բռնում նրա զինվորական և որսորդական հագուստները։ Բոլորը թանկագին, բոլորը զարդարած ոսկով ու արծաթով։ Սամվելը մտավ այնտեղ և հագավ յուր որսորդական կարճ ու թեթև զգեստը։ Այդ զգեստի մեջ նրա գեղակազմ իրանը ներկայանում էր յուր բոլոր շքեղությամբ։

Իսկ Հուսիկը այդ միջոցում զբաղված էր մի այլ սենյակում, որի դուռը բացվում էր հանդերձատան միջից։ Այդ սենյակը իշխանի զենքարանն էր։ Այստեղ պահվում էին նրա՝ թե՛ յուր անձնական, և թե՛ յուր ձիաների՝ թանկագին զարդերը։ Բայց Հուսիկը ընտրեց ձիաների ասպազենքից ամենահասարակը միայն, որովհետև յուր տերը որսորդության էր գնում։ Ավելի փառավորները պահված էին հանդիսավոր օրերի համար։

Երբ Սամվելը պատրաստ էր, Հուսիկը վեր առեց ասպազենքը և յուր տիրոջ հետից գնալով, երկուսը միասին դիմեցին դեպի իշխանական ասպատանը (ախոռատունը)։

Ասպատանը գտնվում էր ամրոցից դուրս, մի առանձին շինվածքի մեջ, որը յուր գեղեցկությամբ համարյա մի ապարանք էր, միայն նժույգների ապարանք։ Այնտեղ ապրում էր և իշխանական շների բազմությունը։ Այնտեղ պահվում էին և որսորդական բազեների զանազան տեսակները։ Երբ իշխանը ներս մտավ ասպատանի ընդարձակ, քառակուսի բակի մեծ դռնից, ծառաները հեռվից նկատեցին նրա գալուստը և շտապեցին ախոռապետին իմացում տալու։ Իսկույն հայտնվեցավ նա և, ընդառաջ գալով, մինչև մոտենալը, մի քանի տեղ կանգ առեց և հեռվից խորին կերպով գլուխ տվեց։

— Բարով, Զավեն,— ողջունեց իշխանը։

Ախոռապետը կրկին լռությամբ գլուխ տվեց։

Բակում արդեն դուրս էին բերել կարմիր նժույգը, ծածկված գեղեցիկ չուլով, որի եզրերը զարդարված էին գույնզգույն, բրդեղեն ծոպերով։ Մի ուժեղ ձիապան բռնած ուներ սանձից, բայց անհանգիստ, աշխույժով լի նժույգը չէր դադարում զանազան կատակներ անել յուր դարմանողի հետ. խրխնջում էր, հռհռում էր և, առջևի ոտները բարձրացնելով, ետևի ոտների վրա ծառանալով, կարծես կամենում էր փշրել յուր սանձահարողին սմբակների սաստիկ հարվածքի տակ։ Բայց նա զորավոր ձեռքով զսպում էր ամեհի անասունին։ Ձիապանների խումբը, շըրջապատած ուրախ դեմքերով, նայում էին այդ վտանգավոր մարզության վրա։ Իսկ ծերունի Արբակը երբեմն մոտենում էր և, ձեռքով փայ-

փայլում նժույգի գեղեցիկ պարանոցը, հայրական խրատներ էր կարդում, ասելով.

— Հանգի՛ստ, Եղնիկ, ինչո՞ւ խելոք չես կենում։

Սամվելը մոտեցավ և, նայելով նժույգի խաղերին, դարձավ դեպի Արբակը, ասելով.

— Դու արգելեցիր ինձ այսօր ճեմակը նստել, բայց Եղնիկը նրանից շատ խելացի չէ։

— Ուրախությունից է այդպես անում,— պատասխանեց ծերունին և հրամայեց, որ ձեռքով փոքր-ինչ ման ածեն, մինչև հանգստանա, որ հետո թամբեն։

Ասպատանը բաժանված էր զանազան մասների. մի մասում զետեղված էին իշխանական ջորիները, մյուս մասում՝ ավանակները, մի այլ տեղ՝ հասարակ ձիաները, իսկ այդ մասում՝ ընտիր նժույգները։ Սամվելը գնաց նժույգներին այցելելու։ Ախոռապետը առաջնորդում էր նրան։ Նրանք մտան երկար ասպատանի մեջ, որի վերջը հազիվ էր երևում։ Մսուրների վրա շարքով կապած էին նժույգները, մաքուր, առողջ, մինը մյուսից ավելի գեղեցիկ։ Հարյուրից ավելի կլինեին նրանք։ Նրանց զսպելու համար, մսուրների երկու կողմերի վրա ամրացրած երկաթյա հաստ օղակներից կապել էին յուրաքանչյուր նժույգի երասանակի երկճղի ծայրերը։ Չբավականանալով այդ զգուշությամբ, ավելի չար, ավելի անհանգիստ նժույգների ետևի ոտները շղթայել էին, որ չհարվածեն միմյանց, թեև յուրաքանչյուրը բաժանված էր յուր ընկերից փայտյա ամուր վանդակապատով[11]։

Սամվելը անցնում էր նրանց ետևից և մի առ մի զննում էր։ Նրան միշտ մեծ բավականություն էր պատճառում, երբ մտնում էր այդ հարուստ ասպատանը։ Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը, և ծանոթ էր յուրաքանչյուրի բնավորության հետ։ Ախոռապետը մի առանձին հաճությամբ պատասխանում էր յուր տիրոջ նկատողություններին, որ արտահայտում էին նրա խորին գոհունակությունը։ Մի քանի նժույգներին մոտեցավ նա և ձեռքով փայփայեց նրանց գլուխը։ Այդ ավելի ուրախացրեց ախոռապետին, որպես ուրախանում է մի գթոտ մայր, երբ նրա աչքի առջև գգվում են նրա սիրուն, կայտառ զավակներին։

— Ժամանակն է, կարծեմ, Զավեն, «խամից հանել»[12] ձիաները,— ասաց Սամվելը։— Գուցե շուտով հարկավոր կլինեն...

— Հասկանում եմ, տեր իմ,— պատասխանեց ախոռապետը և նրա մաշոտ դեմքի վրա երևաց մի բարեսիրտ ժպիտ։— Մեծ իշխանը գալիս է, երևի, ընդառաջ պիտի գնաք։

— Այո՛, և մեծ խումբով...

— Այդ ես գիտեի, և դրա համար հենց այսօրից սկսեցինք ձիաները «խամից հանել»։ Այսուհետև ամեն օր կտանենք և մի քանի ժամ կմանածենք։

Դուրս գալով ասպաստանից, Սամվելը գտավ յուր ձին թամբած, պատրաստած, նստեց և ճանապարհ ընկավ։

Ը

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Կապարճը թիկունքին, աղեղը ուսին, երկար նիզակը ձեռին, նստած յուր սիրուն կարմիրի վրա, գնում էր Սամվելը այն ճանապարհով, որ տանում էր Ողականի ամրոցից դեպի Աշտիշատի վանքը։ Ուրախ նժույգը խաղում էր, ոստյուններ էր գործում, կրծոտում էր յուր սանձը, և մի քանի րոպեում նրա բերանը պատվեցավ սպիտակ փրփուրով։ Բայց շուտով մեղմացավ նա, կարծես մի առանձին տխրությամբ զգալով, թե ինչո՞ւ յուր տերը չէ պատասխանում յուր զվարճություններին։ Ամեն անգամ, երբ պատահում էր նրան՝ յուր տիրոջ հետ որսորդության գնալ, նա հազարումեկ փաղաքշանքով խրախուսում էր, քաջալերում էր նրան։ Բայց այսօր ինչո՞ւ նա այնպես լուռ էր, ինչո՞ւ ոչինչ չէր խոսում։ Այդ էր, որ տխրացրեց խելացի անասունին։

Նրա պչրանքից ոչինչ պակաս չէր, որ պատճառ տար վշտանալու նրան։ Գլուխը զարդարած էր փոքրիկ, վարդագույն փնջերով, որ բռնված էին արծաթյա, զանգականձև կոճակների մեջ։ Պարանոցին կապած ուներ նույնպես արծաթյա փողպատը (ռաշմա), որի փոքրիկ փուլիկները, գլխի ամեն մի շարժման միջոցին, ախորժելի ձայներ էին հանում։ Իսկ պարանոցի ներքին մասը զարդարած էր գույնզգույն հուլունքներով շարած մանյակով, որ վերջանում էր եռանկյունաձև թալիսմանով, որ ընկած էր ուղիղ լայն կրծքի վրա[1]։ Այդ ապահովացնում էր նրա կյանքը չար աչքից կամ չար պատահարից։ Ասպանդակները և թամբի ղաշը շինված էին զուտ արծաթից, իսկ ամբողջ թամբը պատած էր ընձու մորթով։

Երկու միագույն բարակներ, թանկագին վզկապներով, վազում էին իշխանի առջևից, իսկ ետևից գալիս էին երկու զինակիրներ, որոնց յուրաքանչյուրի ձեռքի վրա նստած էր մի-մի բազե։

Զինակիրները նույնպես զարմանում էին իշխանի լռության վրա, նկատելով, որ նա խորին ինքնամոռացության մեջ քշում էր յուր ձին,

առանց հետաքրքրվելու յուր շրջակայքով, առանց հետաքրքրվելու և զանազան երեններով, որ ճանապարհին հաճախ հանդիպում էին նրանց։ Ճանապարհը գնում էր մի ձորի միջով, որի աջ ու ձախ կողմերի լեռները պատած էին խիտ անտառով։ Արևի պայծառ ճառագայթները չէին թափանցում ծառերի սաղարթախիտ ոստերի միջով, որոնք, ճանապարհի երկու կողմից մոտենալով, գրկել էին, հյուսվել էին միմյանց հետ և կազմել էին մի կենդանի, կանաչազարդ կամար։ Տեղ-տեղ լայնանում էր ձորը և նրանց առջև բացվում էին կանաչ, թավիշապատ մարգեր, սփռված գույնզգույն ծաղիկներով։

Քա՜ղցր էր թռչունների վաղորդյան աղմուկը, քա՜ղցր էր տերևների մեղմ սոսափյունը, և ավելի քաղցր մրմնջում էր լեռնային գետակը, որ շառաչելով վազում էր թփապատ ափերի միջով։ Ամեն ինչ ազդում էր բերկրություն, ամեն ինչ շնչում էր կյանք և ուրախություն, միայն Սամվելի սիրտը ալեկոծվում էր խորին դառնությամբ։ Քանի որ մտաբերում էր նա գալոց աղետները, չարիքը յուր բոլոր ընդարձակությամբ մեծանում էր նրա աչքում։ «Ո՛վ գիտե,— մտածում էր նա,— գուցե շուտով կհասնի այն օրը, որ այդ գեղեցիկ անտառների խաղաղությունը կվրդովվի անհնարին խռովությամբ, մահվան հոտ կբուրե այդ սիրուն ծաղիկների անուշհոտության փոխարեն, և հարազատը հարազատի արյունով կներկե այդ կանաչազարդ հովիտները...»։

Կարծես երեններն էլ հասկանում էին, որ Սամվելը այսօր իրանց հետ գործ չի պիտի ունենա, և ազատ, համարձակ անցնում էին նրա աչքերի առջևից։ Ահա՛ խորամանկ վիթը կայծակի արագությամբ դուրս պրծավ գետեզրի թփերի միջից, կտրեց ճանապարհը և, մտնելով ծառերի մեջ, ցատկեց մամռապատ ապառաժի գլխին և այնտեղից հեգնական հայացքով սկսեց նայել իշխանի վրա։ Բարակները նկատեցին նրա հանդգնությունը և հարցական դեմքով դարձան դեպի իրանց տերը։ Երբ ոչինչ հրահանգ չստացան, վշտացած կերպով շարունակեցին իրանց թեթև գնացքը։ Ահա՛ կաքավների աղմկալի երամը սրաթռիչ թևերով խռովեց տիրող լռությունը։ Մուգ-կապտագույն փոթորկի նման, շատ մոտից անցավ նա և մի ակնթարթում անհետացավ մերձակա մայրերի մեջ։ Բազեները, որ մինչև այդ րոպեն խաղաղ թառած էին զինակիրների ձեռքի վրա, տեսնելով այդ կարմրակտուց և կարմրատոտիկ թռչունների համարձակությունը, իրանց լայն, սրածայր թևերը թափահարեցին և, խիստ զայրագին թռիչք գործելով, կամենում էին իսկույն հետամուտ լինել։ Բայց նրանց ոտներից կապած մետաքսյա նարոտը թույլ չտվեց հարձակում գործել։

Արևը բավական բարձրացել էր. անտառի մեջ տիրում էր ախորժելի ջերմություն։ Նախորդ օրվա հորդ անձրևից ծառերը լվացվել էին, մաքրվել էին և սքանչելի պչրանքով՝ փայլում էին իրանց կոկիկ տերևներով։ Խոտերը ավելի կենդանի գույն էին ստացել, իսկ կանաչ մամուռը ավելի անձև էր և, փափուկ գորգի նման, ծածկում էր ծառերի, ժայռերի մերկությունը։

Անձրևը այդ անտառներում սաստիկ բարկացնում էր շինական կանանց։ Նա լվանում էր տերևներից շաքարը, որ բնությունը դնում էր նրանց վրա։ Նա ոչնչացնում էր երկնքի աստվածապարգև մանանան[2]։ Բայց այս անգամ նրանք վաղօրոք հավաքած ունեին իրանց պաշարը։ Ահա՛ այստեղ և այնտեղ ծառերի միջից երևում են փոքրիկ, ժամանակավոր տաղավարներ, հյուսած թարմ ոստերից։ Նրանց մոտ մուխ է բարձրանում և դանդաղ, համընթաց ամպիկներով տարածվում է օդի մեջ։ Գեղջկուհի կարմրաշապիկ աղջիկները[3], կարմրաքող հարսիկները[4], նախշուն թիթեռների նման, ժիր կերպով պտտվում են կրակի շուրջը։ Կրակի վրա եփ է գալիս մի մեծ կաթսա։ Նրա մեջ լցնում են շաքարապատ տերևները, շաքարը լուծվում է ջրի մեջ, հետո տերևները դուրս են ածում, իսկ մնացած ջուրը եփ տալով՝ թանձրացնում են և այդպես պատրաստում են բուսական մեղր կամ ռուպ[5]։ Բայց ավելի քընքուշ տերևները, որոնց վրա շաքարն ավելի հաստ խավ է կապել, ընտրում են և այնպես դարսում են միմյանց վրա, հում են տալիս, պատրաստելով այն անուշահամ և անուշահոտ քաղցրավենիքը, որ կոչվում է գազպեն[6]։ Այդ առատությունները, շինականներին խիստ բարերար կերակուր են մատակարարում, մանավանդ ձմեռնային պահոց օրերում։

Սամվելն անցավ այդ տաղավարներից մեկի մոտով։ Նկատելով իշխանին, մոտ վազեց մի մանկահասակ աղջիկ։ Եթե այդ անտառների անմահ պարիկները[7] նրա նման կարմիր շապիկ հագնեին, եթե նրա նման ծիածանի գույներով գոտի կապեին, և եթե իրանց գլխի երկար հյուսերը նրա նման պսակաձև կապեին ճակատի վրա[8], դարձյալ չէին կարող այնքան սիրուն և այնքան գրավիչ լինել, որպես այդ անմեղ գեղջկուհին։ Տեսնելով նրան, Սամվելը ձիու գլուխը պահեց։ Աղջիկը ամոթխած դեմքով մոտեցավ և ձեռքը մեկնելով, ասաց.

— Թող իմ տերը քաղցրացնե յուր բերանը։

Սամվելը ընդունեց գեղջկուհու ձեռքից գազպենի պլիթը, որ բոլորակ կարկանդակի ձև ուներ, և ճաշակեց, հարցնելով.

— Այդ քո՞ պատրաստածն է։

Պատասխանի փոխարեն մանուկ աղջկա դեմքի վրա փայլեց մի քաղցր ժպիտ։

Սամվելը ընծայեց նրան մի քանի արծաթյա դրամներ, ասելով.

— Որովհետև դու այդպիսի շնորհալի աղջիկ ես և այդպես լավ գաղպե ես պատրաստում, ահա՛ քեզ։

Աղջիկը դժվարությամբ ընդունեց նվերը և, գլուխ տալով[9], վազեց յուր ընկերուհիների մոտ։

Տեղային սովորության համեմատ, այդ հյուրասիրությունը նրանք ցույց էին տալիս ամեն մի ճանապարհորդի, որոնց պատահում էր անցնել նրանց տաղավարի մոտով[10]։

Սամվելը բաժանեց ստացած նվերը յուր զինակիրներին։

Որքան արևը բարձրանում էր, այնքան ճանապարհի անցուդարձը ավելի կենդանություն էր ստանում, այնքան հաճախ պատահում էին քաղաքացիք, շինականներ, որոնք գնում էին դեպի զանազան կողմեր։ Քաղաքացիք նստած էին ձիաների կամ ջորիների վրա, իսկ գյուղացիք գնում էին ոտով։ Ոտով գնացողները, հենց որ տեսնում էին իշխանին, քաշվում էին ճանապարհի մի եզրում, կանգնում էին և, երբ նա մոտենում էր, խոնարհությամբ գլուխ էին տալիս, և այնքան սպասում էին, մինչև անցնում էր։ Սամվելը բոլորի համար խոսք ուներ, բոլորին ողջունում էր և բոլորի առողջությունը հարցնում էր։ Իսկ ձիաների կամ ջորիների վրա նստածները ցած էին իջնում երիվարներից, նույնպես դուրս էին գալիս ճանապարհից և խոնարհ դեմքով կանգնում էին իրանց գրաստների կողքին, երբ նա մոտենում էր, գլուխ էին տալիս[11]։ Այդ սովորությունը սաստիկ ատում էր Սամվելը և այդ էր պատճառը, որ նա հեռվից ձեռքով նշան էր տալիս, որ չանհանգստացնեն իրանց։ Բայց նրանք չէին դադարում արժանավոր հարգանքը մատուցանել իրանց երիտասարդ իշխանին։

Սամվելը շատ սիրված էր ժողովրդից։ Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը, նրա անսահման գութն ու բարությունը՝ թե դեպի շինականը և թե դեպի քաղաքացին՝ նրա անձը պաշտելի էին կացուցել։ Նա չուներ ուրիշ նախարարական տների մեծամիտ երիտասարդների ոչ անգթությունը, և ոչ արհամարհանքը, որոնց աչքում իրանց ազնվարյան նժույգը, շունը, բազեն ավելի արժանավորություն ունեին, քան թե ռամիկը։ Այդ էր պատճառը, որ շինականների մեջ մի տեսակ օտարոտի կարծիք էր կազմվել Սամվելի մասին. «Կարծես իշխան չլինի,— ասում էին նրանք,— ոչ ծեծում է և ոչ հայհոյում է»։

Դուրս գալով ձորից, ճանապարհը թեքվեց դեպի լեռնային զառիվայրը, և այստեղից բացվեց Սամվելի առջև Մուշի լայնածավալ դաշտը։ Ներքևում, մթին, նվիրական ծառաստանի միջից, հազիվ երևում

էին Աշտիշատի վանքի բարձր գմբեթները, իսկ վանքի մոտ տարածվում էր համանուն ավանը, որ ավելի մի փոքրիկ քաղաքի տպավորություն էր գործում։ Այդ ավանը Մամիկոնյանների սեփականությունն էր[12]։

Մի մարդ, երկար գերանդին ուսին դրած, դանդաղ քայլերով առջեվից գնում էր դեպի ավանը։ Նա երգում էր մի երգ, որի բառերը կլանվում էին զգացմունքի և ուրախ հնչյունների խորին հոսանքի մեջ։ Նա այն աստիճան գրավված էր յուր երգով, որ բնավ չէր լսում յուր ետևից տրոփող սմբակների ձայնը, մինչև Սամվելը կոչեց նրան.

— Մալխա՛ս...

Գյուղացին ետ նայեց և, տեսնելով իշխանին, ուրախ դեմքով մոտեցավ, մտերմաբար բռնեց նժույգի սանձից և կանգնեց նրա մոտ։ Նրա այրական դեմքը, ամուր կազմվածքը արտահայտում էին մի անվաստակելի բնավորություն։

— Դու ինձ պետք ես, Մալխաս,— ասաց Սամվելը։

— Քո ծառան ահա յուր տիրոջ սպասումն է,— պատասխանեց գյուղացին։

— Այժմ ոչ, էգուց երեկոյան կգաս ամրոցը, ուղիղ ինձ մոտ։

Գյուղացին, ի նշան յուր խոնարհության, գլուխը շարժեց։

Սամվելը անցավ։ Գյուղացին դարձյալ շարունակեց յուր երգը։

Որսորդության պատրվակով դուրս գալով ամրոցից, այսօր թեև Սամվելը ոչինչ չորսաց, բայց նա պատահմամբ որսաց մի մարդ, որ իրան հարկավոր էր։

Բ․

ԱՇՏԻՇԱՏԻ ՎԱՆՔԸ

Տարո՜ն, սրբավայր կրոնի և աստվածապաշտության։ Տարո՜ն, բնագավառ հայոց աստվածների և աստվածուհիների։ Ահա՛ կրկին երևաց վեհափառ Արածանին — հայոց սրբազան Գանգեսը[1]։ Յոթանասուն տարի առաջ այդ գետի ափերի մոտ դեռ ազատ, համարձակ արածում էին սպիտակ արջառները, որ նվիրված էին Անահտա տաճարին։ Յոթանասուն տարի առաջ այդ գետի ափերի մոտ դեռ զբոսնում էին հայոց դիցուհու եղջերուները, որոնց պարանոցները զարդարված էին ոսկյա օղամանյակներով։ Այդ գետի ափերի մոտ մի ժամանակ տեսավ նրանց Լուկուլլոս հռովմայեցին և սքանչացավ[2]։

Սամվելի աչքի առջևն էր այդ գետը։ Սամվելն անցնում էր Քարքեի վրայով։ Դեռ վաղեմի դիցանվեր անտառները հովանավորում էին այդ լեռան գեղեցիկ բարձրավանդակները։ Եվ Սամվելի տխուր հիշողություն-ները թռչում էին դեպի անցյալը, դեպի ոչ այնքան հեռավոր անցյալը։ Այդ անտառների մթության մեջ, այդ զմայլելի բարձրավանդակների վրա, կանգնած էին հայոց Հաշտից տաճարները[3]*։ Այնտեղ Հայաստանը հաշտության զոհեր էր մատուցանում յուր աստվածներին։ Կարծես Սամվելը հենց այդ րոպեում տեսնում էր «*Վիշապաքաղ*» Վահագնի տաճարը — քաջության աստծո տաճարը, որ լցված էր հայոց թագավորների ընծաներով*[4]*։ Նրա մոտ բարձրանում էր «*Վահագնի սենյակը*», որի մեջ կանգնած էր հայոց անպարտելի դյուցազնի գեղեցկուհին — «*ոսկենույլ*» Աստղիկը*[5]*։* Տեսնում *էր և «*ոսկեմայր-ոսկեծին*» Անահիտի տաճարը, որի մայրական խնամակալության ներքո Հայաստանը մի ժամանակ վայելում էր փառք և կենդանություն*[6]*։*

Այդ երեք մեծապանծ տաճարների խումբը ներկայացնում էր հայոց «Հաշտից տեղերը»։

Այնտեղ, հայոց տարեմուտին, Նավասարդ ամսի սկզբում, կատարվում էր ընդհանրական աշխարհախումբ տոնախմբություն։ Հայտնվում էր հայոց արքան, հայտնվում էր հայոց մեծ քրմապետը, հայտնվում էին և հայոց նախարարները։ Արքան յուր ձեռքով բաց էր անում զոհաբերության մեծ հանդեսը, հարյուր սպիտակ ցուլ, ոսկեզօծ եղջյուրներով, զոհ մատուցանելով յուր աստվածներին[7]*։ Նրա օրինակին հետևում էին բոլոր մեծամեծները։*

Նոր տարին բերում էր յուր հետ և նոր կյանք։ Հայաստանը այդ տոնախմբության ժամանակ պետք է ցույց տար յուր աստվածներին յուր անցյալ տարվա հառաջադիմության պտուղները։ Վահագնը քաջություն էր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սեր և բանաստեղծություն։

Կատարվում էին հանճարի և քաջության մրցություններ[8]*։ Բանաստեղծը յուր հորինած երգն էր երգում, երաժիշտը ածում էր յուր բամբիռի*[9] *վրա, ըմբիշը յուր բազուկների ուժն էր ցույց տալիս, իսկ վարպետը՝ յուր գեղարվեստի արդյունքը։ Լինում էին զինախաղեր, լինում էին մենամարտություններ, քաջը քաջի հետ և մարդը՝ կատաղի ցուլի կամ գազանի հետ։ Լինում էին արշավանքներ՝ ձիաներով, կառքերով, կամ ոտով՝ արագավազ եղջերուների հետ*[10]*։ Հաղթողը ստանում էր այն վարդյա պսակներից մեկը, որոնցով զարդարված էր լինում Աստղկա*

վարդերով վառված տաճարը։ Այդ պատճառով այդ տոնախմբությունը կոչվում էր Վարդավառի տոնախմբություն։

Նոր տարին բերում էր յուր հետ և նոր կյանք։ Հին տարին անցնում էր։ Պետք էր թաղել հին մեղքերը և նորոգված մաքրությամբ մտնել նոր կյանքի մեջ։ Կատարվում էր ընդհանրական մկրտություն։ Մեծ քրմապետը առնում էր Արամազդի ալիքներից սուրբ ջուրը և ոսկյա ցընցուղով սրսկում էր բազմության վրա։ Նրա օրինակին հետևում էին բոլոր ուխտավորները. ամենքը միմյանց վրա ջուր էին սրսկում։ Այդ միջոցին օդը լցվում էր միլիոնավոր սպիտակ աղավնիների բազմությամբ։ Յուրաքանչյուր ուխտավոր մի-մի աղավնի էր թռցնում։ Եվ սիրո աստվածուհու (Աստղկա) նվիրական թռչունները, մաքուր, անբիծ, որպես սիրո անարատ ոգիներ, սավառնում էին, պտտում էին, ճախր էին առնում նրա սպիտակ մարմարիոնյա տաճարի շուրջը։

Ջո՞ւր, ջո՞ւր և աղավնի՞, որքա՛ն մեծ խորհուրդ կա ձեր մեջ։— Հաշտության, թողության և սիրո սուրբ խորհուրդը։

Ամեն տարեմուտի սկզբում, Նավասարդ ամսում, Վարդավառի տոնախմբության ժամանակ, Հայաստանը այդ հաշտությունը կատարում էր յուր «Հաշտից տեղերում», Քարքեի բարձրությունների վրա, յուր աշխարհախումբ զոհաբերության արյունով։ Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում էր այդ թողությունը, մկրտվելով Արամազդի սուրբ ջրով։ Ամեն տարեմուտի սկզբում Հայաստանը կատարում էր և սիրո այդ սուրբ խորհուրդը, Աստղկա տաճարին աղավնիներ ձոնելով։

Բայց այդ ավանդությունը շատ հին էր, և ավելի հին, քան թե ժամանակների սկիզբը։

Երբ աստված մաքրեց մեղավոր երկիրը ջրհեղեղով,— այդ համաշխարհական մկրտությունից հետո հայոց Նոյ նահապետը առաջինը եղավ, որ Նավասարդի սկզբում Արարատ լեռան գագաթից թռցրեց աստվածային սիրո ավետաբեր աղավնին։ Հետո, դուրս գալով տապանից, նույն լեռան ստորոտում մատուցեց հաշտության առաջին զոհը։ Ծերունի նահապետի ավանդապահ որդին, Սեմը, Արարատից գալով Տարոն և բնակվելով Սիմ լեռան ստորոտում, նվիրագործեց խորհրդավոր ավանդությունը։

Անցան դարեր, անթվելի շատ դարեր, այդ ավանդությունը[11] *կատարվում էր հայոց աշխարհում, մինչև նույն աղավնին հայտնվեցավ Հորդանանի ջրերի վրա։*

Նույն ավանդությունը սրբագործեց հեթանոս Հայաստանը Վարդավառի տոնախմբությամբ։ Նույն ավանդությունը սրբագործեց և քրիստոնյա Հայաստանը դարձյալ Վարդավառի տոնախմբությամբ[12]։

Այդ բոլորը գիտեր Սամվելը, այդ բոլորն անցնում էր նրա մտքից, որպես ազգային անմոռանալի հիշողություն։

Այն օրից, երբ Սամվելը գնում էր Աշտիշատի վանքը, յոթանասուն տարի առաջ, երկու սպիտակ ջորիներ Տարոնի միջով տանում էին մի ծածկված կառք։ Հայոց երկրի վեց նշանավոր իշխաններ, ձիաների վրա նստած, շրջապատել էին այդ կառքը։ Դրանք էին՝ Հաշտենից իշխանը, Արծրունյաց իշխանը, Անձևացյաց իշխանը, Անգեղ տան իշխանը, Սյունյաց իշխանը և Մոկաց իշխանը։ Կառքի ճակատին, որպես սրբազան դրոշակ, փայլում էր մի արծաթյա խաչ։ Նրա առջևից գնում էր Հայաստանի Լուսավորիչը, երկար սև և անթափանցիկ քողով ծածկված[13]։ Իսկ հետևից գալիս էին վեց իշխանների զորքերը՝ թվով 5080 հոգի։ Այդ քրիստոնեական հոգևոր զինվորությունը՝ խորին սրբազան ոգևորությամբ՝ անցնում էր Տարոնի միջով, և որտեղից անցնում էր, թողնում էր հեթանոս շրջակայքի վրա ահ և սարսափ։ Կառքը տանում էր յուր մեջ այն սրբությունները, որ Լուսավորիչը բերել էր յուր հետ Կեսարիայից[14]։

Դեռ առավոտը նոր էր լուսանում, երբ կառքը անցավ Արածանին և մոտեցավ Քարքեի բարձրություններին։ Այստեղ երկու սպիտակ ջորիները կանգ առին և այլևս առաջ չգնացին[15]։

Բայց կառքի մերձենալը ահեղ սոսկումով ազդեց լեռների վրա և դիցանվեր անտառի խաղաղությունը վրդովվեցավ։ Հայոց տոհմային աստվածները զայրացան, և կատաղած քուրմերը խմբերով դուրս վազեցին տաճարներից։ Մի քանի ժամվա մեջ Արձան քրմապետի, նրա որդի Դեմետրեի և Մեսակես քրմապետի դրոշի տակ հավաքվեցան 6946 հոգի, որոնք բոլորը քուրմեր և մեհյանների պաշտոնյաներ էին։ Սկսվեցավ արյունահեղ կռիվը — քրիստոնեության և հեթանոսության կռիվը։

Սրբազան անտառի խորքերից, որպես մի հսկայական մրջնանոցի միջից, դուրս խուժեց թաքնված զորությունը և բռնեց լեռների բոլոր անցքերը ու բոլոր բարձր դիրքերը։ Արձան քրմապետը զինված էր, զինված էր և նրա որդին։ Հայր և որդի դառն և նախատական խոսքերով մենամարտության էին հրավիրում հայոց իշխաններին, որ կռվում էին հայրենի աստվածների դեմ։ Շուտով քուրմերն այնպիսի նեղ դրության մեջ դրեցին հայոց իշխաններին, որ Մոկաց իշխանը ստիպված եղավ Լուսավորչին փախցնել Մամիկոնյանների Ողական ամրոցը, որ թշնամու ձեռքը չընկնի։ Փախչելու միջոցին Լուսավորիչը յուր Կեսարիայից բերած սրբությունները թաքցրեց անտառի մեջ, մի անհայտ տեղում[16]։

Կռիվը տևեց մի քանի օր և մի քանի շաբաթ, մինչև հայոց իշխանները նոր զորություն ստացան։ Հաղթությունը մնաց քրիստոնեու-

թյան կողմը։ Արձան քրմապետը, նրա որդի Դեմետրեն և Մեսակես քրմապետը ընկան պատերազմի դաշտում, սուրը ձեռքում, հերոսի պես։ Ընկան քուրմերից և 1038 քաջեր։ Քարքե լեռան սքանչելի տաճարները կործանվեցան... Հայոց արհեստի և ճարտարության գեղեցիկ գործը ոչնչացավ... Եվ մեծագանձ մեհյանների հարստությունը հայոց նոր խաչակիրների ավարառության առարկա դարձավ[17]։

Ոսկին, արծաթը, մարմարիոնը հեշտ էր կործանել, բայց այն զգացմունքը, որ միացած էր ժողովրդի սրտի և հոգու հետ, այն հավատը, որ նա ուներ դեպի յուր հայրենական աստվածները — դրանք դեռ մնում էին և մնացին շատ դարեր այդ կործանումից հետո։ Սուրը և հուրը չկարողացան ոչնչացնել նրանց։ Կրոնը փոխվեցավ, բայց ժողովրդի վաղեմի սովորությունները մնացին։

Դրանք այն տաճարներն էին, որտեղ Նավասարդի սկզբում կատարվում էր Վարդավառի աշխարհախումբ տոնախմբությունը։ Այդ տոնախմբությունը հեթանոսական դարերում կատարվում էր տարվա մեջ յոթն անգամ, և ամեն անգամին թե՛ թագավորը, և թե՛ մեծ քրմապետը ներկա էին գտնվում։

Լուսավորիչը նույն տաճարների տեղում հիմնեց առաջին սրբության սեղանը և Հայաստանի առաջին Մայր եկեղեցին, որ, պահպանելով յուր հին անունը, կոչվում էր Աշտիշատի վանք։ Վարդավառի տոնախմբությունը փոխեց Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնախմբությունով։ Բայց «Վարդավառի» նախնական սովորությունները մնացին։ Դարձյալ տարին յոթն անգամ հայտնվում էր այնտեղ հայոց քրիստոնյա թագավորը յուր նախարարների և հայոց մեծ քահանայապետի հետ և բաց էին անում Աշտիշատի վանքի աշխարհախումբ տոնախմբության հանդեսը։ Դարձյալ զոհեր էին մատուցանում, աղավնիներ էին թռցնում և ջուր էին սրսկում միմյանց վրա։ Դարձյալ կատարվում էին նույն խաղերը, նույն մրցությունները և նույն պարգևաբաշխությունները, որ լինում էին հեթանոսական դարերում։ Դարձյալ նույն վարդերը, որ մի ժամանակ զարդարում էին Աստղկա տաճարը, հետո նույնպես զարդարում էին Աշտիշատի վանքի սուրբ սեղանը[18]։ Եվ այդ տոնը դարձյալ կատարվում էր Նավասարդ ամսի սկզբում և կոչվում էր Վարդավառի տոնախմբություն[19]։

Այդ բոլորը գիտեր Սամվելը, այդ բոլոր հանդեսներին մասնակցել էր նա։ Ոչ սակավ անգամ՝ խաղերի կամ մրցությունների ժամանակ՝ ստացել էր նա առաջին մրցանակը։ Ոչ սակավ անգամ հայոց թագավորը համբուրել էր նրա ճակատը, կատարած քաջությունը տեսնելով։

Իսկ այժմ ներկայանում էր մի նոր կրոնական պատերազմ։ Արդյոք ինչպե՞ս կմասնակցեր այդ պատերազմին ժողովուրդը, այն ժողովուրդը, որ առավելին մնացել էր յուր հին ավանդական նախապաշարմունքների մեջ։ Այդ միտքը սարսափեցնում էր Սամվելին, երբ նա ցած իջավ ձիուց և մտք դրեց Աշտիշատի վանքի սյամի վրա։

Ժ

ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԺԵՐ

Աշտիշատի վանքի խուցերից մեկում, գիշերային այն պահուն, երբ բոլոր միաբանները քնած էին, ընդարձակ թախտի վրա նստել էին երեք երիտասարդներ։ Պղնձյա աշտանակի վրա վառվում էր ձիթային ճրագը և յուր դունաթափ լուսով լուսավորում էր այդ երեք բազմահոգ դեմքերը։ Երեքն էլ լուռ էին, յուրաքանչյուրը խորասուզված էր յուր մեջ։ Երեքի դեմքերից ևս երևում էր, որ այդ լռությունը մի տեսակ զինադուլ էր, որ փոքր- ինչ շունչ առնեն, հանգստանան, որպեսզի նորից շարունակեն ընդհատված վիճաբանությունը։

Երիտասարդներից մեկը՝ հաղթանդամ, բարձրահասակ, խոշոր կազմվածքով և փառահեղ դեմքով մի տղամարդ էր, որի կերպարանքի մեջ մեծությունը այն առտիճան սերտ ներդաշնակություն էր կազմում վայելչության հետ, որ ներկայացնում էր գեղեցկությունը յուր վսեմ, այրական ձևի մեջ։ Երկրորդը, ընդհակառակն, ավելի կարճահասակ կարելի էր համարել, քան թե միջահասակ, և ավելի նրբակազմ, քան թե հաղթանդամ։ Իսկ այդ քնքուշ կազմվածքի վրա բնությունը, կարծես, սխալմամբ դրել էր մի շնորհալի գլուխ, որին մի հարուստ, հոյակապ մարմին ավելի պատշաճ կլիներ։ Կրակոտ աչքերի մեջ նշմարվում էր եռանդ և դյուրաբորբոք բնավորություն։

Առաջինը Սահակ Պարթևն էր, երկրորդը՝ Մեսրոպ Մաշտոցը։ Իսկ երրորդը՝ Սամվելը։

Սահակ Պարթևը Հայաստանի հզոր քահանայապետի՝ Ներսես Մեծի որդին էր[1]։ Մանկության հասակում, վերջացնելով յուր ուսումը Կեսարիայում, և ծանոթանալով հույն և ասորի լեզուների հետ, հետո գնաց Կ. Պոլիս, այնտեղ ավելի կատարելագործվեցավ հելլենական կրթության մեջ, սովորելով փիլիսոփայություն, երաժշտություն, և ծանոթանալով հույն բանաստեղծների հետ։ Կ. Պոլսում ամուսնացավ նա[2]։ Վերադառ-

նուլով յուր հայրենիքը, որպես երիտասարդական հասակում նրա հայրը, այնպես էլ և ինքը՝ զանազան զինվորական պաշտոններ էր վարում, բնավ չմտածելով, թե մի օր հայոց հայրապետական աթոռի ժառանգորդը պետք է լինի։ Սկսյալ այն օրից, երբ հայոց հայրապետական տունը սկսեց խնամություն անել արքունիքի և մեծ նախարարությանց տների հետ, նա յուր որդիների հոգևոր կրթության հետ միացրեց և զինվորական կրթությունը[3]։ Եվ այդ անհրաժեշտ էր, որովհետև Հայաստանի քահանայապետը ներկայացնում էր՝ միևնույն ժամանակ՝ և Հայաստանի ամենաբարձր պետական անձը։ Նա տիրոջ սուրբ սեղանի վրա պատարագ էր մատուցանում, բայց հարկը պահանջած ժամանակ առաջնորդում էր զորքին դեպի պատերազմ։ Նա եկեղեցու բեմից քարոզում էր յուր ժողովրդին աստուծո խոսքը, բայց հարկը պահանջած ժամանակ՝ թագավորների հետ բանակցություններ էր անում յուր հայրենիքի գործերի վերաբերությամբ։

Սահակ Պարթևը գործով եկած էր Աշտիշատի վանքը և այնտեղ պատահմամբ տեսավ Սամվելին։ Սամվելը գիտեր, որ նա անցնելու է Տարոնով, բայց չէր սպասում, որ այսօր կհանդիպեր նրան Աշտիշատի վանքում։ Երկու ամիս առաջ, Մեսրոպի հետ, նա դուրս էր եկել այցելություններ անելու յուր հայրենական կալվածներին, որոնք, սկսյալ Արարատից, զանազան գավառներում, տարածվում էին մինչև Տարոն։ Հայրապետական հարուստ տունը ուներ այնքան շատ կալվածներ, գյուղեր և ավաններ, որքան չուներ մի մեծ նախարար[4]։

Մեսրոպը բնիկ տարոնեցի (մշեցի) էր՝ Հացիկ կոչված ավանից, Վարդան անունով մի ազնվականի որդի[5]։ Նրա հայրենական ավանը կես օրվա ճանապարհով միայն հեռու էր Աշտիշատի վանքից։ Այդ աշխույժ, եռանդով լի երիտասարդը, սկսյալ մանկությունից, նվիրել էր իրան ուսման և գիտության. սովորեց հունաց, ասորոց, պարսից լեզուները և այն բոլոր գիտությունները, որ հայտնի էին յուր ժամանակում։ Որպես ազնվական, նա վարժված էր և զինվորական կրթության մեջ։ Վաղարշապատի արքունիքում նա զանազան պաշտոններ էր կատարել, մի ժամանակ որպես զինվորական, մի ժամանակ որպես դիվանագիր։ Իսկ հետո թողեց արքունիքը և Ներսես Մեծի հայրապետանոցում նոտարի պաշտոն էր կատարում[6]։

Նրանք նստած էին այն սենյակում, որի կից սենյակը մի շատ տխուր հիշատակով կապված էր Սահակի տոհմային պատմության հետ[7]...

Սահակը հագնված էր այնպես շքեղ, այնպես թանկագին զարդարանքներով, որպես հագնվում է մի մեծ արքայազն իշխան։ Նա նրա-

տած էր ծաղապատիկ և ոսկյա քամարից քարշ ընկած ոսկեպատյան սուրը դրած ուներ ծնկների վրա։ Նրա մոտ նստած էր Սամվելը, իսկ նրանց հանդեպ՝ Մեսրոպը։

Սամվելն արդեն հայտնել էր նրանց Տիզբոնից ստացված աղետալի տեղեկությունները, հայտնել էր և յուր հոր ու Մերուժանի չար դիտավորությունները,— և այդ էր նրանց վիճաբանության առարկան, թե ի՞նչ միջոցներով կարելի էր մոտալուտ վտանգների առաջն առնել։ Հայրենիքի վերահաս դժբախտությունը այն աստիճան հուզել էր այդ երեք երիտասարդ սրտերը, որ նրանք մինչև անգամ մոռացել էին ամեն չափ, ամեն պատշաճ, որ վերաբերում էր միմյանց անձնավորությունը։

— Վտանգը ավելի մեծ է, քան թե երբեք եղել է,— ընդհատեց Մեսրոպը տիրող լռությունը։— Մենք ճաշակում ենք մեր հին սխալների դառըն պտուղները...

— Ի՞նչ սխալներ,— հարցրեց Սահակը։

— Այն մեծ սխալները, որ գործեցին քո մեծ պապերը, Սահա՛կ...

Վերջին խոսքը այնպիսի մաղձոտ ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման ցցվեցավ մեծափառ Պարթևի սրտում։ Նրա մեջ եփ եկավ քահանայապետական և արքայական արյունը[8], և խոշոր աչքերի մեջ վառվեցավ բարկության կրակը։ Նա մի անսովոր շարժում գործեց։ Այդ միջոցին փոքրիկ երիտասարդը ձեռքը տարավ դեպի արծաթյա քամարը, որից քարշ էր ընկած մի կարճ սուսեր։

Սահակը զսպեց յուր վրդովմունքը և զայրացած կերպով հարցրեց (Նրա ձայնը խոսելու միջոցին սրտում էր).

— Դո՛ւ այդ իմ պապերի սխա՞լն ես համարում, Մեսրոպ, որ նրանք բարբարոս Հայաստանը հեթանոսական աղմից հանեցին և քրիստոնեական լույսի մեջ դրեցին։

— Ես այդ քո պապերի սխալը չեմ համարում,— պատասխանեց Մեսրոպը մի այնպիսի մեղմությամբ, որ ավելի վիրավորական էր։— Բայց ասա՛ ինձ, Սահակ, ի՞նչ էր այդ լույսը առաջ, և ի՞նչ է նա այժմ։ Արդյոք նա դուրս եկա՞վ վանքերի շրջապարիսպներից. արդյոք նա մտա՞վ շինականի մռայլ խրճիթը։ Եվ չէր էլ կարող մտնել։ Ի՞նչ միջոցով կարող էր մտնել։ Այն օրից, որ այդ լույսը բերեցին Հայաստան, անցել է համարյա մի դար։ Բայց մինչև այսօր մեր եկեղեցիներում սուրբ գիրքը կարդում են հունաց և ասորոց լեզուներով[9], մինչև այսօր մեր եկեղեցիներում աղոթում են օտար լեզուներով[10]։ Ո՞ր գյուղացին, ո՞ր քաղաքացին, ո՞ր հայը հասկանում է այդ լեզուները։ Եվ այդ դրության մեջ՝ ի՞նչ լույս, ինչ բարոյական կամ հոգևոր ուղղություն կարող էր տալ եկեղե-

ցին ժողովրդին, երբ նա տեսնում է միայն ծեսեր և լսում է իրան անհասկանալի ձայներ։

— Դու կարծում ես, որ ժողովուրդը սակա՞վ օգտվեցավ դրանից, Մեսրոպ։

— Օգտվեցանք մենք, և ոչ թե ժողովուրդը։— Դու, ես և այդ նազելի երիտասարդը, որ լուռ նստած է այստեղ,— նա ձեռքը տարավ դեպի Սամվելը,— մենք ամենքս հունական կամ ասորական կրթության արդյունք ենք, այո՛, փչացնո՛ղ և ամեն ազգային զգացմունք սպանո՛ղ բյուզանդականության արդյունք։ Բայց ի՞նչ է խեղճ ժողովուրդը։ Նա հինը կորցրեց և նորի մեջ ոչինչ չգտավ...

— Շա՛տ բան գտավ, Մեսրոպ։

— Ոչինչ չգտավ, Սահակ։ Դու մոռացե՞լ ես, երբ քո սուրբ Վրթանես պապը՝ հենց այդ Աշտիշատի վանքի տաճարի մեջ՝ հունաց լեզվով պատարագ էր մատուցանում, հանկարծ երկու հազար հոգի պաշարեցին վանքը, կամենում էին քարկոծ անել նրան։ Տաճարի ամրությունը հազիվ կարողացավ ազատել նրան կատաղի խուժանի բարկությունից[11]։ Դու մոռացե՞լ ես, Սահակ, երբ քո Պապ և Աթանագինես հայրերը՝ դարձյալ այդ Աշտիշատի վանքում՝ նստած էին խրախության սեղանի շուրջը, հանկարծ մեկը՝ հրեշտակի նման՝ սուրը ձեռին ներս նետվեցավ և երկուսին ևս խողխողեց նստած տեղում։ Ամբիոններով նրանց դիակները մնացին այնտեղ անթաղ, և ոչ ոք խուժանի երկյուղից չէր համարձակվում մոտենալ։ Ահա այդ սենյակում կատարվեցավ հայտնի եղեռնագործությունը[12]...

Նա ձեռքը տարավ դեպի կից դահլիճը, որ վանքի եպիսկոպոսարանն էր, և շարունակեց.

— Այդ զզվելի դեպքից անցել է ընդամենը մոտ երեսուն տարի։ Ի՞նչ է փոխվել։ Ժողովուրդը դեռ նույն բարբարոսն է մնացել։

— Երեսուն տարվա մեջ չէր կարելի խլել ժողովրդից այն, ինչ որ կազմվել էր նրա մեջ շատ դարերի ընթացքում, Մեսրոպ։

— Այդ ես գիտեմ, Սահա՛կ։ Բայց դա դարձյալ չէ հերքում այն միտքը, որ մեր ժողովրդի կրթության գործը բոլորովին սխալ և, թույլ եմ տալիս ինձ ասել, բոլորովին վնասակար հիմքերի վրա դրվեցավ...

Նկատելով, որ վիճաբանությունը հետզհետե ավելի սուր կերպարանք է ստանում, Սամվելը մեջ մտավ, ասելով.

— Ի՞նչ օգուտ այդ հակաճառություններից, Մեսրո՛պ։ Ինչ որ եղել է, ինչ որ կատարվել է, մենք այդ բոլորը պետք է անցած համարենք և մտածենք գործերի այժմյան դրության վրա, թե ի՞նչ միջոցով կարո՞ղ ենք հեռացնել վերահաս վտանգը։

Փոքրիկ երիտասարդի գունաթափ դեմքի վրա երևաց մի դառն ժպիտ։ Նա նայում էր Սամվելի վրա, որպես մի պարզամիտ երեխայի վրա։

— Դու շտապում ես, սիրելի Սամվել,— ասաց նա փաղաքշական ձայնով։— Չէ՞ որ գործերի այժմյան հիվանդոտ դրությունը բխում է մեր հին մեղքերից։ Առանց քննելու այդ մեղքերը, մենք չենք կարող դարման տանել ներկա չարիքներին, որ մեր հայրենիքին մահ է սպառնում... Ես համոզված եմ, որ քո հայրը հիմար մարդ չէ։ Ես համոզված եմ, որ քո քեռի Մերուժան Արծրունին նույնպես չի կարելի խենթերի կարգը դնել։ Իսկ ես ավելի համոզված եմ, որ այդ երկու դավաճաններին փայփայող պարսից Շապուհ արքան շատ կրոնասեր մարդ չէ։ Նա քո հորը և քո քեռուն ուղարկում է ոչնչացնելու Հայաստանում քրիստոնեությունը, պարսից մոգերի ձեռքը տալու թե՛ մեր եկեղեցիները և թե՛ մեր դպրոցները։— Դու կարող ես հավատացած լինել, նազելի Սամվել, որ Շապուհը այդ ձեռնարկության մեջ ո՛չ յուր հոգու փրկությունն է որոնում, և ո՛չ կամենում է հաճոյանալ յուր աստվածներին,— այլ կամենում է ընդմիշտ վճռել մի քաղաքական ծանր խնդիր, *որ նրան շատ անհանգստացնում է...*

Սամվելն ամբողջ մարմնով դողաց. Նա համարյա չլսեց վերջին խոսքերը։ Նրան ծաղրում էին, նրա երեսին նրա հորը դավաճան էին կոչում, և կոչում էր մի ազնվական, որ բարձով, պատվով իրանից շատ ստոր էր։ Նա ձայն տվեց վշտացած կերպով.

— Եթե դո՛ւ, Մեսրոպ, քո երկար լեզվի չափը քո կարճ հասակին հավասարեցնեիր, ավելի քաղաքավարի կլինեիր։

Փոքրիկ երիտասարդը վեր կացավ նստած տեղից և, մի քանի անգամ անցնելով սենյակի միջով, կանգնեց Մամիկոնյան իշխանի առջև և անվրդով կերպով ասաց.

— Ինչո՞ւ ես վիրավորում, գեղեցիկ Սամվել, քո հորեղբայր Վասակն էլ կարճահասակ մարդ էր[13]*, բայց ավելի մեծ մարդ էր, քան թե քո հսկայատիպ հայրը...*

— Հոր մեղքը կքավե որդին...

— Այն ժամանակ ես ավելի կսիրեմ նրան...

— Թողեցեք այդ,— որոտաց Սահակը յուր պարթևական ահարկու ձայնով։— Կատակի և երգիծանքի ժամանակ չէ։ Նստի՛ր, Մեսրոպ։

Նա եկավ և նստեց յուր առաջվա տեղում։

«Շապուհը կամենում է ընդմիշտ վճռել մի քաղաքական ծանր խնդիր, *որ նրան շատ անհանգստացնում է...»։*

Փոքրիկ երիտասարդի այդ խոսքերի իմաստը լավ ըմբռնելու համար հարկավոր է միայն հիշել Հայաստանի հարյուր տարվա քաղաքական վիճակը, սկսյալ Տրդատից մինչև Արշակ Բ-րդի վերջին օրերը, այսինքն՝ քրիստոնեության մուտքից մինչև Շապուհի կրոնական հալածանքները։

Նախքան քրիստոնեության մուտքը Հայաստանում՝ հայերը և պարսիկները ավելի հաշտ էին միմյանց հետ, որովհետև կրոնով շատ նման էին և, բացի դրանից, թե Հայաստանում, և թե Պարսկաստանում թագավորողները միևնույն պարթևական կամ Արշակունյաց տոհմից էին։ Հայ և պարսիկ թագավորների մեջ եղբայրություն կար։

Քրիստոնեության Հայաստանում մուտք գործելու ժամանակներում՝ թե՛ արևելքում և թե՛ արևմուտքում պատահեցան երկու մեծ փոփոխություններ, որոնք բոլորովին հեղաշրջեցին Հայաստանի քաղաքական դրությունը։ Արևմուտքում կազմվեցավ Բյուզանդական կայսրությունը, և Կ. Պոլիսը մայրաքաղաք դարձավ[14]. իսկ արևելքում կազմվեցավ Սասանյան պետությունը, և Տիզբոնը մայրաքաղաք դարձավ[15]։ Պարսից Արշակունիների թագավորությունը վերջացավ։ Հայերը զրկվեցան իրանց լավ դաշնակիցներից։

Հայաստանը, որպես դաշնակցության քար, մնաց այդ երկու նոր հիմնված, անհաշտ պետությունների մեջտեղում։

Նա այնքան ուժ չուներ, որ ինքնակա դիրք պահպաներ, ստիպված էր հակվել կամ մեկի, կամ մյուսի կողմը։

Նույնիսկ Բյուզանդիայի և Տիզբոնի արքունիքների շահերը պահանջում էին գրավել Հայաստանի հակումները, որովհետև այդ երկիրը մի կամուրջ էր, որտեղից պետք է անցնեին նրանք՝ միմյանց հանդիպելու համար։ Իսկ բյուզանդացոց և տիզբոնցոց կռիվները և ընդհարումները վերջ չունեին։ Եվ այդպես, Հայաստանի թեկնածությունը մեկի կամ մյուսի կողմը՝ միշտ հաջող վախճան էր տալիս պատերազմին։

Քրիստոնեությունը հեռացրեց հայերին պարսիկներից և մոտեցրեց նենգավոր բյուզանդացիներին։ Այդ օրից պարսիկները թշնամացան հայերի հետ։

Հայաստանը մնաց երկու կրակի մեջտեղում, դեպի որ կողմը որ մոտենում էր, այրվում էր։

Այդ դրությունը առաջ բերեց այն երկդիմի դերը, որ խաղում էին հայոց թագավորները, և իրանց դերի մեջ պատժվողները նախ իրանք էին լինում։ Հանգամանքներին նայելով, նրանք իրանց դեմքը դարձնում էին երբեմն դեպի Բյուզանդիա և երբեմն դեպի Տիզբոն։ Դեպի մեկը երեսը շուռ տալու ժամանակ՝ ետևից մյուսը հարվածում էր...

Տրդատը, հայոց նորընծա քրիստոնյա թագավորը, առաջինը եղավ,

որ բարեկամական դաշն կապեց Հռոմայեցոց, նույնպես առաջին քրիստոնյա կայսրի՝ Կոստանդիանոսի հետ։ Այդ քաղաքականության զոհ եղան Տրդատի բոլոր հաջորդները, և ինքը Տրդատը պատժվեցավ պարսիկներից[16]։

Տրդատի որդի Խոսրով Բ-րդը, Կոստանդ կայսրից թագ ու ծիրանի ընդունելու համար, զրկեց պարսից Շապուհ թագավորի բարեկամությունը, որը յուր եղբայր Ներսեհին ուղարկեց, որ հայոց թագավորությունը ոչնչացնե, և ինքը հայոց թագավոր դառնա[17]։

Խոսրովի որդի Տիրանը Հուլիանոս կայսրին պարսից դեմ օգնելու համար, վերջը Շապուհը նրան խաբեությամբ Պարսկաստան հրավիրեց և, երկու աչքերը խարելով, կուրացրեց[18]։

Տիրանի որդի Արշակ Բ-րդը, խրատվելով յուր նախորդների սխալներից, թողեց Բյուզանդիան և բարեկամացավ Տիզբոնի արքունիքի հետ։ Այդ միջոցին Վալենտիանոս կայսրը Արշակի Տրդատ եղբորը, որը իբրև պատանդ պահված էր Կ. Պոլսում, սպանել տվեց[19]։

Արշակը ստիպվեցավ հաշտվել կայսրի հետ և նրա ազգականներից Ոլիմպիադա անունով օրիորդը կնության առնել։ Այդ բարեկամությունը զրկեց Շապուհի բարկությունը, նա Տիզբոնակերտը ավերակ դարձրեց և, Անիի ամրոցին տիրելով, թագավորական գանձերը կողոպտեց և մինչև անգամ Արշակունի թագավորների գերեզմանները քանդելով, ոսկորները գերության տարավ[20]։ Իսկ շատ կռիվներից վերջը, երբեմն հաղթելով, և երբեմն հաղթվելով հայերից, Շապուհը, իբր թե հաշտության դաշն կապելու համար, խաբեությամբ հրավիրեց Արշակին Տիզբոն և աքսորեց Անհուշ բերդում[21]։

— Ես Շապուհի վարմունքը՝ թեև անազնիվ, բայց յուր պետության շահերի կետից՝ շատ խելացի եմ համարում,— խոսեց Մեսրոպը։— Պարսից այդ երկարակյաց[22] թագավորը հայոց չորս թագավորներ է փորձել՝ Տրդատին, Խոսրովին, Տիրանին, Արշակին, և նրա մոտ յոթանասուն տարվա փորձը բավական էր նրան համոզելու համար, որ հայերի Կ. Պոլսի կայսրների հետ ունեցած մտերմության գլխավոր կապը նախ քրիստոնեական կրոնն է և ապա բյուզանդական կրթությունը։ Այժմ նա աշխատում է այդ կապը խզել, ոչնչացնելով թե կրոնը, և թե հունաց լեզուն ու դպրությունը, որ տիրապետում են մեր եկեղեցիներում, մեր վանքերում և մեր դպրոցներում։ Եվ Հայաստանը յուր պետության հետ մի ձուլելու համար, նա ցանկանում է տարածել յուր կրոնը, յուր լեզուն և յուր դպրությունը։ Եվ այդ մտքով նա հրահանգ է տվել Մերուժանին՝ ոչնչացնել հունաց գրքերը, արգելել հունաց լեզվի ուսումը և հա-

յերին ստիպել պարսկերեն սովորելու[23]։ Եվ Միրուժանը մեր կրթության համար բերում է յուր հետ մոգերի մի ամբողջ քարավան։

— Այդ բոլորը մենք գիտենք, Մեսրոպ,— ընդհատեց Սահակը.— Իզուր ժամավաճառ ես լինում։

— Բայց պետք է և այն գիտենալ, որ այդ դժբախտություններից և ոչ մեկը մեզ հետ չէր պատահի, եթե մենք այնքան օտարամոլ չլինեինք, և եթե մենք հետևած չլինեինք ո՛չ հույնին և ո՛չ պարսկին։ Հետևելով մեկին, մենք մյուսի փակված աչքերը բաց արինք։ Նա էլ սկսեց իրանը պահանջել։ Մենք այն ժամանակ կատարեցինք ամենամեծ սխալը, երբ մեր կրթության հիմքը դրեցինք օտար, անհարազատ հողի վրա։ Պարսիկը կհամբերեր մեզ, եթե մենք մեր մայրենի լեզվով կատարեինք մեր պաշտամունքները, և մեր մայրենի լեզվով կառավարեինք մեր դպրոցները։ Բայց նա բյուզանդականին համբերել չէ կարող, որովհետև դա վնասում է նրա քաղաքական շահերին...

Նա կանգ առեց և բավական հանգստությունից հետո շարունակեց.

— Մեր վարժապետները եղան հույները և ասորիները։ Քրիստոնեությունը յուր հետ մտցրեց մեր աշխարհում հույն և ասորի կղերի մի ահագին բազմություն[24]։ Այդ բյուզանդական քաղաքակրթության կարապետները իրանց լեզուն և իրանց գրությունը տարածեցին թե[3] մեր եկեղեցիներում և թե՛ մեր դպրոցներում։ Նույն գրությունը շարունակվում է մինչև այսօր։ Դեռևս մենք սուրբ գրքերի թարգմանությունը չունենք։ Դեռևս մենք մեր մայրենի լեզվով աղոթքներ ու շարականներ չունենք։ Մենք արհամարհեցինք ինչ որ հին էր, ինչ որ հեթանոսական էր։ Մեր երգիչների, մեր վիպասանների գեղեցիկ վեպերը կրակի զոհ դարձրինք։ Մենք թողեցինք մեր նախնականը, մեր ազգայինը և սկսեցինք օտարինը սիրել։ Եվ մեր քրիստոնեական մոլեռանդությունը այն աստիճանին հասցրինք, որ իբրև մի պիղծ բան, սկսեցինք մերժել մեր հին գրությունը, մեր մեհենական սրբազան տառերը[25] և ընդունեցինք հունաց ու ասորոց տառեր։ Այդ բոլորից հետո, շատ հասկանալի է, որ մեր մեջ չէր կարող զարգանալ ոչ ազգային կյանք և ոչ բուն ազգային դրականություն։ Մյուս կողմից, մենք հրավիրեցինք մեզ վրա պարսիկների ատելությունը։ Պարսիկը սկսեց մտածել. քանի որ հայերը, հունաց լեզուն և հունաց գրությունը սովորելով, սիրում են նրանց և սրտով կապված են Բյուզանդիայի հետ,— ինչո՞ւ չի պետք մտցնեմ և ես իմ լեզուն և իմ գրությունը, որ նրանք ինձ սիրեն և ինձ հետ դաշնակից լինեն։ Այժմ, կարծեմ, պարզ է, որ Շապուհի հալածանքները ամենևին կրոնական բնավորություն չունեն, այլ կատարյալ քաղաքական նպատակով են կատարվում։ Հայաստանը, մի ամուր պատնեշի

նման, ընկած է Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության մեջ։ Նա ցանկանում է խորտակել այդ պատնեշը, որ յուր համար ճանապարհը բաց լինի,— և խորտակել յուր քաղաքակրթության կռանով։ Հայաստանը, մի կոշտ ոսկորի նման, մնացել է նրա կոկորդում. նա աշխատում է ծամել, փշրել և կլանել այդ ոսկորը, որպեսզի կարողանա ազատ շունչ առնել...

— Եթե մարսել կարողանա...— ընդհատեց Սամվելը։

— Մարսել կարող է, եթե գործերի այժմյան դրությունը չփոխվի,— պատասխանեց զայրացած Պարթևը։— Այդ թողնենք։ Ես կամենում եմ պատասխանել Մեհրուժի մի քանի ծանր ակնարկություններին, որոնցմով նա մեղադրանք բարդեց իմ նախահարց վրա։

Նա դարձավ դեպի Մեհրուժը, որ մի առանձին անձկությամբ սպասում էր նրա պատասխանին։ Ասաց.

— Գովում եմ քո ազնվությունը, գովում եմ և քո լրջմտությունը, Մեհրուժ, բայց չեմ կարող ներել քո ամբաստանություններին։ Չափազանց եռանդը թույլ տվեց քեզ անպատշաճությունների մեջ ընկղմվել։ Դու մեղադրում ես իմ հայրերին, որ նրանք անխնա խորտակեցին, ոչնչացրին հինը, ավանդականը՝ նորը նրա տեղ հաստատելու համար։ Այդ իրավ է։ Բայց ամեն վերանորոգության սկիզբը այդպես է լինում։ Մեր տեր Հիսուս Քրիստոսն ես այդպես վարվեց։ Նա ոչ մի քար չթողեց քարի վրա։ Դու մեղադրում ես և իմ նախահորը, Լուսավորչին, որ նա Հայաստանը լցրեց հույն ու ասորի վարդապետներով։ Ուրիշ կերպ լինել չէր կարող։ Նրանց պետք էին պատրաստի մարդիկ, և նա բերեց յուր հետ այդ մարդկանցը Կեսարիայից։ Մի վարպետ, երբ ցանկացած շենքը կառուցելու համար յուր տեղում մշակներ գտնելու հույս չունի, նա մշակները յուր հետ է տանում։ Բայց իմ նախահոր նպատակը երբեք այն չէ եղել, որ օտարների ձեռքը տար հայի հոգևոր և մտավոր կրթությունը։ Այդ օտարները ժամանակավոր վարձկաններ էին, որ պետք է պահվեին այնքան ժամանակ, մինչև մեր աշխարհում բնիկներից նոր ուժեր պատրաստվեին։ Եվ այդ մտքով նա հիմնեց այդ բազմաթիվ դպրոցները, որոնց մեջ մինչև անգամ քրմերի որդիները պետք է քրիստոնեական կրթություն ստանային[26]։ Բայց եթե այդ դպրոցները ցանկացած արդյունքը չտվեցին, և այդ օտար հյուրերը մեր աշխարհում երկար մնացին, դա պետք է վերաբերել այն դժբախտ հանգամանքներին, որոնց զոհ գնացին իմ հայրերը և որոնք ժամանակ չտվին նրանց լիապես ի կատար ածելու հայոց լուսավորության գործը։ Իմ նախահայրը, Մովսեսի նման, ստիպվեցավ խույս տալ ժողովրդի խստասրտությունից, և յուր կյանքի վերջին օրերը թաղեց Սեպուհ լեռան այրերի անհայտության

մեջ[27]։ Նրա որդի Վրթանեսի համար դու ինքդ տեսցիր, թե որպիսի՜ բարբարոսությամբ կամենում էին սպանել այդ վանքի տաճարի մեջ։ Իսկ նրա մյուս որդի Արիստակեսը սպանվեցավ Ծոփաց գավառում Արքեղայոս իշխանից[28]։ Արիստակեսը կուսակրոն մնաց, որդի չթողեց, բայց նրա եղբոր՝ Վրթանեսի, երկու որդիներից մեկը՝ Գրիգորիսը, նահատակվեցավ Վատնյան դաշտում[29], իսկ մյուսը՝ Հուսիկը, սպանվեցավ յուր անեք Տիրան թագավորից[30]։ Հուսիկի երկու որդիները, Պապ և Աթանագինես, սպանվեցան մեր սենյակին կից դահլիճում։ Աթանագինեսի որդի Ներսեսը՝ իմ հայրը, այժմ աքսորված է մի անբնակ կղզում... Տեսնո՞ւմ ես, Մեսրոպ, իմ պապերից և ոչ մեկը խաղաղ մահով չվախճանվեցավ։ Ամենքը զոհ եղան մեր թագավորների, մեր նախարարների և վայրենի խուժանի վայրագության։ Սուրը ժամանակ չավեց նրանց իրագործելու այն մեծ նպատակները, որ ունեին իրանց հայրենիքի համար։ Իրանց ամբողջ կյանքում պատերազմեցին նրանք վայրենի նախապաշարմունքների դեմ, և նույն պատերազմի մեջ ընկան իրանք... Եվ այդ բոլորովին չէ վշտացնում ինձ։ Նրանց վախճանը պետք է այդպես լիներ, որպեսզի նրանց արյունով ծլեին, աճեին և ծաղկեին այն սրբազան սերմերը, որ ցանեցին հայրենի հողի վրա...

Մեսրոպը լռությամբ լսում էր, իսկ Սամվելի դեմքի վրա նշմարվում էր մի անսովոր անհանգստություն։

Մեծ քահանայապետի վեհաղնյա որդին այդ խոսքերով վերջացրեց յուր տխուր բացատրությունները.

— Եթե մի օր նախախնամողի կամքը, իմ նախահարց նման, կկոչե ինձ Հայաստանի հայրապետական աթոռի վրա, իմ առաջին հոգսը կլինի՝ հայոց եկեղեցու ընթերցվածները մայրենի լեզվի վերածել և հայ ժողովրդի կրթության գործը ազգային բուն հիմունքների վրա դնել...

— Իսկ իմ գործը կլինի,— ավելացրեց Մեսրոպը,— վերստեղծել հայոց մոռացված տառերը և ազատել մեր հասարակությունը մեզ համար խորթ՝ հույն, ասորի և պարսիկ դպրություններից։

Ո՞վ կարող էր մտածել, որ այդ գիշերվա ջերմ վիճաբանություններից քանիներեք տարի հետո, այդ երկու նշանավոր տաղանդները կկատարեին իրանց ուխտը և սկիզբ կդնեին հայոց մեծ լուսավորության ոսկյա դարին[31]...

Դուռը կամաց բացվեցավ, սենյակում հայտնվեցան երկու աբեղաներ, որոնք, կանգնելով առաջինների առջև, ասեցին միաձայն.

— Բոլորը լսեցինք։ Իսկ մենք պետք է ապացուցանենք, որ հույնը և ասորին այնքան վատ չեն, որքան դուք կարծում եք...

Երկուսն էլ վանքի միաբաններից էին. մեկը հույն էր ազգով, մյուսը՝ ասորի։ Առաջինը Եպիփանն էր, երկրորդը՝ Շաղիտան[32]։

ԺԱ.

ԽՈՐԹ ՄԱՅՐ

Մյուս օրը Ողական ամրոցը գտնվում էր արտակարգ ուրախության մեջ։ Ծառաները սովորականից լավ էին զարդարված, աղախինները վառվում էին գույնզգույն պճրանքներով և մինչև անգամ ներքինի Բագոսը հագել էր յուր խայտաճամուկ պարեգոտը։

Ամբողջ ամրոցը սպասում էր մի հարգելի հյուրի — Սահակ Պարթևին։

Սահակ Պարթևը այդ տան մեջ օտար չէր։ Մամիկոնյանները նրա քեռիներն էին։ Նրա հայրը, Ներսես Մեծը, Մամիկոնյանների փեսան էր։ Նրա մայրը, Սանդուխտ տիկինը, Սամվելի հորեղբոր՝ Վարդանի, դուստրն էր։ Դեռ ուսանողության ժամանակ Ներսես Մեծը Կեսարիայում ապրում էր յուր կնոջ՝ Սանդուխտի հետ, որից ծնվեցավ Սահակը։ Երեք տարուց հետո նույն քաղաքում վախճանվեցավ Սանդուխտը, որի մարմինը հայրը՝ Վարդանը, բերեց Հայաստան և թաղեց Թիլ ավանի հայրապետական տան տոհմային գերեզմանատան մեջ[1]։ Յուր սիրելի ամուսինը կորցնելուց հետո, Ներսես Մեծը երկար չմնաց Կեսարիայում, այլ յուր ուսումը կատարելագործելու նպատակով գնաց Կ. Պոլիս։ Այնտեղ ամուսնացավ Ասպիոնե անունով մի հույն ազնվականի դստեր հետ[2]։

Սամվելը, վաղ առավոտյան վերադառնալով Աշտիշատի վանքից, անմիջապես յուր մորը իմացում էր տվել Սահակի այցելության մասին։ Այդ լուրը թեև սկզբում խռովություն պատճառեց տիկնոջը, բայց, ծածկելով յուր ահաճությունը, հրամայեց, որ պատրաստություն տեսնեն։ Տիկինը համբերել չէր կարող հայրապետական տան բոլոր անդամներին, մանավանդ Սահակին, որի բարձր ազնվապետական վեհությունը սաստիկ վրդովեցնում էր նրան։ Իսկ այսօր հայոց մեծ քահանայապետի որդին հայտնվում էր մի այնպիսի անպատեհ ժամանակ, երբ Մամիկոնյանների տան մեջ եփ էր գալիս մի գաղտնի հակազգային և հակաքրիստոնեական խմորում...

Դեռ մի քանի ժամ մնում էր մինչև ճաշը։

Տիկնոջ դահլիճը արդեն կազմ ու պատրաստ էր։ Պատուհանների և դարակների մետաքսյա վարագույրները վեր էին բարձրացրած և նրանց միջից երևում էին բոլոր թանկագին անոթները, որ դրված էին միմյանց մոտ։ Ոսկին, արծաթը, պղինձը վառվում էր յուր սքանչելի գեղեցկությամբ։ Նրանց մեջ կային զանազան տեսակ գեղաքանդակ

պնակներ, ափսեներ, թասեր, բաժակներ, գավաթներ, տարաներ և հայկական սև ու կարմիր կավից շինված նկարակերտ սափորներ[3]։ Դրանք՝ իրանց անշարժ դրության մեջ՝ ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե սեղանի սպաս։

Ամբողջ դահլիճը բուրում էր վարդի անուշահոտությամբ։ Բազմոցները, գորգերը, բարձերը՝ բոլորը ցողված էին վարդաջրով։ Լուսամուտների մեջ, մեծ ծաղկամաններով, դրված էին ամենաթարմ փունջերը։

Տիկինը նստած էր յուր սովորական փափուկ դահավորակի վրա և բաց լուսամուտից նայում էր դեպի յուր առջևը բացվող լայնածավալ հեռաստանը։ Այստեղից երևում էր, ծառերի խտության մեջ թաքնված, ճանապարհի մի մասը, որ բերում էր Աշտիշատի վանքից դեպի ամրոցը։ Տիկնոջ մտահույզ աչքերը հառած էին այդ ճանապարհի վրա։ Նա խորին վրդովմունքով սպասում էր Սամվելի գալստյանը, որ պիտի անցներ այն տեղով։ Նա երազում էր և այն երջանիկ օրը, երբ այդ ճանապարհով կհայտնվեր սիրելի ամուսինը, յուր հետ բերելով նոր բախտ և մեծություն...

Նրա մոտ նստած էր մի այլ կին, ավելի մանկահասակ, ավելի նազելի։ Անմեղությունը և հեզությունը կաթում էր այդ սիրուն կնոջ վարդագույն շրթունքներից։ Նրա խոշոր, սևորակ աչքերի մեջ այնքան քաղցրություն կար, որ, կարծես, բարության ծով լինեին։ Ճակատի վրա փայլում էր պարսից արքայական նշանը — մի կիսալուսնի ոսկյա ճաճանչներով[4]։ Եվ իրավ, նա պարսից արքայական տոհմից՝ հզոր Շապուհի քույր Որմիզդուխտն էր[5]։

Դա Վահան Մամիկոնյանի երկրորդ կինն էր, իսկ Սամվելի՝ խորթ մայրը։

Այդ գեղեցիկ կինը գերեց Սամվելի հոր սիրտը, այդ գեղեցիկ կինը կապեց Սամվելի հորը թե՛ պարսից արքունիքի և թե՛ պարսից կրոնի հետ և, վերջապես, այդ գեղեցիկ կնոջ միջոցով Շապուհը որսաց Մամիկոնյան նախարարներից մի հավատարիմ գործակից...

Բազմակնությունը հայոց նախարարների մեջ սովորական բան էր։ Բացի օրինավոր կանանցից, նրանք պահում էին և բազմաթիվ հարճեր[6]։

Սամվելի հայրը ամուսնացավ Որմիզդուխտի հետ այն ժամանակ, երբ Արշակավանի դժբախտ վախճանից հետո[7] Ներսես Մեծը հաշտեցրեց Արշակ թագավորին յուր նախարարների հետ, բայց Սամվելի հայրը և Մերուժան Արծրունին չհաշտվեցան, այլ երկուսն էլ բաժանվեցան նախարարների միաբանությունից և, թողնելով Արշակին, դիմեցին Տիզբոն և պարսից Շապուհ արքային անձնատուր եղան[8]։

Այսօր միևնույն ընտանիքի երկու տանտիկինները նստած էին միասին, մի գահավորակի վրա։ Որմիզդուխտը — Սամվելի խորթ մայրը և Տաճատուհին — Սամվելի հարազատ մայրը։ Դրանք երկու անհաշտ ախոյաններ էին։ Ախոյաններ, որպես միևնույն ամուսնի սիրույն բաժանորդ՝ երկու խանդոտ կանայք, ախոյաններ, որպես բարձր ծագումի երկու հզոր ներկայացուցիչներ։ Ավելի ճիշտ հաշվով, պետք է Սամվելի մայրը խոնարհվեր, տեղի տար արքայադստեր պահանջներին։ Սամվելի մայրը Մերուժան Արծրունու քույրն էր, իսկ Որմիզդուխտը՝ Շապուհ արքայի քույրը։ Բայց, հանգամանքների շնորհիվ, այդ հաշվից բոլորովին հակառակ հետևանք էր դուրս եկել։ Սամվելի մայրը, այդ խստասիրտ և դոռոզ Արծրունին, օգուտ քաղելով Որմիզդուխտի մեղմ և դյուրաթեք բնավորությունից, ոչ միայն կարողացել էր պահպանել յուր տիկնանց-տիկնության փառքն ու բարձրությունը, այլ մինչև անգամ հաջողեցրել էր Որմիզդուխտին յուր ազդեցության տակ գնել։ Այդ էր պատճառը, որ այսօր Որմիզդուխտի ներկայությունը համարյա մոռացված էր Սամվելի մոր համար, որ դեռևս շարունակում էր լուսամուտից նայել դեպի Աշտիշատի ուղին, և նրա վրա ամենևին ուշադրություն չէր դարձնում։

Նրա ուշադրությունը գրավել էր մի միտք, որ սաստիկ հուզում էր նրան։ Սահակի անակնկալ հայտնվելը Տարոնում՝ վանական մթին տարակուսանքների մեջ էր գցել նրան։— «Յուր կալվածքներին տեսություն անելու համար է եկել...— մտածում էր նա,— այդ ի՞նչ է նշանակում։ Այդ բախտավոր մարդիկը՝ առանց սրի և առանց արյունի՝ այնքան շատ կալվածքներ ունեն, որ չեն էլ մտաբերում, թե որտեղ ունեն, և երբեք նրանց երեսը չեն տեսնում։ Անտարակույս, մի այլ նպատակ պետք է թաքնված լինի Սահակի այցելությունների մեջ...

Որմիզդուխտը արդեն սկսել էր ձանձրանալ։ Մի քանի րոպե նրան զբաղեցրեց ուրախ ծիծեռնակը, որ բաց լուսամուտից ներս սլացավ, ճլվլլաց, ճլթճլթաց, մի քանի պտույտներ, մի քանի շրջաններ գծեց ընդարձակ դահլիճի մեջ և ապա նստեց պղնձյա կիսարձանի գլխին, որ դրած էր մարմարիոնի պատվանդանի վրա։ Դա Մամիկոնյանների նախահոր՝ Մամգունի, անդրին էր։ Մի առանձին հետաքրքրությամբ այդ բարձրությունից նայում էր բնության հարազատը դեպի յուր ճոխ և հարուստ շրջապատը, նայում էր և երկու մտախոհ կանանց վրա։ Երբ ոչինչ բավականություն չգտավ, կրկին թռավ նստած տեղից, կրկին մի քանի պտույտներ գործեց և ապա, շարունակելով յուր երգը, դուրս նետվեցավ բաց լուսամուտից։

Որմիզդուխտը այսօր հյուր էր կանչված Սամվելի մոր մոտ։ Նա

ուներ յուր առանձին բնակարանը։ Ամրոցի համարյա քառորդ մասը բռնել էր նա յուր աղախինների, ներքինիների և ծառաների բազմությամբ, որոնք բոլորն էլ պարսիկներ էին։ Եղբայրը նրան Հայաստան ճանապարհ դնելու ժամանակ՝ դրեց նրա հետ, իբրև օժիտ, այլ հարստության թվում՝ և սպասավորների մի ամբողջ քարավան։ Իբրև օժիտ ստացավ նա այլև Ասորեստանի սահմանի մոտ, Տիգրիսի աջ ափերի վրա, արդյունաբեր դաստակերտներ, գյուղեր և ավաններ։

Յուր ձանձրությունը փարատելու համար, երբեմն վեր էր առնում նա յուր մոտ դրված գեղեցիկ հովհարը, որ պատրաստված էր սիրամարգի փետուրներից և բռնված էր փղոսկրյա կոթի մեջ, և նրանով զովացնում էր տհաճությունից բորբոքված դեմքը։ Այդ գործողության միջոցին նրա հոլանի բազուկների վրա կապված մարջանի կարմիր շարքերը ախորժելի ձայներ էին հանում։ Սամվելի մայրը դեռ շարունակում էր նայել լուսամուտից։ Որմիզդուխտը, յուր ներկայությունը հիշեցնել տալու համար, հարցրեց.

— Միայնա՞կ է գալու Սահակը։

— Նրա հետ կլինի և յուր հոր քարտուղարը՝ Մեսրոպը,— պատասխանեց նա, դառնալով դեպի յուր մոռացված հյուրը։

— Ես Մեսրոպին չեմ տեսել,— ասաց Որմիզդուխտը։

— Շուտով կտեսնես, մի սիրո՛ւն, նախշունի՛կ երիտասարդ է։

Վերջին երկու բառերի վրա մի առանձին եղանակով շեշտեց Տաճատուհին։ Որմիզդուխտը այլայլվեցավ։

Խոսում էին պարսկերեն։

— Սահակը նույնպես սիրուն երիտասարդ է,— նկատեց նա։

— Եվ ավելի սիրուն, քան թե Մեսրոպը,— ավելացրեց Տաճատուհին դառն ժպիտով։

Ներս մտավ Սամվելը։

— Բա՛րև, Որմիզդուխտ, բա՛րև, մայր իմ,— ասաց նա և շնորհալի կերպով մոտեցավ, նախ մոր ձեռքը համբուրեց և ապա՝ Որմիզդուխտի։

Սամվելի հայտնվելը փարատեց Որմիզդուխտի ձանձրույթը, և նրա սիրուն դեմքի վրա նշմարվեցավ նկատելի ուրախություն։

— Ի՞նչ եղան «քո» հյուրերը,— հարցրեց մայրը մի առանձին հանգով։

Սամվելը մոտեցավ լուսամուտին, այնտեղից նայեց դեպի հանդիպակաց աշտարակը, որի կողքին ագուցած էր արևի քարյա ժամացույցը[9], և ասաց.

— Փոքր-ինչ ուշացան, երևի, շուտով կգան։ Հիմա հասկանում

եմ,— խոսքը փոխեց նա,— թե դու որքա՜ն ես սիրում Սահակին։

— Ինչպե՞ս,— հարցրեց մայրը թաքցնելով յուր դժկամակությունը։

— Դահլիճը բոլորովին նոր կերպով ես զարդարել, և այդքան անհամբեր ես Սահակի ուշանալու համար։

Մայրը ծիծաղեց։

— Բայց գիտե՞ս, Սամվել, մենք շուտով գուցե ուրիշ հյուրեր ևս կունենանք։ Ինչո՞ւ չես նստում։

Սամվելը նստեց Որմիզդուխտի և մոր հանդեպ։

— Ի՞նչ հյուրեր,— հարցրեց նա։

— Դեռևս հարցնո՞ւմ ես, Սամվել,— ասաց մայրը մի այնպիսի հանդիմանական ձայնով, որով կշտամբել էր կամենում որդու մոռացկոտությունը։— Դու խո գիտես, որ հորդ հետ գալու են պարսից երկու նշանավոր զորապետներ՝ Զիկ և Կարեն իշխանները[10]. տարակույս չկա, որ Տարոնով անցնելու միջոցին՝ նրանք մեր ամրոցում հյուր կլինեն։

— Այդ ես գիտեմ... սիրելի մայր,— պատասխանեց Սամվելը, վեր առնելով Որմիզդուխտի հովհարը և պտտեցնելով մատների մեջ։— Դեռ վաղ է... դու շտապում ես... պարսից զորապետներն այդպես շուտ չեն գա... մինչև նրանց Տարոնի սահմանի մեջ մտնելը, մենք բավական ժամանակ ունենք այդ գերապատիվ հյուրերի ընդունելության համար արժանավոր պատրաստություններ տեսնելու...

Տիկինը, որդու փոխաբերական խոսքերն ընդունելով որպես անկեղծություն, պատասխանեց.

— Ես էլ գիտեմ, որ բավական ժամանակ ունենք պատրաստվելու, բայց դու չես իմանում, Սամվել, մեր սպասավորների կոպտությունը։ Հազար անգամ պատվիրում ես, դարձյալ մոռանում են, թե ինչ բան որտեղ պետք է դնել, կամ ինչ բան որտեղից պետք է վեր առնել։ Եվ ես ամեն անգամ, երբ մի նշանավոր մարդ եմ ընդունում, առանց ամոթի չեմ մնում։

— Բայց Սահակը մերն է, սիրելի մայր, նա օտար չէ, որ այդքան խստապահանջ լինի քեզանից...

— Դու դարձյալ Սահակի մասին ես խոսում,— ընդհատեց մայրը վրդովվելով։— Սահակի մասին ո՞վ է մտածում...

— Հա՛, մոռացա... Զիկ և Կարեն զորապետները...

— Այո՛, Զիկ և Կարեն զորապետները։ Գիտե՞ս, Սամվել, ովքեր են դրանք, որքա՜ն մեծ ազդեցություն ունեն Շապուհի արքունիքում։

Այդ անունները հաճախ կրկնվելով, Որմիզդուխտը միամտությամբ խոսակցության մեջ մտավ.

— Նրանք իմ եղբոր հետին ծառաներն են, եթե այստեղ գալու լինեն, համարձակություն չի պիտի ունենան իմ մոտ նստելու։

— Ճշմարիտ է, սիրելի Որմիզդուխտ,— ասաց Սամվելը, մի առանձին համակրությամբ նայելով գեղեցիկ կնոջ երեսին,— բայց երբ պարսից արքունիքի հետին ծառաները մեզ մոտ են գալիս, մենք ոչ միայն նրանց ամենաբարձր բազմոցն ենք ցույց տալիս, այլ մեր գլխի վրա ենք նստեցնում…

Այդ խոսքերը չվիրավորեցին Որմիզդուխտին, այլ վիրավորեցին Սամվելի մորը։ Նա մի խոժոռ հայացք ձգեց նախ որդու վրա և ապա Որմիզդուխտի վրա։

— Դու չես արդարացնում, Սամվել, իմ գանգատը մեր ապաստավորների կոպտության մասին,— ասաց նա խռովված ձայնով,— այս առավոտ չորսին դուրս եմ արել։ Երևակայիր մի այդպիսի հասարակ բան. մեծ դժվարությամբ ես կարողացա որսալ տալ մի սոխակ. մի առ մի պատվիրեցի, թե վանդակը որտեղից պետք է կախ տալ և ինչով պետք է կերակրել։ Բայց ի՞նչ։ Այս առավոտ մտնում եմ դահլիճը, գտնում եմ խեղճ թռչունին յուր վանդակի մեջ սպանված։ Բանից դուրս է գալիս, որ վանդակը փոխանակ վերևից կախ տալու, դնում են պատուհանում, կատուն գալիս է, թաթը կոխում է և սպանում սոխակին։

— Այդ վերին աստիճանի կոպտություն է,— ասաց Սամվելը, գլուխը ցավակցական կերպով շարժելով։— Դու իրավունք ունեիր ոչ միայն չորսին, այլ բոլորին դուրս անելու։ Բայց կատվին չպատժեցի՞ր։

— Դու ծաղրում ես, Սամվել, այդպիսի դեպքերում շատ անվայել է ծաղրը,— նկատեց մայրը։— Գոնե Որմիզդուխտին մի՛ վիրավորիր։

Սամվելը դարձավ դեպի Որմիզդուխտը, հարցնելով.

— Դու քեզ վիրավորվա՞ծ ես համարում։

Նա ժպտաց և, թավ հոնքերի տակից նայելով Սամվելի երեսին, ասաց.

— Ոչ։ Ձեր անտառներում սոխակներ շատ կան…

— Բայց այնպիսին, որ ամբողջ օրը անդադար երգում էր, հազարից մի անգամ է պատահում, Որմիզդուխտ,— ընդմիջեց Տաճատուհին գրգռված ձայնով։— Դու քո կրոնի իմաստն անգամ չես հասկանում և Սամվելի ծաղրին համբերում ես… այդ լավ չէ…

Որմիզդուխտը շառագունեցավ։

Հարցը ինչո՞ւմն էր։ Սամվելի մայրը այնքան նուրբ զգացմունքներ ունեցող կին չէր, որ սիրեր սոխակի երգը։ Հարցը փոքր-ինչ կրոնական բնավորություն ուներ։ Սոխակի մեջ, ըստ պարսից հավատալյաց, բնակվում էր բարի հրեշտակներից մեկի ոգին, և ամեն մի զրադաշտական

սովորություն ուներ յուր տան մեջ պահել մի սոխակ։ Նրա երգը հանապազորյա օրհնություն էր համարվում այդ տան բախտավորության համար։ Պարսիկների սրբազան թռչունը յուր տան մեջ մտցնելով, Սամվելի մայրը կամեցել էր առաջին ցույցը անել յուր համակրության դեպի պարսից հավատալիքները։ Եվ այդ ցույցը անհրաժեշտ էր, որովհետև նա հույս ուներ շուտով ընդունել յուր տան մեջ Զիկ և Կարեն զորապետներին։

Սամվելը կրկին դարձավ դեպի յուր խորթ մայրը։

— Իսկ դու ի՞նչ պատրաստություններ ես տեսնում, Որմիզդուխտ։

— Ես ոչինչ պատրաստություններ չեմ տեսնում,— պատասխանեց միամիտ պարսկուհին։

Նա չգիտեր Տիզբոնից ստացված վերջին տեղեկությունները։ Սամվելի մայրը նրան ոչինչ չէր հայտնել։ Սամվելը մտածեց հայտնել, փորձելու համար, թե ի՛նչ տպավորություն կգործեին նրա վրա։

— Դու նույնպես պետք է պատրաստություններ տեսնես, Որմիզդուխտ,— ասաց նրան Սամվելը.— ես այժմ կհայտնեմ քեզ մի շա՛տ և շա՛տ ուրախալի նորություն։

Դեռ չլսած նորությունը, Որմիզդուխտի դեմքը փայլեց ուրախությունից։

Մայրը աչքով, հոնքով նշան տվեց, որ լռե Սամվելը։ Բայց նա իբր թե չնկատեց և ասաց Որմիզդուխտին.

— Քո եղբայրը, Շապուհ արքան, քո կրտսեր քրոջը՝ Որմիզդուխտին, կնության է տվել Մեհրուժան Արծրունուն, արդեն Տիզբոնից դուրս են եկել և հորս հետ գալիս են Հայաստան։

— Այդ լա՞վ է...— խորին հրճվանքով բացականչեց Որմիզդուխտը և բռնեց Սամվելի ձեռքից։— Ուրեմն ես շուտով կտեսնե՞մ քրոջս... ուրեմն նրանք շուտով այստեղ կլինե՞ն։

— Իհարկե՛, կտեսնես քո քրոջը... և քո նոր քենակալին... դուցե շուտով այստեղ կլինեն...— պատասխանեց Սամվելը, յուր ձեռքը չբաժանելով ոգևորված պարսկուհու ձեռքից։— Մի այլ ուրախալի նորություն ես...

— Այդ ի՞նչ ասելու բան է, մտածի՛ր, Սամվել,— ընդհատեց մայրը հայերեն լեզվով, որը Որմիզդուխտը չէր հասկանում։

— Ինչո՞ւ չասել. ինչո՞ւ նա չպիտի գիտենա, որ յուր ամուսինը (այսինքն և քո ամուսինը և իմ հայրը) գալիս է։ Ինչո՞ւ նա չպիտի գիտենա, որ յուր քույրը պսակված է Մեհրուժանի հետ։ Ի՞նչ հարկ կա թաքցնել նրանից,— խոսեց Սամվելը փոքր-ինչ վրդովված ձայնով։

— Նրա համար պետք է թաքցնել, որ դա մի երեխայի չափ խելք

չունի. ինչ որ դա գիտե, մի բանից հետո ամբողջ ամրոցը կարող է գիտենալ...

— Բոլորովին սխալ ես։ Որմիզդուխտը, իրավ է, անմեղ երեխայի սիրտ ունի, բայց մի լավ կնոջ խելք։

Որմիզդուխտը թեև չէր հասկանում այդ վիճաբանությունը, բայց հասկացավ մոր և որդու մեջ տեղի ունեցած անբավականությունը և մեջ մտավ, ասելով.

— Մի՛ վշտացրու մորդ, Սամվել։

Հետո դարձավ դեպի մայրը, հարցնելով.

— Դու ուրախ չե՞ս, որ իմ քույրը ամուսնացել է քո եղբոր հետ

— Ինչպե՞ս ուրախ չլինել,— պատասխանեց տիկինը, փոքր-ինչ մեղմանալով,— իմ ուրախությունը սահման չունի։ Խիստ սակավ արարածներ արժանանում են պարսից հզոր արքայի փեսան լինելու բախտին

— Ուրեմն Սամվելից պետք է շնորհակալ լինել, որ խորհուրդ է տալիս պատրաստություններ տեսնել։ Եվ ես արքայավայել պատրաստություններ պետք է տեսնեմ թե՛ իմ քրոջ համար, և թե՛ իմ հոր նոր փեսայի համար։ Ա՜խ, ի՜նչ ուրախություն կլինի այն օրը, երբ նրանք այստեղ կհասնեն...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին գեղեցիկ կնոջ պայծառ դեմքը ավելի հրապուրիչ փայլ ստացավ։ Բայց Սամվելի մայրը դեռ խոժոռված էր, դեռ մտածում էր՝ միգուցե որդին ավելի հեռու գնա յուր խոստովանությունների մեջ պարզամիտ Որմիզդուխտի առջև, որին նա շատ անփորձ և անզգույշ կին էր համարում։

Շապուհ արքայի բոլոր քույրերը կոչվում էին Որմիզդուխտ։ Ինչպես հին հայերի մեջ, նույնպես պարսիկների մեջ, նույն սովորությունն էր տիրում, թեև աղջիկները առանձին անուն ունեին, բայց այդ անունները չէին գործածվում, այլ սովորաբար կրում էին իրանց հոր անունը։ Շապուհ արքայի հայրը Որմիզդն էր և նրա բոլոր աղջիկները կոչվում էին Որմիզդ-դուխտ, որ նշանակում է Որմիզդի դուստր։ Հայոց Սանատրուկ արքայի դուստրը կոչվում էր Սան-դուխտ, սուրբ Վարդան Մամիկոնյանի դուստրը՝ Վարդան-դուխտ, Սահակ Պարթևի (քահանայապետի) դուստրը՝ Սահակ-անույշ, Սմբատ Բագրատունու դուստրը՝ Սմբատ-ուհի[11]։

Այսպես էլ Շապուհի երկու քույրերը, որոնց մեկը կնության էր տված Սամվելի հորը, Վահան Մամիկոնյանին, իսկ մյուսը՝ Մեռուժան Արծրունուն, կոչում էին իրանց հոր, Որմիզդի անունով՝ Որմիզդուխտ։

Հայաստանը, եթե ոչ կլանելու, գեթ յուր գերիշխանության ներքո պահելու համար, պարսից արքունիքը նույն քաղաքականությանն էր

հետևում, ինչ քաղաքականություն որ գործ էր դնում հռոմեական կայսրությունը։ Վալենտիանոս կայսրը, Հայաստանը դեպի յուր կողմը ձգելու համար, յուր ազգականներից Ոլիմպիասա օրիորդին կնության տվեց հայոց Արշակ թագավորին[12]։ Իսկ Շապուհ արքան, նրա հակառակ, յուր երկու քույրերին կնության տվեց Արշակի երկու նշանավոր նախարարներին — Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին — և նրանց ապստամբեցրեց իրանց թագավորի դեմ։

Արծրունյաց նախարարության երկիրը ընդարձակ Վասպուրականն էր, իսկ Մամիկոնյան նախարարության երկիրը՝ Տարոնը։ Վասպուրականը Ատրպատականի կողմից, իսկ Տարոնը Ասորեստանի կողմից շատ մոտ էին պարսից սահմաններին։ Շապուհ արքան յուր երկու քույրերի միջոցով երկու մեծ դռներ բաց արեց այդ կողմերից Հայաստան մըտնելու։

— Մի այլ ուրախալի նորություն ես, Որմիզդուխտ,— խոսեց Սամվելը, ուշադրություն չդարձնելով յուր մոր դժկամակության վրա.— քո քույրը շուտով հայոց թագուհի կդառնա...

— Ա՜խ, ի՞նչ ես ասում,— ձայն տվեց Որմիզդուխտը և ուրախությունից այն աստիճան շփոթվեցավ, որ մոռանալով յուր ամոթխածությունը, մի անմեղ թիթեռնիկի նման վեր ցատկեց նստած տեղից և, փաթաթվելով Սամվելի պարանոցին, երկար բաց չէր թողնում յուր գըրկից, անդադար հարցնելով.— Ճշմարի՞տ է... Ճշմարի՞տ է... դու հանաք ես անում, Սամվել...

— Հանաք չեմ անում... բոլորովին ճշմարիտ է... քո եղբայրը խոստացել է Մերուժանին հայոց թագավորությունը...— պատասխանեց Սամվելը, ազատվելով նրա գրկից։

— Ա՜խ, որքա՜ն լավ կլինի,— ասաց Որմիզդուխտը ծափահարելով և, նստելով յուր տեղը, դարձավ դեպի Սամվելի մայրը, հարցրեց.

— Լավ չի՞ լինի։

— Իհարկե, լավ կլինի,— պատասխանեց նա, ինքն ևս ուրախակից լինելով նրա հրճվանքին։

Սամվելը վեր կացավ, մի քանի անգամ անցավ դահլիճի միջով և ապա կանգնեց Որմիզդուխտի առջև, ասելով.

— Շա՜տ լավ կլինի, Որմիզդուխտ, բայց դու, երևի, չգիտես, որ հայոց թագավորական գահին հասնելու համար՝ Մերուժանը դեռ շատ գործեր պետք է կատարե...

— Ի՞նչ գործեր,— հետաքրքրությամբ հարցրեց Որմիզդուխտը։

— Ես բոլորը կպատմեմ քեզ։

Մայրը կրկին ակնարկեց որդուն, որ լռե։

— Նա պետք է գիտենա, և կատարվելիք գործերի հաջողությունը պահանջում է, որ նա գիտենա,— ասաց Սամվելը հայերեն լեզվով։— Ինչո՞ւ ես արգելում ինձ։

Նա մոտեցավ մյուս լուսամուտին և կանգնեց նրա հանդեպ։ Մի քանի րոպե այդ ահեղ բարձրությունից լուռ նայում էր դեպի յուր առջև բացվող տեսարանները։ Ներքևում, մթին անդունդի մեջ, որտեղ էր Արածանին, որ սեղմվելով Վահևվահյան ձորի[13] անձկության մեջ, մի վայրացած վիշապի նման, յուր պտույտներով գանակոծում էր ամրոցի ստորոտի ապառաժները։ Նրա հանդեպ, գետի մյուս կողմի բարձրության վրա, երևում էին մի հին քաղաքի ավերակները, որի մասին ավանդությունը ասում էր, թե շինված է եղել Սանատրուկ թագավորից։ Այդ քաղաքը Սլկունիների, այսինքն՝ Տարոնի նախկին տիրապետող իշխանների, մայրաքաղաքն էր, որ կործանեց Մամիկոնյանների նախահայր Մամգունը։ Անտառը ծածկել էր այդ խորհրդավոր քաղաքի հսկա փլատակները, և կիսավեր աշտարակների միջից աճել էին դարևոր կաղնիներ։ Կրակը մի ժամանակ կատարել էր այնտեղ սարսափելի ավերմունք, և այդ պատճառով այդ քաղաքը կոչվում էր Մծուրք[14]։ Սամվելը նայում էր նրա վրա, որպես խորտակված փառքի և իշխանության մարած մոխրի վրա... Նա աչքերը դարձրեց այդ տխուր տեսարանից և սկսեց նայել դեպի ավելի հեռու։ Երևում էր Ավետյաց բլուրը, երևում էր այդ սրբազան բլրի լանջաց վրա այն գեղեցիկ ծառաստանը, որի մեջ թաքնված էր Գլակա հռչակավոր վանքը[15]։ Դեռ կենդանի էր Լուսավորչի կաղ դևը, դեռ այդ վանքի վարդապետների մոխիրը գետնի տակով տանում էր և ածում Արածանիի ալիքների մեջ[16]։ Գլակա վանքում դրած էին Սամվելի պապերի շիրիմները։ Սամվելին այնպես էր թվում, որ այդ պատկառելի շիրիմներից դուրս էին հայտնվում այն մեծ հանգուցյալների մռայլ ուրվականները և վայրացած դեմքով նայում էին Ողական ամրոցի վրա, ուր սկսվել էր կատարվել Մամիկոնյանների տոհմին անվայել մի դավաճանություն... Տխո՜ւր զգացմունքներով Սամվելը երեսը շուռ տվեց Գլակա վանքից և սկսեց նայել դեպի յուր աջ կողմը։ Երևում էր Հացյաց դրախտը[17], և հացի ծառերի սքանչելի թավուտների միջից հազիվ նշմարվում էին Սամվելի նախահարց կառուցած եկեղեցու խաչապատկ գմբեթները, որ մոտ էր Աշտիշատի վանքին։

Նա դարձավ դեպի յուր երկրորդ մայրը, ասելով.

— Ե՛կ այստեղ, Որմիզդուխտ։

Որմիզդուխտը թեթև քայլերով վազեց նրա մոտ և տեղավորվեցավ նրա կողքին, լուսամուտի պատուհանի մեջ։ Սամվելի մայրը խորին տհաճությամբ նայում էր նրանց վրա։

— Հիմա կասեմ քեզ, Որմիզդուխտ, թե ի՛նչ գործեր պետք է կատարե Մերուժանը Հայոց թագավորական գահին հասնելու համար։ Բայց այդ գործերի մեջ մենք պետք է օգնենք նրան... մանավանդ դու, Որմիզդուխտ...

Նա ձեռքը մեկնեց դեպի Հացյաց դրախտը։

— Տեսնո՞ւմ ես, սիրելի Որմիզդուխտ, ինչպես գեղեցիկ լուսավորում են այնտեղ արեգակի պայծառ ճառագայթները։ Արփին յուր աստվածային ջերմությամբ կյանք է ներշնչում այդ հրաշագեղ դրախտին։ Փչում է հովը, և ծառերի ճապուկ կատարները՝ մեղմ կանաչագույն ալիքների նման՝ ծփում են, ծածանվում են, և որպես մի կանաչազարդ ծով, տարածվում են մինչև հորիզոնի վերջը։ Այդ ծառերի ստվերախիտ լռության մեջ կանգնած են Մամիկոնյանների կառուցած տաճարները[18]։ Իմ պապերը սպառեցին այնտեղ իրանց գանձերը, աշխարհի բոլոր թանկագին իրեղեններով զարդարելով այդ տաճարների սուրբ սեղանը։ Թվով մի քանի հարյուր աբեղաներ կերակրվում են այնտեղ մեր հացով և աղոթում են իրանց բարերարների հոգու համար։ Այժմ մենք՝ Մամիկոնյաններս, կկործանենք այդ տաճարները, սիրելի Որմիզդուխտ, և նրանց տեղը պարսկական ատրուշաններ կհիմնենք։ Թո՛ղ ծուխով ու մուխով լցվի այդ նվիրական դրախտը... Թո՛ղ այդ գեղեցիկ ծառաստանը այրվի՛, մոխի՛ր դառնա որմզդական կրակի մշտավառ բոցերի մեջ... Թո՛ղ քրիստոնեական խունկի ու կնդրուկի անուշահոտության փոխարեն մոգերի մատուցած ողջակեզների ճենճերային հոտը բուրե այդ սրբազան տեղերում... Թո՛ղ լռե զանգակի և կոչնակի տաղտկալի ձայնը... Թող այդ հրաշալի բարձրությունների վրա ամեն առավոտ, արևի ծագման ժամանակ, և ամեն երեկո, արևի մուտքի ժամանակ, թո՛ղ հնչե մոգերի թմբուկի ու շեփորի ձայնը[19]... և թո՛ղ բարեպաշտ հայ շինականը, այդ ձայնը լսելով, դողդոջուն սրտով բարձրանա յուր կտուրի վրա և երկրպագություն տա ելանող ու մտանող արեգակին... Լսո՞ւմ ես, սիրելի Որմիզդուխտ, ահա այդ է պահանջում քո եղբայրը, և այդ պետք է կատարե Մերուժանը հայոց թագավոր դառնալու համար...

Բայց Որմիզդուխտը ոչինչ չէր լսում։ Նա մի քաղցր ինքնամոռացության մեջ, ձեռքը դրած ոգևորված երիտասարդի ուսի վրա և կպած նրա կողքին, լսում էր միայն սիրելի ձայնի մուզիկան, արբեցած էր նրա շնչով, և ամեն անգամ, երբ նա մի փոքր շարժում էր գործում, ցույց տալով այս և այն առարկան, գեղեցիկ կնոջ մանուկ սիրտը բաբախում էր մրրկածուփ ջերմությամբ...

Լսում էր Սամվելի մայրը։

— Բավակա՛ն է, Սամվել...— գոչեց նա, և մոր սպառնալի ձայնը սթափեցրեց որդուն յուր խորին հափշտակությունից։

— Դու ծաղրո՞ւմ ես, Սամվել...— կրկնեց նա։— Լա՛վ մտածիր, քո վարմունքը... Որմիզդուխտ, հեռացի՛ր այստեղից։

— Ա՛խ, ինչո՛ւ ես դու իմ ազնվությունը ծաղրի տեղ ընդունում, սիրելի մայր,— ասաց Սամվելը և հեռացավ լուսամուտից։— Ես բոլորովին չեմ ծաղրում... Ես ասում եմ այն, ինչ որ դու ես ցանկանում...

Որմիզդուխտը նույնպես ցավելով թողեց այդ խորշը և ցավելով բաժանվեցավ Սամվելի բարեկական զրացությունից։ Նա յուր դողդոջուն քայլերը ուղղեց դեպի դահլիճի դուռը, առանց նայելու յուր հյուրընկալի վրա։

— Ո՞ւր, Որմիզդուխտ,— ձայն տվեց նա։

— Ես ինձ վատ եմ զգում... գլուխս պտտվում է... գնում եմ մի փոքր հանգստանալու...

Նա շտապով դուրս գնաց, մոռանալով յուր հովհարը, որ դրած էր տիկնոջ գահավորակի վրա։ Սամվելը առեց հովհարը և վազեց նրա ետևից։ Նախասենյակում կանգնեցրեց նրան։

— Շնորհակալ եմ, Սամվել,— ասաց խորթ մայրը, ընդունելով հովհարը, և նրա տխրամած դեմքը կրկին փայլեց ուրախության ժպիտով։

— Դու այսօր ճաշին մեզ մոտ չե՞ս լինի,— հարցրեց Սամվելը։

— Ո՛չ...

— Սահակը շատ կցանկանար տեսնել քեզ։

— Իմ կողմից ներողություն խնդրիր։

Նա դուրս եկավ։ Նախասենյակի դռանը երկու սևամորթ ներքինիներ սպասում էին նրան։ Առաջ ընկան և տարան նրան դեպի յուր բնակարանը։

Վերադառնալով դահլիճը, Սամվելը ասաց յուր մորը.

— Դու վիրավորեցիր Որմիզդուխտին։

— Ես չեմ կարող համբերել իմ սենյակում այս տեսակ պարսկական վավաշոտությունների...— պատասխանեց մայրը։

— Բայց դու սիրում ես ամեն ինչ, որ պարսկական է...

— Բայց մտածի՛ր, Սամվել, նա քո հոր կինն է...

— Եվ իմ հարգելի մայրն է... Եթե դու դարձյալ այդպես անվայել կերպով կխոսես նրա վրա, ես իսկույն նրա նման դուրս կգնամ և մյուս անգամ չեմ մտնի այս դահլիճը։

Տիկինը ոչինչ չպատասխանեց։ Որդու սպառնալիքը լռեցրեց նրան։ Կնոջ արտասուքը, մանավանդ մոր արտասուքը, այդպիսի րոպեներում

ամենաազդու պատասխանն է լինում։ Մայրը թաշկինակը տարավ դեպի աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ։

Սամվելը անհնարին խռովության մեջ, բարկությունից ձեռքերը շփելով, մոլորվածի նման շրջում էր դահլիճի մեջ և ուշադրություն չէր դարձնում մոր արտասուքի վրա։ Նա դեռ զգում էր յուր կողքին նազելի կնոջ տպավորության ախորժելի շոշափումը, նրա ականջներին դեռ հնչում էր վերջին խոսքերի քաղցրությունը։

Այդ մանկահասակ կինը, որի տարիքը քսանից չէին անցնում, սիրելի էր Սամվելին, սիրելի՛, ավելի այն պատճառով, որ այն դերը, որի համար նա նշանակված էր և որի պատճառով նրա եղբայրը մտցրել էր նրան այդ ընտանիքի մեջ, նա ոչ միայն բնավ չէր կատարում, այլ մինչև անգամ արհամարհում էր։ Պարսից արքունիքը յուր կրթության բոլոր ուժը սպառելով միայն տղաների պատրաստության վրա, աղջիկները մնում էին համարյա թե անկիրթ և սովորում էին գլխավորապես հարուստ և շքեղ կանանոցի մեղկությունները, զվարճությունները ու բարձր ազնվապետական ձևերը միայն։ Այդ էր պատճառը, որ նրանք քաղաքական նպատակների գործիք դառնալու մեջ բոլորովին անընդունակ էին։ Նրանք ծառայում էին ավելի իբրև մի մեքենական օղակ իրանց ամուսիններին արքունիքի հետ կապելու համար, իսկ իրանք սեփական գիտակցություն չունեին։ Սամվելի երկար բացատրությունները, որ այնքան զգացմունքով արտասանեց նա լուսամուտի հանդեպ կանգնած ժամանակ, ուրիշ ոչինչ չէին, եթե ոչ մի փորձ, հասկանալու համար Որմիզդուխտի համակրությունը կամ հակակրությունը, թե ինչպես կվերաբերվի նա դեպի յուր հոր ձեռնարկությունները։ Նրան, իբրև պարսկուհու և իբրև հեթանոսի, ավելի պետք է գրավեին կատարվելիք գործերը, բայց նա ուշադրություն անգամ չդարձրեց։ Եվ ինչ որ նրան ավելի պետք է հետաքրքրեր և ինչ բանի մեջ նա ավելի պետք է յուր ազդեցությունը գործ դներ, ընդհակառակն, գործ էր դնում Սամվելի հարազատ մայրը։ Եվ այդ էր, որ այնպես սաստիկ վրդովեցնում էր որդուն։

Լսելի եղավ շփոթի ձայն։

Սամվելը ցնցվեցավ։ Ցնցվեցավ և նրա մայրը։ Վերջինը աչքերը սրբեց և սկսեց նայել լուսամուտից։ Սամվելը նույնպես մոտեցավ մյուս լուսամուտին։

Աշտիշատի վանքից դեպի ամրոցը բերող ճանապարհի վրա երևաց մի ստվար ասպախումբ։ Արևի առջև փայլում էին նրանց զենքերն ու զարդերը։ Երբ մոտեցան ամրոցին, հնչեցրին շեփորը։

Սամվելը դուրս գնաց ընդունելու յուր վեհազնյա հյուրին։

ԺԲ

ԱՆՀԱՋՈՂ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հյուրերի երևալը ընդմիջեց այն անակնկալ կռիվը, որ տեղի ունեցավ մոր և որդու մեջ։ Մամիկոնյան տիկինը դարձյալ ընդունեց յուր սովորական հպարտ դեմքը և, Սամվելի դուրս գալուց հետո, անհանգիստ կերպով շրջում էր դահլիճի մեջ, մինչև նրանք ներս կմտնեին և կհամբուրեին յուր աջը։

Բայց նրանք ուշացան։

Նա կանչել տվեց տաճարապետին։

Ներս մտավ մի միջահասակ ոստանիկ՝, որը տան տնտեսը, մատակարարը և միևնույն ժամանակ սեղանատան կառավարիչն էր։ Նա խոնարհությամբ գլուխ տվեց և կանգնեց դռան մոտ։

— Ամեն ինչ պատրա՞ստ է, Արմենակ,—հարցրեց նրանից։

— Պատրաստ է, տիկին,— պատասխանեց տաճարապետը։

— Երաժիշտները կանչվա՞ծ են։

— Կանչված են, տիկին։

— Կհրամայես տակառապետին, որ ամենահին և ամենաթունդ գինին բաց անե հյուրերի համար։

— Հրամայված է, տիկին։

— Իսկ ինձ համար՝ ամենաթույլը, հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ, տիկին...

— Միայն գույների մեջ զանազանություն չլինի...

— Չլինի, տիկին...

Ուրիշ մի քանի պատվերներ ևս տալով, ասաց նրան.

— Այժմ կարող ես գնալ։

Նա գլուխ տվեց և դուրս ելավ։

Տաճարապետի հեռանալուց հետո ներս մտավ ներքինապետ Բագոսը՝ յուր խորշոմած, լերկ դեմքով, յուր առանց թերթերունքների կարմիր կոպերով, որոնք իրանց նեղ շրջանակի մեջ հազիվ կարողանում էին սեղմել նրա՝ գորտի աչքերի նման դուրս ընկած՝ անհանգիստ բիբերը։ Նա քսությամբ մոտեցավ տիկնոջ դահավորակին, այնքան ուշիկ քայլերով, կարծես, վախենում էր, միգուցե ոտները մատնեին իրան, և կռանալով, խուլ ձայնով մրթմրթաց.

— Գնացին նախ տիկին Զարուհիի ձեռքը համբուրելու...

Մամիկոնյան տիկնոջ գոռոզ աչքերը վառվեցան բարկության կրակով։

— Հետո՞,— հարցրեց նա խռովյալ ձայնով։
— Հետո գալու են այստեղ ճաշելու։
— Ե՞րբ։
— Ո՞վ է իմանում։ Եթե տիկին Զարուհին չուշացնի, գուցե շուտ կգան։ Բայց նրա սովորությունները հայտնի են. մինչև մի բան չուտացնի, մինչև մի բան չխմացնի, բաց չի թողնի։
— Սամվե՞լն էլ գնաց նրանց հետ։
— Սամվելը բոլորից առաջ էր ընկած...
Տիկինը ավելի վրդովվեցավ։
Ներքինապետը, արդեն իրան հասած համարելով յուր նպատակին, ավելի առաջ տարավ քսությունը, ասելով.
— Սամվելը հրամայեց, որ Մուշեղին ևս հրավիրեն ճաշի...
— Եվ Մուշեղը համաձայնվեցա՞վ գալու։
— Համաձայնվեցավ... Սամվելի հետ նա այդպես է...
Վերջին խոսքերի միջոցին բանսարկուն ձեռքերը մոտեցրեց և երկու ցուցամատները կցեց միմյանց հետ, որ միության նշան էր։
Միևնույն ամրոցում ապրող Մամիկոնյան երեք եղբայրների — Վարդանի, Վասակի և Վահանի — ընտանիքները, թեև առերես բարեկամ էին, բայց ի ներքուստ թշնամական հարաբերության մեջ էին։ Եվ այդ ոխերիմ թշնամությունը ուներ յուր ողբալի պատճառները. Վասակը սպանել էր յուր հարազատ եղբորը՝ Վարդանին[2], իսկ Վահանը՝ Սամվելի հայրը, մատնելով եղբայրասպան Վասակին Շապուհ արքայի ձեռքը, նույնպես սպանել տվեց[3]։ Այդ տան մեջ արյան թշնամություն կար,— ընտանեկան անմոռանալի վրեժխնդրության թշնամություն...
Բայց կեղծ-ազնվապետական քաղաքավարությունը սքողում էր այդ թշնամությունը։ Տիկնոջը վրդովեցրեց ոչ այնքան Սամվելի՝ Մուշեղին ճաշի հրավիրելը, որը նրա հորեղբայր Վասակի որդին էր, որքան ներքինապետի հաղորդած այն տեղեկությունը, թե Սահակ Պարթևը գնաց նախ տիկին Զարուհիի ձեռքը համբուրելու։ Այդ սգավոր տիկինը սպանված Վարդան Մամիկոնյանի այրին էր։ Իսկ Սահակը, որպես նախընթաց գլխում ցույց տվինք, այդ Վարդանի քրոջ որդին էր։ Այդ էր պատճառը, որ Սահակը սովորություն ուներ ամեն անգամ, երբ նրան պատահում էր յուր քեռիների ամրոցը գալ, նախ մտնել տիկին Զարուհիի մոտ, մխիթարել նրան և յուր հարգանքը հայտնել յուր սգավոր քեռակնոջը։ Եվ այդ սաստիկ բարկացնում էր Սամվելի մորը։ «Ամեն անգամ, երբ այդ զոռոզ Պարթևը հայտնվում է մեր ամրոցում, միշտ մի առիթ է գտնում ինձ վիրավորելու»... մտածում էր նա, և ուռած շրթունքները դողում էին սրտի խռովությունից։

— Որմիզդուխտի մասին մի բան չիմացա՞ր,— դարձավ նա դեպի Ներքինապետը։

— Նա հիվանդ է…

— Ուրեմն ճաշի չի՞ գա։

— Եթե առողջ էլ լիներ, չէր գա…— ասաց Ներքինապետը, և նրա երեսի կնճռոտ կաշին, ավելի կծկվելով, ծիծաղի նման մի բան ձևացրեց խորամանկ դեմքի վրա։

Իսկ Սամվելի մոր դեմքը փայլեց անկեղծ ուրախությամբ, երբ իմացավ, որ Որմիզդուխտը ճաշին չի լինի։ Գեղեցիկ, քաղցրաբարո կինը, մանկահասակ հյուրերի շրջանում, կարող էր ստվեր ձգել նրա վրա։ Նախանձը չափ չուներ այդ փառասեր Արծրունու սրտում, թեև նա արդեն հասակը առած և թառամած կին էր։

Ներքինապետի և տիկնոջ խոսակցության միջոցին, երբեմն դահլիճի դուռը աննկատելի կերպով շարժվում էր, և նրա նեղ բացվածքից նայում էին երկու լուսափայլ աչքեր։ Մեկը նախասենյակում լրտեսում էր։

Ներքինապետի հաղորդած տեղեկությունները որքան ուրախություն պատճառեցին տիկնոջը, այնքան ավելի ևս տրտմություն հարուցին նրա մեջ։ Նրա սիրտը ալեկոծվում էր, և ամբոխված գլխում պտտվում էին մթին խորհրդածություններ… Անպատեհ հյուրերի տարաժամ գալուստը այն աստիճան հանկարծակի և անակնկալ կերպով տեղի ունեցավ, որ ժամանակ չավեց նրան կարգի դնելու և մի որոշ հետևանքի հասցնելու յուր խորհրդածությունները… Այժմ տատանվում էր նա սարսափելի ծայրահեղությունների մեջ…

Նա կրկին դարձավ դեպի բանսարկուն, հարցնելով.

— Դու հաստատ գիտե՞ս, որ Մուշեղը գալու է ճաշի։

Ներքինապետի դեմքի վրա կրկին հայտնվեցավ զզվելի ժպիտը, և նրա անհանգիստ բիբերը ավելի լայնացան։

— Եթե քո խոնարհ ծառան մի բան հաստատ չգիտենա, չի ասի,— պատասխանեց նա և ձեռքը մեղմաբար տարավ ուղղելու գահավորակի վրա դրած բարձերից մեկը, որ փոքր-ինչ շեղվել էր յուր սովորական տեղից։

Դահլիճի դուռը կրկին շարժվեցավ, երկու փայլուն աչքերը կրկին շողացին բացված ճեղքից։ Երևում էր, որ այդ հետախույզ աչքերը դըժվարանում էին գիտելու, թե ո՛վ էր տիկնոջ խոսակիցը, որովհետև գահավորակը, որի վրա նստած էր տիկինը, դրած էր դռան բոլորովին հակառակ կողմը, իսկ դահլիճը այնքան ընդարձակ էր, որ ձայների միայն անորոշ հնչյուններն էին հասնում մինչև նախասենյակը։

Տիկինը մտահույզ կերպով վեր կացավ նստած տեղից և յուր քայլերը ուղղեց դեպի կից սենյակը։

— Ե՛կ ինձ հետ, Բաղոս,— հրամայեց ներքինապետին։

Այդ կողքի սենյակը տիկնոջ առանձնարանն էր, որից մի դուռ բացվում էր դեպի նրա քնարանը, իսկ մի այլ դուռ՝ դեպի կանանոցի ետևի փոքրիկ բակը, որ զարդարված էր մշտադալար բույսերով։

Առանձնարանի դուռը ներսից կողպեցին։ Դահլիճը մնաց դատարկ։

Այդ միջոցին դահլիճը մտավ նախասենյակի ունկնդիրը — օրիորդ Նվարդը։ Որպես մի մարմնացած զգուշություն, ուշիկ քայլերով անցավ նա փափուկ գորգերի վրայով և, ուշադրությամբ յուր շուրջը նայելով, մոտեցավ լուսամուտներում դրած ծաղկամաններին, հոտ քաշեց, մոտեցավ մետաղյա հայելուն, նայեց յուր գունաթափ դեմքի վրա, և ապա մոտեցավ այն դռանը, ուր ներս մտան տիկինն ու ներքինապետը։ Մի խուլ քրթմնջոց լսելի էր լինում ներսից։ Օրիորդը կամաց ականջը տարավ դեպի դռան փականքը։ Շվարած աղջիկը շունչ անգամ չէր առնում, որ յուր լսողությանը չխանգարե։ Նրա ականջներին հասնում էին աղոտ շշնջյուններ միայն, որոնցից ոչ մի բառ որոշել չէր կարողանում։ Տհաճությունը խեղդում էր նրան։ Մի մթին, չարագուշակ բնազդմամբ զգում էր նա մի ինչ-որ դավադրություն, որ սարսափեցնում էր նրան։

Նա հեռացավ յուր բռնած դիրքից, որոնում էր մի առարկա գտնել, որ եթե տիկինը հանկարծ դուրս գալու լինի, իրան գործով զբաղված տեսնե։ Այդ միջոցին դահլիճի դռները շառաչմամբ ետ գնացին և ծափ նման ներս նետվեցավ փոքրիկ Վահանը — Սամվելի կրտսեր եղբայրը։ Շատ խաղալուց քրտնած, թշերը վառ դարձած, ուրախ երեխան վազեց, փաթաթվեցավ օրիորդին և, նրանից մի համբույր ընդունելուց հետո, իսկույն բաց թողեց նրան և թռավ գահավորակի վրա։ Մի ակընթարթում հավաքեց նա բարձերը, դրեց միմյանց վրա և, ձիու նման հեծնելով, սկսեց ոտներով խթահարել և ձեռքերով մտրակել յուր նժույգին, ուրախ-ուրախ կրկնելով՝ «չո՜ւ... չո՜ւ»... Երբ տեսավ, որ յուր անշնորհք նժույգը տեղից չէ շարժվում, ձանձրացավ և վայր ցատկեց գահավորակի վրայից, մի այլ խաղալիք գտնելու համար։ Չարաճճին խլեց ծաղկամանների մեջ դրած փունջերից մեկը։ Այդ միջոցին վրա հասավ օրիորդը և հազիվ կարողացավ նրա ձեռքից ազատել փունջը։ Բայց ծաղիկները բավական տրորվեցան։ Նկատելով, որ համառ երեխան հանգիստ չէ մնալու, օրիորդը բռնեց նրա ձեռքից, համարյա բռնությամբ դուրս քաշեց դահլիճից և դուռը ներսից կողպեց։ Նա մի քանի անգամ զայրացած կերպով ոտքով խփեց դռանը և հեռացավ։

Վահանի չարությունը թեև խլեց օրիորդից մի քանի թանկագին

րոպեներ, բայց նրա համար մի գործ պատրաստեց, որի մասին մտածում էր։ Նա վեր առեց Վահանի ձին, այսինքն՝ միմյանց վրա դրած երկու բարձերը, մեկը նետեց գահլիճի մի կողմը, մյուսը նետեց մյուս կողմը։ Վեր առեց նրա սարքած փունջը, բքբրեց, տերևաթափ արեց, և նույնպես ցրիվ տվեց գորգերի վրա։ Այդ գործողություններից հետո նա կրկին մոտեցավ առանձնարանի դռանը, ականջը տարավ դեպի փականքը։

Այժմ ավելի կամաց էին խոսում։ Խեղճ օրիորդը ամբողջ մարմնով լսելիք էր դարձել, բայց ոչինչ չէր լսում։ Նրա սիրտը բաբախում էր հետաքրքրությունից, և արյան ջերմությունը այրում էր թշերը։ Բավական էր նրան գիտենալ, թե ում հետ էր խոսում յուր տիկինը. այդ շատ բան կպարզեր։ Դռան փեղկը ներքևի կողմից բոլորովին սերտ կերպով չէր կցված շրջանակի հետ, մնացել էր մի նեղ բացվածք։ Նա կռացավ, սկսեց այդ բացվածքից նայել։ Ոչինչ չէր երևում։ Մի քանի րոպեից հետո լսելի եղավ հազալու անընդհատ ձայն, որ հետզհետե սաստկանալով և ապա աստիճանաբար նվազելով, վերջը հեղձուցիչ խռխռոցի փոխվեցավ։ Օրիորդը ցնցվեցավ։ Այդ ակամա հազը ծանոթ էր նրան, ծանոթ էր և ամբողջ ամրոցին։ Նա դուրս էր վիժում խորտակված կուրծքից և փտած թոքերից։ Այժմ գիտեր օրիորդը, թե ով էր տիկնոջ խոսակիցը։ «Մի բան կա»... մտածեց նա և լարեց յուր բոլոր ուշադրությունը։

Հանկարծ գունաթափվեցավ նա, ինչպես գունաթափվում է մի մարդ, երբ կայծակը շանթում է մերձակայքում, և լսելի է լինում որոտման ահեղ դղրդյունը։ Բայց նրա լսածը երկու բառեր էին միայն. մեկը Մուշեղի անունը, մյուսը՝ մի այլ սոսկալի բառ...

Առանձնարանում տիրեց խորին լռություն։ Այժմ առաջվա շշնջյունն անգամ չէր լսվում։ Երևում էր, որ տիկնոջ խոսակիցը, վերջին պատվերը առնելուց հետո, դուրս գնաց մյուս դռնից, որ բացվում էր դեպի կանանոցի փոքրիկ բակը։

Օրիորդը հեռացավ յուր դարանից, մտածելով, որ տիկինը կարող էր հանկարծ դուրս գալ և այնտեղ տեսնել իրան։ Նա մոտեցավ դահլիճի դռանը, որ ինքը կողպել էր, բաց արեց, հետո սկսեց գորգերի վրա սփռված տերևները և ծաղիկների թերթիկները հավաքել։ Բարձերը դեռ ընկած էին իրանց տեղում։ Բավական գործ կար, որ եթե տիկինը դուրս գալու լիներ, նրան զբաղված տեսներ։ Բայց նա ուշացավ։ Երևում էր, որ դեռ երկար տանջվում էր նա այն անգութ պատվերի մասին, որ տվեց հավատարիմ ծառային... Մի քանի անգամ հավաքեց օրիորդը ծաղիկների տերևները, ծղոտները և թերթիկները, մի քանի անգամ վերջացրեց այդ գործը, բայց դարձյալ, ավելի մանրացնելով, ցրիվ տվեց հա-

տակի վրա։ Այդ գործողությունը կրկնում էր նա, մինչև դուրս եկավ տիկինը։

— Այդ ի՞նչ է, այդ ո՞վ արեց,— հարցրեց նա, բարկացած աչքերով նայելով յուր շուրջը։

— Ո՞վ պետք է աներ,— պատասխանեց օրիորդը, շարունակելով հավաքել յուր ցրիվ տվածը.— ներս եմ մտնում, տեսնում եմ, որ Վահանը ամեն ինչ տակնուվրա է արել. հենց որ ինձ տեսավ, իսկույն փախավ։

— Ա՜խ չարաճճի,— բացականչեց զայրացած մայրը,— ե՞րբ պետք է խելքի գա այդ տղան։ Հիմա կարող են իսկույն մտնել հյուրերը և տեսնել այդ անկարգությունը։

— Ես իսկույն կհավաքեմ, տիկին,— ասաց օրիորդը, շտապեցնելով յուր աշխատությունը։

— Մինչև դու կհավաքես, կեսօր կդառնա. գնա՛, սպասավորներից մեկին ասա, որ գա ավլե այստեղ, իսկ ինքդ վազի՛ր պարտեզը, մի նոր փունջ պատրաստիր, դրա տեղը դնելու համար։

Նվարդը շտապով դուրս գնաց։

Սպասավորները խմբված էին սեղանատանը, ծիծաղում էին, հռհռում էին, կատակներ էին անում և սեղանն էին պատրաստում։ Նրանց միջում խառն էր և պատանի Հուսիկը— Նվարդի սիրելին։ Նվարդը հեռվից կանչեց մեկին և հայտնեց տիկնոջ հրամանը, իսկ ինքը վազեց դեպի պարտեզը։

Նրան տեսնելով, Հուսիկի աչքերը վառվեցան։ Նա հետևեց, թե դեպի որ կողմը գնաց օրիորդը, մանավանդ երբ նկատեց, որ խորամանկ աղջիկը մեկնելու միջոցին ձեռքը տարավ դեպի աջ ականջը։ Այդ նրանց մեջ մի պայմանական նշան էր, որի իմաստն այն էր, թե կանչում է նրան։

Հուսիկը ընկերների ուշադրությունը յուր վրա չդարձնելու համար՝ մի քանի րոպե սպասեց, հետո զգուշությամբ դուրս եկավ սեղանատնից։ Հեռվից տեսավ նա, որ օրիորդը գնում էր դեպի պարտեզը։ Ինքն էլ պտույտ տվեց մի այլ ճանապարհով, որ նույնպես դեպի պարտեզն էր տանում։

Նա գտավ յուր սիրուհին վարդենիների թփերի մոտ, բայց ոչ այնպես ուրախ, որպես սովոր էր նրան հանդիպել այստեղ։ Նա դեռ նոր էր սկսել փնջել յուր փունջը։

— Երևի, ինձ համար է,— ասաց պատանին և մոտեցավ գրկելու նրան։

— Դրա ժամանակը չէ, Հուսիկ,— արգելեց օրիորդը։— Ես քեզ կանչեցի մի շա՛տ կարևոր գործի համար։

— Ի՞նչ գործ,— հարցրեց պատանին վշտացած ձայնով, առաջին անգամ մի այդպիսի սառնություն տեսնելով սիրած աղջկա կողմից։

— Գնա՛ Սամվելի մոտ, մի կերպով հասկացրու, որ իշխան Մուշեղին իմացում տա, որ նա այսօր մեր տիկնոջ մոտ ճաշի չգա... Գնա՛, մի ուշացիր...

Այն ծանր եղանակը, որով արտասանեց օրիորդը այդ խոսքերը, Հուսիկին մոռանալ ավեց յուր սիրային զուրգուրանքը, և նա զարմացած կերպով հարցրեց.

— Ինչո՞ւ Մուշեղ իշխանը չգա ճաշի, ի՞նչ կա...

— Բան կա... հետո կասեմ... դու մի ուշացիր...

— Չէ՞ որ իմ տերը պետք է գիտենա, թե ի՛նչ բան կա, որ իմացում տա Մուշեղ իշխանին։

— Հիմա որ քո տերը գիտենա, լավ չի լինի, սիրելի Հուսիկ, կարելի է մի խռովություն ծագե,— ասաց օրիորդը համոզիչ ձայնով.— Թող հյուրերը գնան, ես բոլորը կպատմեմ քեզ, և դու կհայտնես քո տիրոջը։ Դե՛ գնա, մի ուշացիր։

— Թո՛ղ տուր երեսդ...

— Գնա՛...

— Գոնե այդ սիրուն մատներդ...

Հուսիկը խլեց օրիորդի ձեռքը և, մատների ծայրերը համբուրելով, դուրս վազեց պարտեզից։

«Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց
Եւ զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
Եւ թմբկի հարկանէաք»։

Հնչում էր վինը, հնչում էր բամբիռը, և սեղանատնից լսելի էր լինում Արտաշեսի ողձական երգը[4]։ Երկու ժողովրդական երգիչներ, դռան մոտ կանգնած, երգում էին և ածում էին իրանց հինավուրց նվագարանների վրա։ Հին էր երգը, հին էին և երգիչները։ Արտաշեսը մահվան անկողնի մեջ երգեց այդ երգը։ Հայրենասեր թագավորը, յուր կյանքի վերջին րոպեներում, խորին տենչանքով փափագում էր այն հանդեսներին, որ կատարվում էին Նավասարդի առաջին առավոտը։ Այն օրից անցել էր մոտ երեք հարյուր տարի։ Եվ ահա մահվան անկողնի մեջ

դրված հեթանոսության երգիչը, քրիստոնեական դարում, երգում էր նույն երգը[5]։

Տաճարի մեջտեղում դրած էր մարմարինի անշարժ սեղանը[6]։ Նա երկայն ձև ուներ, այնքան երկայն, որ նրա երկու կողմերում կարող էին տեղավորվիլ ավելի քան հիսուն հոգի։ Բայց գեղեցիկ, քանդակազարդ նստարանների վրա նստած էին հինգ հոգի միայն։ Սեղանի գլխում, փառավոր բազմոցի վրա, նստած էր Մամիկոնյան տիկինը. նրա աջ կողմում՝ Սահակ Պարթևը, իսկ ձախ կողմում՝ Մեսրոպ Մաշտոցը։ Սահակից ներքև նստած էր Սամվելը, իսկ նրա հանդեպ ծերունի Արբակը— Սամվելի դայակը։ Հյուրերի թվում պակաս էր Մուշեղ իշխանը — Սամվելի հորեղբոր որդին։ Պակաս էր և Որմիզդուխտ տիկինը։

Սեղանը լի էր զանազան խորտիկներով։ Արծաթյա բարձր ափսեների մեջ դրած էին պես-պես պտուղներ[7] — քաղցրավենիք, անուշեղեններ և չորացած մրգեղեններ։ Ամբողջ սեղանը զարդարած էր գույնզգույն ծաղիկներով և կանաչ տերևներով[8]։ Հյուրերի յուրաքանչյուրի ետևում կանգնած էր մի-մի ծաղկապսակ պատանի, շքեղ կերպով հագնըված։ Նրանք բռնած ունեին մի ձեռքում գինիով լի արծաթյա կահույրները, իսկ մյուս ձեռքում՝ նույնպես արծաթյա գավաթը, որ փոքրիկ թասի ձև ուներ[9]։ Դրանք հյուրերի մատռվակներն էին, նույն թվով, ինչ թվով որ սեղան էին նստած։ Իսկ ավելի հեռու, յուրաքանչյուր հյուրի ետևում, կանգնած էին նրանց զինված թիկնապահները և հրեշտակի նման հսկում էին իրանց տերերի վրա[10]։

Երգիչներին տեղ էին տվել սեղանատան դռան մոտ. նրանք անվայի ձայնով երգում էին և ածում։ Մեկը երկու աչքերից ևս Հոմերոսի նման կույր էր[11], իսկ մյուսը՝ մեկ ոտքից կաղ։ Հագնված էին աղքատ կերպով։ Ժողովրդի սիրելիները ժողովրդի անշուք կերպարանքն էին կրում իշխանների սեղանի մոտ...

Թախծալի երգի ձայնը, նվագարանների մեղեդին, ոսկյա պատառաքաղների[12] աղմուկը, արծաթյա գավաթների լիահնչյուն ընդհարումները խլացնում էին խոսակցության ձայները, որ սկսել էին հետզհետե կենդանանալ։ Լուռ էր միայն Սամվելը։ Դառն, հոգեմաշ մտածություններ ալեկոծում էին նրա սիրտը։ Երկու նրան սիրելի անձնավորություններ, զանազան պատճառներով, չմասնակցեցին սեղանին։ Իշխան Մուշեղը և Որմիզդուխտը։ Երկուսի բացակայության պատճառներն ևս նրա համար խիստ ծանր էին։

Խոսում էին ըստ մեծի մասին Մամիկոնյան տիկինը և խոսում էր ավելի Սահակ Պարթևի հետ։ Նա իրան առհասարակ լավ պահել գիտեր

հյուրերի շրջանում, բայց այսօր նրա խոսքերը կցկտուր էին և, կարծես, չէին կապվում միմյանց հետ։ Նա տանջվում էր այն մտքով, արդյոք Սամվելը հայտնե՞լ էր նրանց յուր հոր վերադառնալը Տիզբոնից, և եթե հայտնել էր, արդյոք ի՞նչ ձևով էր հայտնել։ Հյուրերը այդ մասին չէին խոսում և ինքը, տիկինը, աշխատում էր խույս տալ այդ հարցից։ Բայց բոլորովին լռելն էլ անպատշաճ էր։ Նա դիտավորություն ուներ՝ մոտ օրերում Սամվելին ճանապարհ դնել հորը ընդառաջ երթալու և դիմավորելու նրան՝ նախքան Տարոնի սահմանից ներս մտնելը։ Ինչպե՞ս կարելի էր, որ այդ տան ամենամոտ բարեկամները չգիտենային այդ, և որքան էլ որ ինքը թաքցնելու լիներ, վերջապես Սամվելը կասեր նրանց։ Իսկ ինքը Սամվելի հետ դեռ որևէ համաձայնություն չէր կայացրել, թե որպե՛ս պետք էր հրապարակել նրա հոր գալստյան համբավը կամ ի՛նչ ձև պետք էր տալ նրա ընդունելությանը։ Մյուս կողմից տանջում էր նրան այն միտքը, թե ինչո՞ւ Մուշեղը ճաշի չեկավ։ Մի՞թե յուր տան մեջ լրտեսներ կային... մի՞թե ներքինի Բագոսը դավաճանեց նրան... իրան խոսք տվեց, իսկ ծածուկ իմացում տվեց Մուշեղին պատրաստված դավադրությունը... «Եթե նրան հայտնեցի՜ն, հետևանքը շատ վատ կարող է լինել»... մտածում էր նա և յուր կսկիծը թաքցնում էր արտաքին կեղծ ուրախության ներքո։ Նա ոչ ոքից այնքան երկյուղ չուներ յուր ձեռնարկությունների խափանման մասին, որքան այդ համարձակ և անվախ երիտասարդից...

Տիկնոջ նման մի ամուր բնավորություն միայն կարող էր այդ բոլոր մթին տարակուսանքներից հետո՝ պահպանել յուր սառնասրտությունը և իրան չմատնել հյուրերի առջև։ Այսուամենայնիվ, նրա դրությունը խիստ դժվարին էր։ Նա չգիտեր, թե ինչպե՛ս պետք էր դուրս գալ իրերի այդ խառնաշփոթ հանգույցներից։

Նա աշխատում էր խոսել ավելի հեռավոր առարկաների վրա։ Մի քանի անգամ, զանազան ձևերով, հիշեց յուր ցավակցությունը Սահակի հոր, Ներսես Մեծի աքսորանքի մասին։

— Այն օրից,— ասում էր նա հեկեկալով,— որ ինձ հասավ այդ տխուր լուրը, ես հանգստություն չունեմ. ամեն անգամ, որ մտաբերում եմ, աչքերս լցվում են արտասուքով... Հայոց երկիրը առանց Հովվապետի՜... ա՜խ, այդ ինչ դժբախտություն է...

Եվ իրավ, նա թաշկինակը տարավ դեպի աչքերը։ Սահակը մխիթարեց նրան, ասելով.

— Ուրախ կա՛ց, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով։ Իմ հայրը յուր կյանքում շատ փորձանքների մեջ է ընկել,

և ամեն անգամ ամենակալ տերը ազատել է նրան։ Այդ փորձանքից ես, ես հավատացած եմ, կազատվի նա։

— Կազատվի՛,— կրկնեց տիկինը, ավելի մխիթարական դեմք ընդունելով։— Նրա սուրբ աղոթքը կազատե իրան...

Պարթևը փոխեց խոսքը, հարցնելով.

— Իսկ դու, քեռակին, ի՞նչ լուր ունես իմ քեռուց. չգիտեմ որտեղ՝ ականջիս հասավ, որ այս մոտ օրերը գալու է նա։

Տիկինը շփոթվեցավ, բայց իսկույն զսպեց իրան, պատասխանելով.

— Ասում են՝ գալու է... բայց ճիշտ տեղեկություններ չկան... Կարծես թե, մեր մեղքից, ճանապարհները փակված լինեն... Ամեն կողմից անհաջողության ձայներ են լսվում... մխիթարական ոչինչ չկա... Ի՞նչ է կատարվում այնտեղ, Տիզբոնում, ի՞նչ եղավ թագավորը,— հայտնի չէ... Միայն այդ օրերում Տիզբոնից մի եկվոր— երեկ, փախստական զինվոր — լուր բերեց, թե քեռիդ գալիս է... Ոչ նամակ ուներ, և ոչ մի նշան... Կասկածում եմ, որ ընծա ստանալու համար՝ խաբեց ինձ... Դու ինչ ես կարծում, սիրելի Սահակ, ես այդ մասին բոլորովին շվարած եմ, չգիտեմ, թե ինչ պետք է անել...

— Ես չեմ կարծում, որ եկվորը համարձակվեր խաբել քեզ, սիրելի քեռակին։ Որտեղացի՞ էր։

— Մեր գյուղացիներից մեկը...

— Ուրեմն կասկածելու ոչինչ չկա. ձեր գյուղացին քեզ չի խաբի...

— Ես էլ հակված եմ կարծել, թե գուցե ճշմարիտ լինի... և պատրաստվում եմ Սամվելին ընդառաջ ուղարկել...

— Անպատճառ, պետք է ուղարկել,— ասաց Սահակը, ուրախություն ցույց տալով և դարձավ դեպի մյուսները, այդ կեղծ-մտերմական խոսակցությունը ընդհանրացնելով։

— Լսի՛ր, Մեսրոպ, քեռիս գալիս է, Սամվելը պետք է ընդառաջ գնա, խմենք մի-մի գավաթ, Սամվելին բարի ճանապարհ մաղթելով։

Մեսրոպը զբաղված էր զանազան կատակներով ծերունի Արբակի հետ, իսկույն չլսեց Սահակի առաջարկությունը։ Սահակը կրկնեց յուր առաջարկությունը։

— Խմենք, խմենք,— ձայն տվեց Մեսրոպը և դարձավ դեպի երգիչները.— երգեցեք մի նոր երգ։

Նրանք երգեցին Վահագնի գիշերային այցելության երգը դեպի Աստղկա ոսկյա ապարանքը, որ կանգնած էր Աստղոնից[13] լեռան գագաթի վրա։

Մտավ Արփին, պատեց խավա՛ր,
Մութ խավարը գիշերին,
Նինջ ու թմբիր ցանեց Քունը
Լուռ և խաղաղ աշխարհին։

Լուռ է Նաղիկ[14], ալիքները
Նազ-նազելով են ծփում,
Որ նազանի Կույսի[15] նիրհը
Չխանգարեն հատակում։

Լուռ է գետը — Արածանին —
Ուշիկ հոսով է հոսում.
Որ Նըհանգը[16] ծանր քունը
Չվրդովե յուր խորքում։

Լուռ է անտառ, ոչ մի տերև
Չէ սոսափում, չէ շարժվում,
Զի Պարիկը[17] նինջ է ննջում
Յուր մամռապատ անձավում։

Լո՛ւռ է երկինք, լո՛ւռ է գետինք,—
Ամենուրեք լռություն.
Խաղաղական քաղցր քնով
Քնած է ողջ բնություն։

Բայց Աստղոնից լեռան վրա
Դեռ հսկում է դիցուհին,
Քուն կամ հանգիստ մոտ չեն գալիս
Նրա կարոտ աչերին։

Նա տանջվում է յուր անկողնում,
Անկողնումը լուսապատ,
Եվ տարփալի հուր-աչերը
Հառած են դեպ Աշտիշատ։

Ահա՛ Տարոն սասանվեցավ,
Սասանվեցավ, դղրդաց,
Ամպրոպային ահեղ թնդմամբ
Լեռն ու անտառ որոտաց։

Այդ հսկան է — շեկ Վահագնը —
Հսկայական ընթացքով
Տատանում է երկինք, գետինք,
Տատանում է լեռ ու ծով։

Բայց դիցուհու գողտրիկ սիրտը
Անուշ գոլով գողգողաց,
Երբ դյուցազնի մերձենալը
Յուր ամրոցին[18] *նա զգաց։*

Կրկին տիրեց լռությունը —
Խորհրդավո՞ր լռություն,
Նա Դյուցազնին հանդիստ տվեց.
Հանդիստ տվեց յուր գրկում։

ԺԴ

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԲԱՐԴՎՈՒՄ ԵՆ

Ճաշը վերջանալուց հետո, հյուրերը կրկին հավաքվեցան դահլիճը։ Այստեղ պատրաստած էին նրանց համար զանազան օշարակներ և զանազան զովացուցիչ ըմպելիքներ՝ գինու տապը մարելու համար։ Սպասավորները անդադար ելևմուտ էին անում, իսկ դռների մոտ անշարժ կանգնած էին թե՛ Սահակի և թե՛ Մեսրոպի զինված թիկնապահները։ Մամիկոնյան տիկինը այժմ ավելի ուրախ էր և ավելի սիրալիր քնքշությամբ զուրցում էր յուր հյուրերին։ Նա մինչև անգամ խոսում էր, ծիծաղում էր Մեսրոպի հետ, որի վրա առաջ առանձին ուշադրություն չէր դարձնում, համարելով նրան «մի փոքրիկ ազնվական», որ յուր անշուք ամրոցի կտուրից կարող էր տեսնել յուր կալվածքների բոլոր սահմանները։

Ծերունի Արբակը հենց ճաշը վերջանալուց հետո խուցն աննկատելի կերպով անհայտացավ։ Սամվելը դեռևս գտնվում էր յուր առաջվա մռայլ տրամադրության մեջ։ Եթե հյուրերի ներկայությունը չլիներ, նա ևս, յուր պապի նման, կթողներ և կհեռանար յուր սենյակը, մի փոքր հանգստություն տալու բորբոքված սրտին։ Նա նստած էր դահլիճի մի հեռավոր բազմոցի վրա և, գլուխը խոնարհեցրած հենարանի վրա, կարծես թե ննջում էր։ Բայց այդ ծանրացած գլուխը սարսափելի խռովության մեջ էր։ Առանց նրա կամքը հարցնելու գինու աղմկալի բաժակներով նրա համար բարի ճանապարհ մաղթեցին։ Նա պիտի գնար դիմավորելու յուր հորը. նա պիտի գնար ընդունելու հայրենիքի դավաճանին... Բայց ի՞նչ սրտով գնար, ինչպե՞ս ընդուներ... Այդ դա՛ռն, հուսահատական մտքերը ալեկոծում էին նրան։

Տիկինը, շարունակելով յուր անսպառ հարցուփորձը, դարձավ դե-

պի Սահակը, հարցնելով, թե ինչպե՞ս գտավ նա յուր հայրենական կալվածքները։

— Ոչ բոլորովին գոհացուցիչ դրության մեջ, քեռակին,— պատասխանեց Սահակը, փոքր-ինչ շփոթվելով այդ անակնկալ հարցից։— Քեզ հայտնի են մեր գործակալների անպիտանությունները, թե ինչպես օգուտ քաղել գիտեն հարմար դեպքերից։ Հորս հետ պատահած դժբախտությունից հետո, նրանցից ոմանք, համարյա իրանց տեր կարծելով իրանց կառավարությանը հանձնված կալվածքներին, մինչև անգամ զլացան արդյունքները յուր ժամանակին հասցնել։ Մեծ աշխատություններ էին հարկավոր, մինչև այդ բոլոր անկարգությունները կհեռացնեի և գործերը կարգի կդնեի։

Պարթևը խոսքերի մեջ չբռնվեցավ։ Փորձիչը առաջարկեց մի այլ հարց.

— Դարձյալ գոհություն աստուծո, որ կարողացել ես փոքր ի շատե կարգի դնել։ Հիմա պետք է քեռիներիդ տանը հանգստանաս և նրանց ուրախություն պատճառես, սիրելի Սահակ։

— Շատ կցանկանայի, սիրելի քեռակին, բայց ցավում եմ, որ մի օրից ավել մնալ չեմ կարող։ Սաստիկ շտապում եմ...

— Ինչո՞ւ, գոնե պետք է մնաս մինչև Սամվելի հոր գալը. դու գիտե՞ս, թե որքա՛ն կուրախանա նա, երբ քեզ այստեղ կտեսնե։

— Բայց մեր տանը մեծ անհամբերությամբ սպասում են իմ վերադարձին։ Փոքրիկ Սահականույշը[1] հիվանդ է. մայրը անմխիթար տրտմության մեջ է գտնվում. ուշանալ չեմ կարող, սիրելի քեռակին։

Տիկինը տխուր դեմք ընդունեց, թեև նա չէր հավատում ո՛չ փոքրիկ Սահականույշի հիվանդությանը և ո՛չ նրա մոր անմխիթար տրտմությանը, ինչպես չէր հավատում, որ Սահակը յուր կալվածական գործերը կարգի դնելու համար էր եկած Տարոն։

Նա դարձավ դեպի Մեսրոպը, որ այդ միջոցին կանգնած էր պատուհանի առջև և, ձեռքում բռնած ունենալով այնտեղ դրած արծաթյա անոթներից մեկը, նայում էր գեղեցիկ քանդակների վրա։

— Ինչպե՞ս վերջացավ ձեր վեճը օձնեցոց հետ, Մեսրոպ։

— Ես այդ մասին ամենևին չեմ էլ մտածում, տիկին,— պատասխանեց նա անփույթ կերպով.— ես այդ հոգսերը թողել եմ հորս վրա։ Օձերի հետ գործ ունենալը փոքր-ինչ դժվար է...

— Բայց հացիկցիք ևս պակաս չեն...— նկատեց տիկինը ժպտալով։

— Դրա համար էլ նրանց «կարճազատներ» են կոչում[2]...— պատասխանեց Մեսրոպը ծիծաղելով։

Մեսրոպը Հացիկ ավանի տերը և միևնույն ժամանակ բնիկ այնտե-

ղացի էր[3]։ Օձ քաղաքի բնակիչների հետ հողերի սահմաններ որոշելու վեճ ունեին։ Օձեցիք ճանաչված էին որպես օձարար մարդիկ, իսկ հացիկցիք ստացել էին «կարճազատ» մականունը, որ նշանակում է կարիճի զավակ, կամ, փոխաբերական մտքով, չարաճճի, խայթող, թունավորող։ Տիկինը յուր ակնարկությամբ կամեցավ հեգնել երիտասարդ «կարճազատի» խայթող լեզուն, որովհետև օձեցիք վայելում էին տիկնոջ առանձին խնամակալությունը և նրա անմիջական հովանավորության ներքո էին գտնվում։

Այդ փոքրիկ հանաքից հետո, որ տիկնոջը շատ հաճելի չթվեցավ, խոսակցությունը կրկին դարձավ Սամվելի ճանապարհորդության վրա։ Դրան առիթ տվեց այն, որ տիկինը, նկատելով որդու խռովյալ դրությունը, ցած իջավ յուր գահավորակից, մոտեցավ նրա բազմոցին և, ձեռքով փայփայելով նրա խիտ գանգուրները, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս, դու ճաշից հետո ինչ-որ տխրության մեջ ես գտնվում։

— Ոչինչ...— պատասխանեց Սամվելը, գլուխը վեր բարձրացնելով։— Այդ ինձ հետ շատ է պատահում... մանավանդ չափազանց ուրախություններից հետո... Սեղանի վրա փոքր-ինչ ավելի խմեցի...

Տիկնոջ աչքին ընկավ որդու գունաթափ դեմքը։ Նա սոսկաց։

— Քո դեմքը քո մասին լավ վկայություն չէ տալիս, Սամվել,— ասաց նա դողդոջուն ձայնով.— դու, երևի, հիվանդ ես. քո երեսին գույն չէ մնացել. քո աչքերը վառվում են ինչ-որ տենդային կրակով... ես սարսափում եմ քո վրա նայելիս։

— Ասում եմ, որ այդ ինձ հետ շատ է պատահում...— կրկնեց որդին և վեր կացավ նստած տեղից։

Նա մի քանի անգամ մտահույզ կերպով անցավ դահլիճի միջով, հետո կանգնեց Մեսրոպի մոտ, որ դեռևս շարունակում էր նայել հնադարյան անոթների վրա։ Տիկինը գնաց, նստեց յուր տեղը։

— Երիտասարդների հետ այդպիսի բաներ շատ են պատահում,— ասաց նրան Սահակը։— Ո՞վ գիտե, ինչ է մտաբերել... երևի, յուր նշանածին...

Վերջին խոսքը լսելով, տիկնոջ որդու մասին կրած ցավակցական զգացմունքները կատաղության փոխվեցան։ Նա զայրացած կերպով գոչեց.

— Խնդրում եմ, Սահակ, մի հիշեցրեք ինձ այդ անունը... Ինձ ատելի են բոլոր Ռշտունիները և ամբողջ Ռշտունիքը...։

Սահակը այդպիսի պատասխան չէր սպասում։ Այդ խոսքերը ոչ

միայն նետի նման ցցվեցան Սամվելի սրտում, այլև վիրավորեցին նույնիսկ Սահակին, և նա ափսոսաց, որ միամտաբար այդ առարկայի վրա խոսք բաց արավ։

— Ինչո՞ւ Աշտանիքը, այդ քաջարանց երկիրը, և ինչո՞ւ Աշտանիքները, այդ քաջազուն իշխանները ատելի են քեզ, տիկին,— հարցրեց նա սառն կերպով։

— Չգիտեմ ինչու,— պատասխանեց տիկինը առանց վրդովմունքի։— Միայն այդ կոշտ, կոպիտ, վայրենի, արյունարբու լեռնականների զավակը չէ կարող իմ որդու կինը լինել... Ես ինքս Արծրունի եմ և Արծրունյաց տոհմից ընտրել եմ իմ որդու համար արժանավոր հարսնացու... Այդ գիտե Սամվելը. ես հարյուր անգամ նրա հետ խոսացել եմ այդ մասին։

Սամվելը լսում էր այդ խոսքերը. նա մոտեցավ և, կանգնելով մոր առջև, ասաց կիսահեգնական ձայնով.

— Գիտեմ, գիտեմ, ոչ թե հարյուր անգամ, այլ հազար անգամ դու ասել ես ինձ այդ, և իմ պատասխանները, կարծեմ, դու չես մոռացել...

— Իսկ եթե քո հա՞յրը կառաջարկե քեզ միևնույնը, Սամվել,— ասաց մայրը կշտամբելով որդու կամակորությունը,— դու, կարծեմ, այն ժամանակ չես համարձակվի հակառակել քո հոր կամքին...

— Դեռ ինձ հայտնի չէ, որ իմ հոր կամքը այդ է...— պատասխանեց Սամվելը խորին սառնությամբ։

— Բայց ինձ հայտնի է...— ասաց մայրը խորին բարկությամբ։

Սահակը, նկատելով, որ յուր անմեղ կատակով առիթ տվեց անտեղի և սարսափելի վիճաբանության մոր և որդու մեջ, ընդմիջեց նրանց կռիվը, ասելով.

— Թողնենք այդ։ Իրավ է, որ այդ հարցում հոր կամքը ավելի մեծ նշանակություն ունի... Թողնենք մինչև հոր գալուստը... Ես հավատացած եմ, որ Սամվելը հոր ցանկությունը կկատարե...

Հետո, կամենալով ավելի կարևոր առարկայի վրա դարձնել խոսակցությունը, դարձավ նա դեպի Սամվելը, ասելով.

— Իսկ դու, սիրելի Սամվել, պետք է պատրաստվես հորդ ընդառաջ գնալու։

Սամվելը ոչինչ չպատասխանեց։ Մայրը շատ գոհ մնաց Սահակի առաջարկությունից և, բռնելով որդու ձեռքից, նստացրեց յուր մոտ, գահավորակի վրա, և մի առանձին սիրելությամբ նայելով նրա երեսին, ասաց.

— Ես ամեն ինչ պատրաստել կտամ քո ճանապարհորդության համար, թանկագին Սամվել։ Ես մոռանում եմ բոլորը։ Դու չգիտես, ի՛նչ

բան է մոր սիրտը։ Դու չգիտես, թե որպիսի ջերմությամբ ամեն րոպե բաբախում է նա որդու բախտավորության համար։ Ես հենց այսօր կհրամայեմ, որ պատրաստեն նժույգները։ Արծաթյա ասպազենքով և թանկագին շալերով զարդարել կտամ նրանց։ Ավելի քան հիսուն հետևակներով[4] դու կդիմավորես քո հորը։ Քեզ կուղեկցեն երիտասարդ համհարզների[5] մի ստվար խումբ, ամենքը գեղեցիկ զարդերով զարդարված, ամենքը հարուստ զենքերով սպառազինված։ Եվ ամեն մարդ, ով որ կտեսնի քո փառավորությունը, երանի կտա քո ծնողներին։

Սամվելի հոր գալուստը, որի մասին տիկինը առաջ թեությամբ էր խոսում, և ավելի ծածկել էր աշխատում, քան թե երևան հանել, այժմ, հակառակ նրա ցանկության, յուր բոլոր պարզությամբ խոսակցության առարկա դարձավ։ Տիկինը մի առանձին վնաս չէր տեսնում, եթե յուր հյուրերին հայտնի կլիներ նրա գալուստը միայն, բայց ոչ գալստյան նպատակները։ Նպատակների մասին նա կարծում էր, որ յուր հյուրերը ոչինչ չգիտեն, եթե գիտենային, չէին համբերի և որևէ կերպով կակնարկեին նրան։ Այդ մտքով նա հրամայեց տաճարապետին, որ սեղանի վրա ամենաթունդ գինին մատուցանե, որպեսզի արբեցության ջերմության մեջ կարողանա նրանց գլուխները թափ տալ։ Բայց ոչինչ չլսեց։ Այնուամենայնիվ, նրա կասկածը Սահակի և նրա հոր ծածկամիտ քարտուղարի այցելությունների մասին տակավին փարատված չէր։

Սամվելը հասկացավ Սահակի նպատակը, թե որպիսի վարպետությամբ նա խոսել տվեց յուր մորը այն բոլորը, ինչ որ վերաբերում էր յուր ճանապարհորդությանը։ Եվ յուր սովորական երկմտանի պատասխանով կամեցավ լրացնել նրա խոստացած պատրաստությունների թերին, ասելով.

— Այդ բոլորը հարկավոր է հորս արժանավոր ընդունելության համար, սիրելի մայր, բայց դու նրա մեծապատիվ ուղեկիցների ընդունելության մասին ոչինչ չասեցիր։

Վերջին խոսքերի միջոցին նա դարձավ դեպի Սահակը և դեպի Մեսրոպը, որ նստած էր նրանց մոտ։

— Հորս հետ գալիս են պարսից երկու նշանավոր զորապետները — Զիկ և Կարեն.— դրանք գալիս են մեր երկիրը պահպանելու... որովհետև թագավորը չկա, իսկ հայրապետը բացակա է... Դրանց ընդունելության համար ևս հարկավոր են փառավոր պատրաստություններ...

Մոր սիրտը սկսեց դողալ։ Ի՞նչ էր կամենում ասել Սամվելը։ Միթե՞ նա բոլոր գաղտնիքը կամենում էր բաց անել Սահակի և Մեսրոպի առջև։ Սամվելը նկատեց մոր շփոթությունը և շարունակեց.

— Այո՛, հորս հետ գալիս են Զիկ և Կարեն զորապետները։ Երբ

նրանք ոտք կդնեն Տարոնի հողի վրա և երբ կմոտենան Արածանիին, այդ ժամանակ դու, սիրելի մայր, սկսյալ Արածանիի ափերից մինչև մեր ամրոցը, ճանապարհի ամբողջ տարածությունը պատել կտաս թանկագին գորգերով։ Եվ պարսից զորապետները այդ փառավոր փիանդազի[6] վրայով ընթանալով կմտնեն մեր ամրոցը։ Այն ժամանակ կկատարենք մեծահանդես խրախճանքը... Բայց չմոռանաս, սիրելի մայր, պատվիրել, որ մինչև մեր ամրոցին հասնելը, ըստ պարսից սովորության, ճանապարհի վրա, բազմաթիվ զոհեր մատուցվեն նրանց առջև[7]... Թող արյունով սրբվի այդ ճանապարհը... և թող զոհերի դիակների վրայով անցնեն այդ հարգելի հյուրերը...

Տիկինը փոքր-ինչ շունչ առեց, երբ տեսավ, որ Սամվելը կարճ կըտրեց յուր դառն ակնարկությունները։

Խոսակցությունը ընդհատվեց, որովհետև Սահակը և Մեսրոպը վեր կացան և, հայտնելով իրանց շնորհակալությունը տիկնոջ սիրալիր հյուրասիրության համար, ասեցին, թե գնալու են Մուշեղ իշխանին այցելելու։ Այդ այցելությունը ամենևին ախորժելի չթվեցավ տիկնոջը, մանավանդ երբ իմացավ, որ ընթրիքը նրա մոտ են ուտելու և գիշերը նրա մոտ են մնալու։

— Ինչո՞ւ այնտեղ,— թախանձում էր տիկինը,— ինչո՞ւ եք վիրավորում ինձ։ Խնդրում եմ, գիշերը մեզ մոտ եկեք։

— Դու այնքան զբաղմունք ունես, սիրելի քեռակին,— ասաց Սահակը,— որ թե՛ ես և թե՛ Մեսրոպը չէինք ցանկանա խանգարել քեզ։ Բայց Մուշեղը ավելի անգործ մարդ է այդ ամրոցում։

Տիկինը ամենաքնքույշ ողջագուրանքով ճանապարհ դրեց նրանց մինչև նախասենյակը, խոսք առնելով, որ գնալու ժամանակ դարձյալ կտեսնվեն յուր հետ։ Նա վերադարձավ դատարկացած դահլիճը և, յուր տանջված մարմինը բաց թողնելով գահավորակի վրա, ընկողմանեցավ և, երկու ձեռքով բռնելով ծանրացած գլուխը, սկսեց ինքն իրան հաշիվ տալ յուր այնօրվա կատարած դերի մասին։ Դերը անհաջող էր, իսկ հաշիվը հուսահատական։ Անհաջող էր նա այն կետում, որ նախագծել էր յուր համար, թե ի՞նչ դիրք պետք է բռներ յուր երկու հյուրերի առջև՝ յուր ամուսնու գալստյան խորհրդի վերաբերությամբ։ Բայց նրանք շատ բան իմացան, քան թե հարկավոր էր, որ իմանային։ Անհաջող էր նա նաև Մուշեղի մասին հղացած չար դիտավորության վերաբերությամբ... Նա մտածում էր կանչել տալ ներքինապետին և նրանից հարցափորձ անել։ Բայց քառորդ ժամից հետո, նա ինքը, յուր տիկնոջ նման թախծալի և վշտահար դեմքով, ներս մտավ։

Սամվելը գնաց Սահակի և Մեսրոպի հետ, նրանց ճանապարհ դնե-

լու մինչև Մուշեղի ապարանքը։ Երկար նրանք անցնում էին զանազան բակերի և զանազան շինվածքների միջով, մինչև դուրս եկան ամրոցի այդ ոլորապտույտ լաբիրինթոսից և հասան ապարանքի մեծ, կամարակապ դռանը։ Երկու թևատարած արծիվներ քարից դուրս էին բերված դռան կամարի վրա, որոնք, երկու արթուն ոգիների նման, կարծես, հսկում էին այդ իշխանական տան մուտքի վրա։ Մուշեղի հայր Վասակը բոլոր Մամիկոնյան եղբայրների մեջ ամենահարուստն էր և նրա ապարանքը՝ ամենափառավորը։ Բացի Տարոնից, որ այդ տոհմի նախարարության ժառանգությունն էր, Վասակին էր պատկանում Եկեղյաց գավառի մի մասը, ուր հիմնել էր նա յուր անունով մի քաղաք, որ կոչվում էր Վասակակերտ[8]։

Մտնելով ապարանքի մեծ դռնից և անցնելով երկար փողոցով, առաջինը, որ բացվեցավ նրանց առջև, դա մի ընդարձակ բակ էր, որ զարդարած էր ծաղկավետ թփերով և մշտադալար բույսերով։ Բակի մեջտեղում մարմարյա շատրվանից բարձր ցայտում էր ջուրը, և մարգարտյա տարափի նման, դարձյալ ցողվում էր գեղեցիկ նհանգի[10] դանդրահեր գլխի վրա, որի բերանից դուրս էր վիժում նա։ Այդ պարզ, թրթռուն ավազանի շուրջը նազելով պտտվում էին երկու սիրամարգներ։ Ջրի վրա ցրվել էին զանազան ծաղիկներ, որոնք, ալիքների մեղմ ծփանքից, մոտենալով ավազանի բոլորակ եզերքին, կազմել էին մի գույնզգույն բոլորակ պսակ։ Արեգակի ճառագայթները կորցնում էին իրանց ջերմությունը այդ անուշահոտ, հովասուն դրախտի մեջ, ուր ամբողջ տարին տիրում էր մշտադալար, անթառամ գարուն։

Նրանք գտան Մուշեղին մի հովանոցի մեջ, որ մոտ էր ջրի ավազանին։ Նա նստած էր այնտեղ միայնակ և լուռ նայում էր երկու կայտառ պատանիների վրա, որոնք նրա հանդեպի ճեմելիքում նետով նշան էին խփում մի կնդակի, որ դրած էր բարձր ձողի գլխին։

Տեսնելով յուր հարգելի այցելուներին, Մուշեղը դուրս վազեց հովանոցից և, դիմավորելով նրանց, գրկվեցավ նախ Սահակի հետ և ապա Մեսրոպի հետ։

— Երևի,— ասաց նա ծիծաղելով,— Սամվելի մայրը սաստիկ հեղգացրել է ձեզ, որ այդպես ուշ եք վերջացրել ճաշը։ Ես այստեղ երկար սպասում էի։

Նրանք մտան հովանոցը և նստեցին դալար ճյուղերից հյուսած աթոռների վրա։ Սամվելը բաժանվեցավ։

— Դու գնո՞ւմ ես, Սամվել,— հարցրեց նրանից Մուշեղը։

— Ես կգամ ձեզ մոտ գիշերը… երևի, շատ ուշ…— պատասխանեց նա և հեռացավ։

Հոլանոցի մոտ, դրսում, ոտքի վրա կանգնած էին Սահակի և Միսաքի անբաժան թիկնապահները։ Նրանք հրաման ստացան, որ գնան և պարտեզի մի կողմում նստեն, հանգստանան, որովհետև ամբողջ օրը ոտքի վրա էին։

Երկու պատանիները, տեսնելով Սահակին և Միսաքին, թողին իրանց ուրախ մարզությունը և վազեցին դեպի հոլանոցը։ Սահակը երկուսին էլ գրկեց և համբուրեց։ Դրանցից մեկը Մամիկոնյան Վարդանի որդի Համազասպն էր[11], իսկ մյուսը Մամիկոնյան Վաչեի որդի Արտավազդն էր[12]։

Վերջինը, որ մի խարտյաշ, կրակոտ պատանի էր, մոտ տասնեչորս տարեկան, երկու ձեռքերը դրեց Սահակի ծնկների վրա և, ծիծաղկոտ դեմքով նայելով նրա երեսին, ասաց.

— Գիտե՞ս, որքան անգամ տապալեցավ Համազասպը, քսան հարվածների մեջ՝ հինգ անգամ։

— Իսկ դու պարծենկո՛տ, քանի՞ անգամ,— հարցրեց Սահակը, նրա երկու ճարպիկ ձեռքերը առնելով յուր ափերի մեջ։

— Ես մեկ անգամ։

— Իմ ձեռքը այսօր դողում է,— արդարացրեց իրան Համազասպը։

Այդ պանդրահեր, վառվռուն աչքերով պատանին Սահակի ապագա փեսան էր, նրա գեղեցիկ Սահականույշի ամուսնացուն։ Ինքը Մամիկոնյան մորից ծնված լինելով, յուր դասերը նույնպես հարսնախոսել էր Մամիկոնյաններին, և նո՛յն տանը, որտեղից դուրս էր եկել յուր մայրը[13]։ Մերձ ամուսնությունները այդ ժամանակ սովորական էին Հայաստանում, մանավանդ բարձր շրջաններում[14]։ Սովորական էր նույնպես, ոչ միայն անչափահաս հասակում նշան դնել ամուսնացուներին, այլ օրորոցի մեջ և մինչև անգամ դեռ չծնված[15]։

— Հիմա գնացեք, նորից փորձեցեք ձեր բախտը,— ասաց նրանց Սահակը։

Երկու պատանիները խլեցին իրանց աղեղները և կրկին վազեցին դեպի բարձր ձողի գլխին դրած գնդակը։

Արևն արդեն սկսել էր թեքվել դեպի յուր երեկոյան մուտքը։ Նրա վերջին ճառագայթները, խաղալով շատրվանից բարձրացած ձյունի պես սպիտակ ջրային փոշիների հետ, շողշողում էին ծիածանի վառ գույներով։ Այդ գույները լուսավորում էին հինավուրց ամրոցի մռայլ ճակատը, որ նայում էր դեպի պարտեզը։

Մուշեղը վեր կացավ։

— Գնա՛նք,— ասաց նա, դառնալով դեպի Սահակը և Միսրոպը,— խոսելու շատ բան ունենք...

Նրանք դիմեցին դեպի Մուշեղի բնակարանը, որի լուսամուտները փայլում էին այդ րոպեում ծիածանի գույներով։

Վերադառնալով յուր սենյակը, Սամվելը չգիտեր, թե ի՛նչ աներ։ Զանազան մտածություններ ամբոխված էին նրա գլխում։ Զանազան մթին խորհուրդներ խռովում էին նրան։ Այդ ալեկոծության մեջ տատանվում էր նա, դժվարանալով որոշել, թե նախ որի՞ց պետք էր սկսել կամ ո՞րը թողնել։

Մի քանի անգամ անցավ նա սենյակի միջով, հետո մտավ քնարանը, պառկեց մահճակալի վրա։ Աշխատում էր քնել, որ փոքր-ինչ հանգստություն տա հուզված սրտին։ Բայց քնել չկարողացավ։

Մայրը խոստացավ, թե ինքը կկազմե նրա ասպախումբը, որպես վայել էր մի Մամիկոնյան իշխանազնի, և ամենայն շքեղությամբ ճանապարհ կդնե հորը դիմավորելու։ Ուրեմն այդ հոգսից ազատ էր նա։ Բայց հենց նրա մեջն էր գլխավոր հոգսը, որ այդ րոպեում նրա մտատանջության առարկան էր դարձել։ Մոր պատրաստած ասպախո՛ւմբը... մոր ընտրած մարդի՛կը... և ինքը պետք է գնար նրանց հետ... այսինքըն, նրանք պետք է տանեին Սամվելին... պետք է տանեին հորը ուրախացնելու համար... և, որպես ոսկու և արծաթի մեջ զարդարված մի խրծիկ, պարսից բանակին ցույց տալու համար... և պարսից զորապետներին զարմացնելու համար... Այդ էր փառասեր մոր նպատակը։

Բայց Սամվելն ուներ յուր առանձին նպատակները... Եթե մայրը առաջարկելու ես չլիներ, նա դարձյալ կգնար հորը դիմավորելու։ Բայց կգնար յուր մարդիկներով։ Նա չէր կարող գնալ մոր ընտրած մարդիկների հետ, որոնց հսկողության ներքո պետք է կաշկանդվեր նա։ Նա ցանկանում էր ունենալ յուր մարդիկը, յուր հավատարիմները։

Հենց այն առավոտը, երբ սուրհանդակը գուժեց նրան Տիզբոնից բերած թուղթը,— հենց այն առավոտը նրա գլխում ծագեց մի մռայլ խորհուրդ... Այդ խորհուրդը հետզհետե աճում էր և կերպարանագործվում էր նրա մեջ... Եվ այդ խորհուրդը կատարելու համար անհրաժեշտ էր, որ նա յուր հավատարիմ մարդիկն ունենա յուր հետ...

Բայց Սամվելը չհակառակեց մորը, երբ նա հայտնեց, թե ինքը կկազմե նրա ասպախումբը։ Չհակառակեց, որպեսզի մորը կասկածանքի առիթ չտա։ Այժմ ինչպես պետք էր հաշտեցնել այդ երկու ծայրահեղությունները, որ թե մոր ցանկությունները կատարված լինեին, և թե ինքը յուր նպատակին հասած լիներ... Նա ոչինչ վճռել չկարողացավ։ Երկու ձեռքով սեղմ բռնեց խռովահույզ գլուխը և աչքերը խփեց...

Նույն րոպեում և մայրը, յուր գահավորակի վրա պառկած, երկու ձեռքով պինդ բռնած ուներ յուր գլուխը և մտածում էր...

Բոլորովին մութն էր, երբ Հուսիկը ճրագը ձեռին ներս մտավ, զարթեցրեց Սամվելին։

— Ի՞նչ կա,— հարցրեց նա, աչքերը տրորելով։

— Մի շինական խնդրում է տեսնել իմ տիրոջը,— պատասխանեց պատանին։

Սամվելը հասկացավ, թե ով պետք է լիներ։

— Նրան այնպես կբերես ինձ մոտ, որ ոչ ոք չտեսնե,— պատվիրեց Հուսիկին։

Պատանին ճրագը դրեց յուր տեղը և հեռացավ։ Սամվելը քնարանից դուրս եկավ յուր ընդունարանը։ Մի քանի րոպեից հետո, Հուսիկի առաջնորդությամբ, ներս մտավ Մալխասը, թավամազ կուրծքը բաց, բազուկները հոլանի և մի երկայն նիզակ ձեռքում բռնած։ Նա անփույթ կերպով գլուխ տվեց և հենվեցավ յուր նիզակի վրա։

Հուսիկը խոհեմությամբ հեռացավ, մտածելով, գուցե յուր տերը առանձին խոսելիք ունե այդ մարդու հետ, որի ավազակային դեմքը նրան շատ հաճելի չթվեցավ։

— Դու որքան ժամանակ եղե՞լ ես Ոշտունյաց կողմերում, Մալխաս,— հարցրեց նրանից Սամվելը պատանու հեռանալուց հետո։

Ծիծաղի նման մի բան ցնցեց համարձակ շինականի խոշոր գծերը, և նա արհամարհանքով պատասխանեց.

— Ոշտունյաց լեռներում մի քար չկա, որ Մալխասը չճանաչեր, տեր իմ։

— Իսկ Աղթամար կղզում եղե՞լ ես։

— Մի քանի անգամ։

— Որքա՞ն ժամանակում կարող ես հասնել այնտեղ։

Շինականը րոպեական մտածությունից հետո ասաց.

— Այդ իմ տիրոջ կամքից է կախված, եթե շուտ է հարկավոր, ես գիշերը ցերեկ կդարձնեմ և երկու օրում կհասնեմ։

— Շուտ է հարկավոր...— ասաց Սամվելը և յուր թղթերի պահարանից դուրս բերեց մի նամակ, որ այն առավոտ գրած, պատրաստած ուներ։ Նամակը հանձնեց նրան, ասելով.

— Այդ նամակը, որքան կարելի է, շուտ կհասցնես Ոշտունյաց Գարեգին իշխանին։

Մալխասը ընդունեց նամակը և խնամքով թաքցրեց յուր գլխի ապարոշի փաթթի մեջ։

— Էլ ուրիշ հրաման չունի՞ս իմ տերը,— հարցրեց նա։

— Ուրիշ ոչինչ։ Բարի ճանապարհ եմ ցանկանում։

Նա խոնարհությամբ գլուխ տվեց և հեռացավ։

Նախասենյակի դռան մոտ սպասում էր Հուսիկը։ Նա այդ օտարականին՝ որպես աննկատելի կերպով ներս էր բերել, նույնպես աննկատելի կերպով դուրս հանեց ամրոցից։

Այդ համարձակ, անձնավստահ տղամարդը նույն շինականն էր, որին մի օր առաջ հանդիպեց Սամվելը ճանապարհի վրա, Աշտիշատի վանքը գնալու ժամանակ։ Նամակը տարավ նա Ռշտունյաց Գարեգին իշխանին, որի Աշխեն անունով դուստրը Սամվելի սիրո և քաղցր մտածությունների առարկան էր։ Իսկ նրա մոր ատելության— չար հրեշտակը…

ԺԳ·

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թղթատարին ճանապարհ դնելուց հետո, Սամվելը դարձավ դեպի յուր մտերիմ սենեկապետը, ասելով.

— Հուսիկ, այս գիշեր պետք է Մուշեղ իշխանի մոտ գնամ, հավաքի՛ր քո բոլոր ճարպկությունները, հետազոտի՛ր բոլոր անցքերը, որպեսզի իմ այնտեղ գնալը ոչ ոք չտեսնե։

— Իմ տիրոջ հրամանը կատարված կլինի,— ասաց պատանին ինքնավստահությամբ և դուրս գնաց, յուր մեջ մտածելով. «Ես մի այնպիսի բան կսարքեմ, որ սատանան էլ չի տեսնի»…

Սամվելը մնաց յուր սենյակում միայնակ։

Երբեք նա այնպես հափշտակված չէր եղել, որպես այս գիշեր, երբեք նրա զգացմունքները այնպես վառված չէին եղել, որպես այս գիշեր։ Թղթատարի տարած ծրարի մեջ ուղարկեց նա յուր սիրտը, յուր միտքը, յուր հոգեկան բոլոր քնքշությունները։ Այժմ նրա դատարկ ուրվականը միայն շրջում էր այդ ամայի սենյակի մեջ, որ յուր հարուստ շրջապատով խեղդում էր նրան։

Նա մտքով սլացել էր այնտե՛ղ, դեպի այն ահարկու լեռները, ուր սրաթռիչ արծիվն անգամ չէր համարձակվում վեր ամբառնալ մինչև ապառաժների կատարները, ուր ամպերի հետ համբուրվում է մշտականաչ եղևինը, ուր արծաթյա կամարներով փայլում են լեռնային ջրվեժները, ուր վագրը, ինձը, բորենին միայն աղմկում են մթին անտառների հավերժական լռությունը։

Այնտե՛ղ, այն բյուրեղեն աշխարհում, վեհափառ Արտոսը[1], որպես մի պատրիարք, յուր ալեզարդ գագաթով իշխում է շրջակա բարձրությունների վրա։ Այնտե՛ղ, այն սքանչելի աշխարհում, Ընծակա սրբանվեր սարը[2] յուր գեղեցիկ ալիքներով նկարվում է Վանա ծովակի պարզ և պայծառ հայելու մեջ։ Այնտե՛ղ լեռնային մարդը, դեռ յուր նախնական մորթեղեն հագուստով, երկար նիզակը ձեռին, թռչում է մի քարից դեպի մյուսը և հետամուտ է լինում արագավազ եղջերուին։

Այնտե՛ղ ծովակի ալեծուփ գրկում հանգչում է տենչալի կղզին— անմատչելի Աղթամարը[3], և այդ կղզու խաղաղ, մենիկ առանձնության մեջ, որպես ծովակի դիցուհին, իշխում է Սամվելի նազելին։

«Սիրելի՛ Աշխեն,— բացականչեց նա խորին զմայլանքով,— ես քոնն եմ հավիտյան... ես քեզ եմ պատկանում իմ սրտի, իմ հոգու բոլոր զորությամբ... Ծնողաց վայրենի խստասրտությունը, աշխարհի անգութ արգելքները չեն կարող քեզանից խլել այն, ինչ որ իմ սիրո բոլոր ջերմությամբ նվիրեցի քեզ։ Ոչինչ չէ կարող փոխարինել քեզ, ո՛չ փառք, ո՛չ մեծություն և ո՛չ արքաների թագը։ Դու ինձ համար ամեն ինչ ես, թանկագին Աշխեն։ Քո մեջն եմ գտնում իմ սրտի խաղաղությունը, քո մեջն եմ գտնում իմ վշտերի մխիթարությունը, քո անունը հիշելիս, լռում է հոգսը, անհետանում է մռայլը, և իմ հոգու մեջ ծագում է ուրախության լուսապայծառ արեգակը։ Երբ թախծալի հուսահատությունը պաշարում է ինձ, երբ կանխահաս արհավիրքը թուլացնում է իմ ուժերը,— գո՛ւ ես ոգևորում ինձ քո աստվածային ներշնչությամբ, դո՛ւ ես կենդանացնում մեռած եռանդը և լքած հավատը։ Եվ այս րոպեում, երբ իմ հայրենիքը մեծ տագնապի մեջ է, երբ ամեն սրբություն, ամեն հաստատություն կործանվելու վրա է, երբ թշնամին յուր բոլոր անգթությամբ կանգնած է մեր գլխին,— ա՛յդ օրհասական րոպեում քո սերը, նազելի՛ Աշխեն, որպես մի պահապան հրեշտակ, վառում է իմ սիրտը անձնազոհության հրով, մղում է ինձ դեպի վտանգը... դեպի կոտորածը... դեպի արյունը... Կանցնի՛ փոթորիկը, կլռե՛ զենքի շառաչյունը, կգա՛ երջանիկ օրը, և վաստակած զինվորը կհանգչի սիրած կուրծքի վրա...»։

Յուր խորին հափշտակության մեջ, չնկատեց Սամվելը, թե ինչպես դուռը կամաց բացվեցավ, և մեկը, ոտքից ցգլուխ փաթաթված սևագույն լայն սփածանելիքի մեջ, հայտնվեցավ սենյակում։ Մի մթին ուրվականի նման, հազիվ-հազ շարժվելով, անցավ նա պատերի մոտով և կանգնեց մի անկյունում։ Անկյունի կիսամռայլից երկար նայում էր նա հուզված երիտասարդի վրա և լսում էր նրա զգացմունքներով լի մենախոսությունը։ Երեսը ծածկված էր մետաքսե սև դիմակով[4]։ Սամվելը դեռ արձանի նման կանգնած էր լուսամուտի հանդեպ և դեմքը դարձրած

ունեի դեպի այն աշխարհը, որի մասին խոսում էր։ Երբ վերջացրեց, գլուխը խոնարհեցրած կուրծքի վրա, թևերը խաչաձև փակած, որպես մի ուշացնող երազամոլ, մի քանի անգամ անցավ սենյակի միջով և ապա մոտեցավ մի բազմոցի, հենվեցավ նրա վրա։ Այդ խռովյալ դրության մեջ մոլորվում էր նա, երբ հանկարծ զգաց, որ երկու սառցային ձեռքեր բռնեցին յուր ձեռքը։ Նա սոսկաց։ Մթին ուրվականը խիկույն մի կողմ ձգեց յուր դիմակը և սփածանելիքը։ Սամվելի սարսափը ավելի մեծ եղավ, երբ յուր հանդեպ տեսավ գունաթափ Որմիզդուխտին։

— Մի՛ շփոթվիր,— ասաց նա հանգիստ ձայնով.— ես բոլո՛րը լսեցի... բոլո՛րը հասկացա... Ես թեև հայերեն չեմ իմանում, բայց սիրո լեզուն, սիրո ձայնը՝ ամեն ազգի հասկանալի է...

— Որմիզդո՞ւխտ,— բացականչեց ապշած երիտասարդը,— այդպե՞ս. գիշերը... այդպե՞ս տարաժամ...

— Այո՛, այդպես տարաժամ եկա քեզ մոտ՝ մի շատ կարևոր գործի համար, Սամվել, միայն համբերություն ունեցիր լսելու։

Ամբողջ մարմնով դողում էր նա։ Սամվելը բռնեց նրա ձեռքից, նստեցրեց յուր մոտ, բազմոցի վրա։ Երբ փոքր-ինչ հանգստացավ նա, դարձավ դեպի երիտասարդը, ասելով.

— Կողպի՛ր դռները, մեր խոսակցությունը պետք է առանձին լինի։

Սամվելը կատարեց նրա ցանկությունը։

— Ների՛ր ինձ, Սամվել,— ասաց նա թախծալի ձայնով,— ես խանգարեցի քո սրբազան հոգեկանությունը... ես լսեցի քեզանից այն թանկագին բոպեները, երբ դու քո սրտի հետ պետք է խոսեիր...

Սամվելը խոսք չգտավ պատասխանելու։ Նա շարունակեց.

— Սիրի՛ր նրան, Սամվել, որին այնքան ջերմ սիրով նվիրել ես քո սիրտը։ Դու արժանի ես մի լավ կենակցի։ Քեզանով բախտավոր կլինի կինը, դու կբախտավորացնես ամեն կնոջ...

Վերջին խոսքերին արտասանեց նա հեկեկանքով։

Նա ձեռքը տարավ դեպի գլուխը, եւ քաշեց ճակատի վրա թափված գանգուրները, որ, կարծես, աշխատում էին սքողել նրա արտասուքը։

— Լսի՛ր, Սամվել,— առաջ տարավ նա բոպեական լռությունից հետո։— Այդ տան մեջ դու էիր իմ մխիթարությունը։ Ամենքը երկրպագում էին ինձ, բայց սրտով ատում էին։ Երկրպագում էին, որովհետև ես արքայից մեծ թագավորի քույրն էի։ Ատում էին, որովհետև ես պարսիկ էի, հեթանոս էի, մի քրիստոնյա ընտանիքի մեջ ընկած։ Ես իմ ոսկեզին և դոհարեղեն շրջապատի մեջ խեղդվում էի, որպես մի մռայլ գե-

րեզմանի մեջ։ Բայց դու, միա՛յն դո՛ւ, ազնիվ Սամվել, քաղցրացնում էիր իմ կյանքի դառնությունը և փարատում էիր դժբախտ օտարուհու տխրությունները։ Եթե դու չլինեիր, ես վաղուց թողած կլինեի այդ տունը և գնացած կլինեի իմ հայրենիքը։ Այժմ լսի՛ր, սիրելի Սամվել, թե ինչո՛ւ եկա քեզ մոտ, այդպես գիշերով, այդպես տարաժամ։

Շփոթված երիտասարդը, որ դեռևս ապշության մեջ էր գտնվում, գլուխը վեր բարձրացրեց և նայեց զգացված կնոջ բոցավառ աչքերի մեջ։ Նա բռնեց Սամվելի ձեռքը, ասելով.

— Իմ կրոնը ուսուցել է ինձ՝ բարությունը բարությամբ վճարել, առաքինությունը՝ առաքինությամբ։ Դու միշտ բարի ես եղել դեպի ինձ, սիրելի Սամվել։ Ես եկա պարտքս վճարելու։ Քո կյանքը վտանգի մեջ է... Վտանգի մեջ է և այն էակի կյանքը, որին դու սիրում ես...

— Այդ ի՞նչ ես ասում... ի՞նչ վտանգ...— բացականչեց երիտասարդը զայրացած ձայնով։— Նա վտանգի մե՞ջ է... ասա՛, Որմիզդուխտ... ես հենց այս րոպեում պատրաստ եմ ինձ կրակի և արյան մեջ նետել և ազատել նրան... Ասա՛, ի՞նչ վտանգ...

Նա վեր թռավ բազմոցի վրայից, կանգնեց տիկնոջ առջև, անդադար կրկնելով վերջին հարցմունքը։

— Հանգստացի՛ր, Սամվել,— ասաց տիկինը մեղմությամբ,— և նստի՛ր քո տեղը։ Վտանգը դեռևս այնքան մոտ չէ, որի համար հարկավոր լիներ շտապել։ Վտանգը հասնելու վրա է։ Նստի՛ր, ես բոլորը կպատմեմ քեզ։

Սամվելը նստեց, աղաչելով.

— Ի սեր աստուծո, մի՛ տանջիր ինձ, ինչ որ ասելու ես, շուտ ասա։

Բարեսիրտ տիկինը, չկամենալով միանգամից հարվածել երիտասարդի զգայուն սիրտը, բավական հեռվից սկսեց յուր հաղորդելու նոր տեղեկությունները։

— Դու,— ասաց նա,— այսօր քո մոր ներկայությամբ պատմեցիր ինձ իմ ամուսնու և Մերուժան Արծրունու վերադարձը Տիզբոնից, պատմեցիր և նրանց հետ պարսից երկու զորապետների գալուստը, պատմեցիր և այն, թե ի՞նչ գործեր պետք է կատարեն նրանք ձեր երկրում, բայց ամենագլխավո՛րը կամ քեզ հայտնի չէր, կամ ծածկեցիր ինձանից։

— Ես ոչինչ չծածկեցի քեզանից, Որմիզդուխտ, ինչ որ գիտեի, բոլորը պատմեցի։

— Ուրեմն ամենագլխավորը քեզ հայտնի չէ։ Լսի՛ր, Սամվել։ Նախ, իզուր եք սպասում դու կամ քո մայրը, որ նրանք Տարոնով կմտնեն Հայաստան։ Սկզբից այստեղ չեն գալու։ Նրանք կմտնեն Հայաստան

Վասպուրականի կողմերում, որը Միրուժանի իշխանության երկիրն է։ Նրանց առաջին գործը կլինի՝ կալանավորել Հայոց բոլոր նախարարներին և շղթայակապ ուղարկել Տիզբոն։ Այնտեղից կվարեն նրանց ձեր թագավորի մոտ, որը այժմ մի բերդում աքսորված է։ Հետո նրանց երկրորդ գործը կլինի՝ կալանավորել աքսորված նախարարների կանանցը, զավակներին և պահել բերդերում խիստ հսկողության ներքո...

— Որոնց հետ և այն հրեշտակին, որին ես սիրում եմ...— ընդհատեց Սամվելը խորին վրդովմունքով։— Այդպես չէ՞, Որմիզդուխտ։

— Շատ հասկանալի է...— պատասխանեց տիկինը տխուր ձայնով։— Եթե մյուս նախարարների ընտանիքները կկալանավորեն, նրանց թվում կկալանավորեն և Ոշտունյաց նախարարի ընտանիքը և քո հրեշտակին։ Հրամայված է՝ չխնայել ոչ սեռի, ոչ հասակի և ոչ աստիճանի։ Ամեն մի ընդդիմացող կդատապարտվի մահվան պատժի։ Կխնայեն միայն նրանց, որոնք կընդունեն Մազդեզանց կրոնը[5]։ Եվ նրանք բերում են իրանց հետ այնքան զորքեր, որ այդ բոլորը կարող են կատարել։ Մոռացա ասել, որ խստիվ պատվիրված է՝ կալանավորել Հայոց Տիկնոջը (թագուհուն) և ուղարկել Պարսկաստան։

— Ես այդ բոլորը սպասո՛ւմ էի...— ասաց Սամվելը, գլուխը ցավակցաբար շարժելով։— Բայց դու ինձ այն ասա, Որմիզդուխտ, թե որտեղի՞ց հավաքվեցան քեզ մոտ այդ տեղեկությունները։ Դու առավոտյան ոչինչ չգիտեիր և մինչև անգամ իմ հոր գալստյան մասին տեղեկություն չունեիր։

— Այդ իրավ է, ոչինչ չգիտեի և ոչ մի տեղեկություն չունեի։ Առաջին անգամ քեզանից լսեցի, որ իմ ամուսինը և Միրուժանը գալիս են։ Եվ այդ շատ զարմացրեց ինձ, թե ինչպե՞ս է պատահել, որ մի այդպիսի նշանավոր տեղեկություն ինձ չեն հաղորդել Տիզբոնից։ Ես զանազան կասկածների մեջ ընկա, մանավանդ երբ մտածեցի, որ իմ ներքինապետը նույնպես ինձ ոչինչ չէր հայտնել, նա՛, որ ամեն բան կարող էր ամենից առաջ գիտենալ։ Երբ վերադարձա տուն, իմ բարկությանը չափ չկար, իսկույն մի պարան պատրաստել տվի, հետո կանչել տվի իմ ներքինապետին։— «Քեզ կախել կտամ այդ ծառից,— ասեցի նրան,— եթե ճշմարիտը չխոստովանվես, թե ինչ տեղեկություններ ունես Տիզբոնից»։— Նա ամեն ինչ պատմեց։

Սամվելը նոր բան իմացավ և նրան տիրեց խորին զարմացում։

— Քո ներքինապետը ինչո՞վ է խառն այդ գործերի մեջ,— հարցրեց նա, ուղիղ նայելով տիկնոջ այլայլված երեսին։

Որմիզդուխտը կարմրեց, գունաթափվեց, դարձյալ կարմրեց,

դարձյալ գունաթափվեցավ, որպես մի երեխա, որ հանկարծ բռնվում է գողության մեջ։

— Կներես իմ միամտությանը, Սամվել, և կհավատաս իմ անմեղությանը,— ասաց նա արտասովորապես հեկեկանքով,— որ այդքան տարի է, այդ անպիտանը ծառայում է ինձ մոտ որպես ներքինի, բայց ես մինչև այսօր դեռ չէի հասկացել նրա իսկական պաշտոնը։ Ես միայն նկատում էի, որ նրա մոտ անծանոթ մարդիկ են գալիս, գնում են, նկատում էի, որ նամակներ է ստանում, պատասխան է գրում,— և այդ բոլորը շատ սովորական էի համարում, որովհետև գիտեի, որ Տիզբոնում, մանավանդ իմ եղբոր արքունիքում, մեծ կապեր և ծանոթություններ ունի։ Բայց այսօր ես քննեցի նրա թղթերը, բանից դուրս եկավ, որ այդ մարդը այստեղ ևս մեծ կապեր է ունեցել։ Նրա ձեռքի տակ եղել են շատ մարդիկ, մինչև անգամ հայերից, որոնք հայոց երկրի ամեն կողմերից տեղեկություններ են հաղորդել նրան, թե որտեղ ի՞նչ է կատարվում, կամ որտեղ ի՞նչ է պատրաստվում։ Եվ այդ լուրերի համար նա առատ վճարել է։ Յուր հավաքած տեղեկությունները նա միշտ ծածուկ ուղարկել է Տիզբոն և այնտեղից նոր հրահանգներ է ստացել։

— Ուրեմն նա մի ծպտյալ լրտե՞ս է եղել մեր տան մեջ ներքինապետի պաշտոնով,— հարցրեց Սամվելը, ավելի վրդովվելով։

— Այդպես է երևում։ Նրան պատվիրված է եղել՝ ամեն ինչ հաղորդել Տիզբոն,— կրկնեց տիկինը ցած ձայնով։

«Թշնամու գործակատարը մեր տան մեջ է եղել, և մենք այդքան ժամանակ չե՞նք հասկացել,— մտածեց Սամվելը մի առանձին ինքնաանբավականությամբ։— Եվ մենք դեռևս գանգատվում ենք, որ մեր գործերը վատ են գնում... Մեր տանը հարս են ուղարկում, հարսի հետ հարուստ օժիտ են գնում և նույն օժիտի թվում ուղարկում են մեզ իրանց լրտեսը, բազմաթիվ աղախինների և սպասավորների հետ... Ի՞նչ լավ խնամություն է... Պարսից թագավորի նենգավո՜ր խնամություն...»։

Նա դարձավ դեպի տիկինը.

— Դու, Որմիզդուխտ, այնքան բարեսիրտ ես, որ ես չէի համարձակվիլ մի ամենափոքր կասկածով անգամ վիրավորել քո հրեշտակային անմեղությունը։ Բայց դու մտածո՞ւմ ես, թե որքան վա՛տ է ուրիշի տան գործերը լրտեսել։

— Այդ ես գիտեմ,— պատասխանեց նա մի այնպիսի ձայնով, որի մեջ լսվում էր սրտի խորին բարկությունը՝ լի անմխիթար ցավակցությամբ։— Այդ ես գիտեմ և դառն հետևանքները տեսնում եմ։ Ինձ համար շատ սոսկալի է, երբ մարդկանց արյունն է թափվում, երբ հայր և մայր մաշվում են բանտերի մեջ, իսկ զավակները, որբ և անտեր, մնում

են դահիճների ձեռքում։ Ես չեմ կարող տանել այդպիսի անդթություններ։

— Բայց այդ քո եղբոր ցանկությունն է,— նկատեց Սամվելը։

— Մի նախատիր ինձ, Սամվել, եղբորս պատճառով։ Պարսից թագավորները սիրտ չունեն։ Մարդկանց դիակների վրա են հաստատում նրանք իրանց գահի պատվանդանը,— այդպես ասել է մեր իմաստասերներից մեկը։

Սամվելը մտածության մեջ ընկավ։ Տիկինը ընդհատեց նրա լռությունը, ասելով.

— Մի տրտմիր, Սամվել, իմ խիղճը հանգստացնելու համար՝ ես հենց այս առավոտ կհրամայեմ պատրաստել իմ ճանապարհորդության քարավանը, կգնամ Տիզբոն, կընկնեմ իմ եղբոր գահի առջև և իմ արտասուքով կամոքեմ նրա բարկությունը։ Եվ եթե նա անգութ կլինի դեպի քրոջ արտասուքը, նույն գահի պատվանդանը արատավորված կտեսնի յուր հարազատի արյունով...

— Ես հավատում եմ քո անձնազոհությանը, Որմիզդուխտ,— պատասխանեց երիտասարդը,— դու ավելի քան այդ բարեգութ ես։ Բայց այժմ արդեն ուշ է... Գործերը այնքան բարդված են, հանգամանքները այնքան անդառնալի ձև են ստացել, որ քո բարեխոսությունը հազիվ թե կարող էր խափանել կատարվող չարիքը...

— Բայց քո կյանքը վտանգի մեջ է, Սամվել։ Ես չեմ տարակուսում, որ ներքինապետը, կամ որպես դու անվանեցիր, այդ ցած լրտեսը, քո անունն ես «անբարեմիտների» ցուցակի մեջ անցկացրած կլինի...

— Ես նույնպես չեմ տարակուսում,— ասաց Սամվելը.— ես այդ հոգսը աստուծո վրա եմ թողնում...

Նա դարձյալ մտածության մեջ ընկավ և րոպեական լռությունից հետո ասաց հեգնաբար.

— Դու մոռանում ես, Որմիզդուխտ, որ իմ հայրը և իմ քեռին առաջնորդում են պարսից զորքերին, նրանք գոնե ինձ կխնայեն...

— Հրամայված է ոչ ոքի չխնայել, ո՛չ բարեկամի, ո՛չ ազգականի,— պատասխանեց վշտացած կինը և սկսեց ավելի և ավելի թախանձել երիտասարդին, որ գոնե յուր անձը ազատելու համար թողնե, առժամանակ հեռանա դեպի մի կողմ, մինչև փոթորիկի անցնելը։

— Այդ ես քեզ չեմ ներում, Որմիզդուխտ,— ասաց Սամվելը, ժպտելով բարեսիրտ կնոջ հոգածության վրա.— դու կամենում ես ինձ վատության սովորեցնել և, մի երկչոտ զինվորի նման, կռվի միջոցին՝ փախչել պատերազմի դաշտից։

— Մտածի՛ր, Սամվել, որ վտանգի մեջ է և այն էակի կյանքը, որին դու սիրում ես...— նկատեց տիկինը վշտալի ձայնով։

— Հենց նրա համար ես չի պիտի հեռանամ կռվի դաշտից...— ասաց Սամվելը, և նրա աչքերը վառվեցան վրեժխնդրության բոցով։

Որմիզդուխտը մի առանձին նախանձով էր նայում այդ մարմնացած անձնազոհության վրա, որի մեջ այնքան վառ, այնքան անշիջանելի էին սիրո զգացմունքները։

— Ասա ինձ, Որմիզդուխտ,— խոսքը փոխեց Սամվելը,— այդ բոլորը, ինչ որ պատմեցիր ինձ, քո ներքինապետը յուր բերանով խոստովանվե՞ց քեզ։

— Ես նրա թղթերի միջից և մի նամակ գտա,— պատասխանեց տիկինը։

— Կարելի՞ է, որ այն նամակը ինձ ցույց տաս։

— Նամակը հենց ինձ հետ բերած ունեմ։

Նա դուրս հանեց յուր գրպանից մագաղաթի փաթոթը և տվեց Սամվելին։ Երիտասարդը նայեց նրա վրա և, փոքր-ինչ մտածելուց հետո, ասաց.

— Կարո՞ղ ես այդ նամակը ինձ մոտ թողնել։

— Ինչո՞ւ չէ, եթե քեզ հարկավոր է։

— Բայց քո ներքինապետը չի՞ հարցնի, թե ինչ եղավ նամակը։

— Ծաղրո՞ւմ ես ինձ, Սամվել, նա ինչպե՞ս կհամարձակվի այդպիսի հարցմունք անել ինձանից։ Ես կհրամայեմ հենց այն րոպեում կախել նրան իմ բակի ծառերի մեկից։ Դու չգիտե՞ս, որքան ծառաներ կան իմ հրամանի ներքո։

Տիկնոջ մեջ եփ եկավ արքայադստեր թե՛ հպարտությունը և թե՛ բարկությունը։ Նա վեր կացավ, ներողություն խնդրելով.

— Ես շատ ուշացա, աքաղաղները արդեն սկսել են խոսել...

Սամվելը նույնպես ոտքի ելավ։

— Ես այժմ փոքր-ինչ հանգիստ եմ,— ասաց տիկինը, յուր քնքշությամբ լի աչքերը դարձնելով դեպի երիտասարդը։— Թեև ոչինչ բանի մեջ չկարողացա համոզել քեզ, բայց գոնե դու այսուհետև կգիտենաս քո անելիքը...

— Շնորհակալ եմ, Որմիզդուխտ, քո անսահման բարության և քո անկեղծ կարեկցության համար։ Դու չափազանց պարտավորեցրիր ինձ։

Տիկինը վեր առեց յուր սփածանելիքը և դիմակը։

— Ա՜խ, ների՛ր, Որմիզդուխտ,— ձայն տվեց երիտասարդը,— ես այն աստիճան շփոթվեցա քո անակնկալ ինձ մոտ գալով, որ մինչև

անգամ մտածա հարցնել, թե ինչպե՞ս եկար, կամ այժմ ինչպե՞ս պետք է գնաս։

Տիկինը ժպտաց, ասելով.

— Դու խո տեսար, որ ես ծածկված էի դրանց մեջ,— նա ցույց տվեց յուր ձեռքի սև սփածանելիքը և դիմակը,— շարժյալ այնպես կգնամ։ Ինձ իմ աղախիններից մեկի տեղը կընդունեն։

— Գոնե թույլ տուր ճանապարհ դնեմ քեզ մինչև քո բնակարանը։

— Հարկավոր չէ, դրսում իմ սպասավորներից երկուսը սպասում են. նրանք կառաջնորդեն ինձ։ Իսկ քո ճանապարհ դնելը կարող է մատնել ինձ։

— Բայց սպասավորները չգիտե՞ն, որ սև սփածանելիքի տակ ծածկված է իրանց տիկինը։

— Չգիտեն։ Նրանք ինձ բերեցին այստեղ, որպես իմ աղախիններից մեկին, և այդ կարծիքի մեջ էլ կմնան։ Առաջին անգամ չէ, որ իմ աղախիններից եկել են քեզ մոտ զանազան գործերով։

Տիկինը հագավ յուր դիմակը և ծածկվեցավ լայն շալի մեջ։ Սամվելը, սրտագին գոհունակությամբ հայտնելով յուր շնորհակալությունը, ճանապարհ դրեց նրան մինչև նախասենյակի դուռը։ Այնտեղ խավարի միջից հայտնվեցավ Հուսիկը։

— Տա՛ր այդ կնոջը,— հրամայեց նրան,— այնտեղ, դրսում, տիկին Որմիզդուխտի ծառաները սպասում են, հանձնիր նրանց։

Հուսիկը մատը տարավ դեպի ատամները և կծեց[6]։

Մի բան անցավ նրա մտքով։

Մի այլ բան անցավ Սամվելի մտքով։

— Ա՜խ, եթե փոքր-ինչ շուտ եկած լիներ Որմիզդուխտը...

Նա մտաբերեց Ուշտունյաց Գարեգին իշխանին և յուր սիրելի Աշխենին ուղարկած նամակները։

ԺԵ

ԼԵՌՆԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Սև սփածանելիքի մեջ ծածկված կինը դանդաղ, համրընթաց քայլերով անցնում էր ամրոցի ոլորապտույտ փողոցներով, հազիվհազ կարողանալով իրան ոտքերի վրա պահել։ Սամվելից բաժանվելուց հետո, դեռ նոր տիրեց նրա մեջ այն հիվանդոտ, վհատական թուլությունը, որ

տեղի է ունենում գրգռված, բորբոքված դրության անցնելուց հետո։

Երկու սպասավորներից մեկը տանում էր նրա առջևից վառած լապտերը, իսկ մյուսը գնում էր նրա ետևից։ Ճանապարհին նա մի բառ անգամ չխոսեց յուր սպասավորների հետ։ Լուռ ու անարգել ընթացքով անցնում էին նրանք ամրոցի զանազան դռներից, որ դրած էին պահապանների զգույշ հսկողության ներքո։ Լապտերի վրա կարմրին էր տալիս տիկին Որմիզդուխտի նշանը։ Այդ բավական էր պահապաններին նախազգացնելու համար, թե անցնողը տիկնոջ կանանոցից էր։

Ամբողջ ամրոցի մեջ տիրում էր մի տարօրինակ ծանր, ճնշող լռություն, միայն երբեմն աշտարակների բարձրությունից լսելի էր լինում գիշերապահ զինվորի արթնության նշանաձայնը։ Մեկի ձայնին պատասխանում էին մյուս աշտարակներից, և լռությունը րոպեապես դղրդվում էր։— Ա՜յդ խոսում էր ամրոցը յուր ահարկու, երկաթյա լեզվով։

Ծածկված կինը արդեն հասել էր յուր բնակարանին։ Երբ մերձեցան կանանոցի դռանը, երկու սպասավորները այստեղ կանգ առին, և կինը միայնակ ներս մտավ ներքինիների այդ փակյալ աշխարհը, ուր տղամարդի ոտքը դնելու կայան չունի։

Յուր քնարանը մտնելուց հետո միայն՝ նա մի կողմ ձգեց դիմակն ու ծածկոցը և այնպես, առանց հանվելու, պառկեց յուր անկողնի վրա։ Հոգնած էր նա, հոգնած էր հոգվով, հոգնած էր և սրտով։ Նա աչք ածեց դեպի յուր գեղեցիկ, զարդարուն շրջապատը։ Ոչ ոք չէր երևում։ Աղախիններից ոչ ոք չհայտնվեցավ։ Մի՞թե ամենքը քնած էին, մի՞թե այդքան անցել էր գիշերից։ Այդ ավելի լավ էր. գոնե ոչ ոք չէր խանգարի նրան։ Նա բորբոքված երեսը թաքցրեց բարձերի փափուկ խորության մեջ և այնպես երկար մնաց լուռ ինքնամոռացության մեջ։ Մի խուլ, սրտատռոչոր մրմունջ երբեմն ընդհատում էր այդ խորհրդավոր լռությունը, և աչքերից հոսող ակամա հեղեղը թանում էր փափուկ բարձերը։ Ինչու էր լաց լինում նա,— ինքն էլ չգիտեր։ Լինում են այնպիսի րոպեներ, երբ սրտի և դատողության փոխադարձ հարաբերությունները խզվում են, և մարդ ինքն իրան հաշիվ տալ չէ կարողանում յուր անվերծանելի զգացմունքների մասին։

Նա գլուխը վեր բարձրացրեց և կրկին պղտոր աչքերով նայեց դեպի յուր գեղեցիկ շրջապատը։ Ցանկանում էր խոսել, ցանկանում էր թեթևացնել ամբոխված վշտերը։ Դարձյալ ոչ ոք չկար։ Միակ առարկան, որ փոքր ի շատե կենդանության նշույլ էր ցույց տալիս, էր ճրագը, որ վառվում էր արծաթյա աշտանակի վրա։ Երկար նայում էր նրա վրա և մըտքով խոսում էր նրա հետ։— Հո՜ւր, ջերմությո՜ւն և նյո՜ւթ,— ինքն յուր մեջ այրվում էր, ինքն յուր մեջ սպառվում էր... Այդպես էր նրա սիրտը։

Նա դարձյալ երեսը թաքցրեց բարձերի խորության մեջ, դարձյալ արտասուքը սկսեց վազել նրա աչքերից։ Կից սենյակից լսելի եղավ մի ձայն,— նույնպես լացի ձայն։ Այնտեղ լաց էր լինում քնից նոր զարթած զավակը, այստեղ լաց էր լինում անքուն մայրը։ Այդ ձայնը սթափեցրեց նրան,— այդ ձայնը հիշեցրեց նրան, որ նա մայր էր և ամուսին...

Նա ցած իջավ մահճակալի վրայից, սրբեց աչքերը և շտապեց դեպի կից սենյակը։ Ծծմայրը քնած էր օրորոցի մոտ, չէր լսում երեխայի ձայնը։ Տիկինը զարթեցրեց նրան։ Քնաթաթախ կինը գլուխը մեքենաբար վեր բարձրացրեց և կուրծքը մոտեցրեց երեխայի բերանին։ Երեխան լռեց։ Այժմ լսելի էր լինում նրա ախորժակով ծծելու մրմռչոցը միայն։

Տիկինը, մայրական հիացմունքով կանգնած, նայում էր օրորոցի վրա։ Նրա մեջ դրած էր նրա հոգին, նրա սիրո անդրանիկ պտուղը։ Հանկարծ սոսկալով նկատեց, որ ծծմայրը գլուխը խոնարհեցրեց օրորոցի դաստակի վրա և կրկին քունը տարավ։ Երկյուղը՝ խառն բարկության հետ՝ շարժեց նրա սիրտը։

— Դու մի անգամ այդ երեխային կխեղդե՞ս,— ձայն տվեց նա և ոտով խփեց նրա կողքը։

Քնած կնոջ սև դեմքի վրա փայլեցին նրա խոշոր աչքերի ճերմակ սպիտակուցները, և նա զգաստացավ։

— Ես քնած չէի...— ասաց նա և գլուխը դարձյալ խոնարհեցրեց դաստակի վրա։

Ծծմայրը խափշիկ էր։ Խափշիկի ջերմ կուրծքից բխած կաթը սննդարար է համարվում երեխաների համար։

Որտեղի՞ց որտեղ.— մայրը՝ պարսիկ, ծծմայրը՝ խափշիկ, իսկ երեխան՝ Մամիկոնյան իշխանուհին...

Նա դեռ կանգնած էր օրորոցի մոտ, մինչև երեխան կշտացավ և քնեց։ Հետո խոնարհվեցավ, շրթունքը մոտեցրեց կլորիկ թշերին և հեռացավ, պատվիրելով ծծմայրին, որ արթուն մնա։

Կրկին դարձավ յուր քնարանը. փորձեց քնել։ Առանց աղախիններից մեկին կանչելու, ինքը հանվեցավ, մտավ անկողնի մեջ։ Փափկության մի ախորժելի զգայարան էր այդ շալեղեն և մետաքսեղեն ճոխ անկողինը, բայց այս գիշեր, կարծես, փուշերով լցված լիներ։ Նա անդադար շուռ էր գալիս մի կողքից դեպի մյուսը, բայց ոչ մի կողմում հանգստություն չէր գտնում։ Նրա ներսը այլեկոծության մեջ էր։ Խառն և անորոշ մտքերով ամբոխված էր նրա անմեղ գլուխը, որպես պարզ,

լուսապայծառ հորիզոնը հանկարծ մռայլվում է ամպերի մթին կոհակներով։ Մտածում էր Սամվելի մասին, մտածում էր այն բախտավոր արարածի մասին, որին սիրում էր նա և, վերջապես, սոսկալով մտաբերեց յուր ներքինապետին և նրա վարմունքը...

«Արդյոք Սամվելը համոզվեցա՞վ, որ ես անմեղ եմ, արդյոք փարատվեցա՞վ նրա կասկածը իմ մասին»... մրմնջում էր նա, ներկայացնելով իրան այն տխուր րոպեն, թե ո՛րքան անախորժ տպավորություն ունեցան յուր հաղորդած տեղեկությունները վշտացած երիտասարդի վրա։— «Նա այնքան բարի է, նա այնքան ազնիվ է, որ կների ինձ, նա չի կասկածի, որ ես կամակից եմ եղել իմ ներքինապետի վատություններին... Բայց դրանով խո չէ սրբվում իմ մեղքը։ Ո՞ւմ առիթով մտավ այդ տան մեջ այդ նենգավոր մարդը, եթե ոչ իմ առիթով։ Ես բերեցի ինձ հետ այդ տան մեջ մի լրտես... Ո՛չ, ո՛չ, ես ոչինչ չգիտեի, ինձ հետ ուղարկեցին այդ լրտեսին... Բայց դարձյալ հանցանքի ծանրությունը իմ վրա է ընկնում... Եվ ես պետք է քավեմ այն, ինչ որ առանց իմ գիտության կատարվել է, որպեսզի խիղճս հանգստանա... Ես Սամվելին համոզել չկարողացա։ Նա հակառակեց իմ Տիզբոն գնալու դիտավորությանը։ Այդ դեպքում ևս նա ցույց տվեց յուր անսահման բարեսրտությունը։ Բայց ես պետք է գնամ, պետք է աշխատեմ ամոքել իմ եղբոր անգթությունները... Ես չեմ կարող այստեղ մնալ և հանդիսատես լինել ողբալի տեսարանների... Բայց իմ ամուսի՞նը... ի՞նչ կմտածե իմ ամուսինը... Նա կգա և ինձ յուր տան մեջ չի տեսնի»...

Վերջին հարցի վրա մնաց նա։

Երկար մտատանջություններից հետո, նա ձայն տվեց յուր աղախիններին։ Ոչ ոք չհայտնվեցավ։ Վեր առեց յուր մոտ դրած արջա սպիտակ շալը, փաթաթվեցավ նրա մեջ և դուրս եկավ անկողնից։ Այդ շալի մեջ կիսամերկ գեղեցկուհին նմանում էր մի նազելի հավերժահարսի, որ կիսով չափ դուրս է երևում նախշուն ոստրեի միջից։

Մտավ մյուս սենյակը։ Այստեղ աղախինները, մինը մյուսի վրա գլուխը դրած, խմբով պառկել էին։ Երևում էր, նրանք երկար սպասել էին իրանց տիկնոջը, և այնպես քունները տարել էր։ Տիկինը նայեց նրանց վրա և խղճացավ զարթեցնել։ Նա դուրս եկավ և անցավ մի այլ սենյակ։ Այստեղ մի չափահաս կին, միայնակ նստած բազմոցի վրա, նիրհում էր։ Դռան բացվելու ձայնը փոքր-ինչ զգաստացրեց նրան, աչքերը բաց արավ, նայեց յուր շուրջը և, դարձյալ գլուխը խոնարհեցնելով, սկսեց նիրհել։

Տիկինը վերադարձավ յուր քնարանը։

Նա մոռացավ, թե ի՞նչ բանի համար էր կամենում կանչել յուր աղախիններին, մոռացավ և այն, թե ինչո՞ւ համար մտավ վերջին սենյակը, ուր բազմոցի վրա նիրհում էր չափահաս կինը։

Խարխափելով անցավ նա քնարանի միջով, որպես թե մի բան որոնում էր։ Աչքը ընկավ արծաթապատ արկղիկի վրա, որ դրած էր պատուհանում։ Այդ գեղեցիկ արկղիկը սարսափեցրեց նրան։ Մի առանձին զզվանքով ձեռքը տարավ դեպի կողպեքը, բաց արեց և նրա միջից հանեց մի քանի գրվածքներ։ Դրանք զանազան նամակների պատճեններ և զանազան սևագրություններ էին, որ այնօր ջոկել էր նա յուր ներքինապետի թղթերի միջից։ Նրանցից մեկը մոտեցրեց ճրագին, սկսեց կարդալ։ Նրա ուշադրությունը գրավեցին հետևյալ տողերը.

...«Այստեղ մնացած Մամիկոնյան տոհմից երկու երիտասարդներ կարող են վտանգավոր լինել. մեկը՝ Վահան իշխանի որդի Սամվելը, մյուսը՝ նրա հորեղբոր որդի Մուշեղը։ Առաջինը, թեև անփորձ, դեռահաս մի երիտասարդ է, բայց խելագարի նման սիրահար է թե՛ յուր թագավորին և թե՛ յուր հայրենիքին։ Այդ սերը լրացնում է նրա մեջ փորձի և հմտության պակասությունը։ Քաջ է և համարձակ։ Սիրված է յուր հասարակությունից, և նրա ձայնին շատերը կհետևեն։ Անկաշառելի է։ Ոչնչով չէ կարելի խախտել նրա հայրենասիրությունը։ Այդ մոլեռանդ երիտասարդը կարող է շատ հոգսեր պատճառել արքայից արքային, եթե վաղօրոք նրա մասին չխորհվի... Երկրորդը, Մուշեղը, առաջինի հայրենասիրության հետ՝ ունի փորձ և ընդարձակ հմտություններ պատերազմի գործերում։ Դա մի սոսկալի մարդ է։ Պարսկաստանը շատ կշահվի, եթե մի ամբողջ գավառ անգամ նշանակելու կլինի նրա կյանքի վճարման համար, որպես գլխագին։ Մեծ է դրա ազդեցությունը թե՛ ազնվական և թե՛ հոգևոր դասակարգերի վրա։ Լավ զորապետ և քաջ պատերազմող է, և ոխերիմ թշնամի արիներին»...

Նա չկարողացավ շարունակել. ձեռքերը դողացին, և մագաղաթի կտորը ընկավ հատակի վրա։ Այդ միջոցին ներս մտավ չափահաս կինը, որը մի քանի րոպե առաջ, մյուս սենյակում, բազմոցի վրա նստած, նիրհում էր։

— Ա՜խ, Որմիզդուխտ, աչքի լույս,— ձայն տվեց նա,— դու դեռ քնած չե՞ս։

Նա մոտեցավ, սկսեց փայփայել յուր տիկնոջ հերարձակ գլուխը։ Բայց նրա այլայլված դեմքը սարսափեցրեց պառավին, որը զարհուրելով ետ քաշվեցավ և հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ... ինչո՞ւ այդքան ուշացար... ի՞նչ

ասաց Սամվելը... Ե՞րբ եկար...— և նա զանազան հարցերով շփոթեցրեց առանց դրանց էլ շփոթված Որմիզդուխտին։

Այդ նիհար, ցամաքած պառավը Որմիզդուխտի դայակության սըն-տուն էր. երեխայությունից սնուցել էր նրան յուր գթոտ կուրծքի վրա։ Երբ ամուսնացավ Որմիզդուխտը, երբ ուղարկեցին նրան Հայոց երկիրը, այդ խելացի, փորձված պառավին դրեցին անփորձ Հարսի հետ իբրև խորհրդական, իբրև խնամակալ։

Պառավի հայտնվելը փոքր-ինչ սփոփեց Որմիզդուխտին։ Լինում են րոպեներ, գո՛նե, հուսահատական րոպեներ, երբ մարդ յուր տխուր միայնակության ժամանակ՝ սփոփանք է գտնում մինչև անգամ կատվի մեջ, երբ հանկարծ ներս է մտնում սենյակը և կարեկցաբար քըսվում է տառապյալի փեշերին։

Տիկինը անցավ մահճակալի վրա, մտավ անկողնի մեջ և կանչեց պառավին յուր մոտ։

— Նստի՛ր այստեղ, Հումայի, մո՛տ նստիր,— խնդրեց նրանից նվաղած ձայնով։

Պառավը տեղավորվեցավ նրա բարձերի մոտ։

— Ձեռքդ դիր ճակատիս վրա, շփի՛ր նրան, շա՛տ շփիր։

Պառավը յուր ոսկրոտ ձեռքը դրեց նրա ճակատի վրա, որ պատած էր սառն քրտինքով։

Մի քանի րոպե լուռ էր նա, և բոցավառ աչքերը հածում էին սենյակի շուրջը։ Հետո աչքերը խփեց և ասաց պառավին։

— Խոսի՛ր, Հումայի, շա՛տ խոսիր, ես լսում եմ։

Պառավը խոսք չգտավ ասելու։ Տիկնոջ այդ տենդային դրությունը շվարեցրել էր նրան։

— Խոսի՛ր, Հումայի, մի բան ասա՛,— կրկնեց նա, յուր թախծալի աչքերը բաց անելով և դարձնելով դեպի պառավը։— Մոռացե՞լ ես, Հումայի, լինում էին գիշերներ, երբ ես դեռ օրիորդ էի, դու այդպես, ինչպես այժմ, նստում էիր իմ անկողնի մոտ, խոսում էիր, խոսում էիր, և քո խոսքերին վերջ չէր լինում... Անցնում էին ժամեր, աքաղաղները կանչում էին, ես քնում էի, ես զարթնում էի, և դարձյալ լսում էի քո խոսքերի շարունակությունը... Ա՜խ, որքա՛ն լավ էր այն ժամանակ. ոչ հոգ կար, ոչ ցավ կար. ապրում էի ինչպես մի ազատ թռչուն, և բնավ ծանոթ չէր ինձ, թե ի՛նչ է տխրությունը...

Աչքերը դարձյալ փակեց նա, ասելով.

— Խոսի՛ր, Հումայի, մի բան պատմի՛ր, որ քունս տանե...

Շվարած պառավը ձեռքը տարավ դեպի նրա կուրծքը, որ սաստիկ զարկում էր։

— Այնտեղ կրակ կա, Հումայի, այնտեղ մի բան այրում է ինձ...— մրմնջաց նա և դարձյալ աչքերը բաց արեց։

Պառավը այժմ սկսեց վախենալ։

— Դու չես խոսում, Հումայի, դու լուռ ես... Ես կխոսեմ... ես ուզում եմ խոսել... շա՛տ խոսել...

Պառավը այժմ սկսեց մրթմրթալ։ Նա աղոթում էր։

Տիկինը յուր տաք ձեռքերով բռնեց պառավի ցամաք ձեռքը և հարցրեց.

— Հիշո՞ւմ ես, Հումայի, այն տարին, Աշտիշատի տոնախմբության օրը,— այդ վերջին հանդիսավոր տոնախմբությունն էր, որ կատարվեցավ։ Մենք նստած էինք Հայոց Տիկնոջ (թագուհու) ծիրանի վրանում, այնտեղից նայում էինք հանդեսի վրա։ Թագավորը մեծ քահանայապետի և գլխավոր նախարարների հետ նստած էին առանձին վրանում, մեզանից փոքր-ինչ հեռու, և դիտում էին կատարվող մրցությունները, կատարվող խաղերը։ Հիշո՞ւմ ես այդ օրը։

— Հիշում եմ,— պատասխանեց ապշած պառավը։

— Հիշո՞ւմ ես և այն, երբ սկսվեցավ մականախաղը[1], երբ նախարարների երկաթապատ որդիները երկու հակառակ խմբերի բաժանվեցան, և երբ շառաչում էին մականները և փայտյա խոշոր գնդակները փոթորկի նման մի կողմից դեպի մյուս կողմ էին տարվում, այդ ջերմ մրցության միջոցին հայտնվեցավ մի օրիորդ ոսկեգույն նժույգի վրա նստած։ Հիշո՞ւմ ես այդ օրիորդին։

— Հիշում եմ,— պատասխանեց պառավը։

— Հազարավոր ձայներ՝ խուռն ծափահարությամբ՝ ողջունեցին նրա հայտնվիլը։ Թագավորը երկար ճոճում էր յուր թաշկինակը։ Նա հայտնվեցավ, ինչպես մի դիցուհի, և յուր հայտնվելով նոր ույժ, նոր ջերմություն ներշնչեց խաղին։ Գեղեցի՜կ էր այդ մանկահասակ օրիորդը յուր սքանչելի զրահավորության մեջ։ Կուրծքը պատած էր պողովատյա ոսկենկար լանջապանով. պղնձյա փոքրիկ սաղավարտը շողշողում էր արևի ճառագայթներից, շողշողում էին և նրա ոսկեգույն գիսակները, որ ծածանվում էին երկաթի մեջ սեղմված թիկունքի վրա։ Նախշուն երեսակալի նեղ ճեղքից հազիվ երևում էին նրա լուսափայլ աչքերը և սևորակ, աղեղնաձև հոնքերը։ Ընչում էր փողը, որոտում էին թմբուկները և երկար, ծանր մականը նրա վարժ ձեռքում պտտվում էր, ինչպես մի թեթև փետուր։ Գեղեցիկ նժույգը, որպես մի օդագնաց թռչուն, ճախրում էր, ահագին ոստյուններ էր գործում, և քաջազնյա օրիոր-

գի մականի ճարպիկ հարվածներով գնդակը սլանում էր մինչև ասպարեզի վերջը... Հիշո՞ւմ ես, թե ո՛ւմ հետ էր մրցում նա։

— Սամվելի հետ։

— Այո՛, Սամվելի հետ... Երբ վերջացավ խաղը, Հայոց Տիկինը (թագուհին) հրավիրեց նրան մեզ մոտ, մեր նստած վրանում։ Յուր ձեռքով նվիրեց նրան առաջին մրցանակը — մի ոսկեղեն գեղաքանդակ թաս։ Նա մնաց մեզ մոտ, ճաշեց մեզ հետ և ճաշի ժամանակ երգեց մի երգ։ Հիշո՞ւմ ես այդ երգը։

— Հիշում եմ։

— Այդ մի լեռնական երգ էր, Հումայի։ Լեռնցի օրիորդը երգում էր յուր լեռների, յուր ձորերի երգը։ Նրա անուշիկ ձայնը հնչում էր, ինչպես լեռնային զեփյուռ, որ զարկվում է ապառաժներին, զարկվում է զառիվոր եղևիններին, սասանում է, սասանում է, և ապա փոքր առ փոքր մեղմանալով, վերջը խուլ-տխրաձայն հնչյուններով հանգչում է ձորերի հեռավոր խորության մեջ... Կարծես, և այդ րոպեում զարկում է իմ ականջներին կախարդիչ երգի թախծալի մեղեդին, կարծես, և այժմ նայում եմ ես հափշտակված օրիորդի վառված աչքերի մեջ, ուր այնքան կրակ կար, ուր այնքան հրապուրանք կար, ուր այնքան սեր կար... Հիշո՞ւմ ես, Հումայի, թե ով էր այդ օրիորդը։

— Ասում էին, որ Ռշտունյաց իշխանի դուստրն է։

— Այո՛, Ռշտունյաց իշխանի դուստրն էր — անհարկու լեռների և մթին անտառների բախտավոր դուստրը... Նա յուր հետ բերել էր յուր լեռների քաջերին։ Քա՜ղցր էր նայել այդ հովիվ ժողովրդի պարզ և անպաճույճ զրահավորության վրա, որ հայտնվել էին հանդեսում իրանց այծերի մազից գործած թեթև սպարներով[2], իրանց ոչխարների բրդից պատրաստած կաճյա զրահներով ու սաղավարտներով[3] և իրանց՝ նույնպես մազից հյուսած՝ թանձր տրեխներով[4]։ Ոտքից ցգլուխ մազով ու մորթով էին պատած նրանք, բայց երկաթի ամրություն ուներ այդ կոշտ-կոպիտ հանդերձանքը — Կոշտ-կոպիտ էին և իրանք — լեռնականները, — բայց բոլոր հանդիսականները սարսափում էին նրանց աղեղներից, որ երեք կանգուն տարածություն ունեին, և նրանց նետերից, որ մի նիզակի չափ երկարություն ունեին[5]։ Խրոխտ էին այդ քաջերը և դյուրագրգիռ, իսկ նրանց թագուհին փայլում էր բոլոր հանդիսականների մեջ, որպես մի լեռնային դիցուհի...

Վերջին խոսքերի միջոցին նա յուր աչքերը փակած ուներ, կարծես, խոսում էր քնի կամ երազի մեջ։

— Այդ քաջերը, — շարունակեց նա, — հրեղեն աչքերով և թավամազ դեմքով, թավամազ առյուծների նման, հսկում էին իրանց իշխա-

նուհու վրա։ Մահը մի ակնթարթում վճռված կլիներ այն ապստամբ երիտասարդի, որ կհամարձակվեր մի փոքր ծուռ աչքով նայել նրա վրա։— Նա տարավ այդ տոնախմբության մրցությունների ժամանակ երկու փայլուն մրցանակներ. մեկը՝ ոսկեղեն թասը, որ ընդունեց Հայոց Տիկնոջ ձեռքից, մյուսը— Սամվելի սիրտը...

Նա լռեց, այլևս ոչինչ չխոսեց։

Երկյուղած պառավը սարսափով նայում էր նրա գունաթափ դեմքի վրա, որ երբեմն թրթռում էր տենդային ցնցումներով։ Թրթռում էին և նրա կարմիր շրթունքները, որ ամուր սեղմված էին միմյանց հետ։ Նա դեռ շարունակում էր խոսել, բայց խոսում էր, ո՛վ գիտե, ում հետ,— խոսում էր երազների հափշտակության մեջ, և նրա ձայնը չէր լսվում...

Պառավը ծածկեց նրան և մինչև լույս անքուն նստած նայում էր յուր սնուցած սանիկի վրա, որ վառվում էր տապի և քրտինքի մեջ։ Եվ խեղճ կնոջ շիջած աչքերից արտասուքը մեղմ կաթիլներով գլորվում էր ցամաք երեսի վրա...

ԺԶ.

ԻՆՔՆԱԿՈՉՆԵՐԸ

Գիշերից բավական անցել էր։ Մուշեղ իշխանի ապարանքում, միևնույն սենյակում, որ նրա ընդունարանն էր, Հայոց չորս երիտասարդ մտածողները դեռ խորհրդի մեջ էին։ Սենյակի վարագույրները խնամքով իջեցրած էին, դռները ներսից կողպած էին, իսկ դրսում՝ երկու զինված պահակներ կանգնած էին նախասենյակի դռան աջ և ձախ կողմերում։

Մեսրոպը, ճրագի հանդեպ նստած, խորասուզվել էր յուր առջև դիզված թղթերի մեջ։ Կարդում էր, ինչ-որ հաշիվներ էր անում, դարձյալ կարդում էր և երբեմն ձեռքը տանում էր դեպի հուզված ճակատը, յուր տարակուսանքները փարատելու համար։ Այդ թղթերի թվում գտնվում էր և այն նամակը, որ Որմիզդուխտը հանձնեց Սամվելին։

Սամվելը ոտքի վրա անցուդարձ էր անում և մի-մի անգամ մոտենում, կանգնում էր և հեռվից լուռ նայում էր Մեսրոպի աշխատությունների վրա։

Մուշեղը մատներով անհանգիստ կերպով քրքրում էր յուր փոքրիկ

մորուքը, որ, թավիշյա սև շրջանակի նման, բոլորում էր նրա այրական դեմքը։ Նրա սև աչքերի մեջ նշմարվում էր անհամբերություն և խորին վրդովմունք։

Սահակ Պարթևը երբեմն վեր էր առնում յուր մոտ դրած գինու թասը և նրանով թրջում էր սրտի տապից ցամաքած շրթունքները։

Ամենքը սպասում էին Մեսրոպին։

Նա թղթերը տհաճությամբ մի կողմ նետեց և, դառնալով դեպի մյուսները, ասաց.

— Բոլորովին ապարդյուն է քրքրել այդ թղթերը և նրանցից որևէ եզրակացություն հանել։ Մեր այժմյան դրության մեջ՝ հաշիվը ոչ միայն կխառնեցնէ, այլև կմոլորեցնէ մեզ։ Մեր գործերը հենց սկզբից անհաշիվ են տարվել։ Այնպես էլ պետք է շարունակել։ Այսինքն, կամենում եմ ասել, որ ժամանակը այնքան նեղ է, և պահանջները այնքան ստիպողական են, որ մենք միջոց չունենք հինը ուղղելու և նոր կարգադրություններ անելու։ Մեզ պետք է այժմ անել մի վճռական քայլ, թեև այդ քայլը մինչև անգամ հակառակ լիներ խոհեմ և խելացի ձեռնարկության։

— Բոլորովին ճիշտ է,— ասաց Սամվելը, որ դեռևս ոտքի վրա էր։

Սահակ Պարթևը ոչինչ չխոսեց։

— Այսուամենայնիվ, մենք պետք է չափենք մեր ուժերը,— նկատեց Մուշեղը։

— Մենք չափել կամ կշռել չենք կարող այն, ինչ որ դեռևս գոյություն չունի,— պատասխանեց Մեսրոպը։— Մեր ուժերի չափը կախված կլինի այն հանգամանքներից, թե որքան հաջողությամբ առաջ կտանենք գործը։

— Հաջողությունը կամ անհաջողությունը հենց այժմյանից ես կարելի է նախագուշակել,— ասաց Մուշեղը։

— Միայն հավանականության վրա հիմնվելով,— պատասխանեց Մեսրոպը։— Մենք, կրկնում եմ, անձնավստահությունը պետք է ընտրենք մեզ որպես առաջնորդ, իսկ հաջողությունը թողնենք բախտի կամքին։

Սահակ Պարթևը ընդհատեց վիճաբանությունը, հարցնելով.

— Այդ «մենք»-ը մի քանի անգամ կրկնվեցավ։ Բայց նախքան որևէ քայլ անելը, ես կարծում եմ, պետք է որոշել, թե ո՞վ ենք մենք։

Տիրեց ընդհանուր լռություն։ Հարցը բավական կարևոր էր։ Սամվելը առաջ անցավ, խնդրելով.

— Թույլ տվեք ինձ խոսել։

— Խոսի՛ր,— ասաց Պարթևը։

Նա խորին ոգևորությամբ կանգնեց յուր խորհրդակիցների առջև և, յուր բոցավառ աչքերը դարձնելով դեպի նրանց, խոսեց.

— Ո՞վ ենք «մենք»,— այդ հարցը, իրավ, մի շատ դժվարին հարց է, և նրա վճռելը պետք է լինի գործի սկիզբը։— Ո՞վ ենք «մենք»։— Մենք ամեն ինչ ենք։ Իմ պատասխանը գուցե չափազանց հանդուգն կթվի ձեզ, բայց ես կաշխատեմ պարզել իմ միտքը։ Մեր աշխարհի կառավարության մեջ երեք բարձրագույն անձինք առաջնակարգ դեր էին խաղում.— Թագավորը, քահանայապետը և սպարապետը։ Այդ երեք գլխավորները այժմ չկան։ Թագավորը աքսորված է Խուժաստանի Անհուշ բերդը, սպարապետը աքսորված է դարձյալ նույն բերդը, իսկ քահանայապետը աքսորված է Միջերկրականի Պատմոս կղզին։ Մեր աշխարհը մնացել է զուրկ այդ երեք մեծ կառավարիչներից, որ վտանգի ժամանակ կարող էին թշնամուն դեմ դնել։ Իսկ թշնամին մեր դռանը կանգնած է, ներս մտնելու վրա է։ Ո՞վ պետք է ընդդիմանա նրան։ Ո՞վ պետք է պաշտպանե հայրենիքը կրակից և արյունից։ Ո՞վ պետք է մաքրե պարսկական պղծությունը, որ սպառնում է արատավորել մեր բոլոր սրբությունները։ Արքայական գահը վտանգի մեջ է. եկեղեցին վտանգի մեջ է. մեր լեզուն, մեր դպրությունը, մեր ավանդությունները, մեր ազգային բոլոր նվիրական ժառանգությունները վտանգի մեջ են։ Ո՞վ պետք է պաշտպանե։ Կրկնում եմ, թագավորը չկա, քահանայապետը չկա, սպարապետը չկա։ Բայց կան նրանց ներկայացուցիչները, որոնցից երկուսը հենց այստեղ լսում են ինձ։

Նա ձեռքը տարավ դեպի Սահակ Պարթևը և դեպի Մուշեղը և շարունակեց.

— Դո՛ւ, Սահակ, քահանայապետի որդին ես և կարող ես փոխարինել քո հորը։ Իսկ դո՛ւ, Մուշեղ, սպարապետի որդին ես և կարող ես փոխարինել քո հորը։ Թե՛ քահանայապետությունը և թե՛ սպարապետությունը մեր աշխարհի սովորությամբ ժառանգական են[1]։ Մեկը սեփական է Լուսավորչի տանը, մյուսը՝ Մամիկոնյանների տանը։ Դրան ոչ ոք կարող է հակառակել։ Մնում է թագավորի ներկայացուցիչը։ Թագաժառանգը այստեղ չէ, նա պահված է Բյուզանդիայում։ Բայց Հայոց Տիկինը—թագուհին— մեր ձեռքումն է։ Նրա անունով կարող ենք ամեն տեսակ հրամաններ տալ։ Կազմե՛նք մի ժամանակավոր կառավարություն, անցնե՛նք գործերի գլուխը և սկսենք դեմ դնել թշնամուն։ Ես հավատացած եմ, որ ժողովուրդը կգա մեր ետևից։ Նա սիրում է միայն հրամաններ լսել, իսկ երկար չէ մտածում, թե որտեղից է գալիս հրամանը։— Այժմ, կարծեմ, բավական պարզ է, թե ո՛վ ենք «մենք»...

— Մենք ազատ ժողովուրդ չունենք,— նկատեց Մեսրոպը,— մենք

ունենք նախարարներ միայն, որոնց հետ կապված են ժողովրդի զանազան մասերը։

— Բոլորովին ճիշտ է,— պատասխանեց Սամվելը։— Բայց իմ ձեզ ներկայացրած նամակից երևում է, որ խստիվ պատվիրված է՝ կալանավորել բոլոր նախարարներին և վարել նրանց Տիզբոն, իսկ նրանց կանանցը, զավակներին, որպես պատանդ, պահել առանձին բերդերում, սաստիկ հսկողության ներքո։ Այդ խստություններից կարող ենք մենք օգուտ քաղել։ Որովհետև այդ կստիպե նախարարներին, եթե ոչ հայրենիքի պաշտպանության համար, գոնե իրանց անձանց և ընտանիքների պաշտպանության համար, միանալ մեզ հետ և դեմ դնել թշնամուն։

— Շատ հավանական է,— ասաց Մեսրոպը։— Բայց մեր նախարարներից ոմանք այնքան երկչոտ են, բավական է, որ լսեն Շապուհի պատվերը իրանց մասին, նրանք իսկույն կառնեն իրանց ընտանիքները, կփախչեն դեպի Հունաց կողմը, ապահովություն գտնելու համար։

— Այդ կարող է պատահել,— պատասխանեց Սամվելը։— Թշնամին վճիռ է դրել՝ չխնայել ոչ ոքի, ով որ կընդդիմանա։ Իսկ մենք պետք է վճիռ դնենք՝ չխնայել ոչ ոքի, ով որ խույս կտա։ Եթե մեր նախարարներից ոմանք այնքան վատ կլինեն, որ ընդհանուր վտանգի ժամանակ, միայն իրանց անձը և ընտանիքը պահպանելու համար, կփախչեն դեպի օտար երկիր,— այդ դեպքում մենք առաջինը կլինենք, որ նրանց կմորթենք իրանց ամրոցների սյամի վրա...

Սահակ Պարթևը և Մուշեղը լուռ լսում էին։ Նրանք մի առանձին հրճվանքով էին նայում ոգևորված երիտասարդի վրա, որ ներկայանում էր նրանց առջև որպես մի մարմնացած վրեժխնդրություն։ Սամվելը առհասարակ մելամաղձոտ և սակավախոս բնավորություններից էր, բայց երբ սկսում էր խոսել, խոսում էր երկար և բավական գեղեցիկ։ Նա շարունակեց.

— Ուշադրություն դարձրեք, սիրելիք, իմ ձեզ ներկայացրած նամակի մի այլ կետի վրա, որտեղ հրամայված է՝ կալանավորել Հայոց Տիկնոջը և ուղարկել Պարսկաստան։ Մեր առաջին ջանքը պետք է լինի՝ ապահովել Տիկնոջ անձը։ Կորցնելով նրան, մենք շատ բան կկորցնենք։ Նրա անունով պետք է գործենք մենք, նրա անունով պետք է շարժենք ժողովրդին։ Ես հավատացած եմ, որ տատանվող գահի վտանգը, թագավոր-ամուսնի կորուստը, թագաժառանգ-որդուց զրկվելը,— այդ բոլոր դժբախտ արկածները, ավելի քան մեզանից ամեն մեկին, պետք է դրդեն Տիկնոջը՝ այժմյան տագնապի մեջ պաշտպան հանդիսանալ Ար-

շակունյաց կործանվող գահին։ Եվ նա այնքան քաջություն ունի, որ կանի այդ։

Մեսրոպը կրկին վեր առեց Որմիզդուխտի Սամվելին հանձնած նամակը, սկսեց լուռ կարդալ։

Նույն սենյակում պատից քարշ էր ընկած Մամիկոնյան Վաչեի[2] պատկերը։ Իսկ պատկերի ներքև քարշ էր ընկած այդ հերոսի սուրը։ Սամվելը, վերջացնելով յուր փոքրիկ ճառը, մի առանձին պատկառանքով մոտեցավ պատկերին, վեր առեց սուրը և, դնելով Սահակ Պարթևի առջև, ասաց.

— Այդ սուրը այն քաջի սուրն է, որի արթուն հոգին ուշադրությամբ նայում է մեզ վրա,— նա ձեռքը տարավ դեպի պատկերը։— Քառասուն տարի հազիվ անցել է այն օրից, երբ պարսից հետ մղած արյունահեղ կռվի մեջ ընկավ այդ քաջը և յուր մահվամբ ամբողջ Հայաստանը սուգի մեջ դրեց։ Մամիկոնյան տոհմից ոչ ոք մնաց, որ ժառանգեր հայոց սպարապետության պաշտոնը։ Ամենքը ընկան նույն կռվի մեջ։ Մնաց միայն հանգուցյալի որդի Արտավազդը, որը դեռ մանուկ էր և երեխա Թագավորը (Խոսրով Բ-րդ) և քո պապ Վրթանես հայրապետը, Սահա՛կ, բերել տվին մանուկ Արտավազդին թագավորական արքունիքը։ Այնտեղ էին հայոց նախարարները, այնտեղ էր և հայոց բարձր ազատանին։ Թագավորը գրկեց մանուկին, իսկ մեծ հայրապետը վեր առեց հոր սպարապետական պատվանշանը[3] և հանդիսավոր կերպով կապեց որդու գլխին,— վեր առեց և հոր սուրը, օրհնելով, կապեց որդու մեջքին[4]։ Հետո հանձնեցին մանուկին Շիրակա իշխան Արշավիր Կամսարականի և Սյունյաց Անդովկ իշխանի (որոնք երկուսն էլ Մամիկոնյանների փեսաներն էին) հոգաբարձությանը, որ խնամք տանեն, մինչև մեծանա և հոր սպարապետությունը ժառանգե։— Ահա՛ նույն սուրը դրած է քո առջև, Սահակ, քո պապի բերանով օրհնյալ սուրը։ Քե՛զ է վայելում, Սահա՛կ, որպես հայոց հայրապետական տան արքայական ժառանգին, վեր առնել այդ սուրը և հանձնել իմ հորեղբոր որդի Մուշեղին, հրատարակելով նրան հայոց սպարապետ։

Վերջին առաջարկությունը խիստ սրտաշարժ էր։ Վեհազնյա Պարթևը չկարողացավ զսպել յուր արտասուքը։ Պատմության տխուր կրկնողությունը նույնն էր, ինչ որ քառասուն տարի առաջ։ Մամիկոնյան Վաչեն սպանվեցավ պարսից դեմ մղած կռվի մեջ, և Սահակի պապը, Վրթանես հայրապետը, նրա անչափահաս որդուն սպարապետ հրատարակեց։ Մուշեղի հայրը— Վասակ սպարապետը— նույնպես սպանված էր պարսից Շապուհ արքայից[5]։ Բայց Մուշեղը դեռ չգիտեր այդ։ Նա յուր հորը դեռ կենդանի էր համարում և աքսորված յուր թագավորի հետ։ Այժմ

ինչպե՞ս պետք էր հայտնել նրան հոր ցավալի մահը և նրա, առանց դրան ևս, վշտերով ծանրացած սրտի վրա՝ մի նոր և անմխիթար վիշտ ավելացնել։ Այդ էր, որ շարժեց Սահակի սիրտը։ Բայց նա բարվոք համարեց լռել այդ մասին։ Խորին, ցավակցական զգացմունքներով վեր առեց սուրը, արտասանելով հետևյալ խոսքերը.

— Ես ինձ բախտավոր եմ համարում, որ այդ հանդիսավոր րոպեում, երբ մեր հայրենիքի բախտն է վճռվում, ինձ է վիճակվում այդ սուրը հանձնել քեզ, Մուշեղ։ Դա քո նախահարց փառքն է, իսկ նրանց արժանավոր ժառանգների՝ պարծանքը։ Այո՛, Մամիկոնյան տոհմը իրավունք ունի պարծենալու այդ սրով, որ մեր աշխարհի ամեն մի ճգնաժամի ժամանակ պաշտպան է հանդիսացել հայրենիքին։ Տրդատի օրերում այդ սուրը ջնջեց Սլկունիների քաջ ցեղը, որոնք, ապստամբելով իրանց թագավորի դեմ, անցան թշնամու կողմը[6]։ Տրդատի որդի Խոսրովի օրերում այդ սուրը փշրեց մեր դարևոր թշնամի պարսից զորությունը[7]։ Խոսրովի որդի Տիրանի օրերում այդ սուրը մերկացավ բնիկ թագավորի դեմ, երբ նա սկսեց անխնա կոտորել հայոց նախարարների անչափահաս զավակներին[8]։ Իսկ Տիրանի որդի Արշակի օրերում, որ մեր այժմյան դժբախտ թագավորն է, այդ սուրը, Մուշեղ, քո հոր ձեռքում, ոչ սակավ անգամ, խորտակեց Շապուհի ահագին զորությունները։ Նա մնաց միշտ անարատ, և երբեք վատություն, երկչոտություն բիծ չդրեց նրա վրա։ Դրա մեջն է Մամիկոնյանների մեծությունը։ Միշտ անաչառ է եղել այդ սուրը թե՛ դեպի օտարները և թե՛ դեպի յուր հարազատները։ Քո հայրը, Մուշե՛ղ, այդ սրով սպանեց յուր եղբայր Վարդանին, երբ նա դավաճանեց հայրենիքին[9]։ Արդարությունը, իրավունքը, նեղյալի և տառապյալի պաշտպանությունը միշտ եղել է այդ սրի բարձր, քաջազնական գաղափարը։ Քո հայրը, Մո՛ւշեղ, զոհ եղավ յուր անսահման հայրենասիրության... Քո հորը պատահած ցավալի անցքից հետո, քե՛զ, երանելի հոր արժանավոր որդուն, քե՛զ միայն վայել է կրել այդ սուրը և անցնել հայոց զորքերի գլուխը։ Վտանգը մոտ է, և տառապյալ հայրենիքի տխուր հառաչանքները կոչում են քեզ, Մուշե՛ղ, ընդունել այդ զենքը, որի մեջ պետք է գտնե նա յուր փրկությունը։ Եվ դու այնքան քաջ ես և անձնվեր, որ կարդարացնես նրա սրտագին հույսերը...

Խորին տխրությամբ ընդունեց քաջազնյա երիտասարդը նախահարց սուրը, ասելով.

— Ես իմ տոհմի մեջ ամենադժբախտն եմ համարում ինձ, ընդունելով այդ սուրը։ Իմ նախնիքը ավելի բախտավոր գտնվեցան, նրանք

այդ սրով պատերազմեցին օտարների հետ, իսկ ես պետք է պատերազմեմ իմ հարազատի հետ... Թշնամու զորքերին առաջնորդում է իմ հորեղբայրը... Թո՛ղ օրհնյալ լինի Նախախնամողի կամքը, թո՛ղ Նա զորություն տա իմ բազուկներին, այդ սրով մաքրել այն արատը, որ իմ հարազատը պետք է դնի մեր տոհմի վրա...

Սամվելի դեմքը մինչև այդ րոպեն փայլում էր ուրախությունից, բայց լսելով վերջին խոսքերը, մռայլվեցավ նա։ Մուշեղի ակնարկությունները վերաբերում էին նրա հորը։ Սահակը նկատեց դժբախտ երիտասարդի հուզմունքը և, դառնալով դեպի նա, հարցրեց.

— Դու միևնույնը չէի՞ր անի, ինչ որ ասաց Մուշեղը։

— Ես ավելին կանեի... և կանե՜մ...— պատասխանեց Սամվելը դառնությամբ լի ձայնով։

— Ուրեմն ամեն ինչ վերջացած է։ Խոսենք գործի վրա։

Վեհազնյա Պարթևը աչք ածեց դեպի յուր խորհրդակիցները և շարունակեց.

— Սամվելը յուր գեղեցիկ ճառի մեջ շատ ճիշտ նկատեց, որ մենք պետք է գործենք Հայոց Տիկնոջ անունով և պետք է նրա հրամանով շարժենք թե նախարարներին և թե ժողովրդին։ Այդ անհրաժեշտությունը կարևոր համարելով, ես նախքան Տարոն գալը, Վաղարշապատում տեսնվեցա Տիկնոջ հետ։ Նա ավելի քան մեզանից յուրաքանչյուրը՝ ոգևորված է մեր աշխարհի փրկության գործով։ Նա դրեց մեր իրավունքի ներքո արքայական ամբողջ գանձը և, բացի դրանից, յուր սեփական հարստությունը և մինչև անգամ յուր զարդերը։ Նա հանձնեց ինձ յուր մատանին[10], իրավունք տալով, ամեն տեսակ հրամաններ կնքել նրանով։

Նա դուրս բերեց յուր ծոցից Տիկնոջ մատանին և դրեց սեղանի վրա, ասելով.

— Ժամանակավոր բարձրագույն կառավարությունը, որ առաջարկեց Սամվելը և որի հետ մենք ամենքս համաձայն ենք, պետք է հենց այս րոպեից կազմված համարել։ Թող Տրդատի և մեր լուսավորիչ հոր աստվածը զորացնե մեր ձեռնարկությունը։ Կրոնի, ազգի, հայրենիքի փրկությունը և նրանց պաշտպանության համար ամեն զոհաբերություն հանձն առնելը՝ կլինի մեր կռիվների նշանաբանը։ Ես մեծ հույսեր ունեմ, որ եթե չհաղթենք, գոնե պատվով կմեռնենք...

Նա կանգ առեց և րոպեական լռությունից հետո շարունակեց.

— Ես առավոտյան պետք է մեկնեմ այստեղից. ինձ հետ պետք է տանեմ և Մեսրոպին։ Գիշերը դեռ բոլորովին չէ անցել, դեռ բավական ժամանակ ունենք։ Թող Մեսրոպը սկսե գրել հարկավոր հրամանները,

որ պետք է հղել նշանավոր նախարարներին։ Այդ հրավարտակների վրա կդրվեին՝ նախ Տիկնոջ կնիքը և ապա մեր յուրաքանչյուրի կնիքները։ Իսկ թե որտե՞ղ պետք է կենտրոնանան մեր գլխավոր ուժերը,— այդ քո մտածելու խնդիրն է, Մուշեղ. դու ավելի հմուտ ես պատերազմի գործերում։

— Արտագերսի[11] ամրոցում,— պատասխանեց նա։

— Ես էլ նույն կարծիքին եմ,— ասաց Պարթևը։— Արարատը, որ մեր աշխարհի սիրտն է, պետք է պաշտպանվի։ Կորցնելով սիրտը, կկորցնենք և կյանքը...

— Սկսի՛ր գրել, Մեսրոպ,— դարձավ նա դեպի քարտուղարը, տալով նրան մի քանի առաջնակարգ նախարարների անունները։

Մեսրոպը վեր առեց գրիչը և մագաղաթը։

Այդ միջոցին ամրոցում մի այլ տեղ նույնպես քնած չէին։ Յուր առանձնասենյակում, բարձր բազմոցի վրա, նստած էր Սամվելի մայրը, իսկ նրա ներքևը, հատակի վրա, կուչ էր եկած մի փոքրիկ մարդ։ Նա յուր ծնկան վրա դրած ուներ մագաղաթի թերթը, նույնպես գրում էր և երբեմն յուր նիհար դեմքը, նեղ աչքերով, դարձնում էր դեպի տիկինը , հարցնելով.

— Էլ ի՞նչ գրեմ...

Երբ վերջացրեց, երկու նամակներ դրեց տիկնոջ առջև, ասելով.

— Այդ մեկը իշխան Մերուժանի նամակն է, իսկ մյուսը՝ իմ տիրոջ՝ Վահան իշխանի նամակն է։

Տիկինը յուր ձեռքով ծրարեց ամուսնի նամակը։

ԺԷ

ԿՆՈՋ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մյուս օրը, չնայելով անձրևային խոնավ եղանակին, Սահակ Պարթևը և Մեսրոպը վաղ-առավոտյան ներկայացան տիկին Մամիկոնյանին և, մնաք բարյավ ասելով, հեռացան Ողականի ամրոցից։ Տիկնոջ թախանձանքը, մինչև անգամ արտասուքը, անզոր եղան գոնե մի օրով ավելի պահելու յուր հյուրերին, որպեսզի ինքը փոքր ի շատե միջոց ունենար ապացուցանելու յուր «բարեկամության և հյուրասիրության խորին մեծարանքը»։

Սամվելը գնաց նրանց ճանապարհ դնելու մինչև մերձակա իջևանը։ Նա պետք է վերադառնար երեկոյան։

Սահակի և Մեսրոպի գնալուց հետո, իշխան Մուշեղը մտածում էր փոքր ի շատե կարգի դնել յուր ընտանեկան գործերը, որովհետև նա ևս մի քանի օրից հետո պետք է թողներ Ոշական ամրոցը։ Բոլոր ժամանակը նա յուր խելքով, յուր մտքով և յուր հոգու ամբողջ եռանդով հափշտակված լինելով միայն հայրենիքի գործերով, բոլորովին մոռացել էր յուր տունը։ Այժմ միայն ներկայացավ նրան մի նոր հոգս և մի նոր զբաղմունք։ Սպարապետի և զորավարի ինքնապահությունը մաքառում էր նրա մեջ՝ ամուսնի և ընտանիքի հոր զգացմունքների հետ։ Նա պետք է գնար։ Ո՞վ գիտե, գուցե այլևս չվերադառնար... Բայց ի՞նչ կլիներ յուր բացակայության ժամանակ անպաշտպան ընտանիքի դրությունը։ Ո՞ւմ հանձներ, ո՞ւմ խնամակալության ապավիներ։ Նա պետք է գնար թշնամու հետ զարկվելու։ Բայց գլխավոր թշնամին հենց յուր տան մեջն էր։ Նա տարակույս չուներ, որ երբ կսկսվեր պատերազմի փոթորիկը, հենց ինքը, Սամվելի մայրը, կհանձներ նրա զավակներին, նրա կնոջը պարսից զինվորների ձեռքը, և նրանց կտանեին և, իբրև գրավական, կպահեին, հորը զինաթափ անելու համար։

Ասպազան յուր բոլոր սարսափանքով ներկայանում էր նրա աչքում։ Նրան շատ հասկանալի էր պարսից արքունիքի խորամանկ կարգադրությունը, որով խստիվ պատվիրված էր՝ կալանավորել հայոց նշանավոր նախարարների ընտանիքները և պահել առանձին բերդերում։ Եվ այդ պետք է իրագործվեր Մերուժանի և Սամվելի հոր ձեռքով։ Նպատակը պարզ էր։ Նրանք լավ հաշվել էին, թե հայրերը բանակումը կլինեն, իսկ ընտանիքները տանը թողած։ Կալանավորելով ընտանիքները, նրանց երկյուղով կսանձահարեն ծնողներին, զգալ տալով, թե ամեն մի հակառակ քայլ կարող էր նրանց զավակների և կանանց կյանքը վտանգի ենթարկել։

Որքա՞ն ավելի ուշադրություն պետք է դարձնեին Մուշեղի, որպես հայոց սպարապետի, ընտանիքի վրա։ Այդ մտատանջությունների մեջ տատանվում էր նա, երբ սենյակի դռները բացվեցան, ներս մտավ մի մանկահասակ կին, իսկ նրա ետևից՝ աղախինը, որ գրկում բռնած ուներ մի կլորիկ երեխա։

— «Այո՜ւ»... «այո՜ւ»...— լսելի եղավ երեխայի թոթովանքը և նա, հեռվից փոքրիկ ձեռիկները վեր բարձրացնելով, ողջունեց հոր առավոտը։

Հայրը մոտեցավ, աղախնի գրկից առեց զավակին, սեղմեց յուր կուրծքի վրա։

Ամբողջ գիշերը անցկացրած լինելով Սահակի, Միսրոպի և Սամվելի հետ, նա յուր կնոջը չէր տեսել։ Կինը եկել էր տեսնելու ամուսնին։

Երեխան գրկում իշխանը եկավ, նստեց բազմոցի վրա, իսկ կինը կանգնած մնաց նրանց հանդեպ և, խորին զմայլմունքով, նայում էր հոր խաղերին յուր զավակի հետ։ Նա երբեմն մատը դիպցնում էր ուրախ մանուկի լիքը թշերին, և ամեն անգամ կանչատում էր, ծիծաղում էր նա, և այդ հրեշտակային ծիծաղի միջոցին նրա փոքրիկ բերանը թաքչում էր գիրգ թշերի ալիքների մեջ։

— Երեկվանից դարձյալ մի նոր բան է սովորել,— հաղորդեց մայրը ուրախությամբ։

— Իմ զավակը մի՛շտ նոր բան է սովորում, մի՛շտ նոր բան է սովորում,— ձայն տվեց հայրը և փայփայեց նրա խարտյաշ գանգուրները։— Ի՞նչ է սովորել։

Մայրը դարձավ դեպի աղախինը, որը մոտեցավ, չոքեց փոքրիկ Մուշեղի առջև, ցույց տալու նրա նոր օյինբազությունը: Նա ձեռքը դրեց երեսին, գլուխը մի կողմ թեքեց և, աչքերը խփելով, ասաց.

— Մուշեղ, նա՛-նի՛նք։

Երեխան նույնպես աչքերը խփեց, գլուխը դրեց հոր կուրծքի վրա և ձևացրեց, իբր թե քնում է։ Բայց երկար համբերել չկարողացավ, շուտով սկսեց ծիծաղել և աչքերը բաց արավ։

— Ա՛յ, սատանա,— նկատեց հայրը, սեղմելով նրան յուր գրկի մեջ,— նա քեզ է խաբում, դու նրան ես խաբում։

Երեխան, կարծես վիրավորվելով հոր նկատողությունից, մի ճարպիկ ոստյուն գործեց նրա գրկում և երկու ձեռիկները մեկնեց դեպի մայրը։

Մայրը առեց նրան յուր գիրկը, հեգնելով.

— Դու երեխային գրավելու շնորհք չունես։

— Ձանձրացավ ինձանից...— ասաց հայրը, և նրա ուրախ դեմքի վրա անցավ տխրության մթին մռայլը։

Կինը նկատեց այդ։

Բայց զվարճասեր երեխան մոր գրկում ես ձանձրացավ, սկսեց թռչկոտել դեպի աղախինը և նրան դեպի ինքը հրապուրելու ցույցեր անել։ Աղախինը մոտեցավ։ Մայրը երեխային հանձնեց նրան, ասելով.

— Դուրս տար դրան։

Այժմ հանգիստ էր նա, այժմ յուր ընտելացած գրկումն էր։ Նախասենյակից լսելի եղավ նրա վերջին «այո՛ւ»,«այո՛ւն»,— նրա մանկական մնաք բարյավը, որ շարժեց հոր բոլոր սրտագին զգացմունքները։ Նրա դեմքը մռայլվեցավ։

Երբ երկու ամուսինները մնացին միայնակ, կինը մի առանձին կարեկցությամբ նայեց յուր սիրելիի երեսին, հարցնելով.

— Դու այս առավոտ սաստիկ գունաթափ ես, երևի ամբողջ գիշերը չես քնել։

— Ի՞նչ գիտես, որ չեմ քնել,— հարցրեց իշխանը։

— Գիշերը մի քանի անգամ դուրս եկա, նայեցի լուսամուտներին, ճրագը դեռ վառվում էր։ Դու սովորություն չունես քնելու ժամանակ ճրագը վառ թողնել։

— Ուրեմն դո՞ւ էլ չես քնել։

Մի քաղցր ժպիտ եղավ Մուշեղի պատասխանը։ Այդ ժպիտը այրեց նրա սիրտը։ Մի գիշեր միայն նա միայնակ էր թողել սիրելի կնոջը, և նա անհանգիստ էր եղել, չէր կարողացել քնել։ Բայց եթե երկար, շատ երկար բաժանվելո՞ւ լինեն նրանից...

Տիկինը նստեց նրա մոտ և ձեռքը առեց յուր ափերի մեջ։ Նա դարձյալ դիմեց ամուսնին առաջին հարցով, որի մասին բավականացուցիչ պատասխան չստացավ։

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, ինչո՞ւ հանկարծ տխրեցիր։

Ինչպե՞ս բացատրել, թե ի՛նչ էր պատահել։ Շատ բան էր պատահել։ Եվ շատ բաներ ևս պատահելու էին... Արդյոք կնոջ քնքուշ սիրտը այնքան ամրություն կունենա՞ր բոլորը լսելու։

Մուշեղը սկսեց ավելի մեղմ կերպով.

— Տեսնո՞ւմ ես, Սաթենի՛կ, մի գիշեր միայն բաժանվեցա քեզանից, և դու անհանգիստ եղար, բայց եթե պատահեր երկա՞ր բաժանվել քեզանից։

— Ես ավելի երկար կտանջվեի,— պատասխանեց կինը։

— Եվ դու կհամբերեի՞ր մեր անջատմանը։

— Կսովորեի համբերել, եթե այդ անհրաժեշտ լիներ։

— Ի՞նչ դեպքերում դու անհրաժեշտ կհամարեիր։

— Այն դեպքերում, որ շատ անգամ պատահել է. օրինակ, եթե դու կռվելու գնայիր։

— Շուտով գնալու եմ...

Կինը չէր սպասում մի այդպիսի պատասխանի։ Նա պատրաստ էր ետ առնել յուր խոսքը, բայց արդեն ուշ էր։ Նա յուր համաձայնությունը հայտնեց, առանց կանխապես իմանալու ամուսնի դիտավորությունը։ Եվ մի մեծ բան կորցնողի նման, գլուխը խոնարհեցրած, արտասվալի աչքերով հածում էր հատակի նախշուն գորգերի վրա, թեև յուր կորցրածը գտնելու հույսից շատ հեռու էր։ Կնոջ այդ մոլորված, շվարված դրությունը սաստիկ ազդեց Մուշեղի վրա, որին առաջին անգամ էր պատահում

փորձել գեղահաս ամուսնի սրտի քաջությունը։ Նա դարձավ դեպի յուր սիրելին, ասելով.

— Սաթենի՛կ, շատով կոտրվեցար, ես քեզ այդ աստիճան թուլասիրտ չէի համարում։

— Ես թուլասիրտ չեմ,— պատասխանեց նա հեկեկալով։— Բայց ի՞նչ անեմ... երեք տարին դեռ չէ լրացել, որ մենք ամուսնացել ենք, և այն օրից, որ ես այս տունն եմ մտել, քեզ մի օր անգամ հանգիստ չեմ տեսել... Դու միշտ քո նետերով ես սրբել քո ճակատի քրտինքը[1]... Մի՞շտ կռիվ... մի՞շտ արյուն... մի՞շտ կատաղած... Ե՞րբ պետք է վերջ դրվի այդ արյունհեղություններին...

— Երբե՛ք,— պատասխանեց այրը սգալի ձայնով,— քանի որ մարդկային իրավունքը միայն սրով կչափվի...

Կինը ոչինչ չխոսեց։ Նա գլուխը դեռևս խոնարհեցրած ուներ և, կարծես, սարսափում էր նայել ամուսնի վայրացած աչքերի մեջ։

Նա շարունակեց ավելի մեղմ ձայնով.

— Ի՞նչ կանեիր դու, նազելի Սաթենիկ, երբ մի առավոտ, քո փափուկ անկողնում, քո խաղաղ քունը կխռովեցներ կատաղի խուժանի վայրենի աղմուկը, և դու գեղեցիկ աչքերդ բաց կանեիր, կտեսնեիր քո անարատ տաղավարը շրջապատված գազաններով... Քո սիրելի Մուշեղին, որի յուրաքանչյուր ժպիտը այնքան քաղցր է քեզ համար, որի յուրաքանչյուր մնչյունը անսահման ուրախություն է պատճառում քեզ,— քո սրտի հատորին կխլեին օրորոցից և կզարկեին գետնին... Քո փառավոր սենյակը կմերկացնեին յուր զարդերից, և քեզ ոտաբոբիկ ու հերարձակ կվարեին դեպի Պարսկաստան... Այնտե՛ղ, այն ստրուկների և թշվառների աշխարհում, ամեն օր վաղ-առավոտյան, անգութ վերակացուի երկաթյա մտրակը[2] կքշեր քեզ՝ ուրիշ գերիների խմբերի հետ՝ դեպի արևակեզ Սուզայի[3] դաշտերը։ Եվ դու քո քնքուշ մատներով քաղհան կանեիր պարսիկների մեկոնի (աֆիոնի) մշակությունները, որի թույնը նրանց հրապուրանք և զվարճություն է պատճառում։ Կանցնեի՞ն տարիներ, հայրենիքի փափագը, սիրելյաց կարոտը, տաժանակիր աշխատանքը հալումաշ կանեին քո մարմինն ու հոգին, և մի օր մենավոր ճանապարհորդը կանցներ քո մոտով և ուշադրություն կդարձներ թշվառ կնոջ վրա։ Այդ ժամանակ քո գոռոզ վերակացուն, մատը դեպի քեզ մեկնելով, կասեր ուղևորին. «Դա հայոց սպարապետի կինն է և Մոկաց իշխանի աղջիկը[4]»... Լսո՞ւմ ես, Սաթենիկ, թե ինչո՞ւ համար է կռիվը կամ ինչո՞ւ համար է արյունը. որ դրանք չլինեին։

Սաթենիկի մեջ եփ եկավ մայրությունը. նրա երկնագույն աչ-քերը վառվեցան, և նա բացականչեց խռովյալ ձայնով.

— Այդ երբե՛ք չէ կարող պատահել, որ իմ երեխային խլեին օրա-րոցից... Մինչև այդ կատարվելը շատ գլուխներ կծածկեին գետինը, իսկ իմը— կլիներ վերջինը...

— Կարող է պատահել, նազելի Սաթենիկ,— ասաց այրը տխուր ձայնով,— դժբախտության օրը շատ մոտ է... Դու դեռ չգիտես, թե ինչ արհավիրք է պատրաստվում մեր աշխարհի համար... Ես այս առավոտ հենց դրա վրա էի մտածում, երբ դու մտար ինձ մոտ։ Դու պետք է գի-տենաս բոլորը, որպեսզի միասին խորհենք մեր ընտանիքի ապահովու-թյան մասին։

Նա մի ըստ միոջե պատմեց կնոջը Մերուժանի և Վահանի դավա-ճանությունը, նրանց պարսից կրոնը ընդունելը և պարսից զորքերով գե-պի Հայաստան արշավելը, նրանց կատարելու չարագործությունները, մի խոսքով, բոլորը, ինչ որ գիտեր ինքը և ինչ որ հարկավոր էր հա-մարում, որ գիտենար կինը։

— Ամո՜թ, հազար ամո՜թ,— ձայն տվեց վշտացած կինը։— Բա-վական չէին արտաքին թշնամիները, այժմ թշնամին մեր միջից է առաջ գալիս...

— Այո՛, մեր միջից է առաջ գալիս...— կրկնեց Մուշեղը, գլուխը ցավակցաբար շարժելով,— և այդ պատճառով մենք, միևնույն ժամա-նակ, պետք է մղենք երկու պատերազմներ՝ արտաքին և ընտանեկան։ Արտաքին թշնամին, մեր դարևոր ոսոխը, պարսիկը, այնքան վտանգ չէ սպառնում, որքան ընտանեկան թշնամին։ Իմ հորեղբայր Վահանը այն-քան վատ գտնվեցավ, որ, իմ հոր սպարապետությանը հետամուտ լի-նելով, մատնեց նրան պարսից թագավորի ձեռքը և յուր հարազատի կորստյան գնով ստացավ նրա իշխանությունը։ Այժմ գալիս է նա։ Ես տարակույս չունեմ, որ այդ փոքրահոգին, պարսիկներին ավելի մեծ ծա-ռայություն անելու համար, հենց ինքը կմատնե ինձ, քեզ և մեր բոլորին նրանց ձեռքը...

— Այդ բոլորը իմանո՞ւմ է Սամվելը,— հարցրեց կինը։

— Իմանում է,— ասաց այրը։

— Խե՜ղճ տղա, հիմա ո՛րքան տանջվելիս կլինի... Ես առավոտյան իմ սենյակի լուսամուտից տեսա նրան, երբ գնում էր Սահակին և Մես-րոպին ճանապարհ դնելու։ Երեսին գույն չէր մնացել, այնքան տխուր էր, այնքան մաշվել էր, կարծես, ամիսներով հիվանդ պառկած լիներ։ Այդ մի քանի օրվա մեջ նա այնքան մաշվեցավ...

— Նա սատանի պզպզուն միտք ունի։ Ամեն մի վատություն նրան ցավ է պատճառում։

— Նա ի՛նչ է մտադիր անելու։

— Այն, ինչ որ մենք...— պատասխանեց այրը անորոշ կերպով և ապա խոսքը փոխեց, ասելով.

— Դու այժմ բոլորը գիտես, սիրելի Սաթենիկ։ Ես երկու օրից հետո պետք է ճանապարհ ընկնեմ։ Մենք պետք է աշխատենք չարությունը հենց յուր ծագման մեջ խեղդել։ Այսինքն, կամենում եմ ասել՝ դեռ թշնամին մեր երկիրը չմտած, նրա ճանապարհը փակել։ Բայց իմ մտատանջությունը քո և իմ զավակի մասին է, թե ի՞նչ կլինի ձեր դրությունը իմ բացակայության ժամանակ։ Դու խո լսեցիր, թե ի՛նչ որոգայթներ է պատրաստում Սամվելի մայրը։

— Լսեցի.. նա կին չէ, նա մի հրե՜շ է...— ասաց Սաթենիկը դառնացած ձայնով։

— Այո՛, հրե՜շ է... Նրա շնորհիվ մեր ամրոցը այժմ մի հրաբուխի վրա է կանգնած, որ ամեն րոպե պայթելու վրա է... Եվ այդ է, որ ինձ մտածել է տալիս՝ ձեր կյանքը փոքր ի շատե ապահով վիճակի մեջ դնել, մինչև պատերազմի փոթորիկը անցնիլը։ Բայց ես դժվարանում եմ մի ապահով տեղ գտնել։

— Ամենաապահով տեղը կլինի մեզ համար բանակը,— պատասխանեց կինը հանգիստ կերպով։

Կնոջ պատասխանը՝ թե յուր ուշիմությամբ և թե յուր այրական ներշնչմամբ՝ և՛ զարմացրեց Մուշեղին, և՛ ուրախացրեց նրան։ Այդ պատասխանի մեջ տեսնում էր նա մոկացի կնոջ քաջազնական սիրտը։

Այդ պատասխանը հարևանցիորեն կամ անպատրաստից տված չէր, այլ նա խորին կերպով մտածված էր։ Երբ Մուշեղը նկարագրեց նրան գործերի անմխիթար դրությունը, իսկույն ծագեց նրա գլխում այդ միտքը, որը ավելի պարզելու համար ավելացրեց նա.

— Դու պատմեցիր ինձ, Մուշեղ, որ Մերուժանը և քո հորեղբայրը պետք է աշխատեն ձերբակալել բոլոր նախարարների ընտանիքներին, որոնց հետ, անտարակույս, և մեզ։ Այդ դեպքում, թե մեզ համար և թե բոլոր նախարարների կանանց համար՝ ավելի հարմար է բանակի մեջ ապաստան գտնել։ Մենք մեր օրորոցներով կշրջենք բանակի հետ և մեր ձեռքով կզարմանենք մեր ամուսինների վերքերը...

Կնոջ տված խորհուրդը Մուշեղին շատ նպատակահարմար երևաց։ Ուրիշ հնար չկար. պետք է այդպես լիներ։ Նախարարները իրանց բոլոր ուժերը կենտրոնացնելով թշնամու դեմ, նրանց ամրոցները— նրանց ընտանիքների ապաստարանները— հետևապես պետք է մնային ան-

պաշտպան։ Իսկ թշնամին ամեն հնարք գործ կդներ՝ գրավելու ամրոցները։ Իսկ եթե նրանք միայն իրանց ամրոցները պաշտպանեին, այն ժամանակ պետք է առանձնանային, պետք է ընդհանուր զորությունը ջլատվեր, և երկրի սահմանները պետք է մնային բաց թշնամու առջև։

Բայց այժմ ներկայանում էր մի այլ անհարմարություն։ Ինքը Մուշեղը երկու օրից հետո պետք է թողներ յուր ամրոցը։ Եթե նա ընտանիքը յուր հետ տանելու լիներ, դրանով արդեն բացարձակ կերպով պետք է ցույց տար յուր դիտավորությունները, որ ցանկանում էր գոնե առժամանակ ծածուկ պահել։ Բացի դրանից, նրա վրա դրված էր և յուր մյուս հորեղբայրների և հորեղբոր որդվոց[5] ընտանյաց պաշտպանության հոգսը, որոնց նա յուր զավակից չէր բաժանում։

Նա կրկին դիմեց կնոջ խորհրդին։

— Մենք սովորություն ունեինք,— ասաց կինը փոքր-ինչ մտածելուց հետո,— ամեն տարի ներկա գտնվել Շահապիվանի[6] աշխարհախումբ տոնախմբությանը։ Եվ շատ անգամ գնում էինք տոնի սկսվելուց մի քանի ամիս առաջ[7]։ Այնտեղ էր լինում թագավորի բանակատեղը[8], այնտեղ էր լինում և ինքը թագավորը։ Մենք միասին էինք վայելում Ծաղկաց լեռների[9] գեղեցկությունը, մինչև սկսվում էր տոնը։ Այժմ այդ ուխտագնացությունը մի հարմար առիթ է մեզ այստեղից հեռանալու։ Դու, Մուշեղ, կարող ես գնալ, ինչպես վճռել ես, երկու օրից հետո, իսկ մենք կհետևենք քեզ մի շաբաթից հետո։

— Շատ գեղեցիկ միտք է,— ասաց Մուշեղը ուրախանալով։— Շահապիվանի սրբավայրերը շատ հեռու չեն Արտագերսի ամրոցից, իսկ մեր բանակը դրված կլինի այնտեղ...

— «Այո՛»... «այո՛»...— լսելի եղավ նախասենյակից փոքրիկ Մուշեղի ձայնը։

Այր և կնոջ խորհրդակցությունը ընդհատվեցավ։

Աղախինը ներս բերեց երեխային, ասելով, թե դրսումը չէ հանդարստանում։ Մայրը առեց նրան յուր գիրկը։ Փոքրիկ մարդը, որ ինքն էր գլխավորապես ծնողաց մտածության առարկան, ինքն ևս խանգարում էր նրանց մի որոշ եզրակացության հասնելու։

Տիկինը ակնարկեց աղախնին, որ հեռանա։

Երեխան, սողալով մոր գրկից, անցավ հոր գիրկը։ Նա բարձրացավ կլորիկ ոտների վրա և ձեռքը մեկնեց դեպի հոր երեսը, խաղում էր նրա փոքրիկ մորուքի հետ, երբեմն քաշքշում էր, երբեմն մատները տանում էր դեպի նրա շրթունքները։

— Շահապիվանի սրբավայրը,— կրկնեց Մուշեղը,— ամենահար-

մար տեղն է, որ դու հիշեցրիր ինձ, սիրելի Սաթենիկ։ Այնտեղ դու կգտնես, եթե ոչ մեր դժբախտ թագավորին, բայց անտարակույս մեր ավելի դժբախտ թագուհուն։ Քո ներկայությունը կմխիթարի նրան։ Այնտեղ է այժմ արքայական ամբողջ բանակը։ Եվ թագուհու զորքերը այնտեղից պետք է միանան մեր ուժերի հետ, որ կենտրոնանալու են Արտագերս ամրոցում։ Ուրեմն վճռված է։

Հայրը դեռ չէր վերջացրել յուր խոսքը, երբ փոքրիկ Մուշեղը երկու անգամ փռշտաց և յուր բարեգուշակ փռշտալով կնքեց վերջին վճիռը[10]...

ԺԲ

ՊԱՏԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԸ

Երեկոյան մութը բոլորովին պատել էր, բայց Սամվելը դեռ չէր վերադարձել Սահակին և Մեսրոպին ճանապարհ դնելուց։ Նրա սենյակում, միայնակ նստած, սպասում էր ծերունի Արբակը, իսկ սենյակի դռանը՝ ոտքի վրա սպասում էր պատանի Հուսիկը։ Երկուսն էլ կորցրել էին իրանց համբերությունը։ Իշխանը ուշացավ, բավական ուշացավ։

Ծերունին մի քանի անգամ վեր կացավ, ուղղեց ձիթային ճրագի պատրույգը, լույսը ավելացրեց, լույսը պակասեցրեց, բայց այդ պարապմունքը բավական չեղավ նրան զբաղեցնելու, և ձանձրույթից սկսեց անկյուններում դրած նիզակներն ու զենքերը համբարել։ Այդ հաշիվը, կարելի է ասել, նա հարյուր անգամ տեսել էր, բայց դարձյալ նորից ստուգում էր։

Պատանի Հուսիկը երբեմն ներս էր մտնում, մի որևէ հիմարություն էր ասում ծերունուն, բարկացնում էր նրան և դուրս էր գալիս։

Բայց իշխանը դեռ չէր երևում։

Կրկին հայտնվեցավ Հուսիկը և, կանգնելով ծերունու առջև, երկու ձեռքերը կանթեց կողքերի վրա և մի առանձին հեգնությամբ ասաց.

— Գիտե՞ս, Արբակ, դրսումը ի՛նչ տեսա։

— Ի՞նչ տեսար, սատանա,— հարցրեց ծերունին, յուր խոժոռ աչքերը ուղղելով դեպի պատանու խորամանկ երեսը։

— Տեսա՝ մեկը մի քանի անգամ անցավ իմ մոտով։ Ես կուչ եկա պատի տակին, նա ինձ չտեսավ և պտույտ տալով անցավ։ Նա պտըտվում էր մեր սենյակների շուրջը և անդադար նայում էր դեպի այս կողմ

և դեպի այն կողմ։ Երբեմն մոտենում էր, կանգնում էր լուսամուտի ներքև, ականջ էր դնում։ Եվ որպեսզի չնկատեն նրան, նա հեռանում էր և նորից մոտենում էր։ Երբ մի անգամ ևս հեռացավ, ես վազեցի դեպի խոհանոցը, այնտեղից վեր առի մի բավական խոշոր փայտի կոճղ, բերեցի, դրեցի ուղիղ այն գծի վրա, որտեղից նա մոտենում էր լուսամուտին։ Երբ կրկին անգամ եկավ նա, ոտը դիպավ կոճղին և մի լավ գլխակոնծի տվեց բակի սալերի վրա։ Էլ չեմ իմանում, գլուխը կոտրեց, թե քիթը, բայց մի խոր «ա՜խ»-«վա՜յ» գոչեց և կաղկղալով հեռացավ։

— Չիմացա՞ր ով էր։

— Ինչպե՞ս չիմացա, ներքինի Բաղոսն էր, տիկնոջ ներքինին։

— Այդ անպիտանին սպանելու է... շան նման սատկեցնելու է...— մռմռաց ծերունին պայրացած ձայնով։

— Նա յուր վարձը ստացավ...— պատասխանեց պատանին և դարձյալ դուրս եկավ սենյակից։

Ծերունին մնաց միայնակ։ Տխո՜ւր էր նա, տխո՜ւր, որպես արդար սրտմտություն։ Ամբողջ կես դար վկա էր եղել նա այդ տան լավ և վատ գործերին, տեսել էր նրա չարն ու բարին, ուրախացել էր նրա բախտավորության հետ, ցավակցել էր նրա դժբախտությունների հետ,— բայց երբեք նրա սիրտը այնպես դառնացած չէր եղել, որպես այդ վերջին օրերում։ Նրան դեռևս բոլորովին պարզ չէր, թե ինչ է կատարվում յուր շուրջը, բայց մի խուլ, ներքին բնազդմամբ զգում էր, որ լավ բան չէ կատարվում։ Մոր լրտեսները շրջապատում են որդու բնակարանը... որդին մորից ծածուկ գործեր է կատարում... գիշերներն անծանոթ անձինք մտնում են ամրոցը, դուրս են գալիս... մարդիկ միմյանց ականջին են խոսում... Ի՞նչ էին նշանակում այդ բոլոր կասկածոտությունները։ Ծերունին ինքն իրան հարց էր տալիս, բայց նրա պարզ և անկեղծ սիրտը մնում էր առանց պատասխանի։

Այդ մտահուզության մեջ նստած էր նա և խոժոռ դեմքով սպասում էր, մինչև նախասենյակում լսելի եղան ծանր ոտնաձայներ, դռները ետ գնացին, ներս մտավ Սամվելը, իսկ նրա ետևից՝ նրա երկու զինակիրները, որ կանգնեցին դռան աջ և ձախ կողմերում։

— Բարի երեկո, սիրելի Արբակ,— ասաց նա ուրախ ձայնով և մոտեցավ, ձեռքը դրեց ծերունու ուսի վրա, հարցնելով.— Երեկ, երկա՞ր սպասել տվի քեզ։

Երիտասարդի ուրախ տրամադրությունը փոքր-ինչ վանեց ծերունու թախծությունները, և նա, ծանրացած գլուխը վեր բարձրացնելով, հարցրեց.

— Ինչո՞ւ այդքան ուշացար։

— Հեշտ չէ բարեկամներից ու սիրելիներից շուտով բաժանվելը, հարգելի Արբակ, կերանք, խմեցինք, համբուրվեցանք, բաժանվեցանք, դարձյալ մոտեցանք, դարձյալ համբուրվեցանք և այդպես, կրկնելով ու կրկնելով, արևը մտացրինք, օրը մաշեցինք...

Նա դարձավ դեպի զինակիցները և ձեռքը շարժեց։

Նրանք գլուխ տվին և հեռացան։ Ներս մտավ Հուսիկը, կանգնեց նրանց մեկի տեղում։

— Հիմա ասա՛, Արբակ, մորս մոտ եղե՞լ ես,— հարցրեց նա և անցավ, հոգնած կերպով պառկեց յուր գահավորակի վրա։

— Եղել եմ,— պատասխանեց ծերունին,— երկու անգամ։

— Ոչ, երեք անգամ,— ընդմիջելով ուղղեց Հուսիկը։

— Հա՛, մեղա աստուծո, երեք անգամ,— շարունակեց ծերունին, ծուռ կերպով նայելով պատանու երեսին.— մեկ անգամ առավոտյան, մեկ անգամ կեսօրին...

— Մեկ անգամ էլ երեկոյան,— ծիծաղելով ավելացրեց Սամվելը։

— Հա՛, մեկ անգամ էլ երեկոյան,— կրկնեց ծերունին, զարմանալով, թե ի՞նչ մի ծիծաղելու բան կար այդ հաշվի մեջ։

Սամվելը փոքր-ինչ խմած էր, եթե ոչ, նա երբեք սովորություն չուներ կատակներ անել յուր դայակի հետ, որին չափազանց հարգում էր։ Նկատելով ծերունու վշտանալը, փոխեց նա յուր հեգնական եղանակը և բոլորովին լուրջ կերպով հարցրեց.

— Ուրեմն եղել ես մորս մոտ։ Դե՛, պատմիր, ի՞նչ պատրաստություններ է տեսել իմ ճանապարհորդության համար։ Ես առավոտյան պետք է գնամ, անպատճառ պետք է գնամ...

— Մորդ ցանկությունն էլ հենց այդ է, որ առավոտյան գնաս,— պատասխանեց ծերունին և, վեր կենալով յուր տեղից, մոտեցավ երիտասարդի գահավորակին, նստեց նրա ներքև, գորգի վրա, որպեսզի յուր ձայնը ավելի լսելի լինի։— Նա ամեն ինչ պատրաստել է տվել քո ճանապարհորդության համար։ Հիսուն երիտասարդներ, միագույն-կապուտակ նժույգների վրա նստած, ամենքը արծաթյա զեն ու զարդով, կուղեկցեն քեզ։ Տասն զույգ մույգ-դեղնագույն ջորիներ կտանեն վրանները, պաշարեղենը և հանդերձեղենի ջամադանները[1]։ Երկու սպիտակ ջորիներ կտանեն իշխանական կառքը։ Քսան ոսկեգույն նժույգներ պատրաստ կլինեն իբրև հետևակներ։ Այդ նժույգների փառավոր ասպազենքը տիկինը յուր գանձարանից է ընտրել։ Բացի հիսուն երիտասարդ թիկնապահներից, քեզ հետ կլինեն յոթն զինակիրներ, յոթն բազեակիրներ, յոթն բարակապահներ (շնապահներ) և երկու խոհարար։ Գինին, զանազան տեսակ օշարակներ, զանազան տեսակ քաղցրավենիք և անու-

շեղեններ, իրանց կարգով, դարսած են առանձին արկղների մեջ։ Մոռա-ցա ասել, որ հիսուն թիկնապահների թվում կլինի և մի սպա, որ կտանե իշխանական դրոշը, և մի խումբ թմբկահարներ ու փողհարներ։

Այդ հաշվի մեջ Արբակը չսխալվեցավ, որովհետև երբեմն նայում էր մի գրվածքի կտորի վրա, որ ձեռքումը բռնած ուներ։ Երբ ավար-տեց, Սամվելը նկատեց.

— Բավական փառավոր պատրաստություն է, միայն խի՜ստ ծանր է... Ես կցանկանայի, որքան կարելի է, թեթև լիներ իմ ասպախումբը...

— Մայրդ ցանկացել է, որ քո հոր և քո անունին պատշաճ լինի քո ասպախումբը...— պատասխանեց ծերունին մի այնպիսի ձայնով, որի մեջ լսվում էր և նրա դառն տհաճությունը։

— Իսկ իմ մարդիկներից ո՞ւմ է նշանակել։

— Ոչ ոքի։ Այդ թողել է քո կամքին, ումը կամենաս, կարող ես վեր առնել քեզ հետ։

— Իսկ դու, սիրելի Արբակ, չե՞ս գալու ինձ հետ։

— Արբակը քեզ ե՞րբ է միայնակ թողել, որ այժմ թողնե։ Նրա գլուխը պետք է այդ շեմքի տակ թաղվի[2]։

Նա ձեռքը տարավ դեպի Սամվելի սենյակի շեմքը։

Պատանի Հուսիկը կանգնած էր պատի մոտ և յուր փայլուն աչքերով երբեմն նայում էր յուր տիրոջ վրա և երբեմն ծերունի Արբակի վրա։ Նա անհանգիստ էր և անհամբերությամբ սպասում էր գիտենալ, արդյոք յուր տերը իրան ևս կտանե՞ յուր հետ։ Նրա ուրախությունն անչափ եղավ, երբ Սամվելը դարձավ դեպի ծերունին, ասելով.

— Շնորհակալ եմ իմ մորից, որ իմ մարդիկների ընտրությունը թո-ղել է իմ կամքին։ Ես բոլորին պետք է ինձ հետ տանեմ։ Կհրամայես, սիրելի Արբակ, որ ամենքը առավոտյան պատրաստ լինեն։

— Ես արդեն պատվիրել եմ,— պատասխանեց ծերունին։

Այդ միջոցին առաջ անցավ պատանի Հուսիկը և կարմրելով ասաց.

— Մի խնդիրք ունեմ, տեր իմ։

— Խոսի՛ր։

— Իմ ձիու մի ոտքը պայտելուց կաղում է։

— Արբակը կհրամայե, որ իմ ախոռատնից քեզ տան այն ձին, որը դու հավանելու լինես։

Պատանու դեմքը փայլեց ուրախությունից։

Արբակը վեր կացավ։

— Ո՞ւր,— հարցրեց Սամվելը։

— Դեռևս պակաս բաներ շատ կան, գնում եմ կարգի դնելու...

— Շնորհակալ եմ, սիրելի Արբակ, ես առավոտյան վաղ, շատ վաղ պետք է ճանապարհ ընկնեմ։

Ծերունին գլուխը խորհրդավոր կերպով շարժեց և, առանց յուր ետևը նայելու, դուրս գնաց սենյակից։

Նրա հեռանալուց հետո, Սամվելը ավելի ուրախ էր։ Յուր ճանապարհորդության պատրաստությունները թեև ոչ բոլորովին, բայց մասամբ ավելի նպատակահարմար էին կարգադրված։ Նա այդքանին ևս չէր սպասում յուր մորից։ Նա սպասում էր փառավորություն, շքեղություն, բայց չէր սպասում, որ մայրը թույլ կտար նրան՝ յուր մարդիկը յուր հետ տանելու։ Իսկ Սամվելի մարդկանց թիվը ավելի շատ էր, քան մոր նշանակածները։

Նա այժմ ոտքի վրա անցուդարձ էր անում յուր սենյակում և, ձեռքերը եռանդով շփելով, ինչ-որ հաշիվներ էր անում յուր գլխում։ Պատանի Հուսիկը, նկատելով նրա ուրախ տրամադրությունը, համարձակություն ստացավ մի այլ խնդիրքով ևս դիմելու յուր տիրոջը։ Բայց այս անգամ տատանվում էր նա, և նրա ճարպիկ լեզուն, որ խոսքի ետևից ման գալու սովորություն չուներ, այս անգամ պապանձվել էր։ Ամոթխածությունից գլուխը խոնարհեցրած, երբեմն թեքվում էր աջ ոտի վրա, երբեմն ձախ ոտի վրա, և մի-մի անգամ ձեռքը տանում էր, ականջի ետևը քորում էր։ «Ասե՞մ, թե չասե՞մ»... այդ երկու բառերն էին պտտվում նրա հուզված գլխում։

Եթե Սամվելը գեթ մի անգամ նայելու լիներ խեղճ պատանու վրա, իսկույն կնկատեր նրա անհանգիստ դրությունը, բայց Սամվելը հափշտակված էր յուր քաղցր խոկումներով և նրա վրա ամենևին ուշադրություն չէր դարձնում։

Մի քանի անգամ հազաց պատանին։ Նրա կեղծ, խորամանկ հազը գրավեց Սամվելի ուշադրությունը, որ նայելով նրա շփոթված երեսին, հարցրեց.

— Այդպես ի՞նչ ասելիք ունես։

— Ինչպե՞ս ասեմ... տեր իմ...— աչքերը գետնի ցած խոնարհեցնելով, մրմնջաց պատանին։

— Այնպես ասա, ինչպես միշտ սովորություն ունես ասելու,— խոսեց իշխանը ծիծաղելով։— Ինչի՞ց ես ամաչում։

Տիրոջ ծիծաղը ամրացրեց պատանու վստահությունը, և նա հեկեկալով ասաց.

— Այսօր ամբողջ օրը լաց էր լինում «նա»...

— Ո՞վ, Նվա՞րդը։

— Այո՛, տեր իմ։
— Ինչո՞ւ էր լաց լինում։
— Նա իմացել է, որ ես գնալու եմ իմ ախպոր հետ...
— Եվ ափսո՞ս է։
— Ո՛չ, տեր իմ։ Ես խոսք էի տվել...
— Ի՞նչ խոսք էիր տվել։
— Որ այդ օրերում...
— Կպսակվեք։ Այդպես չէ՞։
— Այո՛, տեր իմ։
— Հիմա ի՞նչ ես ուզում.— կամենում ես մնա՞լ, պսակվե՞լ։
— Ոչ, տեր իմ. ես նրան դեռ նշան էլ չեմ տվել։
Սամվելը, մի փոքր մտածելուց հետո, հանգստացրեց նրան, ասելով.
— Դու քո խոստմունքի կեսը այժմ կարող ես կատարել։ Նշանը կտաս, իսկ պսակվելը կմնա մեր վերադառնալուց հետո։ Դեռևս չգիտեմ, թե երբ կվերադառնանք... Բայց երբ էլ որ լինի, ես քեզ անպատճառ պսակել կտամ Նվարդի հետ։ Նա լավ աղջիկ է, նա այդ օրերում մի քանի լավ ծառայություններ արեց ինձ, և այդ պատճառով իմ կողմից առանձին վարձատրության արժանի է։ Երբ Սրբակը կգա, կասեմ նրան, որ իմ գանձից տանե նրա համար ամենաթանկագին նշաններ։
Խեղճ պատանին չգիտեր՝ ինչպես հայտներ յուր շնորհակալությունը։ Ուրախության արտասուքը աչքերում, մոտեցավ, ընկավ յուր տիրոջ ոտքերը, կամենում էր համբուրել։ Սամվելը հեռացրեց նրան, ասելով.
— Վե՛ր կա՛ց, որքան Նվարդը լավ աղջիկ է, այնքան և դու լավ ու[illegible]ավոր ես։
Այդ միջոցին դռները շտապշտապ ետ գնացին, ներս վազեց պատանի Արտավազդը, Մամիկոնյան Վաչեի որդին[3]։ Նա գրկեց Սամվելի պարանոցը և, գեղեցիկ գլուխը դնելով նրա երեսի վրա, խորին հրճվանքով բացականչեց.
— Ա՜խ, եթե գիտենայիր, Սամվե՛լ, ո՛րքան ուրախ եմ... ո՛րքան ուրախ եմ... չեմ կարող պատմել...
— Այդ ի՞նչն է այդքան ուրախացրել քեզ,— հարցրեց Սամվելը, դժվարությամբ ազատվելով աշխույժ պատանու գրկից։
— Նստենք, կպատմեմ։ Սաստիկ հոգնել եմ, սաստի՜կ...
Երկուսն էլ նստեցին բազմոցի վրա։ Պատանին մինչև ականջները կարմրել էր։ Երևում էր, որ իրանց տնից մինչև Սամվելի բնակարանը անդադար վազելով էր եկել։ Մի փոքր շունչ առնելուց հետո, խոսեց.
— Այս առավոտ միայն ինձ ասեցին, որ դու գնալու ես հորդ դիմավորելու։ Մտածեցի. ինչո՞ւ պետք է Սամվելը գնա, իսկ ես չի պիտի

գնամ։ Իսկույն վազ տվի Մուշեղի մոտ, ձեռքը համբուրեցի, ոտքը համբուրեցի, վերջապես նրա հաճությունը առի։ Հետո վազ տվի քո մոր մոտ. նրա էլ գլխից սկսած մինչև ոտքերը համբուրեցի։ Նա էլ կամք տվեց։ Մնում էր իմ մայրը։ Դրան համբույրներով համոզել՝ փոքր-ինչ դժվար էր։ Ջուր տվի լեզվիս. «Գիտե՞ս, ասեցի, Միրուժանը գալիս է, Վահանը գալիս է. նրանց հետ լինելու են պարսից թագավորի մեծամեծ զորապետները. պետք է երևալ բանակի մեջ, պետք է ցույց տալ իրան։ Այնտեղ հավաքվելու են բոլոր նախարարների որդիները։ Ես ո՞րից եմ պակաս թե իմ նետ նետելով և թե իմ նիզակ շարժելով...»։ Մի խոսքով, էլ բան չմնաց, որ չասեցի։ Դու գիտես, որ մայրերը փառասեր են լինում, մանավանդ որդիների վերաբերությամբ։ Նա բարեհաճեց, որ ես էլ երևամ նախարարների որդիների մեջ և զարմացնեմ պարսիկներին։ Լավ չե՞մ արել։

— Վատ չէ,— պատասխանեց Սամվելը,— թեև սուտեր շատ ես խոսել։

— Ոչ, սատանան է վկա, սուտ չեմ ասել, բայց մի փոքր պարծեցել եմ,— ասաց պատանին, ավելի կարմրելով։— Ի՞նչ պետք է անել, մարդ ուզում է՝ դուրս գա, աշխարհ տեսնի, բայց դրանք, կույր աղջկա նման, հենց տանն են պահում։ Ես խո պստիկ չեմ, մի տարի էլ անցնի, բեղերս դուրս կգան... Այն ժամանակ կասեն՝ «դու մարդ ես...»։ Հիմա ինձ մարդու տեղ չեն դնում... Այս գիշեր չեմ քնելու,— խոսքը փոխեց նա,— մինչև լույս չեմ քնելու։ Երբ առավոտյան տեղ եմ գնալու, գիշերը քուն չէ տանում։ Պետք է ամեն ինչ պատրաստել տամ, ամեն ինչ...

Այդ շատախոս պատանին, որին առաջին անգամ տեսանք Մուշեղ իշխանի պարտեզում, Համազասպ մանուկի հետ նետաձգության փորձեր անելիս,— այդ կյանքով և կրակով լի պատանին ոչ սակավ հարգելի պատճառներ ուներ մասնակցելու Սամվելի արշավանքին։ Բայց Սամվելին սկսեց անհանգստացնել այն միտքը՝ արդյոք այդ անփորձ և պարզամիտ մանուկը իրան չէ՞ր խանգարի... արդյոք նա մի անխուսափելի ծանրություն չէր դառնա յուր համար... Այդ տարակուսանքները էին պատճառը, որ Սամվելը դժվարացավ պատասխանել, երբ պատանին, նրա երկու ձեռքերը առնելով յուր ափերի մեջ, մոտեցրեց յուր շրթունքներին, հարցնելով.

— Բոլորի հաճությունը ստացել եմ, սիրելի Սամվել, մնում ես դու, ասա՛, հոժա՞ր ես, որ ես էլ գամ քեզ հետ։

Երբ Սամվելը յուր պատասխանը ուշացրեց, նա ավելացրեց, ասելով.

— Եթե դու չհամաձայնվես, ես առանց քեզ էլ կգնամ...

Պատանու ինքնավստահությունը փոքր-ինչ չափազանց էր։ Բայց

Սամվելին հայտնի էր նրա անսանձ, անզուսպ բնավորությունը։ Իրավ, եթե Սամվելը նրան յուր հետ տանելու չլիներ, նա այնպես էլ կգնար։

Մի միտք ծագեց Սամվելի գլխում. «Դա ինձ հարկավոր կլինի...». և իսկույն գրկեց նրան, ասելով.

— Մի՛ վշտացիր, սիրելի Արտավազդ, դու իմ ասպախումբի զարդը կլինես, ես առանց քեզ մի քայլ անգամ չեմ փոխի, գնա՛, պատրաստվի՛ր։

Գառանին վեր կացավ և, ուրախությունից մոռանալով մինչև անգամ բարի գիշեր ասել, դուրս վազեց սենյակից։ Նախասենյակում լապտերը ձեռին սպասում էր նրա ծառան։ Նա շտապելով թողեց ծառային և անցավ։ Ծառան լապտերը տանում էր նրա ետևից և դժվարանում էր հասնել։

Երեք օր անցել էր այն գիշերից, որ երկու սուրհանդակները մտան Ողական ամրոցը, բերելով Տիզբոնի բոթը։

Երեք օրից հետո դուրս եկան Ողական ամրոցից երկու եղբոր որդիները.—

Սամվելը առավոտյան, յուր փառավոր ասպախումբով, հանդիսավոր կերպով.

Իսկ Մուշեղը գիշերով, միայն երկու զինակիրների հետ, գաղտնի կերպով...

ՓԱԿԱԳԾԻ ՄԵՋ

I

ԲՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱԳԱՎՈՐ

Երկիրը լեռնային էր։

Լեռնային անընդհատ շղթաները, իրանց բազմաթիվ ճյուղավորությամբ, կտրատել էին անհավասար մակերևույթը, կազմելով մի հսկայական ցանց։ Այդ ցանցի մանր և անձուկ հյուսվածքի մեջ սեղմված էին խորին ձորեր, մթին հովիտներ և նեղ դաշտեր։ Այդ ձորերը, այդ հովիտները, այդ դաշտերը ներկայացնում էին մի-մի գավառ, որ բաժանված էին բնական սահմաններով։

Լեռնային ցանցի հյուսվածքի թվով բազմանում էր և գավառների թիվը։ Որքան շատ մասնատված էր երկրի մակերևույթը, այնքան շատ տրոհվում էին և գավառները։ Այդ պատճառով Հայոց աշխարհը այն անզուգական երկրներից մեկն էր, որ այնքան փոքր տարածության վրա ուներ այնքան բազմաթիվ գավառներ։

Գավառները բոլորովին անջատված էին միմյանցից և համարյա զուրկ էին հաղորդակցությունից։ Լեռը անմատչելի պատնեշ էր դրել նրանց մեջ, իսկ ձորը՝ անանցանելի խրամատ։

Մարդը մեծ դժվարություններ ուներ բնության խստությունների հետ մաքառելու։

Ապառաժների կուրծքի վրայով, ներքևում անդնդային խորություն, որտեղից հազիվ լսելի էր լինում անցնող գետի խուլ դղրդյունը,— վերևում՝ քարշ ընկած ժայռեր, որ ամեն րոպե սպառնում էին խորտակվել և ամեն ինչ ծածկել իրանց ահարկու փլատակների ներքո,— բնության այդ սոսկալի կատաղության մեջ մա՛րդը, լեռնային մարդը, միայն նա՛ կարողացել էր յուր համար ճանապարհ բաց անել և մրցել վայրենի այծյամների հետ։

Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները[2]։ Նրանց մեջ մարդիկ աճում էին հսկա ծառաստանի հետ, կերակրվում էին նրանց պտուղներով և իրանց սաղարթախիտ աշխարհի սահմաններից դուրս՝ մի այլ աշխարհ չէին ճանաչում։

Այդ անտառներին մերձենալիս մարդիկ այնքան չէին վախենում գազաններից, որքան նրանց մեջ որջացած բնակիչներից։

Լեռների ու անտառների հորինած դժվարությունների պակասը, հաղորդակցության վերաբերությամբ, լրացնում էին գետերը։ Նրանք անցնում էին խորին, քարեղեն հատակի վրայով և երկու կողմից պարիսպների նման բարձր, ժայռոտ եզերքի միջով։ Սեղմված իրանց նեղ ափերի մեջ, կատաղությունից գոռում, գոչում, որոտում էին նրանք և փրփրադեզ հորձանքներով զարկվում էին անխորտակելի ապառաժներին, որ փոքր-ինչ լայնացնեն իրանց ուղին, որ փոքր-ինչ ազատ ընթացք ստանան։ Երասխի ահարկու «սահանքները[3]» ամեն մի ճանապարհորդի վրա սարսափ էին ձգում։

Լեռների և ձորերի անձկության մեջ հայոց գետերը անհամբեր էին նավարկության։ Նրանք թույլ էին տալիս իրանց վրա նավակներ այն ժամանակ միայն, երբ դուրս էին գալիս կիրճերի և փապարների խորքից, երբ ընթանում էին հարթ դաշտերի միջով և երբ խաղաղ ու հանդարտ հոսանքով մոտենում էին ծովերին։

Հայոց գետերի հինգ մեծամեծ նահապետները — Տիգրիս, Եփրատ, Կուր, Երասխ, Փասիս — անհամբեր էին և կամուրջների։ Արհեստը դեռ անզոր էր զսպել նրանց յուր հոյակապ կամարների ներքո։ Այդ էր պատճառը, որ Օգոստոս կայսրի կառուցած կամուրջը Երասխի վրա՝ համարվեցավ մի հրաշալիք, որ առիթ տվեց Վիրգիլիոսի երգերին[4]։ Իսկ պարսից Կյուրոս թագավորի կառուցած կամուրջը նույն գետի վրա համարվեցավ աստուծո գործ[5]։ Արտաշատ քաղաքի մոտ գտնված ամենահին կամուրջը, որ կոչվում էր Տափերական[6], սկզբում տիկերի մի շարվածք էր, որ պահվում էր միայն գետի խաղաղ ժամանակը։

Հաղորդակցության ոչ սակավ արգելք էր լինում ձմեռը,— Հայոց աշխարհի երկարատև ձմեռը։

Դեռ հոկտեմբեր ամսում, շատ տեղերում, մանավանդ բարձրավանդակների վրա, թանձր ձյունը ծածկում էր հովիտները, լցնում էր ձորերի խորքերը, անհետացնում էր բոլոր ճանապարհները և կտրում էր ամեն հարաբերություն։ Ճանապարհորդները, երկար ձողերը ձեռքներին բռնած, այնպես էին շրջում, որպեսզի ձյունի հյուսի տակ ծածկվելու ժամանակ, ձողերի գլուխը դրսում մնալով, խնդրակները գիտենային, որ տակումը մարդիկ են թաղված[7]։ Այդ ձողերը ունեին և այլ հարմարություններ։

Նրանց վրա հենվելով, թաշում էին խորին վիհերից, և նրանցով ձյունի տակից ծակ էին բաց անում շունչ առնելու համար։

Ձյունի վտանգներին ենթարկվում էին ոչ միայն հասարակ մահկանացուներ, այլ թագավորներն անգամ։

Սանատրուկ թագավորը, տղայության ժամանակ, երեք օր և երեք գիշեր մնաց ձյունի տակ, յուր դայակի գրկում։ Խնդրակների սպիտակ շունը գտավ նրանց և հսկեց նրանց մոտ այնքան ժամանակ, մինչև մարդիկ եկան և դուրս հանեցին[8]։ Տիրան Ա. թագավորը բոլորովին անհետացավ ձյունի հյուսի տակ. նրան գտնել չկարողացան[9]։ Քսենոփոնը հունաց տասն հազարի հետ՝ հայոց երկրով անցնելու միջոցին՝ սառցըրեց յուր զինվորների ոտներն ու ձեռքերը, թեև ձմեռը դեռ նոր էր սկսվել։ Յուր բանակի ձիաների ոտներն անգամ պատեց նա սաքե պարկերի մեջ, բայց հնար չեղավ ցրտից ազատելու[10]։ Արտավազդ Ա-ի օրերում՝ հայոց ձմեռը կոտորեց Անտոնիոս հռոմայեցու զորքերից 8000 հոգի, երբ նա վերադառնում էր պարսից արշավանքից[11]։

Սարսափելի էր հայոց բուքը, բորանը։

Դառնաշունչ քամին կատաղաբար տեղափոխում էր ձնային ահագին բլուրները և օդը մթնեցնում էր սառցային թանձր փոշիով։ Այդ օրհասական րոպեներում ամեն շնչավոր թաքստի տեղ էր որոնում։ Մեծ ճանապարհների վրա, վտանգավոր տեղերում, քարավանների պատսպարության համար՝ շինված էին հատուկ պանդոկներ[12]։ Բայց այդ փոթորիկների միջոցին՝ խիստ սակավ էր պատահում, որ քարավանը ժամաներ յուր փրկության իջևանին։ Շատ անգամ, մի քանի քայլ հեռավորության վրա, ծածկվում էր ձյունի թանձրության ներքո։

Լեռնային կողմերում տարվա համարյա կես մասը շինականները իրանց անասունների հետ ապրում էին ձյունի տակ, մթին, գետնափոր խրճիթներում։ Այդ ստորերկրյա խորշերում՝ թե՛ մարդը և թե՛ անասունը բավական պաշար ունեին։ Բայց սովը և անասունների կոտորածը միշտ անխուսափելի էր դառնում, երբ ձմեռը սովորականից ավելի երկար էր տևում։ Ջուրը ստանում էին նրանք հալեցրած ձյունից, իսկ անասունների համար ճարակ չէին գտնում։

Գարնան արեգակը բերում էր յուր ջերմության հետ հեղեղներ։ Պղտոր, աղմկալի վտակներով լցվում էին ձորերը և հաղորդակցությունը ավելի դժվարանում էր։ Այդ ժամանակ, սարերի ստորոտներում, սպիտակ, ձյունապատ տափարակները սկսում էին հետզհետե սևանալ և ապա ծածկվում էին սքանչելի կանաչազարդությամբ։ Ծիծեռնակի ձայնի հետ՝ լսվում էր նորածին գառնուկների պառանչը։ Հովիվները իրանց վրանները զետեղում էին ծաղկազարդ արոտամարգերի վրա։

ժամանում էր ամառը։

Սարերի ներքևում, սարահարթերի վրա, հասունանում էր նուռը, թուզը, ձիթենին։ Ոսկեգույն սաթի նման փայլում էին խաղողի ողկույզները։ Եվ շիկահեր կույսի գիսակների նման ծփում, ծածանվում էին ծանրացած հասկերը։— Իսկ այնտեղ, վերևում, բարձրությունների վրա, դեռ նկարված էին ճերմակ գագաթները, և լայն, թանձրախիտ շերտերով մնում էր անշարժ սառնամանիքը ապառաժների հավիտենական խոռոչների մեջ։

Հովիտների մեջ, ցած և դուրան տեղերում, ամառնային տոթն ու տապը ավելի անտանելի էր լինում, քան ձմեռային ցուրտը։ Արեգակը այրում էր, երկինքը կրակ էր թափում։ Մարդիկ, որ սովորած էին ձմեռվա ցրտից պատսպարվելու համար թաքչել գետնափոր խրճիթներում, այժմ արևի կրակից ազատվելու համար, իրանց անասունների հետ, հեռանում էին դեպի լեռների հովասուն բարձրությունները։ Եվ այսպես, յուրաքանչյուր տարվա ընթացքում կատարվում էր մի տեսակ գաղթականություն— ջերմից դեպի ցուրտը, իսկ ցրտից դեպի ջերմը։ Բայց ամեն մի հասարակություն յուր գավառի սահմաններից չէր դուրս գալիս։

Բնությունն այս տեսակ խիստ, միմյանցից տարբեր և միմյանց հակառակ ծայրահեղությունները ստեղծեցին նույնպես խիստ և ծայրահեղ բնավորություններ։ Այդ էր պատճառը, որ հայոց աշխարհի բարքը, վարքը, սովորությունները, կենցաղավարության եղանակը, և առհասարակ նրա հասարակական կազմակերպությունը՝ յուր բոլոր երևույթներով, հետևանք էր երկրի բնական պայմանների։

Գետերը, մեծամեծ լճերը, լեռնային շղթաները՝ իրանց բազմաթիվ ճյուղավորությամբ՝ կտրատեցին երկրի մակերևույթը, ստեղծելով բազմաթիվ մանր մասնիկներ, որոնց յուրաքանչյուրը ներկայացնում էր մի-մի գավառ, որ բաժանված էր բնական սահմաններով։

Տրդատի օրերում գավառների թիվը հասնում էր 620-ի[13], Իսկ Արշակ Բ-ի օրերում նրանց թիվը հասնում էր մինչև 900-ի[14],

Նրանցից յուրաքանչյուրը մի-մի իշխանություններ էին, որ ապրում էին իրանց տարբեր կյանքով և իրանց տարբեր սովորություններով, որքան տարբերվում էր մի գավառ մյուսից յուր տեղական պայմաններով։

Անշարժությունը, հաղորդակցության դժվարությունը, ինչպես տեսանք վերևում, ավելի ևս զարգացնում էին նրանց մեջ տեղական հատկանիշ առանձնությունները։ Երկրի անփոփոխ դրությունը պահպանում էր անփոփոխ սովորություններ։ Դրա հետևանքը լինում էր կրթության և հառաջադիմության դանդաղկոտությունը։ Մի գավառացին մյուս գավառացու լեզուն չէր հասկանում, թեև երկուքն էլ եղբայրներ էին։

Շահերի տարբերությունը առաջ էր բերել և իշխանության տարբերություններ։ Ամեն մի գավառ յուր առանձին կառավարությունը, յուր օրենքներն և ավանդություններն ուներ։

Այդ իշխանությունները կոչվում էին **նախարարություն**[15]։

Որքան գավառներ կային, այնքան և նախարարություններ կային։ Դարերի ընթացքում, զանազան քաղաքական հանգամանքների պատճառով, նրանց թիվը կամ ավելանում էր, կամ պակասում էր։

Նախարարությունների ներկայացուցիչները կոչվում էին **նախարար**։

Ամեն մի նախարար յուր երկրի բացարձակ տերն էր։ Նրա իշխանությունը ժառանգաբար անցնում էր սերունդից սերունդ։

Նախարարների հարաբերությունները դեպի Հայաստանի արքան ստորադասական էր։ Նրանք վճարում էին արքունի գանձարանին մի որոշյալ հարկ, պարտավորված էին որոշ թվով զորք պահել, պատերազմի ժամանակ օգնել թագավորին, իսկ խաղաղության ժամանակ՝ պահպանել տերության սահմանները։ Յուրաքանչյուր նախարար հսկում էր այն սահմանների վրա, որ մոտ էր յուր իշխանության երկրին։

Արտաշես Բ-ը առաջինը եղավ, որ նախարարությունների սահմանները որոշեց, գծերի վրա քարյա սյուներից նշաններ դրեց և յուրաքանչյուր ժառանգության չափը արձանագրեց արքունի դիվանագրքերի մեջ[16]։ Իսկ Տրդատ Մեծը որոշեց նրանց պարտավորությունները երկրի սահմանագլուխները պահպանելու վերաբերությամբ[17]։

Առհասարակ Հայաստանի սահմանների մոտ եղած նախարարությունները ավելի ընդարձակ և ավելի զորեղ էին, քան թե կենտրոնում կամ, որպես կոչվում էր, միջնաշխարհում գտնվածները։ Սահմանագլխի նախարարներից ոմանք տիրում էին մի քանի գավառների։

Նախարարական տներից շատերը վայելում էին առանձին արտոնություններ՝ թե կառավարության գործերում և թե թագավորի արքունիքում։ Օրինակ, թագավորի երկրորդականը ընտրվում էր Մուրացան նախարարությունից[18], թագավորի հանդիսավոր թագադրության օրում, թագադիր ասպետը ընտրվում էր Բագրատունյաց նախարարությունից[19], թագավորի պալատի ներքինապետը ընտրվում էր Մարդպետական նախարարությունից[20], զորքերի ընդհանուր սպարապետը ընտրվում էր Մամիկոնյան նախարարությունից[21]։ Կային այլ նախարարություններ ևս, որոնց արտոնական պաշտոններն էին զանազան պալատական ծառայություններ[22]։

Ամեն մի նախարարություն, առանձին վերառած, մի ամբողջական իշխանություն էր։ Իշխում էր տոհմի ավագը, որ կոչվում էր **նահապետ** կամ **տանուտեր**։ Իսկ նախարարական տան մյուս ժառանգները միայն

վայելում էին երկրի հասույթները՝ կամ թոշակներով և կամ հողային բերքերով։ Դարերի ընթացքում իշխանական գերդաստանի անդամների թիվը հետզհետե բազմանալով, շատ հավանական է, որ երկրի հասույթները անբավարար կլինեին գոհացնելու բոլորին։ Այդ դեպքում խիստ հաճախ էր պատահում, որ նախարարները նոր տիրապետություններ էին անում, խլելով իրանց դրացիների հողերը։ Ներքին կռիվը և արյունհեղությունը անցնում էր սերնդից սերունդ, որ շատ անգամ պատճառ էր տալիս ամբողջ նախարարական տոհմերի բնաջինջ լինելուն։ Տրդատի վախճանվելուց հետո, Բզնունյաց, Մանավազյանց և Որդունյաց նախարարները, միմյանց հետ պատերազմելով, համարյա թե ոչնչացրին միմյանց ցեղերը[23]։

Թագավորը, ըստ կալվածական ժառանգության, համարյա մի մեծ նախարար էր։ Նա սեփականել էր իրան ամբողջ Արարատը— երկրի սիրտը։

Արարատը, որպես արքայական կալվածք, անբաժանելի էր։

Արարատում բնակվում էր Թագավորը և Թագաժառանգը միայն։ Իսկ արքայական տան մյուս ժառանգներից ոչ ոք իրավունք չուներ Արարատում բնակվելու։ Նրանց համար որոշված էին առանձին գավառներ։ Դա Արշակունիների մեջ օրենք էր[24]։

Հաշտենից, Աղիովտի և Առբերանի գավառները իրանց բոլոր հասույթներով հատկացրած էին Թագավորազների կեցության համար։ Այդ երեք գավառներում նրանք այնքան բազմացել էին, որ հողերը մինչև անգամ անբավական էին նրանց վայելչությունները գոհացնելու համար։ Այդ պատճառով միշտ բողոքում էին, թե իրանց տեղը նեղ է, և Թագավորից նոր հողեր էին խնդրում[25]։

Հայոց պատմության մեջ մի նշմար անգամ չենք տեսնում, որ Արշակունի Թագավորազները կառավարության որևէ պաշտոնում ընդունվեին։ Նրանց չենք տեսնում և զինվորական ծառայության մեջ։ Նրանք դատապարտված էին մշտական անգործության։ Նրանց ընծայել էին ընդարձակ գավառներ, տալիս էին գանձարանից առատ ռոճիկներ, որ վայելեն, որսորդություններով և զանազան զվարճություններով զբաղված լինեն և մի այլ փառասիրության չձգտեն։— Այդ՝ յուր ժամանակի քաղաքականությունն էր, որպեսզի գահին հետամուտ չլինեն։ Ապրելով բոլորովին մեղկ և աննպատակ կյանքով, նրանց մեջ սպանվում էին ամեն բարձր և քաջազնական գաղափարներ։

Եվ այսպես, Թագավորը սեփականել էր իրան Արարատը և Թագաժառանգի հետ բնակվում էր այնտեղ՝ յուր մայրաքաղաքում։ Մյուս Թագավորազները իրավունք չունեին Արարատում բնակություն հաստատելու։ Նրանց համար նշանակված էին առանձին գավառներ։

Արշակունի թագավորազուներից մեկը միայն, Արշակ Բ-ի եղբոր որդի Գնելը համարձակվեցավ բնակություն հաստատել Արագածում (Արագած լեռան ստորոտում) և յուր վարմունքով գրգռեց Արշակի կասկածանքը և նույն կասկածանքին զոհ դարձավ[28]...

Թագավորազնների բազմանալը մի կողմից, նախարարությունների բազմությունը մյուս կողմից, գրավել էին երկրի մեծ մասը և սպառում էին նրա արդյունքները ի վնաս արքունի գանձարանի։

Թագավորին մնացել էր մի գավառ միայն — Արարատը։

Մի այսպիսի պետական կազմակերպության մեջ, երբ ուժը հողի ընդարձակության և հողի վրա ապրող բնակիչների բազմության չափովն էր չափվում, շատ հասկանալի է, որ նախարարների հավաքական զորությունը ոչ միայն կարող էր ճնշում գործ դնել թագավորի վրա, այլ նրա վիճակը ամեն րոպե կարող էր յուր ձեռքում պահել։ Զորք ամեն մի նախարար ուներ, և ոմանց զինվորական ուժը ավելի բարձր էր, քան Արարատյան զինվորությունը։

Մյուս կողմից, այնքան բազմաթիվ նախարարություններ, բաժան-բաժան եղած միմյանցից, որոնց յուրաքանչյուրը կենտրոնացած էր յուր մեջ, ապրում էր յուր տարբեր շահերով, ուներ յուր վաղեմի, ավանդական ինքնակայությունը,— շատ պարզ է, որ այդ մասնատյալ իշխանություններից չէր կարող կազմվել մի ամփոփ, ամուր, միահեծան պետություն։

Արշակունյաց վերջին թագավորները զգում էին, թե ի՛նչ բանի մեջն է իրանց տկարությունը, և պետությունը մի ամբողջական և ուժեղ կազմության վերածելու նպատակով սկսեցին փոքր առ փոքր ոչնչացնել նախարարների իշխանությունը։

Գործերի դրությունը, շրջապատող հանգամանքները և իրանց— թագավորների— հանապազ ընդհարումները նախարարների հետ, նրանց այդ բնական շավղի մեջ դրին։

Այդ գաղափարը ծագեց Արշակունի թագավորների մեջ սկսյալ այն օրից, երբ քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստանում։ Տրդատը առաջինը եղավ, որ ոչնչացրեց Սլկունյաց զորեղ նախարարությունը և Տարոնը խլեց նրանցից[27]։ Բայց մեծ թագավորը, զբաղված լինելով Հայաստանի կրոնական վերանորոգության մեծ գործով, ժամանակ չունեցավ իրագործելու նրա քաղաքական վերանորոգության ավելի ծանր գործը։

Տրդատ մեծի երեք հաջորդները՝ Խոսրով Բ, Տիրան Բ և Արշակ Բ՝ ավելի առաջ տարան նրա սկսած գործը։

Տրդատ մեծի որդի Խոսրով փոքրը թեև ոչ հոր հսկայական ուժերն ուներ և ոչ նրա անպարտելի քաջությունը, բայց խելացի մարդ էր։ Նախարարների վերաբերությամբ ձեռք առեց նա երկու միջոցներ՝ խիստ և մեղմ։ Խիստ էր նա, երբ Աղձնյաց Բակուր բդեշխին սպանել տվեց, նրա ցեղը ջնջեց և, նրա երկրում շատ կոտորածներ կատարելուց հետո, նրա որդի Հեշային բազմաթիվ գերիների հետ տարագրեց Աղձնիքից[28]։ Բայց նրա գործ դրած մեղմ միջոցները ավելի քաղաքագիտական էին և ավելի կործանարար կարող էին լինել նախարարների համար, եթե Խոսրովը երկար ապրեր։ Նա թագավորեց 9 տարի միայն։ Նա մտածեց՝ ավագ նախարարներին կապել արքունիքի հետ և պալատական պաշտոններով մեղկացնել, տկարացնել նրանց։ Այդ նպատակով հրատարակեց մի նոր օրենք, որ հազարից մինչև տասն հազար (մի բյուր) զորք ունեցող նախարարները պետք է միշտ թագավորի մոտ լինեն և նրանից չհեռանան[29]։ Եվ որպեսզի նրանց զբաղեցնե, Խոսրովը Երասխի զվարճալի ափերի մոտ հիմնեց Դվին քաղաքը, յուր արքունիքը տեղափոխեց այնտեղ, իսկ քաղաքից ոչ այնքան հեռու, Ազատ գետի ամբողջ հովիտը ծածկեց ձեռատունկ անտառներով, որ կոչեց յուր անունով Խոսրովակերտ։ Այդ անտառները լցրեց զանազան տեսակ որսի անասուններով։ Այդ անտառների մեջ հիմնեց այն շքեղ ապարանքը, որ կոչվում էր Տիկնունի։ Գեղեցիկ տիկինների մի դրախտ էր այդ հրաշալի ապարանքը յուր հովանավոր ծառաստանով և յուր մշտանվագ ցնծություններով։ Այնտեղ պատրաստ էր նախարարների համար ամեն տեսակ բավականություն, ամեն տեսակ զվարճություն։ Այնտեղ հրապուրանքը, պալատական մեղկությունը մաշում, սպանում էր ամեն տիրապետական զգացմունք։ Իսկ այդ երկար չտևեց։ Խոսրովի մահից հետո նրա հղացած գաղափարը յուր հետ մեռավ[30]։

Խոսրովի որդի Տիրան Բ-ը հոր խաղաղ քաղաքականությանը չհետևեց։ Նա անխնա ձեռքով կոտորել տվեց մի քանի նախարարական ցեղեր և մանավանդ երկու ավագ նախարարությունների տոհմեր, որպիսիք էին Արծրունիները և Ռշտունիները։ Կոտորածի միջոցին Մամիկոնյան երկու եղբայրներ, մերկ սրերը ձեռներին, հարձակվեցան դահիճների վրա և կարողացան ազատել երկու տոհմերից երկու մանուկներ միայն՝ Շավասպ և Տաճատ[31]։ Տիրանը այդ ներքին կռիվը ավելի առաջ տանել չկարողացավ, որովհետև նրա թագավորությունն էլ հոր նման կարճատև եղավ — 11 տարի։ Իսկ յուր վարմունքով առիթ տվեց նա նախարարների իրանից հեռանալուն և յուր լքյալ և անօգնական մնալուն։ Այդ անպաշտպան դրության հետևանքը եղավ նրա պարտությունը՝ նախ հռո-

մեյներից և ապա պարսիկներից։ Վերջինները զրկեցին նրան թե աչքերից և թե գահից[32]։

Տիրանի որդի Արշակ Բ-ը վճռեց վերջացնել այն, ինչ որ սկսել էին յուր նախորդները։ Նա բացարձակ պատերազմ հայտնեց նախարարների դեմ։ Բայց նախքան պատերազմը սկսելը նրան հարկավոր էր մի ամուր նեցուկ, որի վրա հենվեր նա, այլ խոսքով, նրան հարկավոր էր մի զորեղ կուսակցություն։ Նախարարներից անհնար էր այդ կուսակցությունը ստեղծել, որովհետև բոլոր նախարարները միաբանված էին նրա դեմ։ Իսկ Արարատը միայնակ բոլոր նախարարների հետ մաքառելու չափ ուժ չուներ։ Հանճարեղ թագավորը մտածեց յուր կողմը ձգել եթե ոչ ամբողջ ժողովուրդը, գոնե նրա միջի դժգոհներին,— նրանց, որ հալածված և տանջված էին նախարարներից։ Այդ նպատակով հիմնեց Մասիս լեռան ստորոտում մի ապաստանի քաղաք, որ յուր անունով կոչեց Արշակավան։ Երբ քաղաքը պատրաստ էր, հրաման արձակեց, թե ամեն ոք՝ եթե այդ քաղաքը մտնելու լինի, կազատվի թե օրենքից և թե դատաստանից։ Շուտով քաղաքը և Կոգ գավառի ամբողջ հովիտը, ուր գտնվում էր Արշակավանը, լցվեցավ բազմաթիվ գաղթականներով։ Այնտեղ ապաստան գտան նախարարներից հարստահարվածները, նախարարներից նեղվածները։ Այնտեղ ապաստան գտան բոլոր դժգոհները, բոլոր բողոքողները։ Այնտեղ ապաստան գտան նաև զանազան հանցավորներ, զանազան դատապարտյալներ։ Երկրի դառնությունը, երկրի դարևոր վրեժխնդրությունը՝ բռնության և կոպիտ ուժի դեմ՝ այնտեղ գումարվեցավ։ Այնտեղ գումարվեցավ մեղքը, հանցանքը, որ առաջ էր եկել բռնավորների անզուսպ կամայականությունից։ Ամենափոքր ժամանակում քաղաքը ունեցավ մինչև քսան հազար երդ բնակիչներ[33]։

Այդ մարդիկը ամենքն էլ նախարարների հպատակներից էին։ Այդ վշտացած և, միևնույն ժամանակ, ծայրահեղ մարդիկը Արշակի ձեռքում մի զորեղ ուժ էին նախարարներին դեմ դնելու համար։

Նախարարները զգացին այդ, մանավանդ երբ տեսնում էին, որ իրանց հպատակներից ոչ միայն դժգոհները, այլ ամեն ոք հաճությամբ կտեղափոխվեր այն ազատ քաղաքը, ուր ոչ հարկ կար և ոչ օրենքի հալածանք, այլ ամեն մարդ վայելում էր կատարյալ ապահովություն։

Բոլոր այդ, նույնիսկ նախարարների երկրում մնացած անշարժ բնակիչները կարող էին հրապուրվել, կարող էին ամեն րոպե ապստամբվել, տեսնելով, որ թագավորը շնորհում է ավելի ազատություն և ավելի անդորրություն, քան թե իրանց իշխանները։

Այստեղից ծագեցին այն արյունահեղ կռիվները նախարարների և Արշակի մեջ։

Գուցե Արշակը հաղթող կհանդիսանար, եթե նախարարները արտաքին օգնության չդիմեին։ Նրանք դիմեցին Հայոց դարավոր թշնամուն— պարսկին։ Շապուհը օգուտ քաղեց Հայոց աշխարհի ներքին երկպառակություններից և ուղարկեց յուր զորքերը։ Արշակը, անճար մնալով, խույս տվեց դեպի Կովկասյան լեռները։

Նրա բացակայության ժամանակ՝ նախարարների վրեժխնդրությունը անցավ անգթության ամեն չափից։ Նրանց ձեռնտվությամբ պարսիկները տիրեցին Անի քաղաքին, կողոպտեցին թագավորական գանձերը և մինչև անգամ Արշակունի թագավորների հանգստարաններին չխնայեցին, քանդեցին շիրիմները և գերի տարան արքաների նշխարները[34]։

Այդ ժամանակ նախարարները իրանց բոլոր ուժով հարձակվեցան Արշակավանի վրա, թե այր և թե կին անխնա կոտորեցին։ Ապստամբի քաղաքը լցվեցավ դիակներով. արյունը հորդությամբ հոսում էր փողոցներից։ Ողջ մնաց ծծկեր մանուկների մի մասը միայն[35]։

Արշակը վերադարձավ Կովկասից, յուր հետ բերելով վրացի և այլ լեռնական զորքեր։ Կրկին բորբոքվեցավ կռիվը նախարարների և թագավորի մեջ։ Նախարարները, պարսկին հարուստ ավարով ճանապարհ դնելուց հետո, այս անգամ հույնին կանչեցին իրանց թագավորի դեմ։ Վաղեսի լեգեոնները մտեցան Հայոց սահմաններին։ Արշակը ունեցավ յուր դեմ երեք հզոր թշնամիներ՝ հույնը, պարսիկը և յուր նախարարները…

Նա չհուսահատվեցավ, բայց զիջավ, երբ խաղաղության հրեշտակը մեջ մտավ և դադարեցրեց արյունհեղությունը։

Դա Ներսես Մեծն էր։

Մեծ հայրապետը հաշտեցրեց նախարարներին իրանց թագավորի հետ, ուխտ դնելով, որ «այնուհետև թագավորը վարվի նրանց հետ ուղղությամբ, իսկ նրանք ծառայեն հավատարմությամբ[36]»։

Չհաշտվեցան երկու նախարարներ միայն՝ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը— Սամվելի հայրը։ Նրանք գնացին պարսից Շապուհ արքայի մոտ[37]։

Ահա՛ որտեղից ծագեց թշնամությունը Արշակի և այդ երկու նախարարների մեջ…

II

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ, ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Թագավորի լարված հարաբերությունները յուր նախարարների հետ և նրանց մեջ ծագած ներքին երկպառակությունները, որ շատ անգամ առիթ էին տալիս սոսկալի արյունահեղությունների,— այդ բոլորը նկարագրվեցավ նախընթաց գլխի համառոտության մեջ։ Մենք այժմ դիտենք նրանց էական պատճառները։

Բայց հայոց պատմությունը ներկայացնում է մի այլ, ավելի տխուր երևույթ ևս, այն է՝ թագավորի նույնպիսի հարաբերությունները հոգևորականության և նրա բարձր ներկայացուցիչների հետ։

Այն օրից, որ քրիստոնեությունը մուտք է գործում Հայաստանում, նկատվում է մի խուլ, ներքին կռիվ թագավորի և հոգևորականության մեջ, որ հաճախ արտահայտվում է դառն, եղերական վախճանով։ Զարմանալին այն է, որ այդ կռիվը սկսվում է իսկ և իսկ այն ժամանակից և նույն թագավորների օրերով, որոնք մաքառում էին իրանց նախարարների հետ։— Դրանք Տրդատ մեծի չորս հաջորդներն են՝ Խոսրով, Տիրան, Արշակ և Պապ։

Ինքը՝ Լուսավորիչը հալածվեցավ։ Յուր կյանքի վերջին օրերը ծածկեց նա Սեպուհ լեռան այրերի անհայտության մեջ[1]*։*

Նրա որդիներից՝ Արիստակեսը սպանվեցավ Արքելայոս իշխանից[2]*։ Իսկ Վրթանեսը Աշտիշատի վանքում մի հրաշքով միայն կարողացավ յուր կյանքը ազատել խուժանի կատաղությունից*[3]*։*

Վրթանեսի երկու որդիներից մեկը՝ Գրիգորիսը նահատակվեցավ Վատնյան դաշտում[4]*, իսկ մյուսը՝ Հուսիկը, սպանվեցավ եկեղեցում Տիրան թագավորի հրամանով, որի փեսան էր*[5]*։*

Հուսիկի երկու որդիները, Պապ և Աթանագինես, մի ժամվա մեջ սպանվեցան Աշտիշատի վանքում[6]*։*

Պապը յուր սեղանի վրա, ճաշի ժամանակ, թունավորեց Աթանագինեսի որդի Ներսես Մեծին, որի բազմաջան աշխատությամբ ինքը թագավորական գահն էր բարձրացել[7]*։*

Մի խոսքով, սկսյալ Լուսավորչից մինչև նրա վերջին ժառանգը, Սահակ Պարթևը, այդ մեծ հայրապետական տան ներկայացուցիչներից համարյա և ոչ մեկը խաղաղ մահվամբ չվախճանվեցավ, այլ ամենքը զոհ դարձան կամ թագավորի և կամ նախարարների խստասրտությանը։

Զոհ դարձան և այդ ժամանակների նշանավոր եկեղեցականները։

Խոսրովի հրամանով Մանաճիհր Ռշտունին Հակոբ Մծբնա հայրապետի յոթն սարկավագներին Ընձակա լեռան բարձրությունից գահավիժել տվեց Վանա ծովակի մեջ։ Ներսեսի հայրապետի աղաչանքն ու արտասուքը անզոր եղան ամոքելու խստասիրտ իշխանի անգթությունը[8]։

Տիրանը խեղդել տվեց ծերունի Դանիել քահանային, որ Լուսավորչի նշանավոր աշակերտներից մեկն էր[9]։

Արշակը հրամայեց հրապարակի վրա քարկոծել Արշարունյաց և Բագրևանդի եպիսկոպոս Խադին, որը Ներսես Մեծի աշակերտը և նրա հայրապետական տեղապահն էր Կ. Պոլիս գնացած ժամանակ[10]։

Ի՞նչ էր այդ ողբալի երևույթների պատճառը։ Արդյոք նոր կրոնի մաքառո՞ւմը և նրա սաստիկ հակառակությո՞ւնը հեթանոսական վաղեմի սովորությունների և բարք ու վարքերի հետ։

Այդպես էլ բացատրում են հայոց պատմագիրները։

Տրդատ մեծից հետո, նրա բոլոր հաջորդները, բացի Վռամշապուհից, մինչև Արշակունյաց տան անկումը, նկարագրված են որպես վերին աստիճանի անբարոյական անձինք։ Հոգևորականությունը նրանց անկարգ բարք ու վարքը հանդիմանում է, իսկ նրանք զայրանալով՝ սպանել են տալիս հոգևորականներին։ — Դրանով է վերջանում պատմության խոսքը։

Բայց նույն պատմությունը անգիտակցաբար երևան է հանում այնպիսի նշմարներ, որոնք հակառակ վկայություն են տալիս, որոնք ստիպում են կատարված չարիքների արմատը որոնել ավելի խորին, ավելի հիմնավոր պատճառների մեջ։

Ինչո՞ւ Արշակունի թագավորները, քրիստոնեությունը ընդունելուց հետո, փոխանակ լավանալու, փոխանակ բարքով ու վարքով ազնվանալու, ընդհակառակն, ավելի խստասիրտ, ավելի եղեռնագործ դարձան։ Քրիստոնեության բարոյական ազդեցությունը չէր կարող այսպիսի հրեշավոր արդյունքներ առաջ բերել։ Վերջապես, ինչո՞ւ Արշակունի թագավորները, դեռ քրիստոնեությունը չընդունած, ավելի բարոյական և ավելի ազնիվ էին։ Տիգրան Բ, Արտաշես Բ, Խոսրով մեծը մարդասիրության և բարձր առաքինության մի-մի տիպարներ էին։ Եվ առհասարակ հայոց հեթանոս թագավորների մեջ՝ չէ կարելի մեկին ցույց տալ, որ բարոյապես այնպիսի այլանդակ կերպով նկարագրված լինեն, որպես Արշակունյաց վերջին քրիստոնյա թագավորները։

Արդյոք բարբարո՞ս էին նրանք, որ անխնա կոտորում էին հոգևորականներին։

Այդ հարցը լուծելու համար՝ պետք է նախ ցույց տալ, թե ի՛նչ էր այն ժամանակ հոգևորականությունը և որպիսի՛ կերպարանք էր ստացել հոգևոր իշխանությունը։

Լուսավորիչը և Տրդատը քրիստոնեությունը Հայաստան մտցնելու ժամանակ, նրանց գլխավոր ջանքը եղավ ոչնչացնել հեթանոսական հիշատակարանները և նրանց տեղը քրիստոնեականը հիմնել։ Մեհյանները կործանվեցան, հին աստվածների տաճարները խորտակվեցան, և նրանց տեղում քրիստոնեական վանքեր ու եկեղեցիներ հիմնվեցան։ Եկեղեցիներ հիմնվեցան նաև քաղաքներում, ավաններում և գյուղերում։ Վանքերում հաստատվեցան կրոնական միաբանություններ, իսկ եկեղեցիներում՝ աշխարհական քահանաներ։ Հիմնվեցան և դպրոցներ՝ քրմերի որդիներից և ուրիշներից եկեղեցականներ պատրաստելու համար։

Պետք էր այդ բոլորի գոյությունը պահպանել։

Նորընծա թագավորը, յուր անսահման քրիստոնեական ջերմեռանդությամբ, չխնայեց նոր հիմնված սրբարանների գոյությունը պահպանելու համար՝ սեփականացնել նրանց, իբրև մշտական ժառանգություն, բազմաթիվ գյուղեր, ավաններ, ագարակներ և այլ անշարժ կալվածքներ։ Այդ սրբարանների վրա մնացին և այն մեհենական կալվածքները, որ վայելում էին նրանք հեթանոսական դարերում, այսինքն, երբ տակավին կռապաշտական տաճարներ էին, իսկ հետո քրիստոնեական եկեղեցիների փոխվելով, պահպանեցին իրանց վաղեմի կալվածքները։

Բացի դրանցից, Տրդատը յուր պետության մեջ ընդհանուր օրենք հրատարակեց, որ ագարակ տեղերում (փոքր գյուղերում) «չորս–չորս հող», իսկ ավաններում (մեծ գյուղերում) «յոթն–յոթն հող» լինի սեփականություն եկեղեցու։ Ամեն մի «հող» մի վերացական չափ էր, որ ստանում էր մի ծուխ, կամ մի գյուղական ընտանիք։ Ուրեմն, եթե յուրաքանչյուր ավանում «յոթն-յոթն հող» տրվում էր եկեղեցուն, այդ կնշանակե՝ այնքան տարածությամբ հող, որ բավական էր յոթն ընտանիքի համար[11]։

Եվ այդպիսով եկեղեցին դարձավ ամենահարուստ կալվածատերը պետության մեջ։

Հարստացան և վանքերը իրանց կալվածքներով։

Որպեսզի փոքր ի շատե շոշափելի գաղափար ստացվի, թե որքա՛ն կալվածքների էին տիրապետում վանքերը, բավական է իբրև օրինակ վեր առնել նրանցից մեկը միայն։ Մենք կվերառնենք Տարոնի նահանգում Գլակա կամ Իննակյան կոչված վանքը, որի կալվածքների մասին նրա առաջին վանահայր Զենոբ Գլակը յուր պատմության մեջ թողել է խիստ հետաքրքիր թվանշաններ[12]։

Զենոբ Գլակը, Լուսավորչի նշանավոր գործակիցներից մեկը, և նրա հետ Կեսարիայից եկած, ազգով ասորի, մի շատ եռանդոտ աբեղա էր, որ գրեց Լուսավորչի և հիշյալ վանքի պատմությունը։

11 Րաֆֆի, Երկ. ժող. 12 հատ., հատ. 8 161

Այդ վանքը հեթանոսական դարերում, երբ տակավին կռատուն էր, ուներ 12 մեծ ավաններ։ Լուսավորիչը, կործանելով կռատունը[13], նրա տեղը վանք հիմնեց և նույն 12 ավանները հատկացրեց վանքին։ Ահա նրանց անունները իրանց երդահամարով և յուրաքանչյուրի ունեցած զինվորական ուժով.

1. Կուառս, 3012 երդ (ծուխ), 1500 հեծելազոր, 2200 հետևակ։

2. Տում, 900 երդ, 400 հեծելազոր։

3. Խորնի (Մովսես Խորենացու ծննդավայրը), 1906 երդ, 700 հեծելազոր, 1008 հետևակ։

4. Պարեխ, 1680 երդ, 1030 հեծելազոր, 400 հետևակ։

5. Կեղք, 1600 երդ, 800 հեծելազոր, 600 հետևակ։

6. Բազում, 3200 երդ, 1040 հեծելազոր, 840 հետևակ աղեղնավոր, 680 տիգավոր, 280 պարսավոր։

7. Մեղտի, 2080 երդ, 800 հեծելազոր, 1030 հետևակ։

Ափսո՜ս, որ այդ վանքի 12 ավաններից միայն 7-ի անուններն է հիշում Զենոբը, իսկ մնացյալ 5-ից հիշում է միայն Մուշի անունը, այն էլ առանց երդահամարի։ Բայց պատմագրի այն խոսքերը, թե «դրանք մեծամեծ ավաններ են, որպես արձանագրված է Մամիկոնյան իշխանների գրքի մեջ»,— կարծել են տալիս, որ մնացյալ 5 ավանները թե իրանց ընդարձակությամբ և թե բնակիչների թվով, եթե մյուսներից մեծ չլինեին, փոքր ամենևին չէին լինի, մանավանդ, որ նրանց մեջն է Մուշը, որը երբեմն հիշատակվում է որպես Տարոնի բազմամարդ քաղաքներից մեկը։ Բայց և այնպես, վերոհիշյալ 7 ավանների երդահամարի թվանշանները ձեռքում ունենալով, դժվար չէ գտնել մյուս հնգի բնակիչների եթե ոչ ճիշտ, գոնե հավանական թիվը։

Յոթն ավանները միասին ունեն 14 378 երդ կամ ծուխ։

Եթե այդ գումարը բաժանենք յուրաքանչյուրի վրա, ամեն մի ավանը կունենա 2054 երդ։

Եթե մնացյալ հինգ ավանների յուրաքանչյուրին էլ 2054 երդ տալու լինենք, նրանք միասին կունենան 10 270 երդ։

Ուրեմն բոլոր 12 ավանները միասին կունենան 24 648 երդ։

Այն ժամանակվա նահապետական դրության մեջ՝ յուրաքանչյուր գերդաստան կամ երդ կարող էր մինչև 20—30 անդամներից բաղկացած լինել, բայց յուրաքանչյուրը միայն 5 հոգուց բաղկացած համարելով, բոլոր 12 ավանների բնակիչների ընդհանուր թիվը կլինի 123 240 հոգի։

Հետաքրքիր է այդ վանական ավանների զինվորական ուժը։ Հաշիվների նույն եղանակով առաջնորդվելով, գտնենք նրանց ընդհանուր թիվը։

Յոթն ավանները միասին ունեին 13 308 հետևակ և ձիավոր զորք։

Յուրաքանչյուր ավանը կունենա 1901 զինվոր։

Այդ հաշվով մնացյալ 5 ավանները կունենան 9505 զինվոր։

Եվ այսպես բոլոր 12 ավանների զինվորների ընդհանուր թիվը կլինի 22 813 հոգի։

Մի վանք այդքան ահագին զինվորական ուժ ունենալուց հետո, շատ զարմանալի պետք չէ համարել՝ քրմերի ա՛յն կատաղի ընդդիմադրությունը և նրանց արյունահեղ կռիվները, որ տեղի ունեցան, երբ Լուսավորիչը Տրդատի զորքերով մոտեցավ կործանելու այդ վանքը, երբ սակավին կանգուն էր[14]։

Քրիստոնեական տաճարի փոխվելուց հետո Գլակա վանքը թե յուր կալվածքների ընդարձակությամբ և թե յուր զինվորական ուժով ներկայացնում էր մի զորեղ նախարարություն,— բայց հոգևոր նախարարություն։

Եվ այսպես, հենց Լուսավորչի և Տրդատի օրերում, վանքերն ու եկեղեցիները գրավեցին հողերի և բնակիչների մի նշանավոր մասը։

Բայց Լուսավորչի եռանդոտ հաջորդները հետամուտ եղան ավելի և ավելի ընդարձակել եկեղեցական կալվածքների քանակությունը այն համեմատական չափով, ինչ չափով որ հետզհետե բազմանում էր վանքերի, եկեղեցիների թիվը։

Լուսավորչի հաջորդների մեջ, վանքերի շինության գործում, առաջին տեղն է բռնում Ներսես Մեծը։ Նրա հիմնած վանքերի թիվը, ըստ ժամանակակից պատմագրի վկայության, հասնում էր 2040-ի[15]։ Այդ թիվը կարելի է մինչև անգամ չափազանց համարել։ Բայց սույն չափազանցության մեջ ևս բովանդակվում է ա՛յն չափազանց ճշմարտությունը, որ նա անհամեմատ շատ վանքեր հիմնեց։

Բազմացնելով վանքերի թիվը՝ Ներսես Մեծը միևնույն ժամանակ բազմացրեց և վանականների թիվը։ Նրա օրերում միայն եպիսկոպոսների թիվը հասնում էր 1020-ի, բացի այլ ստորին եկեղեցականներից[16]։

Նրա հիմնած վանքերը զանազան նպատակների էին ծառայում։ Դրանք այլ և այլ եպիսկոպոսարաններ, կղերանոցներ, եղբայրանոցներ և կուսաստաններ էին, որ սփռված էին Հայոց երկրի ամեն կողմերում։ Յուրաքանչյուրի մեջ առանձնացած էր աշխարհից անջատված կրոնավորների մի ստվար բազմություն և վայելում էր վանքի անսպառ բարիքները։

Բայց մեծ Հայրապետի մեծ գործը, որի մեջ փայլում է նա յուր բարձր մարդասիրական հոգով, որի մեջ երևում է նա իբրև կատար-

յալ ժողովրդական մարդ և ժողովրդի բարեկամ,— այդ չէր։ Նա կառուցեց բազմաթիվ բարեգործական հիմնարկություններ, որոնց մեջ խնամք և սնունդ էին գտնում երկրի չքավորները, երկրի տառապյալները։ Ավելորդ չէր լինի դրանց մի քանի տեսակները հիշել.

Աղքատանոցներ, որոնց մեջ կերակրվում էին աղքատները և չքավորները։ **Հիվանդանոցներ**, որոնց մեջ դարմանում էին հիվանդներին։ **Ուրկանոցներ**, որոնց մեջ խնամք էին տանում ուրուկներին, այսինքն՝ այնպիսի ախտավորների, որոնց՝ երկրի սովորությամբ պիղծ համարելով, արտաքսում էին մարդկային բնակությունից, որ չվարակեն մյուսներին, և այդ թշվառները բնակում էին հեռավոր անապատներում կամ մեծ ճանապարհների վրա[17]։ **Անկելանոցներ**, որոնց մեջ սնունդ էին գտնում ծեր և աշխատության անկարող մարդիկ։ **Որբանոցներ**, որոնց մեջ սնուցանում էին որբ և անտերունչ մանուկներին։ **Այրենոցներ**, որոնց մեջ խնամք էին տանում ծերացած այրի կանանց։ **Հյուրանոցներ** կամ **Օտարատուն**, որոնց մեջ պատսպարան էին գտնում պանդուխտները, օտարականները և անցորդները։ **Պանդոկներ**, որոնք շինված էին ճանապարհների վրա, լեռնային անցքերի մոտ, և առհասարակ այնպիսի տեղերում, ուր բնակություն չկար, որպեսզի ճանապարհորդները կարողանային այդ պանդոկներում օթևան գտնել[18]։

Թե որքա՞ն էր այդ հիմնարկությունների թիվը,— հայտնի չէ։ Բայց հայտնի է այն, որ դրանք ոչ միայն մի գավառում և մի նահանգում, այլ Հայոց երկրի բոլոր կողմերում տարածված էին[19]։

Չկար այդ ժամանակ մի աղքատ, որ փողոցներում մուրացկանությամբ ձանձրացներ հասարակությանը. չկային մոլաշրջիկ թափառականներ, որ քաղցածությունից ստիպված ձեռք մեկնեին դեպի ուրիշի գրպանը։ Ամեն ոք գոհ էր, ամեն ոք սնունդ էր ստանում հասարակաց սեղանից։— «Ներսեսի տարիներում,— ասում է Փավստոս Բյուզանդացին,— Հայոց աշխարհի բոլոր սահմաններում՝ բնավ ամենևին չէր տեսնվում, որ աղքատները մուրացկանություն անեին, այլ այնտեղ՝ նրանց հանգստանալու տեղերում (աղքատանոցներում) ամեն մարդիկ մատակարարում էին նրանց պետքերը, և նրանք, ամեն բանով լիացած, կարոտություն չունեին ոչ ոքից[20]»։

Նույնը կրկնում է և Մեսրոպ երեցը.— «Ներսեսի օրերում Հայոց աշխարհում ոչ ոք չէր տեսնում, որ մի մուրացկան երևար, կամ անկարգ, անիրավ և դատարկաշրջիկ մարդիկ, որ Հայոց երկրում կային շատ ժամանակներից ի վեր,— բոլորին վերջ տվեց սուրբ Ներսեսը[21]»։

Հայոց աշխարհի մեծ բարեկարգիչը ինքը առաքինության կատարյալ տիպարն էր։ Գթության, ողորմածության օրինակը նախ ինքն էր

տալիս, և ապա հորդորում էր, որ ուրիշներն էլ նույնը անեն իրանց աղքատ և կարոտյալ եղբայրներին։

Բյուզանդացին ասում է.

«Նախ ինքն էր անում և ամենին նույնն էր ուսուցանում. հրամայում էր, որ առհասարակ Հայոց բոլոր աշխարհում, գավառներում և զանազան կողմերում... աղքատանոցներ շինեն և ժողովեն ախտավորներին, ուրուկներին, անդամալույծներին և ամեն ցավագարներին,— նրանց համար հիմնվեցան ուրկանոցներ, գարմանոցներ, և կարգվեցան ռոճիկներ»... «Այրիներին, որբերին և չքավորներին հանգստություն և սնունդ էր բաշխում (յուր տան մեջ), և աղքատները միշտ նրա հետ էին ուրախ լինում. յուր սեղանը բաց էր և սեղանատունը ամբողջ օրը աղքատների և օտարականների համար մի հյուրանոց էր։ Թեև բոլոր գավառներում աղքատանոցներ հիմնեց և նրանց համար ապրուստ կարգեց... բայց յուր չափազանց աղքատասիրության պատճառով յուր սեղանատան դռներն էլ միշտ բաց էին նրանց առջև. կույրերը, կաղերը, խեղանդամները, խուլերը, հաշմանդամները, խեղճերը և կարոտյալները, նրա հետ և նրա շրջանում նստած, կերակրվում էին։ Նա ինքը յուր ձեռքովն էր լվանում ամենին, օծում էր և պատում էր (նրանց վերքերը)։ Նա ինքը անձամբ ուտեցնում էր նրանց ամեն մի կերակուր, և յուր ունեցածը նրանց պետքերի համար էր ծախսում, և ամեն օտարականները նրա հետ, նրա հովանավորության ներքո պատսպարված, հանգստություն էին վայելում[22]»։

Այդ բոլորից հետո, շատ հասկանալի է այն մեծ ժողովրդականությունը, որ վայելում էր պաշտելի մարդը։ Հասարակաց Հայր էր կոչվում նա։ Ամեն տեղ, ուր և հայտնվում էր, լռում էր աղմուկը, դադարում էր խռովությունը։ Խաղաղության հրեշտակ էր նա։ Ոչ միայն հայոց թագավորը, և ոչ միայն հայոց նախարարները, այլ հռովմեական կայսրները և մինչև անգամ պարսից արքան ակնածում էին նրանից։ Զորավոր ձեռքով դարձնում էր Հայոց աշխարհի կառավարության երասանակը և յուր լայն, ընդարձակ հայացքների համեմատ, ուղղություն էր տալիս։

Այդ ուղղության մասին պետք է խոսվի, որովհետև դրա մեջն էին թաքնված այն խուլ երկպառակության սերմերը, որ հետզհետե աճելով, վերջը աղետալի կռիվների պատճառ դարձան հոգևոր և մարմնավոր իշխանության մեջ։

Արդեն Աշտիշատի ընդհանրական ժողովում[23], Ներսես Մեծը, ի թիվս այլ բարեկարգությանց, կանոնական սահմանադրությամբ կարգի դրեց վանքերի խնդիրը։ Նրա ծրագիրը այդ խնդրի վերաբերությամբ այն աստիճան առաձգական էր, որ կարող էր ամփոփել յուր մեջ նրա մեծ գաղափարը՝ յուր ընդարձակ բովանդակությամբ։

Ի՞նչ էր կամենում այդ զորավոր հանճարը։

Կազմել Հայոց աշխարհից մի մեծ վանք, մի ընդհանուր եղբայրություն, ուր տիրեր միայն հավասարությունը, ուր սեփականության տարբերություն չլիներ, ուր աղքատը, չքավորը, ոկարը, աշխատության անկարողը կերակրվեր աստուծո սեղանից։

Ժամանակակից պատմագիրը, Փավստոս Բյուզանդացին, ասում է.

«Այն ժամանակում (Աշտիշատի ժողովում) կարգեցին, կազմեցին, կանոնադրեցին, հորինեցին, և Հայոց երկրի բոլոր ժողովուրդը դարձրին որպես համաշխարհի (համաքաղաքացի) վանականների միաբանության մի կարգ» (ուխտ)[24]։

Մեսրոպ երեցը ավելացնում է.

«Ներսես Մեծի օրերում ամբողջ Հայաստանը դարձավ իբրև մի կատարյալ անձն, որ գնում էր աստուծո երկյուղի ճանփից[25]»։

Որքան մեծ էր ձեռնարկությունը, այնքան և ծա՜նր եղան հետևանքները...

Գուցե բոլորովին քրիստոնեական առաքինության գաղափարներից դրդված, որոնք այնքան վառ էին նրա մեջ, Ներսես Մեծը Աշտիշատի ժողովում մեջ բերեց և ընդունել տվեց յուր կազմած ծրագիրը։ Գուցե ժամանակի գթությունը, ժողովրդի թշվառությունը, թագավորի, նախարարների, և առհասարակ ազնվականության հարստահարությունները՝ թելադրեցին նրան եկեղեցու գիրկը դարձնել մի անսահման և ապահով ապաստարան, ուր բոլոր նեղյալները և կարոտյալները կարողանային ապաստան գտնել։

Եվ, վերջապես, գուցե ոչ կանխազգաստ նախամտածությամբ, այլ միայն ողորմածության գաղափարով ոգևորված, մեծ հայրապետը գործի սկզբում նախատեսանել չկարողացավ յուր հսկայական ձեռնարկության հետևանքները, որ այլ վախճանի չէին կարող հասցնել, քան թե՝ ստեղծել Հայոց աշխարհից մի եկեղեցական պետություն, խաչի սրբազան դրոշի ներքո։

Թե այսպես և թե այնպես, հոգևոր-համաքաղաքացիների վանքը հիմնվեցավ։ Այդ համաշխարհական վանքի վանահայրը ինքը՝ հայրապետն էր — Ներսես Մեծը։ Նրա ընդարձակ տնտեսությունը հանձնել էր նա կրոնավորներից ընտրված առանձին վերակացուների, որոնց գլխավորն էր յուր սարկավագը — Խադ, որ հետո եպիսկոպոս ձեռնադրվեցավ[26]։

Ի՞նչ արդյունքներով էր կառավարվում այդ վանքը։—

Դա յուր ժամանակի ամենածանր տնտեսական խնդիրն էր, որի լուծման մեջն էր կայանում բուն շարժառիթը այն բոլոր կռիվների և այն բոլոր ընդհարումների, որ տեղի ունեցան հոգևոր և մարմնավոր իշխա-

նության մեջ, և որոնք փութացրին Արշակունյաց պետության ցավալի անկումը...

Վերևում հիշվեցավ, որ արդեն Լուսավորչի օրերում, երբ վանքերի հիմնարկության սկիզբը դրվեցավ, նորահավատ Տրդատը, ջերմեռանդ առատաձեռնությամբ, յուր ամբողջ պետության մեջ ընդհանուր օրենք դրեց, որ ագարակներից «չորս-չորս հող», իսկ ավաններից «յոթն-յոթն հող» հատկացվի եկեղեցուն։ Բացի այդ հողերից, եկեղեցին ստանում էր առանձին տասանորդ երկրի բոլոր մշակություններից։ Եկեղեցին գրավեց այլև այն մեհենական կալվածքները, որ հեթանոսական դարերում վայելում էին քուրմերը։

Ներսես Մեծի օրերում, երբ վանքերի և զանազան բարեգործական հիմնարկությունների թիվը անհամեմատ կերպով բազմացավ, նույն չափով բազմացրեց նա և եկեղեցական կալվածքների քանակությունը, հատկացնելով նրանց նորանոր ավաններ և նորանոր գյուղեր[28]։ Ինչ որ հիմնեց նա, բոլորի գոյությունը ապահովացրեց հաստատուն եկամուտներով։

Բացի հոժարակամ կտակներից, որով ցանկացողները իրանց կայքը թողնում էին եկեղեցուն,— առանց կտակի ևս, անժառանգ մեռնողների օրինավոր ժառանգը համարվում էր միայն եկեղեցին, որ գրավում էր հանգուցյալի բոլոր շարժական և անշարժ կայքերը։ Եվ այդ ոչ սակավ ընդարձակում էր եկեղեցու սեփական հարստությունը։

Երբ Վաչե Մամիկոնյանը Խոսրով Բ-րդի հրամանով ջնջեց Մանավազյան և Որդունյաց նախարարների մնացյալ ժառանգներին, այնուհետև այդ երկու նախարարությունները իրանց բոլոր կալվածքներով դարձան եկեղեցու սեփականություն։ Մանավազյան նահապետի երկիրը յուր քաղաքներով և գյուղերով ստացավ Ալբիանոս եպիսկոպոսը և հատկացրեց յուր կառավարության ներքո գտնված եկեղեցիներին։ Իսկ Որդունյաց նախարարության երկիրը յուր քաղաքներով և գյուղերով գրավեց Բասենու եպիսկոպոսը[29]։

Եվ այդպես, եկեղեցին յուր բազմաթիվ վանքերով, գրավելով հողերի մեծ մասը, հետզհետե դառնում էր պետության մեջ ամենահարուստ կալվածատերը, մինչդեռ թագավորը սեղմված էր Արարատի նեղ սահմանների մեջ, իսկ նախարարությունները այնքան բազմացել էին, որ իրանց գոյությունը պահպանելու համար բավականաչափ հող չունեին։

Եթե վանքերը լինեին լոկ կղերանոցներ, որոնց մեջ անգործ աբեղաների մի ստվար բազմություն միայն սպառում լիներ երկրի հարստությունը, տարակույս չկա, որ այդ դեպքում նրանք բոլորովին անտանելի կդառնային ժողովրդին, մանավանդ որ քրիստոնեությունը դեռ ոչ այնքան տարածված էր Հայաստանում։ Քրիստոնեության մուտք գործե-

լուց անցել էր 70—80 տարի միայն։ Այդ սուղ միջոցում նոր կրոնը չէր կարող այնքան արմատացած լինել ժողովրդի մեջ, որ եթե ոչ քրիստոնեական ճշմարիտ ջերմեռանդությամբ, գոնե հասարակության մեջ մոլեռանդություն զարգացնելով, կղերը կարողանար ժողովրդին գրավել դեպի եկեղեցին և նրա վաստակը բաժանել նրա հետ։ Բայց հայոց վանքերի կազմակերպությունը, մանավանդ Ներսես Մեծի բարեկարգություններից հետո, հարմարեցրած էր երկրի թե պահանջներին և թե պայմաններին։ Այս տեսակ վանքեր կարող էին գոյություն ունենալ մինչև անգամ մի հեթանոս ժողովրդի մեջ։ Վանքը միացրել էր յուր գոյության հետ և՛ բարեգործական, և՛ մարդասիրական նպատակ։ Ուր տիրում է ստրկությունը, հարստահարությունը, ուր աղքատանին ճնշում է անպաշտպանին, այնտեղ այս տեսակ հիմնարկությունները ոչ միայն փրկաւոր ապաստան են դառնում նեղյալների համար, այլ նրանց գրկումն են գտնում թշվառները իրանց ամենամեծ մխիթարությունը։ Այդ էր պատճառը, որ վանքը սիրելի էր ժողովրդին։

Արշակ Բ մի ապաստանի քաղաք հիմնեց, և կարճ միջոցում այնտեղ հավաքվեցան Հայոց աշխարհի բոլոր դժգոհները։ Իսկ Ներսես Մեծը հարյուրավոր վանքեր հիմնեց և յուր կողմը ձգեց ամբողջ Հայաստանը։

Վանքը հաց էր տալիս, կերակրում էր ժողովրդի աղքատներին, դարմանում էր նրա հիվանդներին, սնուցանում էր նրա որբերին և այրիներին, ուսում և կրթություն էր տալիս նրա զավակներին։ Նա առանում էր ժողովրդից և տոկոսներով վերադարձնում էր ժողովրդին։ Եվ, վերջապես, ինքը ժողովուրդը այդ վանքի եղբայրության անդամն էր։— Ժողովուրդը գո՛հ էր, ժողովուրդը չէր տրտնջում։

Տրտնջում էր թագավորը, տրտնջում էին և նախարարները։

Թագավորը սարսափելով տեսավ, որ յուր պետության մեջ կազմվեցավ մի այլ պետություն— հոգևոր պետություն, որ մեղմ ձևերով փոքր առ փոքր գրավեց ոչ միայն հողերի մեծ մասը, այլև յուր կողմը ձգեց ժողովրդին։ Նա դարձավ ամենաբարձր և ամենաարբաղան հեղինակություն, որի առջև ամեն գլուխ խոնարհվում էր։

Թագավորը սոսկաց, թեև շատ ուշ հասկացավ, որ այդ հեղինակությունը արդեն այն աստիճան ուժ և զորություն էր ստացել, որ յուր ձեռքումն էր պահում արքայական գահը։

Գուցե արհավիրքը այնքան շուտ չէր պայթի, գուցե Արշակունի թագավորները ավելի համբերող կլինեին, եթե հոգևոր իշխանությունը յուր նեղ, հոգևոր սահմաններից դուրս չգար։ Բայց նրանք սկսեցին համարձակ կերպով միջամտություն գործել և կառավարության գործերի մեջ։

Խոստովանության խորհուրդը մի ընդարձակ դուռ բաց արեց հոգևորականության առջև մտնելու ժողովրդի սրտի մեջ։ Խոստովանության միջոցով ծանոթանալով նրա գործերի հետ, հոգևորականությունը սկսեց դատավոր հանդիսանալ նրա հանցանքներին և պատիժներ որոշել։ Պատիժները, որ սկզբում սահմանափակվում էին միայն եկեղեցական ապաշխարանքով, վերջը աշխարհական դատապարտության ձև ստացան։ Ավելացրին թե՛ տուգանք *և թե՛* գանահարություն *(ծեծ)*[30]։

Գանահարությունից ազատ էր մնում միայն ազատանին*—ազնվականությունը, իսկ տուգանքի ենթարկվում էին ամեն դասակարգի անձինք։ Այսպես պատժում էր նա ամեն քրեական հանցավորներին։*

Եկեղեցին միջամուխ էր լինում և այնպիսի վեճերի մեջ, որոնք սոսկ քաղաքացիական գործերի բնավորություն ունեին, օրինակ, հողերի բաժանման կամ հափշտակության խնդիրներ և այլն։ Եկեղեցին միջամուխ էր լինում և հարկերի բաշխման ու հավաքման գործերում[31]*։ Այդ բոլորի մեջ ներգործում էր նա ոչ իբրև հաշտարար-միջնորդ, այլ որպես իրավատեր։*

Այդ բոլորը ուղղակի հակառակում էին թե՛ թագավորի և թե՛ նրա նախարարների իրավունքներին, որոնք իրա՛նց միայն ճանաչում էին երկրի տերը և դատավորը։

Արշակունի թագավորը սովոր չէր բացի իրանից մի այլ բարձր հեղինակություն ճանաչելու։ Արշակունի թագավորը ինքը մի սրբազան էակ էր։ Նրա անձնավորության մեջ միանում էր թե՛ երկնայինը և թե՛ երկրայինը,— թե՛ հոգևորը և թե՛ մարմնավորը։ Բայց քրիստոնեությունը խլեց նրանից այդ սրբազնությունը և տվեց եկեղեցու Հայրապետին։ Այդ մոռանալ չէր կարող նա։

Եկեղեցու Հայրապետը համարում էր իրան կատարյալ հոգաբարձու թե յուր հոտի, և թե պետության։ Դժվարին խնդիրներում նա էր բանակցում օտար պետությունների հետ և խաղաղության դաշինքներ կապում։ Նա էր դատավոր հանդիսանում, երբ թագավորի և յուր նախարարների մեջ երկպառակություններ էին պատահում։ Մի խոսքով, ամեն հարաբերությունների մեջ ներկա էր նա, և յուր համարձակ ձեռքը մեկնում էր մինչև թագավորի արքունիքը, մինչև նրա ներքին ընտանեկան կյանքը...

Մի անգամ, տարվա տոնախմբություններից մեկի ժամանակ, երբ Տիրան թագավորը յուր ավագանիի հետ կամենում էր եկեղեցին մտնել, նրա առջև դուրս եկավ Հուսիկ կաթողիկոսը, արգելելով.— «Ինչո՞ւ ես գալիս, դու արժանի չե՛ս, ներս մի՛ մտիր...»։ Թագավորը այլևս համբերել չկարողացավ, հրամայեց՝ բրածեծ անելով սպանեցին կաթողիկոսին[32]*։*

Արշակունի թագավորը, որ սովոր էր հանդիսավոր զոհաբերությունների ժամանակ՝ ինքը տաճարի մեջ անձամբ կատարել սրբազան խորհուրդը և հաճեցնել յուր աստվածներին, հանկարծ մի այլ տաճարի դռանից նրան չեն թողնում, որ ներս մտնե, ասելով՝ «արժանի չես...»։ Այստեղ նա այն աստիճան խոնարհվեցավ, որ ընդունեց մինչև անգամ ցած իջնել սուրբ բեմից և հասարակ ժողովրդի կարգում կանգնել։— Այդ տեղին ևս նրան արժան չէին համարում...

Խնդիրը միայն հին և նոր կրոնի համար մաքառումը չէր։ Խնդիրը կատարյալ տնտեսական էր, կատարյալ տիրապետական էր։ Այստեղ մրցում էին եկեղեցու և պետության միմյանց հակառակ շահերը։ Այստեղ մրցում էին հոգևոր և մարմնավոր իշխանությունները։ Այդ պարզ երևում է այն հանգամանքից, որ երբ Պապ թագավորը յուր սեղանի վրա թունավորեց Ներսես Մեծին, նրա մահից հետո խանգարեց այն բոլոր կարգերը և ոչնչացրեց այն բոլոր հիմնարկությունները, որ կառուցել էր մեծ Հայրապետը, և որոնց մասին խոսվեցավ վերևում։

Սկսեց հալածել հոգևորականներին և նրանց թիվը, որ անհամեմատ կերպով աճել էր, պակասացրեց։ Կուսաստանները փակեց, և բոլոր միանձնուհիներին, որ ուխտել էին աշխարհ չմտնել, հրամայեց, որ ամուսնանան[33]։ Բոլոր բարեգործական հիմնարկությունները, ինչպես էին՝ որբանոցները, ուրկանոցները, անկելանոցները, աղքատանոցները և այլն,— ոչնչացրեց։ Հրաման արձակեց, որ աղքատներին և մուրացկաններին ողորմություն չանեն, ոչինչ չտան[34]։ Այդ, նրա կարծիքով, զարգացնում էր ժողովրդի մեջ, մի կողմից, ծուլություն և ձրիակերություն, իսկ մյուս կողմից, բարձրացնում էր եկեղեցու հեղինակությունը, որ իրան հոգաբարձու էր ներկայացնում ձրիակերներին։

Ոչնչացնելով վերոհիշյալ հիմնարկությունները, ոչնչացրեց նա և այն արդյունքների աղբյուրները, որոնցով պահպանվում էին նրանք։ Նոր օրենքով արգելեց, որ այն «հոգևոր պտուղը» և «տասանորդները», որ վաղ ժամանակներից հետև յուր նախորդները սահմանել էին տալ եկեղեցուն,— այլևս չտան[35]։ Բացի դրանցից, հարքունիս գրավեց եկեղեցական հողերի մեծ մասը։ Յուրաքանչյուր գյուղում Տրդատի հրատարակած օրենքով հատկացրած «յոթն հողերից» թողեց եկեղեցուն «երկու հող» միայն, իսկ հինգը հարքունիս գրավեց։ Եվ այդ «երկու հողերի» համեմատ, ամեն մի գյուղում թողեց երկու քահանա և երկու սարկավագներ միայն, իսկ մնացյալներին հրամայեց, որ զինվորական ծառայության մեջ մտնեն։ Քահանաների և սարկավագների որդիները, եղբայրները, ազգականները, որ մինչև այդ ժամանակ ազատ էին հարկերից, բոլորին հարկատու դարձրեց[36]։ Ամուսնական օրենքները թեթևացրեց[37]։

Կրոնի ազատություն տվեց, որ ցանկացողները կարող են հեթանոսական հին սովորությունները դարձյալ գործ դնել և մինչև անգամ կուռք պաշտել[38]։

Եվ, անտարակույս, ուրիշ շատ նոր կարգադրություններ կաներ երիտասարդ թագավորը, եթե հավիտենական ննջավոր սուրը նրա արյունը չթափեր հրավերքի սեղանի վրա[39]...

III

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Խնդիրն այն էր, որ հոգևորականությունը ինքը յուր մեջ մի սերտ և զորեղ միաբանություն կազմել չէր կարող, որովհետև նա բաղկացած էր զանազան միմյանց հակառակ տարրերից։ Այդ թեև մի կողմից թուլացնում էր եկեղեցու ուժը, բայց, մյուս կողմից, հնար էր տալիս մարմնավոր իշխանությանը օգուտ քաղել նրանց անհաշտությունից։

Ինչպե՞ս կազմվեցան այդ զանազան տարրերը։

Լուսավորիչը, քրիստոնեությունը Հայաստանում տարածելու համար, Կեսարիայից բերեց յուր հետ, իբրև օգնականներ, մի խումբ օտարազգի կրոնավորներ։ Հետո, գործերի և պահանջների աճելու համեմատ, աճեցրեց նաև օտարազգի կրոնավորների թիվը, հետզհետե նորերին հրավիրելով։

Մի նամակի մեջ, ի թիվս այլոց, այսպես էր գրում Լուսավորիչը Տրդատի հետ միասին Նյուսսացոց Եղիազար եպիսկոպոսին և Ադդենացոց Տիմոթեոս եպիսկոպոսին։

«...Մանավանդ գիտեք, որ մեր ամեն գավառների համար եպիսկոպոսներ են պետք և քահանաներ։ Եվ թեպետ ոմանք (կրոնավորներ) զանազան կողմերից եկել և հավաքվել են այստեղ, բայց ի՞նչ են դրանք, Հայոց վեց հարյուր և քսան գավառների հետ համեմատելով. յուրաքանչյուր գավառին մի-մի կամ երկու քահանա հազիվ թե կլինին։ Իսկ այս երկրի (Հայոց) մանուկները դեռ դպրոցներումն են, և նրանցից դեռ ոչ որ պատրաստ չէ քահանայության համար... Ուրեմն աղաչում ենք ձեզ, մեզանից մի խորշեք, այլ ամենայն վստահությամբ փութացեք գալ այդ մարդիկների հետ, որ ուղարկեցինք ձեզ մոտ։ Եվ եթե կգաք, Հարքա և Եկեղյաց ամբողջ երկիրը ձեր առջևը կդնենք. որ վիճակում և բնակ-

վելու կլինիք՝ այն վիճակը ձերը կլինի, և կժառանգեն նրանք, որ ձեզանից հետո կհաջորդեն[1]»։

Վերջին խոսքերից պարզ է, որ օտարազգի եկեղեցականները, հրավիրվելով Հայաստան, ստանում էին իրանց ցանկացած վիճակը իբրև ժառանգություն և, այնտեղ հոգևոր իշխանություն կամ կրոնական միաբանություններ հիմնելով, թողնում էին նույն վիճակը իրանց հաջորդներին։

Թե որքա՞ն եղավ այդ օտարազգի եկվորների ընդհանուր թիվը, հայտնի չէ, բայց այնքանը բավական հայտնի է, որ Լուսավորիչը դեռ յուր կենդանության ժամանակ կարողացավ Հայաստանի զանազան վիճակներում կարգել մինչև 400 եպիսկոպոսներ, ի բաց առյալ երեցները և վարդապետները[2]։

Այդ մի խոշոր թիվ է։ Ագաթանգեղոսի մեզ տված այդ թիվը՝ եթե չափազանցություն էլ համարվի, բայց այնքանը ճշմարիտ է, որ քրիստոնեությունը յուր հետ բերեց Հայոց աշխարհում օտարազգի եկեղեցականների բավական մեծ հոսանք։

Որպես երևում է վերևի նամակից, Լուսավորչի հիմնած դպրոցները, այնքան սուղ ժամանակում, որ տևեց նրա առաքելական կյանքը, անկարող էին բնիկներից այնքան թվով եկեղեցականներ պատրաստել։ Իսկ հիշյալ եպիսկոպոսները կարգվեցան այն ժամանակ, երբ դպրոցները դեռ նոր էին հիմնվում[3]։ Ուրեմն, շատ պարզ է, որ այդ հոգևորականները, եթե ոչ բոլորովին, բայց, անտարակույս, մեծ մասամբ օտարազգիներ էին՝ հույներ և ասորիներ։

Բնիկներից փոքր ի շատե նախապատրաստություն ունեին քրմերի որդիները։ Դրանք սկզբից ուսում ունեին, և հետո, Լուսավորչի նոր հիմնած դպրոցները մտնելով, կարողացան շուտով քրիստոնեական կրթություն ստանալ և եպիսկոպոսական աստիճանի հասնել։ Բայց դրանց թիվը այնքան աննշան էր, որ օտարազգիների հետ համեմատելով՝ խիստ զգալի փոքրամասնություն էին կազմում։ 12 եպիսկոպոսների անուններ միայն հայտնի են քրմերի որդիներից, որոնց մեջ նշանավոր եղավ Ալբիանոսը[4]։

Թեև դեռ Լուսավորչից առաջ Հայաստանում թաքնված քրիստոնեություն կար, և կային մինչև անգամ քրիստոնեական վանքեր, բայց այդ վանքերը ի վաղուց հետե սնուցանում էին իրանց նեղ և սահմանափակ շրջանում՝ խստակյաց աբեղաներ և աշխարհից հրաժարված ճգնավորներ միայն, որոնք անընդունակ էին նոր հիմնված եկեղեցու վարչության մեջ որևէ պաշտոն վարելու[5]։ Ասպարեզը դարձյալ մնում էր օտարազգիներին։

Բացի վիճակային եպիսկոպոսություններից, որ վարչական պաշտոն էր, նոր հիմնված վանքերի վանահայրությունն ևս, Լուսավորչի օրերում, հանձնվեցավ օտարազգի կրոնավորներին։ Նրանք կազմեցին վանական միաբանություններ, ինչպես, իրանց ազգայիններից, տիրեցին իրանց հանձնված վանքերի կալվածքներին, և այն աստիճան բնացան, որ դարերից վերջը, երբ հարկավոր եղավ հեռացնել նրանց, մեծ դժվարությամբ կարողացան իրանց տեղից շարժել[6]։

Արևմուտքում հռոմեական կայսրների հալածանքները, իսկ արևելքում դեռ անմեղ երկրի հրապուրանքը գրավեցին օտարազգի բախտախնդիր կրոնավորների մի ամբողջ հեղեղ դեպի Հայաստան, որտեղ երկրի նորահավատ թագավորը քրիստոնեական ոգևորությամբ յուր 620 գավառները նրանց առջևն էր դնում։ Մի անգամ ստացած վանքը կամ վիճակը դառնում էր նրանց մշտական ժառանգություն։

Այդ օտարազգի կրոնավորները իրանց ազգակիցների միջոցով, որոնք առաջուց արդեն ընտելված էին Հայոց վանքերում, այն աստիճան ճանաչում էին Հայոց երկիրը և նրա հարմարությունները, որ դեռ իրանք չեկած, կանխապես պայմանավորվում էին թագավորի և Հայրապետի հետ, թե ո՛ր վիճակը, կամ ո՛ր վանքը կցանկանային ստանալ[7]։ Այստեղից շատ պարզ է, որ քրիստոնեություն տարածելու առաքելական ոգին չէր, որ մղում էր նրանց դեպի Հայաստան, այլ լոկ շահախնդրություն, և կուսական երկրի առատաձեռն պատրաստակամությունը, որ նրանց ապահով պատսպարան էր ընծայում յուր գրկում։

Զենոբ Գլակը, ազգով ասորի, Տարոնի Իննակյան վանքի վանահայրը, յուր թղթի մեջ, որ ուղղված էր ասորաց եպիսկոպոսներին, ի թիվս այլոց այսպես է նկարագրում Հայոց երկիրը, հրավիրելով նրանց գալ Հայաստան։

«...Բայց դուք եթե կամենալու լինեք գալ այս երկիրը, բարություններով լի է այս երկիրը. տեղերը դաշտաձև են, անուշ օդով և բազմաջուր, իսկ չորս կողմում՝ լեռների վրա շատ ամրոցներ կան։ Այս երկիրը բազմարոտ է և մեղրաբուխ. և որպես մանանան իջնում էր երկնքից այնտեղ՝ հրեաների մոտ, նույնպես և այստեղ՝ այդ երկրում՝ իջնում է անտառների վրա և քաղցր է, ավելի քան մեղր, որ կոչում են գաղապեն... Այս երկիրը ամեն բարություններով լի է և աջողակ և առողջարար։ Իշխանները կրոնավորասեր են և չարիքներ գործելուց մաքուր. աղքատասեր են և որբերի խնամատարներ. սիրում են հող տանել եկեղեցիներին և հոգաբարձու լինել նրանց պետքերին[8]»։

Ահա՛ այսպես կազմվեցան կրոնավորների չորս տարբեր տարրեր։

Բնիկներից 1. Պարթևական տարրը, այսինքն՝ Լուսավորչի տոհմը, 2. Քրմական տարրը, այսինքն՝ քուրմերի որդիներից առաջացած հոգևորականությունը։

Իսկ օտարազգիներից 3. Հունականը և 4. Ասորականը։

Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձին։

Լուսավորչի տոհմը ուներ յուր սրբազան անցյալը, որ նվիրագործված էր մեծահրաշ և վսեմ ավանդություններով, որ ժողովրդի սրտին և հավատին շատ մոտ էին, որ նրա համար անմոռանալի էին։ Ժողովուրդը պաշտում էր այդ տոհմը և ընդունում էր նրան իբրև ամենաբարձր հոգևոր հեղինակություն։ Այդ էր պատճառը, որ Հայաստանը սիրում էր այդ տոհմի մեջ միայն տեսնել յուր եկեղեցու ներկայացուցչին, նրա՛ն միայն արժանի էր համարում Հայրապետական աթոռը, և միշտ նրա բարեբար ձեռքումն էր փափագում տեսնել յուր ծայրագույն Հովվապետի գավազանը։ Այդ զգացմունքներից առաջ եկավ այն ժառանգական կաթողիկոսությունը, որ իշխում էր Լուսավորչի տոհմի մեջ հորից որդի։

Եվ այդ Հայրապետական տունը, յուր գոյության ամբողջ ընթացքում, միշտ արդարացրեց ժողովրդի թե՛ հավատը և թե՛ նրա փափագները։ Նա միշտ մնաց անբիծ և անարատ և ամենայն անձնանվիրությամբ կատարեց յուր հանձն առած բարձր հոգաբարձությունը։ Իսկ այդ հոգաբարձությունը որքան սիրելի, որքան հաճելի էր ժողովրդի համար, նույնքան ծանր էր թագավորների համար։ Ամենայն անաչառությամբ սանձահարում էր նա թագավորների մոլորությունները և նրանց կամայականություններին սահման էր դնում։ Նա, իրավ, ճնշում էր գործ դնում թագավորների վրա, բայց երբեք գահին չէր դավաճանում։ Հայրենասիրությունը և արքայական թագի պաշտպանության գաղափարը՝ այդ տոհմի գերագույն առաքինություններից մեկն էր։

Լուսավորչի Հայրապետական տունը, յուր վեհափառության բարձր դիրքի համեմատ, արքայավայել կայություն ուներ։ Այդ տունը ավելի փայլ ստացավ Ներսես Մեծի օրերում։ Թագավորը այնտեղ մտնելու ժամանակ իրավունք չուներ նստելու, մինչև Հայրապետը տեղ ցույց տար։ Բայց Հայրապետը թագավորի արքունիքը մտնելու ժամանակ ազատ էր ամեն տեղ նստելու[9]։ Ծառայողների և վանական պաշտոնակալների մի ստվար բազմություն միշտ ներկա էր այնտեղ։ Տասներկու եպիսկոպոսներ Հայրապետի անբաժան գործակիցներն էին և խորհրդակիցները։ Չորս վարդապետներ և վաթսուն երեցներ միշտ անպակաս էին նրա սեղանից։ Աշ-

խարհականներից մինչև հինգ հարյուր հոգի ամեն օր սեղան էին նստում։ Բացի դրանցից, հայրապետը ուներ յուր այլ և այլ պաշտոնյաները, որպիսիք էին՝ սենեկապետ, փակակալ, Դրան եպիսկոպոս, դպրապետ, հյուրընկալ, սարկավագապետ, Դրան վարդապետ, Դրան երեց և այլն[10]։

Հայրապետական տունը, Լուսավորչի բոլոր ժառանգների օրերում, փակված չէր այս կամ այն վանքի առանձնության մեջ։ Այլ նա աշխարհից չէր անջատված և աշխարհի առջև միշտ բաց էր։ Լուսավորչի ժառանգները, Աբրահամի, Իսահակի և Հակոբի նման, միևնույն ժամանակ, թե՛ ժողովրդի հայրեր էին և թե՛ գերդաստանի հայրեր։ Նրանք բնակվում էին իրանց ընտանեկան խաղաղ շրջանում[11]։

Մեծ էր փառքը Հայրապետի, երբ նա մի որևէ տեղ էր գնում։ Մի ամբողջ բանակ շարժվում էր նրա հետ։ Մի քանի հարյուր սպառազինված ձիավորներ, յուր թիկնապահներից, ուղեկցում էին նրան։ Մի քանի հարյուր եպիսկոպոսներ, վարդապետներ, երեցներ և այլ եկեղեցականներ, ջորիների վրա նստած, ընթանում էին նրա առջևից և ետևից։ Ինքը Հայրապետը նստած էր լինում կամ սպիտակ ջորու վրա, կամ կառքի մեջ, որ նույնպես տանում էին երկու սպիտակ ջորիներ, որ միայն թագավորն իրավունք ուներ գործածելու։ Ջորիների թամբերը և այլ հանդերձանքը զարդարած էին լինում ոսկով։ Հայրապետը սովորաբար երեսը ծածկված էր ունենում սև քողով։ Առջևից տանում էին հայրապետական գավազանը և, իբրև սրբազան դրոշ— բարձր խաչվառը[12]։

Կենցաղավարության և արարողությունների այդքան ընդարձակ, այդքան շքեղ կազմությունը շատ հասկանալի է, որ ահագին ծախքերի էր կարոտ։ Հայոց թագավորներից հատկացրած 15 գավառների ամբողջ արդյունքները հազիվ կարողանում էին բավականացնել հայրապետական տան ծախքերը[13]։ Բացի այդ գավառներից, Հայրապետական տունը ուներ յուր սեփական կալվածքները։

Ծագելով բարձր ավատապետական տոհմից, ինքը Լուսավորիչը բավական կալվածքներ ուներ Հայոց երկրում։ Նրա հայրը, Անակը, Պարթևաստանից գալով Հայաստան և անձնատուր լինելով Հայոց Խոսրով թագավորին, վերջինս սիրով ընդունեց նրան և նրա բնակության համար ընծայեց ընդարձակ կալվածքներ։ Անակի վարմունքից հետո՝ այդ կալվածքները հարքունիս գրավվեցան։ Բայց Տրդատը կրկին վերադարձրեց Անակի ժառանգներին, որոնց ներկայացուցիչն էր Լուսավորիչը։ Այդ կալվածքների թվումն էր Արամոնս ավանը, Կոտայքի գավառում, որ ծառայում էր Լուսավորչի տան համար իբրև ձմերոց, և որը հետո վայելում էին նրա ժառանգները[14]։

Լուսավորիչը ստացավ Տրդատից նաև այն ավաններից և գյուղե-

րից շատերը, որոնք առաջ քրմերի սեփականություն էին։ Այդ գյուղերից մեկն էր Թորդանը, Դարանաղյաց գավառում, որ ծառայում էր Հայրապետական տան համար որպես ամարանոց։

Թորդանը նշանավոր էր հեթանոսական դարերում իբրև հայոց նվիրական վայրերից մեկը։ Այնտեղ կանգնած էին «Սպիտակափառ դից» տաճարները[15]։ Բայց Թորդանը ավելի երանելի դարձավ, երբ նրան վիճակվեցավ լինել հայոց բազմավաստակ Լուսավորչի զբոսավայրը։ Այնտեղ էր այն սրբազան այգին, որ յուր ձեռքով մշակել էր հայոց Առաքյալը։ Այնտեղ անցուցանում էր նա յուր հանգստի ժամերը, և այնտեղ հանգստացան նրա և յուր ժառանգների սուրբ նշխարները[16]։

Սկզբում քրմական կալվածք էր և Բիլ ավանը Եկեղյաց գավառում։ Նա գտնվում էր հռչակավոր Երիզայի հանդեպ։ Գայլ գետը, մեջտեղից անցնելով, բաժանում էր հայոց այդ երկու նշանավոր սրբավայրերը— Բիլը և Երիզան։ Առաջինի մեջ կանգնած էր Արամազդի դստեր՝ Նանեի արձանը[17], իսկ երկրորդի մեջ՝ Անահիտի ոսկյա արձանը[18]։ Վերջինը նույն արձանն էր, որի գլխին պսակ չդնելու համար՝ այնքան տանջանքներ կրեց Լուսավորիչը Տրդատից։ Իսկ հետո, երբ Տրդատը քրիստոնեություն ընդունեց, հիշյալ երկու տաճարներն էլ կործանեց Լուսավորիչը։ Բիլ ավանը ստացավ նա իբրև մշտական ժառանգություն։ Այդ ավանում դրվեցան նրա որդիներից մի քանիսի շիրիմները[19]։

Եվ այդպես, Հայրապետական տունը, յուր բազմագումար ծախքերը լցուցանելու համար, ստանում էր 15 գավառների ամբողջ արդյունքը, և, բացի դրանից, իբրև մշտական ժառանգություն, վայելում էր յուր սեփական գյուղերի և ավանների արդյունքները։

Լուսավորչի տան այդքան շատ կալվածներ գրավելը՝ հետո ոչ սակավ դժգոհությունների պատճառ դարձավ նրա ժառանգների և Արշակունյաց վերջին թագավորների մեջ։ Այդ թագավորները, որպես հետամուտ էին լինում նախարարների տիրած հողերը սահմանափակել, կամ բոլորովին նրանց տիրապետական իրավունքները ոչնչացնել,— նույնպես աշխատում էին, եթե ոչ բոլորովին գրավել Հայրապետական տան կալվածքները, գոնե նրանց չափը զգալի կերպով փոքրացնել։

Մի անգամ Ներսես Մեծը եկել էր Տարոն յուր կալվածքներին այցելություն գործելու, գտնվում էր Աշտիշատի վանքում։ Միևնույն ժամանակ Հայր Մարդպետ իշխանը— թագավորի ներքինապետը— շրջում էր յուր կալվածքներին այցելություն գործելու։ Նրանք հանդիպեցան միմյանց հիշյալ վանքում։ Որքան էլ Ներսես Մեծին հաճելի չէր այդ սոսկալի մարդու երեսը տեսնել, այնուամենայնիվ, նրա բարձր աստիճանին վայել ճաշ պատրաստել տվեց։ Թագավորի «Հայր» էր կոչվում այդ ներքինին և, տիրելով արքայական կանանոցի վրա, տիրում էր, միև-

նույն ժամանակ, և արքայի սրտի վրա։ Այնքան մեծ էր նրա ազդեցությունը, որ նախարարները և՛ ատում էին նրան, և՛ դողում էին նրանից։ Նրա խորհրդովն էր ոչնչացնում Արշակը ամբողջ նախարարական ցեղեր և տիրում էր նրանց կալվածքներին[20]։

Ճաշից առաջ Հայր Մարդպետ իշխանը զվարթությամբ ճեմում էր գեղեցիկ հրապարակի վրա, որ գտնվում էր վանքի եպիսկոպոսական ապարանքի առջև։ Այստեղից նա նախանձով և բարկությամբ նայում էր այն սքանչելի վայրերի վրա, որ պատկանում էին Ներսես Մեծին։ Նրա սիրտը լցվեցավ անհնարին դառնությամբ։ Երբ ճաշի ժամանակ փոքր-ինչ արբեցավ, այլևս չկարողացավ յուր տհաճությունը զսպել։ Սկսեց խորին արհամարհանքով նախատել Տրդատին և առհասարակ Արշակունի թագավորներին, ասելով.— «Ինչպե՞ս այսպիսի արդյունավոր տեղեր տվեցին «կանանցանանդերձ» մարդկանց (այսինքն՝ եկեղեցականներին, որ կանանց նման երկար զգեստներ էին հագնում)... Եվ եթե ես, Հայր Մարդպետս, կենդանի կմնամ և թագավորի մոտ կհասնեմ, այն ժամանակ այդ բոլորը, ինչ որ կա այստեղ, փոփոխել կտամ,— ամեն ինչ հարքունիս գրավել կտամ, և այս վանքը թագավորական սենյակներ կդարձնեմ...»։

Ներքինապետի հանդգնությունը սաստիկ ազդեց Ներսես Մեծի վրա, և նա, բնավ չակնածելով նրա ավագությունը, խստությամբ պատասխանեց. «Մեր տեր Հիսուս Քրիստոսը, որ պատվիրեց ամենեքին աչքը չդնել ուրիշի ունեցածին, նա թույլ չի տա ագահությամբ հափշտակել յուր նվիրական վայրերը։ Եվ բանսարկուն, որ անպատկառ սպառնալիքներ է կարգում, երբեք չի հասնի յուր չար նպատակներին, այլ յուր գործած անթիվ մեղքերը կխափանեն նրա անիրավ դիտավորությունները...»։

Ներքինապետը լռեց։

Սեղանին ներկա էր Շավասպ Արծրունին։ Ներքինապետի լրբությունը, որով վիրավորեց մեծ Քահանայապետին, սաստիկ զայրացրեց երիտասարդ իշխանին։ Բայց նա զսպեց յուր բարկությունը։

Ճաշից հետո, երբ ներքինապետը նստեց յուր կառքը, կամենում էր գնալ, իշխանը տարավ նրան ճանապարհ դնելու։ Նրանք ցած իջան Աշտիշատի վանքի բարձրությունից, մտան Եփրատի անտառախիտ ձորը։ Այդ միջոցին իշխանը հրավիրեց նրան, ասելով, թե այդ անտառում գեղեցիկ սպիտակ արջեր է տեսել։ Ներքինապետը դուրս եկավ կառքից, ձի նստեց, որ գնան որսալու։ Երբ փոքր-ինչ հեռացան և մտան անտառի խորքերը, իշխանը ետևից նետով զարկեց ամբարտավանին և դիակը ծածկեց թփերի մեջ[21]...

Շավասպ Արծրունին ուներ և այլ պատճառներ ներքինապետին սպանելու[22]*։*

Մինչդեռ Լուսավորչի տոհմը լարված մաքառման մեջ էր մարմնավոր իշխանության հետ, Հայաստանում աճում և հետզհետե ուժ էին ստանում մյուս եկեղեցական տարրերը։ Նրանց զորանալուն նպաստում էր ինքը մարմնավոր իշխանությունը, որպեսզի թուլացնի պարթևների ազդեցությունը։

Որքան Լուսավորչի տոհմը սիրելի էր ժողովրդին, նույնքան նա անտանելի էր դարձել թագավորներին։ Գուցե այդ ծանրությունը այնքան զգալի չէր լինի, եթե Հայրապետական տունը գտնվեր Արտաշատից դուրս՝ մի այլ գավառում։ Արշակունի թագավորները, որոնք, բացի թագաժառանգից, իրանց տոհմից մի այլ թագավորազնի չէին ներում Արտաշատում բնակություն ունենալ,— հանկարծ իրանց արքունիքի մոտ գտնում էին մի այլ տուն, մի սրբազան վեհարան, որ ոչ միայն համահավ և համապատիվ էր արքայական պալատին, այլ նրանից ավելի բարձր հարգանք էր վայելում։ Թագավորից նեղվածները այնտեղ պաշտպանություն և ապաստան էին գտնում։ Եվ այդպիսով, այդ վեհարանը ներկայացնում էր մի հակաթոռ իշխանություն, որ թուլացնում էր արքայական գահի բարձր նշանակությունը։

Այդ անընդհատ ընդհարումները արդեն թագավորին այն մտքին էին հասցրել, որ պետք էր ազատվել Լուսավորչի տոհմի ճնշումներից և ստեղծել մի նոր կաթողիկոսություն, որ ամեն հարաբերությունների մեջ ենթարկվեր թագավորի իրավասությանը։ Տիրան Բ-ը առաջինը եղավ, որ ձեռնարկեց իրագործելու այդ նպատակը։ Նրան նպաստեցին մի քանի հանգամանքներ։

Երբ Հուսիկ կաթողիկոսը չարաչար մահվամբ սպանվեցավ նույն իսկ Տիրանից, այդ ժամանակ Լուսավորչի տոհմի մեջ չգտնվեցավ մեկը, որ արժան լիներ Հայրապետական աթոռին։ Որովհետև, սպանված կաթողիկոսի երկու որդիները— Պապ և Աթանագինես— ծնված լինելով նույն Տիրան թագավորի դստերից և ամուսնացած լինելով նրա երկու քույրերի հետ, արքայական տան հետ այդքան մերձ ազգակցության պատճառով բոլորովին զինվորական կրթություն էին ստացել և կաթողիկոսության վայել վարք չունեին[23]*։ Իսկ Աթանագինեսի որդի Ներսեսը Կեսարիայում դեռ ուսում էր առնում։*

Ահա այդ հանգամանքներից օգուտ քաղելով, Տիրանը Փառեն կամ Փառներսեհ անունով մեկին կաթողիկոս ձեռնադրել տվեց, որը Աշտիշատի վանքեցին էր։ Նա կատարելապես հնազանդվում էր թագավորին,

ամեն գործի մեջ նրա կամքի համաձայն էր վարվում և մինչև անգամ շողոքորթում էր նրան[24]։

Այդ ժամանակ եկեղեցականների ագահությունը չափ և սահման չուներ։ Պատմությունը թողել է մի քանի զզվելի օրինակներ, թե որպիսի՛ անարգ միջոցներով այդ՝ աշխարհը ուրացած և կյանքից հրաժարված աբեղաները աշխատում էին հարստանալ, գյուղերի և կալվածքների տեր դառնալ։

Հիշյալ Փառեն կաթողիկոսի որդին էր Հոհան եպիսկոպոսը, որ ներկայանում էր որպես մի օրինակելի ագահություն։ Այդ կեղծավորը իրան ցույց էր տալիս վերին աստիճանի ճգնավոր, խստակյաց և անփառասեր։ Հագնում էր ցնցոտիներ, ման էր գալիս կիսամերկ, և մինչև անգամ սանդալներ չէր հագնում, այլ ամառը ոտները պատում էր «հեսկով» (ճիլոպով), իսկ ձմեռը «կեմով» (բույսերից հյուսած թոկերով)։

Յուր օտարոտի գլխատավորությամբ շատ անգամ հայտնվում էր նա արքունիքը և սկսում էր Տիրան թագավորի առաջ զանազան հիմար խաղեր և կատակներ անել։ Պառկում էր չորս թաթիկների վրա, իրան ձևացնում էր որպես ուղտ, սկսում էր թռչկոտել և ուղտի նման ձայներ հանել, ասելով. «Ես ուղտ եմ... ես ուղտ եմ... թագավորի մեղքերը կտանեմ... դրեք իմ վրա թագավորի մեղքերը, որ ես տանեմ...»։

Իսկ թագավորը, յուր մեղքերի փոխարեն, դնում էր նրա մեջքի վրա գյուղերի և ագարակների պարգևական հրովարտակներ[25]։

Այսպիսով հարստացավ նա և հարստացրեց յուր վանքը։

Որքան Լուսավորչի տոհմը խիստ և անաչառ էր դեպի բարձր մարմնավոր իշխանությունը, դրանք այնքան քսու և հաճոյամոլ դարձան։ Որքան Լուսավորչի տոհմը ազնիվ էր և վեհանձն, դրանք այնքան ստորաքարշ դարձան։

Շնորհավաճառությունը այդ խաբեբաների ձեռքում հասել էր ամենավատթար անարգության։ Մի անգամ նույնիսկ այդ Հոհան եպիսկոպոսը ճանապարհին հանդիպում է մի լավ հագնված երիտասարդի, որ նստած էր գեղեցիկ նժույգի վրա։ Նժույգը հրապուրում է սրբազանին։ Նա կանգնեցնում է երիտասարդին, հրամայում է ցած իջնել ձիուց։ Երիտասարդը կատարում է նրա հրամանը։ «Խոնարհեցրո՛ւ գլուխդ,— ասում է նրան եպիսկոպոսը,— ես պետք է քահանայության ձեռք դնեմ քո վրա»։ Զարմացած երիտասարդը պատասխանում է. «Ես մի ավազակ, սպանող և չարագործ մարդ եմ, ես արժան չեմ մի այսպիսի պաշտոնի»։ Եվ իրավ, երիտասարդը հենց նույն ժամին վերադառնում էր ասպատակությունից։ Բայց եպիսկոպոսը ուշադրություն չէ դարձնում նրա ընդդիմադրությանը, բռնությամբ խլում է նրա վերարկուն, հագցնում է «աղա-

բուղոն» (փարաջա) և ձեռքը գլխին դնելով, ասում է. «Ահա՛ քեզ երեց ձեռնադրեցի, հիմա գնա՛ քո գյուղի քահանան դարձի՛ր»։ Հետո նայում է երիտասարդի նժույգի վրա, հեռանում է, ասելով. «Այդ էլ թո՛ղ իմ վարձը լինի...»։

Կաթողիկոսի որդին էր այդ անողը, երիտասարդը ի՞նչ համարձակություն ուներ նրան հակառակելու։

Նա ապշած, շփոթված գնում է յուր տունը, կնոջը պատմում է ճանապարհի վրա պատահած անցքը։ Կինը ծիծաղելով հիշեցնում է նրան, թե դու մինչև անգամ մկրտված չես, ինչպե՞ս քահանա ձեռնադրվեցար։ Երիտասարդը ստիպված է լինում կրկին գնալ եպիսկոպոսի մոտ և գտնում է նրան յուր վանքում։ Երբ հայտնում է, թե ինքը դեռ քրիստոնյա չէ և մկրտություն անգամ չէ ընդունել,— այդ միջոցին եպիսկոպոսը վեր է առնում մի սափորով ջուր, թափում է նրա գլխին, ասելով. «Ահա՛ մկրտվեցար, այժմ կարող ես գնալ[26]...»։

Ոչինչ սրբություն չէր կարողանում սանձահարել այդ ապահների ընչասիրությունը։ Արշակ թագավորի Դրան երեցը, Մրջյունիկ անունով, կատարեց մի անօրինակ եղեռնագործություն, որի համար իբրև վարձ ստացավ Գոմկունք գյուղը, Տարոնի գավառում։ Նա թագավորի երկրորդ կնոջից՝ Փառանձեմից, կաշառվելով, սուրբ հաղորդության բաժակի մեջ թույն խառնեց և մատույց թագավորի առաջին կնոջը՝ Ոլիմպիադային, որով և մեռավ նա[27]։

Բարձր հոգևորականությունը մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղության մեջ ընկավ։ Ի դեմս Լուսավորչի տոհմի, նա ձգտում էր իշխել և մինչև անգամ բռնանալ թագավորի վրա։ Իսկ ի դեմս մյուս կաթողիկոսական տոհմերի, նա ընդունեց հլու կամակատար լինել։

Այդ մյուս տոհմերից ավելի ուժ էր ստացել այն սերունդը, որ մենք կոչեցինք **հունական տարր**: Դրանց մեջ նշանավոր էր Աղբիանոսի տոհմը, որ սկսյալ Լուսավորչի և Խոսրով Բ-ի օրերից, պահպանում էր Մանազկերտի անընդհատ, ժառանգական եպիսկոպոսությունը[28]։

Աղբիանոսի տոհմը ուներ յուր խորին անցյալը և յուր վաղեմի ավանդությունները։ Առաջ գալով քրմական ծագումից, այդ տոհմի ներկայացուցիչները քրիստոնեական կրոնավորի զգեստի տակ դեռ պահպանում էին այն սովորությունները, որոնք հեթանոսական բնավորություն ունեին, գոնե իրանց հարաբերությունների կողմից դեպի թագավորը։ Հին քուրմը, նոր կրոնի քահանայի կերպարանքով, գիտեր, թե ինչպես պետք է վարվել թագավորի հետ։ Եվ թագավորները սկսեցին նրանց առաջ քաշել և ուժ տալ։

Այդ տոհմը սկսեց համարձակ կերպով մաքառել Լուսավորչի տան

հետ, որ միշտ պահպանել էր յուր անարատությունը,— սկսեց հետամուտ լինել գրավելու Հայրապետական աթոռը, որ միայն Լուսավորչի տան ժառանգություն էր։ Քսությունը, բանսարկությունը, թագավորի և նախարարների բոլոր հաճույքները կատարելը— ահա այն գլխավոր զենքերը, որով նրանք մրցում էին Լուսավորչի տան հետ և որով աշխատում էին իրանց նպատակին հասնել։ Եվ թագավորին ու նախարարներին այս տեսակ կամակատարներ էին հարկավոր, և ոչ Լուսավորչի ժառանգների նման անաչառ, կրոնասեր կաթողիկոսներ, որոնք, մարմնավոր իշխանության հակառակ, միշտ ներկայացնում էին մի մեծ, ընդդիմադիր զորություն։

Շողոքորթները տարան հաղթություն։

Ներսես Մեծի ցավալի վախճանից հետո Լուսավորչի Հայրապետական աթոռը գրավեցին Հուսիկը[29], Զավենը[30], Շահակը[31] և Ասպուրակեսը[32]։ Այդ չորսն էլ, որ մինը մյուսից հետո կաթողիկոսներ դարձան, Աբլիանոսի որդիներից էին և քրմական ծագումից։

Այդ կաթողիկոսները մարմնավոր իշխանության բարձր ներկայացուցիչներին նմանվելու մեջ այնքան հեռու գնացին, որ հոգևոր կաթողիկոսությունը դարձրին մի տեսակ նախարարություն և նախարարների նման էին ապրում։ Շրջում էին ոսկեսանձ, ոսկեսարաս նժույգներով, որ հոգևորականներին վայել չէր նստել։ (Հոգևորականները սովորաբար ջորիներ էին նստում, կաթողիկոսը սպիտակ գույնով, իսկ նրանից ցածր աստիճան ունեցողները՝ հասարակ գույներով)։ Հագնում էին սամույրենի, կնդմենի, որ հոգևորականներին արգելված էր կրել։ Հագնում էին գույնզգույն նարոտներով, ժապավեններով և ոսկեհուռ ծոպերով զարդարած հագուստներ։ Եվ իրանց պճնասիրությունը այն աստիճան ծայրահեղության հասցրին, որ իրանց անզուսպ հաճույքներին բավականություն տալու համար՝ սկսեցին մինչև անգամ զինվորական զգեստներ հագնել։ Զավենը առաջին օրինակը տվեց զինվորական զգեստներ հագնելու, և նրան հետևեցին նրա հաջորդները[33]։

Լուսավորչի տան անկումից հետո, մինչդեռ բարձր հոգևոր իշխանությունը այս տեսակ անկարգության մեջ էր, Հայաստանում լուռ ու մունջ աճում և հետզհետե զորանում էր օտարազգի կրոնավորների տարրը— հունականը և ասորականը։

Թեև քրիստոնեության մուտքի սկզբում, բնիկներից պատրաստի անձինք չլինելու պատճառով, նրանց հանձնվեցան մինչև անգամ վիճակային եպիսկոպոսություններ,— բայց որովհետև վիճակային եպիսկոպոսությունը հայոց հոգևոր կառավարության մեջ ներկայացնում էր մի տեսակ ինքնուրույն և ինքնակա իշխանություն, որ բացի հայնմանն, որ

կենտրոնացած էր յուր մեջ, այլ պահպանվում էր միևնույն տոհմի մեջ իբրև ժառանգություն[34],— այդ պատճառով, այդ պաշտոնը առնվելով օտարներից և հետզհետե գրավեցին բոլորը— ազգով հայ եկեղեցականները։

Օտարազգի կրոնավորների ձեռքում մնացին վանքերը, վանական միաբանությունները և անապատները։

Թե յուրաքանչյուր վանքում որքա՞ն էր դրանց թիվը, բավական է բերել մի օրինակ, որ երբ սուրբ Եփիփանը թողեց Հայոց երկիրը և վերադարձավ Հունաստան, նա յուր ջանքերով հաստատած շատ կրոնական միաբանություններ թողնելուց հետո տարավ յուր հետ միայն յուր ձեռնասուն աշակերտներից 500 հոգի[35]։

Այսպես է նկարագրում ժամանակի պատմագիրը այդ անապատականների կյանքը.

...«Բնակվում էին անապատներում, առանձնացած էին երկրի քարանձավներում, ժայռերի այրերում և խոռոչներում։ Միայն մեկ հանդերձ ունեին, շրջում էին բոբիկ ոտներով, կերակրվում էին խոտերով, ընդեղեններով և արմատներով։ Գազանների նման թափառում էին լեռների մեջ, պատած էին մաշկերով և այծի մորթիներով, և անապատներում մոլորված, աստուծո սիրո համար, խորին նեղության մեջ, տանջվում էին ցրտից, սովից, քաղցից և ծարավից։ Եվ իրանց կյանքի ամբողջ օրերը այսպիսի համբերությամբ էին տանում, բոլորովին ունայն համարելով այս աշխարհը... և թռչունների երամների նման բնակվում էին ապառաժների խոռոչներում կամ քարանձավների խորքերում, առանց որևէ կայք կամ ստացվածք ունենալու, առանց որևէ խնամք կամ դարման տանելու իրանց մարմնին[36]»։

Օտարազգի կրոնավորները, որոնք լցրել էին Հայոց անապատներն ու վանքերը, կամ այս տեսակ ճգնավորներ էին, որոնց կրոնամոլությունը հասնում էր վերին աստիճանի մոլեռանդության,— կամ խիստ ամուր հաստատությամբ կազմակերպված եկեղեցական միաբանություններ էին, որոնք հարստահարում էին երկրի արդյունքները հօգուտ իրանց վանքերի։

Առաջինները — անապատականները — անձնուրացությունը, կյանքից և աշխարհի վայելչություններից հրաժարվելը ընդունելով իբրև միակ փրկարար հոգևոր գաղափար, իրանց սպանիչ օրինակներով մեռցնում էին ժողովրդի մեջ ամեն կյանք, ամեն աշխույժ և ամեն ձգտումն դեպի հառաջադիմություն։ Ժողովրդի մեջ վհատություն և ունայնասիրություն զարգացնելով, կտրում էին նրան թե աշխարհից և թե գործունեությու-

նից։ Ինչու չստացան նրանք «խստաճարակ[37]» անունը, որով մարդը հավաստարեցրել էին անտառին։

Միշտ խոնարհություն քարոզելով, միշտ հեզություն քարոզելով, նրանք սպանում էին ժողովրդի քաջալերական ոգին։ Թե որքա՜ն աննպաստ կարող էին լինել այդ տեսակ քարոզները ժողովրդի պահանջներին,— այդ մասին բավական է ի նկատի առնել Հայաստանի աշխարհագրական դրությունը, թե որպիսի՜ դրացիներ ուներ նա և որպիսի՜ բարբարոսներով էր շրջապատված նա։ Մի ժողովուրդ, որ սուրը ձեռքում ամեն րոպե պետք է հսկեր, թե ո՛ր կողմից է գալիս թշնամին,— նրան ասում էին՝ սուրդ ցած դի՛ր, մտի՛ր քարանձավների մեջ, և քո հոգու համար աղոթի՛ր... աշխարհը չարժե այնքանին, որ մարդ նրա համար մտածեր...

Տրդատ մեծը առաջինը եղավ, որ հետևեց այդ խրատներին և այն սուրը, որ հայոց դրացիների վրա սարսափ էր տարածում, ցած դրեց և մտավ Սեպուհ լեռան այրերի մեջ։

Բայց դրացիներն ավելի լավ էին հասկանում իրանց գործը։ Այդ մասին պատմությունը տալիս է մեզ մի շատ ինքնուրույն և ժամանակի բնավորությանը խիստ հատկանիշ օրինակ։

Երբ Լուսավորչի թոռ Գրիգորիս կաթողիկոսը, քրիստոնեություն տարածելով, հայտնվեցավ Աղվանից աշխարհում, և երբ հանդիման եղավ Մազքութների Սանեսան թագավորին, յուր քարոզի մեջ, ի թիվս այլ խրատների, հայտնեց այն միտքը, թե «Ատելի է աստծուն ավարառությունը, հափշտակությունը, սպանությունը, ագահությունը, ուրիշներին զրկելը, այլոց սեփականության աչք դնելը» և այլն։ Նրան բարկությամբ պատասխանեցին. «Եթե չհափշտակենք, եթե այլոց ունեցածը ավարի չառնենք, ուրեմն ինչո՞վ պետք է ապրենք մենք և մեր զորքերի բազմությունը»։ Հետո թագավորը և ավագանին իրանց մեջ խորհեցին. «Դա եկել է և այդպիսի քարոզներով կամենում է զրկել մեզ մեր կյանքի պետքերը հայթայթելու քաջությունից. եթե դրան լսելու լինենք, և ընդունենք քրիստոնեական օրենքները, այն ժամանակ կխափանվին մեր ապրուստի միջոցները...»։ Եվ ավելացրին. «Այդ հայոց թագավորի խորամանկությունն է, դրան ուղարկել է մեզ մոտ, որ այդ ուսմունքով խափանե մեր ասպատակությունները և մեր արշավանքները յուր աշխարհից դադարեցնե. եկեք դրան սպանենք, և հետո արշավենք դեպի Հայաստան և ավարով լցնենք մեր աշխարհը...»։

Այդպես էլ արեցին. աստուծո մարդուն կապեցին մի կատաղի ձիան պոչից և բաց թողին Վատնյան դաշտի տարածության վրա[38]...

Այժմ պարզ է, թե ի՞նչ տեսակ դրացիներ ուներ Հայաստանը։ Եվ

աղվանները դեռ ամենալավ դրացիներն էին։ Իսկ հայերը պետք է քրիստոնեական հեզությամբ այդ բարբարոսների հետ մրցեին...

Օտարազգի կրոնավորների մեծ մասը, որպես հիշվեցավ, վերևում նկարագրած անապատականներն էին, որ իրանց սպանիչ օրինակով մեռցնում էին ամեն կենդանություն։ Մնացյալները վանական կղերական միաբանություններ էին, որ գրավել էին վանքերը։ Որքան առաջինները արհամարհում էին կյանքը և աշխարհի վայելչությունները, նույնքան վերջինները ամեն հնար գործ էին դնում հարստացնելու իրանց վանքերը։

Ցավալին այն էր, որ դրանք էին հայոց վարժապետները։ Այն բոլոր դպրոցներում, որ հիմնվեցան Լուսավորչի ձեռքով, Տրդատի օրերում, և այն բոլոր դպրոցներում, որ հիմնվեցան Ներսես Մեծի ձեռքով, Արշակ Բ-ի օրերում,— բոլորի մեջ տիրապետում էին հունաց և ասորաց լեզուները, բոլորի մեջ ուսումը ավանդվում էր հունաց և ասորաց գրքերով[39]։ Ուսման նպատակը լինելով՝ ծանոթացնել քրիստոնեության և սուրբ գրքերի հետ, իսկ սուրբ գրքերը գրված լինելով հիշյալ լեզուներով,— այդ պատճառով նրանք դարձան դպրոցական լեզու։ Հայոց լեզուն, հայոց գիրն ու դպրությունը արտաքսվեցան հայոց ուսումնարաններից, որովհետև դեռ սուրբ գրքերի թարգմանություններ չէին եղած, և հայկական դպրությունը տակավին մնացել էր յուր հեթանոսական բովանդակության մեջ, և այդ պատճառով արհամարհված էր։

Այդ հունական և ասորական դպրոցները, որ կառավարվում էին հույն և ասորի կղերի ձեռքով, կարող էին ավելի վտանգավոր լինել, եթե դուրս գային վանքերի պարիսպներից և տարածվեին ժողովրդի մեջ։ Բայց վանքերի մեջ փակված լինելով, ժողովուրդը թեև չէր օգտվում նրանցից, բայց գոնե չէր էլ վարակվում։ Նրանք պատրաստում էին միայն հոգևորականներ— ասորոց և հունաց լեզուներով կրթված հոգևորականներ։

Այդ օտար, հայի համար խորթ և անհասկանալի լեզուները տիրապետում էին և հայոց եկեղեցիներում։ Բոլոր սուրբ գրքերը, բոլոր աղոթքներն ու մաղթանքները այդ լեզուներով էին կատարվում։ Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում և ոչինչ էլ չէր շահվում եկեղեցուց։ Այդ էր պատճառը այն խորին դանդաղկոտության, որով քրիստոնեությունը տարածվում էր Հայաստանում։

Հայոց լեզուն մնացել էր հեթանոսական հին երգերի մեջ, որ դեռ երգում էր ժողովուրդը, որ դեռ սիրում էր ժողովուրդը։ Հայոց լեզուն մնացել էր հեթանոսական հին ավանդությունների մեջ, որոնցից դեռ բոլորովին չէր բաժանվել ժողովուրդը։ Հայոց լեզուն մնացել էր նույն իսկ ժողովրդի բերանում, որ հալածում էր օտարազգի կղերը։

Այդ բոլորից հետո, շատ հասկանալի է, թե ի՛նչ կործանիչ ազդեցություն կարող էին ունենալ այնքան բազմաթիվ վանքերն իրանց օտարազգի կրոնավորներով, երբ ժողովուրդը յուր հոգևոր և մտավոր կրթությունը պետք է այդ անհարազատ ձեռքերից սպասեր։

Օտարազգի կրոնավորները երկար չմնացին իրանց ճգնավորական կեղևի մեջ։ Հարստությունը հետզհետե խլեց այն կեղծ-բարեպաշտական դիմակը, որով ծածկված էին նրանք։ Աշխարհի փառքն ու վայելչությունները արհամարհող աբեղաները, որոնք առաջ ցնցոտիներով էին ծածկում իրանց մերկությունը, բոբիկ ոտներով էին շրջում, միայն արմատներով ու բույսերով էին կերակրվում,— երբ հարստացան և հարըստացրին իրանց վանքերը, սկսեցին ոչ միայն չափազանց շռայլ կյանք վարել, այլ բոլորովին ա՛յլ փառասիրությունների ձգտել։

Յուր տեղում հիշվեցավ, որ Արշակունյաց վերջին թագավորները մասամբ ուղղեցին Տրդատի սխալը նրանով, որ օտարազգի կրոնավորներին թույլ չէին տալիս եկեղեցու վարչական պաշտոնների մեջ մտնել, որպիսի էր վիճակային եպիսկոպոսությունը, բայց միայն համբերում էին նրանց վանքերին, որ մի անգամ ձեռք էին ձգել։ Բարձր հոգևոր իշխանությունը—կաթողիկոսությունը—միայն Լուսավորչի տան ժառանգությունն էր, որ հետո ժամանակավորապես Ալբիանոսի տոհմի ձեռքն անցավ։ Իսկ վիճակային եպիսկոպոսությունների պաշտոնը վարում էին նույնպես բնիկները, միայն ազգով հայ եկեղեցականները։ Բացառություններ խիստ սակավ էին լինում։

Բայց Արտաշես Գ-ի թագավորության վերջին օրերում՝ օտարազգի կրոնավորները հետամուտ են լինում ոչ միայն հայոց վիճակների եպիսկոպոսությունները գրավելու, այլ մինչև անգամ Հայրապետական աթոռը իրանց ձեռքը ձգելու։ Ժամանակի քաղաքական դառն հանգամանքները նպաստեցին նրանց։ Արշակունյաց իշխանությունը անկման վիճակի մեջ էր. թագավորի մեջ այլևս զորություն չէր մնացել։ Նախարարների մեջ տիրում էր անհաշտ երկպառակություն։ Նրանք ապստամբվել էին Արտաշեսի դեմ և ավելի բարվոք էին համարում օտարի ծանր լուծը կրել, քան իրանց թագավորին խոնարհվել։ Հայաստանը հոգեվարքի մեջ էր։ Մնում էր վերջին հարվածը, որ տար պարսիկը, և Արշակունյաց տան վերջին շառավիղը հանգչեր...

Ահա այդ տագնապի միջոցներում օտարազգի կղերը աշխատեց օգուտ քաղել հանգամանքներից։ Նա հայոց կաթողիկոսի ընտրության մեջ, որ վաղեմի ավանդություններով կախված էր միայն հայոց թագավորից, հայոց նախարարներից և հայոց ժողովրդից,— խառնեց օտարի

նենգավոր ձեռքը։ Սուրմակը առաջինը եղավ, որ այդ դավաճանության օրինակը տվեց, և պարսից Վռամ թագավորի հրամանով Հայրապետական աթոռը բարձրացավ։ Նրան հաջորդեցին Բրքիշո և Շմուել ասորիները, դարձյալ պարսից թագավորից նշանակվելով։ Թե որպիսի՛ ագահությամբ այդ մատնիչները սկսեցին այնուհետև վիճակները գրավել և եպիսկոպոսների ժառանգությունները հափշտակել,— այդ մասին պատմությունը թողել է խիստ պախարակելի օրինակներ[40]։

Այդ դավաճանները դարձան պարսից թագավորի ձեռքում մի անարգ գործիք և հայոց ազատ եկեղեցու բոլոր կարգերի մեջ խառնեցին նրա կործանիչ միջամտությունը։ Եպիսկոպոսների ձեռնադրությունը և նրանց վիճակներ տալու իրավունքն անգամ՝ կախումն ստացավ պարսից թագավորից։— Հայոց կաթողիկոսը դարձավ պարսից մարզպանի ընկեր և գործակից, որի կառավարությանը ենթարկվեցավ այդ ժամանակ Հայաստանը[41]։

Այդ բոլոր ցավալի դեպքերը կատարվեցան այն ժամանակ, երբ Լուսավորչի տան վերջին ժառանգը, Սահակ Պարթևը, տակավին կենդանի էր։ Թեև ասորին պարսից բռնակալ ձեռքով հափշտակեց նրանից Հայրապետական աթոռը, բայց նա արդեն յուր գործը կատարել էր—Հայաստանի փրկության մե՛ծ գործը։ Նա հեռացավ ասպարեզից, բայց հաղթությունը յուր հետ տարավ։ Յուր տոհմի մեջ վերջինը լինելով, նա հասցրեց և վերջին ամենաստատուն հարվածը, որով խորտակեց օտարազգի կղերի ամբողջ ապագան։ Մարգարեական ոգվով նախագուշակելով գալոց վտանգները, նա այդ վտանգների դեմ մի ամուր պատնեշ դրեց։ Արդարև, Արշակունյաց արքայական գահը ընկավ, Հայրապետական աթոռը պարսից վերահսկողությանը ենթարկվեցավ, բայց նա ազատեց եկեղեցին. ազատեց ազգը։ Ինչո՞վ։—

Մեծ Հայրապետը, յուր գործակից Մեսրոպի աջակցությամբ, ստեղծեց հայոց գիրը և նոր դպրությունը։ Հայոց լեզուն սկսեց թագավորել թե՛ հայոց դպրոցներում և թե՛ հայոց եկեղեցիներում։ Հայը սկսեց յուր լեզվով աղոթել և յուր լեզվով կարդալ։— Եվ դրա մեջն էր օտարազգի կղերի մահը։ Մինչ այդ ժամանակ, ինչպես տեսանք, հունաց և ասորաց լեզուներն էին տիրապետում հայոց դպրոցներում. հույները և ասորիներն էին հայոց վարժապետները. նրանց լեզուներն էին տիրապետում և հայոց եկեղեցիներում։ Բայց հայկական տառերի գյուտից հետո արտաքսվեցան նրանք։ Բոլոր սուրբ գրքերը թարգմանվելով մայրենի լեզվով, թե՛ եկեղեցին և թե՛ դպրոցը դարձավ բուն ազգային և ազատվեցավ

օտարազգի կղերի հոգատարձությունից։ Իսկ նրանց պալաճանությամբ հափշտակած կաթողիկոսությունը տևեց խիստ սակավ ժամանակ[42]։

Ահա՛ այսպես, Լուսավորչի տոհմի վերջին Լուսավորիչը, Սահակ Պարթևը, սկիզբը դրեց հայոց վերածննդության «Ոսկյա դարին», *որով կրկին կենդանացավ Հայաստանը, և ընկավ խավարի թագավորությունը...*

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ՄԵԿԸ—ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ
ՄՅՈՒՍԸ—ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

I

ՊԱՏՄՈՍ

Ծովը լուռ էր։ Ալիքները զգուշությամբ զարկվում էին Պատմոս կղզու ապառաժոտ ափերին, վախենալով, միգուցե խանգարեն նրա երեկոյան խաղաղությունը։ Արեգակը արդեն սկսել էր թեքվել դեպի յուր գիշերային հանգստարանը։ Նրա վերջին ճառագայթները մի առանձին սիրելությամբ շողշողում էին ափերի մոտ սփռված սպիտակ խճերի և ոստրեների նախշուն խեցիների վրա և, կարծես, դժվարանում էին բաժանվել այդ գեղեցիկ առարկաներից։

Այդ մենավոր կղզին այնպիսի տպավորություն էր գործում, որ, կարծես, մի փոքրիկ սունկի նման բուսած լիներ ջրերի տակից։ Ծովը վաղուց կուլ տված կլիներ նրան, եթե նրա վրա բնակվելիս չլիներ մի սրբազան անձնավորություն։

Ջրերով շրջապատված, համարյա թե անջատ էր նա։ Ոչ մի գետ, ոչ մի վտակ չէր սնուցում նրա շռայլ կանաչազարդությունը։ Ինքը ծովը, յուր խոնավ և լի գոլորշիներով մթնոլորտով, որպես մի զորավոր ջերմանոց, պահում էր նրան մշտական զվարթության մեջ։ Նրա անհավասար, կոնաձև մակերևույթի վրա ամեն բույս աճել, ամեն բույս բազմացել էր յուր անզուսպ վայրենության մեջ։ Տեղ-տեղ քմահաճ թզենին յուր մերկ արմատներով քարշ էր ընկած ժայռերի ծերպերից և յուր լայն տերևներով ծածկում էր ապառաժների կուրծքը։ Տեղ-տեղ նռնենին ժպտում էր յուր վառ-ծիրանեգույն ծաղիկներով։ Տեղ-տեղ հսկա կիպարիսը համբարձվում էր ամպերի հետ։ Արեգակի ճառագայթները բոլորովին անզոր էին թափանցելու նրա սաղարթախիտ թանձրության մեջ, ուր պահպանվում էր խիստ ախորժելի, խիստ զբոսապարար զովություն։ Այնպես էր թվում,

որ այդ կղզու սուզման օրից մարդկային բարերար ոտքը երբեք չէր շոշափել նրա ամայությունը։ Այնտեղ չկային և անասուններ։ Երբեմն սպիտակ ճայերը սոսոսալով հայտնվում էր յուր դարանից, երկչոտ կերպով նայում էր յուր շուրջը և դարձյալ անհայտանում էր խիտ մացառների մեջ։ Թռչուններն անգամ չէին համարձակվում չափել ծովի անհուն տարածությունը և մերձենալ նրա անհյուրընկալ ափերին։ Միայն անխելս ճնճղուկը, մի քանի տեսակ երգեցիկ ծտերի հետ իրանց անհանգիստ ճիչ ու աղմուկով խառնում էին տիրող լռությունը։

Բայց կղզում բնակիչներ կային, թեև նրանց թիվը երեք հոգուց ավելի չէր։

Ահա՛ այնտեղ, ափի մոտ, մեկը նստած է ավազների վրա և անթարթ աչքերը հառած է դեպի ջուրը։ Նրա սուր աչքերը թափանցում են մինչև պարզ ու վճիտ հատակը։ Այնտեղ դրած է մի կողով, ձկնորսների ծուղակի նման կազմված մի կողով։ Նա նայում է այդ կողովի վրա։ Քարերի բեկորներից մի բոլորակ պատնեշ է շինված նրա շուրջը, որ ալիքներն իրանց հետ չտանեն։ Այդ բոլորակի մեջ լճացել է ջուրը, որը ծովի հետ հաղորդակցություն ունի արհեստական նեղուցով։

Մի այլ երիտասարդ, առաջինից փոքր-ինչ հեռու, նստած է նույնպես ավազների վրա և ինչ-որ մի բան է շինում։ Նրա առջև ածած են ամուր կայծքարի մեծ և փոքր կտորտանք։ Նրանցից մեկը բռնած ունի յուր ձեռքում, երբեմն լեսում է, երբեմն հղկում է, մի այլ քարի կտորի վրա քսելով։ Իսկ երբեմն մատով փորձում է, թե որքան սրվեցավ նա։ Նա նմանում էր այն նախնական մարդկեներին, որ մի ժամանակ քարից իրանց համար զենք էին պատրաստում։ Բայց նրա պատրաստածը զենք չէր, թեև տապարի ձև ուներ։ Նա գործիք էր շինում,— և տաշելու գործիք։ Երբ հոգնեցավ, ձեռքը նեցուկ տվեց գլխին, նայում էր դեպի ծովի մութկապտագույն տարածությունը։

Երկու երիտասարդներն էլ լուռ էին և հազիվ խոսում էին միմյանց հետ։ Յուրաքանչյուրը զբաղված էր յուր գործով, յուրաքանչյուրը խորասուզված էր յուր խոհումների մեջ։ Նրանց թերմաշ հագուստը, որ կրոնավորի զգեստի պատկառելի ձևն ուներ, բոլորովին կորցրել էր յուր վայելչությունը։ Պատառոտած ծվեններ, երեկ, ասեղի և թելի չքավության պատճառով, կապված էին միմյանց հետ զանազան հանգույցներով։ Տեղ-տեղ ձկան սրածայր ոսկրը, քորոցի փոխարեն, կցում էր մի պատառը մյուսի հետ։ Իսկ այդ ողորմելի հագուստը մի ժամանակ ունեցել էր յուր վայելչությունը, ունեցել էր և յուր շքեղությունը։ Այժմ նրանց բզբզված պատառները, կարծես, լալով ասում լինեին միմյանց. «Եթե մենք էլ ցած թափվենք, այլևս ինչ կմնա այդ խեղճերի վրա...»։

Այդ թշվառ հագուստի մեջ անգամ դեռ փայլում էր երկու երիտասարդների հարգելիությունը։ Գոհ էին նրանց խաղաղ դեմքերը, երկնային մխիթարությամբ վառվում էին նրանց զվարթ աչքերը։ Երևում էր, նրանք վաղուց հաշտվել էին իրենց աննախանձելի վիճակի հետ։

Հասակով շատ չէին տարբերվում միմյանցից, երկուսն էլ քսանհինգ տարեկանից ավել չէին լինի։ Տարբերվում էին միայն կազմվածքով ու դեմքով։ Մեկը որքան ամուր էր կազմված, մյուսը նույնքան նրբակազմ էր և թույլ։ Մեկը որքան սևուկ էր դեմքով, մյուսը նույնքան ճերմակ էր, և խարտյաշ գիսակները ծածանվում էին ուսերի վրա։ Առաջինի անունն էր Տիրանում, որ կրճատյալ ձևով կոչում էին Տիրև, իսկ երկրորդինը՝ Ռոստոմ[1]։ Այդ վերջինն էր, որ նստած էր ափի մոտ և նայում էր կղզու վրա։ Նրա խոժ աչքերը տեսնում էին, թե ինչ է կատարվում ջրի պարզ խորության մեջ։

— Որքա՜ն խորամանկ են դարձել այդ անիրավները,— ընդհատեց նա տիրող լռությունը։— Մոտենում են կղզուն և, կարծես, հետ են քաշվում, պտտվում են նրա շուրջը, և դարձյալ հեռանում են։ Ա՜խ, եթե մի կտոր երկաթ լիներ, ես դրանց համար մի կարթ կշինեի…

Նրա խոսքը ձկների մասին էր։ Նա թողեց յուր բռնած գիրքը, եկավ, նստեց առաջինի մոտ, որին կոչում էին Տիրև։

— Բայց իմ գործը այսօր լավ է գնում,— պատասխանեց Տիրևն,— եթե այդ էլ վերջացնեմ, երկրորդ տապարը կլինի… դեռ սրել շատ կա։— Նա նայեց դեպի երկինքը, ավելացնելով.— քարը վատ է, շուտ է բթանում, մի օր բանեցնում ես, այլևս ոչինչ չէ կտրում, պետք է միշտ սրել…— Նա սկսեց մատով փորձել տապարի սուր կողմը։

— Սրի՛ր, սիրելի Տիրև,— ասաց Ռոստոմը մի առանձին փափագով.— երբ որ բութ է լինում, այդ սաստիկ հոգնեցնում է նրան… Ա՜խ, ո՛րքան աշխատում է նա… Այսօր առավոտյան (դու դեռ քնած էիր, չնկատեցիր) տեսնում եմ՝ դուրս եկավ յուր քարանձավից, ուշիկ քայլերով անցավ մեր մոտով, որ չխանգարե մեր քունը։ Հետո դիմեց դեպի աղբյուրը, որ մի հրաշքով բխեցրեց, երբ այդ կղզում խմելու ջուր չէինք գտնում[2]։ Այնտեղ լվացվեցավ և, ծունր դնելով ավազների վրա, սկսեց կատարել առավոտյան աղոթքը։ Երբ վերջացրեց, վեր առեց տապարը, գնաց անտառը բանելու։ Երկար ես լսում էի նրա տապարի ձայնը, որ հնչվում էր մեղմ սաղմոսերգության հետ։ Այլևս քնել չկարողացա։ Լույսը բացվեցավ, արևը ծագեց, նա դեռ աշխատում էր։ Եվ մինչև այժմ, որ արևը մտնելու մոտ է, նա դեռ աշխատում է… Չեմ կարողանում առանց ափսոսանքի նայել նրա վրա, սիրելի Տիրև, որքա՜ն մաշվել է, որքա՜ն ուժաթափ է եղել… Ինչո՞ւ է այդքան հոգնեցնում իրան…

— Շտապում է… շա՛տ է շտապում… Գիտե՞ս, սիրելի Ռոստոմ,

Ո՞րքան ժամանակ է, որ մենք այստեղ բանտարկված ենք... Հիմա ի՞նչեր չեն պատահել մեր աշխարհում... Ո՞վ գիտե, թե ի՞նչ է անում թագավորը, ի՞նչ են անում նախարարները, և կամ այլևս ի՞նչ անկարգություններ է հարուցել Շապուհը... Իսկ մենք ոչինչ տեղեկություն չունենք։ Հիշո՞ւմ ես, որպիսի՜ խաղաղ դրության մեջ թողեցինք մեր երկիրը... Ուրեմըն, ինչպե՞ս կարող է համբերել նա։ Նրա սիրտը այնտեղ է— հայրենի աշխարհում։ Նրա անխոնջ ոգին ձգտում է մի րոպեում անցնել օվկիանոսի անհուն տարածությունը, գնալ, հասնել սիրելի երկիրը և դարման տանել նրա վերքերին։

— Ա՜խ, ե՞րբ պիտի վերջանա այդ նավակը...— ձայն տվեց Ռոստոմը, և նրա գեղեցիկ դեմքը մռայլվեցավ խորին թախծությամբ։

— Կվերջանա, շուտով կվերջանա...— պատասխանեց Տիրեն մի առանձին վստահությամբ։— Առաջիկա լուսինը մեզ այլևս այստեղ չի տեսնի...

Վերջին խոսքերը բավական քաջալերեցին Ռոստոմին, և նա, ձեռքը մեկնելով դեպի ընկերը, խնդրեց.

— Տո՛ւր ինձ, փոքր-ինչ օգնեմ քեզ։

— Դու վեր առ այդ մյուս կտորը։

Նա վեր առեց մի կտոր կայծքար, որ դեռևս հարթած չէր, սկսեց հղկել։

— Աշխատանքը նրան այնքան չէ հոգնեցնում,— առաջ տարավ Տիրեն,— նա խիստ փոքր է քնում, համարյա ամենևին չէ քնում։ Ես շատ անգամ նկատել եմ, գիշերը վեր է կենում, սկսում է լուռ, մտախոհ կերպով թափառել կղզու շուրջը։ Մի քանի տասնյակ անգամ պտույտներ է գործում, հետո նստում է ծովի ափի մոտ և անշարժ նայում է... Նայում է դեպի այն կողմը, ուր թողեց յուր կորցրած փառքը... Նայում է դեպի այն կողմը, ուր անտեր մնաց յուր հոտն ու եկեղեցին... Եվ երկար այնպես նստած է մնում, մինչև արևը ծագում է, և առաջին ճառագայթները հիշեցնում են նրան, թե ժամանակ է կրկին սկսել աշխատանքը...

Ռոստոմի գեղեցիկ դեմքը կրկին մռայլվեցավ։ Քարի կտորը ձեռքից ցած դնելով և յուր տխուր աչքերը դարձնելով դեպի ընկերը, պատասխանեց.

— Անհանգիստ է... անհանգիստ է սրտով... անհանգիստ է հոգվով... Այդ դրության մեջ ինչպե՞ս կարելի է քնել։ Նա մեզ մոտ աշխատում է թաքցնել յուր վշտերը, որ մեզ ևս չվշտացնե։ Նա մեզ դեռևս այնքան թուլասիրտ է համարում, որ կարծում է, թե չենք կարող ցավակից լինել իրան։ Եվ այդ պատճառով յուր մխիթարությունը որոնում է լուռ սրտամաշության մեջ...

Նա ձեռքը տարավ դեպի ճակատը, մի կողմ տարավ մազերի խիտ հոսանքը, որ այդ րոպեում ծածկեցին նրա երեսը, և ապա շարունակեց.

— Այդպես ապրել չէ կարելի, Տիրե՛։ Նա խիստ սակավ է ուտում, և համարյա ոչինչ չի ուտում։ Դրանով բոլորովին կոտրվեցին իրան։ Երեկ ասաց ինձ. «Ռոստոմ, որոնիր անտառը, գուցե սունկ կգտնես»։ Ուրախ-ուրախ վազ տվի, որոնեցի և մի քանի հատ գտա։ Բայց արդյոք կուտե՞ նա... Մի քանի օր առաջ խոսում էր թուզերի մասին։ Մի ծառի վրա թուզ էի տեսել, ամեն օր գնում էի, ներքևից նայում էի, արդյոք հասունացե՞լ են, թե ոչ։ Ծառը բարձր էր, մի ապառաժի կուրծքին կպած։ Երեկ վաղ-առավոտյան գնացի, անհնարին դժվարությամբ վեր բարձրացա և հասածները քաղեցի։ Երբ տերևների վրա դրած տարա, իրան տվի, շատ ուրախացավ և օրհնեց ինձ։ Այսօր տեսնում եմ, ինչպես դրած էր, այնպես էլ մնացել էր, մի հատ անգամ չէր կերել։

— Երևի, մոռացել էր։

— Այո՛, նա այժմ խիստ շուտ է մոռանում։

— Այդ հասկանալի է...

Երկու երիտասարդների խոսակցությունը երբեմն ընդհատվում էր խուլ տրտունջով, որ լսելի էր լինում անտառի խորքից։ Տրտունջը ամպրոպական ձայնի հարվածների էր նմանում։

— Նա դեռ քնում է։

— Այո՛, քնում է։

— Ի՞նչ ես կարծում, Տիրե՛, այդ լաստափայտը, որ նա շինում է, կարո՞ղ է մեզ հասցնել ցամաքը։ Ես փոքր-ինչ...

— Դու փոքր-ինչ կասկածում ես... Գիտե՞ս, Ռոստոմ, եթե նա յուր վերարկուն տարածե ծովի վրա և ասե մեզ՝ «նստեցե՛ք, գնա՛նք»,— ես մեծ վստահությամբ կնստեի նրա վրա և կգնայի նրա հետ։ Բայց ես մի այլ բան կասեմ քեզ, Ռոստոմ, մենք այնքան հեռու չենք ցամաքից, որքան դու կարծում ես։

— Այդ դու որտեղի՞ց գիտես։

— Նա ինքն ասաց ինձ։ Մի անգամ նկատեց մի քանի թռչուններ, որ գիմում էին դեպի մեր կղզին։ «Այդ թռչունները ծովային թռչուններ չեն,— ասաց,— դրանք ցամաքից են գալիս. ցամաքը շատ հեռու չէ մեզանից»։

Ռոստոմը մտածության մեջ ընկավ։

— Այդ բոլորովին ուրիշ նշան է,— ասաց նա, ինքն ես համոզվելով։— Բայց մեզ ժամանակ չէ՞ խրճիթը գնալու։

— Գնանք, կրակ վառենք, ընթրիքի համար մի բան պատրաստենք,

մինչև նա կգար,— պատասխանեց Տիրեն և սկսեց հավաքել յուր շինած քարե գործիքները։

Ռոստոմը կրկին դիմեց դեպի յուր կողովը, քաշեց ճապուկ ճյուղերից հյուսած պարանը, որի ծայրին կապած էր նա, և կողովը մոտեցրեց եզրին։ Հետո ձեռքը տարավ նրա մեջ, սկսեց դուրս հանել ձկները և լցնել փոքրիկ սապատի մեջ։ Երբ դարձյալ ձեռքը ներս տարավ, դուրս հանեց երկու խեցգետիններ։ «Դուք ինչպե՞ս մոլորվեցաք, ընկաք այստեղ»,— ասաց, նրանց ևս ձգեց ձկների մոտ։ Երբ այն գիշերվա ընթրիքի պաշարը արդեն հավաքել էր, նա կողովը կրկին ետ մղեց յուր տեղը և, սապատը վեր առնելով, հեռացավ ծովեզրից։ Երկու ընկերները, շարունակելով ընդհատված խոսակցությունը, սկսեցին դիմել դեպի խրճիթը։

Անտառի այն կողմում, որտեղից լսելի էր լինում տրոփյունի ձայնը, գործում էր այն անձը, որի մասին խոսում էին երկու երիտասարդները։

Դա մի բարձրահասակ մարդ էր, պատկառելի դեմքով և խորին, վեհանձնական հայացքով։ Փառավոր մորուքը, որի յուրաքանչյուր մազերը փայլում էին սև սաթի նման, ծածկում էր նրա հզոր կուրծքը։ Աչքերի մեջ վառվում էր սրբազան կրակ։ Գեղեցի՛կ էր եղել նա իբրև երիտասարդ, այժմ տակավին գեղեցիկ էր մնացել յուր այրական հասակում։ Բոլոր շարժմունքների մեջ նշմարվում էր եռանդ և վեհություն։ Նրա մեջ միացած էր երևում երկնայինը՝ յուր սրբազնական ազդեցությամբ և երկրայինը՝ յուր բարձր ազնվապետական վսեմությամբ։ Հագուստը, որ կրոնավորի զգեստի տարազն ուներ, համարյա թե մաշված էր։ Ոտներին հագել էր ծառի կեղևից պատրաստած սանդալներ։ Այդ անշուք զգեստավորության մեջ անգամ նմանում էր նա այն երկնաբնակներից մեկին, որին դժբախտ հանգամանքները դատապարտել էին մի տաժանական կյանքի...

Վարպետ ձեռքով շարժում էր նա քարե ծանր տապարը, և ահագին գերանը թնդում էր նրա հարվածների ներքո։ Տապարը ավելի քերթում էր, քան թե տաշում էր։ Այսուամենայնիվ, նրա հարվածները, որպես անդուլ և անխոնջ համբերություն, հաստաբուն գերանի վրա մեծ գործ էին կատարել։

Այդ գերանը, որ մի վիթխարի կետ ձուկի նմանությամբ տարածված էր նրա առջև, յուր անտառի արքան և նահապետն էր։ Դարեր էին անցել, որ նա այնքան աճել, ստվարացել էր, մինչև ստացել էր յուր հսկայական ծավալը։ Եվ երկար ժամանակներ գործ դրվեցան, մինչև քարե տապարը, թեև ինքը անզոր, բայց անվաստակելի և համբերատար ձեռքում, կարողացավ հատանել նրան յուր արմատից և ցած գլորել յուր բարձրությունից։

Այնուհետև աշխատում էր նա այդ գերանից պատրաստել մի լաստափայտ։ Նրա փութաջանությունը այն աստիճան անզուսպ էր, որ եթե յուր եղունգները երկաթից լինեին, ամենևին գործ չէր գնի քարե տապարը։ Գործը արդեն մոտեցել էր յուր վախճանին։ Լաստափայտի կողքերը հարթած էին. մեջը մեծ մասամբ դուրս էր փորված։ Մնում էր մի քանի շաբաթների աշխատանք ևս, որ նա բոլորովին պատրաստ լիներ։ Դրանով նա վստահություն ուներ՝ դուրս գալ յուր արգելանից, որտեղ աքսորված էր ինքը, պատերազմել օվկիանոսի ալիքների հետ և գնալ, հասնել այն աշխարհը, ուր պարտքը և երկրի աղետավոր անցքերը կոչում էին նրան…

Տաշեղների կույտի հետ ընկած էին բազմաթիվ քարե տապարներ, որ բթացել և անպիտանացել էին։ Որձաքարը մաշվեցավ, բայց նրա եռանդը, նրա տոկունությունը մնաց անխորտակելի։

Նա արդեն ավարտել էր յուր այսօրվա պարապմունքը։ Տապարը դրեց ցած, անցավ դեպի լաստափայտի երկարությունը, ուշադրությամբ զննեց փորվածքի խորությունը, և ապա վեր առեց վերարկուն, որ ընկած էր տաշեղների վրա, ձգեց ուսերին, և դանդաղ, չափավոր քայլերով սկսեց դիմել դեպի կղզու զառիվերը։

Նեղ շավիղը, որ կազմվել էր այդ միակ մարդու ոտքի հետքերից, անցնում էր թփերի և մացառների միջով և, ոլորվելով խոնավ, մամռապատ ապառաժների վրայով, կորչում էր սաղարթախիտ ծմակի մեջ։ Այդ շավիղով գնում էր նա։ Երբեմն դժնիկը յուր լրբենի տատասկներով մագլցում էր նրա վերարկուից։ Երբեմն արքայական կաղնին յուր խարտոցի պես անհարթ տերևներով զարկվում էր նրա փառահեղ դեմքին։ Բայց նա ոչինչ չէր զգում։ Մտախոհ կերպով անցավ այդ տարածությունը և մերձեցավ մի քարանձավի։ Նրա մուտքի մոտ կազմված էր մի նստարան, հյուսած թարմ ոստերից։ Բազմեցավ այդ նստարանի վրա և բազմահոգ դեմքը դարձրեց դեպի հանգչող արեգակը։ Նայում էր, և նրա խորախորհուրդ աչքերը, կարծես, ձգտում էին կլանելու այն անհուն տարածությունը, որով անցել էր տիեզերքի լուսատուն, և այժմ գնում էր լուսավորելու մի այլ աշխարհ…

Իսկ ի՞նքը։— Ինքը նույնպես մի ժամանակ մի ամբողջ աշխարհի լուսավորության արեգակն էր… Իսկ ա՞յժմ։— Այժմ մի սգավոր աքսորյալ այդ անբնակ կղզում։ Անողոք օվկիանոսը անանցանելի պատնեշ էր դրել նրա շուրջը, և ալիքների անընդհատ հարվածները ամեն րոպե հիշեցնում էին նրան, թե դու միշտ բանտարկված կմնաս այստեղ, քանի որ մենք կանք և կլինենք…

Քարանձավը, որի մուտքի առջև նստած էր նա, գուցե շատ խաղաղ բնակարան կարող էր լինել մի ճգնավորի համար, որ աշխարհը ուրացած, կյանքից ձանձրացած, նրա լռության մեջ մխիթարություն կգտներ։ Գուցե այնտեղ երջանիկ կապրեր և մի ծովային աստված, որ մերժված աստվածների ակումբից, հալածված Արամազդի շանթերից, յուր վրեժխնդրությունը կգտներ այն զվարճությունների մեջ միայն, որ կխախտեր, կքարացներ անցնող նավերը, երբ կհամարձակվեին մերձենալ յուր կղզուն և վրդովել նրա խաղաղությունը։

Բայց այստեղ կարո՞ղ էր երջանիկ լինել գործի և գաղափարի մարդը։

Որքա՜ն վիճակների փոփոխություն...

Կար ժամանակ, որ այդ մարդը երիտասարդ էր, մի գեղեցիկ, վայելչահասակ երիտասարդ, որի նմանը չկար յուր աշխարհում։ Մի արքունիքի զարդն էր նա և ուրախությունը։ Ինքը արքայի հոր քեռորդին լինելով, էր, միևնույն ժամանակ, և նրա սենեկապետը։ Ոսկեհուռ զգեստներով, գոհարազարդ կամարը մեջքին, ոսկեպատյան սուրը ձեռքում, միշտ կանգնած էր լինում արքայի սնարքում, երբ նա հանդիսավոր ընդունելություններ էր անում։ Մոր կողմից Թագավորազն, իսկ հոր կողմից մի աշխարհի մեծ քահանայապետի թոռն էր նա։ Եղավ որ, այդ աշխարհը զրկվեցավ յուր քահանայապետից։ Հավաքվեցավ ավագանին, հավաքվեցավ ազատանին, հավաքվեցան և իշխանները։ «Մեզ քահանայապետ տո՛ւր»,— ասում էին արքային։ Արքան յուր ձեռքով հանեց ոսկեհուռ զգեստները, յուր ձեռքով արձակեց գոհարազարդ կամարը, յուր ձեռքով առեց ոսկեպատյան սուրը և, նրան ժողովրդին տալով, ասաց.— «Ահա ձեր քահանայապետի զավակը, թող ձեզ քահանայապետ լինի»։ Ուրախացավ ավագանին, ուրախացավ ազատանին, ուրախացան և իշխանները։ Բայց երիտասարդը հրաժարվում էր, ասելով, թե ինքը արժան չէ այդ սուրբ պաշտոնին։ Խնդրում էր ավագանին, խնդրում էր ազատանին, խնդրում էին և իշխանները։ Երիտասարդը դարձյալ հրաժարվում էր։ Զլսեց արքան, ականջ չդրեց խոսքերին։ Կանչեց սափրիչին, հրաման տվեց՝ կտրել սիրուն գիսակները և գանգրահեր վարսերը, որ զարդարում էին նրա գլուխն ու թիկունքները։ Երբ կտրում էին, լաց էր լինում ավագանին, լաց էր լինում ազատանին, լաց էր լինում և արքան։ Գեղեցկությունը զրկվեցավ յուր շքեղությունից, պալատական վայելչությունը ծածկվեցավ կրոնավորի սև զգեստի ներքո[3]...

Որպես զինվորական, նա քաջ էր և ազնիվ, որպես պալատական, նա արքունիքի զարդն էր, իսկ որպես հոգևորական, նա եղավ եկեղեցու զարդը։ Իբրև մի ջահ լուսապայծառ, լուսավորեց նա աստուծո տունը։ Աշխարհը լցվեցավ երջանկությամբ։ Քաջ զինվորականը դարձավ քաջ

հովիվ և յուր անձը դրեց յուր հոտի վրա։ Աղքատը հաց ուներ ուտելու, հիվանդը ապահով պատսպարան։ Որբը սնուցանող հայր ուներ, իսկ այրին՝ խնամող ձեռք։ Ամենուրեք թագավորում էր գթությունը, ամենուրեք տիրում էր ողորմածությունը։ Նեղյալների հայր եղավ նա և սրբեց թշվառների արտասուքը։

Իբրև կրոնավոր, աստվածանման էր նա, իսկ իբրև քահանայապետ, էր, միևնույն ժամանակ, մի բարձր պետական անձնավորություն։ Մեծ եռանդով կառավարում էր յուր աշխարհի գործերը և նրանց կանոնավոր-ընթացք էր տալիս։ Կարգը նրանով էր հաստատվում, իսկ անկարգությունը նրա ջանքերովն էր անհետանում։ Զորավոր ձեռքով արմատախիլ էր անում չարությունը, և բարերար ձեռքով սերմանում էր առաքինությունը։ Ոգևորված յուր աշխարհի բարեկարգության բարձր գաղափարով, նա յուր կենսատու շնչով ոգի և կյանք էր բաշխում նրան։

Եղավ որ, յուր աշխարհի մի կարևոր գործի համար եկավ նա Բյուզանդիա։ Ներկայացավ Վաղես կայսրին, նրա հետ բանակցելու։ Հոգեմարտ կայսրը կատաղած էր այդ ժամանակ Արիոսի մոլորություններով և սաստիկ հալածանք էր հարուցել ուղղափառ եկեղեցու դեմ։ Նա թողեց քաղաքական խնդիրը, որի մասին եկած էր մեծ քահանայապետը, և նրա հետ կրոնական վիճաբանությունների մեջ մտավ։ Համարձակ կերպով հանդիմանեց նա կայսեր մոլորությունները և նրան դեպի ուղղություն հրավիրեց։ Բարկացավ կայսրը և նրան՝ յոթանասուն եպիսկոպոսների հետ՝ հրամայեց աքսորել օվկիանոսի խորքերը։ Ձմեռնային դառնաշունչ ցրտերի ժամանակ տասնևհինգ տիվ և տասնևհինգ գիշեր լողում էր նավը և տանում էր սրբազան աքսորյալներին։ Ցուրտը փչեց, բարձրացավ մրրիկ, ծովը ալեկոծվեցավ, և նավը խորտակվեցավ... Մի մակույկի մեջ ազատվեցավ նա յուր երկու սարկավագների հետ։ Մակույկը ձգեց նրանց այդ կղզին...

Որքա՜ն ամառ, որքա՜ն ձմեռ անցել էր այն օրից... այդ անբնակ կղզում տանջվում էր նա... Հեռու սիրելի հայրենիքից, հեռու սիրելի հոտից... Այժմ այն անձը, որ մի ամբողջ ազգի հոգևոր պետն էր, որի մեծաշեն վեհարանում հազարավոր պաշտոնյաներ էին սպասավորում, միայնակ նստած էր անշուք քարանձավի մուտքի մոտ, ոստերից հյուսած նստարանի վրա, և լի անձկությամբ նայում էր հանգչող արեգակին։ Նրա սիրտը լցված էր խորին թախծությամբ։ Դեռևս քանի՜ անգամ պետք է մտաներ արեգակը, դեռևս քանի՜ անգամ նա յուր կենսատու ճառագայթներով պետք է լուսավորեր աստուծո աշխարհը,— իսկ ինքը պետք է արգելված մնար այդ կղզում, հեռու այն աշխարհից, որի արեգակն էր և պայծառությունը...

Քարանձավից փոքր-ինչ հեռու՝ ծառերի խտության մեջ՝ թաքնված էր մի տաղավար. դա մի խորանաձև խրճիթ էր, ոստերից հյուսած և կավով ծեփած։ Այստեղ ապրում էին երկու սարկավագները, որ անբաժան մնացին իրանց վարդապետից։

Նրանք արդեն վերադարձել էին ծովեզերքից, կրակ էին վառել, ընթրիք էին պատրաստում։ Պատրաստությունների մեջ երևում էր քաղաքակրթված մարդը, որ հանգամանքներից ստիպված նախնական դրության մեջ էր ընկել։ Դրանք գիտեին, թե ինչպես պետք էր վառել կրակը, գիտեին, թե որպիսի անոթների մեջ պետք էր կերակուր պատրաստել և ինչպես պատրաստել։ Բայց որտեղի՞ց գտնել անոթները։ Անբնակ կղզում ոչ պղնձագործ կար, ոչ դարբին և ոչ բրուտ։ Կրակը մի հրաշքով գտան նրանք, և անշիջանելի պահպանում էին, որպես որմզդական սուրբ հուր։ Իսկ անոթների տեղ գործ էին ածում կամ ոստրեների խոշոր խեցիներ, կամ բույսերից հյուսած զամբյուղներ։

Փայտակույտը բորբոքված կերպով վառվում էր, տարածելով յուր շուրջը խիստ ախորժելի ջերմություն։ Շիկացած ածուխները մի կողմ էին քաշել և նրանց մեջ ձգել էին խոշոր խիճեր, որոնք նույնքան տաքացել էին, որքան ածուխները։ Խիճերի մաքուր մակերևույթի վրա, որպես տապակների վրա, շարել էին ձկները և խորովում էին։ Խեցգետինները արդեն կարմրել էին և վարդի գույն էին ստացել։ Դրանցով զբաղված էր Տիրեն։ Իսկ Ռոստոմը տաք մոխրի մեջ թաղել էր շագանակներ, որոնք երբեմն պայթում էին և դուրս էին թռչում, բարձրացնելով իրանց հետ մոխրի թանձր տարափ։ Միջուկները բաժանում էր նա ճղված կեղևներից և դնում էր սադաֆի լայն գաղտակուրի մեջ, որ ափսեի տեղ էր ծառայում։

— Խորոված շագանակներ սիրում է նա,— ասաց Ռոստոմը, ինքն ևս ուրախանալով, որ նա սիրում է։

— Խորոված կաղիններ նույնպես սիրում է,— նկատեց Տիրեն,— բայց ափսո՜ս, որ կաղինները դեռ չեն հասած։

— Ձուկ ամենևին չէ ախորժում ուտել։

— Առհասարակ մսեղենից նա իրան հեռու է պահում։

— Բանջարեղենը մեծ ախորժակով է ուտում, կարելի էր երբեմն աղցաններ պատրաստել, բայց ի՞նչ արած, աղ չկա։

— Քո փորձը աղի մասին անհաջող անցավ։

— Այո՛, անհաջող անցավ։ Ծովեզերքում մի փոքրիկ լճակ շինեցի, ջուրը այնտեղ բաց թողի, մտածում էի՝ արևի տակ գոլորշիացնելով, աղ գոյացնել։ Դու ինքդ տեսար, երբ ջուրը բոլորովին ցամաքել էր, հատակի վրա մնացել էր բավական թանձրությամբ աղային խավ, բայց այն-

քան դառն էր, ինչպես լեղի։ Ա՜խ, որքա՜ն ուրախ կլինեի, եթե այդ փորձը հաջողվեր։

Նա դեռ նստած էր քարանձավի մուտքի մոտ։

Քարանձավը, որի մեջ բնակվում էր նա, այն այրերից մեկն էր, որ բնությունը պատրաստում է գազանների որջ լինելու համար։ Անցքը նեղ էր, ներս մտնելու միջոցին պետք էր բավական կռանալ։ Հետո հետզհետե լայնանում էր և գոգավոր խոռոչի ձև էր ստանում։ Արեգակի աղոտ շողքը, նրա մուտքից ներս ցոլանալով, հազիվ կարողանում էր փոքր-ինչ մեղմացնել ներսի թախծալի խավարը։ Մի կողմում դրած էր մահճակալի նման մի բան, կազմված անտաշ փայտերից, որի յուրաքանչյուր մասը կապված էր միմյանց հետ ոստերից ոլորած փոկերով։ Ցամաք մամուռը, որ տարածված էր նրա վրա, ծառայում էր իբրև անկողին։ Այրի մյուս կողմում, մահճակալի հանդեպ, չորս քարե սյունակների վրա դրած էր մի սալ, որը փոքր-ինչ հարթելով, իբր թե սեղանի ձև էին տվել։ Նրա մոտ ամրացրած էր մի աթոռ, որը գլխի նստարանի թե՛ նմանությունը և թե՛ կազմվածքն ուներ։ Ջրով լի դդմասրվակը, որ դրած էր սեղանի վրա, լրացնում էր այդ անշուք բնակարանի չքավոր կարասիների թիվը։

Դրսից քարանձավը յուր բնական գեղեցկությունն ուներ։ Մշտականաչ պատուտակները իրանց խիտ հյուսվածքով շուրջանակի տարածվելով, պատում էին նրա մուտքը։ Իսկ երկու սգավոր ուռենիներ իրանց վարսագեղ ճյուղերով հովանավորում էին նրան։ Մի զույգ եգիպտական աղավնիներ, սպիտակ որպես ձյուն, բույն էին դրել ուղիղ անձավի մուտքի վերևում, ապառաժի խորին ճեղքվածքի մեջ։ Դրանք անձավի նախկին բնակիչներն էին, իրանց տեղը սիրով թողեցին կղզու սրբազան հյուրին, իսկ իրանք նոր բույն շինեցին հիշյալ ճեղքվածքի մեջ, չհեռանալով նոր դրացիից։ Ձագուկները մնչում էին, և նա խորին մտահոգությամբ լսում էր նրանց մանկական մնչյունը և, կարծես, նրա տխուր դեմքի վրա կարդացվում էին այդ խոսքերը. «Երջանի՜կ են դրանք, որ դեռ ևս խնամող հայր և մայր ունեն... իսկ այն բազմաթիվ որբանոցները, որ ես հիմնեցի իմ հայրենիքում, այժմ ո՞ւմ խնամակալության ներքո են գտնվում... այժմ ո՞վ է իմ ձագուկների հոգատարը...»։

Արևը արդեն մտել էր, բայց հորիզոնը դեռ վառվում էր ոսկեղեն բոցերով։ Լուսավորված ծովը, որպես մի շողշողուն հայելի, միախառնըված էր երկնքի ծիրանեգույն պայծառության հետ, որի վրա տակավին փայլում էին վերջին ճառագայթները, իրանց սուր, սլաքաձև ճաճանչներով։ Այդ վսեմ, հանդիսավոր րոպեում՝ ամեն երեկո երկար նստած էր

լինում նա, մինչև ճառագայթները հետզհետե անհետանում էին, բացավառ լուսավորությունը հանգչում էր, և հորիզոնի վրա տիրում էր մուգ կապտագույն մռայլ... Իսկ այս երեկո նույնը կատարվեցավ նրա սրտում... Նա վեր կացավ յուր նստած տեղից և սովորականից վաղ մտավ յուր քարանձավը։

Այնտեղ տիրում էր խորին մթություն։ Մոտեցավ մահճակալին և ընկողմանեցավ նրա վրա։ Հոգնած էր նա, աշխատում էր փոքր-ինչ հանգստանալ։ Քարանձավի խոնավ օդը խեղդելու չափ ծանր էր։ Զգացվում էր խիստ սուր բորբոսային հոտ։ Երկար նա տանջվում էր, մի կողքից դեպի մյուսը շուռ գալով։ Ցամաք մամուռը խշրտում էր նրա ծանրության ներքո։ Գլխի տակին, բարձի փոխարեն, դրած էր մի խուրձ ծովային խոտ։

Վերջապես ներս մտավ Ռուստամը, ձեռքում բռնած ունենալով մի վառած ջահ եղևնու երկար տաշեղներից։ Այդ տաշեղները մոմերի նման ամրացրեց անձավի ճեղքերից մեկի մեջ, որպես քարշ ընկած ճրագ, և ինքը զգուշությամբ հեռացավ։ Խիժալի եղևինը խնկահոտ լուսավորությամբ լցրեց ամբողջ քարանձավը։

Լույսի ներկայությունը դուրս կոչեց քարանձավի խորքից երկու այլ արարածներ, որոնք, երկու փշալատ գնդակների նման գլորվելով, մոտեցան մահճակալին։ Փշերի միջից երկարացան երկու սուր գլուխներ և փոքրիկ մոխրագույն աչիկներով սկսեցին նայել դեպի վեր։ Նա ձեռքը ցած տարավ։ Նրանք սկսեցին իրանց բարակ լեզուներով լիզել նրա մատները, կարծես, համբույրներ էին մատուցանում այն աջին, որ ամենայն խնամքով սնուցանում էր նրանց։ Դրանք երկու ընտանիացրած ոզնիկներ էին, որոնք, մի զույգ արթուն պահապանների նման, հսկում էին քարանձավին, ոչնչացնելով օձերին և այլ թունավոր միջատներին։ Խլուրդներն անգամ նրանց երկյուղից համարձակություն չունեին անձավի մեջ մուտք գործելու։ Պատսպարված իրանց փշալից և վահանափակ մորթի մեջ, բոլորի հետ պատերազմում էին։ Բավական էր, որ նրանցից մեկը նկատեր օձին, իսկույն կբռներ պոչից և, գլուխը ներս քաշելով յուր փշալից պատյանի մեջ, գունդ կձևանար։ Օձը, ծուղակի մեջ բռնված թռչունի նման, կսկսեր յուր մարմնով և գլխով այնքան զարկվել նրա փուշերին, մինչև հոգին կտար։ Զվարճալի էին այդ կռիվները և, միևնույն ժամանակ, քստմնելի։

Դարձյալ ներս մտավ Ռուստամը և մի սալակի մեջ, որ հյուսած էր բույսերից և բոլորակ մատուցարանի ձև ուներ, բերեց ընթրիքը, դրեց սեղանի վրա։ Նա դարձավ դեպի երիտասարդը, հարցնելով.

— Ինչպե՞ս է Տիրեն, երեկ իրան լավ չէր զգում։

— Բոլորովին առողջ է, տեր իմ,— պատասխանեց սարկավագը,— ամբողջ օրը քնում էր։

— Այդ դեռ չէ նշանակում, որ առողջ է։ Նա հիվանդ ժամանակ ևս քնում է։ Գնա՛, հանգստացիր, ասա՛, որ նա ևս հանգստանա։

Սարկավագը գլուխ տվեց և հեռացավ։

Նա վեր կացավ մահճակալի վրայից, մոտեցավ սեղանին, նստեց նրա մոտ։ Ողնիկները մերձեցան նրա հագուստի քղանցքներին և մի առանձին մտերմությամբ սկսեցին քծնվել։ Նա վեր առեց խորոված շագանակներից մի-մի հատ և մոտեցրեց նրանց բերաններին։ Նրանք ուրախությամբ խլեցին անուշ պատառները և մեծ ախորժակով սկսեցին կրծոտել։

Մի քանի հատ ևս ինքը կերավ։ Բայց նա ավելի հոգ էր տանում յուր երկու սեղանակիցներին, քան թե յուր մասին էր մտածում։ Երբ նրանք կշտացան, քաշվեցան իրանց խորշը և, մինը մյուսի մոտ կծկվելով, սկսեցին ննջել։

Նա մնաց միայնակ, սեղանի մոտ նստած։

Եղևնի տաշեղները, որ մոմի փոխարեն վառվում էին, արդեն սպառվելու վրա էին։ Քարանձավի մեջ խավարը հետզհետե թանձրանում էր,— մի թախծալի խավար, որ գերեզմանների մեջ է թագավորում։ Դրսից լսելի էր լինում ալիքների խուլ ձայնը։ Ծովը անհանգիստ էր։ Քամին շառաչելով անցնում էր ծառերի կատարների վրայով, որ հեծում և հառաչում էին նրա ուժգին հարվածների ներքո։— Այդ բոլորը տրամադրում էր դեպի տխրություն, դեպի հոգեկան խորին վրդովմունք։

Նա դեռ նստած էր սեղանի մոտ և, հենված աջ ձեռքի վրա, լսում էր, թե ինչ է կատարվում դրսում։

Երբեք բարկությունը չէր դուրս կոչել նրա շրթունքներից մի հուսահատական բառ. երբեք նրա առաքինի սիրտը չէր արտահայտել ամենափոքր տրտունջ անգամ յուր վիճակից։ Ոգևորված երկնային մխիթարությամբ, նա միշտ իրան բարձր էր պահել կենցաղական դժբախտ արկածների վհատությունից, և միշտ անվեհեր վստահությամբ հավատացել էր յուր աստղին։ Իսկ այս գիշեր ներքին վրդովմունքը դուրս կոչեց նրա սրտի խորքից հետևյալ խոսքերը.

«Ապերա՛խտ Բյուզանդիոն, քո վարմունքը աններելի կմնա իմ սրտում... Դու վատությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայությունները... Քանի՛, քանի՛ անգամ մենք հեռացրինք քո գլխից պարսկական սուսերի սուրը... քանի՛, քանի՛ անգամ ազատեցինք քեզ ամոթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես միշտ պատսպարեց քեզ արևելյան խուժադուժների արշավանքներից... իմ հայ-

ընկերը կրեց բարբարոսների հարվածները և քեզ ողջ պահեց... Ի՞նչն էր ստիպում մեզ անել այդ։— Քրիստոնեական եղբայրությունը։ Մենք թողեցինք հեթանոս պարսկին և քո ձեռքը բռնեցինք։ Իսկ դու միշտ դավաճանեցիր մեզ... Մենք դարձյալ քրիստոնեական ներողամտությամբ մոռանում էինք բոլորը։ Իսկ դու չէիր զղջանում, որովհետև խաբեբայությունը քո քաղաքականության հենարանն էր... Վերջը քաղաքական գործի մեջ դու խառնեցիր կրոնական խնդիրներ։ Կամեցար մեզ Արիոսի մոլորությունների մեջ ընկղմել... Ե՛ս, իմ ընդդիմադրության համար, դատապարտվեցա և աքսորվեցա... Բայց Նախախնամության աչքը երկար չի թողնի աքսորյալին այստեղ... Երբ նա ոտք կդնի Հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, նենգավո՞ր Բյուզանդիոն...»։

Եղևինի տաշեղների վերջին կայծերը պլպլացին, պլպլացին և, վերջապես, հանգան։ Մելամաղձոտ խավարը կրկին տիրեց անձուկ քարանձավի մեջ։ Նա դեռևս երկար նստած էր քարե սեղանի մոտ, և նրա տխուր մտածությունները թռչում էին դեպի այն երկիրը, որ սիրում էր նա և որին նվիրված էր յուր հոգու բոլոր զորությամբ։

Այսպիսի շատ գիշերներ, անքո՜ւն, սրտամա՜շ գիշերներ, հանդիպում էին Պատմոսի հզոր աքսորյալին— Հայոց սուրբ քահանայապետ Ներսես Մեծին— որին պաշտում էր Հայաստանը, որին սպասում էր Հայաստանը...

II

ԱՆՈՒՇ ԲԵՐԴ

Անունը Անուշ, ինքը լի դառնություններով...

Նկպատանից դեպի Տիզբոն տանող ճանապարհի մի կողմում բարձրանում է մի սեպաձև քարաժայռ։ Նրա լայն, վիմային ստորոտը բռնում է բավական ընդարձակ տարածություն, որի վրա, որպես մի հաստահիմն պատվանդանի վրա, բնությունը դրել է հիշյալ քարաժայռը։ Մի ափ հող անգամ անկարելի է գտնել նրա լերկ, ապառաժային մակերևույթի վրա։ Մի հատ բույս անգամ չէ բուսնում նրա ամուր, քարեղեն կողքերի վրա։ Հարավային բոցակեզ արեգակը այրել, թրծել է նրան, որպես մի անոթ, որ դրած է բրուտի մշտավառ քուրայի մեջ։

Այդպես էր այդ քարաժայռը դարերով, անհիշելի շատ դարերով առաջ։

Եղավ որ, մի անգամ, բրիչը ուսին դրած, այդ լեռան ստորոտով անցնում էր Ֆարհադը՝ Պարսկաստանի մեծ քանդակագործը։ Հանկարծ փողերի խառնաձայն հնչյուններ արթնացրին նրան յուր խորին մտահոգությունից, որի մեջ ընկղմված էր այդ րոպեում։ Նա կանգ առեց։ Երևացին որսորդական բարակներ, երևացին բազեակիր ձիավորներ, և ապա, անհոգ ասպախումբը փոթորկի նման հայտնվեցավ և փոթորկի նման անցավ նրա մոտով...

Մեկի պատկերի աղոտ ստվերագիծը մնաց նրա սրտում...

Այդ պատկերը խլեց նրա հանգստությունը։ Ամեն անգամ, նույն օրը, նույն ժամին, նա կանգնած էր լինում այդ ճանապարհի վրա։ Սպասում էր, յուր հոգու ամենաքաղցր զգացմունքներով սպասում էր, մինչև հայտնվում էր սիրելի պատկերը և, մի թեթև հայացք ձգելով նրա վրա, կայծակի նման անցնում էր։

Նա կորցրեց յուր սրտի խաղաղությունը, թողեց արհեստը, թողեց ճարտարությունը և սկսեց խելագարի նման թափառել այդ լեռների ամայության մեջ։

Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ... Մի անգամ նստած էր նա և դարձյալ սպասում էր։ Հայտնվեցավ նա։ Բայց այս անգամ ոչ որսորդական բարակներ կային նրա հետ և ոչ բազեակիր ասպետներ։ Միայնակ էր նա, մի խումբ նաժիշտների հետ։ Ձին քշեց, մոտեցավ Ֆարհադին։

— Ողջո՜ւյն քեզ, ո՛վ մեծ վարպետ,— ասաց նրան։— Ի՞նչն է կապել քեզ այդ լեռների, այդ անապատների ամայության հետ։ Ես քեզ միշտ այստեղ եմ տեսնում...

— Այն բախտավորությունը,— պատասխանեց Ֆարհադը,— որ երբեմն մի աննման պատկեր լուսավորում է այդ անապատների ամայությունը։

— Միթե այդքան վա՞ռ է քո մեջ սերը...— հարցրեց նա ժպտելով։

— Ո՞վ չի սիրի նրան, որ անմահների մեջ յուր հավասարը չունի... Ո՞վ չի սիրի նրան, որի շունչը կյանք է բաշխում, որի մի հայացքը պարգևում է հավիտենական երջանկություն... Միթե դու կարծո՞ւմ ես, որ միշտ քարի և բրիչի հետ զբաղված արհեստավորի սիրտը այն աստիճան քարացած է, որ գեղեցկության համար տեղ չունի։

— Այդ ես չեմ կարծում։ Նա, որ անձև քարին ձև և կյանք է տալիս, նա, որ սառն մարմարինից ստեղծագործում է գեղեցկության տիպարներ, ինքը չէ կարող չսիրել գեղեցկությունը։— Բայց լսի՛ր, վարպետ։ Արքայադստեր սիրտը գրավելու համար մե՜ծ զոհեր են հարկավոր...

— Այդ ես գիտեմ... մեծ ստեղծումները մեծ ջանքեր են պահանջում...

— Ես անկարելին չեմ պահանջի քեզանից. ես միայն պետք է փորձեմ քո սերը։ Նայի՛ր, Ֆարհադ, տեսնո՞ւմ ես այդ ապառաժը,— նա ձեռքը տարավ դեպի սեպաձև քարաժայռը,— դու պետք է այդ ապառաժից ինձ համար ապարանքներ հրաշակերտես, որ ես նրանց բարձրությունից նայեմ և սքանչանամ, թե ինչպես Տիգրիսը արծաթափայլ պտույտներով գծում է Ասորեստանի գեղեցիկ դաշտավայրերը, կամ ինչպես մեղմ հողմի շնչելուց ծածանվում են Բաղիստանի բարձրադիտակ արմավենիները։ Եվ ապառաժի սրտում պետք է իմ գանձերի համար մթերանոցներ փորես, իսկ նրա ստորոտում՝ իմ նժույգների համար օթևաններ։ Երբ այդ բոլորը պատրաստ կլինի, այն ժամանակ ես քոնը կլինեմ...

Ասաց և հեռացավ։

Այն օրից անցան տարիներ, քարաժայռի անխորտակելի ամրության մեջ գործում էր անխոնջ վարպետի մուրճն ու քերիչը։ Գիշեր և ցերեկ լսելի էր լինում ծանր հարվածների անլռելի ձայնը։ Գործը հաջողությամբ առաջ էր գնում։ Սերը ուժ էր տալիս մեծ արհեստավորի հանճարին, իսկ Արյաց արքայադստեր գեղեցկությունը բորբոքում էր նրա եռանդը։ Կերտեց սենյակներ, կերտեց դահլիճներ, կերտեց պատկերազարդ սրահներ և միակտուր քարից սքանչելի ապարանք ստեղծեց։ Դահլիճների և սրահների պատերը կենդանագրեց բարձրաքանդակ նկարներով։ Մի տեղ պատկերացրեց Իրանի հին հսկաների և փեհլևանների կռիվները դևերի և չար ոգիների հետ։ Մի տեղ պատկերացրեց Իրանի վաղեմի արքաների փառքն ու մեծությունը և նրանց քաջությունների ու հաղթությունների հանդիսավոր տոնախմբությունները։ Գծեց քարը և նրա վրա արձանագրեց նախնական թագավորների մեծագործությունները, նրանց առաքինությունները և նրանց պարգևած բարօրությունները Արյաց աշխարհին։ Այդ հրաշալիքները կատարեց նա այն էակի համար, որին նվիրված էր յուր սիրո բոլոր ջերմությամբ։ Այդ հրաշալիքները կատարեց նա, որ միշտ հիշեցնեին նրան Իրանի փառավոր անցյալը, որ միշտ գգվեին նրա սիրտը այն վսեմ հպարտությամբ, թե ինքը սերունդ է մի մեծ տոհմի, որ շառավիղում է աստվածներից և աստվածանման գործեր է կատարել։

Նա եկավ և տեսավ բոլորը։

— Այդ բոլորը շատ գեղեցի՛կ է,— ասաց նա,— բայց այստեղ ջուր չկա, այստեղ ծառեր չկան։ Շինի՛ր ինձ համար շատրվաններ, որ ամպերից բարձր ցայտեն ջուրը, տնկի՛ր ինձ համար ծառեր, որոնց հովանու ներքո հանգչեի ես, և հանգչեի քո գրկում...

Ասաց և հեռացավ։

Ամենահեռավոր վտակների ընթացքը փոխեց նա և ստորերկրյա ջրմուղներով բարձրացրեց մինչև ապառաժի գագաթը։ Կոփեց քարը, փորեց ավազանները, կերտեց արծաթափայլ շատրվանները։ Անսպառ ջուրը տիվ և գիշեր դուրս էր վիժում շատրվաններից և մարգարտյա կաթիլներով ցողում էր չորեքկողմի կանաչապատությունը։ Կոփեց վեմը, հարթեց ապառաժը և, հեռու տեղերից հող բերելով, ածեց նրա վրա։ Այդ հողի մեջ տնկեց ծառեր և ստեղծագործեց բարձր, կախաղանավոր պարտեզներ, որոնք, կարծես, օդի մեջ բուսած լինեին։ Տարիներ անցան, աճեցին ծառերը և պտուղ տվեցին։ Ծաղկեցան ծաղիկները և սրտապարար անուշահոտությամբ լցուցին բուրաստանը։ Հավաքվեցան թռչունները և իրանց ուրախ ձայներով կենդանացրին շրջակայքը։ Իսկ նա, որ այդ գեղեցիկ դրախտի զարդն ու թագուհին պետք է լիներ, չհայտնվեցավ...

Մի օր, ձեռքը ծնոտին դրած, նստել էր վարպետը յուր կառուցած ապարանքի սաորատում և տխուր կերպով նայում էր գետի մեծ ճանապարհը։ Երգելով անցավ մի շինական, որը, տեսնելով նրան, մոտեցավ, նստեց նրա մոտ մի փոքր հանգստանալու։

— Որտեղի՞ց ես գալիս,— հարցրեց վարպետը։— Երանի՜ քեզ, որ այդպես ուրախ ես։

— Տիգրանից,— պատասխանեց շինականը։— Ինչո՞ւ ուրախ չլինել, երբ ամբողջ աշխարհը ուրախանում է։

— Ի՞նչ է պատահել։

— Մի՞թե չգիտե՞ս, որ քաղաքում արդեն յոթն օր է, յոթն գիշեր է, որ հարսանիք է։ Գինին հոսում է վտակների պես, անուշահամ խորտիկները չափ չունեն։ Ուտում են, խմում են և ուրախանում։ Ամբողջ քաղաքը թնդում է նվագներով, և պարողների ոտները չեն հոգնում։ Ես էլ իմ բաժինը վայելեցի։ Այնքան կերա, այնքան խմեցի և այժմ այնքան էլ տուն եմ տանում, որ մի քանի շաբաթ իմ կնոջ և երեխաներիս համար բավական կլինի։

— Ո՞ւմ հարսանիքն է։

— Թագավորի։

— Ո՞ւմ հետ։

— Անուշի հետ։

Նա այլևս չխոսեց, շանթահարի նման ցնցվեցավ և մնաց անշարժ։ Հետո վեր կացավ և անզոր, դողդոջուն ոտներով սկսեց բարձրանալ դեպի յուր հրաշակերտած ապարանքը։ Նայեց յուր շուրջը, վերջին անգամ յուր թախծալի հայացքը դարձրեց այն բոլոր շինվածքների վրա, որ ար-

կյանք լին ջերմ սիրո և գեղեցիկ արհեստի։ Եվ ապա մտավ յուր արհեստանոցը։ Այնտեղ դրած էին նրա գործիքները։ Վեր առեց մի ծանր մուրճ և դուրս եկավ փոքրիկ հրապարակի վրա։— «Նա ինձ դավաճանե՞ց...»,— ասաց և նետեց մուրճը օդի մեջ։ Մուրճը պտույտվեցավ և ընկավ ուղիղ նրա գլխի վրա։ Տաք արյունը սրսկեց այն սքանչելիքները, որ նրա ճարտար ձեռքի գործն էր...

Ցարհապը չհասավ յուր նպատակին, բայց նրա սիրելի Անուշի անունը մնաց այդ քարեղեն ամրոցի վրա և կոչվեցավ Անուշի բերդ՝։

Այդ վիմափոր, կոփածո ապարանքը, որ պատրաստված էր սիրո և հավիտենական երջանկության տաճար լինելու համար, հետո դարձավ արտասուքի և մշտական հեծության մի դժոխք։ Պարսից վերջին թագավորները աքսորում էին այնտեղ իրանց ձեռքը գերի ընկած մյուս թագավորներին։

Կեսօր էր, բայց Անուշ բերդի վիմափոր նկուղներից մեկը, օրվա պայծառ լուսավորության ժամանակ, դեռ պահպանում էր յուր մեջ խորին մռայլ և մթություն։ Վերևից, առաստաղի մոտ, բացված էր մի նեղ պատուհան, որ ավելի ծակի նմանություն ուներ, քան թե լուսամուտի։ Արեգակի բարակ շողքը, որ երկչոտ կերպով ներս էր ցոլացել այդ ծակից, կարծես, վախենում էր ներսի խավարից և չէր համարձակվում փոքր-ինչ ավելի տարածվել։ Նկուղը ներկայացնում էր մի քառակուսի, փոքր-ինչ երկայնաձև արկղ, քան թե սենյակ,— բայց քարեղեն արկղ։ Քար էր հատակը, քար էր առաստաղը, քարից էին չորեքկողմի պատերը,— միակտուր և միապաղաղ քարից։ Մի այլ նյութ խառնված չէր նրա վիմային կազմության մեջ, բացի երկաթյա ծանր դռնից, որ դարևոր ժանգից սևացել, մրճոտել էր և նույն քարի մուգ-աղյուսագույն երանգն էր ստացել։

Երկաթյա դռան հակառակ կողմում, հատակի մեջ, ամրացրած էր նույնպես երկաթյա հաստ ցից։ Դա նույն ցիցերի նմանությունն ուներ, որոնցից ծովեզերքում կապում են նավակներին։ Բայց դրանից կապված էր մի մարդ։ Ցցի գլխին կար մի շարժական օղակ, որ միանում էր ծանր շղթայի ծայրի հետ։ Իսկ շղթայի մյուս ծայրը փակված էր երկաթյա ստվար անուրի հետ, որ անց էր կացրած այդ մարդու պարանոցով։ Շղթայի երկարությունը չափում էր այն սահմանը, որի մեջ կարող էր այդ մարդը շրջել, առանց թույլ տալու նրան մինչև դուռը հասնել։ Այդ դրության մեջ նա նմանում էր մի առյուծի, որ փակված էր երկաթյա վանդակի մեջ։ Երկու ձեռքերի ճաղուկները կապված էին շղթայով։ Ոտները նույնպես ազատ չէին երկաթյա կապանքներից։

Այդ մռայլ նկուղի մեջ, նույն շղթան, նույն երկաթյա ստվար անուրը մի ժամանակ կրում էր յուր պարանոցին Հռոմայեցոց Վալերիանոս կայսրը, որ գերի էր ընկած Շապուհ Ա-ինի ձեռքում։ Երկնքի և Արեգակի որդին վարվում էր յուր օգոստափառ գերիի հետ՝ որպես մի բարբարոս։ Ամեն անգամ, երբ նա որսի էր գնում, դուրս էին բերում դժբախտ բանտարկյալին, լվանում էին, օծում էին, հագցնում էին կայսերական ծիրանին և հանդիսավոր կերպով կանգնեցնում էին արքունիքի դռան մոտ։ Դուրս էր գալիս Արևի որդին, կայսրը մեջքը խոնարհեցնում էր, նա, յուր ոտքը դնելով նրա մեջքի վրա, հեծնում էր ձին։ Եվ այդպես, ամեն անգամ նա յուր գոռոզ ոտքի տակ խոնարհեցնում էր Հռոմը... Այդ բոլոր անարգանքներից հետո, սպանել տվեց նրան և կաշին տկահան անելով, լցրին խոտով և, ի ցույց ամենեցուն, կախեցին Տիզբոնի մեծ տաճարի սյունից[2]։

Շապուհ Ա-ինը, այդ երկաթյա անուրը դրեց Վալերիանոս կայսրի պարանոցին։ Իսկ Շապուհ Բ-րդը նույն անուրը դրեց մի այլ թագավորի պարանոցին, որ այժմ գտնվում էր նույն քարեղեն նկուղի մեջ։

Այնտեղ կար և մի այլ մարդ, որ մի անկյունում, անշարժ արձանի նման, կանգնած էր քարե պատվանդանի վրա և անթարթ աչքերով նայում էր առաջինի վրա։ Ոչ մի մկնիկ, ոչ մի նշույլ կենդանության չէր շարժվում նրա ցամաք դեմքի վրա, որ դեղնել և մագաղաթի գույն էր ստացել։ Մեջքին կրում էր սպարապետական ոսկեպատյան սուրը, որի կոթը բռնել էր աջ ձեռքով և որով այնպիսի մի տպավորություն էր գործում, կարծես, ամենայն պատրաստակամությամբ հսկում էր բանտարկյալ արքայի կյանքի վրա։

Արքան ոտքի վրա էր, խռովյալ կերպով անցուդարձ էր անում յուր նեղ սահմանի մեջ, և ամեն անգամ նրա շղթաները աղմկում էին նկուղի խորին լռությունը։ Պարանոցի շղթան այնքան կարճ էր, որ նա չէր հասնում ոչ այն անձնավորությանը, որ արձանի նման կանգնած էր քարե պատվանդանի վրա, և ոչ երկաթյա դռանը, որ փակում էր նրա արգելանի մուտքը։ Դա մի հաղթանդամ, հսկայատիպ և թավամազ տղամարդ էր, որի մորուքի և գլխի մազերը, այս բանտի մեջ ավելի անկարգ կերպով աճելով, տալիս էին նրա կերպարանքին ահռելի արտահայտություն։ Նա անցավ դեպի նկուղի անկյունը, նստեց հարդի վրա, որ ծառայում էր թե իբրև օթոց և թե իբրև անկողին։

Այդ միջոցին երկաթյա ծանր դուռը ճռնչալով բացվեցավ, ներս մտավ բանտապետը և նրա հետ մի ծառա։ Շապկի և պատմուճանի թևքերը մինչև արմունկները ծալած, բազուկները հոլանի, հողաթափները առանց գուլպաների հագած, գլխին գիշերային թասակ դրած, միայն տակի հագուստով,— այսպես անփույթ և անպատշաճ կերպով ներկա-

յացավ նա բանտարկյալ թագավորին, կարծես, նրան ավելի վիրավորելու համար։ Նա գլուխ տվեց և, կանգնելով դռան մոտ, կիսահեգնական և կիսածաղրական եղանակով ասաց.

— Ողջո՜ւյն հայոց արքային։ Հուսով եմ, որ իմ տեր թագավորը խաղաղ քնով և անուշ երազներով վարած լինի գիշերային խավարը։ Եվ թո՛ղ փարատեն նրանից բարի ոգիները Ահրիմանի խոլական անուրջները...

Բանտարկյալը արհամարհական կերպով նայեց նրա վրա և ոչինչ չպատասխանեց։

— Ինչո՞ւ չես խոսում, տեր արքա,— առաջ տարավ նա ավելի սաստկությամբ։— Հայերը եթե ձեռքի քաջության մեջ խիստ ժլատ են, գոնե լեզվի քաջության մեջ բավական առատ են։

Նա դարձյալ ոչինչ չպատասխանեց։

— Երևի, իմ տեր թագավորը դժգոհ է յուր նվաստ ծառայից,— ասաց նա, մի քայլ դեպի առաջ փոխելով։— Ես կաշխատեմ ավելի հաճելի լինել իմ տեր թագավորին։ Ահա այս րոպեիս փոխել կտամ քո փառավոր անկողինը և անուշահոտ փափկությամբ հորինել կտամ քո արքայական մահիճը, այնպես որ դու կմոռանաս Հայաստանի գեղեցիկ մետաքսն ու ասրը։

Նա դարձավ դեպի յուր հետ եկած ծառան, հրամայեց, որ անկողինը փոխե։

Ծառան մոտեցավ, հավաքեց անկյունում տարածված հարդը, որը խոնավությունից սամկացել էր և թաղիքի նման կպել էր հատակին։ Նրա փոխարեն դրեց նոր և ավելի ցամաք հարդ։

— Անուշահամ խորտիկներով կճոխացնեմ այսօր իմ տեր թագավորի սեղանը,— ասաց նա, կրկին դառնալով դեպի բանտարկյալը։— Թո՛ղ նա չմտածե, թե արիք (պարսիկները) անհյուրասեր են, թո՛ղ նա մոռանա այն բոլորը, ինչ որ կորցրել է յուր արքունիքում։

Ծառան դրեց հարդյա անկողնի մոտ մի կտոր գարեհաց և մի կոտրած խեցեղեն անոթի մեջ ջուր։

— Բարի ախորժակ եմ ցանկանում, ողջ լերո՛ւք, տեր արքա,— ասաց նա և, գլուխ տալով, հեռացավ։

— Կո՜րր...— այս անգամ միայն մռնչաց բանտարկյալը։

Երկաթյա դուռը կրկին փակվեցավ, և նա մնաց միայնակ յուր քարեղեն նկուղի մեջ։

Մի քանի անգամ լռությամբ անցավ նա մի անկյունից դեպի մյուսը, հետո կանգ առեց և դարձավ դեպի քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ արձանը.

— Լսո՞ւմ ես, Մամիկոնյան տեր, ինչպե՜ս ամեն բոպե խոցոտում են քո թագավորին, ինչպե՜ս ամեն վայրկյան դառնացնում են նրա սիրտը։ Պարսիկը, ամեն վեհանձնությունից զուրկ պարսիկը, ստոր է յուր տան մեջ վիրավորել յուր հյուրին։ Ինչո՞վ է մեղավոր այդ ողորմելի գեռոնը, որ ամեն անգամ այստեղ մտնելիս՝ լրբենի բերանով լուտանքներ է կարդում։ Նրան հրամայել են, նրան պատվիրել են։ Ցա՜ծ և անա՜րգ Շապուհ, մինչև ա՛յդ աստիճան վատություն։ Ես չընկա քո ձեռքը պատերազմի դաշտում, դու իմ քաղաքները պաշարելով գերի չվարեցիր ինձ։ Դու ինձ հրավիրեցիր քո մոտ իբրև հյուր և քո ասպնջականությունը խաբեությամբ պսակեցիր։ Դավաճա՜ն... Մի՞թե դրա մեջն է թագավորի և արքայից արքայի մեծությունը՝ նենգավոր բարեկամությամբ պատրել յուր դրացուն և դաշնակցին և նրան որոգայթի մեջ ձգել... Ինչե՜ր չէիր առաջարկում դու ինձ, ինչե՜ր չէիր խոստանում դու ինձ։ Առաջարկում էիր քո դուստրը կնության տալ ինձ, խոստանում էիր իմ պետության սահմաններից մինչև քո մայրաքաղաքը, Տիզբոն, յուրաքանչյուր իջևանում մի-մի պալատ կառուցանել ինձ համար, որպեսզի ես, քո մոտ գալու ժամանակ, ճանապարհին իմ սեփական պալատների մեջ իջևանեի[3]։ Ահա՛ քո խոստումքը, այդ քարեղեն նկուղը նվիրեցիր ինձ այն պալատների փոխարեն... Թո՛ղ հավիտենական անեծքով ծածկվին իմ նախարարները... Թո՛ղ ամոթը և մշտական արհամարհանքը լինի նրանց բաժինը... որ ինձ այդ դրության մեջ գցեցին... Եթե նրանց անմիաբանությունը չլիներ, ես երբեք չէի ընկնի քո ծուղակի մեջ, նենգավո՛ր Շապուհ...

Նա խոսում էր, նա թափում էր վշտացած սրտի դառնությունը, բայց Մամիկոնյան տերը չէր լսում։ Նա ընկղմանեցավ նոր սկսած հարցի վրա և շարունակեց նայել դեպի անշարժ արձանը։ Տխուր հիշողությունները զարթեցրին նրա մեջ վաղեմի դեպքը։ Երբ մի անգամ ներս մտավ Շապուհի ասպաստանը՝ արքայական նժույգները տեսնելու, այն ժամանակ ախոռապետը, պարսկական լրբությամբ, վեր առեց մի խուրձ խոտ և, առաջարկելով նրան, ասաց. «Հայոց այծերի արքա, եկ նստի՛ր այս խոտի վրա»։ Լրբությունը խիստ պատժվեցավ։ Այդ հզորը, որ այժմ յուր քարե պատվանդանի վրա կանգնած խորին սառնասրտությամբ լսում էր բանտապետի դառն պարսավները, քաշեց սուրը և ախոռապետի գլուխը երկու մասն բաժանեց[4]։ Այժմ դարձյալ նա ձեռքը նույն սրի վրա էր դրել, բայց ձեռքը չէր շարժվում...

— Ծա՜ղր... խիստ կծո՜ւ կատակ...— բացականչեց բանտարկյալը խորին վրդովմունքով և վեր կացավ նստած տեղից։— Իմ աչքի առջև

դրել են Հայաստանի զորությունը... Նրա զինվորական և պատերազմական ներկայացուցչին... Իմ աչքի առջև դրել են այն հերոսին, որ մշտական սարսափի մեջ էր պահում ամբողջ Պարսկաստանը... Դրել են, որ նա, իբրև հարաժամ հանդիմանություն, ամեն րոպե, ամեն վայրկյան հիշեցնե ինձ, թե ի՛նչ եմ կորցրել ես... Բայց մի՞թե այդ քաջը իմ պես պարսկական սուտ նենգավորության զոհ չդարձավ... մի՞թե նա ընկավ պատերազմի դաշտում...

Նա ձեռքերը տարածեց, մի քանի քայլ փոխեց, աշխատում էր գրկել անշարժ արձանը։ Բայց շղթաները արգելեցին։

— Սիրելի՛ Վասակ,— գոչեց նա գորովալի ձայնով,— ամենքը դավաճանեցի՛ն ինձ, ամենքը թողեցին ինձ, բայց դու չբաժանվեցար քո թագավորից... Դու մասնակից էիր նրա փառքին, մասնակից եղար և նրա դժբախտությանը... Պարտքը, պատիվը, հայրենիքի սերը մղեցին քեզ դեպի անձնազոհություն... Եվ, իբրև ճշմարիտ հերոս, դու հերոսի պես պսակեցիր քո վախճանը...

Անշարժ արձանը, որին դիմում էր նա այդ խոսքերով, հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանն էր — Սամվելի հորեղբայրը և Մուշեղի հայրը։ Իսկ նրա հետ խոսողը Հայաստանի արքան — Արշակ թագավորը։ Երբ Շապուհը երկուսին էլ խաբեությամբ հրավիրեց յուր մոտ, թագավորին արգելեց այդ քարեղեն բերդում, իսկ սպարապետին, սպանել տալով, հրամայեց՝ կաշին տիկահան անել, լցնել խոտով և մշտապես դնել յուր թագավորի աչքի առջև։ Այժմ սպարապետի պաճուճապատանքն էր այդ, որ կանգնած էր բարձր պատվանդանի վրա։ Ոչինչ ցավ, ոչինչ դառնություն այնքան չէր խոցոտում դժբախտ թագավորի սիրտը, որքան այդ լուռ, անմռունչ ուրվականը, որ յուր լռությամբ ավելի ազդու լեզվով հիշեցնում էր նրան յուր կորցրած փառքը։ Իբրև սպարապետ, ներկայացնում էր նա Հայաստանի զինվորական զորությունը ընկճված, առաթուր կործանված պարսկական նենգության ներքո։ Իսկ իբրև մի քաջ զորավար, յուր փայլուն հաղթություններով, որ մի քանի տասնյակ տարիների ընթացքում շարունակ կատարել էր պարսից դեմ, հիշեցնում էր նա յուր թագավորի մեծությունը, որին ինքն էլ փառակից էր և բաժանորդ։ Բոլորը կորա՜վ, բոլորը խորտակվեցավ... Դառն արհավիրք, մշտական տանջանք և տխուր հիշողություններ միայն մնացին՝ իբրև անբաժան կենակից դժբախտ թագավորին, որ շղթայակապ Արտավազդի նման կաշկանդված էր այդ մռայլ, քարեղեն նկուղի մեջ, որ գերեզմանի պես ամեն րոպե ճնշում էր, խեղդում էր նրան։

Նա չկպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին նրա համար, միայն

վեր առեց խնցելին ամանը, խմեց ջուրը, փոքր-ինչ զովացնելու սրտի տապը։ Հետո անցավ, ընկողմանեցավ յուր հարդյա անկողնի վրա։

Նա դարձյալ շարունակեց նայել անշարժ արձանի վրա։ Թավամազ դեմքը արտահայտում էր և՛ զայրույթ, և՛ ապաշխարանք։ Զայրո՛ւյթ, որ այնպես ամարդի կերպով վարվեցավ յուր հետ Արյաց արքան։ Ապաշխարա՛նք, որ ինքը հարթեց յուր կործանման ճանապարհը։ Խիղճը հանգիստ չէր։ Ամեն անգամ, որ վերջին միտքը ծագում էր նրա մեջ, նա ամբողջ մարմնով դողում էր, որպես մի հանցավոր, որ ինքն էլ դեռ ոչ բոլորովին համոզված էր յուր հանցանքի մեջ։

Նա դեռ նայում էր արձանի վրա։ Նա դեռ մաքառում էր յուր սրտի և զգացմունքների հետ։

— Ո՛չ... հազա՜ր անգամ ո՛չ... ես մեղավոր չեմ...— բացականչեց նա, և կատաղության կրակը վառվեցավ մռայլ աչքերի մեջ։— Իմ նախարարների անդադար խռովությունները, վերջապես, ձանձրացրին ինձ... Ես, իրա՛վ է, պատերազմ հայտնեցի նրանց դեմ, ցանկանում էի պատժել ըմբոստ անհնազանդությունը, ցանկանում էի ոչնչացնել նրանց, որպեսզի ի մի ձուլեմ հայոց բաժան-բաժան եղած ուժերը և նրանցից ստեղծեմ մի հզոր, միահեծան պետություն։ Ես ավելի բարձր էի դասում Հայաստանի ամբողջությունը, քան հարյուրավոր առանձնացած իշխանությունները, որոնք, իմ նախորդների անհոգությունից, այն աստիճան բռնացել էին, որ ամեն անգամ ամբարտավանությամբ եղջյուր էին թոթափում իրանց արքայի դեմ... Ես կամեցա չափի և սահմանի մեջ դնել նրանց կամայականությունները... Իսկ նրանք միաբանվեցան և ապըստամբվեցան իմ դեմ... Այդ բավական չէր, նրանք ներքին, ընտանեկան կռվի մեջ հրավիրեցին օտարի միջամտությունը... Պարսկի՛ն, մեր դարևոր թշնամուն գրգռեցին իմ դեմ... Ես միայնակ մնացի և ստիպվեցա թշնամու դուռը գնալ և նրա հետ հաշտության դաշն կապել... Իսկ թշնամին ինձ ուղարկեց այստեղ...

Նա դարձյալ վեր կացավ և, գլուխը խոնարհեցրած, մի քանի անգամ անցավ նկուղի մեջ։ Ներքին վրդովմունքը ալեկոծում էր նրան։ Կըրկին դիմեց դեպի անշարժ արձանը այդ խոսքերով.

— Դու վկա ես, Մամիկոնյան տեր, թե ո՛րքան անկեղծ էին իմ ցանկությունները, թե ո՛րքան բարձր էի դասում ես հայրենիքի բախտավորությունը... Իմ հարաբերությունները իմ նախարարների հետ այն աստիճան լարվեցան, որ երկուսից մեկը պետք է զոհվեր, կամ թագավորությունը նախարարության, կամ նախարարությունը թագավորության։ Ես բարվոք համարեցի վերջինը։ Ինձ համար սուրբ է հայոց գահի հաստատությունը, որ ժառանգել էի իմ նախնիներից։ Բայց եթե իմ

ձևով չկործանվեցավ նախարարությունը, անշուշտ կկործանվի նա պարսկի ձևով, որի թեկնածությունը մի հզոր պաշտպանություն համարեց յուր թագավորի դեմ պատերազմելու... Այդ քարեղեն նկուղի անթափանցելի թանձրության միջով տեսնում եմ ես, Մամիկոնյան տեր, թե ի՛նչ է անում Շապուհը Հայոց աշխարհում... Նա կտրեց գլուխը, այժմ պետք է սկսե հոշոտել անդամները... Գլուխը աքսորեց այստեղ... Իսկ Սագաստանի[6] մթին բանտերը կլցնե հայոց նախարարներով... Եվ անտեր Հայաստանը կմնա պարսկական բարբարոսության մի արձակ ասպարեզ... Նրանց կանայքը և աղջիկները կբազմացնեն պարսից արքունիքի հարճերի և աղախինների թիվը... Նրանց գեղահաս որդիները կսկսեն ավել ածել պարսից արքունիքի մարմարյա սալահատակի վրա... Բայց իմ կի՞նը... իմ որդի՛ն...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին նրա ամուր ձայնը դողդողաց, դողդողացին և ծնկները, և նա հազիվհազ կարողացավ յուր հսկայատիպ իրանը բաց թողնել հարդի կույտի վրա։ Երկու ձեռքով բռնեց աչքերը, և արտասուքը ջերմ հոսանքով թանում էր դժբախտ թագավորի շղթայակապ ձեռքերը...

Քանի՛-քանի՛ այդպիսիները այդ վիմափոր բերդի մթին խորշերում նույն տառապանքների մեջ մաշվում, տրորվում էին։ Ո՛րքան թագավորներ, ո՛րքան թագավորազներ կլանել էր այդ բերդը և, անհագ վիշապի նման, երբեք չէր կշտացել։ Ո՛րքան ես հեծում, հառաչում էին նրա անգութ, քարեղեն սրտում։ Մի անգամ այնտեղ ընկնողը կորչում, անհետանում էր հավիտենական մոռացության մեջ։ Իզուր չվաստակեց նա Անհուշ անունը, որ անհիշելի խավարի մեջ, որպես մթին գերեզմանում, թաղում էր յուր դատապարտյալների տխուր հիշատակը[7]...

Միևնույն քարեղեն նկուղի մեջ, միևնույն շղթաներով, որ այժմ կապված էր որդին, մի ժամանակ կապված էր հայրը — Հայոց Տիրան թագավորը։ Որդին գոնե արևի մի նշույլը տեսնում էր յուր բանտի նեղ պատուհաններից։ Բայց հայրը այդ ևս չէր տեսնում։ Պարսից արքան զրկել էր նրան թե աչքերից և թե լույսից։ Կուրացյալ թագավորը յուր խավար շրջապատի մեջ տանում էր խավարի իշխանության դառն տանջանքները[8]...

Որպես մի այլանդակ հրեշ, լի ամենայն զարհուրանքով, կանգնած էր Անուշ բերդը յուր բարձր, քարեղեն ստորոտի վրա։ Նա տարածում էր յուր շուրջը մահ և սարսափ։ Թունավոր էր նրա շունչը, սպանիչ էր սպառնական հայացքը։ Ոչ ոք համարձակություն չուներ մոտենալ նրան,

ոչ որ չէր հանդգնում նայել անգամ նրա վրա։ Մարդիկ մի քանի մղոն հեռվից էին անցնում, և ուղևորը շեղվում էր յուր ճանապարհից։ Ամեն հաղորդակցություն խզված էր։ Եվ նա, որպես մի կղզիացած պատիժ ու պատուհաս, ապրում էր յուր մռայլ, դժոխային առանձնության մեջ։

Բայց ահա՛ մի անսովոր երևույթ գրավեց պահակների ուշադրությունը։ Մի խումբ ձիավորներ ուղիղ մոտենում էին բերդին։ Աչքները վառվեցան, աղեղները լարվեցան, և սրերը զգացվեցան իրանց պատյաններում։ Ովքե՞ր էին այդ ստահակները։ Բայց ասպախումբը լուռ մոտենում էր, և որքան մոտենում էր, այնքան ավելի փութացնում էր յուր համարձակ ընթացքը։ Շփոթված բանտապետն անգամ բարձրացավ յուր դիտանոցի վրա, սկսեց նայել։ «Գուցե մի նոր հյուր են բերում...» — մտածեց նա և այլայլված դեմքը փայլեց դիվական ուրախությամբ։

Երեկո էր, արևը բավական խոնարհվել էր և մտնելու մոտ էր։ Ձիավորները, որպես երևում էր, շտապում էին, որ դեռ արևը չմտած հասնեն բերդը, որովհետև գիշերը անհնար էր այնտեղ մուտք գործել։ Բոլոր դռները փակվում էին և ոչ որի համար չէին բացվում։

Բանտապետը դեռ շարունակում էր նայել։ Երբ ձիավորները բավական մոտեցան, նկատեց նա, որ նրանցից մեկի, որն բոլորից առաջ էր ընկած, գլխի փաթեթի մեջ ցցված էր մի ինչ-որ բան, որ արևի ճառագայթների առջև փայլում էր։ Նա լարեց յուր ուշադրությունը։ Տեսածը գալարված փոքր ձև ուներ և մագաղաթի փաթոթի էր նմանում։ «Հրովարտա՜կ...» — բացականչեց նա մի առանձին ակնածությամբ և շտապով իջավ դիտանոցից։

Անցնելով բերդի բակը, հրաման տվեց յուր պաշտոնյաներին՝ ընդառաջ գնալ և հանդիսավոր կերպով ընդունել եկվորներին։ Մի քանի րոպեի մեջ ամենքը պատրաստվեցան և դուրս եկան բերդից։ Երբ բավական մոտեցան, ամբողջ խումբը ծունր դրեց գետնի վրա և գլուխը լռությամբ խոնարհեցրեց արքայական հրովարտակի առջև։

Հրովարտակը յուր ոսկյա նկարներով դեռ փայլում էր յուր բարձրության վրա, բերողի ճակատին կպած[9]։ Նա ձեռքով նշան տվեց, երկրպագուները վեր բարձրացան և սկսեցին առաջնորդել նրան դեպի բերդը։ Երբ հասան գլխավոր դռանը, եկվորները ցած իջան ձիերից։ Այդ ժամանակ միայն նա առեց հրովարտակը և, երկու ձեռքով բռնած, մատույց բանտապետին։ Վերջինը կրկին ծունր իջավ և, երկու ձեռքերը մեկնելով, խորին երկյուղածությամբ ընդունեց մագաղաթը։ Նախ համբուրեց, հետո գլխի վրա դրեց, և ապա բաց անելով, վեր կացավ, սկսեց բարձր առոգանությամբ կարդալ։

Երբ ընթերցումը վերջացած էր, հրովարտակը կրկին հանձնեց բերողին, ասելով.

— Իմ տեսչությանը հանձնված բերդի դռները բաց են քո առջև, ներքինապետ տեր։

Ամենքը ներս մտան։

Մինչև այցելուներին պատշաճավոր իջևաններ տվեցին, մինչև նրանց ձիաները տեղավորեցին, արևը մտավ, մութը պատեց, ճրագները վառվեցան։

Այդ ժամանակ բանտապետը մտավ յուր հյուրի սենյակը և, գլուխ տալով, ասաց.

— Ես հուսով եմ, որ տեր ներքինապետը այս գիշեր կհանգստանա ճանապարհի հոգնածությունից և առավոտյան լուսով կտեսնե յուր թագավորին։

— Ոչ, բանտապետ տե՛ր, ես այս գիշեր պետք է տեսնեմ իմ թագավորին,— պատասխանեց նա անհանգիստ կերպով,— և, եթե կարելի է, հենց այս րոպեիս։

— Տեր ներքինապետի համար անկարելի ոչինչ չկա, երբ նա Արքայից Արքայի օրհնյալ հրովարտակովն է ներկայանում,— ասաց բանտապետը անվճռական ձայնով։— Միայն տեր ներքինապետին պետք է հայտնի լինեն այդ բերդի կարգերը... պետք է փոքր-ինչ...

— Հասկանում եմ... դու կամենում ես փոքր-ինչ վայելուչ դրության մեջ ցույց տալ ինձ իմ թագավորին, բայց ես կցանկանայի տեսնել նրան նույն դրության մեջ, որպես միշտ ապրել է այստեղ։ Այո՛, այդ բերդի կարգերը ինձ բավական հայտնի են... Դու քաշվելու ոչինչ չունես, բանտապետ տեր, ես եթե նրան ամենադժբախտ վիճակի մեջ կտեսնեմ։

Բանտապետը դարձյալ տատանվում էր անվճռականության մեջ և, որպես մի հանցավոր, խղճահարությունից գլուխը ցած էր դցել։

— Այնուամենայնիվ,— ասաց նա,— ինձ խիստ ծանր է քո սիրտը ցավեցնել... ներքինապետ տե՛ր։

— Լսի՛ր, բանտապետ,— ասաց այցելուն, բավական խրոխտ ձայնով։— Քեզ, կարծեմ, հայտնի եղավ Արքայից Արքայի հրովարտակի բովանդակությունը։ Իմ թագավորի վիճակը վայելուչ դրության մեջ դնելը և նրա վշտերը թեթևացնելը— այդ բոլորը իմ գործը պետք է լինի։ Դու միայն հրամայիր, որ այս րոպեիս ինձ առաջնորդեն դեպի նրա կացարանը։

— Ես ինքս կառաջնորդեմ, ներքինապետ տե՛ր,— ասաց բանտապետը հոժարվելով։

Տանջանքի մատակարարը վերջապես խոնարհվեցավ բարձրագույն հրամանի առջև։ Այնօր, որպես մեզ հայտնի է, նա ավելի հանդգնությամբ էր վարվել դատապարտյալ Թագավորի հետ, ցանկանում էր՝ յուր մեղքը որևէ կերպով քավել, չնայելով, որ այդ իսկ մեղքի մեջն էր նրա պաշտոնի առաքինությունը։

Մութ էր դրսում։ Բոլոր դռները փակված էին։ Պահակները, սանդարամետական չար ոգիների նման, ամենուրեք հսկում էին։ Երկնքի Թշնամին անգամ գիշերային այդ պահուն չէր համարձակվի բերդի մոտով անցնել։ Ոչ ոք չէր շարժվում, ոչ ոք չէր երևում։ Տիրում էր խորին, մահահրավեր լռություն։

Մի ծառա, լապտերը ձեռին, գնում էր առջևից և լուսավորում էր ապառաժի քարակոփ սանդուղքները, որ տանում էին դեպի վեր, դեպի բերդի բարձրությունը։ Լույս-ցերեկով անգամ այդ ոլորապտույտ սանդուղքներով գնացողը կարող էր ամեն րոպե մոլորվել։ Մի փոքրիկ սխալ, մի թեթև սայթաքումն կտաներ նրան դեպի ցած, դեպի անդունդը... Ծառայի ետևից գնում էր բանտապետը, իսկ նրա ետևից՝ նորեկ Ներքինապետը։ Տխո՞ւր էր նա, որպես մի սգավոր, որին տանում էին ցույց տալու յուր սիրելու անհայտ գերեզմանը։ Ինչպե՞ս պետք է տեսներ նրան, ինչպե՞ս պետք է հանդիպեր նրան։ Արդյոք նա կունենա՞ր այնքան ուժ, այնքան սրտի զորություն, որ կարողանար զսպել յուր հոգու ամենադառն զգացմունքները։

Նրանք կանգ առին մեզ ծանոթ նկուղի դռան հանդեպ։

— Այստեղ է... ներքինապետ տե՛ր,— ասաց բանտապետը, դուռը ցույց տալով։

— Բաց արա՛,— հրամայեց նորեկը։— Բայց ես կխնդրեի քեզանից՝ ինձ միայնակ թողնել իմ Թագավորի մոտ։

Բանտապետի դեմքի վրա դարձյալ երևացին անվճռականության նշաններ։ Նորեկը նկատեց այդ և, հանգստացնելով նրան, ասաց.

— Դու կարող ես ապահով լինել, որ դրանից քեզ ոչինչ չարիք չի ծագի։

— Թո՛ղ տեր ներքինապետի կամքը կատարված լինի,— պատասխանեց բանտապետը բանի հոժարությամբ։— Բայց թո՛ղ ների ինձ տեր ներքինապետը ասել, երբ նա ցանկություն ունի յուր Թագավորի հետ միայնակ լինել, ես ստիպված կլինեմ դուռը փակել նրա ետևից։

— Կարող ես։ Բայց ես պետք է վեր առնեմ ինձ հետ այդ լապտերը, անտարակույս, այնտեղ լույս չի պիտի լինի։

Բանտապետը ջոկեց յուր գոտիից քարշ ընկած բանալիների ծանր փունջից մեկը, մոտեցավ երկաթյա դռանը և, բաց անելուց հետո, ասաց.

— Ներս համեցիր, ներքինապետ տե՛ր։ Դու կարող ես մնալ քո թագավորի մոտ, որքան քո կամքն է։ Երբ կցանկանաս դուրս գալ, բավական է ներսից փոքր-ինչ բախել. իմ պահապաններն այստեղ պատրաստ են. ինձ իմացում կտան, և ես կգամ, կրկին բաց կանեմ։

Նա ցույց տվեց պահապանների խումբը, որ կանգնած էին հատկապես այդ նկուղի պահպանության համար։

Նորեկը առեց լապտերը և սրտի սաստիկ բաբախմունքով ներս մտավ։ Նրա ետևից դուռը կողպվեցավ։

Դողդոջուն քայլերով անցավ նա, լապտերը դրեց մի անկյունում։ Դատապարտյալը պառկած էր։ Կարծես դժոխքը յուր ամբողջ չարչարանքով ներկայացավ տառապյալ այցելուի առջև։ Խորին սրտմտությամբ նայում էր նա շղթայակապ արքայի վրա, որ տարածված էր հարդյա անկողնի վրա և ծանր շնչառությամբ հառաչում էր։ Տեսավ դեռ չկերած ցամաք պարեհացը, որ դրած էր նրա մոտ, տեսավ ջրի խեցեղեն ամանը, որից առնետներն անգամ կվիրավորվեին, եթե առաջարկեին նրանց։ Նա աչքերը դարձրեց դեպի քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ ուրվականը։ Նրա աչքերը լցվեցան արտասուքով, և հազիվհազ կարողացավ իրեն պահել ոտքի վրա։ Նրա առջև դրած էր Հայաստանը — ընկճվա՜ծ և անպատվա՜ծ Հայաստանը...

Նա մի քանի քայլ առաջ գնաց, բայց սոսկալով կրկին ետ դարձավ։ Ինչպե՞ս վրդովել նրա հանգստությունը, ինչպե՞ս խանգարել նրա քունը, որ խիստ հազիվ անգամ է վիճակվում բանտարկյալին։ Նա շարունակեց նայել նրա վրա։ Երբեմն արձակում էր խորին հառաչանքներ, իսկ երբեմն լսելի էին լինում հեգնական դառն ծիծաղներ։ Երևում էր, որ խառն երազներ ալեկոծում էին նրան։ Նա պառկած էր մի կողքի վրա և աջ թևքը դրած ուներ գլխի տակին։ Երեսը դարձրած էր դեպի այցելուն։ Որքա՜ն փոխվել էր, որքա՜ն այլանդակվել էր նա։ Այցելուն սարսափում էր։ Ինչպե՞ս մոտենալ։ Գուցե անրջային կատաղության մեջ՝ վեր կբարձրանար նա և, տեսնելով յուր նկուղի մեջ մի անակնկալ մարդ, կփշրեր, կխորտակեր նրան յուր ոտքերի ներքո։

Միջահասակ մարդ էր այցելուն, ցամաքած և նիհար կազմվածքով։ Երեսը բոլորովին զուրկ էր մազերից, ոչ մորուք ուներ և ոչ բեղեր։ Եթե այրական հագուստը փոխվեր, մի պառավ կնոջ տպավորություն կգործեր, — մի կնոջ, որ հարգանք է ազդում և պատկառանք։ Թանկագին գոտիի մեջ խրած ուներ մի դաշույն, որի գոհարազարդ կոթը կիսով չափ երևում էր վերևից։ Հագուստը մի բարձր պաշտոնակալի վայելուչ շքեղությունն ուներ։ Նրան կոչում էին Դրաստամատ։ Ներքինի էր նա, շատ հարգված և սիրելի, և մի ժամանակ հայոց արքունիքում, բոլոր նախա-

բարձրից վեր էր դրած նրա բազմոցն ու բարձը։ Անգեղ-տան[10] իշխանն էր նա և կառավարիչ Թագավորական գանձերի, որ պահված էին Ծոփաց գավառի Բնաբեղ բերդում[11]։

«Վա՜սա՜կ,— լսեցի նրա ձայնը,— կազմի՛ր իմ քաջ գունդերը... գրո՜հ տանք դեպի Արյաց աշխարհը... պատժե՜նք Շապուհի հանդգնությունը...»։

Նա խոսում էր քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ ուրվականի հետ։

Ներքինապետի աչքերը կրկին լցվեցան արտասուքով։

Նա մի անսովոր ցնցում զգաց, ձեռքը, որ դրած էր գլխի տակին, դուրս հանեց և, սպառնական կերպով շարժելով, սկսեց մռնչալ.

«Հրդեհված Տիզբոնի բոցերի մեջ կխորովեմ քեզ, խարդա՜խ Շապուհ...»։

Մյուս ձեռքը, որ ծանր շղթայով կապված էր առաջինի հետ, ձգեց նրան, և երկուսն էլ շառաչելով ընկան նրա կուրծքի վրա... Նա, կարծես թե, արթնացավ, քնած աչքերը բաց արեց և կրկին փակեց։ Այդ միջոցին ներքինապետը վստահացավ մոտենալ և, մի քայլ հեռավորության վրա կանգնելով, կոչեց.

— Տե՛ր արքա...

Նա չարթնացավ։

— Տե՛ր արքա...— կրկնեց նա։

Նա գլուխը բարձրացրեց և, պղտոր աչքերը դարձնելով դեպի այցելուն, որոտաց.

— Անամո՜թ, գոնե գիշերը ինձ հանգստություն տուր։

Կարծում էր, որ բանտապետն է։

— Տե՛ր արքա, ճանաչի՛ր քո ծառային...— խոսեց այցելուն լալագին ձայնով։

— Իմ ծառայի՜ն...— կրկնեց նա ծիծաղելով։— Դո՛ւ, անզգամ, ամեն օր իմ դահիճն էիր, իսկ այժմ ծառա՞ դարձար...

Այցելուն այլևս չկարողացավ զսպել յուր զգացմունքները, խոնարհվեցավ, գրկեց նրա ոտները և, ջերմ արտասուքով թանալով նրա շղթաները, աղաղակեց.

— Տե՛ր արքա, զգաստացի՛ր, նայի՛ր իմ վրա, ես քո ծառան եմ... քո սարուկը... քո նվաստ Դրաստամատը...

— Դրաստամա՜տ...— բացականչեց նա, մի կողմ հրելով այցելուին։— Ո՞ր աստվածը կտար ինձ Դրաստամատին, իմ քաջ և հավատարիմ ծառային... Հեռո՛ւ ինձանից, խաբեություն, հեռո՛ւ գնացեք, երազական ցնորքներ... Ես կորցրի իմ ամենալավ մարդիկներին. ես զրկվեցա իմ

ընտիր պաշտոնյաներից... աստված պատժե՛ց ինձ... այլևս նրանց տեսնել չեմ կարող...

— Նրանցից մեկը քո սպասուհին է, տե՛ր արքա։

Դժբախտ թագավորին այնպես էր թվում, որ յուր տեսածը և լսածը յուր երազների շարունակությունն է։ Այժմ միայն ուղիղ նայեց այցելուի վրա և ապշած կերպով հարցրեց.

— Այդ ո՞վ է այստեղ։

— Քո ծառան, Դրաստամատը։

Նա շփոթված կերպով վեր թռավ, առաջ վազեց, աղաղակելով.

— Դրաստամա՛տ... որտեղի՛ց հայտնվեցար... ինչպե՞ս թողեցին ինձ մոտ... Տեր աստված, այդ ի՛նչ բախտ է... մերձեցի՛ր, սիրելի Դրաստամատ, մերձեցի՛ր, գրկեմ քեզ...

Ներքինապետը կրկին ծունր իջավ, սկսեց համբուրել նրա ոտները։ Նա զորեղ ձեռքով բարձրացրեց նրան, ասելով.

— Այդ համբույրները չեն թեթևացնի իմ շղթաների ծանրությունը, սիրելի Դրաստամատ, պատմի՛ր, որտե՞ղ էիր, ինչպե՞ս եկար այստեղ, ի՞նչ լուր ունես...

Նա մի քանի քայլ անցավ յուր նեղ նկուղի մեջ, հետո նստեց հարդյա անկողնի վրա։ Ներքինապետը մնաց ոտքի վրա, խորին տատանման մեջ տարուբերվելով, արդյոք որտեղի՞ց սկսել և ի՞նչ պատմել։ Նա շատ բան ուներ պատմելու, բայց յուր տեղեկությունները այն աստիճան տխուր և այն աստիճան անմխիթար էին, որ չկամեցավ ավելի դառնացնել յուր թագավորի առանց դրանց ևս վշտացած սիրտը։

— Ինչո՞ւ ես լուռ, Դրաստամատ,— ասաց նա, նկատելով ներքինապետի մտատանջությունը։— Դու կարծում ես, Արշակը այնքան թուլացել է սրտով, որ չէ՞ կարող տանել նոր հարվածներ։ Ես առանց քո պատմելու ևս շատ բան գիտեմ... Այդ քարեղեն բանտի միջից ես ամեն բան, ամեն վայրկյան տեսնում եմ, Դրաստամատ, թե ի՛նչ է կատարվում այնտեղ, Հայոց աշխարհում... Դու միայն այն ասա՛, թե ինչպե՞ս թույլ տվեցին քեզ մտնել իմ մոտ։ Այդ ինձ շատ զարմացնում է...

Ներքինապետը սկսեց պատմել, թե յուր սիրելի արքայից բաժանվելուց հետո ինքը մնաց այն հայազունդ այրուձիի թվում, որ պահված էր Տիզբոնում։ Այդ միջոցներում Շապուհը մի նոր արշավանք գործեց Քուշանաց դեմ և հասավ մինչև նրանց Բահլ մայրաքաղաքը։ Նրա զորքերի թվում գտնվում էր թե՛ ինքը և թե՛ Հայոց այրուձին։ Տեղային արշակունի թագավորը դուրս եկավ Շապուհի առաջ, և սկսվեցավ արյունահեղ պատերազմը։ Պարսիկները ջարդվեցան, և Շապուհը փորձեց փախուստով ազատել յուր կյանքը։ Բայց չհաջողվեցավ, որովհետև փախչելու միջո-

ցին քուշաններից մի խումբ շրջապատեցին նրան և գերի բռնեցին։ Բայց ինքը՝ ներքինապետը, յուր հայ ձիավորներով վրա հասավ և ազատեց Շապուհին։ Երբ վերադարձան Տիզբոն, Շապուհը ատյան կողմից, հրապարակավ հանդիմանեց յուր զորապետների անփութությունը և ցավելով գովաբանեց հայերի քաջագործությունը։

— Նույն ատյանի մեջ, տե՛ր արքա,— շարունակեց ներքինապետը,— Շապուհը դարձավ ինձ, ասելով. «Դրաստամատ, իմ կյանքով ես քեզ եմ պարտական, դու ազատեցիր ինձ անարգ գերությունից. խնդրի՛ր քեզ վարձատրություն, փառք, պատիվ, իշխանություն, հարստություն, երդվում եմ իմ նախահարց սուրբ հիշատակով, ինչ որ խնդրելու լինես, կստանաս ինձանից»։ Բայց ես ոչ հարստություն պահանջեցի և ոչ իշխանություն, տե՛ր արքա, ես պահանջեցի միայն, որ ինձ իրավունք տան գնալ Անուշ բերդը և տեսնել իմ սիրելի թագավորին...

— Եվ քեզ իրավունք տվեցի՞ն։

— Այո՛, տեր արքա։ Շապուհը չէր կարող երևակայել, որ ես այդ շնորհը կխնդրեի։ Երբ իմ ցանկությունը հայտնեցի, նա երկու ձեռքով կծեց ծնկները, և զղջացավ յուր խոստման մասին, ասելով. «Անհնարին բան խնդրեցիր, Դրաստամատ, որովհետև Արյաց օրենքներին հակառակ է՝ ոչ միայն այցելություն գործելն Անուշ բերդի դատապարտյալներին, այլ նրանց մտաբերելն անգամ։ Խնդրի՛ր մի այլ բան. իմ գանձարանները լի են ոսկով և գոհարներով, ազգք և ազինք խոնարհված են իմ իշխանության ներքո, ո՛ր երկիրը ցանկանալու լինես, կտամ քեզ»։ Ես կրկնեցի միևնույն խնդիրքը։ Որովհետև հրապարակավ երդվել էր, չկարողացավ զանց առնել[12]։

Աքսորյալի մռայլ դեմքի վրա անցավ մի դառն ժպիտ։

— Մի՞թե այդպես երդմնապահ է դարձել նա... Ինձ ես երդվեցավ... ինձ ես շատ խոստումներ արեց... բայց վերջը դավաճանեց... Նա վարազակիր մատանիով աղ կնքեց և ուղարկեց ինձ, որը, պարսից թագավորների օրենքով, ամենահավատարիմ երդման ուխտն է[13]։ Ինձ կանչեց յուր մոտ սիրո և հաշտության դաշն կնքելու և կրկին խաղաղությամբ դեպի իմ աշխարհը վերադառնալու։ Բայց փոխարենը— ուղարկեց այստեղ...

Նրա ձայնը ներքին վրդովմունքից դողդողաց, և րոպեական լռությունից հետո կրկին դարձավ դեպի ներքինին, ասելով.

— Գովում եմ քո անձնանվիրությունը, Դրաստամատ, դու՝ միշտ հավատարիմ ես եղել քո թագավորին։ Քո այժմյան վարմունքը ես կհամարեմ այն բազմաթիվ զոհաբերությունների պսակը, որոնցով դու շատ անգամ ապացուցել ես քո բարձր արժանավորությունները։ Ես փառք եմ տալիս ամենակալին, և այժմ միայն հավատացած եմ, որ նա ինձ բո-

լրովին ձեռնաթափ չի արել։ Ես կարոտ էի իմ աշխարհից մեկին, և նա ուղարկեց ինձ։

Դրաստամատը, հոգով չափ փառավորվելով յուր թագավորի խոսքերից, հայտնեց, թե ինքը ներկայացել է այդ բերդը արքայական հրովարտակով, թե իրան իրավունք է շնորհված յուր թագավորի վիճակը արքայավայել դրության մեջ դնելու, ամեն կերպով թեթևացնելով նրա ծանրությունները և ամեն կերպով մխիթարելով նրան։ ....

— Այդ ինձ շատ փոքր մխիթարություն կլինի, Դրաստամատ,— պատասխանեց նա վշտալի ձայնով։— Այժմ ինձ համար միևնույն է՝ այդ հարդի վրա պառկել, թե ամենափափուկ անկողնի մեջ։ Նույնպես ինձ համար զանազանություն չունի՝ ջուրը այդ կոտրած խեցեղեն անոթից խմել, թե ոսկյա բաժակից։ Տանջանքը, տաժանակիր կյանքը չէ մաշում ինձ։ Ինձ մաշում է միայն այն, որ ես այստեղ եմ, իսկ իմ անտեր մնացած երկիրը կեղեքվում է իմ թշնամիներից...

Վերջին խոսքերից այն աստիճան զգացվեցավ ներքինապետը, որ մի բառ անգամ չկարաց պատասխանելու։ Արքայը հարցրեց.

— Ինչո՞ւ ես լուռ, Դրաստամատ, ասա՛, ի՞նչ գիտես մեր աշխարհից. ի՞նչ է մտածում անել Շապուհը, ի՞նչ են մտածում նախարարները։ Դու, թեև Տիզբոնից ես գալիս, բայց դարձյալ շատ բան լսած, շատ բան իմացած կլինես։

Նա, իրավ, շատ բան լսել և շատ բան իմացել էր, բայց մի՞թե կարող էր բոլորը պատմել նրան։ Թույլ տվեց, որ ինքը հարցեր առաջարկե։

— Ո՞վ է իմ զորքերի հրամանատարը։

— Մուշեղ Մամիկոնյանը, տե՛ր արքա։

Ուրախության նման մի բան փայլեց նրա տխուր դեմքի վրա, և, դառնալով դեպի քարե պատվանդանի վրա կանգնած անշարժ արձանը, ասաց.

— Լսի՛ր, Մամիկոնյան տեր, որդիդ իմ զորքերի ընդհանուր սպարապետն է այժմ։ Ես վստահ եմ, որ քաջ հոր քաջ որդին կարդարացնե յուր տոհմի հայրենասիրությունը։ Ես հիշում եմ նրան, երբ դեռ պատանի էր, երբ դեռ նոր էր սկսել ձիավարել. տեսել եմ նրան մի քանի մրցությունների մեջ, տեսել եմ և կռիվներում, երբ արդեն երիտասարդ էր։ Ամենափոքր հասակից քաջողնական աստղը փայլում էր նրա ճակատի վրա։ Հպարտ էր յուր հոր նման և մեծամիտ։ Երբ մի անգամ նրան ասեցի՝ «քեզ արքունի հավերի վրա վերակացու պիտի կարգեմ»,— նա վիրավորվեցավ և աչքերը լցվեցան արտասուքով։ Այդ ժամանակ տասներկու տարեկան հազիվ կլիներ։

Որդու գովասանքները կարծես լսում էր հայրը, և այնպես էր թվում,

որ նրա մռայլ, սպառնալի դեմքը արտասանում էր այդ խոսքերը. «Հոր արյան վրեժխնդրությունը կոչեսցե նրան, և նա յուր ծնողաց հարազատը չի լինի, եթե հարյուրավոր պարսիկ ազատների մորթերը խոտով չի լցնի և չի ուղարկի իբրև նվեր սատրապի Շապուհին...»։

Բանտարկյալը շարունակեց հարցուփորձը.

— Որտե՞ղ է Հայոց տիկինը (թագուհին)։

— Ամրացած է Արտագերս բերդում, տեր արքա, և յուր հրամանի ներքո ունի տասնևերկու հազար ամենաընտիր զորքեր։

— Իսկ իմ որդի՞ն։

— Դեռ գտնվում է Բյուզանդիայում, կայսեր մոտ, տե՛ր արքա։

— Ինչո՞ւ չեն կանչում, ինչո՞ւ են թողել այնտեղ։

— Դեռ մտածում են երկիրը խաղաղացնել պարսիկների հարձակումներից, որ նա հետո գա և ամենայն ապահովությամբ ժառանգե հոր գահը, տե՛ր արքա։

Բանտարկյալը գոհացած կերպով շարժեց գլուխը, և նրա շրթունքների շառաչյունը արձագանք տվեց սրտի բարկությանը։

— Դու խնայում ես ինձ, Դրաստամատ,— կոչեց նա խրոխտ ձայնով,— դու խիստ մեղմությամբ ես հաղորդում իմ աշխարհի աղետները։ Խոսի՛ր ճշմարիտ, ես քեզ կլսեմ ամենայն սառնասրտությամբ, որքան և տխուր լինեին քո պատմությունները։ Իմ որդուն պահում են Բյուզանդիայում, պահում են կայսեր մոտ, որովհետև վախենում են հայրենի աշխարհը բերել, որպեսզի Շապուհի ձեռքը չընկնի, և նրան ես հոր մոտ՝ այդ բերդում չաքսորի... Այդ չէ՞ իսկությունը։— Կարծեմ, այդ է։

— Այո՛, տեր արքա։

— Որտե՞ղ է Ներսեսը։

— Նույնպես Բյուզանդիայում, տեր արքա։

Չնայելով բանտարկյալի թախանձանքին, նա դարձյալ ծածկեց, որ Հայոց մեծ քահանայապետը աքսորված է Պատմոս կղզում։

— Երևի, այն նպատակով է, սպասում Բյուզանդիայում, որ որդուս հետ միասին վերադառնա։

— Այո՛, տեր արքա։

Նա գլուխը խոնարհեցրեց, և խառնված գիսակների թավ հոսանքը սքողեց տխրամած դեմքը։ Րոպեական մտահոգությունից հետո, կրկին դարձավ դեպի ներքինին, ասելով.

— Այդ ինձ և՛ մխիթարում է, և՛ խոցոտում է, Դրաստամատ։ Ես երբեք Ներսեսի հետ լավ հարաբերությունների մեջ չեմ եղել։ Այժմ նա հովանավորում է իմ որդուն։ Դա մի տեսակ վրեժխնդրություն է և քրիս-

տոհմական վրեժխնդրություն— չարության փոխարեն բարություն մատուցել...

— Այդ նրա պարտքն է, տեր արքա, որպես Քրիստոսի աշակերտի։

— Այո՛, և որպես ճշմարիտ հայրենասերի, Դրաստամատ,— ավելացրեց բանտարկյալը։— Ես թեև միշտ հակառակել եմ Ներսեսին, բայց երբեք չեմ դադարել հարգել նրա մեջ մեծ մարդու ամենաբարձր հատկությունները։

— Ի՞նչ է շինում Մերուժանը,— խոսքը փոխեց նա։

— Անիծվի՛ Մերուժանը,— պատասխանեց ներքինին խորին զզվանքով։— Շապուհից զանազան հրահանգներ է ստացել... և նրանց ի կատար ածելու մասին է աշխատում...

— Իհարկե, ոչ լավ հրահանգներ։

— Այդ շատ հասկանալի է, տեր արքա։ Բայց ես մեծ հույսեր ունեմ, որ հայոց նախարարների միաբանությունը կխորտակե նրա չար դիտավորությունները...

— Նախարարների միաբանությո՞ւնը...— կրկնեց բանտարկյալը դառնացած ձայնով։— Միթե կարելի՞ է հավատալ նրանց անկեղծությանը...

— Ոչ միայն կարելի է, այլ պետք է հավատալ, տեր արքա։ Նրանք այժմ շատ և շատ զղջացել են իրանց անխոհեմ վարմունքների մասին...

— Այն բոլոր վնասներից հետո, որ կատարվեցան, Դրաստամատ... իրանց թագավորին կորցնելուց հետո... հայրենի երկիրը ավերակ դարձնելուց հետո... այժմ, ասում ես, զղջացել են... Դա շա՜տ և շա՜տ ուշ է արդեն...

— Ուշ է, բայց բոլորովին անցած չէ, տեր արքա։ Իրանց անձնազոհությամբ այժմ կքավեն հին մեղքերը։ Ինձ հայտնի են բավական տեղեկություններ, թե ո՛րպես նախարարությունը, հոգևորականության հետ ձեռք ձեռքի տված, պատրաստվում է պատերազմել հայրենիքի փրկության համար։

— Պատմի՛ր, ի՛նչ գիտես։

Ներքինին սկսեց մի ըստ միոջե պատմել, նախ, Շապուհի դիտավորությունները՝ քրիստոնեական կրոնը ոչնչացնելու և Հայաստանում պարսից կրակապաշտությունը տարածելու մասին։ Հետո պատմեց նրա ձեռք առած միջոցները յուր նպատակը իրագործելու համար, որոնց մեջ գլխավոր դերը պատկանում էր Մերուժան Արծրունուն։ Պատմեց Շապուհի մեծամեծ խոստումները Մերուժան Արծրունուն, որոնց կարժանանա նա, երբ Արյաց թագավորի ցանկությունները կկատարե։ Նկարագրեց հայոց նախարարների ուխտը և նրանց պատրաստությունները՝ պատե-

նացող չարիքների առաջը առնելու համար և թե՛ եկեղեցին, թե՛ Արշակունյաց գահը պարսից բռնապետությունից ազատելու համար։ Յուր հաղորդած տեղեկությունները վերջացրեց նա խիստ մխիթարական հուսադրություններով, թե ինքը համոզված է, որ Տապուհին չի հաջողվի յուր չար դիտավորությունները կատարել, թեև, գուցե, Հայաստանը բավական վնասներ կկրե նրանից, բայց երբեք չի նվաճվի։

Թագավորը, գլուխը խոնարհած, խորին վրդովմունքով լսում էր։ Նրա թավամազ, փոքր-ինչ թխագույն դեմքը ավելի մռայլ արտահայտություն էր ստացել։ Այդ բոլորը, կարծես, սպասում էր նա, այդ բոլորը նախագուշակել էր նա այն օրից, երբ դժբախտ հանգամանքները նրան ձգեցին Տապուհի ձեռքը։ Նա դարձավ դեպի ներքինին, հարցնելով.

— Ինչպե՞ս հասան քեզ այդ տեղեկությունները, Դրաստամատ։

— Տիզբոնում եղած ժամանակս, տեր արքա, միշտ հետամուտ էի գիտենալու, թե ի՛նչ են մեքենայում պարսից արքունիքում։ Այդ մասին ես ունեի մի հավատարիմ անձն, որ շատ մոտ էր գործերին և ամեն ինչ հաղորդում էր ինձ։ Հավաքած տեղեկություններս գաղտնի սուրհանդակների միջոցով անմիջապես հաղորդում էի Հայոց նախարարներին, նրանց զգուշացնելու համար, և նրանցից պատասխաններ էի ստանում։ Ես ինչ որ կարող էի անել, արել եմ, տեր արքա, այժմ մնում է ինձ՝ դյուրացնել իմ թագավորի դրությունը, և, եթե կհաջողվի ինձ, որի մասին մեծ հույս ունեմ, ազատել նրան յուր դառն կապանքներից...

Վերջին խոսքերը արտասանեց նա հազիվ լսելի ձայնով։

Թագավորի դեմքի վրա երևաց մի տխուր ժպիտ։

— Գովում եմ քո եռանդը, Դրաստամատ,— ասաց նա,— բայց չեմ կարող հավանություն տալ քո անչափ ոգևորությանը։ Դու, քան թե այստեղ իմ ազատության հոգսերով զբաղվելու, որը ժամանակի և հաջող հանգամանքների գործ է, ավելի օգտավետ կլինեիր այնտեղ, Տիզբոնում, որպեսզի, պարսից արքունիքին մոտ լինելով, շարունակեիր քո սկսած դերը։ Հայոց նախարարներին մի հավատարիմ ականջ է հարկավոր ունենալ Տիզբոնում, և ամենահարմարը դու ես, որ վայելում ես Տապուհի առանձին շնորհը։

— Այնուամենայնիվ, իմ տեր թագավորի վիճակը... նրա աննախանձելի դրությունը...— կրկնեց ներքինին դողդոջուն ձայնով։

— Իմ վիճակը այժմ մասամբ դյուրացած եմ համարում, Դրաստամատ, որովհետև քո հաղորդած տեղեկությունները բավական հանգստացրին ինձ։ Կրկնում եմ, Տիզբոնում մի հավատարիմ մարդ է հարկավոր, և այդ մարդը դու պետք է լինես։ Իսկ ինձանով զբաղվելը— դա միայն ժամանակ կխլեր քեզանից։ Ես ավելին կասեմ. իմ այստեղից ազատվելը,

Հայաստան գնալը և կրկին իմ կառավարության գլուխը անցնելը, գործերի այժմյան խառն և անորոշ դրության ժամանակ,— ես մինչև անգամ վնասակար եմ համարում։ Ինչո՞ւ։ Որովհետև ես չի պիտի կարողանամ հաշտվել իմ նախարարների հետ, իսկ այդ հայրենիքի փրկության համար անհրաժեշտ է։ Մեր մեջ այլևս վաղեմի մտերմությունը կայանալ չէ կարող։ Իմ ներկայությունը կբորբոքե մի նոր, ներքին պատերազմ, երբ արտաքին թշնամու հետ կռվելու շատ պետքեր կան։ Ես կմնամ այստեղ. ես կզոհեմ ինձ հայրենիքի խաղաղությանը։ Թո՛ղ իմ նախարարները հաշտվեն իմ որդու հետ։ Նա նոր է նրանց համար, և նրա հետ հին հաշիվներ չունեն։ Իսկ ես այստեղ կաղոթեմ նրանց հաջողության համար և կսպասեմ աստուծո տնօրինությանը...

Ներքինին չկարողացավ զսպել յուր դառն զգացմունքները, խոնարհվեցավ և, գրկելով դատապարտյալի շղթայակապ ոտները, բացականչեց.

— Տե՛ր արքա, մեծ է աստուծո աշխարհը, և անբավ է նրա գթությունը, եթե դու Հայոց երկիրը գնալ չես ցանկանում, աստված շատ ապահով տեղեր ունի քո բնակության համար...

Դատապարտյալը վեր կացավ և նրան ևս յուր հետ բարձրացրեց, ասելով.

— Երբեք չեմ ցանկանա փախստականի անուն ժառանգել, Դրաստամատ։ Ո՞ւր գնամ։ Հռոմայեցո՞ց մոտ։ Պարսկի բանտը ինձ համար ավելի տանելի է, քան թե նրանց կեղծավորությամբ լի պալատները։ Իմ այստեղ մնալը թեև կուրախացնե իմ նախարարներին, բայց իմ ժողովրդի սիրտը կլցնե արդար վրեժխնդրությամբ։ Իմ ժողովուրդը սիրում է ինձ։ Նա կմտածե, որ աքսորյալ թագավոր ունի և կթափե յուր բարկությունը անիրավ աքսորողի վրա։ Իսկ այժմյան հանգամանքներում այդ կնպաստե իմ երկրի ազատությանը։ Թո՛ղ Հայոց երկիրը ազատ լինի, այնուհետև իմ տանջանքները կթեթևանան այդ մթին բանտում։

— Իսկ քո ազատությունը կմխիթարե քո ժողովրդի սգավոր սիրտը...

— Լսի՛ր, Դրաստամատ, չափազանց սերը քեզ երեխայության մեջ է գցել։ Միթե այնքան միամի՞տ ես կարծում պարսիկներին։ Եթե սատանային պետք լիներ մի նոր բան սովորել, անշուշտ նրանց կդիմեր։ Դու պետք է գիտենաս, այն հրովարտակը, որ շնորհել են քեզ, և որով անսահման իրավունք են տվել քեզ քո թագավորի կեցությունը բարվոքելու և նրա համար յուր բանտի մեջ արքայավայել ապրուստ տնօրինելու,— մի նույնպիսի հրաման կամ ստացել է, կամ, անտարակույս, շուտով կստանա այդ բերդի տեսուչը։ Հսկողությունը իմ վրա ավելի կսաստկացնեն, և զգուշությունը ավելի կզորացնեն։ Դու կկարողանաս կատարել միայն այնքան, որքան քեզ իրավունք է տված. ինձ լավ կերակրել,

լավ հագցնել և ավելի մաքուր արգելանի մեջ պահել։ Այդքան միայն։ Ուրեմն ինչպե՞ս կարող պիտի լինես ազատել ինձ։ Կաշառել բանտապետին, կաշառել պահապաններին, անհնարելի է։ Դու պետք է մնաս այստեղ և սպասես հրաշքների։ Իսկ քո այստեղ մնալը, մի քանի րոպե առաջ հայտնեցի, որ ապարդյուն է։ Դու ավելի հարկավոր ես Տիզբոնում...

Ներքինին խորին տրտմությամբ լսում էր։ Դատապարտյալը շարունակեց.

— Ինձ համար մինչև անգամ խիստ ծանր է, Դրաստամատ, ընդունել այն բարվոքումները, որ պիտի լինեն իմ կեցության մեջ։ Ինձ համար ավելի տանելի կլիներ մնալ այդ դրության մեջ, բայց ամենափոքր շնորհ չընդունել ամարդի Շապուհից։ Ընդունելով նրա շնորհը, ես թեթևացնում եմ նրա հանցանքի չափը։ Բայց, որպեսզի հայտնի լինի, որ դու մի այլ նպատակ չես ունեցել այդ բերդը գալով, ես ստիպված եմ ընդունել։

Այսպես խոսում էր վշտացած թագավորը, այսպես թափում էր սրտի դառն կսկիծները, մինչև նրանց լուսամուտներից երևացին վաղորդյան արեգակի առաջին շողքերը։ Նա նայեց դեպի ծագող լույսը և, դառնալով դեպի ներքինին, ասաց.

— Տխո՞ւր են ազատները, շա՞տ տխուր, Դրաստամատ... Թագավորը այստեղ— արևելքում... քահանայապետը այնտեղ— արևմուտքում... իսկ երկիրը— մնացած անտեր... Բայց կա մի լեռ, որ բոլորի տերն է. ես նրա վրա եմ դրել իմ հույսը...

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ

Ա

ՌՇՏՈՒՆԻՔ

Մի շաբաթ առաջ երկու եղբոր որդիներ դուրս եկան Ոստանի ամրոցից։ Մեկը՝ Սամվել Մամիկոնյանը։ Մյուսը՝ Մուշեղ Մամիկոնյանը։

Երկուսի ճանապարհները բաժանվեցան։

Առաջինը գնում էր Վանա ծովակի հարավ-արևելյան եզերքով։ Իսկ երկրորդը գնում էր նույն ծովակի արևմտյան եզերքով։ Նրանք գնում էին վտանգների և սարսափի միջով։ Երկիրը ընդհանուր հուզման մեջ էր. մի հուզմունք, որ նման էր կատաղության։ Սովոր է, երբ կատաղում է ժողովուրդը, նրա կատաղությունը նմանում է արջի կատաղության, որ, բերանը փրփրած, աչքերը մթնապատած, նախ յուր ձագերին է յուր ոտքերի տակ փշրում...

Մի շշուկ չար ոգու նման անցել էր Հայոց աշխարհով։ Նրա խուլ, անորոշ ձայնը ամեն ոք յուր կերպովն էր հասկանում, ամեն ոք յուր կերպովն էր բացատրում։ Բայց որքան անհասկանալի էր նա, այնքան ավելի վրդովեցուցիչ էր։ Եղբայրը ձեռք էր բարձրացրել եղբոր վրա. մինը մյուսին չէր հասկանում։ Երկիրը ալեկոծվում էր անգիտակցության մեջ,— մթին, մրրկածուփ անգիտակցության մեջ։

Ժողովրդի բերանում առեղծվել էր մի նոր բառ— «ուրացող»: *Ո՞վ էր ուրացողը, ո՞վ չէր ուրացողը,— ոչ ոք չգիտեր։ Բայց կասկածավորին քարկոծում էին։ Ծառան խեթ աչքով էր նայում յուր տիրոջ վրա, իսկ տերը վստահություն չուներ ծառայի վրա։*

Տեղ-տեղ խլրտվում էր ստորերկրյա հեթանոսությունը, որ քրիստոնեությունից հալածված, գետնի տակ էր ապրում։ Հին աստվածները նոր կրոնի դեմ գործ էին կամենում սկսել։

Հաղորդակցությունները համարյա դադարած էին. անցուդարձը անկարելի էր դարձել։ Անգամ գյուղացիք, իրանց խրճիթները թողած, հա-

վաքվել էին լեռների բարձրությունների վրա և ճանապարհից անցնող-ների վրա քարեր էին գլորում։ Քարերը գլորվում էին որպես փուլ եկած լեռան մի մասը և իրանց կույտերի ներքո ծածկում էին ամբողջ քա-րավաններ։ Բայց ո՞ւմ վրա էին գլորում,— իրանք էլ չգիտեին։ Ամեն ոք նրանց համար «ուրացող» էր...

Տեղ-տեղ թափառում էին զինված խմբեր։

Տղամարդիկ վազում էին կռվելու, իսկ կանայք, հաստ բիրերը ձեռք-ներին բռնած, կանգնել էին դատարկ խրճիթների դռանը, և ոչ ոքի թույլ չէին տալիս, որ մտնեն այն խրճիթներին, ուր ամեն մի օտարական կա-րող էր հանգիստ ասպնջականություն գտնել։

Այդ խառն, աղմկալի միջոցում Սամվելի ասպախումբը անցնում էր Տարոնից դեպի Ռշտունիք տանող ճանապարհով։ Նրա առջևից տանում էին Մամիկոնյան տան դրոշը։ Այդ դրոշը, որ միշտ պահպանել էր յուր անարատությունը, այժմ և՛ պատսպարում էր նրան, և՛ մատնում էր նրան։ Պատսպարում էր, որովհետև ամեն ոք սովոր էր հարգանքով վերաբերվել դեպի նա։ Մատնում էր, որովհետև նույն դրոշի գլխավոր ներկայացու-ցիչը այժմ անցել էր «ուրացողների» գլուխը։ Դա Սամվելի հայրն էր, Վա-հան Մամիկոնյանը։ Ո՞ւմը կարող էր հասկացնել որդին, թե ինքը յուր հոր շավղովն չէ գնում։ Կատաղած խուժանը ականջ ուներ լսելու, բայց ժամանակ չուներ դատելու։

Երեք օր էր, որ նրա ասպախումբը մտել էր Ռշտունյաց լեռնային երկիրը, որ ծածկված էր մթին անտառներով։ Այդ անտառները կուսական մի խորին անդունդ էին, լի ամեն զարհուրանքով։ Այդ անտառներում, սկսյալ ամենահին ժամանակներից, կատարվել էին սոսկալի գործողու-թյուններ։ Այստեղ Նեբրովթը կորցրեց յուր տիտանների մեծ մասը[1]։ Այս-տեղից էր հզոր Բարզափրանը, որ լցրեց Հայաստանը հրեից գերիներով[2]։ Այստեղից էր անգութ Մանաճիհրը, որ արյունով ծածկեց Ասորեստանը[3]։ Այստեղ էր «Երկաթաճառաց» լեռը, որի ստորերկրյա խավերում գործում էր մի մռայլ, սորամուտ բազմություն, որ յուր երկրի քաջերի համար նետեր ու զրահներ էր դարբնում[4]։

Այդ երկրի մի կողմը ծփում էր Աղթամարա ծովակը[5], իսկ մյուս կողմում՝ պատնեշ էին դրել Մոկաց անմատչելի լեռները, իրանց դիվա-բնակ խոխոմներով և ձորերով[6]։

Սամվելը դուրս եկավ Ողական ամրոցից 300 ձիավորներով և փառա-վոր պատրաստությամբ։ Այժմ նրա ասպախմբից մնացել էր 43 հոգի միայն։ 257 հոգի կորան Ռշտունյաց անտառներում։

Սարսափելի՜ էին այդ անտառները։ Խաղաղության ժամանակ նրանք անհետացնում էին մենավոր ճանապարհորդներին, իսկ խռովության ժա-

մանակ՝ կլանում էին ամբողջ գունդը։ Այնտեղ տիրում էր հավիտենական մռայլը՝ մի մռայլ ժողովրդի հետ։ Այնտեղից անցնողը տեսնում էր միայն յուր առջևի նեղ շավիղը, որ ծածկված էր մացառներով, տեսնում էր վերևում՝ սաղարթախիտ ծառերի մթին կամարը, որից հազիվ անգամ նշմարվում էին արեգակի ճառագայթները,— տեսնում էր յուր աջ և ձախ կողմերում դարևոր ծառերի անթափանցիկ ցանցը, որ կենդանի պատվարի նման պարփակում էին ճանապարհի եզերքը։ Ուրիշ ոչինչ չէր տեսնում։ Եթե հարյուրավոր աչքեր ունենար մարդը, դարձյալ անկարող կլիներ նկատել, թե ո՛ր կողմից է գալիս վտանգը։ Նրան կարելի էր հանդիպել ամեն քայլում և ամեն րոպեում։ Թշնամին թաքնվել է կիսափուտ ծառերի փչակների մեջ, և յուր դարանից նետեր է արձակում։ Նա օձի նման սողել է մերկարմատ ծառերի ստորին խոռոչներում և հանկարծ հայտնվում է նիզակը ձեռին։ Նա կապիկի նման մագլցում է ծառերի բարձր հյուսվածքի մեջ և այնտեղից մահ է տարածում։ Նա աճել է, միացել է հսկա ծառաստանի հետ, որ նրա անմատչելի պատսպարանն է կազմում։

Կեսօր էր, երբ Սամվելի ասպախումբը դանդաղ ընթացքով անցնում էր այդ անտառի միջով։ Նրանք ճանապարհ էին ընկել գիշերով, որպեսզի, դեռ արևը չծագած, դուրս գան անտառից և մյուս անգամ չհանդիպեն դարանամուտների։ Մի խումբ ձիավորներ գնում էին առաջ բավական հեռավորության վրա, ճանապարհը հետազոտելու համար։ Նրա մի կողմում յուր ձին քշում էր պատանի Արտավազդը։ Իսկ ետևից գալիս էին ծերունի Արբակը, Հուսիկը և մի քանի թիկնապահներ։ Հոգնած էին թե՛ ձիաները և թե՛ ձիավորները։ Բայց դարձյալ մի տեղ իջնելու և հանգստանալու պետքը չէին զգում, որովհետև շտապում էին շուտով դուրս գալ անտառից։

Սամվելը դարձավ դեպի ծերունի Արբակը, հարցնելով.

— Դեռևս երկա՞ր պետք է գնանք։

— Եթե վարշիկները դարձյալ ճանապարհը չկտրեն, շուտով դուրս կգանք անտառից,— պատասխանեց ծերունին յուր սովորական սառնասրտությամբ։

«Վարշիկներ» կոչում էր նա ոշտունցիներին, որ թե նվաղական, և թե նախատական անուն էր։

— Այդ սարի մյուս կողմում վերջանում է անտառը,— ավելացրեց ծերունին։

Պատասխանը գոհացրեց Սամվելին, բայց գրգռեց պատանի Արտավազդի անհամբերությունը։

— Ո՞ր սարի մյուս կողմում,— հարցրեց նա զայրացած ձայնով։— Ես ոչ մի սար չեմ տեսնում։

Ծերունին ոչինչ չպատասխանեց։ Նա անվստահ աչքերով շարունակեց նայել յուր շուրջը։ Նրա մտահույզ դեմքը արտահայտում էր փորձված մարդու վիրավորված ինքնասիրությունը և ծերունու անհամբերությունը, որ գործ ուներ մանուկների հետ։ «Ո՞ր սատանան մոլորեցրեց մեզ,— մտածում էր նա,— ի՞նչն էր ստիպում անպատճառ այդ անիծված երկրով[7] անցնել... միթե ուրիշ ճանապարհ չկա՞ր... Բայց ինձ չլսեցին... և իրանք տուժեցի՜ն...»։

Նեղ ճանապարհը, որով գնում էին նրանք, երբեմն կապվում էր պատնեշի նման ամբարտակներով, բայց փայտեղեն ամբարտակներով։ Ծառերը կտրել և այնպես, առանց ճյուղակոտոր անելու, գցել էին ճանապարհի վրա։ Սամվելի ասպախումբը մեծ դժվարությամբ կարողանում էր անցնել այդ տեղերից։

Ինչ-որ կատարվել էր այդ կողմերում։ Շրջակայքը իրանց բնական դրության մեջ չէին։ Այդ լցնում էր Սամվելի սիրտը մթին տարակուսանքներով, որ հետզհետե աճելով վհատության կերպարանք էին ստանում։ «Գոնե մի մարդ երևար,— մտածում էր նա,— գոնե մի հարցուփորձ անեի...»։

— Ոչ ոք չէ՜ երևում...— խոսեց նա ինքն իրան։

— Կամենո՞ւմ ես մարդ տեսնել,— հարցրեց ծերունին յուր սովորական բարեսիրտ ժպիտով։— Բավական է վուշիկների եղանակով մի անգամ աղաղակել՝ «հա՜յ-հո՜յ», և կտեսնես, որ քո ձայնը կրկնվեցավ հազարավոր բերաններում, և անցավ հեռու և հեռու, մինչև անտառի խորքերը... Այդ ժամանակ գետնի տակից, ժայռերի խոռոչներից, մացառների միջից դուրս կհոսեն վայրենի բազմություն... Այդ մարդիկը սատանայի նման ամեն տեղ կան, բայց ոչ մի տեղ չեն երևում...

Արքակի դիտողությունը սխալ չէր։ Ընծակա լեռան[8] կիրճերից և ապառաժոտ, անհավասար զառիվայրերից ազատվելուց հետո, անտառը սկսեց հետզհետե ցանցառանալ, և ծառերը սկսեցին հետզհետե մանրանալ։ Վերևում բացվեցավ կապտագույն երկինքը, իսկ ներքևում— Աղթամարա ծովակի[9] մուգ-մանիշակագույն հայելին։ Այժմ շրջակա բլուրները ծածկված էին կարճահասակ թփերով, որ աճել և կանաչազարդ գորգի նման հյուսվել էին ճոխ բուսականության հետ։

Կեսօրից բավական անցել էր, երբ Սամվելի բոլորովին հոգնած ասպախումբը հասավ գոգավոր նավամատույցին, որտեղից պետք էր անցնել Աղթամար կղզին։ Այն ջերմ հույսերը, այն բաղձալի փափագները, որ մղում էին երիտասարդին դեպի այդ կղզին, իսկույն տխրության փոխ-

վեցան, երբ նկատեց նա, որ նավամատույցի մոտ ոչ միայն մարդիկ չկային, այլ չէր երևում և նավակների խումբը, որ մշտապատրաստ պահվում էր այնտեղ՝ անցուդարձի համար։

«Ի՞նչ է պատահել...»— այդ մթին հարցը տվեց ինքն իրան, և մնաց շվարյալ դրության մեջ։ Նա ցանկանում էր անպատճառ տեսնել այդ կղզին։ Առանց այդ կղզին տեսնելու նա չէր կարող ոչ հանգիստ լինել և ոչ երջանիկ։ Այդ կղզին տեսնելու համար, նա ծռեց յուր ճանապարհը, մտավ Ռշտունյաց անտառների մթրակալ թավուտների մեջ և տվեց այնքան զոհեր, կորցնելով յուր քաջերի մեծ մասը։

Աղթամար կղզու ապառաժների բարձրության վրա կանգնած էր նույնանուն ամրոցը, որ սկսյալ ամենահին ժամանակներից ներկայացնում էր Ռշտունյաց նախարարների զորությունը։ Բարդափրան նահապետը առաջինը եղավ, որ Տիգրան Բ-ի օրերում այդ ամրոցի հիմքը դրեց[10]։

Սամվելը յուր վշտահար դեմքը դարձրեց դեպի շրջակայքը։ Նրա աչքին ընկավ Ռշտունյաց իշխանների դրսի ապարանքը, որ կանգնած էր ծովեզերքում, նավամատույցից փոքր-ինչ հեռու։ Նա բոլորովին շփոթվեցավ։ Կրակը այնտեղ մեծ գործ էր կատարել։ Կիսակործան ապարանքը դեռ ծխում էր...

— Այդ ի՞նչ ծուխ է...— բացականչեց նա, և նրա աչքերը վառվեցան խորին բարկությամբ։

— Այրվո՞ւմ է...— պատասխանեց ծերունի Աբբակը, գլուխը ցավակցաբար շարժելով։— Բայց արի՛ ու իմացի՛ր, թե ո՞ր սատանան է այրել։

Կրակը անարգել կերպով ճարակում էր գեղեցիկ շինվածքները, և ոչ ոք չկար, որ նրա հանդգնության առաջը առներ։

Ամբողջ ասպախումբը ոչ սակավ խռովության մեջ ընկավ։ Այդ երևույթը տեսնելուց հետո, ամենքը լցվեցան սաստիկ բարկությամբ։ Պատանի Արտավազդի մշտազվարթ դեմքն անգամ ծածկվեցավ խորին տխրությամբ։ Բայց Սամվելի մեջ սիրտ չէր մնացել։

Մինչ այդ շփոթության մեջ էին, հեռվից երևաց մի մարդ։ Սամվելը փոքր-ինչ ոգի առեց։ Գոնե մի մարդ գտնվեցավ։ Նա ուղիղ մոտենում էր խումբին։ Թեթև կերպով զինված էր նա. ձեռքում կրում էր երկար նիզակը, գոտիի մեջ խրած ուներ կարճ դաշույնը, իսկ մեջքին կապել էր լայն վահանը, որ զարդած էր երկաթյա հեղույսներով։ Երբ բոլորովին մերձեցավ նա, արևակեզ դեմքը դարձրեց դեպի խումբը, երևի, տեսնելու համար, թե ովքեր են, հետո նիզակի ծայրը ցցեց գետնին, հենվեցավ նրա վրա և կանգնեց ուղիղ Սամվելի առջև։ Երիտասարդ իշխանը զարմացավ, նա չէր հավատում յուր աչքերին։

— Այդ դո՞ւ ես, Մալխաս,— հարցրեց նա հուզված ձայնով։

Եկվորը նրա գյուղացին և նրա սուրհանդակն էր։ Նա փոխանակ մի խոսք ասելու, անվստահությամբ նայեց յուր շուրջը, հետո գլխարկի փաթոթի միջից հանեց մի ծրար և հանձնեց Սամվելին։ Երիտասարդ իշխանը իսկույն գունաթափվեցավ։ Այդ փակ ծրարը նրան ավելի բան ասաց, քան թե կլսեր եկվորից։ Այդ ծրարը յուր գրած նամակն էր, որ հանձնել էր նրան տեղ հասցնելու համար։ Այժմ կրկին վերադարձնում էին իրան։ Ուրեմն այն անձինքը, որ պետք է ստանային այդ նամակը, կամ չկային... կամ չէր գտել... Երկու մտքերն ևս Սամվելի համար սպա-նիչ էին։ Հազարումեկ վշտեր ալեկոծեցին նրա խռովյալ սիրտը։ Հազարումեկ հարցեր ծագեցան նրա գլխում։ Բայց նա զսպեց յուր վրդովմունքը, ցած իջավ ձիուց և, դառնալով դեպի յուր մարդիկը, ասաց.

— Այստեղ պետք է մի փոքր հանգստանալ։

— Այդ կրակների՞ վրա,— հարցրեց ծերունի Արբակը գլուխը զարմացական կերպով շարժելով։

— Այո՛, այդ կրակների մեջ,— պատասխանեց նրան Սամվելը։

Ամենքը ցած իջան ձիերից, բանակ դրեցին ամայի ծովեզրի մոտ։ Այնտեղ մի քանի օր առաջ դրված էր եղել մի այլ բանակ։ Երևում էին տրորված, ոտնակոխ եղած խոտերի հետքեր, երևում էին հանգած խարույկների տեղերը, որ բոլորակ ձևով այրել էին չորեքկողմի զալար բուսականությունը, երևում էին արյունով ցողված թփերը,— բայց արդյոք անասունների՞, թե՞ մարդու արյունով...

Սամվելն առեց յուր հետ Մալխասին և դիմեց դեպի նավամատույցը։ Երբ հասան, նա դարձավ դեպի սուրհանդակը, հարցնելով.

— Այստեղ կարելի՞ է մի նավակ գտնել։

— Ոչ, տեր իմ, տեսնո՞ւմ ես, բոլորը այրված են։

Երիտասարդ իշխանը աչք ածեց յուր չորեքկողմը. ավազների վրա ընկած էին միայն կտրատված պարանները, ջարդված թիակներ և մակույկների կիսավառ մնացորդներ։ Նա վախենում էր միանգամից հարցնել սարսափելի իրողությունը։ Նա զգում էր այն պատասխանից, որ պիտի բաց աներ նրա առջև կատարված անցքերի սոսկալի պատկերը։

— Ես պետք է անպատճառ տեսնեմ կղզին,— կրկին դարձավ նա դեպի սուրհանդակը։

— Կղզում ոչ ոք չկա, տեր իմ։

Կղզին հեռու էր ցամաքից մեկ ժամու ծովային ճանապարհով միայն։ Սամվելը նայեց դեպի այն կողմը։ Մերկ, ապառաժոտ կղզին, հսկայական սեպի նման, դուրս էր ցցվել ալիքների միջից, և նրա անմատչելի բարձրության վրա նկարված էր Ռշտունյաց նախարարների ահռելի ամ-

բոցը։ Նա նույնպես ծխում էր... և չարագուշակ ծուխը մոխրագույն ամպիկներով տարվում էր ծովային մեղմ հողմերի հետ։ Այնտեղ ծխում էր և Սամվելի սիրտը...

Նա այլևս չկարողացավ իրան պահել, հարցրեց.

— Պատմի՛ր, Մալխաս, ի՞նչ է պատահել։

— Ցավալի՜ է, տեր իմ, շա՜տ ցավալի,— խոսեց սուրհանդակը վշտալի ձայնով։— Ինչպե՞ս պատմեմ...

— Ասա՛, ինչ որ գիտես, ոչինչ մի՛ ծածկիր։

Նա դարձյալ մնաց շփոթության մեջ։

— Ո՞վ ոչնչացրեց այդ բոլորը։

— Քո հայրը, տեր իմ։

— Իմ հա՞յրը...— գոչեց որդին, և, կարծես, կայծակով շանթեցին նրա ճակատը։ Նա ձեռքը տարավ, բռնեց գլուխը, և մի քանի րոպե մնաց լուռ։

Մալխասը ավելացրեց.

— Քո հայրը պարսիկների հետ եկավ և կործանեց բոլորը...

— Ինչպե՞ս եկավ... ինչպե՞ս մտավ կղզին...

Մալխասը պատմեց, թե նրանք եկել էին ծովային ճանապարհով, Վանա կողմից։ Գիշերով պաշարել էին կղզին, երբ ամենքը քնած էին։ Եթե ցամաքի ճանապարհով եկած լինեին, իհարկե, կպատահեին վաշտիկներին, և նրանց անտառների մեջ իրանց վարձը կստանային... Այդ վտանգից խույս տալու համար, արշավանքը կատարել էին գիշերով և ծովային ճանապարհով։ Եվ իրանց անակնկալ հարձակմամբ կարողացել էին տիրել թե՛ կղզուն և թե՛ իշխանական ամրոցին։

Սուրհանդակի պատմության մեջ մի կետ ավելի գրավեց Սամվելի ուշադրությունը, թե արշավանքը կատարվել էր Վանա կողմից։ Ուրեմն, Վանը անցել էր թշնամու ձեռքը։ Նա փոքր-ինչ զայրացած կերպով դարձավ դեպի սուրհանդակը, ասելով.

— Եթե դո՛ւ քեզ հանձնած նամակը յուր ժամանակին տեղ հասցրենեիր, դրանցից և ոչ մեկը չէր կատարվի։

— Ես չուշացա, տեր իմ, ես թռչունի թևիչքով հասա, տեր իմ, բայց մինչև իմ հասնելը, ամեն ինչ կատարված էր։

Նամակի մեջ հաղորդել էր Սամվելը սպառնացող վտանգը։ Բայց, դժբախտաբար, նա ինքն էր արել մեծ սխալը, ուշացնելով նամակը։ Այդ սխալի մեջ նա ևս մեղավոր չէր։ Եթե կհիշե ընթերցողը, նրա խորթ մայրը, Որմիզդուխտ տիկինը, նրան շատ անագան հայտնեց ավետավոր խակությունը, թե նրա հայրը սկզբից Տարոն չի պիտի մտնե, այլ պետք է

նախ հարձակվի Վասպուրականի քաղաքների վրա, և հետո այնտեղից պետք է անցնի Ռշտունյաց աշխարհը և այլն։

— Այժմ որտե՞ղ է Ռշտունյաց նահապետը, Գարեգին իշխանը։ Երևի, գերեցի՞ն նրան։

— Ոչ, տեր իմ։ Նա գնաց Ռշտունյաց Տիկնոջը որոնելու։

— Տարա՞ն նրան։

— Հայտնի չէ, տեր իմ։ Միայն, որպես պատմում էին ամրոցի մարդիկը, գիշերային հարձակման խռովության միջոցում՝ Տիկինը կորավ։

— Իսկ Ռշտունյաց Օրիո՞րդը...

Վերջին հարցի միջոցին երիտասարդի շրթունքները դողացին, նրա սիրտը սկսեց սաստիկ բաբախել։ Այդ հարցի պատասխանիցն էր կախված նրա սրտի թե՛ հանգստությունը, և թե՛ նրա իսպառ խորտակումը։ Նա հարցնում էր գեղեցիկ Աշխենի մասին, որին նվիրված էր յուր հոգու բոլոր էությամբ, որին պաշտում էր յուր սիրո բոլոր ջերմությամբ։

Մալխասը նկատեց երիտասարդի խռովությունը, շտապեց պատասխանել.

— Թո՛ղ հանգիստ լինի իմ տերը, Ռշտունյաց Օրիորդը ազատված է։

Սամվելի դեմքը փայլեց անսահման ուրախությամբ։

— Ճշմարի՞տ ես ասում... մի՛ խաբիր ինձ, Մալխաս... քեզ երդվում եմ տալիս երկնքի և երկրի բոլոր սրբերով... ուղիղն ասա՛, Մալխաս... ազատվա՞ծ է նա... որտե՞ղ է այժմ...

— Յուր քաջերի հետ ամրացած է հայրենի անտառներում։

— Ո՞ր անտառներում։

— Հայտնի չէ, տեր իմ, երբեք մի տեղում չեն մնում։ Այդքանը միայն գիտեմ, որ մի քանի օր առաջ գտնվում էին Արտոսի[11] անմատչելի բարձրությունների վրա։

Սամվելը յուր գոհությամբ լի դեմքը դարձրեց դեպի երկինքը։

— Ես կգնամ, ես կգտնեմ նրան,— ասաց նա խորին ոգևորությամբ։— Որտեղ և լինի, կգտնեմ նրան։

— Խորհուրդ չեմ տա, տեր իմ,— պատասխանեց Մալխասը փորձված մարդու եղանակով։

— Ի՞նչ կա, Մալխաս, ինչո՞ւ ես վախեցնում ինձ։ Նրա համար ես դժոխքն անգամ կմտնեմ, ամեն տեղ կգնամ...

Մալխասը իշխանի մտերիմ ծառաներից մեկն էր, և որքան քաջ էր, նույնքան և խելացի մարդ էր։ Նա յուր անվստահությունը բացատրեց նրանով, թե Ռշտունիները սաստիկ վայրացած են Մամիկոնյանների դեմ, և որտեղ որ հանդիպելու լինեն, անխնա վրեժխնդիր կլինեն։ Եվ այդ

վրեժխնդրության ամենածանր մասը, անտարակույս, կվիճակվի Սամվելին, որովհետև նրա հոր ձեռքովն է կատարվել նրանց երկրին հասած բոլոր վնասը։

— Հիմարանո՞ւմ ես, Մալխաս,— պատասխանեց երիտասարդը, ընդհատելով նրա խոսքը։— Աշխե՞նը, իմ սիրելին, ինձ պետք է վրեժխնդի՞ր լինի, այդ ի՞նչ ասելու բան է։

— Աշխենը վրեժխնդիր չի լինի, տեր իմ, այլ նրան շրջապատող քաջերը վրեժխնդիր կլինեն։ Եվ նույնիսկ Օրմիզդը հազիվ թե կկարողանա զսպել վայրենի խուժանի կատաղությունը։

— Սխալվում ես, Մալխաս, ամբողջ Ռշտունիքը պաշտում է նրան, որպես յուր աստվածուհուն։ Նրա մի խոսքը բավական է սանձահարելու բոլորին։

Մալխասը մտածության մեջ ընկավ։ Մտածության մեջ ընկավ և Սամվելը։ Երկու փափագներ, մեկը մյուսից ավելի սաստիկ, մաքառում էին նրա մեջ։ Առաջինը, յուր սիրելի նշանածին տեսնելու իղձը, իսկ երկրորդը, այն վճռական նպատակը, որի իրագործման համար նա ճանապարհ էր ընկած, որի կատարումը նա հանդիսավոր կերպով ուխտել էր յուր խղճի և աստուծո առջև... Այժմ դեպի ո՞րը դիմել։ Դեպի սիրած օրիո՞րդը, թե՞ դեպի ուխտած նպատակը։ Երկուսն էլ թանկ էին նրա համար, երկուսն էլ սուրբ էին նրա համար։ Բայց սիրո կրակը ավելի վառ էր երիտասարդի սրտի մեջ։ Նա թեև չժխտեց յուր ուխտը, բայց,— հետաձգեց նրան։

— Լսի՛ր, Մալխաս,— դարձավ նա դեպի սուրհանդակը,— դու պետք է գնաս, որոնես օրիորդին, դու պետք է գտնես նրան, և ինձ շուտով լուր բերես, թե որտե՞ղ է նա։ Կարո՞ղ ես գտնել։

— Կարող եմ, տեր իմ։

— Ես այդ ծովեզրում կսպասեմ, և իմ հոգնած մարդիկներին փոքրինչ հանգստություն կտամ, մինչև դու կվերադառնաս։ Եթե հարկավոր կհամարես, վերցրու քեզ հետ իմ մարդիկներից մի քանիսին։

— Նրանք միայն կխանգարեն ինձ, տեր իմ։ Ես միայնակ կգնամ։

— Դու այսօր պետք է ճանապարհ ընկնես։

— Ես հենց այս րոպեիս կգնամ։ Եթե աստված հաջողե ինձ՝ գտնել Օրիորդին, հայտնե՞մ, թե իմ տերը ցանկանում է տեսնել նրան։

— Հայտնի՛ր։

— Իսկ եթե նա չհավատա՞, որ ես իմ տիրոջ կողմից եմ ուղարկված։

— Ցույց տո՛ւր նրան այդ մատանին։
Սամվելը հանեց մատանին, հանձնեց սուրհանդակին։
Նա գլուխ տվեց և ճանապարհ ընկավ։

Բ

ԱՐՏՈՍ

Արտոսը[1] Ոշականյաց լեռների արքան է։ Նա Ոշականյաց լեռների և՛ հսկան է։ Նրա սոսկալի ձորերի մեջ ցերեկը տիրում է խորին մթություն, իսկ գիշերը — անվերծանելի խավար։

Ամպամած գիշեր էր։

Մի սարավանդի գոգավոր բարձրության վրա, դեռ չշիջած խարույկի կարմրագույն լույսը երևան էր հանում մի քանի մռայլ դեմքեր, որոնք, բոլորած կրակի շուրջը, տաքանում էին։ Ամառնային գիշերը այդ լեռան անհյուրընկալ գրկում սառցնելու չափ զովություն է շնչում։ Խարույկի շուրջը նստած մարդիկը և՛ խոսում էին, և՛ զբաղված էին իրանց զենքերով։ Մեկը քարե հեսանը ձեռին սրում էր նիզակի բթացած ծայրը. մյուսը կարում էր կապարճի քանդված փոկը, երրորդը կապում էր մազեղեն տրեխների խրացները։ Մնացածները, մի կողքի վրա պառկած, մի առանձին բավականությամբ նայում էին կրակին։

Խարույկից փոքր-ինչ հեռու, փաթաթված իրանց թաղյա հաստ վերարկուների մեջ, գետնատարած պառկել էին ուրիշ շատերը։ Խավարի միջից հազիվ նշմարվում էր և վրանների մի շարք, որ իրանց ձևով հովիվների տաղավարների նմանություն ունեին։ Նրանք պատրաստված էին թանձր, բրդեղեն մույգ-մոխրագույն կապերտներից, որոնք անձրևի ներքո այն աստիճան ամրանում են, որ մի կաթիլ անգամ թույլ չեն տալիս ներս թափանցելու։ Դրանց մեջ քնած էին կանայք և երեխաներ։

Վրաններից մեկը յուր վրա առանձին ուշադրություն էր դարձնում։ Նա առանձնացած էր մյուսներից և յուր ընդարձակությամբ իշխում էր բոլորի վրա։ Վարագույրները ցած էին թողած։ Դրսի սպիտակ գույնը, միախառնվելով ատլասի կարմրության հետ, արտափայլում էր նուրբ-վարդագույն շառավիղներով։ Երևում էր, որ ներսում ճրագը դեռ մարած չէր։

Խարույկի շուրջը խոսակցությունը դեռ շարունակվում էր։

— Ամոթի մի կաթիլ անգամ չմնաց մեր երեսին, — ասաց նստող-

ներից մեկը,— դրանից հետո մենք պետք է ձգենք մեր քոլոզները[2] և մեր կնիկների լեչակները[3] ծածկենք մեր գլխին...

— Ինչո՞ւ,— հարցրեց մյուսը։

— Դու դեռ հարցնում ես, թե ինչո՞ւ,— պատասխանեց առաջինը։— Նրա համար որ, մենք դրանից հետո տղամարդիկ չենք, մենք կանայք ենք... Կորցրի՛նք մեր պարծանքը, կորցրի՛նք մեր Տիկնոջը... Նրանց ամրոցները կրակի ճարակ դարձան։ Իսկ մենք ազատել չկարողացանք... Արժե՞ այդ բոլորից հետո ապրել... Այլևս ի՞նչ երեսով պետք է նայենք աշխարհին... Ամեն մարդ կթքե, ամեն մարդ կմրե մեզ...

— Ուղիղ է ասածդ, բայց մենք ի՞նչ գիտեինք։ Մենք մեր տանը նստած, թշնամին գողի նման ներս մտավ և յուր ավարը տարավ։ Եթե այս րոպեիս երկնքից հանկարծ մի քար ընկներ մեր գլխին, մենք կարո՞ղ էինք նրա առաջը առնել։ Այդպես հասավ փորձանքը։ Եթե առաջուց գիտենայինք, թշնամին չէր կարող ոտք դնել մեր հողի վրա։

— Հիմա խո գիտենք։

— Հիմա գիտենք, մեր վրեժը կառնենք և մեր նախատինքը մեր թշնամու արյունով կսրբենք։

— Այդ դեռ «ակիպըն է երկանց»,— մեջ մտավ մի ուրիշը, որ բոլորից ծեր էր և, որպես երևում էր, կարդացած մարդ էր։— Մեծ փոթորիկը գալու է վաղը։ Մեր իշխաններին մեր ձեռքից խլելուց հետո, մեզ անգլուխ թողնելուց հետո, կփակեն մեր եկեղեցիների դռները, կպատառոտեն մեր ավետարանները, ոտնակոխ կանեն մեր սրբությունները, և ապա կասեն մեզ. «Ընկե՛ք կրակին ու արևին երկրպագություն արեցեք, դրանք են ձեր աստվածները»։ Մեզ կստիպեն պարսկերեն խոսել և պարսկերեն աղոթել, որովհետև այդ է նրանց աստվածների լեզուն։ Մեր խրճիթները կծխեն կովի աղբով, որովհետև այդ է նրանց սրբությունը[4]։ Մեր մեռյալներին անթաղ կթողնեն, որովհետև այդպես է նրանց սովորությունը[5]։ Եվ մեր տաճարները կպղծեն իրանց կրակի ծուխով և մուխով...

— Հետո ո՞վ թույլ կտա, ո՞վ կընդունե,— պատասխանեցին միաձայն։

— Ընդունել կտան... փայտի ու մտրակի ուժով ընդունել կտան...— ասաց ծերունին, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով։

Մի երիտասարդ, որ կողքի վրա պառկած էր խարույկի մոտ, գլուխը բարձրացրեց և, աչքերը լայն բաց անելով, ասաց.

— Խոսք չկա, եթե մենք ձեռքներս ծալած նստենք մեր տանը, կբռնեն մեր ականջից, քարշ կտան կրակի մոտ և կասեն. «Գլուխդ ծռի՛ր, դա՛ է քո աստվածը»։ Բայց ես թույլ չեմ տա, որ նա իմ տունը մտնե և իմ ականջից բռնե։

— Նա արդեն մտել է մեր տունը,— պատասխանեց ծերունին։— Այդ ո՞վքեր էին, որ եկան և մեր Տիկնոջը տարան։

— «Ուրացողները»։

— «Ուրացողները» հենց մեր տան և մեր աշխարհի մարդիկն են, մեզանից են, որ առաջնորդում են մեր թշնամուն։

— Ով որ «ուրացող» է, մեզանից չէ, թեկուզ մեր եղբայրը և մեր հայրը լինի։ Մենք նրանց կկոտորենք։

— Կկոտորե՞նք,— կրկնեցին մյուսները։

— Այդ կտեսնե՞նք...— ասաց ծերունին։— Բայց այժմ մեր Տիկնոջ մասին մտածելու է... Քանի որ Ուշտունյաց Տիկինը թշնամու ձեռքումն է, Ուշտունիքը կմնա անպատվության մեջ։

— Եվ սուգի մեջ,— ավելացրին մյուսները։— Բայց մեր նահապետը գնացել է, յուր հետ տարել է մեր քաջերից շատերին, աստված կօգնե նրան, և որտեղ որ գտնելու լինի Տիկնոջը, կազատե, և կվերադարձնե մեզ։ Այն ժամանակ մեծ կլինի մեր ուրախությունը։

Խոսակցությունը Ուշտունյաց Տիկնոջ, Համազասպուհիի[6] մասին էր, որը, Աղթամարա ամրոցի պաշարման միջոցին, անհետացավ իշխանական ընտանիքի միջից։ Նրա ամուսինը, Գարեգին նահապետը[7], գնացել էր որոնելու կնոջը, յուր հետ տանելով յուր զորքերի մի մասը։

Խոսակցությունը ընդհատվեցավ, երբ հեռվից լսելի եղավ մի ձայն, որ ավելի նման էր վայրի մռնչալու ձայնին։ Նա կրկնվեցավ մի քանի անգամ։ Ամենքը առեցին իրանց զենքերը, ոտքի ելան և լարված ուշադրությամբ նայում էին իրանց շուրջը։

— Մարդիկ են մոտենում,— ասաց մեկը։

— Մեր գիշերապահների ձայնն է,— ասաց մյուսը։

Բանակի մեջ տիրեց մի թեթև իրարանցում։ Շներն անգամ սկսեցին զայրացած կերպով ոռնալ։

Կես ժամ չանցած մի խումբ գիշերապահներ մոտեցան առաջիններին։ Նրանք բերում էին մեկին, որի թևերը կապած էին քամակին, իսկ վզին դրել էին մի երկայն պարան, որից քաշ էին տալիս։ Երեսի վրա երեում էին կապուտակներ, որ առաջ էին եկել բռունցքների հարվածներից։

— Լրտե՞ս է,— գոչեցին բերողները։

— Պետք է այրել այդ խարույկի մեջ,— ձայն տվեցին առաջինները։

Դատապարտյալը լուռ էր, ոչինչ չէր խոսում։ Նա մի առանձին սառնությամբ նայում էր թե՛ բերողների և թե՛ խարույկի մոտ գտնվածների վրա։ Նրա անշարժ դեմքը արտահայտում էր անձնավստահ մարդու անվեհերությունը։

— Պետք է այրե՜լ,— կրկնեցին ամենքը միաձայն։
Ոմանք սկսեցին խարույկի վրա փայտեր ավելացնել։ Այդ ժամանակ միայն դատապարտյալը բերանը բաց արեց և հանդարտ կերպով հարցրեց.
— Դուք իրավունք ունե՞ք առանց Ուշտունյաց Օրխոյրի հրամանին այրել ինձ։
Ամենքը նայեցին միմյանց երեսին։ Նա ավելացրեց.
— Կարելի է ես անմեղ մարդ եմ։
— Անմեղ մարդը գիշերով ի՞նչ գործ ունի մեր բանակի շուրջը,— հարցրին նրանից։
— Այդ ձեր գիտնալու բանը չէ։ Ինձ տարեք Օրխոյրի մոտ, թող նա դատե ինձ։
— Օրխոյրին այժմ չէ կարելի անհանգստացնել։ Նա քնած է։
— Ինձ պահեցեք մինչև առավոտ, մինչև Օրխոյրը վեր կկենա։
— Դու ո՞վ ես, որտեղացի՞ ես, ինչպե՞ս է քո անունը։
— Ես ձեզ ոչինչ չեմ ասի։
Աղմուկը և աղաղակները հասան մինչև սպիտակ վրանը, որի վարագույրներից մեկը կիսով չափ բարձրացավ և կրկին ցած իջավ։ Ամենքը նայեցին դեպի այն կողմը, միմյանց ասելով.
— Օրխոյրը դեռ քնած չէ։
Մի քանի րոպեից հետո Օրխոյրի ծեր սպասավորներից մեկը մոտեցավ խմբին, հարցրեց, թե ի՞նչ է պատահել։ Եղելությունը նրան պատմեցին, նա հեռացավ։ Շատ չանցավ, կրկին վերադարձավ նա, հայտնեց, թե Օրխոյրը հրամայում է, որ լրտեսին բերեն յուր մոտ։ Այնպես կապած, կաշկանդած, տարան նրան։
Սպիտակ վրանը մի թեթև, շարժական պալատ էր յուր բոլոր հարմարություններով։ Նա կազմված էր մի քանի մասերից, որոնք բաժանված էին միմյանցից առանձին պարատակներով։ Յուրաքանչյուր մասը որոշված էր Օրխոյրի ընտանյան սպասավորների կացության համար, համեմատ նրանց պաշտոնին և ծառայություններին։ Մի մասում կենում էին նրա նաժիշտները, մյուսում՝ նրա դայակներն ու դաստիարակները, երրորդը յուր քնարանն էր, իսկ չորրորդը՝ ընդունելության խորանը։
Նա դեռ քնած չէր, թեև գիշերի կեսից վաղուց անցել էր։ Միայնակ էր յուր քնարանում և, առանց հանվելու, նստած էր մի դահավորակի վրա։ Բարակ շղթայով սյունից քարշ ընկած պղնձյա ճրագը, որ մի առասպելական թռչունի նմանություն ուներ[8], ճարճատելով վառվում էր և յուր աղոտ լույսը թափում էր նրա գունաթափ դեմքի վրա։ Տխո՜ւր էր

նա,և ավելի տխուր, քան թե մի սգավոր հրեշտակ։ Ոսկեգույն գիսակները, որ Ռշտունյաց լեռնական օրիորդների գեղեցկության գլխավոր հարստությունն է, մեղմ գանգուրներով ծածկում էին նրա սիրուն թիկունքները։ Աչքերի մեջ փայլում էր խորին թախծություն։ Ի՞նչն էր ալեկոծում քնքուշ սիրտը, որ ուրախ լինելու, և հավիտյան ուրախ լինելու համար էր ստեղծված։ Նա մտածում էր... և այդ մտածություններն էին, որ խլել էին թե նրա քունը և թե հանգստությունը։ Մտածում էր հայրենի ամրոցների կործանման մասին, մտածում էր կորած, անհետացած մոր մասին, որին սիրում էր որդիական բոլոր տարփանքով. մտածում էր տառապյալ հոր մասին, որ գնացել էր պատերազմելու սարսափելի վտանգների դեմ, որ գնացել էր ազատելու սիրելի ամուսնին։ Եվ, վերջապես, մտածում էր Սամվելի մասին, որից շատ ժամանակ էր, որ ոչինչ տեղեկություն չուներ։ Ինչո՞վ բացատրել նրա լռությունը։ Այդ հարցի վրա խորհելիս, նա ամբողջ մարմնով դողում էր, մանավանդ երբ մտաբերում էր, որ կատարված բոլոր ավերների հեղինակը այն երիտասարդի հայրն էր, որին ինքը այնքան սիրում էր, որի սիրով միայն իրան կատարյալ երջանիկ և բախտավոր էր համարում։ Իսկ նա՞, Սամվելը... արդյոք չէ՞ր փոխվել նա... արդյոք ինչպե՞ս էր նայում յուր հոր գործողությունների վրա... Այդ հարցերը խելագարության չափ վրդովեցնում էին խեղճ օրիորդին, և նա, անհնարին տարակուսանքների մեջ ընկղմված, ոչ մի մխիթարանք, ոչ մի դյուրություն չէր գտնում խռովյալ սրտին։ Եթե Սամվելը հավատարիմ կմնար սիրած աղջկան և նրա տոհմին, նա պետք է հակառակեր յուր հորը, որ ատելով ատում էր այդ տոհմը։ Նա պետք է կորցներ բոլորը և զրկվեր բոլորից, միայն յուր սիրած աղջիկը շահելու համար։ Բայց արդյոք կտա՞ր նա մի այդպիսի զոհ,— մի այդչափ մեծ զոհ, որով խայտառակվում էր նրա բախտը և գույքը— նրա ապագան... Եվ ինչպե՞ս ընդուներ ինքը այդ մեծ զոհաբերությունը, զրկելով Մամիկոնյանների նշանավոր ժառանգին հայրենական ժառանգությունից։ Միթե յուր սերը բավակա՞ն էր լրացնելու այն անհուն կորուստը, որին պետք է ենթարկվեր դժբախտ երիտասարդը, որ յուր բարձր արժանավորություններով՝ երջանիկ լինելու և մի՛շտ երջանիկ լինելու իրավունք ուներ...

Այն դա՞ռն մտածությունների խռովության մեջն էր օրիորդը, երբ բանակում տեղի ունեցած աղմուկը գրավեց նրա ուշադրությունը։

Միայնության րոպեներում տխուր խոկումները գիտեին ալեկոծել նրա զգայուն սիրտը, իսկ երբ պետք էր սառնասիրտ լինել, այդ ժամանակ նա ուներ յուր աստիճանին և մեծապատվությանը վայել զգոնու-

թյունը։ Երբ հանցավորին կանգնեցրին վրանի հանդեպ, նա վեր կացավ, ձայն տվեց յուր նամիշաններին, որոնք խմբով ներս մտան, և առաջնորդեցին նրան դեպի ընդունարանի խորքը։ Իբրև սպավոր, նա գլուխը ծածկեց մի թեթև, սևաթույր շղարշով և դուրս եկավ քնարանից։

Ընդունարանում դրած էր մի փառավոր բազմոց, որի վրա նստեց նա։ Նամիշանները շարվեցան աջ և ձախ կողմերում, իսկ փոքր-ինչ հեռու կանգնած էին նրա դրանիկները։ Հրամայեց ջահերը վառեն և վարագույրը բարձրացնեն։ Ամբողջ բազմությունը, որ կանգնած էին վրանի հանդեպ, մի մարդու նման խոնարհվեցան մինչև գետին և գլուխ տվին։

Հանցավորին առաջ բերեցին։ Օրխորդը հարցրեց.

— Ի՞նչ մարդ ես։

Հանցավորը համարձակ կերպով ասաց.

— Իմ պատասխանը լսելու համար թո՛ղ Ուշտունյաց մեծափառ Օրխորդը հրամայե, որ բաց անեն իմ թևքերը։

Ամենքը կասկածանքով նայեցին նրա երեսին, զարմանում էին անծանոթի համարձակության վրա։ «Միթե Օրխորդի կյանքի դեմ փորձ անելու դիտավորությո՞ւն ունի»,— մտածում էին նրանք։

— Բա՛ց արեք դրա թևքերը,— հրամայեց Օրխորդը։

Դրանիկներից մեկը նկատեց.

— Լեզուն բաց է, Օրխորդ, ինչ որ խոսելու ունի իրան արդարացնելու համար, կարող է խոսել։

— Բա՛ց արեք,— կրկնեց Օրխորդը։

Հրամանը կատարեցին։

Հանցավորը ձեռքը տարավ ծոցը, հանեց մի ինչ-որ բան, որ փաթաթած էր կերպասի կտորի մեջ, և հեռվից բարձրացնելով, ասաց.

— Ահա՛ այդ ծրարի մեջն է իմ պատասխանը, թո՛ղ Ուշտունյաց մեծափառ Օրխորդը բարեհաճի բաց անել և տեսնել։

Դրանիկներից մեկը մոտեցավ, առեց ծրարը և մատույց Օրխորդին։ Մի առանձին հետաքրքրությամբ, որ նրան թե բերկրանք էր պատճառում և թե ներքին խռովություն, բաց արեց ծրարը։ Նրա միջից հայտնվեցավ մի մատանի։ Այդ գեղեցիկ առարկան նրան և՛ ծանոթ էր, և՛ սիրելի։ Կրկին դրեց ծրարի մեջ և ուրախությամբ թաքցրեց յուր ծոցում։ Հետո դարձավ դեպի յուրայինները, ասելով.

— Այդ մարդը լրտես չէ. դա մի բարի ավետաբեր է. իզուր դուք չարչարել եք դրան. թողեք այդ մարդուն միայնակ ինձ մոտ, և դուք հեռացեք։

Ամենքը զարմանալով հեռացան, անծանոթին տարան վրանը. վարագույրը կրկին ցած իջավ։ Օրխորդը նշան տվեց, յուր մոտ եղողներն

նույնպես հեռացան։ Ինքը և անծանոթը մնացին միայնակ։ Նա հարցրեց.

— Ինչպե՞ս է քո անունը։

— Մալխաս։

— Այժմ որտե՞ղ է իշխանը։

— Բանակ է դրել Աղթամարա նավամատույցի մոտ։

«Ուրեմն նա եկած է, եղել ինձ տեսնելու»...— մտածեց նա խորին տխրությամբ,— «իսկ իմ փոխարեն տեսավ մեր ամրոցների ավերակները... ուրեմն նրան հայտնի են ցավալի անցքերը...»։

— Որքա՞ն մարդիկ ունի յուր հետ։

— Հիսուն հոգի հազիվ կլինի։

— Ինչո՞ւ այդքան սակավ։

— Չգիտեմ, Օրիորդ։

— Քեզ ինչո՞ւ համար ուղարկեց։

— Ինձ ուղարկեց, որ որոնեմ, գտնեմ Ռշտունյաց մեծափառ Օրիորդին, և իմ տիրոջը իմացում տամ, թե որտեղ է գտնվում նա։

Օրիորդը մտածության մեջ ընկավ։ Սամվելը, նրա սիրելին, նրա ուրախությունն ու կյանքը, ցանկանում էր տեսնվել նրա հետ։ Այդ տեսությունը որքան և ըղձալի էր, այնքան և դժվարին։ Որտե՞ղ տեսնվել։ Արդյոք ի՞նքը գնա նրա մոտ, թե նրան ժամանակ նշանակե, որ գա յուր մոտ։ Սամվելը այդ վերջինն էր խնդրում։ Բայց կարո՞ղ էր նրան ընդունել յուր բանակում։ Արդյոք չէ՞ր հանդիպի նա անսպասելի վտանգների։ Ինչպե՞ս ընդուներ այն մարդու որդուն, որ ավերակ դարձրեց Ռշտունյաց ամրոցները, որ գերի տարավ Ռշտունյաց Տիկնոջը։ Նրան լավ հայտնի էր, թե որ աստիճան յուր մարդիկը կատաղած էին Մամիկոնյանների և առհասարակ տարոնցիների դեմ։ Ի՞նչ ասել նրանց, ինչո՞վ հանգստացնել նրանց...

Նա խորին տատանման մեջ նայեց յուր շուրջը։ Նաղելի դեմքը արտահայտում էր անզուսպ անհամբերություն։ Որոնում էր մի ելք, բայց դյուրությունները պակասում էին նրան։ Մալխասը ապշած կերպով նայում էր նրա վրա, նայում էր և ուրախանում էր, որ յուր տերը վայելում է երկրի ամենաչքնաղի և ամենաշնորհալիի սերը։

Նա ցած իջավ բազմոցից, մոտեցավ վրանի վարագույրին, ուշիկ կերպով բարձրացրեց նրա եզրը և նայեց դեպի երկինքը։ Դեռ բավական գիշեր կար։ Պետք էր օգուտ քաղել գիշերային խավարից։ Վճռեց ինքը գնալ Սամվելի մոտ։ Բայց տեսնվել նրա հետ ոչ թե Մամիկոնյանների բանակում, այլ—մի չեզոք տեղում։

Նա կրկին նստեց բազմոցի վրա և, դառնալով դեպի Մալխասը, հարցրեց.

— Դու ծանո՞թ ես մեր կողմերի հետ։

— Այո՛, Օրիորդ։

— Դու տեսե՞լ ես Մանակերտը[9]։

— Այո՛, Օրիորդ։ Այնտեղից Մանաճիհրը սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի յոթն սարկավագներին նետեց ծովը[10]։ Ռշտունյաց Ոստանից[11] շատ հեռու չէ։

— Քեզ ծանո՞թ է այն աղբյուրը, որ բխում է Մանակերտի ստորոտից։

— Այո՛, Օրիորդ։ Այդ աղբյուրը գոյացել է սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի արտասուքներից, երբ նրա սարկավագներին ծովը նետեցին, և ինքը լաց եղավ։ Աղբյուրի մոտ կա մի վայրենի տանձենի, որի ոստերից կանայք շորի կտորներ են կախում, երբ ջերմ ու տենդ ունեն[12]։

— Լավ։ Որքա՞ն ժամանակում կարող ես հասնել իշխանի մոտ։

— Եթե ինձ կրկին չբռնեն, գեթ լույսը չծագած կհասնեմ։

— Քեզ չեն բռնի։ Կգնաս, կհայտնես իշխանին, որ նույն «Արտասուքի աղբյուրի» մոտ սպասե ինձ։

Նա տվեց յուր մետաքսյա թաշկինակը սուրհանդակին, պատվիրելով.

— Այդ նշանը կկապես նիզակիդ ծայրին, և ոչ մի պահապան չի մոտենա քեզ։

Նա կանչեց յուր գրանիկներից մեկին, հրամայելով.

— Տա՛ր այդ մարդուն, տա՛ր, որ դրա զենքերը տան, և շուտով ճանապարհ դնեն։

Մալխասը ծունր իջավ, համբուրեց Օրիորդի պատմուճանի քղանցքի ծայրը, և ապա դուրս եկավ վրանից։

Օրիորդը մնաց միայնակ, գոհ և բախտավոր։ Կրկին անգամ հանեց մատանին, և խորին հրճվանքով նայում էր նրա վրա։ Յուր ոգևորության մեջ այն աստիճան հափշտակվեցավ նա, որ մոտեցրեց մատանին յուր բոցավառ շրթունքներին, և նրա աչքերը լցվեցան ուրախության արտասուքով։ Այդ լուռ, անբարբառ առարկայից լսում էր սիրելի ձայնը այն էակի, որ յուր համար այնքան թանկագին էր, որ յուր համար անփոխարինելի էր։ Այդ սառն, անշունչ առարկայից զգում էր նրա շնչի ջերմությունը և հոգով միանում էր նրա անմատչելի հրեշտակի հետ։

Նա կանչել տվեց յուր հազարապետին, հրամայեց.

— Կպատվիրես, որ թամբեն իմ նժույգները, տասն թիկնապահներ պատրաստ լինեն ինձ հետ գալու։

— Հիմա՞,— հարցրեց հազարապետը զարմանալով։

— Այո՛, այս րոպեիս։

Գ

ԱՐՏԱՍՈՒՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Չնայելով, որ արևը ծագել էր, բայց այն ձորի մեջ, որտեղ գտնվում էր «Արտասուքի աղբյուրը», դեռ տիրում էր խորին մթություն։ Սարերի բարձր գագաթները դեռ նոր շողշողում էին առաջին ճառագայթների նուրբ-վարդագույն լույսով։ Օդի մեջ բուրում էր խիստ ախորժելի զովություն, որ ներշնչված էր ճոխ բուսականության մեղմ անուշհոտությամբ։

Տրչակայքը լուռ էր։ Լուռ էր և անտառը, որ տարածվում էր մինչև կապտագույն ծովերը։ Լսելի էր լինում միայն նվիրական աղբյուրի տխուր մեղեդին, որ ողբաձայն հնչյուններով աղմկում էր տիրող լռությունը։ Լսելի էր լինում նա որպես սգավոր սրտի դառն հառաչանք։ Վշտացած Հայրապետի արտասուքներից գոյացած աղբյուրը և այժմ արտասվում էր...

Նրա մոտ կանգնած էր Աշխենը։

Նազելի օրիորդի մտահույզ հայացքը դարձրած էր դեպի սգավոր աղբյուրը, որ, պարզ արծաթափայլ վտակի նման, դուրս հոսելով մի ժայռի ճեղքվածքից, ցած էր թափվում և, համբուրվելով ու գրկվելով յուր ուղին զարդարող զույնզգույն խճերի հետ, արագ վազում էր և յուր թախծալի շշնջյունով, կարծես, ասում էր ափերին. «Մնաք բարյա՜վ, մենք այլևս չենք տեսնվի...»։

Մի այդպիսի մնաք-բարյավ ասելու համար եկել էր և օրիորդը։

Զինված էր նա։ Հոր անդրանիկը լինելով, նա փոխարինում էր և՛ որդու, և՛ աղջկա։ Այդ պատճառով ծնողքը տվեցին նրան այրական կրթություն, թեև Ռշտունյաց օրիորդները իրանց քաջությամբ հետ չեն մնում տղամարդկերից։ Գլխին դրած ուներ ոսկենկար սաղավարտ, մեջքը սեղմել էր պողովատյա զրահի մեջ, աջ ձեռքում կրում էր մի թեթև նիզակ։ Այդ զինվորության մեջ նմանում էր նա Աթենաս-Պալլասին, որ կարծես եկել էր այցելություն գործելու քաղցրալալ Նիոբեի արտասուքներից գոյացած աղբյուրին[1]։

Աղբյուրից փոքր-ինչ հեռու, ծառերի մթին թավուտների միջից, հազիվ նշմարվում էին մի խումբ ձիաներ, որոնց սանձարձակ թողել էին արածելու։ Նրանց մոտ երևում էին և մարդիկ, որոնք պառկած էին խոտերի վրա։ Դրանք օրիորդի հետ եկած մարդիկն էին։

Որպես մի մարմնացած անհամբերություն, սրտի խորին բաբախմունքով, դեռ կանգնած էր օրիորդը աղբյուրի մոտ և նայում էր։ Նա մեծ կարոտով անդադար նայում էր դեպի այն կողմը, որտեղից պետք է

հայտնվեր Սամվելը։ Նրան հայտնի էր հայրենի երկրի հուզված դրությունը։ Նա գիտեր, որ իրանց լեռների յուրաքանչյուր քարի, յուրաքանչյուր ծառի ետևում մի-մի մարդ էր թաքնված։ Նրան ծանոթ էր և Սամվելի անձնավստահությունը։ Ինչե՜ր չէին կարող պատահել... ի՜նչ փորձանքների չէր կարող հանդիպել նա... Եվ այդ բոլորը ո՞ւմ համար։— Յուր համար... Վերջին միտքը, որքան ուրախացնում էր նրան, որքան լցնում էր նրա սիրտը մի անսահման երանությամբ,— նույնքան և սարսափեցնում էր նրան, երբ մտածում էր, որ նա կարող էր յուր սիրո զոհը դառնալ...

Հեռվից երևացին երկու ձիավորներ։ Երրորդը, իբրև փայակ, վազում էր նրանց առջևից ոտով։ Օրիորդի դեմքը սկսեց փայլել։ Մինչև նրանք կմոտենային, մինչև կտեսներ, թե ովքեր են, այդ մի քանի րոպեն հավիտենականության չափ երկար թվեցավ նրան։

Նրանք փութացրին ձիաների ընթացքը։ Այդ միջոցին օրիորդի մարդիկը, որ հանգստանում էին ծառերի ներքո, իսկույն ոտքի ելան և, լարելով իրանց աղեղները, նետերի ծայրը դարձրին դեպի եկվորները։ Մեկը ձայն արձակեց, այն հարցական եղանակով, որ տալիս է անծանոթը անծանոթին, երբ հանդիպում են ճանապարհի վրա.— «Թշնամի՞ եք, թե բարեկամ».— «Բարեկա՜մ»,— եղավ պատասխանը։

Օրիորդը դեռ անշարժ կանգնած էր աղբյուրի մոտ։

Ձիաներն այժմ քշում էին բոլոր թափով, չնայելով, որ լեռնային քարակարկառ ճանապարհի վրա կարելի էր ամեն րոպե սայթաքել և ամեն րոպե դեպի ցած գլորվել։ Երբ բոլորովին մոտեցան, օրիորդը վազեց ընդառաջ։ Այդ միջոցին մեկը ցատկեց ձիուց, գրկեց նրան, բացականչելով.

— Ա՜խ, Աշխեն, ինչո՞վ կարող եմ մխիթարել քեզ...

— Նրանով, որ դու այժմ իմ գրկումն ես...

Ճանապարհի բոլոր ընթացքում Սամվելը անդադար տանջվում էր այն մտածություններով, թե ի՞նչ դրության մեջ կգտնե յուր Աշխենին, կամ ինչո՞վ կարող կլինի մխիթարել նրան այն ցավալի անցքերից հետո, որ կատարվել էին նրա հոր տան մեջ։ Նա յուր մտքում հորինել էր սփոփիչ խոսքերի մի ամբողջ շարք, որոնցով պետք է աշխատեր հանգստացնել նրա վշտացած սիրտը։ Բայց այն խոսքերից և ոչ մեկը պետք չեղավ, երբ լսեց Աշխենի պատասխանը։ Սիրելի աղջկա գրկում մոռացվեցան բոլորը։

«Արտասուքի աղբյուրից» ոչ այնքան հեռու, անուշահոտ եղևինների ստվերախիտ հովանու ներքո, կանաչ խոտերի վրա, սփռված էր մի գորգ։ Սամվելը և Աշխենը առանձնացան այնտեղ։ Իսկ իշխանի հետ

եկած մյուս երկու հոգիները, որոնցից մեկը Հուսիկն էր, մյուսը Մալխասը, գնացին օրիորդի մարդիկների մոտ։

Թե Սամվելը, թե Աշխենը՝ երկուսն էլ լուռ էին, ա՛յն սրտառուչ լռությամբ, որ տեղի է ունենում հոգեկան խորին հուզմունքների ժամանակ։ Երկուսն էլ հիացած կերպով նայում էին միմյանց վրա և, կարծես, խոսք էին որոնում իրանց զգացմունքները արտահայտելու։ Սամվելը առաջինը ընդհատեց լռությունը։

— Լսի՛ր, Աշխեն, ես ինձ շատ դժբախտ եմ համարում, որ երկար անջատումից հետո, երբ կրկին պատահում է հանդիպել միմյանց, ես, փոխանակ սքանչանալու քո սիրո քաղցրությամբ, փոխանակ վայելելու այն անապատ երանությունը, որ բաշխում է սիրված աղջիկը սիրող երիտասարդին,— ստիպված եմ քեզ հետ խոսել վշտի և դառնության խոսքեր։ Մենք հանդիպում ենք միմյանց որպես երկու ողբավորներ։ Դու կորցրած մայր ունես, իսկ ես— կորցրած հայր։ Քո մայրը կորավ յուր առաքինության համար, իսկ իմ հայրը կորած է յուր չարագործության համար։ Մանելով քո հայրենի երկիրը, ես անցա կրակի և մոխիրների միջով։ Ես տեսա քո քաջ նախահարց պատկառելի ամրոցների ավերակները։ Ամոթը և նախատինքը պատում է ինձ, երբ մտածում եմ, որ այդ բոլորը կատարվել է իմ հոր ձեռքով... Այն մարդու ձեռքով, որի հարսը պետք է լինեիս դու...

— Ինչո՞ւ համար է այդ բոլորը, Սամվել,— ընդմիջեց օրիորդը։— Դու, կարծես, որպես մի հանցավոր, եկել ես քեզ արդարացնելու իմ առջև։ Այն օրը ինձ համար մահ կլիներ, եթե ես ամենափոքր կասկած ունենայի քո մասին։

— Իսկ իմ կողմից հանցանքը այն կլիներ, եթե ես աշխատեի արդարանալ քո առջև։ Ես գիտեմ, թե որքան բարի ես դու, Աշխեն, ես գիտեմ, թե որքան բարձր ես դու հասարակ մահկանացուներից։ Ինձ հայտնի է, որ քո անսահման սիրո մեջ՝ ամեն հանցանք իմ կողմից ինքնըստինքյան կոչնչանա, որպես մի դյուրավառ նյութ՝ կրակի սպառող բորբոքման մեջ։ Բայց խնդիրն հանդիստ չէ, Աշխեն։ Ես կանխապես գիտեի գալոց վտանգը։ Ես տեսնում էի, թե որպիսի՛ չարագուշակ թուխպ պատվում էր քո հայրենի երկրի վրա։ Ես շտապեցի զգուշացնել թե քեզ և թե քո հորը։ Բայց վտանգը ավելի շուտ հասավ ձեզ, քան թե իմ նամակը...

— Գուցե այդպես էր աստուծո տնօրինությունը,— պատասխանեց օրիորդը հանդարտ կերպով։— Թողնենք այդ, Սամվել։ Դու ինձ այն ասա, թե ինչո՞ւ համար եկար և այժմ ո՞ւր ես գնում։

Հարցը շատ ուղիղ դրվեցավ։ Սամվելը մնաց շվարյալ դրության

մեջ։ Չգիտեր՝ ինչ պատասխանել։ Րոպեական շփոթությունից հետո, կրկնեց նա.

— Ինչո՞ւ համար եկա... և այժմ ո՞ւր եմ գնում... Դա չափազանց տխուր հարց է, սիրելի Աշխեն, ես դժվարանում եմ պատասխանել։ Քո առջև դեռ պետք է բաց անել վարագույրը այն սոսկալի գործողությունների, որ կատարվում են և պիտի շարունակվեն կատարվել մեր հայրենյաց ավերակների վրա։ Այնուհետև դու ինքդ կհասկանաս, թե ինչո՞ւ համար եկա կամ ո՞ւր եմ գնում։

Փակված լինելով հայրենական լեռների խլության մեջ, Աշխենը շատ փոքր տեղեկություններ ուներ դրսի աշխարհից։ Նրան թեև հասել էին բոթաբեր ձայներ, բայց այդ ձայները դեռևս այն աստիճան անորոշ և մութն էին նրա համար, որ տակավին մի պարզ հասկացողություն չէր կարողացել կազմել, թե ի՞նչ են կամենում անել չար մարդիկ, որ մրրկածուփ խռովության մեջ էին գրել երկիրը։ Սամվելը սկսեց մի ըստ միոջե պատմել թե կատարված և թե կատարվելիք գործերը։ Խորին դառնությամբ նկարագրեց նա յուր հոր և Մեռուժան Արծրունու ուրացությունը, բացատրեց այդ երկու դավաճանների բոլոր չար դիտավորությունները և նրանց հանձն առած ամոթալի պաշտոնը՝ քրիստոնեությունը ոչնչացնելու և պարսից կրոնը Հայաստանում տարածելու մասին։ Պատմեց նրանց դարանագործությունը Արշակունյաց արքայական գահը կործանելու և Հայաստանում մի նոր թագավորություն հիմնելու մասին, պարսից գերիշխանության ներքո։ Պատմեց նրանց գործ դրած հանդիսավոր ուխտը պարսից Շապուհ արքայի առջև, և պարսիկ զորքերով Հայաստան գալը՝ Շապուհի ցանկությունները կատարելու համար։ Նկարագրեց նրանց ձեռք առած բարբարոսական միջոցները, նրանց անգթությունները, իրանց նպատակին հասնելու համար։ Մի խոսքով, հաղորդեց բոլորը, ինչ որ գիտեր ինքը, և ինչ որ նախատեսնում էր ինքը։

Օրիորդը խորին վրդովմունքով լսում էր։ Նրա վառվռուն աչքերը արտահայտում էին զգայուն սրտի թե՛ ցավը և թե՛ բարկությունը։ Նրա գեղեցիկ դեմքը հարյուր անգամ փոխեց յուր գույնը, մինչև Սամվելը ավարտեց աղետալի պատմությունը։

— Իսկ այդ բոլոր չարիքների դեմ ի՞նչ են մտածում անել հայոց նախարարները,— հարցրեց նա խռովյալ ձայնով։

— Ոմանք «ուրացողների» կողմն են։ Իսկ հայրենի գահին և եկեղեցուն հավատարիմ մնացողները ուխտել են՝ մի մարդու պես կանգնել, կամ մեռնել, կամ ազատել հայրենիքը սպառնացող վտանգից։

Հետո պատմեց նա հավատարիմ մնացած նախարարների նախա-

պատրաստությունները, Մուշեղի սպարապետության կոչումը, Հայոց տիկնոջ, Փառանձեմի հրավերը՝ զինվելու ընդհանուր թշնամու դեմ, և այլն։ Յուր պատմությունը վերջացրեց հետևյալ խոսքերով.

— Այժմ կասեմ քեզ, սիրելի Աշխեն, թե ինչո՞ւ համար եկա, կամ ո՞ւր եմ գնում։ Երկու սիրելիներ դրած են իմ առջև. մեկը վտանգի մեջ գտնվող հայրենիքը, մյուսը, վտանգի մեջ գտնվող կինը՝ դու։ Երկուսն էլ ինձ համար հավասար չափով պաշտելի են, երկուսն էլ ինձ համար հավասար չափով անգնահատելի են։ Երկուսի ձայներն ես կոչում են ինձ։ Երկար ես տանջվում էի այն մտքով, թե դեպի ո՞ր դիմեմ։ Երկուսի համար ես ես ուխտել եմ անկեղծ անձնազոհություն։ Բայց իմ զգացմունքները դժվարացնում են ինձ վճռել, թե ո՞րին պետք է նվիրել առաջին զոհը։ Ահա՛, իմ սրտագին ըղձերը, իմ ամենաջերմ փափագները թափում եմ քո առջև, սիրելի Աշխեն, դու ցույց տո՛ւր ինձ ճանապարհը, թե դեպի ո՞ր գնամ։

— Դեպի հայրենիքի փրկության գործը,— պատասխանեց օրիորդը ոգևորված ձայնով։— Դու ինձ արժան չես լինի, Սամվել, եթե քո արյունը չխառնես այն անբավ արյան հեղեղների հետ, որ պիտի թափվին մեր աշխարհի ազատության համար։ Եվ ոչ ես արժան կլինեմ քեզ, եթե նույնը չանեմ...

— Դո՛ւ,— բացականչեց Սամվելը, և նրա տխուր դեմքը փայլեց անսպառ ուրախությամբ։— Թույլ տո՛ւր գրկել իմ հրեշտակին, վրեժխնդրության և արդար բարկության հրեշտակին...

Նրանք գրկվեցան։

— Աշխարհի բոլոր երանությունները չէին կարող այնպես մխիթարել ինձ, որպես այդ խոսքը, որ թռավ քո շրթունքներից, սիրելի Աշխեն։— Այդ խոսքը լցնում է իմ սիրտը մի սրբազան հպարտությամբ, որ ես վայելում եմ Հայոց քաջազնուհիներից ամենաքնքուշի սերը։

— Կգնաս, Սամվել, անպատճառ կգնաս,— կրկնեց օրիորդը ավելի ջերմ եղանակով։— Իմ մայրը կորավ, հայրս գնաց որոնելու մորս։ Չգիտեմ, կվերադառնա, թե ոչ։ Մեր լեռնականները սաստիկ հուզման մեջ են. ես հազիվ կարողանում եմ զսպել նրանց կատաղությունը։ Նրանք սիրում էին իմ մորը։ Մի մասը կթողնեմ մեր երկրի պահպանության համար, իսկ մի մասը ինձ հետ առնելով, կգնամ և իմ խմբով կմիանամ այն բանակի հետ, որ պիտի գումարվի Փառանձեմ տիկնոջ շուրջը։ Թո՛ղ Հայոց Տիկինը մի օրիորդ զորապետ ևս ունենա յուր քաջերի թվում։— Այդ նրան կուրախացնե...

Սամվելը այժմ սկսեց ավելի լուրջ կերպով յուր համակրությունը հայտնել օրիորդի դիտավորության ո՛չ միայն վերին աստիճանի հերո-

տական բնավորություն ունենալու մասին,— այլ բացատրեց նրա ձեռնարկության և՛ անհրաժեշտությունը, ասելով.

— Եթե դու այդ մտքին չգայիր, ես ինքս պետք է խնդրեի քեզնից այդպես անել, սիրելի Աշխեն։ Թե՛ իմ հայրը, և թե՛ Մերուժան Արծրունին պարսից Շապուհ թագավորից հատկապես հրահանգներ են ստացել նախարարների կանանց և զավակների մասին, որ ամեն տեղ ձերբակալեն նրանց և պահեն առանձին բերդերում, մինչև նրանց ամուսինները անձնատուր կլինեին։ Եվ քո մայրը այդ նպատակով են տարել։ Դու մի բախտով ազատվեցար, սիրելի Աշխեն։ Եթե դու հորդ հետ որսի գնացած չլինեիր, եթե դու այն գիշերը, երբ նրանք պաշարեցին ձեր ամրոցը, այնտեղ գտնվեիր, ես անպատճառ քեզ կորցնելու դժբախտությունը կունենայի, որովհետև քեզ ես կտանեին։ Հայոց նախարարներին հայտնի է հիշյալ հրահանգը, այդ պատճառով շատերը իրանց ընտանիքների հետ շտապում են ապաստան գտնել գլխավոր բանակում, Հայոց Տիկնոջ մոտ։

Վերջին խոսքերը, երևի, վիրավորեցին օրիորդի անձնասիրությունը, և նա բավական այրու ձայնով պատասխանեց։

— Ես չեմ գնում Հայոց Տիկնոջ բանակը ապաստանի կամ փախուստի տեղ որոնելու, Սամվել։ Ես գնում եմ Ոշականյաց փոքրիկ ուժերը խառնելու Հայոց ընդհանուր զինվորության հետ։ Եթե հարկավոր լիներ թաքչել և իմ անձը միայն պահպանել, դրա համար մեր լեռներում շա՜տ ամուր տեղեր կան։ Թե ի՛նչ հրահանգներ են ստացել Շապուհից քո հայրը կամ Մերուժան Արծրունին, այդ ես չգիտեմ, ես այժմ միայն լսում եմ քեզանից։ Բայց այնքանը հաստատ գիտեմ, որ եթե նրանք ցամաքի կողմով մոտենային մեր ամրոցներին, ո՛չ միայն տիրել չէին կարող, այլ թե՛ իրանք և թե իրանց բերած պարսիկ զորքերը կանհետանային մեր լեռների մեջ։ Այսպես էլ եղավ, բայց ոչ բոլորովին...

Օրիորդը ավելի մանրամասն տեղեկություններ տվեց թշնամու արշավանքի մասին, քան թե գիտեր Սամվելը։ Ասաց, իրավ, հարձակման գիշերը թե ինքը և թե յուր հայրը, որսորդության առիթով, բացակա էին ամրոցից, և այդ նպաստեց նրանց թշնամու ձեռքը չընկնել։ Ամրոցում մնացել էր միայն մայրը փոքրաթիվ բերդապահների հետ։ Թշնամին յուր արշավանքը կատարել էր երկու կողմից և այդ նպատակով յուր զորքերը երկու մասն էր բաժանել։ Մի մասը եկել էր ցամաքի ճանապարհով, իսկ մյուս մասը ծովային ճանապարհով։ Վերջինները պաշարել էին կղզին և, զորեղ ընդդիմադրություն չգտնելով, կարողացել էին տիրել ամրոցին։ Իսկ ցամաքի ճանապարհով եկածների մեծ մասը ջարդվել էին լեռնային կիրճերի և փապուրների մեջ։ Նրանցից խիստ սակավներին հաջողվել էր փախչել դեպի Վան։

Սամվելն այժմ միայն հասկացավ այն պատերազմական տխուր երևույթների պատճառները, որ ճանապարհին ամեն քայլում հանդիպում էին նրան, և այնպես սաստիկ կերպով գրավում էին նրա ուշադրությունը։ Նա գրկեց օրիորդին և խիստ զգացված ձայնով բացականչեց.

— Հավատում եմ ձեր ահռելի լեռներին, հավատում եմ ձեր մթին անտառներին, հավատում եմ և ձեր լեռնականների քաջությանը, սիրելի Աշխեն, որովհետև իմ անձի վրա փորձեցի նրանց զորությունը...

— Ի՞նչպես,— հարցրեց օրիորդը, ազատվելով նրա գրկից։

— Ես ոտք դրի ձեր հողի վրա 300 հոգով, իսկ այժմ իմ մարդիկներից մնացել են 43 հոգի միայն։

Օրիորդը գունաթափվեցավ։

— Միթե կարելի՞ է այդպես անզգույշ լինել, Սամվել,— ասաց նա շփոթված ձայնով։— Ինչո՞ւ նախապես իմացում չտվեցիր ինձ քո գալու մասին։ Ինչո՞ւ կորցրիր դու քո մարդիկը։

— Ես մի քանի րոպե առաջ ասացի, որ նամակ էի գրել, բայց նամակը քեզ չէր հասել։ Այդ թողնենք,— խոսքը փոխեց նա,— մնացած քառասուն և երեք հոգին դարձյալ շատ բավական է ինձ համար՝ գնալու այնտեղ, ուր ես ցանկանում եմ...

Վերջին խոսքերը այնպիսի մի հանգով արտասանեց նա, որ օրիորդը ստիպված եղավ հարցնել.

— Ո՞ւր պիտի գնաս։

— Հորս մոտ...

— Դու տակավին նրան հա՞յր ես համարում, Սամվել,— գոչեց օրիորդը, և զայրացած կերպով երեսը շուռ տվեց։

— Այո՛, Աշխեն։ Ես տակավին սիրում եմ նրան։ Ես պետք է տեսնըվեմ նրա հետ, անպատճառ պետք է տեսնվեմ։ Ես դեռևս հույս ունեմ, որ իմ լացով և արտասուքով կարող կլինեմ դարձնել նրան յուր չար ճանապարհից։ Իսկ եթե չի հաջողվի ինձ, այն ժամանակ...

— Այն ժամանակ ի՞նչ կանես։

— Այդ մի՛ հարցրու, սիրելի Աշխեն, աղաչում եմ քեզ, մի՛ հարցրու։

Օրիորդը մնաց մտատանջության մեջ։ Այսպիսի պատասխան նա չէր սպասում, և ոչ կարող էր երևակայել, թե կա աշխարհում մի բան, որ Սամվելը գիտե և նրանից թաքցնում է։ Նա Սամվելի սիրտը յուր սիրտն էր համարում և նրա միտքը յուր միտքն էր համարում։ Ուրեմն ի՞նչն էր ստիպում նրան ծածկամիտ լինել , և ո՞ւմ մոտ,— յուր մոտ։

— Ես չեմ հարցնի, Սամվել, թե դու ի՞նչ պիտի անես,— ասաց նա

վշտացած ձայնով,— բայց կասեմ, որ մռայլ մտքեր են թաքնված քո խոսքերի մեջ...

Սամվելի ժպիտը ավելի գրգռեց նրան, երբ հեգնությամբ պատասխանեց.

— Եթե իմ խոսքերի մեջ ծածկյալ մտքեր կան, կարող ես համոզված լինել, սիրելի Աշխեն, որ նրանք մռայլ չեն, այլ, ընդհակառակն, շատ պարզ ու պայծառ են... Ես այժմ այդքանով միայն կարող եմ հանգստացնել քեզ, որ երբեք վատ կամ անազնիվ գործ չեմ կատարի։ Իսկ իմ տեսությունը իմ հոր հետ՝ ո՛չ միայն կարևոր է, այլ շա՛տ և շա՛տ անհրաժեշտ է...

— Իզուր ժամանակ պիտի կորցնես, Սամվել։ Դու դեռևս հույս ունես, որպես ասում ես, քո լացով ու արտասուքով պիտի կարողանաս դարձնել քո հորը յուր չար ճանապարհից։ Բայց ինչո՞ւ չես մտածում, որ նա ևս կաշխատե քաշել քեզ յուր ճանապարհի վրա։ Ես բնավ տարակույս չունեմ, որ երբ դու կներկայանաս նրան, նա անպատճառ կառաջարկե քեզ աջակցել իրան։ Դու, իհարկե, կմերժես։ Այն ժամանակ, որպեսզի նրան խոչընդոտ չդառնաս, կկալանավորե քեզ, կդնե բանտը, և այսպիսով կզրկե քեզ քո բոլոր ձեռնարկություններից, որ ավելի կարևոր են։

— Նա այդ աստիճան անգութ չի լինի։

— Եվ դրանից ավելի անգութ կլինի։ Նա՛, որ չխնայեց իմ մորը, յուր հարազատին, յուր արյունակցին, յուր քրոջը[2], անտարակույս, չի խնայի և հարազատ որդուն։

«Այն ժամանակ ես էլ չեմ խնայի...»— յուր մտքում ասաց Սամվելը, և դառնալով դեպի օրիորդը, ավելացրեց.

— Վստահ եղի՛ր իմ խոհեմության վրա, սիրելի Աշխեն, ես մինչև այնտեղը չեմ հասցնի, որ նա ինձ բանտարկե։

Օրիորդը դեռ ոչ բոլորովին հանգիստ էր։

— Ի՞նչ է մտածում քո մայրը,— հարցրեց նա։

— Իմ մայրը բոլորովին կամակից է հորս հետ։ Քեզ հայտնի է նրա փառասիրությունը, քեզ հայտնի է և՛ նրա ատելությունը դեպի առհասարակ բոլոր Արշակունիները։ Շապուհը խոստացել է նրա եղբորը, Մերուժանին, տալ Հայոց թագավորությունը, եթե կատարելու լինի պարսից ցանկությունները։ Այդ խոստումները, որի իրագործման մասին մայրս մեծ հույսեր ունի, բոլորովին խելքից հանել է նրան։ Նա այժմ պատրաստ է ամեն բանի համար, և՛ պարսից կրոնը ընդունել, և՛ քրիստոնեությունը ոչնչացնելու հոգ տանել, մի խոսքով, ամեն ձեռնարկություն հանձն առնել, միայն թե յուր եղբայրը Հայոց թագավոր լինի։

— Իսկ քո հորը ի՞նչ է խոստացել Շապուհը։

— Հայոց սպարապետությունը։

— Մայրդ գիտե՞, որ դու գնալու ես հորդ մոտ։

— Ի՞նչպես չգիտե։ Նա ինքը կարգադրեց իմ ճանապարհի բոլոր պատրաստությունները, և այնքան շքեղ, այնքան փառավոր հանդերձանքով, որ արքայավայել պետք էր համարել։ Նա ինքը կազմակերպեց իմ ստվար ասպախումբը, իմ համհարզների բազմությունը, որոնք կորան ձեր անտառների մեջ։ Եվ ես շատ ուրախ եմ, որ ազատվեցա նրանցից։ Նրանք ինձ համար մի անտանելի ծանրություն էին։ Պետք է շնորհակալ լինել ձեր լեռնականներից, որ իմ բեռը թեթևացրին...

Արևը արդեն լցրել էր փոքրիկ ձորակը յուր ջերմ ճառագայթներով, օրից բավական անցել էր։ Նրանք տակավին խոսում էին։ Օրիորդի դեմքը որոշված էր։ Բայց Սամվելինը դեռ մնում էր տարակուսական։ Աշխենը ոչինչ երկբայություն չուներ նրա անկեղծության մասին, գիտեր, թե որքան ազնիվ և հավատարիմ էր նա։ Բայց վախենում էր նրա կյանքի մասին, ա՛յն կյանքի, որի հետ կապված էր և յուր կյանքը։ Սամվելի ձեռնարկությունը նրան չափազանց վտանգավոր էր թվում, թեև, մյուս կողմից, նրա խելքի և քաջության վրա մեծ վստահություն ուներ։ Նա չկասեցրեց սիրված երիտասարդին յուր նպատակներից, միայն հարցրեց.

— Դու ե՞րբ կվերադառնաս։

— Այդ չեմ կարող ասել, սիրելի Աշխեն, որովհետև չգիտեմ, թե ե՞րբ կամ ո՞րտեղ կգտնեմ հորս։ Բայց հույս ունեմ, որ շուտով կվերադառնամ։

— Մենք որտե՞ղ կհանդիպենք միմյանց։

— Այստեղ։ Ես կրկին կգամ քեզ մոտ, և միասին կգնանք Հայոց Տիկնոջ բանակը։

— Ինձ շատ ցանկալի կլիներ սպասել քեզ, Սամվել, եթե քո վերադարձը որոշված լիներ։ Բայց ես հենց այս շաբաթ պետք է պատրաստվեմ ճանապարհ ընկնելու դեպի բանակը։ Այնտեղ կտեսնվենք, եթե աստված անօրինել է կրկին տեսնվել միմյանց հետ... Վերջին խոսքերը արտասանելու միջոցին նրա ձայնը դողաց։

Սամվելը զգացվեցավ և նրա ձեռքը առեց յուր ափերի մեջ։

— Վճռվա՛ծ է,— ասաց նա ներքին վրդովմունքով։— Մենք կտեսնըվենք Հայոց Տիկնոջ բանակում։ Այն ժամանակ, ես հույս ունեմ, սիրելի Աշխեն, երբ առաջին անգամ կհանդիպենք միմյանց, դու կհամբուրես իմ ճակատը և կասես. «Դու արժանի՜ ես ինձ», և այդ կլինի իմ ամենամեծ վարձատրությունը այն վտանգավոր ձեռնարկության համար, ուր հայրենյաց նախանձախնդրությունը մղում է ինձ... Մեր պայմանները վերջացած են։ Ես այլևս չեմ ուշացնի քեզ, գիտեմ, որ քո լեռնցիները ան-

համբեր սպասելիս կլինեն քեզ։ Գրկի՛ր ինձ, սիրելի Աշխեն, և տուր քո համբույրը և քո օրհնությունը։ Աստված կլսե անմեղ շրթունքների ձայնը։ Ես գնում եմ թշնամու բանակը։ Իմ ճանապարհը և՛ կորստյան, և՛ փառքի ճանապարհ է։ Քո համբույրը կոգևորե և թև կտա ինձ, իսկ քո օրհնությունը կփարատե ամեն արհավիրք։ Գրկի՛ր ինձ, սիրելի Աշխեն...

Նրանք գրկվեցան։ Երկար լուռ արտասուքը հեղեղի նման հոսում էր նրանց աչքերից, բայց անզոր էր շիջուցանելու այրվող սրտերի կրակը։ Երկար լուռ հեկեկանքը ալեկոծում էր նրանց, և «Արտասուքի աղբյուրը» յուր մխոր հառաչանքներով ձայնակից էր լինում նրանց դառն հառաչանքներին...

Դ.

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻ

«Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի, եւ էր նա կին Գարեգնի տեառնն Ռշտունեաց գաւառին... Իսկ անօրէնն Վահան եւ Մերուժանն հրաման տային բերդակալին (միջնաբերդին Վանայ) զի նեղեսցէ զկինն, եթէ ոչ տացէ յանձն զօրէնս Մազդեզանցն... Իբրեւ ոչ առնոյր, յանձն Համազասպուհի պահել զօրէնս Մազդեզանցըն, հանէին ի բարձր աշտարակն... եւ մերկացուցին զնա իբրեւ ի մօրէ, եւ արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կատէ. եւ այնպէս մեռաւ ի կախաղանին»։

Փավստոս

Լուսինը շառայով սահում էր դեպի Սիփանի[1] բարձր գագաթները, որ ընկղմված էին խորին, թախծալի մթության մեջ։ Հայտնի չէ, թե ինչո՞ւ նա այնպես զմայլությամբ թողնում էր այն գեղեցիկ վայրերը, ուր ամեն գիշեր նկարում էր այնքան սքանչելի պատկերներ։ Նրա ներքևում անհանգիստ կերպով ծփում էր Վանա ծովակը։ Նա ծփում էր որպես մի սիրահար, որ շուտով պիտի բաժանվի յուր սիրուհուց։ Անզուսպ տարփանքով հափշտակել էր նա երկնից գլխույ գունաթափ շառավիղները, և շողշողալով գրկվում էր նրանց հետ, համբուրվում էր և, կարծես, յուր ալիքների մխոր շշնջյունով ասելիս լիներ. «Մի՛ գնացեք, մի՛ թողեք ինձ խավարի մեջ...»։

Բայց նա գնում էր...

Ծովակի արևելյան ափերի վրա դեռ նշմարվում էին մի հինավուրց

քաղաքի բարձր աշտարակները և ատամնավոր շրջապարիսպները։ Լուսնի լուսավորության ներքո այդ վաղեմի քաղաքը ներկայանում էր որպես մի պառավ կախարդ, որ յուր ծերության մեջ տակավին մնացել էր գեղեցիկ, տակավին մնացել էր հրապուրիչ։ Այնտե՛ղ, նրա օդակառույց ապարանքների մեջ, այնտե՛ղ, նրա բարձր կախազանավոր պարտեզներում, մի ժամանակ, Հայոց մի երիտասարդ թագավորի սիրով, զվարճանում էր աշխարհի ամենամեծ կախարդը — Շամիրամը[2]։

Դա Վան քաղաքն էր։

Լուսինը ծածկվեցավ Սիփանի բարձրությունների մեջ և յուր ետևից թողեց մթին խավար։ Այլևս չէր երևում սիրուն քաղաքը, այլևս չէր երևում փայլուն ծովակը։ Լսելի էր լինում միայն ալիքների խուլ հառաչանքը, որ գիշերային լռության մեջ հնչում էին, որպես մի սգավորի ողբաձայն աղաղակներ։

Լուսնի լուսավորությանը փոխարինեց մի այլ լուսավորություն։

Ուղիղ այն կողմում, որտեղ կանգնած էր քաղաքը, օդի մեջ երևացին բազմաթիվ հրեղեն գնդակներ։ Այդ երևույթը սկզբից այնպիսի տպավորություն էր գործում, կարծես ամբողջ երկինքը բոցավառվում էր մի ընդարձակ հրդեհով, և աստղերը այրվելով, մեկ-մեկ ցած էին թափվում։ Բայց հրեղեն գնդակները բարձրանում էին ներքևից և, օդի մեջ զանազան պտույտներ գործելով, հետո ցած էին ընկնում։ Այնտեղ կատարվում էր մի հանդիսավոր հրախաղություն, բայց — դժոխային հրախաղություն...

Հրեղեն տարափը, հրեղեն կարկուտի նման, շարունակում էր տեղալ։ Նա հետզհետե աճում էր ավելի փութով, նա հետզհետե ընդարձակվում էր ավելի եռանդով։ Երբեմն շրջակայքը դղրդվում էր խառնաձայն աղաղակների խուլ արձագանքներով։ Այդ աղաղակները, որպես մի զարհուրելի կատաղություն, լսելի էին լինում հրային սաստիկ ժայթքումներից հետո, որպես վայրացած երկնքի աղաղակը լսելի է լինում կայծակի ահռելի փայլատակումից հետո։

Վանը պաշարված էր։

Այդ կրակը, այդ հուրն ու բոցը թափվում էր դժբախտ քաղաքի վրա։ Նրան պաշարել էին վայրենի ռշտունիները իրանց դրացի սասունցիների հետ։ Նա պաշարված էր այդ լեռնականներից, որպես մի ժամանակ դժբախտ Տրոյան պաշարված էր հելլենացիներից։ Նախանձախնդիր հելլենացին կռվում էր գեղեցիկ Հեղինեի պատվի համար, որին յուր թագավոր ամուսնի հյուրասեր տնից հափշտակեց անամոթ տարփածուն[3], Իսկ ռշտունիները կռվում էին իրանց աշխարհի սիրելի Տիկնոջ համար, որին անգութ ձեռքով հափշտակեց — եղբայրը։

Լեռնականները, տիրելով մերձակա բլուրներին, նրանց բարձրությունից հուր էին ցանում քաղաքի վրա։ Նրանց հրանոթներն ապագա հրանոթների նախատիպերն էին — հասարակ պարսեւներ[4], խիստ պարզ կերպով շինված, բայց, չայրվելու համար, շղթաներից շինված։ Դրանց մեջ դնում էին կամ ծծումբով տոգորված շորի փաթոթներ, կամ նավթի և այլ դյուրավառ հեղուկների մեջ թաթախված փայտի կտորներ, վառում էին և, պտույտացնելով օդի մեջ, ձգում էին դեպի քաղաքը։ Ոմանք նույն պարսեւներով նետում էին քարեր։

Շատ չանցավ, քաղաքը նույնպես սկսեց ներսից պատասխանել դրսի կրակներին։ Զանազան տեղերից բարձրացան բոցեր։ Բայց այդ բոցերը բարձրանում էին և դարձյալ հանգչում էին իրանց տեղում, առանց քաղաքի պարիսպներից դուրս գնալու։— Դրանք ներսի շինվածքների բոցերն էին, որ արդեն սկսել էին այրվել։

Քաղաքը պաշտպանող զորքը բաղկացած էր միայն պարսիկներից, որ բերել էին իրանց հետ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։ Օրհասական տագնապի մեջ, այդ զորքերը այնքան հոգ չէին տանում դրսի թշնամու հետ մաքառելու, որքան աշխատում էին զսպել ներսի բնակիչներին, որոնք սարսափելի խռովությամբ դուրս էին փախչում իրանց տներից, որտեղ որ հրդեհը արդեն սկսել էր ճարակել։ Զորքը վախենում էր, միգուցե քաղաքացիք բաց անեն քաղաքի դռները և թշնամուն ճանապարհ տան ներս մտնելու։

Բայց կրակը ավելի և ավելի տարածվում էր։ Նախ այրվեցան ախոռատների կտուրների վրա դիզած խոտերը, հետո մարագներն ու մթերանոցները։ Շուկան յուր բոլոր հարստությամբ վառվում էր, որպես մի չոր կտոր։ Կրակը սկսվեցավ ատաղձագործների խանութներից և այնտեղից անցավ դեպի քաղաքացոց տները։ Մարդիկ այլևս հոգ չէին տանում հանգցնելու, այլ շտապում էին փախչելու։ Ուր և գնում էին, որ կողմ և վազում էին, նրանց առջևը փակում էր հրեղեն անանցանելի հեղեղը։ Սարսափած բնակիչների հուսահատ աղաղակները, միախառնվելով կործանվող շինվածքների դղրդյունի հետ, ավելի սաստկացնում էին ընդհանուր զարհուրանքը։

Հրդեհի սոսկալի լուսավորությունը երևան հանեց մի սոսկալի հրեշ, որ քաղաքի հյուսիսային կողմից, որպես մի բարկացած, գալարված վիշապ, բարձրացել էր դեպի երկինքը։ Նա հետզհետե աճում էր, հետզհետե ավելի ահռելի կերպարանք էր ստանում, որքան աճում էր տիրող լուսավորությունը։ Հպարտ հայացքով նայում էր նա դեպի յուր շուրջը ճարակող հրային ծովը, և կարծես նրա մռայլ հայացքը արտահայտում էր այդ խոսքերը. «Չնչի՛ն տարր, որքան կամենում ես կատաղի՛ր, որ-

քան կամենում ես հեռու տարածիր քո վայրագությունը, բայց դարձյալ քո ալիքները իմ բարձրությանը չեն հասնի...»։

Դա Վանա միջնաբերդն էր — այն վիմային հսկա ամրությունը, որ բնությունը ինքն էր հրաշակերտել։ Դա այն անմատչելի ամրոցն էր, որի սքանչելիքները հայոց ավանդությունները Շամիրամին էին ընծայում[5]։

Ավելի մոտից նայելով, նա մի այլանդակ ուղտի նմանություն ուներ, բայց չոքած ուղտի, որը, որպես մի հրեշավոր սփինքս[6], կիսով չափ թաղվել էր ծովեզերքի ավազների մեջ։ Վիթխարի գլուխը տարածել էր դեպի արևելք, իսկ սավար գավակը՝ դեպի արևմուտք։ Նրա կրկնակի սապատները, որ բարձրացել էին մինչև ամպերը, կրում էին իրանց վրա ահագին աշտարակներ և անառիկ, բրգաձև մարտկոցներ։ Աշխարհի բոլոր զորությունները անկարող էին ազդել նրա ապառաժային կողքերի վրա, որ պողպատի կարծրություն ունեին։ Նրա քարեղեն սրտում փորված էին բազմաթիվ սենյակներ, խորին անձավներ և զանազան սրահներ ու սրահակներ, որոնք նույնքան խորհրդավոր և նույնքան անվերծանելի էին, որպես այդ ծածկամիտ սփինքսը։

Քարակոփ սրահակներից մեկի մեջ, ուր մի ժամանակ նստած էր լինում Շամիրամը, և նրա բարձրությունից նայում էր դեպի Վանա ծովակի կապուտակ հայելին, նայում էր դեպի Վարագա լեռան[7] հրաշալի տեսարանները և հիանում էր Հայոց երկրի գեղեցկությամբ,— այժմ նույն սրահակի մեջ գտնվում էր մի այլ իշխանուհի։

Քնած էր նա, այնպիսի մի անուշ և խաղաղ քնով, որ խիստ հազիվ անգամ բարի ոգիները պարգևում են մահկանացուներին։ Նա քնած էր առանց հանվելու, յուր շքեղ անկողնի վրա։ Գեղեցիկ դեմքը հրդեհի տաքությունից շառագունել էր։ Քրտինքի մի քանի մարգարիտներ փայլում էին պարզ ճակատի վրա, որ պսակված էր սև գանգուրներով։ Վարդագույն շրթունքները երբեմն հազիվ նշմարելի կերպով ցնցվում էին, և մի թեթև ժպիտ յուր բոլոր հրապույրներով վազում էր սիրուն դեմքի վրա։ Ծանր շնչառությունը ամեն անգամ բարձրացնում էր նրա հարուստ կուրծքը, որի վրա հանգչում էր պարանոցի գոհարազարդ մանյակը։ Երկու ձեռքերի հոլանի բազուկների ոսկյա ապարանջանների հետ կցած էին երկու երկաթյա օղակներ, որ միանում էին մի կարճ շղթայի երկու ծայրերի հետ։ Ոտքերից մեկը նույնպես շղթայած էր։ Այդ դրության մեջ նմանում էր նա մի բանտարկված հրեշտակի, որի հանգիստը հենց յուր անմեղության մեջն էր կայանում։

Հրդեհի կարմրագույն ճառագայթները, ներս ցոլանալով նրա բանտի լայն պատուհաններից, լուսավորում էին գեղեցիկ սրահակը վառվռուն,

շլացուցիչ լուսավորությամբ։ Այդ սոսկալի լուսավորության մեջ նա ավելի սքանչելի էր երևում։

Շրջակայքում տիրող աղմուկն ու խռովությունը արթնացրին նրան։ Գլուխը վեր բարձրացրեց, ապշած կերպով նայեց յուր շուրջը։ Մի քանի րոպե նա իրան երազի մեջ էր զգում։ Ոչինչ չէր հասկանում։ Նրա ականջներին հասնում էին միայն ոտքերի խուլ տրոփյուններ, խառնաձայն աղաղակներ և հուսահատական դառն հառաչանքներ։ Նրան այնպես էր թվում, որ աշխարհի վերջը հասել էր, և տիեզերքը ընդհանուր ավերածության մեջ էր գտնվում։ Նրա սիրտը սկսեց դողալ։ Փորձեց մոտենալ պատուհանին և նայել։ Բայց ոտքին կապած շղթան արգելեց։ Աղմուկը ավելի սաստկանում էր, և սրահակի մեջ տիրող լուսավորությունը հետզհետե ավելի պայծառ գույն էր ստանում։ Նա այժմ սարսափում էր նայելու յուր շուրջը։ Երկու ձեռքով բռնեց աչքերը և ողբաձայն աղաղակով բացականչեց.

— Տե՜ր աստված, այդ ի՞նչ խռովություն է...

Այդ միջոցին մի անձնավորություն ծանր և հաստատուն քայլերով վեր էր բարձրանում միջնաբերդի քարակոփ սանդուղքներով, որ փորված էին միակտուր ապառաժի մեջ։ Երբեմն յուր լուռ հայացքը դարձնում էր նա դեպի շուրջը կատարվող արհավիրքը և երբեմն նայում էր դեպի յուր առջևի խավարնակի սանդուղքները, որ ձեռքի լապտերով լուսավորում էր մի առ մի, թեև լապտերի ամենևին պետք չկար։ Երկար գնում էր նա, մինչև բարձրացավ միջնաբերդի գագաթը և կանգ առեց հիշյալ սրահակի դռան մոտ։ Նա գլխով նշան արեց սպային, որ սպասե դրսում, իսկ ինքը հանեց գրպանից մի ծանր բանալի, բաց արեց երկաթյա դուռը և ներս մտավ։

— Ողջո՜ւյն, սիրելի Համազասպուհի,— ասաց նա մոտենալով տիկնոջը։— Ես կարծում էի, որ դու քնած կլինես, երևի դրսի աղմուկը անհանգստացրեց քեզ։

— Այդ ի՞նչ աղմուկ է,— հարցրեց տիկինը խռովյալ ձայնով։

— Ցնծությա՜ն աղմուկ, սիրելի Համազասպուհի։ Այդ դևերի հարսանիքի առաջին գիշերն է,— քո հարսանիքի, սիրելի Համազասպուհի։ Տեսնո՞ւմ ես, ինչպե՜ս գեղեցիկ լուսավորված է քաղաքը։ Ո՛չ, դու չես տեսնում, ես այս րոպեիս քեզ ցույց կտամ...

Նա մոտեցավ, բաց արեց տիկնոջ ոտքի շղթան, բռնեց նրա ձեռքից և տարավ, կանգնացրեց պատուհանի մոտ, ասելով.

— Նայի՛ր...

Կարծես, դժոխքը յուր բոլոր սարհուրանքով բացվեցավ թշվառ տիկնոջ աչքերի առջև։ Նա դողդողաց, թուլացավ և ընկավ անգութ այցելուի բազուկների վրա, որը գրկեց նրան և կրկին դրեց յուր անկողնի վրա։

Այցելուն Վահան Մամիկոնյանն էր — Սամվելի հայրը և ուշաթափ եղած տիկնոջ հորեղբայրը[8]։

Հսկայատիպ էր նա և ամրակազմ, և, որպես առհասարակ բոլոր Մամիկոնյանները, օժտված էր շատ հաճելի կերպարանքով։ Նրա փոքր-ինչ խիստ դեմքը արտահայտում էր հաստատամիտ մարդու թե՛ համառությունը, և թե՛ անգթությունը, երբ այդ պետք էր։ Կրում էր պարսից նշանները։ Տիկնոջ անակնկալ ուշաթափությունը բավական խռովություն պատճառեց նրան։ Նա Համազասպուհիին այս աստիճան թուլամիտ չէր կարծում, այդ էր պատճառը յուր այնպես անզգույշ վարվելուն նրա հետ։

Բայց տիկնոջ ուշագնացությունը երկար չտևեց։ Նա բաց արեց յուր լի սրտմտությամբ աչքերը և, դառնալով դեպի յուր հորեղբայրը, ասաց.

— Ա՛յդ էիր ցանկանում, Վահան... Մի՞թե այդ աստիճան քարացած են քո մեջ մարդկային զգացմունքները, որ դու ծաղրում ես հազարավոր ընտանիքների լացն ու կոծը, որ դու առ ոչինչ ես համարում այդ թշվառների խորովվելը իրանց տների ծածկերի ներքո, և նրանց թաղվելը իրանց բնակարանների մոխրի մեջ...

— Ինչո՞ւ ես ի՛նձ հանդիմանում, սիրելի Համազասպուհի,— պատասխանեց նա հանդարտ կերպով։— Ա՛յդ քո ամուսինն է, որ կրակ է թափում քաղաքի վրա։

Տիկնոջ զայրացած դեմքը ավելի գունաթափվեցավ։

— Իմ ամուսի՞նը,— բացականչեց նա դողդոջուն ձայնով։— Այդ չէ՛ կարող լինել, Վահան, նա յուր կյանքում մի մրջյունի անգամ չէ վիրավորել։ Բայց արա՛ իմ շղթաները, Վահան, ես այս րոպեիս կգնամ, եթե նա է, իմ սրտի բոլոր դառնությունը կթափեմ նրա վրա...

— Այո՛, նա է, յուր վայրենի լեռնականներով պաշարել է քաղաքը։

— Եթե իմ ամուսինն է, անպատճառ ինձ համար է գործում այդ բարբարոսությունը։ Ինչո՞ւ բերեցիր ինձ այստեղ, Վահան, ինչո՞ւ խռովեցիր առաքինի մարդուն։ Դու ավերակ դարձրիր մեր ամրոցները, և դրանով ես չկարողանալով հագեցնել քո անգթությունը, դու քո հարազատին, քո արյունակցին գերի վարեցիր։ Ի՞նչ էր իմ հանցանքը։ Ինչո՞ւ եմ ես այստեղ, այս շղթաների մեջ, այդ քարեղեն բանտում, ուր ամենաթշվառ եղեռնագործներին են միայն արգելում։ Ինչո՞ւ համար էր այդ բոլորը։ Նրա՞ համար, որ բարի և ողորմած մարդուն դավաճանության մեջ գտնեիր, որ նա գար և այդ գժոխային, այդ դիվական խաղը խաղար դըժբախտ քաղաքի հետ...

Նա բանեց աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ։ Նրա արտասուքը ազդեց Մամիկոնյան իշխանի վրա, որը, զգալով սրտի խռովությունը, բռնեց նրա շղթայակապ ձեռքը և խիստ զգացված ձայնով ասաց.

— Այդ հարգելի ձեռքերը, որ միշտ սովորած են եղել բարիք գործելու, այո՛, այժմ շղթայի մեջ են, և այդ շղթան դրել է եղբայրը։ Բայց մի՛ նախատիր ինձ, սիրելի Համազասպուհի։ Կյանքի մեջ, մանավանդ պետությունների կյանքի մեջ, լինում են այնպիսի դառն հանգամանքներ, երբ հայր, մայր, քույր, եղբայր կամ օտար— բոլորը հավասար են, և հավասար կերպով են պատժվում, երբ խոչընդոտ են դառնում մի մեծ ձեռնարկության իրագործմանը, որի մեջն է հասարակաց բարին, որից կախված է նրա ապագա երջանկությունը։ Մենք,— թե ես և թե Մերուժանը— ծառայում ենք այդ գործին...

— Ո՞րն է այդ գործը, ո՞րն է այդ մեծ ձեռնարկությունը։

— Քեզ հայտնի է, սիրելի Համազասպուհի, այլևս ինչո՞ւ ես հարցնում։

Տիկնոջ տխուր աչքերը փայլեցան բարկության բոցով։ Նա գոչեց.

— Ամո՜թ քեզ, Վահան, որ ամոթալի գործով արատավորում ես Մամիկոնյանների պայծառ հիշատակը... Թո՛ղ այն օրը սև՜ լիներ, երբ դու աշխարհ եկար... Թո՛ղ քո մայրը քո փոխարեն մի կտոր քար ծնած լիներ, և ոչ քեզ նման մի պատիժ ու պատուհաս Հայոց երկրի համար...

Իշխանը լռեց։ Նրա ամբողջ մարմնով անցավ մի ցուրտ սարսուռ, և հանդարտ դեմքի վրա երևացին անորոշ ցնցումներ, որ արտահայտում էին նրա խորին վրդովմունքը։

— Դու ինձ անիծո՞ւմ ես, Համազասպուհի։

— Ուրիշ խոսքերի արժանի չես դու, Վահան։ Նա՛, որ թողնում է մայրենի եկեղեցին, և պարսից հեթանոսական կրոնն է աշխատում տարածել յուր հայրենիքում,— նա՛, որ դավաճանում է յուր թագավորին և պարսից բարբարոսական իշխանությունն է կամենում հաստատել յուր հայրենիքում,— նա՛, որ կրակով և արյունով ոչնչացնում է հայրենի երկիրը,— նա՛ միայն անեծքի է արժանի, Վահան։ Կանիծե՜ն քեզ հազարավոր մայրեր, որ պիտի զրկվին իրանց որդիներից... կանիծե՜ն քեզ հազարավոր ամուսիններ, որ պիտի այրի մնան... կանիծե՜ն քեզ հազարավոր քույրեր, որոնց եղբայրները պիտի ընկնին ներքին կռիվներում... կանիծե՜ն քեզ հազարավոր մանուկներ, որ պիտի որբ մնան... կանիծե՜ քեզ ապագա սերունդը, քանի որ կհիշե չար մարդու չար գործերը...

Այդ խոսքերը կայծակի նման շանթում էին իշխանի սրտին։

— Այո՛,— պատասխանեց վշտալի ձայնով,— այդ բոլոր զոհերը պետք է կատարվին... և ես շատ ցավում եմ, որ պետք է կատարվին... Բայց առանց այդ զոհերի փրկություն չի լինի... Թո՛ղ ներկա և ապագա սերունդը անիծե ինձ։ Բայց իմ խիղճը հանգիստ է։ Ես համոզված եմ, որ վատ գործ չեմ կատարում։ Ինչո՞ւ ես դու, Համազասպուհի, մոռանում

անցյալը, ինչո՞ւ ես դու մոռանում պատմությունը,— ամենամոտ ժամանակների աղետալի պատմությունը։ Երբ Տիրանը, մեր այժմյան աքսորյալ թագավորի հայրը, կամենալով իսպառ ջնջել Արծրունի և Ռշտունի նախարարների ամբողջ տոհմերը, երբ բոլորին կոտորել տվեց, առանց խնայելու սեռի և հասակի,— ովքե՞ր էին այն երկու մանուկները, որ միայն ազատ էին մնացել ընդհանուր կոտորածից։

— Մեկը Տաճատ Ռշտունին էր— իմ ամուսնի հայրը[9], մյուսը՝ Շավասպ Արծրունին էր— Մերուժանի հայրը[10]։

— Այո՛, այդ երկուսը միայն կենդանի մնացին երկու նախարարական մեծ տոհմերի բազմանդամ գերդաստանից։ Բայց երբ այդ երկու մանուկներին ևս դահիճները բերեցին Տիրանի առջև մորթելու, ովքե՞ր էին, որ մերկ սրերը ձեռքում հարձակվեցան արյան հրապարակը և ազատեցին անմեղ մանուկներին։

— Մեկը քո հայրն էր— Արտավազդը[11], մյուսը քո եղբայրն էր— Վասակը[12]։

— Այո՛, Համազասպուհի, մեկը իմ հայրն էր, մյուսը իմ եղբայրը։ Այդ երկու մանուկների պատճառով նրանք թողին Տիրանի ծառայությունը, թողին իրանց հայրենի ժառանգությունը— Տարոնը, և ամրացան Տայոց լեռների մեջ։ Այնտեղ մանուկներին սնուցին, մեծացրին և իրանց աղջիկներին նրանց կնության տվեցին։ Շավասպից ծնվեցավ Մերուժան Արծրունին, իսկ Տաճատից՝ Գարեգին Ռշտունին— քո ամուսինը։ Եվ այսպես կրկին շարունակվեցան երկու բնաջինջ եղած նախարարությունները[13]։

— Ես չեմ հասկանում, ինչու համար ես հիշեցնում ինձ այդ բոլորը,— ընդհատեց տիկինը։

— Նրա համար, Համազասպուհի, որ Արշակունիների տան վրա արյուն կա, և արյունը պետք է արյունով մաքրվի...

— Բայց ոչ անմեղ ժողովրդի արյունով։

— Եվ անմեղ ժողովրդի արյունով, երբ նա հիմարաբար միջամտություն է գործում և պաշտպան է հանդիսանում Արշակունիների փչացած, անբարոյականացած տանը, որից եթե վաղուց ազատված լինեինք, ավելի բախտավոր կլինեինք, թե՛ մենք և թե՛ մեր աշխարհը։

— Ցնորքնե՞ր են պտտվում քո գլխում, Վահան,— ասաց տիկինը զայրացած ձայնով։— Կիրքը, ատելությունը, անգութ վրեժխնդրությունը կուրացրել են քեզ և խլել են քեզանից ամեն բան, ինչ որ մարդկային է, ինչ որ աստվածահաճո է։ Ասա՛ ինձ, ինչո՞վ է մեղավոր Տիրանի որդի Արշակը, մեր ներկա դժբախտ թագավորը, որ այժմ հեծում է Անուշ բերդի մթին բանտերում,— ինչո՞վ է մեղավոր նա, որ յուր հայրը այսպես կամ այնպես է վարվել։

— Նրանով, սիրելի Համազասպուհի,— պատասխանեց իշխանը, դառըն կերպով ծիծաղելով,— որ նրա ձեռքերն ես մաքուր չեն արյունից: Մի փոքր անձնասիրություն ունեցի՛ր, Համազասպուհի: — Ո՞վ սպանել տվեց քո հորը, կամենում եմ ասել՝ և՛ իմ եղբորը[14]:

— Արշակ թագավորը:

— Ո՞վ կոտորել տվեց մեր փեսա Կամսարականների ցեղը և ապահ ձեռքով հափշտակեց նրանց Երվանդաշատ քաղաքը և Արտագերս ամրոցը[15]:

— Արշակ թագավորը: Բայց դրանով ի՞նչ ես կամենում ապացուցանել, Վահան: Քո և Մեհրուժանի ատելությունը Արշակունյաց թագավորների դեմ չէ, այլ թագավորության դեմ է: Հասկանո՞ւմ ես, Վահան: Տիրանը կամ նրա որդի Արշակը կարող էին վատ թագավորներ լինել: Բայց ինչո՞վ են մեղավոր նրանց ժառանգները: Գուցե Արշակի որդի Պապը շատ լավ թագավոր կլինի մեզ համար:

— Սխալվում ես, Համազասպուհի, օձից ձուկն չի ծնվի, և ոչ գայլից գառն:

— Դու ես սխալվում, Վահան: Ահա՛ քեզանից ծնվել է Սամվելը, որ ամենապատվական երիտասարդ է:

Հազիվ թե ամբողջ աշխարհում կարող էր գտնվիլ մի արարած, որ համարձակվեր այնպես երես առ երես և այնպես կծու կերպով նախատել այդ զոռոզ, անձնասեր իշխանին, և ինքը մնար անպատիժ: Բայց Վահանը ո՛չ միայն հարգում էր նրան, այլև սաստիկ սիրում էր: Մամիկոնյան բոլոր աղջիկների մեջ հայտնի էր Համազասպուհին թե յուր բարձր առաքինությամբ և թե յուր խելքով: Այդ էր պատճառը, որ վայելում էր բոլորի սերը: Բայց իշխանը, նկատելով, որ վիճաբանությունը խիստ սուր կերպարանք է ստանում, զանցառության տվեց յուր հարազատից կրած վիրավորանքը, ասելով.

— Սամվելը իմ որդին չի լինի, եթե ինձ չի հետևի... Բայց այդ թողնենք, մենք հեռանում ենք հարցից, Համազասպուհի: Իմ բերած ապացույցները Տիրանի և Արշակի անկարգ վարմունքների մասին միայն այն նպատակով էր, որ քեզ ցույց տամ, թե ես և թե Մեհրուժանը իրավացի պատճառներ ունենք Արշակունիներին ատելու: Նույն իրավացի պատճառները ունեիր ավելի դո՛ւ, Համազասպուհի, որովհետև Արշակը քո հայրասպանն է: Նույն իրավացի պատճառներն ուներ և քո ամուսինը, որովհետև Արշակունիները կոտորել տվին նրա ամբողջ ազգատոհմը: Բայց թե դու և թե քո ամուսինը ո՛չ միայն հավատարիմ եք մնացել ձեր նախնիքը կոտորողներին, այլ մինչև անգամ ամենայն համառությամբ պաշտպանում եք նրանց: Ով որ նրանց պաշտպանն է, մեր թշնամին է:

Եվ թշնամու հետ մենք կվարվենք թշնամաբար։ Այդ էր պատճառը, որ ես և Մերուժանը կործանեցինք ձեր ամրոցները և քեզ այստեղ գերի բերեցինք, Համազասպուհի։

— Ինչո՞ւ համար բերեցիք։

— Որ քո ամուսինը անձնատուր լինի։

— Ահա՛, տեսնո՞ւմ ես, փոխանակ անձնատուր լինելու, նա այրում է Մերուժանի քաղաքը, և մենք այս րոպեիս գտնվում ենք հրեղեն ծովի մեջ։ Ձեր վայրենությամբ ի՞նչ շահեցաք, Վահան,— ավելի ոչինչ, քան թե բորբոքեցիք մի ներքին, արյունահեղ պատերազմ։ Եվ այդ պատերազմը կշարունակվի և ավելի զարհուրելի կերպարանք կստանա, քանի որ դուք չեք դառնա ձեր չար ճանապարհից։— Կրկնում եմ, ինչ որ մի քանի րոպե առաջ ասացի. աշխատել ոչնչացնելու քրիստոնեական կրոնը, աշխատել կործանելու հարազատ թագավորության գահը,— դա միայն դավաճանների և մատնիչների գործն է։ Թե՛ ես և թե՛ իմ ամուսինը դավաճաններին աջակից չենք լինի...

— Իզուր ես այսպես մտածում, Համազասպուհի։ Մենք, կամենում եմ ասել՝ թե՛ ես և թե՛ Մերուժանը, մեծ հանցանք գործած կլինեինք, եթե մեր դիտավորությունը ա՛յն լիներ, որպես դու ես կարծում, ոչնչացնել կրոնը։ Մենք աշխատում ենք վերադառնալ մեր հին կրոնին, մեր նախահայրերի սիրելի աստվածներին։ Մեր ժողովրդի մեծ մասը տակավին յուր հին կրոնին է հետևում և խորշելով խորշում է քրիստոնեությունից։ Ի՞նչ տվեց մեզ քրիստոնեությունը։— Այդքանը միայն, որ մոտեցրեց մեզ խարեբա բուզանդացիներին և հեռացրեց, թշնամացրեց մեզ մեր վաղեմի բարեկամ և դաշնակից պարսիկների հետ։

— Միթե կարելի՞ է, Վահան, այդպես քաղաքական նկատումներով նայել կրոնի վրա և նրան զանազան շահերի խաղալիք դարձնել։ Որովհետև պարսիկների հետ բարեկամանալու համար հարկավոր է փոխել կրոնը, ուրեմն պետք է փոխել...

— Ես դեռ չվերջացրի, Համազասպուհի, դու ինձ միշտ ընդհատում ես։

— Վերջացրո՛ւ։

— Իզուր ես մտածում և ա՛յն, թե մենք աշխատում ենք կործանելու մեր արքայական հարազատ գահը։ Մի՞թե Արշակունիները մեր հարազատներն են։ Նրանք մեզ համար խորթ են, անհարազատ են, որովհետև օտար երկրից եկած պարթևներ են[16]։ Նրանց միայն համբերում էինք մենք, համբերում էին և պարսիկները, քանի դեռ Պարսկաստանում նույնպես Արշակունյաց տոհմն էր տիրում։ Այնտեղ ընկան նրանք, և

հիմնվեցավ նոր, Սասանյան պետությունը։ Այժմյան Սասանյանները չեն կարող համբերել և չեն համբերում մեր քրիստոնյա Արշակունիներին։ Մենք աշխատում ենք այդ գայթակղության քարը մեջտեղից վերցնել։ Մենք այսուհետև միայն կունենանք մեր հարազատ թագավորը, որովհետև Շապուհը խոստացել է տալ Մերուժանին Հայոց թագավորությունը։

Տիկնոջ դեմքի վրա երևաց մի արհամարհական ժպիտ, և նա, գեղեցիկ գլուխը շարժելով, պատասխանեց.

— Թե որքա՞ն կարելի է հավատալ խորամանկ Շապուհի նենգավոր խոստումներին,— այդ դեռ մի երազական ցնորք է, որով խելագար Մերուժանը միայն կարող է հրապուրվել։ Այդ թո՛ղ մնա։ Բայց եթե այնպես դատելու լինենք, որպես դու ես դատում, Վահան, ասելով, թե Արշակունիները մեր հարազատները չեն, որովհետև օտար երկրից եկած պարթևներ են,— այդպիսով մեզանից ոչ ոք հարազատ չի լինի Հայոց երկրին։ Մենք, Մամիկոնյաններս, Ճենացիներ ենք, քո սիրելի Մերուժանի նախնիքը ասորեստանցիք են[17]*, և այդպես, շատ նախարարական տներ օտար ծագումներից են առաջ եկած։ Բայց ժամանակները բոլորին հայացրին. այժմ հայոց լեզվով են խոսում, հայոց կրոնն են պաշտում և արյունով խառնվեցան հայերի հետ։ Նույն պայմաններին ենթարկվեցան և Արշակունիները։*

Իշխանի համբերությունը հատավ։ Նա վեր կացավ և, կանգնելով տիկնոջ մոտ, արտասանեց հետևյալ խոսքերը.

— Դու սիրում ես վիճաբանել, Համազասպուհի, դու վիճաբա՛ն էիր և այն ժամանակ, երբ դեռ փոքրիկ էիր և մեր ամրոցի բակում միասին գնդակներ էինք խաղում։ Ես կարճ կկտրեմ քեզ հետ։ Ահա՛ մեր ուխտը. քրիստոնեությունը պետք է ոչնչանա, Արշակունյաց իշխանությունը պետք է ընկնի, որովհետև այդ է պահանջում մեր երկրի խաղաղությունը։ Մերուժանը պետք է հայոց թագավոր դառնա՝ պարսից գերիշխանության ներքո։ Մենք պետք է կրոնով միանանք պարսիկների հետ՝ մեր բարեկամությունը ավելի ամրապնդելու համար։ Մեր և նրանց մեջ կրոնի խտրություն չի պիտի լինի։

— Թո՛ղ նրանք միանան մեզ հետ,— ընդհատեց տիկինը,— թո՛ղ նրանք ընդունեն քրիստոնեությունը, դարձյալ մեր և նրանց մեջ կրոնի խտրություն չի լինի։

— Միշտ տկարները հետևում են հզորներին։ Մենք տկար ենք, իսկ նրանք՝ զորավոր։

— Քրիստոնեության մեջ ամենափոքրը ամենից մեծն է, և ամենատկարը՝ ամենից զորավորը։

— Այդ ցնո՛րք է. տկարը տկար է, զորավորը՝ զորավոր։ Դու միայն այն ասա՛, Համազասպուհի, համաձա՞յն ես մեզ հետ։

— Երբե՛ք։

— Ով որ մեզ հետ համաձայն չէ, մեր թշնամին է։

— Ես ամենևին ինձ քո բարեկամ չեմ համարում, թեև քո եղբայր աղջիկն եմ։

— Ով որ մեզ չի հետևում, նա կպատժվի և անխնա կերպով կպատժվի։

— Դրանից ավելի պատիժ այլևս ի՞նչ պետք է լինի։

Նա ցույց տվեց յուր շղթաները։

— Դրանից ավելի սարսափելին կա, Համազասպուհի։

— Ես պատրաստ եմ, Վահան։

— Լավ մտածի՛ր։

— Ես բոլորը մտածել և վճռել եմ...

Դրսի աղաղակները լսելի եղան ավելի զարհուրելի հնչյուններով։ Փոքրիկ սրահակը, ուր գտնվում էին նրանք, լուսավորվեցավ վառ-արյունագույն լուսով։ Վիճաբանությունը ընդհատվեցավ։ Տիկինը բացեց աչքերը, բացականչելով.

— Ահա՛, Վահան, քո սպառնալյաց պատասխանը... տե՛ս ինչ եք ցանկանում դուք— այդ կրա՞կը, այդ արյո՞ւնը...

Ե

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐՎԱ ԱՌԱՎՈՏԸ

Դեռ մութն էր, դեռ բավական ժամանակ կար մինչև առավոտ։

Մի սպիտակ ձիավոր, շրջապատած մի խումբ թիկնապահներով, անդադար արշավում էր խռովյալ քաղաքի մի փողոցից դեպի մյուսը, որտեղ հուզմունքը ավելի սաստկանում էր։ Նա անցնում էր կրակների միջով, նա անցնում էր կործանվող շինվածքների տակով, առանց ամենափոքր երկյուղ կամ վտանգ զգալու։ Նրա ծայրահեղ անձնավստահությունը այնպիսի տպավորություն էր գործում, կարծես, այդ վեհապանծ ձիավորի մարմինը դյութված կամ կախարդված լիներ, որ անմխելի էր դարձել ամեն զորությանց առջև։ Եվ իրավ, նրա մասին մի այդպիսի կարծիք կազմվել էր հասարակության մեջ[1]։

Դա Մերուժան Արծրունին էր։

Յուր փառասիրության չափ փառահեղ էր ստեղծել նրան բնությունը, իսկ յուր անգութ անգթության չափով — սոսկալի։ Նրա տոհմային ասո-րական արյունը խառնվելով հայկականի և Ջայմար ամրոցի վիշապազունների[2] արյան հետ, տվել էին նրա հզոր կազմվածքին վիշապի ահա-

վորություն։ Նույն ահավորության մեջ նա գեղեցիկ էր և վայելչակազմ, որքան գեղեցիկ է լինում Հոգևոր Սադայելը[3]։

Յուր պղնձյա ամրակուռ զրահավորության մեջ, յուր զենքերի շող-շողուն փայլով, հրդեհների վառ ճառագայթների առջև փայլում էր նա յուր անվան համեմատ, որպես մի արեգակ լուսապայծառ, որ աչք էր շլացնում։

Ամեն տեղ, ուր և հայտնվում էր նա, լռում էր աղմուկը, դադարում էր խռովությունը։ Բայց հենց որ անցնում էր, նրա ետևից լսելի էին լինում անեծքի խուլ մրմունջներ։ Յուր սեփական քաղաքացիքը նզովում էին նրան։ Բայց կար ժամանակ, և այդ ժամանակը շատ հին չէր, երբ նա անցնում էր այդ քաղաքի փողոցներով, մանկահասակ աղջիկները ծաղիկներ էին սփռում նրա սպիտակ նժույգի ոտների ներքո, իսկ կանայքը օրհնության ներբողներ էին երգում…

Նա անցավ մեծ հրապարակը, որ գտնվում էր յուր ապարանքի առջև։ Գեղեցիկ, սյունազարդ ապարանքը այրվում էր։ Բայց նա այրվում էր ո՛չ թե թշնամու կրակներից, այլ քաղաքացիների նետած կրակներից։ «Երբ մեր տները հրդեհի կերակուր են դառնում, ա՛յդ ևս թող դառնա»,— ասացին նրանք և այրեցին։ Նա նայեց յուր նախահայրց շքեղ բնակարանի վրա և երեսը արտմությամբ շուռ տվեց։

Ապարանքը դատարկ էր, որովհետև նրա ընտանիքը և աղախին-ները գնացել էին ամարանոց՝ Արծրունյաց բնիկ Ոստանում[4]։ Այստեղ մնացել էին մի քանի ծառաներ և սպասավորներ միայն։

Հրապարակի վրա հավաքված էր մեծ բազմություն։ Այրվող տնե-րից փախած կանայք, երեխայք, աղավաղված կարասիների հետ միա-սին, խառնափնթոր կերպով դիզված էին միմյանց վրա։ Հրդեհի լուսա-վորության ներքո այդ ապշած, սասանված թշվառների կուտակությունը ներկայացնում էր մի զարհուրելի տեսարան։

Երբ նա մերձեցավ՝

— Մի՛ մոտենար, Մերուժա՛ն,— ձայն տվին կանայքը։

— Հանգցրո՛ւ կրակը,— աղաղակեցին երեխայքը։

Նա ձեռքը տարավ դեպի աչքերը։ Ի՞նչ էր, որ սրբեց այնտեղից։ Միթե արտասվել կարո՞ղ էր այդ քարեղեն սիրտը։ Բայց երեխաների ձայնը փշրե՞ց քարը, խորտակե՞ց ապառաժը…

Նա դիմեց դեպի քաղաքադռներից մեկը։ Այստեղ ինչ-որ աղմուկ կար մի խումբ քաղաքացիների և դռների վրա հսկող պարսիկ պահա-պանների մեջ։

— Կամենում են բաց անել դռները,— զեկուցում տվին նրան։

— Կասորեցե՛ք,— հրամայեց նա։

Սկսեցին կոտորել նրա սեփական քաղաքացիներին։

Նա անցավ։

Նրան ուղեկցում էր մի նշանավոր պարսիկ ատրճանավոր։ Երբ փոքր-ինչ հեռացան, նկատեց նա.

— Անհնարին կլինի երկար պաշտպանվել, իշխան։

— Ինչո՞ւ։

— Որովհետև այս բոլորս ականատես եղանք, թե ո՛րպես քաղաքացիք կամենում էին դռները բաց անել և թշնամուն ներս թողնել։

— Դրա համար էլ ես հրամայեցի նրանց կոտորել։

— Ո՞ր մեկին կոտորել։

— Բոլորին, եթե այնպես կվարվեն։

— Այն ժամանակ մեզ անհնար կլինի կռվել թե քաղաքացիների հետ և թե դրսի թշնամու հետ։

— Եթե այդ անհնար կլինի, մեռնելը, կարծեմ, շատ հնարավոր է։

— Այդ սպասում է մեզ... Բայց ավելի լավ չէ՞ր լինի, քանի դեռևս մութն է, օգուտ քաղել գիշերային խավարից և, պատռելով պաշարող թշնամու շղթան, հեռանալ քաղաքից։

— Այդ այնքան հեշտ չէ՝ Ռշտունյաց գաղանների շղթան պատռելը։ Պետք է պաշտպանել քաղաքը մինչև վերջին շունչը։ Երբ փոքր-ինչ կլուսանա, այն ժամանակ մենք դուրս կգանք կռվելու։

Պարսիկ ատրճանավորը լռեց։ Նրանք դիմեցին դեպի քաղաքի մյուս դռները, որոնք նույնպես սաստիկ հսկողության ներքո էին դրված։

Գիշերը անցավ կրակի և բոցերի դժոխային գործողության մեջ։ Իսկ առավոտյան լուսաբացին, մոխիր դարձած քաղաքի ավերակների վրա, սկսվեցավ սոսկալի կոտորածը։ Գիշերը կործանվում էին շինվածքներ, իսկ այժմ կործանվում էին մարդիկ...

Դեռ վաղորդյան շամանդաղը նոր էր սկսել պարզվել, դեռ նոր թռչունները իրանց ուրախ մնչյուններով սկսել էին ավետել տունջյան լուսատուի ըղձալի ծագումը, երբ քաղաքի դռներից մեկը խորտակվեցավ։ Նա խորտակվեցավ թե ներսի բնակիչներից, և թե դրսի պաշարողներից։ Ներս խուժեց կատաղի բազմությունը։

«Թո՛ղ մի կողմ ջոկվի՛ն քրիստոնյաները...» — որոտացին հազարավոր ձայներ։

Քաղաքի բնակիչները, մոռանալով իրանց կրած ծանր վնասը, միացան իրանց տները այրող, իրանց դժբախտացնող լեռնականների հետ, և սկսեցին կոտորել պարսից զորքերին։ Այժմ գործում էր նիզակն ու սուրը։ Փայլում էր երկաթը և յուր փայլատակման հետ՝ լսելի էր լինում երկաթապատ վահանների սաստիկ տրոփյունը։ Կռիվը կատարվում էր փո-

ղոցներում։ Պարսիկ զորքերը օրհասական տագնապի մեջ մարտնչում էին,— մարտնչում էին, որ մեռնելուց առաջ գոնե մի քանիսին իրենց հետ տանեին։ Միրուժան Արծրունին սպառել էր յուր լեզվի բոլոր ճարտարությունը նրանց խրախուսելով։ Հրամաններ այլևս չէին ազդում։ Նա կայծակի նման անցնում էր մեկ փողոցից դեպի մյուսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են։

Այդ միջոցին մեկը միջնաբերդի բարձրությունից խոժոռ դեմքով նայում էր, թե ինչ է կատարվում ներքևում։ Որքան նայում էր նա, այնքան նրա դեմքը ավելի տխուր, ավելի հուսահատական արտահայտություն էր ստանում։ Միրուժանի քաղաքացիները, միանալով Միրուժանի թշնամիների հետ, կոտորում էին նրա Պարսկաստանից բերած զորքերին։ «Որքա՜ն սխալ հասկացողություն ունենք մենք հայ ժողովրդի մասին...»— մտածում էր նա, և նրա զայրացած սիրտը լցվում էր անհնարին դառնությամբ։

Այդ մարդը Վահան Մամիկոնյանն էր, որը տիկին Համազասպուհու հետ ունեցած անհաջող բանակռիվից հետո, դուրս էր եկել դիտելու քաղաքի խռովությունը։

Դեռ արևը չէր ծագել։ Բայց վաղորդյան մթին աղջամուղջը սկսել էր նոսրանալ, և շրջակայքը հետզհետե տեսանելի էին լինում։

Միջնաբերդի բարձրությունից նկատեց նա, որ լեռնականներից մի ստվար խումբ ուղիղ դիմում էր դեպի յուր կողմը։ Նրանց առաջնորդում էր մի հաղթանդամ տղամարդ, որ հազիվ երևում էր յուր զրահավոր և ասպարափակ թիկնապահների միջից։ Նա մոտեցավ և, միջնաբերդի ստորոտից դեպի վեր նայելով և տեսնելով այնտեղ կանգնած Մամիկոնյան իշխանին, ձայն տվեց.

— Մամիկոնյան տե՛ր, ինչո՞ւ ես այնտեղ՝ երկչոտ աղվեսի նման կանգնել այդ բարձր քարերի գլխին, ցած իջի՛ր, մենամարտենք և մեր կռվով վերջ տանք արյունահեղ կոտորածին։ Դո՛ւ, թեև կորցրիր քո տոհմի առաքինությունը, գոնե մի՛ արատավորիր նրա քաջությունը։

— Մեզ համար չէ՝ ազնվության դասը լեռնացիից առնել, Ռշտունյաց տեր, դու, եթե չէիր ցանկանում հազարավոր անմեղների արյան հոսումը, դո՛ւ, եթե չէիր ցանկանում հազարավոր տների կրակի ճարակ դառնալը,— դո՛ւ պետք է այդ հրավերը սկզբից անեիր, երբ դեռ ո՛չ մի արյուն չէր թափված։ Այն ժամանակ ես պատրաստ կլինեի դուրս գալ քաղաքից և իմ բազուկների ուժը չափել քոնի հետ։ Բայց երբ սկսվեցավ կռիվը այդպես ամարդի կերպով, թո՛ղ նույն կերպով և շարունակվի...

— Լեռնացին այդ ամարդությունը քեզանից սովորեց, Մամիկոնյան տեր։ Նա, որ գողի նման մտնում է յուր քրոջ անպաշտպան ամրո-

ցը, և հափշտակում է նրան յուր անմատչելի ննջարանից, նա՛ իրավունք չունի խոսք խոսելու մարդավարության մասին...

Մամիկոնյան իշխանը խոսք չգտավ պատասխանելու. յուր փեսայի լուտանքները նետի նման ցցվեցան նրա սրտում։ Նա դարձավ դեպի բերդապահ պարսիկ զորքը, հրամայեց, որ պաշտպանեն բերդը։

Իսկ Գարեգին Ռշտունին հրամայեց յուր լեռնականներին՝ հարձակում գործել բերդի վրա։

Հայոց երկիրը, յուր լեռնային և քարքարոտ դիրքի համեմատ, յուր զորքերի թվում սահմանել էր առանձին գունդեր, որ կոչվում էին «Քարագնացներ[5]»։ Դրանք վարժված էին անհնարին ապառաժների վրա մագլցել, այդ պատճառով դրանց գործ էին ածում բերդերի և ամրոցների գրավման համար, որոնք Հայաստանում ըստ մեծի մասին շինված էին բարձր և անմատչելի ժայռերի գագաթին։

Բայց Ռշտունյաց և Մոկաց լեռնականները, քարերի հետ ապրելով և քարերի հետ սնվելով, երեխայությունից ի վեր սովորած էին մողեսի նման վազել ապառաժների վրա։ Դրանք պատրաստի «Քարագնացներ» էին։ Իսկ այժմ նրանց առջև ներկայանում էր մի հսկա, ուղղաձիգ քարաբլուր, որի հետ հեշտ չէր գործ ունենալ։ Այդ քարաբլուրի գլխին կանգնած էր հզոր միջնաբերդը, և նույն բերդի մեջ պահված էր նրանց սիրելի Տիկինը։

Հարձակումը գործեցին բերդի արևմտյան կողմից, որ նայում էր դեպի ծովը։ Այդ կողմիցն էր միակ մուտքը, որ բարձրանում էր սանդուխտաձև աստիճանների վրայով, որ փորված էին ապառաժի մեջ։ Ուր բնությունը թերի էր թողել յուր ամրությունը, այնտեղ արհեստը լրացրել էր առանձին պարիսպներով և մարտկոցներով, որոնք կարգ-կարգ բարձրանում էին մինչև քարաբլուրի գագաթը։

Ռշտունյաց «Քարագնացները» սկսեցին վեր բարձրանալ։ Նրանք զինված էին երկաթյա ճանկերով, որոնցով մագլցում էին միապաղաղ ապառաժների կուրծքի վրա։ Այդ հանգույն, աներկյուղ շահատակներին վերևից գանակոծում էին նետերի անթիվ հարվածներով։ Բայց «Քարագնացները» պաշտպանված էին կաշվյա լայն վահաններով[6], որ մեծ ամպհովանիի ձև ունեին, և կապել էին իրանց ուսերի վրա։ Նետերը դիպչում էին այդ անմխելի ասպարներին և անզոր փետուրների նման ցած էին թափվում։

— Քարեր նետեցե՛ք,— հրամայեց Մամիկոնյան իշխանը։

Սկսվեցավ սարսափելի քարեկարկուտը։ Հարյուրավոր ձեռքեր, ծանր քարե գնդակները պարսատիկների մեջ դրած, պտույտացնում էին օդի մեջ և նետում էին դեպի ցած։ «Քարագնացների» կաշվյա վահանները այ-

ծրմ անզոր էին այդ վիմային ամրակծության դեմ պաշտպանելու նրանց։ Քարը դիպչում էր և յուր ծանրությամբ գլորում էր նրանց դեպի ցած։

Այդ միջոցին միջնաբերդի հյուսիսային կողմում կատարվում էր բոլորովին այլ գործողություն։

Ավելի քան երկու հարյուր ձեռքեր առաջ էին մղում մի փայտեղեն ալյանդակ հրեշ, որ յուր վիթխարի ծանրությամբ հազիվհազ շարժվում էր թանձր անիվների վրա։ Նա այն տափակ սայլակների նմանությունն ուներ, որ գործ են ածում հայ շինականները։ Զանազանությունը նրանումն էր միայն, որ շինականի սայլակը ձգում են առջևից լծած անասունները, իսկ նրա անիվները ետևից շարժում էին մարդիկ, որ թաքնված էին ամրակուռ տախտակամածի ներքո և ամենևին չէին երևում։

Բազմաթիվ ձեռքեր բահերով ու բրիչներով հարթում էին նրա ուղին, և հրեշը, որպես մի մարմնացած ահավորություն, դանդաղ կերպով առաջ էր ընթանում։ Նրա մայլ, սպառնական երևույթը սարսափ ձգեց բերդապահների վրա։ Ամենքը իրանց ուժերը դարձրին դեպի նրա կողմը։ Վերևից սկսեցին պարսատիկներով քարե գնդակներ նետել։ Գնդակները դիպչում էին նրա թանձր կազմվածքին և սահսահելով մի կողմ էին ընկնում։ Հրեշը ոչինչ չէր զգում, այլ որպես մի խուլ զարհուրանք շարունակում էր յուր ուղին։

Դա սոսկալի «էլեպոլանն» էր,— բերդերի և ամրոցների հիմքը փորող հսկա խլուրդը[7]։

Միջնաբերդը, որ երեք կողմից բարձրաբերձ, ուղղաձիգ և անմատչելի դիրք ուներ, այդ կողմից միայն նրա ապառաժային կողքը փոքրինչ թեքված էր, և այդ պատճառով ամրացրել էին հաստահիմն պարիսպներով և աշտարակներով։

Հրեշը մոտեցավ և, յուր ահարկու գլուխը հպարտությամբ վեր բարձրացնելով, հենվեցավ պարսպի վրա, որպես փափուկ բարձի վրա։ Նրա կազմվածքի գաղտնածածուկ խորշերում թաքնված էին բազմաթիվ մարդիկ, որոնք զինված էին բահերով, բրիչներով և մուրճերով։ Սկսեցին փորել պարսպի հիմքը։ Կրակը միայն կարող էր ազատել բերդը այդ վիթխարի թշնամուց։ Վերևից սկսեցին հրային գնդակներ նետել։ Նա ոչինչ չէր զգում։ Նրա տախտակամածը պատած էր թանձր թաղիքներով, որ թրջված էին ջրով։ Հրային գնդակները ընկնում էին նրա վրա, թշշում էին և իսկույն հանգչում էին, թողնելով օդի մեջ անախորժ խանձահոտություն։

Հրեշի ներքո պատսպարված մարդիկ շարունակում էին եռանդով փորել պարսպի հաստահիմն ստորոտը։ Արդեն բացվել էր մի մեծ ծակ, բայց ծակի առաջը փակում էր պարսպի ետևի ապառաժը։ Երկար բրիչ-

ներն ու մուրճերը ծաքառում էին այդ ժայռի հետ, բայց արդյունավետ հետևանքի չէին հասնում։ Մտածեցին բարձրացնել բանդակի լայնությունը դեպի վեր, գուցե կարելի լիներ ազատվել ապառաժից։

Այդ գործողության միջոցին վերևից նայում էր Մամիկոնյան իշխանը։ Նրա սառն դեմքը արտահայտում էր և՛ տխրություն, և՛ ծիծաղ։ «Հիմարնե՛ր,— մտածում էր նա,— ի՞նչ պիտի շահեք, եթե խորտակելու լինեք այդ պարիսպը...»։ Եվ, իրավ, ոչինչ չպիտի շահեին, որովհետև, տիրելով այդ պարսպին, նրանց առջև դուրս կգար երկրորդը, երրորդը... որոնք կարգ-կարգ և աստիճան առ աստիճան բարձրանում էին միմյանց ետևից, որքան բարձրանում էր քարաբլուրը, որի գագաթին կանգնած էր հզոր միջնաբերդը։

Բայց իշխանին տանջում էր այն միտքը, թե լեռնականները այդ պատրաստությունները չէին կարող ունենալ. անտարակույս, նրանք վեր էին առել քաղաքից. ուրեմն, նրանք կատարելապես տիրապետել էին քաղաքին։ Ի՞նչ եղավ Մերուժանը, ի՞նչ եղան պարսիկ զորքերը, որ պահպանում էին քաղաքը։— Այդ հարցը սաստիկ վրդովեցնում էր նրան։ Մերուժանին կորցնելով, նա իսպառ կորած և սպանված էր համարում այն գաղափարը, որը յուր համար այնքան մեծ նշանակություն ուներ, և որի իրագործման համար նա զոհել էր ամեն ինչ...

Ոչ սակավ խռովության մեջ էր գտնվում և պարսիկ բերդապահ զորքը։ Նրանք պարզ տեսնում էին, որ քաղաքը գրավված էր, իսկ իրենք մնացել էին քարի գլխին, պաշարված անթիվ թշնամիներով։ Նրանց գլխավորը մոտեցավ իշխանին և շնչասպառ ձայնով ասաց.

— Տագնապը մե՛ծ է, տե՛ր իմ։

— Տեսնում եմ։

— Պետք է անձնատուր լինել, տե՛ր իմ։

— Երբե՞ք։

— Մի քանի րոպեից հետո ներս կխուժե վայրենի բազմությունը։

— Անկարելի է։ Դու, ուրեմն, այդ բերդը չես ճանաչում։

— Եթե բերդի ամրությունը կարողանա պաշտպանել մեզ դրսի թշնամուց, հետո ինչո՞վ կարող ենք պաշտպանվել մենք ներսի թշնամու դեմ՝ քաղցի և ծարավի։ Նրանք, պաշարման մեջ պահելով մեզ, բոլորիս սովամահ կանեն։

— Ավելի լավ։ Կմեռնենք և կազատվենք...

— Ինչո՞ւ իզուր տեղը մեռնել։

— Որ չարատավորվի Արքայից Արքայի դրոշի փառքը։ Որ չասեն, թե պարսիկ զինվորը երկչոտ է։

Սպան լռեց և գլուխ տալով հեռացավ։

«Անպիտաննե՛ր,— ասաց նրա ետևից վայրացած իշխանը,— դուք քաջ եք այն ժամանակ միայն, երբ թշնամին ձեր առջևից փախչում է...»։

Միևնույնը պատահեց ներքևում, քաղաքի մեջ։ Երբ լեհականները, խորտակելով քաղաքի դռները, ներս մտան, այդ ժամանակ պարսիկները բոլորովին վհատության մեջ ընկան։ Մերուժանի բոլոր ջանքերը քաջալերելու նրանց— մնացին ապարդյուն։ Մի հուսահատական ընդդիմադրությունից հետո պարսիկների մի մասը անձնատուր եղավ, իսկ մնացածները, քաղաքի մյուս դռներից դուրս գալով, փախան։

Մերուժանը մնաց միայնակ, լքված յուր քաղաքացիներից, և լքված պարսիկներից, որոնց վրա մեծ հույսեր ուներ։ Նա վերջին անգամ յուր վշտալի հայացքը դարձրեց դեպի մոխիր դարձած քաղաքը, ուր ապրել էին, ուր իշխել էին նրա նախնիքը, և, օգուտ քաղելով ընդհանուր խառվությունից, յուր թիկնապահների փոքրիկ խումբով դուրս եկավ քաղաքից և անհայտացավ վաղորդյան մթության մեջ...

Իսկ այժմ վաղորդյան մթությունը բոլորովին չքացել էր, տեղի տալով նախաարփյան ախորժելի լուսավորության։ Արշալույսը սկսել էր շառագունել, ներկելով հորիզոնը ոսկեգույն ծիրանիներով։ Շատ չանցավ, արևի առաջին արյունագույն ճառագայթները հանդիպեցան մի արյունոտ գործի...

Առաջին պարսպի քանդակը այն աստիճան լայնացել էր, որ լեհականները ներս էին մտել և այժմ սկսել էին փորել երկրորդ պարսպի ստորոտը։ Հրեշը մնացել էր դրսում, նա յուր վիթխարի մարմնով այդ բացված քանդակից անցնել չէր կարող։ Միջնաբերդից համարյա ընդդիմադրություն չէին գործում։ Պարսիկները այժմ իրանց փրկությունը միայն անձնատուր լինելու մեջ էին գտնում, թեև պաշտպանվելու ամեն միջոցներ ունեին։ Մամիկոնյան իշխանը, վաղուց հասկացած լինելով այն ճշմարտությունը, թե վտանգի ժամանակ պարսիկ զինվորի վրա հույս չէ կարելի դնել,— նրանց թողել էր իրանց կամքին։

Մյուս կողմից, «Խարաչնացները» մեծ հառաջադիմություն էին գործել։ Նրանցից մեկը արդեն մագլցելով հասել էր մինչև բերդի մուտքը, և յուր դաշույնի ծայրը ցցել էր երկաթապատ դռան վրա։

— Բա՛ց արեք,— աղաղակում էր նա,— եթե չեք ցանկանում, որ իմ հազարավոր ընկերների դաշույնները այսպես ցցվին ձեր սրտում։

Դռները բացվեցան։ Վերևում բարձրացրին անձնատուր լինելու նշանը։ Իսկ ներքևում տիրեց ընդհանուր ցնծություն բոլոր լեհականների մեջ։

Այժմ Ռշտունյաց նահապետը, շրջապատված յուր ավագներով, հանդիսավոր կերպով մոտեցավ բերդի ստորոտին։ Նույն միջոցին վերևից

ցած իջավ բերդապահների պարսիկ գլխավորը և, առաջարկելով նրան բերդի բանալիները, ասաց.

— Հաղթված Մերուժանի բերդը հանձնում եմ հաղթողների ամենախառավորյալին։ Ընդունի՛ր այդ բանալիները, Ռշտունյաց տե՛ր։ Այժմ թե նվաստս, թե իմ հրամանի ներքո գտնված բերդապահների գլուխները խոնարհվում են ձեր սրերի և ձեր մեծահոգության առջև։

Լսելի եղան հաղթական ընդհանուր աղաղակներ, որ կրկնվեցան մի քանի անգամ։

Ռշտունյաց նահապետը ընդունեց բանալիները, պատասխանելով.

— Ձեր գլուխները ազատված կլինեն մեր սրերից, և թե դու և թե քո հրամանի ներքո գտնված բերդապահները՝ կվայելեք իմ կատարյալ մեծահոգությունը, եթե ցույց կտաք, թե որտե՛ղ է պահված Ռշտունյաց Տիկինը։

— Իսկույն ցո՛ւյց կտան...— միջնաբերդի բարձրությունից լսելի եղավ մի ձայն, որ խլացավ ընդհանուր աղաղակների մեջ։

Դա Վահան Մամիկոնյանի ձայնն էր։ Դեռ միայնակ կանգնած էր նա վերևում և լի դառնությամբ դիտում էր, թե ինչ է կատարվում ներքևում։ Երբ նկատեց բանալիների հանձնվելը, այնուհետև ամեն հույս կորած համարելով, նա դարձավ դեպի յուր մարդիկը և մի ինչ-որ խորհրդավոր նշան տվեց և ինքը հեռացավ...

Այդ միջոցին միջնաբերդի արևմտյան կողմի աշտարակներից մեկի բարձրությունից քարշ ընկավ մի սպիտակ մարմին, որ ձյունի պես փայլում էր արևի առաջին ճառագայթների առջև։ Ամենքը նայեցին նրա վրա և սարսափեցան...

Չսարսափեցավ միայն Մամիկոնյան իշխանը։ Բայց նա վշտացավ... Յուր տխուր հայացքը դարձրեց դեպի սպիտակ մարմինը, սրտի բոլոր բաբախմունքով նայեց նրա վրա, հետո սրբեց աչքերի արտասուքը, և յուր դողդոջուն քայլերը ուղղեց դեպի միջնաբերդի հյուսիսային կողմը։ Ամբողջ աշխարհը խավարած էր նրա համար։ Նա գնում էր, բայց չգիտեր, թե ո՛ւր է գնում։ Համարյա բնազդմամբ մոտեցավ նա այն քարակոփ անձավներից մեկին, որի մուտքը փակված էր երկաթյա դռնով։ Գրպանից հանեց մի փոքրիկ բանալի և բաց արեց դուռը։ Ներս մտավ և դուռը յուր ետևից կրկին կողպեց։ Անձավի մի խորշում, քարյա հատակի մեջ, ագուցած էր մի քառանկյունի սալ, որ յուր գույնով ամենևին չէր որոշվում հատակից։ Նա ոտքը դրեց սալի մի անկյունի վրա, և նրա ճնշումից խուփը ինքն իրան բարձրացավ։ Տակից հայտնվեցավ մի վիրապի նեղ բերանը, որից մի մարդ հազիվ կարող էր անցնել։ Նա երկու

ձեռքերը դրեց նրա բերանի երկու շրթունքների վրա, և անհայտացավ վիրապի մեջ։ Բերանը դարձյալ փակվեցավ։

Դա մի ստորերկրյա գաղտնի անցք էր, որ ծառայում էր որպես փախուստի ճանապարհ։

Համարյա միևնույն ժամանակ, երբ հայրը մտավ գաղտնի վիրապի մեջ, Վանա մեծ քաղաքադռներին հասավ որդին—Սամվելը։

Առաջինը, որ գրավեց երիտասարդի ուշադրությունը, երկու թևավոր վիշապներն էին, որ հսկում էին այդ դռան աջ և ձախ կողմերում։ Արհեստի այդ սքանչելի արդյունքները այժմ փշրված, խորտակված էին։ Նա ներս մտավ։ Մոխիր դարձած քաղաքը տակավին մխում էր դեռ չհանգած կրակների մեջ։

Նրա աչքին ընկավ աշտարակի բարձրությունից կախ ընկած սպիտակ մարմինը, որ դեռ ձյունի նման փայլում էր արևի առաջին ճառագայթներից[8]։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա սոսկալով։

— Ռշտունյաց Տիկնոջ մարմինն է,— պատասխանեցին նրան։

— Ո՞վ կախաղան հանեց։

— Վահան Մամիկոնյանը։

— Նայե՜ն...— բացականչեց խեղճ երիտասարդը, աչքերը բռնելով։— Նա սպանեց եղբորը, իսկ դու—քո քրոջը...

Ձ

ՈՒՐԱՑՈՂԸ ՅՈՒՐ ՏԱՆ ՇԵՄՔԻ ՎՐԱ

Հաղամակերտի[1] մայր եկեղեցում սուրբ պատարագը դեռ շարունակվում էր կատարվել։ Չնայելով, որ այսօր ոչ տոն էր և ոչ կյուրակե, բայց եկեղեցին լիքն էր բազմությամբ։

Բեմի հանդեպ, եկեղեցու աջակողմյան անկյունում, չորս մարմարյա սյուների վրա բարձրանում էր մի վերնատուն։ Նրա դեպի սեղանը նայող կողմը կարված էր ոսկեզօծ վանդակապատով։ Բեհեզյա ծանր վարագույրները միջից ծածկում էին վանդակապատը և բոլորովին անտեսանելի էին կացուցանում վերնատան ներսը։ Այդ դրության մեջ վերնատունը մի փակված, առանձնացած մատուռի ձև ուներ։

Նրա հատակը ծածկված էր թանկագին օթոցներով, իսկ մի կողմում դրած էր փառավոր բազմոց։ Մի տիկին, սուրբ պատարագի խորհրդի համեմատ, երբեմն ծունր էր դնում և աղոթում էր, երբեմն կանգնում էր և երկրպագություն էր տալիս, երբեմն նստում էր բազմոցի վրա

և խորին ուշադրությամբ լսում էր։ Նա ներկայացնում էր մի մարմնացած ջերմեռանդություն, որ հոգևով և սրտով հափշտակված էր սուրբ պատարագի արարողություններով։

Ոչ մի ժամանակ նրա կրոնական զգացմունքները այնքան վառված չէին եղել, և ոչ մի ժամանակ նա յուր աղերսն ու պաղատանքը այնպես սրտագին փափագներով չէր մատուցել սուրբ սեղանի առջև, որպես այսօր։ Տխո՞ւր էր նա, որպես մի սգավոր, և ջերմ արտասուքը հեղեղի նման թանում էր նրա վշտալի դեմքը։

Դա Վասպուրականի[2] Տիկինն էր—Մեհրուժանի մայրը։

Մատուռը, որի մեջ առանձնացած էր նա, Արծրունիների տոհմային աղոթարանն էր։ Արծրունիները, կառուցանելով Մայր եկեղեցին, այդ մատուռը հատկացրին իշխանական տանը[3]։

Նա վեր կացավ, երբ սուրբ խորհուրդը ավարտվելուց հետո ներս մտավ պատարագիչ քահանան և մատույց նրան սուրբ սեղանի նշխարքը։ Նա ընդունեց, համբուրելով տեր հոր աջը։ Այժմ նրա վշտահար դեմքը և այն հեզ աչքերը, որոնց մեջ փայլում էր անհուն բարություն, ստացան ավելի խաղաղ և ավելի մխիթարական արտահայտություն, որ միայն պատկառանք էին ազդում։ Այդ հարգելի անձնավորությունը միացնում էր յուր մեջ բարձր ազնվականի բարձր հատկությունները բարեպաշտ քրիստոնյայի առաքինությունների հետ։

— Ինչպե՞ս է, տեր հայր, քո զավակի առողջությունը,— հարցրեց նա,— ինձ ասացին, որ շատ հիվանդ է։

— Այժմ բավական լավ է, տիկին,— պատասխանեց քահանան։— Վտանգն անցավ։ Իմ դուստրը յուր կյանքով պարտական է քեզ, տիկին։ Եթե Դրան բժիշկը այնպես շուտ ուղարկած չլինեիր, զուցե ես կզրկվեի իմ միակ զավակից։ Աստված քեզ երկար կյանք տա, տիկին, որ այլոց կյանքի համար այդքան հոգ ես տանում։

— Այդ իմ պարտավորությունն է, տեր հայր, բոլորը իմ զավակներն են,— ասաց նա։— Ցավում եմ, որ այս օրերում այնքան զբաղված պետք է լինեմ, որ չի պիտի կարողանամ անձամբ այցելել հիվանդին։

— Նա շատ կուրախանա, տիկին։ Քո բարի սերը[4] բոլորովին կփարատե նրա ցավերը։

Քահանան հեռացավ, երբ ներս մտան երկու նաժիշտներ, որոնք սպասում էին մատուռի նախագավիթում։ Նրանք, բռնելով տիկնոջ աջ և ձախ թևերից, սկսեցին ցած իջեցնել վերնատան քարյա սանդուղքներից։

Պատարագից հետո ժամավորները դարձյալ մնացին եկեղեցում,

որովհետև Դրան ավագ երեցը պետք է քարոզ կարդար։ Բայց տիկինը չսպասեց և առանձին դռնով դուրս եկավ եկեղեցուց։

Փողոցում սպասում էր մի փառավոր պատգարակ, յուր երկու նաժիշտների հետ մտավ նրա մեջ, և սպիտակ ջորիները սկսեցին հանդարտ քայլերով տանել։ Պատգարակի առջևից առաջ գնում էին երկու զինված շաթիրներ[5] կարմիր գդակներով, իսկ ետևից՝ մի խումբ դրանիկներ, նույնպես ոտով։ Եկեղեցու դռնից սկսած, դեպի փողոցի երկարությունը, ձգվել էին երկու շարք աղքատներ, որոնք խորին փափագով սպասում էին այդ բարեխնամ պատգարակին։ Տիկնոջ հազարապետը քսակը ձեռքին մոտեցավ նրանց և առատաձեռն ողորմածությամբ բաժանեց չքավորների սովորական պարենը։

Խորին հարգանքով անցնում էր պատգարակը քաղաքի փողոցներով, և ամեն ոք՝ մեծ թե փոքր, հասակավոր, թե երեխա, կանգնում էին, գլուխ էին տալիս և ամենայն սիրով ողջունում էին։ Անցնում էր հասարակաց մայրը և երկրի Տիկինը։ Նա, պատգարակի դռնակից գլուխ մեկնելով, բոլորի ողջույնը ամենայն բարեսրտությամբ ընդունում էր։

Պատգարակը կանգ առեց իշխանական հոյակապ ապարանքի հանդեպ, որի մուտքի աջ և ձախ կողմերում հսկում էին երկու թևավոր վիշապներ։ Դա Արծրունիների հատուկ նշանն էր, որ գրված էր լինում նրանց բոլոր քաղաքների և պալատների դռների մոտ։ Տիկինը ցած իջավ և, շրջապատված յուր սպասավորներով, ներս մտավ։ Նա անցավ փառավոր, կանաչազարդ բակերի ճեմելիքներով, որ հովանավորված էին դարևոր ծառերով, և մտավ յուր սենյակը։ Սպասավորները հեռացան, նրա մոտ մնացին նաժիշտները միայն, որոնք փոքր-ինչ սպասելով և տեսնելով, որ իրանց տիկինը առանձին հրաման չունի, իրանք ևս հեռացան։

Առաջինը, որ ներս մտավ տիկնոջ օրհնությունն առնելու, նրա հարսն էր—Մեհրուժանի կինը։ Մոր երկու ձեռքերից քարշ էին ընկած նրա երկու փոքրիկ երեխաները։ Նրանք մոտեցան, համբուրեցին տիկնոջ աջը։ Ամեն օր այդ սովորությունն ունեին, երբ նա վերադառնում էր եկեղեցուց։ Տիկինը հանեց յուր բերած նշխարքը, բաժանեց, և տվեց թե երկու երեխաներին և թե նրանց մորը։ Երեխաները, որոնցից մեկը տղա էր, իսկ մյուսը աղջիկ, իրանց գողտրիկ ձեռքիկները դրեցին տիկնոջ ծնկների վրա և, իրանց փայլուն, հարցասեր աչքերը դարձնելով դեպի նա, հարցրին.

— Ինչո՞ւ տերտերի հացը այդպես քաղցր է լինում, մամի՛կ։

— Դա աստուծո հացն է, զավակներս, դրա համար այդպես քաղ-

շեր է լինում,— պատասխանեց տիկինը, փայփայելով նրանց գանգուրահեր գլուխները։

Նրանց մայրը ոտքի վրա կանգնած էր յուր սկեսրոջ մոտ և համարձակություն չուներ նստելու։ Նազելի մի կին էր նա, չափազանց նրբակազմ և քնքույշ։ Նա այնպիսի տպավորություն էր գործում, կարծես ասելիս լիներ՝ մի՛ դիպչեք ինձ, կփշրվեմ ես։ Նա խոսում էր այն ժամանակ միայն, երբ սկեսուրը խոսեցնում էր, և ամեն անգամ նրա սպիտակ այտերի վրա նշմարվում էր մի թեթև կարմրություն։ Նա դեռ անմեղ օրիորդի ամոթխածությունն ուներ, իսկ հնազանդ հարսի՝ պատկառանքը։

Վասպուրականի Տիկինը այրի էր։ Նրա ամուսինը՝ Շավասպ Արծրունին, շատ ժամանակ չէր, որ վախճանվել էր։ Այդ պատճառով նա դեռ կրում էր յուր գլխին սգավորության քողը։ Զրկվելով սիրելի ամուսնուց, նա փոխարինում էր նրան՝ յուր տան մեջ իբրև մի պատրիարք, որի հեղինակությանը ամենքը խոնարհվում էին, իսկ երկրի կառավարության մեջ՝ իբրև մի նահապետ։

Տիկինը Վահան Մամիկոնյանի (Սամվելի հոր) քույրն էր[6]։ Մամիկոնյան տոհմից էր և նրա հարսը—Մեծուժանի կինը[7]։ Մոտ խնամությունները այդ ժամանակ սովորական էին հայոց մեջ, մանավանդ նախարարների տների մեջ։ Եվ առավելապես Մամիկոնյան տան աղջիկները, իբրև մի շղթա, կապում էին միմյանց հետ ոչ միայն ավագ նախարարների տոհմերը, այլև Թագավորի տունը[8], այլև Հայրապետական տունը[9]։ Այդ տոհմի աղջիկներն էին, որ իրանց առաքինություններով զարդարում էին թե նախարարների պալատները, թե թագավորի արքունիքը և թե Հայրապետի վեհարանը[10]։

— Նախաճաշիկդ պատրաստ է,— ասաց հարսը։— Ինչպե՞ս կհրամայեիր, այստե՞ղ տան, թե սեղանատանը։

— Ուտելու բնավ ախորժակ չունեմ, սիրելի Վահանդուխտ,— պատասխանեց տիկինը։— Գիշերը շատ անհանգիստ էի, քնել չկարողացա։ Իսկ այժմ հիվանդի պես եմ զգում ինձ. ականջներիս մեջ մի բան մրմնջում է, և ինձ այնպես է թվում, կարծես գլուխս յուր տեղումը չլինի։

— Հանգստացիր մի փոքր. դու առավոտյան շատ վաղ վեր կացար։

— Ինչպե՞ս հանգստանամ... միթե կարո՞ղ եմ հանգստանալ...

Նա նայեց հարսի գունաթափ երեսին և սարսափեց։ Մի գիշերվա մեջ խեղճ կինը բոլորովին հալվել ու մաշվել էր։ Երևի, նա ևս չէր քնել, երևի, նա ևս անհանգիստ էր... Ի՞նչ էր պատահել։

Այդ հոյակապ տանը, ուր միշտ ուրախ, ուր միշտ երջանիկ լինե-

լու համար ոչինչ թերություն չկար, այսօր այնպիսի տխուր տպավորություն էր գործում, որպես թե սգավորի տուն լիներ։ Բոլորի դեմքերի վրա նկարված էր մի անբացատրելի տրտմություն։ Ամենքը լուռ էին, ամենքը խորշում էին միմյանց հետ խոսելուց։ Կարծես կար մի բան, որից վախենում էին, միգուցե մինը մյուսին հիշեցնելով ավելի ևս սաստկացնեն նրա սրտի ցավերը...

Երեկ լուր ստացվեցավ, որ Մերուժանը գալիս է։ Այսօր ճաշից հետո նա պետք է մտներ յուր իշխանության Ոստանը։ Թե մոր համար և թե ամուսնի համար ի՜նչ ավետիս, ի՜նչ բարի համբավ կարող էր այնքան ուրախալի լինել, քան թե այդ, որ նրանց սիրելին, երկար բացակայությունից հետո, վերադառնում է յուր տունը։ Բայց նրանք, փոխանակ ուրախանալու, տխուր էին։

Նա վերադառնում էր որպես ուրացող, որպես դավաճան։ Եվ մայրն ու ամուսինը պետք է գրկեին նրան, պետք է սրբեին նրա ճակատից ճանապարհի փոշին։— Այդ ծա՜նր էր, մահվան չափ ծա՜նր էր թե մոր և թե ամուսնի համար։ Նրանց արդեն հայտնի էին Վանա ավերածի անցքերը և իրանց արյունակցի[11]—դժբախտ Համազասպուհու ցավալի նահատակությունը։ Նրանք գիտեին և ա՛յն, թե այժմ ինչե՛ր պիտի աներ Մերուժանը...

Մայրը վաղուց լսած էր որդու չար դիտավորությունները, բայց նա ամենայն զգուշությամբ ծածկում էր յուր հարսից, վախենալով, որ խեղճ կինը, որն առանց դրանց ևս շատ տկար էր յուր առողջությամբ, չի պիտի կարողանար դիմանալ այդ հարվածներին։ Բայց երկար գաղտնիք պահել անկարելի էր, որովհետև այսօր պետք է գար նրա ամուսինը։ Այդ էր պատճառը, որ նրան փոքր-ինչ նախապատրաստելու համար երեկ երեկոյան կանչեց յուր մոտ և հայտնեց բոլորը։

Վանա ցավալի կործանումից հետո, որպես հայտնի է, Մերուժանը միայն յուր թիկնապահների փոքրիկ խմբով կարողացավ ազատվել յուր քաղաքացիների վրեժխնդրությունից։ Եվ մտածելով, միգուցե յուր Ոստանը մտնելու ժամանակ նույն վտանգներին հանդիպի,— նա շտապեց կես ճանապարհից հառաջագույն մի մարդ ուղարկել յուր մոր մոտ, որպեսզի նախապատրաստվի որդուն ընդունելու։ Այստեղ, յուր տան մեջ, դիտավորություն ուներ փոքր-ինչ դադար առնել, հանգստանալ, մինչև կհասնեին պարսկական նոր զորքերը, որոնց մեծ անհամբերությամբ սպասում էր նա։

— Ես հրամայել էի՝ ինձ մոտ կանչել քաղաքապետին,— ասաց տիկինը։— Ցանկանում էի իմանալ, արդյոք ի՞նչ կարգադրություններ է արել նա։

— Նա այստեղ է,— պատասխանեց Հարսը։— Դեռ դու եկեղեցուց չէիր վերադարձել, նա շատ վաղ եկել, սպասում էր։ Ի՞նչ կարգադրություններ պետք է անի նա։

Հարցը մնաց առանց պատասխանի։ Այդ միջոցին ներս վազեց մի ուրախ, վառվռուն օրիորդ, որը, անդադար յուր վրա նայելով, մոտեցավ, կանգնեց տիկնոջ առջև և, յուր լի բերկրությամբ աչքերը դարձնելով դեպի նա, հարցրեց.

— Նայի՛ր, մայրիկ, այդ հագուստով լա՞վ է։

Դա Մերուժանի քույրն էր, զարդարվել էր, պատրաստվել էր եղբորը հանդիպելու համար։ Տան մեջ ամենքը տխուր էին, նա միայն ուրախ էր։ Մայրը նայեց նրա վրա, աչքերը լցվեցան արտասուքով։ Նա խոսք չգտավ պատասխանելու յուր դստերը։ Ի՞նչ աներ, ինչպե՞ս վշտացներ նրա մեջ այն ջերմ սերը, որ ուներ նա դեպի եղբայրը։ Կարո՞ղ էր բացատրել նրան, թե կյանքի մեջ կան այնպիսի հանգամանքներ, որ բաժանում են քրոջը՝ եղբորից, մորը՝ որդուց։ Օրիորդը թեև մեծ աղջիկ էր, բայց այդ մասին շատ փոքր հասկացողություն ուներ։ Նա լսել էր շատ բան, նրան ասել էին բոլորը, բայց դեռ նա սիրում էր եղբորը։ Դա այն աղջիկն էր, որին Սամվելի մայրը նշանել էր յուր որդու համար, չնայելով, որ Սամվելի սիրտը պատկանում էր Ռշտունյաց Օրիորդին—Աշխենին։

Շավասպուհին,— այսպես էր նրա անունը,— նկատելով մոր տխրամած դեմքը, ընկավ նրա ծնկների վրա և, նրա դողդոջուն ձեռքերը սեղմելով յուր բոցավառ շրթունքների վրա, բացականչեց.

— Մայրի՜կ, սիրելի՜ մայրիկ, ինչո՞ւ ես լաց լինում, եթե դու լաց լինես, ես էլ լաց կլինեմ...

— Մենք էլ լաց կլինենք,— ձայն տվեցին երկու երեխաները, որոնք ապշած կանգնած նայում էին այդ սրտաշարժ տեսարանի վրա։

Երեխաների մայրը առեց նրանց և այրված սրտով դուրս եկավ դահլիճից։

Տիկինը համբուրեց յուր դստերը, փայփայելով վեր բարձրացրեց, և ասաց նրան.

— Գնա՛, սիրելի զավակս, ասա՛, որ քաղաքապետին իմ մոտ կանչեն։ Ես նրա հետ շատ կարևոր խոսելիքներ ունեմ։ Պատվիրի՛ր սպասավորներին, որ ոչ ոքի չեմ ընդունում։ Իսկ եթե տեր հայրը գալու լինի, նրան իմ մոտ թողնեն։

Օրիորդը կրկին անգամ համբուրեց մոր ձեռքերը և հեռացավ։

Դահլիճում մնաց միայն տիկինը։ Ոչ մի ժամանակ նրա պայծառ

խուլքը այնպես մռայլված չէր եղել, որպես այս առավոտ։ Ոչ մի ժամանակ նա այնպես անճարացած և այնպես կաշկանդված չէր եղել անհնարին դժվարությունների մեջ, որպես այս առավոտ։ Որքան մտածում էր, մի ուրիշ ելք չէր գտնում։ Մեր զգացմունքները մաքառում էին նրա մեջ։ Ինչպե՞ս ընդունել որդուն—մոլորյալ որդուն, բայց և — սիրելի որդուն։ Դիցուք թե ինքն համձն աներ հաշտվել նրա հետ այն հուսով, որ յուր ազդեցությամբ կարող կլիներ ուղղել նրան, դարձնել նրան չար ճանապարհից։ Բայց կարո՞ղ էր հաշտվել նրա հետ ժողովուրդը։ Նա՛, որ հայտնի պատերազմ էր սկսել ժողովրդի դեմ կամ հնազանդեցնելու նրան յուր չար կամքին և կամ սրի ճարակ տալու նրան,— կարո՞ղ էր հաշտվել նրա հետ ժողովուրդը։ Այդ դա՛ռն, այդ ցավալի մտքերն էին ալեկոծում նրան, երբ ներս մտավ քաղաքապետը և, հեռվից մի քանի անգամ գլուխ տալով, մոտեցավ, և լուռ, շվարյալ դեմքով կանգնեց տիկնոջ բազմոցի մոտ։

Ձնայելով տիկնոջ մի քանի անգամ կրկնած խնդիրքին, որ նստե, և չնայելով յուր հատակին, այդ պատմյալ ծերունին դարձյալ կանգնած մնաց ոտքի վրա, պահպանելով ավանդական մեծարանքը դեպի Հարքերի տիկինը։

— Ի՞նչ արեցիր, Գուրգեն,— հարցրեց տիկինը։

— Ամեն ինչ կարգադրված է, տիկին,— պատասխանեց ծերունին տխուր ձայնով։— Ամեն ինչ այնպես կկատարվի, որպես դու հրամայեցիր։

Նա սկսեց մի առ մի պատմել, թե ընդունելությունը ի՛նչ կերպով կկատարվի, կամ ի՛նչ կարգադրություններ են եղած։

— Դու կարծում ես, Գուրգեն, որ անկարգություններ չե՞ն պատահի,— հարցրեց տիկինը, դեռևս ոչ բոլորովին հանգստանալով ծերունու տված տեղեկություններով։

— Ես ո՛չ միայն կարծում եմ, այլ հավատացած եմ, տիկին, որ ոչ մի անկարգություն չի պատահի։ Իրավ է, մեր քաղաքացիք սաստիկ զայրացած են, բայց նրանք կզսպեն, խեղ երբեք տիրասպան չեն լինի։ Այդ ես գիտեմ, տիկին, հաստատ գիտեմ...

Վերջին խոսքերի միջոցին նա յուր գլուխը մի քանի անգամ դրական կերպով շարժեց և ապա շարունակեց.

— Ի՞նչ եղավ տեր հայրը, ուշացավ տեր հայրը։ Նրա քարոզը թեև փոքր-ինչ երկար տևեց, բայց բոլորովին հանգստացրեց ժողովրդին։ Ավետարանից, մարգարեներից, առաքյալներից շատ օրինակներ բերեց։ Եկեղեցուց դուրս գալուց հետո բազմությունը չէր հեռանում, խմբված էին բակում, դեռ տաքացած կերպով վիճում էին։ Տեր հայրը

մտածում էր այս և այն խմբին, խոսում էր, խրատում էր և հանգըս-տացնում էր։ Այն ուրիշ բան կլիներ, տիկին, եթե իշխանը պարսից զորքերով մտներ յուր քաղաքը. այն ժամանակ անհնար կլիներ բնակիչներին զսպել։ Բայց այժմ գալիս է մի քանի մարդիկներով միայն,— և հայ մարդիկներով։

— Բայց հայությունը ուրացած մարդիկներով...— ընդհատեց տիկինը զայրացած կերպով։

Ներս մտավ Դրան երեցը։

— Ո՞ւր է տեր հայրը,— ձայն տվեց ծերունին։

Այդ ալևոր Քահանան, որ դեռ պահպանել էր յուր առույգ հասակի թե եռանդը և թե կենդանությունը, իշխանական տան երեցն էր։ Նա մոտեցավ, ողջունեց և կանգնեց տիկնոջ մոտ։

— Նստի՛ր, տեր հայր,— ասաց նրան տիկինը։

Նա նստեց և սկսեց հաղորդել յուր արած կարգադրությունները։

Վահանդուխտ տիկինը, յուր երկու երեխաների հետ դուրս գալով դահլիճից, ուղիղ գնաց յուր սենյակը։ Երկու երեխաներից մեծը տղա էր, իսկ փոքրը՝ աղջիկ։ Տղան համարում էր, որ այն օր գալու էր հայրը, և դեռ հիշում էր նրան, երբ նա գնաց Պարսկաստան։ Երբ նստեցին՝

— Մայրի՛կ,— հարցրեց տղան, յուր փոքրիկ թևիկներով քարշ ընկնելով նրա պարանոցից,— հայրիկը այսօր կբերե՞ ձին։

— Ի՞նչ ձի,— ասաց մայրը տխուր ձայնով։

— Չե՞ս հիշում, երբ հայրիկը գնում էր, ասացի՝ ինձ համար մի ձի բեր, պստիկ ձի. նա պաչ արավ, ասաց՝ կբերեմ, շատ պստիկ ձի կբերեմ, ա՛յ, էսքան։— Նա ձեռքը բարձրացրեց ձիու մեծությունը ցույց տալու համար։

— Մենք ձիաներ շատ ունենք, զավակս,— պատասխանեց նրան մայրը։

— Մերոնքը մեծ են, շատ մեծ են, ես պստիկ ձի եմ ուզում, որ ինքս հեծնեմ։

— Ծառաները կնստացնեն քեզ։

— Ես խո Նուշիկ չեմ, որ ծառաները բռնեն ու դնեն ձիու վրա. ես ուզում եմ ինքս նստել։

Նուշիկ փաղաքշական ձևով կոչում էին նրա քրոջը, որի իսկական անունը Միհրանույշ էր։

Եղբոր նկատողությունը, երևի, վիրավորեց փոքրիկ Նուշիկին, որը ծտի նման թառել գահավորակի կողքում դրած բարձերից մեկի վրա և, կլորիկ ոտիկները շարժելով, ասաց.

— Տեսնո՞ւմ ես, ինչպե՞ս հեծա։

Մայրը երկուսին էլ գրկեց, համբուրեց, հետո հանձնեց դայակներին, որ տանեն, դրսում ման ածեն, որպեսզի իրան չխանգարեն։ Ինքը մնաց միայնակ։

Դժբա՜խտ հանգամանքների դժբա՜խտ ամուսին... Որդիքը ուրախ էին հոր գալուստով, իսկ ինքը ուրախանալ չէր կարող։ Նա սիրում էր յուր ամուսնին, նա յուր մխիթարությունը միշտ նրա մեջ էր գտել։ Իսկ այժմ որպե՞ս սիրել «ուրացողին», որպե՞ս սիրել չարագործին։ Այդ միտքը կատաղության չափ ալեկոծում էր նրան, ալեկոծում էր, որովհետև սերը և միտքը չէին հաշտվում միմյանց հետ։

Յուր զավակներին հեռացնելուց հետո, նա գտնվում էր հոգեկան խորին տագնապի մեջ։ Ներքին կռիվը, զգացմունքների սաստիկ մաքառումը գցել էին նրան տենդային հրաբորբոք դրության մեջ։ Ահա՛ մի ժամ ևս... ահա՛ երկու ժամ ևս... քաղաքի մունետիկը պիտի քարոզեր բոթաբեր գալուստը, և ամեն ինչ պիտի վճռվեր նրա համար...

Նրա դրությունը նմանում էր դատապարտյալի վերջին րոպեներին, որ օրհասական հուզմունքների մեջ սպասում է. ահա՛ բանտի դռները բաց կլինեն, դահիճները կմտնեն և նրան կտանեն դեպի կախաղանի տակը... Ինքը այդպես պետք է դիմեր այն մարդու գիրկը, որին ամբողջ աշխարհը մերժում էր։ Եվ նա պետք է ողջագուրեր յուր ամուսնին, այն ձեռքերով, որ շաղախված էին յուր հարազատների անմեղ արյունով։ Միթե նա չէ՞ր լինի հայոց կանանցից ամենաթշվառը։ Բայց նա սիրո՜ւմ էր... այո՛, սիրո՜ւմ էր։

Նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, սեղմեց բորբոքված սիրտը, որ փոքր-ինչ հանգստություն տա ներքին վրդովմունքներին։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր տառապյալ աչքերից, բայց սրտի կրակը շիջուցանել չէր կարողանում։ Երկար այդ դրության մեջ տանջվում էր նա։

Հանկարծ վեր թռավ և, որպես մի խելագար, պղտոր աչքերը դարձրեց դեպի յուր սենյակի շուրջը։ Ապշած կերպով նայում էր այս կողմ ու այն կողմ և յուր անշարժ հայացքով, կարծես, մի բան որոնում էր։ Մի քանի քայլ փոխեց դեպի դուռը, բայց իսկույն կանգ առեց։ Դարձյալ, որպես մի աներևույթ զորությունից առաջ մղվելով, փոխեց քայլերը, մոտեցավ և, դողդոջուն ձեռքը մեկնելով, կողպեց դուռը։ Սկսեց գիշերաշրջիկ լուսնոտի նման՝ դեգերել դեպի այս, դեպի այն անկյունները։ Մոտեցավ լուսամուտներին, ցած թողեց վարագույրները։ Կրկին մոտեցավ դռանը ստուգելու, արդյոք փակվա՞ծ էր, թե ոչ։ Նրա դեմքը այժմ խաղաղ էր. նա արդեն գտել էր մի միջոց, որ կարող էր հանգստացնել իրան։ Սկսեց նայել պատուհանները, սկսեց քրքրել բոլոր

դարակները, որոնց մեջ պահված էին յուր իրեղենները։ Բայց որոնածը չգտավ։ Նրա աչքին ընկավ մի գեղեցիկ արկղիկ, որի մեջ պահված էին յուր կարևոր պարագայքը։ Ուրախացավ նա, որպես մի մարդ, որ հանկարծ մի անսպասելի գանձ է գտնում։ Վազեց դեպի արկղիկը, բաց արեց և նրա միջից դուրս հանեց մի փոքրիկ մկրատ։ Մի քանի րոպե այդ փայլուն գործիքը ձեռքում բռնած, հիացած կերպով նայում էր նրա վրա։ Նա գտավ ցանկալի առարկան։ Դա կհանգստացներ նրան և կվճռեր նրա սրտում անվճիռ մնացած տարակուսանքը—նրա զգացմունքների անհաշտ երկբայությունը…

Մկրատի սուր ծայրը նախ տարավ դեպի բաբախող կուրծքը։ Բայց մինչև սիրտը մխելու համար բավական կարճ էր։ Հետո բաց արավ և մոտեցրեց յուր կոկորդին…

Այդ միջոցին, կարծես, փրկության հրեշտակը բռնեց նրա ձեռքը։ Մկրատը բարկությամբ մի կողմ նետեց, ասելով. «Ո՜չ, նա չա՜րժե, որ ես մեռնեմ նրա համար… Նա, այո՛, դավաճանեց յուր հայրենիքին, բայց դավաճանեց և—ի՜նձ…»։

Ի՞նչ զորություն էր, որ այդպես անսպասելի կերպով հեղափոխեց նրա միտքը։ Այն զորությունը, որ ամեն կրքերից ավելի սաստիկ բռնանում է կնոջ զգացմունքների վրա— խանդոտությունը:

«Ես ճանաչում եմ նրան,— շարունակեց դառնացած կերպով,— նա՛ այնքան ցած չէր, որ ուրանար յուր կրոնը, նա՛ այնքան անգութ չէր, որ ոտնակոխ աներ յուր հայրենիքի բախտը, և նա՛ այնքան փառամոլ չէր, որ նրան հրապուրեր Շապուհի խոստացած թագավորությունը… Բայց նա՛ այդ բոլորը հանձն առեց և պարսից արքայի ձեռքում մի անարգ գործիք դարձավ միայն նրա քո՛ւյրը առնելու համար… Ինձ ասում էին, որ նա սիրահարված է Շապուհի քրոջ վրա, բայց ես չէի հավատում։ Այո՛, ես չէի հավատում, որ նա այն աստիճան անհավատարիմ կգտնվի դեպի յուր երկու զավակների մայրը, որ երկրորդ կին կբերեր Արծրունյաց տան մեջ… Ի՞նչ կլինի իմ դրությունը այնուհետև… Ես պետք է պարսից արքայազանի աղախինը դառնամ և նրա մաշիկները շփեմ… Իսկ գեղեցիկ Որմիզդուխտը[12] կլինի ո՛չ միայն Վասպուրականի Տիկնանց Տիկինը, այլ ամբողջ Հայաստանի թագուհին… Իսկ ե՞ս… Ո՛չ, ո՛չ, չա՜րժե մեռնել նրա համար… իսկ նա՛ ի՞նձ համար— արդեն մեռա՜ծ է…»։

Նստեց բազմոցի վրա, երկու ձեռքով ծածկեց երեսը, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից։ «Ա՜խ, Մերուժա՛ն, Մերուժա՛ն…»—հառաչում էր նա, և դողդոջուն ձայնը խեղդվում էր դառն հեկեկանքների մեջ։

Մի քանի անգամ բախեցին սենյակի դուռը։ Վերջապես լսեց նա, վեր կացավ, սրբեց աչքերը և տհաճությամբ մոտեցավ, բաց արավ դուռը։ Ներս մտավ աղախիններից մեկը։

— Ամենքը պատրաստվում են, տիկին,— ասաց նա,— չե՞ս հրամայում՝ հագցնել քեզ։

— Մտիր հանդերձարանը, Սիրանույշ, և դուրս բեր իմ սև զգեստները,— հրամայեց նա։

— Ինչո՞ւ սև, տիկին։

— Այսօր սո՜ւգի օր է, Սիրանույշ,— պատասխանեց նա վշտալի ձայնով...

Կեսօրից չորս ժամ անցել էր։

Մի խումբ ձիավորներ, փոշու ամպերի մեջ կորած, ամենայն արագությամբ արշավում էին Արեքանոսից[13] դեպի Հաղամակերտ տանող ճանապարհով։ Որքան մոտենում էին քաղաքին, այնքան ավելի փութացնում էին իրանց երիվարների ընթացքը։ Նրանց թիվը շատ չէր. մեկը ձիավարում էր ամենից առաջ, որ ձեռքում տանում էր մի կարմիր դրոշակ, նրա ետևից գնում էր մի սպիտակ ձիավոր, որ բոլորի գլխավորն էր երևում, իսկ հետո ինն ձիավորներ, ընդամենը տասնեմեկ հոգի։

Այդ գնում էր Մերուժան Արծրունին, գնում էր դեպի յուր նախահարց Ոստանը — իշխանական մայրաքաղաքը — Հաղամակերտ։

Այն կենդանի ճանապարհը, որով անցնում էր նրա ասպախումբը, և որը ամբողջ օրը լցված էր լինում երթևեկների ուրախ բազմությամբ, այժմ բոլորովին դատարկ էր։ Ոչ ոք չէր երևում։ Այդ շատ զարմացնում էր Մերուժանին։ Նա անհանգիստ կերպով աչք էր ածում յուր շուրջը։ Չէր փայլում հնձավորի մանգաղը, որ օրվա այդ զովարեր ժամուն ավելի եռանդով էր գործում. չէր լսվում հերկավորի երգը, որ կենդանացնում էր գեղեցիկ շրջակայքը, և անհոգ հովվի սրինգն անգամ լռել էր, ոչ ինքն էր երևում և ոչ յուր խաշինները։ Նրան այնպես էր թվում, որ անցնում է անապատների միջով, ուր կյանքն ու գործունեությունը վաղուց արդեն դադարել էին։

Բայց նա այլ բան էր սպասում...

Նա սպասում էր, որ յուր քաղաքացիք խուռն բազմությամբ կդիմավորեն իրան, այդ ճանապարհի աջ և ահյակ կողմերը ծածկված կլինեն արանց և կանանց խումբերով, և բազմությունը ցնծության աղաղակներով ու նվագարանների հնչյուններով կտանե նրան մինչև յուր իշխանական ապարանքը։ Բայց ոչ ոք չհայտնվեցավ։ Մինչև անգամ

յուր տոհմայիններից ոչ ոք չդիմավորեց նրան։ Միթե յուր գալուստը հայտնի չէ՞ր նրանց։ Այդ մասին մի օր առաջ իմացում էր տվել յուր մորը։ Ուրեմն ի՞նչ էր նշանակում այդ ընդհանուր բացակայությունը մարդիկների,— ա՛յդ անապատը։

Այդ միտքը վրդովեցնում էր նրան և լցնում էր նրա ալեծուփ սիրտը մի խուլ տարակուսանքով, որ հետզհետե կասկածի կերպարանք էր ստանում։ Ետ դառնալ՝ թույլ չէր տալիս նրա անսահման անձնասիրությունը, իսկ առաջ գնալու համար՝ ոչինչ բարիք չէր սպասում։ Գուցե կհանդիպեր յուր քաղաքացիների ապստամբությանը, գուցե գնդերը ձեռքում կդիմավորեին նրան... «Ինչ էլ որ պատահելու լինի, փո՛ւյթ չէ»,— մտածեց նա խորին սրտմտությամբ և վճռեց առաջ գնալ։

Վերջապես, հասավ նա քաղաքադռներին։ Նայեց դռան ճակատին և սոսկաց։ Այդ հոյակապ դուռը, որի բարձր կամարները ամեն մի հանդիսավոր մուտքերի ժամանակ զարդարած էին լինում ծաղիկներով ու դրոշներով,— այժմ ներկայացնում էր մի տխուր տեսարան։ Դռան ճակատը պատած էր սև պաստառներով, իսկ վերևում փողփողում էին երկու սև դրոշակներ։ Այդպես անում էին միայն այն ժամանակ, երբ երկրի իշխանի դագաղն էին ներս տանում։ Իսկ այժմ ո՞վ էր մեռյալը... ո՞ւմ համար էր այդ սգավորությունը...

Սրտի խորին բաբախմունքով ներս մտավ նա։

Առջևից գնացող դրոշակակիր ձիավորը առեց գոտից բարշ ընկած շեփորը և մի քանի անգամ հնչեցրեց։ Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ երեք անգամ լսելի եղավ Մայր եկեղեցու բարձրությունից։ Այդ ձայնը, որպես Երկնքի սպառնական ձայնը, տարածվեց «ուրացողի» վրա...

Նա շարունակեց առաջ գնալ։

Ուրախ, աղմկալի Հաղամակերտը ներկայացնում էր մի մեռյալ քաղաք։ Փողոցներում ոչ ոք չէր երևում, չէին երևում և անասուններ։ Ո՛չ մի ձայն չէր լսվում, ո՛չ մի շշունջ անգամ չէր խռովում ընդհանուր գերեզմանական լռությունը։

Այն փողոցը, որով գնում էր նա և որը ուղիղ տանում էր դեպի իշխանական ապարանքը, նրա վրա խիստ ծանր և սոսկալի տպավորություն էր գործում։ Հատակը ծածկված էր մոխրով[14]։ Բոլոր տների դռները փակ էին, իսկ դռների ճակատները նույնպես պատած էին սև պաստառներով։

«Իմ քաղաքացիքը,— մտածում էր նա,— երես են դարձրել ինձանից... նրանք իմ վրա նայել անգամ չեն կամենում... նրանք ինձ մեռած են համարում, այո՛, բարոյապե՛ս մեռած...»

Բարկությունը խեղդում էր նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները։ Եղել էին օրեր, երջանի՛կ օրեր, երբ նա հաղթական փառքով վերադառնում էր պատերազմից, այդ փողոցի հատակը ծածկված էր լինում ծաղիկներով ու կանաչ տերևներով։ Իսկ այժմ նրանց փոխարեն մոխիր էր ցանած։ Դռների ճակատները զարդարած էին լինում գորգերով, թավիշներով, գույնզգույն կերպասներով և ամենագեղեցիկ գործվածներով[15]։ Իսկ այժմ ամբողջ քաղաքը սուգ էր զգեցել։ Կանայք և աղջկունք, ծեր և տղա, տանիքներից ու լուսամուտներից ողջունում էին նրան։ Իսկ այժմ ոչ մի ձայն չէր լսվում։ Սիսյան քաղաքադռնից մինչև յուր ապարանքը հասնելը, ամեն մի քայլում զոհեր էին մատուցանում նրա առջև[16]։ Քահանայական դասը յուր ամբողջ սպասով, զգեստավորված ոսկեհուռ զգեստներով, խաչերով ու խաչվառներով առաջնորդում էին նրան և օրհնության շարականներ էին երգում[17]։ Ինքը շրջապատված էր լինում յուր ավագներով, իսկ առջևից տանում էին իշխանական տան նժույգները, զարդարած ամենաթանկագին ասպազենքով[18]։ Իսկ այժմ դրանցից և ոչ մեկը չկատարվեցավ...

Նա հասավ իշխանական ապարանքը, բայց դռները յուր առջև փակված գտավ։ Այդ սարսափեցրեց նրան։ «Ուրեմն ինձ մերժում է և՛ իմ տունը, և՛ իմ ընտանիքը...»— մտածեց նա խորին, սրտառուչ դառնությամբ։

Այստեղ ևս նույն տխուր, նույն հուսահատական տեսարանը ներկայացավ նրա առջև։ Իշխանական հոյակապ դռան փառավոր կամարները պատած էին սև պաստառներով, իսկ նրա աջ և ահյակ կողմերում փողփողում էին երկու սև դրոշակներ։

Անհնարին խռովության մեջ կանգնած էր նա հայրենական տան մուտքի առջև և չգիտեր ի՛նչ անել։ Այդ ահարկու մարդը, որի համար աշխարհում ոչինչ դժվարություններ, ոչինչ արգելքներ չկային, այժմ գտնվում էր բոլորովին անել և հուսահատ դրության մեջ։ Մտածեց ետ դառնալ։ Բայց ինչպե՞ս ետ դառնալ։ Ամոթը և նախատինքը խեղդում էին նրան։ Մտածեց բախել դուռը։ Իսկ եթե բաց չանեի՞ն։ Եվ անպատճառ բաց չէին անի։ Այդ աստիճան արհամարհանք, այդ աստիճան զզվանք նա չէր սպասում մորից և, մանավանդ, յուր կնոջից։ Նրան, որպես անառակ որդու, թողնում էին դրսում։ Դա մի ծա՞նր ապտակ էր նրա երեսին, դա մի դա՞ռն պատիժ էր նրա համար... Այդ բոլոր հանդերձանքը, այդ բոլոր ցույցերը ուղղակի ասում էին նրան. «Դո՛ւ արժանի չես ոտք դնելու հայրենական տան շեմքի վրա... «Ուրացողի» ոտքերը կպղծե՛ն նրան...»։

Նրա մարդիկն ևս գտնվում էին բոլորովին շվարյալ դրության մեջ, ոչ ոք նրանցից չէր համարձակվում մի բան ասել։

Գահի բարձրության վրա կար մի սյունազարդ վերնահարկ, բաց երեսով, որ պատշգամբի ձև ուներ։ Առջևից ծածկված էր վարագույրներով։ Վարագույրները ետ գնացին, վերևում հայտնվեցավ մայրը։ Տառապյալ կինը հազիվ հազ կարողանում էր իրան ոտքի վրա պահել։ Նրա ձախ թևքից բռնել էր աղջիկը՝ Մերուժանի քույրը, իսկ աջ թևքից բռնել էր հարսը՝ Մերուժանի ամուսինը։ Վերջինի առջևում կանգնած էին Մերուժանի երկու զավակները։ Դրանց ետևում կարգով կանգնած էր իշխանական ամբողջ ընտանիքը։ Ամենքը սգավորի հագուստով, ամենքը արտասվալի աչքերով։ Տեսնելով նրանց, Մերուժանը ամբողջ մարմնով դողաց։

— Մա՛յր,— խոսեց նա խռովյալ ձայնով,— իմ քաղաքացիքը ինձանից երես դարձրին, այժմ իմ հայրենական տո՞ւնն էլ յուր դռները փակում է իմ առջև...

— Այո՛, Մերուժա՛ն,— պատասխանեց վերևից մայրը դառնացած կերպով.— քո հայրենական տունը յուր դռները փակում է քո առջև, որովհետև դու քո սրտի դռները փակեցիր թե՛ աստուծո, թե՛ քո հայրենիքի և թե՛ քո խղճի առջև... Որդյակս, ապստամբը չէ կարող մտնել այդ տունը, Մերուժա՛ն... Այն օրից, որ դու դավաճանեցիր քո եկեղեցուն և քո թագավորին, այն օրից զրկվեցար այդ տան զավակը լինելուց... Դո՛ւ, Մերուժան, այժմ այդ տան համար խորթ ես և օտար, որովհետև դու արատավորեցիր Արծրունիների պայծառ հիշատակը... Ուղղությունը միայն կարող է փրկել քեզ, Մերուժան... Դարձի՛ր չար ճանապարհից, դարձի՛ր քո մոլորություններից... Լսի՛ր, Մերուժան, մոր ձայնը, որ դեռ սիրում է քեզ, որ յուր դառն արտասուքների հետ այդ խոսքերը թափում է քո առջև... Լսի՛ր, Մերուժան, մոր ձայնը, որովհետև նրա բերանով խոսում է ամբողջ Վասպուրականը... Եթե դու կամենում ես կրկին վայելել քո ընտանիքի և քո աշխարհի սերը, պետք է դառնաս չար ճանապարհից... Ահա՛ ուղիղ ճանապարհը, Մերուժան,— նա ձեռքը տարավ դեպի Մայր եկեղեցին և ապա շարունակեց.— Քո հայրերը, երբ հոգնած, վաստակած տուն էին վերադառնում պատերազմներից, նախ գնում էին եկեղեցին, գոհության աղոթք էին մատուցանում, և ապա գալիս էին իրանց ընտանիքի սերը վայելելու... Եթե դո՛ւ քո նախահայրերի հարազատ որդին ես, հետևի՛ր նրանց օրինակին... Այնտեղ, Մայր եկեղեցում, քահանայական դասը և քո քաղաքի ծերերը սպասում են քեզ... Գնա՛, Մերուժան, նախ եկեղեցին, հաշտվի՛ր Հիսուս Քրիստոսի հետ, լվա՛ քո մեղքերը, խոստովանի՛ր քո հանցանք-

ները սառուծս տաճարի մեջ, և ապա վերադարձիր, այն ժամանակ քո տան դռները բաց կգտնես քո առջև...

— Այդ երբե՞ք չէ կարող լինել,— մռնչաց նա և երեսը շուռ տվեց։

— Մայրի՜կ, մայրի՜կ,— վերևից լսելի եղան երկու երեխաների ձայներ.— ո՞ւր է գնում հայրիկը...

Այդ ձայները խոցոտեցին նրա սիրտը...

Է

ԽԱՅԹ

Մոսկայի խավարության մեջ, որպես մի խելագար, դուրս եկավ Մեհրուժանը Հադամակերտից։ Նրա ականջներին դեռ զարկում էին մոր կծու խոսքերը և, սուր սլաքների նման, թափանցում էին մինչև սրտի խորքը։ Նրանից չէին հեռանում կնոջ թախծալի դեմքը և սիրելի զավակների անմեղ ժպիտը, որոնք, տեսնելով հորը յուր տան վերնահարկի բարձրությունից, կամենում էին ծտի նման թռչել և թևատարած նրա գիրկն ընկնել։ Դեռ նրա առջևն էր սգազգեստ քաղաքը յուր բոլոր տխուր և սոսկալի երևույթներով։

Ի՞նչ էր այդ։ Յուր սրտին այնքան մոտ պատկերները, յուր համար այնքան թանկագին էակները այժմ, մթին ու մռայլ ուրվականների նման, հետևում էին նրան, հալածում էին նրան և ամենևին դադար ու հանգստություն չէին տալիս։

Այնտե՛ղ, հայրենական խաղաղ օջախի մոտ, ուր հույս ուներ նա մխիթարություն գտնել, այնտե՛ղ, յուր ընտանիքի ջերմ գրկում, ուր փափագում էր նա վայելել մոր օրհնությունը, կնոջ գգվանքը և յուր զավակների սերը,— այնտեղից մերժվեցավ նա, այնտեղից արտաքսվեցավ նա, որպես մի անառակ, որպես մի մոլորյալ որդի։

Կրքերի սաստիկ մաքառումը կատաղության չափ վրդովեցնում էր նրան։ Վասպուրականի տերն ու իշխանը այժմ նույն երկրի ապօրինի զավակն էր։ Նա՛, որ նայում էր այդ ընդարձակ աշխարհի վրա, որպես մի մոմի կտորի վրա, համոզված լինելով, որ նրան ամեն ձև և ամեն կերպարանք կարող էր տալ,— այժմ նույն աշխարհից մերժվեցավ։ Այո, մերժվեցավ, կորցնելով յուր նախնիքներից ստացած մեծ ժառանգությունը։ Ա՜յն, որ թշնամու ահագին զորությունները չէին կարող խլել նրանից,— խլեց մոր մի քանի խոսքը...

Ի՞նչ էր այդ։— Այդ հարցը նա անդադար տալիս էր իրան, և նրա վրդովմունքը ավելի և ավելի սաստկանում էր։

Յուր խռովության մեջ, դուրս գալով քաղաքից, ամենևին նկատել չէր կարողացել նա, որ ինքը միայնակ է։ Բավական հեռացել էր, երբ ետ նայեց, տեսավ, որ յուր թիկնապահները յուր հետ չեն։ «Որտե՞ղ են թողել ինձ»...— մտածեց նա, և մի դառն ծիծաղ անցավ կայրացած դեմքի վրա։

Նրա թիկնապահները հապաղել էին։ Հայրենի քաղաքի տեսքը տպավորությունների ներքո, որոնք այնքան սաստիկ ազդեցին նրանց սրտերի վրա, նրանք մոռացան իրանց իշխանին։ Մյուս կողմից, երկար տարիների բացակայությունը և ընտանիքի կարոտությունը ձգեց նրանց դեպի իրանց տները։

Արեգակը վաղուց արդեն մայր էր մտել, երեկոյան թանձր խավարը պատել էր շրջակայքը։ Միրաժանը այժմ միայն զգաց յուր բոլորովին լքյալ դրությունը։ «Ուր գնամ...»— այդ միտքը սկսեց տանջել նրան։ Երկրի տերը յուր երկրում մի անկյուն չէր գտնում գլուխը դնելու...

Սաստիկ հոգնած էր նա։ Վանա դժբախտ անցքերից հետո, ամբողջ երեք օր ճանապարհի վրա էր, առանց մի տեղ դադար առնելու։ Բոցի գրանից, հոգեկան ծանր տանջանքները բոլորովին վաստակաբեկ էին արել նրան։ Որոնում էր մի տեղ փոքր-ինչ հանգստանալու։ Գյուղերը մտնել չէր կարող, գյուղացոց կասկածությանը չհանդիպելու համար։ Ո՞ւր գնար։ Ամեն տեղ գիտեին նրա մասին, ամեն տեղից հալածված էր նա։ Այդ բոլորը անցնում էր նրա մտքով, և նա, առանց մի որևէ որոշման հասնելու, շարունակում էր քշել յուր ձին, թեև չգիտեր, թե ուր է գնում։ Հոգնած էր և ձին, որ դժվարությամբ էր փոխում քայլերը։

Հոգնածության հետ սկսեց տանջել նրան և քաղցը։ Ամբողջ օրը ոչինչ չէր կերել։ Նա, իբրև պատերազմական մարդ, սովոր էր բացօթյա կյանքին, կարող էր մի ժայռի, մի ծառի ներքո գլուխը դնել և հանգստանալ։ Բայց ի՞նչ անել քաղցի հետ։ Բնությունը իրանը պահանջում էր։ Մյուս կողմից, մի խուլ կասկած աշխատում էր նրան։ Այդ վերին աստիճանի աներկյուղ և անձնավստահ մարդը սկսել էր տատանվել։ «Իսկ եթե հետամուտ լինեն ինձ»։— մտածում էր նա։ Յուր քաղաքում մեր երկյուղից ոչ ոք չհամարձակվեցավ նրա վրա քար նետել։ Մայրը, հնարելի, ամենախիստ պատվերնե՛ր տված կլիներ այդ մասին։ Բայց ո՞վ էր արգելում մի քանի ստահակների՝ գաղտնի դուրս գալ քաղաքից և նրա ետևից ընկնել։ Նա կյանքից երկյուղ չուներ, բայց կյանքը նրա նպատակների համար հարկավոր էր։ Այդ մտքով շուռ տվեց յուր ձիու գլուխը և դուրս եկավ ուղիղ ճանապարհից։

Դուրս գալով ուղիղ ճանապարհից, զգուշավորություն ուներ՝ խոտորնակի շավիղներով հասնել մի ամայի տեղ, փոքր-ինչ հանգստանալ և ձիուն հանգստացնել, և ապա շարունակել յուր ուղին։ Նա աշխատում էր չկորցնել գիշերային խավարը, այլ մթնով դուրս գալ յուր իշխանության սահմանից, որը արևելյան կողմից շատ հեռու չէր։ Այստեղ ամեն ոք կարող էր ճանաչել նրան, այստեղ նա վտանգի մեջ էր։

Երկար ձիավարում էր, բայց տակավին մշակության դաշտերի և անդաստանների միջից չէր դուրս եկել։ Մշակությունը նշան էր մարդու ներկայության, որից խորշում էր նա։ Որոնում էր անապատ, ամայություն։ Տեղորայքը որքան և ծանոթ էին նրան, այնուամենայնիվ, մթին խավարը արգելում էր որոշել, թե ո՛րտեղ է գտնվում։ Նա անցնում էր անգիտակցության և տարակուսանքների միջով։ Վերջապես, դուրս եկավ մշակված դաշտերից։ Այժմ նրա առջև տարածվում էին խոտավետ մարգագետիններ։ Այդ արդեն նշան էր, որ մոտենում է լեռների ստորոտներին։

Մի քանի անգամ նրա ականջներին զարկեց շան հաչելու ձայն։ Ոչինչ ձայն չէր կարող նրան այնքան ախորժելի լինել, որպես այդ ձայնը։ Մտածեց՝ կամ հովիվների է մոտեցել, կամ որսորդների։ Թե առաջինները և թե վերջինները նրա համար անվնաս մարդիկ էին։ Ձիու գլուխը դարձրեց այն կողմը, որտեղից լսվում էր ձայնը։ Երբ բավական մոտեցավ, մեկ շան տեղ սկսեցին հաչել մի քանիսը։ Նա շարունակում էր գնալ, մինչև շները խմբով առաջ վազեցին և նրա ճանապարհը կտրեցին։ Անհնար էր ազատվել այդ գազաններից։ Նա յուր հետ մի այլ զենք չուներ, բացի դաշույնից։ Հասկացավ, որ հովիվների հանդրվանին է մոտեցել։ Բայց վիրավորել կամ սպանել հովվի շանը,— այդ նշանակում է՝ սպանել նրա եղբորը կամ լավ բարեկամին։ Այնուհետև պետք է գործ ունենալ ուղղակի հովվի հետ։ Նա միայն պաշտպանողական դիրք բռնեց։ Կատաղի գազանները ամեն կողմից շրջապատել էին նրան և ամենահանդուգն կերպով հարձակումներ էին գործում։ Անտարակույս պատառ-պատառ կանեին, եթե ձին չպաշտպաներ նրան։ Որ կողմից որ հարձակվում էին, քացախրտ անասունը իսկույն շուռ էր գալիս և աքացի էր տալիս։

Շների աղմուկից, նիզակը ձեռին, մոտ վազեց մի հովիվ, որը խավարի միջից հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ գործ ունես այստեղ։

Նա պատասխանեց.

— Նախ հանգստացրո՛ւ շներիդ, հետո կիմանաս, թե ես ով եմ։

— Իմ շները չեն հանգստանա, մինչև դու չասես, թե ով ես։

Նկատելով, որ կոպիտ Հոլլի հետ վիճելը բոլորովին անպտուղ կլինի, ասաց նա.

— Ես Օրսիրանի սեպուհն եմ, որսորդության ժամանակ մութը վրա հասավ, մոլորվեցի և կորցրի իմ մարդիկներին։

Պատասխանը ոչ միայն գոհացուցիչ էր, այլ շատ փաղաքշական էր Հոլլի համար, որ Օրսիրանի բարձրաստիճան սեպուհը, հանգամանքներից ստիպված, նրա տաղավարում գիշերային պատսպարան էր խնդրում։ Նա ասաց, շնորհ լինեցին։ Հետո մոտենալով, բռնեց ձիու սանձից, ասաց.

— Հետևիր ինձ, տե՛ր սեպուհ։

Շները նկատելով, որ իրանց մեծավորը որպիսի՛ բարեկամությամբ վերաբերվեցավ դեպի եկվորը, իրանք ևս հանգստացան, և յուրաքանչյուրը գնաց յուր տեղը։

Տարաժամ հյուրին Հոլլին տարավ յուր տաղավարը, որը այնքան հեռու չէր։ Իսկույն լապտերը վառեց և, տարածելով տաղավարի հատակի վրա մի թանձր թաղիք, խնդրեց նստել, իսկ ինքը մնաց ոտքի վրա՝ նրա սպասում։

— Նստի՛ր և դու, բարի Հոլլի,— ասաց նրան Միրուժանը,— մի ծածկի տակ հյուրը և հյուրընկալը պետք է հավասար բարձի վրա նստեն։ Հանգամանքները ինձ բերեցին քո տաղավարը, և ես շատ ուրախ եմ, որ լավ մարդու հանդիպեցի։

— Բայց ինձ պետք է նախ իմ հյուրի հանգստության մասին հոգալ, տե՛ր սեպուհ,— պատասխանեց Հոլլին, ոտքի վրա մնալով։— Ճանապարհից եկած մարդը ուտելու պետք կունենա։

— Իզուր նեղություն մի՛ կրիր,— ասաց հյուրը։— Ինչ որ աստված տվել է, ինչ որ պատրաստի կա, ես նրանով ևս կգոհանամ։ Քեզ մոտ, իհարկե, հաց կամ պանիր կգտնվի, իսկ եթե փոքր-ինչ մածուն ավելացնես, դա ինձ համար ամենապատվական ընթրիք կլինի։ Ես իրավ շատ քաղցած եմ։

Տաղավարը մի շարժական քառակուսի սենյակի նմանություն ուներ, որի ստորին մասը կազմված էր բարակ և կլորիկ ձողերից, որոնք միմյանց հետ կապված էին գույնզգույն գերձանների հյուսվածքով, որ զանազան նկարներ էին ձևացնում։ Իսկ ձեղունը պատած էր նույնպես գունավոր հաստ կապերտներով, որ տարածված էին գմբեթաձև սատակի վրա։ Դեպի ամեն կողմ նայելիս, աչքի էր զարկում մի առանձին չքնաղություն, որ հասարակ Հոլլի կացարանի համար բավական շռայլ էր։ Այդ դրդեց Միրուժանին հարցնել.

— Ո՞ւմ հոտերն են արածում այստեղ։

— Տերունի են,— պատասխանեց հովիվը մի առանձին ձայնով, որ արտահայտում էր նրա անմեղ հպարտությունը։

Միրուժանի դեմքի վրա անցավ մի թեթև շփոթություն, և նա երեսը իսկույն շուռ տվեց, որ հյուրընկալը չնկատե յուր խռովությունը։ «Տերունի՜»,— մտածեց նա, և մնաց շվարած։ Նա գտնվում էր յուր սեփական հովիվների տաղավարում։ Հոտերը «տերունի» էին, այսինքն՝ պատկանում էին իշխանական տանը։ Հովիվը, ինչպես երևում էր, չէր ճանաչում յուր տիրոջը։ Բայց միթե չէ՞ր գտնվի նրա ընկերների մեջ մեկը, որ ճանաչեր նրան։ Նա քաշվեցավ դեպի տաղավարի մթին անկյունը, ասելով.

— Այդ լապտերը փոքր-ինչ հեռացրու, և ավելի լավ կանես, եթե դրսում քարշ տաս։ Իմ աչքերը սաստիկ խորշտվում են լույսի վրա նայելիս։ Առանց դրան էլ, շուտով լույս կլինի։ Ահա՛, լուսինը դուրս է գալիս։

Հովիվը կատարեց հրամանը և հեռացավ ընթրիք պատրաստելու։ Նա յուր ընկերների գլխավորն էր երևում։ Իսկույն մի գառն մորթեցին և տաղավարից փոքր-ինչ հեռու կրակ վառեցին՝ թաժա հաց թխելու համար։ Իսկ գլխավորը, յուր հյուրին միայնակ չթողնելու համար, կրկին վերադարձավ նրա մոտ։

Միրուժանը տակավին գտնվում էր այն մտածության մեջ, թե ինքը որոգայթի մեջ էր ընկած, և թե Նախախնամության կամքը մատնեց իրան այդ պարզամիտ հովիվների ձեռքը, որոնք, որքան բարի էին, նույնքան ավելի անհամբեր էին դեպի ամեն վատություն։ Նրանց համար տերը, իշխանը ոչինչ նշանակություն չուներ, եթե աստուծո ուղիղ ճանապարհով չէր գնում։ Բայց Միրուժանը սիրում էր ճակատագրի խաղերը, և անհամբերությամբ սպասում էր, թե ինչո՞վ կվերջանա այդ դառն կատակը։

— Նստի՛ր,— կրկին դարձավ նա դեպի հովիվը։— Դու քո գործը վերջացրիր, այժմ կարող ես նստել։ Ինչպե՞ս է քո անունը։

Հովիվը դարձյալ չհամարձակվեցավ տաղավարի ներսումը նստել, այլ տեղավորվեց մուտքի մոտ, դրսումը, և մի առանձին բավականությամբ պատասխանեց.

— Դու իմ անո՞ւնն ես հարցնում, տե՛ր սեպուհ։— Տերտերը իմ անունը Մանեճ դրեց, բայց մարդիկ Մանի են կոչում։

— Ես էլ Մանի կկոչեմ, այդպես ավելի լավ է։— Ասա՛ ինձ, բարի Մանի, որտե՞ղ է այժմ քո տերը, ի՞նչ լուր ունես Միրուժանից։

Այդ անունը լսելիս՝ հովվի արևից այրված դեմքը ավելի մռայլվեցավ և, յուր խռովությունը ծածկելով, ասաց.

— Ի՞նչ գիտեմ, տե՛ր սեպուհ, այդ դու պետք է լավ գիտենաս, թե որտե՛ղ է նա և ի՛նչ է շինում... Այստեղ, այդ լեռների մթության մեջ, մեզ խիստ սակավ լուրեր են հասնում, և ինչ էլ որ հասնում են, տխո՜ւր են, շատ տխո՜ւր... բոլորովին այրում են մարդու սիրտը...

Երևում էր, որ տիրասեր Մանին չէր կամենում Որսխրանի սեպուհի առջև, որպես մի օտար մարդու մոտ, անվայել կերպով վերաբերվել դեպի յուր իշխանը, թեև նրա մասին շատ սակավ բան գիտեր, բայց որքան էլ և գիտեր, յուր համար սատտիկ անմխիթարական էին։

Մոտ վաթսուն տարեկան կլիներ Մանին, բայց տակավին պահպանել էր յուր երիտասարդական ժրությունը։ Վասպուրականի լեռների հովիվները դարերով են ապրում և հազիվ են ծերանում։ Խոշոր մարդ էր նա՝ դեմքի նույնպես խոշոր գծագրությամբ, որ արտահայտում էր անկեղծ և ամուր բնավորություն։ Աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի թախծություն։

— Դու տեսե՞լ ես Մերուժանին,— հարցրեց ծպտյալ սեպուհը։

— Տեսել եմ, ինչպես չեմ տեսել,— պատասխանեց նա վշտալի ձայնով։— Բայց այն ժամանակ դեռ շատ երիտասարդ էր, ընչացքները դեռ նոր էին սկսել աճել։ Հետո գնաց Պարսկաստան, այնտեղ պարսից անօրեն թագավորը խելքից հանեց նրան... Այնուհետև շատ ժամանակ է, որ չեմ տեսել։

— Այդ բոլոր հոտերը Մերուժանի՞ն են պատկանում։

— Բոլորը, տե՛ր իմ։ Երկնքի աստղերը թիվ և համբարք ունեն, բայց նրա անասունները չունեն։ Այստեղ միայն արածում են նրա ոչխարների հոտերը. յուրաքանչյուր հոտը միագույն է և միատեսակ. սևը առանձին, ճերմակը առանձին և մյուս գույները իրանց կարգով։ Բայց անցի՛ր, տեր սեպուհ, այդ լեռան մյուս կողմը, այնտեղ կտեսնես նրա այծերի հոտերը, դարձյալ յուրաքանչյուրը դասավորած իրանց գույների և բուրդերի համեմատ։ Մի փոքր հեռու գնա՛, տեր սեպուհ, դեպի Երվանդունիք[2], այնտեղ կտեսնես նրա ձիաների, ջորիների և ավանակների երամակները և կհիանաս նրանց վրա նայելիս։ Այնտեղից անցի՛ր, տեր սեպուհ, դեպի Անձևացյաց[3] կողմերը, այնտեղ կտեսնես նրա արջառները, կովերի և եզների նախիրները։ Հետո գնա՛, տեր սեպուհ, դեպի Տիգրիսի ջերմաստն ափունքը, դեպի Ջերմաձոր[4], այնտեղ ճահճային եղեգնաբույսերի մեջ արածում են նրա գոմեշների գեր ու պարարտ խումբերը։— Մի խոսքով, ինչո՞ւ իզուր գլուխդ ցավացնեմ, տե՛ր սեպուհ, սկսյալ Զարևանդից[5] մինչև Կորդիք[6] և այնտեղից մինչև Վանա

ծովակը, Մերուժանի անասուններն են արածում։ Ո՞վ ունի այդքան անչափ հարստություն, որքան նա ունի։ Աստված նրան ամեն կողմից լիացրել էր, աստված նրան շա՜տ էր տվել, բայց նա չիմացավ գոհացնել յուր աստծուն...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին ծերունու ձայնը զգալի կերպով դողդողաց։

— Գալի՞ս է յուր անասունները տեսնելու։

— Ոչ մի անգամ չի եկել։ Նա չգիտե, թե ի՞նչ ունի և որքա՞ն ունի։ Նա մանկությունից սկսած միայն կռիվներով զբաղվել և յուր գործին չնայել։ Բայց այդպես չէր հանգուցյալ հայրը։ Ամեն տարի, աշնան ժամանակը, կգար։ Մենք առաջուց կլվանայինք, կմաքրեինք ոչխարները, և սպիտակ, ձյունափայլ հոտերը կհանեինք նրա առջև։ Նա կնայեր և փա՜ռք կտար աստծուն։ Այդ տաղավարի մեջ շատ անգամ կերակրել եմ նրան։ Ուտեր և մեծ բավականությամբ կուտեր հովվի աղքատիկ ճաշը։

— Այժմ ո՞վ է նայում այդքան հարստությանը։

— Տիկինը։ Թո՛ղ աստված նրան երկար կյանք տա և մեր գլխից միշտ անպակաս անե։ Նա խելքի և իմաստության մի մեծ ծով է։ Հանգուցյալ նահապետի մահից հետո նա է կառավարում բոլոր գործերը։ Կգա, կտեսնե, կուրախանա և ամեն բանի մասին հարցուփորձ կանե։ Նա ո՛չ միայն ճանաչում է յուր բոլոր հովիվներին՝ իրանց անուններով և տեղերով, այլ ճանաչում է յուր անասուններից շատերին։ Գիտե, որը որքա՛ն է մեծացել, կամ որը քանի՛ ձագ է բերել։ Նա էլ ինձ Մանի է կանչում։ Ախորժելի է լինում ծառային, երբ տերը նրան ճանաչում է և յուր անունով է կանչում։ Բայց այդպես չէ Մերուժանը, եթե մոտիցը անցնելու լինեմ, չի իմանա, թե ես ով եմ, թեև քառասուն տարի ես նրանց անասունների վրա կյանք եմ մաշում։ Այդ փոքր ժամանակ չէ՛, տե՛ր սեպուհ...

— Ի՞նչ են անում այդքան անասունները։

— Գիտես հարցնո՜ւմ ես, տե՛ր սեպուհ,— ասաց նա, և մի զարմացական ժպիտ անցավ նրա բարի դեմքի խորշոմների միջով։— Ամեն շաբաթ հարյուր հատ ամենաընտիր խոյերից ուղարկում եմ իշխանական տան խոհանոցի համար։ Գիտե՞ս, որքա՜ն մարդիկ այնտեղ ճաշ են ուտում։ Ամեն օր մի քանի հարյուր հոգի սեղան են նստում[1]։ Այնպես էլ յուղը, պանիրը, մածունը,— բոլորը գնում է իշխանական տունը։ Հետո, ընծաներ են լինում, աղքատներին են բաժանում, մատաղ են անում, բայց աստված այնքան առատություն է պարգևել, որ այդքան ծախսվում է և երբեք չէ պակասում։

Մինչդեռ անծանոթ տերը և յուր հովիվը այդպիսի մտերմական խոսակցության մեջ էին, լուսինը արդեն բավական բարձրացել էր հորիզոնից, և լուռ ու խաղաղ շրջակայքը հանգչում էր սքանչելի լուսավորության մեջ։ Տաղավարի հանդեպ, փոքր-ինչ հեռու, վառվում էր կրակը, և նրա բոցափայլ լույսի միջից երևում էին մյուս հովիվները, որ բոլորել էին կրակի շուրջը։ Նրանցից ոմանք փայտյա շամփուրներով պառատ միս էին խորովում, ոմանք երկաթյա կասկարայի վրա թաժա հաց էին թխում, բայց, միևնույն ժամանակ, չէին դադարում շատախոսել, ծիծաղել և զանազան պատմություններ անել իրենց որսկանցի հյուրի մասին։

Որսկանցիք հայտնի էին իրանց օտարոտի սովորություններով, այդ պատճառով ժողովրդի բերանում ստեղծված բոլոր ծիծաղելի առակները նրանց էին վերաբերում։ Հովիվներից մեկը ասաց.

— Երկու որսկանցիք հյուր եղան մեկ տան մեջ. տանտիկինը սև պողուճն ու սև չամիչը խառնեց միմյանց և դրեց նրանց առջև։ Պողուճներն սկսեցին փախչել։ Ընկերը ընկերին ասաց.— «Առաջ այդ ոտովներն ուտենք, քանի դեռ անոտներն քնած են»։

Ամենքը ծիծաղեցին, և յուրաքանչյուրը սկսեց յուր լսածն ու իմացածը պատմել։ Երկար պատմում էին նրանք և երբեմն առանձին-առանձին մոտենում էին տաղավարին, հեռվից հետաքրքրությամբ նայում էին որսկանցի հյուրի վրա, կարծես, ստուգելու համար, թե ո՛րքան ճըշմարիտ էին իրանց պատմածները։

Ընթրիքի սեղանը Միրուժանի սպասածից ավելի ճոխ գտնվեցավ։ Փայտյա խանի մեջ դրվեցավ նրա առջև թաժա հաց, պանիր, երկու գլուխ սոխ, իսկ խորովածը շամփուրներով տաք-տաք բերում էին, երբ սպառվում էր, դարձյալ կրկնում էին։ Այն մարդը, որ հայոց թագավորի սեղանի մոտ նախապատիվ և առաջնակարգ նախարարի բարձ ուներ[8], այն մարդը, որ պարսից թագավորի հետ շատ անգամ մեկ թախտի վրա էր ճաշել, երբեք այնպիսի ախորժակով չէր կերել, որպես ուտում էր նա հովվի պարզ սեղանից։ Բարեխիղճ Մանիի մոտ գտնվեցավ մինչև անգամ գինի։ Երբ սեղանը դրեցին, նա անցավ տաղավարի մի կողմը, մատներով փորեց գետինը և դուրս բերեց մի խեցեղեն փոքրիկ աման, ասելով.

— Ես գինին միշտ այդպես թաղում եմ, այդպես ավելի լավ է լինում, տե՛ր սեպուհ, թե սառն կմնա և թե արևի տաքությունից չի քացախի։

Միրուժանը խնդրեց նրան, որ ինքն ևս սեղանակից լինի, որը մեծ դժվարությամբ ընդունեց. ասելով.

— Այդ ինձ համար չափազանց մեծ շնորհ է, տեր սեպուհ։ Թո՛ղ ծերունի Մանին առիթ ունենա մարդկանց մոտ պարծենալու, որ յուր կյանքում մի անգամ մի սեպուհի հետ հաց է կերել։

Նա նստեց և գինու ամանը դրեց յուր մոտ։

Առաջին թասը Մերուժանը քամեց մինչև վերջին կաթիլը։ Այդ տեսնելով, Մանին խրախուսվեցավ և սկսեց թե ինքը խմել, և թե ավելի հաճախ մատուցանել թասը յուր հյուրին։ Երբ բավական խմել էին, նա դարձավ դեպի հյուրը, հարցնելով.

— Ասա՛ ինձ, տե՛ր սեպուհ, դու ի՞նչ համբավ ունես Մերուժանից։ Դու աշխարհի մարդ ես, գիտես նրա չարն ու բարին։ Մենք կտրված ենք աշխարհից, չգիտենք, թե ո՛րտեղ ի՞նչ է կատարվում։ Ճշմարի՞տ է ա՛յն, որ խոսում են...

— Ի՞նչ են խոսում։

— Ի՞նչ ասեմ... դու ինձանից լավ գիտես, տե՛ր սեպուհ... լեզուս չէ բռնում, որ ասեմ...

— Ես էլ ուղիղը չգիտեմ, բարի Մանի՛... շատ բան են խոսում... ո՞ր մեկին կարելի է հավատալ... Ես միայն այդքանը գիտեմ, որ շուտով կգա Մերուժանը և, շատ կարելի է, որ նա հայոց թագավոր դառնա...

Հովվի խորշոմներով պատած դեմքը բոլորովին մռայլվեցավ. վերջին խոսքերը փոխանակ ուրախացնելու նրան, որ յուր տերն ու իշխանը թագավոր է դառնալու, ընդհակառակն, ավելի տխրացրին։

— Այդ լավ չէ,— ասաց նա վշտալի ձայնով.— այդ աստուծո կամքին հակառակ բան է։ Թագավորը պետք է թագավոր լինի, իսկ իշխանը՝ իշխան։ Աստված ինձ կպատժեր, եթե ես մտածեի Մերուժան լինել։ Ես նրա հովիվն եմ և պետք է գոհ լինեմ իմ վիճակով։

— Բայց Մերուժանի նախնիքը նույնպես թագավորներ են եղել[9],— ընդհատեց հյուրը։

— Այդ ես չգիտեմ, եղե՞լ են, թե ոչ, գուցե եղել են։ Բայց ի՞նչ ուներ նա պակաս մի թագավորից։ Նա հենց յուր աշխարհի թագավորն էր։ Երասխից սկսած մինչև Վանա ծովակը տարածվում է նրա իշխանության երկիրը[10]։ Մի՞թե Արշակ թագավորը այդքան երկիր ունի։ Ես շատ եմ թափառել, տե՛ր սեպուհ, ես շատ տեղեր եմ տեսել։ Ես տեսել եմ Արշակ թագավորի ձիաների երամակները, տեսել եմ և նրա ոչխարների հոտերը, բայց մեր ունեցածի կեսը, կեսի կեսը չեն լինի։ Ես տեսել եմ Արշակ թագավորի արքունության լեռները և նրա անասունների արոտամարգերը. դարձյալ մեր ունեցածի չափ չեն լինի։ Այլևս ի՞նչ ուներ պակաս Մերուժանը, որ աստուծո կամքին հակառակ գնար... և թե՛ յուր հոգուն և թե՛ յուր աշխարհին մեղք ավելացներ... Դա՞ռն է այդ բոլորը,

շատ դա՛ռն, տե՛ր սեպուհ... Թող աստված ինքը մի ողորմություն անե, չարը խափանե և բարին առաջնորդե...

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին, նա լցրեց թասը, նայեց դեպի երկինքը և աղոթելով դատարկեց, կարծես սրտի բոցն ու կրակը հանգցնելու համար։

Մեհրուժանը զգացվեցավ։ Մի խուլ խայթ սկսեց խայթել նրա սիրտը...

Երկրորդ թասը լցրեց նա և առաջարկեց յուր հյուրին, ասելով.

— Խմի՛ր, տե՛ր սեպուհ, դու ևս խնդրի՛ր, որ աստված չարը խափանե և բարին առաջնորդե։ Մեհրուժանը որպես իմ, նույնպես և քո իշխանն է։ Ես նրա նվաստ հովիվն եմ, իսկ դու նրա հարգելի սեպուհներից մեկն ես։ Աղոթե՛նք մեր իշխանի համար. Տեր Ամենակալը կլսե մեր ձայնը։

Դողդոջուն ձեռքով ընդունեց նա բաժակը և մնաց շփոթված, տատանման մեջ։ Նա պետք է աղոթեր յուր չարությունների համար, նա պետք է աղոթեր ա՛յն աստուծուն, որին, պարսից արքայի առջև, հրապարակավ ուխտել էր չճանաչել։ Նա պետք է աղոթեր, որ այդ աստվածը դարձներ իրան չար ճանապարհից։ Նա պետք է յուր լեզվով կարդար յուր մեղայականը։ Բայց ի՞նչ սրտով կարդար։— Դեռ չզղջացած, դեռ չհաշտված սրտով։— Այդ խիստ ծանր էր նրա համար։ Յուր հյուրընկալը սաստիկ դժվարին դրության մեջ դրեց նրան։ Ինչպե՞ս կեղծել, ինչպե՞ս խարդավանել։ Երկար տատանումներից հետո, վերջապես, կրկնեց նա յուր հովվի խոսքերը և թասը դատարկեց...

Նա իսկույն հեռացավ սեղանից։ Հովիվը նկատեց նրա թախծությունը և կարեկցաբար հարցրեց.

— Դու, տե՛ր սեպուհ, որպես ճանապարհից եկած մարդ, երևում է, որ շատ հոգնած ես։ Ես իսկույն կպատրաստեմ քո անկողինը։ Անուշ քունը միակ դարմանն է հոգնածության։ Քո անկողինը թեև անշուք կլինի, բայց հանգիստ կլինի։ Քեզ կտամ իմ վերարկուն, կփաթթվես նրա մեջ և կքնես։ Իսկ բարձի փոխարեն այդ աստրակը կդնես գլխիդ տակին։ Նա լցրած է խիստ փափուկ խոտով, փետուրից ավելի կակուղ է այդ խոտը։

Մեհրուժանը, շնորհակալություն հայտնելով բարեսիրտ հովվի հոգածությունների համար, ասաց.

— Գիշերը գեղեցիկ է, Մանի, իսկ սիրուն լուսինը խլեց իմ քունը։ Բայց քո գինին այնքան ախորժելի էր, որ բորբոքեց իմ գլուխը։ Կցանկանայի մի փոքր ման գալ, մի փոքր ցրվել դրսի ամբոխումները։ Առաջնորդի՛ր ինձ, բարի Մանի, որ քո շները կրկին չխանգարեն ինձ։

Միրուժանը վեր կացավ, իսկ Մանին առեց յուր ցուպը, ընկավ նրա առջևը, հարցնելով, թե դեպի ո՞ր կողմն է ցանկանում գնալ։

— Դեպի լեռան կողմը,— պատասխանեց նա։

Նրանք անցան անտառների լուռ և խաղաղ հանգրվանի միջով և մոտեցան լեռան ստորոտին։

— Դու ինձ միայնակ թող, բարի Մանի,— ասաց նրան Միրուժանը։— Այստեղ ես փոքր-ինչ կթափառեմ, հետո կնստեմ մի ժայռի վրա և նրա բարձրությունից կնայեմ, թե ի՛նչպես լուսինը սահելով ընթանում է թափանցիկ ամպերի տակով, և կլսեմ լեռնային վտակի անուշ ձայնը։

Պարզամիտ Մանին ոչ սակավ զարմացած էր իշխանի հուզված տրամադրության վրա, որ մի առանձին հոգեզմայլության մեջ էր գտել նրան։ Այդ անակնկալ փոփոխությունը վերաբերում էր նա գինու ազդեցությանը։ Եվ կամ, ո՞վ գիտե, ի՛նչ անհայտ զգացմունքներ ալեկոծում էին նրա սիրտը։ Նա յուր հյուրին թողեց միայնակ և, տալով նրան յուր սրինգը, ասաց.

— Մնացի՛ր այստեղ, տե՛ր սեպուհ, որքան և քո սիրտը կհաճի, և վայելի՛ր լավ գիշերի քաղցրությունը։ Բայց երբ կցանկանաս կրկին վերադառնալ իմ տաղավարը, հնչեցրու այդ սրինգը, ես կլսեմ, կգամ և կտանեմ քեզ։ Մեր շները բավական չար են, տե՛ր սեպուհ։

— Շնորհակալ եմ, բարի Մանի,— ասաց նա և ընդունեց սրինգը։

Հովիվը հեռացավ։

Միրուժանը մնաց միայնակ։ Երկար նա, խորին այլայլության մեջ, թափառում էր լեռան ստորոտում և յուր սրտի հուզմունքներին հանդարտություն տալ չէր կարողանում։ Տխո՛ւր էր նա այն հուսահատական տխրությամբ, որ մարդուն անհնարին շվարման մեջ է դնում։ Երբեք նրա հզոր կամքը այնպես տկարացած չէր եղել, որպես այս գիշեր։ Երբեք նրա անվրդով ինքնավստահությունը այնպես թուլացած չէր եղել, որպես այս գիշեր։ Նա հենվեցավ մի ժայռի վրա և կանգ առեց։ Նայում էր դեպի յուր շուրջը տիրող մռայլը, որ լուսավորված էր լուսնի աղոտ լույսով։ Նայում էր դեպի թախծալի երկինքը, որ պատած էր մոխրագույն ամպերով։ Լուսինը երբեմն հայտնվում էր, երբեմն ծածկվում էր ամպերի անթափանցիկ պատառների տակ։ Եվ նրա հետ խավար շրջապատը րոպեապես լուսավորվում էր և դարձյալ խորասուզվում էր գիշերային մթության մեջ։ Այսպես երբեմն երևում էին նրան հույս և բաղձանքների պայծառ նշույլները, և դարձյալ ընկղմվում էին անստուգության անվերծանելի խավարի մեջ...

Հոգնած էր նա, հոգնած էր հոգով, հոգնած էր և մարմնով։ Նստեց

ժայռի վրա։ Նստեց յուր լայնատարած իշխանության մի կտոր քարի վրա, որպես մի փախստական, որպես մի թշվառ արտաքսյալ, որ յուր սեփական երկրի վրա յուր ոտքը դնելու մի հաստատ կետ չուներ։ Մտաբերում էր այն օրվա տխուր անցքերը, մտաբերում էր յուր մոր և յուր հովվի կծու խոսքերը, և նրա սիրտը խոցոտվում էր դառն կսկիծներով...

Նա ցած իջավ ժայռից, կանգ առեց և յուր լի սրտմտությամբ դեմքը դարձնելով դեպի երկինքը, արտասանեց հետևյալ խոսքերը.

«Ի՞նչը ձգեց ինձ այդ թշվառ դրության մեջ... Արդյոք փառասիրությո՞ւնը... Ո՛չ, հազար անգամ ո՛չ... Հայոց գահը, Հայաստանի թագըն ու գավազանը, որ խոստացավ ինձ պարսից Շապուհ արքան, երբե՛ք չէին կարող հրապուրել ինձ, երբե՛ք չէին կարող մի անարգ գործիք դարձնել ինձ պարսից արքայի ձեռքում... Ես այնքան վատ չէի, ես այնքան անմիտ չէի, որ ոտնակոխ անեի սուրբ պարտականությունը և ապստամբվեի իմ թագավորի դեմ... Ես ավելի մեծ հոժարությամբ կընդունեի մահը և իմ պատիվը ինձ հետ գերեզման կտանեի, քան թե իմ ճակատի վրա կընդունեի դավաճանի սև կնիքը... Ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այդ ճշվառ դրության մեջ... Արդյոք վրեժխնդրության անզուսպ կի՞րքը, արդյոք արյան անշեջ ծարա՞վը... Դարձյալ ո՛չ... Արդարև, իմ հայրերը, իմ ամբողջ ազգատոհմը սրի ճարակ դարձան և անխնա կերպով խողխողվեցան Արշակունիների ձեռքով[11]... Եվ սկսյալ մանկությունից վրեժխնդրության սրբազան պարտքը միշտ բորբոքում էր ինձ՝ վրեժխնդիր լինել և դրանով հաշտվել իմ նախահարց ուրվականների հետ, որ ամեն րոպե և ամեն վայրկյան տանջում էին ինձ... Բայց ես չէի ցանկանա իմ նախահարց արյան վրեժը Արշակունիների թագավորության կործանման մեջ գտնել և իմ դավաճանությամբ հափշտակած գահը դնել նրանց դժբախտ ավերակների բեկորների վրա... Ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այդ թշվառ դրության մեջ... Ի՞նչը հարկադրեց ինձ՝ ուրանալ իմ աստուծուն, ուրանալ հայրենական կրոնը, ուրանալ ամեն ինչ, որ նվիրական էր ինձ համար, և երկրպագություն տալ պարսից աստվածներին... Ի՞նչը քարացրեց իմ հավատը, ի՞նչը խեղդեց իմ մեջ ազգային բոլոր սուրբ զգացմունքները...— Միայն դո՛ւ, քո սե՛րը միայն, ո՛վ Որմիզդուխտ...»։

Այդ անունը արտասանելու միջոցին՝ նա խոնարհվեցավ, ծունր դրեց գետնի վրա, կարծես, երկրպագություն էր մատուցանում մի երկնային աստվածուհու։

«Ես սիրում էի քեզ, Որմիզդուխտ, խելագարության չափ սիրում էի քեզ... Այդ գիտեր քո թագավոր-եղբայրը և իմ այդ թուլությունից

օդում թաղեց նա... Ամեն խոստումներ, ամեն պարգևներ, ինչ որ ամենաբարձրն էր մարդկային փառքի և վայելչության համար, խոստացավ նա ինձ, բայց չկարողացավ խախտել իմ հավատարմությունը թե դեպի իմ հայրենիքը և թե դեպի իմ թագավորը։ Իսկ քեզ տալով, նա խլեց ինձանից բոլորը, ինչ որ սուրբ էր ինձ համար, ինչ որ թանկագին էր ինձ համար... Ես հանձն առի կատարելու քո եղբոր ամենավատ ցանկությունները, միայն քե՛զ ստանալու համար, ո՛վ Որմիզդուխտ...»։

Մի քանի րոպե տիրեց նրան մի խորհրդավոր լռություն, ջերմ արտասուքը հեղեղի նման թափվում էր աչքերից, և խուլ ապաշավանքը ալեկոծում էր նրա սիրտը։

«Սիրո՞ւմ եմ... չեմ կարող սպանել իմ մեջ այդ սերը...»․ Հանկարծ բացականչեց նա և բարձրացավ յուր տեղից։

Նա կրկին աչքերը դարձրեց դեպի երկինքը և, երկու ձեռքերը դեպի վեր տարածելով, գոչեց.

«Ո՛վ Տեր Տերանց. ո՛վ Աստված Աստուծոյ, ցույց տո՛ւր ինձ այն անոթը, որ կրում է յուր մեջ սիրո կենսատու կաթիլները, ցույց տո՛ւր, ո՛վ տեր, ես կփշրե՞մ, ես կխորտակե՞մ այդ անոթը, որովհետև նրա մեջն է ամփոփված իմ բոլոր թշվառությունը... Ինչո՞ւ դրեցիր իմ մեջ այդ անոթը. ո՛վ տեր, ինչո՞ւ վառեցիր իմ սիրտը այդ անշեջ կրակով... Թո՛ղ չլինե՞ր կնոջ սերը, թո՛ղ հավիտյան չլինե՞ր նա, և ես ավելի բախտավոր կլինեի... Այդ սիրո համար ես հանձն առի մի ամոթալի պաշտոն... Այդ սիրո համար ես կատարեցի և պիտի շարունակեմ կատարել դժոխային բարբարոսություններ... Ես թույլ եմ, ես անզոր եմ, ո՛վ տեր, քո հզոր ձեռքը միայն կարող է մահացնել նրան... Աղաչում եմ, մեռցրո՛ւ նրան և բոլորովին ցամաք անապատ դարձրո՛ւ իմ սիրտը, որպեսզի դադարեն իմ մեջ բոլոր կրքերը...»

Հանկարծ լռեց։ Դարձյալ արտասուքը սկսեց հոսել նրա աչքերից։ Դարձյալ զգացմունքների կատաղի մրրիկը սկսեց ալեկոծել նրան։ Երկար այդ խռովության մեջ տանջվում էր նա, մինչև խելագարի նման ձեռքը տարավ դեպի բորբոքված ճակատը և դողդոջուն ձայնով արտասանեց.

— Ո՛չ, ո՛չ, ո՛վ տեր, ես սիրում եմ... առանց նրան ինձ համար լույս և կյանք չկա... Դո՛ւ ստեղծեցիր սերը, դո՛ւ դրեցիր իմ մեջ սերը և դո՛ւ պետք է լինես նրա զորավիգը... Նա քո արարչագործության ամենամեծ արդյունքն է... Ժամանակներից առաջ քեզ հայտնի էր նրա և՛ կեցուցիչ, և՛ մահացուցիչ զորությունը... Դու գիտեիր, թե որպիսի՛ անողորմ ձեռքով պետք է դարձնե նա մարդկանց սրտերը թե՛ դեպի բարին

և թե՛ դեպի չարը... Ինձ ձգեց վերջին ճանապարհի վրա, և պետք է շարունակեմ առաջ գնալ... Թո՛ղ աշխարհի մեջ մի անարգ նշավակ դառնամ ես, թո՛ղ ապագայի համար հավիտենական դատապարտության առարկա դառնամ ես, թո՛ղ ամեն ոք անեծքով արտասանե իմ անունը, բայց ես սիրում եմ և կսիրեմ... Իմ անգին Որմիզդուխտը պետք է լինի Հայաստանի թագուհի, իսկ ես պետք է դառնամ թագավոր, միայն նրա՛ն արժանի լինելու համար... Թո՛ղ արյունով ոռոգվի այն ուղին, որ տանում է ինձ դեպի Հայոց գահը... Թո՛ղ դիակներով կազմվի այն սոսկալի ամբարտակը, որ կհասցնի ինձ մինչև այդ բարձրությունը... Բոլորը քա՛ղցր է ինձ համար, բոլո՛րը ախորժելի է ինձ համար, որովհետև այդ բարձրության վրա պետք է վայելեմ նրա սերը...

Առավոտյան, դեռ արևը նոր էր ծագել, դեռ նոր հոտերը քշում էին դեպի մերձակա արոտները, երբ Մանեի տաղավարին մոտեցան երեք սպառազինված ձիավորներ։

— Այստեղից անցա՞վ մի սպիտակ ձիավոր,— հարցրեց նրանցից մեկը։

— Նա գիշերը ինձ մոտ հյուր էր,— պատասխանեց հովիվը։

— Ի՞նչ եղավ։

— Գնաց։

— Ե՞րբ գնաց։

— Նա եկավ գիշերով և գնաց գիշերով։

— Ո՞ւր գնաց։

— Մութն էր, ես նրա ետևից երկար նայեցի, բայց նկատել չկարողացա, թե ո՛ւր գնաց։— Ո՞վ էր նա,— հարցրեց հովիվը, ինքը ևս հետաքրքրվելով։

— Մերուժանը։

«Ա՜խ, եթե գիտենայի՜...»— յուր մաքում ասաց հովիվը և մնաց շվարած։

«Ա՜խ, եթե փոքր-ինչ շուտ հասնեինք...»— մտածեցին ձիավորները և հեռացան։

Ը

ՇԱՊՈՒՀԸ ԶԱՐԵՀԱՎԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄՈՏ

«Ապա յետ այսորիկ խաղաց գնաց թագաւորն Պարսից Շապուհ ամենայն իշխանութեամբ զօրաց իւրոց եւ չոգաւ եկ յերկիրն Հայոց. եւ առաջնորդ ունէր ընդ իւր զՎահան ի Մամիկոնեան տոհմէն, եւ զՄերուժանն յԱրծրունեաց տոհմէն...

«Իբրեւ էր բանակն Շապհոյ թագաւորին Պարսից ի դաշտն Բագրեւանդայ յանխա քաղաքին Զարեհաւանի,... ածին ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն գերին մնացորդաց աշխարհին Հայոց. ապա հրաման տայր թագաւորն Պարսից Շապուհ, զամենայն այր ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց եւ զամենայն զկին եւ զմանուկ հանել ընդ ցից սայլից: Հազարք հազարաց եւ բիւր բիւրոց սպանին, զի ոչ գոյր թիւ կամ համար սպանելոցն։ Եւ զկանայս ազատացն եւ նախարարացն զփախուցելոցն հրաման տայր ածել յասպարէզն՝ որ էր ի Զարեհաւան քաղաքի։ Եւ հրաման տայր հոլանել զամենայն ազատ կանանին, եւ նստուցանել աստի անտի ասպարիսին, եւ ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շաւակի (արշաւակի) անցանէր առ կանանովն...

«Եւ զազգի Սիւնեաց տոհմին զամենայն զայր ի չափ հասեալ կոտորեցին, եւ զկանայս սպանին, եւ զամենայն մանր մանկտին ներքինիս հրամայէր առնել, եւ խաղացուցանել յերկիրն Պարսից։ Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդովկայ, որ եղեւ պատերազմ ընդ Ներսեհ արքայ Պարսից»։

Փաւստոս

Մերուժանի և Վահան Մամիկոնյանի պարտությունը համբավը կայծակի արագությամբ հասավ Տիզբոն։ Այդ բոթը այն սարսափելի ազդեց գոռոզ Շապուհի վրա, որ վճռեց անձամբ անցնել յուր զորքերի գլուխը և մի մեծ արշավանք կատարել դեպի Հայաստան։ Նրան այնքան չէր ցավեցնում յուր գնդերի կորուստը, որ ընկան Վանա պարիսպների մոտ, որքան կատաղեցնում էր այն միտքը, որ յուր նպատակները հայոց վերաբերությամբ հենց առաջին անգամից անհաջողության հանդիպեցան։

Նրա զորքերի բազմությունը դեպ Ատրպատական[1] չէր հասած, բայց սոսկալի շարշափը տարածվեցավ դեպի ամեն կողմ։ Նա գալիս էր, որպես մի մրրկածուփ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչաց-

նելու համար։ Հայոց նախարարներից շատերը նրա երկյուղից թողե-ցին իրանց ընտանիքները, թողեցին իրանց բերդերը և փախան դեպի զանազան կողմեր[2]։ Իսկ մնացողները ամրացան անմատչելի լեռներում։

Հայաստանի արևելյան մասը, որ սահմանակից էր պարսից, նա յուր առջև բոլորովին բաց գտավ։ Որտեղից և անցնում էր, յուր ետևից թողնում էր ավերակներ, տխուր անապատ և ամայություն։ Քաղաքներն ու ավանները կրակի ճարակ էին դառնում, իսկ փախչելու անկարող բնակիչները գերվում էին։ Նրան առաջնորդում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։

Նա մտավ Բագրևանդ գավառը և յուր ծանր բանակը դրեց Զարե-հավանի ավերակների մոտ, որ կործանված էր նրա հառաջապահ զոր-քերից[3]։

Այստեղ դիմեց նա Հայոց Տիկնոջը, Փառանձեմին, ձերբակալելու մտքով, որ այդ ժամանակ գտնվում էր Ծաղկանց լեռների սարավանդ-ների վրա — Շահապիվանում[4]։ Ծաղկանց լեռները արքայական ամա-րանոցներ էին։ Բայց մինչև նրա հասնելը, Հայոց Տիկինը խույս տվեց և տասնումեկ հազար զինվորներով մտավ Երասխաձորի Արտագերս բերդը[5]։

Առավոտ էր, այն օրվա առավոտը, որի մյուս օրը Շապուհը պետք է չվեր պաշարելու Արտագերս բերդը։ Այս առավոտ նրա հրա-մանով կատարվեցան այնպիսի գործողություններ, որ վայել չէին ոչ արքայի և մարդու։

Լուռ և տխուր հոսանքով վազում էր Արածանին[6] (Եփրատը), կար-ծես, չտեսնելու համար այն գազանային անգթությունները, որ այս առա-վոտ պետք է կատարվեին նրա ափերի մոտ։

Գետի մի կողմում, Նպատ լեռան[7] լանջաց վրա, կազմված էին ար-քայական վրանները, բոլորը լաջվարդի գույնով և մեկը քան մյուսը ավելի շքեղ և ավելի փառավոր։ Վրանների գույնը, միախառնվելով լե-ռան կանաչազարդության հետ, ներկայացնում էին հիանալի տեսարան։ Նրա հետ էր և յուր կանանոցը։ Պարսից թագավորները սովորություն ունեին, երկարատև արշավանքների ժամանակ, կանանոցը իրանց հետ տանել[8]։ Կանանց փակ վրանները դրսից չէին երևում, որովհետև շըր-ջապատած էին բարձր սարայփարդաներով, որ կտավյա սպիտակ պար-տակներից կազմված, բոլորակ վանդակապատի ձև ունեին։

Գետեզերքի գեղեցիկ տափարակների վրա, հեռու և հեռու, տա-րածվում էր ընդարձակ բանակը։ Այնտեղ զետեղված էին զորքերի և զորապետների վրանները։ Գույնզգույն դրոշակները ծածանվում էին, որ նշանակ էին յուրաքանչյուր գնդի առանձնության։

Արքայական վրանի կոնաձև գագաթին դրած էր մի ոսկեղեն գունդ, որի վրա փայլում էր պարսկական սրբազան վարը — ոսկեձույլ, ոսկեճաճանչ արևգակը։ Այդ վրանի մեջ Շապուհը նստած էր փղոսկրյա քառակուսի թախտի վրա, որ զարդարած էր գեղեցիկ քանդակներով։ Այս առավոտ հագած ուներ արյունագույն-կարմիր պատմուճան։ Այդ արգմն նշան էր, որ արյան հետ գործ պետք է ունենա[9]։ Գլխին կրում էր փետրավոր խույրը, որի աջնի կողմից, ճակատի վրա, մարգարտաշար նարոտներով կապած էր արքայական ոսկյա զարդմանակը[10], որ փողփողում էր արեգնային ճաճանչներով։ Կուրծքը, ուսերից սկսած, պատած էր ոսկեհարազարդ ապիզակով[11], որ հասնում էր մինչև նույնպես ոսկեհարազարդ գոտին։ Թևերի վրա, արմունկներից վերև, կապած էին ոսկյա ապարանջաններ[12]։ Երկու ականջներից քարշ էին ընկած երկու ծանր գնդեր[13]։ Իսկ աջ ուսից ձգած էր հմայքներով լի համայիլը[14], որ զարդարած էր գույնզգույն խոշոր քարերով, և որը կողմնակի կերպով անցնում էր կուրծքի վրայով և յուր երկու ծայրերով միանում էր ձախ թևքի տակում։ Այդ համայիլի վրա գործ էին դրել նրա մոգերը իրանց բոլոր կախարդական արհեստն ու գիտությունը։ Յուր թախտի վրա նստած էր նա չոքած կերպով։ Գավազանի փոխարեն երկու ձեռքով բռնած ուներ մի երկաթյա ծանր լախտ, գնդաձև գլխով, որ հորիզոնական դիրքով դրած ուներ ծնկների վրա։ Նրա ետևում հսկում էր Դրան զինակրապետը, որ ձեռքում բռնած ուներ արքայական սուրը[15]։ Աջ կողմում կանգնել էր Միհրվժան Արծրունին, իսկ ձախ կողմում՝ Վահան Մամիկոնյանը — Սամվելի հայրը։ Երկուսն էլ նրա փեսաներն էին, երկուսն էլ գտնվում էին կատարյալ զինավառության մեջ։

Վրանից դուրս, մուտքի այս և այն կողմերում, կարգով շարված էին նրա գլխավոր զորապետները, պալատականները և այլ ավագանին։ Ամենքը լուռ էին և խորին երկյուղածությամբ սպասում էին թագավորի ձայնին։

Միջահասակ էր նա, թուխ դեմքով և խոշոր, վառվռուն աչքերով։ Կարճ կտրած սև մորուքը ավլված էր ոսկու փոշիով[16]։ Դեմքի վրա նշմարվում էր ահավորություն և խստություն։ Նա գտնվում էր այն սրբազան ձորի մեջ, որ լի էր անմոռանալի հիշատակներով, որ ամենահին ժամանակներից եղել էր կրոնների և պաշտամունքների օրրան։ Այդ ձորով անցնում էր Արածանին — հայոց սիրելի Հորդանանը։ Այդ գետի նվիրական ափերի մոտ բարձրանում էր վեհապանծ Նպատը — հայոց սուրբ Սինան,— որի այրերում մի ժամանակ ճգնում էր հայոց Լուսավորիչը, որի այրերում և հանգչյալ նա[17]։ Այժմ քրիստոնեության թշնամի թագավորի բանակը դրած էր քրիստոնեության նախկին օրո-

րանի մեջ։ Լուռ էր նա, և մտահույզ աչքերը հառած էին դեպի մի հոյակապ վանք, որ կանգնած էր նրա հանդեպ, Նպատ լեռան լանջաց վրա։ Գեղեցիկ վանքը, յուր գմբեթների բարձրությամբ, կարծես, մըրցել էր կամենում շրջակա բարձրությունների հետ։

— Այդ ի՞նչ վանք է,— դարձավ նա դեպի Մերուժան Արծրունին։

— Դա ս. Հովհաննու վանքն է, տե՛ր արքա,— պատասխանեց Մերուժանը, ավելացնելով.— Այդ վանքի տեղումն էր հայոց ամենահին սրբարաններից մեկը՝ Բագավանը[18], որի մեջ կանգնած էր «վանատուր» (հյուրասեր) Արամազդի[19] մեծագանձ մեհյանը։ Ամեն մի անցորդ, ամեն մի օտարական նրա բազմաթիվ օթևաններում հյուրասիրություն և գիշերային հանգստություն էր վայելում։ Այստեղ, յուրաքանչյուր տարի, հայոց նավասարդ ամսի սկզբում, կատարվում էր «ամանորի» (նոր տարու) աշխարհախումբ տոնախմբությունը[20]։ Ներկա էր լինում հայոց թագավորը յուր նախարարների հետ։ Օրհնում էին հասունացած պտուղները [21] և նվիրում էին հյուրասիրության աստծուն։ Մշտավառ պահվում էր նրա տաճարում որմզդական երկնային հուրը, և քրմերի անհաշիվ բազմություն սպասավորում էին սուրբ սեղանին[22]։

Շապուհի թուխ դեմքը ավելի մռայլվեցավ այն տպավորության ներքո, որ այդ բոլորը, որ այնքան նման էին, որ այնքան զուգապատշաճ էին պարսից պաշտամունքներին,— այժմ չկային, վաղուց ոչնչացված էին, և այժմ նրանց տեղում կանգնած էր քրիստոնեական վեհափառ տաճարը։

— Ո՞վ կործանեց այդ մեհյանը,— հարցրեց նա։

— Հայոց Գրիգոր քահանայապետը,— պատասխանեց Մերուժանը,— որին անմտությամբ Լուսավորիչ են կոչում։

— Նա՞, որ հայերին Մազդեզանց լույսից հանեց և քրիստոնեական մոլորությունների մեջ ձգեց։

— Այո՛, նա, տե՛ր արքա։ Այդ կատարվեցավ այն ժամանակ, երբ նա նույն իսկ այդ գետի մեջ, որ մեր առջևում հոսում է, մկրտեց հայոց Տրդատ թագավորին յուր բոլոր մեծամեծների հետ։ Հայերը մինչև այսօր հավատում են, թե մկրտության միջոցին երկնքից սյունի նմանությամբ լույս ծագեց, որի գլխին արեգնային ճառագայթներով փայլում էր խաչի նշանը, և մնաց գետի վրա այնքան ժամանակ, մինչև ամենքը մկրտվեցան[23]։

Լսելով Մերուժանի վերջին խոսքերը, Շապուհի դեմքի վրա անցավ ժպիտի նման մի ցնցում։

— Պետք է այդ վանքը կործանվի՛,— ասաց նա,— և որպես ասաց,

նույնպես և այժմ, պետք է կրկին վառվի՛ նրա մեջ որմզդական սուրբ հուրը։

— Արքայից արքայի կամքը արդեն կատարված է,— պատասխանեց Միհրժանը մի առանձին պարծենկոտությամբ։— Նրա մեջ ատրուշանը պատրաստված է և սուրբ հուրը վառվում է։ Երեկ հրավիրեցի գերիներին և առաջարկեցի, որ երկրպագություն տան կրակին. ոմանք ընդունեցին, իսկ շատերը համառությամբ մերժեցին։ Այժմ արքայից արքայի բարձր հրամանիցն է կախված, թե ի՞նչ պետք է անել այդ մոլորյալների հետ։

— Բոլորին պատժել, որ մյուսներին օրինակ լինի,— ասաց Թագավորը, և նրա խոշոր աչքերը վառվեցան անողոք բարկությամբ։— Արևելքից մինչև արևմուտք պետք է տիրե Մազդեզանց կրոնը, և ամեն ընդդիմացող մահվան չարաչար պատիժը պետք է կրե։

— Այդպես ևս կարգադրված է, տե՛ր արքա, այժմ կսկսվի դատապարտության հանդեսը։

Մի տախտակի վրա, որ մոտ էր գետեզերքին, անհամբերությամբ սպասում էին փղերի վարժեցրած երամակները։ Փղապանները ավելի և ավելի գրգռում էին նրանց, և ամեհի գազանները զարհուրելի ձայներ էին հանում։ Հրապարակի մի կողմում կանգնեցրել էին այն գերիներին, որոնք մերժել էին կրակին երկրպագություն տալ։ Լուռ և թախծալի դեմքերով սպասում էին այդ թշվառ նահատակները օրհասի վերջին րոպեներին։ Բայց նույն թախծության մեջ նշմարվում էր մի վսեմ, հոգևոր մխիթարություն։

Կարծես, Եփրատի արքայական հովիտին վիճակված էր նահատակությունների հանդիսարան լինել։ Այստեղ նահատակվեցան Ոսկյանք[24], այստեղ նահատակվեցան և Սուքիասյանք[25]։ Այստեղ, որպես Իսրայելի Մովսեսը Նաբավ լեռան[26] խորքերում, նույնպես և Հայաստանի Մովսեսը — Լուսավորիչը — անհայտացավ Սեպուհ լեռան մթին այրերի մեջ[27]։ Ամենախորին ժամանակներից այդ հովիտը միշտ մի արյունոտ հանդիսարան է եղել կրոնների պատերազմի։ Եվ սկսյալ Մաժան քրմապետի[28] արյան հեղումից մինչև Շապուհի կատարած վերջին նահատակությունները, նա միշտ ցողված է եղել սուրբերի արյունով...

Մի խումբ նվագածուներ սկսեցին հնչեցնել փողերը և դափել թմբուկները։ Այդ ձայներից փղերը ավելի զվարճացան, ավելի ոգևորվեցան։ Սկսեցին դիվական ուրախությամբ պարել։ Այդ միջոցին պարսից կարմրազգեստ դահիճները բերում էին հայոց չափահաս և անչափահաս գերիներին և խմբերով ածում էին փղերի առջև։ Նախ ձգեցին նրանց առջև փոքրիկ մանուկներին։ Անագորույն անասունները նույն

զվարճալի խաղն էին խաղում իրանց զոհերի հետ, ինչ խաղ որ խաղում է կատուն մկան հետ, երբ ծուղակից հանելով, նրա առջևն են ձգում: Անհարկու կնճիթներով հափշտակում էին թշվառներին և գնդերի նման գետի վեր էին նետում: Նրանք ընկնում էին, դառն հառաչանքներ արձակելով: Դարձյալ բռնում էին, և, օդի մեջ պտտացնելով, զարկում էին գետնին: Այսպես շարունակում էին դժոխային խաղը, մինչև բոլորովին անշընչանում էին: Հետո ոտքերի տակ կոխ տալով, փշրում էին նրանց բոլոր ոսկրոտիքը և, իբրև մի տափակացրած բամբակի կտոր, կրկին բռնում էին կնճիթներով և նետում էին գետի մեջ: Դժբախտ Եփրատը հեղհեղուն լցվում էր դիակներով, և նրա պարզ ու հստակ ջուրը արյունի գույն էր ստանում... Այսպես հազարավոր անձինք փղերի ոտքի կոխան եղան[29]:

Այդ տեսնում էր Շապուհը յուր վրանից: Այդ տեսնում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը, որ ներկա էին նրա մոտ: Եվ նրանց զվարճությունը ավելի մեծ էր փղերի զվարճությունից...

— Հիմա այդ դատապարտյալները դժո՞խքը կգնան, թե՞ հայոց դրախտը,— հարցրեց արքայից արքան դառն ծիծաղով:

— Նրանք հավատացած են, որ դրախտը կգնան,— պատասխանեց Մերուժանը նույնպես ծիծաղելով:

— Այդ հիմարները,— մեջ մտավ Վահան Մամիկոնյանը,— ոչինչ մահ այնքան ուրախությամբ չեն ընդունում, որպես մահը կրոնի համար:

— Իսկ մեր փղերը այս տեսակներին պատժելուց չեն հոգնի,— ասաց արքայից արքան:— Եվ մեր աստվածներին շատ հաճելի կլինի այսպիսիների արյան հեղումը: Երդվում եմ իմ հարց Երեսի պայծառ լույսով, երդվում եմ Որմիզդի սուրբ անունով, որ չի պիտի խնայեմ ոչ սեռի, ոչ հասակի և ոչ աստիճանի, և ամեն ոք, ազնվատոհմ, թե ռամիկ, չարաչար կպատժվին, երբ կընդդիմանան մեր կամքին, որը հզոր աստվածների կամքն է:

Այսպես խոսում էր արքայից արքան, և նրա ահավոր ձայնը դղրդեցնում էր ամբողջ բանակը:

Այդ միջոցին, փղերի գազանային հանդիսարանից փոքր-ինչ հեռու, ներկայանում էր այլ բարբարոսություն: Հրապարակի վրա շարքով քարշ էին տալիս մի տեսակ շարժական մեքենաներ, որ անիվավոր սայլակների ձև ունեին: Սայլակների յուրաքանչյուրի վրա բարձրանում էր մի երկաթյա ձող, որ երկար, սրածայր ցիցերի նմանություն ունեին: Նրանց բազմությունը իրանց ձողերով հեռվից պատկերացնում էին նավակների մի խումբ, որ խարսխած է լինում նավահանգստում, և

միայն ցցված կայմերն են երևում։ Երբ մեքենաները կարգով կանգնացրին Հրապարակի վրա, սկսվեցավ դժոխային գործողությունը։

Հայոց գերիների թվում կային և շատ ազատանի կանայք ու օրիորդներ։ Դրանք այն փախստական նախարարների կանայքն ու օրիորդներն էին, որ, Շապուհի գալուստը լսելով, չկամեցան անձնատուր լինել, այլ թողին իրանց ամրոցները անտեր և գնացին դեպի զանազան կողմեր։ Այդ ազատանի կանայքը պահվում էին առանձին վրաններում, որ շատ հեռու չէին Շապուհի խորաններից։ Թագավորական ներքինիները մտան նրանց վրանները, մերկացրին բոլորին և այնպես մերկ ու հոլանի դուրս բերեցին վրաններից և երկար շարքերով կանգնեցրին Հրապարակի վրա, ձողավոր մեքենաների շուրջը։

Գարշելի՜ մի տեսարան էր այդ, որ պարսկական անպատկառ անամոթությունը միայն կարող էր հնարել։ Բայց անամոթությունը գերազանցում էր պարսկական անգթությունը։ Մերկանդամ շարքերով կանգնած էին պարկեշտասուն կանայքն ու օրիորդները, և իրանց մտքում երանություն էին տալիս այն բախտավորներին, որոնք փղերի ոտքի կոխան էին դառնում և գոնե միանգամից ազատվում էին Շապուհի վայրագությունից։ Շատերը կանգնել չէին կարողանում, ուշաթափ էին լինում և ցած էին ընկնում։ Բայց ներքինիները կրկին բարձրացնում էին նրանց։ Շատերը, խելագարի նման, փետտում էին իրանց մազերը, ծվատում էին իրանց աչքերն ու երեսը, կծոտում էին իրանց կուրծքը և լալագին ձայնով աղաղակներ էին բարձրացնում։ Բայց ներքինիների մտրակը շառաչում էր նրանց մերկ մարմնի վրա, թողնելով յուր տեղում մի երկար արյունագույն գիծ։ Նրանք լռում էին...

Դա՛ մի դա՛ռն նախատինք էր, դա՛ մի ծա՛նր անարգանք էր, որով Շապուհը կամեցել էր պատժել հայոց ապստամբներին, նրանց կանանցը մերկանդամ կանգնեցնելով յուր բանակի առջև։

Զինվորները խուռն բազմությամբ հավաքվում էին հանդիսատես լինելու։

Հայտնվեցավ մովպետան-մովպետը, շրջապատած յուր ճերմակազգեստ մոգերով։ Տիրեց ընդհանուր լռություն։ Անցավ նա Հրապարակի վրա, ձեռքը բարձրացրեց և, դառնալով դեպի կանանց շարքերը, խոսեց.

— Ձեր ամուսինների համառությունը ձեզ այդ նախատական վիճակի մեջ դրեց։ Դուք քավում եք նրանց մեղքերը։ Մե՜ծ է Արյաց արքայից արքան, և անսպա՜ռ է նրա գթությունը։ Նա ձեզ ներումն կշնորհե, և դուք վերստին կվայելեք ձեր նախկին փառքն ու պատիվը, եթե կկատարեք նրա բարձր հրամանը։ Որպես արեգակը սփռում է յուր կենսատու լույսն ու ջերմությունը համօրեն աշխարհում, այնպես և ամբողջ

աշխարհը պետք է զոհաբերյան ծունր խոնարհեցնի նրա առջև։ Նա է լույս և կյանքի աղբյուրը. նրանից է բխում ամեն բարություն։ Առանց նրան, կյանք և երջանկություն չկա. առանց նրան, տիրում է Ահրիմանի[30] մթին խավարը։ Նրա լուսապայծառ օրինակն է երկրի վրա Որմզդական սուրբ հուրը։ Երկրպագություն տվե՛ք նրան, և ձեզ փրկություն կլինի։ Չեղանից, որպես ազնվազարմ կանանցից, ավելի իրավունք ունենք պահանջել այդ, որովհետև ձեր օրինակին պետք է հետևեն ամբողջ Հայաստանի ռամիկը։ Իսկ եթե դուք ևս ձեր ամուսինների նման երկմտեք ձեր մոլորությունների մեջ, այն ժամանակ ձեզ համար պատրաստ կլինեն այդ սոսկալի մեքենաները,— նա ձեռքը տարավ դեպի ձողավոր սայլակները։— Կատարեցե՛ք Արքայից արքայի կամքը, մե՛ծ է նրա զորությունը և անքա՛վ է նրա գթությունը։

— Թո՛ղ նրա զորությունը, թո՛ղ նրա գթությունը յուր հետ ի կորո՛ւստ մատնվի,— աղաղակեցին կանայք միաձայն։— Եվ թո՛ղ հավիտենական անեծքը լինի նրա մասն ու բաժինը։ Մենք պատրաստ ենք միշտ այդպես գերի մնալ և ընդունել ամեն դառնություն, քան թե նրա չար կամքի և նրա անիրավ հրամանի գերին դառնալ։

— Կրկնում եմ, երեքկնում եմ,— ձայն տվեց մովպետան-մովպետը,— խնայեցե՛ք ձեր անձներին, խղճացեք ձեր զավակներին։ Ձեր զավակները ձեր աչքերի առջև փղերի ոտքի կոխան կլինեն, իսկ դուք այդ սայլակների վրա կպատառոտվեք չարաչար մահվամբ։

— Ոչինչ չէ կարող խախտել մեր հավատը, ոչինչ չէ կարող վախեցնել մեզ։ Թո՛ղ կատարվի չար բռնակալի չար կամքը։ Մենք պատրաստ ենք։

Տեսնելով զայրացած կանանց հաստատամտությունը, մովպետան-մովպետը դարձավ դեպի դահիճները, հրամայելով.

— Կատարեցե՛ք...

Մոտեցան կարմրազգեստ դահիճները և, կատաղի գայլերի նման, հափշտակեցին հուսահատվող կանանցից շատերին և տարան, կանգնեցրին սայլակների տախտակամածի վրա։ Մեքենան որքան վայրենությամբ էր կազմված, այնքան և ահռելի էր։ Դա ներկայացնում էր պարսկական անգթությունը յուր բոլոր բարբարոսությամբ։ Երկաթյա ձողը, որ կայմի պես անցած էր նրա մեջտեղում, կայմի նման պարաններ ուներ։ Անմեղ զոհերին կապում էին պարաններով, քարշ էին տալիս և մի րոպեում բարձրացնում էին և շամփրում էին սրածայր ձողի գլխին[31]։ Քառորդ ժամ չանցավ, հրապարակի ամբողջ մթնոլորտը լցվեցավ մերկ դիակներով, որ կախված էին օդի մեջ։ Բայց ավելի քան մահվան տագնապը, զարհուրելի էր այդ քաջ նահատակների զվարթու-

թյունը, որով նրանք մերձենում էին սոսկալի մեքենային։ Բարձրանալով նրա գլխին, այդ առաջին աստիճանն էին համարում, որի վրա ոտք էին դնում՝ դիմելու դեպի հավիտենական երանություն։ Կնոջ արիությունը խորտակում էր ամբարտավան թագավորի մեծամտությունը, որ յուր վրանում նստած տեսնում էր նրանց տանջանքները, լսում էր նրանց դառն հառաչանքները և լի սանդարամետական բարկությամբ վրդովվում էր, ալեկոծվում էր, նկատելով, որ յուր անօրինակ բարբարոսությունները անգամ մնում են ապարդյուն, մնում են առանց ազդեցության...

Նա ցած իջավ թախտից և դուրս եկավ վրանից։ Նրա հետ դուրս եկան Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։ Ամբողջ ավագանին, բոլոր դրանիկները, որ կանգնած էին նրա վրանի մուտքի հանդեպ, ընկան գետնի վրա և երկրպագություն մատուցին։

Նա նստեց յուր ձին և դիմեց բանակը։ Նրան հետևում էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։ Իսկ նրանց ետևից գնում էին արքայական թիկնապահները, ամենքը ձիավորված։

Թե՛ ինքը թագավորը և թե՛ յուր ձին փայլում էին ոսկու և գոհարների մեջ։ Ձիու գագաթի վրա փայլում էր մի ճաճանչավոր մահիկ[32]։ Բանակը դիտելուց հետո, նա դիմեց դեպի այն կողմը, որտեղ կատարվում էր բարբարոսական գործողությունը։

Խորին ուշադրությամբ անցնում էր նա մերկանդամ կանանց շարքերի միջով և նայում էր յուրաքանչյուրի վրա։ Մեկը նրանցից զայրացած կերպով ձայն արձակեց.

— Շապո՛ւհ, այդ վայել չէ մի թագավորի, որ իրան հասարակաց հայր է կոչում։ Այսպես հրապարակապես խայտառակելով պատվավոր կանանց, դու խայտառակում ես քեզ։ Քո բոլոր զորությամբ տկար կնոջ հետ այդպես վարվելով, դու ապացուցանում ես քո հոգեկան ողորմելի տկարությունը...

Նա ձիու գլուխը պահեց և, դառնալով դեպի Մերուժան Արծրունին, հարցրեց.

— Ո՞վ է այդ կինը։

— Սյունյաց Անդովկ իշխանի տիկինն է,— պատասխանեց Մերուժանը։

Վահան Մամիկոնյանը ամոթից, թե խղճի խայթից, գլուխը քարշ ձգեց։ Սյունյաց Անդովկ իշխանը Մամիկոնյանների փեսան էր, և այդ պատկառելի տիկինը նրա հոր քույրն էր[33]։ Այդ պատկառելի տիկինը միևնույն ժամանակ հայոց թագուհու՝ Փառանձեմի մայրն էր[34]։ Որով-

Հետև Արշակ թագավորը ամուսնացած էր Սյունյաց Անդովկ իշխանի դստեր՝ Փառանձեմի հետ[35]։

Լսելով Անդովկի անունը, Շապուհի սպառնալի դեմքի վրա անցավ մի դառն ծիծաղ։

— Դու ինձ նախատում ես, տիկին,— ասաց նա հեգնական ձայնով։— Դու ինձ նախատում ես, որ ես թագավորաբար չեմ վարվում։ Ապա այն վայելո՞ւչ էր, ապա այն լա՞վ էր, տիկին, որ քո ամուսին Անդովկ իշխանը գերի վարեց իմ նախորդ Ներսեհ արքայի ամբողջ կանանոցը և Արյաց տիկնանց-տիկնոջը հափշտակեց, տարավ Սյունիք[36]։

— Եվ անվայել չէր, Շապուհ,— պատասխանեց արհամարհոտ տիկինը։— Իմ ամուսինը, իրավ է, քո նախորդ Ներսեհ արքայի կանանոցը գերի վարեց։ Բայց որտեղի՞ց։ Պատերազմի դաշտից, յուր մեծ հաղթությունից հետո։ Իսկ դու գողի նման մտար իմ ամուսնի անտեր ու անպաշտպան ամրոցը և նրա ընտանիքը հափշտակեցիր։ Եթե իմ ամուսինը Բյուզանդիայում չգտնվեր[37], դու այդ գողությունը անել չէիր կարող։ Նա յուր գերիների հետ վարվեցավ այնպես, որպես օրենք էր մի ազնիվ իշխանի։ Նա Ներսեհի կանանցից ո՛չ մեկի քողը չբարձրացրեց։ Իսկ դո՛ւ մեզ մերկանդամ կանգնացրել ես այդ հրապարակի վրա։ Նա Ներսեհի կանանցը արքայավայել պատվով պահելուց հետո, դարձյալ պատվով ետ ուղարկեց[38]։ Իսկ դու քո կին-գերիներին բարբարոսությամբ բարձրացնում ես այդ երկաթյա անարգ սյուների վրա։ Ամո՜թ քեզ, Շապուհ, դու արատավորեցիր թե՛ թագավորի մեծությունը և թե՛ մարդու առաքինությունը։

— Մի՛ նախատիր ինձ, տիկին,— ասաց նա զայրացած կերպով։— Անմոռանալի են ինձ համար սյունեցիների հասցրած տառապանքները, և անբուժելի են իմ սրտում քո ամուսնի դրած վերքերը։ Նա չէ՞ր, որ հրդեհեց, ավերակ դարձրեց իմ մայրաքաղաք Տիզբոնը և իմ բոլոր գանձերը ավարի առեց[39]։ Մինչև այսօր Տիզբոնը չի կարողանում մոռանալ քո ամուսնի հասցրած հարվածները, մինչև այսօր իմ արքունիքի գարապատում գրված է մոխրով լի սանդը, որը ծեծելով ողբում են և անիծելով ասում են. «Սյունյաց իշխանների տերությունը և նրանց կյանքն ու զորությունը թո՛ղ այդ մոխրի նման փոշի դառնա[40]...» Եվ ես փոշի՞ կդարձնեմ...

— Այդ դեռևս ասված չէ, Շապո՛ւհ...— պատասխանեց տիկինը, և նրա վշտալի աչքերը վառվեցան բարկության կրակով։— Դու քո բոլոր հույսը դրել ես քո անգթության վրա և այդ երկու անպատիվ մարդկանց վրա, որ ընկած են քո ոտքից,— նա ձեռքը տարավ դեպի Մեռուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։— Դրանք երկուսն էլ, դըժ-

բախտաբար, իմ ազգականներն են[41], բայց եթե բնավ չլինեին, ես ավելի երջանիկ կհամարեի ինձ։ Որքան դրանք հավատարիմ մնացին իրանց հարազատ թագավորին, այնքան և հավատարիմ կմնան քեզ…

Նա լռեց և ապա շարունակեց.

— Դու, Շապո՛ւհ, հիշեցնում ես ինձ, թե ի՛նչպես իմ ամուսինը հրդեհեց Տիզբոնը և կողոպտեց քո գանձերը։ Այդ ճշմարիտ է։ Բայց այն ծանր վիրավորանքից հետո, որ դու հասցրիր իմ ամուսնին քո տան մեջ, քո սեղանի վրա[42], նրա կատարած վրեժխնդրությունը դեռ շատ բավարար չէր։ Նա, իրավ է, հրդեհեց քո քաղաքը, կողոպտեց քո արքունիքը, բայց քո կանանցը ձեռք չմեկնեց, թեև, շատ հեշտ էր նրա համար՝ բոլորին գերի վարել Սյունիք և նրանց ձեռքով յուր ամրոցի՝ Բաղաբերդի[43] փողոցները ավլել տալ։ Բայց նա, իբրև ազնիվ մարդ, ազնվաբար վարվեցավ։ Իսկ դո՛ւ…

Վերջին խոսքը մնաց տիկնոջ բերանում։ Իսկույն դահիճները վրա հասան, նախ կտրեցին նրա լեզուն, և ապա մաս-մաս հոշոտեցին նրա մարմինը…

Կատաղած թագավորի անգթությունը անցավ ամեն չափից, ամեն սահմանից։ Հրամայեց՝ Սյունյաց իշխանի ամբողջ իգական սեռը կոտորել, իսկ տղաներին ներքինի դարձնել[44], որպեսզի Անդովկից ո՛չ մի ժառանգ չմնա և նրա տոհմը իսպառ բնաջինջ լինի…

Բ.

Ա Ր Տ Ա Գ Ե Ր Ս

> *«Ապա իբրև ետես տիկինն աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Հայոց՝ Փառանձեմ, զկորս թագաւորին Պարսից… առեալ ընդ իւր մարդիկ իբրև մետասան հազար՝ ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից՝ որ ի յերկրին Արշարունեաց… Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին… Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսս երեքտասան և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին»*
>
> Փաւստոս:

Զարեհավանի եղեռնագործություններից հետո, Շապուհը ուղղակի դիմեց Արտագերս բերդը[1], որի մեջ ամրացած էր հայոց Փառանձեմ տիկինը՝ արքայական գանձերի հետ։ Պարսից ընչաքաղց թագավորին

այնքան չէր հրապուրում հայոց արքայի գանձերը, որքան հայոց արքայի կինը։ Նրան ձերբակալելով նա ամբողջ Հայաստանը ձերբակալած էր համարում։ Թագավորին վաղուց արդեն յուր ճանկերի մեջ ուներ նա։ Մնում էր թագուհին։

Արտագերսը ուներ յուր առանձին պատմությունը։ Նա Արշարունյաց գավառի ամուր և անմատչելի բերդերից մեկն էր, որ նախ պատկանում էր Կամսարականներին։ Արշակ թագավորը խիստ ապօրինի միջոցներով խլեց նրանցից այդ բերդը և սեփականեց իրան[2]։ Այժմ անիրավությամբ հափշտակված բերդը նրա կնոջ ապաստարանն էր դարձել։

Տիկինը մտավ այդ բերդը տասնևյոթ հազար հոգով, որոնցից տասնևմեկ հազարը տղամարդիկ էին, իսկ վեց հազարը կանայք[3]։ Այդ բազմության մեծ մասը բաղկացած էր հայոց իշխանական տոհմերից, որոնք տագնապի ժամանակ միայնակ չթողին իրանց թագուհուն։

Մի քանի ամիսների համառ պաշարումից հետո, մի քանի ամիսների սաստիկ կռիվներից հետո, Շապուհը յուր բաղձանքների մեջ բոլորովին հուսահատ գտնվեցավ։ Նրա զորքերի անթիվ բազմությունը, իրանց ռազմական ահարկու պատրաստություններով, ո՛չ միայն բերդը գրավել չկարողացան, այլ ամեն անգամ պաշարվածներից չարաչար ջարդ կերան։ Արյաց արքայից արքան, որի առջև ամբողջ արևելքն ու արևմուտքը դողում էր սարսափից, սկսեց կատաղությունից մրրկածուփ ծովի նման ալեկոծվել, սկսեց գազանային բարկությամբ փրփրել, երբ տեսնում էր, որ յուր բոլոր զորությունները ապարդյուն կերպով փշրվում էին, խորտակվում էին Արտագերսի անսասան ապառաժների վրա։

Ծա՛նր էր Շապուհի դրությունը։ Նա ընկել էր այն սոսկալի ցանցի մեջ, ուր Երասխը և արագավազ Ախուրյանը, հատանելով լեռնային սարավանդները և խորին կիրճերի ու խոխոմների միջով ընթանալով, վերջապես, գրկվում են, իրանց ուժերը միացնում են, բազմաթիվ անհնարին արգելքներ պատրաստելով հայոց թշնամիների համար։ Այդ գետերի մթին քարանձավներում մի ժամանակ որջացած էին հայոց վիշապները[4] և սարսափ էին տարածում դեպի ամեն կողմ։ Իսկ այժմ իրանց թագուհու հետ ամրացած էին հայոց հսկաները։ Հսկաները գործ ունեին արևելքի ահարկու հսկայի հետ։

Այնտե՛ղ, ուր Ախուրյանը և Երասխը միանում են միմյանց հետ, կազմելով մի սուր եռանկյունի, այնտե՛ղ, ուր սեղմված էր հին Երվանդաշատը[5], որի բարձրագիր որձաքարյա ամրության վրա ոտք դնելով, Երվանդը[6] մինչև Արշակունիների գահը բարձրացավ,— այնտեղ կանգնած էր և Արտագերսը, ոչ այնքան հեռու հիշյալ բերդից։ Նա

կանգնած էր բարձր, կապտագույն ապառաժների վրա, և նրա ստորոտում, խորին անդունդի մեջ, որոտում էր Կապույտ գետը[7]։

Արտագերսը ծանոթ էր Հռոմին, ծանոթ էր և Բյուզանդիային։ Կալիստ կեսարը, Օգոստոս կայսրի որդեգիրը, նրա հզոր պարիսպների մոտ մահացու վերք ստացավ բերդի Սատոն իշխանից[8]։ Իսկ Շապուհը համառությամբ պաշարումը շարունակում էր, համոզված լինելով, որ եթե զենքի ուժով չկարողանա գրավել, անշուշտ քաղցը և սովը կստիպեն անձնատուր լինել։ Բայց բերդի ամբարներում բավական պաշար կար։

Նա՝ բնության մեծ հրաշալիքն էր, որի հետ մարդը մաքառելու համար խիստ անզոր միջոցներ ուներ։ Ժամանակի ռազմական մեքենաները ոչ հասնել և ոչ ազդել կարող էին նրա անմատչելի, բարձրադիր ամրությունների վրա։

Ավելի քան բերդի ամրությունը, անխորտակելի էր պաշարյալների եռանդը։ Անձնազոհությունը չափ և սահման չուներ։ Ազատանի կանայք գիշերները պարիսպների վրա էին պառկում։ Ազատանի օրիորդները անքուն հսկում էին աշտարակներից թշնամու ամեն մի շարժումը։ Ինքը թագուհին յուր ձեռքով էր դարմանում յուր զինվորների վերքերը։ Այր և կին վառված էին հայրենասիրության ջերմ ոգով, և մեկը մյուսին աշխատում էր գերազանցել։ Եվ բոլորին ոգևորողը, բոլորի քաջությունը բորբոքողը էր ինքը թագուհին։

Մի անգամ Շապուհը հրամայեց վճռական հարձակում գործել։ Պարսից վահանավորք և ասպարավոր զինվորները բարձրացան մինչև բերդի պարիսպները։ Կռվում էին նրանք հերոսաբար, և բերդից կարկուտի նման տեղացող նետերը չէին կարողանում զսպել նրանց կատաղությունը։ Թագուհին, զրահավորված, կանգնել էր պարսպի վրա և խրախույս էր տալիս յուր զինվորներին։ Մի նետ դիպավ նրա ուսին, ծակեց զրահը, և ցցված մնաց յուր տեղում։ Զորապետներից մեկը շտապով մոտ վազեց, ձեռքը մեկնեց, որ դուրս քաշե նետը։ «Ինչո՞ւ ես իզուր ժամանակ կորցնում,— նկատեց նրան թագուհին,— այդ հետո էլ կարելի է հանել»։ Այդ խոսքը այն աստիճան ազդեց, որ զինվորները, խորին քաջալերություն ստանալով, կրկնապատկեցին իրանց եռանդը, և վանեցին թշնամուն պարիսպների մոտից։

Երբեմն գիշերով, երբեմն ցերեկով, բերդից դուրս էին գալիս զանազան խմբեր և զարկվում էին պարսիկների հետ։ Այդ փոքրիկ խմբակները, հանկարծահաս կայծակի նման, ոչ միայն շփոթում էին թշնամու ամբողջ բանակը, այլ շատ անգամ հաջողվում էր նրանց՝ գերիներով կամ ավարով ետ դառնալ։

Պաշարման համեցողությունը, հաջողության հապաղումը վրդովեցնում էր Շապուհին։ Արտագերսի պարիսպների մոտ նա երկար մնալ չէր կարող։ Պարսկաստանից ավելի կարևոր գործեր կոչում էին նրան։ Իսկ այնպես, առանց որևէ հետևանքի հասնելու, թողնել և հեռանալ,— այդ թույլ չէր տալիս նրա անսահման գոռոզությունը։ Երբ տեսավ, որ ուժը չէ ներգործում, նա դիմեց յուր սովորական խորամանկությանը։ Պատգամավոր ուղարկեց Թագուհու մոտ, մեծամեծ խոստումներով խնդրեց, որ երկու կողմից ևս զինադուլ լինի, և Թագուհին ցած իջնե բերդից, գա նրա մոտ, հաշտության պայմանների մասին անձամբ բանակցելու համար։ Թագուհին խստությամբ մերժեց, պատասխանելով, որ չէր ցանկանա մի այնպիսի խաբեբայի ոչ երեսը տեսնել և ոչ խոսել նրա հետ։ Որքան և դառն էր վիրավորանքը, այնուամենայնիվ, պարսից արքայից արքան զիջավ՝ գոնե հեռվից խոսել նրա հետ։ Ավագանին խորհուրդ տվեց Թագուհուն՝ ընդունել վերջին առաջարկությունը։

Նշանակած օրը, ամբարտավան Թագավորը միայնակ, և միայն Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ, մոտեցավ բերդի ստորոտին։ Եվ որպեսզի ձայները հասնեն միմյանց, նրան թույլ տվին ոտով մինչև պարիսպները բարձրանալ։ Այստեղ նրա համար պատրաստված էր մի փառավոր բազմոց, և մի խումբ պալատականներ կանգնած էին ընդունելու։ Նա եկավ, բայց տհաճությունը թույլ չտվեց նրան նստել, մնաց ոտքի վրա։ Այդ միջոցին, աշտարակի վրա, շրջապատած յուր նախարարներով, հայտնվեցավ Թագուհին։ Բարձրահասակ, վայելչագեղ տիկինը, յուր ավագների խմբի մեջ, հանդիսանում էր որպես մի հրաշափառ աստվածուհի։ Տեսնելով նրան, Շապուհը ներքևից ձայն արձակեց.

— Դո՛ւ, որ այդքան գեղեցի՜կ ես, տիկին, քեզ համար, որ Արշակ թագավորը այն աստիճան խելագարվեցավ, որ յուր դժբախտ եղբորորդու, Գնելի արյունը թափելով, քեզ հափշտակեց նրա ձեռքից[9],— դո՛ւ, տիկին, ավելի հաճելի կլինեիր, եթե այդ սքանչելի գեղեցկությանդ հետ՝ փոքր-ինչ խելք ու խոհեմություն ունենայիր։ Բայց աստվածը չէ տված խելքը, չէ տված և խոհեմությունը։ Նրան տված է վայրենի կոպտություն և անսանձ հպարտությունը միայն։ Նրա սիրտը, նրա միտքը, յուր լեռների ապառաժների նման, կոշտ է և անզգա։ Այդպես էր քո հայրը՝ Անդովկ իշխանը, այդպես էր և քո մայրը։ Ես քո մոր մարմինը, յուր հանդուգն համարձակախոսության համար, մաս-մաս հոշոտել տվի Զարեհավանի ավերակների մոտ։ Ես քո բոլոր ազգատոհմը ջնջեցի։ Մնում են քո եղբայրները[10] միայն, որոնք գտնվում են իմ

գերիների թիվում։ Նրանց ևս սպասում է նույն ցավալի վախճանը, եթե դու, տիկին, կշարունակես քո համառության մեջ մնալ։ Ինչո՞ւ ես ամրացել այդ բարձրության վրա։ Միթե այդ պարսպները կարո՞ղ են փրկել քեզ։ Մե՜ծ է Արյաց արքայից արքայի զորությունը և սոսկալի է նրա բարկությունը։ Նրա ահավոր շունչից լեռները մոմի նման հալվում են և ծովերը ցամաքում են։ Իսկ դու, տիկին, անմտությամբ կղզիացած ես այդ քարերի գագաթների վրա, առանց մտածելու, որ ալիքները կբարձրանան, մրրիկը կփոթորկվի, և այդ ողորմելի կղզին կկորչի, կանհետանա իմ բարկության անողոք հոսանքի մեջ... Ինչո՞ւ ես ամրացել այդտեղ։ Դրանով դու չես կարող ազատել, տիկին, ոչ քո անձը և ոչ քո երկիրը։ Ամբողջ Հայոց աշխարհը իմ ոտքի տակն է։ Բավական է մի թեթև ճնշում,— և նա մոխիր կդառնա։ Քեզ համար, տիկին, մի ա՛յլ հույս չկա, բացի իմ մեծահոգությունը։ Նրա վրա հենվի՛ր, և քեզ փըրկություն կլինի։ Եթե դու կին չլինեիր, ես քեզ չէի ներեի։ Բայց կներեմ, որովհետև կին ես։ Ցած իջի՛ր այդ բարձրությունից, համբուրի՛ր Արյաց արքայից արքայի ոտքերի փոշին, և նա ողորմած կլինի դեպի քեզ։

Թագուհին անվրդով կերպով լսում էր։ Վրդովված էին միայն նրա նախարարները, վրդովված էր և ավագանին։ Այդ սպառնալիքների պատասխանը կարող էր լինել մի նետ, որ վերևից արձակվելով, կլռեցներ գազանին։ Եվ նախարարները պատրաստ էին հարվածելու նրան, եթե տիկնոջ լուռ ակնարկությունը չզսպեր նրանց բարկությունը։ Նա չկամեցավ դավաճանին դավաճանությամբ պատասխանել, և յուր ամրոցի դռներից հյուրի դիակը ետ ուղարկել։

Նա պատասխանեց.

— Լսի՛ր, Շապուհ, դու թագավորի վեհության հետ՝ կորցրել ես և՛ թագավորի քաղաքավարությունը։ Դու մոռանում ես, որ խոսում ես թագուհու հետ, դու մոռանում ես, որ խոսում ես կնոջ հետ։ Դու ինձ հիշեցնում ես, Շապուհ, քո գազանային վարմունքը իմ մոր և իմ ազգատոհմի հետ, և ամբարտավանությամբ պարծենում ես քո բարբարոսություններով։ Բայց դու պետք է սարսափեիր քո կատարած եղեռնագործությունների առջև, եթե քո սրտում մարդկային զգացմունքի մի ամենափոքր նշույլ մնացած լիներ։ Դու սպառնում ես ինձ, Շապուհ, այն աղետալի վախճանը, որով դատապարտվեցան իմ տոհմայինները։ Բայց չես մտածում, որ այդ սպառնալիքը ավելի կբորբոքեր իմ վրեժխնդրությունը և ավելի կամրապնդեր իմ համառությունը՝ ձեռք չմեկնել այն մարդուն, որի ձեռքերը շաղախված են իմ մոր և իմ հարազատների արյունով։ Դու ինձ ներումն ես խոստանում, և հրավիրում ես՝ ցած իջնել իմ ամրոցի բարձրությունից։ Լավ մտածի՛ր, Շապուհ, այն բոլոր

խաբեբայություններից հետո, որ դու մինչև այսօր գործ ես դրել մեզ հետ,— միթե թողե՞լ ես մի ամենափոքր հավատարմություն՝ թե դեպի քո խոսքը և թե դեպի քո խոստումները։ Այն օրից, որ դու իմ Թագավոր-ամուսնին, որ քեզ շա՜տ և շա՜տ վտանգներից ազատել էր[11],— այն օրից, որ դու նենգությամբ նրան քեզ մոտ հրավիրեցիր, և քո հյուրին, և քո մտերիմ դաշնակցին, վատությամբ Անուշ բերդը աքսորեցիր,— այո՛, այն օրից դու զրկեցիր քեզ Հայոց բոլոր հավատարմությունից։ Դու Հայոց աշխարհը քո ոտքերի տակն ես համարում, Շապուհ, և սպառնում ես՝ մի հարվածով ոչնչացնել նրան։ Այդ ցնորքը իրականություն կլիներ, եթե պարծենկոտությունը, եթե անսահման պոռոտախոսությունը քաջություն համարվեր։ Չափազանց գոռոզությունը խլել է քո հիշողությունը, Շապուհ։ Մոռացե՞լ ես, թե քանի՜-քանի՜ անգամ քո զորքերի դիակները թողել ես մեր դաշտերի վրա, իսկ ինքդ միայն փախել ես մեր երկրից[12]։ Եվ եթե քո բանակը այսօր դրած է իմ ամրոցի մերձակայքում,— այդ ոչ քո, և ոչ քո զինվորների քաջության շնորհիվն է։ Այլ այդ քո նենգավորության և քո դավաճանության ամոթալի արդյունքն է, որ վայելում ես դու, Շապուհ։ Դու իմ Թագավոր-ամուսնին խաբեությամբ հեռացրիր յուր աշխարհից, և նրա երկիրը անտեր թողնելով, քեզ համար ճանապարհ բաց արեցիր։ Եվ որպես ճարպիկ գողը օգտում է քաղում տան տիրոջ բացակայությունից, նույնպես և դու մտար անպաշտպան երկիրը։ Դու ավելի ցած գտնվեցար քո գողության մեջ. դու կաշառեցիր տան ծառաներին, և գիշերով դռները քո առջև բաց արին։ Ահա՛ այդ տիրավաճառ և տիրանենգ ծառաներից երկուսը քեզ մոտ կանգնած են,— երկուսին ես, իբրև կաշառք, տվել ես քո քույրերին։

Նա ձեռքը տարավ դեպի Մերուժան Արծրունին և դեպի Վահան Մամիկոնյանը, և ապա շարունակեց.

— Բայց մի՛ մոռանար, Շապուհ, Հայոց աշխարհը դարձյալ տեր ունի. նախ Նա, որ ամբողջ տիեզերքի տերն ու Թագավորն է,— նա ձեռքը տարավ դեպի երկինքը,— երկրորդ, ե՛ս, որ խոսում եմ քեզ հետ, և ապա իմ որդին, որ այժմ գտնվում է կայսրների քաղաքում (Բյուզանդիայում)։ Սնոտի հպարտությունը և կույր անձնախաբեությունը մոլորության մեջ են գցել քեզ, Շապուհ։ Լա՛վ մտածի՛ր, և ուշի ե՛կ, Շապուհ։ Եթե ամենքը կչնչվեն, եթե կմնա հայոց խրճիթներում մի թույլ աղջիկ միայն,— նա դարձյալ կպատերազմե քեզ հետ։ Բայց դեռ այդ տեղը չէ հասել։ Դու չե՞ս տեսնում, որ քո բոլոր զորությամբ զարկվեցար այդ ամրոցի ապառաժների վրա, և ոչինչ անել չկարողացար։ Բայց որքա՞ն այդպիսի ամրոցներ դեռ կան մեր աշխարհում, որոնց մեջ իմ նախարարները զենքը ձեռքում սպասում են քեզ։ Դու

ընկել ես Հայոց լեռների որոգայթի մեջ, և շատ բախտավոր կլինես, եթե դուրս գալ կարողանաս։ Գնա՛, Շապուհ, հեռացի՛ր այստեղից։ Գնա՛, բորբոքի՛ր քո բոլոր չարությունները, և ինչ բարբարոսություններ, որ տակավին կարող ես կատարել, մի՛ խնայիր։ Քո սպառնալիքները չեն կարող վախեցնել ինձ։ Գնա՛։ Այն բոլոր վատություններից հետո, որ դու գործ դրեցիր, այլևս մեր մեջ ոչինչ հաշտություն կայանալ չէ կարող։ Քանի որ իմ թագավոր-ամուսինը հեծում է Անուշ բերդում,— Հայոց աշխարհը, վրեժխնդրության զենքը ձեռքում, կպատերազմե քեզ հետ...

— Տեսնե՛նք...— կատաղաբար մռնչաց գազանը, և սկսեց ցած իջնել բերդի բարձրությունից։

Անցավ համարյա մի ամբողջ ամիս։

Արտագերս բերդը զվարճանում էր ընդհանուր ցնծության մեջ։ Փողոցները զարդարված էին, գույնզգույն դրոշակները ծածանվում էին աշտարակների բարձրության վրա։ Բնակիչների խուռն բազմությունը լցրել էր հրապարակները։ Այր և կին, տղա և աղջիկ պար էին բռնել և նվագարանների ուժգին հնչյունների եղանակով թնդեցնում էին գետինը։ Արքայական պալատի շուրջը հավաքված էին՝ հարուստ զենքերով ու զարդերով պճնված զինվորականների ուրախ խմբերը։

Երեկ Շապուհը թողեց բերդի պաշարումը և հեռացավ դեպի Պարսկաստան։ Այսօր բերդը տոն էր կատարում։

Արքայական պալատի ընդարձակ սրահներից մեկը շքեղ կերպով զարդարված էր։ Մի կողմում, երկար սեղանի վրա, դրված էին թանկագին զգեստներ, գեղեցիկ զենքեր ու զրահներ, և զանազան տեսակ ոսկեղեն ու արծաթեղեն անոթներ, որոնց փայլը աչք էր շլացնում։ Դրանք դուրս էին բերված թագավորական գանձարանից պարգևաբաշխության համար։ Թագուհին, ամրանալով այդ բերդում, յուր հետ բերեց և թագավորական գանձը[13]։

Շքեղազարդ բազմոցի վրա նստած էր թագուհին և գտնվում էր, օրվա պատշաճին վայել, փառավոր զգեստավորության մեջ։ Այսօր հանդիսավոր ընդունելություն ուներ։ Նրա չքնաղ դեմքը՝ յուր պալատականների ընդհանուր ուրախությունից ավելի զվարթություն էր ստացել, թեև այդ բանի զվարթությունը, որ ավելի պաշտոնական էր, հազիվ կարողանում էր սքողել այն խորին տխրությունը, որ թաքնված էր նրա գեղեցիկ աչքերում։

Այո՛, գեղեցի՛կ էր Սյունյաց աշխարհի այդ հրաշագեղ դիցուհին,

և նրա գեղեցկությունն էր, որ Արշակ թագավորին կատարել տվեց մի եղերական գործ[14], որ միայն ծայրահեղ սիրահարությունը կարող էր արդարացնել…

Գլխին կրում էր փոքրիկ գոհարազարդ թագը[15], որ բոլորակ պսակի նման՝ հավաքել էր նրա սև գանգուրները, որոնք սփռված էին գանձաթափ ուսերի վրա, իսկ ետևից մանր հյուսերով ծածկել էին հարուստ թիկունքը։ Սպիտակ շղարշը յուր թափանցիկ ծալքերով սքողում էր վեհափառ գլխի այդ սիրուն զարդը, որ նրա կախարդիչ դեմքին մի առանձին վայելչություն էր ընծայում։ Ոսկյա գնդերը ծածկված էին գանգուրների և ալիքների ներքո, և միայն վառվռուն ակների փայլը երբեմն երևան էր հանում նրանց ներկայությունը։ Այդ թանկագին գնդերը այն աստիճան ծանր էին, որ ականջների փոխարեն, կարթաձև ճարմանդներով քարշ էին ընկած թագի երկու կողմից[16]։ Իսկ նրանց ծայրերը վերջանում էին զանգակաձև փնջիկներով, որոնց յուրաքանչյուրի մեջ բռնված էր մի-մի խոշոր գոհար։ Մի մարգարտաշար շղթա միացնում էր գնդերի երկու ծայրերը և իջնում էր մինչև կուրծքը։ Պարանոցին կրում էր նույնպես գոհարազարդ մանյակը, որից քարշ էր ընկած արքայական լանջաց պատիվը[17], որը ճաճանչավոր լուսնի ձև ուներ և հանգչում էր փառավոր կուրծքի վրա։ Հոլանի բազուկները զարդարած էին ոսկյա ապարանջաններով, իսկ աջ ձեռքի ճկույթի վրա փայլում էր թագուհու հատուկ մատանին։ Նա հագել էր ծիրանի պարեգոտ, որ երկար և մեղմ ալիքներով իջնում էր մինչև ոտները, որ կրում էին նախշուն, մարգարտահյուս մաշիկներ։ Մեջքը պնդած էր միաձույլ ոսկյա լայն կամարով, որի ծայրերը առջևից կցված էին երկու ականակուռ վահանակներով[18]։ Ուսին կրում էր թեթև սամույրենի թիկնոցը[19], որ պատած էր վարդագույն թավիշով։

Նրա աջ կողմում, առաջին տեղում, կանգնած էր Մուշեղ Մամիկոնյանը՝ հայոց զորքերի ընդհանուր սպարապետը։ Հետո Սահակ Պարթևը՝ Ներսես Մեծի որդին։ Դրանցից ներքև, իրանց աստիճանի և պաշտոնային դիրքավորության համեմատ, կարգով շարված էին զանազան նախարարներ և զանազան ավագներ։ Վերջինների թվումն էր Մեսրոպ տարոնեցին։ Իսկ ձախ կողմում, նույն կարգով, կանգնած էին ազատանի կանայք և օրիորդներ, որոնք իրանց ամուսինների հետ բերդն էին մտել։ Բոլորի դեմքերի վրա նկարված էր անսահման ուրախություն, բոլորի աչքերը փայլում էին խորին բերկրությամբ։

Հանդիսականներից ոչ ոք նստած չէր, բացի Խադ եպիսկոպոսը[20], Ներսես Մեծի տեղապահը, որին նա յուր փոխանորդ կարգեց, երբ աքսորվեցավ Բյուզանդիա։

Դրսից լսելի էին լինում նվագարանների ձայներ, և ամբողջ բերդը թնդում էր ցնծության աղաղակներով։ Իսկ սրահում տիրում էր խորին լռություն։

Թագուհին դարձավ դեպի հանդիսականները այդ խոսքերով.

— Երկարատև պաշարումից հետո, վերջապես, Շապուհը թողեց մեր բերդը։ Նրա բոլոր ահարկու զորությունները փշրվեցան մեր ապառաժների վրա։ Բայց ավելի քան ապառաժների ամրությունը, անխորտակելի եղավ ձեր քաջությունը, ձեր անձնազոհությունը, իմ սիրելի զորականներ։ Տերը ուժ ավելացրեց ձեր բազուկներին և դուք, իբրև լավ հերոսներ, հերոսաբար կռվեցաք մեր հայրենիքի վայրագ թշնամու հետ։ Դուք ապացուցիք, որ նրա արժանավոր զավակներն եք։ Դա՞ռն էր այդ երկարատև պատերազմը և լի ցավալի աղետներով։— Դա՞ռն էր, կրկնում եմ, որովհետև, բացի օտար թշնամուց, մենք ստիպված էինք կռվել և մեր հարազատների հետ։ Մեր թշնամուն առաջնորդում էին մեր հարազատները։ Որդին կռվում էր հոր դեմ, եղբայրը՝ եղբոր դեմ։ Եվ դրա մեջն էր ձեր հայրենասիրության բարձր ոգին, որ դուք չխնայեցիք ձեր տոհմայիններին և նրանց զենքերին զենքով պատասխանեցիք։ Գովում եմ ձեր առաքինությունը և տալիս եմ իմ մայրական օրհնությունը։

Ամենքը լռությամբ գլուխ խոնարհեցին, արտահայտելով իրանց խորին շնորհակալությունը։ Նա շարունակեց.

— Բայց դեռ շատ գործեր են մնում մեզ կատարելու, և ամենադժվար գործեր։ Մենք թշնամուն վանեցինք մեր բերդի չորս կողմից, բայց ոչ մեր աշխարհից։ Մենք պաշտպանեցինք մեր անձերը, բայց ոչ մեր աշխարհը։— Մեր աշխարհը, մեր սիրելի աշխարհը, դեռ դրած է նրա բարբարոսության առջև։ Ես տարակույս չունեմ, որ Շապուհը, այնպես ամոթալի կերպով հեռանալով մեր բերդի ստորոտից, պիտի կարողանա՞ արդյոք մոռանալ այդ դառն վիրավորանքը։ Նա յուր մաղձն ու թույնը կթափե, անշուշտ, մեր աշխարհի մյուս անպաշտպան մնացած տեղերի վրա։ Իսկ այսպիսի տեղեր սակավ չեն։ Մեր նախարարներից ոմանք այնքան երկչոտ գտնվեցան, որ իրանց երկիրը թողին անտեր և փախան դեպի զանազան կողմեր։ Նրանց ամրոցները գրավել է թշնամին։ Նրանց ընտանիքները բանտարկված են իրանց սեփական ամրոցների մեջ և պահվում են որպես պատանդ։ Բացի դրանցից, Զարեհավանի ցավալի արյունհեղությունից հետո, ուր Շապուհը ցույց տվեց յուր գազանային կատարյալ վայրագությունը,— մեր գերիներից դեռ ստվար բազմություն գտնվում է թշնամու ձեռքում։ Մեզ համար չէ հանգստությունը, քանի դեռ մեր եղբայրներն ու քույրերը գերության մեջ են գտնվում։ Մեզ համար չէ հանգստությունը, քանի դեռ կմնա այն

անպատվության մասը, որ քանց Շապուհը մեր նախարարների երեսին, նրանց կանանցը և օրիորդներին մերկանդամ կանգնեցնելով յուր բանակի առջև... Դա՞ռն է, սատրապ, դա՞ռն ինձ՝ մի բառ միայն հիշել, թե որքա՞ն անթիվ են մեր տառապանքները, և որքա՞ն անբժշկելի են մեր վերքերը։ Ես իմ հույսը դրել եմ աստուծո օգնության և ձեր հայրենասիրության վրա, ո՛վ քաջեր, և աներկբա եմ, որ դուք այսուհետև ավելի մեծ եռանդով կապացուցանեք, որ արժանի եք ձեր կոչմանը...

Նրա քաղցր և ազդու ձայնը, որ մեղմալի հնչյուններով արձագանք էր տարածում ընդարձակ սրահի մեջ, նրա ազդիլից խոսքերը, որ կրակի նման հեղվում էին բոցավառ շրթունքներից, խորին տպավորություն գործեցին բոլոր հանդիսականների վրա, որոնք կրկին և կրկին գլուխ խոնարհեցին՝ արտահայտելով իրանց անձնանվիրության անկեղծ հավաստիքը։

Հետո խոսեց եպիսկոպոսը.

— Հայրենիքը վտանգի մեջ է, այո՛, բայց ավելի մեծ վտանգի մեջ է եկեղեցին։ Պարսկական պղծությունը արդեն մուտք է գործել մեր տաճարներում։ Մեր սուրբ սեղանների վրա վառվում է որմզդական կրակը։ Մոգերով ու մոգպետներով լցված են մեր վանքերը։ Միանձնուհիք հալածվում են, իսկ միանձանց բռնադատում են պաշտոն տանել կրակին։ Մեր նախարարներից ոմանք, պարսից արքային ավելի հաճոյանալու համար, իրանց տներում ատրուշաններ են կառուցել։ Մեր բազմաչարչար Լուսավորիչ հոր դառն աշխատանքներով հիմնած եկեղեցին այժմ կործանվելու մոտ է։ Պարսիկը շատ անգամ արշավել է մեր երկիրը, շատ անգամ հաղթել է մեզ, և շատ անգամ հաղթվել է մեզանից։ Մեր երկիրը միշտ ողողված է եղել անընդհատ պատերազմների արյունով։ Բայց անցել են կռվի ու կոտորածի տխուր օրերը, և արյան հետքերի վրա՝ կրկին ծաղկել է ժողովրդի կյանքը և նրա բարօրությունը։ Իսկ այժմ սպառնվում է եկեղեցին, սպառնվում է կրոնը, և յուր հետ դեպի հավիտենական մահ է տանում ամբողջ ժողովրդին։ Օրհասը մոտ է, և այդ օրհասից փրկություն չկա։ Դա մի մա՛հ է, որ հարություն չունի։ Դա՛ ազգի մահն է։— Դա՛ հայության մահն է։ Որքա՞ն ազգեր, որքա՞ն ալինք, անհագ վիշապի նման, կլանեց Զրադաշտի սոսկալի դենը։ Որքա՞ն սրբություններ այրվեցան նրա վառած կրակի անշեջ բոցերի մեջ։ Պետք է մարել այդ կրակը, որ արդեն սկսել է բորբոքվել մեր աշխարհում։ Պետք է մարել այդ հուրն ու բոցը, որ պիտի լափե մեր սրբությունները։ Այո՛, պետք է մարել նրան, որ վերստին կյանք ստանա մեր եկեղեցին, որի մեջն է կայանում և մեր ազգի ու պետության կյանքը։

— Թո՛ղ օրհնյալ լինի աստուծո կամքը, թո՛ղ տերը ինքը պահպանե յուր սուրբ եկեղեցին, իսկ մենք նրա ուխտապահ զինվորները կլինենք,— միաձայն գոչեց ամբողջ ավագանին։

Թագուհին վերկացավ։ Կրկին տիրեց լռությունը։ Ուշիկ քայլերով մոտեցավ նա երկար սեղանին, որի վրա դրված էին պարգևաբաշխության համար պատրաստված իրեղենները։ Այնտեղից վեր առեց մի սուր և, առաջարկելով եպիսկոպոսին, ասաց.

— Սրբազան հայր, Թշնամին սրով և արյունով մտցրեց յուր պղծությունը մեր սուրբ տաճարներում, մենք նույնպես սրով և արյունով պետք է մաքրենք մեր տաճարները այդ պղծությունից։ Ահա՛ քեզ մի զենք, և օրինակ տուր քո պաշտոնակիցներին՝ դրանով նախանձախնդիր լինել եկեղեցու փառքին։

Եպիսկոպոսը ընդունեց զենքը։

Հետո թագուհին վեր առեց մի ոսկեհուռ վերարկու, և մոտեցավ Մուշեղ Մամիկոնյանին, ասաց.

— Դու, Մուշեղ, այդ կռիվների մեջ ապացուցիր, որ քո արժանահիշատակ հոր հարազատ զավակն ես,— այն հոր, որ յուր կյանքը դրեց յուր հայրենիքի և յուր թագավորի վրա[21]։ Քեզ վայել է մեծարել այն ընծայով, որ ամենաբարձրն է արքայական պարգևների մեջ։ Դու այժմ քո հզոր ուսերի վրա ես տանում Հայոց աշխարհի բոլոր ծանրությունը։ Եվ ես այդ արժանի ուսերը կզարդարեմ այն վերարկուով, որ մի ժամանակ կրել է իմ թագավոր—ամուսինը[22]։

Սպարապետը խորին երախտագիտությամբ ծունր դրեց տիկնոջ առջև, և նա ձգեց նրա ուսերի վրա արքայավայելուչ վերարկուն։

Հետո թագուհին մերձեցավ ընծաների մթերքին, վեր առեց մի ոսկյա բաժակ և, մոտենալով Սահակ Պարթևին, ասաց.

— Քո հայրը, Սահակ, յուր հայրենիքի ամենահավատարիմ նեցուկն էր, և նրա սիրո համար՝ այժմ կրում է աքսորի տաժանական կյանքը։ Քո վեհափառ ճակատի վրա փայլում է հոր լուսապայծառ պատիվը, և այդ երևեցավ վերջին կռիվների մեջ։ Ընդունի՛ր այդ բաժակը, և ամեն անգամ, երբ ըմպելու լինես դրանով, հիշի՛ր իմ դեպի քեզ ունեցած ջերմ զգացմունքը։

Պարթևազն երիտասարդը ծունր դրեց և ընդունեց նրա ձեռքից գեղեցիկ բաժակը։

Այսպես տարաձևոր պարգևներով վարձատրում էր խելացի տիկինը յուրաքանչյուրի քաջությունը, և նրա քաղցրախոս լեզվում ամենի համար կային խիստ իմաստալի գովասանքներ համեմատ նրանց տոհմային նշանակության և նրանց մատուցած ծառայություններին։ Մե՛ծ

էր նրա նախարարների գոհունակությունը, և անսահման էր նրանց մխիթարական ոգևորությունը։ Տիկնոջ ամեն մի ժպիտը, ամեն մի մայրական զգացմունքներով լի հայացքը՝ նրանց նոր ոգի, նոր եռանդ և անձնանվիրություն էր ներշնչում։ Նրանք ուրախ էին, որ իրենց ծառայությունները ոչ միայն վարձատրվում են, այլ հասկացվում են, և մի այնպիսի ազնվամիտ կնոջ համակրությանն են արժանանում, որպիսին էր Հայոց Տիկինը։

Երբ ազամարդերի պարգևաբաշխությունը վերջացավ, տիկինը դարձավ դեպի ազատանի կանայքը, որոնք պաշարման ժամանակ խիստ փայլուն ծառայություններ էին ցույց տվել։ Նրա գեղեցիկ աչքերը որոնում էին մեկին, որը կանանց խմբի մեջ չէր երևում։

— Իմ քաջերի թվում կար և մի օրիորդ հերոուհի,— ասաց նա։— Ո՞ւր է Աշխենը, կանչեցե՛ք այստեղ Աշխենին։

Ռշտունյաց նավելի օրիորդը համեստությունից թաքնվել էր։ Մի քանի րոպեից հետո ներս մտավ նա, զինվորական շքեղ զրահավորության մեջ։ Բոլորի աչքերը դարձան դեպի գեղեցիկ, վայելչակազմ հերոսուհին։ Տիկինը գրկեց նրան և, ճակատը համբուրելով, ասաց.

— Սիրելի՛ Աշխեն, կար մի ժամանակ, հանգստի և խաղաղության երջանիկ ժամանակներում, մեր իշխանազն օրիորդները իրենց մատների ճարտարությունը ցույց էին տալիս գեղեցիկ գործվածքների մեջ, որոնցով զարդարում էին նախարարների փառավոր սրահները և մեր տաճարների սուրբ սեղանները։ Անցավ խաղաղության ժամանակը, եկավ արյան և կոտորածի տագնապը։ Եվ դո՛ւ, քո գովելի օրինակով, մի գեղեցիկ դաս տվեցիր քո իշխանազն քույրերին, թե երբ հայրենիքը վտանգի մեջ է, կնոջ քնքույշ մատներն ևս, ասեղի փոխարեն, պետք է նիզակ բռնեցնեն, իսկ թելի փոխարեն, պետք է ձգեն աղեղի ամրապինդ լարը։ Դու արդյամբ կատարեցիր այդ, և կատարեցիր հրաշալի կերպով։ Եվ ես, սիրելի Աշխեն, ահա այս արժանավոր կամարով զոտևորում եմ քո արիական մեջքը, ցանկանալով քեզ ավելի աշխույժ և զորություն[23]։

Տիկինը յուր ձեռքով կապեց ակնակուռ կամարը նրա մեջքին, իսկ օրիորդը ուրախության արտասուքը աչքերում համբուրեց նրա բարերար ձեռքը։

Մյուս կանանցից և օրիորդներից շատերը նույնպես ընծաներ ստացան։ Երբ պարգևաբաշխության հանդեսը վերջացավ, եպիսկոպոսը կարդաց օրհնության մաղթանքը։ Այդ միջոցին սեղանատան մեջ հնչեցին պալատական նվագարանները և թագուհին ամենայն սիրելությամբ

դարձավ դեպի հանդիսականները, հրավիրեց յուր մոտ ճաշելու։

Մինչև երեկո բազմությունը պալատի դռան հանդեպ, հրապարակի վրա, անհամբերությամբ սպասում էր նախարարներին։ Երբ նրանք հայտնվեցան, լսելի եղան ուրախության բարձրաղաղ աղաղակներ։ Ամբոխի ոգևորությունը չափ չուներ։ Ամեն կողմից շրջապատեցին սիրելի իշխաններին, ամեն կողմից նետվում էին, որ ձեռքերի վրա բարձրացնեն և այնպես տանեն, հասցնեն նրանց մինչև իրանց օթևանները։ Իշխանները համեստությամբ մերժեցին այդ մեծ պատիվը։ Բայց բազմությունը, դարձյալ նրանց առջևը ընկած, երգերով ու ցնծության ծափահարությամբ տարան, հասցրին մինչև իրանց օթևանները։

Ժ

ՄՈՒՇԵՂ

«ԽՈՏՈՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՐՆԱԿ»

> *«Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին (Պարսից) բառառան հալածան, և անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր։ Այս միաձի մազապուր Թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր... Զի զբազումս կոտորէին, և զբազումս յաւազանց Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս Թագաւորին Պարսից յաւարի, և ըմբռնէին զՏիկնանց-Տիկինն հանդերձ այլովք կանամբքն... Եւ զամենայն աւազանին. արս իբրեւ վեց հարիւր հրամայէր՝ մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով... Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ»։*
>
> *Փաւստոս*

Արտագերսի պաշարումը լուծվելուց հետո, Շապուհը յուր զորքերի մեծ մասը հանձնեց Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին, թողեց նրանց Հայոց գրավված երկրներում, իսկ մնացածը յուր հետ առնելով, ճանապարհ ընկավ դեպի Պարսկաստան։ Երկու ամբողջ շաբաթ անեց, մինչև նա հասավ Թավրեզ[1] և յուր ծանր բանակը դրեց այդ քաղաքի մոտ։

Միևնույն ժամանակ մի քանի գունդեր, բոլորովին այլ ճանապարհով, գնում էին դեպի պարսկական բանակը։ Դրանք անցել էին Հեր և Զարևանդ գավառները[2], և Կապուտան ծովակի[3] հյուսիսային եզերքով ավելի առաջ գնալով, արդեն հասել էին Աղի-գետի[4] ափերի մոտ։

Այդ գունդերը կազմված էին միայն թեթև ձիավորներից, որոնք ավելի ասպատակ-հրոսակների էին նմանում, քան թե կանոնավոր զորքերի, թեև նրանց թիվը փոքր չէր։ Գնում էին գիշերով, իսկ ցերեկները, ճանապարհից դուրս գալով, հանգստանում էին թաքթաքուր տեղերում։ Զարևանդից մինչև Թարվեզ տարածված արևակեզ անապատների ամռնային անտանելի տաթը չէր, որ ստիպում էր նրանց գիշերով ճանապարհ գնալ, այլ գուցե մի ուրիշ նպատակ, որ չէին ցանկանում շատ աչքի ընկնել։ Գունդերը միասին չէին գնում, նրանք բաժանված էին զանազան խմբերի, որոնց մինը մյուսից մի քանի մղոն հեռավորության ունեին։

Գիշերից բավական անցել էր, երբ առաջին խումբը հասավ Ագի-գետի մոտ։ Գարնանային հորդությունների ժամանակ գետը, յուր հեղհեղուկ ափերը ողողելով, բացել էր բավական լայն և խորընկած հեղեղատ, որի միջով հոսում էր նա։ Իսկ այժմ ջուրը պակասելով, քաշվել էր, թողնելով յուր ափերի մոտ ընդարձակ լճային տարածություն, որ պատած էր ճոխ բուսականությամբ։ Այդ տարածությունը այնքան խորն էր ընկած շրջակայքի մակերևույթից, որ եթե հազարավոր անձինք տեղավորվեին այնտեղ, դարձյալ վերևից ճանապարհով անցնողը տեսնել չէր կարող։ Այստեղ, գետի աջ ափի մոտ, իջևանեցին նրանք փոքր-ինչ հանգստանալու համար։ Ձիաների ոտները պնդեցին սանձակապերով, թողեցին գետեզերքի շամբուտներում արածելու, իսկ իրանք՝ ինչ որ ունեին պայուսակների մեջ՝ հանեցին, կերան, հետո գլուխները դրեցին իրանց զենքերի վրա և քնեցին։ Բայց մեկը մնաց արթուն։

Որպես մի մարմնացած անհամբերություն, թափառում էր նա գետի ափերի մոտ և, միևնույն ժամանակ, կրծում էր ձեռքի ապխտած մսի կտորը, որ յուր հետ վեր էր առել։ Գիշերային խավարը ծածկել էր շրջակայքը, և ոչինչ չէր երևում։ Միայն հեռվից մանր, հրեղեն աստղիկների նման նշմարվում էին պարսկական բանակի դեռ չշիջած լապտերները։ Նա անդադար նայում էր դեպի այդ կողմը։

Նա սկսեց գետի հակառակ ուղղությամբ վեր բարձրանալ, մինչև հասավ կամուրջին։ Պղտոր-լերդագույն[5] հոսանքով վազում էր գետը բազմաթիվ կամարների տակով, և յուր խուլ դղրդյունով աղմկում էր գիշերային լռությունը։ Նա չանցավ կամուրջը, այլ կանգնեց նրա մի կողմում, բարձր սյուներից մեկի մոտ, և այնտեղից թե յուր աչքերը և թե յուր լսելիքը լարեց դեպի պարսկական բանակը։ Երկար նայում էր նա, թեև որոշ ոչինչ չէր տեսնում, և որոշ ոչինչ չէր լսում, բացի գետի խուլ դղրդյունից։ Բանակը դրած էր Թարվեզ քաղաքի մոտ, որ գտնվում էր գետի ձախ կողմում, երեք ժամվա հեռավորության վրա։

Այդ միջոցին մեծ ճանապարհի եզրում, որ տանում էր դեպի կամուրջը, մեկը խլուրդի նման գլուխը դուրս հանեց գետնի մեջ փորված գարից և սկսեց դիտել յուր շուրջը։ Նրա աչքերը այն աստիճան սովորած էին գիշերային խավարին, որ, գայլանի նման, մթության մեջ ևս տեսնում էին։ Նա իսկույն նկատեց սյունի մոտ կանգնած մարդուն և, յուր գետնափոր որջից դուրս գալով, սկսեց մեծ ջանքերով սողալ դեպի նա։

— Ողորմացե՛ք խեղճին,— ձայն արձակեց նա, երբ բոլորովին մոտեցավ։

Սյունի մոտ կանգնած մարդը ցնցվեցավ, երբ տեսավ, որ յուր ոտների մոտ խլրտվում էր մի անորոշ, գնդաձև մարմին։

— Երկու օր է, ոչինչ չեմ կերել, մեռնում եմ սովից, ողորմացե՛ք խեղճին,— կրկնեց նա ավելի խղճալի ձայնով։

Սյունի մոտ կանգնած մարդը ձգեց յուր ձեռքի ապխտած մսի կտորը, թեև ինքը նույնպես ոչ պակաս սոված էր։ Նա շան նման խլեց անուշ պատառը, և իսկույն սկսեց կրծել, ոսկորները ևս մանրելով յուր սուր ատամներով։

— Դու շատ քաղցած ես երևում,— նկատեց նրան սյունի մոտ կանգնած մարդը։

— Ինչպե՞ս քաղցած չլինել, տե՛ր իմ, երկու օր է, որ կամուրջով ոչ ոք չէ անցնում։

— Ինչո՞ւ։

— Չե՞ս տեսնում, այնտեղ դրած է թագավորի բանակը։ Նրա երկյուղից ոչ ոք այդ կողմերով չէ անցնում։ Ճանապարհները դատարկված են։ Մարդիկ վախենում են տանից դուրս գալ և նրա զինվորներին հանդիպել։ Անիրավները, սոված գայլի նման, դեպի ամեն կողմ թափառում են...

— Նրանք քեզ ոչինչ չտվի՞ն։

— Անիծվի՜ն նրանք... Ես շատ ուրախ կլինեի, եթե ինձ չկողոպտեին... Զինվորներից մեկը վերարկուս խլեց, տարավ։ Ամբողջ տասն տարի՝ ինձ համար այդ վերարկուն թե՛ անկողին էր և թե՛ վերարկու... Ստացել էի մի հայ ուխտավորից... Չգիտեմ, ի՞նչ կլինի իմ դրությունը այսուհետև... Ինձ մնում է ցրտից սառչել, և սովից այրվել...

Վերջին խոսքերը մի այնպիսի խղճալի ձայնով արտասանեց նա, որ սյունի մոտ կանգնած մարդը առեց յուր ուսերից զինվորական վարապանակը և, տալով նրան, ասաց.

— Ահա քեզ մի վերարկու։

Նա մեծ ուրախությամբ խլեց անսպասելի ընծան և, օրհնելով յուր բարերարին, խնդրեց.

— Օգնի՛ր ինձ, ողորմած տեր, տանել այդ վիրավորին մինչև իմ խուղը։ Նա շատ հեռու չէ այստեղից։

Նա սկսեց սողալով քարշ գալ դեպի յուր որջը, իսկ անծանոթ բարերարը տանում էր նրա ետևից վիրավորին։ Այդ թշվառականը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ այն ողորմելի ուրուկներից[6] մեկը, որոնց արտաքսում են մարդկային բնակություններից, և նրանք կենում են քաղաքներից դուրս, մեծ ճանապարհների եզերքի մոտ, գետնափոր ծակերի մեջ, և ապրում են անցուդարձ անողների ողորմությամբ։

Եթե լույս լիներ, անկարելի էր առանց սոսկալու նայել այդ այլանդակված ճիվաղի վրա։ Ձեռքերն ու ոտքերն զոսացած էին։ Երկու ծայրատ մատներ միայն շարժվում էին ձախ ձեռքի վրա։ Երեսի վրա քթի կամ շրթունքների նշան չկար։ Դուրս ցցված ատամները ամբողջապես երևում էին։ Խորն ընկած աչքերը անհանգիստ կկոպով վառվում էին մազերը թափված, կոշտացած հոնքերի տակից։ Ձայնը խանձված էր, կարծես կոկորդը ամբողջապես քայքայված լիներ։ Նրա խուղը նույնպես մի ծակ էր, որ փորել էր գետնի մեջ։ Նրանում նստել կարող էր նա, բայց ձգվելու կամ պառկելու չափ ընդարձակություն չուներ։ Եվ այդ այնքան հարկավոր ևս չէր, որովհետև նրա փտած մարմինը տարածվելու պետք ևս չուներ։ Նրա ամբողջ կարասին մի խեցեղեն ջրի աման էր, որ դրած էր յուր համար հատկապես փորված մի խորշում։ Նրա ողորմելի բնակարանն առանց ծածքի չէր։ Չորս երկճղի փայտեր, քառակուսի ձևով, ցցած էին այդ ծակի չորս անկյուններում, և նրանց վրա դրած էին ուրիշ փայտերի կտորներ ու մացառներ, հետո ծեփել էին կավով։ Այդ ծածքը պահպանում էր նրա խուղը թե անձրևից և թե արևից։ Նա մտավ յուր որջի մեջ, բայց անծանոթ բարերարը չհեռացավ նրանից։ Երբեմն մարդկային հասարակությունից բոլորովին արհամարհված և բոլորովին մերժված արարածներն անգամ մի բանի պիտանի են լինում։

— Դու ասացիր, որ երկու օր է, ոչ ոք չէ՞ անցել կամուրջից,— հարցրեց նրանից անծանոթը։

— Ոչ ոք, տեր իմ։ Ես, ամբողջ օր ու գիշեր, իմ ծակից գլուխս դուրս հանած, նայում եմ։ Եթե մի ճանճ էլ անցնի, կտեսնեմ։ Միայն այս առավոտ, դեռ բավական մութն էր, անցան երկու հոգի։ Նրանք գնում էին դեպի բանակը։

— Դու լավ տեսա՞ր նրանց։ Ի՞նչ տեսակ մարդիկ էին։

— Տեսա, ինչպես չտեսա,— և նա սկսեց նկարագրել տեսած մարդիկներին։

— Այդ մարդիկը չե՞ն վերադարձել։

— Չեն վերադարձել: Եթե վերադառնային, ես կտեսնեի։

Կամուրջի այդ անբան պահապանի հաղորդած տեղեկությունները փոքր-ինչ հանգստացրին անծանոթին, և նա, բարի գիշեր մաղթելով թշվառ արտաքսյալին, հեռացավ նրա ողորմելի բնակարանի մոտից։ Սկսեց կրկին դիմել դեպի ձիավորների բացօթյա իջևանը։

Ամենքը քնած էին ծանր, անզգա քնով, որ վայելում է ճանապարհորդը երկար հոգնությունից հետո։ Ձիաներից շատերը կերել, կշտացել էին, նույնպես պառկած էին խոտերի վրա, և հռհռալով թավալվում էին, որ փոքր-ինչ կազդուրեն իրանց խոնջած մարմինը։ Միակ անձնավորությունը, որ յուր հանգստության մասին չէր մտածում, նա էր, որ կամուրջի մոտից վերադառնալով, լուռ անցավ յուր փոքրիկ բանակի միջով, նայեց յուրաքանչյուրի վրա, հետո գնաց, անշարժ արձանի նման կանգնեց գետեզրքի մոտ։ Նրա վառվռուն աչքերը հառած էին դեպի այն մանր, հրեղեն բծերը, որ նշմարվում էին հեռվից, երբեմն հանգչում էին, երբեմն դարձյալ հայտնվում էին։ Եվ նրա սիրտը, այդ կրակների նման, վառվում էր անհնարին ջերմությամբ, և ավելի ու ավելի բորբոքում էր նրա անհամբերությունը։

Այդ միջոցին կամուրջով անցնում էին երկու հոգի։ Ամենայն աչալրջությամբ նայում էին նրանք ետ ու առաջ և, միևնույն ժամանակ, հազիվ լսելի ձայնով խոսակցում էին.

— Եթե եկած լինեն...

— Անպատճառ եկած կլինեն...

— Այս գիշերվա համար ժամանակ նշանակեցին...

— Եվ այդ կամուրջի մոտ...

Նրանց ոտնաձայնը հասավ գետնափորի մեջ պահված ուրուկի սուր ականջներին։ Նա գլուխը դուրս մեկնեց ծակից և ուշադրությամբ նայեց յուր շուրջը։ «Այն երկու հոգին է...» — մտածեց նա, և սկսեց յուր գընդաձև մարմինով գլորվել դեպի եկվորները։

— Մի մարդ հարցնում էր ձեզ,— խավարի միջից ձայն տվեց նա։

Եկվորները մնացին շվարած, չգիտեին, թե ո՛րտեղից լսելի եղավ անտեսանելի ձայնը։ Ուրուկը ավելի մոտեցավ։ Նրանք տեսան խոսող գունդը։

— Ի՞նչ եղավ այն մարդը,— հարցրին նրանից։

— Այստեղ, գետի ընթացքով գնաց դեպի ցած։ Թո՛ղ աստված նրա գործին հաջողություն տա,— ավելացրեց նա,— թե՛ իմ սոված փորը կերակրեց, և թե՛ մերկ մարմինս զգեստավորեց։

Երկու մարդիկը գետի ընթացքով սկսեցին ցած իջնել, միմյանց ասելով.

— Լավ ժամանակ հասանք...

— Բայց որտե՞ղ գտնել սպարապետին...

Պատասխանը չուշացավ.

— Դո՞ւք եք,— լսելի եղավ սպարապետի ձայնը, որ դեռ կանգնած էր գետեզերքում։

— Այո՛, տեր,— ասացին նրանք, մոտենալով։

Սպարապետը ուրիշ ոչ ոք չէր, եթե ոչ Մուշեղ Մամիկոնյանը։

— Պատմեցե՛ք, ի՞նչ տեսաք,— դարձավ նա դեպի եկվորներին։

Նրանք սկսեցին պատմել։ Սպարապետը խորին ուշադրությամբ լսում էր։ Նա չհամբերեց՝ մինչև վերջացնեին, սկսեց ինքը զանազան հարցեր առաջարկել.

— Դու ինձ այն ասա՛, քաղաքի ո՞ր կողմումն է բանակը։

— Քաղաքի արևելյան կողմում, կարմիր լեռան ստորոտից փոքըր-ինչ ցած։

— Բանակի ո՞ր կողմումն են զետեղված արքայական վրանները։

— Դեպի վերևի կողմը, այսինքն՝ դեպի լեռան ստորոտը, մի բարձրության վրա։

— Իսկ արքայական կանանո՞ցը։

— Դեպի արքայական վրանների աջակողմը։

— Ինչպե՞ս է պատավորված բանակը։

— Ինչպես միշտ՝ պայտի ձևով, որի ծայրերը հասնում են մինչև արքայական վրանները։

— Որտե՞ղ են պահվում հեծելազորի ձիաները։

— Տարել են ավելի քան տասն փարսախ հեռավորության վրա արածացնելու։

— Ե՞րբ դիտավորություն ունեն չվելու։

— Երեք օրից հետո։

Մի քանի այլ հարցեր ևս առաջարկելուց հետո և բոլորի մասին մանրամասն տեղեկություններ ստանալուց հետո սպարապետը դարձավ նրանց, ասելով.

— Գնացեք հանգստացեք։

Նրանք հեռացան։ Հարցափորձը Շապուհի բանակի մասին էր։ Այդ երկու մարդիկը ծպտյալ կերպով ուղարկված էին լրտեսելու նրա բանակը։

Սպարապետը մնաց միայնակ և սկսեց դարձյալ անհանգիստ կերպով գեգերել գետի ափերի մոտ։ Նա այժմ գիտեր թշնամու բանակի դիրքը, գիտեր նրա ամենամանրամասն դրությունը, և այդ տեղեկությունները բավական էին նրան, որ նրանց հիման վրա՝ կազմեր յուր

վերին աստիճանի վստահ ձեռնարկության ծրագրից։ Նա դիտավորություն ուներ այս գիշեր հարձակվելու Շապուհի բանակի վրա։ Եվ նրա դիտավորությունը որքան երկյուղալի էր, այնքան և վճռական էր։

Արտագերսի պարիսպների առաջ՝ Շապուհի կորացլուխ կերպով հեռանալուց հետո, սպարապետը բավական չհամարեց Պարսից արքայից արքայի այդ ամոթալի պարտությունը, և վճռեց՝ թույլ չտալ նրան՝ ողջանդամ դուրս գալ Հայոց սահմաններից։ Նրա կատարած չարագործությունները այն աստիճան զզվելի էին, նրա գործ դրած միջոցները այն աստիճան վիրավորական էին, որ պետք էր պատժել այդ գազանին։ Նա ավերակ դարձրեց յուր անցած երկրները, նա կոտորել տվեց յուր ձեռքն ընկած գերիները,— այդ դեռևս կարելի էր տանել, Հայոց աշխարհը սովոր էր այդ տեսակ հարվածների։ Բայց նա Զարեհավանի ավերակների մոտ՝ ազատանի կանանց վերաբերությամբ գործ դրած անարգ վարմունքով՝ վիրավորեց Հայոց ազնվականների պատիվը։— Այդ անկարելի էր տանել, մանավանդ այն խոսքերից հետո, որ Արտագերսի առնախմբության օրը Հայոց թագուհին արտասանեց յուր ճառի մեջ. «Մեզ համար չէ համբերությունը, քանի դեռ կենա ա՛յն անպատվության մուրը, որ քսեց Շապուհը մեր նախարարների երեսին, նրանց կանանց և օրիորդներին մերկանդամ կանգնեցնելով յուր բանակի առջև...»։ Մի խումբ ազատանի երիտասարդներ, որ ներկա էին հանդեսին, հենց այն րոպեում վճռեցին վրեժխնդիր լինել։ Այդ էր պատճառը, որ սպարապետի հրոսակների մեծ մասը բաղկացած էր Հայոց նախարարների որդիներից, որոնք ուխտել էին վերականգնել վիրավորված պատիվը։

Սպարապետը անցավ նրանց գլուխը, առեց յուր հետ մի քանի գունդեր, և Շապուհի Արտագերսից հեռանալուց հետո, սկսեց անմիջապես հետամուտ լինել։ Նա այնքան չմոտեցավ, մինչև Շապուհը յուր զորքերի բազմությունը բաժանեց մի քանի մասերի։ Մի մասը հանձնեց Մերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին, և մի մասը յուր Զիկ և Կարեն զորավարներին, թողեց նրանց Հայոց գրաված երկրները պահելու և նոր նվաճումներ անելու։ Իսկ մնացած մասը յուր հետ առնելով, ճանապարհ ընկավ դեպի Պարսկաստան։ Այդ վերջին մասին հետամուտ եղավ սպարապետը։ Մինչև Թավրեզ հասնելը, նա մի հարմար տեղ, կամ մի հարմար ժամանակ չգտավ յուր դիտավորությունը ի կատար ածելու։ Այժմ թշնամին եկել, հասել էր Հայոց երկրի սահմանագլխին։ Եթե այժմ ևս չդիմեր յուր նպատակին, այնուհետև ամեն հույս պետք էր կորած համարել։ Որովհետև նա կանցներ սահմանը, ոտք կդներ պարսկական հողի վրա, և գործը կդժվարացներ։ Ուրեմն

պետք էր օգուտ քաղել այդ գիշերից, այդ վերջին և միակ գիշերից։

Նա շարունակում էր դեգերել գետի ափերի մոտ և լի սրտմտությամբ նայում էր դեպի արևելք։ Հեսուն՝ Իսրայելի հերոսը, հրամայեց արևգակին կանգնել, մինչև վերջացնե յուր կռիվը[7]։ Իսկ Մուշեղ Մամիկոնյանը՝ հայոց հերոսը կցանկանար հրամայել նրան, որ ամենևին չդուրս գա, մինչև սկսե յուր կռիվը։ Երբեմն նրա անհամբեր աչքերը դառնում էին դեպի այն ճանապարհը, որով եկել էր նա։ Նայում էր դեպի խավար մթությունը, և նրա մրրկածուփ սրտում անդադար կրկնվում էր այդ հարցը. «Ի՞նչ եղան... ինչո՞ւ այդքան ուշացան...»։

Շատ չանցավ, նույն տեղում, ուր իջևանել էին նրա ձիավորները, հասան մի քանի խումբ նոր ձիավորներ։ Նա փոքր-ինչ հանգստացավ. դրանց էր սպասում։ Բայց այդ դեռ բոլորը չէր. դեռ ետ մնացած մի քանի խմբեր ևս կային։

Նորեկ խմբերի գլխավորը մոտեցավ սպարապետին։

— Տեղեկություններ ստացա՞ր,— հարցրեց նա անհամբեր կերպով։

— Ստացա,— պատասխանեց սպարապետը ուրախ կերպով։

— Ի՞նչ կա։

— Ամեն ինչ լավ է։ Բայց մերոնք շատ ուշացան։ Ինչո՞ւ պետք է այդքան ուշանային...

— Երևի, կգան։ Դեռ բավական գիշեր կա։

— Բայց այստեղից մինչև բանակը բավական էլ ճանապարհ կա։ Մինչև հասնենք, բոլորովին կլուսանա։

— Ավելի լավ։ Գոնե կտեսնենք, թե ինչ ենք անում, և կույր հավքերի նման խավարի մեջ չենք խարխափի։

Սպարապետը ժպտաց, բայց գիշերային մթությունը թույլ չտվեց նկատել նրա հեգնական ժպիտը։

— Դու բավական վստահություն ունես քո վրա, Մեհրոպ,— ասաց նա։

— Ես ոչ թե բավական, այլ մեծ վստահություն ունեմ իմ ձիավորների վրա, Մուշեղ,— պատասխանեց փոքրիկ սպան։

Դա, իրավ, Մեհրոպ տարոնեցին էր։ Ինքը՝ կարճ, լեզուն՝ երկար։ Խոսակցությունը ընդհատեցին զանազան խուլ հնչյուններ, որ հայտնի չէր, թե որ կողմից էին լսվում։ Երկուսն էլ իրանց ուշադրությունը լարեցին դեպի այդ հնչյունները։

— Շեփորի և թմբուկների ձայներ են,— ասաց սպարապետը։— Բանակի կողմիցն են լսվում։

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց Մեսրոպը փոքր-ինչ անհանգըստանալով։

— Այդ պարսից առավոտյան ամենօրյա սովորությունն է,— հանգըստացրեց նրան սպարապետը։— Գիշերը լուսանալու մոտ է. շեփորները հնչեցնում են, թմբուկները զարկում են, որ մարդիկ զարթնեն, պատրաստվեն, ծագող արեգակին երկրպագություն տալու համար։

— Շա՜տ գեղեցիկ, թող զարթնեն։ Իսկապես լավ բան չէ քնած մարդու վրա հարձակվելը։

— Բայց այդ դեռ առաջին կոչնական ձայնն է։ Մինչև արևի ծագելը երկու անգամ ևս պետք է հնչեցնեն։

Նրանք սկսեցին ետ ու առաջ շրջել գետի ափերի մոտ, մինչև բոլոր սպառազեն խմբերը եկան։ Թե սպարապետը և թե Մեսրոպը՝ երկուսն էլ վազեցին դիմավորելու։ Տեսնելով նրանց, մի բարձրահասակ երիտասարդ շտապով ցած իջավ ձիուց և գրկեց երկուսին ևս։

— Ես, երևի, երկար սպասել տվի ձեզ,— ասաց նա ներողություն խնդրելով։— Բայց այդ իմ մեղքը չէ։ Իմ բռնած ճանապարհը սաստիկ ցեխ էր։ Ձիաները հազիվհազ կարողանում էին շարժվել։ Երեկվա անձրևը բոլորովին փչացրել էր ճանապարհը։

— Ուրեմն պետք է սպասե՞լ, մինչև ձեր ձիաները փոքր-ինչ հանգըստանան,— հարցրեց սպարապետը։

— Անպատճառ։ Սաստիկ հոգնած են։

Այդ զվարթ, փառահեղ երիտասարդը Սահակ Պարթևն էր՝ Ներսես Մեծի որդին։ Նրա ձիավորները առանձին խմբերով զետեղվեցան առաջիններից փոքր-ինչ հեռու, իսկ ինքը, սպարապետին և Մեսրոպին յուր հետ առնելով, մեկուսացան դեպի մի այլ կողմ, նստեցին գետեզրի մոտ, փափուկ խոտերի վրա։ Սպարապետը հաղորդեց նրանց՝ յուր լրտեսների միջոցով ստացած բոլոր տեղեկությունները։ Իսկույն կազմվեցավ մի բացօթյա պատերազմական խորհուրդ, որը տևեց մինչև պարսկական բանակից լսելի եղավ թմբուկների և շեփորների երկրորդ կոչնական ձայնը։ Այդ խորհրդավոր ձայնը շտապեցրեց նրանց։ Այդ ձայնը կոչում էր բարեպաշտ զրադաշտականներին դեպի աղոթք, դեպի երկրպագություն տունջյան լուսատուին, իսկ հայոց ուխտապահներին կոչում էր նա դեպի կռիվ, դեպի արյունհեղություն...

Նրանք վերկացան, հրամայեցին պատրաստվել և ճանապարհ ընկնել։ Շեփորների և թմբուկների երրորդ ձայնը պիտի ավետեր արշալույսի ծագումը։ Վճռեցին՝ որ գոնե այդ ժամանակ հասած լինեն նշանակած տեղը...

Կեսօրից բավական անցել էր։ Շապուհի բանակատեղը ներկայացնում էր խիստ տխուր տեսարան։ Կիսակործան վրանները, իրանց տեղում անշարժ մնացած, դատարկ էին։ Զինվորներ չկային նրանց մեջ, կար միայն պարսից վայելչասեր զինվորի հարուստ կարասին, որ մնացել էր իբրև ավար հաղթողին։ Ամբողջ բանակատեղը և նրա շրջակայքը ծածկված էին դիակներով։ Արյան ճահճությունը ամեն կողմում սարսափ էր ազդում։ Կենդանի մնացածները գերվել էին։ Փոքր չէր և փախստականների թիվը, որոնց դեռ որոնում էին։

Ինքը՝ արքայից արքան, չէր երևում ոչ դիակների մեջ և ոչ գերիների թվում։ Ասողներ կային, նույնիսկ պարսիկներից, որ նա փախավ հենց այն ժամանակ, երբ առաջին հարձակումը գործեցին։ Նա փախավ յուր սենեկապաններից մեկի հագուստով, որ չճանաչվի[8]։ Զինվորների մի քանի սրընթաց խմբեր գնացել էին դեպի զանազան կողմեր բռնելու նրան։

Արքայական փառավոր վրանները՝ իրանց բոլոր հարստությամբ՝ մնացել էին իրանց տեղում։ Մնացել էր և կանանոցը, լի արևելքի և արևմուտքի գեղեցկուհիներով։ Նրանց թվումն էր Արյաց տիկնաց-տիկինը[9] — Շապուհի թագուհին։ Նրանց թվումն էր և Որմիզդուխտ օրիորդը — Մերուժան Արծրունու նշանածը։ Հայ պահակների մի զինված շղթա բոլորել էր կանանոցի շուրջը և նրան անմատչելի էր կացուցել։

Պայտաձև բանակի հրապարակի վրա կանգնացրել էին գերիներին։ Նրանց միջից ջոկում էին ազնվականներին, ինչպես ոչխարները զատում են այծերից։ Երբ վերջացրին, ազնվականների թիվը հասավ վեց հարյուրի[10], որոնք զանազան աստիճանի զորապետներ և սպաներ էին։

Հրապարակի մեջտեղում, բարձր սայլացիցի ծայրին, շամփրած էր մի ճերմակազգեստ մարմին։ Դա մովպետան-մովպետն էր, այն հրեշը, որ Զարեհավանի ավերակների մոտ սայլացիցների վրա բարձրացրեց հայոց իշխանազն տիկիններին և օրիորդներին։ Ամենի աչքերը հառած էին դեպի այդ սոսկալի մարմինը։

Այդ միջոցին, Շապուհի արքայական վրանների մի կողմում հարած էր հայոց սպարապետի հասարակ զինվորական վրանը։ Այստեղից երևում էր նրա հաղթության ամբողջ արդյունքը՝ յուր բոլոր բավարար պատկերներով։ Ինքը, սպարապետը, նստած էր մի անշուք ճանապարհորդական բազմոցի վրա, որ բնավ չէր պատշաճում ոչ նրա աստիճանին և ոչ նրա փառքին։ Նրան շրջապատել էին յուր զինակից սպաները, որոնց մեջ առաջին տեղը բռնել էր Սահակ Պարթևը, և ապա Մեսրոպ տարոնեցին։

Լուռ էին նրանք, և բոլորի դեմքերի վրա նկարված էր մի տեսակ

պալատային դժգոհություն, որ տեղի է ունենում ջերմ հակաճառություններից հեռու։ Ինքը, սպարապետը, սաստիկ խռովված էր, և յուր անհանգիստ մատներով անդադար ոլորում էր գեղեցիկ, սևորակ ընչացքները, կարծես թե, նրանք արգելում էին բացվելու շրթունքներին թափելու այն կրակը, որ մի քանի րոպե առաջ հեղում էր նա յուր զինակիցների գլխին։ Ոչ սակավ խռովյալ դրության մեջ էր գտնվում և Սահակ Պարթևը։ Նա կթողներ և իսկույն դուրս կգար այդ վրանից, եթե զինվորական պարտաճանաչությունը չպահեր նրան։ Իսկ փոքրիկ Մեսրոպը, ինչպես ասում են, յուր կաշու մեջ չէր պարտակվում. անդադար շարժվում էր յուր տեղում, կարծես թե, փշերի վրա նստած լիներ։

Ի՞նչ էր, որ այդպես վրդովմունքի մեջ էր գցել նրանց։ Ի՞նչ էր, որ այն րոպեներում, երբ պետք էր հաղթության ուրախությունը վայելել, որի մեջն է զինվորի փառքը և նրա մխիթարությունը,— ընդհակառակն, ձգել էր նրանց խորին տրտմության մեջ։

Այդ բռնադատյալ հուզմունքը, որ բոլորապես լռության մեջ ամբոխված էր, անտարակույս, նորից պետք է պայթեր, եթե սպարապետի թիկնապահներից մեկը ներս չմտներ և զեկուցում չտար, թե դահճապետին բերել են։ Երբ կանգնացրին նրան վրանի հանդեպ, սպարապետը հարցրեց.

— Դո՞ւ ես պարսից արքայից արքայի դահճապետը։

— Այո՛, նվաստս է, տեր իմ,— պատասխանեց նա, խորին կերպով գլուխ տալով։

— Քեզ համար գործ բացվեցավ,— ասաց նրան սպարապետը ժպտալով, որ արտահայտում էր ավելի մաղձ և դառնություն, քան թե հեգնություն։— Դու, անտարակույս, կձանձրանայիր, եթե մի օր առանց մարդիկ մորթելու մնայիր։ Իսկ ես այսօր կտամ քեզ բավական մեծ պաշար։ Դու միայն այն ասա՛, քանի՞ օգնականներ ունես քո ձեռքի տակ։

— Օգնականներս սակավ չեն, սպարապետ տե՛ր, դու միայն ինձ գործ տուր, գո՛րծ, ես ծույլ չեմ իմ պաշտոնի մեջ,— ասաց նա դիվական ծիծաղով, և ապա ավելացրեց.— Արքայից արքան միշտ գոհ էր իմ ծառայություններով, և տարի չէր անցնի, որ ինձ մի քանի գյուղեր և ագարակներ չպարգևեր։ Հույս ունեմ, որ հայոց մեծափառ սպարապետը նույնպես առանց վարձատրության չի թողնի յուր ծառային։— Վերջին խոսքերի միջոցին՝ նրա գազանային աչքերում դարձյալ երևաց դիվական ծիծաղը։

— Դու ինձանից առատ վարձատրություն կստանաս և արքայից արքայի շնորհած պարգևները կմոռանաս։ Լսի՛ր, դահճապետ։ Մենք եր-

կար մնալու չենք այստեղ. մի քանի օրից հետո չվելու ենք այստեղից, և մեզ հետ պետք է տանենք մեր ձերբակալած գերիներին։ Եվ որպեսզի այդ բազմությունը մեզ համար չափազանց ծանրություն չլինի, դու պետք է փոքր-ինչ թեթևացնես մեր բեռը։

Դահճապետը շանթահարի նման ամբողջ մարմնով դողաց։

— Այդ քո մարդիկն էլ կարող են անել, սպարապետ տե՛ր,— ասաց նա բավական շփոթությունից հետո։— Իսկ ես, քա՛վ լիցի, իմ ձեռքերը չեմ թաթախի իմ ազգայինների արյան մեջ։

— Իրավ է, այդ իմ մարդիկն էլ կարող էին անել, եթե միայն մորթել պետք լիներ։ Բայց ա՛յդ չէ իմ ցանկացածը։ Իմ մարդիկը սաստիկ անվարժ են կենդանի մարդկանց մորթաղերծ անելու և նրանց պաճուճապատանքը խոտով լցնելու արհեստում։ Իսկ դո՛ւ, Տարոնի ծառայության մեջ, կատարյալ վարպետ ես դարձել այդ գործում։ Եվ ինձ այդ է հարկավոր։ Չէ՞ որ կենդանի մարդիկ յուր հետ տանելը այդ բավական մեծ ծանրություն է, իսկ նրանց մորթիքը տանելը այդ բավական հեշտ է և թեթև։

Դահճապետը, որ առաջ կարծում էր, թե յուր հանձն առնելիք ծառայությունը հայերի վերաբերությամբ կլինի, և այդ պատճառով այնքան մեծ հաճություն ցույց տվեց,— այժմ հասկանալով սպարապետի ցանկությունը, ոչ միայն դժկամացավ նա, այլ նրան տիրեց մի տեսակ կատաղություն, որով հանդգնություն ունեցավ պատասխանելու.

— Ճշմարիտ է, տե՛ր սպարապետ, մենք, պարսիկներս, շատ վարպետ ենք այդ արհեստի մեջ։ Եթե դու տեսնեիր, բոլորովին կհիանայիր, թե ինչպես ես մորթաղերծ արեցի քո հորը և նրա պաճուճապատանքը լցրի խոտով[11]... Իմ ձեռքով կատարեցի այդ... Այժմ ես ով որ տեսնելու լինի, չի ասի, թե սպանված է նա... Դեռ գույնը յուր տեղումն է, դեռ աչքերը նայում են, և նայում են միշտ յուր թագավորի վրա, և այնտեղ, Անուշ բերդում, մխիթարում են միմյանց... Ես իմ գործը միշտ մեծ հաճությամբ եմ կատարում, երբ իմ ձեռքը տալիս են ազնըվականներ... Իսկ քո հայրը, քեզ նման, ընդհանուր հայոց սպարապետն էր...

Դահճապետի լրբությունը, որով հիշեցնում էր նա սպարապետի հոր ցավալի վախճանը Տիզբոնում, վերին աստիճանի կծու էր։ Բայց դժբախտ հոր մեծահոգի որդին զսպեց յուր բարկությունը, ասելով.

— Տեսնո՞ւմ ես, այդ կնշանակե, որ ես չսխալվեցա իմ կարծիքի մեջ քո վարպետության վերաբերությամբ։ Դու սիրում ես ազնվականներին մորթաղերծ անել, և ես քո ճաշակը գոհացնելու համար կտամ

քո ձեռքը նույնպես ազնվականներ, և դիտե՞ս որքան,— թվով վեց հարյուր... Գնա՛, հագի՛ր քո արյունագույն համազգեստը, գնա՛, բորբոքիր քո բոլոր անգթությունները և կատարի՛ր քո ըղձալի ծառայությունը։ Ինձ նույնպես շատ ցանկալի է՝ պարսիկին պարսկի ձեռքով մորթել տալ...

— Այդ ես չեմ կարող անել,— պատասխանեց նա համառությամբ։— Հրամայի՛ր, թող ինձ մորթեն։

— Քեզ անել կտան...— ասաց սպարապետը և, դառնալով դեպի յուր զրահիկները, հրամայեց.

— Տարե՛ք այդ մարդուն, հավաքեցե՛ք Շապուհի բոլոր դահիճներին, և կատարել տվեցեք...

Նրան հեռացրին։

Ներկա գտնվողները անհամբերությամբ լսում էին սպարապետի խոսակցությունը դահճապետի հետ, որը վերջանալուց հետո, դարձավ նա դեպի շրջապատողները, ասելով.

— Ես այդ բարբարոսությունը ամենայն հաճությամբ կատարել կտամ. ես այդ վեց հարյուր պարսիկ ազնվականներին մորթել կտամ, և նրանց պաճուճապատանքները կտանեմ, կնվիրեմ Հայոց Տիկնոջը, թող նրանցով զարդարե յուր ամրոցի աշտարակների բարձրությունները։ Այո՛, ես այդ կանեմ, և դրանով դույզն կգոհացնեմ իմ հոր անմեռ հոգին, ա՛յն հոր, որի կյանքը հազարավոր ազնվականների արժեր, ա՛յն հոր, որին Շապուհը այնպես անարգի կերպով մորթազերծ անել տալով, կանգնացրեց Անուշ բերդի նկուղներից մեկի մեջ, յուր աքսորյալ թագավորի աչքերի առջև։ Վրեժխնդրության սուրբ պարտականությունը թույլ է տալիս ինձ անել այդ։ «Խոտորնակին՝ խոտորնակ»,— այսպես ավանդեցին մեր հայրերը։ Իսկ ա՛յն, որ դուք եք պահանջում, ես երբե՛ք ընդունել չե՛մ կարող...

— Ինչո՞ւ, Մուշե՛ղ,— հարցրեց Սահակ Պարթևը զայրացած ձայնով,— ինչո՞ւ չես կարող ընդունել։ Եթե դու հիմնվում ես վրեժխնդրության վրա, որպես մի սուրբ պարտականության վրա, մի՛ մոռանար, որ այդ դեպքում ևս կատարվում է նույն սուրբ պարտականությունը. դարձյալ «խոտորնակին՝ խոտորնակ...»

— Այդ դեպքում, Սահակ, կատարվում է մի աններելի անազնվություն միայն։ Իսկ մեզ վայել չէ այդ աստիճան ստորանալ։ Մենք պետք է ապացուցանենք, որ շատ բարձր ենք պարսիկներից։

— Մենք պետք է ապացուցանենք և ա՛յն, թե գիտենք անազնվությունը ըստ կարգին պատժել։ Ինչո՞ւ ես դու այսպես մոռացկոտ դարձել, Մուշեղ։ Դեռ շատ ժամանակ չէ անցել այն աղետավոր օրից,

երբ Շապուհը Զարեհավանի ավերակների մոտ՝ հայոց իշխանուհի տիկիններին և օրիորդներին մերկանդամ կանգնեցրեց յուր բանակի առջև։ Եվ այդ բավական չհամարեց. շատերին ուղտերի վրա բարձրացրեց, շատերին գերի վարեց։ Երբ անգամ Շապուհը իրան թույլ տվեց այդպես վարվել, այլևս ինչո՞ւ մենք պետք է խնայենք նրան։

— Ինչ որ կարող է իրան թույլ տալ պարսիկ Շապուհը, նույնը չէ կարող իրան թույլ տալ քրիստոնյա Մամիկոնյանը։ Ես մոռացկոտ չեմ, Սահակ, ես գիտեմ և հիշում եմ նրա վարմունքների բոլոր մանրամասնությունը։ Բայց դու ես մոռանում քեզ, ամենևին ի նկատի չառնելով, որ մեր վրեժխնդրության առարկան կին է։ Շապուհի եղեռնագործությունների վրեժը մենք պետք է առնենք նրա կանանցից։— Այդ ես պահանջում դու։ Իսկ ես նրա բոլոր կանանցը կդնեմ պատգարակների մեջ, և ամենայն հարգանքով կուղարկեմ Շապուհի արքունիքը,— և այդ կլինի իմ ամենամեծ վրեժխնդրությունը...

Սպարապետի կծու անհարկիությունը սաստիկ վիրավորեց պարթևազն երիտասարդին և նրա սեգ աչքերը վառվեցան բարկության բոցով։ Նա դրեց յուր պատրաստ ձեռքը ականակուռ դաշույնի վրա, և յուր լիահնչյուն, խրոխտալի ձայնով, որ ավելի որոտում էր, քան թե խոսում, արտասանեց հետևյալ խոսքերը.

— Ես հասկանում եմ, որ մեր վրեժխնդրության առարկան կին է, Մուշե՛ղ։ Բայց դու կարծո՞ւմ ես, որ այն վսեմ, այն սրբազան պատկառանքը, որ կարող է զգալ Մամիկոնյանը դեպի կինը,— դրա համար փակվա՞ծ է Պարթևի սիրտը։ Դու կարծո՞ւմ ես, որ միայն դո՛ւ ընդունակ ես՝ քեզ այնքան բարձր պահել և չստորանալ մինչև կնոջ հոգաթափինները։ Սաստիկ սխալվում ես, Մուշե՛ղ։ Այդ գործի մեջ՝ քո ասպետական փափուկ զգացմունքները ամենևին տեղի չունեն։ Ես նայում եմ գործի վրա բոլորովին զինվորական տեսակետից։ Մենք Շապուհի հետ պատերազմ ունենք, և այդ պատերազմը, անտարակույս, կտևե երկար, այո՛, շատ երկար։ Նրա կանայքը մեր ձեռքումն են, որոնց թվում է և Արյաց տիկնանց-տիկինը։ Կպահենք նրանց ամենայն պատվով մեզ մոտ, իբրև պատանդ, ինչպես Շապուհը պահել է մեր նախարարներից շատերի կանանցը առանձին բերդերում։ Մեր վարմունքի մեջ պախարակելի ոչինչ չկա, որովհետև դա վաղուց արդեն ընդունված զինվորական օրենք է։ Քանի դեռ տևում է պատերազմը, գերիներին ետ չեն տալիս։

Սպարապետը նույնպես ձեռքը դրեց դաշույնի վրա, պատասխանելով.

— Այդ ես էլ գիտեմ, Սահա՛կ, ինձ պետք չէ զինվորական օրենք-

ները քեզանից սովորել։ Բայց դու մի բան չգիտես, լսի՛ր, Սահակ։ Դու չգիտես Հայոց Տիկնոջ՝ Փառանձեմի խաբեբայությունը։ Նրա գեղեցիկ, մեղմ և քնքուշ կեղևի ներքո թաքնված է մի հրեշավոր հոգի։ Դու չգիտես, որ եթե տանելու լինենք այդ անմեղ կանանցը նրա մոտ, նա, անպատճառ, բոլորին կախ կտա Արտագերսի աշտարակներից։ Նա՛, որ դժբախտ Ողիմպիադային սպանել տվեց և հափշտակեց նրանից Հայոց տիկնանց-տիկնությունը[12], նա՛, որ հայոց արևելյան գնդերի քաջ զորավար Վաղինակին սպանել տվեց և յուր հորը հանձնեց արևելյան գնդերի մեծ զորավարությունը[13], նա՛, որ յուր հին ախոյանության համար սպանել տվեց յուր ամուսնու եղբոր որդի Տիրիթին[14], անտարակույս, չի խնայի և Շապուհի կանանցը։ Ես, իհարկե, պետք է ընդդիմանամ նրան, և դրանից կծագի մի մեծ հակառակություն իմ և նրա մեջ, որ շատ նպաստավոր չի լինի մեր գործերի այժմյան խառն դրության մեջ։ Նա իրավունք կհամարի կատարել տալ Շապուհի բոլոր կանանցը, որովհետև Շապուհը Զարեհավանի ավերակների մոտ սպանել տվեց նրա մորը[15]։ Ուրեմն, թե՛ ազնվությունը և թե՛ խոհեմությունը պահանջում է, որ մենք այդ կանանցը ուղարկենք պարսից արքունիքը։ Իսկ ես առանց ոչ ոքին լսելու պետք է անեմ այդ։ Եվ եթե մեկ հարկավոր է պատանդ,— այդ պատանդը կպահենք մեր ձեռքում։ Շապուհի կանանցում գտնվում է և Շապուհի քույրը՝ Որմիզդուխտ օրիորդը — Մերուժանի գեղեցիկ նշանածը։ Մենք կպահենք այդ օրիորդին, և այդ բավական է։ Դու գիտե՞ս, Սահակ, որ մեր պատերազմների սկզբնապատճառը միայն այդ նազելի օրիորդն է եղել։ Նրա գեղեցկությունը խելքից հանեց Մերուժանին, և նրան մոլորության մեջ գցեց։ Մերուժանը վատ մարդ չէր. նա յուր սիրահարության զոհը դարձավ։ Իսկ Շապուհը, օգուտ քաղելով այդ սիրահարությունից, խոստացավ տալ նրան Որմիզդուխտին, և դրանով հաջողացրեց Մերուժանին մի պատուհաս դարձնել հայոց աշխարհի համար։ Այժմ պահելով մեր ձեռքում Մերուժանի սիրած օրիորդին, միևնույն ժամանակ, մենք Մերուժանի թե՛ սանձը և թե՛ սիրտը մեր ձեռքում կունենանք։ Իսկ Շապուհը, առանց Մերուժանի գործակցության, ոչինչ անել չէ կարող։

Այսպես ջերմ կերպով վիճում էին երկու մեծ տոհմերի երկու հզոր ներկայացուցիչները՝ հայոց սպարապետի որդին և հայոց քահանայապետի որդին։ Բայց վերջինը այլևս ոչինչ չխոսեց, դժգոհությամբ վեր կացավ և դուրս եկավ սպարապետի վրանից։ Նրա հետ դուրս եկան Մեսրոպ տարոնեցին և մի քանի այլ իշխանազն երիտասարդներ։ Մեծամիտ Պարթևի արհամարհանքը ավելի վրդովեցրեց Մամիկոնյան իշ-

խանին։ Նա դարձավ դեպի յուր սենեկապաններից մեկը, հրամայելով.

— Գնա՛, արքայական կանանոցի ներքինապետի միջոցով իմացում տուր Արյաց դշխոյին, որ ես խնդրում եմ այցելել նրան։

Նա վեր կացավ, նրան շրջապատող բոլոր սպասավորները նույնպես ոտքի ելան։ Սկսեց դիմել դեպի Շապուհի կանանոցը, յուր հետ առնելով միայն յուր թիկնապահներին։

Շապուհի հարուստ կանանոցը բաղկացած էր առանձին-առանձին վրաններից, որոնց յուրաքանչյուրի մեջ պետեղված էր նրա կանանցից մեկը՝ յուր բազմաթիվ աղախիններով և նաժիշտներով։ Ներքինիների մի ստվար բազմություն հսկում էր գեղեցկության և փափկության այդ անմատչելի թանգարանի վրա, որ այժմ գերության մեջ էր ընկած։

Տխուր և արտասվալի աչքերով նստած էր յուր վրանում Արյաց տիկնանց-տիկինը, և յուր ոսկու ու գոհարների մեջ՝ պատկերանում էր որպես մի հուսահատ թշվառություն։ Նրա փառավոր վրանը հեշտության մի դրախտ էր, որ հաճելի էր նրա համար պարսկական պճնասիրությունը։ Երբ ներքինապետը ներկայացավ, հայտնեց նրան, թե հայոց սպարապետը կամենում է այցելել, այդ միջոցին նրա գեղեցիկ դեմքը բոլորովին գունաթափվեցավ, և շփոթությունից չգիտեր՝ ինչ պատասխանել։ Բարկությունը և երկյուղը փոփոխակի կերպով սկսեցին վրդովեցնել նրան։ Բարկանում էր, որովհետև մի հայ զորավար համարձակվել էր նրան մի այսպիսի լուր տալ։ Վախենում էր, որովհետև ինքը նրա գերին էր... Բայց, միևնույն ժամանակ, նրան զարմացնում էր այն միտքը, թե որպես գերի, սպարապետը կարող էր նրան քարշ տալ յուր մոտ, իսկ այդ ի՞նչ բարեհոգություն էր, որ սպարապետը յուր ոտքովն էր գալիս նրա մոտ։ Երկար մտատանջությունից հետո, ասաց նա ներքինապետին.

— Թող գա...

Հետո ավելացրեց.

— Խստությամբ կպատվիրես բոլոր ներքինիներին, որ ոչ մի անկարգություն չպատահի...

Եվ իրավ, սպարապետի կողմից սաստիկ անհոգություն էր, որ այնպես անփույթ կերպով, միայնակ, մի խումբ թիկնապահների հետ, պիտի մտներ պարսից արքայի կանանոցը, ուր ոչ մի օտար արարած մինչև այսօր ոտք չէր դրել։ Բոլոր ներքինիները ալեկոծվում էին զայրանային կատաղության մեջ։ Ո՞վ կարող էր արգելել այդ մոլեռանդներին, ո՞վ կարող էր զսպել նրանց կատաղությունը, թեև ամբողջ կանանոցը շրջապատած էր հայոց զինվորներով։ Նրանք հենց կանանոցի շեմքի վրա կխողխողեին հանդուգն այցելուին, որ համարձակվում էր

մուտք գործել արքայից արքայի օթևանը։ Բայց ներքինապետի սաստիկ պատվերը հանդարտեցրեց նրանց։ «Հայոց սպարապետը ձեր դիակների վրայով կանցնի և կմտնի տիկնանց-տիկնոջ մոտ, եթե դուք ամենափոքր անկարգություն անելու լինեք»,— սպառնացավ նրանց ներքինապետը։

Նա դուրս եկավ դիմավորելու սպարապետին, իսկ մյուս ներքինիները երկու կարգով շարվեցան մինչև դշխույի վրանի մուտքը։ Սպարապետը, շրջապատված յուր թիկնապահներով, անցավ նրանց շարքերի միջով, որ կանգնած էին որպես երկու կենդանի պատեր։ Թիկնապահները մնացին վրանի մուտքի աջ և ձախ կողմերում, իսկ ինքը ներքինապետի հետ ներս մտավ։

Վրանում ոչ ոք չերևաց, որովհետև, դեռ սպարապետը ներս չմըտած, թագուհին յուր բազմոցի վրայից վեր կացավ և անցավ վարագույրի ետևը, որ երկու մասն էր բաժանում վրանը։ Ներքինապետը ձեռքով ցույց տվեց, թե այնտեղ է թագուհին, և կարող է սպարապետը խոսել։ Որքան սպարապետի համար տարօրինակ էր այդ, այնուամենայնիվ, հարգելով ընդունված սովորությունը, այլևս չնատեց, և ոտքի վրա արտասանեց հետևյալ խոսքերը.

— Ողջո՜ւյն և խաղաղությո՜ւն Արյաց մեծափառ դշխույին։ Ես շատ ցավում եմ, որ ներկայանում եմ այնպիսի դառն և ցավալի դեպքերից հետո, որ խիստ սակավ բաներ պիտի գտնեմ մխիթարելու քեզ, ո՜վ մեծափառ դշխո։ Բայց պետք է հաշտվենք պատերազմի սխուր արկածների հետ։ Այդ գործում մենք, հայերս, այնքան հանցավոր չենք, որքան հանցավոր է քո թագավոր-ամուսինը, ո՛վ մեծափառ դշխո։ Նա զենքը ձեռին ոտք դրեց մեր երկրի վրա և մեզ ստիպեց նույնպես զենք բարձրացնել նրա դեմ։ Բայց ես եկա ավետելու քեզ, ո՛վ մեծափառ դշխո, որ հայոց նախարարները գիտեն թշնամու վատությունը լավությամբ ջնջել։ Դու, իհարկե, ականատես եղար, թե ո՛րպես վարվեցավ քո թագավոր-ամուսինը մեր կանանց հետ՝ Զարեհավանի ավերակների մոտ։ Բայց ես չեմ ցանկանա նրա չարության փոխարեն՝ չար գործել։ Ես քեզ, մեծափառ դշխո, և Շապուհ արքայի բոլոր կանանցը, որ այժմ գերի են իմ ձեռքում, իրանց աղախիններով ու ներքինիներով, կդնեմ ժանավարների[16] մեջ, և էգուց ամենայն պատվով կուղարկեմ Տիզբոն։ Ձեզ կուղեկցեն իմ ձիավորների զինված խմբերը, և ապահովությամբ կհասցնեն մինչև Շապուհի արքունիքը։ Թո՜ղ Շապուհը տեսնե ձեզ, և գուցե ամաչանա, թե ինքը ո՛րքան անիրավ վարվեցավ...

Դեռ սպարապետը յուր խոսքերը չէր ավարտել, հանկարծ թագուհին

վարագույրի ետևից դուրս հայտնվեցավ, և հափշտակված կերպով գըրկելով սպարապետի ոտները, բացականչեց.

— Դու մարդ չես, քո լեզվով խոսում է անմահ Որմիզդի ոգին, որ բոլոր բարությանց աղբյուրն է[17]։

Այդ անակնկալ հայտնությունը այն աստիճան շփոթեցրեց սպարապետին, որ նա հազիվհազ կարողացավ վեր բարձրացնել նրան և նստացնել յուր բազմոցի վրա։ Ոչ սակավ ապշության մեջ էր գտնվում և ներքինապետը, որ ներկա էր այնտեղ։ Տիկինը մի քանի րոպե մնաց լուռ խռովության մեջ, և ապա, յուր արտասվալից աչքերը բարձրացնելով, խոսեց.

— Քո մեծահոգությունը, ո՛վ քաջ, միշտ անմոռաց կմնա իմ սրտում։ Երբ կհասնեմ Տիզբոն, իմ առաջին խոսքը այդ կլինի իմ թագավոր-ամուսնին. «Հայոց սպարապետը յուր ազնվությամբ մի ծանր պարտք դրեց քո վրա, և այդ պարտքը միայն նույնպիսի ազնվությամբ կարող ես վճարել...»։

Տիկինը այժմ միայն նկատեց, որ սպարապետը ոտքի վրա էր, և մի առանձին սիրով խնդրեց նրան.

— Նստի՛ր, տե՛ր սպարապետ, քո առաքինությունը այնքան մեծ է, որ դու իրավունք ունես վայելելու իմ ամենախորին հարգանքը։

Սպարապետը, շնորհակալություն հայտնելով, նստեց և, միևնույն ժամանակ, բացատրեց նրան, որ դեռևս տևող պատերազմական հանգամանքները պահանջում են պարսից արքայական ընտանիքից մեկին, իբրև պատանդ, պահել Հայոց Տիկնոջ մոտ, և ինքը, սպարապետը, ազնիվ խոսք է տալիս, որ նրա թե պատիվը և թե կյանքը ամեն կերպով ապահովված կլինի։

— Որպես հաճո է քեզ, տե՛ր սպարապետ, այնպես արա,— պատասխանեց տիկինը խորին հեզությամբ։— Մենք ամենքս քո գերին ենք և քեզ ենք պատկանում։ Դու միայն շնորհում ես մեզ մեր թագավորին, առանց որևէ փրկանք պահանջելու։ Ընտրի՛ր մեզանից՝ որին որ քո կամքը կհաճի։

— Ես որոշել եմ Որմիզդուխտ օրիորդին։

— Շատ գեղեցիկ։ Ես կհրամայեմ ներքինապետին, որ Որմիզդուխտ օրիորդին յուր բոլոր աղախիններով ու ներքինիներով քեզ հանձնե։

Սպարապետը վերկացավ։ Երբ նա գլուխ տալով և բարի ճանապարհ ցանկանալով կամենում էր հեռանալ, տիկինը կանգնեցրեց նրան, ասելով.

— Անմահ աստվածներին է միայն հայտնի, տե՛ր սպարապետ,

մարդկանց ճակատագիրը և նրանց գալոցն ու ապագան։ Ո՞վ գիտե, թե էլ ինչեր կարող են պատահել։ Մարդկային բախտն ու դժբախտությունը միևնույն սանդուղքներն են ելևէջ անում։ Ես թողնում եմ քեզ մոտ մի հիշատակ, որպես առհավատչյա իմ երախտագիտության։ Ամեն անգամ, երբ դու որևէ կարիքի մեջ կգտնվես, ուղարկի՛ր ինձ մոտ այս նշանը, և Արյաց տիկնանց-տիկինը ամեն ջանք գործ կդնի, օգնության ձեռք մեկնելու քեզ։— Այդ խոսքերի հետ նա հանեց յուր մատից արքայական մատանին և առաջարկեց յուր ազատողին։

Սպարապետը քաղաքավարությամբ մերժեց, ասելով.

— Ձեր բարեսրտությունը, Թագուհի, ինձ համար մեծ առհավատչյա է։

Նա կրկին ու կրկին անգամ գլուխ տվեց և դուրս եկավ Թագուհու վրանից։

Ազատության լույսը արդեն տարածվել էր ամբողջ կանանոցում, և Շապուհի գեղեցկուհիների ուրախությունը չափ չուներ։ Ամենքը անսահման հրճվանքով օրհնում էին, փառաբանում էին այն մարդու կյանքը, որ նրանց ազատություն շնորհեց։ Եթե սովորությունների խստությունը չլիներ նրանց ուշևորությունը, անպատճառ, խմբովին դուրս կվազեին իրանց փակված օթյակներից, արտահայտելու իրանց շնորհակալության խորին զգացմունքները։

Երբ սպարապետը դուրս եկավ Թագուհու վրանից և սկսեց գնալ յուր իջևանը, այդ միջոցին զարմացած ներքինիները՝ խուռն բազմությամբ թավալվում էին նրա ոտքերի տակ և համբուրում էին զգեստների դրոշակները։ Իսկ կանանց վրանների հետ քաշած վարագույրների ետևից՝ հարյուրավոր գեղեցիկ աչքեր, լի գոհունակության արտասուքներով, նայում էին վայելչագեղ երիտասարդի վրա, որ յուր քաջության հետ միացրել էր այնքան հոգեկան ազնիվ հատկություններ։

Նա ո՛չ միայն բոլորին ազատություն շնորհեց, այլ չկողոպտեց և կանանոցի անբավ հարստությունը, որ ժամանակի սովորությամբ՝ յուր սեփականությունն էր համարվում։ Նա թողեց կանանոցը յուր ամբողջ պարագաներով անձեռնմխելի, յուր զինվորներին պատվիրելով, մի շյուղ անգամ չհափշտակել, ինչ որ կանանոցին է պատկանում։ Նա հավարի առեց միայն Շապուհի արքայական վրանների հարստությունը և նրա բանակը յուր բոլոր ռազմամթերքով[18]։ Իսկ կենդանի մնացած զինվորներին գերի վարեց։

Մուշեղի վարմունքը ընդհանուր համակրություն և խորին զարմացման արձագանք գտավ Տիզբոնում։ Պարսից համար մի տարօրինակ

հրաշք էր այդ տեսակ վարմունքը։ Շապուհը հրամայեց իսկույն վեր առնել նրա հոր պաճուճապանքը, որ Անուշ բերդում դրած էր Արշակ Թագավորի առջև, և պահել Տիզբոնի մեծ տաճարում։ Իսկ նրա մեծահոգության հիշատակը հավերժացնելու համար, նրա պատկերը, յուր ճերմակ ձիու վրա նստած, նկարել տվեց յուր ոսկյա բաժակի վրա, որով միշտ սովորություն ուներ խմելու։ Եվ ամեն անգամ, հանդիսավոր տոնախմբությունների ժամանակ, երբ ձեռքն էր առնում այդ բաժակը, հիշում էր ազնիվ հերոսի ազնիվ գործը, և խմում էր կրկնելով. «Ի փառս ճերմակաձիույն[19]»,— այսինքն՝ ճերմակ ձի նստողի փառքի համար։

Այդ՝ Մամիկոնյան իշխանի բարոյական վեհության արձանն էր, որ քանդակել տվեց պարսից արքայից արքան յուր սրտի և յուր ուրախության բաժակի վրա։ Բայց նա ուներ և յուր քաջության արձանը, որ մի ժամանակ կանգնեցրին նրա համար ասորիները Միջագետքում, որ կոչվում էր «Դուռն-Հոնի»[20]։ Եփրատի ափերի մոտ բարձրանում էր մի ահագին քարաժայռ, որի հարթած ճակատի վրա քանդակած էր մի սպառազինված հերոս, նստած սիգապանծ նժույգի վրա, իսկ նրա ոտների տակին՝ ընկած էր մի հաղթահարված հսկա։ Ձիավորը ներկայացնում էր Մուշեղ Մամիկոնյանին յուր անբաժան ճերմակ նժույգով, իսկ ընկած հսկան ներկայացնում էր այն սոսկալի ավազակին, որ երկար ժամանակ ասպատակում էր Միջագետքը և Հայաստանի հարավային գավառները։ Մի մենամարտության մեջ Մուշեղը սպանեց նրան և ազատեց երկիրը այդ հրեշի կատարած ավերմունքներից։

Բայց նրա մեծահոգության արձանը ավելի բարձր եղավ քաջության արձանից...

ԺԱ.

«ԵՐԿՈՒ ԶԱՐՅԱՑ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԸ»

«Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն... եւ չոգաւ հանդերձ նոքօք առ Թագաւորն յունաց։ Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց. և զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ Թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին։

Փաւստոս։

Մուշեղ Մամիկոնյանի հաղթական փառքով վերադարձը ընդհանուր ուրախություն պատճառեց թե՛ Հայոց տիկնոջը՝ Փառանձեմին և թե՛ նրա շուրջը խմբված ավագներին։ Մի քանի օր Արտագերսը տոնում էր

այդ փայլուն հաղթությունը։ Տիկնոջը հաճելի չթվեցավ միայն Շապուհի կանանցը վերադարձնելը, այնուամենայնիվ, թաքցնելով յուր խորին դժկամակությունը, հենց առաջին րոպեում, երբ սպարապետը ներկայացավ նրան, նա գրկեց և համբուրեց յուր քաջ հերոսի արժանի ճակատը։

Թշնամուց հափշտակած ավարը տիկինը հրամայեց բաժանել այն զինվորներին, որոնք մասնակցել էին այդ կռվի մեջ։ Ինքը ընդունեց միայն, իբրև թանկագին պարգև, Մուշեղի բերած վեց հարյուր պարսիկ ազնվականների պաճուճապատանքները, որոնց մի մասը դրեցին Արտագերսի աշտարակների բարձրության վրա, իսկ մյուս մասով՝ հրամայեց նա զարդարել սպարապետի տան ճակատը։

Այդ օրերում սպարապետը խիստ հազիվ անգամ յուր տանից դուրս էր գալիս՝ բազմության ուրախաձայն խնդակցությանը չհանդիպելու համար, որը սաստիկ ազդում էր նրա անփառասեր համեստության վրա։ Ազատանի կանայք և օրիորդներ խմբերով այցելում էին նրա տիկնոջը և «աչքալուսանք» էին տալիս։ Քահանան խաչը ձեռին հայտնվում էր և օրհնության մաղթանք էր կարդում։

Այդ բոլորի մեջ՝ ամեն ինչ ուրախալի էր, ամեն ինչ վերին աստիճանի գոհացուցիչ էր, միայն Մուշեղի և Սահակ Պարթևի մեջ տեղի ունեցած հակառակությունը, Շապուհի կանանց վերաբերությամբ, ոչ սակավ հոգսեր պատճառեց Հայոց թագուհուն։ Նրա համար խիստ ծանր էր, գործերի դեռ բոլորովին խառն դրության ժամանակ, հայոց այդ երկու նշանավոր տոհմերի ներկայացուցիչներին՝ միմյանց հետ անհաշտ հարաբերությունների մեջ տեսնելը։ Նա մտածեց հաշտեցնել նրանց, բայց, ի նկատի առնելով երկուսի անողոք համառությունն էլ, այդ միտքը թողեց մի ավելի հարմար ժամանակի։

Որքան Մուշեղը, Շապուհի կանանցը վերադարձնելով, շատերին տհաճություն պատճառեց, այնքան Որմիզդուխտին գերի վեր առնելով, մասամբ մեղմացրեց այդ տհաճությունը։ Թագուհին որոշեց նրա բնակության համար առանձին բաժին արքայական ապարանքում, և պահում էր խիստ հսկողության ներքո, թեև այնտեղ՝ նրա կացության համար ամեն արժանավայել բավականություններ պակաս չէին։

Ոչ սակավ ուրախություն պատճառեց թագուհուն յուր եղբայրների և մյուս ազնվականների ազատությունը, որոնց գերի էր տարել Շապուհը Զարեհավանի կոտորածից հետո, և որոնք Մուշեղի հաղթությամբ փրկություն գտան։ Այդ գերիների թվում կային շատ իշխանազն կանայք, օրիորդներ, պատանիներ, որոնց պետք է վարեին Պարսկաստան։

Մի քանի շաբաթ անցել էր այն օրից, որ Մուշեղը հաղթական փառ-

քով մտավ Արտագերսի ամրոցը։ Գիշեր էր։ Բերդի մեջ ամենքը քնած էին, ամեն շարժում դադարել էր։ Անքուն էր միայն բերդի թագուհին — Փառանձեմը։ Արքայական ապարանքի սենյակներից մեկում միայնակ նստած էր նա, իսկ նրա մոտ՝ խորին մտախոհության մեջ՝ կանգնած էր Մուշեղ Մամիկոնյանը։ Սպարապետի այրական դեմքը այս գիշեր չէր ցույց տալիս այն սովորական զվարթությունը, որ հատուկ էր նրա զինվորական ամուր բնավորությանը։ Մտախոհ էր և թագուհին։ Նա գտնվում էր յուր գիշերային զգեստի մեջ, որ յուր պարզությամբ մի առանձին վայելչություն էր ընծայում նրա շնորհալի իրանին։ Գլուխը հերարձակ էր, առանց որևէ զարդի, հոլանի բազուկները միայն կրում էին մի զույգ ոսկյա ապարանջաններ, որոնց ուրախ փայլը ամենևին չէր համապատասխանում տիկնոջ մռայլված դեմքին։ Պղնձյա բարձր աշտանակի վրա վառվում էր արծաթյա ճրագը, և տարածում էր յուր շուրջը խիստ թախծալի լուսավորություն։ Թախծալի էր և թագուհին, որը երբեմն վեր էր առնում մի բաց նամակ, նայում էր, և կրկին դնում էր յուր բազմոցի վրա, թեև մի քանի անգամ կարդացել էր այդ նամակը, որ նոր էր ստացել Բյուզանդիայից։

— Մեր գործերի այժմյան խառն դրության ժամանակ, Բյուզանդական կայսրության մեջ կատարված այդ փոփոխությունները ես բավական նպաստավոր եմ համարում մեզ համար, Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը։— Անիծյալ Վաղեսը մեռել է իրան արժանի չարամահ վախճանով[1], նրա տեղ այժմ կայսր է դարձել առաքինի Թեոդոսը[2]։ Ես տարակույս չունեմ, որ նա մեզ հետ լավ հարաբերություններ կպահե։

— Ես նույնպես տարակույս չունեմ...— պատասխանեց սպարապետը անվճռական ձայնով։

Թագուհին շարունակեց.

— Մեզ հարկավոր է հռովմեական դաշնակցություն, Մուշեղ։ Մենք մեր սեփական ուժերով, իրավ է, պաշտպանվել կարող ենք, բայց մեր երկիրը թշնամուց խալաս մաքրել՝ հազիվ թե։ Մենք կարոտ ենք դրսի ուժերի և մի լավ դաշնակցի։

— Բայց գիտե՞ս, տիկին, որքա՞ն թանկ է նստում մեզ հռովմեական դաշնակցությունը...

— Գիտեմ։ Բայց ես ընտրում եմ երկու չարյաց փոքրագույնը։ Մեր հարաբերությունները պարսից հետ այն աստիճան թշնամական կերպարանք են ստացել, որ ես ամենևին հույս չունեմ, թե այսուհետև մեր և Շապուհի մեջ որևէ հաշտություն կկայանա, ինչպես հույս չունեմ, որ նա իմ ամուսնին կվերադարձնե Անուշ բերդի աքսորանքից։ Մյուս կողմից, իմ որդին գտնվում է Բյուզանդիայում, կայսրի մոտ։ Նրան

պետք է բերել, և ես ցանկանում եմ, որ նա գա և հոր փոխարեն թագավոր դառնա։ Առանց թագավորի Հայաստանը պառակտությամբ է շարժվում, ինչպես մարմինը առանց գլխի։ Իսկ նրան բերել և յուր հոր գահը նստացնել՝ այդ, իհարկե, առանց նորընտիր կայսրի համաձայնության և նրա հետ նոր դաշնակցության՝ լինել չէ կարող։ Իմ որդին նրա մոտ պատանդ է[3], նրա ձեռքումն է... Եվ ես ավելի բարվոք եմ համարում քրիստոնյա կայսրի հետ դաշնակցությունը, քան թե անօրեն պարսկի հետ հաշտությունը։

Վերջին խոսքերը արտասանելու միջոցին նրա գեղեցիկ աչքերում փայլեց բարկության կրակը և նրա ձայնը զգալի կերպով փոխվեցավ։ Նա հուզանի ձեռքը տարավ դեպի ճակատը, նա քաշեց սև գիսակների գանգուրները, որ անգիտակցաբար թափվել էին գունաթափ դեմքի վրա։

Սպարապետը լռությամբ լսում էր, թեև այդ բոլորը գիտեր նա։ Լսում էր սրտի դառն զգացմունքը անբախտ տիկնոջ, որ կորուսյալ թագավոր-ամուսին ուներ, և նույնպես կորուսյալ թագաժառանգ-որդի։ Անողոք հանգամանքները ձգել էին Հայաստանի այդ երկու հույսերին՝ մեկին դեպի արևելք, մյուսին դեպի արևմուտք։ Թագավորը աքսորված էր Խուժաստանի Անուշ բերդում, իսկ թագաժառանգը պահված էր Բյուզանդիայի հռովմեական արքունիքում...

— Նստի՛ր, Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը,— ես երկար պետք է խոսեմ քեզ հետ։

Սպարապետը նստեց։ Տիկինը կրկին վեր առեց նամակը։ Այդ նամակը ստացել էր նա յուր հորից՝ Սյունյաց Անդովկ իշխանից, որ այդ ժամանակ յուր Բաբիկ որդու հետ գտնվում էր Բյուզանդիայում[4]։ Նամակի մեջ իշխանը խոսում էր ավելի յուր մասին, քան թե հայոց գործերի մասին։ Գրում էր, թե ինչպես նորընտիր Թեոդոս կայսրը հարգում է իրան, կամ ինչպես կայսրը շնորհեց իրան «պատրկաց պատրիկի» բարձր աստիճանը[5], նկարագրում էր յուր որդի Բաբիկի քաջագործությունները կռիվների մրցությունների մեջ, մեծ ուրախությամբ ավելացնելով, որ թե կայսրը և թե յուր ավագանին բոլորովին հիացած են նրա ճարպկություններավ։ Նախազգուշակում էր որդու համար փայլուն հառաջադիմություններ հռովմայեցոց ծառայության մեջ[6] և այլն։

— Ինչպես երևում է, հայրս այդ նամակը շատ շտապով է գրել,— նկատեց տիկինը։— Ոչինչ չէ գրում Ներսեսի մասին. արդյոք վերադարձե՞լ է նա աքսորից, թե տակավին աքսորանքի մեջ է գտնվում։

Տիկնոջ տարակուսանքը հայոց քահանայապետ Ներսես Մեծի մասին էր։

— Ես կարծում եմ, որ նորընտիր կայսրը նրան չի թողնի աքսո-

բանքի մեջ,— ասաց սպարապետը։— Թեոդոսը հայտնի է որպես մի բարեպաշտ մարդ։ Նա անպատճառ Վաղեսի աքսորած բոլոր հոգևորականներին կազատե իրանց դատապարտությունից։ Հարկավ, նրանց հետ և Ներսեսը ազատված կլինի։

— Ես էլ նույն կարծիքին եմ,— ասաց տիկինը խորին համոզմունքով,— մանավանդ, որ Թեոդոսը առաջուց ճանաչում է Ներսեսին[7] և սաստիկ հարգում է նրան։ Բոլոր պարագաները նպաստավոր են, Մուշեղ։ Հայրս այնտեղ է և մեծ փառք է վայելում կայսրի մոտ. եղբայրս այնտեղ է և մեծ հռչակ է ստացել։ Այնտեղ է և Ներսեսը, որ վայելում է կայսրի առանձին համակրությունը։ Դու պետք է գնաս Բյուզանդիա, Մուշեղ, դու պետք է տանես իմ խնդակցության նամակը կայսրին, նրա գահակալության համար։ Եվ այնտեղ, իմ հոր և Ներսեսի հետ, պետք է միջնորդես, որ իմ որդուն ուղարկեն՝ հայոց թափուր մնացած գահը ժառանգելու։

— Ես կգնամ, տիկին, և մեծ հույս ունեմ, որ ինձ կհաջողվի ի կատար ածել քո սրտային բաղձանքները։ Բայց ինձ անհանգստացնում է այն միտքը, թե ի՞նչ կլինի իմ բացակայության ժամանակ…

Սպարապետի հարցմունքը զգալի կերպով վիրավորեց տիկնոջ ինքնասիրությունը, և նա բավական գրգռված ձայնով պատասխանեց.

— Դու կարծում ես, Մուշե՛ղ, որ քո բացակայության ժամանակ ես չե՞մ կարողանա պահպանել հայոց երկիրը։

— Ես այդ չեմ կարծում,— ասաց սպարապետը սառն կերպով,— ես մեծ հավատ ունեմ քո խելքի և քո քաջասրտության վրա, տիկին։ Բայց մի քանի նոր հանգամանքներ, որոնք, երևի, քեզ հայտնի չեն, պետք է սաստիկ դժվարացնեն մեր աշխարհի գործերը։ Որմիզդուխտի մեր ձեռքը գերի ընկնելուց հետո, Մերուժանի կատաղությունը անցել է ամեն չափից։ Ես հաստատ տեղեկություններ ունեմ, որ նա, չբավականանալով յուր հրամանի ներքո գտնված պարսկական նշանավոր ուժերով, աշխատել է յուր կողմը ձգել Աղվանից Ուռնայր արքային[8] և Լեկաց Շերգիր արքային[9]։ Պարսից զորքերը յուր ձեռքում ունենալուց հետո, երբ նա կմիանա այդ երկու կիսավայրենի թագավորների հետ, կարող է այնուհետև շատ վնասներ հասցնել մեր աշխարհին։ Հեռավոր թշնամին, որպիսին է պարսիկը, այնքան վտանգավոր չէ կարող լինել, որքան դրացին։ Իսկ աղվանները և լեկերը մեր ամենամերձավոր դրացիներն են։ Եթե ուրիշ ոչինչ դրդիչ պատճառներ ևս չունենան նրանք, ավարառության և հափշտակասիրության փափագը բավական է, որ հրապուրե այդ դաժանաբարո լեռնականներին՝ հեղեղելու մեր երկրի սահմանները։

Տիկնոջ գեղեցիկ աչքերը դարձյալ վառվեցան բարկության բոցով։ Նա պատասխանեց սպառնալի ձայնով.

— Եթե Մերուժանը կհամարձակվի մի այդպիսի անխոհեմ քայլ անել, ես իսկույն Որմիզդուխտին կախ կտամ Արտագերսի պարիսպներից։

— Դրանով, տիկին, դու ավելի կկատաղեցնես նրան։ Որմիզդուխտին, ընդհակառակը, պետք է կենդանի պահել, Մերուժանին միշտ այն երկյուղի մեջ պահելու համար, որ եթե նա չչափավորե յուր վայրագությունը, անպատճառ յուր սիրած օրիորդի կյանքը վտանգի կենթարկե։

Տիկինը ոչինչ չպատասխանեց։ Նա սաստիկ զայրանում էր, երբ նրա հետ վիճաբանում էին։ Իսկ այժմ, թաքցնելով յուր վրդովմունքը, մի քանի րոպե լուռ նայում էր արծաթյա ճրագի վրա, կարծես, նրա մռայլ լուսավորության մեջն էր որոնում յուր մռայլված և խառնաշփոթ մտածությունների պարզվելը։

Նա մտածեց փոքր-ինչ զգալ տալ սպարապետին, որ նա շրջապատող հանգամանքների բոլոր կողմերը ճշտիվ կշռել չգիտե, և թե կատարվում են խիստ նշանավոր անցքեր, որոնց մասին տեղեկություն չունի, թեև, իբրև պետական ամենաբարձր անձնավորություն, պետք է նա ամենից առաջ գիտենար։

— Ես Մերուժանի կովկասյան լեռնաբնակների և Աղվանից ավագակների հետ միանալուց մեզ համար, գոնե այժմ, մի առանձին վտանգ չեմ տեսնում, Մուշեղ,— ասաց նա գլուխը վեր բարձրացնելով և ուղիղ սպարապետի վրա նայելով։— Ես ունեմ այլ տեղեկություններ, որ քեզ, երևի, հայտնի չեն։ Պարսկաստանում գործերը վատ են։ Ինձ հաղորդել են Տիզբոնից, որ Շապուհի այնպես շուտափույթ կերպով մեր երկրից հեռանալու պատճառը քուշանների արշավանքն է[10], որ այժմ կրկին սկսել են ասպատակել պարսից հյուսիս-արևելյան գավառները։ Քուշաններին շուտով խաղաղացնելը՝ հեշտ բան չէ. նրանք բավական ժամանակ կզբաղեցնեն Շապուհին։ Իսկ մենք այդ ժամանակից կարող ենք օգուտ քաղել։ Ուրեմն ա՛յն, որ ասում ես դու, թե Մերուժանը յուր կողմն է ձգել Լեկաց և Աղվանից թագավորներին, ես չեմ կարծում, որ նրանք ժամանակ գտնեն մեզ հետ գործ սկսելու։ Որովհետև, եթե Շապուհը գնալու է քուշանների դեմ, անպատճառ կկանչե Լեկաց և Աղվանից թագավորներին՝ մասնակցելու յուր արշավանքին։ Այդ նրա սովորությունն է, և ամեն անգամ այդպես է եղել, երբ նա քուշանների հետ պատերազմ է ունեցել։

Տիկնոջ քաղաքագիտական հմտությունները և, պարագաների համեմատ, նրա դատողությունները ընթացիկ գործերի մասին, որքան և ուրախացնում էին Մամիկոնյան իշխանին, այնուամենայնիվ, լսելով

Նրա ակնարկությունը յուր անուշադրության վերաբերությամբ, իբր թե յուր սպարապետը չգիտե, թե ի՛նչ է կատարվում Պարսկաստանում,— այդ կծու ակնարկությունը դուրս կոչեց սպարապետի սառն դեմքի վրա մի աննկատելի ժպիտ, որը ամենայն զգուշությամբ ծածկեց նա։

— Ո՞վ է հաղորդել քեզ, տիկին, այդ տեղեկությունները Տիզբոնից,— հարցրեց նա մի առանձին հետաքրքրությամբ։

— Դրաստամատը[11], մեր հավատարիմ ներքինին, դու, կարծեմ, ճանաչում ես նրան։ Նա ինձ նամակ էր գրել։

— Ե՞րբ ստացար այդ նամակը։

— Երեք օր կլինի։

— Այդ տեղեկությունները ինձ հայտնի են, տիկին։ Ես քեզանից ավելի վաղ ստացել եմ շատ մանրամասն տեղեկություններ Պարսկաստանի վերջին անցքերի մասին։ Իզուր ես մտածում, թե ես չգիտեմ՝ ի՛նչ է կատարվում մեր շուրջը։ Կարդա՛ այդ նամակը։— Նա հանեց յուր ծոցից մի սովար ծրար, տվեց թագուհուն, և նա սկսեց անհամբերությամբ կարդալ։

Նամակը գրել էր Մանվել Մամիկոնյանը՝ սպարապետի հարազատ եղբայրը[12], որ Պարսկաստանում գտնված հայկական հեծելազորքի զորավարն էր[13]։ Գրում էր Մուշեղին, թե Շապուհի անձամբ արշավելը Հայաստան՝ իրան ևս սաստիկ հոգսերի մեջ էր գցել. օր ու գիշեր մտածում էր, մի հնար գտնել՝ այդ գազանին հեռացնելու հայոց երկրից։ Վերջապես, երկար աշխատություններից հետո, կարողացել հավատարիմ անձանց միջոցով՝ քուշանների արքային դրդել պարսից դեմ, հասկացնելով նրան, թե բարեպատեհ ժամանակ է Պարսկաստանի վրա հարձակվելու, որովհետև Շապուհը յուր բոլոր զորքերով գնացել էր Հայաստան, և երկիրը մնացել է անպաշտպան։ Այսպիսով հասավ յուր նպատակին։ Քուշանները սկսեցին ասպատակել պարսից հյուսիս-արևելյան սահմանները։ Այդ լսելով, Շապուհը թողեց հայոց երկիրը և շտապեց դեպի պարսից վաղեմի թշնամին։ Այժմ նա գունդեր է կազմում, զորք է հավաքում, որ գնա քուշանների դեմ։ Ես ինքը, Մանվելը, յուր հայկական հեծելազորքով պիտի մասնակցե Շապուհի արշավանքին։ Յուր ներկայությունը պարսից բանակի մեջ՝ միջոց կտա իրան՝ պարբերաբար հաղորդել թշնամուն պարսից բոլոր թույլ կողմերը, և, հետևապես, գործը այնպես տանել, որ պարսիկները ամեն ճակատամարտում հաղթված լինեն։ Հույս ունի, որ Շապուհի բոլոր զորքերը ջարդել կտա Խորասանի անապատներում և, գուցե, իրան, Շապուհին ևս նրանց հետ ի կորուստ կմատնե... Նամակի վերջում ավելացնում էր, թե ինքը ամեն հնար գործ կդնե որքան կարելի է, երկարա-

ձևով պատերազմը, որպեսզի Տապուհը այդ կռիվներում զբաղված լինի, իսկ Հայաստանում ժամանակ գտնեն իրանց գործերը կարգի գնելու: Հետո շնորհակալություն էր հայտնում յուր եղբորը, Մուշեղին, գրելով. «Հայոց տանուտերերը որքան քեզ, նույնքան և ինձ համար ցավալի էին, սիրելի եղբայր: Գովում եմ քո սրամտությունը, միևնույն ժամանակ, և քո հեռատեսությունը, որ այդ խորհուրդը տվեցիր ինձ: Ուրիշ ավելի նպատակահարմար միջոց չէր կարելի գտնել՝ Տապուհի ներգործությունը, գոնե առժամանակ, հեռացնելու մեր աշխարհից, քան թե այդ, որ բոլորովին սիրտը կլանե թե՛ նրա ժամանակը և թե՛ նրա ուժերը: Շնորհակալ եմ, Մուշեղ, այդ միտքը քեզ է պատկանում...»:

— Ուրեմն դո՞ւ ես տվել Մանվելին այդ միտքը,— հարցրեց տիկինը նամակը կարդալուց հետո:

— Այո՛, ես եմ տվել,— պատասխանեց սպարապետը ցած ձայնով:

— Ե՞րբ:

— Հենց այն ժամանակ, երբ Տապուհը յուր զորքերի բազմությամբ ոտք դրեց մեր հողի վրա:

— Ինչո՞ւ մինչև այսօր չես հայտնել ինձ:

— Դու գիտես, տիկին, որ ես սովորություն չունեմ՝ դեռ չկատարած գործերիս մասին կանխապես խոսել: Ես սպասում էի տեսնել, թե ի՛նչ արդյունք կունենա իմ հղացած խորհուրդը:

— Արդյունքը անհամեմատ գեղեցի՛կ է, Մուշեղ,— պատասխանեց տիկինը, և նրա թախծալի դեմքը փայլեց անսահման ուրախությամբ:— Մի ավելի, քան թե այդ՝ նպատակահարմար արդյունք՝ ավելորդ կլիներ պահանջել: Թե՛ քո, Մուշեղ, և թե՛ քո քաջ եղբոր՝ Մանվելի, ջանքերը ամենայն գովության արժանի են:

Սպարապետը համեստությամբ գլուխը խոնարհեցրեց, չէր նայում սևեռված տիկնոջ վրա, որ այդ րոպեում հրճվում էր խորին, սրտապարար երջանկության մեջ: Դժբա՜խտ եղավ նա որպես ամուսին, դժբա՜խտ եղավ նա որպես մայր: Դեռ պատանեկության հասակում սիրելի որդուն բաժանեցին նրանից և, իբրև պատանդ, տարան բյուզանդական արքունիքը: Իսկ այժմ բախտավոր էր համարում իրան որպես թագուհի, որպես մի տառապյալ երկրի տեր և իշխան, որին մոտալուտ փրկությունը ուրախացնում էր նրան:

— Ես այժմ կատարյալ մխիթարված եմ համարում ինձ, սիրելի Մուշեղ,— դարձավ նա դեպի սպարապետը զգացված ձայնով,— ես այժմ բոլորովին համոզված եմ, որ Հայոց աշխարհը անտեր չէ: Բախտավո՞ր է այն աշխարհը, երբ ձեզ նման պաշտպաններ ունի: Քո այդ հաղթությունը, սիրելի Մուշեղ, ես ավելի գերազանց եմ համարում այն

փայլուն հաղթությունից, որ դու մի քանի շաբաթ առաջ կատարեցիր Բավրեվի պարսիկների մոտ։ Նա սրի և բազկի հաղթություն էր, իսկ դա խելքի և ռազմական հնարագիտության հաղթություն է։ Դու առանց զենքի՝ հեռացրիր վայրագ թշնամուն մեր երկրից, նրա դեմ մի այլ թշնամի դուրս բերելով։ Եվ մենք նրա բացակայությունից պետք է օգուտ քաղենք, պետք է շտապենք՝ շուտով կարգի գնել մեր գործերը։ Պարագաները զարմանալի կերպով ներդաշնակվում են միմյանց հետ։ Եվ ես Ամենակարողի աջն եմ տեսնում այդ բոլորի մեջ։ Նույն ժամանակ, երբ Պարսկաստանում Շապուհը զբաղվում է քուշանների պատերազմով, Բյուզանդական կայսրության մեջ մեռնում է անիծյալ Վաղեսը, և մենք միաժամանակ ազատվում ենք մեր երկու անիրավ թշնամիներից։ Հանգամանքները ավելի ևս նպաստում են մեզ, և Վաղեսի փոխարեն կայսր է դառնում մեր բարեկամ Թեոդոսը, որի հետ մենք կարող ենք ամեն տեսակ համաձայնություն կայացնել։ Կրկնում եմ, սիրելի Մուշեղ, պետք է օգուտ քաղել այդ բարենպաստ հանգամանքներից։ Ամեն րոպե թանկ է մեզ համար։ Դու պետք է գնաս Բյուզանդիոն, և պետք է աշխատես, որքան կարելի է, շուտով գնալ։

Սպարապետը, գլուխը խոնարհեցրած, լուռ մտածության մեջ էր։ Տիկինը շարունակեց.

— Դու պետք է գնաս որդուս բերելու։ Այժմ իմ նախարարները բոլորովին տարակուսյալ դրության մեջ են։ Ոմանք վհատությունից փախան դեպի պարսկական կողմեր. ոմանք անցան պարսից կողմը. իսկ մնացողները տատանվում են անհաստատ երկբայությունների մեջ։ Հարկավոր է մի միավորիչ գլուխ, որ բոլորին ձուլե ի մի մարմին,— և այդ գլուխը պետք է լինի իմ որդին։ Պատրաստվի՛ր, սիրելի Մուշեղ, և շուտով ճանապարհ ընկի՛ր։ Կայսրին հասցնելու նամակը ես իմ ձեռքով կգրեմ։ Մի նամակ ևս կգրեմ հորս, մի նամակ էլ Ներսեսին։ Հույս ունեմ, որ մեր հարգելի քահանայապետը, որ այնքան տառապանքներ կրեց յուր թագավորի և յուր հայրենիքի համար, այժմ վերադարձած լինի աքսորանքից։ Ես էգուց բաց կանեմ արքայական գանձարանը և կպատրաստեմ ամենաթանկագին ընծաներ նորընտիր կայսրին տանելու համար։ Իսկ քո դեսպանախումբը դու ինքդ կկազմես, և մեր նախարարներից, մեր ավագներից որին ցանկանում ես, կտանես քեզ հետ։ Ես տարակույս չունեմ, որ դու Բյուզանդիայում փառավոր ընդունելություն կգտնես։ Թեոդոսը թե՛ քեզ և թե՛ քո արժանահիշատակ հորը անձամբ ճանաչում է։ Նա շատ անգամ լսել է ձեր քաջությունները պարսից դեմ և շատ անգամ ուրախացել է ձեզանով։

— Ես պատրաստ եմ, տիկին,— պատասխանեց սպարապետը խո-

րին համարությամբ,— և մեծ հույս ունեմ, որ տերը կօգնի ինձ՝ կատարելու քո սրտային բաղձանքները, որ մեր ամենքիս բաղձանքներն են։ Բայց չեմ թաքցնում հայտնել քեզ, տիկին, որ ես տակավին մի որոշ եզրակացության չեմ հասել, արդյոք այդ բոլոր փոփոխություններից հետո, թե Պարսկաստանում և թե Բյուզանդական կայսրության մեջ, ի՞նչ դիրք պետք է բռնի Մերուժանը...

— Ես կարծում եմ, այսուհետև Մերուժանի մասին չարժե մտածել անգամ, որովհետև, Որմիզդուխտի մեր ձեռքը գերի ընկնելուց հետո, նա բոլորովին հուսահատված է, և մանավանդ պարտված է երևում։ Քանի օր առաջ ներկայացան ինձ նրա պատգամավորները, խնդրում էին, որ եթե Որմիզդուխտին հանձնելու լինենք Մերուժանին, նա պատրաստ է բոլորովին զինաթափ լինել և, գալով իմ ոտքը, զղջալ յուր չարագործությունները։ Միևնույն ժամանակ սպառնում էր նա, եթե Որմիզդուխտին հանձնելու չլինենք, նա մեր նախարարների բոլոր տիկիններին և օրիորդներին, որոնք յուր ձեռքումն են, կախ կտա նույն ամրոցների աշտարակներից, ուր պահվում են նրանք՝ պարսիկ բերդակալների հսկողության ներքո։ Ես, իհարկե, չհավատացի Մերուժանի ոչ զղջմանը, ոչ խոստումներին, և խստությամբ պատասխանեցի նրա պատգամավորներին, ասելով, եթե նրա ձեռքում գտնված գերիների գլխից մի մազ անգամ պակասելու լինի, նա Որմիզդուխտի մարմինը Արտագերսի պարիսպներից կախված կտեսնի։ Այդ խոսքերը լսեցին պատգամավորները և գնացին։ Այնուհետև Մերուժանը լուռ կացավ և ոչինչ չգործեց։

— Բայց նրա լռությունը ավելի վտանգավոր է, քան թե նրա գործողությունը...

— Այդ կթողնենք աստուծո տնօրինությանը, սիրելի Մուշեղ, մեզ հարկավոր է այժմ քո ճանապարհորդության մասին մտածել, որ մեր բոլոր հոգսերից ամենակարևորն է։

Կատարված իրողությունները, իրավ է, խիստ բարեպատեհ էին։ Բյուզանդական գահը ժառանգել էր հայոց բարեկամ մի կայսր, որի հետ կարելի էր ամեն տեսակ նպատակահարմար դաշնակցություններ կապել։ Իսկ պարսից թագավորը խառնված էր նոր պատերազմներով, որ կարող էին երկար ժամանակ նրա ուշադրությունը հեռացնել Հայաստանից։ Բայց Հայաստանում տակավին բույն էր դրել ընտանի օձը — Մերուժանը,— որի գլուխը պետք էր ջախջախել, որպեսզի երկիրը կատարյալ խաղաղություն ստանար։ Այդ միտքն էր, որ անհանգստացնում էր Մուշեղին։

Բարվեկի հաղթությունից հետո, նա գլխավորություն ուներ հար-

ձակվել Մեհրուժանի վրա, և մինչդեռ այդ արշավանքի ծրագրի մասին էր խորհում, հանկարծ թագուհին առաջարկում էր նրան՝ գնալ Բյուզանդիա։ Նրան խիստ ծանր էր, ներքին թշնամին տան մեջ թողնելով, հեռանալ տնից։

Մեհրուժանը հեշտ կերպով ընկճվող մարդկանցից չէր։ Թե՛ նրա քաջության և թե՛ հաստատամտության մասին մեծ համբավ ուներ սպարապետը։ Այդ էր պատճառը, որ յուր բացակայության ժամանակ՝ նրա տեղը գնելու համար՝ մի հավասարակշռող մարդ չէր գտնում սպարապետը։ Նա ուներ, արդարև, հայոց իշխաններից շատ քաջ և անձնանվեր պատերազմողներ, բայց նրանք պակաս էին այնպիսիները, որ Արծրունյաց հնարագետ իշխանի ռազմական ճարպկությունները ունենային։

Սամվելին դեռ շատ անփորձ էր համարում նա։ Այդ ոգելից երիտասարդին սիրում էր նա՝ որպես մի ազնիվ, փափկասիրտ հերոս, որի մեջ արիական քաջության հետ միացած էր քնքուշ զգացմունքների կրակը։ Նա կարող էր լավ զորապետ լինել, բայց չէր կարող լավ զորավար լինել։ Ուրիշ ոչ ոքի վրա վստահություն չուներ նա։ Ուրեմն ո՞վ պետք է պահպաներ երկիրը, ո՞վ պետք է մաքառեր ներքին թշնամու հետ։

Այդ հոգսերը, նրա բացակայության միջոցում, յուր վրա էր առնում հայոց թագուհին։ Բայց մինչև կարելի՞ էր հավատալ այդ կրքերով լի կնոջը, որի մեջ սաստիկ հակասություններ անդադար ծայրահեղության էին հասնում։ Նրա մեծամտությունը և վերին աստիճանի ինքնավստահությունը կարող էր շատ բան փչացնել։

Նա ընդդեմ չէր Բյուզանդիա գնալու խորհրդին, բայց ցանկանում էր, որ յուր երթը կատարվի երկիրը թշնամուց բոլորովին մաքրելուց հետո, որպեսզի, հայոց թագաժառանգը գալուց հետո՝ նոր խռովությունների չհանդիպի։ Եվ նրա կարծիքով՝ քանի դեռ Մեհրուժանը կենդանի էր, այդ խռովությունները չէին պակսի, որովհետև պարսից արքայից ա-քան նրան էր խռովացնել հայոց գահը։

Դեռ այդ տխուր տարակուսանքների մեջ էր սպարապետը, երբ նա, թեև ակամա, հանձն առեց թագուհու առաջարկությունը և վեր կացավ։ Թագուհին խորին գոհունակությամբ մեկնեց նրան յուր աջը, որը երկու ձեռքով բռնեց նա, նախ սեղմեց յուր շրթունքներին, և ապա տարավ դեպի ճակատը[14]։ Դա մի մեծ շնորհ էր տիկնոջ կողմից դեպի յուր հավատարիմ և անձնանվեր սպարապետը։

— Դու առավոտյան դարձյալ կգա՞ս ինձ մոտ,— հարցրեց նա մի առանձին սիրելությամբ։

— Այո՛, տիկին,— պատասխանեց սպարապետը։— Մենք բոլորովին չմերժեցինք մեր խոստակցությունը։

— Մնում է միայն խոսել այն բանի վրա, թե ի՛նչ կարգադրություններ պետք է լինեն քո գնալուց հետո։ Այդ կխոսենք առավոտյան։

Սպարապետը գլուխ տվեց և դուրս եկավ սենյակից։ Պալատական սպասավորները առաջնորդեցին նրան մինչև ապարանքի դուռը, ուր պահել էին նրա ձին և սպասում էին նրա ծառաները։ Նա նստեց, և ծառաները, հետ ու առաջ ընկած, սկսեցին տանել նրան դեպի յուր բնակարանը։ Երկու լապտերներ լուսավորում էին նրա ուղին, և լուռ մթախավարության մեջ՝ անցնում էր նա ամբողջ խորդուբորդ փողոցներով, որ ընկղմված էին գիշերային խորին մթության մեջ։ Ոչ ոք չէր երևում, բացի անքուն պահակներից, որ երբեմն խմբերով անցնում էին նրա մոտով, և ի պատիվ իրանց նիզակները բարձրացնելով, գնում էին դեպի պահապան կողմերը։

Թեև սպարապետ, թեև երկրի ապահովության հոգաբարձու, նվիրված էր նա հայոց աշխարհին յուր հոգու բոլոր զորությամբ։ Բայց, միևնույն ժամանակ, նա ընտանիքի խիստ գթառատ հայր էր։ Արտագերս ամրոցումն էին նրա սիրելի զավակները և նրա սիրելի կինը։ Ո՞վ կարող էր հանձնել նրանց մի այնպիսի խռովալի ժամանակում, երբ Արտագերսը դրված էր մի սոսկալի հրաբուխի վրա, որ ամեն րոպե կարող էր բորբոքվել։ Այդ բերդին էին ապավինած և հարյուրավոր իշխանական ընտանիքներ։ Այդ բերդին էր ապավինած և ինքը՝ հայոց թագուհին։ Ապագան նրան խիստ մթին գույներով էր երևում, և նրա զգայուն սիրտը ալեկոծվում էր նույնպես մթին տարակուսանքներով։ Այդ մտատանջությունների մեջ հասավ նա յուր բնակարանը, ցած իջավ ձիուց և ներս մտավ։ Նրան հանդիպեց դեռ չքնած կինը, որ անհամբերությամբ սպասում էր ամուսնին։

— Ինչո՞ւ այդքան ուշացար,— հարցրեց նա, ուրախությամբ ընդառաջ վազելով։

— Դու գիտես, սիրելիս, երբ մարդ Փառանձեմի ձեռքն է ընկնում, հեշտությամբ չէ կարող ազատվել,— պատասխանեց սպարապետը գրկելով նրան։

Տիկինը ժպտաց։

Երկու օրից հետո, սպարապետը փառավոր պատրաստություններով և ստվար ազատագունդ համհարզներով ճանապարհ ընկավ դեպի Բյուզանդիա։

Նա ընդունեց թագուհու առաջարկությունը և գնաց։ Բայց թագուհին տուժեց...

ԺԲ

ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏԸ

«Եւ եղեւ յետ չորեքտասաներորդ ամսեանն հալածմանց՝ որ յԱստուծոյ հասին ի վերայ զաղթականին բերդնէարգացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, զի ի Տեառնէ հասին պատուհասք ...Յանկարծակի ի միում ժամու հարկեր այր, եւ ի միւսում երկերիւր, եւ էր՝ զի հինգ հարիւր այր մեռան... Յորժամ սկսան, զամիս մի ոչ չերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ՝ զի էին արք իբրեւ մեռաան հազար, եւ կանայք իբրեւ վեց հազար...

«Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նամշաւօր։ Ապա եկն եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, եւ թշնամանեաց զտիկինն մեծապէս... Ել գաղտուկ, եւ փախեաւ ...Եւ եկին (զօրականք Պարսից) կալան զտիկինն, եւ իջուցին ի բերդէն։ Ելանէին ի բերդն ի վեր... գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին... Զինն տիւ եւ զինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտագերսն բերդին, հանդերձ տիկնան խաղացուցին (ի Պարսս)։

Փաւստոս:

Մուշեղ Մամիկոնյանի Բյուզանդիա գնալուց հետո թագուհին կարգադրեց, որ յուր մոտ գտնված իշխաններից նրանք, որ գավառատերներ և բերդատերներ էին, գնային իրանց երկիրը պահպանելու, իսկ յուր մոտ թողեց միայն արքունական ապատագունդ զորքերին[1] և յուր ոստանիկներին[2]։ Մեկնեցան բերդից Սահակ Պարթևը Մեսրոպ տարոնեցու հետ, մեկնեցավ և Ռշտունյաց օրիորդը՝ Աշխենը, յուր հետ տանելով յուր քաջ լեռնականներին։ Իսկ սպարապետը յուր ընտանիքը տեղափոխեց Մամիկոնյանների սեփական բերդը՝ Երախանի[3], որ գտնվում էր Տայոց երկրի անտառապատ լեռների մեջ։

Սպարապետի նախազգուշակությունները կատարվեցան։ Շատ չանցավ, Մերուժան Արծրունին պարսկական զորքերով եկավ և պաշարեց Արտագերսը։ Թագուհին այն առաջվան արհամարհանքով էր նայում այդ պաշարման վրա, որ ամեն անգամ, երբ Մերուժանի պատգամավորները ներկայանում էին նրան, առաջարկելով, թե Մերուժանը ամենայն հոժարությամբ պատրաստ կլինի թողնել պաշարումը և հեռանալ, եթե Որմիզդուխտին նրան կհանձնեն,— բայց պատգամավորները միշտ ստանում էին թագուհու խիստ պատասխանները։ Կատաղած Մերուժանը

ավելի ևս սաստկացնում էր պաշարումը, կտրելով բերդի հաղորդակցությունը ամեն կողմից, և աշխատելով, եթե զենքի ուժով անհնար լինի գրավել, գոնե սովով ստիպել նրանց անձնատուր լինելու։

Բայց բերդը համառությամբ կանգնած էր յուր անսասան ապառաժների վրա, և առ ոչինչ էր համարում թշնամու սպառնալիքները։

Երբ Մերուժանը օրըստօրե ամրացնում էր պաշարումը, միևնույն ժամանակ Վահան Մամիկոնյանը յուր հրամանի ներքո եղած պարսկական մյուս զորքերով փակել էր բոլոր ճանապարհները, որպեսզի թույլ չտա, որ Հայոց նախարարները պաշարյալներին օգնության հասնեն և Մերուժանի զորքերը ցրվեն բերդի շրջակայքից։

Բայց թագուհին դրսից օգնություն անգամ չէր սպասում։ Նա սպասում էր միայն յուր որդուն՝ Պապին։ Մի ամիս ևս, երկու ամիս ևս և գուցե շատ ամիսներ նա կարող էր ընդդիմանալ, մինչև կհայտնվեր ըղձալի որդին և յուր հետ կբերեր հունական լեգեոնները...

Բայց Բյուզանդիայում գործերը դեռ հապաղման մեջ էին։ Հայոց պատգամավորները, ժամանելով այնտեղ, նորընտիր կայսրին յուր մայրաքաղաքում չգտան։ Նա զբաղված էր գոթաց պատերազմներով։ Այդ պատերազմները, իբրև մի աղետալի ժառանգություն, մնացել էին նրա նախորդից՝ Վաղեսից։

Վաղեսի վերջին օրերում, գազանաբարո գոթերը, ահագին բազմությամբ դուրս գալով իրանց մթին լեռներից, հեղեղեցին կայսրության ընդարձակ գավառները և հասան մինչև Բյուզանդիայի պարիսպները։ Վաղեսը կռվեց քաջությամբ և ընկավ քաջությամբ։ Պատերազմի դաշտից նրան վիրավորված տարան մի գյուղական խրճիթ։ Թշնամին այրեց խրճիթը, նրա մեջ այրվեցավ և դժբախտ կայսրը[4]։

Երբ նրա մահից հետո, Սիրմիոնում Թեոդոսը ընդունեց Գրատիանոսի[5] ձեռքից կայսերական ծիրանին,— նորընտիր կայսրին վիճակվեցավ մի շատ դժվար գործ՝ նախ մաքրել երկիրը կիսավայրենի գոթերից և ապա գնալ Բյուզանդիա՝ ժառանգելու իրան հասած գահը։ Ամբողջ ինն ամիս տևեց, մինչև կարողացավ նա խաղաղացնել գոթերին, և ամբողջ ինն ամիս Հայոց պատգամավորները սպասում էին, մինչև վերադարձավ նա յուր մայրաքաղաքը։

Թեև Մուշեղ Մամիկոնյանը և յուր հետ եղած ավագանին խիստ փառավոր ընդունելության արժանացան Թեոդոսից, բայց դարձյալ նրանց խնդիրքը երկար մնաց անկատար, որովհետև նորընտիր կայսրը այն աստիճան խառնված էր յուր ներքին գործերով, որ ամենևին ժամանակ չուներ արտաքին քաղաքականությամբ զբաղվելու, մանավանդ հայոց գործով, որ պիտի հարուցաներ նրա դեմ, անտարակույս, մի

նոր պատերազմ, այն ևս պարսկական ծանր պատերազմ։ Այդ էր պատճառը, որ նա միշտ հետաձգում էր հայոց պատգամավորների գործը։

Նրա նախորդը, հալածասեր Վաղեսը, ուրիշ շատ հոգսերի հետ՝ թողել էր նրան և կրոնական մեծ խնդիրը, որ այդ ժամանակ հռոմեական ամբողջ կայսրությունը ալեկոծման մեջ էր պահել։ Թեոդոսը պետք է վերադարձներ Վաղեսի աքսորած բարձրաստիճան հոգևորականներին, և պետք է կռվեր բազմաթիվ աղանդների դեմ, որոնք Վաղեսի պաշտպանությամբ սաստիկ աճել և զորացել էին[6]։ Մայրաքաղաքում անդադար ժողովներ էին կազմվում, որոնց երբեմն ինքը կայսրը անձամբ ներկա էր գտնվում։

Երբ այստեղ զբաղված էին կրոնական ապարդյուն վիճաբանություններով, այնտեղ, Հայաստանում, Մերուժան Արծրունին ավելի և ավելի սաստկացնում էր Արտագերսի պաշարումը։ Իսկ հայոց թագուհին մեծ անհամբերությամբ սպասում էր յուր որդուն և կայսրի լեգեոններին...

Կայսրի խոստումների համեմատ, Բյուզանդիայից ստեպ սուրհանդակներ էին ուղարկվում, որոնք գալիս էին և, բերդի գաղտնի անցքերով մտնելով, ներկայանում էին թագուհուն, և միշտ միևնույն լուրերն էին բերում, թե «մի փոքր ևս սպասիր, մի փոքր ևս դիմացիր, և ահա՛ կգա քո որդին, յուր հետ բերելով հռոմեական զորություններ[7]...»։

Եվ թագուհին ամենայն անձկությամբ սպասում էր... և ամենայն եռանդով ընդդիմանում էր... Սպասում էր և նրա հետ գտնված բազմությունը...

Ամբողջ տասներեք ամիս[8] սպասեց նա, ամբողջ տասներեք ամիս քաջությամբ ընդդիմացավ նա։ Ո՛չ Մերուժանի վայրագությունը և ո՛չ պարսկական զորքերի կատաղությունը չկարողացան ազդել Արտագերսի անմատչելի ամրությունների վրա։ Բայց ազդեց երկնքի պատուհասը...

Տասնչորսերորդ ամսում հայտնվեցավ մի նոր և ավելի կատաղի թշնամի, որի հետ այլևս հնար չկար մարտնչելու։ Դա էր սոսկալի ժանտախտը[9]։ Անողորմ կերպով սկսեց կոտորել պաշարյալներին։ Ամեն օր մի քանի հարյուր հոգի մեռնում էին։ Մի անգամ թագուհու սեղանի մոտ, ճաշելու միջոցին, մեռան հինգ հարյուր հոգի։ Մահվան տագնապը խանգարեց ամրոցի ընդհանուր կարգը։ Ամեն ոք յուր կյանքի մասին էր մտածում։ Թեև այդ անապորույն ախտի հենց հայտնվելու սկզբում թագուհին հայտնեց բոլորին, թե ով որ ցանկանում է, կարող է թողնել և հեռանալ, բայց ոչ ոք չցանկացավ բաժանվել նրանից։ Ամենքը ուխտել էին մնալ նրա մոտ և մեռնել նրա ոտքերի մոտ։ Բերդի խոր-

քերում փախուստի համար շատ գաղտնի ճանապարհներ կային, բայց ոչ ոք օգուտ չքաղեց այդ ճանապարհներից։ Իրանց սիրելի Թագուհուն հավատարիմ մնացած բազմության մեջ՝ անձնազոհության խիղճը ավելի սաստիկ էր, քան թե ճարակող մահվան կատաղությունը։ Ժամանակ չէին գտնում դիակները թաղելու։ Կենդանի մարդիկ թաղման միջոցում՝ իրանք ևս ընկնում էին դիակների մոտ։ Ամեն ոք կանխապես փորում էր յուր գերեզմանը։ Ամեն ոք գիտեր, որ վաղը, և գուցե մի քանի րոպեից հետո, կարող է այլևս չլինել...

Բայց բերդի դրսում դեռ չգիտեին, թե ներսում ի՛նչ է կատարվում։ Պաշարողները և՛ մեռնում էին, և՛ պատրաստվում էին մեռնելու համար, և՛, միևնույն ժամանակ, կռվում էին արտաքին թշնամու հետ։

Ժանտախտի հետ համարյա զուգընթաց կերպով սկսվեցավ և սովը։ Սովը գերազանցեց ժանտախտին։ Սովը մոռանալ տվեց ժանտախտի ահռելությունը։ Հեշտ էր մեռնել, բայց շատ դժվար էր կենդանի մարդուն քաղցի կատաղության հետ մաքառել։

Բերդի պաշարման տասնևերեք ամիսների ընթացքում՝ նրա մեջ խմբված ահագին բազմությունը սպառեց բոլոր ամբարները։ Տասնևչորսերորդ ամսում այլևս ոչինչ չէին գտնում ուտելու։ Բերդում ոչ շուն մնաց, ոչ կատու և ոչ մի այլ չորքոտանի,— բոլորը կերան։ Ազատանի կանայք երկանաքարը առջևում դրած, ոսկորներ էին աղում և բաժանում էին սովյալներին, որոնք փոխինդի նման ուտում էին։ Ինքը՝ Թագուհին՝ կոշիկների և սրնխների կաշիներից՝ յուր ձեռքով ապուր էր եփում և բաժանում էր սովյալներին։ Դրանք ևս սպառվեցան։ Սպառվեցան նաև բերդի ապառաժների վրա բուսած մացառները, որ ավելի փութացնում էին մահացությունը, քան թե կշտացնում էին։ Օրհասական տագնապը այն աստիճան կատաղության հասավ, որ սովի խելագարության մեջ՝ ոմանք կերան իրանց զավակներին...

Այդ բոլոր սոսկալի արհավիրքների ժամանակ, երբ մարդկային ամեն հոգեկան և մտավոր զորությունները փշրվում են, խորտակվում են վերահաս փորձանքների հարվածների ներքո — երբ մարդը փոքրանում է, ոչնչանում է վտանգի ահավորության առջև,— անսասան մնաց միայն Թագուհին։ Մինչև յուր վերջին զինվորը կորցնելը՝ նա պահպանեց յուր հոգու բարձր զորությունը և յուր ամրոցի դռները բաց չարեց թշնամու առջև։

Նա մտավ այդ ամրոցը տասնևմեկ հազար սպառազինված տղամարդիկներով[11] և հինգ հազար իշխանազն տիկիններով[12]։ Ամենքը մեռան, ամենքը զոհ եղան հայրենիքի պաշտպանության սիրույն։ Կեն-

դանի մնաց միայն Թագուհին յուր երկու մանկահասակ նաժիշտների հետ[13]։ Կենդանի մնաց և Որմիզդուխտ օրիորդը։ Տասներեք ամիս անցուցին նրանք անվտանգ։ Տասնչորսերորդ ամսում միայն՝ միաժամանակ սկսվեցան սովը և ժանտախտը։ Եվ այդ մի ամսում ոչնչացրին ամեն կենդանություն,— այդ մի ամսում տարան տասնյակ հազար զոհեր...

Տասնչորսերորդ ամսի վերջին օրն էր՝ վերջին աղետալի օրը։

Երեկոյան արեգակի դողդոջուն ճառագայթները մի քանի րոպե ևս փայլ-փայլեցին ամրոցի բարձր աշտարակների կապտագույն ապենկարների վրա, և ապա, մարող կյանքի վերջին նշույլների նման, իսկույն հանգան։ Մթությունը սկսեց հետզհետե նսեմացնել ամրոցի պայծառ լուսավորությունը։ Տիրում էր ընդհանուր լռություն, ընդհանուր դատարկության հետ։ Տեղ-տեղ երևում էին միայն անթաղ դիակներ, որ մնացել էին որպես կերակուր գիշակեր թռչուններին։ Սև անգղների անհագ երամը, սև ոգիների նման, պտտվում էր այդ այլանդակված դիակների շուրջը, և երբեմն յուր անախորժ կռնչյունով աղմկում էր օդի մեռելային հանգստությունը։

Այդ միջոցին երկու մանկահասակ օրիորդներ, երկու գեղեցիկ Արտեմիսների[14] նման, շրջում էին ամրոցի ահռելի դատարկության մեջ։ Երկուսի ուսին ևս ձգած էր մի-մի արծաթյա կապարճ լի նետերով, երկուսն էլ ձեռքում կրում էին մի-մի թեթև աղեղ։ Որսորդության այդ սիրուն դիցուհիները հագել էին՝ սասանյան որսորդ կանանց նման՝ որսորդական կարճ զգեստներ։ Գլխների երկայն զիսակները պսակաձև կապած ճակատի վրա, կուրծքները կիսով չափ բաց, բազուկները հոլանի, և մերկ սրունքների վրա կապել էին նախշուն, փետուրի պես թեթև, մույկերը։ Դրանք Թագուհու երկու նաժիշտներն էին։ Մեկին կոչում էին Շուշանիկ, մյուսին՝ Համիկ։ Երկուսն էլ շուշանների նման ճերմակ էին, երկուսն էլ համիկի նման հոտավետ էին։ Նրանք հասան շրջապարսպի աշտարակներից մեկի մոտ։ Նայեցին դեպի վերև, հետո լուռ ժպիտով նայեցին միմյանց երեսին։

— Թող այս երեկո ես առաջ փորձեմ իմ բախտը,— ասաց Շուշանիկը հազիվ լսելի ձայնով։

— Ոչ, առաջ ես,— խնդրեց Համիկը։

Այսպես վիճելով, մոտենում էին նրանք մի զույգ աղավնիի, որ նստած էին աշտարակի բարձրության վրա և խորին հրճվանքով գուրգուրում էին միմյանց։

Շուշանիկը զգուշությամբ ձեռքը տարավ դեպի կապարճը, հանեց մի նետ, հարմարացրեց աղեղին և ուղղեց դեպի երջանիկ թռչունները։

Լարը ճայթեց, նետը սլացավ... Բայց նետումը անցավ անհաջող... Նրան անմիջապես հետևեց Համիկի նետը։ Աղավնիներից մեկը, թևերը թափահարելով, գլորվեցավ դեպի ցած։ Մյուսը թռավ, և օդի մեջ մի քանի տխուր պտույտներ գործելով յուր սիրելի վարուժանի շուրջը, և ապա անհայտացավ երեկոյան մթության մեջ։

Համիկը վեր առեց յուր որսը, սկսեցին առաջ գնալ, և նրանց վառվռուն աչքերը ուշադրությամբ դիտերում էին աշտարակների բարձրության վրա, ուր ամեն երեկո գալիս էին աղավնիները գիշերային հանգիստ գտնելու։ Շուշանիկը տխուր էր, որովհետև այդ առաջին անգամն էր, որ նրա նետը շեղվում էր նպատակից։ Իսկ Համիկի դեմքը, ընդհակառակն, փայլում էր մի առանձին, ինքնաբավական ուրախությամբ։

Այսպես ամեն երեկո՝ այդ երկու մանկահասակ աղջիկները հայտնվում էին ամրոցի շրջապարսպի մոտակայքում և թռչուններ էին որսում։ Այդ թռչուններից պատրաստում էին իրանց սիրելի թագուհու թե ճաշը և թե ընթրիքը։ Այդ թռչուններով կերակրվում էին և իրանք։

Երեկոյան մթությունը սկսեց հետզհետե թանձրանալ, և գիշերային խավարը, վերջապես, ծածկեց այն սոսկալի տեսարանները, որ այդ օրերում պատկերացնում էր Արտագերսը։ Այլևս չէին երևում դիակների կույտերը, որ նայողին սարսափ էին ազդում։ Այլևս չէին երևում մարդկանց լուծված, այլանդակված կմախքները, որ անթաղ ընկած էին փողոցների վրա։— Երևում էր միայն մի բարձրահասակ կին, որ վառած ջահը ձեռքին՝ միայնակ շրջում էր այդ դիակների մեջ։ Նա նմանում էր այն Արալեզ[15] աստվածուհիներից մեկին, որ մի ժամանակ, կռվից հետո, շրջում էին պատերազմի դաշտում, և հայոց ընկած քաջերին կյանք և անմահություն էին շնորհում։ Տխուր, սրտաբեկ հայացքով աչք էր ձգում նա անբախտ զոհերի վրա, և ուշիկ քայլերով անցնում էր։ Նրանցից շատերը մի քանի օր առաջ կենդանի էին, նրանցից շատերը նրա սիրելիներն էին։ Իսկ այժմ ընկած էին անխնամ, անտեր, զուրկ այն միակ մխիթարությունից, որ վայելում է մահկանացուն, մայր-հողի գրկում հանգիստ գտնելով։ Տխո՞ւր էր տեսարանը, մահվան չափ տխո՞ւր էր։ Մոր կուրծքին կպած, հանգել էր սիրելի զավակը։ Նորափթիթ օրիորդը՝ խամրած, դալկացած, ընկել էր, որպես մի նորափթիթ ծաղիկ, որ յուր արմատից կտրում է, ցած է տապալում հնձավորի անգութ մանգաղը։ Սոսկալի՜ էր այդ հունձքը. դա անօրեն Կրոդների[16] անողորմ հունձքն էր...

Նա, ջահը ձեռին, շարունակում էր առաջ գնալ։ Նրա գեղեցիկ դեմքը, ջահի պայծառ լուսավորության առջև, արտահայտում էր որդե-

կորույս մոր անմխիթար թախծությունը։ Բայց նա՛, այդ դժբա՛խտ մայրը, կորցրել էր յուր հազարավոր զավակներին... Նա կորցրե՛ց բոլորին, բայց չկորցրեց յուր սրտի վեհությունը։ Նա զրկվեցավ բոլորից, բայց պահպանեց յուր կամքի երկաթյա ամրությունը...

Նա հառաջ էր ընթանում և նրա թեթև զգեստների երկար ջղանցքները, քսվելով փողոցների անհարթ սալահատակին, գիշերային լռության մեջ՝ արձակում էին խիստ մեղմ, մելամաղձական սոսափյուն։ Նա դուրս եկավ նեղ, խորդուբորդ փողոցներից, և յուր արագ քայլերը ուղղեց դեպի երկու բարձր աշտարակներ, որ երկու վիթխարի հսկաների նման, կանգնած էին ամրոցի գլխավոր դռան աջ և ահյակ կողմերում։ Ներս մտավ աշտարակներից մեկի դռնից, սկսեց ոլորապտույտ սանդուղքներով վեր բարձրանալ։ Ջահի լույսը խռովեց չղջիկների գիշերային հանգիստը, որոնք սովար խումբերով թաքնվել էին այդ հինավուրց շինվածքի մթին խորշերում։ Մի ակնթարթում, որպես մի սև թուխպ, փոթորկեցին նրանք աշտարակի դատարկությունը, և նրա խուլ կամարները թնդացին հարյուրավոր մաշկաթևիկների թափահարումից։ Մի քանիսը իրանց սառն, անախորժ թևիկներով զարկվեցան նրա գեղեցիկ երեսին։ Բայց նա ոչինչ չզգաց, միայն ձեռքով պահպանեց ջահը, որ չհանգցնեն։

Երբ հասավ մինչև աշտարակի կատարը, մի առանձին խնամքով վեր առեց այնտեղ դրած ճրագները, վառեց ջահի լույսով և դրեց իրանց տեղում, նեղ լուսամուտների մոտ։ Ավարտելով յուր գործը, շտապով ցած իջավ։ Մոտեցավ ամրոցի երկաթյա դռներին։ Խորին ուշադրությամբ քննում էր ծանր փականքները, նայում էր ամուր նիգերին և շոշափում էր հաստ սողնակներն ու պարզանակները։ Ամեն ինչ յուր տեղումն էր, ամեն ինչ կարգ և պատրաստ էր, միայն պահապանները չկային։ Նա անցավ դեպի մյուս աշտարակները։

Աշտարակների բարձրության վրա՝ տեղ-տեղ հանդիպում էր նա գիշերապահ զինվորների, որ նիզակը կուրծքին սեղմած, պառկել էին մերկ հատակի վրա։ Այդ մշտարթուն պահապանները, որ ամբողջ գիշերը իրանց դիտանոցի գագաթից հսկել գիտեին շրջակայքի վրա,— այժմ քնած էին, և քնած էին մահվան անզգա քնով... Դա՛ էր օրհասը ժամանեց նրանց՝ հենց իրանց պաշտոնավարության րոպեում...

Այսպես ամեն գիշեր, ջահը ձեռին, միայնակ, հայտնվում էր այդ գեղեցիկ, բարձրահասակ կինը, և լուսավորում էր այն բոլոր աշտարակները, որ նայում էին դեպի պաշարող թշնամու բանակը։ Այդպես անում էր նա, որ թշնամուն կարծել տա, թե բերդում դեռևս մարդիկ կան, դեռևս ամեն ինչ յուր կարգումն է։

Այդ բարձրահասակ, գիշերաշրջիկ կինը Հայոց Թագուհին էր— գեղաշուք Փառանձեմը։ Նա այժմ յուր ամայի և անմարդացած ամրոցի թե՛ տերն էր և թե՛ նրա անքուն պահապանը, և յուր հոգու անսահման մեծությամբ լցնում էր նրա խորին դատարկությունը։

Համարյա միևնույն ժամանակ, երբ Թագուհին ջահը ձեռին շրջում էր յուր բերդի ամայության մեջ և յուր սրտի սաստիկ բաբախմունքով զննում էր, վերստուգում էր նրա յուրաքանչյուր ամրությունները,— այո՛, հենց միևնույն ժամանակ՝ բերդում հայտնվեցավ մի այլ խուլարկու։ Նա եկավ դրսից։ Նա ներս մտավ այն գաղտնի անցքերից մեկի միջով, որոնց թե մուտքը և թե ելքը հայտնի էր միայն Թագուհուն, և որոնց հարաբերությունը դրսի հետ՝ պահվում էր որպես խորին գաղտնիք։

Հաղթանդամ էր այդ մարդը, և յուր անհեթեթ հագուստով, որի լայն ծալքերը ալիքավոր խորշերով իջնում էին մինչև ոտները[17], ներկայանում էր որպես մի մռայլ, հսկայամարմին դև[18], որ գիշերային մթության մեջ անգամ, յուր մթին կերպավորությամբ՝ որոշվում էր տիրող խավարից։ Գոտիից կախ էր ընկած երկար թուրը, որ քարշ էր գալիս գետնով, և նա ձեռքով բռնել էր, որպեսզի ձայն չհանե։ Իսկ ազդրի վրա, հագուստի ներքո, թաքցրած էր երկսայրի նրանը։ Գիշերային խավարը բարեբախտաբար սքողել էր նրա ահռելի, ծաղկահար դեմքը, որի այլասարույն կաշին ծակոտքավոր սպունգի նմանություն ուներ։ Քոսակ և սաստիկ զարգացած ծնոտների վրա դուրս էին ցցված մի քանի մազեր միայն։ Աչքերի մեջ վառվում էր կատաղություն, որ խառըն էր նրա ինքնաբավական, դիվական հրճվանքի հետ։

Նա հեռվից տեսավ Թագուհուն, ջահը ձեռին, և ճանաչեց։ Այդ միջոցին նրա ահռելի դեմքի վրա անցավ մի դառն ժպիտ, և ուռած շրթունքները արտասանեցին մի նույնպիսի դառն անեծք... Նա կանգ առեց, խավարի մեջ սպասեց, մինչև Թագուհին հեռացավ։ Հետո սկսեց գաղտագողի հետևել նրան։

Ամրոցի խորին դատարկությունը, դիակների խառնափնթոր կույտերը և շրջակայքի ընդհանուր լռությունը, որ ամեն մի փոքր ի շատե զգացմունք ունեցող մարդուն կարող էին սարսափ և սոսկում ազդել, ընդհակառակն, հարուցանում էին այդ հրեշի մեջ թե՛ ուրախություն և թե՛ զարմացում։ Ուրախանում էր, որ այդ թշվառ դրության մեջ էր գտնում ամրոցը, զարմանում էր, որովհետև նրան դեռ պարզ չէր, թե ի՞նչ դժբախտ պատահարներից պետք է առաջ եկած լինեին այդ հանկարծակի ավերմունքը, որը ամենևին չէր սպասում։ Նրան այնպես էր թվում, թե վրեժխնդրության աստուծո անողոք բարկությունը մի քանի վայրկյանում

ոչնչացրել և մոխիր էր դարձրել ամեն ինչ, թեև դեռ կանգնած էին հզոր պարիսպները, թեև դեռ գիշերային խավարի մեջ աղոտ կերպով նշմարվում էին սպառնալի աշտարակները։ Բայց մարդիկ չէր տեսնում, և այդ էր, որ նրա անզուսպ սիրտը լցնում էր անսահման բավականությամբ։

Չկորցնելով Թագուհուն յուր հետախույզ տեսությունից, նա, միևնույն ժամանակ, ուշադրությամբ աչք էր ածում յուր շուրջը։ Նրան հանդիպում էին դիակներ միայն։ Եվ ամեն անգամ, երբ այդ սառն և անշունչ մարմինները խոչընդոտ էին դառնում նրա զգույշ քայլերին, և երբ խավարի մեջ մատներով շոշափում էր նրանց, մի առանձին զվարճություն էր զգում։ Նա այնքան սպասեց, մինչև Թագուհին, ավարտելով յուր գործը, դիմեց դեպի արքայական ապարանքը։ Այդ միջոցին նա սկսեց շրջել բերդի ամեն կողմերում, որպեսզի լավ ծանոթանա նրա դրության հետ, որը առավելին յուր համար երկբայական էր։ Խորին ուշադրությամբ հետազոտում էր մարտկոցները և զինվորանոցները, քննում էր զենքերի մթերանոցները և ամեն ինչ յուր տեղումն էր գըտնում։ Միայն ոչ զինվորներ կային և ոչ այլ մարդիկ։ Ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, միթե ամենքը մեռա՞ն,— այդ հարցերն էին պտտվում նրա խռովյալ գլխում, որ ամբոխված էր մռայլ մտքերով, որոնք նույնքան խավար էին, որոնք նույնքան զարհուրելի էին, որպես գիշերային ընդհանուր խավարը։

Երբ բոլորովին ստուգեց ամրոցի դատարկությունը, նա մոտեցավ արքայական ապարանքին։ Երկար դեգերում էր նրա շուրջը, և յուր լսելիքների բոլոր զորությամբ աշխատում էր ըմբռնել, արդյոք չէ՞ լսվում որևէ շշունջ ներսից։ Բայց այն ուրախ, մշտածիծաղ ապարանքը լուռ էր, լուռ էր որպես մի խուլ և անշարժ գերեզման։ Այդ սիրո և երջանկության պալատը, այդ անլուռ երգերի և նվագածության տաճարը՝ յուր բոլոր հոգեզվարճ կյանքով ու սովորություններով վաղուց ծանոթ էր նրան։ Նա գիտեր, թե օրվա ո՛ր ժամում ի՛նչ էր կատարվում այնտեղ։ Նա գիտեր նրա աղմկալի գիշերները, ուր մինչև առավոտ գուսանների հերոսական տաղերը և պարողների տոփյունը թնդեցնում էին ընդարձակ սրահները։ Իսկ այժմ ամեն ինչ մեռած էր, ամեն ինչ ննջում էր խորին, անմռունչ անշարժության մեջ։ Այդ անշարժությունը ավելի ծանր տպավորություն էր գործում ապարանքի թանձր մթությամբ, որ ապացույց էր մարդու և բնակիչների բացակայության։ Եվ այդ ուրախացնում էր նրան։ Այդ ապարանքը սովոր էր ամբողջ գիշերը վառված լինել, բազմաթիվ ճրագների անշեջ պայծառության մեջ։ Իսկ այժմ ոչ մի սենյակ լուսավորված չէր, և ոչ մի լուսամուտից ճրագ չէր երևում։

Մի սենյակից միայն նշմարվում էր աղոտ լույս, որը մարելու մոտ էր։ Դա թագուհու առանձնարանն էր։

Նա մի առանձին անվճռականությամբ ոտք դրեց գլխավոր դռան սյամի վրա, բայց տակավին չէր համարձակվում ներս մտնել։ Զգուշանում էր, գուցե ապարանքի բազմաթիվ դրանիկներից և ոստանիկներից ոմանք դեռևս մնացած լինեին։ Բայց միևնույն ժամանակ նրան խրախուսում էր այն միտքը, որ եթե ապարանքում մարդիկ մնացած լինեին, ուրեմն ինչո՞ւ էր թագուհին այնպես միայնակ շրջում, կամ ինչո՞ւ էր կատարում նա այն ծառայությունը, որ յուր գործը չէր։ Նա յուր անվստահ քայլերը փոխեց և ներս մտավ։ Նա ներս մտավ, և իսկույն անհայտացավ ապարանքի մթին նրբանցքների մեջ...

Այդ միջոցին Շուշանիկը ու Համիկը խոհանոցում զբաղված էին. մեկը փետրահան էր անում աղավնիները, մաքրում էր, մյուսը բորբոքում էր կրակը, որ շուտով խորովեն։ Բախտը նպաստեց նրանց և այն երեկո որսացին չորս աղավնիներ, որ խիստ հազիվ անգամ էր պատահում։ Իրանք ևս չորս հոգուց ավել չէին. թագուհին, Որմիզդուխտ օրիորդը և այդ երկու նաժիշտներն էին միայն մնացել բերդում։

— Այս գիշեր ճոխ սեղան կունենանք,— ուրախանալով ասաց Համիկը։

— Եթե մի կտոր հաց լիներ,— տխրությամբ նկատեց Շուշանիկը։— Ա՜խ, որքան ժամանակ է, որ հացի երես չենք տեսել...

Շուշանիկի բաղձանքը նույնպես տխրություն պատճառեց ուրախ Համիկին, որը, յուր ընկերուհուն մխիթարելով, ասաց.

— Աստված ողորմած է, սիրելի քույրիկ, մենք արդեն սովորել ենք առանց հացի՝ միայն մսով կերակրվել, և աստված ամեն օր ուղարկում է մեզ համար գեղեցիկ աղավնիներ։

— Թագուհին նույնպես սովորեց... այժմ խորոված որսի միսը մեծ ախորժակով է ուտում, բայց Որմիզդուխտ օրիորդը զզվանքով...

— Նա էլ կսովորի...

Շուշանիկը կրկին ընկավ տարակուսանքների մեջ։

— Մինչև ե՞րբ պետք է այսպես մնանք, Համիկ,— հարցրեց նա ցավալի ձայնով։— Ամենքը մեռա՜ն և հանգստացան։ Մենք միայն մնացինք։ Եթե մենք էլ մեռնեինք, կազատվեինք...

— Ինչո՞ւ մեռնեինք,— վշտանալով պատասխանեց Համիկը։— Եթե մենք մեռնեինք, ո՞վ պետք է ծառայեր թագուհուն։ Աստված մեզ թողեց նրան ծառայելու համար։

— Դու չե՞ս վախենում, Համիկ,— խոսքը փոխեց մելամաղձոտ Շուշանիկը։

— Ինչի՞ց պետք է վախենամ։

— Ինչպե՞ս ինչից։ Եթե պարսիկները գիտենան, որ բերդում մարդ չէ մնացել և հանկարծ կտրեն դուռը ու ներս մտնեն։ Այն ժամանակ ի՞նչ կանես...

— Այն ժամանակ,— պատասխանեց Համբիկը ծիծաղելով,— մենք մեր նետերով կկռվենք նրանց հետ և թող չենք տա, որ մեջ մտնեն...

Շուշանիկը նույնպես սկսեց ծիծաղել, բայց յուր ընկերուհու պարզամիտ խրոխտանքի վրա։ Նա հասակով ավելի մեծ էր, քան ոգելից Համբիկը։

Մինչ խաղանոցում երկու նաժիշտները այդ խորհրդածությունների մեջ էին, Թագուհին վերադարձավ ապարանքը։ Նա մտավ յուր առանձնարանը, աշտանակի վրայից առեց միակ ճրագը և ինքնին դուրս եկավ։ Հանդարտ, չափավոր քայլերով անցավ նա դատարկ, խավարի մեջ ընկղմված լուռ սրահները և մոտեցավ մի սենյակի դռան։ Գրպանից հանեց բանալին, դուռը բաց արավ։ Այդ գործողությունը թեև չափազանց զգուշությամբ կատարվեցավ, այնուամենայնիվ, ծանր դռան ճռնչյունը զարթեցրեց մի օրիորդի, որ թախտի վրա պառկած էր։

— Ջո՞ւր եմ ուզում... ծարա՞վ եմ...— եղավ նրա առաջին խոսքերը, երբ քնած աչքերը բաց անելով, տեսավ յուր մոտ Թագուհուն, ճրագը ձեռին։ Այդ խոսքերը այնպիսի մի պարզությամբ արտասանեց նա, որպես միամիտ երեխան դիմում էր սիրելի մորը, կամ մտերիմ դայակին։

— Միթե քեզ մոտ ջուր չե՞ն դրել,— հարցրեց Թագուհին մի այնպիսի կարեկցությամբ, որի անկեղծ հնչյունները լսվեցան նրա գթով լի, քաղցր ձայնի մեջ։

— Շատ անգամ մոռանում են...

Թագուհին ճրագը ցած դրեց, շտապով դուրս վազեց, և մի քանի րոպեից հետո կրկին ներս մտավ, ջրով լի արծաթյա թասը ձեռին։ Օրիորդը շնորհակալությամբ առեց թասը, շիջուց յուր ծարավը, ասելով.

— Բավական սա՞ռն է...

Այդ մանկահասակ աղջիկը Որմիզդուխտ օրիորդն էր՝ Շապուհ արքայի քույրը, Հայոց Թագուհու գերին, իսկ Մեհրուժան Արծրունու հանգերձյալ հարսնացուն։ Նա տասնեյոթ տարեկան հազիվ կլիներ, բայց, որպես արևելյան տաք երկնքի ծնունդ, վաղօրոք հասունացել և կազմակերպվել էր յուր չքնաղության բոլոր կախարդիչ հրապուրանքով։ Գեղեցկության աստվածը, կարծես, նրա վրա թափել էր յուր բոլոր ճիգը՝ մահկանացուներից անմահ մի էակ ստեղծագործելու։ Նրա խոշոր

աչքերի անսահման պայծառությունը միայն՝ բավական էր, որ յուր մեջ ընկղմեր Մերուժան Արծրունու բոլոր խելքը, միտքը և հոգին։ Նրա մեջ այն աստիճան քաղցրություն և այն աստիճան մեղմ քնքշություն կար, որ Հայոց Թագուհին, չնայելով որ այնքան դառն ատելություն ուներ թե դեպի Շապուհը և թե դեպի առհասարակ պարսից արքայական ազգատոհմը,— այնուամենայնիվ, վերջին օրերում ոչ միայն մայրական խնամք էր տանում Շապուհի քրոջ՝ Որմիզդուխտի վրա, այլ սկսել էր մինչև անգամ սիրել նրան։ Վերահաս դժբախտությունները՝ սուգը, ժանտախտը, ամրոցի ընդհանուր մահացությունը՝ մոռանալ տվին Հայոց Թագուհուն այն անողորմ ոխակալությունը, որ բորբոքվում էր նրա մեջ դեպի Շապուհի ընտանիքը։ Այո՛, նա սկսեց սիրել Որմիզդուխտին, նա սկսեց փայփայել յուր գերիին, որի կյանքը և մահը յուր ձեռքումն էր։ Այդ սիրո մեջ գտնում էր նա յուր հոգու մխիթարությունը այն դժբախտ րոպեներում, որ վերջին օրերում վարում էր նա յուր ամրոցում։ Վիճակների համանմանությունը առաջ էր բերել նրանց մեջ մի տեսակ փոխադարձ կարեկցություն։ Օրիորդը, իրավ, գերի էր, բայց Թագուհին միշտ գերության ենթակա էր յուր պաշարյալ ամրոցի մեջ։ Ամեն վայրկյան սպասում էր նրան մի նույնպիսի վիճակ, գուցե ավելի դժնդակ, գուցե ավելի դաժանական, հեռավոր Պարսկաստանում...

Ծարակող ախտի միջոցում՝ բռնվեցավ և նազելի օրիորդը։ Այդ օրերում Թագուհին հանգստություն չուներ։ Ամբողջ գիշերներ լուսացնում էր նրա անկողնի մոտ։ Երբ ազատվեցավ, Թագուհին մխիթարվեցավ։ Այնուհետև պահում էր նրան համարյա փականքի մեջ և թույլ չէր տալիս, որ ապարանքից դուրս գա։ Զգուշանում էր, մի գուցե դրսի սարսափելի երևույթների ազդեցությունը կրկին վերադարձներ նրա հիվանդությունը։ Օրիորդը սաստիկ վախենում էր մեռելներից. իսկ ամրոցի փողոցները դեռ լի էին դիակներով։

Թագուհու մատուցած սառը ջուրը խմելուց հետո, բոլորովին սթափվեցավ նա քնից և, հանկարծ վեր թռչելով յուր տեղից, գրկեց նրա պարանոցը և երկար բաց չէր թողնում յուր գրկից, համբուրում էր, փայփայում էր և, միևնույն ժամանակ, լսելի էր լինում նրա խուլ հեկեկանքը։

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս,— հարցրեց Թագուհին շփոթվելով։

— Ա՜խ, եթե գիտենայիր, որքա՜ն լաց եմ եղել... որքա՜ն լաց եմ եղել...— մրմնջաց նա լալագին ձայնով։

— Ինչո՞ւ էիր լաց լինում, սիրելիս։ Ի՞նչ ունեիր լաց լինելու։

— Երազումս էի լաց լինում... բայց հիմա ուրախ եմ... շատ ուրախ եմ... դու դարձյալ կաս... դու դարձյալ իմ մոտ ես...

Թագուհին հասկացավ, որ տխուր երազներ խռովել էին նրա զգայուն երևակայությունը։ Համբուրեց և, սեղմելով յուր կուրծքին, նստացրեց յուր մոտ՝ բազմոցի վրա, և ապա հարցրեց, թե ինչու էր լաց լինում երազում։

— Չեմ ասի... լեզուս չէ բանում, որ ասեմ...

Երկար թախանձելուց հետո պատմեց նա, թե ման էր գալիս ապարանքի բակում, տեսնում էր այնտեղ ընկած շատ մարդիկ՝ այր, կին, ծեր և երեխա։ Ոմանք մեռած էին, ոմանք դեռ մահվան տագնապի մեջ տանջվում էին։ Նրանց թվումն գտավ և թագուհուն, ընկավ նրա դիակի վրա և լաց էր լինում, երկար լաց էր լինում, բայց նա ոչինչ չէր զգում...

— Մեզ պատահած դժբախտությունների դառն տպավորությանց ներքո այսպիսի տխուր երազ ես տեսել, սիրելի Որմիզդուխտ,— մխիթարեց նրան թագուհին։— Մեծ է աստուծո գթությունը, նա մեզ խնայեց մահից, և կպահպանե այսուհետև։ Հանգիստ կաց, սիրելի Որմիզդուխտ, և սիրտդ միշտ ուրախ պահիր։

Տպավորությունները, իրավ, շատ ծանր էին օրիորդի քնքուշ սրտին։ Բայց ամրոցի ընդհանուր մահացությունից, որի սոսկալի աղետներին ականատես եղավ, նա ուներ յուր հետ սպասավորների և աղախինների մի ստվար բազմություն, որոնք նույնպես զոհ եղան մահվան և նրանցից ոչ մեկը չմնաց։ Այդ կորուստը սաստիկ վշտացնում էր նրան և բնավ մոռանալ չէր կարողանում։ Քնի մեջ հաճախ տալիս էր նրանց անունները, և երբ չէին հայտնվում, սկսում էր լաց լինել։ Այդ էր պատճառը, որ վերջին օրերում թագուհին հրամայեց, որ նրա անկողինը պատրաստեն յուր մոտ, յուր ննջարանում, որպեսզի այդպիսի դեպքերում հանգստացնե նրան։

— Հիմա գնանք, սիրելիս,— ասաց նրան թագուհին, ձեռքերը բռնելով և վեր բարձրացնելով։— Գնանք, տեսնենք, Համբիկը և Շուշանիկը մեզ համար ինչ են պատրաստել ուտելու։

Օրիորդի տրտմությունը այժմ ուրախության փոխվեցավ։ Ծիծաղելով վազեց նա, խլեց ճրագը, որ դրած էր պատուհանում և, առաջ ընկնելով, խնդրեց.

— Ճրագը ես կտանեմ, թույլ տուր, մայրիկ, որ ես տանեմ։ Դու ինձ ոչ մի գործ անել չես տալիս։

Վերջին օրերում նա թագուհուն «մայրիկ» էր կոչում։ Թագուհին բարեսրտությամբ ժպտաց և թույլ տվեց, որ ճրագը նա տանե։

Անցնելով մթին սրահների միջով, նրանք մտան սեղանատունը։

Այստեղ երկու նաժիշտները՝ Համիկը ու Շուշանիկը արդեն պատրաստել էին ընթրիքի սեղանը։ Թանկագին սփռոցի վրա դրած էին երկու արծաթյա պնակներ, իսկ նրանց մեջ՝ երեք խորոված աղավնիներ։ Այլես ուրիշ ոչինչ չկար։ Հայոց թագուհին և պարսից արքայադուստրը մոտեցան այդ աղքատիկ սեղանին և գոհունակությամբ նստեցին։ Իսկ երկու նաժիշտները կանգնած էին նրանց սպասում։ Տեսնելով երեք աղավնիները, թագուհին դարձավ դեպի նաժիշտները, հարցնելով.

— Այսօր քանի՞ հատ որսացիք։

— Չորս հատ,— շտապեց պատասխանել Համիկը,— երեքը ես, մեկը՝ Շուշանիկը։

— Դու ամեն գործում այդպես քաջ ես,— ժպտալով նկատեց թագուհին։— Բայց ինչո՞ւ եք այդպես անհավասար կերպով բաժանել. երեքը բերել եք մեզ համար, մեկը միայն թողել եք ձեր երկուսի համար։

— Մենք այդ մեկով միայն կբավականանանք,— դարձյալ պատասխանեց Համիկը։— Եթե մեզ համար քիչ է մնում, այդ մեր մեղքն է, որ շատ չենք որսացել։

— Ոչ, ինչ որ աստված տվել է, պետք է հավասար բաժանել,— այդ ասելով, նա վեր առեց աղավնիներից մեկը, տվեց նրանց, իսկ երկուսը թողեց յուր և օրիորդի համար, կրկնելով.— մենք չորս հոգի ենք, աստված չորս աղավնի է տվել։ Գնացեք, դուք ևս ընթրեցեք։

Երկու նաժիշտները հեռացան, թեև, ըստ սովորության, նրանք պետք է թագուհու սեղանի մոտ սպասեին այնքան ժամանակ, մինչև նա յուր ընթրիքը վերջացներ։

Որմիզդուխտը, որ մի առանձին բավականությամբ լսում էր բարեսիրտ թագուհու խոսքերը, մեջ մտավ և ժպտալով ասաց.

— Երբ կերակուրը հավասար ենք բաժանում, պետք է աշխատանքըն էլ հավասար բաժանենք. մի օր մենք գնանք որսի, մի օր Շուշանիկն ու Համիկը։ Այդպես հերթով լավ չի՞ լինի, մայրիկ։

— Լավ կլինի։ Բայց դու որսալ իմանո՞ւմ ես։

— Ինչպե՞ս չէ։ Էգուց հերթը մերն է, և դու կտեսնես իմ ձեռքի շնորհքը։ Տիզբոնում եղած ժամանակ երբեմն եղբայրս ինձ տանում էր յուր հետ որսի, և ամեն անգամ ես դատարկաձեռն չէի մնում։ Մի օր ես նետահարեցի մի նապաստակ հենց փախչելու միջոցին։ Երբ վերադարձանք տուն, ես ստացա եղբորս գովասանքը և մի գեղեցիկ մատանի։

— Ինձանից ես կստանաս մի գեղեցիկ ընծա, եթե էգուց շնորհքդ ցույց կտաս։

Օրիորդը սկսեց երեխայի նման ուրախանալ։

Սեղանի վրա դրած էր մի արծաթյա մեծ սրվակ՝ լի գինով, իսկ նրա մոտ՝ երկու ոսկյա բաժակներ։ Ամբողջ ամեն պաշար սպառվելուց հետո՝ մնաց միայն գինին։ Այդ ընտիր գինիները, Հայաստանի հատուկ տեղերից բերված, ահագին կարասներով թաղված էին գետնի մեջ, հողի տակ[19]։ Նրանցից շատերը մի քանի տասնյակ տարիների հնություն ունեին։

Թագուհին լցրեց անուշահոտ գինին, բաժակներից մեկը դրեց յուր առջև, մյուսը՝ օրիորդի առջև։ Նա փոքր առ փոքր խմում էր և անուշ ձայնով խոսում էր։ Խոսում էր Տիգրանից, խոսում էր յուր վարած կյանքի զանազան արկածներից պարսից արքունիքում։ Եվ որքան խմում էր, այնքան հայկական կարմիր նեկտարը վառում էր մանուկ արյունը ուրախության կրակով, և այնքան նրա գունաթափ թշերը փայլում էին պայծառ գույնով։ Նա այն աստիճան ոգևորվեցավ, որ երգեց մի հին արիական երգ.

Բարձր ապառաժի ահեղի կուրծքին
Նստած էր ամրոց, ամրո՜ց ահագին.
Թռչունն այն տեղից՝ վախում էր անցնել,
Գազանն այն կողմից՝ շտապում էր փախչել։

Միայն քամին էր, քամի՛ն համարձակ,
Որ սուլում էր այն կողմից արագ,
Եվ ամեն անգամ՝ ախ՜, ողբալի՜
Յուր հետ բերում էր՝ ձայներ սոսկալի։

Ոչ քար, ոչ աղյուս, ոչ փայտյա սյուներին,
Չէր նյութը նորա ահեղ շինվածքին,
Եվ ոչ վարպետի ձեռքը իմաստուն
Դրեց հիմքերը նորա հաստատուն։

Լոկ դիակներից, արյամբ շաղախված,
Լոկ կմախքներից, կույտերով դիզված,
Բարձրանում էին պարիսպներ մթին,
Թա՛նձր պարիսպներ՝ մահացու բերդին։

Եվ հրեշային բուրգ ու աշտարակ
Էին մարդկային կառափներ համակ,
Կառափունք իրար վերա շարեշար
Խիստ քստմնելի կապեին կամար։

Յոթն էին թվով, յոթն եղբայրներ,
Յոթն էլ միթխարի խոլ-խոլ հսկաներ,—
Յոթն պատուհաս այդ խուլ ամրոցում
Անուցանում էր Արհմինն[20] յուր ծոցում։

Ունեին նոքա մի քույր գեղանի,
Աչքերը սև-սև, ինքը նազանի,
Քաղցրությամբ լի ծով էր նա անսահման,
Եվ ողջ աշխարհում չուներ յուր նման։

Կասեր արեգին. «Դու հանգիստ մնա՛,
Երեսիս փայլը երկրին լույս կտա».
Կասեր լուսնյակին. «Այդ թո՛ղ ինձ համար՝
Վանել գիշերի սևաթույր խավարը»։

Եվ ամեն կողմից՝ քաջ-քաջ հսկաներ,
Ահարկու դևեր[21], մեծ փահլևաններ[22],
Գալիս էին նորա սերը խնդրում
Եվ իրանց սիրտը նորան զոհ բերում։

Եվ ամեն անգամ՝ կույսը աննման
Տալիս էր նորանց այսպես պատասխան.
«Եղբայրներիս հետ մենամարտեցե՛ք,
Հաղթության փառքով իմ սերն ստացեք»։

Ճոճվում էր նիզակ, կռվեին քաջեր,
Տրաքում էր ապար, փայլում էր սուսեր,
Եվ հարվածների շռինդը ուժգին
Դղրդում էր օդը, թնդում էր գետին։

Գոռում էր մարտը, բերում էր սարսուռ,
Փշրվում էր վահան, զրահ ամրակուռ,
Մինչ աստվածները, խապառ զարմացած,
Բարձր եթերքից մնային հիացած։

Նայում էր կույսը, կո՛ւյսը աննման,
Եվ ուրախության չկար չափ սահման,
Երբ եղբայրները փառքով հաղթական
Թողնեին դաշտը՝ կռվի և արյան։

Այսպես ամեն մի այցելու դժբախտ,
Այսպես ամեն մի քաջ հերոս, անհաղթ,
Թողնում էր այնտեղ յուր ընկած մարմին,
Որ նյութ էր տալիս ամրոցի շենքին։

Այսպես կառուցին հզոր պարիսպներ,
Մինչ զենիթ հասցրին բուրգ, աշտարակներ,
Բայց կույսի սիրտը՝ միշտ մնաց անզոր,
Եվ սիրույն արժան՝ չեղավ դեռ ոչ ոք։

Եվ դեռ իշխում էր անգութ Թագուհին
Այն գեղակառույց՝ արյունոտ բերդին,
Դեռ պահանջում էր՝ զոհեր նորանոր,
Զոհե՜ր սոսկալի, զոհե՜ր բյուրավոր։

Անցան տարիներ, անցան և դարեր,
Երբ հայտնվեցան յոթն հսկաներ.
Յոթն արքայի էին թանկ որդիք,
Մինը քան զմյուս՝ չքնաղ, գեղեցիկ։

Թագուհին տեսավ, սիրտը թուլացավ...
Այն քարե սիրտը՝ մաշվեց... հալվեցավ...
Որի՞ն ընտրել։ Ո՞ր քաջ գեղանին—
Թողեց որ մարտը վճռե արժանին։

Սկսվեց մարտը։ Եղբայրներ յոթանք
Ունեն իրենց դեմ՝ յոթն արքայազունք,—
Ուժեր հավասար, ուժե՜ր սոսկալի
Մարտնչում էին հուսով լի ու լի։

Երկարեց մարտը։ Կողմերն աննկուն
Դեռ կռվում էին՝ եռանդով, տոկուն,
Եվ անգութ բախտը՝ դեռ ոչ մի կողմին
Չէր տալիս կանաչ՝ հաղթության դափնին։

Յոթն արքայազնից՝ վեց հողի ընկան,
Վեց պայծառ արև ի սուգ պատեցան.
Մնաց մեկը միայն՝ հուժկու, քաջալանջ,
Կռիվ էր մղում, կռի՛վ աննահանջ։

Ամրոցի կույսը այլ չհամբերեց,
Խելագարի պես՝ բարձրից ցած վազեց,
Եվ յուր մերկ կուրծքը, նրանց դեմ տալով,
Նա եղբայրներին այսպես բարբառեց.

«Վայել չէ՛ յոթներին մեկի հետ կռվել,
Եվ զենք ու զրահ արատով պատել.
Դա՛ է իմ բղձալին,— այս քաջ ախոյան,
Իմ սերը պսակ՝ դորա հաղթության»։

Իսկ եղբայրները զենքը ցած դրին,
Քաջի ճակատին համբույր մատուցին,
«Քե՛զ լինի, տղային, այդ չքնաղ կույսը,
Որ աշխարհքի էր զարդն ու լույսը»։

Օրիորդի քաղցր, փափկահունչ ձայնը մոտ կոչեց ապարանքում թաքնված դևին, որը, դուրս գալով յուր դարանից, կամաց-կամաց մերձեցավ այն անկյունին, որտեղից լսվում էր սքանչելի երգը։ Նրա փափուկ, կարմրագույն մուճակները ամենևին ձայն չէին հանում, իսկ տիրող մթությունը նպաստում էր նրան աներևույթ լինելու։ Նա ուշադրությամբ ականջ էր դնում և, միևնույն ժամանակ, չարախնդությամբ խնդում էր...

Բայց օրիորդի երգը Թագուհու վրա բոլորովին այլ ազդեցություն գործեց։ Նա այն աստիճան զգացվեցավ, որ ծածկեց յուր արտասուքը, որպեսզի երգիչը չտեսնե։ Երգի իմաստը, բովանդակությունը թե՛ յուր և թե՛ այդ անբախտ աղջկա վիճակի հետ՝ մի զարմանալի համանմանություն ուներ, թեև նա երգեց բոլորովին անգիտակցաբար։ Եվ ինքը օրիորդը ապրում էր այդ բերդում կատարյալ անգիտակցության մեջ։ Նա չգիտեր, որ ինքն էր այն երկպառակության խնձորը[23], որի գրավելու համար այնքան մեծ կորուստներ եղան։ Արտագերսը լցվեցավ դիակներով։ Եվ որպես երգի մեջ նկարագրված ամրոցը, նույնպես և Արտագերսը, ներկայացնում էր հազարավոր զոհերի մի հսկայական գերեզման։ Հայաստանը ողողվեցավ արյունով, և դեռևս շարունակվում էր կոտորածը, և պիտի տևեր գուցե շատ երկար... Նա չգիտեր, թե այդ բոլորի իսկական շարժառիթը ինքն էր և Մեհրուժանի խելագար սիրահարությունը, որի բավականությունը պետք է արյունով և զոհերով ստացվեր... Նա չգիտեր և այն, թե ինքն ի՞նչ նպատակով էր պահված այդ բերդում։ Նա հիշում էր այնքանը միայն, թե ինքը գտնվում էր յուր եղբոր կանանոցում, Թավրեժի մոտ թշնամին հարձակվեցավ եղբոր բանակի վրա, այնտեղ կռիվներ եղան, մարդիկ սպանվեցան, և իրան բերեցին այդ բերդը։ Բերդի բարեխնամ Թագուհին առեց նրան յուր խնամակալության ներքո, պահում էր յուր զավակի պես։ Նա մինչև անգամ չգիտեր, թե ով էր այժմ պաշարել այդ բերդը։ Նա կարծում էր, թե դարձյալ միևնույն մարդիկն էին, որ հարձակվեցան յուր եղբոր բանակի վրա։ Այդ բոլոր անհասկացողությունները առաջ էին եկել նրանից, որ Թագուհին մինչև այսօր միշտ աշխատել էր դառն իսկությունը ծածկել նրանից, որպեսզի նրա քնքուշ սրտին ցավեր չպատճառե։

Միրուժանի մասին գաղափար անգամ չուներ նա։ Նրան երբեք չէր տեսել, այլ լսել էր անունը միայն։ Նրան չէին ասել, թե ինքը Միրուժանի նշանածն է և մի օր պետք է նրա կինը լինի։ Նա չգիտեր, այո՛, որ այդ բոլոր տառապանքները յուր պատճառով են կատարվում, և թե բերդի անգութ պաշարողը յուր ապագա փեսան է՝ նույն իսկ Միրուժանը։

Պարսից արքունիքում նա էակ չէր, այլ իր էր,— այն գեղեցիկ և թանկագին իրերից մեկը, որոնցով լի էր արքայական գանձարանը։ Եվ ինչպես այդ իրեղեններով պարսից արքան սովորություն ուներ վարձատրել յուր ավագների ծառայությունները, նույնպես և յուր քրոջը տալով, խոստացել էր նա վարձատրել Միրուժանի գժնդակ ծառայությունները։ Այդ կիմանար օրիորդը այն ժամանակ միայն, երբ նրա ձեռքից կբռնեին և կհանձնեին Միրուժանին։

Թագուհին մինչև այսօր չէր խոսացել օրիորդի հետ Միրուժանի մասին, և խոսելու ցանկություն ևս չէր ունեցել։ Բայց լսելով նրա երգը, հարևանցի կերպով հարցրեց.

— Գիտե՞ս, Որմիզդուխտ, ո՛վ է պաշարել մեր բերդը։

— Չեմ իմանում,— պատասխանեց նա։

— Եթե թշնամին ասեր՝ «տվեք ինձ Որմիզդուխտին, ես կթողնեմ և կհեռանամ»,— դու կգնայի՞ր։

— Կգնայի։

— Ինչո՞ւ կգնայիր։

— Որ այդքան մարդիկ չմեռնեին, որ հաց լիներ, դրանք ուտեին, և որպեսզի դու այդքան նեղություն չկրեիր, ահա՛ ինչու համար կգնայի։

— Ուրեմն, դու նույնպե՞ս կվարվեիր, ինչպես վարվեց այն ամրոցի աղջիկը, որի երգը երգեցիր։

— Ոչ, ես այնպես չէի վարվի։ Նա անմիտ աղջիկ էր. նա յուր գեղեցկության համար զոհեր էր պահանջում, և որքան բազմանում էր զոհերի թիվը, այնքան այդ անգթությունը նրան զվարճություն էր պատճառում։ Նա յուր պաշտողների դիակներից և գանգերից յուր համար ամրոց հիմնեց։ Բայց ես այդպես չէի անի, ես թույլ չէի տա, որ մի կաթիլ անգամ արյուն թափվեր, այլ իսկույն դուրս կգայի թշնամու հանդեպ, կուրծքս կպարզեի դեպի նրա նետերը և կասեի. «Ահա՛ ես, եթե ինձ համար է կռիվը, թո՛ղ դադարի նա»։ Նա կզոհեր ինձ, բայց կփրկեր այդ բերդը։

Նա խոսում էր յուր հոգու բոլոր անկեղծությամբ։ Զոհաբերության այդ գաղափարը կազմվել էր նրա մեջ ոչ թե ընդհանուր մարդասիրա-

կան զգացմունքից, այլ կրթության այն պայմաններից, որոնցով, սկըս-յալ մանկությունից, շրջապատված էր եղել նա։ Նրա պառավ դայակները լցրել էին նրա գլուխը հարյուրավոր վեպերով ու հեքիաթներով, որոնցով այնքան հարուստ էին պարսկական ավանդությունները, և որոնք ներշնչել էին նրա մեջ մի տեսակ հերոսական ոգի, և վառել էին նրա երևակայությունը անձնազոհության զգացմունքներով։

Թագուհին, լսելով օրիորդի ոգևորությամբ լի խոսքերը, խիստ տխուր ձայնով նկատեց.

— Բայց այդ բոլորը, սիրելի Որմիզդուխտ, հակառակ քո բարի ցանկության, կատարվեցան արդեն...

Օրիորդը գունաթափվեցավ։

— Ի՞նչը կատարվեցավ,— հարցրեց նա շփոթվելով։

— Այն զոհերը... այն արյունը... այն կոտորածը...

— Ի՞մ պատճառով...

— Այո՛, քո պատճառով...

Փոքր էր մնում, որ ուշաթափ լիներ նա։ Թագուհին գրկեց նրան, և յուր կուրծքին սեղմելով, ասաց.

— Հանգստացի՛ր, սիրելի Որմիզդուխտ, քո պատճառով կատարված դժբախտությունների մեջ դու չես հանցավորը։ Դրանք կատարվեցան առանց քո կամքի և հոժարության։ Լսի՛ր, ես կպատմեմ քեզ տխուր իրողությունը։

Թագուհին պատմեց օրիորդին գործի եղելությունը, թե նա գերի է այդ բերդում և պահված է իբրև պատանդ։ Հասկացրեց, թե բերդի պաշարողը Մեհրուժան Արծրունին է, և պաշարել է նրան ազատելու համար։ Հասկացրեց և այն, թե ինքը՝ օրիորդը, Մեհրուժանի նշանածն է և ապագայում պետք է նրա կինը լինի։ Բացատրեց, թե ի՛նչ քաղաքական հանգամանքներից առաջ եկավ նրա օտարոտի հարսնախոսությունը։ Նկարագրեց օրիորդի եղբոր՝ Շապուհ արքայի ներկա հարաբերությունները հայոց հետ, նրա վարած պատերազմների նպատակը, թե որպես ցանկանում է նա հայոց կրոնը և թագավորությունը ոչնչացնել և Հայաստանը պարսկական մի նահանգ դարձնել և այլն։ Այդ բոլորը համառոտ կերպով հաղորդելուց հետո, թագուհին վերջացրեց յուր պատմությունը այս խոսքերով.

— Ահա, սիրելի Որմիզդուխտ, քո եղբոր այդ խել նպատակը, այսինքն՝ հայոց կրոնի և թագավորության ոչնչացնելու աշխատությունը՝ հանձն է առել Մեհրուժան Արծրունին, և քո եղբայրը, իբրև մի բարձր վարձատրություն, խոստացել է քեզ կնության տալ Մեհրուժանին։

— Այդ երբե՛ք չէ կարող լինել,— ձայն տվեց օրիորդը և նրա

խոշոր աչքերը վառվեցան բարկության կրակով։— Ես մի այդպիսի չարագործի կինը չեմ լինի։

— Ինչո՞ւ, սիրելի Որմիզդուխտ, եթե Մերուժանին կհաջողվի ոչնչացնել Հայոց թագավորությունը, նա ինքը Հայոց թագավոր կդառնա, իսկ դու՝ Հայոց թագուհի։

Օրիորդը սկսեց ծիծաղել։

— Քո՞ փոխարեն,— հարցրեց նա, շարունակելով յուր ծիծաղը,— ես պետք է հափշտակեմ քո՞ թագը... Այո՛, դա լավ երախտագիտություն կլիներ իմ կողմից այն բոլոր բարությունների համար, որ դու արել ես ինձ... Բայց հայերը, կարծեմ, այնքան ծույլ չեն, որ հեշտությամբ տան մեկ իրանց թագավորի և թագուհու թագը...

Նախասենյակում թաքնված գեղ յուր լսելիքը ավելի մոտեցրեց դռանը։

Թագուհին հարցրեց.

— Չէ՞ որ դու ասացիր, որ եթե գիտենաս՝ կռիվը և պատերազմը քո համար է, դու քեզ կձգես թշնամու գիրկը։ Այժմ ահա՛ հասկացար, որ Մերուժանը քո պատճառով է պաշարել այս բերդը։

— Այո՛, ես ինձ կձգեի թշնամու գիրկը կռվի և պատերազմի սկզբում, երբ դեռ ոչ մի արյուն չէր թափվել, և երբ կիմանայի, որ ինձանով ամեն ինչ կվերջանար։ Բայց այժմ շատ ուշ է... դառն եղելությունները կատարվեցան... և մենք այժմ ապրում ենք դիակների կույտի վրա...

Թագուհին դարձյալ գրկեց նրան և սեղմեց յուր բորբոքված կուրծքի վրա։ Նրա հարցափորձը այն նպատակով չէր, որ համոզե օրիորդին կատարելու Մերուժանի բաղձանքները, այլ ցանկանում էր ավելի լավ ճանաչել նրա հոգու և սրտի գեղեցիկ հատկությունների հետ, որոնք այնքան մխիթարում էին նրան։

— Եթե ա՛յդ է Մերուժանի ցանկությունը,— շարունակեց օրիորդը,— ես կատե՛մ նրան, թո՛ղ բոլոր բարի և չար աստվածները վկա լինեն, որ հավիտյան կատե՛մ նրան։ Ինձ փույթ չէ, որ իմ եղբայրը խոստացել է ինձ կնության տալ նրան, բայց ես ինձ կսպանեմ, և մի այդպիսի անպիտանի կինը չեմ լինի։

— Ինչո՞ւ չես լինի։

— Նրա համար, եթե նա լավ մարդ լիներ, յուր հայրենիքին, յուր թագավորին և քե՛զ, սիրելի մայրիկ, այդքան վատություն չէր անի։

— Բայց նա սիրում է քեզ, և այդ բոլորը արել է քո սիրո համար։ Նա ցանկանում է, որ դու անպատճառ Հայոց թագուհի դառնաս, իսկ ինքը՝ Հայոց թագավոր...

Այդ խոսքերի միջոցին օրիորդի մեջ կատարվեցավ մի զարմանալի

փոփոխություն. նա վեր թռավ տեղից և, գրկելով թագուհու պարանոցը, յուր բոցավառ շրթունքներով համբուրում էր նրան և անդադար հարցնում էր։

— Դու ինձ այն ասա՛, սիրելի մայրիկ, ի՞նչ եղավ Մուշեղը... ո՞ւր գնաց նա... ա՜խ, որքան լավ մարդ էր նա... որքա՜ն ազնիվ էր, որքա՜ն բարի էր... Երբ ինձ բերում էր այստեղ, ճանապարհին որքա՜ն ցանկանում էի խոսել նրա հետ... բայց նա գոնե մի անգամ չխոսեց ինձ հետ։

Նրա հարցմունքները սպարապետի մասին էին։

— Ասա, սիրելի մայրիկ, ո՛ւր գնաց նա։

— Գնաց Բյուզանդիա,— պատասխանեց թագուհին, հազիվ կարողանալով ազատել իրան նրա բորբոքված գրկից։

— Շո՞ւտ կգա։

— Ամեն րոպե սպասում եմ նրան։

— Ա՜խ, ի՜նչքան կուրախանամ ես, երբ մի անգամ ևս կտեսնեմ նրան...

Օրիորդի մանուկ սրտում թաքնված էր մի կայծ, որ հանկարծ սկսեց վառվել։ Թագուհին հասկացավ այդ և ժպտալով հարցրեց.

— Դու, երեխ, սիրում էիր նրան, Որմիզդուխտ, ուղիղն ասա՛, սիրո՞ւմ էիր։

— Չեմ թաքցնում, սիրում էի... այժմ ևս սիրում եմ... Ես կցանկանայի նրա կինը լինել... ա՜խ, որքա՜ն ուրախ, որքա՜ն բախտավոր կլինեի ես... Երբ նա այնպես մեծահոգությամբ վերադարձրեց իմ եղբոր կանանցը Տիզբոն, այն ժամանակ ես հասկացա, որ աշխարհի բոլոր լավ տղամարդկանց մեջ նրա նմանը չկա... Հենց այն ժամանակ իմ սիրտը սիրեց նրան...

Նախասենյակում թաքնված գեր, լսելով վերջին խոսքերը, մի անսովոր շարժում գործեց, բայց դարձյալ մնաց յուր տեղում, և դռան փականքից անթարթ աչքերով նայում էր երկու խոսակիցների վրա։ Օրիորդը հարցրեց.

— Ինչո՞ւ գնաց սպարապետը Բյուզանդիա։

— Գնաց որդուս բերելու...

— Ուրեմն նա կգա քո որդու հետ, և մեզ կազատե՞ն չար Մերուժանի պաշարումից։

— Ես այդ մասին մեծ հույս ունեմ...

Օրիորդը ուրախությունից այժմ ինքը լցրեց ոսկյա բաժակները, մեկը առաջարկեց թագուհուն, իսկ մյուսը ինքը միանգամից խմեց։ Գինու ազդեցությունը մի կողմից, վառված զգացմունքները մյուս կողմից,

դրել էին նրան մի տեսակ հոգեկան հափշտակության մեջ, և նա անդադար կրկնում էր միևնույն ցանկությունները, թե սպարապետը գալուց հետո, ի՛նչ պիտի անե ինքը, ի՛նչպես պետք է հայտնե յուր սերը սպարապետին, կամ ի՛նչպես երկուսը միասին պետք է պատժեն «չար Մերուժանին» և այլն: Թագուհին լսում էր և բարեսրտությամբ ժպտում էր:

Օրիորդի հուզված ոգևորությունը այն աստիճան գրավեցրել էր թագուհուն, որ նա ամենևին չէր նկատել, թե գիշերի մեծ մասը արդեն անցել էր: Բայց նրա ոգևորությունը փոքր առ փոքր մեղմացավ, ինչպես մի սաստիկ լարված նվագարան, որի քաղցր հնչյունները հետզհետե սկսում են թուլանալ: Քունը մի կողմից, գինու ազդեցությունը մյուս կողմից, լցրել էին նրա խոշոր աչքերը մի ախորժելի խոնավությամբ, որ առանձին հրապուրանք էր տալիս սիրուն դեմքին: Գեղեցիկ գլուխը արդեն օրորվում էր, և վերջին խոսքերը կցկտուր էին, և ըստ մեծի մասին անհասկանալի: Թագուհին բռնեց նրա ձեռքից, տարավ յուր քնարանը, և պառկեցրեց անկողնի մեջ: Երկար նստած էր նրա մոտ, մինչև քունը բոլորովին տարավ: Բայց մերթ ընդ մերթ նրա մարջանի նման կարմիր շրթունքները արտասանում էին այդ խոսքերը. «Ա՜խ, ո՛րքան ազնիվ էր նա... ա՜խ, ո՛րքան սիրում էի նրան...»:

Օրիորդի ննջելուց հետո, թագուհին կրկին վերադարձավ առաջին սենյակը: Այս գիշեր, ինչպես ամեն գիշեր, նրա քունը չէր տանում: Մի քանի անգամ լուռ անցավ սենյակի միջով, հետո մոտեցավ բաց լուսամուտին, կանգնեց նրա հանդեպ: Նայում էր գիշերի խորքին, մահահրավեր լռությունը, նայում էր գիշերի մթին, թանձրամած խավարը: Ոչինչ չէր երևում, ոչինչ չէր լսվում: Ամեն ինչ ննջում էր ծանր, հավիտենական անշարժության մեջ: Միայն երկինքը ցույց էր տալիս փոքր ի շատե կենդանության նշույլ: Աստղերը վառվում էին: Նրա անթարթ աչքերը դարձան դեպի այդ միլիոնավոր արծաթափայլ բծերը: Երկար նայում էր: Ի՞նչ էր որոնում նրանց մեջ,— ինքն էլ չգիտեր: Բայց նայում էր: Ահա՛, հորիզոնը կամարաձև գծելով, անցավ մի շողշողուն ցոլացումն: Մի աստղ ընկավ... մի կյանք ևս խավարեց[24]...

Նա հեռացավ լուսամուտից, մոտեցավ բազմոցին, նստեց նրա վրա: Ճրագի ճախծալի լույսը, ընկնելով գեղեցիկ դեմքի վրա, երևան էր հանում նրա տխուր գծերը: Որքա՜ն մաշվել էր այդ բազմահոգ դեմքը, որքա՜ն գունաթափվել էր: Նրա մեջ չէր երևում ո՛չ նախկին վիսապանծ հպարտությունը, և ո՛չ նրա անողոք խստասրտությունը: Երևում էր միայն մի մեղմ հեզություն, որ արտահայտություն էր խոնարհյալ սրտի: Կարծես թե, նա հաշտված լիներ հանգամանքների դաժանու-

թյան հետ։ Կարծես թե, նա ընտելացած լիներ յուր անմխիթար վիճակի դաժանության հետ։ Ի՜նչ տանջանքներ չկրեց այդ տառապյալ կինը վերջին օրերում, ի՜նչ թշվառությունների ականատես չեղավ նա։ Մի ուրիշը նրա տեղում՝ վաղուց արդեն բոլորովին հալված և հյուծված կլիներ։ Բայց նա տակավին պահպանել էր յուր հոգու զորությունը, որ ավելի ամրանում էր այն ջերմ հավատով, որ ուներ նա դեպի Նախախնամության անսահման գթությունը։

Նա նստած էր յուր դատարկ սենյակում, բայց նրա տխուր մտածությունները հածում էին երբեմն դեպի արևելք, երբեմն դեպի արևմուտք։ Այնտեղ, արևելքում, Անուշ բերդի մթին նկուղների մեջ, աքսորված էր թագավոր-ամուսինը։ Այնտեղ, արևմուտքում, բյուզանդական պալատի սպանիչ փափկության մեջ, պահված էր թագաժառանգ որդին։ Երկուսն էլ օտարության մեջ, երկուսն էլ դժբախտության մեջ։ Իսկ ի՞նքը։— Ինքը նույնպես բանտարկված էր յուր անառիկ ամրոցում, որ այժմ յուր գերեզմանն էր դարձել…

Սպասում էր որդուն։ Բայց չեկավ որդին, ուշացավ որդին։ Վաղուց էր, ոչինչ լուր չուներ Բյուզանդիայից։ Ի՞նչ էր կատարվում այնտեղ, ի՞նչ էր որդու համեցության պատճառը,— այդ մասին ոչինչ չգիտեր։ Մի՞թե թշնամին այնպես անխղելի շղթայով շրջապատել էր յուր բերդը, որ ոչ ոքին թույլ չէր տալիս մտնել, որ գոնե մի համբավ բերեր։ Ի՞նչ էին շինում յուր նախարարները, ինչո՞ւ օգնության չէին հասնում, որ վանեն թշնամուն, որ խորտակեն պաշարման անխղելի շղթան։ Երևի նրանք մտածում էին, թե բերդում դեռևս այնքան ուժ կա, որ կարող է առանց դրսի օգնության պաշտպանվել։ Երևի նրանք չգիտեին, թե ի՜նչ դժբախտություններ էին պատահել բերդում։—

Եվ լավ չգիտեին։

Այդ մտածությունների մեջ՝ կրկին վերկացավ նա, սկսեց անցուդարձ անել դատարկ սենյակում։ Այդ առաջին գիշերն էր, որ անմարդացած ապարանքի դատարկությունը, մի լայներախ վիշապի նման, ահարկու բերանը բաց արած, սպառնում էր կլանել նրան։ Մի առանձին սոսկումով նայում էր յուր շուրջը, և չէր համարձակվում գլուխը բարձրացնել։ Նրան այնպես էր թվում, որ բերդի փողոցներում ընկած հազարավոր դիակների ուրվականները պտտվում էին յուր չորս կողմում, վրժվրժում էին, քրթմնջում էին, և դառն անեծքներ էին թափում յուր վրա… Սարսափելով բանեց աչքերը և հազիվհազ կարողացավ մոտենալ բազմոցին, և յուր վաստակաբեկ մարմինը թողեց նրա վրա։ Երկար, մի սրտատրոփ խռովության մեջ տանջվում էր նա։ Խիղճը հանգիստ չէր։ Եվ որքան մտաբերում էր յուր խելացի և հեռատես սպարա-

պետի նախագուշակությունները, որ խոսեց նա յուր Բյուզանդիա գնալուց առաջ, այնքան ավելի խղճահարվում էր նա, որպես մի թշվառ հանցավոր, որ յուր համառությամբ պատճառ դարձավ այնքան շատ զոհերի...

Նա երկու ձեռքով բռնեց աչքերը, ընկավ բազմոցի վրա։ Երկար ջերմ արտասուքը թանում էր նրա այտերը, երկար անագան ապաշավության կրակը այրում էր նրա սիրտը։

Այդ միջոցին դուռը կամաց բացվեցավ, և նախասենյակում թաքնըված դևը ներս մտավ։ Խիստ դաժան, սպառնական հայացք ձգելով տառապյալ կնոջ վրա, անցավ նա դեպի ննջարանի մի անկյունը, և ծածկվեցավ մռայլի մեջ։ Այնտեղից նայում էր, և նրա թուխ շրթունքները բարբառում էին ներքին ուրախությունից։ Ի՞նչ դրության մեջ էր գտնում այն հպարտ, մեծամիտ կնոջը, որի համար երբեք հոգ և արտասուք չկար։ Ի՞նչ վիճակի մեջ էր գտնում այն վեհանձն, փառասեր դշխոյին, որ սովոր էր ոչ միայն հայոց նախարարներին, այլև թագավոր-ամուսնին յուր լեչակի[25] ազդեցության ներքո պահել։ Այժմ, լըքված, հուսահատված, ընկած էր նա յուր շքեղ ապարանքի դատարկության մեջ, շրջապատած վշտերով ու տառապանքներով, և զուրկ ամեն պաշտպանությունից...

«Այդ դրությունը երկար շարունակվել չէ կարող...— ասաց նա գլուխը վեր բարձրացնելով, և արտասվալի աչքերը սրբելով։— Վաղ թե ուշ թշնամին կհասկանա իմ ամրոցի դատարկությունը... Այն ժամանակ Մերուժանի վայրագությունը կանցնի ամեն չափից... Ես տանջանքներից երկյուղ չունեմ... Ես երկյուղ չունեմ և մահից... Բայց ինձ հետ կմեռնի մի մեծ գործ, որի համար այնքան աշխատեցի...»։

Նրա վերջին ձայնը թուլացավ, գեղեցիկ գլուխը խոնարհեցրեց և, երկու ձեռքերը փակելով, մի քանի րոպե մնաց լուռ ալեկոծության մեջ։ Անկյունում թաքնըված դևը անշարժ կանգնած էր, և ոխակալությամբ լի աչքերով նայում էր նրա վրա։

«Երբ առաջին անգամ,— շարունակեց նա,— Շապուհ արքան իմ ամուսնին խաբեությամբ հրավիրեց Տիզբոն, և պատվով պահում էր յուր մոտ իբրև հյուր,— հետո հրավիրեց և ինձ։ Բայց ես, հասկանալով նենգավոր պարսկի չար դիտավորությունը, մերժեցի նրա հրավերը և չգնացի[25]։ Ես մտածեցի, եթե նա իմ ամուսնին արգելելու լինի Տիզբոնում, գոնե ես մնամ և պաշտպանեմ անտեր երկիրը։ Իմ նախատեսության մեջ՝ չսխալվեցա ես։ Նա իմ ամուսնին աքսորեց Խուժաստանի խորքերում, իսկ ինձ յուր ձեռքը ձգելու համար՝ ուղարկեց Մերուժան Արծրունուն։ Աստված օգնեց ինձ, և ես կարողացա քաջությամբ պա-

տերավմել ընտանի թշնամու հետ։ Իսկ ա՞յժմ։— Այժմ ինձ շղթաներով կտանեին Շապուհի մոտ, և անիրավ պարսիկը յուր վրեժխնդրության բոլոր թույնը կթափե իմ վրա...

Նա դարձյալ լռեց, դարձյալ անմխիթար վշտերը պատեցին նրան։

«Այդ իմ հոգը չէ... թո՛ղ ես կորչե՛մ, թո՛ղ ես ոչնչանա՛մ, բայց Հայաստանը մնա...— գոչեց նա ողբալի ձայնով։— Բայց ես տեսնում եմ հայրենիքի անդարձ կորուստը... Իմ աչքի առջևն է նրա սգավոր ապագան... Ա՜խ, գոնե մի կողմից օգնություն լիներ, գոնե շո՜ւտ հասներ որդիս...»

— Այդ մի հուսար...— սյուների միջից լսելի եղավ թաքնված դևի ձայնը։

Թագուհին սոսկալով գլուխը բարձրացրեց, նայեց յուր շուրջը։ Անակնկալ ձայնը սաստիկ խռովության մեջ գցեց նրան, մի չարագուշակ ձայն, որ, կարծես, երկնքից լսվեցավ։ Երկար նրա շվարյալ աչքերը հածում էին սենյակի շուրջը, բայց ոչինչ չէր տեսնում։ Սկսեց երկնչել։ Փորձեց կանչել նաժիշտներին, բայց ձայնը չէր հնազանդվում նրան։

— Այդ ո՞վ է... ո՞վ կա այստեղ...— վերջապես հարցրեց նա։

Գիշերային այցելուն դուրս եկավ յուր դարանից և լուռ կանգնեց նրա առջև։ Թագուհին նայեց նրա վրա և ամբողջ մարմնով դողաց։ Նրան այնպես էր թվում, որ տեսածը երազ է, կամ չար սատանաներից մեկը այդ ահարկու մարդու կերպարանքով ներկայանում է իրան։ Բայց բարկությունը իսկույն փարատեց նրա երկյուղը, երբ ճանաչեց նրան։

— Այդ դո՞ւ ես, Դղակ,— հարցրեց նրանից։

— Այո՛, ես եմ, տիկին,— պատասխանեց նա, ավելի մոտենալով։

— Որտեղի՞ց եկար... ինչո՞ւ եկար...— գոչեց նա զայրացած ձայնով։

— Ամրոցի բոլոր գաղտնի անցքերը ինձ հայտնի են, տիկին,— պատասխանեց այցելուն անվրդով կերպով։— Բայց թե ինչո՞ւ համար եկա, մի փոքր համբերություն ունեցիր, Տիկին, ես իսկույն կասեմ քեզ։

— Հեռացի՜ր այստեղից։ Ես միշտ ատելով ատում էի քեզ, և քո զարշելի երեսը տեսնելու ժամանակ, միշտ զզվելով զզվում էի քեզանից, իսկ այժմ՝ ավելի ես...

Այցելուն սկսեց արհամարհանքով ծիծաղել։

— Հեռացի՛ր, ասում եմ քեզ, եթե ոչ...

Թագուհու զայրացած աչքերը դարձան դեպի յուր շուրջը։

— Ի՞նչ ես որոնում, տիկին, երևի, մտածում ես կանչել քո սպա-

ռավինյալ սատանիկների բազմությունը... Երեկ կամենում էս կանչել քո արյունախում դահիճների խումբերը... Նրանք չկան այժմ... Ես նրանց գլուխները տեսա դրսում... Իսկ քո երկու նաժիշտները, տիկին, պառկած են կից սենյակում...

— Ե՞րբ, դու եկար ծաղրելո՞ւ իմ դժբախտությունը...

— Ո՛չ, տիկին, ինձ աստված ուղարկեց քեզ մոտ...

— Հեռացի՛ր, ատում եմ քեզ...

— Մի՛ վրդովվիր, տիկին, ես իսկույն կգնամ...

Նրա սառնությունը ավելի վիրավորական էր, քան թե հանդըգնությունը։

Այդ մարդը Հայր-Մարդպետն էր՝ Արշակ թագավորի խոշոր ավագներից մեկը, որ միացնում էր յուր անձնավորության մեջ մի քանի բարձր պաշտոններ։ Իբրև ներքինի՝ թագավորի կանանոցի ներքինապետն էր։ Իբրև հազարապետ՝ թագավորի «հայր» էր կոչվում նա, պահում էր նրան մի տեսակ որդեգրության ներքո, իշխում էր նրա գործերի և կամքի վրա և, միևնույն ժամանակ, նրա պալատի թե վերակացուն և թե կառավարիչն էր։ Ամբողջ արքունիքը յուր բոլոր պաշտոնյաներով՝ գտնվում էին նրա անմիջական հսկողության ներքո։ Իբրև բարձր աստիճանավոր՝ նա Մարդպետական հարուստ նախարարության տերն և իշխանն էր։ Իբրև զինվորական՝ նրա հրամանի ներքո էին գտնվում Ատրպատականի սահմանապահ զորքերը։ Մի խոսքով, պետության մեջ նա այն զորեղ, ազդեցություն ունեցող անձինքներից մեկն էր, որից ոչ միայն վախենում էին հայոց նախարարները, այլ երբեմն բռնանում էր մինչև անգամ թագավորի վրա։ Նրա իշխանությունը ժառանգական էր։ Հայր-Մարդպետը ընտրվում էր միշտ Մարդպետական նախարարությունից, թեև լինում էին երբեմն բացառություններ[27]։

Արշակ թագավորը սկսեց ճնշել նրան, աշխատեց սահմանափակել նրա իրավունքները և դրանով գրգռեց նրա ատելությունը ոչ միայն յուր անձի դեմ, այլ առհասարակ Արշակունյաց տոհմի դեմ։ Երկար ժամանակ սնուցանում էր նա այդ ատելությունը յուր սրտում, և մի հարմար ժամանակի էր սպասում, որ արտահայտե։ Այժմ ժամանակը հասած էր համարում։

Նրա նախորդը յուր հանդգնության համար սպանվեցավ Մերուժանի հայր Շավասպ Արծրունուց[28]։ Իսկ ինքը՝ Արշակ թագավորի դեմ յուր ունեցած ատելությանը հագուրդ տալու համար՝ Մերուժանի գործակիցը դարձավ, և պարսից Շապուհ արքայի սիրելին[29]։

Ահա այդ դավաճանն էր, որ կանգնած էր Արշակի կնոջ՝ Փառանձեմ թագուհու հանդեպ։ Նրա ահռելի դեմքը ճրագի աղոտ լուսավորու-

թյան մեջ՝ ավելի սոսկալի արտահայտություն էր ստացել։ Դեռ մանկության հասակում ծաղիկը այդ դեմքի վրա մեծ հեղափոխություն էր գործել։ Նա այլանդակեց ահագին քիթը, նա այլանդակեց թխագույն շրթունքները, նա թողեց կաշու վրա այն խորին խորշերը, որ ծակոտկավոր շնչաքարի նմանություն ունեին։

Թագուհին դեռ լի վրդովմունքով նստած էր բազմոցի վրա և, գլուխը մտահույզ կերպով դեպի ցած խոնարհած, ամենևին չէր նայում նրա վրա։ Նրա անակնկալ հայտնվելը արդեն բացատրեց, թե ի՛նչ չար նպատակով էր եկած։

Իսկ Մարդպետի աճարկու դեմքը, որ սկզբում ցույց էր տալիս խիստ դառն ծաղր և խիստ մաղձոտ հեգնություն դեպի թագուհու վիճակը,— այդ զզվող դեմքը հետզհետե կատաղի կերպարանք էր ստանում, երբ նա լսում էր թագուհու կծու հանդիմանությունները։ Բայց թաքցնելով յուր բարկությունը, բաց արեց լայն բերանը և հաստ, թխագույն շրթունքները արտասանեցին հետևյալ խոսքերը.

— Հայր-Մարդպետը կարևոր ասելիքներ ունի, թո՛ղ Հայոց տիկինը առժամանակ թողնե յուր դեղեցիկ մտածությունները և բարեհաճի լսել նրան։

Թագուհին գլուխը վեր բարձրացրեց և դաժան խորին զզվանքով ասաց նրան.

— Ես քեզանից շատ շնորհակալ կլինեի, Հայր-Մարդպետ, եթե հանգիստ թողնեիր ինձ։ Դու արդեն հասար քո նպատակին։ Գողի նման մտար իմ ամրոցը, և ինչ որ լսելու էիր, լսեցիր։ Այժմ գնա՛, ում որ մատնելու ես, մատնի՛ր իմ ամրոցը։ Ես պատրաստ եմ...

— Քե՞զ հանգիստ թողնել... դու տակավին հանգստությո՞ւն ես սպասում... հանգստությունը այլևս քեզ համար չէ, տիկին... Այո՛, ախորժելի հանգստություն կլիներ՝ հանգչել հազարավոր զոհերի դիակների վրա, որոնք հիմարության և քեզ հետ այդ բերդը մտան... Այժմ դու քո երկու նաժիշտներով հանգստությո՞ւն ես որոնում այստեղ... Գիտե՞ս, տիկին, թե ի՛նչ է կատարվում քո շուրջը...

— Գիտեմ...— պատասխանեց թագուհին հուզված ձայնով։

— Ո՛չ, բոլորը չգիտես։ Լսի՛ր տիկին, ես խիստ հետաքրքիր նորություններ կպատմեմ քեզ։ Մերուժանը այժմ զարմանալի հրաշքներ է գործում։ Դու խլեցիր նրանից նրա սիրելի Որմիզդուխտին, իսկ նա խլեց քեզանից, հիմա հաշվի՛ր, թե որքա՞ն հոգիներ։ Նա մտավ Վան քաղաքը, ավերակ դարձրեց և բնակիչներից գերի վարեց 18 000 տուն և 5 000 հրեա[30]...

— Նա չխնայեց և յուր սեփական քաղաքացիներին,— ընդհատեց թագուհին։

— Այո՛, չխնայեց, գլխավորապես այն վրեժխնդրության համար, որ նրա քաղաքացիքը ցույց տվին նրան՝ Ռշտունյաց Գարեգին իշխանի հարձակման ժամանակ։ Բայց այդ դեռ բոլորը չէ, լսի՛ր, տիկին։ Վանից Մերուժանը անցավ Աղիովտի Զարիշատ քաղաքը, գերի վարեց 10 000 հայ և 14 000 հրեա[31]։ Այնտեղից անցավ և Բագրևանդի Զարեհավան քաղաքը, գերի վարեց 5 000 հայ և 8 000 հրեա[32]։ Այնտեղից անցավ Արշարունյաց գավառի Երվանդաշատ քաղաքը, գերի վարեց 20 000 հայ և 30 000 հրեա[33]։ Այնտեղից անցավ Արագածոտն գավառի Վաղարշապատ քաղաքը, գերի վարեց 19 000 հայ, կոտորելով չափահասներին և միայն կանանց ու մանուկներին առնելով[34]։ Այնտեղից անցավ Արտաշատ քաղաքը, գերի վարեց 40 000 հայ և 9 000 հրեա[35]։ Այնտեղից անցավ Գողթնյաց գավառի Նախճավան քաղաքը, գերի վարեց 2 000 հայ և 16 000 հրեա[36]։ Տեսնո՞ւմ ես, տիկին, այդ բոլորը տարավ նա մեկ հոգու՝ Որմիզդուխտի փոխարեն։

— Ո՞ւր տարավ,— հարցրեց թագուհին զարհուրելով։

— Առայժմ գերիների մի մասը հավաքել, պահել են Երասխ գետի աջ ափի մոտ, Արտաշատի հանդեպ[37], իսկ ամենամեծ մասը՝ Նախճավանի մոտ[38]։ Սպասում են միայն քեզ, տիկին, որովհետև Մերուժանի ցանկությունն այն է, որ դու քո ժողովրդի հետ միասին գնաս դեպի Պարսկաստանի խորքերը... Նա շուտով կգա քեզ հրավիրելու։

— Եվ այդ ուրախացնո՞ւմ է քեզ, անզգամ։ Դրանո՞վ ես փոխարինում այն բոլոր շնորհները, որոնցով իմ թագավոր-ամուսինը քեզ անհայտ դրությունից բարձրացրեց և մեծամեծ պաշտոնների հասցրեց։ Ապերա՛խտ։ Դու քո հայրենիքի ամենադժվարին տագնապի միջոցում, փոխանակ նրան պաշտպան հանդիսանալու, քո դավաճան ձեռքը մեկնում ես դեպի թշնամին։ Քեզ հանձնված էր քո թագավորի տունը, նրա գանձերը, և դու, իբրև ամենամոտիկը ազգականություն ունենալով, պետք է քո անձը դնեիր նրա տան վրա,— բայց այժմ ուրախանում ես այդ տան կործանվածությամբ։ Այդ բավական չէ, դու համարձակվում ես քո զազրելի բերանով նախատել ինձ, և նախատել քո բարերար Արշակունիներին։ Այո՛, նրանք նախատելի են, որ քեզ նման ցած և ստոր արարածին այնպիսի բարձր պաշտոնների արժանացրին։

— Այդ իմ իրավունքն էր, տիկին, այդ իմ ժառանգական արտոնությունն էր, որ հասել էր ինձ իմ պապերից,— պատասխանեց նա սառնությամբ։— Ո՞վ կարող էր ջնջել Մարդպետական իշխանությունը։

— Իմ թագավոր-ամուսինը։

— Այո՛, այդ նպատակին ձգտեց նա... Նա աշխատեց ոչնչացնել և բոլոր նախարարությունները... բայց ոչնչացավ ինքը... Այդ թողնենք։ Ես չեմ թաքցնում, տիկին, իմ ատելությունը դեպի առհասարակ բոլոր Արշակունիները, ես չեմ թաքցնում և՛ իմ ուրախությունը, որ դու, վերջապես, պիտի պատժվես։ Քո համառության արդյունքներն են, տիկին, այդ բոլոր կործանումները։ Եթե դու, երբ սկզբում Շապուհ արքան կոչեց քեզ Պարսկաստան, գնայիր,— եթե դու, երբ նրանից հետո Շապուհը պաշարեց այդ բերդը, անձնատուր լինեիր,— դրանցից և ոչ մեկը չէր պատահի։ Քեզ կտանեին Պարսկաստան, այնտեղ կփակեին Անուշ բերդում քո թագավոր-ամուսնի մոտ, և դրանով ամեն ինչ կվերջանար...

— Դրանով, դու կարծո՞ւմ ես, Հայր-Մարդպետ, կվերջանար Արշակունյաց թագավորությունը,— ձայն տվեց թագուհին խորին վրդովմունքով։

— Այո՛, տիկին։ Եվ պետք է, որ վերջանա։ Աստուծո արդար վրեժխնդրության բաժակը լցվել է, և նա պետք է թափվի...

Լսելով Հայր-Մարդպետի վերջին խոսքերը, թագուհու վայրացած աչքերը վառվեցան բարկության բոցով, և նա, յուր ծանր, սպառնական հայացքը ձգելով դավաճանի վրա, պատասխանեց խիստ ձայնով.

— Այդ թո՛ղ չուրախացնե քեզ, անպիտան, թո՛ղ չուրախանան և քո դարշելի համախոհները։ Միրուժանը իմ մի քանի քաղաքները ավերակ դարձնելով և բնակիչներին դեպի Պարսկաստան գերի վարելով,— դրանով Հայաստանը չի դատարկվի։ Իսկ ինձ ևս գերի վարելով և իմ ամուսնի մոտ՝ Անուշ բերդը աքսորելով,— դրանով Արշակունյաց թագավորությունը չի ընկնի։ Ես պատրաստ եմ։ Ես գիտեմ, որ դու այստեղից հեռանալուց հետո պիտի մատնես պարսիկներին իմ ամրոցի դատարկությունը։ Գնա՛, հայտնի՛ր։ Թող գան և կալանավորեն ինձ։ Ես ոչ մահից և ոչ աքսորից երկյուղ չունեմ։ Բայց կգա Արշակունյաց թագաժառանգը—իմ որդին—այո՛, կգա նա Բյուզանդիայից, և՛ թե հոր, և՛ թե մեր վրեժը կառնե չարագործներից...

Մարդպետի սառն դեմքի վրա անցավ մի դառն ժպիտ։

— Այդ հույսերը թող չմխիթարեն քեզ, տիկին,— ասաց նա գլուխը հեգնորեն շարժելով։— Քո մեջ խոսում է սյունեցու կրակոտ արյունը և Մամիկոնյանների անզուսպ գոռոզությունը[38]։ Լսի՛ր, տիկին։ Այն անքավելի մեղքերը, որ ծանրացած են քո վրա և քո թագավոր-ամուսնի վրա, երբեք թույլ չեն տա, որ Հայաստանը ձեզանով ազատված լինի, և Արշակունիների գահը վերստին փրկություն գտնե։ Կրկնում եմ, Աստուծո արդար վրեժխնդրության բաժակը լցված է, և նա պետք է թափվի...

Աստված պահանջում է ձեզանից այն անթիվ զոհերի արյունը, որ թափել եք դուք... Ես օտար չեմ, ինձ հայտնի են այն բոլոր եղեռնագործությունները, որ կատարվում էին ձեր արքունիքում... Ես տեսնում էի, և սոսկալությամբ լսում էի, որովհետև վախենում էի քո ամուսնուց... Դու ինքդ, տիկին, արյունով ստացար քո տիկնանց-տիկնությունը... Կարծես, հենց այս րոպեում, իմ աչքերի առջևն է դժբախտ Օլիմպիադայի դիակը, որին սպանել տվեցիր դու[39]: Նրա մահվամբ նրա թագը հափշտակեցիր... Որքա՞ն այդպիսի դժբախտներ զոհվել են քո չար կրքերին և քո անիրավ փառասիրությանը... Դու ապաստանեցիր այդ ամրոցը, տիկին, և հույս ունեիր, որ այդ ամրոցը կազատե քեզ: Բայց տեսա՞ր աստուծո պատուհասը: Ա՛յն, որ չկարողացավ կատարել թշնամու սուրը,— այն բազմությունը, որ այնպես քաջությամբ ընդդիմացավ թշնամուն,— այո՛, այն ամբողջ բազմությունը ոչնչացրին աստուծո ուղարկած սովն ու մահը: Այդ ամրո՞ցը պետք է պաշտպաներ քեզ, տիկին: Հիշի՛ր, ո՞ւմն էր պատկանում այդ ամրոցը: Նրա յուրաքանչյուր քարը ներկված է անբախտ Կամսարականների արյունով, որոնց կոտորել տվեց քո ամուսինը, և անիրավությամբ հափշտակեց նրանց սեփական ժառանգությունը[40]... Նրանց հոգիները մինչև այսօր բողոքում են աստուծո արդարադատության առջև...

Եվ նա շարունակեց մի ըստ միոջե թվել թե՛ թագուհու և թե՛ նրա ամուսնի կատարած հանցանքները, ավելացնելով.

— Ահա՛ Արշակունիների բոլոր առաքինությունները... Պետք է անպատճառ կործանվե՛ր այդ անբարոյական տունը, և Հայաստանը այն ժամանակ միայն հանգստություն կվայելե...

— Պարսից լծի տա՞կ...

— Այո՛, պարսից լծի տակ, որ ավելի թեթև է, քան Արշակունիների անտանելի բռնապետությունը...

— Կորի՛ր, չարագործ,— գոչեց թագուհին և վեր թռավ նստած տեղից: — Եթե թագավորը և թագուհին արյուն են թափում, այդ հանցանք չէ, ինչպես հանցանք չէ, երբ աստվածներն են մարդիկ կոտորում: Այդ անում են նրանք, դարձյալ մարդկանց բարօրության համար: Վատերին մաքրում են լավերից...

Նրա բարձրահնչյուն խռովատյալ ձայնը ներս կոչեց երկու ներքինիներին—Շուշանիկին և Համիկին,— որոնք, երկու պայրացած հրեշտակների նման, ներս վազեցին և, իրանց աղեղները լարելով, ճչացին:

— Թո՛ւյլ տուր մեզ, տիկին, նետահարել այդ անզգամին...

Հայր-Մարդպետը ժպտալով նայեց այդ երկու անմեղ արարածների վրա և հեռացավ...

Դեռ առավոտյան լույսը նոր էր սկսել բացվել, դեռ նոր լսվում էր թռչունների ուրախ տաղերգը։ Բայց լսվում էր և մի այլ ձայն,— սաստիկ խառնաշփոթ և ահարկու ձայն։ Դա բերդի պարիսպների մոտ որոտացող շեփորների և թմբուկների ձայնն էր։ Թագուհին լսեց բոթաբեր ձայները և իսկույն վերկացավ նստած տեղից։

Հայր-Մարդպետի հեռանալուց հետո, նա ամբողջ գիշերը լուսացրեց անքուն։ Տխուր մտախոհությունների մեջ նստած էր և կարծես, սպասում էր։ Այժմ հասավ տագնապալի և անեման պահի րոպեն...

Բայց նա արդեն պատրաստված էր այդ րոպեի համար։ Սիրտը խաղաղ էր և միտքը հանգիստ։ Յուր աշխարհի փրկության համար՝ նա մաքառեց, որքան կարողացավ։ Մնացյալը վերագրում էր Նախախնամության կամքին։ Հանդարտ քայլերով անցավ նա դեպի սենյակի մի անկյունը և ծունր դրեց հատակի վրա։ Արտասվալի աչքերը դեպի երկինք դարձնելով, ձեռքերը կուրծքի վրա փակած, երկար մնաց լուռ հափշտակության մեջ։ Աղոթում էր նա, աղոթում էր, որպես մահվան դատապարտյալը՝ կյանքի վերջին վայրկյաններում՝ փափագում է խոսել աստուծո հետ և յուր իղձն ու պաղատանքը թափել նրա գթության առջև։

Աղոթքը բավական կազդուրեց նրան. աղոթքը զովացրեց հրաբորբոք սիրտը։ Արտասուքը սրբեց և վեր կացավ։ Վերջին անգամ թախծալի հայացքը դարձրեց դեպի յուր շքեղազարդ ննջարանի շուրջը, նայեց սիրելի առարկաների վրա, որ մի քանի րոպեից հետո պարսկական զինվորների ավարառության նյութ պիտի դառնային։

Նա անցավ քնարանը, որտեղ պառկած էր Որմիզդուխտ օրիորդը։ Մոտեցավ նրա անկողնին, բայց դժվարանում էր խանգարել նազելի օրիորդի անուշ քունը։ Այնպես, անշարժ կանգնած, լուռ նայում էր նրա վրա։ Մտաբերում էր նրա գիշերվա խոսակցությունը, և ուրախանում էր նրանով։ Սենյակի տոթի պատճառով՝ թեթև վերմակը կիսով չափ մի կողմ էր ձգված։ Երևում էր հարուստ կուրծքը, երևում էր գեղեցիկ դեմքը, որ սքողված էր սիրուն գիսակների թեթև գանգուրների ներքո։ Նա մոտեցավ և համբուրեց շառագունած երեսը։ Օրիորդը չզարթնեց։ Նա դեռ կանգնած, շարունակում էր նայել նրա վրա։ Բայց մի մթին վշտացմունք հանկարծ սկսեց ալեկոծել արդեն հանդարտված սիրտը։ Նրա խոշոր աչքերը վառվեցան և խաղաղ դեմքի վրա երևացին անբացատրելի ցնցումներ։ Նա յուր դողդոջուն ձեռքը տարավ դեպի բորբոքված ճակատը, հենվեցավ պատին, որ կարողանա իրան ոտքի վրա պահել։ Այդ դրության մեջ մնաց մի քանի րոպե։ Կատաղությունը հետզհետե սաստկանում էր և հուզված սիրտը բաբախում էր անհնարին խռովության

մեջ: «Նա պետք է այն չարագործի ձեռքը չընկնի՜»...— մրմնջաց նա, և մի քանի քայլ փոխեց դեպի օրիորդի անկողինը: Բայց իսկույն սառկալով նա դարձավ և կրկին հենվեցավ պատին:

«Ո՛չ... ո՛չ...— մտածեց նա երկար տատանումներից հետո,— ես այդ արյունից մաքուր կպահեմ իմ ձեռքերը... Այո՛, ես վճռել էի, ես մինչև անգամ երդվել էի, որ նույն րոպեում, երբ Մերուժանը ոտք կդնե իմ ամրոցի շեմքի վրա, նա պետք է յուր առջև կախված տեսնե սիրած աղջկա դիակը... Բայց ինչո՞վ է հանցավոր այդ անմեղ աղջիկը... Ոչ, ես դրան կենդանի կթողնեմ, որ ավելի տանջե Մերուժանին... Չէ կարող լինել մի պատիժ այնքան դառն և այնքան դժնդակ, քան թե այն, երբ Մերուժանը, որ հանձն առեց այդ գեղեցիկ աղջկա համար այնքան եղեռնագործություններ, հանկարծ իրան խաբված կգտնե յուր սիրո մեջ, երբ Որմիզդուխտը կսկսե ատել նրան և մերժել նրա սերը... Նա ինձ խոստացավ այդ, և համոզված եմ, որ կկատարե...»:

Նա մոտեցավ, արթնացրեց օրիորդին:

— Գիտեմ, թե ինչու այդպես վաղ արթնացրիր ինձ, սիրելի մայրիկ,— ասաց նա ուրախանալով:— Գիշերը պայման դրեցինք, որ այսօր մենք գնանք որսի, և ոչ Շուշանիկն ու Հասմիկը:

Նա դեռ չէր մոռացել գիշերվա խոսակցությունը:

— Ոչ, սիրելի Որմիզդուխտ,— պատասխանեց Թագուհին տխուր ձայնով:— Այսօր մեզ պիտի որսան... Որսորդները արդեն եկել, ամբողջ դաշտը կանգնել են... Լսո՞ւմ ես փողերի ձայնը...

— Լսում եմ...— ասաց օրիորդը շփոթվելով:— Ինչո՞ւ համար են այդ ձայները...

— Թշնամին հասկացել է, որ ամրոցը պաշտպաններ չունի, եկել է, որ գրավե նրան:

— Մերուժա՞նը:

— Այո՛, Մերուժանը:

Օրիորդը խելագարի նման վեր թռավ անկողնից, շտապեց հագնըվել: Նա այնպես հերարձակ, առանց գլուխը կապելու, կամենում էր վազ տալ դեպի ամրոցի դռները: Բայց Թագուհին բռնեց նրան, հարցնելով.

— Ո՞ւր ես գնում:

— Անիծյալ Մերուժանը եկել է գրավելու այդ բերդը իմ եղբոր զորքերով. իմ եղբոր զորքերը չեն կարող չհնազանդվել քրոջ հրամանին. ես գնում եմ նրանց հրամայելու...

— Ի՞նչ հրամայելու:

— Դու իսկույն կտեսնես, մայրիկ:

Ամրոցի դրսում աղմուկը և շփոթությունը հետզհետե սաստկանում էին։ Խառնաձայն աղաղակները խլացնում էին շրջակայքը։ Հազարավոր ձայներ կրկնում էին միևնույն խոսքը. «Բա՛ց արեք...»։

— Ես իմ ամրոցի դռները չեմ բաց անի նրանց առջև,— ասաց Թագուհին արհամարհանքով։— Նրանք արժանի չեն այդ պատվին։ Թող կոտրեն...

Նա դեռ բռնել էր օրիորդի ձեռքից, չէր թողնում, որ գնա։

— Իզուր կանցնեն քո ջանքերը, սիրելի Որմիզդուխտ,— ասաց գրկելով նրան։— Մեզ հանձնենք աստուծո կամքին, ինչ որ լինելու է, թող լինի...

Աղմուկը արթնացրեց Շուշանիկին և Համիկին։ Նրանք ճչալով այս կողմ և այն կողմ էին վազվզում, և տակավին չգիտեին, թե ինչ էր պատահել։

Շատ չանցավ, արևը ծագեց և յուր լուսապայծառ ճառագայթները տարածեց դեպի ամեն կողմ։ Այդ միջոցին ամրոցի երկաթյա դռները խորտակվեցան և կատաղի բազմությունը ներս խուժեց։ Նրանք վայրենի աղաղակներով դիմում էին ուղղակի դեպի արքայական ապարանքը։ Առջևում վեհապանծ կերպով ընթանում էր Մեհրուժան Արծրունին, իսկ նրա հետ՝ մի պարսիկ զորապետ։

Այդ միջոցին Թագուհին և օրիորդը դուրս եկան ապարանքի ընդարձակ, շքեղազարդ սրահը։

— Ե՛կ, համբուրեմ քեզ, սիրելի Որմիզդուխտ,— ասաց Թագուհին վշտալի ձայնով։— Հասավ ժամը, որ անողորմ ճակատագիրը պիտի բաժանե մեզ միմյանցից...

Օրիորդը ընկավ նրա գիրկը, ասելով.

— Ոչ, մենք չենք բաժանվի միմյանցից. ուր որ քեզ տանելու լինեն, ես էլ քեզ հետ կգամ։

Ապարանքի բազմաթիվ սենյակները լցվեցան զինվորներով։ Որոնում էին Թագուհուն և օրիորդին։ Ամբողջ պալատը դղրդվում էր խառնաձայն աղաղակներից։ Հանկարծ Շուշանիկը և Համիկը սարսափած վազքով մտան սրահը, ուր գտնվում էին նրանք։

— Գնա՛, Համիկ, դու ավելի սիրտ ունես, գնա, ասա նրանց, որ մենք այստեղ ենք,— հրամայեց Թագուհին։

— Ես այդ բանը չեմ անի, տիկին,— լալագին ձայնով հրաժարվեցավ նաժիշտը։

— Դու գնա՛, Շուշանիկ։

— Ես էլ չեմ մատնի իմ տիկնոջը,— հեկեկալով պատասխանեց նա։

Երկու նաժիշտները փարեցան իրանց սիրելի տիկնոջ ոտներին,

համբուրում էին, ողջագուրում էին, և ողբաձայն հառաչանքներով լաց էին լինում։ «Ա՜խ, քեզ պիտի տանեն... Ա՜խ, մեզ պիտի զրկեն քեզանից...»— անդադար կրկնում էին նրանք և չէին բաժանվում։ Թագուհին հեռացրեց նրանց, երբ նախասենյակում լսվեցան ծանր ոտնաձայներ։ Նա մոտեցավ, նստեց բազմոցի վրա, իսկ նրա մոտ նստեց և օրիորդը։

Ներս մտան Միրուժան Արծրունին, պարսիկ զորավարը, մի խումբ թիկնապահների հետ։ Միրուժանի գեհենական դեմքը փայլում էր ուրախությունից։ Խորին հրճվանքով առաջ ընթացավ նա և, յուր սուրը դնելով օրիորդի ոտների մոտ, արտասանեց հետևյալ խոսքերը։

— Այդ բոլորը կատարվեցավ քո ազատության համար, և քո սիրո համար, նազելի Որմիզդուխտ։ Հայոց թագուհին քեզ գերի վարեց յուր ամրոցը, իսկ ես, քեզ ազատելու համար, ոչնչացրի նրա ամրոցը՝ յուր զորքերի անհագին բազմության հետ։ Հույս ունեմ, որ դու այսուհետև կհարգես այդ սուրը, որ այնքան անձնվիրաբար գործեց քո պատվի և քո կյանքի համար։

Օրիորդի խոշոր աչքերը վառվեցան բարկության բոցով։ Նա ոչինչ չպատասխանեց և ոչ արժանացրեց նայել նրա վրա։ Այլ ոտքով սուրը մի կողմ հրեց և, դառնալով դեպի պարսիկ զորավարը, հարցրեց.

— Ինչպե՞ս է քո անունը։

— Ալանաոզան[42], քո ծառան,— պատասխանեց նա գլուխ տալով։

— Ո՛վ Ալանաոզան, հրամայում եմ քեզ իմ եղբոր՝ Արքայից Արքայի՝ անունով, հեռացրո՛ւ այստեղից այդ մարդուն,— նա ձեռքը զզվանքով տարավ դեպի Միրուժան Արծրունին։— Նա չի պիտի համարձակվի տեսնել իմ երեսը։— Պատրաստել տո՛ւր մեզ համար առանձին պատգարակներ, ես և Հայոց թագուհին միասին պիտի գնանք Տիզբոն, իմ եղբոր մոտ։

Զորավարը, ի նշան հնազանդության, կրկին և կրկին անգամ խոնարհացրեց գլուխը, պատասխանելով.

— Այդպես մեծափառ օրիորդի հրամանը կատարված կլինի, որպես նրա բարձր ցանկությունն է։

Կարծես, ամբողջ ապարանքը փուլ եկավ Միրուժանի գլխի վրա, և նա խորտակվեցավ, փշրվեցավ նրա փլատակների ներքո։ Հարվածը մեծ էր և վերքը անբուժելի։ Նա այն աստիճան շփոթվեցավ, նա այն աստիճան կորցրեց յուր վեհությունը, որ մի բառ անգամ չգտավ պատասխանելու, երբ պարսից զորավարը, որ յուր ստորադրյալն էր, բռնեց նրա ձեռքից, և դուրս հանեց սրահից։

Թագուհին նայեց նրա վրա, և խղճաց...

Մյուս օրը թագուհին և օրիորդը, Ալանաողանի հսկողության ներքո, ճանապարհ ընկան դեպի Պարսկաստան։ Տարագրյալ թագուհուց չբաժանվեցան և նրա երկու նաժիշտները։

Այնուհետև պարսիկ զորքերը ամբողջ ինն օր ու ինն գիշեր կրում էին Արշակ թագավորի գանձերը, որ ամբարված էին այդ ամրոցում[43]*։ Այնտեղ անշարժ մնացել էր և սովից ու ժանտախտից մեռած բազմության հարստությունը։ Երբ բոլորովին դատարկեցին, հետո հրդեհեցին գեղեցիկ Արտագերսը...*

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Ի Ր Ք

Ա.

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԱՌԱՎՈՏԸ

«Իսկ յայսմ ժամանակի (Մերուժանն Արծրունի և Վահանն Մամիկոնեան) աւերեցին զգաւառս, և գերեցին զբնակեալսն անդ... և զայլ գերութիւնս՝ գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհէ աշխարհի, ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան, զի անդ էր զօրաժողով իւրեանց զօրացն»

Փաւստոս:

Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը։

Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որ աչք էին շլացնում։ Արագածի սրակաձև գագաթը չէր երևում։ Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսնիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցելի շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ։

Գեղեցի՜կ էր այդ առավոտը։

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թփից դեպի մյուսը։ Գույնզգույն թիթեռները, գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մորուտները։ Ձեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծյամը, դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից[1], և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարգերի վրա։

Չէր երևում միայն մարդը։

Ամեն տարի, արծաթյա փողերի հնչյունը, որսորդական բարակների մռնչյունը, սիգապանծ նժույգների խրխինջը, խառնվում էին սրբամուտ անտառների վաղորդյան հանդիստը։ Ամեհի վարազը սարսափելով նետվում էր մթին շամբուտների մեջ, իսկ ճավամաղ արջը ապաստանի տեղ էր որոնում։ Իսկ այս տարի չկային նրանք,— չկային նախարարական իշխանազն պատանիները, որոնց որսորդական ուրախ զվարճությունները մի առանձին կենդանություն էին բաշխում երևաշատ դաշտավայրին[2]։

Ամեն տարի Թաշումը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի էր լինում մրաջան մշակի երգը[3]։ Փայլում էր մանգաղը, եռում էր գործը, և ոսկեղեն հունձքը՝ յուր լիառատ բեղմնավորությամբ՝ պարգևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը։ Իսկ այս տարի չկար հնձվորը, չկար և հերկվորը։ Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արորը անգործ ընկած էր դեռ չվերջացրած ակոսների մոտ։

Ամեն տարի սուրբ տաճարի կոչնակի առաջին հնչման հետ՝ զարթնում էր հովիվը։ Ոչխարների անուշ բառանչը, արջառների ուրախ ձայնարկությունը կենդանացնում էին խոտավետ հովիտները խիստ ախորժելի աղմուկով։ Իսկ այս տարի չէին երևում ոչ հովիվը և ոչ նրա հոտերը։ Ցիրուցան գառնուկները թափառում էին սար ու ձոր, և հայրակորույս որբիկների նման, կարծես, որոնում էին հովվին։

Ամեն տարի, երբ ծագում էր ավընչյան լուսատուն, նրա առաջին ճառագայթները ողջունում էին շինական աղջիկների աշխատանքը։ Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, որպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում նրանք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում։ Երգում էին և գործում էին։ Եվ նրանց ուրախությանը ձայնակից էր լինում երգասեր սոխակը։ Իսկ այս տարի չէին երևում անխոնջ մշակուհիների այդ գեղեցիկ զարդերը։ Այգիները մնացել էին անխնամ, ագարակները կորցրել էին իրանց սիրելի բանվորներին։

Արևը բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան Արարատյան ընդարձակ դաշտավայրը, որպես մի հսկայական բուրվառ, խընկարկում էր յուր վաղորդյան անուշհոտությունը։ Ամբողջ հովիտը ծխում էր, գոլորշիանում էր։ Ցողապարդ բուսականությունը ետ էր տալիս երկնքին յուր ընդունած մարգարտյա կաթիլները։

Ծխում էին և դաշտավայրի վրա խիտ առ խիտ սփռված գյուղերը։ Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ, կապտագույն ծուխին, որ ամեն տարի օձապտույտ սյունակներով վեր էր բարձրանում խըր-

ճիթների գմբեթաձև երդիկներից։ Այդ ծուխը, սև մառախուղի նման, ծածկել էր գյուղերը, և մերթ ընդ մերթ նրա մթին թանձրության միջից փայլատակում էին հրային կայծեր...

Ծխում էին և մեծաշեն քաղաքները։ Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը... Եվ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը...

Ոչ ոք չէր երևում։ Ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկություն։ Դատարկ էին քաղաքները, դատարկ էին գյուղերը, դատարկ էին և ճանապարհները։ Ի՞նչ էր պատահել։ Կարծես թե, մի մահաբեր շունչ անցել էր այդ սքանչելի դաշտի վրայով, և մարդկային ամեն արարած ոչնչացրել էր...

Բայց ահա՛, դեպի Արտաշատ տանող ճանապարհի վրա փոշի է բարձրանում։ Անցնում են մի խումբ ձիավորներ։ Ձիերի հարուստ ասպազենքը, հեծյալների թանկագին զենքն ու զրահը՝ ցույց են տալիս, որ այդ մարդիկը հասարակ ճանապարհորդներ չեն։ Մի վայելչադեմ երիտասարդ առաջ է ընկած, մյուսները հետևում են նրան։

Նրանք հասան Արտաշատ քաղաքի կիսափուլ պարիսպների մոտ։ Այստեղ երիտասարդը կանգ առեց, մի քանի րոպե յուր տխուր հայացքը դարձրեց դեպի ավերակ և տակավին ծխվող քաղաքը, և ապա ճանապարհը ծռեց դեպի Տափերական կամուրջը[1]։ Նա գալիս էր հեռվից, շատ հեռվից, և այսպիսի հրդեհված, անմարդացած քաղաքներ շատ էր տեսել յուր ճանապարհի վրա։ Այդ էր պատճառը, որ նրա քնքուշ սիրտը, կարծես թե, ամրացել էր, նրա վառ զգացմունքները, կարծես թե, սառել էին, և նրա թախծալի աչքերում մի կաթիլ արտասուք անգամ չէր մնացել, որ թափեր դժբախտ Արտաշատի վրա։

Տափերական կամուրջը միակ անցքն էր, որ Արտաշատից տանում էր դեպի Արաքսի աջ ափը։ Նա հասավ կամուրջին, բայց չանցավ կամուրջը։ Այնտեղ մեկին սպասում էր, և լուռ մտախոհությամբ նայում էր գետի վրա։

Արևը տակավին փայլում էր, ծաղիկները շողշողում էին, թռչունները դեռ շարունակում էին իրանց առավոտյան սաղերգը։ Բնության այդ ընդհանուր սառնասրտության մեջ՝ վրդովված էր միայն Արաքսը։ Որպես մի սգավոր, որդեկորույս մայր, պղտոր հորձանքներով արտասում էր, աղաղակում էր, հառաչում էր նա, հեղեղելով յուր կանաչազարդ ափերը։ Որպես մի ահարկու վիշապ, փրփուրը բերանում, կատաղի կերպով առաջ էր մղվում, լայնանում էր, ընդարձակվում էր և, կարծես, որոնում էր լափելու, կլանելու այն չարագործին, որ այնպես անխնա

ձեռքով այրեց, անապատ դարձրեց գեղեցիկ քաղաքներն ու ավանները, որ զարդարում էին յուր հրաշալի ափերը։ Նրա կատաղությունը զգում էր հսկա կամուրջը, որ սեղմել էր նրան յուր բազմաթիվ կամարների ներքո։

Կամուրջի մյուս կողմում, Արաքսի աջ ափի մոտ, ընդարձակ, կանաչազարդ դաշտավայրը ծածկված էր խիտ վրաններով։ Ուղտերի, ձիաների, ջորիների և փղերի երամակները արածում էին վրանների շուրջը։ Ճոխորեն աճած խոտաբույսերը առատ սնունդ էին մատակարարում այդ անասուններին։ Այնտեղ դրած էր մի մեծ բանակ։ Երիտասարդը նայում էր դեպի բանակը։

Այդ միջոցին, կամուրջի հակառակ ծայրում, երևաց մի փայակ, որ, երկար նիզակը ձեռին, ուղիղ մոտենում էր երիտասարդի խմբին։ Երբ բոլորովին մոտեցավ, խորին կերպով գլուխ տալով, կանգ առեց։

— Վերջապես դու երևացիր, Մալխաս,— դարձավ դեպի նա երիտասարդը։— Ասա՛, ի՞նչ լուր ունես։

— Ոչ Մամիկոնյան տերը և ոչ Մեհրուժան Արծրունին այդ բանակում չեն,— պատասխանեց փայակը։

— Ապա ուրե՞ղ են նրանք,— հարցրեց երիտասարդը և, միևնույն ժամանակ, նրա վշտահար դեմքի վրա նշմարվեցան անհամբերության նշաններ։

— Նրանք գտնվում են պարսից գլխավոր բանակում, որ այժմ դրած է Նախճվանի մոտ[5]։

— Իսկ այդ ի՞նչ բանակ է։

— Դա գլխավոր բանակի մի փոքրիկ մասն է։ Այստեղ հավաքել են միայն Դվինի և Արտաշատի գերիներին[6]։

— Ո՞ւմ հրամանատարության ներքո է գտնվում այդ բանակը։

— Պարսից Զիկ անունով զորապետի[7]։

Երիտասարդը Սամվելն էր։ Նա գնում էր յուր հոր և յուր քեռու՝ Մեհրուժան Արծրունու մոտ։

— Հետևի՛ր ինձ,— դարձավ նա դեպի փայակը, յուր ձիու գլուխը շուռ տալով դեպի Նախճվանի ճանապարհը։ Նրա հետ ամբողջ ասպախումբը դիմեց դեպի այն կողմը։

Նա որոնում էր հորը, որոնում էր և քեռուն։ Որոնում էր այնպիսի սրտով, որպես կյանքից ձանձրացած, բայց դեռ անվճռականության մեջ տատանվող մարդը որոնում է մահադեղ և, միևնույն ժամանակ, ինքն իրան մխիթարում է, երբ չէ գտնում, որ բաղձանքը կատարեն։ Նույնպիսի մի անվճռականության մեջ տանջվում էր նա, սկսյալ այն

օրից, երբ բաժանվեցավ յուր մորից, երբ թողեց Ողական ամրոցը և ճանապարհ ընկավ դեպի Հոր բանակը։ Այն օրից անցան ամիսներ, անցավ մի տարի, և ավելի։ Որքա՜ն ցավալի դեպքեր պատահեցան, որքա՜ն դժբախտ իրողություններ կատարվեցան։ Նա ապարդյուն կերպով կորցրեց թե՛ թանկագին ժամանակը, և թե՛ այն փառքը, որ յուր դաշկիցները ստացան պանծալի կռիվներում, իսկ ինքը բոլորովին անմասն մնաց։ Այդ բոլորը ավելի սաստկացնում էր նրա վշտերը և ավելի խորին կերպով խոցում էր նրա զգայուն սիրտը։

Բայց նա այդ ժամանակամիջոցում բոլորովին անգործ չէր։ Նա դարձյալ պատերազմի մեջ էր,— մի ներքին, բարոյական պատերազմի մեջ, որ կատարվում էր նրա սրտում, և որը ավելի սարսափելի էր, քան զենքի ու զրահի արհավիրքը։ Նա կռվում էր յուր խղճի հետ և յուր սրտի հետ. վերք էր տալիս և վերք էր ստանում։ Այդ հարվածներին չդիմացավ մանուկ սիրտը, մինչև, վերջապես, նրան հիվանդության մահճի մեջ գցեց։ Վանից անցնելու միջոցին, դժբախտ Համազասպուհու ողբալի վախճանը տեսնելուց հետո, նա այլևս չկարողացավ շարունակել յուր ճանապարհը։ Նրան բոլորովին անզգա դրության մեջ տարան Անձավացյաց Հոգվոց վանքը[8], որ յուր լեռնային անմատչելի դիրքի պատճառով՝ մեկուսացած էր պատերազմների աղմուկից։ Այնտեղ՝ վանականների խնամատարության ներքո՝ բժշկվում էր նա։ Նրանից չբաժանվեցան յուր հավատարիմ ծառաները, որ ամեն կերպով հոգ էին տանում երիտասարդ իշխանի առողջությունը վերականգնելու համար։ Այնուամենայնիվ, մի քանի անգամ նրա մահվան դագաղը պատրաստվեցավ։ Այնտեղ մնաց նա բոլորովին անգիտակցության մեջ, և նրա շրջապատողները ամենայն զգուշությամբ աշխատում էին թաքցնել նրանից, թե ի՛նչ էր կատարվում այդ ժամանակ Հայոց աշխարհում։ Բայց հիվանդը յուր ջերմության տագնապի մեջ՝ միշտ Հայոց աշխարհի մասին էր խոսում և միշտ նրա մասին էր հարցնում։

Ոչ հայրը և ոչ մայրը ամենևին տեղեկություն չունեին նրանից, այդ պատճառով շատ անհանգիստ էին։ Անհանգիստ էին և բարեկամները։ Ոմանք նրան բոլորովին կորած էին համարում։ Այդ տխուր հանգամանքների մեջ՝ կարելի էր երևակայել Ռշտունյաց Աշխեն օրիորդի վիշտը, որ հոգով և սրտով նվիրված էր յուր սիրելիին։ Նա մարդիկ ուղարկեց դեպի ամեն կողմ՝ որոնելու նրան։

Բայց ճակատագիրը խնայեց մահամերձ հիվանդին, խնայեց մի նշանավոր գործի համար, որ ապագայում օրինակ պիտի դառնար շատերին։ Հենց որ նա փոքր-ինչ առողջացավ, փոքր-ինչ կազդուրեց յուր սպառված ուժերը, իսկույն թողեց վանքը և ճանապարհ ընկավ դե-

ալի յուր նպատակը։ Այդ ժամանակ նրան հայտնի էր ամեն ինչ. այդ ժամանակ նրան արդեն պատմել էին, թե ի՛նչեր կատարվեցան յուր բացակայության միջոցին, կամ ի՛նչ դրության մեջ էին ներկա գործերը։ Տեղեկանալով բոլորը, կազմեց նա յուր ամենավստահ ծրագիրը։ Առանց ժամանակ կորցնելու, նախ գնաց Հաղամակերտ, Արծրունյաց ոստանը, և այնտեղ տեսնվեցավ Վասպուրականի Տիկնոջ (Մեհրուժանի մոր) հետ։ Հետո գնաց Ռշտունիք, տեսնվեցավ Գարեգին իշխանի հետ։ Այնտեղից անցավ դեպի Մոկաց և Սասնո լեռնաբնակները, տեսնվեցավ և նրանց իշխանների հետ։ Թե ի՛նչ խորհուրդ ունեին այդ տեսակցությունները,— արդյունքը կհայտնվի հետո։ Նա չմտավ Տարոն, Մամիկոնյանների սեփական երկիրը, զգուշանալով, մի գուցե հանդիպի յուր մորը։ Այլ յուր նպատակները կարգադրելուց հետո, ուղիղ ճանապարհ ընկավ դեպի Արարատ, ուր հույս ուներ գտնել թե՛ հորը և թե՛ Մեհրուժանին։ Նրա հետ էր յուր սիրելի դայակը՝ ծերունի Արբակը, և յուր ուղեկիցը՝ պատանի Արտավազդը։ Նրա հետ էին և յուր հավատարիմ ծառաները։ Նա անցավ մի շարք ավերակների տխուր հետքերի վրայով, որ թողել էին յուր հայրն և յուր քեռին։ Նա յուր ճանապարհի վրա ականատես եղավ այն բոլոր չարիքներին, որ գործել էին այդ երկու մարդիկը։ Բայց մտնելով Արարատյան դաշտը, և տեսնելով նրա թշվառությունները, Սամվելի ցավերը ավելի սաստկացան։ Կատարված խողխողությունները, որքան դառն էին, այնքան ավելի հաստատեցին նրա մեջ այն մթին խորհուրդը, որ վաղուց հղացած էր յուր սրտում։ Բայց նա իրան շատ ուշացած էր համարում... Յուր հղացած խորհուրդը խիստ փոքր դարման և փոխարինություն կլիներ այն ահագին վնասներին, որ արդեն կատարվել էին։ Այդ էր, որ այնքան անմխիթար ապաշավության մեջ էր դրել նրան, և այնպես անողոք կերպով կեղեքում էր նրա քնքուշ սիրտը։

Երեկոյան արեգակը դեռ մայր չէր մտել, ձիաների ճեպընթաց քայլերով հասավ նա Նախճվան քաղաքը։ Գեղեցիկ, բարձրադիր բլրակի վրա, Գողթնյաց աշխարհի զվարճասեր քաղաքը ներկայացնում էր ավերակների մի սոսկալի կույտ, որ հրդեհի անխնա բոցերից հետո՝ ստացել էր խիստ մռայլ, սևաթույր տեսք։ Ամեն շենք կործանել էր կրակը, ամեն շունչ սպանել էր թշնամու սուրը։ Կենդանի մնացածները գերված էին։

Քաղաքի արևմտյան ստորոտում, ընդարձակ տափարակի վրա, որ տարածվում էր մինչև Արաքսի ձախակողմյան ափերը, դրած էր պարսից գլխավոր բանակը։ Սամվելը թողեց անմարդացած քաղաքը, և յուր ասպախումբով դիմեց դեպի բանակը։ Բոլոր վրաններից, որ ծածկել

էին տափարակի ամբողջ տարածությունը, ավելի աչքի էին զարկում երկուսը, որոնք գտնվում էին միմյանց հանդեպ, երկու հողաթումբ բարձրությունների վրա։ Վրաններից մեկը երկնագույն էր, և գլխին ծածանվում էր մի դրոշակ արծվաթև վիշապի նշանով, իսկ մյուսը շիկակարմիր էր, և գլխին ծածանվում էր մի դրոշակ արծվի նշանով[9]։ Սամվելը յուր ձին քշեց դեպի վերջին վրանը։

Դեռ չհասած, երիտասարդի ապախումբից լսելի եղավ շեփորի ձայն, որին բանակից պատասխանեցին նույն ձայնով[10]։ Շատ չանցավ, բանակից դուրս եկավ մի բարձր աստիճանավոր, և մի խումբ սպաների հետ դիմավորեց եկվորներին։

— Ես Վահան Մամիկոնյանի որդին եմ,— ասաց Սամվելը։— Ինձ առաջնորդեցեք դեպի իմ հոր վրանը։

Նրան տարան դեպի շիկակարմիր վրանը։ Մինչև հասնելը, Սամվելի մեջ սիրտ չմնաց։ Նա անցնում էր այն բարբարոսական բանակի միջով, որ մի քանի շաբաթվա ընթացքում ավերակ դարձրեց Հայոց աշխարհի ամենագեղեցիկ մասը։ Նա անցնում էր այն թշվառ գերիների միջով, որ մի ժամանակ այդ աշխարհի երջանիկ զավակներն էին։ Մահվան չափ դառն էին այն մի քանի րոպեները մինչև հասավ նա հոր վրանը։ Ինչպե՞ս հանդիպել նրան, ինչպե՞ս նայել նրա երեսին։— Այդ հարցերը ավելի սարսափեցնում էին նրան, քան թե շրջապատող տխուր երևույթները։ Նա հավաքեց յուր բոլոր սառնասրտությունը, ցած իջավ ձիուց, և իսկույն վազեց վրանի ներսը։ Նրա մարդիկը մնացին դրսում։

— Ա՜խ, Սամվել, սիրելի Սամվել...— բացականչեց շփոթված հայրը և սեղմեց որդուն յուր կուրծքին։

Մի քանի րոպե մնացին նրանք լուռ գրկախառնության մեջ։ Հայրը չէր հավատում յուր աչքերին։ Որդու անակնկալ հայտնվելը այն աստիճան հափշտակեց նրան, որ մերթ երեխայի նման հեկեկում էր, մերթ համբուրում էր նրան, և սրտի սաստիկ բաբախմունքից մի բառ անգամ չէր գտնում յուր զգացմունքները արտահայտելու։

Նա բռնեց սիրելի որդու ձեռքից, տարավ, նստացրեց յուր մոտ փառավոր բազմոցի վրա։ Այն օրից, որ հայրը գնացել էր Տիզբոն[11], չէր տեսել որդուն։ Այն օրից անցել էին տարիներ։ Որդին աճել էր, գեղեցկացել էր, և բոլորովին այրական դեմք էր ստացել։ Հայրը նայում էր նրա վրա և զարմանում էր։

— Սամվե՜լ... Թանկագի՜ն Սամվել...— անդադար բացականչում էր նա, և կրկին ու կրկին անգամ ողջագուրելով, սփռում էր նրա դունաթափ դեմքը բազմաթիվ համբույրներով։

Որդին դեռ գտնվում էր հուզված կրքերի սաստիկ ալեկոծության

ները, որ նրան մի տեսակ տենդային դրության մեջ էին դրել։ Բայց հայրը վերաբերվում էր այդ նրա զգացված սրտին, և երկար նրա դողդոջուն ձեռքը բաց չէր թողնում յուր ափերի միջից, և դեռ խորին զմայլմունքով շարունակում էր նայել որդու վրա։ Նրա հոգին լցված էր անսահման բերկրությամբ, և իրան երանելի էր համարում, որ այնպիսի սիրուն որդի ունի։

— Ա՜խ, եթե քեզ գոնե մի անգամ տեսներ Շապուհ արքան,— ասում էր նա սրտագին բաղձանքներով,— այդ շնորհալի դեմքով, այդ վայելչագեղ հասակով, նա անպատճառ քեզ հայոց ամբողջ հեծելազորի հրամանատար կկարգեր։

Այդ խոսքերը այնպիսի անսպասելի կերպով խոսվեցան, որ Սամվելը իսկույն ուշի եկավ, և մտածեց փոխել յուր դերը, որպեսզի չմատնվի։

— Մի այդպիսի բարձր պաշտոն ինձ համար դեռ շատ վաղ է, սիրելի հայր,— պատասխանեց նա բանի ժպիտով։

— Դու շատ համեստ ես, Սամվել։ Բայց նայիր քեզ վրա հոր աչքով, և այն ժամանակ շատ վաղ չես համարի։ Դու կհիացնես պարսից ամբողջ արքունիքը, եթե գեթ մի անգամ այնտեղ հայտնվելու լինես։ Բավական է, որ դու մի ասպախաղ կատարես Տիզբոնի մեծ հրապարակի վրա, և Շապուհ արքան յուր պալատի բարձր պատուհաններից նայե քեզ վրա,— այն ժամանակ քո հոր ամենաջերմ փափագները կատարված կլինեն...

— Դու ի՞նչ գիտես, սիրելի հայր, որ ես ասպախաղի մեջ շնորհք ունեմ։

— Մայրդ գրում էր ինձ, մի՛շտ գրում էր, սիրելի Սամվել։ Գրում էր քո հաջողակությունը նետաձգության մեջ, գրում էր քո քաջությունները զինաշարժության մեջ, և հորդ կարոտ սիրտը ուրախացնում էր։ Ես մխիթարվում էի իմ պանդխտության մեջ, մտածելով, որ արժանավոր որդու հայր եմ։— Ա՜խ, ես այնքան հափշտակվեցա քեզանով, որ բոլորովին մոռացա հարցնել, թե ովքե՞ր են եկած քեզ հետ։

Սամվելը պատմեց, թե ովքեր են եկած յուր հետ։ Հայրը հրամայեց, որ բոլորին տեղավորեն պատշաճավոր վրաններում։

Հետո կրկին դարձավ նա դեպի որդին, հարցնում էր մոր մասին, հարցնում էր քույրերի և եղբայրների մասին, հարցնում էր, թե ինչ «պատրաստություններ» է տեսել մայրը, և մի առանձին հետաքրքրությամբ աշխատում էր տեղեկանալ, թե Տարոնում ինչպե՞ս են նայում «գործերի» վրա, քաղաքացիք ի՞նչ տրամադրության մեջ են, և այլն։ Սամվելը հոր հարցասիրությանը բավականություն էր տալիս կամ

թևությամբ, կամ անորոշ և երկդիմի ենթադրություններով, որոնք կատարելապես չէին գոհացնում նրա հետաքրքրությունը։

— Մայրդ նամակ չգրե՞ց,— հարցրեց նա։

— Ինչպես չէ։— Սամվելը հանեց ծոցից մոր նամակը և տվեց հորը։

Հայրը նայեց նամակի ծրարի վրա և զարմացավ։

— Այդ նամակը հին է, սիրելի հայր,— ասաց Սամվելը, և սկսեց պատմել յուր հետ պատահած արկածները, յուր մահամերձ հիվանդությունը, Անձավացյաց Հոգվոց վանքում երկար ժամանակ մնալը և այնու Թաքցրեց հորից միայն՝ յուր առողջանալուց հետո՝ զանազան տեղեր գնալը և զանազան անձանց հետ տեսնվելը։

— Դա կատարյալ միամտություն է, Սամվել,— նկատեց հայրը վշտանալով։— Դու այդքան ժամանակ հիվանդ ընկած ես լինում մի անհայտ վանքում, ոչ քո հորը և ոչ քո մորը իմացում չես տալիս։

— Ես իմացում տալիս էի... բայց իմ մարդիկը գնում էին և տեղ չէին հասնում... Գիտե՞ս, հայր, ի՞նչ աղմկալի ժամանակներ էին... Մարդիկների գլուխները ծառի տերևների նման թափվում էին...

Սամվելը, իրավ, յուր հիվանդության մասին իմացում էր տվել, բայց ոչ հորը և ոչ մորը, այլ յուր բարեկամներին, որ այդ միջոցում գտնվում էին Արտագերս ամրոցի մեջ, պաշարված հոր և Մերուժանի զորքերով։ Նրա մարդիկը չկարողացան մտնել ամրոցը, և այդ պատճառով նրա հետ պատահած դժբախտությունները մնացին անհայտության մեջ։ Հայրը սաստիկ ափսոսեց այն բոլոր տառապանքների համար, որ կրել էր որդին և, գրկելով նրան, բացականչեց.

— Աստված քեզ կրկին անգամ պարգևեց ինձ, անգին Սամվել, գոհությո՞ւն և փա՞ռք նրա մեծությանը։

Նամակը թեև հին էր, այնուամենայնիվ հոր համար շատ հետաքրքրական էր. նա իսկույն սկսեց խորին ուշադրությամբ կարդալ, խնդրելով որդուն, որ գնա կից խորանում լվացվի և ճանապարհի փոշին սրբե իրանից։ Մի խումբ պատանիներ, շքեղ կերպով հագնված, պատրաստ էին այնտեղ սպասավորելու համար։ Նրանք բոլորն էլ ազգով պարսիկներ էին և չէին ճանաչում Սամվելին։ Նրա հայրը այժմ հայ ծառա չէր պահում, և ոչ մի հայ նրա մոտ ծառայել չէր ցանկանում։ Սամվելը, հորը միայնակ թողնելով, մտավ ցույց տված խորշը, ուր ամեն պարագայք պատրաստ էին լվացվելու համար։

Վրանը, որի մեջ գտնվում էին նրանք, յուր բոլոր հարմարություններով՝ ներկայացնում էր մի ամբողջ շարժական պալատ։ ժամանակի

արհեստը տվել էր նրան՝ թե՛ վայելուչ ձև և թե՛ շքեղություն։ Դրսից, որպես լինում էին ամենաբարձր ազնվականների վրանները, շիկակարմիր գույն ուներ, իսկ ներսից պատած էր բաց-մանիշակագույն ատլասով։ Զանազան մուտքեր տանում էին դեպի զանազան բաժանմունքներ, որոնք առանձին խորանների ձև ունեին, և պատրաստված էին այլ և այլ պետքերի համար։ Դռների փոխարեն ծառայում էին մետաքսյա վարագույրներ, որոնց եզերքը զարդարած էին գույնզգույն ծոպերով։ Վարագույրները կախված էին հաստ նարոտների վրա, որոնց ծայրերից քարշ էին ընկած ոսկեթել փնջեր։ Այդ ամբողջ կազմվածքը, որ պարսկական շատ ճաշակի գործ էր, ամրացած էր փայտյա ոսկեզօծ սյուների վրա, որոնք զարդարած էին ամենանուրբ ծաղկանկարներով։ Տասն ջորիներ հազիվ կարողանում էին տանել նրան, երբ լուծվում էր այդ վրանը։ Մի ամբողջ օր հազիվ կարողանում էին կանգնել նրան, երբ հարկավոր էր լինում կրկին կազմել։ Այդ պատճառով, վրանը միշտ մի օրով առաջ տարվում էր հետևյալ իջևանը, որ ժամանակ ունենային պատրաստելու։

Նա կազմված էր բավական բարձր հողաթմբի վրա, որ շինված էր ժամանակավորապես վրանը զերծ պահելու համար անձրևային հեղեղներից, որ գարնան եղանակներում խիստ հաճախ լին պատահում այդ կողմերում։ Այդ բարձր դիրքից երևում էր ամբողջ բանակը, որ տարածվում էր հեռու, շատ հեռու, մինչև Արաքսի ափերը, և բռնել էր կանաչազարդ տափարակի մեծ մասը։ Երեկոյան կիսամռայլի միջից, բանակի մյուս ծայրում, հազիվ երևում էր պարսից Կարեն անունով նշանավոր զորապետի[12] վրանը, որի գմբեթաձև կատարի վրա ծածանվում էին պարսկական դրոշակներ։ Իսկ Մամիկոնյան իշխանի վրանի հանդեպ՝ երևում էր Մերուժանի երկնագույն վրանը, Արծրունյաց արծվաթև վիշապի վառով։

Երբ Սամվելը վլացվեցավ, հագուստը փոխեց և կրկին վերադարձավ հոր մոտ, նա դեռ չէր վերջացրել նամակի ընթերցումը։ Նրան չխանգարելու համար, անխոս նստեց մի կողմում, և լուռ նայում էր հոր դեմքի մթին արտահայտությունների վրա, որ ոչ բոլորովին մխիթարական էին։ Դա նամակ չէր, դա մի ընդարձակ զեկուցում էր, որով Սամվելի աչալուրջ մայրը մանրամասնորեն հաղորդում էր յուր ամուսնին «գործերի» դրության մասին Տարոնում։

Նամակի ընթերցումից հետո՝ հայրը գտնվում էր մի տեսակ մտահույզ տրամադրության մեջ։ Կինը, ի միջի այլոց, զգուշացրել էր նրան՝ «շատ չհավատալ Սամվելին»... Կնոջ մի այդպիսի դիտողությունը բոլորովին տարօրինակ էր թվում նրան։ Իբրև բարձր ազնվական, մա-

նավանդ իբրև հայր, նա երևակայել անգամ չէր կարող, թե որդին կհամարձակվեր սեփական կամք և սեփական ցանկություններ ունենալ։ Նա դեռ նայում էր Սամվելի վրա, որպես նախկին երեխայի վրա, առանց նկատելու, որ երեխան աճել էր, զարգացել էր և սեփական մտածությունների տեր էր դարձել։ Նրա մեջ՝ ազնվապետական կամայականությունը՝ յուր հպատակներից հետո՝ անցնում էր և որդու վրա։ Այդ էր պատճառը, որ նա յուր գործերի վերաբերությամբ՝ ոչինչ պատասխանատվություն դեպի որդին չէր զգում։ Նա կարծում էր, թե ինչ որ հաճելի է եղել իրան, նույնը, անտարակույս, պետք է հաճելի լինի և որդուն։ Նա համոզված էր, թե ինչ որ ինքը արել է, կամ ինչ որ դեռևս դիտավորություն ունի անելու,— բոլորը նույնքան ախորժելի պետք է լինեն որդուն, որքան իրան, որովհետև գործողը հայրն էր։ Նրա համար բոլորովին խորթ էր այն միտքը, թե որդին ընդունակ էր, կամ իրավունք ուներ քննադատելու հոր գործողությունները։ Ուրեմն ինչո՞ւ չհավատալ Սամվելին։

Նա նայում էր կատարված իրողությունների ահավորության վրա յուր անձնական նեղ տեսակետից։ Եթե կործանվեցան քաղաքներ և հրդեհվեցան մեծաշեն ավաններ, եթե գերի առնվեցան բազմաթիվ բնակիչներ և արյունով ներկվեցան հայրենի երկրի դաշտերն ու անդաստանները,— չէ՞ որ այդ բոլոր չարիքները չգործվեցան լոկ չարագործության համար, այլ հայտնի, որոշ, և կանխապես վճռված քաղաքական նպատակների համար, որ խոստանում էին փայլուն արդյունքներ։ Եվ եթե հայրը կհասներ սպասած արդյունքներին, ո՞ւմ համար էր, եթե ոչ որդու համար, ո՞վ պետք է վայելեր, եթե ոչ որդին։— Ահա այդպես էր մտածում հայրը, այդպես էին փառասեր իշխանի դատողությունները, և այդ պատճառով նրան բոլորովին տարօրինակ էին թվում կնոջ նախազգուշությունները, թե «շատ պետք չէ հավատալ Սամվելին...»— ինչո՞ւ չհավատալ։ Միթե Սամվելը դեռ այնքան տհաս էր, որ հասկանալ չէր կարող հոր բարի ցանկությունները, որ նույն իսկ որդու բախտավորության համար էին...

Բայց որդին այլապես էր մտածում. հայրենիքի կործանման մեջ որոնած փառքը՝ նա հայրենիքի դեմ դավաճանություն էր համարում։ Առանց մոր նամակը կարդացած լինելու, նա արդեն գիտեր բովանդակությունը։ Այդ պատճառով, նրան բոլորովին հասկանալի եղավ հոր հուզմունքը, որ նամակի ընթերցումից հետո՝ նա ամենայն դժվարությամբ աշխատում էր թաքցնել։ Բայց որդուն պետք էր համա-

կռվել հոր հետ, պետք էր գոնե առժամանակ կեղծել, որը նրա համար սաստիկ ծանր էր։

Երեկոյան մթությունը բոլորովին պատել էր բանակը, երբ Մամիկոնյան իշխանի վրանում վառեցին լապտերները։ Այդ ժամանակ բանակի մյուս վրաններում ևս հետզհետե սկսեցին երևալ լույսեր, որ խիստ տխուր տպավորություն էին գործում Սամվելի վրա։ Նա կցանկանար, որ բնավ լույս չլիներ, և ամեն ինչ հավիտյան խավարի մեջ մնար, որ չտեսներ այն ատելի բանակը, որ այնպես անխնա կերպով կեղեքում էր նրա սիրտը։ Շրջակայքը արդեն ծածկված էին թանձր մթության մեջ, և ամենուրեք տիրում էր գերեզմանական հանգստություն։ Միայն անհարկու բանակն էր, որ երեկոյան լռության մեջ, շնչում էր, որպես մի հրեշավոր մահացություն։ Ընթրիքի ժամն էր։ Նա, անշարժ վիշապի նման, պատրաստվում էր կերակրվել, որ ավելի մեծ կատաղությամբ կատարե յուր սոսկումները։ Ձիավորները հավաքված էին բացօթյա խարույկների շուրջը և իրանց համար կերակուր էին պատրաստում։ Իսկ զորապետների շրջական խոհանոցները բուրում էին համադամ խորտիկների ախորժելի հոտով։

Միայն ընթրիքի ժամանակ Մամիկոնյան իշխանը հրամայեց կանչել յուր մոտ Սամվելի հետ եկած մարդիկներից՝ ծերունի Արբակին և Արտավազդ մանուկին, որը նույնպես Մամիկոնյան տանից էր[13]։ Երբ նրա մոտ, աշխույժ պատանին ուրախությամբ վազեց, փաթաթվեցավ իշխանի պարանոցին, իսկ ծերունին մնաց ոտքի վրա։

— Դու, երևի, չէիր սպասում, որ ես կգայի Սամվելի հետ,— ասում էր նա, յուր անհանգիստ ձեռքերով փայփայելով իշխանի ուսերը։— Տեսա՞ր ինչպես եկա։

— Դու ամենափոքրիկ հասակումդ ևս միշտ այդպես քաջ էիր, սիրելի Արտավազդ,— պատասխանեց իշխանը, նստացնելով նրան յուր մոտ։— Իսկ այժմ բավական սիրուն և հասած տղա ես դարձյալ, իհարկե, հիմա ավելի քաջություն կունենաս։

Այս խոսքերը ավելի գրգռեցին Արտավազդի սնափառությունը, և առիթ տվին նրան հարցնելու։

— Այդ բանակում պարսիկ պատանիներ կա՞ն։

— Կան, ինչո՞ւ համար ես հարցնում։

— Ես եկել եմ նրանց հետ մրցելու, որ ցույց տամ, թե հայ պատանիները ո՛րքան ճարպիկ են պարսիկներից։

— Այդ դու կանես Տիզբոնում, սիրելի Արտավազդ, Շապուհ արքայի պալատական տղաների հետ։

— Դու ինձ կտանե՞ս այնտեղ։

— Իհարկե, կտանեմ։

Պատանին սկսեց ուրախանալ։

Այսպես, կյանքով լի պատանին այն աստիճան հափշտակվել էր իշխանին, որ նա նոր նկատեց, որ ծերունին ոտքի վրա էր, և դարձավ դեպի նա, ասելով.

— Նստիր, Արբակ, ինչո՞ւ ես կանգնած։

Ծերունին թոնթորալով նստեց։ Նա Մամիկոնյան տան ամենահին դայակներից մեկն էր, յուր ձեռքերի վրա սնուցել էր որպես իշխանին, նույնպես և նրա որդի Սամվելին։

— Ինչպե՞ս ես, Արբակ,— ժպտալով հարցրեց իշխանը։— Ամենքը փոխվել են, դու միայն մնացել ես միևնույնը, որպես տեսել եմ մի քանի տարի առաջ։ Ոչ ծերացել ես և ոչ մանկացել։

— Արտաքին կեղևը միշտ խաբուսիկ է լինում, տեր իշխան,— պատասխանեց ծերունին յուր սովորական պարզախոսությամբ։— Միայն աստված է իմանում, թե ներսում ի՛նչ կա... Մազերս, իրավ է, շատ չեն ճերմակացել, բայց սրտումս այլևս կյանք չէ մնացել...

— Ինչո՞ւ, Արբակ, ի՞նչը կարող էր քեզ այդպես վշտացնել։

— Շատ բան, տեր իշխան։ Աշխարհս փոխվել է... ամեն ինչ տակնուվրա է եղել... և նրանց հետ տակնուվրա է լինում մարդու սիրտը... Ո՞ւր են հին ժամանակները... գնացի՜ն, այլևս ետ չեն գա...

Իշխանը հասկացավ բարեսիրտ ծերունու վշտերը, և նրա զգացմունքներին ավելի ընթացք չտալու համար, իսկույն ընդհատեց խոսակցությունը, մանավանդ, որ սպասավորները ներս մտան, սկսեցին ընթրիքի սեղանը պատրաստել։

Ճոխ ընթրիքը պարսկական շքեղ խոհանոցի ամենանուրբ արդյունքներից մեկն էր, որ յուր վրա դարձրեց բոլորի թե՛ ախորժակը և թե՛ ուշադրությունը։ Մինչև անգամ ծերունի Արբակը, որի համար անսովոր էին այն տեսակ կերակուրներ, մեծ ախորժակով ուտում էր։ Արծաթյա մեծ սրվակների մեջ դրած էին զանազան տեսակ օշարակներ և գինիներ։ Շքեղ հագնված սպասավորները, ոտքի վրա, ոսկյա մեծ գավաթներով մատուցանում էին անուշ գինին, իսկ սեղանակիցները լուռ ուտում էին և խմում։ Ուտում էր և վշտալի Սամվելը։

— Քեզ ինչպե՞ս են թվում այս կերակուրները,— հարցրեց հայրը։

— Ուտում եմ...— ասաց Սամվելը անփույթ կերպով,— որովհետև բավական ժամանակ է, որ տաք կերակուր չեմ կերել։

— Ինչո՞ւ։

Սամվելի փոխարեն պատասխանեց Արտավազդ մանուկը.

— Նրա համար, որ ճանապարհին ինչ գյուղ կամ ինչ քաղաք հաս-

նում լինք, տեսնում լինք, որ մարդիկ չկան, տները այրված են, և ամեն ինչ ոչնչացրած։ Որտեղի՞ց՝ պետք է կերակուր գտնեինք։

Իշխանը լուռ մնաց։ Պատանու պատասխանը կծու էր, քան ամեն հանդիմանություն։

Սամվելը ընթրիքի բոլոր ժամանակը չէր խոսում։ Նա մի փոքր կերավ և ապա հեռացավ սեղանից։ Հայրը հաճախ դառնում էր դեպի նա, աշխատում էր զբաղեցնել, հարցնում էր թախծության պատճառը, և միշտ միևնույն պատասխանն էր ստանում, թե սաստիկ հոգնած է, շատ գիշերներ չէ քնել, կցանկանար հանգստանալ և այլն։

Երբ հավաքեցին ընթրիքի սեղանը, հայրը հրամայեց, որ յուր ամենալավ վրաններից մեկը հատկացնեն Սամվելի կացության համար և այնտեղ պատրաստեն նրա անկողինը։

— Իմ անկողինն էլ թող այնտեղ պատրաստեն,— մեջ մտավ Արտավազդ մանուկը։

— Ես քեզ Սամվելից չեմ բաժանի, սիրելի Արտավազդ,— ասաց իշխանը և գրկեց նրան։

Հայրը հատկացրեց Սամվելին առանձին ծառաներ, պատվիրելով, որ միշտ նրա սպասումն լինեն։ Բայց որդին հրաժարվեցավ, պատճառ բերելով, թե ինքը ընտելացած է յուր ծառաներին, որովհետև նրանք գիտեն յուր բոլոր սովորությունները։

— Քո ծառաների թիվը շատ փոքր է, Սամվել,— նկատեց հայրը։— Պարսից սովորությունների համեմատ, դու պետք է գոնե հարյուր, երկու հարյուր ծառաներ ունենաս[14], եթե ոչ, անպատշաճ կլինի քեզ՝ մի որևէ տեղ երևալ։ Էգուց պետք է գնաս քեռուդ (Մերուժանին) տեսնելու, այլև պետք է այցելես մի քանի պարսիկ զորապետների, ինչպե՞ս կարելի է այդքան սակավ ծառաներով գնալ։

— Ես ծառաներ շատ ունեի, հայր,— ասաց Սամվելը հարկադրված ծիծաղով,— բայց մեծ մասը ճանապարհին կորցրի։ Ես դուրս եկա տանից երեք հարյուր ծառաներով, իսկ այժմ մնացել են քառասուն հոգի միայն։

— Ես պակասած թիվը կլրացնեմ,— ասաց հայրը մի առանձին բավականությամբ։— Դու պետք է քո հորը և քո տոհմին վայել նիստ ու կաց ունենաս։

— Ես կարող եմ երկու ծառայով ևս գնալ Մերուժանի մոտ, ինձ շատ մարդիկ պետք չեն,— միամտությամբ ընդմիջեց Արտավազդ մանուկը։

— Դու կարող ես միայնակ էլ գնալ, սիրելիս,— ասաց նրան իշխանը ժպտալով։— Դու դեռ փոքրիկ ես։ Երբ կմեծանաս, Սամվելի չափ

կդառնաս, այն ժամանակ շատ ծառաներ ման կածես քեզ հետ։

Բանակը արդեն մրափում էր ծանր, խաղաղական քնով. լապտերները մարել էին, և մի քանի զորապետների վրաններում միայն լույս էր երևում։ Սամվելը վերկացավ, և հազիվ «բարի-գիշեր» մաղթելով, դիմեց դեպի յուր համար պատրաստված վրանը։ Նրան հետևեց Արտավազդ մանուկը, համբուրելով իշխանի աջը։ Ծերունի Արբակի համար պատրաստված էր առանձին վրան, որ մոտ էր Սամվելի վրանին։ Այնտեղ զետեղվեցան Սամվելի և մյուս մարդիկը։

Սամվելը իսկույն հանվեցավ, մտավ յուր անկողնի մեջ։ Փափուկ անկողինը հրավիրում էր անուշ քուն, բայց երկար քնել չկարողացավ նա։ Անդադար շուռ էր գալիս մի կողքից դեպի մյուսը և լուռ հոգվոց էր հանում։ Նրա մոտ պառկած էր պատանի Արտավազդը։ Նա նույնպես անքուն էր, նա նույնպես անհանգիստ էր։

— Դու շատ անզգույշ ես քո խոսքերի մեջ, Արտավազդ,— նկատեց նրան Սամվելը։

— Այդ ոչինչ, ես իմ բանը գիտեմ...— պատասխանեց խորամանկ պատանին։

Սամվելը դարձյալ լռեց, դարձյալ նրա քունը չէր տանում։ Նույն միջոցին անքուն տանջվում էր յուր անկողնում և մի այլ անձն՝— նրա հայրը...

Բ

ՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՂՋԱԿԵԶ

«Սկսան այնուհետև (Մերուժանն Արծրունի և Վահանն Մամիկոնեան) յերկրին Հայոց աւերել զեկեղեցիսն՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց»

Փաւստոս:

«Եւ զորս մի անգամ գիրս գտանէր (Մերուժան) այրէր»

Խորենացի:

Սամվելը ամբողջ գիշերը անցկացրեց տենդային անհանգստության մեջ։ Առավոտյան լուսաբացին միայն նրա քունը տարավ, բայց երկար չտևեց, որովհետև պատանի Արտավազդի շատախոսությունները շուտով զարթեցրին նրան։

— Վե՛ր կա՛ց, ի՞նչ քնելու ժամանակ է,— ասաց նա յուր սովորական կատակներով։— Երեկ, երեկոյան կիսամռայլի ժամանակ եկած լինելով, մենք ոչինչ տեսնել չկարողացանք, բայց ահա՝ արեգակը ծագել է և նկարել է մեր առջև հրաշալի տեսարաններ, որոնց վրա կարելի է նայել, և սարսափել...— Նա արդեն, դեռ արևը չծագած, մի քանի անգամ գլուխը դուրս էր հանել վրանից և նայել էր նրա շուրջը։

Սամվելը քնած աչքերը բաց արավ, բայց ոչինչ տեսնել չկարողացավ, որովհետև վրանի վարագույրները ցած էին թողած։ Ներսում դեռ տիրում էր խորին մթություն։ Պատանին վեր ցատկեց յուր անկողնից, բարձրացրեց վարագույրի մի կողմը։ Արևի մեղմ ճառագայթները իսկույն լցրին վրանը ախորժելի ջերմությամբ։

Շատ չանցավ, ներս մտավ պատանի Հուսիկը, Սամվելի հավատարիմ սպասավորը, և հավաքեց անկողինները։ Այդ ուրախ, անհոգ պատանին անգամ, դեպքերի ու հանգամանքների տխուր ազդեցության ներքո, բոլորովին կորցրել էր յուր սովորական զվարթությունը։ Ամեն առավոտ, երբ կհայտնվեր նա յուր տիրոջ մոտ, միշտ նրա բերանում պատրաստ էր մի նոր ծիծաղելի համբավ, մի նոր սրախոսություն, որով նա կվաներ յուր տիրոջ թախծությունը։ Իսկ այս առավոտ ներս մտավ նա տրտում դեմքով, և միայն յուր վառվռուն աչքերով նայեց Սամվելի երեսին, տեսնելու, թե ինչ տրամադրության մեջ էր սիրելի տերը, և ապա լուռ կերպով սկսեց յուր գործը։ «Դարձյալ նրա երեսին գույն չկա... դարձյալ նրա սիրտը հանգիստ չէ...»— մտածում էր նա, և ինքն իրան ավելի տխրում էր։ Ավարտելով յուր գործը, կըրկին լռությամբ դուրս գնաց նա։

Ներս մտավ ծերունի Արբակը և, «բարի-լույս» ասելով, նստեց մի կողմում։ Նրա վշտալի սիրտը այս առավոտ ավելի խռովված էր, քան որևէ այլ ժամանակ։

Սամվելը արդեն լվացվել և հագնվել էր։ Ծերունին հայտնեց, թե հայրը մի քանի անգամ մարդիկ է ուղարկել տեղեկանալու, արդյոք վե՞ր է կացել որդին, թե ոչ։

— Այդպես վաղ ինձ հետ ի՞նչ գործ ունի,— հարցրեց Սամվելը։

— Նախաճաշիկ ուտելու է հրավիրում,— պատասխանեց ծերունին։— Նրանք զինվորական մարդիկ են, վաղ վեր են կենում, և վաղ էլ ուտում են։ Մենք էլ պետք է հարմարվենք նրանց սովորություններին։

— Ավելի լավ կլիներ, եթե մեզ այստեղ մի բան տային ուտելու։

— Ոչ, դու պիտի գնաս հորդ մոտ,— խորհուրդ տվեց ծերունին։

— Ուղիղ է ասում Արբակը, հարկը պահանջում է, որ մենք գնանք այնտեղ,— հաստատեց և պատանի Արտավազդը, ծիծաղելով։

Սամվելը ոչինչ չպատասխանեց։ Նա այս անգամ գտնվում էր բոլորովին սրտամաշ վրդովմունքի մեջ։ Սկսեց լուռ կերպով նայել դեպի բանակը։

Արևը բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան նրա պայծառ լուսավորության ներքո՝ երևան էին գալիս ահագին բանակի ահարկու տեսարանները։ Սամվելի աչքերը կանգ առին Մերուժանի երկնագույն վրանի վրա։ Նրա առջև բարձրանում էին մի քանի բրգաձև բլրակներ։ Այդ բլրակները կազմված էին ոչ քարից, ոչ ավազից և ոչ հողից, այլ մի տարօրինակ նյութից։ Սամվելը երկար նայում էր նրանց վրա, բայց որոշել չէր կարողանում, թե ի՞նչ էին նրանք։ Արևի ոսկեգույն ճառագայթները փայլում էին այն մուգ-կարմրագույն ներկի վրա, որով օծված էին բլրակները։ Այդ ներկը արյո՜ւն էր, մարդկային չորացած, սևացած արյո՜ւն... Սամվելի ամբողջ մարմնով անցավ մի քստմնելի սարսուռ, երբ ավելի ուշադրությամբ սկսեց նայել։— Բլրակները կազմված էին մարդկային կտրված կառափներից, որոնց այլանդակ կուտակությունը սարսափ էր ազդում։

— Այդ ի՞նչ կառափներ են,— գոչեց երիտասարդը, աչքերը բռնելով։

— Ի՞նչ կառափներ են...— կրկնեց ծերունին, գլուխը շարժելով։— Հայ շինականի, հայ խաշնարածի և հայ երկրագործի կառափներ են։ Մերուժանը այդ կառափների յուրաքանչյուրի համար մի-մի ոսկի է վճարել պարսիկ զինվորներին, և նրանք գնացել, խեղճերին դաշտերից որսացել են և գլուխները կտրել են։ Դրանք Մերուժանի հայրենիքի ամենաթանկագին ընծաներն են, որ նա պետք է տանե և նվիրե պարսից արքային, պարծենալով, թե հայոց ազնվականների գլուխներ են[1]։

Եվ իրավ, մի խումբ զինվորներ լցնում էին եղեռնական մթերքը մեծ տոպրակների մեջ, որ պետք է բառնային ուղտերի վրա և տանեին Տիզբոն։

Լսելով ծերունու բացատրությունները, Սամվելը իսպառ շվարված մնաց։ Նա գիտեր յուր հոր անգթությունը։ Նա գիտեր և Մերուժանի վայրագությունը։ Բայց երևակայել անգամ չէր կարող՝ մարդկային բարբարոսությունը այս աստիճան վայրենության հասած։ Եվ այս բարբարոսությունը կատարել էր յուր քեռին, որին գործակից էր և յուր հայրը...

— Ահա՛ այն անակնկալ պատրաստությունը, որով հայրս վաղ առավոտյան հյուրասիրում է մեզ...— ասաց նա դառնացած ձայնով և աչքերը վառվեցան խորին վրդովմունքով։

Սոսկալի տեսարանը ազդեց և պատանի Արտավազդի վրա, որի պայծառ աչքերում հայտնվեցան արտասուքի խոշոր կաթիլներ։

— Այլև ինչո՞ւ համար են գիլել այնտեղ այդ արյունաների գլուխները,— գոչեց նա լալագին ձայնով։

— Ցույցի համար, սիրելի Արտավազդ,— պատասխանեց ծերունին։— Մերուժանը սիրում է սարսափ ձգել, և այդ գլուխները դրել է յուր գերիների առջև, որ նրանց զգալ տա, եթե չեն խոնարհվի յուր հրամաններին, այն ժամանակ նրանց գլուխներն ևս կավելանան այդ կտրված գլուխների վրա։

— Ի՞նչ հրամաններ,— հարցրեց պատանին, զայրանալով։

— Նա պիտի առաջարկե յուր գերիներին, որ թողնեն քրիստոնեությունը և ընդունեն պարսից կրոնը։

— Չարագո՞րծ,— գոչեց պատանին և մնաց զարմացած։

Բանակից դուրս, ավելի ընդարձակ տարածության վրա, զետեղված էին կենդանի ընծաները—գերիները,— որոնց Մերուժանը պետք է տաներ պարգևելու պարսից արքային։ Դրանք նույն գերիներն էին, որոնց թիվն ու համարը այնպես նախատական լսվում հաղորդեց Հայր-Մարդպետը հայոց թագուհուն՝ Փառանձեմին, երբ գիշերը գաղտագողի կերպով մտավ Արտագերս ամրոցը։ Այդ ահագին բազմությունը, իրանց սեռի և հասակի համեմատ, բաժանել էին զանազան խմբերի։ Յուրաքանչյուր խումբը բաղկացած էր հիսունական հոգուց։ Մի երկար պարան, օղակ-օղակ հանգույցներով, միացնում էր ամեն մի առանձնացած խմբի պարանոցները միմյանց հետ, կազմելով մի կենդանի շղթա։ Եվ որպեսզի պարանի հանգույցները բաց անել չկարողանային, նրանց ձեռքերը պինդ կապած էին քամակի վրա։ Ոչ մի ծեր մարդ, ոչ մի պառավ կին չէր երևում այդ թշվառ բազմության մեջ։ Չէին երևում և փոքրիկ մանուկներ։ Պարսկական անգութ սուրը ծերունիների և մանուկների կյանքին վերջ տվեց հենց իրանց տեղում[2]։ Այդ անպետք ծանրությունները իրանց հետ տանել չկամեցան, և ընտրեցին ըստ մեծի մասին երիտասարդներին։

Գերիները պատսպարվելու համար վրաններ չունեին։ Նրանք գետնատարած ընկած էին բացօթյա դաշտի վրա։ Ցերեկը արևը խորովում էր նրանց։ Իսկ գիշերը ցուրտը սառցնում էր։ Նրանք բաղկացած էին հայերից և հրեաներից, որոնց մեծ մասը Լուսավորչի օրերում քրիստոնեություն էին ընդունել[3]։ Վերջինների թվումն էր և նրանց Զվիթա անունով նշանավոր երեցը[4], որ ինքնակամ միացավ յուր հոտի հետ։ Այդ հրեաները Տիգրան Բ-ի օրերում, Բարզափրան Ռշտունու ձեռքով, գերի բերվեցան Հրեաստանից[5]։ Տիգրանի քաջ զորապետը նրանցով լցրեց հայոց քաղաքների դատարկությունը, և բազմամարդ դարձրեց երկիրը մի գործունյա և խելացի ժողովրդով։ Իսկ այժմ, Մերուժան

Արծրունին, դատարկելով նույն քաղաքները, նրանց վարում էր Պարսկաստան։ Հայ գերիների թվում կային շատ եպիսկոպոսներ, վարդապետներ, երեցներ և եկեղեցական այլ պաշտոնյաներ, որոնց թիվը հասնում էր մի քանի հարյուրի*։ Նրանց շղթայակապ շարել էին միմյանց հետ, և զատել էին մյուս գերիներից։

Հայրը կրկին անգամ մարդ ուղարկեց կոչելու որդուն, բայց որդին դեռ շարունակում էր նայել հոր և յուր քեռու գործերի վրա։ Սրտի և հոգու անհնարին ամրություն էր հարկավոր, որ այդ զարհուրելի տեսարաններից հետո մարդ կարողանար սառնասիրտ մնալ։ Բայց Սամվելը չուներ այդ ամրությունը։ Ճանապարհին, գալու ժամանակ, տեսավ նա այն ավերակ քաղաքներն ու ավանները, որ դեռ ծխում էին կրակի մեջ։ Իսկ այժմ տեսնում էր նրանց դժբախտ բնակիչներին։ Դրանց պետք է քշեին հեռո՜ւ և հեռո՜ւ, դեպի Պարսկաստանի խորքերը։ Եվ ո՞վքեր։— Մեկը յուր հայրը, մյուսը՝ յուր քեռին, Մեհրուժանը...

Դարձյալ եկան կոչելու Սամվելին։ Այս անգամ գնաց նա, և նրա հետ գնացին իշխանի մոտ ծերունի Արբակն ու պատանի Արտավազդը։ Սամվելը աշխատում էր ուրախ ձևանալ, աշխատում էր, որքան կարելի է, սառնասիրտ լինել։ Բայց բռի կեղծավորությունը չէր հաջողվում նրան։ Նա գտավ հորը միայնակ յուր վրանում, զբաղված էր նամակագրությամբ, և շատ հավանական էր, որ գրում էր կնոջ նամակի պատասխանը։ Տեսնելով որդուն, մագաղաթյա թերթը մի կողմ դրեց, հարցնելով.

— Ինչպե՞ս ես այժմ, դու գիշերը շատ անհանգիստ էիր։

— Գիշերը բավական հոգնած էի,— պատասխանեց Սամվելը և, մոտենալով, համբուրեց հոր աջը։

Նրա օրինակին հետևեց և պատանի Արտավազդը։ Արբակը միայն «բարի-լույս» ասաց և նստեց։

Նախաճաշիկը արդեն պատրաստ դրած էր այնտեղ։ Իշխանը խնդրեց նրանց ճաշակել, իսկ ինքը շարունակեց վերջացնել նամակը։

Հեռվից հայտնվեցավ մի սպիտակ ձիավոր, որ վեհապանծ կերպով շրջան էր գործում բանակի մեջ։ Մի խումբ զինված համհարզներ, գեղեցիկ նժույգների վրա նստած, հետևում էին նրան։ Սամվելը տեսավ և չկարողացավ զսպել յուր ծիծաղը։ Բայց նրա ծիծաղը այն աստիճան դառն և այն աստիճան մաղձոտ էր, որ յուր վրա դարձրեց հոր ուշադրությունը։ Նա նամակը մի կողմ դրեց և հետաքրքրությամբ նայեց որդու երեսին։

— Մեհրուժանը բավական շտապե՜լ է,— ասաց որդին,— դեռ հայոց թագավոր չդարձած, թագավորի ձևեր է բանեցնում...

— Ինչպե՞ս,— հարցրեց հայրը փոքր-ինչ հուզված ձայնով։

— Ահա՛ այսպես... նստած է սպիտակ նժույգի վրա... նժույգի բաշն ու պոչն ներկել է ավել վարդի գույնով... Չէ՞ որ այդ իրավունքները վայելում էին միայն Արշակունի թագավորներն ու թագավորազները[7]...

Հայրը զարմացած լսում էր։ Որդին, ավելի ուշադրությամբ նայելով Մերուժանի վրա, ավելացրեց.

— Եվ կարմի՜ր վարտիք ունի հագած... և կարմի՜ր կոշիկներ է կրում... դրանք ևս առանց նշանակության չեն[8]...

Հայրը չգիտեր ի՛նչպես բացատրել Սամվելի նկատողությունները. արդյոք հեգնությո՞ւն, թե իրա՞վ որդին կանխաժամ էր գտնում Մերուժանի սնափառությունը։

— Ինչո՞ւ է այդ զարմացնում քեզ, Սամվել,— պատասխանեց նա համոզիչ եղանակով։— Մերուժանին արդեն կարելի է Հայոց թագավոր համարել։ Բավական է, որ նա այս բազմաթիվ գերիներին հասցնե Տիզբոն, այն ժամանակ Շապուհ արքան մեծ ուրախությամբ կտա նրան Արշակունիների թագը։

— Այդ ինձ բոլորովին չէ զարմացնում, սիրելի հայր,— պատասխանեց Սամվելը կիսահեգնական ձայնով։— Ես համոզված եմ, որ Շապուհ արքան՝ Մերուժանի այդքան մեծ ծառայությունների համար՝ անպատճառ կտա նրան Արշակունիների թագը...

— Կտա՜...— ընդմիջեց ծերունի Արբակը, որ բոլոր ժամանակը խորին վրդովմունքով լսում էր։— Կտա՜ նրան Արշակունիների թագը... Բայց այն թագը յուր գլխին դնելն է ամենամեծ դժվարությունը...

Իշխանը խեթ կերպով նայեց պարզախոս ծերունու վրա, հարցնելով.

— Ինչո՞ւ, Արբա՛կ։

— Նրա համար, տե՛ր իշխան, որ այսօր կամ էգուց, հանկարծ կհայտնվի Պապը, Արշակունիների օրինավոր ժառանգը և, հալածելով յուր շուրջը հայոց ցրիվ եկած նախարարներին, կրկին տեր կդառնա յուր հոր անտեր մնացած գահին... Այս ճերմակ գլուխը շատ բան է տեսել, տե՛ր իշխան,— նա ձեռքը տարավ դեպի ալևոր մազերը,— այդ ես իմ աչքերով տեսնում եմ... Այո՛, կգա Պապը և տեր կդառնա յուր հոր գահին...

Իշխանը սկսեց արհամարհանքով ծիծաղել։

— Գլուխդ,— ասաց նա,— իրավ է, ճերմակացել է, բայց կուրծքիդ մեջ դեռ երեխայի սիրտ ես կրում, Արբակ։ Դիցուք թե, հայտնվեցավ դեռ անփորձ, դեռ բոլորովին երիտասարդ Պապը։ Դիցուք թե, հալա-

ջից յուր շուրջը Հայոց ցրիվ եկած նախարարներին։ Բայց ի՞նչ կարող են անել նրանք։ Դու կարծում ես, որ այդ բոլորը չէ՞ նախատեսված։ Մերուժանը ապառաժի վրա ցանող մարդիկներից չէ. նա գիտե յուր գործը. նա բավական մեծ խելքի տեր մարդ է։

Ծերունին, գլուխը բացասական կերպով շարժելով, ասաց.

— Ես նրա մեջ ոչ թե մեծ խելք, այլ մի կորյակի չափ խելք չեմ գտնում, տե՛ր իշխան։ Նա կամենում է Հայոց թագավոր լինել, բայց, միևնույն ժամանակ, ավերակ ու անմարդաբնակ է դարձնում այն երկիրը, որի թագավորը պետք է դառնա։ Դա ի՞նչ խելք է։ Մի՞թե խավարասեր բուի նման՝ նա ավերակների վրա պետք է թագավորե։ Ո՞ւր է տանում այդ գերիներին և ի՞նչի համար։

Ծերունին այն աստիճան հարգված էր Մամիկոնյանների տան մեջ, որ իշխանը չբարկացավ նրա վրա, այլ հարկավոր համարեց բացատրել եղելությունների բուն պատճառները, և ապացուցանել, թե իրավ Մերուժանը մեծ խելքի տեր մարդ է, և գիտե կանխապես նախագուշակել ապագան, և նրա համեմատ տնօրինել յուր գործերը։

— Հենց դրա մեջն է Մերուժանի խելքի մեծությունը, սիրելի Արբակ, որ նա դատարկեց Հայոց երկիրը,— պատասխանեց իշխանը ժպտալով։— Երբ կհայտնվի Պապը, նա Հայոց երկրում ո՛չ մի նշանավոր բերդ կամ ամրոց չի գտնի, որի մեջ կարող լինի պատսպարվել։ Բոլորը կործանեց, բոլորը ոչնչացրեց Մերուժանը։ Եվ ինչ ամրություններ ես որ այժմ մնացել են, գտնվում են մեր բերդապահների հսկողության ներքո։ Բոլորի մեջ դրել ենք պարսկական զորքեր։ Նրանց մեջ պահված են և՛ դեպի Հունաստան գնացած, և՛ հռովմայեցոց օգնությանը դիմող նախարարների կանայքն ու զավակները[9]։ Բավական է, որ այդ նախարարները իրանց բերած հռովմեական զորքերով մի քայլ անեն դեպի մեր գրաված բերդերը,— իսկույն իրանց առջև կգտնեն իրանց կանանցը և զավակներին կախ տված բերդերի աշտարակներից[10]։ Թո՛ղ այն ժամանակ նրանք իրանց նետերը արձակեն դեպի իրանց զավակների դիակները։ Իսկ այն, որ ասում ես դու, թե ինչո՞ւ համար է այդ գերությունը,— պետք է գիտենաս, որ Մերուժանը բնակիչներից դատարկեց այն գավառները միայն, որոնց ժողովուրդը կարող էր ավելի հզոր հենարան լինել Արշակունյաց թագաժառանգին յուր հոր գահը բարձրանալու։ Մերուժանը ամայի դարձրեց միայն Արարատը և նրա շրջակա գավառները։ Իսկ Արարատը Արշակունյաց գահի ամուր պատվանդանն է։ Պետք էր, և անհրաժեշտ էր, խորտակել այդ պատվանդանը, որպեսզի թագաժառանգը՝ Բյուզանդիայից Հայաստան գալու ժամանակ՝ յուր ոտքերի տակը դատարկ գտներ և ոչ մի հաստատ կռվան չունենար, որի

վրա կարող լինեի հենվել։ Տեսնո՞ւմ ես, սիրելի Արքակ, այդ բոլոր գոր-
ծողությունների մեջ նպատակ կա, խելք կա...

— Բայց եղեռնագործի խե՜լք...— ընդհատեց Սամվելը վայրացած
ձայնով։

Հայրը և՛ զարմացած, և՛ բարկացած աչքերով նայեց որդու երեսին։
Սամվելը իսկույն զգաց յուր սխալը, զգաց, որ ինքը դուրս եկավ խո-
հեմության սահմանից։ Հայրը նույնպես զգաց յուր սխալը։ Կինը գրել
էր նրան. «զգույշ լինել Սամվելից...» Իսկ նա չափից դուրս բացվեցավ
որդու առջև, քան թե հարկավոր էր։ Եվ այդ րոպեից հոր և որդու մեջ
սկսվեցավ մի տեսակ կեղծ հարաբերություն։

Ամբողջ գիշերը անքուն մնալով, հոր վառ երևակայությունը զբա-
ղեցնում էին այն գեղեցիկ ցնորքները, թե ո՛րպես պետք էր անօրինել
սիրելի որդու ապագան։ Նա մի քանի անգամ անհամբերու-
թյամբ դուրս եկավ յուր վրանից և, լապտերը ձեռին, մոտեցավ
որդու վրանին։ Ցանկանում էր ներս մտնել, ցանկանում էր նա-
յել քնած որդու վրա,— երկար նայել և հիանալ նրանով։ Բայց դարձ-
յալ չկամեցավ խանգարել սիրելի որդու քունը։ Ամբողջ գիշերը նրա
մասին էր մտածում և նրանով էր ուրախանում։ Ի՞նչ երանելի հույսեր,
ավաղ, չէր խոստանում այն վայելչագեղ, շնորհալի երիտասարդը։ Նրա
մեջ կար ամեն ինչ, որ կարող էին հոր փափագներին լիակատար բա-
վականություն տալ։ Ամբողջ գիշերը հրապուրվում էր նա այն փայլուն
հաջողակություններով, որ սպասում էին որդուն։ Նրա մեջ գտնում էր՝
թե՛ ապագայի հերոսին և թե՛ ապագայի իշխանին։ Պարսկական արքու-
նիքի զարդը պետք է լիներ նա, իսկ Հայաստանի փառքը։ Բայց այժմ
սարսափեցնում էր նրան այն մտածությունը՝ մի՞թե որդին հակառակ
պիտի գնար յուր սրտագին բաղձանքներին, մի՞թե արդեն կատարված
կամ կատարվելու գործերը ընդդեմ էին նրան։ Բացատրություն պահան-
ջել այդ մասին՝ վախենում էր նա,— վախենում էր միանգամից զրկվել
այն ջերմ փափագներից, որ յուր սրտում սնուցանում էր որդու համար։
Նրա մի հակառակ բառը, նրա մի մերժողական խոսքը կարող էր ոչնչաց-
նել ամեն ինչ։ Նա գտնվում էր այն ծանր, երկբայական դրության մեջ,
որպես մի մարդ, որ սպասում է մահամերձ որդու մասին մի լուր։
Ստանում է նամակը, բայց չէ համարձակվում բաց անել։ Նամակը կամ
պիտի ավետեր որդու առողջությունը, կամ պիտի գուժեր նրա մահը։
Ի՞նչ կլիներ յուր դրությունը, եթե այս վերջինը պատահած լիներ։ Նա
նույնպես չէր համարձակվում բաց անել Սամվելի սիրտը։ Բայց եթե
որդի՞ն բացվեր։— Այս ընդհարումից խուսափում էր նա, աշխատելով
գոնե առ ժամանակ իրան քաղցր հույսերի փայփայման մեջ պահել։

Նա սիրում էր որդուն, սիրում էր հոր սրտի բոլոր ջերմությամբ։ Բայց այս սերը նրա մեջ նույնքան եսական էր, որքան եսական էին նրա բաղձանքները որդու վերաբերությամբ։ Նա նայում էր որդու վրա ո՛չ թե իբրև մի ազատ, ինքնակամ անհատի վրա, այլ որպես մի հաջողակ միջոցի վրա, որով միայն ինքը պետք է փառավորվեր։ Եթե որդին բարձր պաշտոնների կհասներ, եթե նա կփայլեր բարձր շրջաններում,— այդ փայլը իրան էր պատկանում, որովհետև որդին նույնպես իրան էր պատկանում։ Եթե մի նժույգ ձիարշավի ժամանակ տանում է մրցանակը, տերն է պարծենում, և ոչ թե նժույգը։— Այս եսական կետից էր նայում նա որդու վրա։ Մի այսպիսի հայացք կազմվել էր նրա մեջ ավանդաբար, որ ստացել էր նա յուր ազնվապետական ժառանգության հետ։ Ինքը նույնպես ծառայել էր յուր հոր բավականության համար, և յուր որդին ևս պետք է ծառայեր յուր բավականության համար։ Նրա ընդդիմադրությունը կզրկեր հորը այն բոլոր երանություններից, որ ապագայում պետք է վայելեր նա։ Այդ էր պատճառը, որ նա զգուշանում էր՝ չհանդիպել որդու ընդդիմադրությանը, և ամենայն ջանքով խուսափում էր հակառակությունից, սպասելով, մինչև հանգամանքները ինքնըստինքյան կպարզեին յուր մթին կասկածները։

Սամվելի վերջին նկատողությունը Մերուժանի մասին՝ սաստիկ խիստ էր, բայց հայրը, անուշադրության տալով, դարձավ դեպի որդին այս խոսքերով.

— Բայց դու պետք է գնաս քեռուդ տեսնելու, Սամվել, և մորդ ողջույնը մատուցանես նրան։ Նա շատ կուրախանա քեզ տեսնելով, նա չափազանց սիրում է քեզ։ Այս առավոտ մի քանի անգամ մարդ էր ուղարկել՝ հարցնելու քո առողջությունը։ Դու դեռ քնած էիր։

— Ուրեմն գիտե՞, որ ես եկել եմ,— հարցրեց Սամվելը։

— Գիտե, և խնդրել է, որ այսօր ճաշին յուր մոտ լինենք։ Այնտեղ կլինեն և պարսից նշանավոր զորապետները։ Քեզ հարկավոր է բոլորի հետ ծանոթանալ։

Մերուժանը հեռվից անցավ նրանց առջևից։

— Ես հենց այս րոպեիս կգնայի քեռուս մոտ, բայց նա այժմ զբաղված է երևում...

— Այո՛, նա դուրս է եկել բանակը դիտելու... և մի քանի կարգադրություններ անելու... որովհետև այս օրերում պետք է չվենք այստեղից...

— Իսկ ինձ չէ՞ հրավիրել Մերուժանը,— մեջ մտավ պատանի Արտավազդը։

— Հրավիրել է, սիրելիս, առանց քեզ ի՞նչպես կարելի է,— ասաց

իշխանը։— Դու էլ կլինես ճաշին, Արբակն էլ կլինի։ Մենք միասին կգնանք։

— Ես նրա հացը չեմ ուտի,— խոսեց համառ ծերունին, երեսը շուռ տալով։

Իշխանը ծիծաղեց։

Սամվելը նկատեց, որ իրանց ներկայությունը խանգարում էր հորը։ Որովհետև առավոտ էր, անդադար մարդիկ էին մտնում, այս և այն գործի մասին նրա հրամանն էին խնդրում, և նա իբրև բարձր պաշտոնական անձն, պետք է բոլորին պատվերներ և հրահանգներ տար։ Այդ էր պատճառը, որ նախաճաշիկը վերջանալուց հետո, նա իսկույն վեր կացավ, և կամենում էր դուրս գալ հոր վրանից։

— Դու կձանձրանաս մինչև ճաշ քո վրանում սպասելով, Սամվել,— ասաց նրան հայրը։— Եթե կամենում ես, կպատվիրեմ՝ ձիաներ պատրաստեն, գնացեք Արաքսի ափերի մոտ զբոսնելու։ Եղանակը լավ է, և այնտեղ գեղեցիկ տեսարաններ կան։

— Շնորհակալ եմ, սիրելի հայր,— ասաց Սամվելը։— Ես դեռ ոչ բոլորովին կազդուրվել եմ ճանապարհի հոգնածությունից, պետք է գնամ, մի փոքր հանգստանամ։

Գալով յուր վրանը, Սամվելը իսկույն ընկողմանեցավ բազմոցի վրա և ծանրացած գլուխը ավեց բարձերին։ Նրա գունաթափ դեմքը դարձրած էր դեպի ահռելի բանակը, և տխուր աչքերը հառած էին դեպի այն կողմը։ Նա դեռ չէր մոռացել և մոռանալ ևս անկարող էր, թե որպիսի՛ համակրությամբ հայրը նկարագրեց Մերուժանի գործողությունները, որոնց գործակից էր և ինքը։ Իսկ գործը ակներև էր, նրա աչքերի առջևն էր։ Որքան մտածում էր նա, ոչինչով չէր կարողանում արդարացնել հորը, չէր կարողանում արդարացնել և քեռուն։ Երկուսն էլ ներկայանում էին նրա առջև որպես երկու մահացու ոճրագործներ։ Բայց նա սիրում էր հորը, սիրում էր և քեռուն։ Նա պատրաստ էր տալ յուր կյանքը և ամեն ինչ, որ աշխարհում թանկ էր յուր համար, դեթ այդ երկու մարդիկը ուղղվեին և դառնային իրանց չար ճանապարհից։ Բայց եթե իրանց մոլորության մեջ մնայի՞ն։— Այդ միտքն էր, որ ալեկոծում էր նրա խռովյալ սիրտը, այդ միտքն էր, որ սարսափելի կերպով կեղեքում էր նրա հոգին։ Որդին նույնն էր մտածում հոր մասին, ինչ որ հայրն էր մտածում որդու մասին։ Երկուսն էլ միմյանց կորած էին համարում, երկուսն էլ միմյանց մոլորված էին համարում։ Հայրը մի հարմար առիթ էր որոնում բացատրվելու որդու հետ և յուր փափագները արտահայտելու նրան։ Որդին նույնպես որոնում էր մի հարմար ժամ, մի հարմար րոպե, խոսելու հոր հետ և յուր բոլոր ցավերը թափելու

նրա աչքեն։ Նա շտապում էր անել այդ, քանի դեռ բանակը չէր շարժվել յուր տեղից, քանի դեռ ճանապարհ ընկած չէր նա դեպի Պարսկաստան։ Երբ յուր դիտավորությունները կուշանային, երբ նրանք կանցնեին Արաքսը,— այնուհետև ամեն հույս կորած էր համարում...

Սամվելի մոտ նստած էր ծերունի Ներսեհը և լուռ նայում էր նրա վրա։ Խե՜ղճ ծերունի, հասկանում էր անբախտ երիտասարդի դառն վըշտերը, հասկանում էր նրա խորտակված սրտի ծանր վերքերը և մի բառ անգամ չէր գտնում մխիթարելու նրան։

Այդ միջոցին պատանի Արտավազդը կանգնած էր դրսում, վրանի մուտքի մոտ և չգիտեր՝ ինչ անել։ Որպես մի անհանգիստ աշխույժ և անհամբերություն, որպես մանուկ հասակի անզուսպ հետաքրքրություն, շատ կցանկանար նա՝ ծտի նման թռչել, կամ փայլակի նման սլանալ և մի քանի վայրկյանում շրջագայել ամբողջ բանակը, ամեն ինչ տեսնել, ամեն ինչ քննել,— բայց յուր մի այդպիսի հետաքրքրությունը կարող էր անվայել և մինչև անգամ կասկածավոր երևնալ շատերին։ Այդ էր, որ նրան զսպում էր։

Նա դեռ կանգնած էր վրանի մուտքի մոտ և այն տեղից ևս խիստ հետաքրքիր բաներ էր տեսնում։ Բայց այդ բանակը չէր ներկայացնում սովորական բանակների այն ուրախ, այն զվարճալի կենդանությունը, որով նա յուր ներքին վայելչությունը խառնում է հասարակաց բավականության հետ։ Գյուղացի աղջիկը, գյուղացի կինը, վստահ, համարձակ, բերում են իրանց այգիների ամենաընտիր պտուղները այնտեղ վաճառելու։ Շինականը յուր անտեսության ամենալավ բերքերը այնտեղ է տանում։ Քաղաքացին յուր բազմատեսակ վաճառքների մթերքը այնտեղ է բաց անում, և բանակը մի կենդանի տոնավաճառի կերպարանք է ստանում։ Խմբվում է հարցասեր ամբոխը և լսում է զինվորների քաղցր երաժշտությունը։— Դրանցից և ոչ մեկը չէր երևում։ Այդ բանակը, որպես մի կործանող և ապականող հրեշ, յուր շուրջը անապատ էր դարձրել, և ինքը ապրում էր խորին ամայության մեջ։ Ոչ ոք չէր մերձենում նրան, և ամեն ոք փախչում էր նրանից։ Նա կերակրվում էր այն անբավ հափշտակություններով, որ ազատ ձեռքով կողոպտել էր շրջակայքից։ Նա հարստացել էր այն անհուն ավարներով, որ ավազակաբար հինահարել էր յուր ավերակ դարձրած քաղաքներից։ Բայց այս մտածությունները չէին զբաղեցնում պատանի Արտավազդին։ Նրա սուր ուշադրությունը գրավել էր մի այլ տեսարան։

Մեռուժանի վրանի առջևից դիզված կառափների ահարկու բըլրակները արդեն անհետացել էին։ Հավաքելով մեծ տոպրակների մեջ, ուղտերի մի ամբողջ կարավանի համար բեռներ էին պատրաստել այն

կառափնարից։ Բայց նրանց տեղում այժմ կառուցանում էին մի այլ բլուր։ Մարդիկ եռանդով աշխատում էին այնտեղ, և մի տեսակ աղյուսաձև մուգ-թխագույն նյութեր շտապով կուտակում էին միմյանց վրա։ Տարօրինակ ամբարտակը հետզհետե բարձրանում էր և մռայլ կերպարանք էր ստանում։ Աղյուսաձև նյութերի հետ, իբրև նեցուկ, դնում էին փայտի և տաշեղի կտորտանքներ։ Երբ վերջացրին, ամբարտակը մի ահագին խարույկի ձև ստացավ։

Այդ երևույթը գրավեց և Սամվելի ուշադրությունը, որը ընկղմված տեղից բարձրացավ և նստեց։ Նայում էր, բայց որոշել չէր կարողանում, թե ի՛նչ էր տեսածը։ Ծերունի Արբակը նույնպես ոչ սակավ հետաքրքրված էր այդ տարօրինակ տեսարանով։

— Ո՞վ է իմանում, դարձյալ մի սատանայական բան կլինի...— ասաց նա գլուխը տարակուսական կերպով շարժելով և ձեռքը տարավ դեպի ճաղատ ճակատը՝ հովանավորելու աչքերը արևի շողքերից, որ արգելում էին նրան տեսնել։

Շատ չանցավ, զինվորները բերեցին մի քանի խումբ շղթայակապ, սևազգեստ գերիներ և կարգով կանգնացրին խարույկի շուրջը։ Դրանք թվով մի քանի հարյուր եպիսկոպոսներ, վարդապետներ և երեցներ էին։ Գլուխները քարշ ձգած, խորին տխրությամբ նայում էին սրբազան գերիները խորհրդավոր խարույկի վրա, ուր, մի քանի րոպեից հետո, պիտի այրվեր նրանց սիրտը, նրանց հոգին...

Այնտեղ կանգնած էր և մի այլ անձնավորություն, մի ծանոթ մարդ, յուր երկար՝ անհեթեթ հագուստով, յուր մռայլ՝ ծաղկահար դեմքով և յուր հաստ՝ թխագույն շրթունքներով, որ պատրաստ էին անեծք և հայհոյանք թափելու ամեն սրբության վրա։ Նա ոխերիմ աչքերով երբեմն նայում էր դեպի սևազգեստ գերիները, երբեմն դեպի պատրաստված խարույկը։ Դա Հայր-Մարդպետն էր՝ սարսափելի Դղակը,— որ գողտագողի կերպով մտավ Արտագերս ամրոցը և մատնեց հայոց թագուհուն։

Հեռվից հայտնվեցավ սպիտակ թագավորը — Մերուժանը,— նստած յուր սպիտակ նժույգի վրա։ Երբ մոտեցավ, խարույկը վառեցին։ Թանձր, խանձահոտ ծուխը՝ յուր անախորժ ճենճերային բուրմունքով՝ տարածվեցավ օդի մեջ, իսկ կանաչագույն բոցերը բարձրացան դեպի երկինք։ Այրվում էր մի սոսկալի ողջակեզ, կրոնի և եկեղեցու ողջակեզը...

Այդ միջոցին Սամվելի վրանը ներս մտավ նրա հայրը։ Որդին պատկառանքով վերկացավ նստած տեղից։

— Այդ ի՞նչ ես այրում,— հարցրեց նա վրդովված ձայնով։

— Մագաղաթ,— պատասխանեց հայրը անփույթ սառնասրտությամբ։— Դու չե՞ս գա տեսնելու։ Ես եկա, որ քեզ տանեմ։ Գնա՛նք, շատ հետաքրքիր է։

— Ոչ, ես այստեղից ես տեսնում եմ...— ասաց վշտացած երիտասարդը հրաժարվելով։

— Այնտեղից կգնանք Միրուժանի վրանը։ Քեզ ասացի, որ այսօր հրավիրված ենք նրա մոտ ճաշելու։

— Գիտեմ, բայց դեռ վաղ է... Միրուժանը ահա՛ զբաղված է յուր խարույկով... Թող վերջացնե, ես հետո կգամ... Իմ աչքերի վրա, ուղիղն ասեմ, սաստիկ վատ է ազդում կրակը...

— Մանավանդ մագաղաթի՜ կրակը...— ավելացրեց ծերունի Արբակը, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով։

Հայրը, նկատելով որդու համառությունը և ծերունու կծու ակնարկությունը, այլևս չխոսեց նրանց, դուրս եկավ և ինքը միայնակ գնաց դեպի խարույկը։ Նրա ետևից վազեց պատանի Արտավազդը, որ դեռ կանգնած էր վրանի մուտքի մոտ, ասելով.

— Ես կգամ քեզ հետ, սիրելի Վահան, ես չեմ վախենում կրակից... ես մինչև անգամ սիրում եմ կրակը...

Սամվելը և ծերունի Արբակը մնացին վրանում միայնակ։

— Մագաղա՞թ են այրում, սիրելի Արբակ,— կրկնեց երիտասարդը, դառնալով դեպի ծերունին։— Այրո՞ւմ են մեր կործանված տաճարների սուրբ Կտակարանները... Այրում են մեր եկեղեցու գիրն ու դպրությունը, որ մեզ պարսկացնեն... Եվ իմ հայրը գնում է հանդիսատես լինելու, գնում է զվարճանալու մի այդպիսի չարագործությամբ...

Եվ իրավ, վառվող խարույկը ամբողջապես կազմված էր սուրբ գրքերից։ Դրանք նույն եկեղեցիներից և նույն վանքերից հափշտակված գրքերն էին, որ կործանեց Միրուժանը, որ հրդեհեց Միրուժանը, և որոնց կրակը դեռևս չէր հանգել։ Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար կործանեց նա քրիստոնեական տաճարները, որպեսզի նրանց տեղում ատրուշաններ հիմնե[11]։ Պարսից արքայից արքայի բաղձանքները կատարելու համար այժմ այրում էր, ոչնչացնում էր նա քրիստոնեական մատյանները, որպեսզի, նրանց փոխարեն, հայերի ձեռքը տար պարսից կրոնական գրքերը, որ հայերը պարսկերեն կարդային, պարսկերեն աղոթեին և պարսից լեզվով արտահայտեին իրանց զգացմունքները[12]...

Սամվելը գիտեր այդ բոլոր նախասահմանյալ մեքենայությունները, իսկ այժմ յուր աչքերով տեսնում էր այն անողորմ գործողությունները, որ պիտի հեշտացնեին պարսից արքայից արքայի ննջավոր նպա-

տակները խրակարծելու։ Դեպի գերություն էին վարում եկեղեցականներին, որ անտեր թողնեն թե՛ եկեղեցին և թե՛ նրա հոտը, որ դյուրությամբ կարողանան կեղեքել քրիստոնյա ժողովրդը։ Այրում էին կրոնական գրքերը, որ ոչնչացնեն կրոնը։ Սամվելը այլևս համբերել չկարողացավ, դարձավ դեպի ծերունին այս խոսքերով.

— Սիրելի Արքակ, ինչ որ անելու է, պետք է անել... ժամանակը թանկ է մեզ համար... Իջեցրու վրանի վարագույրները և ինձ միայնակ թող այստեղ։ Ով որ հարցնելու լինի, կասես գլուխը ցավում է, քնած է։ Իսկ մի ժամից հետո կուղարկես ինձ մոտ Մալխասին։

Ծերունին տխուր մտախոհության մեջ վերկացավ, վրանի վարագույրները ցած թողեց և խոնարհ դուրս գնաց։ Սամվելը մի քանի րոպե մնաց լուռ տատանման մեջ։ Նրա քնքուշ զգացմունքները, նրա վերին աստիճանի բարի սիրտը՝ բախվում էին խելքի և սառն մտածության վրա։ Մի քանի անգամ վեր առեց մագաղաթի թերթը, կամենում էր գրել, բայց դարձյալ ցած դրեց։ Ձեռքը տարավ դեպի ճակատը, որ բորբոքվում էր անհայտին կրակով։ Աշխատում էր ամփոփել յուր հիշողությունները, աշխատում էր վանել ա՛յն մտայլը, ա՛յն անբացատրելի մթությունը, որ այդ րոպեում պատել էին նրա միտքը։ Նա վերկացավ, փոքր-ինչ ետ քաշեց վարագույրի մի եզրը, որ լույս լինի։ Նստեց, կըրկին առեց մագաղաթյա թերթը և գրիչը։ Սկսեց դանդաղ ձեռքով գրել։ Նա գրում էր և ամեն մի բառի վրա րոպեներով մտածում էր։ Այդ նամակի ճշտությունից էր կախված՝ անվրեպ կերպով նպատակին հասցնել այն սրտագին խորհուրդը, որ վաղուց արդեն խմորվում էր նրա գլխում։ Մի սխալ քայլ կարող էր ամեն ինչ ոչնչացնել։ Նրա խորհուրդը որքան մեծ էր, նույնքան և վտանգավոր էր։ Եվ այդ իսկ խորհրդից էր կախված թե՛ նրա խղճի հանգստությունը և թե՛ նրա հայրենիքի բախտը։ Նա գրեց առաջին նամակը և սկսեց երկրորդը։

Նամակները արդեն վերջացրել էր, երբ ներս մտավ Մալխասը։ Երիտասարդը դարձավ դեպի նա, հարցնելով.

— Դու ծանո՞թ ես Արաքսի աջակողմյան ափերի մոտ տարածվող ճանապարհների հետ։

— Ծանոթ եմ,— պատասխանեց մշտապատրաստ փայակը։— Բայց մի քանի ճանապարհներ կան, որի՞ մասին է հարցնում իմ տերը։

— Այն ճանապարհի մասին, որ ուղիղ գետի եզերքովն է գնում և հասնում է մինչև Աստղապատի անցքը[13]։

— Գիտեմ։ Դա ամենավատ ճանապարհն է և վտանգավոր։ Երբեմն իջնում է գետի ափերի մոտ, երբեմն ոլորվում է ապառաժների լան-

ջաց վրայով, իսկ երբեմն անցնում է նեղ կիրճերի միջով, և երբեք չի բաժանվում գետի ընթացքից։

— Այդ իսկ ճանապարհի մասին է իմ խոսքը։ Ա՛ռ այս նամակները։ Նախ կբռնես դեպի Երնջակ[14] տանող ճանապարհը։ Այնտեղից, Երնջակա գետակի ընթացքով, կմտնես մի նեղ ձոր, որ տանում է դեպի Ջուղայի կամուրջը[15]։ Այդ կամուրջով կանցնես Արաքսը։ Հետո կգնաս նույն ոլոր-մոլոր ճանապարհով, որի մասին խոսեցինք, և որը Արաքսի աջակողմյան ափերով տանում է դեպի Նախավկայի վանքը[16], որից շատ հեռու չէ Աստղապատի անցքը[17], ուր կամուրջ չկա, և մարդիկ տիկանավերով են անցնում Արաքսը։

Փայակը ուրախությամբ առեց նամակները, հարցնելով.

— Իմ տերը հենց ա՞յս բոպեիս է հրամայում ճանապարհ ընկնել։

— Ոչ։ Դու կսպասես մինչև երեկո։ Հետո, երբ գիշերային խավարը բոլորովին կպատե, այնպես զգուշությամբ դուրս կգաս բանակից, որ քեզ ոչ ոք չտեսնի։

— Սատանան անգամ չի տեսնի,— պատասխանեց փայակը ինքնավստահությամբ։— Բայց ո՞ւր տանել այդ նամակները և ո՞ւմ հանձնել։

— Նախավկայի վանքի մոտ, Մաղարթա լեռան[18] ստորոտում, ժայռի վրա նստած կգտնես մի կրոնավոր։ Նամակներից մեկը կհանձնես նրան։

— Ո՞ր նամակը։ Իմ տիրոջ ծառան կարդալ չգիտե։

— Այն նամակը, որ կապած է կարմիր դերձանով։

— Իսկ եթե կրոնավորին ժայռի վրա նստած չգտնե՞մ։

— Անպատճառ կգտնես։ Նա այնտեղ, մի սգավոր ագռավի նման, նստած է յուր վանքի մոխիրների վրա, ա՛յն հրաշալի վանքի, որ ավերակ դարձրեց Մերուժանը, և անմխիթար կերպով ողբում է նրա ցավալի կործանումը։

— Հետո ի՞նչ պիտի անե իմ տիրոջ ծառան։

— Հետո կթողնես վանքը և կշարունակես ճանապարհը դեպի Խրամ քաղաքը[19]։ Կգնաս, կգնաս, մինչև քո առջև կհայտնվի մի ծածկված պատգարակ, որը, դագաղակիր պատգարակի նման, պատած կլինի սգավորի սև պաստառներով։ Նրան ուղեկցում են լեռնականների մի քանի զինված գունդեր։ Այդ մյուս նամակը, որ կապած է կանաչ դերձանով, կհանձնես պատգարակի մեջ գտնված անձնավորությանը։

— Իմ տիրոջ ծառան չի՞ պիտի գիտենա, թե ո՛վ է նա։

— Ոչ ոք չգիտե, թե ով է նա, բացի յուր զինյալ ուղեկիցներից,

որոնք նրա անձնավորությունը պահում են իբրև խորին գաղտնիք։ Քեզ համար ևս մի առանձին պետք չկա գիտենալու, թե ով է նա։

— Նամակը հանձնելուց հետո ի՞նչ պիտի անե իմ տիրոջ ծառան։

— Կշարունակե յուր ճանապարհը։ Քեզ կհանդիպի Ոշտունյաց Գավառին իշխանը յուր զինվոր լեռնաբնակներով։ Նրան իմ կողմից կասես մի բառ միայն՝ «շտապել»:

— Իսկ եթե ուրիշ բանե՞ր ևս հարցնելու լինի։

— Ինչ որ գիտես, բոլորը կպատմես։ Դու, կարծեմ, բավական ծանոթացած պետք է լինես պարսից բանակի այժմյան դրության հետ։

— Իմ տիրոջ ծառան ամեն ինչ տեղեկացել է, գիտե պարսիկ զորքերի թիվը, գիտե՝ ո՛րքանը ձիավորներ են, ո՛րքանը հետևակներ են, գիտե քանի՛ գնդերի են բաժանված և յուրաքանչյուր գունդին ո՛վ է հրամայում։

— Այդքանը ևս շատ բավական է։ Այժմ կարող ես գնալ։ Տեր ընդ քեզ։

Հավատարիմ փայակը, որ մաքի պես արագ էր և գելի պես ճարպիկ, որ հոգով ու սրտով նվիրված էր Սամվելին, որ միշտ ուրախ էր լինում, երբ նրանցից մի նոր հանձնարարություն էր ստանում,— այս անգամ ավելի ևս ուրախացավ, որովհետև նրա սրտի վրա ևս ծանրացած էին տխուր իրողությունների դառն հարվածները, և մխիթարվում էր, որ յուր ծառայություններով գուցե կարող կլիներ փոքր ի շատե օգնել գործին։

Նրա հեռանալուց հետո ներս մտավ Արբակը։

— Բարձրացրո՛ւ վարագույրները,— ասաց նրան Սամվելը։— Նայի՛ր, որ մեր շուրջը օտար մարդիկ չլինին։

— Ոչ ոք չկա, ամենքը հավաքվել են խարույկի մոտ տեսնելու, թե ի՛նչպես են այրում աստուծո սուրբ գրքերը։

Ծերունին, վարագույրները բարձրացնելուց հետո, նստեց։ Սամվելը հազիվ լսելի ձայնով ասաց նրան.

— Ես այսօր կգնամ Մեռուժանի մոտ ճաշելու, թեև ինձ համար թույնի չափ անախորժ պիտի լինի նրա ճաշը։ Բայց կաշխատեմ օգուտ քաղել այդ ճաշից։ Ճաշի ժամանակ խոսակցությունը այնպես կտանեմ, որ մյուս օրը, երեկոյան, անպատճառ կարգադրվի որսորդության հանդես Արաքսի ափերի մոտ։ Դու պատրաստ կլինես ինձ հետ գալու և կանխապես կնախապատրաստես իմ մարդիկներին։ Հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ...— պատասխանեց ծերունին խորհրդավոր ձայնով և երկյուղած աչքերը դարձրեց դեպի երկինքը, կարծես, Ամենակարողի հաջողությունն էր խնդրում։

Երիտասարդը շարունակեց.

— Իմ մարդիկներից յուրաքանչյուրը պետք է լավ գիտենա յուր դերը, եթե ոչ, մի ամենափոքր սխալ կարող է ամեն ինչ փչացնել։ Նրանք պետք է հետևեն պայմանական նշաններին և նույն նշանների համեմատ գործեն։ Իսկ թե հանգամանքները փոխվեն, այդ դեպքում դու պետք է, հանգամանքների փոփոխության համեմատ, փոխես և նրանց գործելու եղանակը...

— Արբակը այդ բոլորը կարգադրել է, դու անհոգ կա՛ց,— պատասխանեց ծերունին և գլխով հասկացրեց՝ ընդհատել խոսակցությունը, որովհետև նույն միջոցին դեպի որդու վրանը գալիս էր հայրը։

Ներս մտավ հայրը, ասելով.

— Այժմ գնանք, սիրելի Սամվել, Մերուժանը սպասելիս կլինի մեզ, նրա հյուրերը արդեն հավաքվել են։

Դ.

Ջ Վ Ի Թ Ա.

«Ասեն զօրավարքն Պարսից ցՋուիթ երէց քաղաքին Արտաշատու.— Եկեալ ի միջոյ գերւոյդ, ե՛րթ գնա՛ դու յո պէտք է քեզ։ Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Ջուիթ, այլ ասէր.— Յո զխաշինս տանիք, եւ զհովիւս տարայք, զի ոչ է մարթ հովուի թողուլ զխաշն իւր, այլ պարտ է հովուի դնել զանձն ի վերայ ոչխարին իւրոյ։ Եւ զայս ասացեալ եմուտ ի գերութիւնն եւ խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից»։

Փաւստոս:

Կեսօր էր։ Մերուժանի ընդարձակ, երկնագույն վրանում արդեն հավաքված էին հյուրերը։ Բոլորից բարձր նստած էր Հայր-Մարդպետը, Դղակը, որ յուր անհեթեթ հագուստով և վիթխարի մարմնով մի քանի մարդու տեղ էր բռնել։ Նրա աջ և ահյակ կողմերում նստած էին մի-մի ճերմակագլուխ մոգեր, երկար, սրածայր գլխարկներով, որ, տաշած շաքարի գլուխների նման, յոթնանկյունի ձև ունեին, և յուրաքանչյուր անկյունի միջոցում գույնզգույն թելերով կարված էին խորհրդավոր նշանագրեր[1]։ Մոգերից մեկի մոտ նստած էր Վահան Մամիկոնյանը, մյուսի մոտ՝ Մերուժանը։ Իսկ Մերուժանի մոտ նստած էին Սամվելը և պատա-

նի Արտավազդը։ Հետո, իրանց բարձի և աստիճանի համեմատ, կարգով նստած էին զանազան պարսիկ սպաներ, որոնց թվումն էր և նշանավոր Կարեն զորապետը։ Հյուրերի մեջ չէր երևում միայն ծերունի Արբակը։ Նա բացարձակ կերպով մերժեց Մերուժանի ճաշը և չկամեցավ մասնակցել։ Մերուժանը ամենևին չվիրավորվեցավ, որովհետև նրան ևս հայտնի էր համառ ծերունու տարօրինակ բնավորությունը։

Մերուժանը զարմանալի նմանություն ուներ՝ յուր քրոջ որդուն— Սամվելին։ Թե դեմքով և թե կազմվածքով նա իսկական Սամվելն էր, միայն հասակը և տարիքը նրան ավելի զարգացած և ավելի այրական տեսք էին տվել։ Նա իսկապես շատ գեղեցիկ մարդ էր, ուրախ, քաղցրաբարո, և ոչ մելամաղձոտ, ինչպես էր մռայլ Սամվելը։ Երկար ժամանակ Տիզբոնի արքունիքում ապրելով, և պարսից ամենաբարձր շրջանների հետ հարաբերություններ ունենալով, նա սեփականել էր իրան այդ ազգի կենցաղավարության ամենանուրբ ձևերը։ Ամեն մի հասարակության մեջ նա շատ սիրելի էր և հրապուրիչ։ Պարսկական քաղաքավարության հետ՝ միացրել էր նա և պարսկական խորագիտությունը, որ թաքցրած էր նրա գեղեցիկ, գրավիչ և խաբուսիկ դեմքի ներքո։

Իսկ այդ հրապուրիչ դեմքը, մանավանդ յուր վերջին հաջողություններից հետո, թեև ավելի իրավունք ուներ փայլելու և անսահման ուրախ լինելու, բայց, ընդհակառակն, կրում էր յուր վրա ներքին թախծության խորին դրոշմը, որը նա ամենայն ջանքով աշխատում էր ծածկել։ Այն օրից, երբ նա Արտագերս ամրոցում այնպես նախատական կերպով մերժում ստացավ Որմիզդուխտից, այո՛, այն օրից նրա սրտի հետ՝ փշրվեցան և նրա ամենագեղեցիկ ցնորքները, որոնց մեջ թե՛ յուր փառքը և թե՛ յուր երջանկությունն էր որոնում։ Ինչե՜ր չարեց նա, ի՜նչ գործեր չկատարեց նա սիրած աղջկա համար։ Նա մեղանչեց խղճի դեմ, նա մեղանչեց պատվի դեմ, նա դավաճանի անարգ անունը ժառանգեց, միայն նրա՛ն արժանի լինելու համար։ Բայց նա անողորմ ոտքով կոխ տվեց բոլորը և անցավ... Երազում էր պարսից Արքայից Արքայի փեսան լինել, իսկ այժմ աշխարհի մեջ ծաղր ու ծանակ դարձավ։ Որմիզդուխտը մի հարվածով խորտակեց նրա թե ապագան և թե հույսերը։ Եվ այս բոլորը վերաբերում էր նա Հայոց թագուհու կախարդիչ ազդեցությանը միամիտ օրիորդի վրա։ Գուցե Որմիզդուխտը այնպես չէր վարվի, եթե նա այնքան երկար ժամանակ խորամանկ Փառանձեմի ձեռքում չգտնվեր,— այսպես էր մտածում նա, և ոչինչ վրեժխնդրություն այնքան դառն և այնքան ծանր չէր համարում, քան թե ա՛յն, որով Հայոց թագուհին պատժեց նրան՝ պաշտած աղջկա բերանով՝ նախատելով

նրա թե սերը և թե սնափառությունը, որոնց զոհ դարձան թշվառ Հայրենիքի այնքան նվիրական սրբությունները...

Թեև նա իսպառ վհատած չէր, թեև տակավին հույս ուներ, որ Շապուհը անպատճառ կկատարի յուր խոստումները,— բայց ի՜նչ երջանկություն՝ կնոջ բռնի ամուսին լինել, որը զզվում էր նրանից, և մի երկրի բռնի թագավոր լինել, որը անիծում էր նրան։— Այդ մտքերը վերջին օրերում, թունավոր ուտիճի նման, սկսել էին կրծոտել, սկսել էին մաշել նրա սիրտը...

Սամվելի հանկարծակի հայտնվիլը նրան ճշմարիտ ուրախություն պատճառեց։ Նայում էր շնորհալի երիտասարդի վրա և հիանում էր։ Նրա մեջ նույն քաղցր զգացմունքներն էին զարթնում յուր քրոջ որդու վերաբերությամբ, ինչ զգացմունքներով որ հրապուրվում էր Սամվելի հայրը։ Արդեն երազում էր այն փայլուն դերը, որ պիտի խաղար նա պարսից արքունիքում, և կանխապես հպարտանում էր նրա հաջողակություններով։ Եվ այդ ցանկալի օրը շատ հեռու չէր համարում նա, որովհետև դիտավորություն ուներ Սամվելին յուր հետ տանել Տիզբոն, թեև այդ մասին նրա կամքը դեռ չէր հարցրել, բայց համոզված էր, որ մեծ հոժարությամբ կընդունե նա։

Խոսում էին հյուրերը, և խոսում էր ըստ մեծի մասին Հայր-Մարդպետը։ Նրա ազդու, վարդապետական ձայնը, նրա սառն, ծանրակշիռ խոսքերը յուր վրա էին դարձրել բոլորի ուշադրությունը։ Խոսում էր նա այն նշանավոր հարցի մասին, թե երբ կհասնեին Տիզբոն, պետք էր ամենայն ջանքով համոզել Շապուհ արքային, որ անպատճառ հռոմայեցոց նոր կայսրի՝ Թեոդոսի հետ խաղաղության դաշն կապե և հաշտվի նրա հետ։ Հաշտության արդյունքը նա բոլորովին նպատակահարմար էր համարում հայոց գործերի մասին, որովհետև, նրա կարծիքով, երբ Շապուհը բարեկամական հարաբերությունների մեջ կլիներ Թեոդոսի հետ, այնուհետև կայսրը այլևս հանձն չէր առնի, հակառակ Պարսկաստանի շահերին, հռոմեական զորքերով օգնել հայերին։ Եվ հայոց ուխտապահ նախարարները, կայսրի օգնությունից զրկվելով, այնքան զորություն չէին ունենա, որ Արշակունյաց թագաժառանգին Բյուզանդիայից Հայաստան բերեին և յուր հոր թափուր մնացած գահը նստացնեին։ Մերուժանը բոլորովին բաժանում էր Հայր-Մարդպետի քաղաքական հայացքները, մտածելով, որ հայոց հարաբերությունները հռոմայեցոց հետ խզվելուց հետո, Հայաստանում ասպարեզը յուր համար միանգամայն բաց կմնար, և այնուհետև ավելի հեշտ կլիներ նպատակին հասնել։ Սամվելը ուշադրությամբ լսում էր։

Խոսում էին և երկու մոգերը։ Վերջինների խոսակցության առար-

կան ավելի գործնական էր։ Հայտնում էին, թե ե՛րբ ավելի բարեհաջող կլիներ բանակը շարժել յուր տեղից և ճանապարհ ընկնել դեպի Պարսկաստան։ Նրանց կարծիքով, գոնե պետք էր երեք օր սպասել, որովհետև աստղերը ուղևորության համար լավ նշաններ չէին ցույց տալիս։ Մեհրուժանը ոչ միայն հավատում էր աստղերին, այլ հավատում էր մինչև անգամ կախարդության և այս արհեստի մեջ իրան բավական հմուտ էր համարում[3]։ Նա նույնպես համաձայն էր մոգերի հետ և ընդունում էր, թե անպատճառ պետք էր սպասել, մինչև երեք չարագուշակ օրերը անցնեին։ Թե որքա՜ն ուղիղ էին նրանց աստղագիտական նկատողությունները,— դա այլ հարց է, միայն Սամվելի համար հիշյալ երեք օրերը շատ և շատ հարկավոր էին։ Այդ էր պատճառը, որ նրա տխուր դեմքը սկսեց փոքր առ փոքր փայլել։

Բայց հանկարծ մի աղմուկ հյուրերի ուշադրությունը դարձրեց դեպի վրանի մուտքը։

— Ի սե՜ր աստուծո, թույլ տվեցեք թշվառիս ներկայանալ Մեհրուժանին,— վշտալի ձայնով աղաչում էր մեկը, բայց ծառաները քաշքշում էին նրան և թույլ չէին տալիս, որ մտնի։

Լսելով աղաղակը, Մեհրուժանը հրամայեց սպասավորներից մեկին, որ չարգելեն եկվորին։ Հայտնվեցավ մի պատկառելի ալևոր, կրոնավորի զգեստով, որ, խոնարհությամբ գլուխ տալով, հենվեցավ յուր հովվական ցուպի վրա և կանգ առեց վրանի մուտքի առջև։ Վշտահար դեմքը արտահայտում էր խորին դառնություն։ Աչքերի մեջ վառվում էր սրտմտության կրակը, որ խառն էր անմխիթար հուսահատության հետ։ Նա ներկայանում էր, որպես մի սգավոր, որից հափշտակել էին յուր ամենասիրելին, յուր ամենաթանկագինը։ Եբրայական երկճղի գանգրամազ մորուքը, որ իջնում էր մինչև նրա մաշկեղեն գոտին, ցույց էր տալիս, որ այդ բարեշուք կրոնավորը հայկական ծագումից չէր։ Կանխահաս ծերությունը բոլորովին արծաթացրել էր գլխի երկար գիսակները, բայց սև մորուքի մեջ դեռ նոր էին նշմարվում ճերմակի հետքերը[4]։ Անհասարակ ամբողջ կերպարանքի մեջ փայլում էր մի առանձին վսեմություն, որ խիստ ազդու տպավորություն էր գործում։

— Արտաշատից մինչև այստեղ, երեսս գետնին քսելով, քո սպասին եմ եկել, Մեհրուժան,— ասաց նա ողբալից, բայց խռովյալ ձայնով։— Եկել եմ իմ աղերսը և իմ աղաչանքը թափելու քո գթության առջև։ Մի ամբողջ շաբաթ գտնվում էի քո բանակի մեջ, բայց արգելում էին իմ ձայնը քո բարի ունկնդրությանը հասցնելու։ Այժմ լսի՛ր տառապյալ ծերունուս, ո՛վ քաջդ Մեհրուժան։

— Ո՞վ ես դու,— հարցրեց Մեհրուժանը, ուշադրությամբ նայելով

ծերունու վրա, որ արձանացած էր նրա առջև, որպես մի մարմնացած, սպառնական բողոք։

— Ես Արտաշատի հրեաների երեցն եմ, ինձ կոչում են Զվիթա[5]. կարգս ընդունել եմ Ներսես Մեծից։ Իմ հայրը, Հայաստանի մյուս հրեաների հետ, Տիգրան Բ-ի օրերում, գերի բերվեցավ Հրեաստանից։ Հայոց հյուրասեր աշխարհը այնպիսի մարդասիրական ասպնջականություն ցույց տվեց մեզ, որ մոռացանք մեր ուխտյալ հայրենիքը, որը այնքան սուրբ է և այնքան նվիրական է յուրաքանչյուր հրեայի համար,— մոռացանք և մեր աստվածավանդ կրոնը, որը ամեն մի հրեայի կյանքի և փրկության ամենաբարձր խորհուրդն է։ Մոռացանք և՛ մեր լեզուն, որով Մովսեսը գրեց Եհովայի սուրբ Կտակարանը։ Տրդատի օրերում, Լուսավորչի ձեռքով, քրիստոնեություն ընդունեցինք և միացանք հայերի հետ։ Այն օրից մենք ապրում էինք հայոց աշխարհում, որպես բնիկ երկրացիներ, վայելում էինք հավասար իրավունքներ, սիրում էինք այս երկիրը և բնավ չէինք զգում, թե մենք այստեղ օտարներ ենք։ Ուրախ էինք լինում նրա ուրախության հետ և մասնակից էինք լինում նրա վշտերին...

Նա փոքր-ինչ շունչ առեց և ապա շարունակեց.

— Բախտը և բարօրությունը միշտ ժպտում էր մեզ, և մեր շտեմարանները լցված էին աշխարհի բոլոր բարիքներով։ Մեր ձեռքումն էր երկրի վաճառականությունը, մեր ձեռքումն էր արհեստի և ճարտարության բարգավաճումը։ Բայց դո՛ւ, Մեհրուժան, անխնա ձեռքով քանդեցիր մեր նոր բույնը, որը այնքան դարերի մեծ խնամքով կազմել էինք, որը մեզ համար այնքան անդորր էր և ապահով։ Դու ավերակ դարձրիր այն մեծափարթամ քաղաքները, որ ամբողջ աշխարհի առջև պարծենում էին իրանց անբավ հարստությամբ։ Դու մինչև անգամ չխղճացար քո սեփական Վան քաղաքին, ուր Իսրայելի տարագրյալ որդիները, քո նախահարց օրերում վայելում էին կատարյալ երջանկություն։ Այս անգթության դեմ կբողոքեն քո արժանահիշատակ նախնյաց վեհ հոգիները,— բողոքում է և՛ ծերունի երեցը, որ այժմ յուր դառն արտասուքն ու վշտերը թափում է քո խստասրտության առջև, որպես մի անլեզու ապառաժի վրա, ո՛վ քաջդ Մեհրուժան։

Նա դարձյալ կանգ առեց։ Սամվելը անհանգիստ կերպով լսում էր և հազիվ կարողանում էր յուր զգացմունքները զսպել։ Մյուսները բարկությամբ նայում էին համարձակ ծերունու վրա և ակնարկում էին Մեհրուժանին, որ լռեցնե նրա հանդգնությունը։ Բայց Մեհրուժանը թույլ տվեց շարունակել։

— Այո՛, մեր նախնիքը գերի բերվեցան հայոց աշխարհը, բայց

բախտավորություն դառնա։ Իսկ դու վարում ես նրանց դեպի մի նոր գերություն, դեպի մի նոր, անծանոթ աշխարհ։ Գերությունը, հալածանքը, բիրտ է, միշտ հրեից ճակատագիրն է եղել, սկսյալ այն օրից, երբ նրանք գերի էին Եգիպտոսում, Փարավոնների ձեռքում, և ապա գերի գնացին Բաբելոն, տանջվում էին ասորեստանցոց ձեռքում։ Երկար, շատ երկար ժամանակ, Եփրատի ափերի մոտ նստած, մեր հայրերը Բաբելոնի ուռիներից քարշ էին տալիս իրանց սուրբ Կտակարանները և ողբում էին կարոտյալ Երուսաղեմը[6]։ Այն տաժանական պանդխտության մեջ երկար մաշվում էին նրանք, մինչև Կյուրոսը, պարսից աստվածարյալ արքան ազատեց նրանց գերությունից, և, վերադարձնելով իրանց հայրենիքը,— վերստին Երուսաղեմը յուր փառքն ու պայծառությունն տալով[7]։ Պարսից արքաների պատմության հետ կապված է այդ մեծ գործը, որի մեջ փայլում է Կյուրոսի թե բարձր, առաքինությունը և թե անմոռանալի մեծահոգությունը։ Իսկ դո՛ւ, Մերուժան, մի անջնջելի բիծ կդնես պարսից արքաների պայծառ հիշատակի վրա, եթե այդ ազգը կրկին ի գերություն կվարես։ Լսում ենք, որ մեզ պետք է տանես հեռավոր Սպահան[8]։ Տա՛ր, բայց մենք չենք մոռանա մեր նոր հայրենիքը՝ Հայաստանը։ Մեր երեխաների հետ կնստենք այնտեղ՝ Զայնդա-Ռուդի ափերի մոտ և, որպես մի ժամանակ Իսրայելը Բաբելոնում, կախ կտանք Սպահանի ուռիներից մեր սուրբ Ավետարանը և կողբանք Մասիսը՝ մեր սուրբ Սիոնը, կողբանք Արաքսը՝ մեր սուրբ Հորդանանը, կողբանք Արտաշատը՝ մեր սուրբ Երուսաղեմը,— կողբա՛նք և կանիծե՛նք այն մարդուն, որ մեզ տարագրեց մեր սիրելի հայրենիքից…

Վերջին խոսքերը կայծակի պես շանթեցին Մերուժանի քարացած սրտին։ Նա սասանվեցավ, շփոթվեցավ և երկար մի բառ անգամ չէր գտնում պատասխանելու։ Նրան շրջապատողները անհամբեր լռությամբ միմյանց երեսին էին նայում, և ամեն ոք սպասում էր, որ նա իսկույն կհրամայե՝ կամ կտրել հանդուգն ծերունու լեզուն, կամ հատանել աներկյուղ համարձակախոսի պարանոցը։ Բայց մեծ եղավ բոլորի զարմանքը, երբ Մերուժանը բավական մեղմ կերպով պատասխանեց.

— Ես կատարում եմ պարսից արքայից արքայի բարձր հրամանը, հարգելի Զվիթ։ Ծառաները պետք է հնազանդ լինեն իրանց տիրոջը,— այդ պատվիրում է այն Ավետարանը, որի անունով խոսում ես դու։ Այլև ինչո՞ւ այսպես անողորմ կերպով նախատում ես ինձ։

— Այո՛, Մերուժան, իմ Ավետարանը, որպես մի ժամանակ և քո Ավետարանը, պատվիրում է ծառաներին հնազանդ լինել իրանց տի-

բոլը։ Բայց դու այն ծառաներից ես, Մերուժան, որ վայելում ես քո տիրոջ թե հարգանքը և թե կատարյալ վստահությունը։ Եթե դու հրամայես քո ձեռքում գտնված հրեա գերիներին՝ վերադառնալ իրանց տեղերը,— այդ մասին Շապուհ արքան երբեք դժգոհ չի լինի քեզանից և, գուցե, շատ շնորհակալ կլինի։ Ես եկել եմ խնդրելու քո գթությունը, Մերուժան։ Խղճա՛ այդ դժբախտ ժողովրդին, պատիվ դի՛ր Աբրահամի, Իսահակի և Հակոբի սուրբ հիշատակին և լսի՛ր ծերունի երեցին, որ յուր արտասուքն ու աղերսը թափում է քո մեծահոգության առջև։ Ազատություն շնորհի՛ր այդ գերիներին, և դո՛ւ, Մերուժան, կլինես մի երկրորդ Կյուրոս, և քո անունը միշտ օրհնությամբ կհիշե Հայաստանի հրեա ժողովուրդը։

— Այդ բոլորը շատ գեղեցիկ է, հարգելի Զվիթա,— պատասխանեց Մերուժանը մի առանձին քաղցրությամբ, որի մեջ նշմարվում էր և նրա սրտի խորին դառնությունը։— Ես սիրով կկատարեի քո խնդիրքը, եթե իմ թագավորին հարկավոր չլիներ քո ժողովուրդը։ Սպահանը՝ յուր շրջակա գավառներով՝ մնացել է դատարկ։ Իմ թագավորը ցանկանում է բնակեցնել այդ երկիրը մի ժողովրդով, որի վրա կարող լիներ կատարյալ վստահություն ունենալ։ Իսկ հրեաները որքան աշխատասեր, այնքան և հավատարիմ ժողովուրդ են։ Կտանենք ձեզ այնտեղ, և դուք Սպահանում նույնքան բախտավոր վիճակի մեջ կլինեք, որքան էիք այստեղ Հայաստանում։ Եվ որպես հայաստանցոց սիրալի ասպնջականությունը ստիպեց ձեզ մոռանալ Հրեաստանը,— այնպես և պարսից սիրալի ասպնջականությունը կստիպե ձեզ մոռանալ ձեր նոր հայրենիքը՝ Հայաստանը, միայն թե, երբ դուք կընդունեք պարսից կրոնը, որպես այստեղ ընդունեցիք հայոց կրոնը։

— Այդ երբե՛ք մի հուսար, Մերուժան,— ասաց ծերունին խորին վրդովմունքով։— Եթե հրեան հավատափոխ է լինում և քրիստոնեություն է ընդունում, դա շատ բնական է, որովհետև նա միշտ սպասում է Քրիստոսին—յուր սիրելի Մեսիային։ Բայց արեգակ պաշտել և կրակին երկրպագություն տալ՝ նա երբեք հանձն չառնի։

Երկու մոգերը իրանց նստած տեղում ցնցվեցան, և նրանց թթված երեսների վրա երևաց մի տեսակ զայրույթ, որ պատրաստ էր հարվածելու անձնազոհ ծերունուն, եթե Մերուժանը չընդմիջեր նրանց բարկությունը, պատասխանելով.

— Դա ապագայի գործ է, հարգելի Զվիթա, ես այդ մասին այժմ քեզ հետ չեմ վիճի։ Միայն չեմ թաքցնում հայտնել քեզ, որ, որքան և հաճելի լիներ ինձ քո խնդիրքը, այնուամենայնիվ, ես իմ թագավորի երկրի շահերը ավելի բարձր կդասեմ քո արտասուքից։ Ես լսել եմ քո

համբավը, և ինձ հայտնի է, թե դու ո՛րքան սիրված ես քո ժողովրդից։ Ես քեզ ազատություն կշնորհեմ,— միայն քե՛զ, և ո՛չ քո ժողովրդին։ Գնա՛, ուր որ քո սրտին հաճելի է, ոչ ոք այսուհետև բնավ չի համարձակվի նեղություն պատճառել քեզ։ Գնա՛, ազատ ես, Ջլիթա։

— Ես կգնամ իմ գերված ժողովրդի մոտ, Մերուժան, և երբե՛ք չեմ բաժանվի նրանից։ Հովիվը պետք է յուր հոտի հետ լինի և յուր անձը դնե նրա պահպանության համար...

Այս եղավ տառապյալ ծերունու վերջին խոսքը և նա, արտասուքը աչքերում, երեսը շուռ տվեց, և հենվելով յուր հովվական ցուպի վրա, սկսեց դանդաղ ու չափավոր քայլերով դուրս գալ բանակից։ Հետո բռնեց դեպի Արտաշատ տանող ճանապարհը, սկսեց դիմել դեպի պարսից մյուս բանակը, այնտե՛ղ, ուր Տափերական կամուրջի մյուս կողմում՝ պահված էր նրա սիրելի ժողովուրդը։

Ծերունու բողոքը, նրա անձնազոհությունը, խիստ ծանր տպավորություն թողեց բոլորի վրա։ Նրան ազատություն շնորհեցին, բայց նա մերժեց։ Նա չկամեցավ բաժանվել յուր հոտից, այլ ընդունեց նրա հետ միասին լինել և նրա հետ միասին կրել գերության ու պանդխտության տառապանքները։ Ոչինչ հարված չէր կարող Մերուժանի սրտին այնքան զգալի լինել, որքան համառ ծերունու արհամարհանքը, որով նա այնպես դառնացած կերպով մերժեց իրան առաջարկված շնորհը։ Այդ էր պատճառը, որ նրա հեռանալուց հետո Մերուժանը գտնվում էր մի տեսակ անհանգիստ շփոթության մեջ և, կարծես, նոր էր զգում, որ յուր պատրաստած թունավոր նետերը՝ հենց գործի սկըզբում՝ ապառաժներին են դիպչում և կրկին դեպի ինքը ետ են դառնում...

Ոչ սակավ վրդովված էին երկու մոգերը, որ այնտեղ նստած էին։ Նրանցից մեկը նկատեց.

— Ո՛վ քաջդ Մերուժան, դու իզուր ես թույլ տալիս այդ սևազգեստ, այդ սևագլուխ սատանաներին հետևել իրանց ժողովրդին։ Դրանք այնտեղ, Պարսկաստանում, շատ կդժվարացնեին մեր գործը...

— Այո՛, դրանք այնտեղ հանապազ իրանց ժողովրդին մոլորության մեջ կպահեին,— ավելացրեց մյուս մոգը։— Պետք էր կրոնավորներին միանգամայն զատել իրանց հոտից և թողնել այստեղ, որ մեզ Պարսկաստանում չխանգարեին...

Մերուժանը այնքան անձնասիրություն ուներ, որ յուր գործողությունների վերաբերությամբ, որքան և սխալ լինեին, այնուամենայնիվ, ոչինչ նկատողության համբերել չէր կարող։ Լսելով մոգերի տրտունջը, պատասխանեց.

— Եթե դրանք Պարսկաստանում մեզ կխանգարեն, եթե գրգռելով իրանց ժողովրդին, նրան միշտ քրիստոնեական մոլորության մեջ կպահեն,— դրա համար Շապուհ արքան շատ բանտեր ու դահիճներ ունի: Դժվար չէ՝ մի քանի րոպեում՝ բոլորին կենդանի մի փոսի մեջ թաղել և նրանց ձայները լռեցնել: Բայց եթե այստեղ թողնելու լինենք դրանց, անտարակույս, կդժվարացնեն մեր այստեղի գործերը: Չէ՞ որ մենք այստեղ ևս պետք է առաջարկենք՝ թողնել քրիստոնեությունը և ընդունել Մազդեզանց սուրբ կրոնը: Այս էր պատճառը, որ ես աշխատեցի, որքան կարելի էր, ձեռք բերել հայոց հոգևորականներին և մեր հսկողության ներքո պահել:

Մերուժանի կարծիքին հավանություն տվին թե Հայր-Մարդպետը և թե Վահան Մամիկոնյանը՝ Սամվելի հայրը: Դրանք ևս գտնում էին, թե եկեղեցին գրավելու համար՝ նախ պետք է եկեղեցականներին գրավել, ինչպես հոտը գրավելու համար՝ նախ պետք է հովվին ձերբակալել:

— Ուրեմն ինչո՞ւ դու կամեցար ազատություն շնորհել այն ծերունի երեցին,— հարցրեց Սամվելը, դառնալով դեպի յուր քեռին:

— Նա վերին աստիճանի ազդեցություն ունեցող մարդ է,— պատասխանեց Մերուժանը:— Նա պաշտվում է յուր ժողովրդից, որպես մի սրբություն: Նրա ներկայությունը յուր ժողովրդի մեջ՝ կարող էր մըշտական զգաստության մեջ պահել յուր ժողովրդին: Իսկ նրա մահը (եթե հանգամանքները ստիպեին մեզ ոչնչացնել նրան) ավելի ևս պիտի բորբոքեր յուր ժողովրդի հավատը: Նա կդառնար մի քաջ նահատակ, որի անունը երբեք չէր մոռացվի, և նրա հիշատակը միշտ կոգևորեր յուր ժողովրդին: Կան մարդիկ, որոնց մահը ավելի վտանգավոր է լինում, քան թե նրանց կյանքը: Նա այն տեսակ մարդիկներից է:

Սամվելը ոչինչ չպատասխանեց, իսկ Մերուժանը նրա լռությունը համաձայնության տեղ ընդունեց: Բայց վշտալի երիտասարդը յուր մտքում այս էր խորհում. «Որքա՜ն ուսումնասիրել են այդ մարդիկը չարության գործը... որքա՜ն խորն են թափանցել իրանց անիրավությունների մեջ...»:

Խոսակցությունը այլ կերպարանք ստացավ, երբ Հայր-Մարդպետը, դառնալով դեպի Մերուժանը, հարցրեց.

— Ցանկալի էր գիտենալ՝ այժմ ուրտե՞ղ հասցրած կլինեն Հայոց թագուհուն: Դու այդ մասին ո՛րևէ լուր ունե՞ս:

— Ունեմ,— պատասխանեց Մերուժանը փոքր-ինչ այլայլված ձայնով և, միևնույն րոպեում, նրա գոհունակ դեմքի վրա անցավ մի տեսակ տխուր մթություն:— Նրանք այժմ պետք է անցած լինեն Եկբատանը[10]. գնում են ավելի կարճ ճանապարհով...

Հայր-Մարդպետը նկատեց Մերուժանի շփոթությունը և խոկույն սարչացավ։ Հիշեցնելով նրան Հայոց թագուհուն, հիշեցրեց, միևնույն ժամանակ, և նրա սիրելի Որմիզդուխտին։ Երկուսն էլ միասին էին գնում Պարսկաստան, այլ խոսքով, երկուսին ևս միասին էին տանում Պարսկաստան։ Նրանց հետ տանում էին և Մերուժանի խորտակված սրտի բեկորները... նրա վիրավորված զգացմունքները...

Մերուժանի թախծությունը նկատեց և Սամվելը, մտածեց փոքր-ինչ զվարճացնել նրան։ Նա գիտեր յուր քեռու բնավորությունը, գիտեր, որ նա այն ժամանակ միայն ուրախ էր լինում, երբ նրա հետ խոսում էին յուր զինվորական գործողությունների մասին, մանավանդ երբ գործողությունները բավական հաջող վախճան էին ստացել։

— Զարմանում եմ, սիրելի քեռի,— հարցրեց նա։— Ես ձեր գերիների թիվը համեմատաբար ավելի փոքր եմ գտնում, քան թե այն բազմաթիվ ավանների և քաղաքների թիվը, որ ես բոլորովին ավերակ և ամայի տեսա իմ գալու ժամանակ՝ ճանապարհորդությանս ամբողջ տարածության վրա։

— Բոլորովին ուղիղ է քո նկատողությունը, սիրելի Սամվել,— ասաց նա դժգոհ մարդու եղանակով։— Մեր զինվորները սաստիկ դանդաղկոտ շարժվեցան, իսկ մեր զորապետները բավական անվարժ էին Հայոց երկրի պայմաններին։ Մինչև մեր հասնելը, շատ ավաններ և շատ քաղաքներ միանգամայն դատարկ էինք գտնում մեր առջև։ Այրում էինք և անցնում էինք։ Բնակիչները, լսելով մեր արշավանքի ձայնը, կանխապես թողած էին լինում իրանց բնակությունը և ամրացած էին լինում անմատչելի լեռների բարձրությունների վրա։ Դաշտային տեղերում, տափարակների վրա մենք, իրավ է, մեծ հաջողություն գտանք։ Բայց լեռներում մեր զինվորները բոլորովին անընդունակ հայտնվեցան։

Վերջին խոսքերի միջոցին նա նայեց պարսից Կարեն զորապետի երեսին, որ տհաճությամբ լսում էր.

— Ուրեմն դուք շատ խոր չթափանցեցի՞ք լեռնային կողմերում,— հարցրեց Սամվելը։

— Շատ դժվար էր թափանցել։ Ես չկամեցա Արքայից Արքայի զորքերը իզուր կոտորել տալ։ Ինձ համար թանկ է յուրաքանչյուր պարսիկ զինվորի մի կաթիլ արյունը։ Հայերը լեռներից կռվում էին մեզ հետ ոչ միայն զենքերով, այլև քարերով ու փայտերով։ Եվ կռվում էին ոչ միայն տղամարդիկը, այլև կանայքը։ Այս վերջինների կատաղությունը ավելի շփոթեցնում էր մեզ։ Այդ էր պատճառը, որ ես բավականացա ավելի դաշտային երկրներով, և աշխատում էի միշտ խույս տալ լեռներից։

— Այժմ գլխավորապես ո՞ր լեռներում ամրացած են փախստական բնակիչները։

Մերուժանին խիստ հաճելի էր իր քրոջ որդու հետաքրքրությունը, որի մեջ նկատում էր նրա առանձին համակրությունը և ուրախանում էր։ Նա սկսեց մի առ մի տեղեկություն տալ երկրի դրության մասին, թե ո՛րտեղ ինչ էր կատարվել, կամ ո՛ր կողմերում գլխավորապես կենտրոնացած էին հայոց ուժերը։ Նրա խոսքերից երևաց, որ պարսիկները մի քանի տեղերում սաստիկ պարտություն էին կրել, և շատ տեղերում ևս մուտք անգամ գործել չէին կարողացել։

— Մենք մեծ հաջողություն գտանք Արարատյան գավառում, և առհասարակ այն կողմերում, որ արքունական կալվածքներ էին,— ասաց նա։

«Որովհետև մնացել էին անտեր... որովհետև ոչ թագավորը կար և ոչ թագուհին...»— իր մտքում ասաց Սամվելը, և ապա ծիծաղելով նկատեց.

— Եվ այրեցի՞ք անպաշտպան քաղաքները...

— Պետք էր այրել, սիրելի Սամվել, մի ուրիշ անգամ ես կբացատրեմ քեզ, թե ինչո՛ւ համար պետք էր այրել...

— Հասկանում եմ...— ասաց Սամվելը, և նրա ձայնը զգալի կերպով դողաց...— Այո՛, մենք հետո կխոսենք այդ մասին...

Վահան Մամիկոնյանին շատ հաճելի չէր թվում Մերուժանի այս առանձին մտերմական խոսակցությունը իր որդու հետ, և եթե հնար լիներ, մի կերպով կզգուշացներ նրան։ Բայց ի՞նչպես կասկածավոր ցույց տալ իր որդուն, որի մասին ինքն ևս հաստատ ոչինչ չգիտեր, և տակավին խարխափում էր մթին անստուգությունների մեջ միայն։

Խոսակցությունը ինքնըստինքյան ընդհատվեցավ, երբ սպասավորները ներս մտան, սկսեցին ճաշի սեղանը պատրաստել։

Պարսիկ զորապետը չէր զրկում իրան իր սովորական բավականություններից և ոչ մեկից՝ մինչև անգամ իր զինվորական կյանքում։ Նա իր բացօթյա բանակում գիտեր շրջապատել իրան այն բոլոր վայելչություններով, որպես սովոր է ապրել իր տան մեջ։ Ժուժկալությունը և ռազմական խստակեցությունը անծանոթ են նրան։ Մերուժանը իր կրթությամբ թեև ճշմարիտ զինվոր և սակավապետ զորավար էր, բայց, հետևելով պարսից սովորություններին, նրանց կեցության միևնույն ձևերը, միևնույն եղանակն էր ընդունել։ Եվ այլ կերպ վարվել կարող չէր, որովհետև նրանց հետ հարաբերություններ ուներ։

Մանկահասակ սպասավորների մի ստվար խումբ շքեղ կերպով հագնված ոտքի վրա ծառայում էին։ Սեղանի բոլոր անոթները ոսկուց

էին և արծաթից։ Որքան հյուրերի ախորժակին բավականություն էին տալիս անուշահամ կերակուրները, այնքան ավելի նրանց գեղասեր ճաշակին բավականություն էր տալիս սեղանի փայլը, նրա փառավոր հանդերձանքը։ Բոլոր պարագաների մեջ նշմարվում էր նրբություն և չափազանցության հասցրած շռայլություն։

Հյուրերից յուրաքանչյուրի մոտ կանգնած էր մի-մի ծաղկապսակ պատանի և, մի ձեռքով բռնած գինու արծաթյա խառնարանը, իսկ մյուս ձեռքով՝ արծաթյա թասը, մատռվակում էին անուշահոտ ըմպելին։ Մի խումբ երաժիշտներ, վրանի առջևում կանգնած, ածում էին զանազան նվագարանների վրա և անուշիկ ձայնով երգում էին։

Ճաշը տևեց բավական երկար։ Պատանի Արտավազդը, կարծես թե, ասեղների վրա նստած լիներ, անհամբերությունից սկսեց ձանձրանալ։ Նրան չէին գրավում՝ ոչ գուսանների անընդհատ երգերը և ոչ նվագարանների քաղցր հնչյունները,— նա բոլորովին ուրիշ ցանկություններ ուներ։ Որսորդության գնալու մասին առաջին անգամ նա խոսք նետեց, որովհետև նրան ամեն համարձակություն ներվում էր։

— Քեռի,— դարձավ նա դեպի Մերուժանը ժպտալով,— բանակը դեռևս քանի՞ օր պետք է այստեղ մնա։

— Երեք օր։

— Օ՜հ, դա շատ երկար է, աստված վկա, շատ երկար է...— պատասխանեց նա, գեղեցիկ երեսը անբավականությամբ խոժոռելով։— Ինչպե՞ս պետք է անցկացնենք այդ երեք անտանելի օրերը։

— Ինչպես որ քո սիրտը կկամենա,— ասաց Մերուժանը, փայփայելով նրա սիրուն գիսակները։

Պատանին շրթունքները մոտեցրեց Մերուժանի ականջին, փսփսաց.

— Ես գիտենաս, թե որքա՜ն ժամանակ է, որ ես որսի չեմ գնացել, բոլորովին կզարմանաս։

— Որքա՞ն ժամանակ է, սիրելիս։

— Այն օրից, որ մեր տանից դուրս եմ եկել։

— Դա փոքր ժամանակ չէ, մանավանդ քեզ համար։ Դու, կարծեմ, որսորդություն սիրում ես, Արտավազդ։

— Սաստիկ։ Երբ մեր տանն էի, եթե շաբաթը մի քանի անգամ որսի չգնայի, ինձ այնպես կթվեր, թե մի լավ բան, շա՜տ լավ բան կորցրել եմ։

Մերուժանը սկսեց բարեսրտությամբ խնդալ։

— Երևի, Սամվելն ես սիրում է,— դարձավ նա դեպի քրոջ որդին։

Որդու փոխարեն պատասխանեց հայրը.

— Սամվելը ամենափոքր հասակից սիրում էր որսորդություն։

Մեր-ամրոցի թռչունները հանգստություն չունեին նրա ձեռքից, երբ դեռ տասն տարեկան տղա էր։ Իսկ այժմ չգիտեմ հետևո՞ւմ է յուր հին սովորություններին, թե ոչ։

— Ես իմ սովորությունները հեշտությամբ չեմ փոխում,— պատասխանեց Սամվելը, ժպտալով։— Որսորդությունը իմ ամենասիրած զվարճություններից մեկն է։— Եվ դառնալով դեպի Մերուժանը, հարցրեց.— այդ կողմերում, Արաքսի ափերը, ասում են, խիստ հարուստ են վայրենի երեներով։

— Այո՛, հարուստ են,— ասաց Մերուժանը մի առանձին հեղնությամբ։— Արշակունի թագավորները Արարատում բազմացրին վայրենի երեներ միայն։ Ճահիճները չէին ցամաքեցնում, գետեղերքի ինքնորեն բուսած ծառաստանները չէին կտրում, որպեսզի թռչունների և երեների աճելության համար պատսպարան լինեին։

Սամվելի հայրը մեծ ցանկություն ուներ, որ որդուն մի որևէ առիթով ներկայացներ պարսիկ զորապետներին և նրա կատարելությունների մասին փոքր-ինչ գաղափար տար նրանց։ Իսկ այժմ, քանի դեռ կռիվների հանդեսներ չկային, որսորդությունը ամենահարմար միջոցներից մեկն էր, որի մեջ Սամվելը կարող էր ցույց տալ յուր քաջությունը։

Սամվելը, հասկանալով հոր փափագները, մտածեց օգուտ քաղել նրա տրամադրությունից։ Նա դարձավ դեպի Մերուժանը, հարցնելով.

— Դուք վճռել եք անպատճա՞ռ երեք օր բանակը պահել այստեղ։

— Անպատճառ։ Բացի այն, որ աստղները բարի ճանապարհ չեն գուշակում, մենք դեռ սպասում ենք մի քանի գնդերի, որ ետ են մնացել, և նրանց գոյության մասին ամենևին տեղեկություն չունենք։

— Ուրեմն, այդ երեք օրում, ինչպես լավ նկատեց Արտավազդը, անգործունեության մեջ կարելի է բոլորովին ձանձրանալ։

— Քեռիդ թույլ չի տա, որ ձանձրանաս, սիրելիս,— մեջ մտավ հայրը։— Նա քեզ համար որսորդության ամենափառավոր հանդեսներ կպատրաստե Արաքսի ափերի մոտ։

— Եվ ինձ համար,— ընդմիջեց պատանի Արտավազդը։

— Իհարկե, և քեզ համար,— ասաց Մերուժանը ժպտալով։— Առանց քեզ ի՞նչ ուրախություն կունենա մեր որսորդությունը։

— Հանաքը մի կողմ,— ասաց նա ինքնավստահ պարծենկոտությամբ։— Ես ուզում եմ այդ պարսիկներին ցույց տալ հայ տղայի քաջությունը։— Վերջին խոսքերը արտասանեց նա հայերեն, յուր վառ-

վրան աչքերը խորամանկ կերպով դարձնելով դեպի ներկա գտնվող պարսիկ ավագները։

Բայց Մերուժանը ծիծաղելով թարգմանեց նրա ասածը.

— Գիտե՞ք ինչ է ասում իմ փոքրիկ ազգականը. նա պարծենում է զազմացնել ձեզ յուր քաջություններով։ Եվ ես խոստանում եմ էգուց պատրաստել տալ նրա համար որսորդության հանդես։

— Տեսնենք, էգուց կտեսնենք,— ձայն տվին պարսիկ ավագները լուրջ կերպով։

— Բայց իմ դեմ դուրս բերեցեք իմ հասակակիցներին։

— Իհարկե, այնպես կլինի։ Մենք այժմյանից հրաժարվում ենք քեզ հետ մրցելուց։ Մեր բանակում քո հասակակից տղաներ շատ կան։

Սամվելը ոչինչ չէր խոսում։ Նա արդեն յուր ցանկության հասած էր համարում։ Մերուժանը հրամայեց, որ մյուս օրվա համար որսորդության պատրաստությունները լինեին Արաքսի ափերի մոտ։

Դ

ԱՐԱՔՍԻ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ

«Ապա արդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր»...

Փավստոս:

Հին Արաքսը զարմանալի որոգայթներ ուներ։ Նա և՛ զարմանալի քմահաճություններ ուներ։ Անհիշելի ժամանակներից համառությամբ կռվում էր յուր անհավասար եզերքի հետ և, կարծես, զզվում էր այն նեղ շավղից, որ գծել էր նրա ընթացքի համար նույնքան քմահաճ բնությունը։ Նա սիրում էր ընդարձակություն, սիրում էր ազատություն։ Նեղ շավիղը վրդովեցնում էր նրան։

Երբեմն լեռնային երկու զուգահեռական գոտիներ միաբանվում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մեջ։ Այդ միջոցին նրա կատաղությունը չափ չուներ։ Ահռելի հորձանքներով զարկվում էր յուր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մեջ այս ճակատագրական խոսքերը. «Նե՜ղ է... նե՜ղ է... խեղդվո՜ւմ եմ...»։

Երբեմն լեռնային գոտիների միաբանությունը խախտվում էր, բա-

ժանվում էին միմյանցից, հեռանում էին միմյանցից, և բաց էին անում նրա առջև-լայն, ընդարձակ տարածություն։ Այդ միջոցին նրա կամայականությունը չափ չուներ։ Ազատվելով յուր նեղ կիրճից, մի չար վհուկի նման, անխնա կերպով ողողում էր, հեղեղում էր յուր հարթ, կանաչազարդ ափերը,— և կամ, մի արբեցած հսկայի նման, երբեմն դեպի աջ էր թեքվում, երբեմն դեպի ահյակ էր խոտորվում, և երբեք ուղիղ ճանապարհով չէր գնում։

Նա յուր ազատությունը խելացի կերպով վայելել չգիտեր։ Հանկարծ վիթխարի թևերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով յուր զով գրկի մեջ, կղզիացնում էր նրան։ Եվ ժամանակ երևակայական սիրելությամբ՝ սկսում էր փայփայել և խնամել յուր խաղալիքը։ Կղզին աճում էր, կանաչազարդվում էր, աճում էին թուփերը և վառվում էին ծաղիկները։ Երկնքի թռչունը հյուսում էր այնտեղ յուր բույնը, վայրի անասունը սնուցանում էր այնտեղ յուր ձագուկներին։ Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զվարճանում էր նա և, պճնասեր երիտասարդի նման, զարդարում էր յուր հպարտ կուրծքը։ Բայց հանկարծ, կարծես, ձանձրանում էր նա, ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին և մի քանի րոպեի մեջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը, և նրա հետքն անգամ չէր երևում։

Հայոց գետերի թագավորը վարվում էր յուր հորինած կղզիների հետ նույն կերպով, որպես Հայոց երկրի թագավորը վարվում էր յուր մեջ կղզիացած նախարարությունների հետ։

Եվ, իրավ, Արաքսը ներկայացնում էր յուր աշխարհի քաղաքական դրությունը։ Երբ խորամանկ պարսիկը և նենգավոր հռոմեացին, երկու լեռնային գետերի նման, միաբանվելով ճնշում էին նրան, այդ միջոցին նրա ճիչն ու բողոքը սահման չուներ։ Յուր բոլոր կատաղությունը գործ էր դնում՝ ազատվելու նրանց ճնշումից։ Իսկ երբ երկու դաշնակիցները քանդում էին իրանց միաբանությունը, բաժանվում էին, և նա ազատություն էր գտնում,— այդ միջոցին սկսում էր զբաղվել ներքին երկպառակություններով։ Ամենայն անգթությամբ ոչնչացնում էր յուր մեջ ամփոփված նախարարությունները, որպես հրեշավոր Արաքսը լափում, կլանում էր յուր մեջ սեղմված կղզիները։

Այդ կղզիներից մեկի վրա պետք է լիներ այսօր որսորդությունը, որ կոչվում էր «Իշխանաց կղզի», և որի մեջ Սյունյաց իշխաններից մեկը բաց էր թողել վայրենի անասուններ, և այնտեղ ազատ կերպով աճել, բազմացել էին։

Արեգակը դեռ նոր էր ծագել, երբ ուղի ընկավ որսորդների ասպա-

խումբը։ Զով ու խաղաղ էր առավոտը։ Մինչև անգամ կարմրագույն քամին, որ երբեմն սովորություն ուներ փչել Արաքսի այդ կողմի ափերից, և բերելով յուր հետ նրա եզերքի վրա սփռված կարմրագույն ավազները, գիտեր հաճախ լցնել օդը մի ահռելի, բոսորագույն մառախուղով,— այդ բռնաբեր քամին անգամ այն առավոտ դադարել էր[1]։ Օրը պարզ էր և գեղեցիկ։

Ճանապարհը, մինչև Արաքսի եզրը հասնելը, պատած էր ճոխ, սիզավետ բուսականությամբ։ Կռիվներից առաջ արածում էին այնտեղ Նախճվանի տիրող իշխանական նժույգները։ Իսկ այժմ արածում էին պարսից բանակի գրաստները։ Տեղ-տեղ բարձրանում էին մերկ, սրածայր բլրակներ, որոնք իրանց հրաշալի գույնը պահպանել էին, կարծես, միմիայն նրա համար, որ ցույց տան անցորդներին, թե ի՛նչ անողորմ խաղեր էին խաղացել նրանց հետ վաղեմի ժամանակները։ Դարերի անձրևները ողողել էին այդ բլրակների հողային փափուկ մասը, և թողել էին նրանց կազմության կարծր, քարացած կմախքը միայն, որ ներկայացնում էր այլանդակ պատկերներ։ Ահա՛ այնտեղ երևում է ուղտերի մի ամբողջ քարավան։ Կորաքամակ, ծուռվիզ անասունները շարված են միմյանց ետևից և, գրեթե, կախված են օդի մեջ։ Ահա՛ մյուս կողմում՝ մի քանի աշտարակներ կարգով դրված են միմյանց վրա, բարձրանում են դեպի երկինքը։ Աշտարակների ամբողջ շարքը կանգնած է բարակ, մաշված պատվանդանի վրա, և մարդ կարծում է, եթե փչելու լինի, բոլորը ցած կթափվի։ Ահա՛ մի փոքր հեռավորության վրա՝ նկարված են օդի մեջ մարդկային սոսկալի ուրվագծեր, կարծես, քարացած հսկաների արձաններ լինեն։ Ահա՛ մի գալարված վիշապ, հրեշավոր գլուխը վեր է բարձրացրել, և ահարկու բերանը բաց արած, սպառնում է կլանել անցորդին։ Մի ժամանակ այդ կողմերում բնակեցրած էին Հայաստանի գերի բերված վիշապազունները[2]։ Այժմ մնացել էին նրանց միմիայն կմախքները միայն։

Մի կախարդված, քարացած աշխարհ էր այդ, որով ծանր ու հանդարտ կերպով ընթանում էր ուղևորների առաջախումբը։

Նրանք հասան Նախճվանի աղմկալի գետակին, որ աղաղակելով և յուր խճավետ հատակին զարկվելով, շտապով վազում էր և խառնվում Արաքսին։ Այդ կողմում բնությունը այլ տեսարան էր ներկայացնում։ Գետակի ամբողջ երկարությամբ աճել էին վարսավոր ուռիներ, կարճահասակ թթենիներ և զանազան վայրենի թփեր, որոնք միախառնվելով, հորինել էին մի կենդանի ցանկապատ, որ համարյա անանցնելի էր դարձնում ճանապարհը։

Այդ կողմում էին քաղաքացիների բազմաթիվ այգիները։ Կոխ-
ներից առաջ այդ հրաշալի այգիները իրանց գեղեցիկ մշակությամբ բո-
լորովին արդարացնում էին ամենահին ավանդությունը, թե հայ մարդը
ծանոթ էր այգեգործության հետ, սկսյալ այն օրից, երբ Նոյը Արարատ
լեռան ստորոտում տնկեց աշխարհի առաջին այգին[3]։ Գողթնյաց երկրի
ընտիր խաղողը ծանր, հյութալի ողկույզներով, վառվում էր հայոց
արևգակի կյանք և քաղցրություն ներշնչող ճառագայթների ներքո։ Այդ
խաղողն էր պարգևում այն ազնիվ նեկտարը, որ ոգևորում էր Գողթնյաց
երգիչներին[4]։ Իսկ այժմ տերևաթափ, որթատունկ եղած խաղողը, կար-
ծես թե, ճմլված և ջարդված լիներ մի սարսափելի կարկուտից։ Պարսից
զինվորի ոտքն էր կատարել այդ սարսափելի ավերածությունը։ Կոխ-
ներից առաջ կարմիր խնձորը, դեռահաս աղջկա կարմիր թշերի նման,
ժպտում էր, ծիծաղում էր, իսկ ծանրաբարո տանձը՝ յուր ծանրությամբ
դեպի ցած էր խոնարհեցրել ծառերի սաղարթախիտ ոստերը, որոնք
մի այնպիսի հաճոյական տպավորություն էին գործում, կարծես թե,
գլուխները ծռելով՝ ողջունում էին անցորդներին։ Այժմ նույնպես կոտրա-
ցած էին ոստերը, այժմ նույնպես դեպի ցած էին կախված թառամած
ճյուղերը։ Բայց դա պարսից անհագ զինվորի անողորմ ձեռքի գոր-
ծըն էր։ Կոխներից առաջ դեղնագույն դեղձը համեստությամբ թաքնվել
էր ծիրանի հսկա ծառերի ներքում, որոնք իրանց լայն, ստվերախիտ
հովանավորության ներքո էին առել նրանց։ Իսկ այժմ ծարավությունից
թոշնած ծիրանիները մերկացրել էին իրանց հարուստ կանաչազարդու-
թյունը, և մի այնպիսի նիհար տեսք էին ստացել, կարծես թե, աշնան
վերջը լիներ։ Չկար հոգատար այգեպանը, որ զովացներ նրանց ծարավը,
որ ազատեր նրանց վաղահաս վախճանից։

Այգիների միջից բարձրանում էին հնձանների կրկնահարկ շեն-
քերը։ Շատ անգամ հայոց այգիների հնձանները ապաստան են եղել
անմեղ հալածյալների։ Հռիփսիմյան կույսերի խումբը երկար պատս-
պարված էին Վաղարշապատի այգիների հնձաններում[5]։ Խաղաղության
ժամանակներում այդ հնձանների վերին հարկում, սկսյալ գարնան սկըզ-
բից՝ մինչև ձմեռնամուտը, բնակվում էին այգետեր ընտանիքները։
Նրանք խնամք էին տանում այգիներին, հավաքում էին պտուղները և,
միևնույն ժամանակ, վայելում էին զվարճալի ծառաստանի մաքուր և
հովասուն օդը։ Այգիները մի տեսակ ամարանոցներ էին նրանց հա-
մար։ Իսկ այժմ ոչ ոք չէր երևում։ Հնձանները մնացել էին դատարկ և
այգիները անխնամ։ Պատերազմների արհավիրքը ցրվել էր բոլորին։ Ոմանք
փախան, ապաստանեցին Վայոց-ձորի մերձակա լեռներում, ոմանք գե-
րի ընկան թշնամու ձեռքը։

Թշնամին այժմ անցնում էր նույն այգիների միջով, որ ավերակ և ամայի էր դարձրել ինքը։ Այգիները բռնել էին բավական մեծ տարածություն։ Նրանք բաժանված էին միմյանցից կավեղեն ցած պատերով, որոնց ոլոր-մոլոր, ցանցատեսակ փողոցները հորինել էին մի մթին լաբյուրինթոս, ծածկված ծառերի ստախիտ ստվերի ներքո։ Երկար որսորդների ասպախումբը գնում էր նույն փողոցներով, բայց տակավին բավական ժամանակ էր հարկավոր, մինչև դուրս կգային։ Շատ անգամ հայոց այգիների այդ ահարկու լաբյուրինթոսը կլանել էր թշնամիների ահագին գունդեր[6]։ Բայց Գողթնյաց այգիների ամայի փողոցներից այժմ համարձակ անցնում էր թշնամին։

Սամվելը նայում էր շրջակայքի տխուր տեսարանների վրա, և նրա զգայուն սիրտը խոցվում էր անբուժելի վերքերով։ Բայց նրա հայրը ուրախ էր, ոչինչ չէր զգում և միայն ոգևորված էր այն խորին բավականությամբ, որ մի քանի ծանր տարիների անջատումից հետո առաջին անգամ բախտ ուներ սիրելի որդու հետ մասնակից լինել մի հանդիսավոր որսորդության։

Նրանք դուրս եկան այգիների մթին, ոլորապտույտ նրբանցքներից, և նրանց առջև բացվեցավ մշակված անդաստանների ընդարձակ տարածություն։ Մի քանի շաբաթ առաջ այդ անդաստանները ներկայացնում էին մի սքանչելի ոսկեղեն ծով, ուր ցորյանի հասունացած արտերը՝ իրանց լիառատ բեղմնավորությամբ՝ ցնծում էին երկրագործի սիրտը անսահման օրհնությամբ։ Իսկ այժմ անքաղ և անխնամ մնալով, արևի կիզող ճառագայթներից չորացել, այրվել էին, և ցամաքած հասկերը ցած էին թափվել անգութ քամուց, որպես մի մեծ կոտորածից։ Կորյակի, կռավահատի դեռ կանաչ, չհասունացած արտերը, անջուր մնալով, ծարավությունից թառամել, թարշամել էին և կպել գետնին։ Չկար արթուն մշակը, չկար հողատար խնամողը։ Երևում էր միայն արտորայքի սիրահարը՝ ողբաձայն արտուտը, որ օդի մեջ անդադար ճախրում էր միևնույն կետի վրա և փոքրիկ թևիկները թափահարելով, սարսափած կերպով նայում էր դեպի ոչնչացրած հունձը, և որպես մի սգավոր ոգի, երբեմն դեպի ցած էր նետվում, հառաչանքներ էր արձակում, երբեմն դեպի վեր էր սլանում, և դարձյալ օդի մեջ միևնույն կետի վրա ճախրելով, շարունակում էր յուր տխուր, ողբալի երգը։ Երևում էին և թըշնամու ջորիների խումբերը, որոնք անպատիժ կերպով ցրիվ էին տալիս հնձած դարիի խուրձերը, և ավելի ոտնակոխ էին անում, քան թե ուտում էին։

Նրանք անցան անդաստանները, անցան մի քանի ավերակ արվարձանների և գյուղերի մոտից։ Այժմ սկսվեցան Արաքսի մերձակայքի

կանաչազարդ տափարակները, որ վերջանում էին խիտ մացառներով ու վայրենի ծառաստանով, երբ ավելի մոտենում էին գետի ափերին։ Տեղ-տեղ ջուրը լճացել էր, տեղ-տեղ գոյացել էին ճահիճներ։ Ջրանների ամբարտակներից մի այնպիսի խուլ տրոփյուն էր լսվում, կարծես թե, գետի տակը դատարկ լիներ։ Երբեմն այնպես էր թվում, որ առաձգական գետինը կամ բարձրանում և կամ ցած էր իջնում ձիաների ծանրության ներքո։ Այդ տեղերում թաքնված էին Արաքսի մթին որոգայթները և նրա ստորերկրյա սոսկալի անդունդները, որ լցված էին բոլորովին թանձր և սև հեղուկով, որի երեսը, սերի նման պնդանալով, կազմել էր այն խաբուսիկ, վտանգավոր ծածկոցը, որի վրայով գնում էին նրանք։ Այդ անհատակ անդունդները սովորություն ունեին՝ երբեմն բաց անել իրանց ահարկու բերանը և, տարտարոսի նման, կլանել անցորդներին։ Այդ տեսակ անդունդներից մեկի մեջ, յուր ձիու հետ կորավ հայոց Արտավազդ թագավորը, երբ նա որսորդություն էր անում Արաքսի ափերի մոտ[7]։

Արևը բավական բարձրացել էր, և առավոտյան պաղ օդը հետզհետե լցվում էր խիստ անտանելի ջերմությամբ։ Որսորդների ասպախումբը դեռ շարունակում էր հանդարտ և ուրախ ընթացքով առաջ գնալ։

Սամվելը նստած էր մի գեղեցիկ, ոսկեգույն նժույգի վրա, որ այն առավոտ ընծա էր ստացել յուր հորից։ Նրա ետևից գնում էր պատանի Յուսիկը, որ զինակրի պաշտոն էր կատարում։ Նա կրում էր յուր իշխանի երկար նիզակը, լայնալիճ աղեղը, նետերով լի կապարճը և մի երկար, կաշվյա բարակ ճոպան, որ փաթաթած կախ էր ավել յուր ձիու թամբից։ Իսկ ինքը Սամվելը կրում էր մի սուր միայն և մի արծաթյա փոքրիկ փող, որ քարշ էր ընկած նրա ոսկյա կամարից։

Ծերունի Արբակը, կարծես, բոլորովին մանկացել էր։ Նա գտնվում էր կատարյալ զինավառության մեջ։ Նա առաջ էր ընկած, և նրա ետևից գալիս էին Սամվելի քառասուն զինված ծառաները։ Նրանցից ոմանք ձեռքերի վրա կրում էին որսորդական բազեներ, ոմանք բռնած ունեին անհանգիստ բարակների թոկերի ծայրից, որ կապած էին նրանց երկար պարանոցներին։ Ազատ էին թողած միայն փոքրիկ, սրամռութ սկունդներին և ահագին թավամազ գամփռներին, որոնց որսորդների լեզվով կոչում էին «գայլ խեղդողներ»։ Այս բոլոր պատրաստությունը Սամվելին ընծայել էր հայրը։

Որսորդական հուշարարները, դեռ արևը չծագած, վաղ-առավոտյան գնացել էին դիտելու, հետազոտելու բոլոր վայրերը, որ տեսնեն, թե ո՛րտեղ ի՛նչ էրեներ կան։

Սամվելին ուղեկցում էր հայրը, շրջապատած յուր թիկնապահներով։ Իսկ փոքր-ինչ հեռու, յուր հայտնի սպիտակ նժույգի վրա նստած,

գնում էր Միրուժանը, յուր առանձին խմբով։ Նրանց հետ էր և պարսից Կարեն զորավարը՝ յուր մի քանի սպաներով։ Ուղղությունը չմասնակցեց միայն Հայր-Մարդպետը։

Առջևից գնում էին մի խումբ պարսիկ տղաներ, որոնց թվումն էր և պատանի Արտավազդը։ Այդ մանկահասակ որսորդները՝ իրանց շքեղ զինավառությամբ՝ գրավել էին ամենքի հիացքը։ Բայց բոլորի մեջ ավելի փայլում էր, ավելի աչքի էր ընկնում պատանի Արտավազդը։ Ոգևից մանուկի ուրախությունը չափ չուներ։ Յուր աշխույժ նժույգի հետ ներկայացնում էր նա մի մարմնացած զվարճություն։ Ձախ կողմից կապած ուներ ուսին՝ նետերով լի արծաթյա կապարճը, իսկ աջ կողմից՝ ձգած ուներ լայնալիճ աղեղը, որ նրա համար բավական մեծ էր։ Ձեռքում կրում էր մի թեթև նիզակ, իսկ գոտիից քարշ էր ընկած երկաթյի սուրը՝ արծաթապատ պատյանով։

Սամվելը ընկղմված էր լուռ մտախոհությունների մեջ։ Երբեմն միայն հարևանցի կերպով նայում էր յուր շուրջը, նայում էր դեպի հեռուն, շատ հեռուն և, կարծես, աշխատում էր միանգամից ծանոթանալ բոլոր տեղորայքի հետ։ Նրա վշտահար դեմքը, որպես միշտ, չէր ցույց տալիս ոչ մի բավականություն, թեև կցանկանար գոնե փոքր-ինչ ուրախ ձևանալ։ Իսկ յուր տխրության մեջ անգամ սքանչելի էր նա։ Ուրախ էր միայն նրա ամեհի նժույգը, որ անդադար ստոստում էր և ահագին թռիչքներ էր գործում։ Բայց նա վարժ ձեռքով այնպես հեշտությամբ դարձնում էր խառնրախ երիվարի սանձը, կարծես, մի հեզ գառնուկ լիներ։ Հայրը նայում էր նրա վրա և հիանում էր։ Նա սաստիկ փափագում էր, որ որդին բաժանվեր խմբից և մի թեթև ձիախաղ կատարեր այն հարթ տափարակի վրա, որ կանաչ ճավիշի նման տարածված էր նրանց առջև։ Նա մինչև անգամ ակնարկեց որդուն, բայց Սամվելը հրաժարվեցավ, ասելով.

— Անհարմար է, հայր, որովհետև այդ գեղեցիկ նժույգը, որ այսօր ընծայեցիր ինձ, տակավին վարժված չէ իմ ձեռքին, և ոչ ես ծանոթ եմ նրա բնավորության հետ։ Կարող ենք չհասկանալ միմյանց։

— Ոչ. ընդհակառակն,— պատասխանեց հայրը ժպտալով,— նա որքան դյուրագրգիռ է, որքան համառ է, այնքան և խելացի է։ Նրան կարելի է մտքի նման դեպի ամեն կողմ շուռ տալ։ Դա Շապուհ Արքայից Արքայի ախոռատան ամենաընտիր նժույգներիցն է, որ ընծա էր ստացել Համավերանի[8] իշխանից։ Երբ վերջին անգամ ներկայացա Արքայից Արքային իմ խոնարհ հրաժեշտը տալու, նա պարգևեց ինձ այդ նժույգը, ասելով. «Գնա՛, Մամիկոնյան տե՛ր, պայծառ Արամազդի օգնությանն եմ հանձնում քեզ, գնա՛, և այդ նժույգով կատարիր քո ար-

շավանքը Հայաստանում, նա անպատճառ բարերար ու բարեհաջող ազդեցություն կունենա քո ձեռնարկությունների վրա»։

Վերջին խոսքերի միջոցին՝ հայրը ձեռքը մեկնեց դեպի Սամվելի նժույգի ճակատը, հարցնելով.

— Դու դեռ չե՞ս նկատել այդ սպիտակ աստղը նրա ճակատին։— Նա ցույց տվեց բոլորակ խալը, որ, ճերմակ աստղի նման, բնությունը նկարել էր նժույգի ճակատի մեջտեղում։

— Առաջին անգամն եմ տեսնում,— ասաց Սամվելը։

— Դա հաջողության նշան է՛,— կրկնեց հայրը։

— Զգիտեմ՝ որքան այդ աստղը կառաջնորդե ինձ դեպի հաջողություն...— ասաց Սամվելը երկդիմի ժպիտով։— Բայց, կարծեմ, մենք ճահիճների մոտով ենք գնում։ Այդ կողմերում թաղթաղուկ տեղեր շատ կան։ Կարող է պատահել, որ Շապուհ արքայի ընծայած նժույգի աստղը յուր նշանակությունը կորցնե Արաքսի թաղթաղուկների մեջ...

— Կարող է պատահել,— ասաց հայրը, թաքցնելով յուր տհաճությունը, որ պատճառեց նրան որդու կծու և հեգնական ակնարկությունը։— Բայց մենք թաղթաղուկներից անցանք արդեն։

Հոր և որդու խոսակցության միջոցին մոտեցավ պատանի Արտավազդը։

— Ես թաղթաղուկներից չեմ վախենում,— ասաց նա ուրախ դեմքով։— Իմ ձին, թեև հաջողության աստղ չունի, բայց անդունդների վրայից անգամ կարող է թռչել։ Սամվելը իզուր նազ է անում։ Նա գիտե միշտ այսպես թանկ ծախել յուր շնորհքը։ Տեսեք, ես ինչպե՞ս եմ խաղացնում իմ ձիուն։

Առանց սպասելու, որ խնդրեն նրան, պատանին, յուր ձիու սանձը սաստիկ քաշելով, սկսեց մտրակել և զայրացնել նրան, որ ավելի գըրգըռե։ Ձին տաքացավ, բորբոքվեցավ, սկսեց սաստիկ ոստյուններ գործել։ Նրա ահագին խխլըները նայողի վրա սարսափ էին ազդում։ Ամեն վայրկյան կարելի էր սպասել, որ զայրացած նժույգը յուր հանդուգն հեծյալին դեպի ցած կնետե։ Բայց պատանին նրա հետ ամուր կերպով ձուլված էր, կարծես, նրա անդամներից մեկը լիներ։ Նա այնքան ազատ և համարձակ էր պահում իրան, որ անկարելի էր երևակայել այն աստիճան ինքնավստահություն։

Երբ ձին բոլորովին բորբոքվեցավ, պատանին սկսեց վտանգավոր ճարպիկ շրջաններ գծել տափարակի վրա։ Ձին յուր բոլոր թափով պտույտվում էր, իսկ ինքը, միևնույն ժամանակ, զարմանալի արագությամբ անցնում էր նրա պարանոցով և կրկին նստում թամբի վրա։ Այդ միջոցին նա մի արագաշարժ ճախարակ էր, որ հոլովվում էր յուր

տոմսեցքի շուրջը։ Նրան հետևեցին մի քանի պարսիկ պատանիներ, որոնց ճարպկությունները ևս ոչ սակավ հետաքրքիր էին։ Բայց ամենքը նսեմացան պատանի Արտավազդի գործողությունների առջև, մանավանդ երբ սկսեց նա յուր անհնարին նիզակախաղը կատարել։ Ձիու արշավ փախուստի միջոցին՝ նետում էր նիզակը, և ամեն անգամ նիզակը շեշտակի կերպով ցցված էր մնում նշանակած կետի վրա, առանց յուր նպատակից վրիպելու։ Նա իսկույն կայծակի նման հասնում էր, խլում էր նիզակը և կրկին նետում էր։ Իսկ երբ պատահում էր, որ նիզակը յուր ծայրի վրա ցցված չէր մնում, այլ վայր էր ընկնում, այդ դեպքում, նա առանց մի բոպե կորցնելու, շուտով վրա էր հասնում, և, առանց ոտները ասպանդակներից հանելու, թամբի միջից թեքվում էր և բարձրացնում էր ընկած նիզակը։

Երբեմն հետամուտ էր լինում յուր հետ մրցող պարսիկ պատանիներին, որոնք այնպես էին ձևացնում, իբր թե փախչում են նրանից։ Այդ միջոցին մանկահասակ հերոսը, կարծես թե, աճում էր, մեծանում էր նայողի աչքում և ահարկու կերպարանք էր ստանում։ Արծվի արագությամբ վրա էր հասնում, և նրա ախոյաններին խիստ սակավ անգամ էր հաջողվում՝ իրանց վահաններով ետ նահանջել նրա նիզակի զարկը, թեև վնասելու նպատակով չէր հարվածում։ Իսկ երբ ինքն էր փախուստ տալիս, ախոյանները նրա ձիու բարձրացրած փոշուն անգամ չէին հասնում[10]։

Մի քանի այլ զինամարզություններ ևս կատարվեցան, մինչև ամեն կողմից լսվեցան հավանության բազմաձայն աղաղակներ. «Շա՜տ ապրի Արտավազդը, շա՜տ ապրի Արտավազդը...»։ Պատանին քրտնած, կարմրած, մոտեցավ խմբին։ Նրա վառվռուն աչքերը՝ ուժերի սաստիկ լարվելուց՝ փայլում էին մանկական ոգևորության բոլոր կյանքով։

— Դու քո զարմանալի ճարպկություններով նսեմացրիր մեր պատանիներին, Արտավազդ,— նկատեց պարսից Կարեն զորապետը։— Ասպարեզի փառքը քեզ է պատկանում։

Արտավազդը, որ երբեմն ցուցամոլի անմեղ պարծենկոտություն ուներ, այս անգամ ինքն ևս հասկանալով յուր գերազանցությունը, համեստությամբ պատասխանեց.

— Ո՛չ, տեր զորապետ, ձեր պատանիները, երևի, խնայեցին ինձ, որովհետև ես մի նոր հյուր էի նրանց խմբի մեջ։

— Ընդհակառակն, նրանք խիստ անխնա կերպով էին մաքառում քեզ հետ, բայց դու, հրաշալի քաջությամբ պաշտպանվում էիր։ Այժմյանից քո համբավի վրա փայլում է ապագա հերոսի աստղը։

— Ինչպես Սամվելի նժույգի ճակատի վրա,— ծիծաղելով ավելացրեց զվարճախոս պատանին։

— Կատակը մի կողմ,— նկատեց Մերուժանը մի առանձին նախագուշակությամբ։— Դու մի բան կգտնես, և անպատճառ՝ լավ բան։

Բավական ժամանակ պատանին խոսակցության առարկա էր դարձել, մինչև հասան Արաքսի ափերին։ Այդ կողմերում Արաքսի ափերը ծածկված էին փափուկ, կարմրագույն ավազով։ Նույն պարարտ փափկության վրա աճել էին զանազան թփեր և թավախիտ մացառներ, որ կանաչ ժապավենի նման զարդարում էին նրա գեղեցիկ եզերքը։ Ջուրը նույնպես կարմիր գույն էր ստացել։ Գետը, անցնելով կարմրագույն լեռների միջով և յուր ընթացքում քերելով նրանց կուրծքը, ստացել էր և նրանց գույնը[11]։

Այդ կողմերում Արաքսի խաղաղ և լուռ ընթացքը այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե, ջուրը կանգնած լիներ։ Գետի մեջտեղում, գեղեցիկ օազիսի նման, երևում էր «Իշխանաց կղզին», որի վրա պետք է կատարվեր այնօրվա որսորդությունը։

Կղզին գետի ձախ կողմից ավելի մոտ էր ցամաքին, որից բաժանված էր բավական անձուկ նեղուցով։ Որսորդության ժամանակ դնում էին նեղուցի վրա տախտակյա շարժական կամուրջ և անցնում էին, իսկ մյուս ժամանակներում վեր էին առնում կամուրջը։ Այնօր դրած էր։ Նրա մի ծայրը՝ ցամաքի կողմից՝ հենված էր ամուր ապառաժի վրա, իսկ մյուս ծայրը՝ կղզու կողմից՝ դրած էր արհեստական թմբի վրա։ Կամուրջի տակից սրընթաց կերպով վազում էր ջուրը, որ բավական խորություն ուներ։ Կամուրջը այնքան նեղ էր և երկար, որ ամեն անգամ մի ձիավոր միայն կարող էր անցնել։ Այդ էր պատճառը, որ բավական ժամանակ տևեց, մինչև ամենքը անցան։

Դեռ վաղ-առավոտյան, կղզու մեջ, գեղեցիկ կանաչ տափարակի վրա, կազմել էին մի քանի վրաններ՝ որսորդների հանգստանալու համար։ Այնտեղ Մերուժանի խոհարարները կրակ էին վառել և նախաճաշիկի պատրաստություն էին տեսնում։ Ճաշը պետք է պատրաստվեր հետո, որսի մսից։

Երբ հասան վրաններին, ամենքը ձիերից ցած իջան, որ փոքր-ինչ հանգստանան, մի բան ուտեն և ապա սկսեն որսորդությունը։ Պատանի Արտավազդը չսպասեց մինչև նախաճաշիկը տային, իսկույն առեց մի կտոր հաց ու պանիր և, ձեռքում ուտելով, վազեց կղզու մեջ պտտելու։ Սամվելը մնաց հոր մոտ։ Ծերունի Արբակը՝ Սամվելի ծառաների հետ՝ նստեցին վրանների մոտ, խոտերի վրա։ Իսկ Մերուժանը պար-

սից Կարեն զորապետի ձեռքից բռնած ճեմում էին վրանների առջևում և ինչ-որ հարցի մասին ջերմ կերպով խոսում էին։

Կղզին բավական ընդարձակ էր և ձվաձև։ Գետի ընթացքի երկարությամբ՝ սեղմվել էր նրա երկու բաժանված ճյուղերի մեջ։ Այնտեղ բնակություններ չկային։ Երևում էին մի քանի փոքրիկ տաղավարներ միայն, որ այժմ դատարկ էին, և որոց մեջ բնակվում էին առաջ կղզու պահապանները։

Գեղեցի՜կ էր կախարդական կղզին՝ յուր վայրենի չքնաղության մեջ։ Որքա՜ն սեր, որքա՜ն արտասուք թափվել էր այնտեղ։ Գալիս էր երբեմն Սյունյաց իշխանը, յուր հետ բերելով յուր հարճերի և յուր նվագածուների բազմությունը։ Նվագարանները հնչում էին, հարճերը պարում էին[12], գինին ըմպվում էր արծաթյա մեծ գավաթներով, և ամբողջ գիշերներ լուսանում էին ուրախ, անհոգ, աղմկալի խրախության մեջ։ Արաքսի ամոթխած հավերժահարսունքն անգամ նախանձվում էին, տեսնելով, թե ո՛րպես անսպառ կերպով վայելել գիտե մարդը՝ կնոջ սերը և նրա գեղեցկությունը։

Այո՛, գեղեցի՜կ էր կախարդական կղզին։ Բարձր, ուղղաձիգ եղեգնաբույսերը, իրանց ճերմակ, փնջաձև կատարներով, ծածանվում էին զեփյուռի մեղմ շունչից, արձակելով մի խորհրդավոր սոսափյուն, որ նման էր սիրաբորբոք հեշտախտության։ Ուշիմ եղջերուն, երկար ու ճապուկ պարանոցը մեկնած, մի առանձին ախորժակով քաղում էր եղեգների թարմ տերևները։ Նա իսկույն անհայտացավ, երբ լսեց կասկածավոր այցելուների ոտնաձայնը։ Իսկ այնտեղ, շամբուտների խոնավ մթության մեջ, թավալվում էր ամեհի վարազը և յուր սառն, տղմային անկողնում զովարար արհամարհում էր արևի կիզող ճառագայթների ներգործությունը։ Երկչոտ նապաստակը, երբեմն կանգ առնելով, երբեմն յուր շուրջը նայելով, շտապով վազվզում էր խոտերի մետաքսային փափկության միջով։ Իսկ վրդովված այծյամը մամռապատ ժայռի գլխից դեռ շփոթված կերպով դիտում էր, ստուգելու, արդյոք ո՞վքեր են նորեկ հյուրերը։

Հարուստ բուսականությունը՝ հիացման չափ ճոխ էր և շռայլ։ Թարմ, հյութալի կանաչազարդության միջից իրանց փայլուն գլխիկներով վառվում էին ջրածաղկի զանազան տեսակները, որոնք ուրիշ տեղերում՝ միայն ճահիճների պչրանքն են ներկայացնում։ Տեղ-տեղ բարակ ծղոտներով և երկար, թրաձև տերևներով՝ բարձրացել էր վայրենի շուշանը, որ յուր նուրբ անուշհոտությամբ լցրել էր օդը խիստ ախորժելի բուրմունքով։ Տեղ-տեղ քյաֆուր վարդը բաց էր արել յուր շքեղ ծաղիկը։

որ ժպտում էր թովմիշյա ծիրանեգույն թերթիկներով։ Զանազան կողմերում՝ թուփերը, մացառները այն աստիճան աճել էին, որ մի փոքր հեռավորության վրա՝ մարդ յուր ընկերին տեսնել չէր կարողանում։ Ձիաներով անհնար էր շրջել այնտեղ, որովհետև ամեն քայլում մացառների խիտ հյուսվածքը ծածկում էր հազիվ նշմարվող շավիղները։ Ավելի հեշտ էր ոտով։

Երբ վերջացրին նախաճաշիկը, յուրաքանչյուրը առեց յուր զենքերը, և պատրաստվեցան սկսելու որսորդությունը։ Արթուն հուշարարները՝ խուզարկու շների հետ՝ վաղուց արդեն ներս էին մտել մացառների մեջ և սուրալով խարխափում էին, որ դուրս վանեն անասուններին։

Երբ ճանապարհ ընկան, որսորդները բաժանվեցան մի քանի փոքրիկ խմբերի և տարածվեցան դեպի կղզու զանազան կողմերը։ Պատանի Արտավազդը միացավ Մերուժանի խմբի հետ, իսկ Սամվելը յուր հոր խմբի հետ։ Վերջինների թվումն էր և պարսից Կարեն զորապետը։ Ծերունի Արբակը, Սամվելի ծառաների հետ, հետևում էր նրան։ Պարսից մնացյալ սպաները առանձին խմբեր կազմեցին և բաժանվեցան մյուսներից։

Սամվելը երկար, հաստատուն նիզակը ձեռին, լուռ առաջ էր գնում։ Նրա մուգ դեմքը սովորաբար պղնձի գույն էր ստանում, երբ ընկղմվում էր հոգեկան սաստիկ ալեկոծության մեջ։ Այդպես էր այժմ նրա դեմքը։ Այդպես լինում էր նա կռվի ջերմ փոթորիկի ժամանակ, այդպես լինում էր նա և որսորդության զվարճալի հրապույրների ժամանակ։ Բայց դրանցից և ոչ մեկը չէր, որ նույն րոպեներում բորբոքում էր, վրդովեցնում էր երիտասարդական սիրտը։ Նրան խռովության մեջ էին դրել բոլորովին այլ մտատանջություններ...

— Սամվե՛լ,— նկատեց նրան հայրը մի այնպիսի ձայնով, որի մեջ լսվում էր ծնողական սրտի բոլոր գութը, բոլոր ջերմությունը,— զգուշացի՛ր, երբ վարազների կհանդիպես։ Այստեղի վարազները սաստիկ կատաղի են։

— Կցանկանայի, հայր, վագրների հանդիպել, առյուծների հանդիպել,— պատասխանեց Սամվելը թախծալի ձայնով։— Բայց, ափսո՜ս, որ այստեղ ոչ վագրներ կպատահեն և ոչ առյուծներ։ Կցանկանայի գոնե Արաքսի ոսկալի նհանգներից[13] մեկը՝ հրեշավոր գլուխը ջրերից վեր բարձրացներ և յուր բոլոր կատաղությամբ հարձակվեր իմ վրա...

Սամվելը պարծենկոտ չէր։ Այդ գիտեր հայրը։ Ուրեմն ի՞նչը առիթ տվեց նրան այդ տեսակ ցնորքների մեջ ընկնելու։ Նախաճաշիկի ժամանակ նա շատ փոքր խմեց։ Այդ տեսավ հայրը։ Ուրեմն գինին էլ չէր

կարող գրգռել նրա երևակայությունը։ Այսուամենայնիվ, Հայրը հարցրեց.

— Երևի նրա համար են այդ գեղեցիկ ցանկությունները, Սամվել, որ ցույց տաս քո քաջությունը։ Բայց քո քաջությունը, անտարակույս, այս տեսակ ապացույցների կարոտ չէ։

— Ոչ, հայր, դրա համար չէ։ Ես հեռու եմ ամեն փառասիրությունից։ Միայն կցանկանայի կռվել... ի մա՜հ կռվել...

Հայրը սկսեց տխրել։ «Նա ցանկանում է մահվան համար կռվել...»։ «Ի՞նչը ձանձրացրել էր սիրելի որդու լուսապայծառ, ծաղկափթիթ կյանքը...»։ Այս մտքերը սկսեցին սարսափեցնել նրան։

Հոր և որդու խոսակցությունը ընդհատեց հուշարարներից մեկի փողի ձայնը։ Սամվելը վազեց դեպի այն կողմը, որտեղից լսվեցավ ձայնը։ Նրան հետևեցին պատանի Հուսիկը, որ զինակրի պաշտոն էր կատարում, և յուր ծառաներից մի քանիսը։

Հայտնվողը Սամվելի փափագած որսերից և ոչ մեկը չէր։ Ուռենիների թավուտներից դուրս հարձակվեցավ մի ահագին եղջերու, ծանր, բազմաճյուղ եղջյուրներով։ Անփույթ կերպով նայեց յուր շուրջը և, եղջյուրները դեպի քամակը դարձնելով, փորձում էր փախչել, բայց իսկույն շները շրջապատեցին նրան։ Նրանցից ոչ մեկը չէր համարձակվում մոտենալ։ Սուր եղջյուրները ոչ միայն վահանի գործ էին կատարում, այլև աշտեի։ Դեպի ո՛ր կողմը և դառնում էր նա, շները խմբով փախչում էին նրա առջևից։ Սամվելը վրա հասավ։ Եղջերուն կատաղի կերպով հարձակում գործեց և անշուշտ սուր եղջյուրներով կթափեր յուր համարձակ ախոյանի փորը, եթե երիտասարդի նիզակը ճշտակի կերպով չմխվեր նրա աջ ուսի մեջ։ Նիզակը խոցեց միայն, բայց մահվան չափ ազդել չկարողացավ։ Շները դարձյալ շրջապատեցին նրան։ Սամվելը կրկնեց նիզակի զարկը։ Այս անգամ դիպավ ազդրին։ Եղջերուն, ոչ թե ստացած հարվածների երկյուղից, այլ ավելի խրտնելով անակնկալ դեպքից, պատառեց շների շղթան և սկսեց փախչել։ Ծառաներից ոչ մեկը չկարողացավ նրա առաջը առնել։ Սամվելը հետամուտ եղավ։ Զարմանալի էր սրարշավ անասնի փախուստը։ Բայց նրանից ոչ սակավ արագավազ էր և Սամվելը։ Վազելու սովորած էր նա սկսյալ մանկությունից, որ նրա կրթության գլխավոր հրահանգներից մեկն էր եղած[14]։ Հայրը, յուր ուղեկիցների հետ կանգնած, անհամբերությամբ նայում էր, որ տեսնե, թե ինչպես կվերջացնե որդին յուր որսի հետ։ Այդ միջոցին եղջերուի երկար, ճապուկ ոտները հազիվհազ դիպչում էին գետնին, և յուր վազելու սաստկության ժամանակ՝ ահագին թռիչքներ էր գործում։ Սամվելը ետևից անդադար նետեր էր արձակում։ Նե-

տերը թեև դիպչում էին, բայց փետուրյա գնդիկների նման, ցցված մնում էին նրա մարմնի վրա։ Վիրավոր անասունը շարունակում էր փախչել, յուր շավղի վրա թողնելով հոսող արյան կարմիր հետքերը։ Ոչ սակավ զայրացած էին Սամվելի ծառաները։ Նրանք շների հետ վազեցին դեպի զանազան կողմեր, և ամեն կողմից կտրելով համառ անասունի ճանապարհը, աշխատում էին պահել նրա առաջը, որպեսզի, մինչև հասներ կղզու ափին, և նետվելով գետի մեջ, լողալով, անցներ մյուս կողմը։ Սամվելի ետևից վազում էր միայն նրա զինակիրը՝ պատանի Հուսիկը։

— Տո՛ւր ինձ արկանը[15],— դարձավ նա դեպի պատանին,— եթե ոչ, այդ անիրավը բոլորովին կհոգնեցնե ինձ։

Պատանին տվեց նրան կաշվյա երկար պարանը։ Սամվելը արկանի մի ծայրը փաթաթեց ձախ ձեռին, իսկ մնացած մասը, կաժի ձևով հավաքելով աջ ձեռքում, յուր որսի սաստիկ փախչելու միջոցին՝ ձգեց դեպի նրա գլուխը։ Արկանը փաթաթվեցավ բազմաճյուղ եղջյուրներին և անցավ նրա պարանոցով։ Այժմ ուժ էր հարկավոր պահելու կատաղի անասունին, եթե ոչ, նա յուր ետևից քարշ կտար հանդուգն արկանորսին։ Բայց Սամվելի բազուկների մեջ նրան զսպելու չափ զորություն կար։ Նա յուր արկանով այնպես կաշկանդեց ուժեղ անասունին, որպես ճանճը կաշկանդվում է սարդի ոստայնի մեջ։ Այդ միջոցին վրա հասավ պատանի Հուսիկը և, նիզակը ուղղելով, կամենում էր խրել նրա կողքի մեջ։ Սամվելը արգելեց, ասելով.

— Թո՛ղ տո՛ւր, ես դրան պետք է կենդանի տանեմ հորս մոտ։

Հայրը տեսավ և նրա սիրտը լցվեցավ անսպառ ուրախությամբ։ Նրա մոտ կանգնած էր պարսից Կարեն զորապետը։

— Ինչպե՞ս երևաց քեզ,— դարձավ նա դեպի զորապետը։

— Սքանչելի՜ է, պայծառ Արամազդը վկա, սքանչելի՜ է,— բացականչեց ապշած պարսիկը։— Գիտե՞ս, իշխան, եղջերուի որսը ավելի դժվար է, քան թե առյուծի կամ վագրի որսը, որովհետև, եղջերուն արագավազ ոտներ ունի և փախչում է, բայց առյուծը կամ վագրը ամոթ են համարում փախչելը, նրանք կռվում են։ Իսկ կռվողի հետ հեշտ է կռվել, կամ հաղթել, կամ հաղթվել։

Սամվելը, յուր որսը ետևից քարշ տալով, մոտեցավ հորը։

— Ես իմ բաժինը վերջացրի,— ասաց նա քրտինքը սրբելով,— մեր ճաշի համար այժմ բավական խորովածացու միս ունենք։

— Մի՞թե չես կամենում շարունակել,— հարցրեց հայրը։

— Կցանկանայի մի փոքր հանգստանալ. այդ անիրավը բավական հոգնեցրեց ինձ։— Նա ձեռքը տարավ դեպի եղջերուն։

Ծառաները մոտեցան, տարան որսը։ Սամվելը հոր հետ դիմեց դեպի վրանների կողմը։ Հուսիկը չբաժանվեցավ յուր իշխանից։ Իսկ պարսից Կարենի զորապետը գնաց տեսնելու, թե ինչ են անում մյուս որսորդները։

Երբ հասան վրաններին, հայրը ցույց տվեց նրանցից մեկը ասելով.

— Մտնենք այդ վրանը, դա մեզ համար է պատրաստված։

— Ես կցանկանայի մի փոքր շրջագայել կղզին և հիանալ նրա գեղեցկությամբ,— պատասխանեց Սամվելը։— Այդ վրանները կատարելապես ձանձրացրին ինձ։ Պարզ երկինքը, մեսաքույս կանաչը և Արաքսի սքանչելի ափերը թողած, այժմ մինչև անգամ մեղք կլիներ փակվել վրանների մեջ։

Հայրը դարձյալ նկատեց որդու մեջ մելամաղձային դրություն։ Ի՞նչն էր անհանգստացնում նրան։ Այն օրվա բոլոր պատրաստությունները՝ միայն նրան զբաղեցնելու և միայն նրան զվարճացնելու համար էին։ Իսկ որդին, կարծես, խույս էր տալիս այդ բոլորից։ Նա որոնում էր առանձնություն, որոնում էր ամայի վայրերի խուլություն, որ յուր սրտի հետ խոսեր, որ յուր հոգու հետ խորհրդակցեր։ Հայրը չթողեց նրան միայնակ գնալ, թեև Սամվելը կցանկանար միայնակ լինել։ Հայրը բռնեց նրա ձեռքից, և երկուսը միասին սկսեցին ճեմելով դիմել դեպի կղզու այն կողմը, որ ավելի ազատ էր մացառներից։

Հեռվից լսելի էր լինում որսորդների փողերի ձայնը, լսելի էին լինում և խառնաձայն աղաղակներ։ Այդ միջոցին հայր և որդի հանդարտ քայլերով անցնում էին փափուկ խոտերի վրայով, որ, միախառնվելով գույնզգույն ծաղիկների հետ, նախշուն գորգի նման՝ սփռված էին նրանց առջև։ Երկար անխոս գնում էին նրանք, մինչև հասան կղզու ափին։ Այնտեղ մի խումբ վարսավոր ուռենիներ հրավիրեցին նրանց՝ իրանց ախորժելի ստվերի ներքո։ Հայր և որդի նստեցին միմյանց մոտ։ Գեղեցի՞կ էր փոքրիկ հովանոցը։ Այնտեղ ուռենիները իրանց անթափանցելի գրկում սնուցանում էին խիստ զվարթարար զովություն, չնայելով, որ արևգալի միջօրեական ճառագայթները արդեն սկսել էին այրել։

Հոր և որդու մեջ տիրում էր մի տեսակ բռնադատյալ լռություն։ Երկուսն էլ ցանկանում էին խոսել, բայց դժվարանում էին, թե ի՞նչ խոսեն, թեև շատ բան ունեին միմյանց ասելու։ Այդ առաջին անգամն էր, որ նրանք գտնվում էին միասին և այս տեսակ մեկուսացած առանձ-

նության մեջ։ Յուրաքանչյուրը ցանկանում էր բաց անել յուր սիրտը։ Հայրը փափագում էր մի առ մի բացատրել որդուն յուր բոլոր դիտավորությունները, թե ի՛նչ նպատակներ ունի նրա ապագայի մասին, կամ ո՛րպես մտածում է անօրինել նրա բախտավորությունը։ Բացի դրանից, կամենում էր բացատրել և յուր քաղաքական նպատակները, որ վերաբերում էին առհասարակ հայոց աշխարհի գործերին։ Իսկ որդին նոր բացատրությունների կարոտ չէր։ Նա գիտեր և վաղուց հասկացած էր բոլորը։ Նա միայն ցանկանում էր հայտնել հորը, թե ա՛յն ամենը, ինչ որ կատարել է նա և կամ ինչ որ տակավին կատարելու դիտավորություն ունի, անտարակույս, կտանեն հայրենի աշխարհը դեպի անդառնալի կորուստ, իսկ որդին չէր ցանկանա յուր հայրենիքի ավերակների մեջ գտնել յուր փառքը։

Մինչ հայր և որդի սույն հոգետանջ լռության մեջ էին, որ ամեն վայրկյան պատրաստ էր պայթելու, պատանի Արտավազդը, կղզու մյուս կողմում հրաշքներ էր գործում։ Նրա շները դուրս էին վանել եղեգների միջից մի կատաղի վարազ, որ, ձյունի պես ճերմակ, սրածայր ժանիքները փայլեցնելով, ահարկու կոնչյունով հարձակվում էր այս կողմ ու այն կողմ, և ամեն անգամ շները խմբովին խույս էին տալիս նրանից, որպես մկները կատվից։

Այդ կողմում որսորդները ձիավորված էին, որովհետև ձիերի շարժման համար բավական արձակ էր տեղը։ Միայն կղզու ափերի մոտ աճել էին թավ շամբուտներ, որոնց միջից դուրս էին քշել վարազին։ Նա դարձյալ աշխատում էր նետվել դեպի յուր մթին դարանը, դեպի շամբուտները, բայց պարսիկ պատանիների երկար շղթան բռնել էր այդ կողմը, և ամեն անգամ, երբ մոտենում էր վարազը, նրանք նիզակներով ետ էին մղում։ Ասպարեզը թողել էին պատանի Արտավազդին, որ միայնակ պետք է մաքառեր վտանգավոր որսի հետ։

— Արտավազդ, հեռու կա՛ց, այդպես չէ կարելի,— ձայն տվեց Մերուժանը, որ մի առանձին հետաքրքրությամբ դիտում էր պատանու կռիվը կատաղի անասունի հետ։

— Դա ի՞նչ բան է,— պատասխանեց նա յուր սովորական պարծենկոտությամբ,— ես մի անգամ Բզնունյաց[16] անտառներում մի ամեհի արջ սպանեցի։

Մերուժանը հավատաց, բայց, այնուամենայնիվ, հրամայեց պարսիկ պատանիներին, որ օգնեն նրան։

— Ո՛չ, աղաչում եմ,— խնդրում էր նա սաստիկ բաղձանքով,— հրամայիր, որ թույլ տան՝ ես միայնակ վերջացնեմ իմ որսի հետ։ Դա իմն է, դրան ես եմ գտել շամբերի միջից։

Մերուժանը հրամայեց չմիջամտել։ Պատանին դարձավ դեպի ծերունի Արբակը, խնդրելով.

— Տո՛ւր ինձ քո ձին, սիրելի Արբակ, իմը խրտնում է, վստահությամբ չի մոտենում։ Իսկ քո պառավ ձին քեզ նման ծեր է և փորձառու, այդ պատճառով խրտնելու թուլություն չունի։

Ծերունին ցած իջավ ձիուց, մրթմրթալով.

— Քո լեզուն եթե չլիներ, գլուխդ ագռավները կտանեին։

Պատանին ուշադրություն չդարձրեց Արբակի կծու հեգնությանը, մի ակնթարթում թռավ նրա ձիու վրա, իսկ յուր ձին տվեց նրան։ Այդ միջոցին վարազը, երկաթյա վանդակի մեջ ընկած գազանի նման, կռնչալով, լայն ականջները թափ տալով, վազվզում էր, որ մի ելք գտնե փախչելու, բայց ամեն կողմից հանդիպում էր պարսիկ պատանիների սաստիկ ընդդիմադրությանը։ Արտավազդը միայնակ հետամուտ էր լինում։ Իսկ նա, որպես մի խուլ ահավորություն, երբեմն ետ էր դառնում, և յուր բութ, մի զույգ սպիտակ ժանիքներով զինված կրնճիթը ուղղելով դեպի նրա ձին, հարձակում էր գործում, բայց Արտավազդը նիզակի սաստիկ հարվածներով գանակոծում էր նրան։ Նա բարկացավ, երբ նկատեց, որ հարվածները լավ չէին ներգործում, և ավելի զայրացավ, երբ լսեց, որ պարսիկ պատանիները արդեն սկսել էին ծիծաղել նրա վրա։

— Սիրելի Արբակ,— դարձավ նա դեպի ծերունին մի նոր խնդիրքով,— աղաչում եմ, շտապի՛ր, տո՛ւր ինձ քո նիզակը, իմը շատ թեթև է ու բարակ, վախենում եմ, որ կոտրվի։

— Կտամ, սիրելի Արտավազդ,— ասաց ծերունին, բարեսրտաբար խնդալով,— կտամ իմ նիզակը, բայց բազուկներս քեզ տալ չեմ կարող։

Մերուժանը բացատրեց ծերունու խուլ հեգնությունը.

— Արբակի ծանր նիզակը շարժելու համար՝ պետք է Արբակի ամուր բազուկները ունենալ, Արտավազդ։

— Ախար ես էլ փոքրիկ գառներից չեմ,— պատասխանեց Արտավազդը մի առանձին ինքնավստահությամբ նայելով Մերուժանի երեսին։

Պատանու պարծենկոտությունը այս անգամ խորին ուրախություն պատճառեց Արբակին, և նա մեծ հոժարությամբ փոխեց նրա հետ յուր նիզակը։

Նիզակը, արդարև, Արտավազդի համար բավական մեծ էր և ծանր, բայց նա այն տեսակ նիզակներ, մանավանդ ձիու վրա, գործածելու ճարտարությունից զուրկ չէր։ Նա միացրեց յուր դեռահաս բազուկների

ղորությունը յուր նժույգի չափազանց ուժի հետ։ Առանց ժամանակ կորցնելու, երկար նիզակի բունը առեց աջ թևի տակ, և նրա սրածայր սվինը դեպի ցած բռնելով, շտապեց ձիուն յուր բոլոր սաստկությամբ քշել դեպի վարազը։ Ամեհի նժույգի սրարշավ թափը բավական էր նիզակին այն աստիճան ուժգին զարկ տալու, որով մխրճվեցավ նա վարազի կողքի մեջ, և ծայրը մյուս կողմից դուրս եկավ։

— Այդպես հեշտ էր շամփրել գազանին,— ծիծաղելով ձայն տվին պարսիկ պատանիները,— բայց քո քաջությունը նիզակը դուրս քաշելումը պետք է տեսնենք։

Արտավազդը իսկույն ձիու գլուխը շուռ տվեց և ձին, իհարկե, դուրս քարշեց նիզակը, իսկ ահագին վարազը անշարժ մնաց գետնի վրա։

Ամեն կողմից լսվեցան հավանության աղաղակներ։ Արտավազդը թողեց որսը, որ իսկույն քարշ տվին ծառաները, իսկ ինքը մոտեցավ հանդիսատեսների խմբին։ Նրա պայծառ դեմքը փայլում էր ուրախությունից։ Նա կրկին վերադարձրեց ծերունի Արբակին թե նրա ձին և թե նիզակը, ականջին փսփսալով.

— Շնորհակալ եմ քո բարության համար, սիրելի Արբակ, եթե ոչ, այդ պարսիկ լակոտները ամոթով պիտի թողնեին ինձ։

Այսպես շարունակվում էր որսորդությունը, երբ Սամվելը հոր հետ դեռ նստած էին կղզու ափի մոտ։ Սամվելը լուռ նայում էր Արաքսի կարմրագույն հոսանքին, որ մեղմ ալիքներով զարկվում էր կղզու ավազոտ ափերին և նրա վրա կարմրագույն արյան տպավորություն էր գործում։ Հայրը պատմում էր նրան յուր նախամտածությունները և յուր դիտավորությունները, իհարկե, այն չափով միայն, որքան կարող էր հավատալ որդուն։ Պատմում էր, թե երբ «աստուծու հաջողությամբ» հայ և հրեա գերիներին կհասցնեն Տիզբոն, և երբ ինքը բախտ կունենա մյուս անգամ վայելելու Շապուհ արքայի ողորմածության շնորհը, այնուհետև պետք է Մերուժանի հետ կրկին վերադառնան Հայաստան։ Պատմում էր, թե այն ժամանակ ինքը, իբրև հայոց ընդհանուր սպարապետ, ի՛նչպես պետք է կազմակերպե յուր հրամանի ներքո գտնված հայկական զորքերը։ Պատմում էր և Մերուժանի դիտավորությունները, թե նա որպիսի՛ ձև պետք է տա յուր նոր հիմնած թագավորությանը Հայաստանում։ Խիստ դառնացած կերպով խոսում էր Արշակունիների «չարագործության» և «անքաղաքականության» մասին և, ոգևորվելով Մերուժանի կատարած գործերի հաջողություններով, արտահայտում էր յուր խորին ուրախությունը, որ, վերջապես, պիտի կարողանան ազատվել Արշակունիների անտանելի լծից, և Հայաստանը Մերուժանի հզոր գավազանի ներքո՝ թե խաղաղություն և թե բախտավորություն պիտի

վայելե։ Արգին լռությամբ լսում էր, և հոր խոսքերը թունավոր նետերի նման ծակոտում էին նրա վշտացած սիրտը։

Հետո սկսեց պատմել յուր դիտավորությունները որդու վերաբե-րությամբ։ Մի առանձին ուրախությամբ հայտնում էր, թե Շապուհ ար-քան շատ անգամ լսել է նրա մասին, գիտե նրա քաջությունները, և Տիզբոնի արքունիքում արդեն ծանոթ է նրա անունը։ Այժմ մնում է միայն, որ որդին ներկայանա Արյաց արքայից արքային, և նա ան-պատճառ նրան Պարսկաստանում գտնված հայկական հեծելազորի[17] հրամանատար կկարգե։ Այդ առիթով որդին կմերձենա թե պարսից Դռանը և թե առհասարակ արքունիքին։ Այնուհետև նրա գեղեցկությու-նը, շնորհքը և բարեկրթությունը՝ բավական մեծ երաշխավորություն են ներկայացնում, որ Արյաց արքայից արքան յուր դուստրներից մեկը նրան կնության տա, ա՛յն բազմահարուստ օժիտով, որ ստանում է յու-րաքանչյուր ոք, որ բախտ է ունենում Արյաց արքայական գերդաստա-նի փեսան լինելու և այլն։

Սամվելը համարյա թե չէր լսում։ Նա ուշադրությամբ լսեց հոր պատմածների սկիզբը միայն, իսկ թե ի՞նչ կլիներ վերջավորությունը,— այդ կարող էր և ինքը եզրակացնել։ Գլուխը խոնարհեցրած, ամենևին չէր նայում հոր երեսին, և վշտալի աչքերը մեքենաբար հառած էին դեպի մի հաստ, կիսափուտ գերանի կտոր, որ ալիքները դուրս էին նե-տել ավազների վրա։ Իսկ երբեմն նրա ուշադրությունը գրավում էր մի օտարոտի խշրտոց, որ մերթ ընդ մերթ լսելի էր լինում մերձակա թու-փերի միջից։ Հայրը նկատեց այդ և, կամենալով նրա ուշադրությունը դեպի ինքը գրավել, հանգստացրեց, ասելով.

— Այնտեղ, երևի, որսորդներից փախած եղներ են շարժվում։

— Ոչ, քամին է շարժում թփերը,— անփույթ կերպով ասաց Սամվելը և շարունակեց նայել գերանի կտորի վրա։

Երբեմն ամենաանմեղ առարկաներն անգամ մարդու մեջ բավա-կան զբաղեցնող մտքեր են հարուցանում։ Գերանի կտորի վրա նայե-լով, Սամվելը այս էր մտածում. «Եթե այդ հաստ, փտությունից թե-թևացած ծառաբունը լողալիս ջրի մեջ, արդյոք կարո՞ղ է նա մի փոք-րիկ մակույկի ծառայություն մատուցանել... արդյոք կարելի՞ է նրա-նով անցնել գետի մյուս ափի վրա...»։

Բայց քամին, իրավ, շարժում էր մերձակա թփերը։ Եղանակը, որ առավոտյան այնքան խաղաղ էր, այնքան գեղեցիկ էր, ընդհակառակն, կեսօրից հետո սկսեց փոքր առ փոքր մռայլվել։ Սովորական քամին բարձրացավ, և պարզ օդը հետզհետե լցվեց նուրբ, կարմրագույն փոշիով։ Այդ բնության երևույթը, մանավանդ տեղային հանգամանք-

ներին անծանոթ մարդու վրա, խիստ տխուր և ահարկու տպավորություն է գործում։ Հանկարծ պայծառ հորիզոնը ներկվում է բոսորային գույնով, և նրան այնպես է թվում, որ երկնքից մանր, փոշետեսակ արյան անձրև է տեղում։ Բայց Սամվելին ձգեց նա մի առանձին մելամաղձության մեջ, որ արտահայտություն էր նրա նույնպես խռովյալ սրտի։

— Զարմանալի՜ հատկություններ ունի Արաքսը,— ասաց նա, ինքն յուր հետ խոսելով.— զարմանալի՜ բնավորություն ունեն և նրա խորհրդավոր շրջակայքը։ Պարզ, լուսապայծառ առավոտին հաջորդում է տխուր, վհատական երեկո՝ յուր կարմրագույն մռայլով, իսկ ուրախ, անհոգ զվարճությունը՝ խիստ սրտամաշ թախծություն... Տխո՜ւր է, տխո՜ւր... Ես կարծում էի, թե կարող եմ փոքր-ինչ ուրախ լինել, փոքր-ինչ մոռանալ ինձ... Բայց իզո՜ւր,.. Երանի՜ թե չար լինեի... երանի՜ թե եղեռնագործ լինեի... Գուցե ինձ ևս կվիճակվեր նույն օրհասը, որ վիճակվեցավ բարի Արտաշեսի չար որդուն[18]... Նա կորավ որսորդության միջոցում, նա յուր ձիու հետ խորասույզ եղավ Արաքսի մերձակա անդունդների մեջ... Գետինը չկարողացավ տանել չար արքայազնին, որ չարությամբ պիտի լցներ հայոց երկիրը... Գետինը բաց արավ յուր ահարկու բերանը և կլանեց նրան...

Հայրը սարսափով լսում էր։

— Ինչո՞ւ հիշեցիր այդ տխուր անցքը,— հարցրեց նա, դողդոջուն ձեռքով բռնելով որդու աջը։

— Չգիտեմ ինչո՜ւ... երևի նրա համար, որ շատ հեռու չենք այն եղերական վայրերից, ուր պատահեց այդ անցքը։ Թշվառ չարագործը կորավ, անհետացավ Արաքսի անդունդների մեջ, բայց հանգստանալ չկարողացավ... Մասիսի քաջքերը տարան, շղթայեցին նրան մի մթին այրի մեջ, ուր մինչև այսօր տանջվում է նա...

— Սամվե՜լ,— գոչեց հայրը շփոթված ձայնով։— Ի՞նչ պատահեց քեզ հետ, ի՞նչը ձգեց քեզ այդ մթին ցնորքների մեջ։ Դու մահ ես ցանկանում, քեզ համար անտանելի է դարձել կյանքը այն հասակում, երբ դեռ նոր է սկսվում քո երջանկության ծաղկափթիթ գարունքը։ Ի՞նչ է պակաս քեզ։ Քո հայրը պատրաստ է ծնողական բոլոր սիրով ամեն ինչ լցուցանել։ Լսի՛ր, Սամվել, դու չես հասկանում քո անսահման բախտավորությունը, որի մեջն ես, և որը յուր լիառատ բարություններով դեռևս սպասում է քեզ։ Հազարավոր իշխանազն երիտասարդներ պիտի նախանձվին քո փառքին, հազարավոր իշխանազն օրիորդներ պիտի փափագեն քո ամուսինը լինելու։ Բայց դու կընտրես քեզ չքնաղներից չքնաղագույնը՝ Արշաց արքայից արքայի անհաման դուստրը։

— Դրանցից և ոչ մեկը չէ կարող բուժել այն վերքերը, որ դրած են

իմ սրտում, հայր, դրանցից և ոչ մեկը չէ կարող վանել այն վշտերը, որ օր ու գիշեր տանջում են ինձ։ Կյանքը, իրավ, անտանելի է դարձել ինձ, հայր, և մահը շատ ցանկալի կլիներ ինձ, եթե գիտենայի, որ մահից հետո մի այլ կյանք չկա։ Բայց մարդիկ իրանց վշտերը իրանց հետ գերեզման են տանում։ Դա ավելի անտանելի է, քան հավիտենական տանջանքը դժոխքի խորքում...

Վերջին խոսքերի միջոցին նա յուր գունաթափ դեմքը դարձրեց դեպի հայրը և շարունակեց մի այնպիսի ձայնով, որ արտահայտում էր նրա հուզված սրտի խորին ալեկոծությունը.

— Հայր, այստեղ մենք միայնակ ենք, այստեղ մեզ ոչ ոք չի լսի, թույլ տո՛ւր ինձ խոստովանել քեզ իմ բոլոր ցավերը, իմ բոլոր տանջանքները։

— Խոսի՛ր, զավակս, բա՛ց արա հոր առջև լցված սիրտդ, ի՞նչն է այդպես տանջում քեզ։ Այն օրից, որ եկել ես դու, ես միշտ նկատում եմ քո մեջ մի տեսակ հոգեկան անհանգստություն, մի տեսակ բարոյական վրդովմունք։ Մի՛ թաքցրու ցավերդ, և հավատացած եղիր, որ հայրդ այնքան անչափ սեր ունի դեպի քեզ, որ կարող է քո կարիքներին կարեկից լինել և քո ցավերին՝ ցավակից։

— Ինչպե՞ս չցավել, հայր, ինչպե՞ս չվշտանալ, հայր։ Մի սիրտ, որ քարից լիներ կազմված, մի հոգի, որի մեջ մեռած լինեին ամեն մարդկային զգացմունքներ, դարձյալ չէր կարող անզգա մնալ տեսնելով ա՛յն, ինչ որ ես տեսա, և ինչ որ տակավին տեսնելու դժբախտություն պիտի ունենամ։ Այն օրից, որ դուրս եկա մեր ամրոցից, այն օրից, որ թողի Տարոնը, մինչև այստեղ հասնելս, ես անցա մի շարք ավերակների, մի շարք բարբարոսությունների միջով։ Տեսա մոխիր դարձած քաղաքներ, տեսա անմարդացած գյուղեր, տեսա կործանված վանքեր ու տաճարներ... Ամեն քայլում ես ոտք էի կոխում արյան վրա, և իմ հայրենակիցների արյան վրա... Ո՞վ կատարեց այդ անգթությունները, հա՛յր, և ինչո՞ւ համար...

Հայրը բնավ չէր սպասում, որ որդին մի այսպիսի հարց կառաջարկեր։ Նա շփոթվեցավ, պապանձվեցավ, և նրա բոլոր անձնասիրությունը խորտակվեցավ այն դառն հանդիմանության առջև, որով որդին արտահայտեց յուր սրտի վշտերը։

— Դու լռում ես, հայր, դու չես պատասխանում։ Ես հասկանում եմ քո լռության իմաստը։ Բայց հայրենիքի կործանումները և բյուրավոր աչքերի լացն ու արտասուքը՝ համարձակություն են տալիս դժբախտ որդուդ ասելու քեզ, որ այդ բոլոր անգթությունները կատարվել են եր-

կու անձանց ձեռքով, որոնցից մեկը իմ հայրն է՝ դո՛ւ, իսկ մյուսը՝ իմ մոր եղբայրն է՝ Մերուժան Արծրունին...

— Մեծ գործերը մեծ զոհ են պահանջում...— ընդհատեց հայրը որդու խոսքերը։

— Ճշմարիտ է, մեծ գործերը մեծ զոհ են պահանջում,— պատասխանեց որդին դառնացած ձայնով,— բայց դու, հայր, արդյոք լավ կշռե՞լ ես գործի մեծության հետ և հանցանքի մեծությունը։ Ոչնչացնել հայրենի աշխարհը, ոչնչացնել հայրենի կրոնը, եկեղեցին, և Հայաստանի ավերակների վրա հիմնել մի պարսկական թագավորություն,— ահա՛ այս է այն գործը, որ դու, հայր, մեծ ես կոչում։

— Ինչո՞ւ պարսկական թագավորություն,— հարցրեց հայրը զայրացած ձայնով։— Մի՞թե Մերուժանը պարսիկ է։

— Ապա ի՞նչ է։ Թե դու, հա՛յր, և թե նա՛ ուրացել եք քրիստոնեությունը և ընդունել եք պարսից Շապուհ արքայի կրոնը։ Հայոց եկեղեցիները լցրել եք պարսից մոգերով ու մոգպետներով։ Ամեն տեղ ստիպում եք ուրանալ քրիստոնեությունը։ Իմ մայրը արդեն մոխրապաշտ է դարձել և Մամիկոնյանների կրոնասեր տան մեջ պարսից ատրուշան է հիմնել։ Իմ եղբայրները այժմ պարսկերեն են խոսում։ Հայոց լեզուն հալածված է մեր տնից։ Ամեն տեղ ոչնչացնում եք հայոց գրքերը, որպեսզի պարսից լեզու և պարսից դպրություն տարածեք Հայաստանում։ Երեկ իմ աչքով տեսա, թե ինչպես Մերուժանի երկնագույն վրանի առջև այրում էին հայոց գրքերը։ Այդ բոլորից հետո, երբ կորչում է կրոնը, երբ կորչում է լեզուն, երբ ոչնչանում են ազգային ավանդությունները, և երբ, վերջապես, հայը սկսում է պարսից սովորություններով ապրել և պարսից լեզվով աղոթել, այլևս ի՞նչ հայություն կմնա։ Եվ ձեր հիմնած թագավորությունը մի՞թե կարող է այնուհետև հայկական լինել։ Նա, վաղ թե ուշ, կլուծվի, կանհետանա պարսկականի մեջ, և նրա հետ ամեն ազգային սրբություններ կկորչեն, կոչնչանան...

— Ինչ որ լինելու է, թո՛ղ լինի, միայն Արշակունիների թագավորություն չի պետք լինի,— պատասխանեց հայրը, ավելի զայրանալով։

— Ինչո՞վ էին վատ Արշակունիները։

— Դու դեռ հարցնո՞ւմ ես, Սամվել։ Դու երեխա չես, դու այնքան տարիք ունես, որ բավական է, եթե հիշես քո տեսածը միայն, որ հենց քո հասակում՝ ո՛րքան չարագործություններ կատարեց Արշակ թագավորը, որ յուր մեղքերի համար՝ այժմ տանջվում է Անուշ բերդում։

Նա սկսեց մի առ մի թվել Արշակունիների գործերը և ապա ավելացրեց.

— Եվ դու, Սամվել, դեռևս ցանկանո՞ւմ ես, որ մի այսպիսի ան-

բարոյական և ապականված թագավորական տուն գոյություն ունենա։

— Քո և Մեհրուժանի վարմունքը ավելի վատթար է, հա՛յր,— ասաց Սամվելը, այժմ այլևս չակնածելով նրա ծնողական պատկառանքին։— Ապականությունը ապականությամբ չեն սրբում և ոչ անբարոյականությունը՝ անբարոյականությամբ։ Դրանց մաքրելու համար ուրիշ միջոցներ կան։ Արշակունիների մեջ եղել են և այժմ կան այնպիսի պաշտելի անձինք, որոնց առաքինություններով միշտ պիտի պարծենա Հայոց ազգը։ Իսկ եթե այդ հոյակապ ընտանիքի մեջ վերջին ժամանակներում հայտնվեցան մի քանի անբարոյական մարդիկ, դա նրանց մասնավոր մեղքն է, որ իրանք պետք է քավեն։ Նրանց մեղքերի համար ինչո՞ւ պետք է պատժվի ամբողջ Հայոց ազգը և Հայոց հայրենիքը։ Այն ես կասեմ, հա՛յր, որ այդ իսկ անբարոյական համարված Արշակունիները գոնե մեկ կողմից այնքան բարոյական գտնվեցան, որ երբեք չդավաճանեցին հայրենի աշխարհին և հայրենի եկեղեցուն։ Իսկ դո՞ւք — դո՛ւ և Մեհրուժանը...

Վերջին խոսքերը կայծակի նման շանթեցին հոր սիրտը։ Նրա մեջ միանգամից փշրվեցան այն բոլոր երանական հույսերը, այն բոլոր ջերմ բաղձանքները, որ ուներ որդու վերաբերությամբ։ Նա փափագում էր, որ որդին ոչ միայն յուր կամակիցը լիներ, այլև յուր գործակիցը լիներ։ Իսկ այժմ հայտնվեցավ նա որպես հոր անողոք հակառակորդ,— մի հակառակորդ, որի հետ դժվար էր կռվել, և որին ավելի ևս դժվար էր տեղիք տալ։ Ինչպե՞ս պետք էր վարվել նրա հետ։ Ծնողական սերը՝ և յուր ստանձնած գործի պարտավորությունը՝ սկսեցին սարսափելի կերպով մաքառել միմյանց հետ։ Որի՞ն պետք էր նախապատվություն տալ։ Անհնար էր վճռել։ Նա սաստիկ ստրջացած էր, որ առիթ տվեց որդուն այս աստիճան բացվել յուր հետ։ Բայց արդեն ուշ էր։ Հարցը այն կետի վրա էր դրված, որ պետք էր ընտրել երկուսից մեկը՝ կա՛մ որդուն, կա՛մ սկսած գործը։ Բայց զրկվել թե՛ առաջինից, թե՛ երկրորդից՝ մահվան չափ դառն էր նրա համար։ Այդ տոսկալի տագնապի մեջ էր նա, երբ եղանակը ավելի խառնվել էր, կարմիր քամին կատաղությամբ մռնչում էր և յուր կարմիր փոշին անխնա կերպով սփռում էր թշվառ հոր երեսին, իսկ նա ոչինչ չէր զգում։

— Դու եկար նախատելո՞ւ քո հորը, Սամվել,— ձայն տվեց նա հոգեկան երկար տանջանքներից հետո։

— Ո՛չ, հայր, ես չեկա նախատելու քեզ։ Ես եկա ճշմարիտը, արդարը և իրավացին խոսելու քեզ, որը ոչ այլ ոք կհամարձակվեր խոսել, բայց միայն որդին։ Ես եկա իմ սրտի, իմ սիրո բոլոր ցանկությամբ աղաչելու և պաղատելու քեզ, որ դու ետ դառնաս այն ճանապարհից,

որ տանում է մեր հայրենիքը դեպի անդառնալի կորուստ, իսկ Մամիկոնյան տոհմի հիշատակը՝ դեպի հավիտենական անեծք և դատապարտություն...

Հայրը զզվեցավ այդ խոսքերից և քաղցրությամբ պատասխանեց.

— Այդ բոլորը խոսել է տալիս քեզ՝ քո երիտասարդական վառ զգացմունքը, քո մաքուր սիրտը, Սամվել, և ես չեմ կարող չուրախանալ, որ դու այդպես անարատ ես մնացել։ Բայց սրտի և զգացմունքի դատողությունները խիստ հազիվ անգամ լինում են ուղիղ։ Դժբախտաբար, ազգերի և ժողովուրդների կենցաղավարության հարաբերական պայմանների մեջ՝ խիստ նեղ կայան ունի ա՛յն սրբությունը, որ դու կոչում ես առաքինություն, բարոյականություն։ Միշտ զորեղը ճնշում է, ոչնչացնում է անզորին։ Ի՞նչ պետք է արած, որ երբեմն կյանքի անողոք անհրաժեշտությունները դնում են մեզ այնպիսի ճանապարհի վրա և կատարել են տալիս մեզ այնպիսի գործեր, որոնցից դժոխքն անգամ կսարսափեր։ Մեր բոլոր կատարածը անխուսափելի անհրաժեշտության արդյունք է։ Մենք հարվեցանք պարսիկներին, որպեսզի ազատվենք նենգավոր հռոմայեցիներից։ Պարսիկները մեր դարևոր բարեկամներն են եղել։ Վերջին ժամանակներում քրիստոնեությունը բաժանեց մեզ միմյանցից և մեր մեջ կրոնի մեծ անջրպետը դրեց։ Դժբախտ հանգամանքները պահանջում են՝ քանդել այդ անջրպետը և ձեռք մեկնել հին բարեկամին։

— Բայց դուք քանդում եք ոչ թե անջրպետը, այլ հիմքը,— ընդհատեց Սամվելը։

— Բնավ ոչ։ Լսի՛ր, Սամվել, երկար բացատրությունների կարոտ կլիներ, եթե ես սկսեի քեզ ապացուցանել, որ մենք Հիսուս Քրիստոսի խաչը թողնելով և մեր հին աստվածներին երկրպագություն տալով՝ ոչինչ չէինք կորցնի։ Ես քեզ կկրկնեմ նույնը, ինչ որ մի քանի րոպե առաջ ասացի, թե մեծ գործերը մեծ զոհ են պահանջում, և մենք ստիպված էինք տալ այդ մեծ զոհը։

— Ո՞րն է այն մեծ գործը, որին դուք զոհում եք կրոնը, եկեղեցին,— հարցրեց Սամվելը, դարձյալ վրդովվելով։

— Հին բռնապետության տապալումը, Արշակունիների կործանումը,— պատասխանեց հայրը։— Մի՞թե դու փոքր գործ ես համարում այդ։

— Փոքր գործ չեմ համարում։ Բայց ինչո՞ւ համար եք կործանում։

— Նրա համար, որ եթե մենք նրան չկործանենք, նա մեզ կկործանի։ Մի՞թե դու մոռացել ես, թե որպիսի՛ կատաղությամբ Արշակ

թագավորը և նրա հայրը սկսեցին ոչնչացնել նախարարական իշխանությունները։

— Չեմ մոռացել։ Բայց ես դարձյալ կասեմ քեզ, որ Արշակունիների կամայականությանց առաջը առնելու համար ուրիշ ավելի դյուրին միջոցներ կան։

— Ոչինչ միջոցներ չկան, բացի այն, որ արդեն սկսվել է և պետք է շարունակվի։ Հայոց նախարարները բաժանվել են երկու մեծ կուսակցության. մեկը, յուր առաջնորդ ունենալով եկեղեցականներին, աշխատում է պահպանել հին դրությունը՝ Արշակունիների քայքայված գահը, իսկ մյուսը, առաջնորդ ունենալով քո հորը և քո քեռուն, կամենում է ոչնչացնել հինը և ստեղծել մի նոր իշխանություն։ Շատ բնական է, որ այդ ներքին երկպառակությունը պիտի հարուցաներ և ներքին պատերազմ։ Մեր հակառակ կուսակցությունը դիմեց հռովմեական օգնության, իսկ մենք դիմեցինք պարսկական օգնության։ Սկսվեցավ ներքին կռիվը՝ ներքին արյունհեղության հետ։ Թե ի՞նչով կվերջանա, այդ աստուծո ձեռքումն է, բայց առայժմ հաջողությունը մեր կողմն է։

— Գիտեմ ձեր կողմն է։ Բայց խաբուսիկ հաջողությունը թող չհրապուրե ձեզ...— Վերջին խոսքերի միջոցին նա ձեռքը տարավ և բռնեց հոր աջը, ասելով.— Լսի՛ր, հա՛յր, ընդունի՛ր տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորիր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով։ Դեռ ուշ չէ։ Դեռ կարելի է վնասի կեսից ետ դառնալ։ Ցրվեցե՛ք այդ անիծյալ պարսկական բանակը, որի ներկայությունը պղծում է հայոց երկիրը։ Հեռացրե՛ք պարսիկներին։ Ազատություն շնորհեցե՛ք հայոց գերիներին, թող գնան իրանց տները և սրբեն ազգայինների արտասուքը։ Թո՛ղ չլինի կռիվը, թո՛ղ չլինի պատերազմը, որ այնքան ավերների, որ այնքան թշվառությունների պատճառ դարձավ։ Թո՛ղ կրկին վերականգնվի հաշտությունը, և հայոց աշխարհը վայելե յուր նախկին խաղաղությունը։ Ես կգնամ Մերուժանի մոտ, նրանից ես նույնը կխնդրեմ, կաղաչեմ, կհամբուրեմ նրա ոտները, որ ընդունե իմ խնդիրքը։

Հայրը ոտքի ելավ՝ դառնացած կերպով ասելով.

— Իզուր կանցնի թե քո աղաչանքը և թե քո խնդիրքը, Սամվել։ Մերուժանը այն տեսակ մարդիկներից չէ, որ ամեն մի համբակի խոսքը լսե։

Արյունը կատաղի հոսանքով անցավ դեպի Սամվելի գլուխը։

— Հա՜յր...— ձայն տվեց նա, և նրա խռովյալ աչքերը վառվեցան բարկության բոցով։— Ե՞ս եմ համբակը։

— Այո՛, դու ես, Սամվել։— Ես չկարողացա հասկացնել քեզ ոչ

իմ միտքը և ոչ իմ նպատակները։ Այժմ մնում է հարցնել քեզ. դու ո՞ր կուսակցության ես պատկանում։

— Այն կուսակցությանը, որ հավատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն և սիրելի թագավորին։

— Ուրեմն, դու իմ որդին չես։ Ով որ մեզ հակառակ է, մեզանից չէ։ Մենք անխնա պատժել գիտենք այնպիսիներին։

— Եվ ոչ դու իմ հայրն ես...

— Սամվե՜լ...

— Ի՞նչ է, դավաճա՜ն...

Հայրը ձեռքը տարավ դեպի յուր սուրը։ Բայց որդու սուրը արդեն մերկացած էր։ Նա շողշողաց և կայծակի նման մխվեցավ հոր սրտի մեջ։ Նա ընկավ, հառաչելով.

— Հայրասպա՜ն...

Որդին, անշարժ արձանի նման կանգնած, մի քանի րոպե լուռ նայում էր արյան մեջ թավալվող հոր վրա։ Հետո սրբեց աչքերի արտասուքը և ձեռքը տարավ դեպի գոտիից քարշ ընկած արծաթյա փոքրիկ փողը, մոտեցրեց դողդոջուն շրթունքներին, և չարագուշակ արծաթը գուժեց սոսկալի գործողությունը։

Կղզու զանազան կողմերից նույնպես լսելի եղան փողերի ձայներ...

Կարմիր քամին խելագարի նման մռնչում էր, փոթորկվում էր, բարձրացնելով օդի մեջ թանձր, ավազախառն փոշի։ Մրրկածուփ հորիզոնը պատած էր մուգ-աղյուսագույն մառայլով, որ մթնեցնում էր արևի երեկոյան ճառագայթները։ Քամու ուժգին հոսանքի ներքո՝ դալար թուփերը, փշալի մացառները հեծելով, հառաչելով, կպչում էին գետնին և դարձյալ վեր էին բարձրացնում իրանց հողմակոծ գլուխները։ Մոլորված, շփոթված ծառերը, հակառակ իրանց կամքի, տարվում էին օդի մեջ, որպես բամբակի փոքրիկ պատառներ։ Սրաթռիչ բազեն անգամ յուր ուժեղ թևերով դժվարանում էր ընդդիմադրել զայրացած տարրի կատաղի ալիքներին։ Մրրիկը հետզհետե սաստկանում էր, մարդ և անասուն, սողուն և թռչուն թաքչելու տեղ էին որոնում։ Այդ միջոցին զարմացած Արաքսը, խորին վրդովմունքով դուրս էր հարձակվում յուր ափերից տեսնելու, թե ի՞նչ արհավիրք է կատարվում յուր շուրջը։ «Իշխանաց կղզին» դողում էր, սարսափում էր ամեհի կոհակներից, որ ամեն րոպե պատրաստ էին կլանելու և անհետացնելու նրան։

Բնության ընդհանուր խռովության միջոցին դադարեց որսորդությունը, սկսվեցավ մի այլ տեսակ որսորդություն։

Սկզբում կարծվում էր, թե որսորդները մրրիկի սաստկությունից

շփոթվեցան, կորցրին միմյանց և տարածվեցան դեպի կղզու զանազան կողմերը՝ ապաստանի տեղ գտնելու։ Ոչ ոք չէր երևում։ Չէին երևում մանավանդ Սամվելի մարդիկը։

Երևում էր միայն սպիտակ ձիավորը — Մեհրուժանը։

Նա յուր ձին փութով քշում էր դեպի վրանների կողմը։ Մեծ եղավ նրա զարմանքը, երբ վրանները տապալված տեսավ և այնտեղ ոչ ոքի չգտավ։ Մտածեց՝ գուցե քամին խորտակել էր վրանները, և մարդիկ շտապել էին փախչել, վախենալով, միգուցե կատաղած Արաքսը այնքան բարձրանար, որ ծածկեր կղզին։ «Ո՛չ, այստեղ մի դավադրություն կա...»— ասաց նա և ձեռքը տարավ դեպի կշտից քարշ ընկած գալարափողը, իսկույն հնչեցրեց։ Ոչ ոք չհայտնվեցավ։ Ձիու գլուխը շուռ տվեց դեպի կամուրջը։ Ճանապարհին մի քանի անգամ տեսավ նա խոտերի վրա ընկած դիակներ։ Ճանաչեց։ Ոմանք Սամվելի մարդիկներից էին, ոմանք՝ իրանց մարդիկներից։ Նրա հպարտ դեմքի վրա անցավ մի դառն ծիծաղ։ «Մանուկները մեզ որոգայթի մեջ ձգեցին...»— մտածեց նա և շարունակեց քշել ձին։

Հանկարծ քամու մռնչյունի հետ սուլեց մի այլ ձայն. մի նետ դիպավ նրա կողքին և շառաչելով ցած ընկավ։ Նրան հաջորդեց երկրորդը... երրորդը... Վերջինը ցցված մնաց ազդրի վրա։

«Ա՜խ, եթե գիտենայի, որ դու հագուստիդ տակին զրահ ունես հագած...», լսելի եղավ մերձակա մացառների միջից մի սուր ձայն, որ իսկույն խլացավ քամուց։

Մեհրուժանը շփոթված կերպով նայեց յուր շուրջը։ Ձին քշեց դեպի այն կողմը, որտեղից սլացավ նետը։ Խիտ մացառները արգելեցին նրա ընթացքը։ Այդ միջոցին մի այլ նետ դիպավ նրա գլխին և դարձյալ ցած ընկավ։

«Փո՜ւհ, սատանան տանե՜...— լսելի եղավ մի զայրացած ձայն,— խույրի տակում ևս երկաթ է թաքցրած...»։

Մեհրուժանը ետ դարձավ, և յուր խորին վրդովմունքի մեջ՝ չգիտեր ո՛ր կողմը գնալ։ Նա ձեռքը տարավ դեպի նետը, որ տակավին մնացել էր ցցված ազդրի մեջ, բարկությամբ դուրս քարշեց։ Արյունը սկսեց վտակի նման հոսել։ Դարձյալ դառն ծիծաղը երևաց նրա հպարտ դեմքի վրա, և գլուխը շարժելով ասաց. «Առաջ մենք էինք որսում մացառների մեջ թաքնված անասուններին, իսկ այժմ մեզ են որսում մացառների մեջ թաքնված դարանագործները...»։

Դարանագործը ոչ այլ ոք էր, բայց միայն պատանի Արտավազդը։ Յուր ընկերների մեջ՝ նրան էր վիճակվել Մեհրուժանը։ Բայց ոգելից պատանու բաղձանքները մնացին անկատար։ Նրա նետերը դիպան Մե-

բուժանի հայուստի ներքո թաքցրած պողովատյա տախտակներին։ Նա սողալով ու խարխափելով՝ սատանայի նման անցավ թփերի և մացառների միջով, դուրս եկավ կղզու այն կողմը, որտեղ կապած էր նրա ձին։ Նստեց և նետվեցավ դեպի յուր ընկերները։

Այդ միջոցին, կղզու մի այլ կողմում, մրրիկի թանձր փոշու մեջ, մենամարտում էին երկու հոգի՝ ծերունի Արբակը և պարսից Կարեն զորավարը։ Վերջինը զայրանալով ասաց.

— Բավական է, ծեր աղվես, գոնե հիշի՛ր, որ դու մեր հյուրն ես։ Ես խնայում եմ հյուրին։

— Շնորհակալ եմ մարդավարությանդ համար,— ժպտալով պատասխանեց ծերունին։— Պարսիկը, նեղն ընկած ժամանակ, միշտ մեծահոգի է ձևանում...

— Դու սպանեցիր իմ նժույգին և ինձ ոտքի վրա թողեցիր, իսկ ինքդ կռվում ես ինձ հետ՝ ձիու վրա նստած։

— Ես իսկույն ցած կիջնեմ, թող ուժերի հավասարություն լինի։

Արբակը իջավ ցած և յուր ձին հեռացրեց մի կողմ։ Այդ միջոցին խորամանկ պարսիկը թռավ նրա ձիու վրա և շտապեց փախչել։

Սամվելը, եղերական գործողությունից հետո, որոնում էր Մերուժանին։ Երկար թափառում էր կղզու մեջ և լի ոխակալությամբ՝ փափագում էր հանդիպել նրան։ Բայց Մերուժանի փոխարեն գտավ ծերունի Արբակին, որը, ապշած, շփոթված, նայում էր դեպի այն կողմը, ուր անհետացավ յուր երկչոտ ախոյանը։

— Խաբվեցա՜, սարսափելի կերպով խաբվեցա՜,— ասաց նա, դառնալով դեպի Սամվելը։— Եթե տասն նիզակի հարվածք ստանայի, այդքան չէի ցավի։

Նա սկսեց պատմել պարսկի յուր հետ խաղացած խաղը։

— Վնաս չունի,— ասաց Սամվելը, մխիթարելով վշտացած ծերունուն։— Անտարակույս, մի այլ անգամ ևս կհանդիպենք նրան։ Այժմ հնչեցրո՛ւ փողդ, թող հավաքվեն մեր մարդիկը։

Ծերունին հնչեցրեց փողը։

Սամվելի քառասուն մարդիկներից հայտնվեցան յոթն հոգի միայն։ Մնացյալը կամ վիրավոր, կամ սպանված՝ ընկել էին կղզու զանազան կողմերում։ Երիտասարդը թախծալի աչքերով նայեց մնացյալների վրա և ասաց.

— Յո՜թն հոգի... խորհրդավոր թիվ է...

— Իսկ մեր թշնամիներից այդքան էլ չէ մնացել...— հանկարծ լսելի եղավ մի ձայն։

Սամվելը նայեց դեպի այն կողմը։ Ժպիտը երեսին, նրա գիրկն ընկավ պատանի Արտավազդը։

— Ինձ չհաջողվեցա՞վ... ինձ չհաջողվեցա՞վ...— տրտնջում էր նա։— Ես ծակեցի նրա աչքը միայն։

— Դու չգիտես, որ նա կախարդ է[19]... երկաթը և պողպատը նրա վրա չեն ազդում...

— Այդ ես իմ աչքով տեսա։ Բայց այժմ գիտեմ, թե ինչու չեն ազդում...

Օրը երեկոյացել էր. արեգակը մտնելու մոտ էր։

Պատանի Հուսիկը մոտ բերեց յուր իշխանի ձին, նա հեծավ, մյուսները նույնպես ձիավորվեցան և դիմեցին դեպի կամուրջը։ Երբ անցան, Սամվելը հրամայեց վեր առնել կամուրջը, ասելով.

— Պետք է հանգիստ թողնել կղզու մնացած դիակները։ Քանդեցեք կամուրջը, որ գազաններ ներս չմտնեն։

Մի քանի րոպեի մեջ քանդեցին շարժական կամուրջը, ձգեցին գետի մեջ։ Ալիքները մի փոքրիկ տաշեղի նման՝ անհետացրին նրան։

Ամենքը դուրս եկան։ Կղզու մեջ մնաց մեկը միայն՝ Մերուժանը։

Նա եկավ այն ժամանակ, երբ արևը արդեն մտել էր։ Երբ տեսավ կամուրջը վեր առած, երկաթյա վանդակի մեջ ընկած գազանի նման վրդովվեցավ, բայց չվհատվեցավ։ Սկսեց զայրացած աչքերով չափել այն տարածությունը, որի վրա դրած էր կամուրջը։ Տարածությունը բավական լայն էր, ձին չէր կարող թռչելով անցնել։ Նայեց ալեկոծված Արաքսին։ Կոհակները փրփրալով բարձրանում էին, գետը ահռելի կերպով որոտում էր։ Ձին քշեց դեպի խռովյալ գետը։ Սպիտակ ձին պատառեց մրրկածուփ ալիքները և անցավ մյուս կողմը, ցամաքի վրա։

Վիրավոր առյուծը ազատվեցավ Արաքսի որոգայթներից...

Ե

ՄԱՅՐԸ

«Հարքէլ լայր զորդիս իւր, եւ ո՛չ կամէր մխիթարել՝ զի ոչ էին»։

Մատթէոս:

Փոթորկային գիշերին հաջորդեց խաղաղ, լուսապայծառ առավոտ։ Բնությունը սքանչանում էր, փառավորվում էր յուր վաղորդյան հրճ-

վանքով։ Թաղումները ուրախաձայն երգերով ողջունում էին տունչյան լուսատու հանդիսավոր ելքը։ Ամենուրեք շնչում էր անսպառ հաճություն, ամենուրեք տիրում էր անթառամ զվարթություն։ Միայն պարսից բանակը պատած էր տխրության մթին մառայլով։

Երեկվա աղետավոր անցքը արդեն հայտնի էր բոլորին։ Ամեն մի զինվոր գիտեր, թե ինչ էր պատահել «Իշխանաց կղզում»։ Դեռ լույսը նոր էր բացվում, երբ բերեցին Սամվելի հոր՝ Վահան Մամիկոնյանի մարմինը և հանգուցին յուր փառավոր, շիկակարմիր վրանում։

Մերուժանի երկնագույն վրանը այս առավոտ ավելի շքեղ տեսք էր ստացել արևի առաջին ճառագայթներից, որ մի առանձին քնքշությամբ շողշողում էին նրա ոսկեզօծ սյուների վրա։ Բայց, այսուամենայնիվ, այս մեծափառ վրանը չէր պատկերացնում այն սովորական փայլն ու վայելչությունը, որ հանդիսանում էր ամեն առավոտ, արևի ծագումից հետո։ Գալիս էին, ներկայանում էին բանակի բոլոր ավագներն ու աստիճանավորները, ողջունում էին իրանց հզոր հրամանատարի առավոտը, և յուրաքանչյուրը զեկուցում էր տալիս բանակի դրության մասին։ Հետո վայելում էին նրա հյուրասիրության ճոխ նախաճաշիկը[1]։

Այս առավոտ ոչ ոք չէր երևում։ Վրանի վարագույրները կիսով չափ միայն բարձրացրած էին, և սպասավորները ոտքի մատների վրա էին պտտում նրա շուրջը, որ ձայն չլսվի։ Երբեմն ուշիկ քայլերով մտնում էին զանազան սպաներ և սենեկապետներից հազիվ լսելի ձայնով հարցնում էին իշխանի առողջությունը և դարձյալ լռությամբ հեռանում էին։

Հիվանդ էր իշխանը, պառկած էր իշխանը։ Նրա մետաքսյա անկողինը շրջապատել էին մի քանի բժիշկներ միայն, որ մի առանձին հոգածությամբ սպեղանի էին դնում և դարմանում էին նրա աղդրի վերքը։

— Դուք ինձ միայն այն ասացեք,— հարցրեց հիվանդը վճռական ձայնով,— ոսկորը խո վնասված չէ՞։

— Թո՛ղ հեռու լինեն քեզանից չար Արհմինի չար պատահարները, վսեմաշուք տեր,— պատասխանեցին բժիշկները միաձայն,— ոսկորը այնքան անարատ է մնացել, որպես մեր աչքերի լույսը։ Եթե մի որևէ խաթար լիներ, մենք չէինք թաքցնի։

— Ապա ինչի՞ց է այս անտանելի ցավը... այս սրտամաշ թուլությունը...

— Վերքը բավական խորն է, վսեմաշուք տեր։ Իսկ թուլությունը նրանից է, որ սաստիկ շատ արյուն է կորել։ «Իշխանաց կղզուց» մինչև

այստեղ փոքր ճանապարհ չէ, այդքան տարածության վրա՝ բաց վերքից արյունը միշտ հոսել է։

— Իսկ այդ ջե՞րմը, որ այրում է ինձ... Ես շատ անգամ վիրավորված եմ եղել, բայց այդքան սաստիկ ջերմ երբեք չեմ զգացել։ Չիցե՞ թե նետը թունավորված լինի։

— Թո՛ղ պայծառ Արամազդը փարատություն շնորհե, վսեմաշուք տեր,— դարձյալ պատասխանեցին բժիշկները միաձայն։— Եթե քո վերքի մեջ մի հյուլե չափ թույնի նշան լինի, թո՛ղ մեր ամբողջ մարմինը վարակվի թույնով։ Այդպիսի բան չկա։ Ջերմը մրսելուց է առաջ եկել։ Արաքսի սառն ալիքները, որ պատառելով անցար դու, և գիշերվա սաստիկ քամին՝ մրսեցրել են քեզ, որովհետև թրջված ես եղել։ Բայց այս բոլորը Ամենակարողի օգնությամբ կանցնի, և շուտով կանցնի, վսեմաշուք տեր։

Հիվանդի մոտ դրված էր զովացուցիչ օշարակ, որ անդադար խմում էր նա՝ սրտի տապն ու կրակը հանգցնելու համար։ Բժիշկների հուսադրությունները թեև բոլորովին չհանգստացրին նրան, այնուամենայնիվ, երեսը շուռ տվեց դեպի բարձի մյուս կողմը և լուռ կացավ։ Նա վախենում էր թունավորվելուց, եթե ոչ, վերքը այնքան սովորական էր նրան, որ չէր կարող երկյուղ ձգել նրա վրա։ Մի գիշերվա մեջ զարմանալի կերպով փոխվել էր նա։ Գեղեցիկ դեմքը գունաթափվել էր, թառամել էր, և այրական ճակատը պատած էր խիստ տխուր դալկությամբ, կարծես թե, ամիսներով հիվանդ լիներ։

Սենեկապետներից մեկը հայտնեց, թե բանակի ավագներից մի քանիսը խնդրում են ներկայանալ։

— Թող գան,— հրամայեց նա։

Բժիշկները մի կողմ քաշվեցան, երբ ներս մտան՝ Հայր-Մարդպետը, Կարեն զորապետը և մի քանի այլ աստիճանավորներ։ Առաջին երկուսը նստեցին հիվանդի անկողնի աջ և ահյակ կողմերում, իսկ մյուսները՝ մի փոքր հեռու։ Մինչև նրանք կհարցնեին հիվանդի առողջությունը, նա ընդհատեց, ինքը հարցնելով.

— Վերադարձա՞ն մարդիկը։

— Վերադարձան,— պատասխանեց Հայր-Մարդպետը տխրությամբ։— Մամիկոնյան իշխանին չեն գտել, և նրա մասին դեռ ոչինչ տեղեկություն չկա։ Իսկ մյուսների մարմինները արդեն բերել են, հասցրել են բանակը։

Երբ բանակում իմացան «Իշխանաց կղզում» պատահած աղետալի անցքը, հենց գիշերով մի քանի խումբ ճեպընթաց ձիավորներ ուղարկեցին օգնության։ Բայց նրանք հասան այն ժամանակ, երբ ամեն ինչ

վերջացած էր։ Լուսաբացին խուզարկեցին ամբողջ կղզին, գտան սպանվածների դիակները և մի քանի կիսամեռ վիրավորյալներ միայն։ Սամվելի հոր մարմինը գտան հենց յուր ընկած տեղում և մյուսների հետ բերեցին բանակը։ Բայց Հայր-Մարդպետը թաքցրեց հիվանդից, որ նրան ավելի ցավ չպատճառի։

— Դա ինձ շատ զարմացնում է,— ասաց հիվանդը։— Եթե որդին, հրապուրելով հորը, նրան մի կողմ տարավ և յուր դավաճան ձեռքը բարձրացրեց հոր վրա (որի մասին ամենևին տարակույս չունեմ), գոնե պետք է գտնվեր նրա մարմինը։

— Գործողությունը կատարվել է Արաքսի ափերի մոտ,— նկատեց բժիշկներից մեկը,— ինչո՞ւ չմտածել, որ հայրասպանը կարող էր հոր մարմինը ձգել Արաքսի ալիքների մեջ և անհետացնել։

— Այդ աստիճան անգթություն չէր անի Սամվելը,— ասաց հիվանդը։— Նա ընդունակ էր սպանելու, բայց ոչ հոր մարմինը անպատվելու։

— Ես էլ նույն կարծիքին եմ,— ասաց Հայր-Մարդպետը։— Երևում է, որ այդ հանդարտ, քաղցրաբարո և մեղմաղձոտ երիտասարդը՝ թե՛ հոր խստությունը և թե՛ նրա մեծահոգությունն ուներ։ Պարսիկ պատանիներից և ոչ մեկը վնասված չէ։ Տղաների հետ չէ կամեցել գործ ունենալ։ Ինձ պատմում էին իրանք՝ պատանիները, ասելով, թե երբ Սամվելի մարդիկը գայլերի նման տարածվել էին կղզու զանազան կողմերը և ամեն հանդիպողին խողխողում էին, իսկ մեզ պատահելիս՝ թույլ էին տալիս փախչել։

— Տարակուսականը այն է, որ ձին նույնպես չէ գտնվել,— նկատեց Կարեն զորապետը։

— Այստեղ տարակուսելու ոչինչ չկա,— պատասխանեց Հայր-Մարդպետը։— Գուցե Սամվելի մարդիկներից մեկը՝ ընդհանուր խառնակության միջոցում՝ նստել ու փախել է։

— Շատ հավանական է,— ասաց Կարեն զորապետը,— ինձ հետ ևս միևնույնը պատահեց։ Երբեք և ոչ մի պատերազմում ես իմ ձին կորցրած չեմ, բայց այդ կղզում կորցրի ձիս։ Կարո՞ղ եք երևակայել, թե ինչպես։ Ինձ պատահում է Սամվելի դայակը, այն նենգավոր ծերունին, որին Արբակ էին կոչում։ Անսպասելի հանդիպությամբ հարձակվում է իմ վրա և նիզակի մի հարվածով ցած է գլորում իմ ձիուց։ Ես մնացի ոտքի վրա։ Ինձ մնում էր, նույնպես ցած գլորել թշվառականին և օգուտ քաղել նրա ձիուց։ Բայց նա այն աստիճան կատաղությամբ մենամարտում էր ինձ հետ, որ մյուս աշխարհը գնալուց հետո միայն՝ յուր ձին ինձ թողեց։

Նա սկսեց մանրամասնաբար նկարագրել յուր մենամարտությունը, որի մեջ, բացի անամոթ ստախոսությունից, ինքնագովությունը ավելի մեծ տեղ էր բռնում։ Թե ի՞նչ խաբեությամբ կարողացավ ստանալ նա ծերունի Աբբասի ձին,— այդ մենք գիտենք։ Բայց նրա ձիով պարսից բանակը վերադառնալը, շատ հասկանալի է, որ բավական փաստավոր ապացույց էր՝ հաստատելու յուր չկատարած քաջագործությունը։

Հովանը չէր լսում։ Նրա տենդային ջերմությամբ բորբոքված գլուխը նույն րոպեում զբաղված էր Մամիկոնյան իշխանի անհայտանալով, որ նրա մեջ զանազան տարակուսանքներ էր հարուցանում։ Հայր-Մարդպետը, թաքցնելով իշխանի սպանվիլը և նրա մարմինը արդեն վաղ-առավոտյան բանակը բերվիլը, թեև դրանով կամեցավ Հովանին նոր ցավեր չպատճառել, բայց, այնուամենայնիվ, նրան ավելի ծանր մտատանջությունների մեջ ձգեց։ Չիցե՞ թե որդին կարողացավ հրապուրել, խելքից հանել նրան, և երկուսը միասին փախուստ տվին։ Ի՞նչ հետևանքներ կարող էր ունենալ, եթե ճշմարիտ լիներ այդ։ Մի՞թե այդ աստիճան անհավատարիմ կգտնվեր Մամիկոնյան իշխանը, որ այնքան ամուր, անքակտելի ուխտով կապված էր յուր հետ։ Կդավաճանե՞ր յուր բարեկամին և գործակցին...

Այս մտածությունների մեջ էր նա, երբ դարձյալ սկսեց խոսել պարսից Կարեն զորապետը, բացատրելով այն միտքը, թե մեծ սխալ գործեցին իրանք, որ բանակից դուրս եկան և որսորդության գնացին, քանի որ մոգերից նախազգուշություն ունեին, թե պետք չէ շարժվել տեղից։ Այժմ կատարվեցավ նրանց գուշակությունը, գնացին «Իշխանաց կղզին» և թակարդի մեջ ընկան։

— Սխալը միայն դրանում չէ, տե՛ր զորապետ,— ավելացրեց Հայր-Մարդպետը։— Բայց խաբվել մի քանի տղաներից, ահա՛ այդ է գործի ծիծաղելի կողմը։

Հովանը վրդովվեցավ։

— Տղաները օտարներ չէին, Հայր-Մարդպետ, տղաները մեր արյունից էին,— ասաց նա վայրացած ձայնով։— Դու ինքդ մեծ ուրախությամբ նրանց հետ որսակից կլինեիր, եթե քեզ հրավիրեին։ Բայց չկամեցանք քո ներկայությամբ ծանրաբեռնել այլոց զվարճությունը։

Պատասխանը բավական խիստ էր։ Եթե մի ուրիշ ժամանակ լիներ, գուցե գոռոզ ներքինին չէր լռի։ Բայց այս անգամ նա խնայեց Հովանին, որը երեսը իսկույն շուռ տվեց, այլևս չէր նայում նրա վրա։

Մինչ Միրուժանի երկնագույն վրանում այս տեսակ սրտաբեկ խոսակցության մեջ էին, ուր ամեն ոք, մոլորվելով տխուր տարակուսանք-

ների մեջ, չգիտեր՝ արդյոք պե՞տք էր կշտամբել ընկերին, թե մխիթարել նրան, ուր ամենքը գտնվում էին մի տեսակ անորոշ, անհասկանալի վհատության մեջ,— այո՛, այդ միջոցին, բանակից հեռու, քաղաքի կողմի բարձրավանդակներից մեկի վրա, երկար ձողի գլխին ծածանվում էր մի ինչ-որ գույնզգույն բան, որ դրոշակի նմանություն ուներ։ Բանակից դեռ ոչ ոք չէր նկատել այդ հանկարծակի երևույթը, թեև վաղորդյան մռայլը արդեն չքացել էր, արևը բավական բարձրացել էր, և շրջակայքը ծփում էր սքանչելի լուսավորության մեջ։ Արևի վառ ճառագայթների առջև՝ ավելի աչքի էր զարկում նա։ Իսկ առավոտյան մեղմ հովից փողփողում էր, փսփսում էր և, մի չար ոգու նման, գույնզգույն թևերը բաց արած, կարծես, ձգտում էր սավառնել, ձգտում էր յուր բարձրությունից իջնել բանակի վրա և յուր բոլոր զարհուրանքով ճնշել, ոչնչացնել նրան։ Հիվանդը առաջինը եղավ, որ նկատեց այդ տարօրինակ երևույթը, և երկար նրա անհանգիստ աչքերը հառած էին դեպի այն կողմը։ Դրոշակի եզերքը դրած էին սև շրջանակի մեջ, իսկ մեջտեղի նշանը նա իսկույն ճանաչեց և ամբողջ մարմնով ցնցվեցավ։ Կայծակի հարվածքը չէր կարող այնքան ազդել նրան, որպես այդ գունավոր կտավի կտորը, որ սարսափելի կերպով շանթեց նրա անվեհեր սիրտը։ «Անգութ պառավը տակավին չէ դադարել ինձ հալածելուց...»— մտածեց նա, և նրա գունաթափ դեմքի վրա երևաց նույն դառն ծիծաղը, որ սովորաբար հայտնվում էր տագնապի րոպեներում։ Նրա համար արդեն ամեն ինչ պարզ էր։ Նրա բոլոր տարակուսանքները փարատվեցան, մանավանդ երբ սենեկապետներից մեկը ներս մտավ, հայտնեց, թե պատգամավորություն է եկել, խնդրում են ներկայանալ։

— Թող գան,— ասաց հիվանդը։

Հայր-Մարդպետը այլևս չկարողացավ համբերել, երբ տեսավ հիվանդի անխռովությունը, որ առանց հարցնելու, թե ի՛նչ պատգամավորություն է, և առանց կանխապես տեղեկանալու, թե ի՛նչ նպատակով են եկել, թույլ է տալիս յուր մոտ մտնել։

— Դու միշտ այդպես անզգույշ ես եղել, Մերուժան,— ասաց նա խրատական եղանակով։— Քո մեծամտությունը ոչ սակավ անգամ քեզ վտանգի մեջ է ձգել։ Ինչպե՞ս կարելի է ընդունել մի պատգամավորություն, առանց նախապես իմանալու, թե ովքե՞ր են կամ ի՞նչ գործի համար են եկած։ Միթե չէ՞ կարող պատահել, որ նրանցից մեկը յուր դաշույնի հարվածով քեզ մի նոր վերք կպատճառե, բայց մահացու վերք, և յուր դիակը՝ փախչելու միջոցին՝ կթողնե քո վրանի դռանը։ Միթե սակա՞վ են պատահել այսպիսի դեպքեր։

— Շատ են պատահել,— ասաց Հիլանը հանդարտ կերպով։— Բայց ես արդեն գիտեմ, թե ի՛նչ պատգամավորություն է։

— Որտեղի՞ց գիտես։

— Ահա՛ այն տեղից։ Նայեցեք դեպի այն բարձրավանդակը։— Նա ձեռքը մեկնեց դեպի ծածանվող դրոշակը։

Ամենքի աչքերը դարձան դեպի այն կողմը։

— Դրոշա՞կ է,— ասացին միաձայն։

— Գիտե՞ք, ի՛նչ դրոշակ է։

— Պարզ չէ երևում, բավական հեռու է։

— Սրատեսության մեջ ոչ ոք ինձ հետ կարողացել է մրցել։ Ես բոլորովին պարզ տեսնում եմ։ Սյունիքի մի դրոշակ, արծվաթև վիշապի նշանով, այժմ ծածանվում է իմ վրանի գլխին։ Դա Արծրունիների տոհմային դրոշակն է։ Ինձանից հետո, բացի իմ մորից, ոչ ոք իրավունք ունի պարզել այդ դրոշակը։ Հանկարծ նա հայտնվում է մեր հանդեպ՝ ահա՛ այն բարձրավանդակի վրա։ Անշուշտ նրա մոտ՝ յուր զորքերի բազմությամբ՝ կանգնած է իմ մայրը։ Իսկ պատգամավորները, անտարակույս, նրա կողմից են գալիս։ Ես պետք է ընդունեմ նրանց։

Ամենքի վրա տիրեց խորին ապշություն, խորին շփոթության հետ։

Հիլանը սաստիկ բարկությունից, կարծես, նոր ուժ ստացավ։ Մի նոր, անսպասելի ցավ վանեց նրա վերքի անտանելի ցավը, ինչպես մի թույն հալածում է մի այլ թույնին։ Նա գլուխը բարձրացրեց բարձից, նստեց անկողնի մեջ։ Սպասավորներից մեկը ձգեց նրա ուսերի վրա մետաքսյա թեթև վերարկուն։ Հետո դարձավ դեպի յուր շրջապատողները այս խոսքերով.

— Տեսնո՞ւմ եք, հարգելի ալա՛րք, մի օր բացակա գտնվեցա բանակից, մի գիշեր գլուխս բարձի վրա դրի, և դուք չկարողացաք նկատել, թե ի՛նչ է կատարվում ձեր բանակի շուրջը։ Մենք պաշարված ենք թշնամիներով։ Իմ ամենամեծ թշնամին իմ մայրն է։

Ներկա եղողները ամոթից գլուխները ցած խոնարհեցրին, խոսք չէին գտնում պատասխանելու։ Նա դարձավ դեպի սենեկապետը, կրկնելով.

— Ասա՛, թող գան պատգամավորները։

Վրանի մուտքի առջև հայտնվեցան երեք պատկառելի ծերունիներ, հաղթանդամ, թավամազ մորուքներով, և ոտքից ցգլուխ զինված։ Նրանք խորին կերպով գլուխ տվին, մնացին ոտքի վրա։ Մերուժանը ճանաչեց երեքին ևս։ Դրանք Արծրունյաց տան հին զորապետներից էին։

Տեսնելով նրանց, սրտմտությունը սկսեց խեղդել մեծամիտ, անսիրտ իշխանին, որ յուր մոր պատգամավորները գտնում էին նրան վիրավոր

և անկողնի մեջ դրած։ Բայց, միևնույն ժամանակ, նրա կոշտացած, օտարացած սիրտը զգաց մի ներքին բաբախում, երբ երևան եկան ծանոթ դեմքեր, ծանոթ մարդիկ, որ հարուցին նրա մեջ վաղեմի մոռացված հիշողություններ...

— Ներս համեցեք,— ասաց նրանց սիրալի ձայնով։— Նստեցե՛ք։

Նրա մոտ, չորեքին վրանի մուտքի կողմում, հիվանդի անկողնի առջև։

Հիվանդը ձեռքը տարավ դեպի յուր մոտ դրած սառն օշարակը, լցրեց արծաթյա թասի մեջ, մոտեցրեց դողդոջուն շրթունքներին և, ցամաքած կոկորդը զովացնելուց հետո, դարձավ դեպի եկվորները այս խոսքերով.

— Բարով եք եկել։ Հույս ունեմ, որ ձեր գալուստը բարի նպատակի համար կլինի։

— Ե՛վ բարի, և՛ անբարի, ո՛վ քաջդ Մերուժան,— խոսեց պատգամավորներից մեկը։— Դու, անտարակույս, ճանաչում ես մեզ։ Սկսյալ քո մանկությունից՝ ծառայել ենք այն հոյակապ տանը, որի զավակը լինելու պարծանքն ես վայելում դու։ Մեր յուրաքանչյուրի մարմնի վրա հարյուրավոր վերքի նշաններ կան, որ ստացել ենք բազմաթիվ կռիվներում, որ մեր կյանքի ընթացքում մղել ենք այդ տան փառքն ու պատիվը միշտ անարատ պահպանելու համար։ Վերջին ժամանակներում մեջ մտավ չար ոգին, խառնեց մեր սիրելի աշխարհի գործերը։ Մեր դաշտերը ողողվեցան արյունով, մեր քաղաքները ծածկվեցան մոխրով։ Ներքին կռիվը, ներքին պատերազմը, ընդհանրականից դարձավ մասնավոր—ընտանեկան։ Որդին ապստամբվեցավ հոր դեմ, հայրը սկսեց խողխողել յուր զավակներին։ Մայրը մերժեց որդուն յուր գութն ու սերը, իսկ որդին այլևս պատիվ չըրեց մոր երախտիքներին։ Լացն ու կոծը, արտասուքն ու անլսելի հառաչանքը եղավ վիճակը այն թըշվառ գերդաստանների, ուր թագավորում էր մշտական սեր և երջանկություն...

Հիվանդը դարձյալ ձեռքը տարավ դեպի սառն օշարակը, զովացրեց բորբոքված կոկորդը։ Տերունի զինվորը շարունակեց.

— Այսպիսի մի երկպառակություն ընկավ և՛ Արծրունյաց խաղաղ գերդաստանի մեջ, ո՛վ քաջդ Մերուժան։ Դու, իհարկե, չես մոռացել այն ազնվալի ընդունելությունը, որ ցույց տվին քեզ քո քաղաքացիները, երբ մտար Հադամակերտ և մոտեցար քո նախահարց տան պատկառելի շենքերին։ Քո մայրը քո հոր դռները փակեց քո առջև։ Քո կինը երեսը շուռ տվեց քեզանից։ Քո զավակները ասացին քեզ՝ դու մեր հայրը չես։ Եվ դու կորագլուխ ետ դարձա՛ր ա՛յն հինավուրց տան

շենքերից, որի տերն էիր և իշխանը։ Քո ընտանիքը նայեց քո ետևից և արտասվեց... Նա նայեց քո ետևից, որպես սգավոր բարեկամներն ու տոհմայինները նայում են գերեզմանը գրկող դագաղի ետևից... Ածվում է հողը և մթին գուբը հավիտյան ծածկում է հանգուցյալին յուր սիրելիների աչքերից... Քեզ նույնպես մեռած և թաղված համարեց քո ընտանիքը, ո՛վ քաջդ Մերուժան։ Մեռա՞ծ բարոյապես, մեռա՞ծ հոգեպես... Եվ այդ էր այն սգավորության պատճառը, որով ծածկված էր ամբողջ Հադամակերտը։ Դռները պատած էին սև պաստառներով, պատերից քարշ էին ընկած սև դրոշակներ։ Դու մեռա՞ծ էիր և քո քաղաքացիների համար։ Դու ուրացել էիր ա՛յն սուրբ կրոնը, որ պաշտում էին քո հայրերը։ Դու թշնամացել էիր ա՛յն եկեղեցու հետ, որի փրկարար ավազանից ծնունդ էիր առել։ Դու դավաճանել էիր ա՛յն հայրենիքին, որի հաստատության համար քո հայրերը արյուն էին թափել։ Այո՛, դու կորա՞ծ էիր քո ընտանիքի և քո քաղաքացիների համար։ Բայց քեզ չծածկեց նրանց աչքերից ոչ հողը և ոչ գերեզմանի մթությունը, այլ այն ամոթը, այն նախատինքը, և այն անջնջելի արատը, որով ծածկված էիր դու, և որով ծածկեցիր Արծրունիների պայծառ անունը...

Նա ձեռքը տարավ դեպի կնճիռներով պատած ճակատը, շփեց թավամազ հոնքերը, որ, կարծես թե, խանգարում էին նրա բոցավառ աչքերի կրակը, և ապա շարունակեց.

— Քո ընտանիքի արդար վրդովմունքին, քո քաղաքացիների իրավացի բարկությանը՝ դու պատասխանեցիր վրեժխնդրության կատաղի անգթություններով, ո՛վ քաջդ Մերուժան։ Փոխանակ զղջալու, փոխանակ դարձի գալու, փոխանակ բարությամբ կրկին գրավելու նրանց սերն ու հարգանքը, դու սկսեցիր բռնություն գործ դնել։ Անխնա կերպով ավերեցիր Վան քաղաքը, որ քեզ և քո հայրերին էր պատկանում։ Եվ անողորմ ձեռքով դեպի գերություն վարեցիր քո սեփական հպատակներին։ Ի՞նչ էր նրանց հանցանքը, ինչո՞վ էին մեղավոր քո քաղաքացիները։ Նրանո՞վ, որ չհնազանդվեցան քեզ, նրանո՞վ, որ չկամեցան ուրացող տեր և իշխան ունենալ։

Նա ձեռքը մեկնեց դեպի բարձրավանդակի գագաթին պարզած դրոշակը, ասելով.

— Նայի՛ր, ո՛վ քաջդ Մերուժան, ահա՛ այնտեղ ծածանվում է քո նախահարց դրոշակը։ Նրա մոտ կանգնած է քո մայրը՝ ամբողջ Վասպուրականի Տիկինը։ Նա դնում է քո առջև երկու բան՝ յուր մայրական սերը և յուր հավատարիմ հպատակների զենքը։ Որը կամենում ես ընտրի՛ր։ Նա, հանուն քրիստոնեության, հանուն ծնողական գթության,

պատրաստ է ներել քեզ, պատրաստ է մոռանալ բոլոր աղետալի անց-քերը, եթե դու կցրվես պարսից բանակը, կվերադարձնես Հայոց դե-րիներին և հաշտությամբ վերջ կտաս ներքին պատերազմին։ Եթե այս բոլորը կատարես դու, այն ժամանակ նա յուր մայրական ձեռքը կմեկնե քեզ համբուրելու, դու դարձյալ կլինես Վասպուրականի տերն ու իշ-խանը, և քո ժողովուրդը ամենայն հնազանդությամբ կխոնարհվի քեզ։ Իսկ եթե ոչ, թո՛ղ կռիվը, թո՛ղ դարձյալ արյունը վճռե աստուծո կամքը։

Բոլոր ներկա գտնվողները բարկությունից իրանց ատամները կրճտացնում էին և զարմանում էին Մերուժանի համբերության վրա։ Հայր-Մարդպետը մի առանձին արհամարհանքով հարցրեց.

— Շա՞տ զորք է բերել յուր հետ Վասպուրականի Տիկինը։

Պատգամավորը խեթ կերպով նայեց նրա երեսին, պատասխա-նելով.

— Նա բերել է յուր հետ Վասպուրականի ամենալավ զորավարնե-րին, ո՛վ Հայր-Մարդպետ։ Նրա հետ են և՛ արքայազն մոկացիք, նրա հետ են և՛ երկայնաբազուկ սասունցիք, նրա հետ են և՛ սարսափելի ռշտուն-ցիք։ Նրա հետ է և՛ մեր պաշտելի սուրբ խաչի զորությունը։

Հայր-Մարդպետը խնդաց, նկատելով.

— Վասպուրականի Տիկինը յուր շուրջն է հավաքել յուր դրացի բոլոր լեռնական խառնաճաղանջներին։

Մերուժանին սաստիկ տհաճություն պատճառեց Հայր-Մարդպետի միջամտությունը և մանավանդ նրա արհամարհանքը դեպի յուր մայ-րը։ Մերուժանը մեծ հարգանք ուներ դեպի յուր մայրը, որպես մի թըշ-նամի, որի հետ կարելի էր մաքառել, բայց աններելի էր ատել։ Բա-ցի դրանից, Մերուժանը՝ յուր խստասրտությամբ հանդերձ՝ գիտեր գնա-հատել բարձրը, վեհը և ազնիվը։ Այդ էր պատճառը, որ մի առանձին քաղցրությամբ պատասխանեց.

— Գովում եմ մորս նախանձախնդրությունը, որ այդպես անձնանվի-րաբար պաշտպանում է յուր աշխարհի շահերը։ Գովում եմ և քո հա-մարձակախոսությունը, ո՛վ քաջդ Գուրգեն, որ այդքան անկեղծաբար հաղորդեցիր ինձ մորս պատգամները։ Հույս ունեմ, որ իմ պատասխանն ես նույն անկեղծությամբ կհաղորդես մորս։ Գնա, ասա՛. եթե նա իմ համար մայրն է, ես էլ նրա համար որդին եմ։ Առյուծի կաթը ծծողը պետք է որ փոքր ի շատե առյուծի հատկություններ ունենա։ Թո՛ղ նա չխլե ինձանից տոհմային հատկությունները։ Ես չեմ կամենում պա-խարակել, թե ո՛րքան նրա վարմունքը ինձ հետ աններելի էր, երբ ես մուտք գործեցի Հադամակերտ, և ոչ պիտի աշխատեմ ջատագովել, թե ո՛րքան իմ բռնած ընթացքը ուղիղ էր։ Այդ բացատրությունների ժամանա-

կը անցել է արդեն։ Միայն այսքանը կասեմ, եթե Արծրունիները մի գավառի կողմ ունեն, դա է նրանց հաստատամտությունը։ Թո՛ղ նա չաշխատե խախտել իմ կամքը, չաշխատե ինձ թուլամտության մեջ նետել։ Ինչ որ սկսել եմ, պետք է անպատճառ ի կատար ածեմ։ Ոչինչ չէ կարող փոխել իմ միտքը։ Թո՛ղ, որպես ցանկանում է նա, կռիվը որոշե մեր մեջ, թե ո՛րն է աստուծո տնօրինությունը։

— Բայց դու հիվա՞նդ ես, ո՛վ քաջդ Մերուժան։

— Իսկ իմ զինվորները բավական առողջ են, ո՛վ քաջդ Գուրգեն։

Պատգամավորները ոտքի ելան, ասելով.

— Քեզ նույնպես ցանկանում ենք կատարյալ առողջություն։

Նրանք գլուխ տվին և հեռացան։

Զարագուշակ դրոշակը, որ այնքան սարսափ ձգեց պարսից բանակի վրա, պարզած էր այն բլրաձև բարձրավանդակներից մեկի գագաթին, ուր գտնվում էին Մերուժանի ձեռքով հրդեհված Նախճավանի ավերակները։ Դժբախտ քաղաքը դեռևս ծխում էր կրակի ու մոխրի մեջ։ Իսկ դրոշակը նրա հանդեպ ծածանվում էր, որպես մի արագահաս մխիթարություն։ Նա յուր բարձր դիրքից իշխում էր պարսից բանակի վրա։ Իսկ ահարկու բանակը բռնել էր տափարակի ամբողջ տարածությունը, որ գտնվում էր բարձրավանդակի ստորոտում։

Դրոշակի մոտ կանգնած էր Վասպուրականի Տիկինը և մեծ անհամբերությամբ սպասում էր յուր պատգամավորների պատասխանին։ Նա ոտքից ցգլուխ հագած ուներ սգավորի սև զգեստ։ Այս հագուստը կրում էր նա սկսյալ այն օրից, երբ յուր որդու, Մերուժանի, ուրացության ողբալի բոթը լսեց։ «Նա մեռա՛վ ինձ համար...»— ասաց առաքինի Տիկինը խորին հառաչանքով և այն օրից ուխտեց՝ չմերկանալ այս հագուստը, մինչև որդու կատարելիք չարագործությունները յուր բարությամբ չդարմանե։

Նրան շրջապատել էին։ յուր հետ եկած լեռնականների նահապետները, որոնց թվումն էին՝ Սամվելը և ծերունի Արբակը։ Պատանի Արտավազդը անհանգիստ կերպով այս կողմ ու այն կողմ էր ընկած և յուր անելիքը ինքն էլ չգիտեր։ Տիկնոջ մի կողմում կանգնած էր Ռշտունյաց Գարեգին նահապետը, իսկ մյուս կողմում՝ Մոկաց Վահրամ և Սասնո Ներսեհ իշխանները։

Զորքը բռնել էր զանազան դիրքեր։ Վասպուրականցիք տեղավորված էին այն բարձրությունների վրա, ուր գտնվում էր իրանց Տիկինը։ Ռշտունցիք թաքնվել էին քաղաքի այգիների մեջ, կտրելով միակ ճանապարհը, որ տանում էր դեպի Երնջակ և Ջուղայի կամուրջը։ Սա-

սունցիք փակել էին այն ճանապարհը, որ տանում էր դեպի Արտաշատ։ Մոկացիք բարձրացել էին Արաքսի կողմի բլրակների վրա։ Եվ այսպես, պարսից բանակը չորեքկողմից պաշարված էր թշնամիներով։

Վերադարձան պատգամավորները, հայտնեցին Վասպուրականի Տիկնոջը որդու պատասխանը։ Տխրության մթին ամպը անցավ պատկառելի դեմքի վրա, և նրա հեզ աչքերը լցվեցին արտասուքով։

— Ես ուրիշ պատասխան չէի սպասում,— ասաց տառապյալ մայրը ցավալի ձայնով։— Հրա՞շք կլիներ, եթե նա դարձի գար։ Բայց նա հիվա՞նդ է... նա վիրավո՞ր է...

Վերջին խոսքերի մեջ լսվեցավ մայրական սրտի դառն կսկիծը՝ յուր բոլոր հրաբորբոք վշտերով։ Նա դեռ սիրում էր որդուն, նա դեռ խնայում էր որդուն։ Նա պատրաստ էր ամեն ինչ տալ, միայն թե առանց կռվի, առանց արյան՝ կարողանար հաշտվել յուր խղճի և յուր զգացմունքների հետ։ Նա պատրաստ էր մինչև անգամ թողնել որդուն յուր կամքին, յուր մոլորությունների մեջ, եթե նրա վարմունքը ուրիշ շատ հազարավորների կորստյան պատճառ չդառնար։ Բայց նա տանում էր յուր հետ մի ահագին գերություն, տանում էր անհետացնելու նրանց Պարսկաստանի խորքերում։ Այդ գերիներից շատերը Տիկնոջ հպատակներն էին, որոնք ծառայել էին նրան ամենայն հավատարմությամբ, որոնց սիրում էր նա յուր հարազատ զավակների նման։ Ինչպե՞ս կարելի է զրկվել նրանցից։ Այս դառն մտածությունների մեջ տարուբերվում էր վշտալի կինը, երբ Ռշտունյաց Գարեգին նահապետը դարձավ դեպի նա, ասելով.

— Մենք չի պետք խնայենք նրան, որ չխնայեց յուր հարազատին[2] — իմ կնոջը, և նրան կախ տվեց Վանա միջնաբերդի աշտարակից։

Նա հիշեցրեց դժբախտ Համազասպուհու ցավալի վախճանը։

— Մենք չի պետք խնայենք նրան,— ավելացրեց Մոկաց Վահրամ իշխանը,— որ այնքան քաղաքներ մոխիր դարձրեց, որ այնքան վանքեր ու եկեղեցիներ կործանեց, որ մեր սիրելի թագավորին և մեր պաշտելի թագուհուն աքսորել տվեց և հայոց աշխարհը ծածկեց կրակով ու արյունով...

— Արյունը պետք է արյունով լվանալ,— ընդհատեց Սասնո Ներսեհ իշխանը։

— Եվ չարությունը՝ չարությամբ,— մեջ մտավ պատանի Արտավազդը։

Սամվելը լուռ լսում էր։

Նրա մոտ կանգնած էր ծերունի Արբակը, որ մի առանձին տհաճությամբ նկատեց.

— Շատ էլ որ դուք կամենաք արյունը ջրով լվանալ և չարությունը՝ բարությամբ, կարծում եք, դրանով կխափանվի՞ չարը։

— Ավելի կհաստատվի յուր չարության մեջ,— խոսեց Սամվելը։— Նա հրեշավոր Նեռն է, որ հայտնվել է մեր խաղաղ աշխարհում, յուր հետ բերելով սով, սրածություն, մոլորություն և ավերմունք։ Ինչ որ կարող էր կատարել, արդեն կատարել է։ Զղջում և ապաշխարանք չկա նրա համար։ Նա տակավին պիտի շարունակե յուր ապականությունները մեր աշխարհում։ Ինչպե՞ս խնայել նրան, որ մի մազի չափ տեղիք չէ թողել, որով կարելի լիներ ներել։ Ոչինչ չարիք պակաս չէ մնացել, որ չէ կատարել նա։ Մի՞թե կարելի է խնայել նրան։

— Ես նույնպես չի պիտի խնայեմ նրան,— ասաց սգավոր մայրը և յուր վշտալի աչքերը դարձրեց դեպի վայրացած իշխանները։— Ես հույս ունեի, որ իմ մոլորյալ որդին պատիվ կդներ մոր արտասուքին և կդառնար չար ճանապարհից։ Այդ նպատակով ուղարկեցի նրա մոտ իմ պատգամավորներին։ Ես հույս ունեի, որ նա գոնե այժմ կզղջար յուր մեղքերը։ Բայց, ինչպես երևում է, ամեն զգացմունք՝ դեպի յուր ծնողը, դեպի յուր ազգն ու հայրենիքը՝ մեռած է նրա սրտում։ Այդ պատճառով նա մեռած է և ինձ համար։ Ես կցավեմ նրա վրա, բայց երբեք չեմ ափսոսա։ Նա այլևս իմ որդին չէ։ Իմ որդիքը, իմ սիրելի զավակներն են այն բազմաթիվ գերիները, որ այժմ շղթայակապ դրած են մեր առջև, պարսից բանակում։ Եվ որպես դժբախտ Հռաքելը[3] մի ժամանակ սուգի մեջ էր, մխիթարություն չէր գտնում յուր որդիների կորստյան պատճառով,— նույնպես և ես, իբրև մի որդեկորույս մայր, հանգստություն չի պիտի ունենամ, մինչև իմ զավակներին ազատված չտեսնեմ։ Այդ գերիները իմ զավակներն են, ձեր զավակներն են և մեր հայրենիքի զավակներն են։ Մենք պետք է ազատենք դրանց։ Մենք կազատենք ոչ միայն մարմիններ, այլև հոգիներ։ Եթե դրանց տանելու լինեն Պարսկաստան, այնտեղ պատրաստ են այդ թշվառների համար Շապուհ արքայի դահիճները, որ կստիպեն՝ կամ արեգակին երկրպագություն տալ, կամ նահատակվել։ Այն օրից, որ ճանապարհ ընկանք, մենք ուխտեցինք ազատել գերյալներին։ Մենք ուխտեցինք նա՛և պատժել թշնամուն մեր երկրի սահմանների վրա։ Տերը օգնեց մեզ, և մենք անվտանգ անցանք ամեն փորձանքներից, մինչև հասանք այստեղ։ Թշնամին ահա՛ մեր ոտների ներքո է։ Այժմ ձեր քաջությունից է կախված, ո՛վ իշխաններ, կատարելու մեր ամենի սրտագին բաղձանքը, որ տիրոջ կամքն է։

— Թո՛ղ օրհնյա՜լ լինի տիրոջ կամքը, թո՛ղ փառավորվի՜ նրա անունը,— ձայն տվին ոգևորված իշխանները։

Մինչ այստեղ սույն ոգևորության մեջ էին, այնտեղ, պարսից բանակի երկնագույն վրանում, Հայոց աշխարհի ընդհանուր երկպառակության ոգին — Մեհրուժանը դեռ դանդաղում էր յուր շքեղ, մետաքսյա անկողնում։ Յուր մոր պատգամավորներին ճանապարհ դնելուց հետո երկար նա տատանվում էր մի տեսակ անեղային տագնապի մեջ, որի նմանը՝ մինչև այսօր՝ երբեք չէր ծանրացել նրա ամուր սրտի և անվեհեր հոգու վրա։ Յուր բոլոր խաղը պիտի կորցներ մի քանի րոպեում։ Նրա հետ պիտի կորցներ և յուր ամբողջ բախտը։ Ա՛յն փայլուն վաստակներից հետո, ա՛յն անհնարին հաջողություններից հետո, հանկարծ հաղթված լինել և հաղթված լինել մի պատանուց,— այս միտքը սարսափելի կերպով վրդովեցնում էր նրան։ Նա երբեք չէր վհատվի, նա երբեք այսպիսի մտատանջությունների մեջ չէր ալեկոծվի, եթե առողջ լիներ։ Բայց նա հիվանդ էր և տկար։ Հանձնել յուր բախտը և յուր զորքերի բախտը յուր զորապետներին, որոնց վրա կատարյալ վստահություն չուներ,— այս միտքը նա բոլորովին վտանգավոր էր համարում։ Գուցե, եթե մնացած լիներ Մամիկոնյան իշխանը, նա այդ հոգսերից ազատ կլիներ։ Բայց զրկվեցավ յուր ամենալավ բարեկամից և քաջ գործակցից, որին միայն կարող էր ամենայն վստահությամբ հավատալ։ Ուրեմն, ի՞նչ պետք էր անել։

Հայր-Մարդպետը, Կարեն զորապետը և պարսից մյուս աստիճանավորները դեռ նստած էին նրա անկողնի մոտ և անհամբերությամբ սպասում էին նրա հրամաններին։ Նա դարձավ դեպի յուր աստիճանավորները այս խոսքերով։

— Այժմ ես բոլորովին հասկանում եմ Սամվելի թե՛ բարեկամական պատրվակով գալուստը մեզ մոտ և թե՛ նրա անգութ վարմունքը «Իշխանաց կղզում»։ Նա եկավ մեզ մոտ հետազոտելու մեր բանակի դրությունը, կշռելու մեր ուժերը, և նախքան մեր դեմ պատրաստված պատերազմի սկսելը, ոչնչացնելու մեր զորքերի առաջնորդներին, որպեսզի, նրանք անգլուխ մնալով, ավելի հեշտ լիներ հաղթություն շահել։ Ես այժմ ոչինչ տարակույս չունեմ, որ նա սպանել է յուր հորը, և ինքը այս րոպեիս գտնվում է իմ մոր մոտ։

— Դու կարծում ես, որ Սամվելը քո մոր խորհրդո՞վ էր հնարել յուր դավադրությունը,— հարցրեց Հայր-Մարդպետը։

— Ես այդ չեմ կարծում։ Իմ մայրը այնքան ազնիվ կին է, որ երբեք խաբեական միջոցներով մարդիկ չէր ուղարկի մեզ դավ դնելու, և ոչ Սամվելը հանձն կառներ մի այսպիսի ստորության։ Բայց, այսու-

ամենայնիվ, ես աներկբա եմ, որ նրա գալուստը մեզ մոտ, եթե ոչ իմ մոր խորհրդով, այլ, անտարակույս, նրա գիտությամբն է եղել։ Սամվելը եկավ մեզ մոտ երկու նպատակով. նախ, աշխատել համոզելու յուր հորը և ինձ, որ մենք թողնենք մեր սկսած ձեռնարկությունը և միանանք ուխտադրուժ նախարարների հետ, որոնք հավատարիմ են մնացել իրանց թագավորին և հին դենությանը։ Իսկ եթե չհաջողվի նրան համոզել մեզ, այնուհետև գործ դնել յուր սուրը։ Այդպես էլ արավ նա։ Նա եկավ մեզ մոտ՝ որպես նահատակի զոհ, և ես չեմ կարող չնախանձվել նրա անձնազոհության եռանդով, որ հատուկ է միայն բարձր, քաջազնական հոգիներին։ Եթե ես նրա նման մի քանի մարդիկ ունենայի, շատ բախտավոր կլինեի...

Նա դարձյալ ընկղմվեցավ խորին մտածությունների մեջ։ Բայց նրա վերջին խոսքերը վիրավորեցին Հայր-Մարդպետին։ Վիրավորվեցան և պարսից աստիճանավորները։

— Հիվանդության ջերմը քեզ տենդային դրության մեջ է դրել, Մեհրուժան,— ասաց Հայր-Մարդպետը յուր ամուր, խրոխտալի ձայնով։— Դու քո խոսքերը չես կշռում։ Մինչև մի տհաս, երազամոլ երիտասարդի չափ համարմունք չունե՞նք քո աչքում։ Դու հանգիստ կա՛ց քո մետաքսյա փափուկ անկողնում, և թո՛ղ այդ բժիշկները դարմանեն քո վերքը։ Մենք կգնանք և քո թշնամիների հետ կվերջացնենք մեր գործը։ Մի՞թե պարսից Արքայից Արքայի զորք, կրթված զինվորները պիտի դողան մի քանի բուռ վայրենի լեռնականների առջև։

— Գնացե՛ք,— պատասխանեց հիվանդը զայրացած ձայնով։— Հրամայեցե՛ք թմբուկները հնչեցնեն, և զորքը պատրաստվի կռվելու։

Հետո դարձավ դեպի յուր սենեկապետը.

— Ասա՛, թող պատրաստեն իմ ձին և իմ զենքերը։

Հայր-Մարդպետը սաստիկ սարսռացավ, որ առիթ ավեց հիվանդի վրդովմունքին։ Բռնեց նրա ձեռքը, աղաչելով.

— Խնայի՛ր քեզ, Մեհրուժան։ Դու հիվանդ ես և բավական տկար։ Դու բոլորովին կհյուծես և իսպառ կենսամաշ կանես քո անձը։ Այժմ հանգիստ կաց քո վրանում, և գոնե այսօր զորքի հրամանատարությունը թող մեզ։ Դու կատարելապես վիրավորած կլինես քո աստիճանավորներին, եթե այդ ծառայությունից կզրկես նրանց։

Պարսիկ աստիճանավորները նույնպես սկսեցին թախանձել, որ նա դուրս չգա յուր վրանից, և յուրաքանչյուրը հայտնում էր յուր դժգոհությունը, թե ինչո՛ւ նա թերահավատությամբ է վերաբերվում դեպի իրանց ծառայությունները։

— Շնորհակա՛լ եմ ձեր կարեկցության և մանավանդ ձեր հավա-

տարմության համար,— պատասխանեց հիվանդը։— Բայց ես այժմ բոլորովին առողջ եմ զգում ինձ։ Իմ զինվորներն այնքան սովորած են ինձ, որ եթե մեռնելու լինեի, դարձյալ կպատվիրեի ձեզ, որ իմ դագաղը տանեիք իմ գնդերի առջևից։ Դա անպատճառ կխրախուսեր և քաջալերություն կներշնչեր նրանց։

Եվ իրավ, պարսից բանակը արդեն սաստիկ հուզման և խորին իրարանցման մեջ էր։ Ամեն մի զինվոր գիտեր, որ պաշարված է թշնամիներով։ Առաջին բոթը զգացին չորեպանները և ձիապանները, որ բանակից հեռու արոտներ էին արածացնում։ Նրանք, հենց որ նկատեցին թշնամու մոտենալը, իսկույն հավաքեցին բոլոր անասուններին և սկսեցին փախչել դեպի բանակը։ Այդ ժամանակ արևը դեռ չէր ծագել, դեռ բավական մութն էր։

Թշնամու հարձակման բոթը անցել էր և գերիների քարավանի մեջ։ Բայց նրանց համար բոթ չէր, այլ փրկության ավետիք էր։ Այդ խղճալիների ուրախությունն ու արտասուքը սահման չուներ։ Շղթայակապ գազանների նման ցնցում էին երկաթյա կապանքները և, իրանց աղոթավոր հայացքը դեպի երկինք դարձնելով, անհամբերությամբ սպասում էին աստուծո ուղարկած ազատիչներին։

Այդ միջոցին հրապարակի վրա հայտնվեցավ սպիտակ ձիավորը՝ Մերուժանը։ Դարձյալ վեհապանծ շքով, դարձյալ նրա անհարկու զենքն ու զրահը փայլում էին դյուցազնական փառքով։ Ամենևին չէր նշմարվում, որ հիվանդ է։ Նրա մխիթարական երևույթը ընդհանուր ոգևորություն ներշնչեց բանակի մեջ։ Զորքը սիրում էր նրան։ Չկար մի զորապետ, որ նրա նման առատաձեռն կերպով վարձատրեր զինվորի քաջությունը։ Նա յուր զորքի լավ բարեկամն էր և սոսկալի հրամանատարը։

Զորքը արդեն կազմ ու պատրաստ էր հրապարակի վրա։ Նա դարձավ դեպի զինվորները մի քանի քաջալերական խոսքերով։ Նրա ձայնը հնչում էր յուր նախկին ամրությամբ, նրա խոսքերը հեղվում էին որպես բոցավառ սրտի ազդու քարոզներ։

— Զինվորնե՛ր,— ասաց նա,— դուք մինչև այսօր ամենայն բավարարությամբ արդարացրիք այն բաղձալի հույսերը, որ դրել էր ձեզ վրա՝ մեր ամենիս տերն ու թագավորը՝ արեգնափայլ Արքայից Արքան, երբ նա յուր հայրական օրհնությամբ ձեզ ճանապարհ դրեց Տիզբոնից դեպի Հայաստան։ Ձեր քաջությունների փառավոր արդյունքն է՝ այն անհարկու բերդերն ու ամրոցները, որ գրավեցինք մենք Հայոց երկրում։ Ձեր քաջությունների փառավոր արդյունքն է՝ այն հզոր քաղաքները, որ կործանեցինք մենք Հայոց երկրում։ Ձեր քաջությունների փառավոր

արդյունքն է՝ այն անթիվ գերությունը և այն անբավ ավարն ու հարստությունը, որ մեզ հետ պիտի տանենք Պարսկաստան։ Պայծառ Արամազդը օգնեց մեզ, և մենք հրաշալի հաղթություններով պիտի թողնեինք Հայոց երկիրը, որ շուտով մեզ էր պատկանելու։ Մեր բանակը դրած էր այդ երկրի սահմանների մոտ, և մի քանի օրից հետո պետք է ճանապարհ ընկնեինք։ Բայց հանկարծ անակնկալ թշնամին փակեց մեր ճանապարհը։ Մենք այժմ պաշարված ենք կատաղի լեռնականների ահագին բազմությամբ։ Մեր բոլոր վաստակը, մեր բոլոր փառքն ու պարծանքը կորած կհամարվի, եթե չպատժենք հանդուգն թշնամուն, եթե չխորտակենք նրա խոլական ամբարտավանությունը։ Ես մեծ հույս ունեմ, ով քաջ զինվորներ, որ դուք, որպես միշտ, նույնպես և այսօր ցույց կտաք ձեր անպարտելի զորությունը։ Ես մեծ հույս ունեմ, որ դուք թշնամու դիակների վրայով ձեզ ճանապարհ կհարթեք, որով կստանաք պայծառ Արամազդի օրհնությունը և մեր աստվածափառ Արքայից Արքայի շնորհը, որի խոնարհ ծառաներն ենք մենք ամենքս։

Զորքը միաձայն որոտաց.

— Թո՛ղ օրհնյա՛լ լինի պայծառ Արամազդը, թո՛ղ փառավորվի՜ արեգնափայլ Արքան։

Այնտեղ յուր քաջերին ոգևորում էր մայրը, այստեղ՝ որդին։ Այնտեղ պատրաստվում էին ազատելու գերյալներին, այստեղ պատրաստվում էին ի տար աշխարհ վարելու։ Կռիվը մոր և որդու մեջ էր։ Մայրը առաջնորդում էր Հայոց երկրի անձնանվեր զավակներին։ Որդին առաջնորդում էր Հայոց երկրի արյունարբու թշնամիներին։ Մեկը բարձրացրել էր Հիսուս Քրիստոսի փրկարար խաչը։ Մյուսը՝ Զրադաշտի ճաճանչավոր Արեգը։ Կրոնը մարտնչում էր կրոնի հետ, դյուցազները՝ դյուցազանց հետ։

Թեև Մերուժանը շատ նպաստավոր կարծիք չուներ պարսից բարձր աստիճանավորների մասին, որպիսին էր Կարեն զորապետը, որոնք առաջ էին անցել ավելի տոհմային և արտոնական առավելություններով, քան թե անձնական արժանավորություններով,— բայց, այնուամենայնիվ, պարսից ստորաստիճան սպաների կարգում կային իսկապես քաջ զորագլուխներ և լավ մարդիկ։ Դրանց վրա լիահույս համարմունք ուներ Մերուժանը։ Միայն գլխավոր դժվարությունը նրանումն էր, որ բանակը դրած էր մի այնպիսի տեղում, որը ավելի ժամանակավորապես օթևանելու իջևանի հարմարություն ուներ, քան թե ռազմական ամրություններ։ Դա, իհարկե, չէր կարող վհատեցնել Մերուժանին, եթե նրան չսպառնար մի այլ վտանգ,— ներքին վտանգ։ Այդ

էր պատճառը, որ երբ պետք էր զորքը ասպարեզ հանել, նա հրամայեց՝ սկզբում պաշտպանողական դիրք բռնել։

Հայր-Մարդպետը սկսեց սաստիկ հակառակել նրան, պնդելով, թե պետք է ուղղակի հարձակում գործել և ցրվել թշնամուն։

— Շատ ամոթ կլինեի,— ասաց նա,— որ մենք մեր վահաններով ծածկվեինք, և համբերությամբ սպասեինք, որ թշնամին յուր նետերը արձակեր մեզ վրա։ Նրանք մեզ, իրավ է, պաշարման դրության մեջ են դրել, բայց շատ դժվար չէ՝ իսկույն ևեթ նրանց պաշարման դրության մեջ փակել։ Թշնամու ուժերը բաղկացած են ըստ մեծի մասին հեծելակներից։ Բավական է միայն հրամայել մեր քաջ հեծելազորի բազմությանը՝ հեռանալ բանակից և շուրջանակի պաշարել նրանց։

— Ինչպե՞ս հեռանալ բանակից, Հայր-Մարդպետ,— պատասխանեց Մերուժանը հուզված ձայնով։— Մե՛ր ամենավտանգավոր թշնամին հենց մեր բանակի միջումն է։

— Ի՞նչ թշնամի։

— Ահա՛ այդ գերիների բազմությունը։ Դրանք կդառնան դեպի մեզ...

— Ինչո՞վ։

— Իրանց շղթաներով կսկսեն ջարդել իրանց պահապանների գլուխները։

— Եթե մի այսպիսի ցույց անելու լինեն, մենք կհրամայենք իսկույն կոտորել բոլորին։

— Ո՞ր մեկին կոտորել։ Նրանց թիվը մեր զինվորներից պակաս չէ։

Հայր-Մարդպետը մտածության մեջ ընկավ։ Մերուժանը պնդեց յուր կարծիքը, ասելով.

— Մենք երկու գործ ունենք կատարելու. մի կողմից պետք է զսպենք գերիներին, որ նրանք չապստամբվեն մեր դեմ, մյուս կողմից՝ պետք է կռվենք նորեկ թշնամու հետ։ Այդ պատճառով, պաշտպանողական դիրքը, գոնե սկզբում, ավելի նպաստավոր է մեզ։

Հայր-Մարդպետը դարձյալ մնաց յուր համոզման մեջ, բայց չհակառակեց։

Մինչ այստեղ այս վիճաբանությունների մեջ էին, Վասպուրականի Տիկնոջ հետ եկած իշխաններն ու նահապետները, առանց խորհրդի, առանց նախամտածության, հանձնեցին իրանց միայն աստուծո կամքին և, Մերուժանի մոր աջը համբուրելով, առին նրա օրհնությունը, հետո յուրաքանչյուրը դիմեց դեպի յուր զորքը։ Տիկնոջ մոտ մնացին միայն Արծրունյաց տան դրանիկներն ու ծառաները և մի քանի խումբ զինված հադամակերտացիք, որ չհեռացան նրանից։

Նա նստած էր ճանապարհորդական փոքրիկ թախտի վրա, և չորս

սաննկապետներ, չորս ձողերից բռնած, պահել էին նրա գլխի վրա մի փառավոր ամպհովանի, որ զարդարած էր ոսկեթել փունջերով ու ծոպերով։ Արեգակը արդեն սկսել էր այրել, և օրվա տոթը հետզհետե անտանելի էր դառնում։

Հանկարծ Տիկնոջ գիրկն ընկավ պատանի Արտավազդը, որ, փաթաթվելով նրա պարանոցին, սկսեց աղաչել.

— Թո՛ղ տուր, մայրիկ, ես էլ գնամ նրանց հետ... ես էլ կռվեմ...

— Դու հանգիստ կաց, զավակս,— պատասխանեց Տիկինը, փայփայելով նրա ոսկեզօծ սաղավարտը։— Դեռևս ի՞նչ քո գործն է կռիվը։ Երբ աստուծով կմեծանաս, այն ժամանակ շատ առիթներ կունենաս կռվելու։

Պատանու վառվռուն աչքերում հայտնվեցան արտասուքի կաթիլներ։

— Ես ումի՞ց եմ պակաս,— ասաց նա տրտնջալով։— Ինձ միշտ կրկնում են, թե պիտի մեծանա՛ս... Հիմա խո երեխա չեմ... Բավական մեծ եմ...

Տիկնոջ վշտալի աչքերում նույնպես հայտնվեցան արտասուքի կաթիլներ։ «Անմե՛ղ երեխա,— մտածեց նա,— մի՞թե քեզ էլ տանջում է հայրենիքի դժբախտության ցավը, մի՞թե դու էլ զգում ես, թե ի՞նչ չարիքներ են կատարվում մեր աշխարհում...»։

— Հանգիստ կա՛ց, զավակս,— կրկնեց նա, համբուրելով անզուսպ պատանու գունաթափ երեսը։— Դու մնա՛ ինձ մոտ, սիրելիս, այստեղից կաղոթենք և կնայենք, թե ի՛նչպես են կռվում ուրիշները։

Արտավազդի բարկությունից ուռած շրթունքները դողդողացին։ Փոքր էր մնում, որ նա թռցներ բերանից յուր գաղտնիքը, ասելով, թե ինչո՞ւ են իրան միշտ տղայի տեղ դնում, երբ որ նույն իսկ Տիկնոջ որդին, պարսից զորքերի հզոր հրամանատարը, որ այժմ վիրավոր է,— դա կատարվել է յուր նետերի շնորհիվ։ Բայց նա ծածկեց մանկական սրտի հրաբորբոք վրդովմունքը և մնաց Տիկնոջ մոտ։

Տիկնոջ տխուր հայացքը դարձավ դեպի պարսից բանակը, ուր մի քանի ժամից հետո պիտի վճռվեր բյուրավոր գերյալների վիճակը։ Դրանք հայր ունեին, մայր ունեին, տուն և զավակներ ունեին։ Հազարավոր սրտեր պիտի ուրախանային նրանց ազատությամբ, հազարավոր սգավորներ պիտի մխիթարվեին նրանց վերադարձով։ Այդ միտքը լցնում էր առաքինի կնոջ հոգին անսահման երանությամբ, և յուր ալետանջ սրտի ամենաջերմ բաբախմունքով սպասում էր կռվի վախճանին։

Բայց, միևնույն րոպեում, նրա սգավոր աչքերի առջև ներկայանում էր որդին,— հիվանդ, վիրավոր որդին։ Հիվա՞նդ էր նա մարմնապես,

հիվա՞նդ էր նա և հոգեպես։ Ի՞նչը կարող էր բժշկել նրան։ Ի՞նչը կարող էր ապառաժ սիրտը փափկացնել և պարսկական ախտերով ու մոլորություններով վարակված հոգին՝ կրկին դեպի ուղղություն վերածել։

Որդու հիվանդության պատճառների վերաբերությամբ դեռ ստույգ տեղեկություններ չուներ նա։ Սամվելը այդ մասին դեռ ոչինչ չէր ասել։ Նրան հայտնել էին այսքանը միայն, թե որսորդության միջոցին, փոթորկի ընդհանուր խառնակության ժամանակ, սխալմամբ արձակած նետի է հանդիպել։ Իսկ Մամիկոնյան իշխանի սպանման մասին դեռ ոչինչ չգիտեր։

Մոր մի կողմում կանգնած էր նույն պատգամավորը, որին ուղարկել էր որդու մոտ։ Դարձավ դեպի նա, հարցնելով.

— Դու լավ նայեցի՞ր նրա վրա, Գուրգեն։

— Ինչպես չէ, տիկին։ Համարյա մի ժամ տևեց մեր խոսակցությունը։ Բոլոր ժամանակը միշտ նայում էի նրա վրա։

— Շա՞տ էր մաշված։

— Ոչ այնքան։ Միայն բավական գունաթափվել էր։

— Նա իմ մասին ոչինչ չհարցրե՞ց։

— Ոչինչ։ Ամենևին։

— Եվ յուր կնո՞ջ և յուր զավակների՞ մասին։

— Դարձյալ ոչինչ։

— Քարասի՜րտ,— բացականչեց տառապյալ մայրը, սգավոր գլուխը շարժելով։— Նա ամեն ինչ մոռացել է... նա ամեն ինչ ուրացել է...

Կրկին դժբախտ կինը ընկղմվեցավ տխուր մտածությունների մեջ, կրկին դառն արտասուքը սկսեց հոսել վշտալի աչքերից։

Մյուս անգամ դարձավ նա դեպի հավատարիմ զորապետը, հարցնելով.

— Դու ինչո՞ւ չգնացիր կռվելու, Գուրգեն, դու ինչո՞ւ մնացիր այստեղ։

— Ես մնացի, որ իմ ձեռքի տակ եղած մարդիկներով պահպանեմ այդ բերդը, ուր գտնվում ես դու, Տիկին,— պատասխանեց ծերունի զորապետը։

— Դու կարծում ես, որ նա կհարձակվի և մո՞ր վրա։

— Անպատճառ։ Նրա առաջին ջանքը կլինի՝ գրավել այդ բարձրավանդակը և քեզ, Տիկին, գերի վերցնել։ Ձեռքս կկտրեմ, եթե այդպես չանե։

— Ի՞նչ պիտի շահե ինձ գերի վարելով։

— Շատ բան, Տիկին: Նա քեզ համարում է յուր վտանգավոր ախոյանը և թշնամին:

Մեջ մտավ պատանի Արտավազդը.

— Երբ նա կհամարձակվի ոտք դնել այդ բարձրության վրա, ես առաջինը կլինեմ, որ նրա վրա նետեր կարձակեմ:

Տիկինը գրկեց սրբազան վրդովմունքով վայրացած մանկությունը և համբուրեց:

Նախճվանի գետի կողմից, սև թուխպի նման, առաջ էր մղվում մի մթին ամբոխմունք, և որքան մոտենում էր, այնքան աճում էր, այնքան ստվարանում էր: Նա դուրս եկավ գետի ափերը ծածկող ծառաստանի միջից, և արագ ընթացքով շարժվում էր դեպի պարսից բանակը: Դա լեռնականների մի բազմություն էր, որ բաղկացած էր թեթև զինված աղեղնավորներից և տիգավորներից: Նրանց առաջնորդում էր Ռշտունյաց Գարեգին նահապետը: Երբ մերձեցան, բանակից բավական հեռավորության վրա կանգ առին, մնացին անշարժ:

Մերուժանի արծվի հայացքը դարձավ դեպի թշնամին: «Սկսեցին...»— մտածեց նա և, դառնալով դեպի յուր մոտ գտնված համհարզներից մեկը, հրամայեց.

— Ասա՛ Կարենի զորապետին, որ մի քանի գունդ քաջ աղեղնավորներով և սպարակիր տիգավորներով գնա այդ կողմը:

Հրամանը իսկույն կատարվեցավ:

Միևնույն ժամանակ, որպես մի արագահոս փոթորիկ, որ տարվում է քամու ուժգին հոսանքից, և յուր կատաղի ընթացքի միջոցում սրբում է, ավերում է ամեն մի հանդիպած խոչընդոտություն,— այսպես մի ահավորությամբ հայտնվեցան մի քանի խումբ ձիավորներ: Թըմբուկների որոտը, նախընթաց դոռումն ու գոչումը՝ կարապետում էին հանդուգն արշավանքին: Նա սլացավ և, կայծակի արագությամբ ճեղքելով պարսից բանակի մի ծայրը, անցավ: Նա անցավ, ավելի աղմկելով և խռովության մեջ դնելով ընդարձակ բանակը, քան թե որևէ վնաս պատճառելով, և իսկույն անհետացավ մերձակա բլուրների ետևում:

Մերուժանը նայում էր:

— Բավական հաջող կերպով կատարվեցավ խաղը,— ասաց նա ժպտալով:— Կցանկանայի գիտենալ, թե ո՞վ էր այդ համարձակ ձիավորների առաջնորդը:

— Սամվելը,— պատասխանեցին նրան:

— Սամվե՞լը,— կրկնեց Հայր-Մարդպետը, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:— Վատ չէ՜... Նա յուր հորից ընծա ստացավ պար-

սից Շապուհ արքայի պարգևած ոսկեզույն նժույգը։ Այժմ նույն նժույգով արշավում է Շապուհ արքայի բանակը... Այդ նժույգը՝ յուր ճակատի ճերմակ աստղով՝ հայտնի էր, որպես բարեհաջող հատկություններով օժտված մի ձի։ Բայց նա հաջողություն շնորհեց ոչ թե հորը, այլ որդուն...

Սամվելի երևույթը, իրավ, այն աստիճան ուժգին ցնցում պատճառեց պարսից ծանր, լայնանիստ բանակին, որ ամենքը սաստիկ իրարանցման մեջ ընկան։

— Բայց ո՞ւր կորավ նա,— հարցրեց Հայր-Մարդպետը։

— Ինչո՞ւ ես շտապում,— պատասխանեց Միրուժանը։— Նա դարձյալ կհայտնվի, և գուցե շուտով կհայտնվի։

Միրուժանը դեռ ամենայն սառնասրտությամբ սպասում էր թշնամուն, սպասում էր, որ նա բավական մոտենա։ Նրա արագավազ լըրտեսները տարածվել էին դեպի ամեն կողմ, դիտում էին թշնամու շարժումը, և իսկույն լուրեր էին բերում։

Նրա սուր ուշադրությունից չվրիպեցավ, որ Սամվելը ճեղքեց պարսից բանակի այն ծայրը, որ կողմում գտնվում էր գերիների կարավանը։ Դա առանց նպատակի չէր։ Նա հասկացավ, և իսկույն կարգադրեց, որ զինվորները ամուր շղթայով շրջապատեն գերիներին, որպեսզի նրանք թշնամու հետ հաղորդակցություն չունենան։ Բայց շըրջապատող շղթայի մեջ մնաց մի մարդ, որ դանդաղ քայլերով դեգերում էր կարավանի մեջ, և երբեմն գաղտագողի կերպով ակնարկություններ էր անում գերիներին։ Ծանոթ աչքը կարող էր այդ ծպտյալ անձնավորության մեջ ճանաչել Սամվելի հայտնի փայակին՝ Մալխասին։

Կռիվը, բոլորից առաջ, սկսվեցավ դեպի Արտաշատ տանող ճանապարհի կողմից, ուր մանր բլրակների ետևում թաքնված էին սասունցիք։ Պարսից զինվորներին առաջնորդում էր Հայր-Մարդպետը։ Նրա ամեհի նժույգը դողում էր, ծալվում էր յուր վիթխարի հեծյալի անհեթեթ ծանրության ներքո, որի ամբողջ մարմինը պատած էր պղնձով ու պողպատով։ Նրան ախոյան հանդիպեցավ Սասնո Ներսեհ իշխանը, որ ձայն արձակեց խորին արհամարհանքով.

— Արշակ թագավորի կանանոցի ներքինապետությունը թողնելով, ո՛վ Հայր-Մարդպետ, այժմ պարսից զինվորների առաջնորդ ես դարձել։ Դա, իրավ, բավական օտարոտի է թվում ինձ։

— Ինչո՞ւ, ո՛վ քաջդ Ներսեհ,— պատասխանեց ներքինին յուր խռպոտ ձայնով։— Դերերի փոփոխությունը երբեմն վատ չէ լինում։

— Բայց կանանցաբարո ներքինու գործը՝ պետք է կանանց հաս-

բակության հետ լինի, ուր տիրում է մեղկ քնքշություն, և բնավ տեղիք չունի արյունոտ զենքը։

— Փորձենք, և դու կհամոզվես, որ կանանցաբարո ներքինին կարող է գործ ունենալ և քաջ սասունցիների հետ։

Վերջին խոսքերի միջոցին, երկու ախոյանները, իրանց ծանր նիզակները ուղղելով, նժույգների բոլոր թափով հարձակվեցան միմյանց վրա։ Հայր-Մարդպետի նիզակի ծայրը դիպավ Սասնո իշխանի երկաթապատ կողքին, և քերելով անցավ։ Իսկ Սասնո իշխանի նիզակը ուղիղ դիպավ Հայր-Մարդպետի պղնձակուռ կուրծքին և, որպես ապառաժի վրա զարկվելով, բոլորովին փշրվեցավ։ Զինակիրը իսկույն տվեց նրան մի այլ նիզակ։ Նրանք հեռացան միմյանցից, կրկին հարձակում գործելու համար։

Զորքը, երկու կողմից ևս, դեռ անշարժ կանգնած, անհամբերությամբ սպասում էին իրանց առաջնորդների մենամարտության վախճանին։

Երկրորդ հարձակումը կատարվեցավ ավելի սաստիկ կատաղությամբ։ Այս անգամ երկուսի նիզակներն ևս ետ նահանջվեցան և, դիպչելով պողովատյա լայն վահաններին, շեղվեցան նպատակից։ Բայց նրանց փոխարեն՝ նժույգների զրահապատ կուրծքերը՝ ուժգին շառաչմամբ զարկվեցան միմյանց։ Հայր-Մարդպետի ձին դղրդվեցավ, ընկրկվեցավ, և ապա ծնկների վրա ցած ընկավ։ Այդ միջոցին Սասնո իշխանը ուղղեց յուր նիզակը դեպի ներքինիի կոկորդը։ Բայց ձին իսկույն վեր բարձրացավ, և հարվածը մնաց ապարդյուն։

Այսպես երկու հզոր ախոյանները երկար մաքառում էին միմյանց հետ, և երկուսն էլ մնացին անպարտելի, մինչև Սասնո իշխանը ձայն տվեց.

— Խոստովանում եմ, ո՛վ Հայր-Մարդպետ, որ Արշակ թագավորի կանանոցի կնամարդին, միևնույն ժամանակ, և՛ քաջ մարտիկ է։

Կռիվը սկսվեցավ երկու կողմի զորքերի մեջ։ Պարսից սպարակիրները զարմանալի հարձակումներ էին գործում։ Սասունցիք իրանց երկար աղեղներով թափում էին նետերի ամբողջ տարափ։ Լեռնցին, բնության քաջությունը, մարտնչում էր կրթված, կանոնավորված արիության հետ։ Օդը լցված էր թանձր փոշիով։ Զենքերի և զրահների բախումն և շառաչյունը խլացնում էին ամեն ձայն։ Արյունը հոսում էր ջերմ վտակներով...

Մինչ այստեղ կռիվը յուր սարսափելի գործողության մեջն էր, բանակի մյուս կողմում, իրանց Գարեգին նահապետի առաջնորդությամբ,

մարտնչում էին ուշտունցիք։ Պարսից զորքերին կառավարում էր Կարեն զորապետը։

Այդ միջոցին, Մերուժանը, շրջապատած յուր թիկնապահներով ու համհարզներով, մի արագաշարժ ճախարակի նման, անդադար սլանում էր երբեմն այս կողմն, երբեմն այն կողմը, դիտելու կռվի ընթացքը։ Դեպի որ կողմը և գնում էր նա, կարծես, յուր հետ տանում էր արհավիրք և սոսկում։ Պարսից զինվորները, նրա ներկայությամբ ոգևորվելով, հրաշքներ էին գործում։

Նա նկատեց, որ Կարեն զորապետի կողմը փոքր առ փոքր նահանջվում էր, և ուշտունցիք արդեն սկսել էին հաղթական աղաղակներ բարձրացնել։ Իսկույն սպիտակ նժույգը քշեց դեպի այն կողմը և մտավ նետերի փոթորկի մեջ։ Մեծ եղավ նրա թե՛ զարմանքը և թե՛ վրդովմունքը, երբ հեռվից տեսավ ծերունի Արբակին, որ նիզակը ձեռին, բոլորովին տասցդ երիտասարդի նման, մաքառում էր մի պարսիկ սպայի հետ։ Նա դարձավ դեպի Կարեն զորապետը, ասելով.

— Տեսնո՞ւմ ես, Կարեն, քո սպանած ծերունի Արբակը այժմ հարություն է առել։

Կարենը ամոթից շփոթվեցավ, պապանձվեցավ։ Մերուժանը հիշեցրեց նրա առավոտյան հայտնած ստախոսությունը, որով պարծենում էր, թե ինքը «Իշխանաց կղզում» սպանեց ծերունի Արբակին։

— Կալանավորեցեք այդ խաբեբային,— հրամայեց նա։— Արքայից Արքայի զորապետին՝ որքան ներելի չէ երկչոտ լինել, այնքան ավելի ներելի չէ ստախոս լինել։

Հրամանը իսկույն կատարվեցավ։

Մերուժանի հայտնվիլը նոր ուժ և նոր ոգի ներշնչեց պարսից զինվորներին, որոնք աներևակայելի քաջությամբ սկսեցին եռ. մղել կատաղի թշնամուն։

Այդ միջոցին Մերուժանի և Գարեգին նահապետի ոխերիմ աչքերը հանդիպեցան միմյանց։

— Մերուժան,— ձայն տվեց Գարեգին նահապետը,— այդ երկրորդ անգամն է, որ մեր աշխարհի դժբախտ հանգամանքները մեզ ընդհարում են միմյանց հետ։ Մի անգամ Վան քաղաքում, իսկ այժմ Նախճավանի ավերակների մոտ։ Այն ժամանակ դու սատաչ էիր, սպանել տվեցիր իմ կնոջը, և փախար իմ ձեռքից։ Այժմ հիվանդ ես, չգիտեմ՝ ինչպես պիտի վարվես ինձ հետ։

— Իսկույն կտեսնես,— պատասխանեց Մերուժանը արհամարհանքով։— Այդես հարցնելու պետք չկա։

Վերջին խոսքերի հետ՝ նետվեցավ նա Ուշտունյաց նահապետի վրա, որը մի շարժում անգամ չգործեց, ասելով.

— Ես հրաժարվում եմ։ Կռվել հիվանդի հետ՝ միևնույն է, որպես կռվելը դիակի հետ, որքան և արյունապարտ լիներ նա ինձ։

Մերուժանը սաստիկ վայրացավ։

— Ո՛վ Ուշտունյաց տեր,— գոչեց նա,— քո մեծահոգությունը ավելի վիրավորական է, քան թե քո նիզակի հարվածը, եթե քեզ հաջողվելու լիներ վայելել այդ փառքը։ Այո՛, ճշմարիտ է, իմ հրամանով սպանվեցավ քո կինը, և սրբազան վրեժխնդրությունը պարտք է դնում քեզ վրա՝ պահանջել ինձանից քո կնոջ արյունը։ Եվ հենց այդ իսկ պատճառով, դու պետք է չհրաժարվես ինձ հետ կռվելուց։

Նա կրկին հարձակում գործեց։ Բայց մեջ մտան պարսից զինվորները, գոռալով.

— Մեր արյունը թո՛ղ սահման դնե քո և Ուշտունյաց նահապետի մեջ։ Կռիվը այժմ մեզ է պատկանում։

Մերուժանը ետ քաշվեցավ։

Կրկին սկսվեցավ կռիվը երկու կողմի զինվորների մեջ, կրկին լսելի եղավ զենքերի մահաբեր բախումները։ Ոմանք նիզակներով, ոմանք սուսերամերկ, խողխողում էին միմյանց։ Ուշտունյաց լեռնաբնակները պաշտպանվում էին թեթև, քեմխատապատ վահաններով։ Իսկ պարսիկները՝ իրանց ծանր, երկաթապատ ասպարներով։

Մերուժանը, կարգելով Կարեն զորապետի փոխարեն յուր քաջ համհարզներից մեկին, և թողնելով կռիվը յուր սոսկալի բորբոքման մեջ, ինքը դիմեց դեպի Նախճվանի ավերակների կողմը, ուր՝ մի բլրաձև բարձրավանդակի վրա՝ գտնվում էր նրա մայրը։ Նրան հետևում էին մի քանի գունդ լավ զինված ձիավորներ։ Թանձր փոշին, մոխրագույն ամպերի նման, պատել էր այն ճանապարհը, որտեղից անցնում էր նրա ահարկու հեծելազորը։ Նա առաջ էր շարժվում ամենայն փութով, առանց կանգ առնելու, և առանց մի տեղ հանգստանալու։

Գուրգենը, Վասպուրականի Տիկնոջ ծերունի վարապետը, հեռվից նկատեց Մերուժանի արագընթաց արշավանքը դեպի իրանց բնակած դիրքը, և իսկույն շտապեց Տիկնոջ մոտ։ Զարմացական ժպիտը երեսին, ալեոր գլուխը շարժելով, ասաց նա.

— Տեսնո՞ւմ ես, Տիկին, ես չսխալվեցա։ Ահա Մերուժանը գալիս է դեպի մեզ։ Գալիս է՝ մոր և յուր սեփական հպատակների հետ կռվելու։ Եթե նրան հաջողվի հաղթություն տանել, անտարակույս, կտանե և քեզ, Տիկին։

— Ո՞ւր կտանե,— հարցրեց տառապյալ կինը վշտալի ձայնով։

— Պարսկաստան։ Այնտեղ, ուր այժմ Անուշ բերդի մթին նկուղների մեջ հեծում է Հայոց թագավորը։ Այնտեղ, ուր աքսորվեցավ Հայոց թագուհին։ Կտանեն նրանց մոտ...

— Մի՞թե այդ աստիճան անգութ կլինի նա։

— Նրա անգթությունը սահման չունի, որպես և սահման չունի նրա մեծամտությունը։

Մայրական գութը և անապորույն որդու պատճառած վիշտը՝ փոփոխակի կերպով սկսեցին ալեկոծել դժբախտ կնոջ սիրտը։ Արտասուքը աչքերում դարձավ նա դեպի ծերունի զորապետը, ասելով.

— Թո՛ղ օրհնյալ լինի աստուծո կամքը։ Ինչ որ տնօրինել է նա, չէ կարող փոխել անզոր մահկանացուն։ Թո՛ղ գա ապերախտը։ Կռվեցեք նրա զորքերի հետ, բայց յուր վրա բնավ զենք չբարձրացնեք։

Տհաճության մռայլը անցավ ծերունի զորապետի խորշոմած դեմքի վրա, և նրա խորիմաստ աչքերը վառվեցան սրտմտության բոցով։ Բայց զսպելով յուր հուզմունքը, բավական մեղմ կերպով նկատեց.

— Մենք չէինք ցանկանա, Տիկին, տիրասպան լինել, եթե նա ոտնահարած չլիներ ամեն ինչ, որ սուրբ է մեր ամենիս համար։ Բայց մարտնչում է մեր գոյության դեմ, մեր կրոնի դեմ և մեր պետության դեմ։

Տիկինը պատասխանեց.

— Քրիստոնեական առաքինությունը պարտք է դնում մեզ վրա, Գուրգեն, շա՛տ և շա՛տ անգամ ներել մոլորյալին։

Ծերունի զորապետը դժկամակությամբ լռեց։

Այնտեղ կանգնած էր պատանի Արտավազդը և խորին վրդովմունքով լսում էր Տիկնոջ պատվերները։ Նա չհամբերեց, ասելով.

— Իսկ ես նետեր կարձակեմ նրա վրա։ Ես այժմ գիտեմ, թե ո՛րպես կարձակեմ...

Փոքր էր մնում, որ նա խոստովանվեր յուր առաջվա սխալը, որ կատարվեցավ «Իշխանաց կղզում», երբ տակավին ծանոթ չէր Մեհրուժանի գաղտնի զրահավորության մասին։

Տիկինը տխրությամբ նայեց զայրացած պատանու վրա և ոչինչ չասաց։ Նրա մանուկ սրտում եռ էր գալիս մանուկ Հայաստանի վրեժխնդրության ոգին։

Մեհրուժանը յուր ձիավորների բազմությամբ արդեն մոտ էր այն բարձրավանդակի ստորոտին, որի վրա գտնվում էր նրա մայրը։ Նա մի արագ պտույտ տվեց, անցավ դեպի այն կողմը, որտեղից միակ զառիվեր ուղին տանում էր դեպի մոր գտնված տեղը։

Ծերունի Գուրգենը, թողնելով Տիկնոջ մոտ մի խումբ թիկնապահներ, առեց յուր հետ մնացյալ վասպուրականցիներին և շտապով դիմեց դե-

ալի թշնամին։ Կռիվը տեղի ունեցավ Մերուժանի ձեռքով հրդեհված Նախճավանի ավերակների մոտ։ Վասպուրականցիք, մի քանի րոպեում, նրա կործանած քաղաքի քարերից՝ կանգնեցրին նրա դեմ մի ամուր պատնեշ։ Թաքնվելով պատնեշի ետևում, սկսեցին նետեր արձակել։ Ոմանք պարսատիկներով նետում էին քարեր։ Նրա ավերակ դարձրած քաղաքի բեկորները նետում էին դեպի նրա գլուխը։ Մերուժանը, արհամարհելով այդ բոլորը, յուր ձիավորների խուռն բազմությամբ առաջ էր ընթանում։ Նրա ձիավորները զինված էին նիզակներով և սրերով միայն։ Իբրև պատսպարան, կրում էին և ասպարներ։ Պետք էր շատ մոտ տարածություն, որպեսզի նրանք գործ դնեին իրանց զենքերը։ Այդ պատճառով աշխատում էին մերձենալ։ Բայց վասպուրականցիք այն աստիճան կատաղած էին, որ ոչ միայն ամեն կողմից զանակոծում էին ձիավորներին, այլ մոռանալով իրանց Տիկնոջ պատվերը, չէին խնայում և նրա որդուն։

Նիզակն ու սուրը, նետն ու տապարը, շատ կարելի է, մինչև անգամ չազդեին Մերուժանի ամրակուռ, պղնձապատ մարմնի վրա։ Նա խիստ վարպետությամբ զրահավորել գիտեր։ Բայց հազարավոր պարսատիկներով արձակած քարերը, որ ռումբերի նման տեղում էին նրա վրա, կարող էին մի քանի րոպեում, բոլորովին ջարդել նրան և ծածկել խճերի կույտի ներքո։ Այսուամենայնիվ, հրամայեց յուր ձիավորներին՝ պատառել պատնեշը և առաջ անցնել։

Ձիավորները աներկյուղ հարձակմամբ գրոհ տվին պատնեշի վրա, սկսեցին մի կողմից քանդել, մյուս կողմից կռվել։ Ինքը Մերուժանը նետվեցավ կռվի փոթորկի մեջ։ Այդ միջոցին մի քար դիպավ նրա ձիու ճակատին։ Ձին ցնցվեցավ, դողդողաց, և ուշաթափ լինելով, ցած գլորվեցավ։ Նա ընկավ, այն կողքի վրա, որ կողմումն էր Մերուժանի վիրավոր ոտքը։ Յուր խռովության մեջ, Մերուժանը ամենևին չզգաց, թե ի՛նչ կատարվեցավ յուր վերքի հետ։ Փաթոթը թուլացավ, և վերքը սաստիկ շփվելով գետնին, արյունը սկսեց հոսել...

Մայրը հեռվից նկատեց որդու ընկնելը։ Ամբողջ աշխարհը մթնեց նրա աչքերի առջև։ Ողբալի աղաղակներով ցած իջավ յուր գահավորակից, և կուրծքը կոծելով, սկսեց վազել դեպի որդին։ «Անողո՜րմ... անգո՜ւթ մարդիկ...»— ճիչ էր արձակում նա, և դողդոջուն քայլերով շարունակում էր վազել։ Նրան մեծ դժվարությամբ կարողացան պահել, հասկացնելով, թե ձին է ընկել և ոչ որդին։

Մայրը հանգստացավ, երբ տեսավ, որ ձին, հուշի գալով, կրկին վեր բարձրացավ, և Մերուժանը դարձյալ նստեց նրա վրա։

Բայց արյունը նրա վերքից մեղմ հոսանքով գնում էր և, թամբից

իջնելով, ճերմակ ձիու ճերմակ փորի վրա արդեն գծել էր մի քանի բարակ, ոլորուն վտակներ։ Թիկնապահներից մեկը նկատեց այդ, բայց կարծելով, թե ձին ընկնելու միջոցին ինքը վիրավորվեցավ, այդ պատճառով ոչինչ չհայտնեց։

Մեռուժանը կանգնելուց հետո կռիվը ավելի սաստկացավ։ Նրա ձիավորները արդեն պատառել էին պատնեշի մի մասը և անցել էին մյուս կողմը։ Վասպուրականցիք ետ էին քաշվել, դեռ շարունակում էին հեռվից քարեր ու նետեր արձակել։ Այդ միջոցին Մեռուժանի համհարզներից մեկը նրա ուշադրությունը դարձրեց մի այլ երևույթի վրա, ասելով.

— Բանակի մեջ խռովություն կա...

Մեռուժանը նայեց դեպի այն կողմը։

— Այդ ես սպասում էի...— մռնչաց նա և բոլորովին գունաթափվեցավ։— Այնտեղ կռվում են գերիները...

Նա թողեց մարտը, շտապեց դեպի գերիները։

Սամվելը, որ առաջին անգամ մի խումբ ձիավորներով ճեղքեց պարսից բանակի այն ծայրը, որտեղ գտնվում էր գերիների կարավանը, երկրորդ անգամին վերադարձավ նա ավելի ստվար խմբով։ Զարմանալի արագությամբ, պատառելով գերիներին շրջապատող զինվորների շղթան, շեշտակի կերպով նետվեցավ նրանց կարավանի մեջ։

— Հասա՜վ փրկության րոպեն,— աղաղակեց նա։— Զարկեցե՛ք, փշրեցե՛ք ձեր կապանքները։

Գերիներից յուրաքանչյուրը, որպես մի մարմնացած վրեժխնդրություն, հարձակվեցավ պահապան զինվորների վրա։ Ոմանք կռվում էին բռունցքներով, ոմանք իրանց ոտների շղթաներով։ Շատերը վազեցին դեպի բանակը, խորտակեցին վրանները, և նրանց սյուները մահակների նման ձեռքում բռնած, հարձակվեցան զինվորների վրա։ Ամբողջ բանակը տակնուվրա եղավ։ Խնայեցին միայն Սամիկոնյան իշխանի շիկակարմիր վրանին, ուր դրված էր Սամվելի հոր դագաղը։ Ընդհանուր կատաղությունը սահման չուներ։ Կռվում էին տղամարդիկը, կռվում էին և կանայքը։ Կռվում էին ծերերը, կռվում էին և մանուկները։ Նրանց թվում գտնված եկեղեցականներն անգամ խառնվեցան արյան և կոտորածի սոսկալի գործողության մեջ։ Բյուրավոր գերյալների բյուրավոր ձեռքերը բարձրացած էին իրանց գերիչների վրա։

Սամվելը աներևակայելի քաջությամբ շանթում էր երբեմն այս, երբեմն այն կողմը։ Նա այնպիսի սրընթաց թափով անցնում էր հուզված, ալեկոծված կարավանի միջով, որպես հրեղեն կայծակը անցնում է ցամաք շամբուտների միջով։ Երբ կոտորածը արդեն հասել էր

յուր սարսափելի ահավորությունը, երբ արյունը արդեն հոսում էր հորդ վտակներով, այդ ժամանակ ձայն արձակեց նա.

— Բավական է։ Սկսեցե՛ք այժմ ձեր շղթաներով կապել ձեր գերիներին։ Աստված դրանց մատնեց մեր ձեռքը։ Այժմ մենք գերի կվարենք դրանց դեպի մեր երկիրը։

Միրուժանը վրա հասավ այն ժամանակ, երբ ամբողջ բանակը սոսկալի խառնակության մեջ էր, և բոլոր գերիները ապստամբված, կատաղի կերպով մարտնչում էին։ Բայց նա չկարողացավ մոտենալ ապստամբներին, որովհետև նրա առաջը կտրեց Մոկաց Վահրամ իշխանը, որ դեռ անշարժ սպասում էր Արաքսի թաղթաղուկների մեջ։

Մոկացիք այնպիսի մի անակնկալ կերպով դուրս եկան Միրուժանի հանդեպ, որ նրա զայրացած դեմքի վրա երևաց սովորական ժպիտը, ա՛յն զազրն, աղետավոր ժպիտը, որ հայտնվում էր տագնապի րոպեներում, և նա ծիծաղելով ձայն արձակեց.

— Հենց դո՛ւք էիք պակաս, ո՛վ Մոկաց լեռների դևեր ու սատանաներ։

— Կախարդները երկյուղ չունեն դևերից ու սատանաներից,— պատասխանեց Վահրամ իշխանը։

Երկուսի լուրերն էլ հասարակաց կարծիքի մեջ հիմք ունեին. մոկացիք հայտնի էին որպես դիվաբարո ժողովուրդ, իսկ Միրուժանը՝ որպես կախարդ։

Բայց նրա կախարդությունները այս անգամ մնացին բոլորովին ապարդյուն...

Արևը վաղուց արդեն մտել էր, գիշերային մթությունը պատել էր սարերից խորտակված, քայքայված բանակատեղը։ Խաղաղ էր գիշերը և լուռ։ Միայն երբեմն լսելի էին լինում հաղթական աղաղակներ։ Կռիվը մի քանի տեղերում տակավին շարունակվում էր։

Այդ միջոցին Միրուժանը խելագարի նման չգիտեր՝ ո՛ր կողմը գնալ։ Նրա ականջներին զարկում էին բոթաբեր աղաղակները, նրա սիրտը տրոփում էր սոսկալի խռովությամբ, և նա դեռ հույս ուներ, որ կարող է վերադարձնել կորած փառքը։

Նրա թիկնապահները, նրա մտերիմ համհարզները, գիշերային մթության մեջ, կռիվների ընդհանուր շփոթության ժամանակ, կորցրել էին նրան։ Նա չէր նկատում, որ մնացել է միայնակ։

Բայց նա զգում էր մի տեսակ հոգնություն, մի տեսակ սպանիչ թուլություն։ Զգում էր, որ առողջ դրության մեջ չէ։ Գլուխը պտույտվում էր, աչքերի առջևը ավելի և ավելի մթնանում էր։ Հազիվհազ կարողա-

նում էր իրան պահել ձիու վրա։ Սրբնցածի նման չգիտեր թե ի՛նչ է կատարվում յուր հետ։ Ձին տանում էր նրան յուր կամքով։ Սանձը արդեն ընկել էր նրա ձեռքից։

Վերջը ողնսպառ և ուժաթափ եղած մարմինը փոքր առ փոքր դեպի մի կողմն թեքվեցավ, և նա գլխիվայր կախ ընկավ ձիու կողքից։ Խելացի ձին կանգ առեց և մի քայլ անգամ չփոխեց։ Նա դեռ այնքան տիրապետում էր իրան, որ զգաց, թե ոտները մնացին ասպանդակների մեջ։ Երկար մաքառում էր, մինչև կարողացավ ոտները ազատել ասպանդակներից։ Ընկավ խոտերի վրա։ Ձին չհեռացավ նրանից։

Մի քանի րոպե մնաց ուշաթափության մեջ, անշարժ, որպես դիակ։ Ձին դունչը տխրությամբ տարավ դեպի նրա գլուխը և սկսեց յուր տամուկ ռունգներով շոշափել նրա ճակատն ու երեսը, տեսնելու, թե ի՛նչ պատահեց սիրելի տիրոջ հետ։ Նա դարձյալ հուշի եկավ։

Կատարված իրողությունները ներկայանում էին նրան որպես մի խառնաշփոթ երազ։ Տեսնում էր թշնամու մթին գունդերը, տեսնում էր արյունաներկ սրերի ահարկու փայլը, լսում էր նրանց վայրենի գոռումն ու գոչումը։ Տեսնում էր և մոր սպառնական դեմքը...

«Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից...»— բացականչեց նա և գլուխը վեր բարձրացրեց ընկած տեղից։— «Ես չեմ կամենում տեսնել քո աղետավոր երեսը...»։

Նա մնաց նստած։ Գլուխը սաստիկ բորբոքման մեջ էր, իսկ սիրտը, կարծես, այրում էին կրակով։ «Ա՜խ, եթե մի կաթիլ ջուր լիներ...»— ձայն արձակեց խորին հառաչանքով, և սկսեց թույլ մատներով խարխափել յուր շուրջը։ Նրա ձեռքը շոշափեց մի ինչ-որ հեղուկ, մի ինչ-որ թացություն։ Ուրախացավ։ «Ահա՛ ջո՜ւր»... բացականչեց նա և աշխատում էր ափովը վեր առնել հեղուկը։ Բայց թանձր հեղուկը միայն թրջեց նրա ձեռքը, որը տարավ դեպի բոցավառ շրթունքները և սկսեց կատաղի ագահությամբ լիզել։

Նա լիզում էր յուր սեփական արյունը, որ լճացել էր գետնի վրա...

Սկսյալ այն րոպեից, երբ մոր վրա արշավելու միջոցին ցած գլորվեցավ նրա ձին, սկսյալ այն րոպեից, երբ բացվեցավ նրա վերքը, արյունը անընդհատ կերպով գնում էր։ Ձիու ցնցումը մի կողմից, անդադար հարձակումները դեպի պատերազմի դաշտի զանազան դիրքերը, մյուս կողմից, ավելի և ավելի սաստկացնում էին արյան հոսումը։ Կռիվների հրատապ ջերմության մեջ, ամբողջ օրը նա այն աստիճան հափշտակված էր յուր գործողություններով, որ բնավ չնկատեց, թե ի՛նչ է կատարվում յուր հետ, մինչև իսպառ արյունաքամ եղավ, թուլացավ և ընկավ...

Մինչ Երկաթյա մարդը այսպես տանջվում էր օրհասական տագնապի մեջ, այդ միջոցին Սամվելը, յուր ըղձալի բաղձանքներին հասած, գերիներին ազատած, շտապում էր դեպի հոր շիկակարմիր վրանը։ Նա շտապում էր ազատելու հոր դագաղը, որովհետև վախենում էր, մի գուցե լեռնականները, իրանց անզուսպ կատաղության մեջ, հարձակվեին հանգուցյալի վրանի վրա և իրանց վրեժխնդրությունը գործ դնեին նրա դիակի վրա, պատառ-պատառ անելով և կալի դաշտի երեսին ցրվելով։ Նա գնում էր յուր վերջին պարտքը և հարգանքը մատուցանելու յուր հորը։ Թեև նրա բոլոր ցանկությունները արդեն կատարվել էին, թեև նա այժմ իրավունք ուներ լիապես ուրախ լինելու, բայց, ընդհակառակն, խիստ տխուր էր։ Տխուր էր, որովհետև պիտի հանդիպեր ա՛յն սգավոր դագաղին, որի մեջ դրված էր յուր ձեռքով սպանված հայրը։

Բայց հոր փոխարեն ճանապարհին հանդիպեց նրան կիսամեռ Մերուժանը։

Երբ Սամվելը յուր ասպախումբով անցնում էր, հանկարծ գիշերային խավարի միջից լսելի եղավ ձիան խրխնջալու մի խիստ թախծալի ձայն, որ, կարծես, օգնություն էր կանչում։ Սամվելը դիմեց դեպի այն կողմը։ Նրա աչքին ընկավ Մերուժանի հայտնի նժույգը, որ յուր ճերմակությամբ բավական պարզ կերպով նշմարվում էր գիշերային մթության մեջ։ Նա դարձավ դեպի յուր խումբը, ասելով.

— Իսկույն մի ջահ վառեցե՛ք։

Պատանի Հուսիկը վառեց ջահը։

Մերուժանը դեռ թավալվում էր յուր արյան մեջ։

Սամվելը տեսավ, և նրան տիրեց մի տեսակ այլշություն, որ առաջ է գալիս սաստիկ ուրախությունից և սաստիկ բարկությունից։ Ցած իջավ ձիուց, և մի քանի րոպե, անշարժ կանգնած, նայում էր մահամերձ հերոսի վրա և յուր ալետանջ անվճռականության մեջ չգիտեր, թե ի՛նչպես պետք էր վարվել նրա հետ — արդյոք կտրե՞լ վերջին շունչը, թե թողնել։

Ջիաների հանկարծակի ոտնաձայնը փոքր-ինչ հուշի բերեց օրհասականին։

— Այստեղ մարդ կա՞,— ձայն տվեց նա, աշխատելով գլուխը վեր բարձրացնել, որը դարձյալ ընկավ գետնի վրա։

— Կա,— պատասխանեց Սամվելը։

— Ինչպե՞ս վերջացավ կռիվը։

— Թշնամիները հաղթեցին։

— Հաղթեցի՞ն,— բացականչեց նա և կրկին փորձեց բարձրացնել ծանրացած գլուխը։

— Այո՛, հաղթեցին,— կրկնեց Սամվելը։

Բոթաբեր լուրը այն աստիճան ուժգին հարվածով ցնցեց նրա մռայլված ուղեղը, որ նա բոլորովին սթափվեցավ։ Մի քանի վայրկյան տիրեց նրան մի տեսակ խորհրդավոր լռություն,— հուսաբեկ սրտի և հոգեկան մաքառման դա՛ռն լռությունը։ Բաց արեց պղտոր աչքերը, բայց ոչինչ տեսնել չկարողացավ։

— Ես Մ՛երուժանն եմ,— վերջապես ասաց նա նվաղած ձայնով։— Ամեն ինչ վերջացած է ինձ համար... Ցանկանում եմ մեռնել, բայց մահը փախչում է ինձանից... Փորձում եմ սպանել ինձ, բայց չեմ կարողանում... Եթե դու իմ լավ զինվորներից մեկն ես, եթե դու սիրում ես քո հրամանատարին, կատարի՛ր այդ վերջին ծառայությունը, մերկացրո՛ւ սուրդ և հանգստացրո՛ւ ինձ... Մա՞հ եմ ցանկանում, և թո՛ղ իմ սիրելի զինվորի ձեռքից ստանամ նրան և ո՛չ իմ թշնամիների...

Նա լռեց, և մի քանի րոպեից հետո կրկին ընկավ տենդային զառանցումների մեջ։

Սամվելը մոտեցավ, և ջահի լուսավորության առջև հետազոտելով թուլացած մարմինը, նկատեց, որ արյունը հոսում էր նրան հայանի վերքից, որ ստացել էր նա «Իշխանաց կղզում» պատանի Արտավազդի նետից։ Իսկույն պինդ կապեց վերքը և, դառնալով դեպի յուր մարդիկը, հարցրեց.

— Գինի մնացե՞լ է ձեզ մոտ։

— Իմ տիկի մեջ փոքր-ինչ մնացել է,— ասաց պատանի Հուսիկը։

— Մոտ բե՛ր։

Պատանին մոտեցրեց փոքրիկ տիկը, որ քարշ էր ընկած նրա ուսից, և որով կռվի ժամանակ շիջուցանում էր յուր իշխանի ծարավը։ Սամվելը տիկը առեց նրա ձեռքից, սկսեց գինին փոքր առ փոքր ծորել մահամերձ վիրավորի բերանը։ Հետո դարձավ դեպի յուր մարդիկը, հրամայելով.

— Ցած իջեք ձիերից և ձեր վահանները դնելով վիրավորի վրա, պահպանեցեք դրան։ Ոչ ոք չհամարձակվի մոտենալ, մինչև ես կվերադառնամ։

Պատվերը իսկույն կատարեցին։

Նա կրկին նստեց ձին, և առնելով յուր հետ յուր մարդիկների մի մասը, շտապեց դեպի հոր շիկակարմիր վրանը։

Ծերունի Արբակը, որ այդ միջոցին գտնվում էր Սամվելի մարդիկ-

նիրի թվում, տեսնելով նրա մեծահոգությունը, փարձված գլուխը խոր-հրդավոր կերպով շարժեց և ինքն իրան ասաց.

«Ես չեմ հասկանում այս տեսակ գթությունները... Ի՞նչ է նշանակում կենդանի թողնել վիրավոր վիշապին...»։

Զ

ՈՂԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ

«Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. եւ բազում յինքեանց սեփականանս շինէին ատրուշանս, եւ զորդիս եւ զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզացն։ Այլ որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց... զմայր իւր»...

ՓԱՎՍՏՈՍ։

Անցավ աշունը, անցավ և Հայոց դաժանաշունչ ձմեռը։

Տարոնի ընդարձակ դաշտավայրը դեռ նոր էր սկսել կանաչազարդվել նորաբույս խոտերով, դեռ նոր նորեկ ծիծեռնակը ավետում էր գարնան ուրախալի վերադարձը։ Լեռը փոթորիկը, դադարեց բքաբեր բորեասը, և նրանց փոխարեն՝ անուշ սյուքը մեղմ ալիքներով անցնում էր թավշապատ հովիտների վրայով, տարածելով դեպի ամեն կողմ կյանք և զորություն։

Զատկանամուտի առաջին առավոտն էր։

Ողական ամրոցը այս առավոտ մի առանձին հրապուրիչ տեսք էր ստացել։ Պատերը և սենյակների ճակատները դրսից ու ներսից պատած էին կանաչ թփերով ու թարմ տերևներով։ Ծառաները, սպասավորները, նաժիշտներն ու աղախինները, ամենքը տոնական հագուստներով զարդարված, ձեռքերը և մազերը կարմիր ներկած[1], վազվզում էին այս կողմ ու այն կողմ, և օրվա պատշաճին վայել պատրաստություններ էին տեսնում։ Ամբողջ ամրոցը շնչում էր խորին, հոգեվկարթ բերկրությամբ։

Արևի առաջին ճառագայթների հետ ողջտացին պալատական նվագարանները և շարունակում էին անուշիկ հնչյուններով ածվել։ Ողական

ամրոցը տոնում էր Գարնանամուտը, որ, միևնույն ժամանակ, էր պարսից տարեմուտը[2]։

Դա չէր Հայոց սիրելի Նավասարդը, հայոց նոր տարին, որ յուրաքանչյուր ամի՝ աշխարհախումբ բազմությամբ՝ տոնվում էր Աշտիշատի ծաղկազարդ տաճարներում[3]։ Դա Հայոց համար բոլորովին խորթ և բոլորովին օտար մի տոն էր, որ առաջին անգամ կատարվում էր Մամիկոնյանների ամրոցում։

Դա պարսկական տոն էր։

Ինչե՛ր չփոխվեցան, ի՛նչ ներմուծություններ չեղան սկսյալ այն օրից, երբ Սամվելը թողեց այդ ամրոցը։ Հին, իրանց նախնական ծեսերին ու սովորություններին հավատարիմ մնացած ծառաներն ու աղախինները այլևս չկային։ Ոմանք կամովին հեռացան, ոմանց հեռացրեց Սամվելի խստասիրտ մայրը։ Նոր ծառաներն ու նոր աղախինները կրում էին պարսկական հագուստներ, խոսում էին պարսկերեն։ Նրանցից շատերը պարսիկներ էին։ Հայ քահանան այլևս մուտք չուներ այդ ամրոցում։ Նրա փոխարեն յուր կրոնական պաշտամունքը կատարում էր պարսիկ մոգը։ Տնային վարժապետները, դաստիարակները, դայակները անգամ, որոնք կրթում էին մանուկներին քրիստոնեական ոգով, քրիստոնեական առաքինություններով, փոխված էին։ Նրանց պաշտոնը կատարում էին պարսիկ մոգերը, ուսուցանելով Մազդեզանց կրոնի հրահանգները։ Կերակուրներն անգամ փոխված էին, ըմպելիքներն անգամ փոխված էին։ Փոխված էր և սենյակների կահավորություն, սարք ու կարգի ձևը։ Հին, ավանդական սովորությունների փոխարեն՝ տիրապետում էր նորը— պարսկականը։ Վաղեմի, նահապետական կարգերի փոխարեն, որոնց գեղեցկությունը հենց նրանց պարզության մեջն էր, տիրապետում էր պարսկական զեխությունը, պարսկական շռայլությունը։

Չկային նաև ամրոցի մյուս բնակիչները։ Մուշեղ Մամիկոնյանի ընտանիքը տեղափոխվել էր Տայոց երկրի Երախանի բերդում[4]։ Վարդան Մամիկոնյանի այրին՝ տիկին Զարուհին[5] յուր զավակների հետ՝ գտնվում էր նույնպես Երախանի բերդում։ Չկար և նազելի Որմիզդուխտը՝ Սամվելի խորթ մայրը։ Նա հենց այն ժամանակ թողեց Ողականի ամրոցը և գնաց Պարսկաստան, երբ Սամվելը հեռացավ այդ ամրոցից։

Ամրոցում մնացել էր միայն Սամվելի հարազատ մայրը՝ տիկին Տաճատուհին, որ այժմ միանգամայն նրա տերն ու թագուհին էր։

Նա այս առավոտ միայնակ շրջում էր ամրոցի մեծ դահլիճում, ուշադրությամբ քննում էր յուրաքանչյուր առարկան, յուրաքանչյուր

մանրամասնությունը, տեսնելու, արդյոք ամեն ինչ յուր տեղո՞ւմն էր, արդյոք ամեն ինչ կա՞ր, թե մի բան պակաս էր։ Նրա ամբողջ հագուստը փայլում էր ոսկու և գոհարների մեջ։ Փայլում էր և նրա սիրուն դեմքը։ Մերուժանի մեծամիտ քույրը Մերուժանի գեղեցկությունն ուներ, բայց զուրկ էր եղբոր դեմքի վսեմ արտահայտությունից։

Դահլիճը, տանի պատշաճին համեմատ, շքեղ կերպով զարդարված էր։ Հատակը պատած էր ամենաթանկագին գորգերով ու օթոցներով։ Պատերը ծածկված էին ամենանուրբ դիպակներով և մետաքսյա գույնըզգույն կերպասներով։ Լուսամուտներում, հախճապակյա գեղեցիկ թաղարների մեջ դրված էին նոր բացված ծաղիկներ և զանազան մըշտականաչ բույսեր։ Ջրի, գինու, օշարակների անոթներն անգամ, որ շարված էին սեղանի վրա, պատած էին հրաշալի կանաչազարդությամբ[6]։ Ամեն կողմում կանաչ, ամեն կողմում դալարիք, ամեն կողմում ժպտում էին ծաղիկները — նորեկ գարնան բերած պարգևները։ Ամբողջ դահլիճը սրսկած էր անուշահոտ վարդաջրով և բուրում էր ախորժելի հոտավետությամբ։

Նոր տարին քաղցրացնելու համար պատրաստված էին զանազան տեսակ նուրբ քաղցրավենիներ, որ համեմած էին արևելյան անուշահոտ համեմներով։ Տեղային պտուղներից, ընդարձակ, նախշուն խաներով, դրված էին սեղանի վրա յոթն տեսակ չոր մրգեղեններ, որ խառնել էին միմյանց հետ[7]։

Թեև այդ տոնը Հայոց համար բոլորովին խորթ էր և նորամուտ, բայց Սամվելի մայրը՝ տանի թագուհին այնքան շնորհք և ճաշակ ուներ, որ կարողացել էր բավական վայելուչ ձև տալ նրան։ Այդ էր պատճառը, որ շատերը պատրաստվել էին մասնակցել, եթե ոչ համակրելով, այլ ավելի տեսնելու բաղձանքով։ Բայց կային և այնպիսիները, որոնց թիվը փոքր չէր, որ պատրաստվել էին մասնակցել ամենայն սիրով և հաճությամբ։ Հեթանոսական հին սովորությունների և հին պաշտամունքների խորին հետքերը դեռ ոչ իսպառ ջնջված էին քրիստոնյա Հայաստանից։ Իսկ ոմանք ստիպված էին մասնակցել, երկյուղ կրելով Տիկնոջ չար վրեժխնդրությունից։ Մերուժանի քույրը և՛ Մերուժանի անգթությունն ուներ, բայց զուրկ էր եղբոր մեծահոգությունից։

Նա դեռ միայնակ ճեմում էր շքեղազարդ դահլիճի մեջ, որ կազմ ու պատրաստ սպասում էր այցելուներին, որ պիտի ներկայանային յուր նոր տարին շնորհավորելու։ Նայում էր շրջապատող առարկաների ճոխության վրա և հիանում էր։ Բայց նրա հիացմունքը այնքան կարճատև, այնքան րոպեական էր լինում, երբ դառնում էր յուր սրտին, յուր ներքին զգացմունքներին։ Վաղուց էր, որ ոչինչ տեղեկություն չուներ

ամուսնուց։ Տեղեկություն չուներ և որդու՝ Սամվելի մասին։ Չգիտեր նաև, թե ի՛նչ էր շինում եղբայրը՝ Մերուժանը։ Շարունակ հինգ ամիս՝ դառնաշունչ ձմեռը այնպես սաստկությամբ կտրել էր ամեն հաղորդակցություն, որ նրան դեռ հայտնի չէր, թե ի՛նչ անցքեր, ի՛նչ ողբալի գործեր էր կատարվել Հայոց աշխարհի հյուսիսային կողմերում։ Բայց նա ներքին խուլ բնազդմամբ մի բան զգում էր — և անախորժ բան։

Նրա շրջապատողների մեջ արդեն տարածվել էր մի ինչ-որ շշունջ, մի ինչ-որ քրթմնջոց, որ ամենայն ծածկամտությամբ աշխատում էին թաքցնել։ Այդ նկատում էր նա, և նրա ալետանջ սրտում ծագում էին զանազան կասկածավոր խոկումներ։ Մյուս կողմից, յուր հպատակների մեջ նկատում էր մի տեսակ սառնություն, մի տեսակ բռնադատյալ խոնարհություն, որ հակամայից ցույց էին տալիս նրան։ Ի՞նչ էր նշանակում այդ։— Նա դժվարանում էր ինքն իրան հաշիվ տալ։

Եղբոր՝ Մերուժանի, պարտության լուրը և ամուսնի սպանման բոթը՝ յուր հարազատ որդուց — դեռ նոր էին հասել Տարոն։ Բայց տակավին պտտվում էին անստուգության մթության մեջ։ Ոմանք դժվարանում էին հավատալ, ոմանք, եթե հավատում էին, վախենում էին մի ուրիշին հայտնել։ Բայց, այնուամենայնիվ, այդ համբավները խորին ուրախություն պատճառեցին նրա հպատակներին, թեև դեռ ոչ ոք չէր համարձակվում յուր զգացմունքները արտահայտել։

Նա կատարեց ավելին, քան կարելի էր կատարել։ Այն նորամուտ և խորթ ներմուծությունները, որ նրա ամուսինը և եղբայրը չկարողացան սրով ու հրով մտցնել Հայոց աշխարհում, նա մտցրեց Մամիկոնյանների խաղաղ տան մեջ անարյուն պատերազմով — ա՛յն տան մեջ, որ ամենահին ժամանակներից՝ միշտ ներկայացնել էր որպես մի ճշգրիտ տիպար քրիստոնեական բարեպաշտության։ Որքա՜ն ուրախ էր, որքա՜ն գոհ էր յուր հաջողություններով։ Նա արդեն հողը պատրաստած էր համարում և սերմը ցանած էր համարում, սպասում էր ցանկալի հունձքին։ Եվ որքա՜ն պիտի սիրեր նրան ամուսինը, երբ յուր տանը վերադառնալու ժամանակ՝ ամեն ինչ պատրաստ կգտներ։

Բայց ի՞նչն էր դրդում այդ փառասեր կնոջը՝ նետվել կրոնական խնդիրների մեջ, որ ավելի մեծ հանճարների գործ էր։ Իսկապես, ոչինչ։ Եվ եթե նրա ամուսինը և եղբայրը զանազան քաղաքական նպատակներով էին առաջ տանում իրանց ապօրինի ձեռնարկությունները, նա, ընդհակառակն, նրանց նկրտումներն անգամ չուներ։ Նա չուներ նաև կրոնական հաստատ համոզմունքներ։ Բայց իբրև կին և նորասեր կին, նա ուներ մի բան։ Նա ազնվական էր, այդ բառի բուն նշանակությամբ։

Նրա համար՝ ինչ որ վերևից էր գալիս, ինչ որ վերևումն էր կատարվում,— բոլորը լավ էր։ Պարսից արքայական գերդաստանի հետ խնամության կապեր ունենալով, նա շատ անգամ առիթ էր ունեցել պարսից արքունիքում լինելու և ծանոթ էր Շապուհի ընտանիքի հետ։ Արքունիքը հիացրել էր նրան։ Եվ որպես Շապուհի կանանց հագուստն ու զարդերը նրան դյուր էին գալիս, նույնպես և դյուր էր գալիս նրան Շապուհի պաշտած կրոնը։ Աշխատում էր նմանվել։ Աշխատում էր, որ յուր զավակները նույն լեզվով խոսեին, որով խոսում էին արքունիքում, աշխատում էր, որ նրանք նույն բարձր կրթությունն ունենային, որ վայել էր արքունիքին։ Ինչ որ ազգային էր, և ինչ հայկական էր, նրան խիստ ռամկական էր թվում և, մինչև անգամ, ամոթալի։ Ինչո՞ւ միշտ կարմրել պարսիկների մոտ, ինչո՞ւ միշտ պակաս մնալ,— այդ մտքերը վրդովեցնում էին նրան։

Նա մոտեցավ լուսամուտին, նայեց արեգակին։ «Ինչո՞ւ այդքան ուշանում են... ի՞նչ է նշանակում այդ...»— մտածեց ինքն իրան, և նրա անհամբեր դեմքի վրա երևացին բարկության նշմարներ։ Մի՞թե յուր բոլոր պատրաստությունները պետք է ապարդյուն մնային։

Սպասավորները մեկ-մեկ ներս էին մտնում ու դուրս էին գնում, զանազան իրեղեններ բերելով ու տանելով։ Ներս մտավ և ներքինապետը, հաճոյամոլ Բագոսը, յուր լերկ ու լպիրշ դեմքով։

Թեև Բագոսը վայելում էր յուր Տիկնոջ խորին հավատարմությունը, բայց դարձյալ Տիկինը յուր արժանապատվությունից ստոր համարեց հայտնել նրան, թե կասկած ունի, մի գուցե տոնախմբությունը այն շքեղությամբ չկատարվի, որքան ցանկալի կլիներ։ Բայց խորամանկ ներքինին այն աստիճան ուսումնասիրած էր յուր Տիկնոջ բնավորությունը, որ հենց նրա երեսին նայելով, հասկացավ, թե ի՛նչն է աղմկում նրա փառասեր սիրտը, և կեղծ ժպիտը երեսին ասաց.

— Մի քանի իրեղեններ պետք է դուրս տանել, Տիկին։

— Ինչո՞ւ։

— Որովհետև տեղ չի լինի բոլոր այցելուների համար։

— Այդ ահագին դահլիճո՞ւմ։

— Բայց այցելուների բազմությունն էլ ահագին կլինի։

Տիկինը ուրախացավ։ Բայց թաքցնելով յուր ուրախությունը, դարձավ դեպի ներքինապետը, փոքր-ինչ զայրացած ձևանալով.

— Պետք է կարգի ու կանոնի սովորեն, Բագոս։ Հարկավոր չէ, որ ամեն մի այցելու մնա դահլիճում և ավելորդ տեղ բռնի։ Նրանք կգան, ընդունված բարեմաղթությունները կանեն և, իմ օրհնությունը

տանելով, դուրս կգան կից սենյակը, այնտեղ կսպասեն։ Երբ կվերջանա ընդունելությունը, այնուհետև ինձ հետ միասին կգնան ատրուշանը, երկրպագություն տալու սրբազան կրակին և ներկա գտնվելու հանդիսավոր զոհաբերության արարողությանը։— Հասկացա՞ր։ Գնա, ասա տաճարապետին, նա այդ կարգերը լավ գիտե, թո՛ղ այնպես կարգադրե բոլոր ծեսերը, որ ամեն ինչ ըստ պատշաճին կատարվի և վայելուչ։

Ներքինապետը գլուխ տվեց և անվերջ ժպիտը երեսին հեռացավ։

Տիկինը մնաց միայնակ։ Այժմ նա հանգիստ էր, այժմ լիապես հույս ուներ, որ տոնախմբությունը փառավոր հաջողություն կգտնե։

Քառորդ ժամ չանցավ, երբ սենեկապետներից մեկը ներս մտավ, հայտնելով, թե ավագանին և աստիճանավորները խնդրում են ներկայանալ։

Նա անցավ դահլիճի վերին կողմը, նստեց թանկագին գահավորակի վրա։ Այդ միջոցին պալատական բարձր դրանիկները կարգով շարվեցան նրա բազմոցի շուրջը։ Ամենքը զարդարված էին տոնական հագուստներով, ամենքը զրահավորված էին ոսկեզարդ զենքերով։

Ներս մտան աստիճանավորները և ամբողջ ավագանին։ Նրանք խորին կերպով գլուխ տվին և լուռ կանգնած մնացին դահլիճի պատերի մոտ։ Տիկինը մի առանձին հաճությամբ դարձավ դեպի այցելուները այդ խոսքերով.

— Փա՛ռք և գոհությո՛ւն պայծառ Արամազդին, որ ինձ պարգևեց երջանիկներից ամենաերջանիկը լինելու վիճակը, և ես բախտ ունեմ, ո՛վ սիրելի ավագներ, ձեզ հետ միասին տոնելու այն մեծահանդես օրը, որ տոնում է ամբողջ տիեզերքը։ Թռչունն ու անասունը, վայրի խոտն ու ծաղիկը և անտառի հսկա եղևինը այսօր ուրախ են, որովհետև նորեկ գարունը բերել է նրանց համար նոր տարի և նոր կյանք։ Մարդը նույնպես պետք է յուր խնդակցությունը խառնե բնության ընդհանուր հրճվանքի հետ։ Անցավ ձմեռը յուր մահաբեր սառնամանիքներով, անցավ մռայլի ու մառախուղի թագավորությունը։ Ծագեց մեզ նոր օր յուր լուսապայծառ ջերմությամբ։ Իջավ երկնքից սրբազան հուրը և յուր կենագործող զորությամբ շունչ պարգևեց սառած տիեզերքին։ Մեռած գետինը ուժ է ստանում, քնած ծառերը զարթնում են։ Ամենուրեք շնչում է աստուծո հոգին, ամենուրեք հարություն է առնում մահացած կյանքը։ Բնության ընդհանուր գործունեության հետ՝ սկսվում են և մարդու աշխատությունները։ Հերկավորը յուր արորը տանում է դաշտը, այգեգործը սկսում է բրել խոնավ երկիրը։ Կանաչազարդ արոտների վրա սփռվում են հովվի ոչխարները։ Աշխատանքը սկսում է ևս

դալ, որպես և է գալիս ներշնչված, ոգևորված գետինը։ Ոչ միայն անհրաժեշտ է, ո՛վ սիրելի ավագներ, այլ մարդու սրբազան պարտքն է, որպես բոլոր արարածներից ավելի ուշիմագույնին և որպես բոլոր արարածներից ավելի առատությամբ վայելողին բնության պարգևները, որ նա՛, նախքան յուր աշխատությունները սկսելը, յուր գոհությունը մատուցանե այդ բոլոր բարիքները իրան պարգևողին։ Այդ իսկ նպատակով մեր արժանահիշատակ նախնիքը սահմանել էին Գարնանամուտի տոնախմբությունը[8]։ Բայց մենք, մեր նախնյաց ապաշնորհ հետևողներս, դադարեցինք կատարել։ Վերանորոգենք արդարն ու ճշմարիտը, վերադառնանք բնականին, ո՛վ սիրելի ավագներ։ Ահա՛ այնտեղ, անշեջ ատրուշանի մեջ, վառվում է աստվածային հուրը,— ամբողջ տիեզերքին կյանք և ջերմություն պարգևող արարչագործ զորությունը։ Գնա՛նք և հանդիսավոր գոհաբերությամբ մեր սերն ու գոհությունը մատուցանենք այն զորությանը, որ անհասանելի և անքննելի աստուծո սրբազնագույն օրինակն է մեր երկրի վրա, և թո՛ղ օրհնյալ լինի նրա փառքն ու պատիվը։

Տիկնոջ ճառը այն աստիճան խորին տպավորություն գործեց հանդիսականների վրա, որ ամենքը միաձայն կրկնեցին. «Եվ թո՛ղ օրհնյալ լինի նրա փառքն ու պատիվը»։

Այնուհետև առանձին-առանձին մոտենում էին և, ծունր դնելով Տիկնոջ առջև, համբուրում էին նրա աջը և ամենաջերմ բարեմաղթություններով ցանկանում էին նոր տարու հետ և նոր բախտավորություններ։

Տիկնոջ գահավորակի աջ և ձախ կողմերում դրված էին մի-մի ափսեներ, որ բոլորակ մատուցարանների ձև ունեին։ Աջակողմյան ափսեն ոսկուց էր շինված, և նրա մեջ դիզված էին ոսկյա դրամներ։ Իսկ ձախակողմյան ափսեն արծաթից էր շինված, և նրա մեջ դիզված էին արծաթյա դրամներ։ Այդ խորհրդավոր դրամները, իբրև նշան արծաթյա և ոսկյա բախտավորության, հատկապես կտրված էին նոր տարու անունով։ Պարսից արեգնափայլ արքան միայն իրավունք ուներ նոր տարու սկզբում բաժանել յուր ավագներին այս տեսակ դրամներ, և ընդ նմին պարգևել նրանց արծաթյա և ոսկյա բախտավորություններ[9]։ Իսկ Մամիկոնյան Տիկինը, իբրև ընդհանուր Տարոնի թագուհին, ցանկանալով ոչինչ պակաս չթողնել ընդունված սովորություններից, իրան թույլ էր տվել մի այսպիսի արտոնություն։ Երբ ավագները մերձենում էին նրա աջը համբուրելու, նա ձեռքը տանում էր դեպի արծաթյա և ոսկյա ափսեները, և լի բռնով վերցնելով յուր մոտ դիզված դրամներից, խառնում

էր միմյանց, և ապա ընծայում էր նրանց, փոխադարձապես ինքն ևս ցանկանալով նոր տարու հետ և նոր բախտավորություններ։

Սեննեքային մանկլավիկները, ոսկյա նախշուն սրվակներով, թափում էին այցելուների ափերի մեջ անուշահոտ վարդաջուր, որով նրանք օծում էին իրանց երեսն ու մազերը, հետո մոտենում էին անուշեղենների սեղանին, վայելելու նոր տարվա քաղցրությունները։ Այնտեղ դրված էին ամեն տեսակ բարիքներ և ամեն տեսակ ըմպելիքներ, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում էր յոթնատեսակ չոր մրգեղենների կույտը՝ Հայրենի երկրի բնության բարիքը։

Մի խումբ սպասավորներ, շքեղ կերպով հագնված, վարդապսակ գլուխներով, կանգնած էին, և յուրաքանչյուրն ձեռքում ուներ արծաթյա մեծ անոթներ, լի զանազան տեսակ անուշահամ օշարակներով և գիներով։ Անդադար լցնում էին և ոսկյա գավաթներով մատուցանում էին հյուրերին։

Դրսում նվագարանները հնչում էին։ Երգում էր քաղցրաձայն գուսանը։

Այցելությունները տևեցին բավական երկար։ Բազմությունը խումբ-խումբ ներկայանում էր և, վայելելով Տիկնոջ շնորհն ու քաղցրությունը, դուրս էին գալիս կից սենյակը, ուր պիտի սպասեին՝ ներկա գտնվելու հանդիսավոր զոհաբերությանը։ Կից սենյակում ևս հյուրերի համար ամեն տեսակ մեծարանք պակաս չէր։ Այստեղ նրանք ավելի ազատ, ավելի հոգեկլարճ կերպով անձնատուր էին լինում իրանց բավականություններին։ Խոսում էին, ծիծաղում էին, և յուրաքանչյուրը լի գոհունակությամբ արտահայտում էր յուր ուրախությունը։

Տղամարդերի ընդունելությունը վերջանալուց հետո սկսվեցավ կանանց ընդունելությունը։ Այդ վերջինների թիվը այնքան շատ չէր։ Ներկայացան միայն ամրոցում ծառայող կանայքը և մի քանի աստիճանավորների տիկինները։

Կրակի սրբարանում արդեն սկսվել էր պաշտոնակատարությունը։

Ամրոցի այն կողմում, ուր վաղեմի ժամանակներից կանգնած էր Մամիկոնյանների տոհմային եկեղեցին[10], ուր մի շարք խուցերում բնակվում էր Դրան Երեցը յուր պաշտոնյաների հետ, և կերակրվում էին իշխանական սեղանից,— այժմ նույն եկեղեցու տեղում շինված էր մի պարսկական ատրուշան։ Սամվելի մայրը քանդել տվեց եկեղեցին և նրա տեղում հիմնեց ատրուշանը։ Քրիստոնեական կրոնավորների խուցերում այժմ բնակվում էր Դրան մոգպետը յուր մոգերով։

Բարձր, սյունազարդ տաճարի միջատեղում, մարմարինյա քառա-

կուսի սեղանի վրա, վառվում էր որմզդական սուրբ հուրը և յուր անշեջ բոցերը տարածում էր մինչև տաճարի ընդարձակ կամարները։ Մոգերը, զգեստավորված ճերմակ հագուստներով և օծված անուշահոտ յուղերով, հնչեցնում էին ձեռներին բռնած փոքրիկ զանգակները, և երգելով թափոր էին կատարում կրակի շուրջը։ Բազմությունը, ծունր դրած տաճարի կամարների ներքո, լսում էր և երկյուղածությամբ երկրպագություն էր տալիս։

Տաճարի մոտ պահած էին հարյուր հատ առողջ ու անբիծ խոյեր, սպիտակ, ձյունափայլ գեղմով և ոսկեզօծ եղջյուրներով, որ պիտի հազեին[11]։

Այսօր բոլոր հանդիսականները պետք է ուտեին սուրբ տաճարի սեղանից, ճաշակելով զոհված միս։

Երբ սկսվեցավ հաղման արարողությունը, հայտնվեցավ Մամիկոնյան Տիկինը, շրջապատած յուր դրանիկների վայելչակազմ բազմությամբ։ Հանդիսավոր կերպով մերձեցավ սուրբ տաճարի սյամին և, խորին ջերմեռանդությամբ ներս մտնելով, նախ երկրպագություն տվեց կրակին և ապա երեք անգամ պտույտվեցավ սեղանի շուրջը[12]։

Այդ միջոցին բազմության մեջ անցավ մի շշուկ, մի հանկարծակի իրարանցում, որ վերջը աղմկվեցավ ուրախաձայն բացականչություններով։ Բոլորի զարմացած աչքերը դարձան դեպի այն կողմը, ուր բացվում էին ամրոցի գլխավոր դռները։

Անհամբեր քայլերով ընթանում էր մի բարձրահասակ երիտասարդ, իսկ նրա ետևից՝ մի ստվար խումբ զինված մարդիկների։

«Սամվե՜լ»... անունը հնչվեցավ հազարավոր բերաններում, և բազմությունը մի կողմ քաշվելով ճանապարհ տվեց։

Երիտասարդը մոտեցավ տաճարին։

«Սամվե՜լ»...— կրկնեց նաև մայրը, և տաճարից դուրս վազելով, գրկեց որդուն։

Հանդիպումը խիստ սրտաշարժ էր և, միևնույն ժամանակ, խիստ եղերական։

— Ա՜խ, ո՛րքան ուրախ եմ ես, ո՛րքան երջանիկ եմ ես, սիրելի Սամվել,— ասում էր կարոտյալ մայրը, բաց չթողնելով որդուն յուր գրկից,— որ դու ժամանում ես քո հայրենական ամրոցը և մի այնպիսի բախտավոր րոպեում, երբ քո մայրը կատարում է Գարնանամուտի մեծահանդես տոնախմբությունը։ Քո ներկայությունը, սիրելի Սամվել, մի նոր փայլ, մի նոր շուք կտա այդ տոնախմբությանը։

Անպատմելի տեսարանը այն աստիճան հուզեց, այն աստիճան սաստիկ խռովության մեջ դրեց անբախտ երիտասարդին, որ նա բոլորովին շփոթվեցավ, և մի բառ անգամ չգտավ պատասխանելու մորը։

Մայրը բռնեց նրա ձեռքից, ներս տարավ տաճարը։

Սամվելը թախծալի աչքերով նայեց կրակի վրա, նայեց և մոգերի վրա։ Փոփոխությունը չափազանց անմխիթարական էր։ Մտաբերեց, որ այժմյան ատրուշանը այն եկեղեցին էր, որտեղ աղոթել էին յուր նախնիքը, և որի սուրբ ավազանից ինքը ծնունդ էր առել։

— Մա՛յր,— ասաց նա խռովյալ ձայնով,— ես ինձ բոլորովին դժբախտ եմ համարում, որ, վերադառնալով իմ հայրենական ամրոցը, ամեն կարգ, ամեն սրբություն խանգարված եմ գտնում։ Եթե ցանկանում ես, որ ես քո որդին լինեմ, հանգցրո՛ւ այդ կրակը։

Մոր աչքերը վառվեցան բարկության բոցով։

— Ես աստվածասպան լինել կարող չեմ, Սամվել,— պատասխանեց նա, զայրացած կերպով հրաժարվելով։— Եթե դու իմ որդին ես, պետք է երկրպագություն տաս ա՛յն սրբությանը, որ պաշտում է քո մայրը։

— Ուրեմն, ես կսպանեմ քո աստուծուն, մա՛յր։

— Չե՛ս համարձակվի, Սամվել։

Մոգերն ու մոգպետը երկյուղից մի կողմ քաշվեցան։ Սամվելի մարդիկը շրջապատեցին նրանց։ Բազմությունը սառած կերպով նայում էր, թե ի՛նչով կվերջանա մոր և որդու կռիվը։ Տիկնոջ դրանիկներից մի քանիսը իրանց ձեռքը տարան դեպի սրերը և զայրացած դեմքով սպասում էին նրա հրամանին։ Սամվելի մարդիկը նկատեցին այդ, իրանք նույնպես ձեռքները տարան դեպի իրանց սրերը։

Անզուսպ կատաղությունը տիրեց դժբախտ որդուն։ Նրա սպառնական դեմքը այդ րոպեում ահռելի էր։ Խորին վրդովմունքով դարձավ դեպի մայրը, ասելով.

— Կրկնում եմ, մայր, հանգցրո՛ւ այդ կրակը...

— Անկարելի է, Սամվե՛լ...

— Կրկնում եմ, հանգցրո՛ւ այդ պղծությունը, եթե ո՛չ...

— Եթե ոչ, ի՞նչ կանես...

— Քո արյունով կհանգցնեմ...

— Անիրա՛վ...

— Թո՛ղ մարդիկ ինձ անիրավ կոչեն, թո՛ղ մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա՛, այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը...

Վերջին խոսքերի հետ՝ նա ձեռքը տարավ դեպի մոր գլուխը, բռնեց երկար գիսակներից, քաշ տվեց կրակի սեղանի մոտ։ Սուրը շողաց, տաք արյունը թափվեցավ սեղանի վրա...

Բազմության միջից լսելի եղան ուրախաձայն աղաղակներ.

— Արժանի՛ էր...

ՎԵՐՋ

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ 8, տ. 30. Հայաստան / Հայաստանում («Արձագանք»)

էջ 8, տ. 34. Այդ բոլորը բացատրված է ~ գրքիս վերջում։ / Այդ բոլորը բացատրված կլինի առանձին ծանոթություններով, որ կկցվի գրքի վերջում։ Բայց որովհետև ծանոթությունները համարյա վեպի կեսի չափով տեղ կբռնեին, այդ պատճառով անհարմար գտնվեցավ «Արձագանքի» էջերը ծանրաբեռնել ծանոթություններով, որ ավելի գիտնական, ժողովրդագրական և տեղագրական նշանակություն ունեին,— մյուս կողմից ծանոթությունների ընթերցումը կարող էր թուլացնել վեպի տպավորությունը։

էջ 8, տ. 37. երրորդ պատմական գրական / երրորդ գրական։

էջ 10, տ. 29. Հատ. / Հատուած

էջ 12, տ. 3. դեպի յուր / դեպի իր

էջ 12, տ. 23. և փնգալով / և վնգալով

էջ 13, տ. 8. կըծկել էր / կծկել էր

էջ 13, տ. 13. ոտով / ոտքով

էջ 13, տ. 29. յուր քայլերը / իր քայլերը

էջ 14, տ. 23. շրջապարիսպներից / շրջապատողներից

էջ 14, տ. 26. սյունի / սենյակի

էջ 14, տ. 30. Ո՞վ ես / Ո՞վ եք։

էջ 14, տ. 36. Դու բոլորովին թրջված ես / Դուք բոլորովին թրջված եք

էջ 14, տ. 37. ներս համեցիր / ներս համեցեք

էջ 14, տ. 38. չորացրու / չորացրեք

էջ 15, տ. 1. քո / ձեր

էջ 15, տ. 2. քեզանից / ձեզանից

էջ 15, տ. 4. քո / ձեր

էջ 15, տ. 7. Գոնե ներս մտիր, մի փոքր տաքացիր / Գոնե ներս մտեք, մի փոքր տաքացեք

էջ 15, տ. 12. Ճանաչիր / Ճանաչեցեք

էջ 15, տ. 13. քեզ / ձեզ

էջ 15, տ. 13. կհանձնես / կհանձնեք

էջ 15, տ. 14. դու ո՞վ ես / դուք ո՞վ եք

էջ 16, տ. 8. դիցանվեր / տիրանվեր

էջ 17, տ. 12. ամնաք չարյավծ / ամնաս բարյալծ
էջ 17, տ. 13. մաշկապատ / մաշկեղեն
էջ 17, տ. 14. Բաբելոն / Բաբիլոն
էջ 17, տ. 24. Ողականը[19] / Ողականը
էջ 17, տ. 31. անցքերի մուտքերը / ամրոցի մուտքերը
էջ 18, տ. 10. Սլուկին / Սլկունին
էջ 18. տ.12 . Սլուկին / Սլկունին
էջ 18, տ. 28. սփածված / սփածած
էջ 20, տ. 1. Ռտներին / Ոտքերին
էջ 21, տ. 21. ոտխ / ոտի
էջ 25, տ. 25. վրա / մոտ
էջ 32, տ. 6. բերե / բերեք
էջ 32, տ. 10. 'սաս / սանցեք
էջ 35, տ. 16. կուրծքի / կրծքի
էջ 36, տ. 2. արգելք գնելու / արգելք գնել
էջ 38, տ. 30. գնում, / գնում.
էջ 44, տ. 8, աքսորված էր, և /աքսորված և
էջ 44, տ. 23. Հրավիրեց / տարավ
էջ 44, տ. 32. կանանցը / կանանց
էջ 45, տ. 1. զավակը / զավակ;
էջ 45, տ. 29. բռնեց աչքերը / բռնեց նա աչքերը.
էջ 46, տ. 24. չլինենք / չլինինք
էջ 49, տ. 7. ուղղեց, և դարձյալ շարունակեց նայելու Ահա /ուղղելու Ահա
էջ 49, տ. 28. վրայից / վերայից
էջ 51, տ. 37. փչում էր /փչում է
էջ 57, տ. 29. մորթով / մորթիով
էջ 57, տ. 31. զինակրներ / զինակիրներ
էջ 57, տ. 33. Զինակրները / Զինակիրները
էջ 58, տ. 30. փոքրկի /փոքրիկի
էջ 59, տ. 1. բարձրացել էր. / բարձրացել էր,
էջ 59, տ. 20. ավելի հաստ խավ է կազմել / ավելի խավ է կազմել
էջ 59, տ. 24. ձմեռնային / ձմերային
էջ 64, տ. 23. 6946 հոգի / 6940 հոգի
էջ 65, տ. 3. 1038 քաշեր / 1030 քաշեր.
էջ 75, տ. 23. կամքը՝ իմ նախահարց նման՝ / կամքը իմ նախահարց նման
էջ 77, տ. 2. Դրանք՝ իրանց անշարժ դրության մեջ՝ / Դրանք իրանց անշարժ դրու-
թյան մեջ
էջ 77, տ. 21. ծով լինենին /ծով լինել
էջ 78, տ. 22. սրի և առանց / սրի, առանց
էջ 79, տ. 36. ժամացույցը[9] / ժամացույցը[10]
էջ 80, տ. 30. քեղանից / մեղանից
էջ 80, տ. 35. ունեն / ունին
էջ 83, տ. 30. սուրբ / Սուրբ
էջ 91, տ. 25. ճաշի / ճաշին
էջ 93, տ. 30: իրան / նրան

էջ 101, տ. 1. կավլածրները / կավլաձները
էջ 103, տ. 2. սորջացավ / սորրջացավ
էջ 111, տ. 1. քարեղեն / քարաշեն
էջ 117, տ. 3. կովի / կոիվի
էջ 118, տ. 24. բան անցավ Սամվելի / բան Սամվելի
էջ 122, տ. 19. չէ կարելի / չի կարելի
էջ 125, տ. 12. զարկվում է / ղարկում է
էջ 126, տ. 15. երեսի վրա... / երեսի վրա
էջ 129, տ. 22. սյամի վրա... / սյամի վրա
էջ 130, տ. 21. պատվանշանը[3] / պատվանշանը[9]
էջ 130, տ. 23. մեջքին[4] / մեջքին[10]
էջ 130, տ. 37. արքայից[5] / արքայից[11]
էջ 131, տ. 13. կողմը[6] / կողմը[12]
էջ 131, տ. 14. զորությունը[7] / զորությունը[13]
էջ 131, տ. 17. զավակներին[8] / զավակներին[14]
էջ 131, տ. 24. Հայրենիքին[9] / Հայրենիքին[15]
էջ 132, տ. 24. մատանին[10] / մատանին
էջ 133, տ. 5. Արտագերես[11] / Արտագերես[16]
էջ 146, տ. 20. Հայտներ / Հայտնել
էջ 157, տ. 25. բնակիչներ[33] / բնակիչներ
էջ 164, տ. 24. Հասարակությանը. / Հասարակությանը,
էջ 164, տ. 36. բոլորին / բոլորովին
էջ 170, տ. 6. իջնել սուրբ բեմից / իջնել բեմից
էջ 174, տ. 1. տոհմը, 2 / տոհմը։ 2
էջ 181, տ. 12. Հայրապետական / Հայրապետական
էջ 183, տ. 1. Երկրորդ գիրք / չիք
էջ 200, տ. 32. խորքից / խորքի

էջ 205, տ. 7. Անուշի բերդը[1] / Անուշի բերդը[1]— տողատակին այս անունը ծանոթագրված է. «Թողնելով ավելի մանրամասն բացատրությունները «Սամվելի» ծանոթությունների համար, որ պետք է տպվին առանձին հավելվածով, առայժմ ավելորդ չենք համարում նկատել, որ Անուշ բառը պարսկական Շիրին բառի թարգմանությունն է, որ արել են մեր հին պատմագրները և որ, իբրև կնոջ անուն, նշանակում է քաղցր։ Անուշը կամ պարսկերեն Շիրինը՝ Արյաց առասպելաբանական Շամիրամն է, և ինչպես Շամիրամի արկածները մեր Արայի հետ գրավեցին հայ վիպասանների ուշադրությունը, նույնպես Շիրինի արկածները Ֆարհադի հետ՝ նյութ տվեցին ոչ միայն պարսից հին և նոր բանաստեղծների երգերին, այլև մինչև անգամ և մեր աշուղների երևակայությանը։ Ամեն մի հայ աշուղ գիտե Ֆարհադի և Շիրինի վեպը։ Հայոց հին ավանդությունները Շամիրամի հիշատակին ընծայեցին Վանա վիմափոր ամրոցը, որ նրա անունով կոչվում է Շամիրամա բերդ։ Իսկ պարսից ավանդությունները Շիրինի հիշատակին ընծայեցին Բիսըթունի ամրոցը, որ նրա անունով կոչվում է նաև Ղասր-Շիրին, այսինքն՝ Շիրինի կամ Անուշի ապարանք։ Թե առաջինը և թե երկրորդը՝ իրանց շինվածքով շատ նման են միմյանց։ Երկուսն էլ տաշած են միակտուր քարից, երկուսն էլ ծածկված են հին արձանագրություններով։ Բիսըթունի արձանագրությունները կարդացվեցան վերջին տարիներում, իսկ Վանա բերդի արձանագրությունները դեռ մնացել են անվերծանելի։ Այդ երկու բերդերը միևնույն նշանակությունն են ունեցել, ծառայել են որպես բանտ աքսորյալ թագավորների համար։

Անուշ բերդը, որտեղ աքսորվեցավ մեր Արշակ թագավորը, նույն Ղասր-Շիրինը կամ Բիսըթունի հայտնի ամրոցն է, որ գտնվում է Քիրմանշահից դեպի Բաղդադ տանող ճանապարհի վրա։ Բիսըթուն անունը առնված է շինվածքի ոճից և պարսկերեն նշանակում է անսյուն, որովհետև քարից տաշած և անսյուն էին բոլոր շինվածքները»։

էջ 207, տ. 23. կպել էր / կցել էր

էջ 216, տ. 33. ծառան եմ / ծառան ես

էջ 218, տ. 34. անձնանվիրություն / անձնվիրություն

էջ 226, տ. 19. շավղովն / շավիղովն

էջ 229, տ. 22. իմացիր, թե / իմացիր այդ թե

էջ 229, տ. 28. դեմքն անգամ ծածկվեցավ / դեմքը ծածկվեցավ

էջ 230, տ. 8. սատանային / սատանայի

էջ 237, տ. 15. պահեցեք / պահեք

էջ 241, տ. 15. նույն «Արտասուքի աղբյուրի» մոտ / նույն աղբյուրի մոտ

էջ 246, տ. 33. բանակի / Բանակի։

էջ 254, տ. 34. հանցանքը հենց յուր / հանցանքը յուր

էջ 256, տ. 4. շատ հաճելի / խիստ հաճելի

էջ 260, տ. 24. բարեկամ և դաշնակից պարսիկների / բարեկամ պարսիկների։

էջ 262, տ. 34. Ջայ-մար / Ջայ-մար — տողատակին այս անունը ծանոթագրված է. «Ջայ-մար նշանակում է օձի տեղ կամ օձի բնակարան,— այսպես կոչվում էր այն ամրոցը, ուր բնակվում էր վիշապազունների (Աժդահակս) սերունդի վերջին ժառանգը, մի օրիորդ Անուշ անունով, որ ամուսնացավ Սահակ Արծրունու հետ, և այդ ամուսնությամբ վիշապազունների բոլոր ժառանգությունը անցավ Արծրունիներին (մանրամասնությունները հետո)»։

էջ 263, տ. 5. արեգակ լուսապայծառ / արեգակ լուսապայծառ — տողատակին այս շարույթը ծանոթագրված է. «Միրուման, կամ ավելի ճիշտ՝ Միհրուման դիցաբանական անուն է, որ կազմված է Միհր-ռովշան բառերից, նշանակում է արեգակ լուսապայծառ»։

էջ 269, տ. 6. հուսահատական / թեթև

էջ 271, տ. 29, ծածկում էին վանդակապատը / ծածկում էին այդ վանդակապատը

էջ 280, տ. 16. ի՞նձ / ինձ

էջ 289, տ. 29. Նստի՛ր / Նստիր

էջ 290, տ. 1. դեմքը ավելի մռայլվեցավ / դեմքը մռայլվեցավ

էջ 290, տ. 8. վերաբերվել / վերաբերվիլ

էջ 291, տ. 24. կանչում / կոչում

էջ 291, տ. 27. ժամանակ չէ, տեր սեպուհ... / ժամանակ չէ...

էջ 294, տ. 14. շփոթված, տատանման / շփոթված տատանման

էջ 302, տ. 32. արեգնային / արեգակի

էջ 305, տ. 2. դժոխային գործողությունը / դժոխային նոր գործողությունը

էջ 307, տ. 6. վրդովվում էր / վրդովում էր

էջ 319, տ. 9. մենք նույնպես / և նույնպես

էջ 332, տ. 3. չլինի / չլինեք

էջ 343, տ. 17. աքսորված էր / աքսորված

էջ 363, տ. 16. թագուհին միշտ գերության / թագուհին գերության

էջ 368, տ. 33. յոթնին / յոթին

էջ 370, տ. 27. երգեցիր։ / երգեցիր դու

էջ 374, տ. 12. խումասությամբ / խումարությամբ

էջ 378, տ. 18. գտնվում էին / գտնվում էր

էջ 378, տ. 38. Թագուհու հանդեպ / Թագուհու առջև

էջ 378, տ. 38. լուսավորության առջև / լուսավորության մեջ

էջ 380, տ. 14. Նախճվան քաղաքը / Նախիջևան քաղաքը

էջ 380, տ. 18. Առայժմ գերիների մի մասը ~ սպասում են / Առայժմ բոլոր գերիներին հավաքել, պահել են Երասխ գետի աջ ափի մոտ, Արտաշատի հանդեպ[37], սպասում են

էջ 389, տ. 21. հայրակորույս / մայրակորույս

էջ 391, տ. 27. զորապետի[7] / զորապետի

էջ 392, տ. 20. խնամատարության / խնամակալության

էջ 393, տ. 7. Հետո գնաց Ռշտունիք, տեսնվեցավ Գարեգին իշխանի հետ / չկա

էջ 393, տ. 8. տեսնվեցավ և նրանց / տեսնվեցավ նրանց

էջ 393, տ. 35. ստորոտում, ընդարձակ / ստորոտում, մի ընդարձակ

էջ 394, տ. 35. բացականչում էր / կրկնում էր

էջ 396, տ. 27. հետաքրքրական էր. / հետաքրքրական էր

էջ 400, տ. 28. այն տեսակ / այս տեսակ

էջ 400, տ. 33. այս կերակուրները / այդ կերակուրները

էջ 400, տ. 38. հասնում էինք / հասնում էին

էջ 401, տ. 9. կցանկանար / կցանկանա

էջ 401, տ. 22. հիսուն, վաթսուն / հարյուր, երկու հարյուր

էջ 409, տ. 35. եթե այս / եթե այդ

էջ 411, տ. 8. իբրև բարձր պաշտոնական / իբրև պաշտոնական

էջ 412, տ. 17. այն տեղից / այս տեղից

էջ 412, տ. 33. Բայց այս / Բայց այդ

էջ 418, տ. 17. Եկեալ ի մէջոյ... / Ելեալ ի մէջոյ...

էջ 424, տ. 15. քո ժողովուրդը / այդ ժողովուրդը

էջ 425, տ. 23. նետերը՝ հենց գործի սկզբում՝ ասպառաժներին / նետերը ասպառաժներին

էջ 432, տ. 35. «Իշխանաց կղզի» / «Իշխանական կղզի»

էջ 433, տ. 5. այն առավոտ / այս առավոտ

էջ 434, տ. 18. անհաղ / անհող

էջ 440, տ. 15. «Իշխանաց կղզին» / «Իշխանական կղզին»

էջ 444, տ. 10. արկանք[15] / արկանք

էջ 444, տ. 27. Սքանչելի է, պայծառ Արամազդը վկա, սքանչելի է / Սքանչելի պայծառ Արամազդը վկա, սքանչելի էր

էջ 445, տ. 19. վայրերի / վայրենի

էջ 452, տ. 21. երկնագույն / ծիրանեգույն

էջ 454, տ. 20. պահանջում են / պահանջում էին

էջ 456, տ. 30. տեղ էին որոնում / տեղ էր որոնում

էջ 457, տ. 20. տակին / տակից

էջ 457, տ. 23. շուրջը Ջին / շուրջը, և ձին

էջ 458, տ. 16. հեռացրեց / տարավ

էջ 460, տ. 17. Նախաճաշիկը[1] / Նախաճաշիկը[23]

էջ 461, տ. 30. ինքը հարցնելով / հարցնելով

էջ 463, տ. 2. բացի անամոթ ստախոսությունից, ինքնագովությունը ավելի մեծ տեղ

էր բռնում / Բացի ստախոսությունից, ինքնագովությունը մեծ տեղ էր բռնում

էջ 465, տ. 6. Ամենքի աչքերը դարձան / Ամենքը աչքերը դարձրին

էջ 465, տ. 16. պատգամավորները, անտարակույս, նրա / պատգամավորները նրա

էջ 465, տ. 18. տիրեց խորքին / տիրեց, անտարակույս, խորքին

էջ 468, տ. 18. Հայր-Մարդպետը խնդաց ~ խառնիճաղանճներին / չկա

էջ 468, տ. 25. խստասրտությամբ հանդերձ / խստասրտության հետ

էջ 469, տ. 8. առողջ են, ով քաջդ Դուրյենտ / առողջ են

էջ 470, տ. 24. Հարազատին[2] / Հարազատին[1]

էջ 471, տ. 23. Հարբեյր[3] / Հարբեյր[2]

էջ 475, տ. 14. մեր աստվածափառ Արքայից / մեր Արքայից

էջ 477, տ. 22. այստեղից կալվենք և կնայենք / այստեղից կնայենք

էջ 494, տ. 32. գործ էր / գործ է

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՄՎԵԼ

Ինքնագիրն անհայտ է։ Վեպի տեքստն առաջին անգամ տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթում (տե՛ս Արձագանք, 1886, №№ 7—22, 46—48, 1887, №№ 1—8, 10—12, 15—19, 21, 23—25, 27—28, 30, 34—38, 40—42, 44—48)։ Տպագրությունը սկսվել է 1886 թ. փետրվարի 23-ին և ավարտվել է 1887 թ. դեկտեմբերի 27-ին։ Տեքստին նախորդում է «Արձագանքի» խմբագրության հետևյալ հայտարարությունը. «Ներկա համարից «Արձագանքը» սկսում է Րաֆֆիի «Սամվել» պատմական վիպասանության տպագրությունը։ Պ. Րաֆֆին այնպիսի գրականական հուշակ է վայելում ազգի մեջ, որ մի հանձնարարականի կարոտ չէ մեր կողմից։ Ոչինչ չխնայելով, «Արձագանքի» բովանդակությունը, ըստ չափու կարողության և եղած գրական ույժերի, ընտիր անելու, մենք սիրով ընդունեցինք գրականության բարգավաճման նախանձախնդիր անձանց առաջարկությունը ընդհատել տալ այն վիպասանի լռությունը, որի ձայնը այնքան սիրելի էր ընթերցող հասարակության, որի երկասիրությունները մի եզակի երևույթ են ներկայացնում մեր մեջ, տարածվելով մի քանի տպագրությամբ։ Եվ ահա «Փորձի» 1876-ի աշխատակիցը տասը տարուց հետո սկսում է աշխատակցել «Արձագանքին»։ Վստահանում ենք կարծել, որ վիպասանի տաղանդը այժմ գտնելով իրան քանի մի հաջողագույն պայմանների մեջ, ավելի կհասունանա և ավելի մեծ հաջողությամբ կծառայե ազգին՝ հասարակությանը իսկական իդեալներ շնորհելով» (Արձագանք, 1886, № 7, էջ 97)։

Վեպի առաջին մասը տպագրելուց հետո «Արձագանքը» դադարեցնում է տեքստի տպագրությունը (հունիսի 8-ի համարում (№ 22) տպագրվում է առաջին մասի վերջին գլուխը՝ «Պապանի Արտավազդը»), իսկ դեկտեմբերին վերսկսում է տպագրել տեքստի շարունակությունը (№ 46, 14 դեկտեմբերի)։ Շիրվանզադեն տեքստի տպագրության համաչափ ընթացքի մեջ եղած այս դադարը բացատրում է Րաֆֆու և «Արձագանքի» խմբագրի՝ Աբգար Հովհաննիսյանի ընդհարումով։ «Կյանքի բովից» հուշագրության մեջ նա գրում է. «Սկսվեց «Սամվել» վեպի տպագրությունը։ Վեպն ամբողջովին պատրաստ չէր։ Րաֆֆին իր նախկին սովորությամբ գրում էր հետզհետե և ուղարկում էր տպարան։ Այդպես է գրել նա «Դավիթ Բեկ»-ը, «Խաչագողի հիշատակարանը»—«Մշակ»-ի համար։

Ամիսներ անցան, «Սամվել»-ը չէր վերջանում։

Հովհաննիսյանը նորից սկսեց բողոքել.

— Այդ մարդն ինձ քանդելու է տողավարձով։

Տողավարձն էր չորս կոպեկ։

Ես հրաժարվեցի միջամտելուց։ Հովհաննիսյանն ընդհատեց վեպի տպագրությունը։

Րաֆֆին զայրացավ։ Վեպի առանձին հրատարակության մամուլները փռում էին տպարանի նկուղում։ Նա հրաժարվեց ընդունել Հովհաննիսյանի առաջարկը — շարունակության համար ստանալ տողին... երկու կոպեկ։ Այս էր ամենաժողովրդական հայ գրողի վարձը» (Շիրվանզադե, Կյանքի բովից, Հուշեր, Երևան, 1982, էջ 132)։ Վեպի տեքստը «Արձագանքին» տպագրության հանձնելու պահին ամբողջական չլինելու մասին Շիրվանզադեի հայտնած տեղեկության դեմ է փաստարկում 1888 թվականի «Սամվելի» հրատարակության տիտղոսաթերթին գրաքննչական թույլտվության տեքստը, ըստ որի՝ վեպը տպագրության է թույլատրվել 1886 թվականի մարտի 5-ին («Дозволено Цензурою Тифлис, 5 марта 1886 г.»)։ Ուստի և ամենաուշը 1886 թվականի սկզբներին Րաֆֆին ավարտել էր «Սամվելի» տեքստը և հանձնել գրաքննիչին։ Շիրվանզադեն պարզապես ցանկացել է հիմնավորել իր դրույթը՝ «Րաֆֆին... գրում էր հետզհետե և ուղարկում էր տպարան»՝ խեղաթյուրելով նկատային փաստը։ Ըստ Շիրվանզադեի՝ Րաֆֆին նույն ձևով է գրել «Ղարիբ Մշեցին» վեպիկը, որը նույնպես հերքվում է աղբյուրների հաղորդած տվյալներով (տե՛ս Րաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986, էջ 42 և Րաֆֆի, Եժ 12 հատ., հ. 4, էջ 439)։ Շիրվանզադեի մյուս վկայությունը, ըստ որի վեպի տպագրությունը ընդհատվում է Րաֆֆու և Արզար Հովհաննիսյանի միջև՝ տողավարձի համար ծագած վեճի պատճառով, նույնպես ստույգ չէ։ Այս կապակցությամբ մոտ մեկ ամիս հետո, հուլիսի 6-ի համարում (№ 25) «Արձագանքը» տպագրում է հետևյալ հայտարարությունը. «Պ. Րաֆֆիի «Սամվել» պատմական վեպի շարունակության տպագրությունը հեղինակի կարգադրությամբ հետաձգվում է մինչև ներկա թվականի սեպտեմբեր ամիսը» (տե՛ս Արձագանք, 1886, № 25, էջ 341)։ «Հեղինակի կարգադրությամբ» շարույթը ցույց է տալիս, որ վեպի տպագրության դադարեցումը այլ պատճառներ պետք է ունենար, քան ներկայացնում է Շիրվանզադեն։ Նախ, եթե Րաֆֆու և Արզար Հովհաննիսյանի միջև վեճ ծագած լիներ տողավարձի պատճառով, ապա վերջինս, «Սամվելի» տպագրության դադարից հետո, մինչև այն նորից վերսկսելը (հունիսի 8-ից մինչև դեկտեմբերի 14-ը — 6 ամիս) իր շաբաթաթերթում չէր տպագրի Րաֆֆուց և ոչ մի տող, մինչև որ հեղինակի հետ չհաշտվեր։ Մինչդեռ, հենց այդ ընթացքում են տպագրվում «Խաչ-փուշ» պատկերը (Արձագանք, 1886, №№ 27, 28), «Ղարիբ Մշեցին» վեպիկը (Արձագանք, 1886, №№ 30—38), «Գաղտնիք Ղարաբաղի» ծավալուն քննախոսականը (Արձագանք, 1886, №№ 35—42, 44—46), ընդ որում շաբաթաթերթի մի շարք համարներ համարյա ամբողջովին լցված են Րաֆֆու տեքստերով։ Այս փաստերը վկայում են, որ Րաֆֆին և Արզար Հովհաննիսյանը ոչ թե գժտվել են, այլ փոխադարձ համաձայնությամբ վեպի տեքստի շարունակության տպագրությունը հետաձգել են մինչև տարվա վերջը։ Այդ թվականների լրագրական պրակտիկայում ծավալուն տեքստերը տպագրելու նման հնարանքի կիրառությունը սովորական էր։ Խմբագիրներն այդպես էին վարվում բաժանորդների թիվն ավելացնելու և նախորդ տարվա բաժանորդներին չկորցնելու համար։ Րաֆֆին քաջածանոթ էր այդ հնարանքին, քանի որ նա տարիներ շարունակ աշխատել էր «Մշակի» խմբագրությունում և մամուլում տպագրել էր իր մի շարք ծավալուն երկերը։ Այդպես էին տպագրվել, օրինակ, «Խաչագողի հիշատակարանը» (տե՛ս Եժ 12 հատ., հ. 5, Եր., 1985, էջ 623) և «Դավիթ Բեկ» (տե՛ս Եժ 12 հատ., հ. 7, Եր., 1985, էջ 567) վեպերը։

Այսպիսով, վեպի տեքստի տպագրության ընթացքում եղած դադարը պայմանավորված էր շաբաթաթերթի շահերով և «հեղինակի կարգադրությամբ» և ո՛չ թե անհատական բախումներով՝ նյութական հիմքի վրա, ինչպես ներկայացնում է Շիրվանզադեն, քանի որ այդ դադարը ընդմիջարկվում է նույն հեղինակի գրած տեքստերով, մի բան, որ վկայում է Արզար Հովհաննիսյանի և Րաֆֆու ոչ թե բացասական, այլ դրական փոխհարաբերու-

թյունների մասին։ Հատկանշական է, որ «Սամվելի» տպագրության մասին նույն գրվածքը պատմելով 1895 թ. «Հորիզոն» գրական հանդեսում տպված «Րաֆֆիի կյանքից» հուշագրության մեջ՝ Շիրվանզադեն լռում է Րաֆֆու և Արգար Հովհաննիսյանի միջև ծագած այս գժտության մասին (տե՛ս Րաֆֆին ժամանակակիցների հուշերում, Եր., 1986, էջ 41—42)։

Վեպի տեքստի տպագրությունը «Արձագանք» շաբաթաթերթում շարունակվում է 1887 թվականին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 27-ի համարում (№№ 47—48)։ Այդ մասին «Արձագանքի» խմբագրությունը հայտնում է առանձին հայտարարությամբ. «Ներկա համարում վերջանում է պ. Րաֆֆիի «Սամվել» վիպասանության առաջին, երկրորդ և երրորդ գրքերի տպագրությունը։ Չորրորդ և վերջին մասը հանդերձ ծանոթություններով հավանականորեն լույս կտեսնե առանձին տպագրությամբ նույն իսկ 1888 թվի ընթացքում։ Մեր տաղանդավոր վիպասանը այսուհետև ևս անընդհատ աշխատակցելու է մեզ թե ընդհանուր բովանդակություն ունեցող հոդվածներով և թե մանավանդ փոքրիկ վիպական գրվածքներով» (Արձագանք, 1887, №№ 47—48, էջ 741)։

Վեպը «Արձագանքում» տպագրելու հենց սկզբից Րաֆֆին նույն շարվածքը օգտագործում է (ըստ երևույթին Արգար Հովհաննիսյանի հետ համաձայնության գալով) գործն առանձին գրքով տպագրելու համար։ Այդ է վկայում Րաֆֆու՝ Ալեքսանդր Աբելյանին գրած 1887 թ. հուլիսի 28-ի նամակը. «Դեռ «Սամվելի» առաջին գլուխները նոր էին լույս տեսել «Արձագանքի» մեջ, ես շատ տեղերից նամակներ ստացա, ցանկություն էին հայտնում այդ վեպը առանձին գրքով տպագրված տեսնել։ Իմ ընթերցողների բաղձանքներին բավականություն տալու համար ես սկսեցի առանձին գրքով արտատպել «Արձագանքից»։ Մինչև այժմ տպված է 34 թերթ, այսինքն՝ 534 երես։ Հույս ունիմ մինչև նոյեմբեր ամիսը տպագրությունը վերջանա։ «Սամվելի» առաջին հատորը բաղկացած կլինի երեք գրքերից, թե՛ գիրքը և թե՛ ծավալը ավելի մեծ կլինի, քան թե «Կայծերի» երկրորդ հատորը» (ԵԺ 10 հատ., հ. 10, էջ 608)։ «Արձագանքի» շարվածքից վեպն արտատպելու մասին հայտնում է նաև 1888 թ. հրատարակության տիտղոսաթերթի երկրորդ էջը. «Перепечатано из журнала «Арцаганк»»։

Րաֆֆին իր բարեկամներին անմիջապես տեղեկացնում է գրքի լույս տեսնելու մասին և զբաղվում է տպաքանակը վաճառելու գործով (տե՛ս Միքրան Փանյանցին գրած 1888 թվականի մարտի 19-ի և 29-ի նամակները — ԵԺ 10 հատ., հ. 10, էջ 614—617)։

1887 թ. դեկտեմբերի 26-ին Վասիլ Եղիազարյանին գրած նամակում Րաֆֆին հայտնում է, որ «Տպագրությունը արդեն վերջացած է, գիրքը լույս կտեսնի տոներից հետո» (ԵԺ 10 հատ., հ. 10, էջ 614)։ Գիրքը լույս է տեսնում ո՛չ թե անմիջապես «տոներից հետո», այլ 1888 թ. փետրվարի վերջերին։ Այդ մասին տեղեկացնում են «Արձագանք» շաբաթաթերթի փետրվարի 28-ի համարում տպագրված երկու հայտարարությունները. «Այս օրերս դուրս եկավ առանձին գրքով պ. Րաֆֆիի «Սամվել» վեպի առաջին, երկրորդ և երրորդ մասերը, որ անցյալ և նախընթաց տարի տպվում էին «Արձագանքի» էջերում։ Գիրքը մեծադիր է, բաղկացած յոթ հարյուր և ավելի էջերից, թուղթը գեղեցիկ է և տիպը մաքուր։ Գրքի գինն է երեք րուբլի։ Վեպի չորրորդ մասը հանդերձ ծանոթություններով կհրատարակվի ներկա թվականի ընթացքում առանձին գրքով։ Գնել ցանկացողները օտար քաղաքներից կարող են դիմել Թիֆլիս—Կենտրոնական գրավաճառանոց կամ անմիջապես հեղինակին» (Արձագանք, 1888, № 7, էջ 82). «Լույս տեսավ Րաֆֆիի «Սամվել» պատմական վեպի առաջին, երկրորդ և երրորդ գիրքը, մի մեծ հատորի մեջ ամփոփված։ Գինն է 3 րուբլ. Օտարքաղաքացիք պետք է ուղարկեն նաև 50 կոպեկ ճանապարհի ծախս։ Վաճառվում է հեղինակի մոտ և «Թիֆլիսի Կենտրոնական գրավա-

ճառանոցում»։ Հեղինակի հասցեն В Тифлис, Акопу Мелик-Акопяну (Раффи), В редакцию «Арцаганк» (Արձագանք, 1888, № 7, էջ 92)։

Այսպիսով, հեղինակի կենդանության օրոք «Սամվել» վեպի տեքստը նույն շարվածքից տպագրվել է երկու անգամ միաժամանակ։ Առաջինը՝ «Արձագանք» շաբաթաթերթում, երկրորդը՝ առանձին գրքով։ Առանձին գրքով տպագրելուց առաջ՝ «Արձագանք» շաբաթաթերթում տպագրված տեքստի համեմատությամբ Րաֆֆին կատարել է շուրջ 250 փոփոխություն (կետադրության, բառի հավելում, նախադասության ընդարձակում, պարբերության հավելում և այլն), ընդ որում փոփոխությունների հիմնական մասը կատարված է պարբերությունների վերջին շարույթների մեջ, քանի որ շարվածքի ընդարձակ խախտումները նոր բարդությունների առաջ կկանգնեցնեին հեղինակին։ Այդ փոփոխությունները սույն հրատարակության մեջ ներկայացված են «Բնագրային տարբերություններ» բաժնում։ Նույն բաժնում դրել ենք նաև Րաֆֆու երեք ծանոթագրությունների տեքստերը, որոնք լույս են տեսել «Արձագանքում», բայց 1888 թվականի հրատարակության մեջ հեղինակը չի դրել, քանի որ դրանք, մնացած ծանոթագրությունների հետ նա մտադիր էր հրատարակել առանձին հատորով։

«Սամվել» վեպի գրության ժամանակի մասին հեղինակային ուղղակի վկայություններ չկան։ Շիրվանզադեի հաղորդած այն տեղեկությունը, ըստ որի Րաֆֆին «հետզհետե կամ «կտոր-կտոր» էր գրում և ուղարկում տպարան, հիմք է հանդիսացել մի սխալ եզրակացության, թե վեպը գրվել է 1886—1887 թթ., քանի որ վեպը տպագրվել է այդ թվականներին։ Մինչդեռ Շիրվանզադեի տեղեկությունը ստույգ չի արտացոլում իրողությունը, քանի որ ամենաուշը 1886 թվականի սկզբներին Րաֆֆին պետք է որ ավարտած լիներ վեպի գրությունը, հակառակ դեպքում, եթե ճիշտ համարենք Շիրվանզադեի տեղեկությունը, ապա Րաֆֆին գրաքննիչից թույլտվություն է վերցնում (1886 թվականի մարտի 5-ին) և հետո միայն սկսում է գրել վեպի տեքստը (1886—1887)։

Թե ե՞րբ է հեղինակն սկսել վեպի գրությունը, նույնպես որոշակի չէ։ Ըստ հեղինակի հավաստիացման ««Սամվելը» վաղուց իմ մտածությունների առարկան էր դարձել» (տես ս. հր., էջ 6)։ «Վիպագրությունը Ռուսահայոց մեջ» հոդվածում, թվարկելով իր պատմական թեմաներով գրված երկերը՝ հեղինակը «Սամվելը» դնում է «Պարույր Հայկազն» վիպակից հետո. «Մենք եղանք առաջինը, որ մտանք պատմության խորքերը և մոռացության վիհից ի լույս ածեցինք հայոց հին ժամանակների հերոսներին, երբ գրեցինք «Դավիթ Բեկը», «Պարույր Հայկազնը», «Սամվելը», (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 331)։ «Պարույր Հայկազն» վիպակը առաջին անգամ տպագրվել է «Աղբյուր» հանդեսում 1884 թվականի հունվար-հունիս ամիսների համարներում (Աղբյուր, 1884, № 1-6), ուստի և ենթադրելի է, որ այն ավարտված էր 1883 թ. վերջերին։

Շիրվանզադեն «Սամվելի» մտահղացման ժամանակը դնում է 1885 թվականին, երբ Գրիգոր Արծրունին արտասահմանից վերադարձավ և վերահրատարակեց «Մշակը». «Այդ ժամանակ Րաֆֆիի մեջ կրկին միտք հղացավ մի ամսագիր հրատարակելու։ Սակայն շուտով նա այդ միտքը բոլորովին թողեց, սկսեց «Կայծերի» երկրորդ հատորի մասին մտածել։ Միևնույն ժամանակ նրա գլխում հղացավ «Սամվելի» գաղափարը, որը ներշնչում էր նրան հայոց դպրոցների փակման խնդիրը» («Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Եր., 1986, էջ 36)։ Գրիգոր Արծրունին արտասահման է մեկնել 1884 թ. օգոստոսի 17-ին և այնտեղից վերադարձել է 1885 թ. հունիսին, «Մշակը» նորից հրատարակվել է նույն թվականի հոկտեմբերին, իսկ հայկական դպրոցները փակվել են 1884 թ. փետրվարի 16-ի Բարձրագույն հրամանով։

1892 թ. «Արձագանք» շաբաթաթերթում Փիլիպոս Վարդանյանը հրատարակում է

Րաֆֆուց ստացած երեք նամակ։ Այդ տեքստերին կցած առաջաբանում («Րաֆֆիի նամակները» վերնագրով) նա մի քանի տեղեկություններ է հայտնում «Սամվելի» գրության մասին։ Երբ 1884 թվականին Փիլիպոս Վարդանյանը վերադառնում է Թիֆլիս, նա հաճախակի հանդիպումներ և զրույցներ է ունենում Րաֆֆու հետ. «Սամվելը» գրելիս նա անդուլ պարապում էր մեր հին հեղինակների ուսումնասիրությամբ. Ագաթանգեղոսը, Խորենացին, Եղիշեն, Փարպեցին և Փավստոսը նրա սեղանակիցները դարձել էին, և նա այնքան նոր վեպեր էր հղացել, որ եթե անգութ մահն այնպես շուտ վրա չհասներ, «Սամվելը» դեռ շատ հաջորդներ կունենար» (Րաֆֆին ժամանակակիցների հուշերում, Եր., 1986, էջ 204)։ Այսպիսով, ըստ Փիլիպոս Վարդանյանի, «Սամվելի» տեքստը արդեն գրվում էր 1884 թվականի ընթացքում։

1887 թ. ամռանը Րաֆֆու հետ հանդիպում է Պետրոս Զաքարյանը, որի տեղեկություններից պարզ է դառնում, որ հեղինակը արդեն ավարտել էր վեպի գրությունը. «Նա ինձ ցույց տվեց մի մեծ էտաժերկա՝ լիքը գրքերով, որ նա ուսումնասիրել էր վեպը գրելիս» (Րաֆֆին ժամանակակիցների հուշերում, Եր., 1986, էջ 222)։

Այսպիսով, ըստ Շիրվանզադեի, 1884 թվականի փետրվարի 16-ից հետո, երբ տրվում է հայկական դպրոցները փակելու հրամանը, Րաֆֆին մինչև 1885 թվականի հունիս ամիսը (մոտ մեկ և կես տարի անց)՝ հղանում է «Սամվելի» գաղափարը և 1886 թվականի փետրվարից սկսում է գրել վեպի տեքստը մինչև 1887 թվականի դեկտեմբերը (այսինքն՝ վեպը գրելու քաղաքական շարժառիթից մինչև բուն ստեղծագործական պրոցեսն անցնում է երկու տարի ժամանակ)։ Շիրվանզադեի հաղորդած տեղեկությունը հերքվում է Փիլիպոս Վարդանյանի հայտնած տեղեկություններով, ըստ որի վեպը 1884 թվականին գրվում էր, իսկ գրաքննիչի թույլտվությունը (1886 թ., մարտի 5) վկայում է, որ 1886 թ. սկզբներին (հունվար-փետրվար) վեպի տեքստի գրությունն ավարտված էր։ Սրան լրացնում է Պետրոս Զաքարյանի հայտնածը, ըստ որի 1887 թվականի ամռանը Րաֆֆին վեպի մասին խոսում է՝ որպես ավարտված տեքստի։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Րաֆֆին 1884 թվականի սկզբներին արդեն սկսում է գրել «Սամվել» վեպը, որն ավարտում է 1885 թվականի վերջերին կամ 1886 թվականի սկզբներին։ Եվ բնական է, որ հատկապես այս ժամանակահատվածում է, որ ժամանակի մամուլում նրանից շատ քիչ գործեր են տպագրվում (հիմնականում «Աղբյուր» հանդեսում և «Արձագանք» շաբաթաթերթում), որոնք իրենց ծավալով ևս ընդարձակ չեն։

«Սամվել» վեպի ներկա հրատարակության համար հիմք է ընդունվել 1888 թվականին հեղինակի կենդանության օրոք լույս տեսած տեքստը առանձին գրքով։ Գրողի ձեռագրերի բացակայության պայմաններում այդ տեքստը կայուն բնագրագիտական սկզբունքներով ներկայացնելը լուրջ դժվարություններ է հարուցում, քանի որ տպագրության պրոցեսում թույլ տրված սխալների, բացթողումների, վրիպակների, աղավաղումների պարզումն ու ճշտումը անհնար է դառնում բացարձակ ճշգրտությամբ լուծել։ Տվյալ դեպքում, հարցի գիտական լուծումը ենթադրում է գրողի տեքստերի խոր ուսումնասիրություն՝ նրա խոսքային գործունեության առանձնահատկությունները իրենց պատմական ենթատեքստի մեջ համակողմանիորեն դիտարկելու եղանակով։ Պատմականության սկզբունքի կիրառությունը հատկապես Րաֆֆու տեքստերի պատրաստման ժամանակ, առանձնակի նշանակություն ունի, քանի որ նրա երկերի լեզվում հանդիպող բազմաթիվ երևույթներ, որոնք անտեսվել կամ համահարթվել են վերջին հրատարակություններում, բացատրվում և հասկանալի են դառնում միայն ժամանակաշրջանի լեզվական մշակույթի և գրողական միտումների խորքի վրա։

Առաջին խնդիրը, որ հետաքրքրում է մեզ, կապված է Րաֆֆու տեքստերի կետա-

գրության հետ։ Սովորաբար տարբեր հեղինակների տեքստերը պատրաստելիս բնագրագետները արդիականացնում են հեղինակի կետադրությունը։ Այնինչ, սույն խնդրի ուսումնասիրությունը պարզում է, որ Րաֆֆու գեղարվեստական տեքստերում ժամանակակից կետադրական նորմերի համեմատությամբ կատարված շեղումները անմիջականորեն կապվում են պատումի իմաստաբանության հնչերանգային կառույցը կազմակերպելու և ամբողջական դարձնելու հետ։ Րաֆֆին իր պատումի մեջ իմաստային ընդարձակ շարույթները խոսքային գործունեության ընթացքում բաժանում է ավելի փոքր իմաստային շարույթների՝ դրանցից յուրաքանչյուրի առանձնացման և նրանց մեջ ժամանակային դադարների ընդարձակման միջոցով, որպեսզի ընդգծի և ուժեղացնի դրանցից յուրաքանչյուրի իմաստաբանական ինքնուրույնությունը և ներգործության ուժը։ Այս հնարանքի կիրառությունը, որ ձևավորվել և բազմաթիվ տարբերակներով կիրառվում է բնաերգության մեջ, Րաֆֆու արձակում համատարած է, և այդ ընդարձակման գրաֆիկական ազդանշանի առկայության մասնանշումը առաջ է բերում կետադրական նշանների լրացուցիչ հավելում, որոնք իրենց դրված դերով և նորմայից բխող քերականական դերով հաճախ չեն համընկնում։ Ուստի այստեղ միանգամայն անտեղի է արդիականացման սկզբունքի կիրառումը, քանի որ այդ դեպքում տեքստը կորցնում է իր բազմաթիվ հնչերանգները, բնարական շունչը։ Րաֆֆու ստեղծագործության համարյա բոլոր հետազոտողները նշել են նրա արձակի արտակարգ բնարականության մասին, իսկ այդ երևույթը իր շատ կողմերով կապվում է գրողի կիրառած կետադրության հետ։

Րաֆֆու տեքստերի մյուս հետաքրքիր կողմերից մեկը, որը նույնպես վերջին հրատարակություններում անտեսվել և ուղղվել է, տպագրանիշի օգտագործումն է, որպես գեղարվեստական համակարգի ֆունկցիոնալ միավորի։ Հեղինակը խախտում է հատուկ անունների գրության արդեն հաստատված կանոնը՝ (հատուկ անվան առաջին տառը մեծատառով գրելը) ընթերցողին ազդանշանելով այն հատուկ վերաբերմունքի մասին որ նա պետք է ունենա տվյալ հատուկ անունը կրող հերոսի կամ առարկայի հանդեպ. սրա մյուս տարբերակն է հասարակ անվան գրությունը մեծատառով սկսելու երևույթը, որը նույնպես կապվում է ընթերցողի մեջ նմանօրինակ վերաբերմունք առաջացնելու հետ։ Ընդ որում Րաֆֆին այս հնարանքը կիրառում է ոչ միայն ընթերցող-տեքստ հարաբերության հաշվառումով, այլ հենց տեքստում հերոսների միջև եղած հարաբերությունների բնույթը նկատի ունենալով։ Օրինակ, «Սամվել» պատմավեպում օրիորդ, տիկին, տեր և մի շարք այլ հասարակ անունների գրությունը մեծատառով սկսելը պայմանավորված է այն հատուկ հարաբերությունների բնույթով, որ ստեղծել է հեղինակը վեպում։ Վերջին հրատարակություններում բոլոր այդ դեպքերը ուղղվել են։ Ընդ որում վեպի տարբեր հատվածներում, երբ այդ հարաբերությունների բնույթը փոխվում է, փոխվում է նաև այդ բառերի գրությունը (մեծատառով կամ փոքրատառով սկսելը)։ Օրինակ, Հայր Մարգպետի և Փառանձեմ թագուհու երկխոսության մեջ տիկին բառի գրությունը սկսվում է փոքրատառով, իսկ հեղինակի և թագուհու կողմնակիցների խոսքում այն միշտ գրվում է մեծատառով։ Գրաֆիկական միջոցների վերածումը գեղարվեստական հնարանքի Րաֆֆու երկերում արտահայտվում է բազմաթիվ այլ ձևերով. դրանց մեջ են մտնում առանձին բառերի կամ բառակապակցությունների ընդգծումը տեքստում, թվանշանների կիրառությունը և անգամ տառատեսակի արտակարգ խոշորացումը. օրինակ, «ՄՈՒՇԵՂ», «ԽՈՏՈՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՐՆԱԿ» վերնագրի «Մուշեղ» հատուկ անունը վեպի 1888 թ. հրատարակության մեջ տպագրված է արտակարգ խոշոր տառատեսակով և առանձնացված է, որպես առանձին պարբերություն։ Այսպիսի խոշոր տպագրանիշի գործածման միջոցով անվան առանձնացումը մասնանշում է հեղինակի արտակարգ վերաբերմունքը այդ անունը կրող հերոսի հանդեպ՝ այդ

վերարտադրանքը տեսանելի դարձնելու նպատակով։ Այս առանձնահատկությունը «Սամվել» վեպի 1898 թվականի Վիեննական հրատարակության մեջ անտեսվել է և փոխանցվել մյուս բոլոր հրատարակություններին։

Րաֆֆին մտադրվել էր ծանոթագրել «Սամվել» վեպը. ծանոթագրությունները պետք է լույս տեսնեին առանձին հատորով։ Այս առիթով նա մի հետաքրքիր դիտողություն է անում վեպի առաջաբանի առաջին տարբերակում. «Այդ բոլորը բացատրված կլինի առանձին ծանոթություններով, որ կկցվի գրքի վերջում։ Բայց որովհետև ծանոթությունները համարյա վեպի կեսի չափով տեղ կբռնեին, այդ պատճառով անհարմար դատվեցավ «Արձագանքի» էջերը ծանրաբեռնել ծանոթություններով, որ ավելի գիտական, ժողովրդագրական և տեղագրական նշանակություն ունեին,— մյուս կողմից, ծանոթությունների ընթերցումը կարող էր թուլացնել վեպի տպավորությունը» («Արձագանք», 1886, № 7, էջ 99)։ Գեղարվեստական տեքստի և գիտական տեքստի հստակ տարբերակումը և դրանց հակադրությունը, որպես տարբեր համակարգերի, Րաֆֆուն ստիպում է առանձնացնել դրանք, քանի որ, ինչպես ինքն է նշում՝ դրանց համատեղումից առաջին հերթին վնասվում է վեպի ներգործության աստիճանը։ Բայց մյուս կողմից էլ բուն տեքստը հեղինակը ծանրաբեռնել է ծանոթագրվող հատվածները ազդանշող թվանշաններով, որոնց թիվը հասնում է 764-ի։ Հետագա հրատարակություններում (բացի վեպի երկրորդ հրատարակությունից, Վիեննա, 1898) այդ թվանշանները հանվել են։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեքստում հեղինակի դրած ծանոթագրությունների թվանիշները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում աղբյուրների օգտագործման և տեքստի ծագումնաբանության հետ կապված հեղինակային միտումները բացահայտելու տեսակետից և կազմում են տեքստի անբաժան մասը, վերականգնել ենք դրանք։ Հարկ ենք համարում նշել, որ մեր ծանոթագրած տեքստային հատվածները (որոնք սույն հրատարակության մեջ ներկայացված են ըստ ծանոթագրվող հատվածի զբաղեցրած էջի և տողի —էջ ..... տ.) մեծավ մասամբ համընկնում են այն տեքստային հատվածների հետ, որոնք հեղինակի կողմից թվագրված են ծանոթագրելու համար։ Դրանցից բացի, ծանոթագրել ենք նաև տեքստային այնպիսի հատույթներ, որ հեղինակը չի թվագրել՝ նկատի ունենալով իր ժամանակի ընթերցողի ընդհանուր մակարդակը և գիտելիքների շրջանակը։ Օրինակ, աստվածաշնչային հատուկ անունները թվագրված չեն, քանի որ կրոնի ուսուցումը պարտադիր էր դպրոցներում, ուստի և այդ անունները և դրանց հետ կապված պատմությունները քաջածանոթ էին ընթերցողներին։

«ՍԱՄՎԵԼ» ՎԵՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Թիֆլիս, 1888 (տիտղոսաթերթին՝ 1886), 749 էջ։
2. Վիեննա, 1898, 764 էջ։
3. Վիեննա, 1926, 768 էջ։
4. Բեյրութ, 1934, 749 էջ։
5. Աթենք, 1936, 690 էջ։
6. Բոստոն, 1938, 749 էջ։
7. Երևան, 1940, 468 էջ։
8. Երևան, 1950, 608 էջ։
9. Երևան, 1956, 537 էջ։
10. Բեյրութ, 1956, 646 էջ։
11. Երևան, 1957, 618 էջ։

12. Երևան, 1961, 610 էջ։
13. Երևան, 1963, 537 էջ։
14. Երևան, 1967, 535 էջ։
15. Երևան, 1984, 510 էջ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Արծր.— *Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985։*
Ագաթ.— *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Երևան, 1983։*
Բուզ.— *Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։*
ԵԺ 10 հատ.— *Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 1—10, Երևան, 1962—1964։*
ԵԺ 12 հատ.— *Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 1—7, Երևան, 1983—1986։*
Զենոբ — *Զենոբայ Գլակայ Ասորւոյ եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889։*
Խոր.— *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913։*
Ծ.— *Ծանոթագրություն։*
Հնախօսութիւն — *Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835։*
Ղազար — *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1982։*
Մեսրոպ Երեց — *Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց հայրապետի, Սոփերք Հայկականք, հ. Զ, Վենետիկ, 1853։*
Նոր Բառգիրք — *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, հ. 2, Վենետիկ, 1837։*
Չամչ.— *Միքայէլ Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, հ. Գ, Վենետիկ, 1786։*
Ստորագրութիւն — *Ղուկաս Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822։*
ս. հր.— *սույն հրատարակություն։*
տ.— *տող։*

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Էջ 5, տ. 1. Հառաջաբան — *Թե՛ «Արձագանքում», թե՛ վեպի 1888 թվականի հրատարակության մեջ այս վերնագիրը բացակայում է. այն ավելացրել են 1898 թվականի վիեննական հրատարակության հրատարակիչները։ Նույն թվականին «Հառաջաբանը» արտատպվել է «Մասիս» շաբաթաթերթում (տե՛ս Մասիս, 1886, մարտ 15, թիվ 3813, էջ 769—771)։ Հետևելով Հ. Պետրոսյանի կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» աշխատության վրիպակին, ըստ որի «Մասիսը» «Հառաջաբանը» արտատպել է ո՛չ թե 1886, այլ 1885 թվականին, Խ. Պողոսյանը գրում է. «առաջաբանը առանձին, առաջին անգամ տպագրվել է 1885 թ. «Մասիս»-ում» (տե՛ս Րաֆֆի, ԵԺ 10 հատ., հ. 7, Եր., 1963, էջ 546)։ Խ. Պողոսյանը չի ստուգել Հ. Պետրոսյանի «Բիբլիոգրաֆիայի» տվյալը։ «Մասիսի» տնօրինությունը առաջաբանի սկզբում կցել է հետևյալ ազդը. «Ազգային մեծանուն վիպասան Պ. Րաֆֆի սկսած է «Արձագանք»-ի մեջ հրատարակել պատմական վեպ մը, «Սամվել», ուր նյութը քաղված է Հայոց պատմության Դ. դարու անցքերեն։ Այսօր մեր ընթերցողաց կը ներկայացնենք այդ վեպին իբր հառաջաբան գրված հետևյալ հոդվածն, ուր Պ. Րաֆֆի տեսություն մը կ'ընե պատմական վեպի վրա»։ Արտատպության մեջ կան կետադրական և ուղղագրական որոշ փոփոխություններ։ «Արձագանքում» «Հառաջաբանը»*

շարված է այլ տառատեսակով, քան վեպի տեքստը. վեպն առանձին գրքով տպագրելիս առաջաբանի և վեպի բուն տեքստի տառատեսակային այդ անհամապատասխանությունը վերացված է։ Վեպերին կամ այլ ժանրի երկերին առաջաբաններ կամ մեկնողական այլ տեքստեր կցելը սովորական էր ռոմանտիզմի դպրոցին պատկանող հեղինակների համար։ Տվյալ դեպքում այս տեքստի անջատումը վեպի տեքստից (այն գրված է վեպի տեքստից և վերնագրից առաջ) պայմանավորված է առաջաբանի տեքստի ոչ գեղարվեստական բնույթով։ Այդ պատճառով էլ, հեղինակը առաջաբանը վերջացնում է «Րաֆֆի» ստորագրությամբ, ընդգծելով տվյալ տեքստի ավարտը, չնայած որ ընթերցողը գրքի կազմից և անվանաթերթից արդեն տեղեկանում է հեղինակի անվանը։

Րաֆֆին առաջաբան է կցել նաև «Սալբի» վեպին, «Փունջ» հատորներին, «Խաչագողի հիշատակարանը» վեպին. նույն դերն է կատարում «Իմ ընթերցողներին» հոդվածը «Դավիթ-Բեկ» վեպի համար, «Կայծերի կտակը», «Ղարաբաղի Աստղագետը» թարգմանական երկերին. «Ջահրումար» վիպակին։

էջ 6. ա. 31. ո՛չ Էսքիլեսի և Սոֆոկլեսի ողբերգությունները և ո՛չ Հոմերոսի և Վերգիլիոսի ռազմերգությունները:

Էսքիլես (մոտ. 525—456 թ. մ. թ. ա.). *Հույն դրամատուրգ, որի բազում ողբերգություններից ամբողջությամբ պահպանվել են 7-ը։ Րաֆֆու ապրած ժամանակաշրջանում հայերեն թարգմանված էր դրանցից մեկը (տե՛ս Փորձ, 1882, № 1, «Պրոմեթևս», թարգմ. Ն. Տ. Ալեքսիքյան, Բազմավեպ, 1877, հ. Լե, «Պրոմեթևս կապանաւոր», թարգմ. Հ. Ա. Սուքիան)։*

Սոֆոկլես (496—406 թ. մ. թ. ա.), *հույն դրամատուրգ, գործերից ամբողջությամբ պահպանվել են 7-ը։ Դրանցից երեքը հայերեն թարգմանել է Արսեն Բագրատունին (Էդիպոս թագավոր, Անտիգոնէ, Էլեկտրա)։ Տե՛ս Ճաշակք հին և նոր ողբերգութեանց, Վենետիկ, 1869։*

Հոմերոս — *հին հունական լեգենդար բանաստեղծ, որին վերագրվում է «Իլիական» և «Ոդիսական» պոեմների ստեղծումը (7—8 դ. մ. թ. ա.)։ Հոմերոսի նշված ստեղծագործություններին Րաֆֆին ծանոթ էր Եղիա Թոմաճանի կատարած թարգմանություններից (տե՛ս Հոմերոս, Իլիական, Թարգմանեալ ի Հելլենականէ Հ. Եղիա վ. Թոմաճան, հ. Ա, Վենետիկ, 1848, հ. Բ, Վենետիկ, 1848)։ «Կայծեր» վեպի երկրորդ հատորում Համբը ասում է. «Իմ մեջ առաջվա հիշողությունը չէ մնացել. ես դեռ աշակերտ եղած ժամանակ Հոմերոսից և Վիրգիլիոսից ամբողջ գլուխներ անգիր գիտեի» (Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 705)։ «Սալբի» վեպի հերոս Ռուստամը Հոմերոսի «Իլիականի» Թոմաճանի կատարած թարգմանությունից անգիր մի հատված է հիշում (տես ԵԺ 12 հատորով, հ. 2, Եր., 1983, էջ 271), որի համար՝ «Հոմերոսի աշխատությունները ամենասիրելի գրքերն էին» (անդ, էջ 85)։ «Ջալալեդդին» վիպակում Սարհատի ընկերները «կազմել էին մի ճոխ սեղան, որ հիշեցնում էր Հոմերոսի հերոսներին» (ԵԺ 12 հատ., հ. 4, Եր. 1984, էջ 53)։*

«Սամվել» վեպում Հոմերոսի «Իլիականը» անմիջականորեն ակնարկվում է երկու անգամ՝ «Համազասպուհի» և «Անհաջող դավադրություն» գլուխներում։

Վիրգիլիոս Պուբլիոս Մարոն (70—19 թ. մ. թ.ա.). *հռոմեական բանաստեղծ։ Վիրգիլիոսի գործերի հայերեն թարգմանություններին ևս Րաֆֆին քաջածանոթ էր։ Րաֆֆու ժամանակաշրջանում հրապարակի վրա էին Եղուարդ Հյուրմյուզի և Արսեն Բագրատունու լատիներենից կատարած թարգմանությունները (տե՛ս Պուբլիոս Վիրգիլեայ Մարոնի Ենէականին թարգմանութիւն, ի ձեռն Հ. Եղուարդայ Վ. Հիւրմիւզեան ի Միխիթարեան ուխտէն, Վենետիկ, 1845, Մշակականք, թարգմանեալ ի չափս հայկականս և համառօտ մեկ-*

նությամբ բացայայտեալը ի Հ. Արսենէ Կոմիտասայ Բագրատունւոյ Մխիթարեան Վարդապետէ, Վենետիկ, 1847, Հովուերգութիւնք, թարգմ. գերապատիւ Եդուարդայ Հիւրմիւզ, Վենետիկ, 1870)։

«Սամվել» վեպում Վիրգիլիոսի «Էնեականից» տեքստից կիրառված է մեկ տող (տե՛ս ս. հր. էջ 150)։

էջ 7, տ. 12. Կարդալով Ինճիճյանի երեք պատկառելի հատորները ~ հատորակության մեջ:— Րաֆֆին նկատի ունի նշանավոր գիտնական, բանասեր, աշխարհագրագետ Ղուկաս Ինճիճյանի (1758—1833) «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատության երեք հատորները, որոնք լույս են տեսել 1835 թվականին։ Ինճիճյանի գրչին են պատկանում նաև «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», հ. Ա., (Վենետիկ, 1806), «Ստորագրութիւն հին Հայաստանեայց». (Վենետիկ, 1822) և այլ աշխատություններ։ Ինչպես «Սամվել» վեպում, այնպես էլ իր մյուս ստեղծագործություններում Րաֆֆին հաճախ է օգտագործում Ինճիճյանի նշված գրքերը։ Հատկանշական է, որ Ազվանից և Սյունյաց աշխարհներում ճամփորդելիս Րաֆֆին ի թիվս այլ գրքերի իր հետ վերցրել էր նաև Ինճիճյանի «Հնախօսութիւնները» (տե՛ս ԵԺ 10 հատորով, հ. 8, էջ 550), իսկ Հայկունու հետ բանավիճելիս հղում է կատարում նույն հեղինակի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատության վրա (տե՛ս Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 264)։ Այս և բազմաթիվ անուղղակի փաստեր (նշված գրքերի տեքստերի օգտագործումը առանց հղումների) վկայում են, որ Ինճիճյանի աշխատություններին Րաֆֆին ծանոթ էր ամենայն մանրամասնությամբ։ Տվյալ դեպքում Րաֆֆու դժգոհությունը բխում է նրա ստեղծագործելու եղանակի առանձնահատկություններից։ Ինճիճյանն իր քննությունները կատարում է հիմնվելով գլխավորապես հայ և օտար մատենագիրների տվյալների վրա և իր գիտական խնդրագրությունը սահմանափակում է այդ աղբյուրների ընձեռած հնարավորություններով, ուստի բնական է, որ պատմական անցյալի ոչ բոլոր բնագավառներն են դառնում քննության առարկա։ Բոլոր դեպքերում «Սամվել» վեպում Րաֆֆին օգտագործել է Ինճիճյանի վերլուծությունների մեծ մասը։ Նույն դժգոհությունը Ինճիճյանի գրքերից Րաֆֆին հայտնում է նաև «Իմ ընթերցողներին» հոդվածում. «Ջամչյանի, Ինճիճյանի գրքերը չեն կարող լիակատար բավարարություն տալ վիպասանի պահանջներին։ Մենք կուլտուրայի պատմություն չունենք» (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 150)։

էջ 7, տ. 26. Երբ Վոլտեր Սկոտը և Էբերսը գրեցին ~ մի ճիշտ պատմական վեպ նկարել:

Վոլտեր (Վալտեր) Սկոտ (1771—1832), անգլիացի վիպասան, պատմավեպի ժանրի հիմնադիր։

Գեորգ Էբերս (1837—1898), գերմանացի վիպասան, եգիպտագետ։ Էբերսի «Եգիպտական թագավորի աղջիկը» վեպի և նրա ստեղծագործական սկզբունքների մասին Րաֆֆին ընդարձակ խոսում է «Իմ ընթերցողներին» հոդվածում (տե՛ս Րաֆֆի, Գրականության մասին ,Եր., 1958, էջ 149—150)։

էջ 8, տ. 13. Երբ մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենոփոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները:— Քսենոփոն (430—356 թ. մ. թ. ա.)—հույն պատմիչ, «Նահանջ բյուրոց» («Անաբասիս»), «Կիրոպեդիա» (Թարգմանությունը՝ «Քսենոփոնեայ՝ Կիւրոսի խրատու պատմութիւնք, զոր թարգմանեալ է Հ. Յովսեփայ Գաթըրճեանց», Վիեննա, 1843) երկերի հեղինակ։ Րաֆֆու ակնարկած գետնափոր խրճիթները

Քսենոփոնը նկարագրում է «նահանջ բիւրուց» երկում (Գիրք չորրորդ, V, 25)։ Քսենոփոնի պատմության այս հատվածին Րաֆֆին անդրադառնում է նաև «Դժառունը» հոդվածում. Գրելով. «Ես տեսել եմ նույն կիսավայրենի նահապետական կյանքը և համաձայնել եմ Քսենոփոնի հետ, մտածելով, երբ այդ հույն պատմաբանը նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նորա ընտանեկան կյանքը, գարձյալ նույնը պիտի գտներ, ինչ որ տեսել է 24 և կես դար առաջ» (ԵԺ 10 հատ., հ. 9, Եր., 1964, էջ 192)։ «24 և կես դար առաջ» արտահայտությունը վկայում է, որ Րաֆֆին հետևում է Չամչյանցի պատմության մեջ Քսենոփոնին վերաբերող հատվածին, ըստ որի հույն պատմիչը ծնվել է 450 թ. մ. թ. ա. (տե՛ս Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 21)։ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրությունը, արտատպելով առաջաբանը, «24 դարը» դարձրել է «23 դար» (տե՛ս «Մասիս», 1886, թիվ 3813, էջ 771), ճշգրտելով ժամանակագրական տարբերությունը։ «Գետնափոր խրճիթներ» արտահայտության խմաստային գանազան տարբերակները Րաֆֆին հաճախ է օգտագործում։ Օրինակ, «Պարույր Հայկազն» վիպակի հերոսը՝ Մովսես Խորենացին բնակվում է այդպիսի մի խրճիթում (տե՛ս ԵԺ 12 հատ., հ. 7, Եր., 1985, էջ 552), «Կայծերի» երկրորդ հատորում մանրամասն նկարագրված է այդ խրճիթների «կատարելագործված» տեսակը. «Գետնափոր խրճիթ ասելով, ես սովոր էի երևակայել գետնափոր խորշեր, որոնք գազանների որջից այնքանով են միայն տարբերվում, որքանով տարբերվում է կիսավայրենի մարդը գազանից։ Բայց գետնափոր խրճիթը ևս ունի իր կատարելագործված ձևը, որի մեջ արհեստը և ճարտարությունը մեծ հառաջադիմություն են գործել։ Մեր մտած խրճիթը այդ տեսակներիցն էր» (Րաֆֆի, Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 515—516)։ Րաֆֆին, հավանաբար, օգտվել է Քսենոփոնի նշված հատվածի՝ Ղ. Ալիշանի վերապատմությունից։ Համե. «Իսկ բնակչաց երկրին ի սկզբանց անտի հնարս իմացեալ է շինել տունս գետնափորս կամ կէս ստորերկրայս ի կողս բլրոց և ձորոց, զորոց նախ և առաջին գրոյց առնէ Քսենոփոն պատմիչ և զօրավար, որ 400 ամօք յառաջ քան զԹուականութիւն Փրկչին՝ էանց ընդ սահմանսն Հայոց. և յայսմ ժամանակի նոյն ձև և նոյն սարաղ է տանցն» (Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 17)։

Էջ 8, տ. 15. Երբ մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապատ նավակները Եփրատ գետի վրա ~ շատ բան չէ փոխվել հայոց աշխարհում:— Հերոդոտոս (Հերոդոտ), հույն պատմիչ (484—431 թ., մ. թ. ա.), հունական պատմագրության հիմնադիր, «Պատմություն» անավարտ երկի հեղինակ։ Նշված նավակները Հերոդոտոսը նկարագրում է իր պատմության առաջին գրքում (տես Հերոդոտոս, Պատմություն, Եր., 1986, գիրք I, 194) բաբելացիների բարքերը նկարագրելիս։ Հերոդոտոսի սույն հատվածը հայերեն թարգմանել է Ղ. Ինճիճյանը (տե՛ս Հնախօսութիւն, հ. Ա, Վենետիկ, 1835, էջ 217)։ Ինճիճյանի թարգմանությունը Րաֆֆին նախ օգտագործել է «Կայծեր» վեպի երկրորդ հատորում (Թիֆլիս, 1887, էջ 150—151), այնուհետև «Սամվելում» (տե՛ս ս. հր., էջ 17)։ Այդ նավակների ժամանակակից տարբերակը, որ պատճառ է դարձել «երբ մենք այսօր տեսնում ենք Հայաստանում» շարույթի առաջացմանը, նկարագրված է Ղ. Ինճիճյանի Նոր Հայաստանի աշխարհագրության մեջ (տե՛ս Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 21)։

Էջ 8, տ. 24. Համարելով հայերին միևնույն ցեղին պատկանող ~ ինչ որ օտարամուտ է:— Հին հայերի, մեդացիների (մարերի) և պարսիկների բարքերի և սովորությունների նմանության մասին վկայություններ տալիս են հին հունական և հռոմեական աղ-

բյուրները, հատկապես Ստրաբոնը։ Իր «Աշխարհագրության» XI գրքում նա գրում է. «Մեդացիների սովորությունները մեծ մասամբ նույնն են, ինչ հայերինը» (Страбон, География, Москва, *1964,* стр. *495)։ Րաֆֆու այս տեսակետի ձևավորմանը նպաստել է նաև 19-րդ դարի 70—80-ական թվականներին լայն տարածում գտած հայերենի իրանական լեզու լինելու տեսությունը (տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր., 1960, էջ 362, 448—449)։*

էջ 8, տ. 29. Հայոց կյանքի և սովորությունների ~ մեծ գաղթականությունները ~ բերվել են Հայաստան։— *Այս շարույթը գրելիս Րաֆֆին թարգմանաբար վերաշարադրել է Ինճիճյանի «Հնախօսութեան» հատվածներից մեկը. «այլ քանզի ընդ ժամանակս ժամանակս եկք օտարք սակաւք կամ բազումք, գերեալք կամ ինքնակամք, ի հեռաւոր աշխարհաց և յայլոց ազգաց հաստատեալ եկին բնակեցան ի Հայաստան» (Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Ա., էջ 311, «Բազմամարդանալ աշխարհիս» գլուխ)։*

էջ 8, տ. 31. Դրանցից մեծ տեղ են բռնել Քաղդեացիք, ասորեստանցիք, պարթևները, հնդիկները, ճենացիք և հրեաները:

Քաղդեացիների *կամ* ասորեստանցիների *գաղթի մասին պատմում է Խորենացին (Խոր. Ա., գլ. ԻԴ), նաև Հին Կտակարանը (տե՛ս Դ. Թագ., ԺԹ, 37, Եսայ., ԼԷ, 38)։ Արծրունիների թագավորական ծագման այս վկայությունը Րաֆֆին բազմիցս օգտագործում է վեպի տեքստում։*

Պարթևները — *Րաֆֆին նկատի ունի Արշակունիների պարթևական ծագումը։ Ըստ Խորենացու պարթևների արքա Արշակ Մեծը Հայաստանում թագավորեցնում է իր եղբորը՝ Վաղարշակ Ա-ին, որից սկիզբ է առնում հայ Արշակունիների հարստությունը (Խոր., Բ, գլ. Գ)։*

Հնդիկներ — *Հնդիկների գաղթի մասին պատմում է Զենոբ Գլակը, որը, ըստ նրա պատմության, տեղի է ունեցել Վաղարշակ Ա-ի օրոք (տե՛ս Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Եր., 1941, էջ 107—109)։*

Ճենացիք — *Ճենացիների (չինացիների) գաղթի մասին Հայաստան պատմում է Խորենացին (Խոր. Բ, գլ. ՁԱ), իսկ Մամիկոնյան նախարարական տոհմի չինական ծագման մասին մի քանի անգամ ակնարկում է Բուզանդը։ Րաֆֆին այդ վկայություններն օգտագործել է վեպի որոշ նկարագրություններում։*

Հրեաները — *Հրեաները Հայաստան բռնի կերպով գերի են բերվել մի քանի անգամ։ Ըստ Խորենացու, երբ Նաբուգոդոնոսորը, բաբելացիների արքան, գերում է հրեաներին, Սկայորդու որդի Հրաչյան խնդրում է գերիների մի մասին ուղարկել Հայաստան. «Եւ սորա առեն զմի ի գլխաւորաց եբրայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ Շամբաթ անուն՝ ածեալ բնակեցոյց մեծաւ պատուով» (Խոր., Ա., գլ. ԻԲ). սրանցից ծագում է Բագրատունյաց նախարարությունը։ Հրեաների երկրորդ գերությունը Հայաստան տեղի է ունենում Տիգրան Մեծի Պաղեստին կատարած արշավանքից հետո (Խոր., Բ, գլ. ԺԴ), այնուհետև հրեա գերիների մի մեծ խումբ Հայաստան է բերում Տիգրանի հզոր սպարապետը՝ Բարզափրան Ռշտունին (Խոր. Բ, գլ. ԺԹ)։ Այդ գերիներին Տիգրանն ու Բարզափրանը բնակեցնում են Հայաստանի տարբեր շրջաններում (Այրարատ, Արմավիր ավան, Երվանդակերտ, Արտաշատ, Վան)։*

Բոլոր այս գաղթականությունները մանրամասնորեն նկարագրում է Ղուկաս Ինճիճյանը «Հնախօսութեան» առաջին հատորի «Բազմամարդանալ աշխարհիս» գլխի «Յասորեստանեայց», «Ի Հրէից», «Ի Հնդկաց», «Ի Ճենաց» ենթագլուխներում (տե՛ս Հնախօ-

ության, հ. Ա, էջ 311—318), առանձին ենթագլուխներ հատկացնելով նաև քանանացիների, մարերի, բուլղարների, ալանների, կասբերի, բասիլերի գաղթերին կամ ցեղություններին։ Րաֆֆին իր թվարկման մեջ առանձնացրել է հատկապես այս գաղթականությունները, քանի որ պատումի մեջ նշված աղբյուրների տեքստերը անմիջականորեն կամ անուղղակիորեն օգտագործել է։

Էջ 9, տ. 3. 364—400 — Վերնագրից հետո գրված թվերը ցույց են տալիս վեպում մշակված աղբյուրների ժամանակագրական հաջորդականությունը ըստ Չամչյանցի պատմության (տե՛ս Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 440, 491)։ Այս ժամանակահատվածի մասին պատմող տեքստերի այն մասը, որոնք ընկել են վեպի սյուժետային կառույցի հիմքում, Չամչյանցի կողմից թվագրված են 378—381 թվականներին։ 381 թվականից մինչև 400 թվականը կատարված առանձին դեպքերի մասին վկայությունները մշակվել են «Փակագծի մեջ» հատվածում։ Մյուս կողմից, 400 թվականը Հայոց «ոսկեդարի» սկիզբն է, որն ուղղակիորեն նշված է վեպի տեքստում («Երեք երիտասարդ ուժեր» գլխում և «Փակագծի մեջ» հատվածի վերջին պարբերության մեջ)։

Քանի որ աղբյուրների տեքստերն օգտագործելիս Րաֆֆին միշտ նկատի է ունեցել Չամչյանցի կազմած ժամանակագրությունը, ուստի և մեր ծանոթագրություններում պատումի մեջ ակնարկված զանազան դեպքերն ու դրվագները թվագրելիս, մենք նույնպես առաջնորդվում ենք այդ աղյուսակով, չնայած որ այդ թվականներից շատերը հետագա պատմագիտության կողմից վերանայվել են և ճշտվել։

Էջ 10. տ. 1. «Այնուհետև ~ թագաւորին» — Փավստոսի տեքստում, որը Րաֆֆին օգտագործել է որպես բնագիր ողջ վեպի համար, կատարված են որոշ կրճատումներ։ Այդ կրճատումների մասին Րաֆֆին հայտնում է բազմակետերի միջոցով։ Երրորդ կրճատումը, որ հեղինակը կատարել է առանց բազմակետերի միջոցով հայտնելու, վերաբերում է Սամվելի հորը և մորը սպանելուց հետո Խաղտյաց երկիրը փախչելուն։ Այդ հատվածն անմիջականորեն հաջորդում է «թագաւորին» բառին, որով վերջանում է Բուզանդի 4-րդ դպրության ՄԹ գլուխը (...թագաւորին. և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց)։ Վերջին հանգամանքը վկայում է, որ հեղինակը «Սամվել» վեպը ավարտելու է Փավստոսի տեքստի որպես բնագրի իր մեջ բերած տարբերակում հայտնված տեղեկությունների գեղարվեստական մշակմամբ։

Մյուս փոփոխությունը, որ կատարել է Րաֆֆին Փավստոսի տեքստում, «յուսումն» բառի ընդգծումն է (...տային յուսումն Մաղխազանց)։ Ոչ հայկական կրթություն ստանալու խնդիրը Րաֆֆին բազմիցս դատապարտել էր իր նախորդ երկերում, հոդվածներում, նամակներում։ Իր վերջին շրջանի երկերում սակայն «ուսում» բառը Րաֆֆին կիրառում է ո՛չ թե «դպրոցական կրթություն», այլ «ուսմունք հայրենիքի մասին» իմաստով։ Այդ տեսանկյունից քննադատելով ժամանակակից դպրոցների սահմանափակությունը, նա նման կրթության դերը տալիս է գրականությանը և «Կայծեր» վեպում ընդարձակորեն մշակում է այդ գաղափարը։ Ալեքսանդր Արեյանին գրած նամակում Րաֆֆին այսպես է մեկնաբանում «Սամվել» վեպի գրության նպատակը. «Ներկայումս գիրքը և ժողովրդի մեջ ընթերցանության տարածելը այն փրկարար միջոցներից մեկն է, որ կազատե նրան շատ մոլորություններից։ Նոր, ժամանակակից և թարմ մտքերի հետ ծանոթանալով նա կուղղե յուր ճանապարհը, յուր ընթացքը։ Եվ «Սամվելը» այդ իսկ նպատակով գրված է, թեև նա պատմական վեպ է» (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 323)։ Այդ նպատակին, ըստ Րաֆֆու, խանգարում է «կրթության գործը», որը «միակողմանի է և սահ-

մանափակ»։ Զարգացնելով իր միտքը՝ Րաֆֆին գրում է. «Վերջին ժամանակներում ամենքը իրանց խելքն ու միտքը տվեցին գյուղացիներին, և ամեն լույս նրանից էին սպասում, առանց մտածելու, որ գյուղացին չէ կարող այն տալ, ինչ որ կարող է տալ մի լավ և նպատակահարմար կերպով մշակված ընթերցանության գիրք» (նույն տեղում)։ Ուստի և միակողմանի է Շիրվանզադեի կարծիքը, ըստ որի «Սամվելի» վեպի գաղափարը «ներշնչում էր նրան հայոց գյուղացիների փրկման խնդիրը» (Շիրվանզադե, Կյանքի բովից, Հուշեր, Եր., 1982, էջ 449)։ Րաֆֆու տված այս ընդարձակ մեկնաբանությունը Փավստոսի տեքստից քաղված բնաբանում արտահայտվում է «ուսումն» բառի ընդգծման միջոցով։

Էջ 10, տ. 15. «Յետ մահուանն ~ եկեղեցւոյ կարգէ»— *Այս հատվածը Խորենացու պատմության «Անցք ընդ մեզ չարեացն, որ ի Մերուժանայ, և թագաւորել հայոց Պապայ» (Գ, գլ. ԼԶ) վերնագիրը կրող գլխի առաջին պարբերությունն է, որը Րաֆֆին օգտագործել է կրճատելով հետևյալ հատվածները.*

1. ի հայս...— կրճատված է՝ «ի նա հաստատել զաշխարհս»։

2. Մերուժանա (Արծրունւոյ) — (Արծրունւոյ)-ն հեղինակի հավելումն է։

3. զքոյր իւր Որմիզդուխտ...— կրճատված է՝ «և հրովարտակս բազում շինից և դաստակերտաց ի Պարսից աշխարհին»։

4. և ձկեալ... կրճատված է՝ «և զրաւումս ի նախարարաց կանանց կալեալ՝ ի բերդս բերդս տալ պահել, զդարձ արանցն հաւատոյն»։

5. խափանել...— կրճատված է՝ «Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կալեալ՝ յերկիրն Պարսից տալ տանել»։ Այս կրճատումը, հավանաբար, կատարված է «հարկաց պատճառաւ» արտահայտության պատճառով։ Վեպում քահանաների և եպիսկոպոսների աքսորը («Զվիթա» գլխում) նման պատճառաբանություն չունի։

6. թարգմանել...— կրճատված է՝ «այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն»։

Վեպում կիրառված բնաբանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը գլուխները բնաբանում է այն դեպքում, երբ այդ գլխում նկարագրված դեպքերը և սյուժետային գործողությունները անմիջականորեն վկայված են պատմական աղբյուրներում։ Հատկանշական է, որ «Մայրը» գլուխը, որի մեջ նկարագրված դեպքերը վկայված չեն պատմական աղբյուրներում, բնաբանված է Ավետարանի տեքստով։

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

Ա. ԵՐԿՈՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ

Էջ 11, տ. 4. Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքեի[1] լեռան ետևում և Տարոնը[2] ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ։— *Լեռան Քարքե անունը վկայված է Ագաթանգեղոսի և Զենոբ Գլակի պատմություններում (տե՛ս Ագաթ., էջ 452, Գլակ, Պատմութիւն Տարօնոյ, Եր., 1940, էջ 109)։* Տարոնը *պատմական Հայաստանի ամենահռչակավոր գավառներից է։ Րաֆֆու տեքստերում Տարոն տեղանունը կիրառվում է մի քանի իմաստներով. 1. Տաճկահայաստանի* ամենահայաշատ *նահանգներից մեկը (Վասպուրականի հետ միասին), 2. գավառ, որտեղ շատ են հայ ժողովրդի համար նվիրական պատմական հուշարձանները և դրանց մասին ժողովրդի մեջ պահպանված ավանդությունները, 3. գավառ, որ խորհրդանշում է հայ ժողովրդի անցյալ մեծությունը։ Ուսումնասիրելով Տարոնը և*

Վասպուրականը թե՛ գրավոր աղբյուրների միջոցով և թե՛ երիտասարդական տարիներին այնտեղ կատարած ճանապարհորդությունների ընթացքում, Րաֆֆին հանգել էր այն եզրակացության, որ հայ ժողովրդի քաղաքական նպատակների իրագործման համար Տարոնն ու Վասպուրականը ամենահարմար նահանգներն են։ 1875 թվականին «Մշակ» թերթի № 19-ում տպագրվում է Րաֆֆու «Տարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը» հոդվածը, որը հետագայում մասնատելով հեղինակը զետեղում է «Կայծեր» վեպի առաջին հատորում («Ինչ է քուրդը և ինչ է թուրքը», «Ինչ է պարսիկը», «Հայրենիքի սերը» գլուխները), իսկ «Կայծեր» վեպի երկրորդ հատորի գործողությունների ամբողջովին տեղի են ունենում Տարոնի և Վասպուրականի գավառներում։ Հատկապես «Կայծեր» վեպի երկրորդ հատորում Րաֆֆին մանրամասնորեն նկարագրում է Տարոնն ու Վասպուրականը, նրանց անցյալ և արդի վիճակը, հիշյալ երեք իմաստները ամրակցելով այդ տեղանուններին։ Եթե «Կայծեր» վեպում այդ նկարագրությունները արվում են անցյալ-ներկա հակադրությամբ, ապա «Սամվելում», որի գործողությունների մեծ մասը նույնպես այդ վայրերում է տեղի ունենում, հիշյալ իմաստները մնում են վեպի ենթատեքստում, ընդ որում Րաֆֆին նկատի է ունեցել այն հանգամանքը, որ ընթերցողը արդեն պետք է ծանոթ լինի «Կայծերի» նկարագրություններին։ Ուստի նույն գավառները նկարագրելը «Սամվելում» ո՛չ թե «Կայծերի» նկարագրությունների օբյեկտիվացման արդյունքն են (Տարոնի անցյալը որպես վերհուշ և Տարոնի անցյալի արդիականացումը որպես պատումի մեջ նկարագրված գործողությունների աշխարհագրական միջավայր), այլ վեպի պատմականությունը պահպանելու անհրաժեշտությունից բխող գեղարվեստական հնարանք, քանի որ անցյալ-ներկա հակադրությունը «Սամվել» վեպում ևս տեղ ունի, բայց արդեն ժամանակագրական այլ հարաբերությամբ («Սամվելի» հերոսները նույնպես վերհիշում են անցյալը, բայց 4-րդ դարից առաջ ընկած անցյալը, այն դեպքում, երբ «Կայծերի» հերոսները վերհիշում են 19-րդ դարից առաջ ընկած անցյալը)։ Ստեղծագործական տեսակետից մենք այստեղ գործ ունենք պատումը կառուցելու սկզբունքի տիպաբանական տարբերակի հետ, որը, չնայած ժանրերի տարատեսակներին, չի փոփոխվում։

Էջ 11, տ. 7. դեպի Արկոս և Նեմրութ[3] լեռների — *Գրգուռ և Նեմրութ լեռների մասին տեղեկությունները Րաֆֆին քաղել է Ղ. Ինճիճյանի Նոր Հայաստանի աշխարհագրությունից (տե՛ս Աշխարհագրութիւն, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 178—179) և Սրվանձտյանցի «Գրոց և բրոց...» գրքից (տե՛ս* Գ. Սրվանձտյանց. *Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 34, 49, 53)։* Գրգուռ *լեռան անունը վկայված է Հովհան Մամիկոնյանի պատմության մեջ (տե՛ս* Ղ. Ինճիճյան, *Հնախօսութիւն, հ. Ա, էջ 96)։* Նեմրութ *լեռան անունը վկայված չէ հայ պատմագրության մեջ, սակայն Րաֆֆին այն կիրառել է նկատի ունենալով լեռան անվան հետ կապված ավանդապատումների հնությունը (տե՛ս* Րաֆֆի, *Հայոց պատմություն, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 702, էջ 6, ծ. 1)։*

էջ 11, տ. 13. անցան հայկական Միջագետը[8] — *Ըստ Ղ. Ինճիճյանի հայկական Միջագետքը պատմական Հայաստանի Աղձնիք և Չորրորդ Հայք նահանգներն են (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 12), ըստ Մկրտիչ Էմինի այդպես էր անվանվում Միջագետքի հյուսիսային մասը, որտեղ էին Մծբին, Եդեսիա, Աղիարբեն և այլ քաղաքներ (տե՛ս* История Армении Моисея Хоренского, перевёл с армянского и объяснил Н. Эмин., Москва, 1858, стр. 246*)։*

էջ 12, տ. 1. Արածանիի[9] ափերին — *Հայ պատմագիրները Արածանի են անվանում Եփրատ գետի այն մասը, որն հոսում է Հայաստանի տարածքով։ Անվան այս ձևը վկայված է նաև հունահռոմեական աղբյուրներում... Ըստ Հյուբշմանի «Անունս նախահայկական է» (տե՛ս Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 309)։ Արածանի գետի մասին տեղեկությունները Րաֆֆին քաղել է Ինճիճյանից (տե՛ս Հնախոսություն, Հ. Ա., էջ 126—127, 152—153)։*

էջ 12, տ. 9. թե՞ կամուրջով[10] գնալ — *Տե՛ս Ղ. Ինճիճեան, Հնախոսութիւն, Հ. Ա., էջ 134—135, «Կամուրջք և նեղաւք Եփրատայ» գլուխը։*

էջ 14, տ. 15. դեպի Աշտիշատի վանքը։ ~ Վաղեմի սրբազան բարձրությունների ~ վեհության մեջ։ Պատսպարված ~ ամրոց։— *Աշտիշատավանում էին գտնվում Աստղիկի, Վահագնի, Անահիտի հեթանոսական մեհյանները։ Ըստ Ագաթանգեղոսի և Բուզանդի վկայությունների Գրիգոր Լուսավորիչը քանդել է տալիս այդ մեհյանները և հիմնում է Հայաստանի առաջին եկեղեցին (Ագաթ., էջ 452—456, Բուզ. Գ, գլ. ԺԴ և այլն)։ Րաֆֆու նկարագրությունը հիմնվում է այդ պատմիչների տեքստերի վրա։*

Խաչեր, նվիրական ծառաստանի խորքում — *Նկատի ունի հացիների անտառակը Վահագնի մեհյանի մոտ (Բուզ. Գ, գլ. ԺԴ)։*

...վաղեմի սրբազան բարձրությունների վրա — *Հմմտ. «ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ» (Ագաթ., էջ 452), «և եկեալ ի ձորակին եկաց յանդիման բարձրաբերձ տեղեացն շինուածոցն» (անդ, էջ 454), նաև՝ «ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակլայ» (Բուզ. Գ, գլ. ԺԴ)։*

Պատսպարված բարձր շրջապարիսպներով — *Հմմտ. «Եւ հասեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու» (Բուզ. Գ, գլ. Գ)։*

էջ 14, տ. 30. Ո՞վ ես ~ Իսկ դու ո՞վ ես։— *«Արձագանք» շաբաթաթերթում տպված այս հատվածի տեքստի մեջ, գրքի ժամունները տպագրելիս, Րաֆֆին բայերի և դերանունների հոգնակի թվով կիրառված ձևերը վերածել է եզակի թվի ձևերի։ 5-րդ դարի մատենագրության մեջ մեծարելու ոճը արտահայտվում էր հասցեատիրոջը վանալան բարձր տիտղոսներ և հատկություններ շնորհող բառերով և շարույթներով, բայց ոչ դերանվան եզակի փոխարեն հոգնակի թվի կիրառություններով։*

Բ. ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ

էջ 16, տ. 3. Այդ գեղեցիկ ~ Աստղիկը, Տարոնի դիցուհին[1] ~ անհամեստ հետաքրքրությունից[3]— Աստղիկ — *հայ հեթանոսական դիցարանում սիրո աստվածուհու անունը։ Աստղիկի մասին այս ավանդությունը գրի է առել Գ. Սրվանձտյանցը (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 71—72)։ Սրվանձտյանցի գրքի մասին գրած գրախոսության մեջ Րաֆֆին վերապատմում է այս ավանդությունը (տե՛ս Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 60—61), այնուհետև մեկ այլ վերապատմությամբ զետեղում է «Կայծեր» վեպի առաջին հատորի տեքստի մեջ (տե՛ս ԵԺ 12 հատ., հ. 5, էջ 480)։ Այս ավանդությունը «Սամվելի» համար մշակելիս Րաֆֆին ճշգրտել է այն վայրը, որտեղից Աստղիկը դուրս էր գալիս լողանալու՝ օգտագործելով Ագաթանգեղոսի վկայությունը Աստղիկի մեհյանի տեղագրության մասին (Ագաթ., էջ 452)։*

էջ 16, տ. 19. Մանիշակագույն ժապավենի նման, երևում էր Բզնունյաց ծովակի[5] միայն նեղ շերտը։— *Րաֆֆին Վանա ծովի անվանումները (Աղթամարա ծովակ, Բզնունյաց ծովակ) պատումի մեջ կիրառում է ըստ գործողությունների տեղի։ Քանի որ Տարոնն իր դիրքով սահմանակից է Բզնունիք գավառին, որի անունից ծովն ստացել է իր անունը, ուստի և տվյալ նկարագրության մեջ Րաֆֆին կիրառում է «Բզնունյաց ծովակ» անվանումը։ Երբ վիպական գործողությունները տեղի են ունենում Ռշտունիք գավառում, Րաֆֆին կիրառում է «Աղթամարա ծովակ» անվանումը («Ռշտունիք» գլխում), իսկ երբ գործողությունները տեղափոխվում են Վան՝ կիրառում է «Վանա ծովակ» անվանումը («Համազասպուհի» և «Խայթ» գլուխներում)։*

էջ 16, տ. 25. Այդ կանաչազարդ գոգի վրա սփռված էին Տարոնի բազմաթիվ գյուղերը, ավանները, նշանավոր քաղաքները։— *Պատմական Տարոնի բազմաթիվ գյուղերը, ավանները, քաղաքները ըստ աղբյուրների վկայությունների ստորագրում է Ղ. Ինճիճյանը «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատության մեջ (Վենետիկ, 1822, էջ 104—113)։ Նրա նշած 16 գյուղերի անուններից Րաֆֆին «Սամվելի» տեքստում օգտագործել է 9-ը (Հացեկաց, Թիլ, Գոմկունք, Կուառս, Մեղտի, Տում, Խորնի, Պարեխ, Կեղք, Բագում), 7 քաղաքների անուններից՝ 6-ը (Մուշ, Կավկավ, Ձյունկերտ, Ոձ, Վիշապ, Մծուրք)։*

էջ 16, տ. 28. Ահա Մեղտի գետի[9] ~ ափին Ձյունակերտը — *Մեղտի անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ («և եկեալ հասեալ այր թողեալ յանգս Մեղտայ»), որպես «Մեղտայ» հատուկ անվան տարբերակված (տե՛ս Յովհաննու Մամիկոնէից Եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 24)։ Մեղտի գետը Ինճիճյանը, Չամչյանցը նույնացնում են Մեղրագետի հետ (տե՛ս Հնախօսութիւն, հ. Ա, էջ 157, Չամչեանց, Պատմութիւն, հ. Գ, Անվանացանկ, էջ 167)։*

Ոձ քաղաք — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ (տե՛ս նշվ. գիրքը, էջ 23)։*

Վիշապ քաղաք — *ըստ Զենոբի պատմության քաղաքը հիմնել են հնդիկ իշխանները՝ Դեմետրը և Գիսանեն, Վաղարշակ թագավորի օրոք (տե՛ս Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի, Վենետիկ, 1889, էջ 36), ըստ Չամչյանցի՝ 148 թ., մ. թ. ա. (Չամչ., հ. Ա, էջ 210)։*

Կավկավ քաղաք — *այս անունը, ըստ Ինճիճյանի, վկայված է Զենոբի ձեռագրերից մեկում. «Կաւկաւ Քաղաք՝ որ յիշատակի ի ձեռագիրս Զենոբայ, ի կողմանս Ողկան ամրոցին» (Ստորագրութիւն, էջ 108)։*

Ձյունակերտ — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ «Ձյունկերտ» ձևով (տե՛ս նշվ. գիրքը, էջ 31, 62)։ Րաֆֆին ավելացրել է ա հոդակապը (Ձյունկերտ—Ձյունակերտ) և ստուգաբանել է այն «ձյունից կերտված» իմաստով, այդ պատճառով էլ գրել է «սպիտակ» մակդիրը։*

Մշո դաշտի քաղաքների սույն թվարկումը կատարելիս Րաֆֆին օգտվել է Ինճիճյանի «Ստորագրութիւնից»։ Նույն այս դասակարգումը Րաֆֆին արդեն օգտագործել էր «Կայծեր» վեպի երկրորդ հատորում։ Հմմտ. «Տարոնի մարդաշատ մեծահարուստ քաղաքներից մնացել էր այդ մեկը միայն, և այն ևս ավերի մի մեծ ավանի տպավորություն էր գործում, քան թե քաղաքի։ Չկար Կավ-Կավ կոչված ամրաշեն քաղաքը, իր անառիկ Ողական բերդով։ Չկար Ձյունակերտ քաղաքը, որ Վախթանգ զորավարը նորոգելով, իր կնոջ անունով կոչեց Պորպես։ Չկար Ոձ քաղաքը, որի անհարկու բերդը շինեց Աշոտ մակերի

որդի Դավիթ Բագրատունին։ Չկար Վիշապ քաղաքը, որ Վաղարշակի օրերում հիմնեցին հնդկացի գաղթականները, որը այլ անունով կոչվում էր Տիրակատար քաղաք» (Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 659)։ Րաֆֆին «վերականգնել» է «Կայծերի» նկարագրությունը՝ «չկար» ժխտումը վերածելով «Ահա» ցուցամի։

էջ 16, տ. 32. Արածանին ~ մի ժողովուրդ, որ ասպնջականություն էր գտել Գանգեսի ափերից[13] ~ յուրյունը.— *Պատումը հիմնված է Զենոբի տեքստի վրա. «Դեմետր և Գիսանէ իշխանք էին հնդկաց, և եղբարք ցեղովք. դաւ խոհ խորհեալ նոցա Դինասքեայ արքային իւրեանց, զոր իմացեալ եղեալ արքային՝ առաքէ զօր զհետ նոցա, կամ սպանանել, կամ յերկրէն հալածական առնել։ Իսկ նոքա լեալ մազապուր՝ անկան առ Թագաւորն Վաղարշակ. և նա ետ նոցա զերկիրն Տարօնոյ իշխանութեամբ» (Զեն., Վենետիկ, 1889, էջ 36)։*

էջ 17, տ. 1. Արածանիի ափերի մոտ ~ մի այլ ժողովուրդ ~ Հանգոյի ափերից[14] ~ մշակում էր նրանց երկիրը։— *Րաֆֆին նկատի ունի չինացիների գաղթը Հայաստան (տե՛ս ծ. էջ 8, տ. 3)։ Հանգո անունը Չինաստանի գետերից մեկի՝ Հուանհեի, ռուսերեն հին տառադարձման պատճենահանումն է (Гоанго)։*

էջ 17, տ. 3. Նրանց ~ Արածանիի շամբոտ ափերի մոտ Տորոններով «որդան կարմիր» էին հավաքում — *Հին Հայաստանում որդան կարմիրի արդյունաբերության մասին տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Ա., էջ 202։*

էջ 17, տ. 8. Զայրացած է ~ մի ամբողջ նավատորմիղ. նախնական մարդու նավատորմիղը ~ բերե մաշկապատ նավակների խումբը ~ խորին անդորրությունը։— *Տե՛ս ծ. էջ 8, տ. 15։ «Արձագանքում»* մաշկապատ *բառի փոխարեն գրված է* մաշկեղեն։ *Րաֆֆու փոփոխությունը պայմանավորված է իմաստի ճշտությամբ։ Հերոդոտի նկարագրության մեջ նավակները ոչ թե* մաշկեղեն *են (մաշկից, կաշվից պատրաստված), այլ* մաշկապատ *(մաշկով, կաշվով պատած), ըստ Ինճիճյանի թարգմանության* մորթապատեալ *(Հնախօսութիւն, հ. Ա., էջ 217)։*

էջ 17, տ. 22. բերդերը և անոնցի ամրոցները, որոնցից էին՝ Եղնուտը, Մեծամոր ամրոցը, Աստղաբերդը, Այծից բերդը — Եղնուտ *կամ* Եղանց բերդ — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի և Լաստիվերցու պատմություններում (տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 108)։ Ըստ Հյուբշմանի ստուգաբանվում է «եղնիկներու բերդ», «եղնաշատ» իմաստներով (Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 338)։* Մեծամոր ամրոց — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ. «և հայր ի փոքր ամրոցն Մեծամօր» (Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 11)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 109։* Աստղաբերդ — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ (տե՛ս նշվ. գիրքը, էջ 62)։ «և մեծ կաթողիկէն յԱստղաբերդ»։ Րաֆֆին այս անունը, որպես վերնագիր, օգտագործել է «Կայծեր» վեպի երկրորդ հատորում (Թիֆլիս, 1887, էջ 671), նույն գլխում մանրամասն նկարագրված են բերդի ավերակները։ Րաֆֆին այդ անունը ստուգաբանում է ըստ Ալիշանի. «Այդ բերդի անունն անգամ ինձ համար հրապուրիչ էր. Աստղաբերդ, գեղեցիկ անուն է։ Ալիշանը ասում էր, որ Աստղկաբերդ անվան փոփոխությունը պետք է լինի» (Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 671)։ Հմմտ. «ի լերինն Ասղնբերդ (Աստղկանբերդ)» (Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 45)։ Այս տեղանունը կիրառված է նաև վեպի բանաստեղծական հատ-*

վաճներից մեկում։ Այծից բերդ — *անունը վկայված է Հովհ. Մամիկոնյանի պատմության մեջ. «առեալ տարան յԱյծից բերդն» (Հովհ. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 38)։*

Ղ. Ինճիճյանի ստորագրած Տարոնի 6 բերդերի և ամրոցների անուններից Րաֆֆին «Սամվելում» կիրառել է 5-ը (Եղնուտ, Այծից, Աստղաբերդ, Մեծամոր, Ողական)։

էջ 17, տ. 24. և Ողականը ~ մրցում էին ամպերի հետ։— *Ողական կամ Ողկան— անունը վկայված է Խորենացու, Բուզանդի, Եղիշեի, Հովհ. Մամիկոնյանի պատմություններում։ Այս նկարագրության որոշ մանրամասնություններ Րաֆֆին մշակել է ըստ Բուզանդի. Հմմտ. «և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի ներքս ղատարին բերդին՝ որում Ողական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ» (Բուզ. Ե, գլ. Դ), նաև Գլակի սերուտի այն հատվածը, որտեղ պատմվում է Լուսավորչի՝ բրմերի դեմ մղած կռվի մասին, ըստ որի Լուսավորչին փախցնում են Ողկան ամրոցը, որ հեռու չէր կռվի վայրից (Քարբե լեռ, Աշտիշատ)։*

էջ 17, տ. 37. Այդ ամրոցը ~ ժառանգեցին Տարոնը։— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Խորենացու պատմության տեքստը (Բ, գլ. Ը, Դ, գլ. ՁԴ)։ 150 թիվը վերցված է Չամչյանցի ժամանակագրական աղյուսակից (Պատմութիւն Հայոց, հ. Դ, ժամանակագրութիւն, էջ 37), իսկ 320 թվականը Ա հատորից (էջ 412)։*

Գ. ԳՈՒԺԿԱՆ

էջ 18, տ. 29. և բաց գլխի երկար գիսակները, գագաթից իջնելով, մեղմ ալիքներով, սփռվել էին թիկունքի վրա — *Րաֆֆու այս նկարագրությունը հիմնված է Ինճիճյանի վերլուծության վրա. «Վասն սովորութեան գլխոյ արձակելոյ կամ գերծելոյ ոչ գտանեմք ինչ յիշատակութիւն այլուր առ մեզ. միայն հարևանցի առ Լամբրոնացւոյն յայն բան՝ որանոր ի յիշելն զանուն* Պատանի, *ասացեալ է՝ իբր գէս նորա* նատանի: *Իսկ առ օտարազգի մատենագիրս յիշատակին ինչ ինչ սովորութիւնք այլոց ազգաց. յորս Սենեկայ ի Թուղթն իւր յիշէ և զՊարթևացն մեզ մերձակայից՝ հերարձակս գնելով զսովորութիւն նոցա.» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 328)։*

մեղմ ալիքներով — *Հին հայերի մազերի ալիքաձևության մասին վկայում է Խորենացին. «ալէբեկ ծայրիւ հերաց Երուանդեան Տիգրան» (Ա, գլ. ԻԴ)։ Մ. Էմինը այս շարույթը վերլուծելով, եզրակացնում է, որ* ալէբեկ *բառը կազմված է* աղիք (кишка, струна) *և* բեկանեմ (ломать, загибать) *բաղադրիչներից, աղիքի նման ոլորված* (завитой как кишка, как струна *(իմաստով)* История Армении Моисея Хоренского, пер. с армянского и объяснил Н. Эмин, М., 1958, стр. 267—268):

էջ 19, տ. 7. անկյուններում դրած էին ~ հաճ բե ընդունարանի:— *Զենքեր նկարագրելիս Րաֆֆին օգտագործում է Ինճիճյանի վերլուծությունները (Հնախօսութիւն, հ. Բ, «Զէնք զորս անձամբ կրէին մարտիկք» գլուխը, էջ 254—261, 266—269), Ռոլեն Գաղղիացու «Հնախօսութեան» 5-րդ հատորի զենքերին նվիրված գլուխը (Վենետիկ, 1828, էջ 461—469), ինչպես նաև Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածների վկայությունները (տե՛ս Նոր Բառգիրք, հ. 1, էջ 265, 315, 823, 846, 877, 879, 1054, հ. 2, էջ 690, 771, 774)։*

«Անհայտ ընկերով» նկարագրությունը Րաֆֆու ստեղծագործություններում հանդիպում է: Այդպիսին է Ռուստամի սենյակը «Սալբի» վեպում (ԵԺ 12 հատ., հ. 2, Եր., 1983, էջ 156), Պարոն Ք...-ի սենյակը «Անմեղ վաճառք» վիպակում (ԵԺ 12 հատ., հ. 3, Եր., 1984, էջ 455), եզդիների առաջնորդի վրանը «Կայծեր» վեպի առաջին հատորում (ԵԺ 12 հատ., հ. 5, Եր., 1985, էջ 591), Դավիթ-Բեկի սենյակը «Դավիթ-Բեկ» վեպում (ԵԺ 12 հատ., հ. 7, Եր., 1985, էջ 132), վարպետ Փանոսի սենյակը «Կայծեր» վեպի երկրորդ հատորում (Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 9) և այլն

Էջ 19, տ. 31. Նա նստած ունէր ~ տակերով[5]:— *Նկարագրությունը հիմնված է Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածների վկայությունների վրա (Նոր Բառգիրք, հ. 1, էջ 560, 589, 714, հ. 2, էջ 300, 798, 897)։*

Էջ 20, տ. 20. Ես Արծրունիներին ճանաչում եմ... նրանք իմ ընկերներն են[6]...— *Ըստ Բուզանդի վկայության (Դ, գլ. Ծ) Մերուժան Արծրունին Վահան Մամիկոնյանի քրոջ որդին էր («Եւ Վահան... անկաւ ի բանս հրապուրանաց նա ի Մերուժանայ արծրունւոյ քեռորդւոյ իւրոյ»), ըստ Թովմա Արծրունու (Ա, գլ. Ժ) Վահան Մամիկոնյանը Մերուժանի աներն էր («...Վահանա Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ»)։ Րաֆֆին հետևել է Խորենացու վկայություններին, որոնց համաձայն Վահանը Մերուժանի քրոջ ամուսինն էր և Սամվելի քեռին («բայց ի նահապետէն Արծրունեաց Մեհրուժանայ և ի նորին քեռանէ Վահանայ Մամիկոնենէ» (Խոր. Գ, գլ. ԻԹ), նաև՝ Սամվելը «երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զաղչել ի Յունաց» (անդ, գլ. ԽԸ)։*

Էջ 20, տ. 29. Այլ այն օրից, որ ձեր նորեղբօրը[7]— *Վկայությունը Փավստոսինն է. «Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի Մամիկոնեան ի տոհմէն» (Բուզ., Դ, գլ. Ծ)։*

Էջ 20, տ. 30. որ Շապուհ արքան[8]— Շապուհ Բ Երկարակյաց, *պարսից թագավոր, իշխել է, ըստ Չամչյանցի, 319—389 թթ.։ Թագավոր է հռչակվել ծնվելուց առաջ (306 թ.)։*

Էջ 21, տ. 3. թէ որպիսի խաբեությամբ[10] Շապուհ արքան մեր Արշակ թագավորին և ձեր նորեղբօրը հրավիրեց Տիզբոն:— *Տե՛ս Բուզ., Դ, գլ. ԾԲ, ԾԴ։ Րաֆֆու այս շարույթն իր հնչերանգով նման է Բուզանդի Դ-րդ դպրության ԾԲ գլխի՝ ցանկում գրված վերնագրին. «Յաղագս թագաւորին Պարսից, թէ զիարդ ի ժամանակին լռեցոյց պատերազմ տալ ընդ Արշակայ թագաւորին Հայոց, և նենգութեամբ առ ինքն կոչէր ի հաշտութիւն»։*

Էջ 21, տ. 5. Թագավորին երկաթյա շղթաներով աքսորեց Խուժաստանի Անուշ բերդը[11]:— *Րաֆֆին վերաշարադրել է Խորենացու տեքստը. «Ընդ որս դժարեալ Շապուհ կապէ զնա Արշակայ երկաթեղէն շղթայիւք, և տա տանել յերկիրն Խուժաստանի յԱնուշն կոչեցեալ բերդ» (Խոր, Գ, գլ. ԼԵ)։ Անուշ բերդի մասին տե՛ս Րաֆֆու ծանոթագրությունը «Բնագրային տարբերություններ» բաժնում։*

Էջ 21, տ. 8. Երբ կանգնեցրին ~ և տանել Անուշ բերդը:— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին թարգմանաբար օգտագործել է Բուզանդի տեքստի «Եւ եղև ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ ~ որ արգելին խաղ զթագաւորն Արշակ» (Դ, գլ. ԾԴ) հատվածը*

էջ 22, տ. 26. Նրա հայրենի ավանը, Խորնին[21], շատ հեռու չէր Օղականից.— Խորնի անունը վկայված է Զենոբի պատմության մեջ (Զենոբ, էջ 37), համարվում է Մովսես Խորենացու ծննդավայրը, գտնվում է Տարոնում, եղել է Աշտիշատի սեփականությունը։

Դ. ՄԻ ԱՂՈՏ ՄԻՏՔ ԾԱԳՈՒՄ Է ՆՐԱ ՄԵՋ

էջ 24, տ. 19. Հայոց թագավորը, Պապը, յուր կնոջ՝ Զարմանդուխտի և երկու որդիների՝ Արշակի և Վաղարշակի հետ ~[1] Կ. Պոլսում — Ըստ Բուզանդի Պապը՝ Արշակի որդին, Բյուզանդիա է ուղարկվում հասունանալուց հետո (Բուզ. Դ, գլ. ԺԵ)։ Պապի կնոջ և որդիների Բյուզանդիայում գտնվելու մասին պատմում է Խորենացին. «Ապա փոխանակ Վարազդատայ թագաւորեցոյց Հայոց Թէոդոս մեծ զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեցեալ, որպէս թէ ոչ միաբանեսցին երկոքին յապստամբութիւն եւ անդէն պահելով զմայր մանկանցն, արձակէ զնոսա» (Խոր. Գ, գլ. ԽԱ)։ Պապի կնոջ Զարմանդուխտ անունը վկայված է Բուզանդի տեքստում (Բուզ. Ե. գլ. ԼԷ)։

էջ 24, տ. 22. կալանավորել էր հունաց Վաղես կայսրը[2]:— Վաղես Փլավիոս Արիանոս (328—378) – Արևելյան Հռոմեական կայսրության ինքնակալ 364 թվականից, Վալենտինիանոս Ա-ի եղբայրը։ Հարեց արիոսականներին և սկսեց հալածել ուղղափառներին։ Զոհվեց 378 թվականի օգոստոսի 9-ին, Ադրիանապոլսի ճակատամարտում։

էջ 24, տ. 23. Ներսես Մեծը, նույն կայսրի հրամանով աքսորված էր Պատմոս անբնակ կղզում[3]:— Ներսես մեծ — կաթողիկոս Հայոց (364—384)։ Ներսեսի աքսորի մասին պատմում են Խորենացին (Գ, գլ. Լ) և Բուզանդը (Դ, գլ. Զ), որոնք կղզու անունը չեն հիշատակում (ըստ Բուզանդի՝ «ի կղզին մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի», ըստ Խորենացու՝ «ընկեցեալ ի կղզի ինչ անապատ»)։ Պատմոս անունը հետագայում ավելացրել է Ասողիկը՝ վերապատմելով Խորենացու տեքստը. «Վաղենտիանոս և Վաղէս ամս ժա. սա աքսորեաց զսուրբն Ներսէս Հայրապետն Հայոց ի Պատմոս կղզի» (տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 138)։ Այս կղզին էր աքսորվել նաև Քրիստոսի սիրելի աշակերտը՝ Հովհաննես ավետարանիչը, Դոմետիանոս կայսեր կողմից, 95 թվականին, քրիստոնեության տարածելու պատճառով. «Ես Յովհաննէս եղբայր ձեր եւ հաղորդակից նեղութեան եւ արքայութեան եւ համբերութեան որ ի Քրիստոս Յիսուս, եղէ ես ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս վասն բանին եւ վասն վկայութեանն Յիսուսի Քրիստոսի» (տե՛ս Աւետարան, Յայտնութիւն, Ա, 9)։ Ասողիկն, ըստ երևույթին, այս փաստն է նկատի ունեցել իր հավելումը կատարելիս՝ նմանեցնելով Ներսես մեծի և Հովհաննես ավետարանչի ճակատագրերը։ Պատմոս կղզու տեղագրությունը տե՛ս Страбон, География, Ленинград, 1964, стр. 463—464։ Խորենացու և Բուզանդի վկայությունները Րաֆֆին մանրամասներեն մշակել է վեպի «Պատմոս» գլխում։

էջ 25, տ. 32. Երբ իմ հորեղբայր Վարդանը արքայազն Տիրիթի հետ[4] ~ Վասակն էր[5] ~ թե յուր եղբորը:— Այս դեպքը պատմում են Բուզանդը և Խորենացին։ Րաֆֆին հետևել է Խորենացու պատումին (Գ, գլ. ԻԵ, «Սպանումն Տիրիթայ» գլուխը)։

էջ 26, տ. 14. ապարոշը[6] ~ բազուկի[7] ~ բանկոնակը[8], կուռոփկը[9], վարտիքը[10] ~ ոտնապաններով[11] ~ տրեխները ~ սպասավոր էր[13]:— Րաֆֆու նկարագրությունը արտացո-

լում է Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածների վկայությունները, որոնք մեծ մասամբ Աստվածաշնչից են (տե՛ս Նոր Բառգիրք, հ. 1, էջ 274, 430, հ. 2, էջ 740, 798, 897, 1027)։ Աստվածաշնչի այն վկայությունները, որոնք վերաբերում են կենցաղի տարբեր բնագավառներին, Րաֆֆին օգտագործում է Հայկազյան բառարանի միջոցով։ Գ. Սրվանձտյանցի գրքին նվիրված գրախոսության մեջ, գնահատելով գրաբարը այդ տեսակետից, Րաֆֆին նկատում է, որ մեր հին պատմագրության մեջ նման բառերի պակասը բացատրվում է այնտեղ մշակված թեմաների միակողմանիությամբ (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 59)։ Այս տեսակետից գնահատելով Աստվածաշնչի թարգմանությունը, Րաֆֆին ավելացնում է. «Բառերի մի փոքր ընդարձակ հավաքածու տալիս է մեզ Աստվածաշնչի թարգմանությունը, որովհետև նրա պարունակությունը ավելի բազմակողմանի է» (նույն տեղում)։ Տարազի, կենցաղի պատմականությունը հեղինակը մեծ մասամբ պահպանում է իր կազմած այդ «հավաքածուի» միջոցով, դրանց ավելացնելով ժողովրդական լեզվի մեջ եղած այն բառերը «ինչ որ պակասում է մեր հին գրքերից հավաքած բառարաններում» (նույն տեղում, էջ 59—60)։

էջ 28, տ. 15. Պարխեցի Ոսկանն էր — Պարխս — *գյուղ Տարոնում, անունը վկայված է Զենոբ Գլակի պատմության տեքստում (տես նշվ. գիրքը, էջ 37)։ Սամվելի սուրհանդակին՝ Սուրենին, բնակեցնելով Խորնիում՝ Մովսես Խորենացու ծննդավայրում, Րաֆֆին ընդգծում է նրա հայրենասիրական գործունեությունը, իսկ Տաճատուհու սուրհանդակին բնակեցնում է Պարխում, որ Զենոբի պատմության մեջ անհի «գյուղ, որ պատկանում է Մամիկոնյաններին» իմաստը նախորդող պատումի ընթացքում առնչված հակադրությունների շղթան՝ Սամվել—Տաճատուհի, Սուրեն—Ոսկան, կապուտակ ձիավոր—սև ձիավոր, գուժկան—ավետաբեր, «Պարխս» տեղանվանը տալիս է* դավաճանների գյուղ *իմաստ և լրացնում է Խորնի—Պարխս հակադրության իմաստային ամբողջականությունը տեքստում։*

էջ 30, տ. 22. Իրանք բաղկացած էին մի խույրից[23], որ բանված էր գեղեցիկ անկվածներով.— *Հմմտ. «Յղեաց առ Ազգէ, զի արասցէ խոյր բեհեզեայ անկուածով ոսկւոյ» (Խոր., Բ, գլ. ԼԴ)։*

էջ 30, տ. 23. մետաքսյա ապարոշից[24], որ կապեց խույրի վրա։— *Րաֆֆու աղբյուրը Հայկազյան բառարանի «ապարոշ» բառահոդվածն է (Նոր Բառգիրք, հ. 1, էջ 274)։*

էջ 30, տ. 25. կապեց արծաթյա մահիկը[25]— *տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 197—198, «մահիկ» բառահոդվածը։*

էջ 31, տ. 5. Նախ ճապաղ ~ պատմուճանը[28]— *Տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 616, «պատմուճան» բառահոդվածը. «արար նմա պատմուճան ծաղկեայ»։*

էջ 31, տ. 10. Մեջքին կապեց ծանր, ակնակուռ ճամարը[30] ~ գոհարներով։— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Եղիշեի պատմության տեքստը։ Հմմտ. «և զկըռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբ պատուականօք ընդ մէջ իւր ածէր» (Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Տփղիս, 1913, էջ 177)։*

էջ 31, տ. 14. ձախ կողմի ազդրի վրա ~ նրանը[31] ~ գեղեցիկ նկարներով։— *Րաֆֆու*

աղբյուրը Բուզանդն է. «և զերանն յաղթէր կապեալ, և ի վերայ երանին խորշն ի վար-տանանցն իջեալ անկեալ ի վերայ երանին՝ ծածկեալ մինչև ի սրունս» (Ե, գլ. Չ)։

էջ 31. տ. 18. Կարմիր վարտիքի[33] ~ կարմիր կոշիկների վրա[34]:— *Այս նկարագրու-թյան մեջ օգտագործված են Բուզանդի, Խորենացու, Ստ. Օրբելյանի վկայությունները և 6-րդ դարի բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու տեքստը Փոքր Հայքի հինգ նախարարների տարազի մասին, որ թարգմանել է Հ. Ինճիճյանը։ Հմմտ. «և ազուցին նմա գրաստս և վարտիս եւ էր հանդերձն անհեդեդ մեծութեամբն. զի խորշ զխորշիւ իջանէր» (Բուզ. Ե, գլ. Չ), «Սանդալոյս կարմրերանգս մինչև ի ծունկս հասեալք» (Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 286, «Սովորութիւնք ի զգեստս իշխանացս» գլխից), «Տայ և ասնն բաշի... և կարմիր զգեստ միոյ ոտին», «Եւ ոչ ինչ ընդհատ յայսց պատուոյ տայ դայե-կին իւրում Սմբատայ, բայց միայն... ի կարմիր կօշիկէ» (Խոր. Բ, գլ. Խէ), «մինչև հրա-մայեցաւ նոցա զահոյս ունել արծաթի... նաև կօշիկ կարմիր» (Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 15)։*

էջ 31, տ. 21. Նրա իշխանական պատմուճանը ~ Երկու ոսկյա գնտեր, որ հարշ ավեց ականջներից[35]:— *Հայոց իշխանների այս զարդարանքի մասին վկայում են Խորենացին և Եղիշեն։ Հմմտ. «Տայ... և գինդ յերկուսին ականջսն», «բայց միայն յերկուց գնդացս» (Խոր. Բ, գլ. Խէ), «ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն» (Եղիշէ, նշվ. գիրքը, էջ 177)։*

էջ 32, տ. 13. աջ ձեռքի մատները լայն բաց անելով, «մռնիկ հանեց[37]»:— Մռնիկ հա-նել *արտահայտությունը 1870 թ. գրած «Շուշան» բանաստեղծական տեքստի տողատակին հեղինակը ծանոթագրել է. «*Մռնիկ *նշանակում է բարաշխա կամ բաղմա, զուցե հին ձևա-նահմայությունից մնացած մի սովորություն է հայերի մեջ, երբ մինին կամենում են որևի-ցե չար նյութել, ձեռքի հինգ մատը բաց արած կնքում են նորա երեսին» (ԵԺ 12 հատ., հ. 1, Եր., 1983, էջ 105)։*

Ե. ՄԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

էջ 34, տ. 16. մետաքսյա ճոխած ճեյեկի տաշե[2]— *Տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 30, «հայելի» բառահոդվածը. «Սահն, եթէ հայելի ի պղնձոյ և յանագոյ լինի»*

էջ 34, տ. 31. Այդ փառահեղ տիկինը Սամվելի մայրն էր, որին կոչում էին Տաճա-տուհի[3]:— Տաճատուհին *որպես Սամվելի մայր հիշատակված է Խորենացու և Թովմա Արծ-րունու պատմություններում. «Բայց Սամուէլի Մամիկոնենի յինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու. և զպատճէն թղթոյն նախարարացն՝ զատուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկադ. Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուհի» (Խոր. Գ, գլ. ԽԸ), «...Սամուէլ... դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի» (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 106), «Սամուէլ Մամիկոնեան, որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի» (նույն տեղում)։ Ըստ Բուզանդի Սամվելի մայրը Շապուհի քույր Որմիզդուխտն է. «Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ քոյր Շապհոյ Պարսից թագաւորին» (Բուզ. Դ, գլ. ԾԹ)։ Այս երեք*

վկայություններում Սամվելի հայրն ու մայրը տարբեր անձնավորություններ են, Խորենացու մոտ՝ Վարդանն ու Տաճատուհին, Բուզանդի մոտ՝ Վահանն ու Որմիզդուխտը, Արծրունու մոտ՝ Վահանն ու Տաճատուհին։ Անտեսելով կամ ծանոթ չլինելով Խորենացու և Արծրունու վկայություններին, և հիմք ընդունելով, որ Րաֆֆին միայն Բուզանդի պատմության վկայությունն է նկատի ունեցել վեպը գրելիս, Վրթ. Փափազյանը և նրան հետևելով շատ բանասերներ և գրականագետներ ենթադրել են, որ գրողը դեմ է գնացել պատմական փաստին և փոխել է Բուզանդի վկայությունը գեղարվեստական էֆեկտի համար կամ այլ պատճառներով։ Հետագայում Արսեն Տերտերյանը փորձում է հիմնավորել Րաֆֆու «փոփոխությունը» և եզրակացնում է, որ «Րաֆֆուն տվյալ խնդրում ղեկավարել է ոչ թե էֆեկտի զգացմունքը, այլ պատմափիլիսոփայական առողջ խոհականությունը» (Երկեր, Եր., 1930, էջ 189—190)։ Այնինչ, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ վկայությունները, Րաֆֆին, վեպի հերոսների տոհմաբանությունը կազմելիս, տվյալ դեպքում հետևել է Թովմա Արծրունու առաջարկած տարբերակին (Վահանը և Տաճատուհին՝ որպես Սամվելի ծնողներ)։ Ուստի այստեղ պետք է խոսվեր ո՛չ թե պատմական տեքստի Րաֆֆու կատարած փոփոխության, այլ ընտրության մասին։

Էջ 36, տ. 27. Իսկ այդ ալմաստներ ~ կկացուցանեն[8]:— *Րաֆֆու աղբյուրը Առաքել Դավրիժեցու պատմության տեքստն է (Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884, էջ 454—467), որի թանկագին քարերին և նրանց հատկությունների նվիրված գլուխները Ք. Պատկանյանը թարգմանել է ռուսերեն և հայերեն տեքստի հետ, իր ծանոթություններով հրատարակել է 1873 թվականին (*К. П. Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, СПБ, *1873)։ Րաֆֆին Տաճատուհու արդուզարդը նկարագրելիս, որոշ դեպքերում, օգտագործել է Պատկանյանի ռուսերեն թարգմանության տեքստային իմաստները։*

մշտական ուրախության կընծեն իր տերին — *«տայիմ ֆառահ կեննայ» (նշվ. գիրքը, էջ 84), ըստ Պատկանյանի թարգմանության* «всегда бывает весел» *(նշվ. գիրքը, էջ 5)։*

Յաղթող կհանդիպացնեն իրեն ամեն ձեռնարկության մեջ և թագավորների աչքում սիրելի կկացուցանեն— *«ու թագաւորաց քաղցր երևնայ, ու խօսքն զարոսյ լինի» (նշվ. գիրքը, էջ 84), Պատկանյանի թարգմանությամբ.* «Носящий алмаз бывает угоден царям; слова его уважаются» *(նշվ. գիրքը, էջ 4)։*

Էջ 36, տ. 32. յուր երկնագույն փիրուզայի ~ պատուհասներից:— Հմմտ. կլցնե իր տերերը ոսկով ու արծաթով. Իր խոսքը, Իր խնդիրքը ընդունելի կանե — *«և տասացեալ են վասն փիրօզային՝ թէ ով որ ի մատն հագնի ի դրամէ պակասութիւն չքաշէ. և խօսքն ընդունելի լինի» (նշվ. գիրքը, էջ 81), Պատկանյանի թարգմանությամբ.* «Говорят, кто носит на пальце бирюзу, тот не чувствует недостатка в деньгах; слова его встречают внимание» *(նշվ. գիրքը, էջ 48)։*

Իրեն ետ կպահե թագավորների պատուհասներից — *«ով որ հետ պահէ, խշմն թագաւորաց չտեսնու» (նշվ. գիրքը, էջ 88), Պատկանյանի թարգմանությամբ* «Кто носит бирюзу, тот не увидит царских *խշմն* (?)» *(նշվ. գիրքը, էջ 48)։ Պատկանյանը չի վերծանել «խշմն» բառի իմաստը. Րաֆֆին ենթադրաբար թարգմանել է «պատուհաս» բառով՝ ելնելով «չտեսնու» բայաձևի ժխտական իմաստից։*

Էջ 36, տ. 34. Ունա այդ ոսկյա գոտեր[10]—*«Սամվել» վեպի հատվածներից մեկը ծանոթագրելիս Րաֆֆին գրում է. «Ով որ կամենում է առույգ գաղափար ունենալ մեր Պարս-*

կատանի հայ կնիկների զարդարանքների վրա թող ուշադրությամբ կարդա Եզեկիելի ԺԶ գլխում 11 համարը։ Թարգմանաբար այդ հատվածը մեջբերելուց հետո, նա ավելացնում է. «Այս խորայելյան բոլոր զարդարանքները երևում են հայ կնիկների վրա» (ԵԺ 12 հատ., հ. 2, էջ 32)։ Նույն այս միտքը Րաֆֆին շարադրում է «Ճանապարհորդություն Պարսկաստանում» նամակաշարի Ը և ԻԱ նամակներում (տե՛ս ԵԺ 10 հատ., հ. 8, էջ 400, 472)։ Այս փաստերը վկայում են, որ Րաֆֆին, որպես աղբյուր, նկատի է ունեցել Աստվածաշնչի իր հիշած հատվածը. «Եւ զարդարեցի զքեզ զարդու, եւ եդի ապարանջանս ի ձեռս քո, եւ քառամանեակ ի պարանոց քո. եդի բեղ գինդս, եւ գօրշապահանգս յականջս քո, եւ պսակ պարծանաց ի գլուխ քո, եւ զարդարեցար ի զարդ ոսկւոյ եւ արծաթոյ» (Եզեկ. ԺԶ, 11—12)։ Աստվածաշնչի նույն այս հատվածի վրա է հիմնված տեքստի շարունակության մեջ «մանյակ» և «ապարանջան» բառերի կիրառությունը։

էջ 36, տ. 35. դալնզգույն զմրուխտներով ~ խայթոցներից:— *«Երեք գոյն է, րա-զիանի, ռեհանի, բանջարի»* (Драгоценные камни, *էջ 86—87), Պատկանյանի թարգմանությունը.* «Он бывает трёх цветов: укропного, базиликового, и шпинатного» *(Նշվ. գիրքը, էջ 22)։*

կպահպանեն Քո լսելիքը անախորժ ձայներից և միշտ ուրախալի համբավներով կզվարճացնեն Քեզ — *«ցնոր չքաշէ կամ հոգայ» (Նշվ. գիրքը, էջ 87), Պատկանյանի թարգմանությունը.* «Носящий этот камень освобождается от тоски и ипохандрии» *(Նշվ. գիրքը, էջ 23)։*

կհեռացնեն օձի ու վիշապի աչքերը և Քո անձը անխոցելի կպահեն ամեն թունավոր գեռունների ու միջատների խայթոցներից— *«Ի տեսանելն օձի աչացն ջուր իջանէ՝ և կուրանայ օձն... և թէ զմրուխտն ի մատ լինի կամ ի հետն նա վնասակարք թունաւորք չմերձենան ի նա» (Նշվ. գիրքը, էջ 74—75), «և թէ վիշապօձ տեսնու ի դիմացն բանէ աչքերն պատառի» (անդ, էջ 87), Պատկանյանի թարգմանությունը.* «Если перед змеей подержать изумруд, то из глаз её польётся вода и она ослепнет», «к тому, кто носит на себе или на пальце изумруд, не приближаются вредные и ядовитые гады» *(անդ, էջ 22),* «если подержать изумруд перед лицом змеи, то глаза её ослепнут» *(անդ, էջ 23)։*

էջ 37, տ. 2. խոշորավոր հատուքներով[12] ~ հրապուրանքը — *Տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 376, «յուռութք» բառահոդվածի վկայությունները։ Հուռութքներին վերագրվող Րաֆֆու նշած հատկությունները վերցված են Ճամիրամի մասին ավանդույթներից (տե՛ս Խոր. Ա, գլ. ԺԸ, Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 274)։ Խորենացու և Սարգիսյանի պատումները Րաֆֆին մշակել է նաև «Կայծեր» վեպի երկրորդ հատորում և «Արայի պատերազմի գաղտնիքը» պոեմում (տե՛ս Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 408, ԵԺ 12 հատ., հ. 1, էջ 200, 204)։*

էջ 37, տ. 8. և օձի իմաստություն, ինչպես տվեց օձը մեր նախամայր Եվային:— *Տե՛ս Աստուածաշունչ, Ծնունդը, Գ, 1—24։*

էջ 37, տ. 9. այդ մարջանով (բուստ) ~ պատրանքներից—մարջանով (բուստ)— *«Մարջան զոր հայերէն բուստ ասեն»* (Драгоценные камни, *էջ 77), Պատկանյանի թարգմանությունը.* «Коралл по армянски буст» *(անդ, էջ 52)։*

էջ 37, տ. 17. յաղութի (հակինթ) ~ կտան Քեզ:— կարմիր յաղութ — *«հանց իմա-*

ցիր որ չորս գոյն ունի, կարմիր ու լուրջ, դեղին ու սպիտակ։ Կարմիրն նօթն գոյն է» (Драгоценные камни, *էջ 84)*։

մարդկանց մոտ հաճելի կանե ինձ — *«ով որ լինի հետն պահէ՝ նա մօտ մարդկան ընդունելի է» (անդ, էջ 74), Պատկանյանի թարգմանությունը.* «носящий на себе яхонт бывает приятен людям» *(անդ. էջ 9)։ Րաֆֆին հետևել է Պատկանյանի թարգմանությանը (ընդունելի —* приятен — *հաճելի)։ Պատկանյանը յաղութը չի թարգմանում* հակինթ *բառով՝ ընդունելով Դավրիժեցու թարգմանությունը, ըստ որի յաղութի հայկական անունն է* կայծ *(անդ, էջ 74).* հակինթը *յաղութի հետ է նույնացնում Հայկազյան բառարանը (տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 314—315)։*

էջ 37, տ. 18. սարդիոնի (սեյլան) քարով ~ արյունահոսությունը։— *Հմմտ. «Սարդիոնն. որ է սէյլան, արին որ երթայ յինքենէ... զսէյլանն ի հետն պահելն զարինն կտրէ»* «Драгоценные камни, *էջ 74), Պատկանյանի թարգմանությունը.* «Сардион т. е. Сейлан, имеет свойство останавливать кровотечение» *(անդ. էջ 16)։*

էջ 37, տ. 19. վարդագույն սուտակի (լալ) ~ դևերին։— փարատում է վշտերը և հալածում է դևերին — *«և ի յուրախարար մաջունն թէ ծեծեն և խառնեն սրտին ուրախութիւն է. Երեսի գոյնն կարմիր լինի մարդոյ» (անդ, էջ 76), «դիւաց այլ աղեկ է, ի մաջուն խառնեն ուրախ առնէ» (անդ, էջ 86), Պատկանյանի թարգմանությունը.* «Если истолочь его и подмешать в лекарственную кашку, то он делает человека весёлым, удаляет от него тоску и заботы» *(անդ էջ 19)*, «ограждает человека... от бесов... Принятый в лекарственной кашке, он веселит человека» *(անդ, էջ 20)։*

էջ 37, տ. 21. խայտանամուկ օձաքարով ~ ոչնչացնում է։— խայտանամուկ — *«լինի որ բոլոր բոլոր վարդ լինի. և լինի որ նօղտայ լինի. և լինի որ երկայն երկայն և նաղաշ լինի, և ամենայն ցեղն ի յօձու խօրխ նմանի» (անդ, էջ 78), Պատկանյանի թարգմանությունը.* «На нем бывают иногда пятна на подобие круглой розы, а иногда кропинки, и *նաղաշ*, но всегда похожие на змеиную чешую» *(անդ, էջ 40)։*

թույների ներգործությունը ոչնչացնում է— *«թէ օձ թունէ զմարդ ի վերա լեաննին սրբին. սրտա մի արբուցանեն և քսեն ի վերա թունին. ի նոյն օրն ազատի Աստուծով» (անդ, էջ 78)։*

էջ 37, տ. 22. հակինթի դեղնագույն ~ չար մարերը[15]—*Հմմտ. «Աղեղն... քանց նաման ինչ են... նաժանի խաւլիաթն յինքն հայլին չարկամին աղէկ է» (անդ, էջ 92), Պատկանյանի թարգմանությունը չի համապատասխանում բնագրի տեքստային իմաստներին.* «Лучший сорт еменский» *(անդ, էջ 34).* յաման *բառը Պատկանյանը թարգմանել է* եմենական *իմաստով* (еменский), *այնինչ Դավրիժեցու տեքստում տվյալ համածը նշանակում է «յաման քարի նման մի բան էն». Րաֆֆին նկատել է այս անհամապատասխանությունը և յաման քարի գույներից մեկը տվել է հակինթին (Յեմանի... բայց լինի և դեղին», անդ, էջ 78)։* Աղեղ *քարը հակինթի հետ նույնացնում է Պատկանյանը.* «Сердолик, *աղեղ*, (акик)» *(անդ, էջ 33)։*

էջ 38, տ. 32. Իր փոքր եղբորը, Վահանին։— *Րաֆֆին Սամվելի փոքր եղբոր կեր-*

պարը սահմանել է՝ նկատի ունենալով Բուզանդի վկայությունը. «Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ» (Դ, գլ. ԾԹ), որից հետևում է, որ Սամվելը պետք է եղբայր կամ եղբայրներ ունենար։

էջ 39, տ. 1. Իսկ յուր եղբորը, Մեուժանին, խոստացել է հայոց թագավորությունն ու յուր քույր Որմիզդուխտին[2] արքան կնության է տվել Մեուժանին։— *Աղբյուրը Խորենացին է. «Եւ տուեալ նմա զքոյր իւր զՈրմիզդուխտ... և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն» (Գ. գլ. ԼԶ)։*

Զ. ԵՐԿՈՒ ԵՂԲՈՐ ՈՐԴԻՆԵՐ

էջ 41, տ. 8. Մամիկոնյան նախարարները ~ տեղի ունեցել — *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 144—146, «Պատիւ և իշխանութիւն Մամիկոնեանց» գլուխը։*

էջ 41, տ. 15. Տարոնի ամբողջ գավառը Մամիկոնյանների ժառանգությունն էր։— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 142—143, «Երկիր Մամիկոնենից» գլուխը, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 89—92։*

էջ 41, տ. 16. Այնտեղ Գլակա վանքում[2] դրած էին ~ Ողական ամրոցը ներկայացնում էր նրանց իշխանական Աթոռը[3]։— *Րաֆֆին վերապատմում է Ինճիճյանի տեքստը. «Ողական բերդ թուի լինել աթոռն կամ նախադահ քաղաք Մամիկոնէից... Որպէս և շիրիմ նոցա երևի լինել վանքն Գլակայ» (Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 144, «Աթոռն և շիրիմ Մամիկոնեանց» գլուխը)։* Աթոռ *էին անվանվում այն քաղաքները կամ ամրոցները, որոնք իշխանական տների կամ թագավորի գլխավոր նստավայրն էին։* Գլակա վանքի *մասին՝ նույն, էջ 98—102, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, էջ 194—197։*

էջ 41, տ. 18. Բայց Մամիկոնյանների ~ ապրում էր Տայոց երկրի ~ անմատչելի բերդը, որ կոչվում է Երախանի։— *Րաֆֆին նկատի ունի Բուզանդի պատմության այն հատվածը, որտեղ պատմվում է Հայր Մարդպետի բռնությամբ Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերի կոտորածի մասին։ Այդ ժամանակ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները փրկում են այդ տոհմերից երկու մանուկների՝ Շավասպ Արծրունուն և Տաճատ Ռշտունուն և. «չոգան յաշխարհն իւրեանց յամուրսն Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ զառն իւրեանց» (Բուզ. Դ, գլ. ԺԲ)։*

յուր անմատչելի բերդը, որ կոչվում էր Երախանի — *«Ապա երթեալ զանէլին զնա յիւրում դաստակին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Երախանի կոչի» (Բուզ. Դ, գլ. ԺԲ)։ Տե՛ս նաև* Ինճիճեան, *Հնախօսութիւն Հ. Բ, էջ 144, «Երկիր Մամիկոնենից» գլուխը։* Տայքի *մասին՝ նույն, Ստորագրութիւն, էջ 368—375։*

էջ 41, տ. 22. գլխավորապես Մամիկոնյաններից էին ~ և նրանց սնուցանող դայակները.— *Տե՛ս* Ինճիճեան, *Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 146, «Պատիւ և իշխանութիւն Մամիկոնեանց» գլուխը։*

էջ 42, տ. 1. Վասակը, որ Արշակի մանկության դայակն էր ~ ստացավ.— *Հմմտ. «Եւ կացոյց... զՎասակ զմիւսն եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիւրս պատերազմացն.» (Բուզ. Դ, գլ. Բ), «Արտաւազդ և Վասակ, որք ի մա-*

միկոնեան տոհմէն... Թէպէտ և անուանէին նորա զորդին զարքային զԱրշակ» (Բուզ. Դ, գլ. ԺԸ) և այլն։

Էջ 42, տ. 2. Կանանց հազարապետի պաշտոնն[5] էր վարում — Այդպես Մեսրոպ Երեցի վարքագրության տեքստն է. «Եւ էին յազգէն Մամիկոնէից եղբարք չորք, և անուանք նոցա Վարդան, Վասակ, Վահան, Վարազման՝ որդիք Արտաւազդայ որդւոյ Վաչէի Մամիկոնեայ», Արշակ II-ը Վասակին սպարապետ է նշանակում, իսկ «զերիս եղբարս նորա ընդ նմա հազարապետս կացուցանէր» (Մեսրոպ Երեց, Թիւ Ե)։

Հազարապետի պաշտոնը, ըստ Ղ. Ինճիճյանի. «Թէպէտ ի զինուորական դասէն առեալ է, որպէս յայտ է ի կազմութենէ բառին, այլ ընդհանուր առաւել նշանակէ զնա որ կարգեալ է ի վերայ իրաց տանն թագաւորականի՝ քան թէ զինուորականին» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 277, նաև՝ К. Патканян. Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым Армянскими писателями. СПБ, 1963, стр. XVIII):

Էջ 44, տ. 17. Վարազդատի մատանիով աղ կնքեցիր դու, որ քո կրոնի մեջ ամենամեծ երդումն է[6]:— Հմմտ. «Իսկ Արշակ խնդրէր հաստատուն երդումն ուխտի ի նմանէն, զի յայտ հնար անկասկած երթիցէ առ նա։ Եւ նա եւս բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման եւ զհետ ոչ եկեսցէ, ապա կապ լիցի առ ճակատս պատերազմի ի մէջ խրեանց»(Բուզ. Դ, գլ. ԾԴ)։ Այս մասին տե՛ս Ստ. Մալխասյանցի ծանոթագրությունը (Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 329—330)։

Էջ 44, տ. 30. Երբ նա ծպտված ~ պարսից արքունիքը[7]։— Վասակի նման արարքը վկայված չէ աղբյուրներում։ Րաֆֆին նրան է վերագրել Մուշեղի՝ նրա որդու, մասին Բուզանդի պատմածը (Բուզ. Ե, գլ. Բ)։

Էջ 45, տ. 37. Նրա աչքին ընկավ յուր պապի՝ Վաչեի պատկերը[8] — Վաչե Մամիկոնյանը որպես Վասակ Մամիկոնյանի պապ վկայված է Մեսրոպ Երեցի վարքագրության մեջ. «և անուանք նոցա Վարդան, Վասակ, Վահան, Վարազման՝ որդիք Արտաւազդայ որդւոյ Վաչէի Մամիկոնեայ» (Մեսրոպ Երեց, Թիւ Ե)։ Ըստ այս վկայության Մուշեղը Վաչեի ծոռն էր։ Րաֆֆու տոհմաբանական փոփոխությունը պայմանավորված է Վաչեի հերոսական գործերի մասին պատմող տեքստերի առատությամբ Բուզանդի պատմության մեջ։ Վաչեն, Վասակը և Մուշեղը Բուզանդի գլխավոր հերոսներից են, որոնց տիպաբանական նմանությունը Րաֆֆուն մղել է տոհմաբանական անմիջական կապ ստեղծել Վաչեի և Վասակի միջև։

Էջ 46, տ. 4. Երբ այդ հերոսը ընկավ ~ մեր եկեղեցիներում[9]»:— Այս հատվածը Բուզանդի տեքստի համառոտ վերաշարադրանքն է. «Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել մարտ խառնութեամբ պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս... Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին...» (Բուզ. Գ, գլ. ԺԱ)։ Այս հատվածը Րաֆֆին վերաշարադրել է՝ ավելացնելով «լացում էին և շինականները» և «Գրիգոր Լուսավորչի որդին» արտահայտությունները։ Հմմտ. Բուզանդի պատմության Գ-րդ դպրության ԺԱ գլխի հետևյալ հատվածի հետ. «Մխիթարեցարուք ի Քրիստոս ~ և ուրախ լիցուք»։ Րաֆֆին այս հատվածը վերաշարադրել է որոշ վերադասավորումներով, կրճատումներով և հավելումներով։

էջ 47, տ. 15. Ապստամբվել է Աղձնյաց բդեշխը[11] ~ Մեծ Ծոփաց իշխանները[22]:— *Րաֆֆին բաղկածարար թարգմանել է Բուզանդի տեքստը Հմմտ. «Նախ բդեաշխն Աղձնեաց, և Նոշիրական բդեաշխն, և Մահկեր տանն, և Նիհորականն, և Դասնորէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց... և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչէին, զորունս գնէին. և զատուցին զիրեանց աշխարհն ի Հայոց։ Եւ յետ սորա Գուգարաց բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և ընդ նոսա Դարդմանաձորոյ տէրն... Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդրեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց... Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ էր զաւրպայական աշխարհաւն, յետոյ եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետոյ եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կասպից. եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձտեաց, և ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց. և գնացին առ թագաւորն Յունաց» (Բուզ. Դ, գլ. Ծ)։ Այս գավառների պատմաաշխարհագրական բնութագիրը տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 38—39, 58—59, 62—67, 137, 140, 146—147, 233, 301—326, 338, 353—367, 530—532։*

Է. ՊԱՏՐՎԱԿ

էջ 50, տ. 13. բե ինչպես պարսիկները կտրեցին Եփրատի նավակամուրջը ~ Հուլիանոսի անցքը ~ բաց արին[3]:— Հուլիանոս Ուրացող — *հռոմեական կայսր (361—363), Կոստանդիանոս Մեծի խորթ եղբոր՝ Հուլիոս Կոստանդիոսի, որդին։ Հրովարտակից բացել մեհյանները, պաշտել հեթանոսական աստվածներին։ Հալածանքներ հարուցեց քրիստոնյաների հանդեպ, որի համար ստացավ «ուրացող» մականունը։ Զոհվեց պարսիկների դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ 363 թվի հուլիսի 26-ին, 32 տարեկան հասակում* (Аммиан Марцелин, История, кн. XXI, гл. I—IV, Киев. 1907)։ *Րաֆֆին տվյալ դեպքում օգտվել է Խորենացու պատմությունից. «Եւ յորժամ գնա ընդդէմ Պարսից իրաւունքն զինեցին, և անցեալ ընդ Կիլիկիայ հասանէր ի Միջագետս. և զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զչուանս նաւակամրջին Եփրատու, զգուշանային անցիցն։ Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ ի վերա Պարսից զօրացն, և հալածական առնէ. և հարեալ սպասաւորութիւն՝ անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս հանգերձ բազմութեամբ այրեձիոյն, և մեծարի ի նմանէ յոյժ» (Խոր. Գ, գլ. ԺԳ)։*

էջ 50, տ. 21. ուրացող կայսրի վարմունքը ~ նրանց մի հզոր քահանայապետի մահվանը[4]:— *Ակնարկը վերաբերում է Հուսիկ կաթողիկոսի նահատակությանը, որ նկարագրում են Խորենացին (Գ, գլ. ԺԳ) և Բուզանդը (Գ, գլ. ԺԲ)։ Րաֆֆու պատմածը Խորենացու տարբերակն է։*

էջ 51, տ. 35. որոշվում էր տեղը, ժամանակը, ուր կանխապես նախապատրաստություններ էին տեսնում[5]:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 138—139, «Որսորդութիւն» գլուխը։*

էջ 52, տ. 27. Շապուհ արքան ~ որ նրանց թագավորի իրավունքից միայն կախում ունեին[6]:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 144—145, 275—276, «Պատիւ և իշխանութիւն Մամիկոնեանց» և «Սպարապետ» գլուխները։*

էջ 54, տ. 3. «արևորդիների» հռմայեցի վարագդատի մոտ[6]: ~ Իսկ «արևորդիների» թիվը Տարոնում, մանավանդ Միջագետի սահմաններում։— *Արևորդիները, ըստ հետազոտողների, հին արևապաշտության հետևորդներն էին, որոնք մնացել էին Հայաստանում քրիստոնեության մուտքից հետո։ Նրանց մասին տեղեկություններ հաղորդում են Գրիգոր Մագիստրոսը, Ներսես Շնորհալին, Թովմա Մեծոփեցին, Մխիթար Ապարանցին։ Րաֆֆու պատումը հիմնված է Գրիգոր Մագիստրոսի և Ներսես Շնորհալու վկայությունների վրա (Տե՛ս Թուղթ ընդհանրական Արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, էջմիածին, 1865, էջ 309, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, թուղթ ԿԷ, էջ 161)։ Այս վկայություններից բացի, Րաֆֆին նկատի է ունեցել Ղուկաս Ինճիճյանի վերլուծությունները հին աշխարհում արևի պաշտամունքի մասին (Հնախօսութիւն, հ. Գ, էջ 161—162, նաև՝ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 90—94), և այդ վերլուծության հիման վրա «Դրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ» հոդվածի ծանոթագրության մեջ գրում է «Արևապաշտները, որ և կոչվում էին արևորդիք, Հայաստանում երկար ժամանակ մնացին և քրիստոնեական դարերում» (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 67)։*

էջ 54, տ. 27. Աշտիշատի վանքը՝ Հայաստանի Մայր եկեղեցին[8]:— *«Աշտիշատը, որպես Հայաստանի Մայր եկեղեցի» շարույթը վկայված է Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմություններում. «երթեալ հասանէր ...ի մեծն յառաջին ի մայր եկեղեցին Հայոց, որ էր յերկիրն Տարօնոյ, ուր նշանօք եղելոց կործանեցան բագինք մեհենիցն յայնժամ, վաղ ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորիւ» (Բուզ. Գ, գլ. Գ, նաև՝ գլ. ԺԴ), «Ժողովեցան ի գեղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեաց ժողովոց սինհոդոսին» (Բուզ. Գ, գլ. Գ, տե՛ս նաև Ագաթ. էջ 456, Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 95)։*

էջ 54, տ. 35. Խանդերձատունը, որ այլ անունով կոչվում էր «պատմուճանաց» տուն[9]։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է, որտեղ գրված է ո՛չ թե «պատմուճանաց», այլ «պատմուճակաց» ձևը (տե՛ս Բուզ. Ե, գլ. Զ)։ Րաֆֆու տեքստի մեջ մուտք է գործել պատմուճակ բառի և տուն պատմուճակաց արտահայտության Հայկազյան բառարանի բացատրությունների տեքստերը. «Պահարան և տեղի պատմուճանաց և սպասուց» (Նոր Բառգիրք, հ. 2, էջ 616)։*

էջ 54, տ. 38. Իսկ սամույրի մուշտակները[10]— *Հայոց իշխանների և թագավորի՝ սամույրի մորթուց զգեստներ հագնելու մասին վկայում են Եղիշեն, Բուզանդը (Բուզ. Ե, գլ. ԼԸ, Եղիշ., էջ 177)։*

էջ 55, տ. 8. Այդ սենյակը իշխանի գանձարանն էր:— Գանձարանի *մասին վկայությունների վերլուծությունը, որից օգտվել է Րաֆֆին, տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 278։*

Ը. ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

էջ 57, տ. 8. Կապարճը բիկունքին, աղեղը ուսին ~ գնում էր Սամվելը — *Այս*

նկարագրության հնչերանգային տարբերակը հանդիպում է Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ. (տե՛ս գլ. Բ)։

էջ 59, տ. 8. Նա լվանում էր տեւրևների չափարը ~ մեղր կամ ռուփ ~ կոչվում է գալարնը[6]։—*Րաֆֆու աղբյուրը Ջնորն է, որը նկարագրելով Տարոնը, գրում է «Երկիրս խոտաբեր և մեղրաբուղխ. և որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրեայսն, նոյնպէս և աստ ի մերում յերկրիս ի վերայ անտառացս իջանէ քաղցր ռուաւէլ քան զմեղր՝ որ կոչի զալաբինն» (Ջնոր, էջ 49)։ Գազպե բառը Րաֆֆին ծանոթագրում է «Սալբի» վեպում. «Տարոնում, Սուրբ Կարապետ վանքի շրջակա սարերում, ծիծերի տերևների վրա գոյանում է մի տեսակ մեղր, որ կոչվում է «գեզենգեսիր» կամ «կազպա» (ԵԺ 12 հատ., հ. 2, Եր., 1983, էջ 39), նաև «Բիբի Շարաբանի» վեպիկում (ԵԺ 12 հատ., հ. 1, Եր., 1983, էջ 408)։ Գազպեի ստացման եղանակը մանրամասնորեն նկարագրում է Ինճիճյանը. «մի զանիան լուանալով և ապա մզելով, յետ մզելոյն եփեն ի վերայ հրոյ մինչև ի թանձրանալ. այս տեսակ լինի հեղուկ թանձր իբրև զմեղր» (Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1806, էջ 57)։*

Թ. ԱՇՏԻՇԱՏԻ ՎԱՆՔԸ

էջ 61, տ. 32. այդ գետի ափերի մոտ դեռ ազատ ~ Անահիտա տաճարին ~ Լուկուլլոս հռովմայեցին և սրանչացավ[2]։—Անահիտ — *հայ հեթանոսական դիցարանում ծնընդաբերության, պտղաբերության, արգասավորության աստվածուհու անունը:* Լուկուլլոս Լուկիոս Լիկինիոս (117—56 թ. մ. թ. ա.) — *հռոմեական զորավար։ Այս դեպքի մասին պատմում է Պլուտարքոսի տեքստը. (Պլուտարքեայ Քերովնացւոյ Զուգակշիռք Թարգմանեալ ի բնագրէն Հ. Եղիայ վարդապետի Թոմաճան ի Մխիթարեան ուխտէն, հ. Գ, Վենետիկ, 1833, էջ 561—563)։ Րաֆֆու պատումը հիմնված է Ինճիճյանի վկայաբանության վրա։ Հմմտ. «Սորա արջառք էին՝ զորս եւես լուքուլլոս հռոմայեցին. քանզի գրէ պլուտարքոս, թէ ի գալն իւրում ի սինոպայ ի սօֆինի՝ այսինքն ի Ծոփս, և յանցանելն ընդ Եփրատ՝ եգիտ լուքուլլոս զարջառս որք էին ձօնեալք ի զոհ անահտայ, զոր մեծապատիւ տօնէին առէ բնակիչք յանկոյս եփրատայ։ Այս արջառք շրջէին արձակ աստ և անդ ի ճարակիլ, այլ ունէին դնշան անահտայ՝ յորս ոչ ումեք օրէն էր մերձենալ» (Ստորագրութիւն, էջ 94)։*

էջ 62, տ. 6. Այնտեղ Հայաստանը հաշտության զոհեր էր մատուցում յուր աստվածներին։—*Հմմտ. Ինճիճյանի «Աշտիշատ» տեղանվան բացատրության հետ. «Իբր Հաշտարան* կամ Հաշտութեան տան. *զի առաջին վանին Յաշտ՝ նըեալ ի պարսից բառէս Աշ*բի, *նշանակէ Հաշտութիւն, որ է վախճան աղօթից և զոհից» (Ստորագրութիւն, էջ 92)։*

էջ 62, տ. 8. «Վիշապաքաղ» վանազնի տաճարը — Խաչուրյան աստծո տաճարը, որ լցված էր հայոց թագավորների զանձերով[4]։—*Րաֆֆին օգտագործել է Ագաթանգեղոսի պատմության տեքստի երկու հատվածներ. «Եւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվահեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծազանձ, լի ոսկւով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ, անդ, ութերորդ պաշտօն հաշակատր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի» (Ագաթ., էջ 452), «և*

քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ» (Նույն, էջ 80)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 94։

Էջ 62, տ. 10. Նրա մոտ բարձրանում էր «Վահագնի սենյակը» ~ «ոսկեձույլ» Աստղիկը[5]։— *Աղբյուրը Ագաթանգեղոսի պատմության տեքստն է. «և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս» (Ագաթ., էջ 452)։*

Էջ 62, տ. 12. «ոսկեմայր-ոսկեծին» Անահիտ ~ փառք և կենդանություն[6]։— *Րաֆֆին վերաշարադրել է Ագաթանգեղոսի տեքստի՝ Անահիտի մասին պատմող հատվածները. «Երկիրպագն Ոսկեմօր Ոսկեծին դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից», «խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ» «մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ... որ է մայր ամենայն զգաստութեանց», «և զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (Ագաթ., էջ 452, 80, 40, 46)։ Անահիտի մասին հայ և օտար աղբյուրների վերլուծությունը տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Դ, էջ 176—179, Ստորագրութիւն, էջ 94։*

Էջ 62, տ. 15. Այդ երեք ~ նույնը «Հաշտից տեղեր»— *Աշտիշատը «Յաշտից տեղիք» են անվանում Ագաթանգեղոսը և Խորենացին. «յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց» (Ագաթ., էջ 452), «Բայց զԱփրոդիտեայ զպատկերն, իբրև Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն» (Խոր. Բ, գլ. ԺԴ)։*

Էջ 62, տ. 17. Այնտեղ, նույնպես տարեմուտին, Նավասարդ ամսի ~ յուր տասնվածներին[7] ~ մեծամեծները։— Նավասարդ—*հայկական տոմարի առաջին ամսվա անունը, սկիզբը՝ օգոստոսի 11-ին։ Այս պարբերությունը Րաֆֆին շարադրել է ըստ Բուզանդի տեքստի. «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետք Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք», «Արդ որք միանգամ զհնութիւն կռապաշտութեան հեթանոսութեան զնոյն սովորութիւն մինչև ցայնժամ ևս ունէին զաղանիս» (Բուզ. Գ, գլ. Դ)։ Քանի որ Րաֆֆին նկարագրում է այս տոնի հեթանոսական տարբերակը, ապա «եպիսկոպոսապետք» բառը փոխարինել է «մեծ քրմապետ» արտահայտությամբ։* **Այլևայլ ցույեր** *զվարճալու մասին վկայում է Ագաթանգեղոսը. «Այլևայլ ցուր և այլևայլ նուագօք, այլևայլ ձիովք և այլևայլ չորովք... զիր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիս մեծարէք» (Ագաթ., Տփխիս, 1909, էջ 18—19)։*

Էջ 62, տ. 24. Նոր տարին բերում էր յուր հետ ~ տանարին աղավնիներ ձոնելու։— *Նավասարդյան և Վարդավառի տոները նկարագրելիս, աղբյուրների տվյալների հետ Րաֆֆին օգտագործել է նաև Ղ. Ինճիճյանի և Ղ. Ալիշանի վերլուծությունները (տե՛ս Արբայ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 326—338, «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» մեկնությունը, Գիրք, որ կոչի Այսմաւուրք, Կ. Պօլիս, 1730, Աւելեաց տ. և Օգոստոսի զ., էջ զճձդ, Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 18—19, 234, հ. Դ, էջ 170—171, Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. 1, Վենետիկ, 1920, էջ 264—279)։*

էջ 63, տ. 25. Երբ ասված ~ առաջին զոհը:— *Տե՛ս Աստվածաշունչ, Ծնունդք, Զ-Ը։*

էջ 63, տ. 30. որդին, Սեմը, Արարատից գալով Տարոն և բնակվելով Սիմ լեռան ~ ավանդությունը:— *Տե՛ս Աստվածաշունչ, Ծնունդք, Զ, 10։ Սեմի Տարոն գալու մասին վկայում է Խորենացին (տե՛ս Խոր. Ա, գլ. Զ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Ա, էջ 286։*

էջ 63, տ. 34. նույն աղավնին հայտնվեցավ Հորդանանի ջրերի վրա:— *Տե՛ս Ավետարան ըստ Մատթէոսի, Գ, 13—17, ըստ Մարկոսի, Ա, 9—11, ըստ Ղուկասի. Գ, 21—22, ըստ Յովհաննու, Ա, 29—34։*

էջ 64, տ. 4. Երկու սպիտակ ջորիներ Տարոնի միջով տանում էին մի ծածկված կառք:— *Հմմտ. «Եւ հանէին զԳրիգոր յօսկիապատ կառսն արքունականս՝ սպիտակաձիգ ջորւոցն» (Ագաթ., էջ 450), «զտեղի առին սպիտակ ջորիք կառացն» (նույն, էջ 454)։ Գրիգոր Լուսավորիչը ըստ Ագաթանգեղոսի և Զենոբի վերադառնում էր Կեսարիայից, որտեղ նրան ուղարկել էր Տրդատ Մեծը՝ քահանայապետ ձեռնադրվելու։*

էջ 64, տ. 5. Հայոց Երկրի վեց նշանավոր իշխաններ ~ Մոգաց իշխանը:— *Ըստ Ագաթանգեղոսի Գրիգոր Լուսավորչին ուղեկցում էին Հայոց աշխարհի 16 նշանավոր նախարարներն ու կուսակալները (Ագաթ., էջ 446)։ Րաֆֆին հետևում է Զենոբի պատումին, որտեղ հիշատակված են միայն վերում թվարկված 6 իշխանները։*

էջ 64, տ. 8. Կառքի ճակատին ~ արծաթյա խաչ: Նրա առջևից ~ երեսը սև և անթափանցիկ քողով ծածկած[13]:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Գ, էջ 253, 264, «Զգեստք կաթողիկոսին» գլխի «Քող» ենթագլուխը։*

էջ 64, տ. 11. վեց իշխանների զորքերը՝ թվով 5080 հոգի:— *Թիվը Զենոբի պատմությունից է. «Արդ իբրև հասատացան երկոքին կողմանքն, և էին վեց հազար հինգ հարեւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց» (Զենոբ, էջ 29)։*

էջ 64, տ. 14. այն սրբությունները, որ Լուսավորիչը բերել էր յուր հետ Կեսարիայից[14]:— *Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից բերել էր Հովհաննես Մկրտչի և Աթանագինես վկայի նշխարները։ Այդ նշխարների ձեռք բերման մասին մանրամասնորեն պատմում է Զենոբը (Զենոբ, էջ 24—25, նաև՝ Ագաթ., էջ 454)։*

էջ 64, տ. 16. Երբ կառքը անցավ Արածանին ~ այլևս առաջ չգնացին[15]:— *Աղբյուրը Ագաթանգեղոսի պատմության տեքստն է. «Իբրև եկին մօտ եղեն ի գետն Եփրատ իբրև ձիոյ արշաւանօք երկուք, և գետ ընդ փոքր ձորակ մի անցանել կամէին, ընդ ջուր մի սակաւ՝ զտեղի առին սպիտակ ջորիքն կառացն, ուր կային պանձքն աստուածային, նշխարք սրբոցն» (Ագաթ., էջ 454)։ Լուսավորիչը ջորիների կանգնած տեղում թաղում է նշխարները և վկայարան է կառուցում։*

էջ 64, տ. 20. Հայոց տոհմային աստվածները ~ մեհյանների պաշտոնյաներ էին:— *Աղբյուրը Զենոբի տեքստն է. «Եւ ինքեանք ապա արարին յԱշտիշատ ի քուրմս՝ եթէ ժո-*

ղովեցէք արս պատերազմողս, և փութապէս վաղվին հասէք առ մեզ, զի մեծն Գիսանէս ի պատերազմ եկանելոց է ընդ ուրացեալ իշխանսն» (Զենոբ, էջ 25), «Եւ գլխաւոր քրմին էր, անուն Արձան, և որդւոյ նորա՝ Դեմետր» (նույն տեղում), «քրմապետն Աշտիշատայ, որոյ անուն Միհակէս» (նույն, էջ 30. տողատակին, որպես տարընթերցված, նշված է անվան «Մեհակէս» ձևը, որն էլ նախընտրել է Րաֆֆին) 6946 թվի համար տե՛ս էջ 64, տ. 11. ծանոթագրության վկայությունը։

էջ 64, տ. 26. որպես մի հսկայական մրջնանոցի միջից ~ բարձր դիրքերը:— Հմմտ. «Իսկ այլք ի գիւղցն իբրև զմրջիւնս անհնարին բազմութեամբ» (Զենոբ, էջ 32), «առնել զօրս... և ելեալ ի վերայ լերինն» (նույն, էջ 25), «ելեալ ի վաղվին անցանէին ընդ սառ-րոտ լերինն» (նույն տեղում)։

էջ 64, տ. 29. Հայր և որդի դառն ~ աստվածների դեմ:— Արձան քրմապետը հայոց իշխաններին ասում է. «Յառաջ մատիք, ով գնդակիրողք, և ուրացօղք զհայրենի աստուածսն, և թշնամիք քաջափառին Գիսանէի. ո՞չ գիտէք զի այսօր Գիսանէ ի պատերազմ ելեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կուրութեամբ և մահուամբ» (Զենոբ, էջ 27)։ Դեմետրի խոսքերը՝ հայոց իշխաններին. «Լուարուք մեզ իշխանքդ Հայոց. այս բառաստն ամ է՝ զի ծառայեմք մեծի աստուածոցն, և գիտեմք զզօրութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք մարտնչին։ Արդ մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ. զի այս ասն է թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա։ Բայց այս ձեռ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել ի վերայ աստուածոցն մերոց՝ քան թէ զտաճար նոցա ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով ի գիտանս առնեցաք և զմահ սիրեցաք» (նույն տեղում)։

էջ 64, տ. 31. Ցասում Բառմերն ~ մի անհայտ տեղում[16]— Հմմտ. «Եւ իբրև մերձ եղեն ընդ նըս զաւ ի վերին, յառաջ մատուցեալ Արձանն և Դեմետր, և հնչեցուցին զփողսն պատերազմին, և յանդգնաբար յարձակեցան ի վերայ։ Զօր լուեալ իշխանքն՝ ընդառաջեցան յոյժ», «Դարձաւ և ասէ. փախս զԳրիգորդ յանհոգս ուրեք, հանդերձ ընկերօք խրովք. դու-ցէ ըմբռնիցեն զդա, և մեք ամօթ կրիցեմք ի թագաւորէն», «Իսկ իշխանն Անգեղ տան առաք զսուրբն Գրիգոր ի ձեռն իշխանին Մոկաց, և ասէ. Փութացո յամուրն Ողկան... Իսկ իշ-խանն Մոկաց առեալ զԳրիգորիոս, գնացեալ ընդ զաւ ի վայր բլրին՝ կամելով իջանել ի Կուառս։ Իսկ արք տեղւոյն տեսեալ զանց ճանապարհին պահ ունել. զոր տեսեալ սրբոյն Գրիգորի՝ թէ մեծ վտանգ է ի տեղւոջն, իջուցեալ զնշխարս մերձ առ աղբեր մի յայնկոյս ձորոյն հանդէպ գեղջն, դնէր և նշանագրեր զտեղին։ Եւ ծածկեաց տէր զնշխարսն, և ոչ ոք կարաց տեսանել մինչև սուրբն Գրիգոր դարձաւ ի տեղին» (Զենոբ, էջ 26)։

էջ 64, տ. 36. Կռիվը անեց ~ տաճարները կործանվեցան:— Արձան քրմապետին սպանում է Անգեղ տան իշխանը (Զենոբ, էջ 28), Դեմետրին և Միհակես քրմապետին՝ Արծրունյաց իշխանը (նույն, էջ 30)։ 1038 թիվը կռվում զոհվածների շիրմաքարի արձանագրության տեքստից է. «Առաջին պատերազմ որ եղև յոյժ սաստիկ պատերազմին գլխաւոր Արձան քրմապետն որ կայ այսր ի թաղման և ընդ նմա արս հազար երեսուն և ութ և զայս պատերազմ արարաք վասն Գիսանեայ կուոց և վասն Քրիստոսի» (նույն, էջ 31)։

էջ 65, տ. 13. Իրանք այն տաճարներն էին, ~ տարվա մեջ յոթն անգամ ~ ներ-

կա էին գտնվում։— Հմմտ. *«Մանավանդ յայն ի գլխաւոր տեղին եկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ» (Բուզ., Գ, գլ. Գ)։*

էջ 65, տ. 18. Լուսավորիչը նույն տաճարների ~ Աշտիշատի վանք —...Հիմնեց առաջին սրբության սեղանը.— *«Եւ յետ այնորիկ եկանէր նա ի տեղիս մեհենացն... եւ եդ անդ զհիմունս եկեղեցւոյն, և ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի» (Ագաթ., էջ 456)։*

էջ 65, տ. 20. Վարդավառի տոնախմբությունը փոխեց Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնախմբությամբ։— Այլակերպության *նկարագրությունը՝ տե՛ս Աւետարան ըստ Մատթէոսի, ԺԷ, 1—13, ըստ Մարկոսի, Թ, 1—12, ըստ Ղուկասի, Թ, 28—36։ Նույն հատվածների մեկնությունները «Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, Կ. Պոլիս, 1824, էջ 163—165։ Այլակերպության տոնը կատարվում է ըստ Այսմաւուրքի Աւելեաց ա. և Օգոստոսի զ., Սուրբ խաչի տոնից 40 օր առաջ։ Վարդավառի տոնը այլակերպության տոնի փոխվելու մասին վկայում է Այսմավուրքը։ (տե՛ս Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ղձձէ)։*

Ժ. ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒԺԵՐ

էջ 66, տ. 28. Սահակ Պարթև ~ ամուսնացավ նա։— *Հմմտ. «զՍահակ որդի մեծին Ներսիսի» (Խոր. Գ, գլ. ԽԹ), «առանց առաջնորդելոյ նորա սրբոյ Հայրապետին Սահակայ, որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնականսն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն և հռետորական յորդասաց յայտնաբանութեան, եւ առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանէր (Ղազար, գրվ. Ա., Ժ, էջ 34, 36), «Էր սորոյն Ներսիսի որդի մի Սահակ անուն, որ ի վախճանիլ հօր իւրոյ կայր ի Կոստանդինուպոլիս, և պարապէր իմաստութեան աստուածային գրոց և արտաքին գիտութեանն» (Զամչ., Ա., 470)։*

էջ 67, տ. 4. Սկսյալ այն օրից ~ և զինվորական կրթությունը[3]։— *Թագավորական տան հետ Լուսավորչի տոհմի խնամության մասին վկայում է Բուզանդը. «և նա արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսիկանն որդւոյ Վրթանիսի» (Բուզ. Գ, գլ. ԺԵ)։ Աթանագինեսը Ներսես մեծի հայրն էր («Բայց մնաց Աթանագենի որդի ի Բամբշնէ ի քեռէ թագաւորին, և անուն նորա Ներսէս»— Բուզ. Գ, գլ. ԺԹ)։ Նախարարական տներից Լուսավորչի տոհմը խնամություն էր հաստատել Մամիկոնյանների հետ։ Ըստ Մեսրոպ երեցի Վահան Մամիկոնյանի եղբոր՝ Վարդանի դուստրը՝ Սանդուխտը, Ներսես մեծի կինն էր, Սահակի մայրը (Մեսրոպ երեց, էջ 14, 19)։ Լուսավորչի տոհմից, մինչև կաթողիկոս ընտրվելը, զինվորական պաշտոններ էին վարում Աթանագինեսը և Ներսես մեծը («Միումն Պապ անուն, և միւսումն Աթանագինէս... զինուորական զվարսն ընտրեցին— Բուզ. Գ, գլ. ԺԴ, «որ անուանեալն կոչէր Ներսէս... Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեանն»—Բուզ. Դ, գլ. Գ)։*

էջ 67, տ. 18. Եկել էր այցելություններ անելու յուր հայրենական կալվածներին, որոնք սկսյալ Արարատից, զանազան գավառներում, տարածվում էին մինչև Տարոն։ ~

մի մեծ նախարար[4]:— *Րաֆֆու տեքստը հիմնված է Բուզանդի վկայության վրա. «Զայնու ժամանակաւ տէրն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեփհական ի բնէ, առանձին տոհմի նոցա էր կալուածք: Եւ յայն գաւառս գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք» (Բուզ. Դ, գլ. ԺԴ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, հատ. Գ, էջ 275—277, «Կալուածք կաթողիկոսարանին» գլուխը։*

էջ 67, տ. 23. **Մեսրոպը բնիկ տարոնեցի (մշեցի) էր ~ զինվորի պաշտոն էր կատարում**[5]:— *Րաֆֆին այս մանրամասնությունը շարադրել է ըստ Կորյունի, Փարպեցու, Խորենացու, Այսմավուրքի վկայությունների՝ նկատի ունենալով նաև Չամչյանի, Ինճիճյանի, Գաթրճյանի և Էմինի վերլուծությունները։ Հմմտ. «Էր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ» (Կորյուն, էջ 9)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 104, «Հացեկաց գիւղ» հատվածը։ Մաշտոցի հորը՝ Վարդանին* ազնվական *են համարում Գաթրճյանը (Տիեզերական պատմութիւն, հտ. Բ, Վիեննա, 1852, էջ 523) և Մ. Էմինը (*История Армении Моисея Хоренского перевел с армянского и обяснил Н. Эмин, Москва, 1858, стр. 361—376, «Об армянском алфавите» *գլուխը)։*

սովորել հունաց, ասորոց, պարսից լեզուներ ~ մի ժամանակ արքունի դիվանագիր:— *Հմմտ. «Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելլենական դպրութեամբն» (Կորյուն, էջ 9, նույնը՝ Ղազար, էջ 28)։ Ասորերեն և պարսկերեն իմանալու մասին վկայում են Ղազար Փարպեցին և Խորենացին (Ղազար, էջ 28, Խոր. Գ, գլ. ԾԲ)։*

զանազան պաշտոններ...— *Ըստ Կորյունի՝ Մաշտոցը «կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին», «ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականաց» (Կորյուն, էջ 9), ըստ Խորենացու «ի դրանն արքունի կարգեալ քարտուղար» (Գ, գլ. ԽԷ), Ղազարի վկայությունը տե՛ս վերևում, Ներսես Մեծի նոտարը լինելու մասին վկայում է Այսմաւուրքը. «Սուրբ վարդապետն Մեսրոպ, որ էր դպիր և նոտար հօր սորա սրբոյն Ներսէսի» (Նաւասարդ Լ և Սեպտեմբերի Ի.)։*

էջ 67, տ. 34. **շատ տխուր հիշատակով կապված էր Սահակի տոհմային պատմության հետ**[7]— *«Շատ տխուր հիշատակը» Հուսիկի որդիների՝ Պապի և Աթանագինեսի մահվան պատմությունն է, ըստ Բուզանդի (Գ, գլ. ԺԹ)։*

էջ 68, տ. 33. **սուրբ գիրքը կարդում են հունաց և ասորոց լեզուներով**[9]— *Աղբյուրը Խորենացու և Փարպեցու վկայություններն են. «Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդք այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանյայտութենէ լեզուին ասորւոյ» (Փարպ., էջ 30, նաև՝ էջ 36, «Քանզի ամենայն անձն յորդորեալ...» հատվածը), «զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք» (Խոր. Գ, գլ. ԼԶ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Գ, էջ 70—72, «Գիրս գրչին» գլուխը։*

էջ 69, տ. 12. **Վրանեն պայքը ~ խուժանի բարկությունից**[11]— *Րաֆֆին համառոտաբար վերապատմում է Բուզանդի տեքստը. «Արդ որք միանգամ զհնութիւն կապաշտու-*

թեան հեթանոսութեան զնոյն սովորութիւն մինչև ցայնժամ ես ունէին դաղտնի, ի մի միաբանութիւն ժողովեալք՝ հասանէին իբրև հազարք երկու, խորհուրդ եդեալ ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն աստուծոյ զՎրթանէս», «Եւ հասեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու։ Մինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ պատարագն կատարէր, արտաքուստ բազմազօրուն փակեալ պաշարել կամեցան» (Բուզ. Գ, գլ. Գ)։ Ըստ Բուզանդի պաշտողների թևերը հրաշքով կապվում են թիկունքին, որից հետո նրանք դարձի են գալիս. Րաֆֆին Վրթանեսի փրկվելը պատճառաբանում է տաճարի ամրությամբ:

էջ 65, տ. 17. Երբ Ռո Պապ և Արտաշիրես ~ չէր համարձակվում մտնել:— *Րաֆֆին վեր. պատմում է իր ակնարկած «շատ մութ հիշատակը»՝ Բուզանդի հրաշապատումը վերածելով սովորական սպանության։ Հմմտ. «Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եկեղեցւոյն ուտէին և ըմպէին, յանկարծակի հրեշտակ տեառն երևեցաւ ի նմանութիւն փայլատական. և հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միահամայն ի բազմականին անդ։ ...Եւ յահէն մեծէ այլ ոչ ևս ոք ի նոցանէ դարձաւ անդրէն. և ոչ ոք իշխեաց բնաւ այլ մարդ ի մարդկանէ մտաբերել մտանել ի ներքս», «Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն. և ոչ իշխեցին մտանել» (Բուզ. Գ, գլ. ԺԹ)։ Րաֆֆին «կայծակի նմանությամբ հայտնված Աստծո հրեշտակին» փոխարինել է «հրեշտակի նման՝ սուրը ձեռքին» հայտնված մեկով, իսկ «մեծ ահը» (=աստուծո երկյուղը)՝ «խուժանի» երկյուղով։ Ըստ Զամչյանցի դեպքը տեղի է ունեցել 362 թվականին, իսկ Մերուժանի և Վահանի արշավանքը՝ 380-ին, այդ պատճառով էլ շարունակության մեջ Րաֆֆին գրում է. «այդ զժբախտ դեպքից անցել է ընդամենը մոտ երեսուն տարի»։ Նկատի ունենալով թեմաների մշակման իր միտումները՝ հեղինակն անորոշ է թողնում վեպի ժամանակագրական որոշակիությունը («մոտ երեսուն տարի»)։*

էջ 71, տ. 2. Հայաստանի հարյուր տարվա քաղաքական վիճակը, սկսյալ Տրդատից մինչև Արշակ Բ-րդ վերջին օրերը ~ հալածանքները:— *Րաֆֆու հաշվարկը (100 տարվա) հիմնված է Զամչյանցի ժամանակագրության վրա, ըստ որի Տրդատը թագադրել է 286 թ., իսկ Արշակը ինքնասպան է եղել 381-ին (Զամչ., հ. Ա, էջ 273, 463)։*

էջ 71, տ. 11. պատահեցան երկու մեծ փոփոխություններ ~ Բյուզանդական կայսրությունը և Կ. Պոլիսը մայրաքաղաք ~ Սասանյան պետությունը և Տիզբոնը ~ դաշնակիցներից:— *Հռոմեական կայսրությունը երկփեղկվեց Հուլիանոս կայսրի մահից հետո, 364 թվականին, արևելյան մասում տիրեց Վաղեսը, իսկ արևմտյան մասում՝ նրա եղբայր Վալենտիանոս Ա Մեծը։ Սասանյան պետությունը կազմավորվեց 226 թվականին Սասանի որդի Արտաշիրի հաջող ապստամբությունից հետո (տե՛ս Զամչ., Ա, էջ 361—362)։*

էջ 71, տ. 38. Տրդատը, նույնը նորընծա ~ Կոստանդիանոսի հետ:—Կոստանդիանոս Փլավիոս Վալերիանոս Մեծ կայսրը *իշխել է 306—337 թ. ըստ Զամչյանցի։ Նա կայսրության մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Կ. Պոլիս (330 թ.)։ Ընդունեց քրիստոնեությունը՝ բազում բարեփոխություններ կատարելով և օրենքներ հռչակելով հօգուտ քրիստոնյաների։ Տրդատի Հռոմ գնալու (319 թ.) և կայսեր հետ դաշն կնքելու մասին վկայում է Ագաթանգեղոսը («դաշինս կռէր ընդ նմա», էջ 488) և այլք (մանրամասն տե՛ս Զամչեանց, հտ. Ա, էջ 635—644, «Ի վերայ գնալոյ Տրդատայ և սրբոյն Գրիգորի ի Հռովմ. և հաստատութեան դաշին, և ձեռնադրութեան պատրիարգութեանն», «Ի վերայ թըղթոյ դաշանց» և «Ի վերայ սրբոյն Կոստանդիանոսի կայսեր» ծանոթությունները)։*

էջ 72, ր. 5. Տրդատի որդի Խոսրով Բ-րդը, Կոստանդ կայսրից ~ ինքը նորից թագավոր դառնա[17]։— *Կոստանդ կայսրը՝ Կոստանդիանոս Մեծի որդին, իշխել է 337—361 թթ.։ Րաֆֆին օգտվել է Խորենացուց. «Այսմ լսող եղեալ Կոստանդեայ՝ առաքեաց... և ծիրանիս հանդերձ պատուով» (Խոր. Գ, գլ. Ե, նաև՝ գլ. Զ)։ Շապուհը, ըստ Խորենացու իր եղբորը Հայաստան է ուղարկում Խոսրով Բ-ի մահից հետո (353 թ.). «Իսկ արքայն Պարսից Շապուհ իբրև լուաւ զմահն Խոսրովու, և եթէ որդի նորա Տիրան առ կայսր գնաց՝ գումարէ զօրս բազումս ի ձեռն Ներսեհի եղբօր իւրոյ, որպէս թէ թագաւորեցուցանել զնա Հայոց խորհեցեալ, և առաքէ յաշխարհս մեր» (Խոր. Գ, գլ. Ժ)։*

էջ 72, տ. 9. Խոսրովի որդի Տիրանը Հուլիանոս կայսրին ~ երկու աչքերը խարելով, կուրացրեց[18]։—*Տիրանին կուրացնելու մասին պատմում են Խորենացին և Բուզանդը։ Րաֆֆին հետևում է Խորենացուն (Գ, գլ. ԺԷ), բայց պատումի մեջ գործածում է Բուզանդի շարույթը. «զի զաչս խարեսցուք զարքային Հայոց։ Եւ անդէն բերին ածուխ, որով խարէին զաչսն Տիրանայ» (Բուզ. Գ, գլ. Ի), ըստ Խորենացու՝ «զաչս նորա կուրացուցեալ» (Գ, գլ. ԺԷ)։*

էջ 72, տ. 12. Տիրանի որդի Արշակ Բ-րդը ~ Վալենտիանոս կայսրը ~ սպանել տվեց[19]։— Վալենտիանոս Ա Փլավիոս Մեծ *կայսրը իշխել է Հռոմեական կայսրության արևմըտյան մասում (364—375)։ Րաֆֆու աղբյուրը Խորենացու պատմությունը. տեղյակ է, Տիրանը Հուլիանոսին, որպես պատանդ, տալիս է՝ «զորդի իւր զՏրդատ երրորդ... Զորս առեալ Յուլիանու՝ նոյն հետայն առաքէ ի Բիւզանդիոն» (Գ, գլ. ԺԴ)։ Երբ Վալենտիանոսին հայտնում են Արշակի խրոխտանալու մասին, նա «Վասն զի ի ժամուն յայնմիկ առ ձեռն ունէր զբարկութիւն՝ հրամայեաց զՏրդատ եղբայր նորա... սպանանել» (Խոր. Գ, գլ. ԻԱ)։*

էջ 72, տ. 16. Արշակը ստիպվեցավ ~ կնության առնել։— *Րաֆֆին օգտագործել է Խորենացու և Բուզանդի տեքստերը. «զարհուրի Արշակ և առաքէ ընդ առաջ նորա մեծն Ներսէս. և ի հաշտութիւն մաղթեալ՝ տայ լինել զխափանեալ հարկսն... Որոյ երթեալ... կոյս մի անուն Ողոմպիադայ, յազգէ կայսեր, կին ածէ Արշակայ» (Խոր. Գ, գլ. ԻԱ), «առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի» (Բուզ. Դ, գլ. ԺԵ)։*

էջ 72, տ. 18. Շապուհի բարեկամությունը, նա Տիգրանակերտը ~ գերության տարավ[20]։ ~ Անհուշ բերդում[21]։— *Պատումը հիմնված է Բուզանդի և Խորենացու վկայությունների վրա։ Հմմտ. «և առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ» (Բուզ. Դ, գլ. ԻԴ), տես նաև Խոր. Գ, գլ. ԻԸ), «բայց միայն մնացեալ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ... և կործանէին զպարիսպ նորա, և հեղուցանէին անթիւ գանձս ի բերդէն։ Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունեաց, և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն» (Բուզ. Դ, գլ. ԻԴ), «առնու զամուրն Անի, և գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն» (Խոր. Գ, գլ. ԻԷ)։ «Ծանր կռիվները» Շապուհի և Արշակի միջև մանրամասնորեն նկարագրում է Բուզանդը (Դ, գլ. ԻԱ-ԾԲ)։*

էջ 73, տ. 16. Քրիստոնեությունը յուր հետ մտցրեց ~ հունաց ու ասորոց տառերը։— *Րաֆֆին նկատի ունի Ագաթանգեղոսի և Զենոբի վկայությունները, որոնք վերլուծ-*

ված են «Փակագծի մեջ» հատվածում (տե՛ս ս. հր. էջ 171—174), նաև Խորենացու, Փարպեցու և Բուզանդի վկայությունները։ Հմմտ. Ներսես Մեծը «Կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց» (Բուզ. Դ, գլ. Դ, նաև՝ Ագաթ., էջ 466, 468), «վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ գործ Թագաւորացն Հայոց» (Ղազար, էջ 18, նաև՝ Խոր. Ա, գլ. Գ)։ Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Գ, «Դըպրոցք հասարակաց» և «Դիր գրոյն» գլուխները։

էջ 74, տ. 30. դպրոցները, որոնց մեջ անգամ քուրմերի որդիները ~ կրթություն ստանային[26]:— *Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է. «բազմութեան մատաղ մանկտւոյ ածել յարուեստ դպրութեան և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետս. առաւել զազգս պղծագործ քրմացն. զմանկունս նոցա ի նոյն ժողովեալ գումարել դաս դաս յարժանաւոր տեղիս. և զայս մանկանց կարգեաց։ Եւ զնոսա յերկուս բաժանեալ՝ զոմանս յասորի դպրութիւն կարգեալ, և զոմանս ի հելլէն» (Ագաթ., էջ 466, 468)։*

էջ 74, տ. 36. Իմ նախահայրը, Մովսեսի նման ~ Սեպուհ լեռան այրերի մեջ[27]։— *Աղբյուրը Խորենացին է. «Բայց սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց» (Բ, գլ. ՂԱ)։ Լեռան Սեպուհ անունը ավելացրել են հետագա մատենագիրները (տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 4)։ Գրիգորի կյանքի վերջին օրերը (առանձնանալը և վախճանվելը անհայտության մեջ) Մովսես մարգարեի վախճանի հետ համեմատում է Խորենացին՝ նկատի ունենալով Հին Կտակարանի տեքստը (տե՛ս Աստուածաշունչ, Երկրորդումն օրինաց, ԼԲ, 48—52, ԼԴ, 1-8). «Եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն զուգեալ տեսչութեամբ, իբրև զՄովսէսն զայն ի հնումն» (Խոր. Բ, գլ. ՂԱ)։ Նույն համեմատությունը Հին Կտակարանի հըղված հատվածի ավելի ընդարձակ կիրառությամբ Րաֆֆին օգտագործում է վեպի «Շապուհը Զարեհավանի ավերակների մոտ» գլխում։*

էջ 75, տ. 1. Նրա որդի Վրթանեսի ~ Արիստակեսը սպանվեցավ Ծոփաց գավառում Արքեղայոս իշխանից[28]:— *Արիստակեսի սպանությունը նկարագրում է Խորենացին. «և Արքեղայոս, որ էր կարգեալ ի վերակացութիւն Չորրորդ կոչեցեալ Հայոց, կշտամբեալ ի նմանէ՝ սպասեաց դիպող աւուր. և պատահեալ նմա ի ճանապարհի ՚ի Ծոփաց գաւառին՝ սպան զնա սրով» (Խոր. Բ, գլ. ՂԱ)։*

էջ 75, տ. 4. Արիստակեսը կուսակրոն մնաց ~ Գրիգորիսը, նահատակվեցավ Վատնյան դաշտում[29]— *Հմմտ. «Այս Վրթանէս և Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի, և էր Արիստակէս կուսան՝ սուրբ ի մանկութենէ» (Բուզ. Գ, գլ. Ե), «Այլ վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանա, եղբօրն Յուսկան» (Բուզ. Գ, գլ. Զ)։ Գրիգորիսի նահատակությունը նկարագրում են Խորենացին («Կատարումն սրբոյն Գրիգորիսի ի բարբարոսաց» գլուխը) և ավելի մանրամասն Բուզանդը (Գ, գլ. Զ, «Յաղագս Գրիգորի վախճանին» գլուխը)։ Բուզանդի տարբերակը Րաֆֆին մանրամասնորեն վերապատմում է «Փակագծի մեջ» հատվածում (տես ս. հր., էջ 183), սակայն նահատակության վայրն անվանում է ըստ Խորենացու («ի դաշտին* **Վատնեան»**) *Բուզանդի տեքստում՝ «ի դաշտին* **Վատնեայ»**:

էջ 75, տ. 23. Երբ մի օր նախախնամողի ~ պարսիկ դպրությունից:— *Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի այս մարգարեությունների իրականացումը նկարագրում են*

Կորյունը, Խորենացին, Փարպեցին։ Տվյալ դեպքում հերոսներին Րաֆֆին կերտում է՝ նկատի ունենալով այն աղբյուրները, որոնք վերաբերում են նրանց, բայց ժամանակագրական առումով չեն կարող մտնել պատումի մեջ։ Հեղինակի համար, սակայն, այդ աղբյուրները կանխորոշիչ են հերոսներին կերպավորելիս։ Այն, ինչ կատարում են Սահակն ու Մեսրոպը ըստ նշված աղբյուրների, այժմ ներկայացնում են որպես ծրագիր՝ ապագայի համար։

Էջ 75, տ. 31. **Բանն և երեք սարի նման ~ հայոց մեծ լուսավորության ոսկյա դարին[31]:** Ոսկեդարի *մեկնությունը տե՛ս Ինճիճեան, Հնախոսութիւն, հ. Ա, էջ 282—283, հ. Բ, էջ 311—313։*

Էջ 75, տ. 39. **Առաջինը Եպիփանն էր, երկրորդը՝ Շաղիտան[32]:—** Եպիփանը *և* Շաղիտան, *ըստ Բուզանդի, Դանիել քորեպիսկոպոսի աշակերտներն էին, որոնց Ներսես Մեծը, ըստ Խորենացու, «հայր և տեսուչ» է կարգում իր հիմնած բարեգործական հաստատություններում (Բուզ. Ե, գլ. ԻԶ, ԻԷ, Խոր. Գ, գլ. Ի)։ Դանիելը Շաղիտային վարդապետ էր նշանակել Կորդվաց աշխարհում, իսկ Եպիփանին՝ Աղձնիքում և Մեծ Ծոփքում (Բուզ. Գ, գլ. ԺԴ)։ Րաֆֆին նրանց Աշտիշատի վանք է տեղափոխել։ Սույն հատվածի համար հմմտ. «Արք երկու կրօնաւորք անապատաւորք մինչ դեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա, և էր սա ազգաւ ասորի... և միւսոյն անուն Եպիփան. և էր սա ազգաւ Յոյն և էին սոքա երկոքին լեալ աշակերտ սրբոյն Դանիէլի մեծի» (Բուզ. Ե, գլ. ԻԵ)։*

ԺԱ. ԽՈՐԹ ՄԱՅՐ

Էջ 76, տ. 9. **Սահակ Պարթև ~ Թիլ ավանի հայրապետական տան տոհմային գերեզմանատան մեջ[1]:** *Տե՛ս էջ 67, տ. 18-ի ծ-նը։ Եկեղյաց գավառի Թիլ ավանը Լուսավորչի տան սեփականությունն էր, որտեղ թաղված էին Արիստակեսը՝ Հուսիկի որդին և Ներսես Մեծը (տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 18—19, Չամչեանց, Ա, էջ 421)։*

Էջ 76, տ. 16. **Յուր սիրելի ամուսինը ~ Ասպինեն անունով մի հույն ազնվականի դուստր էր[2]:—** *Հմմտ. «բայց մանուկ մի Աթանագինէի, որում Ներսէս անուն ճանաչէր, որ ի Կեսարիայ էր ի հրահանգս, և զայնու ժամանակաւ գնացեալ ի Բիւզանդիոն՝ առնու կին զդուստր Ասպինեայ ուրումն իշխանի մեծի» (Խոր. Գ, գլ. ԺԶ)։*

Էջ 77, տ. 1. **Հայկական սև և կարմիր կավից շինված նկարակերտ սափորներ[3]:—** *Տե՛ս Ինճիճեան, Հնախոսութիւն, հ. Ա, էջ 181—182, «Կաւ հայկեան» պարբերությունը։*

Էջ 77, տ. 23. **Շապուհի քույր Որմիզդուխտն էր[5]: ~ Սամվելի խորթ մայրը:—** *Աղբյուրը Բուզանդն է։ «Եւ եղև նա այնուհետև սիրելի Շապհոյ արքային, և ետ նա կին Վահանայ զՈրմիզդուխտ քոյր իւր» (Դ, գլ. Ծ)։ Հ. Մելիքսեթբեկյանը, գրախոսելով «Սամվել» վեպի երկրորդ հրատարակությունը (Վիեննա, 1898), համադրում է Խորենացու և Բուզանդի այս վկայությունը և եզրակացնում է, որ «մեր Հեղինակն ուզելով այս պատմահայրքն իրարու միաբանել, յուր վիպասանության մեջ ստեղծեր է* **երկու** *Որմիզդուխտ» (Մելիքսեթբեկյան Հ. Վ., Մատենախոսական, Սամվել, Հանդես ամսօրյա, 1898, թիվ 3, էջ 87)։ Րաֆֆու նման «միաբանությունը», սակայն, աղբյուրներն իրար հետ* **հաշտեցնելու** *նպատակ չուներ։ Երկու Որմիզդուխտները գրողին անհրաժեշտ են հերոսների պատումնային հարաբերությունները կարգավորելու համար ըստ իր միտումների։ Նույն հոդվածում,*

Մելիքսեթբեկյանը, քննելով երկու Որմիզդուխտների խնդիրը, գրում է. «Այս առիթով կը դարձնենք մեր պատմագրաց քննադատությամբ զբաղողներուն ուշադրությունն այն մեծ սխալին վրա, որ կը գտնվի Բուզանդա՝ որմե և Խորենացվո մեջ, ըստ որում Որմիզդուխտ անուն տանել Շապհո Բ.-ին, Մեծին, որ ծնած իսկ թագավոր հրատարակված և երկար ժամանակություն համար «երկայնակյաց» ալ կոչված է՝ քույր կը գրվի «Սամվելի» վեպը կը դառնա 360—400 տարյաց շուրջը (?), ըստ այսմ՝ Շապուհ որ թագավորած է 310—380 ըստ ոմանց (հայոց) նույնիսկ 309—381, այն ժամանակներն գոնե 50-ամյա ըլլալու էր։ Արդ ինչպես հիսնամյա մի կրնա 16—20-ամյա քույր ունենալ, երբ յուր ծնանելեն իսկ հառաջ վախճանած էր։ Անտեղի ալ է ենթադրել՝ որ Շապհո մայրը ծերության ժամանակ կրկին ամուսնացած ըլլա՝ հակառակ ամեն ակնածության, որ այն ժամանակները արքունի կանանց վրա կը բռնանային։ Ասոր մեկնությունն ըլլա թերևս արևելյան հին ազգաց բոլ տիրող այն սովորությունը, որով իրենց մերձավոր ազգականներն «եղբայր», ըստ որում և «քույր» կը կոչեին. գուցե թե Որմիզդուխտ Շապհո հորեղբարց միայն դուստրը կամ թոռն էր. ըլլալով՝ այս մասը Բուզանդեն «քույր» կոչված ըլլա։ Կամ արդյոք Շապհո դո՞ւստր ըլլալու էր Որմիզդուխտ, և սխալմամբ կոչված ըլլա «քույր»» (նույն տեղում)։ Մելիքսեթբեկյանի այս վերլուծությունների արդյունքն են վեպի երկրորդ հրատարակության մեջ կատարված մի քանի ուղղումները (հայր բառի փոխարինումը եղբայր բառով)։ Ըստ երևույթին Րաֆֆին նույնպես նկատել է տարիքային այդ անհամապատասխանությունը և թվագրել է սույն հատվածը ծանոթագրելու համար, քանի որ պատումի շարունակության մեջ Որմիզդուխտը Շապուհին հայր է անվանում (հեղինակը՝ նույնպես)։ Հնարավոր է, որ Րաֆֆու նման վերլուծությունը՝ ծանոթագրության ձևով Մելիքսեթբեկյանին տրամադրած լինի Աննա Րաֆֆին, որը նույն հրատարակությանը կցած «Ազդում» գրում է, որ Րաֆֆու ձեռագրերում գտնվում են «ծանոթագրությունների սևագրության մասեր» (Սամվել, Վիեննա, 1898, էջ 761)։ Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ պատումն է առիթ դարձել Մելիքսեթբեկյանի դիտողության համար։

Որմիզդուխտը Բուզանդի տեքստում Սամվելի ոչ թե խորթ, այլ հարազատ մայրն է. «և կամ զիարդ սատակեցան Վահան և կինն յիւրեանց որդւոյն» (Բուզ. Դ, ԾԹ գլխի գըլխացանկի վերնագիրը), «և կամ զիարդ սատակեցան Վահան և կինն իւր յիւրեանց որդւոյն» (նույն, գլ. ԾԹ), «և զՈրմիզդուխտ զմայր իւր» (անդ). Նման հարաբերության ուղղումը պայմանավորված է Սամվելի հոր և մոր մասին Թովմա Արծրունու տեքստային տարբերակի ընտրությամբ։ Րաֆֆին ոչ թե Որմիզդուխտին փոխարինել է Տաճատուհիով, այլ, հետևելով Արծրունու տարբերակին, նրան դարձրել է Վահանի երկրորդ կինը։ Այստեղ մենք գործ ունենք աղբյուրների ո՛չ թե համաժամանակյա, այլ հաջորդական զուգման հետ։

էջ 77, տ. 31. Բազմակնությունը հայոց նախարարների մեջ ~ պահում էին և բազմաթիվ հարճեր[6]։— Րաֆֆու շարույթը հիմնված է Ինճիճյանի վերլուծության վրա. «Բազմակնութիւն սովորութիւն լինել և ի միջոն ի ժամանակս հեթանոսութեան յայտ առնէ Խորենացին բ. 35... բ. 50» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 292)։ Հարճեր պահելու մասին վկայում են Բուզանդը և Խորենացին. «տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ՝ տռփացաւ և ասէ ցԹակուր. «Տուր ինձ զվարձակս զայս». և նա ասէ. «Ոչ տամ, զի հարճ իմ է»» (Բ, գլ. ԿԴ)։ Արշակ II-ը երկու կին ուներ՝ Փառանձեմ և Ոլիմպիադա, և այլն։

էջ 77. տ. 33. Սամվելի հայրը ամուսնացավ ~ Արշակավանի ըմբոստ փախստականից հետո[7] ~ Շապուհ արքային անձնատուր եղավ[8]։— *Արշակավանի կառուցումը, ավերումը և դրանց հաջորդած դեպքերը պատմում են Խորենացին և Բուզանդը, որոնք Րաֆֆին մանրամասն վերլուծում է «Փակագծի մեջ» հատվածում, որից երևում է, որ Րաֆֆին հետևում է Խորենացու տեքստին (Գ, գլ. ԻԷ—ԻԸ)։ Այդ հատվածի համար հմմտ. «Ապա հասանեալ մեծն Ներսէս՝ եկն ի մէջ նոցա, և արար խաղաղութիւն, լսելով նմա թագաւորին և նախարարացն, բայց ի նահապետէն Արծրունեաց Մեհրուժանայ և ի ներքին քեռանէ Վահանայ Մամիկոնենէ, որք անյոյս եղեալ՝ ապստամբեալ գնացին առ Շապուհ» (Խոր. Գ, գլ. ԻԹ)։ Չամչյանցը այս դեպքերը թվագրում է 370--377-ին (Ա, էջ 453—455)։ Արշակավանի մասին տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 446--450, Չամչեանց, Ա, էջ 705—706։ Վահանի անձնատուր լինելու մասին տե՛ս Բուզ. Դ, գլ. Ծ։*

էջ 78, տ. 19. Սանակի անակնկալ ~ Այդ բախտավոր մարդիկը՝ առանց սրի և առանց արյունի՝ այնքան շատ կարվածքներ ունեն ~ չեն տեսնում։ *Նույն դժգոհությունը հայտնում է Հայր Մարդպետը. «Զիարդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, և ոչ արանց» (Բուզ. Դ, գլ. ԺԴ)։*

էջ 80, տ. 71. Երկու նշանավոր զորապետներ՝ Զիկ և Կարեն իշխանները[10].— *Անունները վկայված են Բուզանդի տեքստում. «Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկու ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն» (Դ, գլ. ԾԸ)։*

էջ 83, տ. 24. Ինչպես նրա հայերի մեջ ~ դուստրը՝ Սմբատուհին։— Սանատրուկը, *ըստ Խորենացու, Աբգարի քեռորդին էր, որ թագավորեց նրա մահվանից հետո, Անանունի հետ միասին. նրա դուստրը՝ Սանդուխտ կույսը, նահատակվեց Քրիստոսի հավատի համար. «և մարտիրոսանալն դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն» (Խոր. Բ, գլ. ԼԴ)։ Նահատակությունը ընդարձակ նկարագրված է Թադեոս առաքյալի վկայաբանության մեջ (տե՛ս Սոփերք Հայկականք, հ. Ը, Վկայաբանութիւն և գիւտ նշխարաց ս. Թադէի առաքելոյ և Սանդխտոյ կուսի, Վենետիկ, 1855)։ Սահակ Պարթևի թոռան՝ Վարդան Մամիկոնյանի, դուստր՝ Վարդանուհու կամ Շուշանիկի մասին պատմում է 5-րդ դարի հայ մատենագրության նշանավոր հուշարձաններից մեկը՝ «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկան դստեր մեծին Վարդանայ» երկը (Սոփերք Հայկականք, հ. Բ, Վենետիկ, 1853)։* Սահականույշի *մասին վկայում է Խորենացին, ըստ որի Սահակը՝ «ունելով դուստր մի Սահականոյշ կոչեցեալ» (Խոր. Գ, գլ. ԾԱ)։ Ըստ Խորենացու Սմբատ Բագրատունին (Բյուրատյանը) ուներ երկու դուստր՝ Սմբատուհի և Սմբատանույշ (Խոր. Բ, գլ. ԼԷ)։*

Կանանց հատուկ անուններին վերաբերող այս դիտողությունները նկատի ունենալով՝ Րաֆֆին պատումի մեջ ստեղծել է մի քանի կանացի անուններ, որոնք վկայված չեն աղբյուրներում։ Սույն դիտողության համար տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Եր., 1962, էջ 342։

էջ 85 ,տ. 7. սեղմվելով Վանեվանյան ծոցի[13]։— *Ագաթանգեղոսը* Վանեվանյան *է անվանում ո՛չ թե ծոցը, այլ մեհյանը։ Րաֆֆու հավելումը պայմանավորված է մեհյանի դիրքով. «ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի» (Ագաթ., էջ 452)։*

էջ 77, տ. 33. Սամվելի հայրը ամուսնացավ ~ Արշակավանի դժբախտ վախճանից հետո[7] ~ Տարոնի արքային անձնատուր եղան[8]:— *Արշակավանի կառուցումը, ավերումը և դրանց հաջորդած դեպքերը պատմում են Խորենացին և Բուզանդը, որոնք Րաֆֆին մանրամասն վերլուծում է «Փակագծի մեջ» հոդվածում, որից երևում է, որ Րաֆֆին հետևում է Խորենացու տեքստին (Դ, գլ. ԻԷ—ԻԹ)։ Նույն հոդվածի համար հմմտ. «Ապա հաւանեալ մեծն Ներսէս՝ եկն ի մէջ նոցա, և արար խաղաղութիւն, լսելով նմա թագաւորին և նախարարացն, բայց ի նահապետէն Արծրունեաց Մեհրուժանայ և ի նորին քեռաւնէ Վահանայ Մամիկոնենէ, որք անխոող եղեալ՝ ապստամբեալ գնացին առ Շապուհ» (Խոր. Գ, գլ. ԻԹ)։ Չամչյանցը այս դեպքերը թվագրում է 370—377-ին (Ա, էջ 453—455)։ Արշակավանի մասին տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 446—450, Չամչեանց, Ա, էջ 705—706։ Վահանի անձնատուր լինելու մասին տե՛ս Բուզ. Դ, գլ. Ծ։*

էջ 78, տ. 19. Սահակի անակնկալ ~ Այդ բախտավոր մարդիկը՝ առանց սրի և առանց արյունի՝ այնքան շատ կալվածքներ ունեն ~ չեն տեսնում: *Նույն դժգոհությունը հայտնում է Հայր Մարդպետը. «Ձիարդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, և ոչ արանց» (Բուզ. Դ, գլ. ԺԴ)։*

էջ 80, տ. 71. Երկու նշանավոր զորապետներ՝ Զիկ և Կարեն իշխանները[10].— *Անունները վերցված են Բուզանդի տեքստում. «Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկու ոմանս յիշխանաց անուի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարեն» (Դ, գլ. ԾԸ)։*

էջ 83, տ. 24. Ինչպես հին հայերի մեջ ~ դուստրը՝ Սմբատուհի:— Սանատրուկը, *ըստ Խորենացու, Աբգարի քեռորդին էր, որ թագավորեց նրա մահվանից հետո, Անանունի հետ միասին. նրա դուստրը՝ Սանդուխտ կույսը, նահատակվեց Քրիստոսի հավատի համար. «և մարտիրոսանալն դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն» (Խոր. Բ, գլ. ԼԴ)։ Նահատակությունը ընդարձակ նկարագրված է Թադեոս առաքյալի վկայաբանության մեջ (տե՛ս Սոփերք Հայկականք, հ. Ը, Վկայաբանութիւն և գիւտ նշխարաց ս. Թադէի առաքելոյ և Սանդխտոյ կուսի, Վենետիկ, 1855)։ Սահակ Պարթևի թոռան՝ Վարդան Մամիկոնյանի, դստեր՝ Վարդանուհու կամ Շուշանիկի մասին պատմում է 5-րդ դարի հայ մատենագրության նշանավոր հուշարձաններից մեկը՝ «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկան դստեր մեծին Վարդանայ» երկը (Սոփերք Հայկականք, հ. Թ, Վենետիկ, 1853)։* Սահականույշի *մասին վկայում է Խորենացին, ըստ որի Սահակը՝ «ունելով դուստր մի Սահականոյշ կոչեցեալ» (Խոր. Գ, գլ. ԾԱ)։ Ըստ Խորենացու Սմբատ Բագրատունին (Բյուրատյանը) ուներ երկու դուստր՝ Սմբատուհի և Սմբատանույշ (Խոր. Բ, գլ. ԼԷ)։*

Կանանց հատուկ անունների վերաբերող այս դիտողությունները նկատի ունենալով Րաֆֆին պատումի մեջ ստեղծել է մի քանի կանացի անուններ, որոնք վկայված չեն աղբյուրներում։ Սույն դիտողության համար տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Եր., 1962, էջ 342։

էջ 85, տ. 7. սեղմվելով Վանանդյան ձորի[13]:— *Ագաթանգեղոսը Վանանդյան է անվանում ո՛չ թե ձորը, այլ մեհյանը։ Րաֆֆու հավելումը պայմանավորված է մեհյանի դիրքով. «ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի» (Ագաթ., էջ 452)։*

Էջ 89, տ. 9. տանուտերերին ~ ոստանիկ[1], որը տան անուն, մատակարարը և միևնույն ժամանակ սեղանատան կառավարիչն էր:— *Րաֆֆին օգտագործել է Հայկազյան բառարանի* Տանուտեր *բառի 4-րդ իմաստի բացատրությունը և* Մատակարար *բառին տրված բացատրությունները։ Հմմտ. «Տանուտեր... Սեղանապետ. վերակացու կոչնոց», «Մատակարար... վերակացու և պաշտօնեայ կերակրոց, պետ խոհակերացն. և լայնարար կամ նմանութեամբ՝ Տնտես» (Նոր Բառգիրք, հ. 2, էջ 212, 842)։* Ոստանիկ — *ըստ Հայկազյան բառարանի՝ «Ազատ որ յոստան քաղաքէ կամ ի զօրմէ» (անդ, էջ 523)։*

Էջ 90, տ. 21. Վահանը ~, մատնելով ~ նույնպես սպանել տվեց[3]։— *Վահանի մատնությունը պատմում է Բուզանդը. «Եւ եկն նա ըստ մտի թագաւորին Պարսից. և մատուցանէր նա ամբաստան զրգութիւն զարքայէն Հայոց Արշակայ, և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ. և յիշեցուցանէր նա նմա զմահն Վարդանայ, թէ յաղագս քո մեռաւ» (Բուզ. Դ, գլ. Ծ)։ Այս չարախոսությունը և Վահանի՝ Վասակի սպանության ժամանակ Շապուհի արքունիքում գտնվելը նկատի ունենալով է Րաֆֆին գրում, որ «Վահանը Վասակին մատնեց Շապուհի ձեռքը և սպանել տվեց», չնայած որ աղբյուրներում՝ նման վկայության չկա։*

Էջ 95, տ. 24. «Ո տայր ինձ ~ Արտաշեսի ողբական երգը[4] ~ երեք հարյուր տարի ~ երգում էր նույն երգը.— *Աղբյուրը Գրիգոր Մագիստրոսի թուղթն է Մոկաց և Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին (տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87)։ Րաֆֆին օգտվել է նույն հատվածի Մ. Էմինի կատարած մեջբերումից (տե՛ս* История Армении Моисея Хоренского... Москва, 1858, стр. 300) *և Չամչյանցի ժամանակագրությունից, ըստ որի Արտաշես Բ-ն մահացել է 128 թվականին («անցել էր մոտ երեք հարյուր տարի»)։ Մագիստրոսի տեքստից Րաֆֆին բաց է թողել «աւէր» բառը, որպես հեղինակի հավելում և վերջին տողը՝ «Որպէս օրէն է թագաւորաց»՝ նույն պատճառով։ Երգին ուղեկից տեքստից պատում են անցել հետևյալ շարույթները.* «Արտաշէսն *Պարթև* թագաւոր»— *հմմտ.* «Արտաշեսի ողբական երգը», «բազմոցը... *խորին* տենչանքով փափագում էր».

«Եւ զայս ասէն ի վախճանին իւրում»— *հմմտ. «Արտաշեսը* մահվան անկողնի մեջ *երգեց»,* «յուր կյանքի վերջին րոպեներում»:

Էջ 96, տ. 24. Մեկը երկու աչքերից ևս Հոմերոսի նման կույր էր[11], իսկ մյուսը՝ մեկ ոտքից կաղ:— *Պատումի այս հատվածի գոյավորման համար կարևոր է Րաֆֆու մի դիտողությունը Սրվանձտյանցի «Գրոց և բրոց կամ Սասունցի Դավիթ» գրքի գրախոսության մեջ. «Գողթան երգիչների» բամբիռը դեռ ոչ բոլորովին լռել է Հայաստանում. աշուղները և այսօր հիշեցնում են հին վիպասաններին։ Այդ կույր Հոմերոսները ժողովրդական բանաստեղծներ են» (Րաֆֆի, Գրականության մասին, Եր., 1958, էջ 57)։ Ծանոթագրելով նույն հատվածի* աշուղներ *բառը՝ Րաֆֆին գրում է. «Հայոց աշուղները մեծ մասամբ լինում են կույր մարդիկ, երևի նորա համար, որ կյանքի մեջ ուրիշ պարապմունք չգտնելով, իրանց նվիրում են բանաստեղծության» (նույն տեղում)։*

Էջ 96, տ. 28. ոսկյա պատառաքաղների[12] աղմուկը.— Ոսկյա պատառաքաղ *ունենալու իրավունք ունեին, ըստ Խորենացու, արքայի երկրորդականը. «Տալ և տանն քաջի և*

պատուականի Արգամայ զխոստացեալ գահն երկրորդական… տարգալ ունել ոսկի և պատուարագ» (Բ, գլ. խէ)։

Էջ 97, տ. 6. Նա դիտավորություն ուներ ∼ Սամվելին ճանապարհ դնել հորը ընդառաջ երթալու և դիմավորելու նրան.— *Աղբյուրը Թովմա Արծրունու պատմության տեքստն է. «Քանզի Սամուէլ որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ» (Արծր., Ա, գլ. Ժ)։ Արծրունու այս վկայությունը հիմք է դարձել պատումի սյուժետային կառույցի հետագա զարգացման համար։*

Էջ 98, տ. 34. Վահագնի գիշերային ∼ Աստղիկ ոսկյա ապարանքը, որ կանգնած էր Աստղոնից[13] լեռան գագաթի վրա։— *Այս երգի թեման Րաֆֆին արձակ շարադրել է «Կայծեր» վեպի երկրորդ հատորի «Աստղաբերդը» գլխում. «Հեռվից երևաց Աստղաբերդը։ Նա կանգնած էր Տավրոսի թևերից մեկի վրա և, կարծես, զայրացած դեմքով նայում էր դեպի իր առջևը փռված խորին ձորերը ու լայնածավալ հովիտները։ Իմ սիրտը սկսեց դողալ։ Մենք մտնում էինք հայոց դիցուհու ամրոցը։ Այստեղ էր հյուրասիրում Տարոնի աստվածուհին մեր անպարտելի հսկաններից մեկին — Վահագնին։ Այստեղ, գեղեցիկ աստվածուհու գրկի մեջ, հանգիստ էր առնում հսկան՝ իր ահռելի կռիվներից հետո վիշապների հետ։ Սերը, գգվանքը, հեշտությունը ամոքում էին վաստակած քաջի խոնջությունը» (Կայծեր, հ. 2, Թիֆլիս, 1887, էջ 673)։*

Էջ 99, տ. 1. Մատաղ Արփին ∼ յուր գրկում։— *Արձակ տեքստի ընդմիջումը չափածո տեքստով տարածված հնարանք է ռոմանտիզմի դպրոցին պատկանող հեղինակների ստեղծագործություններում։ Րաֆֆին հաճախ է մեջբերում իր հերոսների* երգերը։ *Քանի որ այս երգը հեղինակի կողմից ներկայացվում է որպես 4-րդ դարում երգվող գողթան երգերից մեկը, ապա երգի պատմականությունը պահպանելու համար նա կիրառում է բանաստեղծական կառույցի այնպիսի հնարանքներ, որոնք բնորոշ են այդ տեքստերին (Վահագնի ծնունդը նկարագրող տեքստը Խորենացու պատմության մեջ)՝ բաղաձայնույթներ, առձայնույթներ, ոճական կրկնություններ և այլն։*

ԺԳ. ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԲԱՐԴՎՈՒՄ ԵՆ

Էջ 101, տ. 36. «կարճազատներ» են կոչում[2] ∼ չարաճճի, խայթող, թունավորող։ *Րաֆֆին օգտվել է Բուզանդի պատմությունից. «Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջէ կարճաղատացն» (Բուզ. Գ, գլ. ԺԹ), և, ինչպես նկատում է Հր. Աճառյանը, «կարճաղատ» բառին տված Առձեռն բառարանի բացատրությունից (տե՛ս Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 70—71), գրելով, որ Րաֆֆին շատ ճիշտ է վարվում, «երբ* կարճազատը *համարում է Հացիկ գյուղին և հացիկցիներին տրված մի տիտղոս (մականուն), բայց սխալվում է, երբ բացատրում է բառը Առձեռն բառարանի տված նշանակությամբ։ Նա ասում է. «Օձեցիք ճանաչված էին որպես օձաբարո մարդիկ, իսկ հացիկցիք ստացել էին «կարճաղատ» մականունը, որ նշանակում է կարիճի ղալակ կամ, փոխաբերական մտքով, չարաճճի, խայթող, թունավորող»։ Պատումի տվյալ հատվածում սակայն Րաֆֆին* կարճազատը *տիտղոս չի համարում՝ տրված հացիկցիներին, այլ մականուն՝ ուղղակի իմաստով՝ ըստ Առձեռն բառարանի (կարիճի նման խայթող = սուր լեզու ունեցող) և այդ մականվան նմանակությամբ, օգտագործելով Օձ քաղաքի անվան նշանակությունը (օձը որպես հասարակ անուն) բնակիչներին բնութագրում է «օձաբարո» ածականով։ Այսպիսով,* կարճազատը *և* օձաբա-

ռոն գրվում են նույն իմաստային շարքի մեջ, որպես բարքերի ընդհանրացում արտահայտող բնութագիր (օձարարո—օձի նման այրող,—ննդ. սողացող. այս իմաստը պատումի մեջ հեղինակի կողմից անմիջականորեն կապվում է Տաճատուհի անվան հետ. «օձնեցիք վայելում էին տիկնոջ առանձին խնամակալությունը և նրա անմիջական հովանավորության ներքո էին գտնվում»)։ Ուստի և պատումի իմաստային համակարգի համար նշանակություն չունի. թե ճիշտ է արդյոք կարճաղատ բառին տրված Աճառյան բառարանի նշանակությունը, որ օգտագործել է Րաֆֆին, թե ոչ։

էջ 105, տ. 4. այդ փառավոր փիանդազի[6] վրայով — փիանդազ — պարսկերեն, գործվածք, որ փռում էին բարձրաստիճան հյուրի, պաշտոնյայի կամ թագավորի առաջ, երբ նրան դիմավորում էին կամ երբ նա դուրս էր գալիս շրջելու։

էջ 106, տ. 9. Վասակին էր պատկանում Եկեղյաց գավառի ~ ուր հիմնել էր նա յուր անունով մի քաղաք, որ կոչվում էր Վասակակերտ[8]։— Աղբյուրը Ասողիկի պատմության տեքստն է. «Էին յաւուրս նորս սպարապետ զօրուն Հայոց՝ Վասակ որդի Վաշէի. որ զՎասակակերտ շինեաց յԵկեղեաց գաւառին» (Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 70)։

էջ 107, տ. 7. Մամիկոնյան Վարդանի ուղի Համազասպն էր[11]— Պատումի շարունակության մեջ այս Համազասպը նույնացվում է Սահակ Պարթևի փեսա Համազասպի հետ, որի մասին վկայում է Խորենացին. «Սահակ... ունելով դուստր մի Սահականոյշ կոչեցեալ, որ տուաւ յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնենին» (Խոր. Գ, գլ. ԾԱ)։ Համազասպ Մամիկոնյանի և Սահականույշի որդին, ըստ Խորենացու, Վարդան Մամիկոնյանն էր՝ Սահակ Պարթևի թոռը, Ավարայրի հերոսը։ Իսկ թե ո՞վ էր Համազասպ Մամիկոնյանի հայրը, աղբյուրներում ուղղակի վկայություններ չկան։ Րաֆֆին Համազասպի հայր է համարում այն Վարդան Մամիկոնյանին, որը Վասակի և Վահանի եղբոր՝ Վարդանի, որդին էր՝ ծնված հոր սպանությունից անմիջապես հետո (տե՛ս Բուզ. Դ, գլ. ԺԸ)։ Այս Վարդանին պատումի շարունակության մեջ Րաֆֆին նույնացնում է Բուզանդի պատմության չորրորդ դպրության ԾԹ գլխում հիշատակված Վարդանի հետ, որը, ըստ նույն հատվածի, Համազասպուհու եղբայրն էր և Վահան Մամիկոնյանի՝ Սամվելի հոր, «քույրաթիւը». «Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի»։ Դա ապացուցվում է այն բանով, որ պատումի մեջ Համազասպուհին Վարդան Մամիկոնյանին՝ Վասակի և Վահանի եղբորը, հայր է անվանում, իսկ Վահանին՝ Սամվելի հորը, հորեղբայր: Դրանով իսկ Րաֆֆին «քոյրաթիւ» բառին տալիս է եղբոր աղջիկ նշանակությունը։ Այսպիսով, Րաֆֆին ենթադրել է, որ Բուզանդի չորրորդ դպրության ԺԸ գլխում հիշատակված Վարդանը նույն անձնավորությունն է, ինչ ԾԹ գլխում հիշատակված Վարդանը։ Դա Վասակի և Վահանի եղբոր՝ Վարդանի որդին է, Համազասպուհու եղբայրը, և նկատի ունենալով Մամիկոնյանների այդ ճյուղում կիրառվող անունների հաճախականությունը (Վարդանը, որպես Վարդանի և Համազասպուհու հայր և Համազասպն ու Սահականույշը, որը, ըստ Եսայրոսի երեցի վկայության նույն Վարդանի ծոռն էր, որպես Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի հերոսի, ծնողներ), ենթադրել է, որ Համազասպը պետք է որ լիներ Վասակի և Վահանի եղբոր Վարդանի թոռը։

Ստ. Մալխասյանցը, մեկնելով Բուզանդի այս հատվածը, ԾԹ գլխում հիշատակված Վարդանին նույնացնում է Վասակի և Վահանի եղբայր Վարդանի հետ՝ ենթադրելով, որ «եթե Համազասպուհին քույր էր Վարդանի, բայց քույրաթիվ էր նրա հարազատ եղ-

բոր՝ Վահանին, նշանակում է՝ այս վերջինս համար խորթ քույր էր՝ ուրիշ մորից ծնված, հոր կողմից քույր էր, մոր կողմից՝ խորթ-քույրաթիվ» (Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 332)։ Մեր կարծիքով, Րաֆֆու կազմած տոհմաբանական կապը տվյալ դեպքում ճիշտ է արտացոլում աղբյուրների վկայությունների իմաստաբանական կապը (քույրաթիվ = եղբոր աղջիկ)։

էջ 107, տ. 8. մյուսը՝ Մամիկոնյան Վաչեի որդի Արտավազդն էր[12] ~ որը մի խարտյաշ, կրակոտ պատանի էր։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, զոր տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմօրուս, երեսօք գեղեցիկ» (Ե, գլ. ԽԴ)։ Այս Վաչե Մամիկոնյանը տարբեր է Վաչե Մամիկոնյան սպարապետից։*

էջ 107, տ. 24. Մեծ ամուսնությունները ~ դեռ չծնված[15]։— *Մեծ ամուսնությունների մասին վկայում են Բուզանդը և Խորենացին՝ Ներսես Մեծի բարեկարգությունները նկարագրելիս. «...և փախչել ասելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն. և մանաւանդ ի մերձաւորական ի նուաց և որ զամ մի այսմ նման լեալ էր ինչ» (Բուզ. Դ, գլ. Դ), «Եւ զերկուս զայսոսիկ յազգաց նախարարաց բառնալ. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն պահելոյ սեպհական ազատութեանն առնէին» (Խոր. Գ, գլ. Ի)։*

էջ 109, տ. 34. կհասցնեն Ռշտունյաց Գարեգին իշխանին.— *Աղբյուրը Բուզանդն է. «զԳարէգին, տէր գաւառին Ռշտունեաց» (Ե, գլ. ԼԷ)։*

ԺԴ. ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

էջ 114, տ. 2. Նրանց առաջին գործը կլինի ~ հսկողության ներքո, հրամայված է ~ Մազդեզանց կրոնը[5]։— *Որմիզդուխտի տեղեկությունների աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել։ Եւ ազատ կանանին անդէն ի բերդեանն բաշխէր և թողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն, սպանիցեն զկանայս նոցա» (Դ, գլ. ԾԸ), «Վահան և Մերուժանն... տային հրաման ի բերդեանն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել յօրէնս Մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար» (Դ, գլ. ԾԹ)։*

ԺԵ. ԼԵՌՆԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

էջ 124, տ. 11. Հայոց Տիկնոջ (թագուհու)—*Ղուկաս Ինճիճյանը, վերլուծելով Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի վկայությունները հայոց թագավորների կանանց անվանակոչության մասին, մակաբերում է հետևյալ տիտղոսները.*— Տիկին, Հայոց Տիկին, Թագուհի, Դշխո, Բամբիշ. *իսկ թագուհու իշխանության համար՝* Տիկնություն։ *Այս բոլոր անվանումները կիրառված են վեպի տեքստում։ Տվյալ դեպքում, Րաֆֆին փակագծերի մեջ է գրել* թագուհի *բառը՝ մի կողմից շեշտելով* Հայոց Տիկին *արտահայտության տերմինաբանական արժեքը, մյուս կողմից նկատի առնելով Ինճիճյանի դիտողությունը, ըստ որի «կիրառութիւն* Թագուհի *անուանս սակաւ ուրեք է տեսանել առ մեզ» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 240)։*

էջ 124, տ. 17. Երբ սկսվեցավ մականախաղը[1] — *Այս խաղը նկարագրում է Խորենացին. «Այլ երբեմն ի մականական խաղուն երկիցս պատահեաց Շաւասպայ Արծրունւոյ զգնդակն հանել ի Շապհոյ» (Գ, գլ. ԾԵ)։*

էջ 125, տ. 25. այծերի մազից գործած բերե ասպարներով ~ որ մի նիզակի չափ երկարություն ունեին[5]:— *Սասունցիների սարքը և զենքերը նկարագրելիս Րաֆֆին օգտագործում է Թովմա Արծրունու Խութ լեռան բնակիչների և Քսենոփոնի՝ Կորդվաց աշխարհի բնակիչների նկարագրությունները, դրանց ավելացնելով ժամանակակից սասունցիների տարազի որոշ մանրամասներ։ Հմմտ. «Եւ է զգեստ նոցա սակաւ ի ծածկոյթ մերկութեան, և ոտիցն հնարաւորին ձև կօշկաց ի մորթոց այծից կարմեալ ...Եւ են ստացեալ զէնս աշտեայս, համապատ կրելով ընդ ինքեանս» (Արծր., էջ 192), «յոտս ագուցեալք տեսակ ինչ կօշկաց, զոր կոչեն խարուկ, որ ի վերոյ գործեալ է ի մազոյ այծեաց» (Ինճիճեան, Աշխարհագրութիւն, հ. Ա, էջ 201), «Էին տիգաւորք քաջաձիգք, որոց Աղեղունք գրեթէ եռականգնեան, նետք առաւել քան զերկկանգնեանս» (Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 257, նոր թարգմանությունը տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, Եր., 1970, էջ 88)։*

ԺԶ. ԻՆՔՆԱԿՈՉՆԵՐԸ

էջ 128, տ. 27. Իսկ կաթողիկոսությունը ~ ժառանգական էր[1]:—*Լուսավորչի տնից Հայոց կաթողիկոսի պաշտոնը զբաղեցրել են Արիստակեսը, Վրթանեսը (Գրիգոր Լուսավորչի որդիներ), Հուսիկը (Վրթանեսի որդին), Ներսես Մեծը (Աթանագինեսի որդին, Հուսիկի թոռը) և Սահակ Պարթևը (Ներսես Մեծի որդին)։ Սահակ Պարթևից հետո կաթողիկոս ընտրում են տարբեր վայրերից։*

էջ 129, տ. 4. պատվիրված է ~ հսկողության ներքո: ~ Բայց մեր նախարարներից ~ կփախչեն դեպի հունաց կողմերը.— *Հայոց նախարարների փախուստի կանխազգուշությունը կազմված է Բուզանդի և Խորենացու տեքստերի համադրությամբ. «Եւ բազումք ի նախարարացն Հայոց թողուին զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս և փախեան ընդ այս ընդ այն գնացին» (Բուզ. Դ, գլ. ԾԸ), «և իւրեանց առեալ զկանայս և զորդիս՝ փախեան յաշխարհն Յունաց» (Խոր. Գ, գլ. ԼԵ)։*

էջ 130, տ. 11. Քառասուն տարի հազիվ անցել է ~ Հայաստանը սուգի մեջ դրեց:— *Հմմտ. «Եւ յետ այնորիկ յաւել ևս լինել մարտ խստութեամբ պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս... Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ, և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին» (Բուզ. Գ, գլ. ԺԱ)։ Քանի որ Չամչյանցը չի ընդունում Մամիկոնյան Վաչե սպարապետի գոյությունը, ուստի այս պատերազմը որոշակի չի թվագրում (Չամչ., Ա, էջ 683—684), այդ պատճառով էլ Րաֆֆին գրում է. «քառասուն տարի հազիվ է անցել»՝ նկատի ունենալով Խոսրով Բ-ի թագավորության տարիների (344—353) և Մերուժանի և Վահանի արշավանքի (380) մոտավոր տարբերությունը։*

էջ 130, տ. 14. Մամիկոնյան տոհմից ~ սպարապետական պաշտոնը[3] ~ նոր սպարապետությունը ժառանգեց:— *Հմմտ. «Սակայն զՎաչէի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորին զորդի ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւ-*

րոյ Արտաշատու։ Առաջի թագաւորին զհօրն պատիւն ի գլուխն դնէին, և զսպարապետութեան նորուն տեղի. զի կարի որդի վաստակաւորի էր, և ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հօծկու, զի ի մեծ պատերազմին մեռանէր։ Եւ զզօրավարութեան գործ յանձն առնէին Արշաւրայ Կամսարականի՝ իշխանին Շիրակայ և Արշարունեաց գաւառին, և Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն մամիկոնեան տոհմին։ Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ թագաւորաւն՝ Արշաւրայ և Անդովկայ սնուցանել զպատանեակն զԱրտաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ» (Բուզ. Գ, գլ. ԺԱ)։ Այս հատվածի համար տե՛ս նաև՝ Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 235—240, «Դրօշք նշանք և վերտառութիւնք Հայաստանեայց» գլուխը։

էջ 131, տ. 15. Տիրանի օրերում այդ սուրը մերկացավ բնիկ թագավորի դեմ ~ անչափահաս զավակներին[8]:— Ակնարկը վերաբերում է Բուզանդի պատմության «Յաղագս Հայր մարդպետի, որ տայր կոտորել զազգս նախարարացն» գլխին (Գ, գլ. ԺԸ), որ ընդարձակորեն մշակված է «Փակաղծի մեջ» հատվածում և «Համազասպուհի» գլխում Համազասպուհու և Վահանի երկխոսության ձևով։

էջ 131, տ. 17. Իսկ Տիրանի ~ Շապուհի անգթին զորությունները: ~ սպանեց յուր եղբայր Վարդանին, երբ նա դավաճանեց հայրենիքին[9]:— Շապուհի «անհագին զորութիւններին» չարչարումը նկարագրված է Բուզանդի պատմության 4-րդ դպրության տեքստերում (գլ. ԻԱ-ԾԴ)։

էջ 133, տ. 5. Արտագերսի[11] ամրոցում — Րաֆֆին Արտագերսը տեղադրում է վեպի «Արտագերս» գլխում, որից երևում է, որ գրողը այն նույնացնում է Կապույտ բերդի հետ՝ հետևելով Վարդան աշխարհագրին. «բերդն Կապուտ՝ որ կոչի Արտագերէից»։ Արտագերս ձևի կիրառությունը վեպի առաջին մասում հենց այդ նույնացման արդյունքն է (Արտագերէից — ուղղ.՝ Արտագերէք, հայց.՝ Արտագերէս)։ Պատումի շարունակության մեջ հեղինակը կիրառում է Արտագերս ձևը, ինչպես Բուզանդն ու Խորենացին։

ԺԵ. ԿՆՈՋ ԽՈՐՀՈՒՐԴԸ

էջ 140, տ. 13. Մեծ ~ Շահապիվանի[6] աշխարհախումբ տոնախմբությունը: ~ ամիս առաջ[7] ~ բանակատեղը[8] ~ Ծաղկաց լեռների[9] ~ տոնը:— Աղբյուրը՝ Բուզանդի և Խորենացու վկայություններն են՝ Ղ. Ինճիճյանի մեկնություններով։ Հմմտ. «Շահապիվանն է լեառն, որպէս է տեսանել առ Խորենացւոյն դ. 23. *Գնելոյ բազում երէս քան զայն ունել ընդ նոյն աւուրս յերում լերինն՝ որ Շահապիվանն անուանի||։ Ստորև սոյն այս լեառն գտանի նոյն ընդ ծաղկաց լերին։ *Տեսցես հեղիս բաշխեա ի լերինն ծաղկաց զպարիկացիր ջրով||։ Որով անկանի սա ի ծաղկոտն գաւառի, որպէս և լեառն ծաղկաց։

Յայս լեառն ժողովէր ամի ամի բանակ թագաւորին ի նաւասարդի՝ առ ի կատարել զտօնն ամանորաբեր... որպէս է տեսանել առ բուզանդայ դ. 15. Եւ էր բանակ թագաւորին (ր. արշակայ) ի Շահապիվանի ի բուն բանակի տեղւոջ արշակունեացն ի ներքոյ սիւնեացն, և ի վերայ աղբերականն։ Յիշէ ի նոյն գլ. և Զտօնն նաւասարդայ... Նոյնպէս և զործս ժողովոյն՝ զոր արար աստանօր ա. յօվսեփ կաթողիկոս՝ այս Շահապիվան կոչէ Բանակետղ թագաւորաց ի ժամանակի ամանորաբեր տօնին։ *Գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան յերկայ կէտն ի Շահապիվանի ի բանակետղ թագաւորացն հայոց ի

ժամանակ ամանորաբեր տոնին||» (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 414)։ Աշխարհախումբ բառի աղբյուրը Բուզանդի տեքստի հետևյալ շարույթն է. «Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակ մարդկան՝ որ ժողովեալ էին» (Դ, գլ. ԺԵ)։

ԺԸ. ՊԱՏԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԸ

էջ 143, տ. 32.—հանդերձեղենի ջամադանները[1] — ջամադան — *ըստ Գևորգ Տեր Հովհաննիսյան Պալատցու և Հակոբ Տյուզյանի պարսկերեն-հայերեն բառարանի՝ «Հանդերձարան, (այսինքն աման հանդերձից, ուր դնին հնդերձք») (տե՛ս Բառարան Պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, Կոստանդնուպոլիս, 1826, էջ 273), նույն իմաստով է բացատրում Միլլերի պարսկերեն-ռուսերեն բառարանը.* «сундук для платья; платяной шкаф» (Персидско-русский словарь, Москва, 1953, стр. 145).

էջ 147, տ. 16. Ոչ, ասված է վկա ~ տանելու չլիներ, նա այնպես էլ կգար։— *Սամվելի անհանգստության և Արտավազդի ինքնակամության մասին պատմող աղբյուրը Բուզանդի տեքստի այն հատվածն է, որտեղ խոսվում է Արտավազդի կռիվ գնալու ցանկության և Մանվել Մամիկոնյանի արգելքի մասին. «Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն ...Ապա իբրև ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մտրակ ի վեր առեալ Մանուէլի տանէր զմերկ զլուխ Արտաւազդայ. սաստէր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տիոց։ Իսկ նա առ նորա ակամէ գնաց ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զինի պատերազմին», «Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն» (Բուզ. Ե, գլ. ԽԴ)։ Տվյալ դեպքում Րաֆֆին* հենվում *է աղբյուրի վկայության վրա՝ օգտագործելով Բուզանդի տեքստում նկարագրված ոչ թե որոշակիված իրավիճակը (այդ բանը հեղինակը ակնարկում է «Սամվելին հայտնի էր նրա անսանձ, անզուսպ բնավորությունը» շարույթի միջոցով. Բուզանդի տեքստում՝ «նա ոչ հաւան էր, չառնոյր յանձն», «Ապա ոչ հաւանեաւ նա...»), այլ իրավիճակին* հակառակ։

***

ՓԱԿԱԳԾԻ ՄԵՋ

Բնություն, նախարարություն և թագավոր

էջ 150, տ. 8. Նրանք անցնում էին ~ Երասխի ահարկու «սահանքները[3]» ամեն մի ճանապարհորդի վրա սարսափ էին ձգում։ ~ մոտենում էին ծովերին։— *Դեպքերի այս ընդհանուր նկարագրության հիմքում ընկած են Ղ. Ինճիճյանի «Հնախօսութեան» «Քարավազ Երասխայ» գլխի վկայությունները և հեղինակային վերլուծության տեքստը (Հ. Ա, էջ 115—117)։*

անցնում էին խորին, քարեղեն հատակի վրայով — Քառավազ *բառի իմաստի (քարի վրայով վազող, հոսող) խոսքային ընդարձակումն է։ Վկայությունները՝ Խոր. Ա, գլ. ԺԲ, Ստրաբոն, գիրք ԺԱ և այլք։*

երկու կողմից պարիսպների նման բարձր, ժայռոտ եզերքի միջով։ Սեղմված իրանց

նեղ ափերի մեջ — *«Հատեալ դարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձորս և նեղս» (Խոր. Ա, գլ. ԺԲ), «անցանէ գետն Երասխ յորձանուտ խոխոջիւք վազս առեալ, և թափ անկեալ ընդ նեղ և ընդ նուրբ խոխոմս քարանձաւի միոյ» (Հովհ. կաթողիկոս), «Իսկ ի հասանելն ի դժուարին տեղիս՝ աստի և անտի ի քարանձաւաց ճնշեալ, որչափ անձկանայ՝ նոյնչափ առաւել երագագոյն վազս առեալ» (Պոմպոնիոս Մելա, գիրք Գ, գլ. 5 — Ինճիճյանի թարգմանությունն է)։*

գոռում, գոչում, որոտում էին նրանք և փրփրադեզ հորձանքներով զարկվում էին անխորտակելի ապառաժներին.— *«ահագին դնչդնչմամբ» (Խոր., նույն տեղում), «յորձանուտ խոխոջիւք» (Հովհ. կաթողիկոս), «Հարկանի ընդ հանդիպակաց քարանձաւս, յորմէ և ահագին դղչմամբ և խոխոջալով այնչափ շտապաւ սահի» (Պոմպոնիոս Մելա)։*

Երասխի ահարկու «սահանքները» — *«Երասխ յընթացս իւր ունի սահանք երևելիս» (Ինճիճյանի հեղինակային տեքստից)։*

Երբ ընթանում էին հարթ դաշտերի միջով և երբ խաղաղ ու հանդարտ հոսանքով մտնում էին ծովերին — *«ապա սրանօր կորացեալ կամարաձև գետահետեալ իջանէ, անդ խաղաղանայ, և անդրէն ընդ դաշտավայրս յոյժ և հանդարտիկ ընդ նոյն հոսի եզերս» (Պոմպոնիոս Մելա)։ (Տե՛ս նաև Ինճիճեան, Աշխարհագրութիւն, հ. Ա, էջ 26—27)։*

էջ 150, տ. 21. Հայոց գետերի հինգ մեծամեծ նախապետները — Տիգրիս, Եփրատ, Կուր, Երասխ, Փասիս.— *Աղբյուրը Ստրաբոնի տեքստն է Ինճիճյանի թարգմանությամբ և մեկնություններով. «Վասն բազմութեան գետոց աշխարհիս վկայէ և Ստրաբոն գիրք ԺԱ. թղթ. 529. ասելով. «Գետք Հայաստանեայց են բազումք, յորս ծանօթագոյնք՝ որք իջանեն ի ծովն Պոնտոս՝ են Փասիս և Լիգոս (Գայլ), փոխանակ որոյ ոչ ուղիղ դնէ Երատոսթենէս զԹերմոտոնդաս։ Իսկ ի ծովն Կասպից՝ Կուր և Երասխ։ Ի ծովն Կարմիր (իմա ի ծովն Պարսից) Եփրատ և Տիգրիս»։ Զայսոսիկ յիշելով Ստրաբոն՝ յիշեաց միայն զմեծամեծ գետս Հայաստան աշխարհիս, ի բաց թողեալ զփոքունս, զի արդարև սոքա են մեծագոյն գետք մեծին Հայոց, բայց ի Լեգոս գետոյ՝ որ չէ ի կարգի սոցա, և առաւել սեփական է Փոքուն Հայոց» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 108—109)։ Այս հատվածից Րաֆֆին վերցրել է «զմեծամեծ գետս Հայաստան աշխարհիս» շարույթը և, ըստ Ինճիճյանի ցուցումի, բաց է թողել Ստրաբոնի հիշատակած 6 գետերի անուններից* Լիգոս *անունը։*

էջ 150, տ. 22. անհամբեր էին կամուրջների: ~ Օգոստոս կայսրի կառուցած կամուրջը Երասխի վրա ~ Վիրգիլիոսի երգերին[4]:— *Աղբյուրը Ինճիճյանի տեքստն է. «Բայց պատմի ի վաղեմի ժամանակս կամուրջս քարաշէնս կանգնեալ ի վերայ մեծոյն Երասխայ և ի նոյն իսկ ի մեծէն Աղեքսանդրէ, և ի սաստկութենէ ընթացից ջրոց նորա բեկեալ ամենայն, զոր և յիշէ Կալմէտ ծննդոց բ. 12. զորոց և զմնացորդս կամարաց մինչև ցայսօր է տեսանել աստ. յայնմանէ դէպ լինէր մեծի քերթողին Վիրգիլիոսի յիւր Ենէական երգսն գիրք ը. տող 727. քերթողական բարբառովն ճահագրել. «Զայրացեալս առնուլ Երասխայ ընդ կամուրջ»։ Այլ ի նորոգել ապա Օգոստոս կայսեր՝ փոխեալ բարբառոյն ասել, բանիւ Ստատիոսի քերթողին ի ա. գիրս Անտառաց. «Արդ ընդունող կամրջոյն Երասխ»։ Բայց և այս կամուրջ՝ սուղ ինչ զկնի բեկեալ ասի Երասխայ» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 117—118)։*

Օգոստոս Գայոս Օկտավիանոս (63 թ. մ. թ. ա.— 14 թ. մ. թ.) — *հռոմեական կայսրը, Հուլիոս Կեսարի զարմիկը, որի սպանությունից հետո, 44 թ. մ. թ. ա. պայքար սկսեց Մարկոս Անտոնիոսի դեմ և նրան հաղթելուց հետո հռչակվեց բացարձակ միապետ (30 թ., մ. թ. ա.)։ Սենատի մ. թ. ա. 27 թվականի հունվարի 13-ի նիստի ժամանակ ցանկության*

հայտնեց մի կողմ թողնել իրեն տրված բոլոր բացառիկ իրավունքները և մասնավոր կյանքով ապրել, սակայն, «զիջելով» սենատորների խնդրանքներին, պահպանեց իր իշխանությունը։ Սենատը շնորհեց նրան Augustus (սրբազան, մեծ) կոչումը, որը մտավ հետագա կայսրերի տիտղոսաշարանության մեջ։

Պուբլիուս Պապինիուս Ստացիուս (40—96) — հռոմեական բանաստեղծ, Դոմետիանոս կայսրի արքունիքում, 5 գրքերի հեղինակ։

էջ 150, տ. 25. Իսկ Պարսից Կյուրոս թագավորի կառուցած կամուրջը ~ սատանի գործն[5]:— Աղբյուրը Հերոդոտի պատմության տեքստն է, որ վերապատմում է Ինճիճյանը. «Առ Երոդոտայ տ. 205. յիշատակին կամուրջք շինեալք ի Կիւրոսէ, զոր համարիմք առացեալ վասն մերոյն Երասխայ» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 116)։ Կյուրոս Մեծը իշխել է 555—525 թ., մ. թ. ա. ըստ Չամչյանցի։

էջ 150, տ. 27. Արտաշատ հասավ մոտ ~ Տափերականն[6], սկզբում տոփերի մի շարված էր ~ խաղաղ ժամանակ։— Տափերական կամուրջ — անունը վկայված է Բուզանդի և Ագաթանգեղոսի տեքստերում. «անցեալ ընդ կամրջացն Տափերայ մտեալ ի քաղաքն մեծ Արտաշատ» (Բուզ. Դ, գլ. ԺԲ), «ի Տափերական կամրջացն գետավէժ առնէին զնոսա» (Ագաթ., էջ 32) Րաֆֆին նախընտրել է Ագաթանգեղոսի վկայած ձևը (Տափերական)։

տոփերի մի շարված էր — տոփ կամ տոփա նշանակում է լաստ՝ շինված գերաններից (Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. Դ, Եր., 1979, էջ 430—431)։ Պատումի տեքստում Րաֆֆին ընդգծում է տոփերի բառը, որպեսզի տեսանելի դարձնի Տափերական բառի հնչյունական կազմի հետ այդ բառի ունեցած նմանությունը, դրանով իսկ ստուգաբանում է տեղանվան Տափեր բաղադրիչը լաստեր իմաստով (լաստերից պատրաստված կամուրջ)։ Այս բառը այլ իմաստով է ստուգաբանում Ստ. Մալխասյանցը. ««Տափեր» բառը թվում է բուն ժողովրդական բառ՝ «տափ» բառի հոգնակին, որ նշանակում է նաև հարթավայր, դաշտ, տեղ, ինչպես Փավստոսն էլ գրում է՝ «Ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայնկոյս գետոյն Տափերն կամրջին»» (Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 317)։

էջ 150, տ. 35. Ճանապարհորդները, երկար ձողերը ձեռքներին բռնած ~ մարդիկ են թաղված[7]: ~ շունչ առնելու համար։— Աղբյուրը Ստրաբոնի աշխարհագրության տեքստն է (տե՛ս Страбон, География, Москва, 1964, стр. 498), որ թարգմանաբար մեջբերում է Ղ. Ինճիճյանը. «պատմին անդանօր ի յանցանելն զլերամբք՝ ի ձիւնելն սաստիկ՝ զանցաւորս համօրէն թաղել ընդ լերանց, իսկ առ ի զերծանել ի վտանգէ աստի՝ տանին ճանապարհորդք գաւազանս զորս ի վեր ունին, զի կարօղ լիցին շունչ առնուլ, և զանցից իւրեանց ծանօթս տալ անցաւորաց, յորոց և գտանին օգնութիւն, բրելով և աղջամբ հանելով զնոսա» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 41)։ Այս հատվածը Րաֆֆին մշակել է՝ զուգակցելով Խորենացու վկայության հետ խնդրակների մասին։

էջ 151, տ. 5. Սանատրուկ թագավորը ~ դուրս հանեցին[8]:— Աղբյուրը Խորենացու տեքստն է. «Իսկ դայեկին նորա Սանոտայ... առեալ զմանուկն, քանզի տղայ էր, եդ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս գիշերս։ Զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի խնի նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն։ Բայց որչափ մեք եղաք վերահասու՝ այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրակսն

լեալ, պատանեաց մանկանն և գայենիկն» (Բ, գլ. ԼՁ)։ Րաֆֆին հետևում է ոչ թե առասպելին, այլ Խորենացու մեկնությանը։

Էջ 151, տ. 8. Տիրան Ա թագավորը ~ գտնել չկարողացան։— *Աղբյուրը Խորենացու տեքստն է. «և մնաւ ի ճանապարհի ձեան հիւսոյ կալեալ» (Բ, գլ. ԿԲ)։ Խորենացու մնաւ բառը Րաֆֆին ընդարձակել է «բոլորովին անհետացավ» շարույթի։ «Նրան գտնել չկարողացան» շարույթի աղբյուրը խնդրակների մասին Խորենացու վկայությունն է։*

Էջ 151, տ. 9. Քսենոփոնը հունաց ~ ցրտից ազատվելու[10]: *Աղբյուրը Քսենոփոնի տեքստի Ինճիճյանի թարգմանությունն է. «Բազմաց ի նոցանէ դէպ լինէր ապականել աչաց, փտել մատանց ոտից, և... առ պահպանութիւն ոտից՝ միշտ ի շարժման ունել և ի գիշերի լուծանել զխրացս կօշկաց... մինչև ի հասանել նոցա ի գիւղ ինչ մերձ ի նահանգն Հայոց Խալիւ. անդ զխաւորն գեղջ ուսոյց նոցա պարկ ինչ՝ պնդել զոտիս երիվարաց և գրաստուց, զի առանց նոցին մինչև ցորովայն ունէին երիվարք ընկղմել ի ձեան» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 42)։*

Էջ 151, տ. 13. Արտավազդ Ա-ի օրերում ~ պարսից արշավանքից[11]:— *Աղբյուրը Ինճիճյանի վերլուծական տեքստն է. «Այս ցրտութիւն Հայոց աշխարհիս էր՝ որ ի զօրաց Անտոնիոսի հռոմայեցւոյ կոտորեաց առաւել քան զութ հազար» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 41)։ Այս փաստը վկայված է հռոմեական պատմիչ Տիտոս Լիվիոսի պատմության մեջ (գիրք 130)։ Անտոնիոսի պարսից արշավանքի մասին տե՛ս Չամչեանց, հ. Ա, էջ 261—267։*

Անտոնիոս Մարկոս (86 թ. մ. թ.ա.— 30 թ., մ. թ. ա.) — *Հռոմեական զորավար։ Կեսարի սպանությունից հետո իրեն համակամ ցույց տվեց ծերակույտին՝ շահելով նրա վստահությունը։ Օկտավիանոսի և Լեպիդոսի հետ եռապետություն կազմեց։ Օկտավիանոսի հետ բաժանեց Հռոմի իշխանությունը։ Անտոնիոսին բաժին հասավ Արևելքը։ Պարթևների դեմ մղած անհաջող պատերազմի պատճառ համարելով Հայոց թագավոր Արտավազդին՝ ձերբակալեց նրան և տարավ Եգիպտոս, իր սիրուհի Կլեոպատրա թագուհու մոտ և սպանել տվեց։ Ամուսնացավ Օկտավիանոսի քրոջ հետ, լքեց նրան, և Օկտավիանոսը պատերազմ եկավ նրա դեմ։ Ակտիոնի ճակատամարտում ջախջախվեց և փախավ Կլեոպատրայի մոտ։ Ինքնասպան եղավ 30 թ. մ. թ. ա., 56 տարեկան հասակում, երբ նրան հայտնեցին, որ Կլեոպատրան միտք ունի իրենից առաջ ինքնասպան լինել։*

Էջ 151, տ. 19. Մեծ ճանապարհների ~ շինված էին հատուկ պանդոկներ[12],— *Աղբյուրը Մեսրոպ երեցի վարքագրության տեքստն է Ղ. Ինճիճյանի մեկնությամբ. «Պանդոկք. Շինեալ վասն ճանապարհորդաց, զորմէ գրէ Մեսրոպ ի թիւն մր. «Եւ հրամայէր ի զերծ տեղիս, և յանցս ճանապարհաց, և ի գլուխ լերանց պանդոկ շինել»։ Այս շինուածք էին վասն անցաւորաց» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 356)։ Այդ պանդոկներից մեկում իջևանել է Րաֆֆին Աղվանից և Սյունյաց աշխարհներում ճանապարհորդելիս. «Քահանայէն մենք գտանք մեր քարաշեն քարվանսարայի մեջ։ Այդ քարվանսարան մնացել է ամենահին ժամանակներից» (ԵԺ 10 հատ., հ. 8, էջ 579)։*

Էջ 152, տ. 28. Տրդատի օրերում ~ 620-ի[13]: Իսկ Արշակ Բ-ի ~ 900-ի[14]:— *Առաջին թիվը Րաֆֆին վերցրել է Զենոբի պատմությունից. «բայց զի՞նչ են այսքիկ առ վեցհարիւր և քսան գաւառս Հայոց» (Զենոբ, էջ 12—13), երկրորդի աղբյուրը՝ Բուզանդն է.*

եթող զնահապետս մեծամեծս և զատնուտարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարիւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին արքունեանն բազմականաց կարգելոց» (Դ, գլ. Բ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 92—93, «Թիւ նախարարութեանց» գլուխը։

էջ 153, տ. 9. Ամեն մի նախարար ~ իշխանության երկրին։— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին թարգմանաբար օգտագործել է Ինճիճյանի վերլուծությունները՝ բաց թողնելով աղբյուրների վկայությունները՝ Հմմտ. «Առաջին իշխանութիւն նախարարաց էր և ի վերայ բնակչաց երկրին որ սեփական էր նոցա», «Երկրորդ իշխանութիւն նախարարաց էր և ի վերայ բնակչաց երկրին իւրեանց...», «Երկրորդ իշխանութիւն նախարարաց էր ի վերայ զօրաց իւրեանց, իւրաքանչիւրոց ունելով իւր առանձին զօրս», «Իսկ սակս պարտականութեան գործոյ նախարարաց առ թագաւորն՝ այսչափ ինչ գտանեմք յիշատակեալ ի գիրս Առաջին՝ տալ զօրս արքայի ի ժամանակս պատերազմի... իւրաքանչիւր ի նախարարաց փոյթ կալեալ զերկիր իւր միայն պաշտպանել», «Երկրորդ՝ զի իւրաքանչիւր նախարար պատասխատէր պարտական էր տալ հարկս արքայի» (Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 87—88)։ Նախարարների մասին մնացած տեղեկությունները ևս շարադրված են ըստ Ինճիճյանի։*

էջ 153, տ. 17. Արտաշես Բ-ը առաջինը ~ դիվանագրերի մեջ[16]։— *Տե՛ս Խորենացու պատմության «Թէ որպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհս, և սահմանս հաստատեաց» գլուխը (Բ, գլ. ԾԶ)։*

էջ 153, տ. 20. Իսկ Տրդատ մեծը ուղղեց ~ վերաբերությամբ[17]։ ~ մի քանի գավառների։— *Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է և Ղ. Ինճիճյանի վերլուծությունները. «Եւ ի գնդուորական կողմանէն՝ զչորեսին զահերէցս իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կային. զառաջին սահմանակալն ՚ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մազքթաց կողմանէն» (Ագաթ., էջ 484, 486)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 74, 75, «Բդեշխք չորք» և «Սահմանակալք» գլուխները։*

էջ 153, տ. 26. Նախարարական տներից ~ պալատական ծառայություններ[22],— *Պատմիչների վկայությունները և դրանց վերլուծությունը տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 72—73, 96—98, 135—139, 145, «Երկրորդ թագաւորութեան», «Պաշտօն Բագրատունեաց», «Մարդպետական», «Պատիւ և իշխանութիւն Մամիկոնեանց» գլուխները։ Նախարարական մնացած տներից՝ թագավորի* թիկնապահի պաշտոնը *վարում էին Մաղխազունիները և Խորխոռունիները,* արծվեկիրի *պաշտոնը՝ Արծրունիները,* համբարակապետի *պաշտոնը՝ Գաբեղեն տոհմը,* «արքայի զգեստապահներ»՝ *Գնթունիներն էին,* տակառապետի *պաշտոնը վարում էին Գնունիները,* ռոստպետի *պաշտոնը՝ Վարաժնունիները և այլն (անդ, էջ 67—72, 196—197)։*

էջ 153, տ. 37. Իշխում էր տոհմի ավագը, որ կոչվում էր նահապետ կամ տանուտեր։— *Սույն հատվածը Ինճիճյանի տեքստի թարգմանական վերաշարադրանքն է. «Իւրաքանչիւր նախարարական տոհմի գլխաւորն որպէս կոչէր Տանուտէր, նոյնպէս կոչէր և Նահապետ», «Տէր և Տանուտէր. Այսպէս կոչէր նա՝ որ գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութեան» (Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 78, 79—80)։*

էջ 154, տ. 8. Տրդատի վախճանվելուց ~ միմյանց ցեղեր[23]:— *Այս մասին պատմում են Բուզանդը և Խորենացին։ Րաֆֆին հետևել է Խորենացու տարբերակին։ Հմմտ. «Ի ժամանակի վախճանին Տրդատայ... յարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմիմեանս. ուստի և երեք տոհմքն, որ Բզնունեանն և Մանաւազեանն և Որդունին անուանէին, սպառեալ բարձան ի միմեանց» (Բ, գլ. Բ)։*

էջ 154, տ. 14. Արարատը, որպես արքայական կալվածք.— *Աղբյուրը Ինճիճյանի վերլուծական տեքստն է. «Յայսմանէ Կալուած Թագաւորաց կոչի տունն Այրարատ» (Ստորագրութիւն, էջ 379)։*

էջ 154, տ. 15. Արարատում բնակվում էր թագավորը և թագաժառանգը ~ Դա Արշակունիների մեջ օրենք էր[24]: ~ Հաշտենից, Աղիովտի և Առբերանի ~ նոր հողեր էին խնդրում[25]:— *Այս օրենքի մասին վկայում է Խորենացին մի քանի անգամ։ Պատումի սույն հատվածի համար հմմտ. «Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ Թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանոյ, հանդերձ ռոճիկ և թոշակ յարքունուստ» (Գ, գլ. ԻԲ)։ Ըստ Խորենացու, օրենքն հաստատել էր Վաղարշակ Ա-ն, քանի որ շատ ուստրեր և դուստրեր ուներ. «Եւ եղև այս յայնմհետէ և այսպայ օրէնք ի մէջ Արշակունեաց, միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլոց ուստերաց և դստերաց գնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն» (Բ, գլ. Ը, նաև գլ. ԻԲ, ԿԱ)։ Արքայորդիների բողոքի մասին պատմվում է երկրորդ գրքի ԿԲ գլխում. «Եկեալ առ նա կանխագոյն խռով ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից աւանն. «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»։*

էջ 155, տ. 1. Արշակունի թագավորազններից ~ Գնելը ~ զոհ դարձավ[26]—*Տե՛ս Խոր. Գ, գլ. ԻԱ-ԻԴ, Բուզ. Դ, գլ. ԺԱ, ԺԵ։ Րաֆֆին հետևում է Խորենացու պատումին։ Հմմտ. «Իսկ Գնէլ եկեալ յաւանն Կուաշ, որ յոտին Արագածն կոչեցեալ լերինն...» (Գ, գլ. ԻԲ)։*

էջ 156, տ. 1. Տրդատ մեծի որդի Խոսրով փոքրը ~ Հեշտային բազմաթիվ գերիների հետ տարագրեց Աղձնիքից[28]:— *Րաֆֆին քաղվածաբար օգտագործել է Խորենացու տեքստը. «Թագաւորեաց Խոսրով, ոչ ինչ արութիւն քաջութեան ցուցեալ որպէս հայրն», «Զի թէպէտ էր մարմնով փոքր» (Գ, գլ. Ը), «Երթեալ Մանաճիհր... ճակատ տուեալ ընդ Բակուր բդեշխի՝ սատակէ զնա... և զորդին Բակրոյ զՀեշտայ ձերբակալ արարեալ՝ հանդերձ երկաթի կապանօք առաքէ Խոսրովու. և զգաւառս իշխանութեան նորա սրով դատի յանխնայ ոչ միայն զմարտիկս, այլ և զռամիկ շինականս. և բազում գերիս առեալ...» (Գ, գլ. Է)։ Րաֆֆին Խոսրովի այս արարքը* խիստ *է գնահատում «ռամիկ շինականներին» կոտորել տալու պատճառով. Խորենացու տեքստում* խիստ-ի *համարժեքը «սրով դատի յանխնայ» շարույթն է։ Այս դեպքը այլ վերջաբանով պատմում է նաև Բուզանդը (Գ, գլ. Թ)։*

էջ 156, տ. 9. Նա թագավորեց 9 տարի ~ նրանից չհնազանդ[29]:— *Հաշվարկի հիմքը Ջամչյանցի ժամանակագրությունն է, ըստ որի Խոսրով Բ Փոքրը (Կոտակ) իշխել է 344—353 թթ.։ Խոսրովի օրենքի մասին վկայում է Բուզանդը. «և նա դնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին» (Գ, գլ. Ը)։*

Էջ 156, տ. 14. Խոսրովը Երասխի ~ յուր հետ մնաց[30]:— *Խոսրովի անկած անտառների մասին վկայում են Խորենացին և Բուզանդը։ Րաֆֆին օգտագործել է այդ վկայությունների հետևյալ հատվածները. «անտառ առ Ազատ գետովն տնկէ», «նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յառ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր» (Խոր. Գ, գլ. Ը), «Եւ ետ հրաման թագաւորն... բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յայրարատեան դաշտին» «և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ», «և ապա զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զբազարդարման, զի լիցին նոցա անդրբ որսոց ուրախութեան թագաւորութեան նորա», «զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին։ Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի» (Բուզ. Գ, գլ. Ը)։* Տիկնունի *ապարանքը, ըստ Բուզանդի տեքստի, անտառները տնկելու ժամանակ արդեն գոյություն ուներ, Րաֆֆին դրա կառուցումը վերագրում է Խոսրովին, որպես նրա «քաղաքագիտության» արդյունք (նախարարներին քաղաքական կյանքից հեռու պահելը զվարճությունների միջոցով) և ըստ այդմ ստուգաբանում է անվանումը (Տիկնունի=գեղեցիկ տիկինների դրախտ), որն էլ դառնում է պատումի զարգացման հիմք։*

Էջ 156, տ. 27. Տիրան Բ-ը ~ կոտորել տվեց ~ Շավասպ և Տաճատ[31]։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Զբազումս ի նախարարաց նա բառնեալ կոտորել... Մանաւանդ առելի զերկու տոհմսն զաւագս տայր խրովլ չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անուանել զանուն միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց... Յայնժամ ժամանակի ի դայթակղի զաւակին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհրնդակայ ռշտունւոյ. և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի արծրունւոյ... տայր հրաման հանել փողոտել զմանկունսն... Եւ անդ գիտեալ Արտաւազդ և Վասակ, որք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ ի գուրս գնացին. զլեն ի վեր առեալք կոտոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանելոց» (Գ, գլ. ԺԸ)։*

Էջ 156, տ. 33. Տիրանը այդ ներքին կռիվը ~ կառավարել եղավ—11 տարի:—11 տարի — *Հաշվարկի հիմքը Չամչյանցի ժամանակագրությունն է, ըստ որի Տիրան Բ-ն իշխել է 353—363 թթ., ընդ որում ժամանակագրական աղյուսակում Չամչյանցը Տիրանի թագավորության տարիները հաշվում է 11 տարի. «Տիրան Բ. ԺԱ» (Չամչ., Գ, Ժամանակագրութիւն, էջ 52), իսկ թագավորների դասակարգված ցանկում երկու թիվ է դնում. «Տիրան Բ. որդի Խոսրովու. ԺԱ կամ Ժ» (անդ, էջ 106)։ Րաֆֆին ընտրել է առաջինը։*

Էջ 157, տ. 12. Այդ նպատակով հիմնեց ~ Ռամն խազար երդ բնակիչներ[33]:— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին համադրել է Բուզանդի և Խորենացու տեքստերը Արշակավանի շինության և բնակեցման մասին. «Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ» (Խոր. Գ, գլ. ԻԷ), «շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի», «Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաստակերտին յիւրակից անունն Արշակաւան», «Եւ ետ հրաման... զի եթէ որ ունէր ինչ պարտիցի, եթէ որ ուրուք ուսոէր ինչ վնասեալ իցէ, կամ որ ունէր ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին», «ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդկոյգք, վնասակարք, դանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք» (Բուզ. Դ, գլ. ԺԲ), «Եւ նոյն ժամանակին ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն» (Խոր., նույն տեղում),*

«Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն ամենայն» (Բուզ., նույն տեղում)։

Ըստ հազար Երդ բնակիչներ — *Թիվը հաղորդում է Բուզանդը. «քան զքսան հազարս ստատկեցաւ, երդք մարդկան, ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի» (Դ, գլ. ԺԳ)։*

էջ 158, տ. 1. Կուցե Արշակը ∼ Կովկասյան լեռները։— *Աղբյուրը Խորենացու տեքստն է. «Եւ բազում անգամ բողոքեալ նախարարացն՝ և ոչ ինչ լուաւ նոցա Արշակ. մինչև առ Շապուհ ես ունել նոցա բողոք։ Եւ եղև ի դառնալն Շապհոյ ի Յունաց՝ առաքեաց զմի ի սպարապետաց իւրոց և հայ զունդ ընդ նմա, եթէ դէպ լինի, ունել զԱրշակ. և նա խոյս ետ ի նոցանէ ղկողմամբք Կաւկասու» (Դ, գլ. ԻԷ)։*

էջ 158, տ. 11. Այդ ժամանակ նախարարները ∼ մի մասը միայն[35]— *Ըստ Բուզանդի Արշակավանը կործանվեց Ներսես Մեծի անեծքից. Րաֆֆին հետևում է Խորենացու տարբերակին. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացայ» (Դ, գլ. ԻԷ)։*

էջ 158, տ. 15. Արշակը վերադարձավ ∼ հույնը, պարսիկը և յուր նախարարները — *Աղբյուրը Խորենացու պատմության տեքստն է. «Բայց Արշակայ եկեալ Վրացի զընդաւ՝ ժողովէ զսակաւս և յիր մտերմաց, և տայ պատերազմ ընդ նախարարսն ընդ այնոսիկ, խնդրելով զվրէժ ձեռնակերտին իւրոյ Արշակաւանու։ ...Եւ մինչ դեռ նոքա յայսմ էին, հասանեն և զօրքն կայսերականք։ Այլա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա Շապուհ և Վաղէս և իւր նախարարքն, տարակուսեալ յամենեցունց՝ յղէ առ մեծն Ներսէս բազում անգամ աղաչելով» (Դ, գլ. ԻԹ)։ Ձակերտներում դրված հատվածը Խորենացու տեքստի թարգմանությունն է։ Հմմտ. «Իսկ այլ ամենայն նախարարքն հաստատեցին ուխտ զի յայնմ հետէ թագաւորն վարեսցի ուղղութեամբ, և նոքա ծառայեսցեն միամտութեամբ» (Նույն տեղում)։*

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ, ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 159, տ. 29. Պապը յուր սեղանի վրա ∼ զանն էր բարձրացել[7]։— *Ներսես Մեծի մահվան մասին պատմում են Խորենացին և Բուզանդը։ Րաֆֆին օգտագործում է Բուզանդի տեքստը. «Եւ կոչեցաւ յապարանս իւր... արար նման ընթրիս... և գեղ մահու ընդ կտակնդ խառնեալ մատուցանէր նմա» (Ե, գլ. ԻԴ)։ Ներսես Մեծի «բազմաչան աշխատության» մասին Պապին թագավորեցնելու համար վկայում է Խորենացին (Դ, գլ. ԼԶ)։*

էջ 160, տ. 1. Խոսրովի հրամանով Մանաճիհր Ռշտունին Հակոբ Մծբնա հայրապետի ∼ իշխանի անզթությունը[8]։— *Հակոբ Մծբնա հայրապետը, ըստ տարբեր վարկածությունների, ազգությամբ պարթև էր, Գրիգոր Լուսավորչի ազգականը։ Նրա անունով պահպանվել է «Գիրք որ կոչի Զգօն արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս սիովնիս» (Կոստանդնուպոլիս, 1824) դավանաբանական ճառերի ժողովածուն։ Նրա սարկավագների նահատակությունը նկարագրում են Խորենացին և Բուզանդը։ Րաֆֆին տվյալ դեպքում համադրում է երկու պատմիչների տեքստերը. «Եւ Յակոբու դէմ եղեալ առ արքայ, առաւել ևս զչարի Մանաճիհր, և ի սպրելոյ զպատառականացն*

զութեսին սարկաւագունս նորա, որք ի կալանս էին, հրամայէ ի ծով ընկենուլ» (Խոր. Գ, գլ. Է), և առ ափն Ընձարիճայ լերինն ի ծովեզերն Ռշտունեաց ծովուն։ Ընձակա լեռ Բուզանդի Ընձարիճարի նոր անունն է (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 165—166)։ Ռշտունյաց ծովը՝ Վանա ծովի անունն է, Ռշտունիքի կողմից։ Հակոբ Մծբնա հայրապետի մասին ավանդությունները Րաֆֆին մանրամասնորեն մշակել է «Կայծեր» վեպի երկրորդ հատորում (Թիֆլիս, 1887, էջ 467—468)։ Հղված հատվածում տրվում է «Սամվելի» սույն գլխի համառոտված տարբերակը։ Հմմտ. «Այստեղից էր Մանաճիհր (Մանուչահր) բուշ նահապետը, որ Տրդատի և նրա որդի Խոսրովի ժամանակ հարավային զորքերի սպարապետ էր։ Այդ նահապետի օրերում ավելի սաստկացել էր այն խուլ կռիվը, որ սկսվեցավ Լուսավորչի ժամանակից և տևեց մինչև նրա վերջին ժառանգի՝ Սահակ պարթևի օրերը։— Դա նոր հաստատվող քահանայապետական և նախարարական իշխանության կռիվն էր, մի կողմից, և մարմնավոր իշխանության կռիվն էր, մյուս կողմից։ Հոգևոր իշխանությունը, հոգևոր ազատությամբ, աշխատում էր իրավունքներ, արտոնություններ, կալվածքներ ձեռք բերել, և սահմանափակել թե՛ թագավորի, թե՛ նրա նախարարների իշխանությունը։ Այստեղից ծագեց կռիվը։ Նրա սկիզբը դրեց Լուսավորիչը։ Եվ այդ կռվի մեջ զոհ գնացին թե՛ ինքը Լուսավորիչը և թե՛ նրա բոլոր ժառանգները՝ Արիստակեսը, Վրթանեսը, Հուսիկը, Ներսես մեծը և Սահակը»։

էջ 160, տ. 5. Տիրանը խնդրել տվեց ~ աշակերտներից մեկն էր[9]:— Այս դեպքը ընդարձակորեն պատմում է Բուզանդը (Գ, գլ. ԺԴ), համառոտ՝ Խորենացին և այլ պատմիչներ։ Հմմտ. «Եւ յետ կատարման նորա թշնամանեալ անիծիւր Տիրան ի ծերունւոյ քահանայէն Դանիէլէ, որ աշակերտ էր սրբոյն Գրիգորի և հիպերետ, հրամայեաց զնա խեղդամահ առնել» (Խոր. Գ, գլ. ԺԴ)։

էջ 160, տ. 7. Արշակը հրամայեց ~ գնացած ժամանակ[10]:— Այս հատվածը կառուցված է Խորենացու և Բուզանդի տեքստերի զուգորդությամբ. «Սոյա եպիսկոպոսութեան Ներսէս յորժամ երթայր յաղէկնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խադ յեպիսկոպոսութիւն Բագրեւանդայ և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ տեղապահ, և գնաց», «ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի» (Բուզ. Դ, գլ. ԺԲ), «սկսաւ կշտամբել վարքոյ բանիւք յանդիմանութեան։ Հրամայեաց Արշակ քարշել զնա և քարկոծել» (Խոր. Դ, գլ. ԼԲ)։

էջ 161, տ. 2. Նրանց գլխավոր ջանքը եղավ ~ պատրաստելու համար:— Րաֆֆին օգտագործել է Ինճիճյանի վերլուծական տեքստը և մեջբերված վկայությունները։ Հմմտ. «առաջին գործ սրբոյն Գրիգորի յետ քարոզութեան՝ եղև քանդել նորա զմեհեանս կռոց ...Իսկ երկրորդ գործ սրբոյն եղև փոխանակ մեհենիցն բազմացուցանել եկեղեցիս», «Աստի սկսեալ ապա սուրբն Գրիգոր «ընդ ամենայն տեղիս և ընդ ամենայն գաւառս շրջէր յաւանս և յագարակս, շինէր եկեղեցիս, և առնէր մկրտութիւնս, և կացուցանէր քահանայս». որպէս գրէ Ագաթանգեղոս ի ճկե. իսկ ի ճհզ. ասէ. «Եւ երանելոյն Գրիգորի զվարդապետութիւն իւր ի գործ արկեալ... հասանել նմա բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց մեծութեան գաւառս և ի կողմանս, ի քաղաքս, յաւանս և ի շէնս, ի գիւղս, յագարակս» (Հնախօսութիւն, հ. Գ, էջ 192)։

էջ 161, տ. 19. Տրդատը յուր պետության մեջ ~ սեփականություն եկեղեցու:— Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է. «Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւ-

րում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն» (Ագաթ., էջ 466)։

էջ 161, տ. 32. Տարոնի նահանգում Գլակը ~ բայց նոքեար նախարարություն:— Րաֆֆու տեքստում կիրառված են Զենոբի պատմության տեքստը և Ղ. Ինճիճյանի վերլուծությունները. «Զենոբայ Գլակայ ասորւոյ եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ» (Զենոբ, էջ 7), «Իբրև հիմնարկեաց սուրբն Գրիգոր զեկեղեցին, և եդ անդ զնշխարսն, և կանգնեաց անդ փայտեայ նշան տէրունական խաչին ի դուռն եկեղեցւոյն և ի տեղի կռոցըն», «և եթող ի տեղւոջն արս կրօնաւորս քառասուն և երիս, և երկոտասան դաստակերտըս ետ նմա, զի տեղեաց ծառայեսցեն։ ...Քանզի աւանք են սորա մեծամեծք, որպէս կայ ի գրի իշխանացն մամիկոնենից» (նույն, էջ 57)։ Գյուղերի անունները և թվանշանները Րաֆֆին գրել է ըստ Ինճիճյանի նախընտրած տարբերակների (հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 106—107)։ Բազում ավանագյուղի տվյալները վերցված են Զենոբի տեքստից անմիջականորեն. «Իսկ Բագուն (տողատակին՝ Բազում) ...ծուխս երեք հազար և երկու հարեւր, և հեծեալս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս ութհարեւր և քառասուն. և տիգաւորս վեցհարեւր և ութսուն. և պարսաւորս երկերեւր և ութսունս»։

էջ 163, տ. 22. Ներսես Մեծը: Նրա հիմնած վանքերի թիվը ~ հասնում էր 2040-ի[15]:— Աղբյուրը Մեսրոպ երեցի վկայությունն է Ղ. Ինճիճյանի վերապատմությամբ. «Եպիսկոպոսանոցք. Եղբայրանոցք. Մեսրոպ միանգամայն յիշեալ զերկոսին զոսա թուով 2040. շինեալ ասէ ի մեծէն Ներսիսէ» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 357)։ Րաֆֆին, փաստի հավաստիությունը պահպանելու նպատակով, Մեսրոպ երեցին տեղափոխում է Ներսես Մեծի ժամանակները («ըստ ժամանակակից պատմագրի վկայության»). Մեսրոպ երեցը ապրել է 10-րդ դարում։ Ըստ երևույթին, Րաֆֆին ընկատի է առել Չամչյանցի դիտողությունը Մեսրոպի վարքագրության մասին. «օրինակեալ է գրեթէ բառ առ բառ ի գրոցն Բուզանդայ» (հ. Ա, էջ 15)։ Բուզանդի տեքստում, սակայն, այս թիվը վկայված չէ։

էջ 163, տ. 29. Բազմացնելով վանքերի թիվը ~ հասնում էր 1020-ի, բացի այլ աստիճանի եկեղեցականներից[16]:— Աղբյուրը Բուզանդի և Մեսրոպ երեցի վկայություններն են Ղ. Ինճիճյանի շարադրությամբ. «Բազմացոյց զկարգս պաշտօնէից յամենայն տեղիս իշխանութեան ի սահմանացն Հայոց. և յամենայն տեղիս իշխանութեան ի սահմանացն Հայոց. և յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս». և 21։ Զորոց զթիւ նշանագրէ Մեսրոպ հազար քսան» (Հնախօսութիւն, հ. Գ, էջ 261)։

էջ 164, տ. 5. Աղքատանոցներ, որոնց մեջ ~ օթևան գտներ[18]: ~ կողմերում տարածված էին[19]:— Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտվել է Բուզանդի, Խորենացու և Մեսրոպ երեցի վկայություններից, որոնք համադրաբար վերլուծում է Ղ. Ինճիճյանը (տե՛ս Հնախօսութիւն, հ. Բ, էջ 354—356)։

էջ 164, տ. 23. Չկար այդ ժամանակ մի աղքատ ~ հասարակաց սեղանից: ~ բոլորին վերջ տվեց սուրբ Ներսեսը :— Տեքստի այս հատվածը կառուցված է ըստ Բուզանդի և Մեսրոպ երեցի վկայությունների, որ Րաֆֆին քաղել է Ղ. Ինճիճյանի տեքստից՝ օգտագործելով նաև նրա մեկնությունները։ Հմմտ. «ըստ ասելոյ Նորին Բուզանդայ. «Յաժմուն Ներսիսի զաղքատս բնաւ ամենևին ի մուր ոչ տեսանէր ընդ ամենայն սահմանսն Հայոց.

այլ անգղն ի հանգստեան նոցին, այսինքն յօրհանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն ոփտոյս նոցա. անգղն իսկ անկարօտ յամենայն ումեքէ լցեալ էին» և. 31։ Այս է զոր համառօտի ծանուցանել կամի Խորենացին յասելն վասն ազգատանցաց, թէ կարգեաց, զի յարգեսցեն երկրի «զպաշտեսցեն զնոսա հարկաւ բացել ի բաց. և նոքա մի եղիցին ըստ բնակութեան խրեանց» գ. 20. այսինքն մի եղիցին ազգատար արտաքս քան զբնակութիւն խրեանց մոռանալոյ ազգաց։ Այսմ զհետ զայր և այլ ինն բարեկարգութիւն գեղեցիկ, որ էր բարձումն յաշխարհէս արանց անուղղայից և ստահակաց. զոր և ծանուցանէ Մեսրոպ յասելն մը. «Ոչ որ տեսանէր յաշխարհիս Հայոց մուրացիկ երևել յաւուրս Ներսիսի, անուղղայս, անօրէնս և ստահակս (իմա պատարկաշրջիկ ըստ հաճոյս) յերկրիս Հայոց ի բազում ժամանակաց, զոր եբարձ սուրբն Ներսէս (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 354)։ Ինճիճյանի դիտողությունը Խորենացու տեքստի մասին հիմք է դարձել, որ Րաֆֆին Բուզանդի յօրհանոցսն (օրհանոցներում) բառը թարգմանի աղքատանոցներում, բայց և գրել է փակագծերում՝ որպես հավելում իր կողմից։ Մեսրոպ երեցի տեքստը թարգմանելիս Րաֆֆին ուղղակիորեն օգտագործել է Ինճիճյանի բացատրական հատվածը՝ «իմա պատարկաշրջիկ ըստ հաճոյս» մասնակի բառի փոխարեն։ «Յերկրիս Հայոց ի բազում ժամանակաց» հատվածը Րաֆֆին թարգմանել է երկրորդական նախադասությամբ («Որ Հայոց երկրում կային») վերարտադրելով այն մարդիկ բառին, որը սխալ է, այդ հատվածը «Ոչ որ տեսանէր» շարույթի լրացումն է (Ոչ որ տեսանէր... յերկրիս Հայոց ի բազում ժամանակաց — Շատ ժամանակներից ի վեր ոչ որ Հայոց երկրում չէր տեսնում)։

էջ 165, տ. 4. Նախ ինքն էր անում ~ կարգվեցան ռոճիկներ: Այրիներին, որբերին ~ հանգստություն էին վայելում[22]:— *Աղբյուրը Բուզանդի 4-րդ դպրության Դ գլխի «Նախ ինքն առնէր ~ և ռոճիկս» հատվածն է, որից Րաֆֆին բաց է թողել «ի կոյս ~ պատուցանել» շարույթը և նույն գլխի «Այրեաց և որբոց և չքաւորաց ~ հանգուցեալք դադարէին» հատվածը։ Թարգմանելիս Րաֆֆին որոշ վերադասավորություններ է կատարել։*

էջ 165, տ. 35. Արդեն Աշտիշատի ընդհանրական ժողովում[23]—*Աշտիշատի ժողովը տեղի է ունեցել 365 թ. (ըստ Չամչյանցի)։*

էջ 166, տ. 6. Ժամանակակից պատմագիրը, Փավստոս Բյուզանդացին ~ մի կարգ» (ուխտ)[24]։— *Թարգմանված է Բուզանդի տեքստի հետևյալ հատվածը. «Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի» (Բուզ. Դ, գլ. Դ)։*

էջ 166, տ. 11. Մեսրոպ Երեցը ~ երկյուղի ետևից»[25]:— *Մեսրոպ երեցի տեքստը Րաֆֆին վերցրել է Ղ. Ինճիճյանի գրքից. «Յետ յիշելոյ Մեսրոպայ զայս ամենայն, ասէ. «Եւ լինէր ամենայն Հայք իբրև զմի կատարեալ անձն, երթեալ զհետ երկիւղին Աստուծոյ յաւուրս մեծին Ներսէսի» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 357)։*

էջ 166, տ. 24. այլ միայն ողորմածության գաղափարով ոգևորված, մեծ հայրապետը — *Հմմտ. «Կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլեալ և զանգթութեան արմատս» (Խոր. Գ, գլ. Ի)։*

էջ 167, տ. 7. Բացի այդ նորերից ~ առանձին տասանորդ երկրի բոլոր մշակություններից:— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ զկարգ պտղոյն և զտասանորդացն՝ որ*

ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի որ տացէ» (Ե, գլ. ԼԱ)։

էջ 167, տ. 21. Երբ Վաչե Մամիկոնյանը ~ Բասենու եպիսկոպոս[29]։— *Այս անգամ Րաֆֆին մշակում է նույն գրքի փավստոսյան պատումը, քանի որ տվյալ գլխում նրա միտումին համապատասխանում են այնտեղ նշված տեղեկությունները։ Հմմտ. «Ապա Երթեալ հասանէր ի վերայ նոցա զօրավարն Վաչէ. հարկանէր վանէր զազգս երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ մի. և ինքն դառնայր առ արքայն Խոսրով թագաւորն Հայոց... Եւ ետ զաւանն և զբուն գահոյից գեւղն նահապետին մանկացննից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զմանաւազակերտ ամենայն սահմանօքն և դաստակերտն հանդերձ՝ որ շուրջ զնովօք էր... և ետուն զբուն գեւղն Որդունոց, որոյ անուն էր Որդորու. ուստի եպիսկոպոս Բասենոյ ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է երկրին Բասենոյ» (Բուզ. Գ, գլ. Դ)։*

էջ 169, տ. 33. Մի անգամ ~ սպանեցին կաթողիկոսին[32]: *Հմմտ. «Եւ իբրև օր մի յաւուրց տարեկան, զիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանեօքն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հի՞մ գաս, մի գար ի ներքս։ Վասն որոյ անդէն ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոյն, բրածեծ եղեալ ջաղջախեալ քահանայապետն աստուծոյ սուրբ, երանելի մանուկն Յուսիկ» (Բուզ. Գ, գլ. ԺԲ)։*

էջ 170, տ. 12. Պապ թագավորը ~ կուռք պաշտել[38]:— *Աղբյուրը Բուզանդի պատմության ԼԱ գլուխն է, որից տեսնում ենք մեզ հետևյալ հատվածները. «Իսկ թագաւորն Պապ զի թէպէտ և սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ հագեաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ի Ներսիսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծանէ և խանգարեսցէ», «սկսաւ հրաման տալ աւերել զայրեանոցն և զորբանոցն... և աւերել զկուսաստանն... և զկուսանսն հաստատեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան», «Աղքատքն բայց ելէք ի մուր ելցեն. այլ անդր որ ինչ մի իշխեսցէ տանել», «Զվերակացուսն հալածէր թագաւորն յիւրաքանչիւր տեղւոյն, և զտեղիսն ի բաց աւերէր», «զկարգ պտղոյն և տասանորդացն՝ որ ի նախնեաց կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի որ տացէ», «Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհօղ եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ... Զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս։ Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գեղ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն», «ամենայն մարդ առին հրաման համարձակութեամբ ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս իւրեանց. Էր զի մի այր տասն կին փոխէր», «բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ... բազում պատկերս կանգնեալ, երկիր պագանէին» (Բուզ. Ե, գլ. ԼԱ)։*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԱՐԵՐՔԸ

էջ 171, տ. 20. Մի նամակի մեջ ~ ձեզանից հետո կհաջորդեն[1]:— *Րաֆֆին թարգմանաբար օգտագործել է Զենոբի պատմության հետևյալ հատվածը. «Մանաւանդ զի գիտէիր, եթէ ամենայն գաւառացս եպիսկոպոսս սիրով են և քահանայք Զի թէպէտ ոմանք,*

որք ուստեք ուստեք եկեալ են ժողովեալ, բայց զի՞նչ են այսոքիկ առ վեցհարեւր և քսան զաւառս Հայոց. որ և զաւառին մէն մի քահանայ կամ երկու լուկ թէ հանդիպի։ Զի գեօ մանկունք երկրիս ի զգրոց են, և ոչ որ ի նոցանէ բաւական քահանայութեան», «Այգ աղաչեմք զձեզ, ի մէնջ մի վերջանայք. այլ ամենայն վստահութեամբ փութացարուք զալ զկնի արանցդ, զոր յղեցաք առ ձեզ։ Եւ եթէ զայցէք, զամենայն երկիրդ Եկեղեաց և Հարքայ ձեր առաջի առնեմք. յոր վիճակ և ընտրեսջիք՝ ձեր եղիցի և որք զկնի ձեր» (Զենոբ, էջ 12—13)։ «Եւ որք զկնի ձերս» շարույթը Րաֆֆին թարգմանել է բավական ընդարձակ, ըստ իր միտումի. «և կժառանգեն նրանք, որ ձեզանից հետո կհաջորդեն»։

էջ 172, տ. 9. Լուսավորիչը դեռ ~ մինչև 400 եպիսկոպոսներ, ի բաց առեալ երեցները և վարդապետները[2]:— *Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է. «Եւ բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն զաւառս Հայոց իշխանութեան իւրոյ. և որ յառաջին եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց։ Իսկ կարգք երիցանց կամ սարկաւագաց կամ անագնոստաց, և որ այլ եւս ի պաշտօն Տեառն կացին՝ անթիւ էին բազմութենէն» (Ագաթ. էջ 476)։*

էջ 172, տ. 17. Որպես երևում է վերևի նամակից ~ երբ դպրոցները դեռ նոր էին հիմնվում[3]: — *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 81—82, «Դպրոցք և տեղիք ուսանելոյ ի Հայաստան և արտաքոյ յորս ցրուեալ կային Հայք» գլուխը։*

էջ 172, տ. 24. Բնիկներից փոքր ի շատե ~ 12 եպիսկոպոսների անուններ միայն հայտնի են Քուրմերի որդիներից ~ նշանավոր եղավ Աղբիանոսը[4]:— *Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է. «Եւ զամանս յորոց քրմացն առեալ իւր՝ զառաջեաւ ածեալ ձեռնասունս առնէր, փոյթ ունեւր ի վերայ ունէր՝ ընդ հոգեոր խնամով և երկիւղիւ սնուցանել։ Որ յառաջին եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ. որոց առաջնոյն՝ Աղբիանոս անուն... երկոտասաներորդն՝ Կիւրակոս Այսր՝ որ յորդւոց քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսք կողմանց կողմանց, աճեցուցանել զբարեպաշտութիւնն» (Ագաթ., էջ 470)։*

էջ 172, տ. 32. Իսկ դեռ Լուսավորչից առաջ Հայաստանում պահված քրիստոնեություն կար ~ պաշտոն վարելու[5]:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 182—189, «Առաջին քարոզութիւն յաւուրս Աբգարու» գլուխը, Չամչեանց, Ա, էջ 583—587, նաև՝ Ալիշան, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1901, Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, Հոռի Ժ և Սեպտեմբերի ԺԹ, Տրէի Լ և Դեկտեմբերի Ը, Քաղոցի ԺԵ և Դեկտեմբերի ԻԳ, Քաղոցի ԻԴ և Դեկտեմբերի ԼԱ։*

էջ 173, տ. 5. որ դարերից վերջը, երբ հարկավոր եղավ հեռացնել նրանց մեծ դժվարությամբ կարողացան իրանց տեղից շարժել[6]:— *Ակնարկը Գլակա վանքի Թողիկ առաջնորդի մասին է, որը 7-րդ դարի սկզբին վտարեց սարի հեթանոսականներին իր թեմի վանքերից. «ամենքեան սարքք էին, և տունն այն սարի զրով և պաշտամամբ է վարեալ, մինչև Թողիկ փոխեաց զամենայն կարգս և զաստրոց ցեղսն ընաւ հալածական արար ի վանացն» (Հովհ. Մամիկոնյան, Եր., 1941, էջ 287)։*

էջ 173, տ. 23. Զենոբ Գլակը, ազգով ասորի ~ պետերին[8]:— *Համտ. «Բայց դուք եթէ զալ կամիք յերկիրս յայս, բարի է յերկիրս և վայրք, անուշօդ և բազմաջուր զաշ-*

տանձն և շուրջ զկերամբքս բազում ամբոցը, երկիրս խոտաբեր և մեղրաբուխ. և որպէս մանանայն, որ յերկնիցն իջանէր, սոսա առ հրեայսն նոյնպէս և աստ ի մերում երկրիս ի վերայ անտառացս իջանէ քաղցր բան զմեղր, որ կոչի զաղապէն... իսկ այս ամենայն բարութեամբ լցեալ, իսկ այս երկիրս լի է և աչաղակ և առողջ։ Իշխանքս կրօնաւորք և ի չարեաց սուրբ և աղքատասէրք և որբոց խնամածուք վերակացուք եկեղեցեաց և տեսուչք ամենեցունց» (Զենոբ, էջ 12)։ Վերջին շարույթը Րաֆֆին թարգմանել է հիմք ընդունելով արտահայտության ընդհանուր իմաստը։

էջ 174, տ. 33. **Ծառայողների և զանազան պաշտոնակալների ~ Դրան Երեց և այլն**[10]։— *Րաֆֆին թարգմանաբար օգտագործել է Ղ. Ինճիճյանի «Հնախօսութեան» (հ. Բ, էջ 273—275) «Պաշտօնեայք կաթողիկոսարանին» գլխի հետևյալ հատվածները. «քանզի էին ի ներքնի հայրապետին ի տան խրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր գործակիցք և խորհրդակիցք» (Բուզ. Զ, գլ. Ե), «Մատթէոս ի թիւն ճժէ, պատմելով զհանդերձանս և զփառաւորութիւն տան կաթողիկոսարանին՝ ասէ. «երկոտասան եպիսկոպոսս և չորս վարդապետս ի տան հայրապետին անպակաս լինէր, և վաթսուն երէց ի կրօնաւորաց, և յաշխարհականաց հինգ հարիւր»։ «Այլ պաշտոնյաների» մեջ թվարկվածները Ինճիճյանի համապատասխան գլուխների վերնագրերն են. «Սենեկապետ», «Փակակալ», «Վանաց երէց» (Րաֆֆին բաց է թողել՝ մտնում է «և այլն»-ի մեջ), «Դրան եպիսկոպոս», «Դպրապետ», «Հիւրատես» (Րաֆֆին թարգմանել է* հյուրընկալ*), «Աբբեղիական կամ Սարկաւագապետ», «Դրան վարդապետ» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 275—276)։ «Դրան երէց»-ը Ինճիճյանի մոտ նշված է որպես արքունական ծառայություն (տե՛ս Հնախօսութիւն, հ. Բ, էջ 71—72)։ «Վանաց երէց»-ից բացի «և այլն»-ի մեջ է մտնում նաև* բեղակալը *(Բուզ. Զ, գլ. Ե), որի մասին Ինճիճյանը գրում է «անորոշ իմն գոլով՝ զանց արարաք դնել ի կարգին» (անդ, էջ 275)։ Րաֆֆին ևս «ի կարգին» չի դրել այն։*

էջ 175, տ. 7. **Լուսավորչի ժառանգները, Աբրահամի, Իսահակի և Հակոբի նման ~ խաղաղ շրջանում**[11]։— **Աբրահամի, Իսահակի և Հակոբի նման** — *այս շարույթը հաճախադեպ է կիրառում Րաֆֆին։ Հրեական ժողովրդի նահապետների նման թվարկումը սովորական է Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարանների տեքստերում։ Ծննդոց գրքում նրանց կյանքը ներկայացնելուց հետո, հաջորդող գրքերում համարյա միշտ այս երեք անունները հիշվում են միասին և կախված հատկացյալից ստանում են տարբեր իմաստներ։* **Ժողովրդի հայր** *շարույթը Աբրահամ բառի ստուգաբանական իմաստն է, որ տրված է Հին Կտակարանում. «և եղիցես հայր բազմութեան ազգաց. և ոչ կոչեսցի այսուհետև անուն քո Աբրամ. այլ եղիցի անուն քո Աբրահամ. զի հայր բազմաց եդի զքեզ» (Ծննդոց, ԺԷ, 5—6)։*

էջ 175, տ. 11. **Մեծ էր փառքը Հայրապետի ~ բարձր խաչվառը**[12]։— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Մատթեոս Ուռհայեցու, Խորենացու, Վարդան աշխարհագրի և այլոց տեքստերը, որոնք համառոտաբար վերլուծում է Ղ. Ինճիճյանը «Հնախօսութեան» «Ճանապարհորդել և շրջել» գլխում։ Հմմտ. «Վասն ճանապարհորդութեան գետադարձ Պետրոսի կաթողիկոսի յԱնի քաղաքէն ի Կոստանդնուպօլիս այսպիսի գտանեմք յիշատակութիւն առ Մատթէոսի ճր. «Ազատօքն փառաւոր արամբք, երեքհարիւր վառեալ զինուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երամիշտս և կրօնաւոր քահանայս հարիւր և քսան հեծեալս ի ջորւոջ, հետևակ պաշտօնեայս երկերիւր»։ ...Ի շրջելն ոչ լինել օրէն ի ձի հեծանել և ոչ իսկ եպիսկոպոսաց՝ յայտ առնէ պատմութիւն Խադայ առ Խորենացւոյն*

գ. 31. Իսկ ի ջորւոջ հեծանել կաթողիկոսին՝ յայտ առնեն այս բանք Յոհաննու կաթողիկոսի. «Բայց և ես որ զայս գրեցի՝ պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստուք ըստ օրինակի կարգիս. և ջորի պաճուճաբար ոսկեզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ» (Հնախօսութիւն, հ. Բ, էջ 268—269)։

էջ 175, տ. 29. Անակը, Պարսկաստանից գալով ∼ ներկայացուցիչն էր Լուսավորիչը։— *Տե՛ս Ագաթ., էջ 28, 30, 32, խոր. Բ, գլ. ՁԴ։*

էջ 175, տ. 35. Այդ կալվածքների թվում էր Արամնեա ավանը ∼ նրա ժառանգները[14]։— *Աղբյուրը Հովհաննես Դրասխանակերտցու պատմության տեքստն է. «Այս գեղ սեփական էր տան կաթողիկոսարանին՝ նախքան զչարչարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընծայեալ. որոյ և յեկտար վճռանն պահի մինչև ցայսօր ժամանակի, (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 454—456)։*

էջ 176, տ. 2. Թորդանը, Դարանաղեաց գավառում ∼ յուր ժառանգների սուրբ նշխարները[16]։— *Րաֆֆին վերաշարադրում է Ագաթանգեղոսի և Հովհ. Դրասխանակերտցու վկայությունները՝ ըստ Ղ. Ինճիճյանի մեջբերումների և մեկնությունների. «Թորդան... ի ժամանակս քրիստոնէութեան առհասարակ գեօղն կարգեցաւ ի կալուած եկեղեցւոյ «Երթեալ հասանէր (ասէ Ագաթանգեղոս ի Թուղթ յծա) ի Դարանաղեաց գաւառն, զի և անդ զանուանելոց սուտ աստուածոց զբագինսն կործանեսցեն՝ որ էր ի գեօղն, մեհեանն անուանեալ Սպիտակափառ դիցն Բարշամինայ, նախ զնա կործանէին... և զգեօղն ամենայն դաստակերտօքն և գետնովքն իւրովք հանդերձ՝ յանուն եկեղեցւոյ նուիրեալ...»։ Այս գեօղ պանծալի գտաւ՝ լինելով տեղի զբոսանաց սրբոյն Գրիգորի։ «Զողայ (ասէ Յովհաննէս կաթողիկոս) ի գեղն Թորդան ի տեղի զբոսանաց պարտիզականն սրբոյն Գրիգորի... և անդ... հանի նշխար ի ծառոյ անուն հացւոյ՝ զոր սրբոյ լուսաւորչին էր տնկեալ իւրովք ձեռօքն» (Ստորագրութիւն, էջ 6)։ Լուսավորչի տոհմից Թորդանում թաղվեցին Վրթանեսն ու Հուսիկը։*

էջ 176, տ. 11. Սկզբում Րռմայան կալվածք էր և Թիլ ավանը ∼ մի քանիսի շիրիմները[19]։— *Րաֆֆին վերաշարադրում է տարբեր պատմիչների վկայությունները՝ ըստ Ղ. Ինճիճյանի մեջբերումների և մեկնությունների. «Թիլ... Ընդ մէջ սորա և երիզայ անցանէ գետն գայլ» (Ստորագրութիւն, էջ 18). «Քանդէին զՆանէական պատկերն զդստերն Արամազդայ ի Թիլ աւանի», «յԱնահտական մեհենին, յԵրէզն աւանի», «փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն» (Ագաթ. էջ 442), «Հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին Այլ նա ոչ առնոյր յանձն...» (անդ, էջ 38), «Բուզանդ գ. 2 կոչէ զԹիլ* կալուած Գրիգորի: *Եւ Խորենացին գ. 88. սեպհական ինչ արքայինայ...» (Ստորագրութիւն, էջ 19)։ Թիլ ավանում Լուսավորչի տոհմից թաղված էին Արիստակեսը և Ներսես Մեծը։*

էջ 176, տ. 32. Մի անգամ Ներսես Մեծը ∼ ծածկեց քափերի մեջ[21]...— *Րաֆֆին վերապատմում է Բուզանդի պատմության 4-րդ դպրության ԺԴ գլուխը, իսկ Հայր Մարդպետի պաշտոնի մասին հատվածի հիմքը, որ տեղադրված է նույն վերապատմության մեջ, Ղ. Ինճիճյանի վերլուծություններն են (տե՛ս Հնախօսութիւն, հ. Բ, էջ 135—139)։*

էջ 178, տ. 1. Ճավասպ Արծրունին ունէր և այլ պատճառներ ներքինապետին սպա-

նկու[25]։— *Քանի որ այս Մարդպետը, ըստ Բուզանդի, նույն անձնավորությունն էր, որ կոտորել տվեց Արծրունյաց և Ռշտունյաց նախարարությունները Տիրանի օրոք, իսկ Շավասպը այն մանուկը, որին կոտորածից փրկեցին Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները (Համտ. Բուզ. Գ, գլ. ԺԸ և Գ, գլ. ԺԴ)։*

էջ 178, տ. 35. Տիրանը Փառնէ կամ Փառներսեհ ~ շողոմորթում էր նրան։— *Րաֆֆին համադրել է Խորենացու «Յաղագս մահուան որդւոցն Յուսկան, եւ յաջորդելոյ զաթոռն Փառներսեհի» (Գ, գլ. ԺԶ և Բուզանդի «Յաղագս Փառինայ, որ կալաւ զաթոռ հայրապետացն» (Գ, գլ. ԺԶ) գլուխները։*

էջ 179, տ. 8. Հիշյալ Փառնէ կարդինալի որդին էր Հուսան եպիսկոպոսը ~ այժմ կարող ես գնալ[26].— *Տե՛ս Բուզ. Զ, գլ. Ը-Ժ։*

էջ 180, տ. 16. Արշակ թագավորի Դրան երեցը, Մրջյունիկ անունով ~ Ոլիմպիադային, որով և մեռավ նա[27]։— *Աղբյուրը Բուզանդի պատմության տեքստն է (Դ, գլ. ԺԵ)։*

էջ 181, տ. 12. Ներսես Մեծի ցավալի վախճանից հետո ~ Հուսիկը[29], Զավենը[30], Շահակը[31] և Ասպուրակեսը[32] ~ Իրմակյան ծագումից։— *Րաֆֆու գաղափարումը հիմնված է Բուզանդի վկայությունների վրա. «Եղև յետ մահուանն հայրապետին Ներսէսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ» (Ե, գլ. ԻԹ), «Եւ էր Զաւէնս այս անուանի զաւակ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանազկերտոյ» (Զ, գլ. Բ), «Ապա Շահակ կորճեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւինայ» (Զ, գլ. Դ), «Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի» (Զ, գլ. Դ)։ Տե՛ս նաև Խոր. Գ, գլ. ԼԹ—ԽԱ։*

էջ 181, տ. 19. Ծրջում էին ռսկեզած ~ նետեցին նրա հաջորդները[33]։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ զարդարէին զհանդերձս իւրեանց ըէսպէս նարօտօք, և սիգային որպէս ոչ վայել էր. ...Եւ ինքն Զաւէնն աթինեայս և ղտապակեայս զմապաւինեայս նարօտօք ագանէր, զսամոյրենիս և զկնգմենիս և զգայլենիս ագանէր. ...էր սա բարօյիւք այր չարաչար խիստ և նախանձոտ։ Բայց սակայն կրօնս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի ամենայն քահանայից ուսոյց անել հանդերձ զինուորաց» (Զ, գլ. Բ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 245, «Անկարգութիւնք ի զգեստս եպիսկոպոսաց և քահանայից» գլուխը։*

էջ 182, տ. 8. Երբ սուրբ Եպիփանը ~ աշակերտներից 500 հոգի[35]։ *Համտ. «Իբրև բաղում կարգս ուղղութեան թողոյր ի գաւառսն յայնոսիկ սուրբն Եպիփան, խսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց» (Բուզ. Ե, գլ. ԻԵ)։*

էջ 182, տ. 12. Այդպես է նկարագրում ~ տանելու իրանց մարմնին[36]»— «Ժամանակի պատմագիրը» *Բուզանդն է. Րաֆֆին թարգմանել է Զ-րդ գրքության ԺԶ գլխի հատվածներից մեկը։*

էջ 183, տ. 1. «Խոստանարակ[37]» անունը, որով մարդը ~ անասունի — *6-րդ դարի*

վերջին Սուրբ Կարապետ Գլակա վանքը ծաղկեց շնորհիվ Թոդիկի: Այդ լսելով՝ Հունաց կողմերից չորս խոստաճարակներ եկան, որոնց Թոդիկը պատվով ընդունեց և նրանք էլ հաճեցին վանքի մոտ ճգնել, հետո նրանց միացան Սագաստանից եկած ևս երեք խոստաճարակներ: Այս յոթ խոստաճարակները զոհ դարձան պարսից Խոսրով թագավորի արշավանքներից մեկին, 604 թ. հոկտեմբերի 28-ին, հինգշաբթի օրը ժամը 9-ին (տե՛ս Մ. Ավգերեան, Լիակատար վարք և վկայաբանութիւն Սրբոց||Որք կան ի հին Տօնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց, հ. է, Վենետիկ, 1813, էջ 41—50): «Խոստաճարակների» աղանդը ձևավորվել է Բյուզանդիայում 4-րդ դարում: «Դավիթ Բեկ» վեպում Րաֆֆին ընդարձակորեն նկարագրում է նրանց՝ օգտվելով «Այսմաւուրքից» և Հովհ. Մամիկոնյանի պատմությունից (ԵԺ 12 հատ., հ. 7, էջ 276—277): Նույն հատվածում ծանոթագրում է խոստաճարակ բառը. «Խոստաճարակ նշանակում է խոտով կերակրվող»:

էջ 185, տ. 23. Բայց Արտաշես Դ-ի ∼ Արշակունյաց տան վերջին շառավիղը հանգչեր....— *Րաֆֆու վերլուծությունների հիմքում ընկած են Խորենացու պատմության 3-րդ գրքի «Յաղագս չար միաբանութեանն Հայոց ի խորհուրդ կործանման անձանց» (ԿԴ), և «Յաղագս բառնալոյ թագաւորութեանն Հայոց ինքեանց կամաւ, և անարգելոյ աթոռոյ եպիսկոպոսապետութեանն» (ԿԴ) գլուխները:*

Արշակունյաց հարստությունը վերացավ 428 թ. ըստ Չամչյանցի: Նրա վերջին ներկայացուցիչը՝ Խոսրով Դ-ի որդի Արտաշես Դ-ն (Արտաշիր) էր, որին իր մոտ կանչեց և աքսորեց պարսից Վռամ Բ արքան:

էջ 186, տ. 1. Սուրմակը առաջինը եղավ ∼ նրան հաջորդեցին Բրքիշո և Շմվել ասորիները ∼ պախարակելի օրինակներ[40]:— Սուրմակ Արծկեցի *գրածո կաթողիկոսը, ըստ Խորենացու, հայրապետական աթոռը գրավեց «ոչ աւելի... քան զմի ամ» (Դ, գլ. ԿԴ), ըստ Չամչյանցի՝ 428—429 թթ.: Նրա չարախոսությունների մասին տե՛ս նույն գլխում:* Սուրմակ *անունը Րաֆֆին օգտագործել է «Սալբի» վեպում (տե՛ս ԵԺ 12 հատ., հ. 1, էջ 83):* Բրքիշոն *կաթողիկոսական գահին նստեց երեք տարի,* Շմվելը՝ *հինգ: Նրանց ագահության մասին պատմում է Խորենացին. «և ետ նոցա զԲրքիշոյ ումն ասորի: Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանայս տնակալուչս, անժուժարար և անլորգօք և յափշտակութեամբ վախճանեցելոցն վիճակաց վարեալ ամս երիս» (Դ, գլ. ԿԴ), «եկեալ Շմուէլ՝ կալաւ զաթոռ զեպիսկոպոսապետութեանն, հետևեալ վարուցն Բրքիշոյի, և առաւել ևս ագահութեանն մասամբ. զի նա զվախճանեալ եպիսկոպոսացն միայն յափշտակեաց զվիճակ, այլ սա և զկենդանեացն» (Դ, գլ. ԿԶ): Րաֆֆու ակնարկած «պախարակելի օրինակները» տե՛ս նույն գլխում:*

էջ 186, տ. 12. Հայոց կաթողիկոսը դարձավ պարսից մարզպանի ∼ այդ ժամանակ Հայաստանը[41]:— *Վռամ Արտաշիրին գահընկեց անելուց հետո՝ «զմեծապարգև զնախարարսն արձակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրշապուհ» (Խոր. Դ, գլ. ԿԴ):*

էջ 186, տ. 27. Մեծ հայրապետը, յուր փորձակից Մեսրոպի ∼ և ընկավ խավարի թագավորությունը... *Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գործունեության մասին աղբյուրների վկայությունները Րաֆֆին մանրամասնորեն մշակել է իր «Հայոց պատմության» մեջ (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 702, էջ 121):*

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Մեկը—արևմուտքում, մյուսը—արևելքում

ՊԱՏՄՈՍ

Էջ 190, տ. 9. Առաջինի անունն էր Տիրանամ ~ իսկ երկրորդինը՝ Ռստոմ[1]:— *Աղբյուրը Բուզանդի պատմության տեքստն է. «Եւ էին նորա այն որք ընդ նմայն աշակերտացն յիւրոցն՝ երեք, անուն միոյն Ռոստոմ սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ» (Դ, գլ. Զ)։*

Էջ 190, տ. 20. Հետո դիմեց դեպի աղբյուրը, որ մի հրաշքով բխեցրեց, երբ այդ կղզում խմելու ջուր չէին գտնում[2]:— *Օգտագործված են Բուզանդի վկայությունները. «Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ, աւազ միայն էր», «Եւ իբրև կերան յագեցան, և պէտք եղեւ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց սուրբն Ներսէս, և մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջ, և բխեաց աղբեւր՝ ջուր քաղցր անոյշ» (Դ, գլ. Զ)։*

Էջ 193, տ. 14. Դա մի բարձրահասակ մարդ էր.— *Ներսեսի Մեծի հասակի մասին վկայում է Բուզանդը. «Էր... երկայն հասակաւ» (Դ, գլ. Գ)։*

Էջ 195, տ. 5. Նվիրված Արամազդի շանթերից — *Արամազդը հայկական հեթանոսական դիցարանում գերագույն աստծո անունն է։ Տվյալ դեպքում, սակայն, Րաֆֆին անունը կիրառում է ո՛չ թե նրա հայկական պատկանելության ընդգծումով, այլ որպես «աստվածների գլխավոր» արտահայտության համարժեք։ Հին մատենագրության մեջ և նոր ժամանակների թարգմանական երկերում Արամազդ անունով թարգմանվում էին այլ ժողովուրդների գերագույն աստվածությունների անունները, հատկապես հունական հեթանոսական դիցարանի գերագույն աստծո անունը (Զևս)։*

Էջ 195, տ. 11. Կար ժամանակ ~ սև զգեստի ներքո[3]:— *Րաֆֆին մշակել է Բուզանդի պատմության Դ-րդ դպրության Դ գլխի որոշ հատվածներ։*

Էջ 195, տ. 35. Որպես զինվորական ~ սրբեց բշտիկների արտասուքը:— *Աղբյուրը Բուզանդի տեքստի զանազան հատույթներ են, որոնք շարադասված են հեղինակի բնութագրումների հետ միասին. «և նախանձելի արութեանն ի զինուորական կրթութեանն», «Եւ զաղքատս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա... Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վիրակացու» (Բուզ. Դ, գլ. Գ)։*

Էջ 196, տ. 14. Եղավ որ, յուր աշխարհի ~ Արիոսի մոլորություններով ~ օվկիանոսի խորքերը:— Կարևոր գործ — *ըստ Բուզանդի Ներսես Մեծը Բյուզանդիա գնաց («ի կայսերական պաղատն թագաւորացն Յունաց»), որպեսզի «ի մէջ կայսերն և ի մէջ երկանց զուխտն հաւանութեան նորոգեսցեն» (Դ, գլ. Ե), ըստ Խորենացու Ներսեսը Արշակի նամակը և պատանդներին տարավ Վաղես կայսեր մոտ ի նշան հնազանդության և հաշտության (Դ, գլ. ԻԲ)։*

Հոգեմարտ կայսր — *Հոգեմարտ մակդիրը Խորենացու տեքստում տրված է Բյուզանդիայի եպիսկոպոս Մակեդոնին. «Ի ժամանակին յայնմիկ էր յաթոռ եպիսկոպոսութեանն հոգեմարտն Մակեդոն» (Գ, գլ. Լ)։*

Մնացած հատվածը Բուզանդի ընդարձակ պատումի համառոտումն է (Դ, գլ. Ե), որից օգտագործված են հետևյալ հատվածները. «Զայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեանն հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս» Ներսես Մեծի երկարաշունչ հանդիմանությունը, որ արիոսականության ընդարձակ հերքումն է, ըստ օրթոդոքս եկեղեցու տեսակետների, Րաֆֆին համառոտել է «Համարձակ կերպով հանդիմանեց ~ հրավիրեց» նախադասությամբ։

Բարկացավ կայսրը ~ օվկիանոսի խորքերը ~ յոթանասուն եպիսկոպոսների — *Հմմտ. «և ընդ նմա արս եթանասուն, որ կէսք եպիսկոպոսք էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց եկեղեցեաց», «Ապա ետ հրաման ընկենուլ զնա ի կղզին մի մեծ ովկիանոս անծայրին ծովու» (Բուզ. Դ, գլ. Զ)։*

Արիոսականություն — *Հոսանք քրիստոնեական վարդապետության մեջ, որի հիմնադիրը Արիոս Ալեքսանդրացին էր։ Արիոսականության հիմնական դրույթն այն էր, որ որդի—աստված հայր—աստծուն հավասար չէ։ Որպեսզի աստված աշխարհին ներկայանար և ազդեր նրա վրա, պետք է, որ որևէ միջնորդ կամ միջնորդ էություն կիրառեր, և սա էր, ըստ Արիոսի, Բանը կամ Որդին, և այդ իսկ պատճառով սրա էությունը հավասար չէ հոր էությանը, այլապես աշխարհը չէր ստեղծվի նրա ձեռքով։ Մշտնջենավոր հոր համեմատ Որդին ժամանակավոր է, ուստի և արարածների դասին է պատկանում և չի կարելի նրան Հոր հավասար էություն վերագրել։ Ուստի Հայր-աստվածը և Որդի-աստվածը ո՛չ թե միագոյ, այլ միանման էություններ են, որ որդին ո՛չ թե ինքնագոյ է, այլ ստացական։ Այս տեսության հիմքում ընկած էր նոր պլատոնականության դրույթը Բանի (խոսքի) մասին՝ որպես աստծո և մարդկանց միջև եղած միջնորդի։ Արիոսի ուսմունքի դեմ հանդես եկավ Աթանաս Ալեքսանդրացին (տե՛ս Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Հայրապետի Ճառք թուղթք եւ ընդդիմաստացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 134—190, 235—239), այն դատապարտվեց նախ Նիկիայի Տիեզերաժողովում, վերջնականապես՝ 381 թ. գումարված ժողովի ժամանակ։*

Էջ 196, տ. 22. Զմեռնային դառնաշունչ ~ նրանց այդ կղզին[4]:— *Րաֆֆին միացրել է Խորենացու և Բուզանդի տեքստերը. «և ի նաւալիքն լինել ըստ խստաշունչ օդոյ ձմեռնայնոյ, ընկեցեալ ի կղզի ինչ անապատ՝ ցարդեալ գնաց. և նաւորդացն ոչ իշխեցեալ մակուկաւն նաւել, մնացին տագնապեալք» (Խոր. Գ, գլ. Լ), «Եւ գնաց մեկնեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, և ըստ հողմոյն յաջողութեան ի Տեղեաստան օր հասանէր ի հրամայեալ տեղին» (Բուզ. Դ, գլ. Զ)։*

ԱՆՈՒՇ ԲԵՐԴԸ

Էջ 205, տ. 8. Կոչվեցավ Անուշի բերդ[1]:— *Այս գլխի առաջին մասը արևելյան «Ֆարհադ և Շիրին» ավանդապատումի մշակումն է՝ մի քանի պատմական անունների օգտագործմամբ (Տիգրան, Եկղատան և այլն). այդ մասին վկայում է Րաֆֆին վեպի տեքստի սույն հատվածին տրված տողատակի ծանոթագրության մեջ (տե՛ս ս. հր. «Բնագրային տարբերություններ» բաժինը)։ Այդ ծանոթագրությունը առաջին անգամ տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթում (1887, № 4, էջ 60), այնուհետև Րաֆֆու երկերի վերջին երկու տասնհատորյա հրատարակությունների 7-րդ հատորների «ծանոթագրությունները» բաժիններում։ Տպագրելով այս ծանոթագրությունը՝ Րաֆֆին, փաստորեն, խախտում է այն*

սկզբունքը, որը ձևակերպված էր վեպին կցած առաջաբանի «Արձագանք» շաբաթաթերթում տպված տարբերակում, ըստ որի ծանոթագրությունները տողատակից «կարող էր թուլացնել վեպի տպավորությունը» (տե՛ս ս. հր. «Բնագրային տարբերություններ» բաժինը)։ Հավանական է, որ Րաֆֆին այս ծանոթագրությունը վեպի տեքստի հետ տպագրել է ընթերցողների պահանջին ընդառաջելով, որպես «նմուշ» այն բազմաթիվ ծանոթագրությունների, որոնք գրողը լույս էր ընծայելու առանձին հատորով։

Էջ 205, տ. 26. Երկաթյա դռան ~ Երկաթյա կապանքներից։— *Րաֆֆին ընդարձակել է Բուզանդի նկարագրությունը. «և արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռնակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն» (Ե, գլ. է)։*

Էջ 206, տ. 1. Այդ մռայլ նկուղի մեջ ~ Վալերիանոս կայսրը, որ գերի էր ընկած Շապուհ Ա-ինի ձեռքում։ Երկնքի և Արեգակի ~ տաճարի պատից[2]։— Վալերիանոս (Պուբլիուս Ավրելիուս Լիցինիուս Վալերիոս) — *հռոմեական կայսր (254—260), որը չնայած իր վարչական և զորավարական տաղանդին՝ քաղաքական ժխտի հանգամանքների պատճառով (սով, ապստամբություններ) անհաջողության հանդիպեց։ Արևելյան գավառները ոտնահարող Շապուհ I-ի դեմ ուղարկած զորավարները ապստամբում և իրենց կայսր էին հռչակում։ Ինքը՝ Վալերիանոսը, 269 թ. անձամբ ղեկավարեց հռոմեական լեգեոնները Շապուհ I-ի դեմ, բայց դավաճանության պատճառով Եդեսիայի մոտ գերվեց պարսից կողմից, որոնք անարգ և ստոր կերպով վարվեցին նրա հետ։ Կայսրը մահացավ գերության մեջ, Շոշում։*

Երկնքի և Արեգակի որդին — *սրանք պարսից արքաների ամենաբարձր տիտղոսներն են, որոնք, ըստ Ամմիանոս Մարկելլինոսի, շրջանառության մեջ էր դրել Արշակ Մեծը, որից հետո բոլոր պարսից թագավորներն իրենց մեծարում էին «Արևի և Լուսնի եղբայր» տիտղոսով (տե՛ս* Аммиан Марцеллин, История, Киев, *1906,* стр. *175—176)։ Խորենացու տեքստում այդ տիտղոսը կիրառված է Շապուհի՝ Տիրանին գրած թղթում. «Մազդեզանց քաջ և բարձանց արեգական Շապուհ արքայից արքայ» (Գ, գլ. ժէ)։*

Էջ 206, տ. 29. Դա մի հաղթանդամ, թխայատիպ և թավամազ տղամարդ էր.— *Արշակ Բ-ի թավամազության մասին վկայում է Բուզանդը. «Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով՝ թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով» (Գ, գլ. ժԵ)։*

Էջ 208, տ. 14. Առաջարկում էիր քո դուստրը կնության տալ ինձ ~ պալատների մեջ իշխանի[3]։— *Այդպես Բուզանդի տեքստն է. «Տացեմ զդուստր իմ,— ասում է Շապուհը,— կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչև ի Տիզբոն առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ» (Գ, գլ. Ի)։*

Էջ 208, տ. 27. վաղեմի դեպքը։ Երբ մի անգամ ինքը մտավ Շապուհի ասպաստանը ~ երկու մասն բաժանեց[4]— *Րաֆֆին վերապատմում է Բուզանդի տեքստը. (Գ, գլ. ԺԶ)։*

Էջ 209, տ. 34. որ շղթայակապ Արտավազդի նման.— *Րաֆֆին նկատի ունի Արտաշես Բ-ի որդի Արտավազդ Բ-ին և նրա մասին հյուսված առասպելը, որ պատմում է Խորենացին (Բ, գլ. ԿԱ)։*

էջ 211, տ. 7. Իսկ Սագաստանի[6] մյուս բանտերը կլցնեն հայոց նախարարներով.— *«Սագաստանի մյուս բանտերի» մասին վկայում է Եղիշեն՝ Հազկերտ II-ի ուղղակի խոսքը մեջբերելիս. «այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անձանապարհ տեղիս, որ և բազումք ի ձինչ ի խորշակէ յերթալն սատակեսցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս» (Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին, Թիֆլիս, 1913, էջ 61)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Ա., էջ 334—336։*

էջ 211, տ. 23. Իզուր չստացավ նա Անհուշ անունը ~ տխուր հիշատակը[7]։—*Րաֆֆին ակնարկում է Անհուշ անվանը տված Բուզանդի ստուգաբանությունը. «Բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, զի եթէ որ մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ է, զոր ի թագաւորաց. յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի եղեալ է» (Ե, գլ. Է)։ Պարսից թագավորներին այդ բերդի անունը հիշեցնողները, ըստ Բուզանդի, դատապարտվում էին մահվան (տե՛ս նույն տեղում, նաև՝ Րաֆֆու ծանոթագրությունը «Բնագրային տարբերությունները» բաժնում)։*

էջ 211, տ. 26. Միևնույն խավարեղեն նկուղի մեջ ~ դառն տանջանքները[8]։—*Տիրանի բանտում պահելու մասին վկայում է Բուզանդը. «Հանէր զկուրացեալն Տիրան ի տանէն բանդի կապանաց» (Գ, գլ. ԻԱ)։ Րաֆֆին այդ բանտը նույնացնում է Անհուշ բերդի հետ։*

էջ 215, տ. 37. Նրան կոչում էին Դրաստամատ ~ Ծոփաց գավառի Բնաբեղ բերդում[11]։—*Րաֆֆին վերաշարադրում է Բուզանդի տեքստը. «Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ... ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատ», «և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն», «լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ» (Ե, գլ. Է)։ Անգեղտան մասին տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 131—135։*

էջ 219, տ. 3. Դրաստամատը, հոգով չափ ~ կեղեքվում է իմ թշնամիներից։—*Ըստ Բուզանդի պատմության (Ե, գլ. Է) Դրաստամատը իրականացնում է իրեն տրված հրամանը՝ Արշակին «արքայավայել» դրության մեջ է գտնում, որից հետո Արշակը հարբելով՝ հիշում է իր անցած մեծությունը և ինքնասպան է լինում։ Դրաստամատը տեսնելով արքայի մահը՝ ինքը ևս վերջ է տալիս իր կյանքին նույն դանակով։ Րաֆֆին բաց է թողել Բուզանդի այս վերջաբանը և պատումը շարունակել է մասնակիորեն հետևելով Խորենացու վկայությանը, ըստ որի՝ Արշակը լսելով հայրենիքին պատահած աղետները («Զայս ամենայն աղէտս թշուառութեանց լուեալ Արշակայ»— Գ, գլ. ԼԵ), ինքնասպան է լինում (պատումի շարունակության մեջ Արշակի և Դրաստամատի երկխոսության թեման այդ աղետներն են)։ Ինքնասպանության նկարագրության բացթողումը պայմանավորված է վեպի բովանդակային պլանի միասնականության պահպանման անհրաժեշտությամբ։ «Հայրենասիրություն», «պայքար հայրենիքի ազատագրության համար» գաղափարները, որոնց ենթակա է պատումի իմաստաբանական շարունակելիությունը, չեն կարող համադրվել «ինքնասպանության՝ կորցրած փառքի համար» իմաստը, ինչքան էլ այն հրապուրիչ է որպես թեմա և ինչքան էլ այն որոշարկված է Բուզանդի տեքստում որպես նկարագրություն։ Րաֆֆու բոլոր հերոսները ենթարկված են հիշյալ գաղափարին և իրավիճակների*

որոշակիանալը պատումի մեջ իրագործվում է նկարագրությունների ձևով (այստեղից էլ Րաֆֆու սահմանումները վեպի մասին՝ «վեպը նկարագիր է» և պատմավեպը «պատմական կյանքի նկարագիր է»)։

էջ 220, տ. 7. Ամրացած է Արտագերս բերդում ~ տասն և երկու հազար ամենաընտիր զորքեր։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Փառանձեմ... առեալ ընդ իւր մարդիկ իբրև մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմօղս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից» (Դ, գլ. ԾԵ)։ Րաֆֆին մի հազարով ավելացրել է բերդի զորքերի թիվը, հավանաբար, նկատի ունենալով այն 6000 կանանց, որոնց բերդում գտնվելու մասին հիշատակում է Բուզանդը. «զի էին արք իբրև մետասան հազար, և կանայք իբրև վեց հազար» (նույն տեղում)։*

էջ 220, տ. 37. Քրիստոնեական վրեժխնդրություն— չարության փոխարեն բարություն մատուցել ~ ըստ Քրիստոսի աշակերտի։— *Տե՛ս Ավետարան ըստ Մատթէոսի, Ե, 39—48. ըստ Ղուկասի, Զ, 27—38։*

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ
Ա. ՈՍՏՈՒՆԻՔ

էջ 226, տ. 25. Այստեղ Ներովբը կորցրեց յուր տիտանների մեծ մասը[1]:—Ներովբը — *ըստ Աստվածաշնչի Քամի սերնդից էր, Քուշի որդին, որը հիմնադրեց Բաբելական թագավորությունը (Ծնունդք, Ժ, 8—10)։ Ներովբին Բելի հետ է նույնացնում Խորենացին (Ա, գլ. Ե, Է)։ Րաֆֆին նկատի ունի Հայկի և Բելի առասպելը (Խոր. Ա, գլ. Ժ—ԺԱ)։*

էջ 226, տ. 28. Այստեղ էր «երկաթահատաց» լեռը ~ զրահներ էր դարբնում[4]:— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Գայր հասանէր ի լեառն երկաթահատացն կապարահատացն, և որ ընդ նմայն էին, ընդ Ըշտունիս» (Գ, գլ. Ժ)։ Տե՛ս Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 63—64, Հնախօսութիւն, հ. Ա, էջ 180—181։*

էջ 226, տ. 32. Մոկաց անմատչելի լեռները, իրենց դիվարնակ խոռոչներով և ծառերով[6]:— Դիվարնակ — *մոկացիներին տրված այս մակդիրը Րաֆֆին վերցրել է Խորենացու պատմության այն հատվածից, որտեղ պատմվում է Հազկերտ Ա-ի որդի Շապուհի և Ասոմ Մոկացու որսորդության մասին. «Դու երթիջիր, զի ի քարինս դիւաց է շահատակելդ», «եթէ դու զՄոկացիս կոչես դիւազգիս՝ ես զՍասանեանսդ կոչեմ կնամարդիս» (Գ, գլ. ԾԵ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 135։*

էջ 228, տ. 7. այդ անիծված երկրով[7] անցնել — անիծված երկիր — *Հակոբ Մծբնա հայրապետը (տե՛ս ծ. էջ 160, տ. 1.) իր սարկավագների նահատակությունից հետո. «եկանէր .. ի գլուխ լերինն Ընձաքիարս. և նզովէր զաշխարհն» (Բուզ. Գ, գլ. Ժ)։*

Բ. ԱՐՏՈՍ

էջ 235, տ. 18. Այդ դեռ «սկիզբն է երկանց» ~ կարդացած մարդ էր։— «սկիզբն է երկանց»— *արտահայտությունը Ավետարանից է (ըստ Մատթէոսի, ԻԴ, 8, ըստ Մար-*

կոսի, ԺԳ, 8)։ Ավետարանի տեքստի հղված հատվածներում Քրիստոսը պատմում է իր աշակերտներին ապագա արհավիրքների, աշխարհի վերջի, արդար դատաստանի և դրան ուղեկցող աղետների մասին։

էջ 236, տ. 16. Խոսակցությունը Ռշտունյաց տիկնոջ, Համազասպուհու[6] մասին էր ~ յուր զորերի մի մասը:— *Աղբյուրը Բուզանդի և Թովմա Արծրունու վկայություններն են. «Համազասպուհի. և էր նա կին Գարեգնի տեառնն Ռշտունեաց գաւառին» (Բուզ. Դ, գլ. ԾԹ)։ Մերուժանի և Վահանի Ռշտունիք կատարած արշավանքի մասին վկայում է Թովմա Արծրունին. «գնացին մտին ի գաւառն Ռշտունեաց, և առին յաւարի զտունն Գարեգնի Ռշտունեաց տեառն» (Արծր., էջ 102)։ Արծրունու այս վկայությունը հիմք է դարձել Աղթամարա ամրոցի գրավման և ավերման դրվագի նկարագրության համար։*

Ըստ Բուզանդի Գարեգին Ռշտունին փախել էր իր գավառից Շապուհի արշավանքի ժամանակ, իսկ ըստ Արծրունու Գարեգինը հունաց կայսեր մոտ է ճողոպրում, երբ Մերուժանն ու Վահանը արշավում են Հայաստան։ Րաֆֆին այդ «փախուստի» փոխարեն դնում է «գնացել էր կնոջը որոնելու» արտահայտությունը. այս փոփոխությունը ես պայմանավորված է վեպի բովանդակային պլանի միասնականությունը պահպանելու անհրաժեշտությամբ։ Այս փոփոխությունը առաջ է բերել աղբյուրի տեքստի մի շարք ձևափոխություններ, որոնք տեքստային նոր իրավիճակին հարմարեցված իմաստային հարաբերություններ են ստեղծել։ Հմմտ. օրինակ՝ Արծրունի. «նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց» (որպես հետևանք «Գարեգին ճողոպրեալ» իմաստի)— Րաֆֆի. «որը... անհետացավ իշխանական ընտանիքի միջից» (որպես պատճառ «գնացել էր որոնելու» իմաստի)։

էջ 241, տ. 3. Դու տեսե՞լ ես Մանակերտը[9] ~ Ռշտունյաց Ոստանից[11] ~ այն աղբյուրը ~ և ինքը լաց եղավ:— *Նահատակության վայրը Մանակերտն էր ըստ Այսմավուրքի (15 դեկտեմբերի), որ գտնվում է Աղթամարա կղզու դիմացի ափին, Ռշտունիքի կողմից։ Ըստ Բուզանդի, Հակոբ Մծբնա հայրապետը տեքստում հիշված աղբյուրը բխեցնում է իր ասված աղոթքի միջոցով. «Եկաց յաղօթս առ ափ, ընէր ծունր, և եդ գլուխ իւր ի վերայ երկրի, և բխեաց աղբիւր» (Դ, գլ. Ժ)։*

էջ 241, տ. 15. Կհայտնես իշխանին, որ նույն «Արտասուքի աղբյուրի» մոտ սպասեն ինձ:— «Արտասուքի աղբյուր» *անվանումը վկայված չէ աղբյուրներում, այն ստեղծել է Րաֆֆին (ըստ Բուզանդի այն կոչվում է «Հակոբի աղբյուր»—Դ, գլ. Ժ)։ Սամվելի և Աշխենի հանդիպումից առաջ հիշատակվող Հակոբ Մծբնա հայրապետի սարկավագների նահատակության դրվագը նախապատրաստում է որակային այն հնչերանգը, որի տեքստային իրականացումը (հաջորդ գլուխը) թեև անմիջականորեն չի պարունակում այդ նահատակության հետ կապված մանրամասնություններ, սակայն, որպես* ենթադրելի տեքստ՝ *մշտապես զուգահեռվում է իրականացած տեքստին՝ շնորհիվ այն բանի, որ գրողը այն նախապես մտցրել է պատումի մեջ տարածական շատ կարճ հեռավորությամբ։*

Գ. ԱՐՏԱՍՈՒՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ

էջ 242, տ. 25. Գլխին դրած ուներ ~ նմանվում էր նա Աթենաս-Պալլասին.— Աթե*նաս-Պալլասը հունական դիցաբանության գլխավոր աստվածուհիներից է, Զևսի դուստրը։ Ըստ առասպելների՝ Զևսը հղացավ նրան իր գլխում և լույս աշխարհ բերեց՝ Հեփեստոսի*

մորճի հարվածներից հետո Աթենասը ծնվեց զինավառված՝ ասպարով և սաղավարտով, Վահանը ձախ ձեռքին, նիզակը աջ ձեռքին և այլն։ Աշխենի զինավառությունը նույնն է, ինչ Աթենաս-Պալլասինը։

էջ 242, տ. 28. Իսացյալ Նիոբեի արտասուքներից գոյացած աղբյուրին[1]:— Նիոբեն, *ըստ հունական դիցաբանության, Փերոսի թագավոր Ամփիոնի և Տանտալոսի դուստրն էր։ Մեծամիտ զավակներ ունենալով (ըստ Հոմերոսի 6 տղա, 6 աղջիկ, ըստ Հեսիոդոսի և Պինդարոսի 10 տղա, 10 աղջիկ, ըստ աթենական ողբերգակների 7 տղա, 7 աղջիկ)՝ նա ծաղրեց Լեթոյին, որը 2 երեխա ուներ միայն՝ Ապոլլոնին և Արտեմիսին։ Զայրացած աստվածուհին բողոքեց զավակներին Նիոբեի դեմ։ Ապոլլոնը և Արտեմիսը սպանեցին Նիոբեի բոլոր զավակներին, առաջինը՝ ուստրերին, երկրորդը՝ դուստրերին։ Ամփիոնը ինքնասպան եղավ, իսկ Նիոբեն վշտից քարացավ (ըստ այլ տարբերակի՝ Զևսը Նիոբեին ժայռ դարձրեց, որն արտասվում է)։ Տե՛ս* Мифы народов мира, том *II*, Москва, *1982*, стр. *222—223, Ծաղկաքաղ հատուածք յօտարազգի մատենագրաց, Մասն երկրորդ, Քերթուածք, Վենետիկ, 1880, էջ 378—384, Ովիդիոս, Այլաբանութիւնք, «Արկածք Նիովբեայ» հատվածը։*

Դ. ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻ

էջ 251, տ. 13. «Իսկ Վանանայ ~ Փաւստոս — *Բուզանդի տեքստից (Դ, գլ. ԾԲ) բերված բնաբանից Րաֆֆին բաց է թողել Գարեգինի փախուստին վերաբերող հատվածը։ Բնաբանված գլուխը վկայում է, որ գործողությունների հիմքում ընկած է աղբյուրի վկայությունը։ Մնացած բացթողումները պայմանավորված են հաղորդված տեղեկությունների կրկնությամբ։ Փակագծերում գրված* միջնաբերդին Վանայ *արտահայտությունը բացթողված հատվածներից է։*

էջ 251, տ. 36. Ծովակի արևելյան ափերի մոտ ~ հայոց մի երիտասարդ թագավորի սիրով, զվարճանում էր աշխարհի ամենամեծ կախարդը — Շամիրամը[2]:— *Տե՛ս Խորենացու պատմության «Յաղագս Արայի եւ մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ» (Ա, գլ. ԺԵ) և «Թէ որպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն եւ զամբարտակ գետոյն եւ զիւր տունն» (Ա, գլ. ԺԶ) գլուխները։ Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը Րաֆֆին առանձին մշակել է «Արայն պատերազմի դաշտումը» պոեմում (ԵԺ 12 հատ., հ. 1, էջ 200—209), «Կայծեր» վեպի երկրորդ հատորի «Հնագիտական հետազոտություններ» գլխում (Թիֆլիս, 1887, էջ 96—98) և «Հայոց պատմություն» աշխատության մեջ (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 702, էջ 14—15)։*

էջ 252, տ. 15. օդի մեջ երևացին բազմաթիվ հրեղեն գնդակներ ~ նրանց բարձրությունից հուր էին ցանում քաղաքի վրա ~ հասարակ պարսատներ[4] ~ ու՛րդեն սկսել էին այրվել:— *Հրացանության սույն նկարագրության հիմքում ընկած է Թովմա Արծրունու վկայությունը ըստ Ղ. Ինճիճյանի մեկնությունների. «Թովմա արծրունի գ. 2 «Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, գլոյծ բնութիւն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առընթեր նմին հնարաւորեալ արկանել զամրոցաւն»· Յորմէ յայտ է թէ ունէին յայնմ ժամանակի հնարեալ արուեստ ինչ ցհեռաւոր վայրս ձգելոյ զհուրն։ ...Ապա յայտ է թէ բերդականքն որք էին հայկազունք արծրունիք, սովին օրինակաւ ձգէին հուր արտաքս ի բերդէն ի վերայ թշնամեաց» (Հնախօսութիւն, հ. Ա, էջ 264—265, «Հրացանութիւնք գլուխը»)։*

Րաֆֆին պարսատիկ բառի փոխարեն կիրառել է պարսնը ըստ Հայկազյան բառարանի բացատրության. «Պարսն... Նոյն ընդ Պարսատիկ՝ իբր պարսատ նորին» (Նոր Բառգիրք, հ. 2, էջ 640)։

էջ 252, տ. 34. դժբախտ Տրոյան պաշարված էր հելլենացիներից ~ գեղեցիկ Հեղինեի ~ թագավոր ամուսնի ~ անամոթ տարփածուն[3]:— *Րաֆֆին, որպես համեմատության եզր, օգտագործում է Հոմերոսի «Իլիականի» թեման։ Թագավոր ամուսինը՝ Մենելայոսն է, անամոթ տարփածուն՝ Պարիսը։*

էջ 254, տ. 7. որպես մի հրեշավոր սֆինքս[6]— սֆինքս — *Հին Եգիպտոսում առասպելական արարածի արձան՝ առյուծի մարմնով և մարդու կամ որևէ կենդանու գլխով, որ խորհրդանշում էր արքայի իշխանությունը։ Հին հունական դիցաբանության մեջ Սֆինքսը թևավոր հրեշ է՝ կնոջ գլխով և առյուծի մարմնով։*

էջ 258, տ. 2. Երբ Տիրանը ~ երկու բնաջինջ եղած նախարարությունները[13]: *Այստեղ Րաֆֆին մշակել է Բուզանդի պատմի վերջին մանրամասնությունը. «Եւ մնացանէին զայն մանկունսն, զՇաւասպ և զՏաճատ. և եառն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան» (Գ, գլ. ԺԸ)։ Րաֆֆին Տաճատ Ռշտունուն Գարեգին Ռշտունու հայր է համարում՝ ելնելով Բուզանդի վկայությունից, ըստ որի Տաճատը շարունակեց Ռշտունյաց տոհմը, չնայած որ նման տեղեկություն ուղղակիորեն վկայված չէ։ Հավանաբար, հեղինակը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Տաճատից հետո Բուզանդի տեքստում հիշատակված երկրորդ և միակ Ռշտունին Գարեգինն է։ Նույն միտումով Րաֆֆին Շավասպ Արծրունուն համարում է Մերուժան Արծրունու հայրը։ Տոհմաբանական կապերի նման ցանցը, մեծ նշանակություն ունի հեղինակի համար, քանի որ այն սրում է պատմական հարաբերությունները, իրավիճակները։ Րաֆֆու համարյա բոլոր հերոսները կապված են արյունակցական կապերով. դա հեղինակին հնարավորություն է տալիս առավել ընդգծված կերպով ներկայացնել նրանց քաղաքական շահերի տարբերությունն ու անհամատեղելիությունը։*

էջ 259, տ. 3. Ո՞վ սպանել տվեց քո հորը ~ մեր փեսա Կամսարականների ցեղը ~ Արտագերս ամրոցը[15]: ~ Արշակ թագավորը:— *Կամսարականների կոտորելու մասին պատմում են Բուզանդը (Գ, գլ. ԺԲ) և Խորենացին։ Րաֆֆին վերաշարադրում է Խորենացու տեքստը. «Եւ կոտորեաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, չարակնելով ագահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք աւանի նոցա Երուանդաշատ» (Գ, գլ. ԼԱ)։*

մեր փեսա — *Կամսարականների և Մամիկոնյանների խնամիական կապի մասին վկայում է Բուզանդը. «Եւ զզօրավարութեան գործ յանձն առնէին Արշաւրայ Կամսարականի՝ իշխանին Շիրակայ և Արշարունեաց գաւառին, և Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին» (Գ, գլ. ԺԱ)։*

Ե. ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐՎԱ ԱՌԱՎՈՏԸ

էջ 262, տ. 27, կարծես, այդ վեհապանծ ձիավորի մարմինը դյութված կամ կախարդված լիներ, որ անխոցելի ~ կարծիք էր կազմվել հասարակության մեջ[1]:— *Մերուժան Արծրունուն կախարդ է անվանում Մանվել Մամիկոնյանը. «Տեսանե՞ս, քանի խաբեաց զմեզ կախարդն Մերուժան», «Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերուժանն Մա-*

նուէր, և ասէ ցնա՝ թէ, ա՛յ կախարդ, ցե՞րբ խաբես զմեզ», ասէ զիտաց, թիրես ճանաչել կարասցուք զդիւթ քուէդցն զկախարդն» (Բուզ. Ե, գլ. ԽԴ)։ Ըստ Բուզանդի այլ վկայության, Մերուժանն ինքը հմայություններ էր անում. «Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իշխանէր ի հմայս քաւդէութեան, զբուխս հարցանէր. և ոչ գոյր նմա յաջողակ յուսոյթ կախարդանացն՝ ըր յուսայրն» (նույն տեղում)։

էջ 262, տ. 33. Նրա առնմային ~ Ջայմար ամրոցի ~ վիշապի անավորություն:— ասորական արյունը — Ջայմար ամրոցի վիշապազունների — *Տե՛ս Րաֆֆու ծանոթագրությունը «Բնագրային տարբերությունները» բաժնում, նաև՝ Արձագանք, 1887, № 12, էջ 183։ Այս ծանոթագրության աղբյուրը Թովմա Արծրունու պատմության տեքստն է (Արծր. էջ 90)։ Արծրունու տեքստում ամրոցի անունը ոչ թե* Ջայմար *է, այլ* Ջլմար *(«Բայց կին սմն յաշգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Ջլմարս»). Րաֆֆին այն Ջայմար է դարձրել ըստ ամրոցի տիրուհու անվան և Արծրունու ցուցումի. «և յանուն կնոջն Ջայլամար, որ և ամուրն յիւր անուն անուանէ» (նույն տեղում), բաց թողնելով լ հնչյունը (Ջայլմար) կամ լա հնչյունակապակցությունը (Ջայլամար), իր տված ստուգաբանության հարմարեցնելու համար։ Այս տեղանունը Հյուբշմանը չի ստուգաբանում (տե՛ս Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 205—206)։*

վիշապազուններ — *այսպես է անվանում Խորենացին Աժդահակի ժառանգներին. «ընդ Վիշապազունս... այս ինքն ընդ զարմս Աժդահակայ» (Բ, գլ. ԽԹ, նաև՝ Ա, գլ. Լ)։*

նզովք կապված — *Բուզանդը, պատմելով Մերուժանի և Մանվելի մենամարտի մասին գրում է. «երկոքեան արքն յաղթք էին» (Ե, գլ. ԽԳ)։ Այս հատվածի համար տե՛ս նաև Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 109—111, «Ծագումն Արծրունեաց» գլուխը։*

էջ 263, տ. 2. որքան գեղեցիկ է լինում նույնիսկ Սադայելը[3]:— Սադայել — *եբրայերեն նշանակում է «Հակառակ աստուծոյ», սատանա, դևերի գլխավորը (տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 685)։*

էջ 263, տ. 5. յուր անվան համեմատ, որպես մի արեգակ լուսապայծառ.— *Տե՛ս Րաֆֆու ծանոթագրությունը «Բնագրային տարբերությունները» բաժնում, նաև՝ Արձագանք, 1887, № 12, էջ 183։*

էջ 263, տ. 21. գնացել էին ամառանոց՝ Արծրունյաց բնիկ Ոստանում[4]:— *Արծրունիների ոստանը Հադամակերտն էր (տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 119, «Ոստան և շիրիմ Արծրունեաց» գլուխը, Ստորագրութիւն, էջ 458—462, 206)։*

էջ 266, տ. 9. ստեղծել էին առանձին զնդեր, որ կոչվում էին «քառազնացներ[5]»:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Գ, էջ 265, «Արք քառազնացք» գլուխը։*

էջ 267, տ. 5. Ավելի քան երկու հարյուր ձեռքեր ~ Դա սոսկալի «փիլիկվանն» էր ~ հսկա խլուրդը[7]:— *Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Ա, էջ 262, «Փիլիկուան» գլուխը։ Րաֆֆին այս ռազմական մեքենայի նկարագրությանը համադրել է Խորենացու նկարագրած «էշ» անվանումը կրող մեքենայի նկարագրությունը (Գ, գլ. ԻԶ), որոշ մանրամասնություններ ավելացնելով Ռոլեն Գաղղիացու ստորագրած «Կրիա» անունը կրող ռազմական մեքենայի նկարագրությունից, միաժամանակ «խոշորացնելով» մեքենայի չափերը (տե՛ս Ռօլէնի Գաղղիացւոյ Հնախօսութիւն ի վերայ եգիպտացոց կարքեդոնացոց ասորե-*

տանիայց բաբելացոց մարաց եւ պարսից մակեդոնացոց եւ յունաց, հ. 5, Վենետիկ, 1828, էջ 518, նաև՝ Аммиан Марцеллин, История, выпуск II, Киев, 1907, стр. 162—165):

Էջ 270, տ. 22. Խաշ ընկավ մի սպիտակ մարմին, որ ձյունի պես փայլում էր արևի առաջին ճառագայթների առջև։— *Րաֆֆին նկարագրում է, ըստ Բուզանդի. «Եւ էր նա սպիտակ մարմնով, և պայծառ տեսանելովն. կայր կախեալ յերկայն տեսիլ նշանակի, և փաղփաղէր մարմինն ի բարձունս զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն» (Դ, գլ. ԾԹ)։*

Էջ 271, տ. 19. Կայեն ~ Նա սպանեց եղբորը — *Տե՛ս Աստվածաշունչ, Ծննդոց, Դ, 1—9։*

Զ. ՈՒՐԱՑՈՂԸ ՅՈՒՐ ՏԱՆ ՇԵՄՔԻ ՎՐԱ

Էջ 273, տ. 5. Երկու զինված շատրներ[5]— շատր — *պարսկերեն շաթեր* (šater), *մունետիկ, որն ընթանում էր իշխանավորի առջևից և ճանապարհ բացում։*

Էջ 274, տ. 17. Տիկինը Վահան Մամիկոնյանի (Սամվելի հոր) քույրն էր[6]— *Րաֆֆին Շավասպ Արծրունու կնոջը համարում է Արտավազդ Մամիկոնյանի դուստրը, չնայած որ աղբյուրի տեքստում որոշակիորեն նշված չէ, թե ում դուստրը կնության տվեցին Շավասպին։*

Էջ 275, տ. 17. իրանց արյունակցի[11]— դժբախտ Համազասպուհի.— արյունակից — *ըստ Րաֆֆու կազմած տոհմաբանության Համազասպուհին և Շավասպի կինը հորեղբոր աղջիկներ էին։*

Էջ 276, տ. 21. Շավասպուհին,— այսպես էր նրա անունը.— Շավասպուհի *հատուկ անունը վկայված չէ պատմիչների տեքստերում, այն ստեղծել է Րաֆֆին՝ համաձայն անվանաստեղծության այն սկզբունքի, որ շարադրված է վերը «Խորթ մայրը» գլխում՝ Շավասպ + ուհի = Շավասպի դուստր։*

Էջ 278, տ. 33. որի խեղճի անունը Միհրանույշ էր։— Միհրանույշ *հատուկ անունը վկայված չէ աղբյուրներում։ Այն, հավանաբար, ստեղծել է Րաֆֆին ըստ անվանաստեղծության այն սկզբունքի, որ շարադրված է վերը «Խորթ մայրը» գլխում և նկատի ունենալով* Մեհրուժան *հատուկ անվանը տված իր ստուգաբանությունը (Մեհր-րուժան = արեգակ լուսապայծառ, տե՛ս Րաֆֆու ծանոթագրությունը «Ընտանեկան տարբերություններ» բաժնում), ապա Միհրանույշ, ըստ Րաֆֆու, նշանակում է* արեգակի դուստր: *Ըստ Հր. Աճառյանի՝ «Միհրանոյշ, իգ. նորակերտ անուն, որ կազմված է Միհրան անունից + անոյշ» (Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1944, էջ 333)։*

Էջ 281, տ. 13. արշավում էին Արեբանոսից[13]—Արեբանոս *քաղաքը Ղ. Ինճիճյանը տարադրում է «Տեղիք մեծին հայոց՝ որոց գաւառք նաև նահանգք անծանօթք» վերնագրի տակ։ Րաֆֆին ընդունում է «Յայսմաւուրքի» վկայությունն այն մասին, որ քաղաքը գտնվում է Ագրակ գավառում, որտեղ էր նաև Հաղամակերտը, և Մեհրուժանին տանում է այդ ճանապարհով (տե՛ս Ստորագրութիւն, էջ 509—510)։*

Է. ԽԱՅԹ

էջ 288, տ. 3. Ես Որսիրանի[1] սեպուհն եմ.— *Որսիրանքը պատմական Հայաստանի Կորճայք նահանգի գավառներից է, որ գտնվում է Աղբակից հարավ (Ինճիճյան, Ստորագրություն, էջ 147—148)։*

էջ 292, տ. 26. որ հայոց թագավորի սեղանի մոտ նախապատիվ և առաջնակարգ նախարարի բարձ ուներ[8]— *Արշակունյաց արքունիքում նախարարները տեղ էին գրավում ըստ տոհմի ավագության և արժանիքների, և, հին հայկական սովորության համաձայն, նստում էին բարձերի վրա, ըստ ավագության կարգի։ Այստեղից էլ գրաբար արտահայտությունը՝ «ընդունել բարձ և պատիւ յարքայէ»* (История Армении Моисея Хоренского, перевел с армянского и объяснил Н. Эмин, Москва, *1858*, стр. *236*)։ *Արծրունիների տոհմը, ըստ Խորենացու, զբաղեցնում էր արքայի արծվակիրների պաշտոնը (Բ. գլ. Է, տե՛ս նաև Ինճիճեան, Հնախոսություն, հ. Բ, էջ 111, «Անուն և պաշտօն Արծրունեաց» գլուխը)։*

էջ 294, տ. 16. ա՛յն աստծուն, որին, պարսից արքայի առջև, հրապարակով ուխտել էր չճանաչել— *Աղբյուրը Բուզանդի պատմության տեքստն է. «Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն Արծրունի. և չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ, և դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա։ Նախ ուրացաւ ի կենաց իւրոց, զոր յառաջն ունէր. զի եթող զօրէնս քրիստոնէութեան, և խոստովան եղև վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնեայ. և կալաւ զօրէնս մազդեզանց, այսինքն զմոգուցն» (Դ, գլ. ԻԴ)։*

Ը. ՇԱՊՈՒՀԸ ԶԱՐԵՀԱՎԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄՈՏ

էջ 299, տ. 3. «Ապա յետ այսորիկ ~ արքայ Պարսից» Փավստոս։— *Բուզանդի տեքստից (Դ, գլ. ԾԸ), որպես բնաբան բերված հատվածից Րաֆֆին բաց է թողել նախարարների փախուստին վերաբերող մասը և Շապուհի՝ նախարարների կանանց պղծելու դրվագը։ Առաջինը՝ վեպի առաջին մասում արտացոլվել է որպես ենթադրելի հետևանք Շապուհի արշավանքների, իսկ այստեղ ներկայացվում է որպես կատարված իրողություն («երկյուղից թողեցին... փախան») և թվագրված է՝ առանձին ծանոթագրելու համար։ Երկրորդը բաց է թողնվել վեպի բովանդակային պլանի ամբողջացման հեղինակային միտումների պահպանման համար (Շապուհի կողմից նախարարների կանանց անարգելը, «պղծեալ ի խառնակութիւն» տանելը հնարավորություն չէր ստեղծում Շապուհի* «բարոյական փոփոխությունը» *ներկայացնելու համար)։*

Բուզանդի տեքստը, որպես բնաբան կիրառելիս, Րաֆֆին կատարել է մի շարք քերականական և կետադրական փոփոխություններ՝ բիւրուց-բիւրոց, Զարեհվան-Զարեհաւան, մանկտիսն-մանկտին: *«Շաւաղի» բառի կողքին փակագծերում դրված «արշաւակի» ձևը Րաֆֆու հավելում-բացատրությունն է ըստ Հայկազյան բառարանի (տե՛ս Նոր Բառգիրք, հ. 2, էջ 474)։*

էջ 300, տ. 1. Հայոց նախարարներից շատերը ~ զանազան կողմեր[2]:— *Այս մասին վկայում են Բուզանդը և Խորենացին։ Րաֆֆին տվյալ դեպքում հետևում է Բուզանդին, հատվածը կրճատված է բնաբանում։*

էջ 300, տ. 6. Քաղաքները ու ավանները կրակի ~ փախչելու անկարող բնակիչները գերվում էին:— *Րաֆֆին մշակել է Բուզանդի տեքստը. «Այլ և հասեալ ասպատակքն յերկիրն Հայոց, և առնուին զամենայն գերին ի մի վայր ժողովեցին» (Դ, գլ. ԾԸ)։ Այս հատվածը բնագրում արտահայտված է բազմակետերով (առհմէն...)։*

էջ 300, տ. 10. Զարեհավանի ավերակների մոտ, որ կործանված էր նրա հառաջապահ զորքերից[3]:— *Հմմտ. «...յաւերս քաղաքին Զարեհաւանի, զոր յառաջնումն եկեալք զօրքն Պարսից աւերեցին» (Բուզ. Դ, գլ. ԾԸ)։ Այս հատվածը բնագրի երկրորդ հրատարակումն է (Զարեհաւանի...)։*

էջ 300, տ. 13. Այստեղ դիմեց նա Հայոց Տիկնոջը ~ Երախաձորի Արտագերս բերդը[5]:— *Ծաղկանց լեռները «արքայական ամարանոցն» է անվանում «Պատմութիւն Թաթարաց» վերնագիրը կրող տեքստը. «...որ էր յառաջն տեղին այն նստոց ամարան մեծ թագաւորացն Հայոց, այսինքն Արշակունեաց» (Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Ա, էջ 98)։ Րաֆֆին նկատի է ունեցել նաև Ղազար Փարպեցու վկայությունը. «և հասեալ ամիսս տօթոյն ջերմութեան՝ չու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովաց՝ գային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկոտն» (Ղազար, էջ 140)։*

էջ 301, տ. 1. Արքայական վրանի կենտրոն գագաթին ~ ուներ արքայական սուրը[15]։— *Շապուհի արքայական զարդարանքն ու համազգեստը նկարագրելիս Րաֆֆին օգտագործել է Բուզանդի տեքստը (Ե, գլ. ԼԸ), Ինճիճյանի վերլուծությունները և Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածները և բերված օրինակները։*

պարսկական արքայան վառը -- *«Եւ էառ թագաւորն Պարսից առնել... զվառ թագաւորացն տիկնոջն Զարմանդուխտոյ» (Բուզ. Ե, գլ. ԼԸ)։ Տե՛ս նաև Նոր Բառգիրք, հ. 2, էջ 784, «վառ» բառահոդվածը։*

փառավոր խույրը ~ ոսկյա զարդմանակը[10]— *«եւտ առնել զթագաւորական պատմուճանն, սամոյր մ' և գլխոյ պատիւ զարդմանակ ոսկի արծաթ, ու պատիւ գլխոյ ի վերայ զագաթանն ի թիկանց արծուոյն հանգոյցք թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյցս» (Բուզ., նույն տեղում)։ Րաֆֆին Շապուհին «հագցնում է» ըստ Հայկազյան բառարանի «զարդմանակ» բառին տված նշանակության. «Զարդ սաղաւարտի կամ խուրի» (հ. 1, էջ 530)։*

Կուրծքը ~ պատած էր ապիզակով[11]— *«և յանչափ պատիւ՝ ապիզակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց» (Բուզ., նույն տեղում, նաև՝ Նոր Բառգիրք, հ. 1, էջ 276)։ Մնացած հատվածի համար տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. Բ, էջ 279—283, 285—286։*

էջ 301, տ. 34. Այդ ծեսով անցնում էր Արածանին — հայոց սիրելի Հորդանանը:— *Արածանին Հորդանանի հետ համեմատելու տեքստային հիմքը Ագաթանգեղոսի, Խորենացու և Ավետարանի վկայություններն են։ Հմմտ. «առեալ երանելւոյն Գրիգորի զաշխարհական զօրացն և զինքնին զթագաւորն... զմեծամեծսն ամենայն, և ամենայն մարդկաբանակին հանդերձ՝ ընդ այգն ի լուսանալ առաւօտուն յափն Եփրատ գետոյն մատուցանէր, և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» (Ագաթ., էջ 464, նաև՝ Խոր. Գ, գլ. ԿԶ), և «Եւ եկն Յովհաննէս մկրտէր յանապատի... և մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց» (Աւետարան ըստ Մարկոսի, Ա, 4—5)։ Ըստ Ինճիճյանի հայերի մասսայական մկրտությունը կատարվել է Բագավանի մոտ (Ստորագրութիւն, էջ 410)։*

էջ 301, տ. 35. Վեհապանծ Նպատը — հայոց սուրբ Սինան, որի այրերում ճգնեցյալ նա[17]։— *Նպատ լեռան մասին տե՛ս Ինճիճյան, Ստորագրութիւն, էջ 403—404։ Սինա լեռը, ըստ Աստվածաշնչի այն նվիրական վայրն էր, որտեղ Եհովան հայտնվեց Մովսեսին (Ելք, Գ—Դ) և օրենքներ ավեց Իսրայելին (Ելք, ԺԹ)։ Րաֆֆին Սինա տեղանունը կիրառում է Նպատի մեծությունը ընդգծելու համար (որպես որոշակիորեն խմաստավորում ստացած հատուկ անուն. Սինա = սուրբ լեռ. Եհովայի հայտնված վայրը, նոր ուսմունքի սկզբնավորման վայր և այլն)։*

էջ 302, տ. 6. Դա ս. Հովհաննու վանքն է ~ Բագավանը[18] ~ «վանատուր» (հյուրասեր) Արամազդի[19] ~ «ամանորի» (նոր տարու) աշխարհախումբ տոնախմբությունը[20] ~ սուրբ սեղանին[22]։— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Ագաթանգեղոսի և Խորենացու տեքստերը ըստ Ղ. Ինճիճյանի մեկնությունների. «Եւ գլխշատակս վկայիցն բերելոց ժամագրեաց ի տօն մեծ Հռչակեալ, անուանեալն պաշտաման ի ժամանակի՝ զիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր» (Ագաթ., էջ 464, 466), «ի Բագնացն աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւր երեկօթիւք։ Յորում և զկնի Վաղարշ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամին նորոյ, ի մուտս Նաւասարդի» (Խոր. Բ, գլ. ՀԷ)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 406—410։*

«վանատուր» (հյուրասեր) Արամազդի — *Հմմտ. «Հիւրընկալ և վանատուր՝ են մականունք որմզդայ, այն է արամազդ կամ գիոս, զի հեթանոսք համարէին զարամազդ իբր չաստուած պաշտպան հիւրընկալութեան, և վրէժխնդիր անիրաւութեանց եղելոց առ հիւրս» (անդ, էջ 409)։*

էջ 302, տ. 23. Ո՞վ կործանեց այդ մեհյանը ~ Հայոց Գրիգոր Լուսավորիչը ~ Տրդատ թագավորին յուր բոլոր մեծամեծների հետ։— *Հմմտ. «Եւ եդ անդ հիմունս, և շինեաց եկեղեցի» (Ագաթ., էջ 462)։ Տե՛ս նաև Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 408—409։*

էջ 302, տ. 30. Հայերը մինչև այսօր հավատում են ~ մինչև ամենքը միրավեցան[23]։— *Աղբյուրը Ագաթանգեղոսի տեքստն է. «Եւ իբրև իջանէին մարդիկն ամենայն և թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երևեալ յԱստուծոյ... Եւ լոյս սաստիկ երևեալ ի նմանութիւն սեան լուսաւորի՝ և եկաց ի վերայ ջուրց գետոյն, և ի վերայ նորա նմանութիւն աչքունական խաչին... Եւ ընդ երկիս աւուրն նշանն աներևոյթ լինէր, և նորա ի վեր յաւանն դառնային» (Ագաթ., էջ 464, նաև՝ Խոր. Գ, գլ. ԿՁ)։*

էջ 303, տ. 25. Այստեղ նահատակվեցան Ոսկյանք[24], այստեղ նահատակվեցան և Սուքիասյանք[25]։— *Տե՛ս Մկրտիչ վարդապետ Ավգերեան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց Որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց, հ. Բ, Վենետիկ, 1811, էջ 90—120 («Վկայաբանութիւն Սրբոց Սուքիասեանց» գլուխը), 121—130 («Վկայաբանութիւն Սրբոց Ոսկեանց» գլուխը)։*

էջ 303, տ. 27. Այստեղ, որպես Իսրայելի Մովսեսը Նաբավ լեռան[26] ~ Նպատ լեռան մթին այրերի մեջ[27]։— Մովսես — *հրեական հռչակավոր մարգարեի և օրենսդրի անու-*

նը։ Համեմատությունը կատարված է Աստվածաշնչի (Երկրորդումն օրինաց, ԼԲ, 48—52, ԼԴ, 1—8) և Խորենացու տեքստերի զուգադրությամբ։

Էջ 303, տ. 31. սկսյալ Մաժան Քրմապետի[28] արյան հեղումից.— Մաժանը Արտաշես Բ-ի որդիներից էր, որին հայրը «կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ» (Խոր. Բ, գլ. ԾԴ)։ Նրան սպանում են եղբայրները՝ Արտավազդն ու Տիրանը, մատնության պատճառով. «տարեալ թաղեցին ի Բագնաց աւանին» (Խոր. Բ, գլ. ԾԵ)։

Էջ 304, տ. 12. Այսպես հազարավոր անձինք փղերի ոտքի կոխան եղան[29]։— Տե՛ս սույն գլխի բնաբանը։ Պատումի շարունակության մեջ, մինչև մովսեսյան-մովսեսի ուղղակի խոսքը (— Ձեր ամուսինների...), մշակված են բնաբանված տեքստի վկայությունները։

Էջ 307, տ. 35. Սյունյաց Անդովկ իշխանը ~ դստեր՝ Փառանձեմի հետ[35]։—...տիկինը նրա հար հույրն էր[33].— Րաֆֆին Սյունյաց տիկնոջը համարում է Վաչե Մամիկոնյանի դուստր և Արտավազդ Մամիկոնյանի՝ Վահանի հոր, քույրը՝ հիմք ընդունելով Բուզանդի վկայությունը (Դ, գլ. ԺԴ), որտեղ սակայն որոշակիորեն չի ասվում, թե Անդովկը Մամիկոնյան տնից հատկապես ո՞ւմ աղջկա հետ էր ամուսնացել («Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նորա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին»)։ Արշակը Փառանձեմին կնության առավ Գնելին սպանելուց հետո. «Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն» (Բուզ .Դ, գլ. ԺԵ, նաև՝ Խոր. Գ, գլ. ԻԴ)։ Րաֆֆին դարձյալ շեշտում է հերոսների միջև եղած տոհմաբանական կապը պատումի շարունակության մեջ նկարագրված դրվագի իմաստային լարվածությունը ուժեղացնելու նպատակով։

Էջ 308, տ. 7. Իր ամուսին Անդովկ իշխանը ~ սարալ Սյունիք[36] ~ դարձյալ պատվով ետ ուղարկեց[38]։— Շապուհը հիշում է Բուզանդի Դ դպրության ԻԱ գլխի տեքստը. «Ներսեհ արքայն Պարսից .. առեալ զամենայն զօրս իւր... և ամենայն կանանօքն, և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս ի սահմանս Հայոց։ ... զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց... և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն և զԱնդովկն. ...անկանէին ի վերայ թագաւորին Պարսից... Եւ առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զբամբիշնս։ Րաֆֆին այս կռվում գլխավոր դեր է հատկացնում Անդովկին. ըստ Բուզանդի, գերիներին ո՛չ թե Սյունիք, այլ Հունաց երկիր են տանում։ Կանանոցը ետ է ուղարկվում կայսեր հետ դաշինք կնքելուց հետո՝ ի տրիտուր Ներսեհի մոտ պահված պատանդների և գերիների. «Եւ հանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր»։

Երբ իմ ամուսինը Բյուզանդիայում չգտնվեր[37]— Անդովկը Բյուզանդիա է գնում Շապուհի Սյունիք կատարած արշավանքից հետո. «Յայնժամ Անդովկայ պարապ գտեալ ժամ թողու զերդն և մեծաւ աւարաւ անցանէ ի Հոռոմայեցւոց աշխարհն։ Եւ անդ մեծագոյն առեալ պատիւ՝ անդէն մեռանի» (Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1983, էջ 109)։

Էջ 308, տ. 27. ավերակ դարձրեց իմ մայրաքաղաք Տիգրանը ~ մոխրի նման փոշի դառնա[40]։— Այս դրվագը պատմում է Մովսես Կաղանկատվացին (տե՛ս նշվ. գիրքը, էջ

107—112), և, օգտվելով նրանից՝ Ստեփանոս Օրբելյանը (Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 29—37)։ Րաֆֆին օգտագործել է վերջինիս տեքստը. Հմմտ. «Եւ նորա բան խնդրեալ յարքայից արքայէն առ ի բառնալ զսանդն ի մոխրով հնոցի զօր ի զարպասին եղեալ կափնելով վերափոխմամբ յիշելով ի վերայ մոյրոյն ասէին. «ԵԹէ Սիւնեաց տէրանցն նախագահութիւն տէրութեանն ընդ այս մոխիրս ի վայր լիցի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենացն»» (Նշվ. գիրքը, էջ 40)։

էջ 309, տ. 5. այն ծանր վիրավորանքից հետո ~ իմ ամուսնին իր տան մեջ, իր սեղանի վրա :— *Անդովկը վիրավորվել էր, քանի որ խրախության սեղանին Շապուհը նրան էր հատկացրել 14-րդ բարձը. «Եւ նա հպարտութեամբ խրոխտացեալ՝ ոչ ինչ հաշակեաց յայնմ ուրախարար արքունական ընդունելութենէն» (Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 31—32, նաև՝ Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 107)։*

էջ 309, տ .10. յուր ամրոցի՝ Բաղաբերդի[43]— *Վերադառնալով արշավանքից և տեղեկանալով Անդոկի կատարած ապստամբության մասին՝ Շապուհը հարձակվում է Սյունիքի վրա և երեք անգամ ապարդյուն փորձ է անում Բաղաբերդը գրավելու, մինչև որ պարսից մեծամեծները համոզում են նրան դադարեցնել պաշարումը՝ անօգուտ զոհեր չտալու համար (Օրբելեան, գլ. Ի)։*

Թ. ԱՐՏԱԳԵՐՍ

էջ 309, տ. 22. «Ապա իբրև եկին ~ տեղին»: Փաւստոս — *Բնաբանված տեքստից (Բուզ. Դ, գլ. ԾԵ) Րաֆֆին երեք հատված է բաց թողել, որոնք արտահայտված են բազմակետերով, ինչպես նաև* տիկին *բառին ավելացրել է* Ն *տողը (տիկին-տիկինն)։ Արտագերսի պաշարմանը Շապուհ չի մասնակցել, այլ ուղարկել է Զիկ և Կարեն զորավարներին (տե՛ս նույն տեղում)։ Այդ մասին պատմող տեքստը անմիջականորեն նախորդում է բնաբանված տեքստին Բուզանդի պատմության մեջ։ Արտագերսի մի այլ պաշարում նկարագրում է Խորենացին (Գ, գլ. ԼԵ), որը Րաֆֆին օգտագործել է «Հայր մարդպետը» գրքում։*

էջ 309, տ. 35. Արտագերս բերդը[1], որ մեջ ~ Փառանձեմ տիկինը՝ արքայական գանձերի հետ:— *Հմմտ. «Նա և ոչ զշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առնն իւրոյ, այլ հանգերձ գանձիւք անկաւ յամուրն Արտագերից» (Խոր. Գ, գլ. ԼԵ)։*

էջ 310, տ. 28. Այդ գետերի միջին հարթավայրերում մի ժամանակ ոռոգված էին նայոց վիշապները[4] ~ ամեն կողմ:— *Րաֆֆին օգտագործել է Այսմավուրքի և Աստղիկի վկայությունները ըստ Ղ. Ինճիճյանի մեկնությունների. «Վիշապաձոր: Կոչեցաւ այսպէս ի յաճախութենէ վիշապաց. քանզի գրի յայսմ. մարտի 6.* Եկեալ սուրբն Թաթուլ և ատող եղբայրն իւր Վարոս ի սահմանս Գարեգինից մերձ գեղաքաղաքին կաղզուանոյ, և բնակեցան ի Վիշապաձորն կոչեցեալ տեղի, ի մէջ անհուն քարանձաւացն՝ յորում ազգի ազգի վիշապք և գազանք որջացեալք էին, որք հալածեցան անտի աղօթիւք սրբոցն մինչև ցայսօր||։ Սոյնպէս գրի և ի սեպ. 30։ Առ ժամանակօք ասողկայ կոչէր Գազանաձակf. և սակս բնակութեան Թաթլոյ՝ Թաթլոյ վանք. որպէս գրէ նա ինքն բ. 2» (Ստորագրութիւն, էջ 388)։*

Էջ 310, տ. 33. Այնտեղ, ուր Ախուրյանը ~ ճիշտ Երվանդաշատը[5] ~ Երվանդը[6] մինչև Արշակունիների ~ Կապույտ գետը[7]:— *Երվանդաշատի դիրքը Րաֆֆին նկարագրում է ըստ Խորենացու. «Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագոյնս ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիս յարևմուտս կոյս, ի բարձրաւանդակ մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետոյ» (Բ, գլ. ԼԹ)։* Երվանդ Բ *թագավորի մասին ավանդույթների վկայությունները Րաֆֆին մանրամասնորեն մշակել է «Հայոց պատմություն» երկում (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 702, էջ 54—58)։*

Էջ 311, տ. 3. Արտագերսը ծանոթ էր Հռոմին ~ Կայիոս կեսարը, Օգոստոս կայսրի որդեգիրը ~ վերք ստացավ բերդի Ատոոն իշխանից[8]:— *Րաֆֆին օգտվել է հռոմեական պատմիչների վկայություններից ըստ Ղուկաս Ինճիճյանի մեկնությունների. «Բայց Արտագերս շինեալ կայր և նախ քան զարշակ, զի օտար ազգաց պատմագիրք՝ բազմօք յառաջ քան զարշակ յիշատակեն զայս բերդ, որոյ հրամանատար Ատտուսս կամ Ադդոն անուանեալ, և ի Փլօրոսէ յապաւմամբ առաջին վանկի Տօմնէս կամ Տօննէս ձայնեալ, նենգութեամբ առ պարսպաւ կոչեալ զԿայիոս կեսար ի մահ վիրաւորեաց, զոր կայսեր Օգոստոսի առաքեալ էր ի հնազանդեցուցանել զՀայս, որպէս գրեն Վէլլէյոս, զոնարաս և սդրաւոն. ...Եւ այս եղև յերրորդ ամի տեառն՝ ըստ ուսսերիոսի» (Ստորագրութիւն, էջ 397)։ Տե՛ս նաև Չամչյանց, Հ. Ա., էջ 280—281։*

Էջ 311, տ. 12. Նրա անմատչելի, բարձրադիր ~ Ավելի քան բերդի ամրությունը, անխորտակելի էր պաշարյալների եռանդը:— *Ըստ Բուզանդի, Արտագերսի հաջող պաշտպանության պատճառը բերդի դիրքն էր. «և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին» (Դ, գլ. ԾԵ)։ Րաֆֆին այս վկայությունը օգտագործում է որպես համեմատության եզր («ավելի քան բերդի ամրությունը»), պաշտպանության հաջողությունը կապելով պաշարյալների քաջության և անձնազոհության հետ. դա է պատճառը, որ հեղինակը բնաբանից բաց է թողել «Իսկ նորա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղւոյն ամրութիւնն» շարույթը։*

Էջ 312, տ. 26. Դո՛ւ, որ այդքան գեղեցիկ ես ~ կոշտ է և անզգա:— *Փառանձեմի «սքանչելի գեղեցկության» մասին վկայում է Բուզանդը. «Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ որումն... որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ։ ...Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր» (Դ, գլ. ԺԵ)։*
Սյունեցիներին *Շապուհի տված բնութագրի հիմքը Կորյունի, Օրբելյանի վկայություններն են և Ինճիճյանի մեկնությունները (Ստորագրութիւն էջ 231—232)։*

Էջ 314, տ. 12. Մտաբերո՞ւմ ես, թե քանի-քանի անգամ ~ իսկ ինքդ միայն փախել ես մեր երկրից[12]:— *Տե՛ս Բուզ. Դ, գլ. ԻԱ, ԻԲ, ԻԴ, ԻԵ։ Հմմտ. «և միայն ճողոպրեալ արքայն Պարսից Շապուհ փախչէր», «բայց միայն միանձի մազապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից», «բայց միայն թագաւորն միանձի ճողոպրեալ մազապուր փախչէր», «Միանձի ճողոպրեալ թագաւորն փախչէր»։*
Փառանձեմի պատասխանի մեջ Րաֆֆին օգտագործում է վեպի առաջին մասում, «Անուշ բերդ» և «Շապուհը Զարեհավանի ավերակների մոտ» գլուխներում մշակված աղբյուրները։

Էջ 316, տ. 4. Գլխին կրում էր ~ վարդագույն բավիշով:— *Փառանձեմ թագուհու*

արդուզարդն ու տարազը նկարագրելիս Րաֆֆին օգտագործում է Ղ. Ինճիճյանի «Հնախոսությանց» «Սովորությունք ի զգեստս կանանց» գլուխը և Բուզանդի վկայությունները (Ե, գլ. ԼԸ)։

էջ 316, տ. 36. Հանդիսականներից ոչ ոք նստած չէր, բացի Խադ[20] եպիսկոպոսը, Ներսես մեծի տեղապահը ~ Բյուզանդիա։— *Արքունիքում, արքայի ներկայությամբ նըստելու Րաֆֆու նկարագրած կարգի մասին վկայում է Մխիթար Գոշը. «առաջի արքայի մեծամեծ իշխանք մի նստցին, բայց եթէ հրամայէ։ Ի սեղան արքայի բայց ի հայրապետէ մի ոք կերիցէ, և յորժամ նա կամեսցի. այլ յարքունիս իւրնիշխան լիցի հայրապետն նստել, այլ ոչ արքայ ի տուն հայրապետին» (Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Եր., 1975, էջ 29, տ. 22—26)։*

էջ 317, տ. 15. Որդին կռվում էր հոր դեմ, եղբայրը՝ եղբոր դեմ։— *Րաֆֆին օգտագործել է Մարկոսի ավետարանի տեքստի այն հատվածը, որտեղ Քրիստոսը նկարագրում է արդար դատաստանը. «Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ՝ և հայր զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց, և սպանանիցեն զնոսա» (ԺԳ, 12—13)։*

Ժ. ՄՈՒՇԵՂ «ԽՈՏՈՐՆԱԿԻՆ ԽՈՏՈՐՆԱԿ»

էջ 321, տ. 12. Մուշեղ «Խոտորնակին խոտորնակ»— *Վերնագրում Մուշեղ հատուկ անվան խոշոր տպագրանիշի միջոցով առանձնացնելու մասին տե՛ս Գ. Գասպարյան, Րաֆֆու երկերի ակադեմիական հրատարակության մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 4, էջ 218։*

էջ 321, տ. 14. «Եւ նստանէր ~ Վասակայ» Փաւստոս։— *Այս գլխի գործողությունների հիմքում ընկած տեքստը ժամանակագրական առումով (ըստ Բուզանդի) հաջորդում է Սամվելի՝ հորը և մորը սպանելու դրվագին։ Այն տեղի է ունենում Պապին թագավորեցնելուց հետո, որը վեպում արտացոլված չէ։ Րաֆֆին այն հետ է բերել («Արտաշիրսի պաշարումը լուծելուց հետո»), այդ պատճառով էլ բնաբանված տեքստից բաց է թողել Պապին վերաբերող հատվածը («և լեալ խոստով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց»— Բուզ. Ե, գլ. Բ)։ Փակագծերում դրված* Պարսից *բառը հեղինակի հավելումն է։ Բուզանդի տեքստում* յաւագանից *բառի փոխարեն դրված է* յաւագանոյն։ *Գրաբարում ոչ* աւագ *և ոչ էլ* աւագանի *բառերի հոլովական հարացույցներում* յաւագանից *ձևը չկա։ Ըստ երևույթին,* յաւագանոյն *ձևի նախավերջին երկու տառերը՝* ոյ, *Րաֆֆին շփոթել է* ց *տառի հետ, այդ պատճառով էլ բաց է թողել վերջին ն-ն, որպես վրիպակ։ Բուզանդի տեքստում* նազարաւ *բառը գրված է առանց ն հոդի։*

Ժամանակագրական տեղաշարժը առաջ է բերել մի շարք հավելումներ, որոնք սույն դրվագը զոդել են պատումի ընդհանուր հոսքին։

էջ 321, տ. 31. Նա նստավ Թարվեզ[1]— *Թարվեզը՝ Թավրիզ անվան հին ձևն է (Բուզանդի տեքստում օգտագործված է երկու ձևով՝* Թաւրէժ *և* Թաւրէշ)։

էջ 324, տ. 5. այն ողորմելի ուռուկներից[6] մեկը ~ գետնափոր ծակերի մեջ։— *Աղբյուրը Խորենացու տեքստն է. «Քանզի բազում հալածեալ լինէին, իբր ոլոյծ համարեալ յօրինաց. և զարուես փախստեայս առնէին. զի մի ի նոցանէ յայլս փոխեսցի ախտն. որոց*

ղազարք՝ անապատք և ամայիք, և ծաձկոյթ՝ վէմք և մացառք, ոչ յումեք գտանելով մխիթարութիւն բժշկութեանցն» (Գ, գլ. Ի)։ Րաֆֆին կերպավորում է այդ հալածված ուրուկներից մեկին։

Էջ 328, տ. 3. **Հեռու՝ Խորայեկի ճերոսը ~ մինչև վերջացնի յուր կռիվը**[7]։— *Տե՛ս Աստուածաշունչ, Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ, Ժ, 12—15։*

Էջ 334, տ. 12. **Իսկ ես նրա բոլոր կանանցը ~ Շապուհի արքունիքը**։— *Հմմտ. «Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանապարհ տայր նոցա կազմել ամենեցուն, և հանել արձակել զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի» (Բուզ. Ե, գլ. Բ)։*

Էջ 335, տ. 5. **Ոլիմպիադային սպանել տվեց ~ եղբոր որդի Տիրիթին**[14]։— *Եթե վեպի առաջին մասում (գլ. Դ) Րաֆֆին Տիրիթի սպանությունը նկարագրում է ըստ Խորենացու տարբերակի, ապա այստեղ հետևում է Բուզանդին (Փառանձեմը՝ որպես Տիրիթի սպանության նախապատճառ – տե՛ս Բուզ. Դ, գլ. ԺԵ)։*

Վաղինակին սպանել տվեց – *աղբյուրը Խորենացու տեքստն է. «Եւ փոխանակ Վահանայ Ամատունւոյ սպարապետ կացուցեալ Հայոց արևելեայ զօրուն՝ զհաւատարիմ իւր զՎաղինակ Սիւնի» (Գ, գլ. ԺԸ), «և զՎաղինակ տայ Արշակայ սպանանել, և փոխանակ կարգել զիւր հայրն զԱնդովկ» (Գ, գլ. ԻԴ)։*

Էջ 337, տ. 33. **կրկնած ժանավարների**[16] **մեջ**.— **Ժանավար** — *ըստ Ստ. Մալխասյանցի ծանոթագրության պարսկերեն բառ է* — zanbar, *պատգարակի մի տեսակ՝ մարդիկ և իրեր փոխադրելու համար» (Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 325)։*

Էջ 339, տ. 36. **Մուշեղի վարմունքը ~ ճերմակ ձի նստողի փառքի համար**։— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս։ Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել... ասէր. ճերմակաձին գինի արբցէ։ Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն. և ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր համապազ զնոյն բանս ասելով՝ թէ ճերմակաձին գինի արբցէ» (Ե, գլ. Բ)։*

ԺԱ. «ԵՐԿՈՒ ՉԱՐՅԱՑ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԸ»

Էջ 340, տ. 25. **«Երկու չարյաց փոքրագույնը»**— *Այս արտահայտությունը Րաֆֆին օգտագործում է նաև «Ճանճը» պատկերում. «Երկու չարյաց փոքրագույնն է ընտրելու». դա մի առած է, որ կրկնվում է ամեն մի հայ մարդու բերանում, որովհետև մեր բնավորության հատկանիշն է» (ԵԺ 12 հատ., հ. 1, էջ 465)։ Այնուհետև հեղինակը առածի նշանակությունը բացատրում է երկու եղբայրների պատմությամբ (տե՛ս նույն տեղում)։*

Էջ 340, տ. 26. **«Ապա յետ ~ աշխարհին» Փաւստոս**։ – *Բուզանդի պատմության տեքստում այս հատվածը (Ե, գլ. Ա) հաջորդում է 4-րդ դպրությանը անմիջականորեն, ուստի «Ապա յետ այսր...» հղումը վերաբերում է այնտեղ նկարագրված դեպքերին (Մեհրուժանի և Վահանի ապստամբությունը, Արտաշատի գրավումը, Սամվելի՝ հորը և մորը*

սպանելը և այլն)։ Րաֆֆին կրկին խախտում է դեպքերի Բուզանդի նկարագրած կարգը՝ ետ տանելով դրանք, որի հետևանքով Բուզանդի «Ապա յետ այսր...» հղումը ստանում է «Մուշեղի՝ Շապուհին հաղթելուց հետո...» իմաստ։

Էջ 342, տ. 21. **Անիծյալ Վաղեսը մեռել է իրան արժանի չարամահ վախճանով**[1] ~ **առաքինի Թեոդոսը**[2]։— *Վաղեսի չարամահ վախճանը Րաֆֆին պատմում է «Հայր մարդպետը» գլխում։*

առաքինի Թեոդոսը — *Հռոմեական կայսր (379—395), Վաղեսի մահից հետո Գրատիանոսը Թեոդոսին կանչեց իր մոտ և ուղարկեց գոթերի և գերմանացիների դեմ կռվելու, որոնց հաղթելուց հետո նշանակվեց կայսրության արևելյան մասի կայսր։ 380 թ. արգելեց արիոսական և մակեդոնական աղանդները։ Նրա օրոք Հայաստանը բաժանվեց երկու մասի (387 թ.)։*

Սույն հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Խորենացու տեքստը. «Բայց Վաղեսի կայսեր ըստ արժանի խրոց խորհրդոցն զչարափառական գեհեննին աստէն բերելով զօրինակ, հրակէզ եղեալ յԱդրիանապօլիս՝ սատակեցաւ. և առնու զԹագն Թէոդոս» (Գ, գլ. ԼԳ)։

Էջ 343, տ. 24. **յուր Բաբիկ որդու հետ ~ հռովմայեցոց ծառայության մեջ**[6] **և այլն**։—*Աղբյուրը Ստ. Օրբելյանի պատմության տեքստն է. «Իսկ Անդոկայ՝ Սիւնեաց տեառն, որ պարապորդ գտեալ. և եկեալ յամրոցէն Բաղաբերդի մեծաւ աւարաւ, անցանէ յաշխարհն Հոռոմոց առ մեծ ինքնակալն Թէոդոս՝ արքայն Յունաց. և ի նմանէ պատիւ մեծագոյն գտեալ, այսինքն պատրկաց պատրիկ արարեալ զԱնդոկն» (տե՛ս նշվ. գիրքը, գլ. Ի, էջ 36—37), «Իսկ ի վախճանելն պատրկաց պատրիկին Անդոկայ մնաց որդի և անմխիթար միայնակ որդին իւր Բաբիկ։ Եւ զի թէպէտ բազում և մեծամեծ ունէր պատիւ ատուածապատկ և ի սուրբ թագաւորէն Թէոդոսէ մեծէ (Րաֆֆու տեքստում՝ «նախագուշակում էր որդու համար փայլուն հաջողություններ հռովմայեցոց ծառայության մեջ»)» (նույն, էջ 37)։ Բաբիկի կրկնային «ճարպկությունները» Օրբելյանը նկարագրում է նրա՝ Պարսից արքունիք գնալուց հետո. «և բազում արութիւնս պէսպէս յաղթութեան Պարսից ցուցեալ» (նույն, էջ 38)։* Պատրկաց պատրիկ *տիտղոսի մասին տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Բ, էջ 228—229։*

Էջ 343, տ. 38. **Նորընտիր կայսրը նրան չի թողնի ամառանոցի մեջ ~ Ներսեսը ազատված կլինի**։— *Ներսես մեծի աքսորից ազատվելու մասին պատմում են Խորենացին և Բուզանդը (Դ, գլ. ԺԳ)։ Տվյալ դեպքում Րաֆֆին օգտագործում է Խորենացու տեքստը. «Սա դարձոյց զամենայն հարս սուրբս, որք յաղագս ուղղափառութեան արտասահմանեալ էին ի մեռադս, ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր ի Բիւզանդիոն՝ պահէ մեծաւ պատուով» (Գ, գլ. ԼԳ)։*

Էջ 344, տ. 6. **Թեոդոսը առաջուց ճանաչում է Ներսեսին**[7] ~ **նրան**։— *Ըստ Խորենացու, երբ Վալենտիանոս կայսրը լսում է Արշակի խռովանալու մասին, Թեոդոսին ծանր զորքով ուղարկում է Հայաստան։ Երբ զորքերը մոտենում են հայոց սահմաններին, Արշակը նրանց ընդառաջ է ուղարկում Ներսես մեծին, որը հաշտություն է կնքում երկու թագավորների միջև (Գ, գլ. ԻԱ)։ Րաֆֆին նկատի ունի այս դրվագը։*

սաստիկ հարգում է նրան — *Հմմտ. «մեծարի ի նմանէ յոյժ» (նույն տեղում)։*

Էջ 344, տ. 29. Աղվանից Ուռնայր արքային[8] և Վրաց Շերգիլ արքային[9]։— *Այս երկու թագավորներին, որպես Շապուհի զորակիցների, հիշատակում է Խորենացին Զիրավի ճակատամարտը նկարագրելիս (Գ, գլ. ԼԷ)։ Ուռնայրի մասին ավելի ընդարձակ պատմում է Բուզանդը (Ե, գլ. Դ)։ Գել կամ Գիլ ցեղերի հին անունն է հայկական մատենագրության մեջ։*

Էջ 345, տ. 25. Քուշանների արշավանքն է[10]— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ զայնու ժամանակաւ խաղացուցաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բահլ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սահմանակալին Շապհոյ և թագաւորին Պարսից» (Ե, գլ. Է)։ Այս կռվին մասնակցում էր նաև Դրաստամատը, որը փրկեց Շապուհին և Արշակին այցելելու իրավունք ստացավ։ Այս դեպքում ևս Րաֆֆին նոր է բերել դեպքերի ժամանակագրական կարգը։ Ըստ Բուզանդի պատմության՝ այս հարձակումը տեղի է ունենում պարսիկներին Հայոց աշխարհից քշելուց հետո, երբ Պապը արդեն թագավորում էր։*

Էջ 346, տ. 17. Մանվել Մամիկոնյանը ~ գրում էր Մուշեղին ~ ի կորուստ կմաունե.— սպարապետի հարազատ եղբայրը[12]— *Մանվել Մամիկոնյանը Վարազդատին հղած պատգամի մեջ ասում է. «Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ»։ Վարազդատի պատասխան պատգամի մեջ ասվում է. «չհզօրէն քումէ ի Մուշեղայ» (Ե, գլ. ԼԷ)։* Պարսկաստանում գտնված հայկական նեձնյազարնի զորավարն էր[13] — *Շապուհը քուշանների դեմ արշավելիս Հայոց երկրից գերության տարած «զամենայն այրեձի զումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան» (Ե, գլ. Է)։ Րաֆֆին Մանվելին համարում է այս գնդի զորավար։ Մանվելի նամակում որպես ծրագիր ներկայացվող դեպքերը նկարագրված են Բուզանդի Ե դպրության ԼԷ գլխում։*

ԺԲ. ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏԸ

Էջ 352, տ. 3. «Ու եղև յետ ~ խաղացուցին (ի Պարսս)»: Փաւստոս:— *Բուզանդի տեքստից (Դ, գլ. ԾԵ) որպես բնաբան մեջբերված հատվածի հեղինակային բացթողումները հիմնականում արտացոլված են պատումի մեջ, բացի մեկից («և թշնամեաց զտիկինն մեծամեծս իբրև զբոզ մի»)։* Բերդնորդացն և յԱռաստկեան *բառերը Բուզանդի տեքստում գրված են* բերդնորդեացն և յԱռաստակէան *ձևերով։ Փակագծերում գրված շարույթները (զօրականք Պարսից, ի Պարսս) ավելացրել է հեղինակը։*

Էջ 352, տ. 28. տեղափոխեց Մամիկոնյանների ~ լեռների մեջ:— *Ինչպես թագուհու կարգադրությունը, այնպես էլ բոլոր այս «մեկնումները» և «տեղափոխությունները» վկայված չեն աղբյուրներում։ Րաֆֆին «հեռացնում է» Արտագերսից իր իսկ բերած այն հերոսներին, որոնք պատումը շարունակելու համար անհրաժեշտ են (մնացած դեպքում բոլորը զոհ կգնային ժանտախտին ըստ Բուզանդի)։*

Էջ 352, տ. 32. Մերուժան Արծրունին պարսկական զորքերով եկավ և պաշարեց Արտագերսը:— *Ըստ Խորենացու, Շապուհը «բազում զօրս գումարեալ ի ձեռն Մեհրուժանայ Արծրունւոյ և Վահանայ Մամիկոնէի... արձակէ յաշխարհս Հայոց. որք եկեալ նստան շուրջ զբերդաւն Արտագերից» (Գ, գլ. ԼԵ)։*

էջ 353, տ. 20. Վաղեսի վերջին օրերում ~ և դժբախտ կայսրը[4]:— *Հմմտ. «Եւ սա ինքն Վաղէս ընկալեալ վէրս՝ ածաւ ի հիւղ ուրումն շինականի, և թշնամիք ոչ գիտելով՝ թէ անդ իցէ Վաղէս, արկին հուր ի շէնն, ուր կիզաւ հիւղն և ընդ նմա Վաղէս ի հասակի ամաց 50, թագաւորեալ ամս 15, որում յաջորդեաց մեծն Թէոդոս» (Հ. Մատթէոս Վ. Մագար-Թէոփիլեանց, Կենսագրութիւն Սրբոց Հարանց, հ. Բ, Վենետիկ, 1839, էջ 550) տե՛ս նաև* Аммиан Марцеллин, История, *XXXI, 4—6, 12—13)։*

էջ 353, տ. 26. Երբ նրա մահից հետո, Սիրմիումում ~ նա յուր մայրաքաղաքը:— *Գրացիանոս (Գրատիանոս) (359—383) — հռոմեական կայսր, Վալենտիանոս կայսեր որդին, որը հորն հաջորդեց 375 թ., 16 տարեկան հասակում և զոհվեց Մաքսիմոս զորապետի բարձրացրած ապստամբության ժամանակ։ Թեոդոս Մեծը սկզբնապես նրա օգնականն էր, հետո գահակիցը՝ արևելքում։ Տեքստում նշված գոթերի արշավանքը տեղի է ունեցել 381 թ.։*

էջ 354, տ. 3. Նրա նախորդը, հալածասեր Վաղեսը ~ կայսրը անձամբ ներկա էր գտնվում:— *Տե՛ս Խորենացու պատմության «Յաղագս թագաւորելոյն Թէոդոսի Մեծի, եւ ժողովոյն որ եղեւ վասն Հոգեմարտացն» գլուխը (Գ, գլ. ԼԳ)։*

էջ 354, տ. 16. Կայսրի խոստումների համեմատ ~ զորությունները[7]...»:— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Եւ դեսպանս առէպ առէպ յորդւոյ նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շարաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դրան ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. ...Այլ որք գային և երթային, առէպ առէպ գային՝ թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և զունդ կայսերական ի թիկունս օգնականութեան» (Դ, գլ. ԾԵ)։*

էջ 354, տ. 24. Ամբողջ տասն և երեք ամիս[8] սպասեց նա.— *Հմմտ. «և յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն» (Բուզ. Դ, գլ. ԾԵ)։*

էջ 355, տ. 12. սկսվեցավ և սովը.— *Արտագերսի պաշարման նկարագրության մեջ (Բուզ. Դ., գլ. ԾԵ, Խոր. Գ, գլ. ԼԵ) նման փաստ չի նշվում։ Րաֆֆին* սով *իրավիճակը ավելացրել է պատումի շարունակության մեջ մի քանի դրվագների մշակման համար (Փառանձեմի նաժիշտների ապարդությունը՝* սովից *փրկվելու համար)։*

էջ 355, տ. 35. տասն և մեկ հազար ~ և հինգ հազար տիկիններով ~ տասն և յոթ հազար զոհեր — հինգ հազար իշխանազն տիկիններով[12]— *Բուզանդի տեքստում՝ «և կանայք իբրև վեց հազար»։ Րաֆֆին Բուզանդի նշած վեց հազարը բաժանել է երկու մասի՝ հինգ հազարը համարելով իշխանազն, մնացածներին, ըստ երևույթին, դասելով նաժիշտների կարգը։*

էջ 356, տ. 18. երկու գեղեցիկ Արտեմիսների նման.— Արտեմիս — *հին հունական դիցաբանության մեջ որսորդության աստվածուհու անունը։ Րաֆֆին Փառանձեմի երկու նաժիշտներին նկարագրում է՝ օգտագործելով Արտեմիսի զգեստավորության և արտաքին որոշ մանրամասնությունները։ Հմմտ. «Արտեմիս... Ձևացուցանէին զգլուխ նորա իբր ի բաղում գիսասփիւռ. զմարմին ծածկեալ ծիրանեգոյն հանդերձիւք և վերառեալ մինչև ցծունկս. աղեղըն ի ձեռին, և կապարճ յուսն» (Հ. Մատթէոս Վ. Մագար—Թէոփիլեանց, Կենսագրու-*

թին Երեւելի արանց, Հ. Ա, Վենետիկ, 1839, էջ 94—95, տե՛ս նաև Мифы народов мира, т. I, Москва, 1980, стр. 107—108)։

Էջ 357, տ. 23. Նմանում էր այն Արալեզ[15] աստվածներից ~ անմահություն էին շնորհում։— *Արալեզներ — ըստ Եզնիկ Կողբացու շնից ծնված ոգիներ, որոնք վերակենդանացնում էին, ըստ Խորենացու (Ա, գլ. ԺԵ) և Բուզանդի (Ե, գլ. ԼԶ) պատերազմում ընկած քաջերին (տե՛ս Մ. Էմին, Վէպք Հնոյն Հայաստանի, Մոսկուա, 1850, էջ 82—92)։*

Էջ 357, տ. 35. դա անխոս Կողների[16] անդամ նման էր.— Կողը, *ըստ Էմինի, Տիրին տրված ածականներից մեկն է «զոր հոգիները դժոխք տանող կը համարէին». (Էմին, Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեան, Կ. Պոլիս, 1877, էջ 22—23)։ Այդ հավատալիքի արդյունքն է «գրողը տանի քեզ» արտահայտությունը։ Րաֆֆին կիրառելով Կող ձևը ընդգծում է «հոգիները տանող, կրող» իմաստը։ (Կողների կամ Գրողների մասին մանրամասն տե՛ս Ս. Հարությունյան, Մահվան պատկերացումները հայկական անեծքներում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, № 12, էջ 53—65)։*

Էջ 359, տ. 13. Հաղթանդամ էր այդ մարդը, և յուր անձերը ~ Երկաթյի նման էր։— *Հայր Մարդպետի արտաքին գլխավորությունը նկարագրելիս Րաֆֆին օգտագործում է Բուզանդի տեքստը։ Հմմտ. «Եւ էր հանդերձ անհեդեդ մեծութեամբ. զի խորշ զխորշիւ իջանէր... Լած գօտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ի գօտւոյ զրահիցն իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր։ ...և զերանն յաղբեր կապեալ, և ի վերայ երանին խորշ ի վարտեացն իջեալ անկեալ ի վերայ երանին՝ ծածկեալ մինչև ի սրունս» (Ե, գլ. Զ)։*

Էջ 366, տ. 5. գինիները անագին կարասներով թաղված էին գետնի մեջ, հողի տակ[9]:— *Հին Հայաստանում գինու պահպանության այս ձևի մասին վկայում է Քսենոփոնը. «Իսկ նա խոստացավ այդ բոլորը անել. ու բարյացակամ դառնալով, հայտնեց, թե որտեղ է հորած գինին» (Անաբասիս, Երևան, 1970, էջ 98)։*

Էջ 376, տ. 29. Երբ առաջին անգամ ~ մերժեցի նրա հրավերը և չգնացի[25]:— *Աղբյուրը Խորենացու տեքստն է. «Ասեն այնուհետև յոյժ ննջեալ Արշակ, յոչ կամաց երթալ առ Շապուհ, և ի պահեստի լինել ի նմանէ. և բռնութեամբ հարկաւորեալ գրել, զի Փառանձեմ կին նորա եկեսցէ ի դուռն» (Գ, գլ. ԼԵ)։*

Էջ 377, տ. 24. Այդ դո՞ւ ես, Դղակ։— *Հայր-Մարդպետի անունը Բուզանդի տեքստում վկայված է երկու ձևով՝ Դրդղակ (Ե, գլ. Դ) և Դղակ (Ե, գլ. Զ)։ Րաֆֆին նախընտրել է վերջին ձևը, ըստ երևույթին, նկատի առնելով այդ ձևի կիրառման հաճախականությունը (13 անգամ, Դրդղակը՝ 1 անգամ) և բարեհնչությունը։ Բուզանդի տեքստում այս անունը կրում է ո՛չ թե Փառանձեմին անարգող Հայր-Մարդպետը, այլ նրա նախորդը, որին կրկին այդ պաշտոնին են ընտրում, երբ Մուշեղ Մամիկոնյանը սպանում է թագուհուն անարգող Հայր-Մարդպետին (Բուզ. Ե, գլ. Դ)։*

Էջ 378, տ. 11. Այդ մարդը Հայր-Մարդպետն էր ~ բայց լինում էին երբեմն բացառություններ[27]:— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին համառոտաբար վերաշարադրել է Փ. Բու-*

ճիճյանի վերլուծությունը Մարդպետական նախարարական տան մասին (Հնախոսություն, հ. 2, էջ 135—139)։

էջ 378, տ. 34. Իսկ ինքը՝ Արշակ թագավորի ∼ Շապուհ արքայի սիրելին[29]:— *Տե՛ս Բուզ. Ե, գլ. Զ։*

էջ 379, տ. 35. Նա մտավ Վան ∼ 5000 հրեա... Վանից Մերուժանը անցավ ∼ 16000 հրեա[36]:— *Աղբյուրը Բուզանդի տեքստն է. «Առին և զամուր քաղաքն Վան... քակեցին զհիմունս նորա, և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար հայ, և ութ և տասն հազար երդս Հրեայս», «Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին յԱղիովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս», «Այպ առնուին և զքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրեայ», «Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայս», «Առնուին և զՎաղարշապատ քաղաք... և խաղացուցանէին յայնմ ես քաղաքէ իննետասն երդս հազար ...զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին», «եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա... Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս ...և քառասուն հազար երդ Հայ», «ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան ... Այպ առին և զնա քանդեցին. անտի երդս Հայս երկուս հազարս, և Հրեայ երդս վեշտասան հազարս խաղացուցին» (Դ, գլ. ԾԵ)։ Բուզանդի տեքստում պարսից զորքերը Արտաշերսը ավերելուց հետո են կատարում այս արշավանքը, ըստ որում նրանք ընթանում են Արտաշատ—Վաղարշապատ—Երվանդաշատ—Զարեհավան—Զարիշատ—Վան—Նախճավան ուղերթով։ Րաֆֆին «շրջել» է պարսից զորքերի ուղերթը (Վան—Արտաշատ), քանի որ Մերուժանը, ըստ վիպական պատումի, գտնվում է երկրի հարավային շրջաններում (Վան, Աղբակ), դրա հետևանքն այն է եղել, որ Րաֆֆին Բուզանդի տեքստը մշակել է «հակառակ» ուղղությամբ։ Հայր-Մարդպետի հայտնած այս տեղեկություններն արդեն նախապատրաստում են վեպի 3-րդ մասի մի շարք գլուխների («Զվիթա», «Մի տարօրինակ ողջակեզ») ենթատեքստային իմաստների գոյավորումը։*

էջ 380, տ. 18. Առայժմ գերիների մի մասը հավաքել ∼ Նախնվանի մոտ[38]:— *Ըստ Բուզանդի (Դ, գլ. ԾԵ) Արտաշատը ավերելուց հետո «ածին ժողովեցին զամենայն զգերին քաղաքին ի մի վայր և անցուցին ըստ Տափերն կամուրջ, և առնէին համար գերույն»։*

էջ 381, տ. 1. Նա աշխատեց ոչնչացնել և բոլոր նախարարությունները:— *Տե՛ս Բուզանդի Դ-րդ դպրության «Յաղագս թէ զիարդ անմտութեամբ գնայր ի սպանութիւնս նախարարացն յանխնա (վերնագրացանկում՝* անխտիր*) Արշակ արքայ Հայոց» գլուխը (ԺԹ), նաև՝ Խոր. Գ, գլ. ԼԱ)։*

էջ 381, տ. 3. Ես չեմ բարձնում, տիկին, իմ ատելությունը դեպի առհասարակ բոլոր Արշակունիները.— *Ըստ Բուզանդի, Հայր Մարդպետը, զազանի Արտաշերս մտնելով, «Սկսաւ գնել թշնամանս ազգին արշակունեաց, զի վատախորհուրդք են, վատանշանք, կռուսին զաշխարհս ես» (Դ, գլ. ԾԵ)։ Այս հատվածը բաց է թողնված ընարանված տեքստում։*

էջ 381, տ. 28. Բայց կգա Արշակունյաց թագաժառանգը ∼ վրեժը կառնի չարա-

գործներից.— *«Բագավանդի պալատը» և վրիժառությունը նկարագրված են Բուզանդի պատմության Ե դպրության Ա-Զ գլուխներում։*

էջ 385, տ. 4. Ես իմ ամրոցի դռները չեմ բաց անի նրանց առջև ~ Թող կատարեն։— *Ըստ Բուզանդի՝ «Իսկ տիկինն Փառանձեմ իբրև տեսեալ՝ եթէ միայն մնացի, եբաց զդուռն բերդին, և թողացոյց զօրսն Պարսից մտանել ի բերդն» (Դ, գլ. ԾԵ)։ Րաֆֆին օգտագործում է Բուզանդի տեղեկությունը ժխտական ձևով («եբաց զդուռն բերդին»—«իմ ամրոցի դռները չեմ բաց անի»)։ Մեջբերված հատվածը բնաբանված տեքստի հատվածներից է, որը հեղինակը բաց է թողել (ուստի և այս բացթողումը բնաբանում պայմանավորված է Բուզանդի տեքստի իմաստի ժխտումով (ժխտական ձևի կիրառությամբ)։*

էջ 386, տ. 21. Ալանոզան[42], քո ծառան։— Ալանոզան — *այս անունով զորավար հիշատակում են թե՛ Բուզանդը (Դ, գլ. ԼԸ), թե՛ Խորենացին (Գ, գլ. ԼԴ, ԼԵ)։ Սա Արշակունյաց տոհմից էր, Արշակ Բ-ի ազգակիցը, բայց ծառայում էր Սասանյան Շապուհին։ Արտաշերսի պաշարման՝ Բուզանդի և Խորենացու նկարագրություններում նրա անունը չի հիշատակվում։ Րաֆֆին նրան «կցել է» Արտաշերսի պաշարմանը, որպեսզի Փառանձեմին «ուղեկցի» Պարսկաստան (տե՛ս տեքստի հաջորդ պարբերությունը)։ Ըստ Խորենացու՝ Փառանձեմին Պարսկաստան են տանում Մերուժանն ու Վահանը (Գ, գլ. ԼԵ), ըստ Բուզանդի՝ Զիկ և Կարեն զորավարները (Դ, գլ. ԾԵ), իսկ Մերուժանին, Վահանին, Զիկ և Կարեն զորավարներին «ազատում է» այդ պարտականությունից վեպի երրորդ մասում նրանց ներկայությունն ապահովելու համար։*

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

Ա. Արարատյան դաշտի առավոտը

էջ 388, տ. 4. «Իսկ յայսմ ժամանակի ~ իւրեանց զօրացն» Փաւստոս։— *Բնաբանված տեքստում (Բուզ. Դ., գլ. ԾԵ) փակագծերում դրված* Մերուժանն Արծրունի և Վահան Մամիկոնեան *շարույթը ավելացրել է Րաֆֆին։ Այս հավելումը փոխել է Բուզանդի տեքստի ենթադրելի ենթական (Զիկ և Կարեն զորավարներ — տե՛ս հղված գլխի սկիզբը)։*

էջ 389, տ. 5. Իսկ այս առավոտ չկային նրանք,— չկային նախարարական իշխանազն պատանիները ~ մի առանձին կենդանություն էին բաշխում Երեւշատ դաշտավայրին[2]։— *Արարատյան դաշտի որսորդական գեղեցկությունների մասին վկայում է Ղազար Փարպեցին (Ղազար, էջ 24)։*

էջ 390, տ. 28. դեպի Արաքսի աջ ափը.— *Մինչև պատումի այս հատվածը Րաֆֆին կիրառում էր գետի անվան Երասխ ձևը, այստեղից սկսած մինչև պատումի ավարտը հեղինակը կիրառում է գետի անվան Արաքս ձևը։*

էջ 394, տ. 3. Վրաններից մեկը ~ մի դրոշակ արծվաթև վիշապի նշանով ~

մի դրոշակ արծվի նշանով[9]:— *Այս նշանների մասին պատմիչների վկայությունները և դրանց վերլուծությունը տե՛ս Ինճիճյան, Հնախոսություն, հ. բ, էջ 235—240, «Դրօշք նշանք և վերտառութիւնք Հայաստանեայց» գլուխը։*

չինկարամիր էր, և գլխին ծածանվում էր մի դրոշակ արծվի նշանով[9]—հմմտ. *«և չինկակարմիր խոյան, և ի վերայ խորանին արծուի նշան, և սրահակս մեծամեծ և կապուտակ երկնագոյն հովանոցս» (Բուզ. Ե, գլ. ԼԸ)։*

Էջ 401, տ. 21. Քո ծառաների թիվը ~ հարյուր, երկու հարյուր ծառաներ ունենաս[11].— *«Արձագանքում» տպված վեպի տեքստի այս հատվածում «հարյուր, երկու հարյուր» շարույթի փոխարեն գրված է «հիսուն, վաթսուն» (տե՛ս «Բնագրային տարբերություններ» բաժինը)։ Րաֆֆին փոխել է թիվը, քանի որ Սամվելի ծառաների թվի (40 հոգի) և Վահանի առաջարկած թվի (50—60) միջև եղած տարբերությունը այնքան էլ մեծ չէ։*

Բ. ՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՂՋԱԿԵԶ

Էջ 405, տ. 31. Նրանք բաղկացած էին հայերից և հրեաներից ~ Լուսավորչի օրերում քրիստոնեություն էին ընդունել[3]: Վերջիններիս թվում էր և նրանց Զվիթա անունով ~ գերի բերվեցան Հրեաստանից:— *Աղբյուրը Խորենացու պատմության տեքստն է. «և զՀրեայսն խաղացուցեալ ի գերութիւն, և զայն Հրեայսն...զորս ածեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ ...Գերեցին և զայն Հրեայսն ...որք յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոս. ընդ որս և զԶուիթայ երէց Արտաշատու» (Գ, գլ. ԼԵ)։*

Էջ 408, տ. 8. ավերակ ու անմարդաբնակ է դարձնում ~ նա ավերակների վրա գնում է թագավորել։— *Հմմտ. Արտավազդի խոսքերը Արտաշեսին. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ» (Խոր. Բ, գլ. ԿԱ)։*

Գ. ԶՎԻԹԱ

Էջ 418, տ. 16. «Ասեն զորագլուխն ~ յերկիրն Պարսից» Փաւստոս:— *Բնաբանված է Բուզանդի պատմության Դ-րդ դպրության ԾԵ գլխի հատվածներից մեկը։ Րաֆֆին կատարել է կետադրական հավելումներ և բաց է թողել Զուիթն բառի Ն հոդը ...երէցն Զուիթ, այլ...)։*

Էջ 419, տ. 7. Մերուժանը զարմանալի նմանություն ուներ[2] յուր քրոջ որդուն —Սամվելին:— *Սամվելի և Մերուժանի նմանության մասին վկայում է Բուզանդը. «Սակայն յորժամ տեսին զգլուխն Մերուժանայ կանայք բանակին Մանուէլի, մեծաւ աղաղակաւ ճիչ բառնային. զի նորա այսպէս համարեցան թէ այն գլուխ Սամուէլի որդւոյ Վահանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերուժանն և Սամուէլ» (Ե, գլ. ԽԳ)։*

Էջ 421, տ. 28. Կանխահաս ծերությունը բոլորովին արծաթաշրել էր գլխի երկար գիսակները, բայց սև մորուքի մեջ դեռ ~ ճերմակի նետեր[4]:— *Աղբյուրը Բուզանդի*

տեքստն է. «Եւ նայէր Թագաւորն Պարսից Շապուհ, և տեսանէր զերեցն Զաւիթ այր բարձր և անձնեայ, և ի տիոց մանուկ. և հեր գլխոյն ալեորեալ էին, այլ մօրուքն դեռ տակաւին սեաւ եւ կային», զի հերքն սպիտակ են,և մօրուքն սեաւ» (Դ, գլ. ԾԶ)։

էջ 422, տ. 3. Ես Արտաշատի ~ գերի բերվեցավ Հունաստանից։— *Տե՛ս գլխի բնաբանը*

կարգս ընդունել եմ Ներսես Մեծից.— *աղբյուրը Զվիթա երեցի աղոթքի տեքստն է, որ մեջբերում է Բուզանդը. «և պատրաստեցեր զիս տառապեալս սնանել և ուսանել ընդ ձեռօք քո սրբոյ և մեծի և քո քահանայապետին Ներսիսի՝ քո պաշտօնէին, և ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութեան» (Դ, գլ. ԾԷ)։*

էջ 422, տ. 10. Մոռացանք ն՛ մեր լեզուն, որով Մովսեսը գրեց Եհովայի սուրբ կտակարանը։ *Հիմք ընդունելով Աստվածաշնչի մի շարք վկայություններ (Ելք, ԺԷ, 14, ԻԴ, 4, ԼԴ, 27—28, Թիվք, ԼԳ, 1—2, Երկրորդ Օրէնք, ԼԱ, 24 և այլն) քրիստոնեական աստվածաբանությունը Մովսես մարգարեին համարում է Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի (Ծննդոց, Ելք, Ղևտական, Թիվք, Երկրորդ Օրէնք-ընդհանուր անվանումը՝ Հնգամատյան) հեղինակ։ Արևմուտքի մեկնողական գրականության մեջ Հնգամատյանի գրքերը պարզապես անվանվում են «Մովսեսի գրքեր» (ըստ այդմ՝ Մովսեսի առաջին գիրք=Ծննդոց, Մովսեսի երկրորդ գիրք=Ելք և այլն)։ Րաֆֆին կիրառում է «Եհովայի սուրբ կտակարան» արտահայտությունը, քանի որ, ըստ Աստվածաշնչի վկայությունների, Մովսեսը Հնգամատյանը գրել է Եհովայի՝ հրեաների գերագույն աստծո, ներշնչմամբ և պահանջով «Եւ ասէ տէր ցՄովսէս. գրեա զայդ առ ի յիշատակ ի գիրս» (Ելք, ԺԷ, 14), «Եւ ասէ տէր ցՄովսէս. գրեա՛ դու քեզ զպատգամս զայսոսիկ» (Ելք, ԻԴ, 4) և այլն։*

էջ 423. տ. 2. Գերությունը ~ միշտ հրեից ճակատագիրն է եղել ~ երբ նրանք գերի էին Եգիպտոսում, Փարավոնների ձեռքում։— *Ըստ Աստվածաշնչի Եհովան հրեաներին գուշակում է 400-ամյա գերություն Եգիպտոսում։ «Եւ ասացաւ առ Աբրամ. Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկրի, որ ոչ իւր իցէ։ Եւ ծառայեցուսցեն զնոսա եւ չարչարեսցեն եւ տառապեցուսցեն զնոսա ամս չորեք հարիւր» (Ծննդոց, ԺԵ, 13)։ Ժամկետը լրանալուց հետո, Մովսեսի առաջնորդությամբ, Իսրայելի ժողովուրդը ազատագրվում է եգիպտական գերությունից (տե՛ս Աստվածաշունչ, Գիրք Ելից)։*

էջ 423, տ. 5. ապա գերի գնացին Բաբելոն ~ ողբում էին կարոտյալ Երուսաղեմը։— Բաբելոնյան գերություն — *մ. թ. ա. 7-րդ դարի վերջին հրեական ժողովուրդը կորցնելով քաղաքական անկախությունը, ընկավ Բաբելական թագավորության տիրապետության տակ։ Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսոր երկրորդը, ամրացնելով իր գահը, հարձակվեց Երուսաղեմի վրա, հիմնահատակ ավերեց այն և բնակիչներին գերի տարավ Բաբելոն (586 թ. մ. թ. ա.)։ Գերիների մի մասին Նաբուգոդոնոսորը բնակեցրեց Բաբելոն քաղաքում, մնացածներին ցրեց երկրի տարբեր գավառներում։ Րաֆֆին հրեաների տառապանքները նկարագրում է ըստ 136-րդ Սաղմոսի տեքստի (Աստվածաշունչ, Գիրք Սաղմոսաց Դաւթի, ՃԼԶ, 1—9)՝ օգտագործելով նաև Միքայել Չամչյանցի մեկնությունները (Մեկնութիւն սաղմոսաց, հ. Բ., Վենետիկ, 1821, էջ 227—242)։*

Երկար, շատ երկար ժամանակ.— *Հրեաների բաբելական գերությունը տևեց 70 տարի (Երեմ., ԻԵ, 11)։*

Եփրատի ափերի մոտ նստած.— *Հմմտ. «Առ գետս բաբելացւոց՝ անդ նստէաք» (Գիրք Սաղմոսաց, ՃԼԶ, 1), ըստ Զամչյանցի մեկնության՝ «նստեալ յեզերս եփրատայ» (Նշվ. գիրքը, էջ 229)։*

Բաբելոնի ուռիներից կախ էին տալիս իրանց սուրբ կտակարանները.— *Հմմտ. «ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր» (Գիրք Սաղմոսաց, ՃԼԶ, 2), ըստ Զամչյանցի «Կամի ասել. ի նստիլ մեր առ գետովք բաբելացւոց և ի լալ մեր անդ ի մէջ ուռեաց, կտակարանք մեր եւ գրեթէ կային կախեալ զուռի ծառոց՝ այնոցիկ գետոց. որ է ասել. ի կալ մեր ի բաբելովն՝ անգործ և անպտուղ մնային կտարականք մեր. զի ոչ կարէաք կատարել զայնոսիկ պաշտամունս» (Նշվ. գիրքը, էջ 231)։ 1856 թվականին գրած «Իսրայելը Բաբելոնում» չափածո տեքստում, որտեղ մշակված է 136-րդ սաղմոսն ամբողջությամբ, Րաֆֆին, հետևելով Զամչյանցի այս տողին տրված այլ մեկնությանը, Կտակարան բառի փոխարեն կիրառում է քնար բառը.*

Պանդուխտ երկրի ուռիներին
Մեր քնարները՝ տխուր և մունջ,
Մենք կախեցինք, և զեփյուռին
Հնչեն լարերն դառն մրմունջ։
(ԵԺ. 12 հատ., հ. 1, էջ 44)

Ըստ Զամչյանցի՝ «Մարթ է աստ բառիւս կտակարանք՝ իմանալ և զնուագարանս ըստ որում են գործիք երգելոյ զրանս կտակարանաց, կամ իմանալ զերգարանս, յորս պարունակէին բանք կտակարանաց» (Նշվ. գիրքը, էջ 232)։ Րաֆֆին իր այս փոփոխությունը չի օգտագործել վեպի տեքստում, քանի որ «պատմականորեն» Զվիթա երեցին չէր կարող ծանոթ լինել Զամչյանցի մեկնությունը։

և ողբում էին կարոտյալ Երուսաղեմը.— *Հմմտ. «անդ նստէաք եւ լայաք», «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղեմ, մոռասցի զիս աջ իմ։ Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղեմ, սկիզբն ուրախութեան իմոյ» (Գիրք սաղմոսաց, ՃԼԶ, 1, 5—6)։*

էջ 423, տ .8. Այն ժամանակն պանդխտության մեջ ~ մինչև Կյուրոսը ~ փառքն ու պայծառությունն ստացավ[7]:— *Աքեմենյան հարստության հիմնադիր Կյուրոս մեծը՝ գրավելով Բաբելոնը (538 թ. մ. թ. ա.), հրեա գերիներին հայրենիք ուղարկեց այն «սուրբ անոթներին» հետ միասին, որ հափշտակել էր Նաբուգոդոնոսորը Երուսաղեմը ավերելիս և հրամայեց ամեն կերպ նպաստել Երուսաղեմի և սուրբ տաճարի վերականգնմանը (տե՛ս Աստուածաշունչ, Եսայ. ԺԴ, 1—17, 19, 21, ԻԱ, 3—8, ԽԵ, 1—4, ԽԷ, 11, Երեմ., Ծ, 24, ԾԱ, 13, 36, 39, 57, Դանիէլ Ե, 1—29, ԽԷ, 12—14, Գիրք Եզրի առաջին, Ա, Բ, 1—15)։*

էջ 423, տ. 16. Լսում ենք, որ մեզ պետք է տանեն հեռավոր Սպահան[8]:— *Աղբյուրը Խորենացու տեքստն է. «և զՀրեայսն խաղացուցեալն ի գերութիւն ... զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան» (Գ, գլ. ԼԵ)։*

էջ 423, տ. 18. Կնստենք այնտեղ՝ Զարդա-Ռուդի ափերի մոտ ~ մեր սուրբ Երուսաղեմը:— *Զվիթա երեցը Մերուժանին հանդիմանում է ըստ 136-րդ սաղմոսում նկարա-*

գրված խրախճանքին։

Մասիսը՝ մեր սուրբ Սիոնը.— *Սիոն լեռ դառնում է Երուսաղեմի հարավ արևմուտքում։ Աստվածաշնչում Սիոն հատուկ անունը կիրառվում է հրեական ժողովրդի, աստծո տան և կացարանի, աստծո քաղաքի, տեղի, որտեղից պիտի գա Իսրայելի փրկությունը և այլ իմաստներով։*

էջ 423, տ. 33. Ծառաները պետք է հնազանդ լինեն իրանց տիրոջը, այդ է պատվիրում այն Ավետարանը.— *Տե՛ս Ավետարան, Առ եփեսացիս թուղթ, Զ, 5, Առ կողոսացիս թուղթ, Գ, 22, Առ Տիտոս թուղթ, Բ, 9—10, Թուղթ Պետրոսի առաքելոյ առաջին, Բ, 18, Պավղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս թուղթ, Զ, 16։*

էջ 424, տ. 27. Երբ ճորտը համբերատար է լինում ~ միշտ սպասում է Քրիստոսին — յուր սիրելի Մեսիային։— Մեսիա — *Հին Կտակարանում հրեաներից սպասվող աշխարհի փրկչի անվանումը՝ եբրայերեն մաշիախ բառից, , որ նշանակում է օծված (հունարեն՝ χριστος — Քրիստոս) (Ավետարան ըստ Յովհաննու, Ա. 41)։ Ըստ Նոր Կտակարանի այդ Փրկիչը Հիսուս Քրիստոսն էր՝ աստծո որդին, (Ավետարան ըստ Յովհաննու, Դ, 25—26), բայց քանի որ հրեաների կրոնական պատկերացումներում չէր ընդունվում Մեսիայի մասին մարգարեության այն մասը, ըստ որի Մեսիան պետք է երկիր իջնի և իր տառապանքով և մահով քավություն առնի, ապա Հիսուս Քրիստոսը նրանց կողմից դատապարտվեց մահվան, իսկ ժողովուրդը շարունակեց սպասել Մեսիայի գալուստին։*

էջ 425, տ. 6. Հովիվը պետք է յուր հոգին ~ նրա պահպանության համար.— *Տե՛ս նույն գլխի բնագիրը, նաև Ավետարան ըստ Յովհաննու Ժ, 11, 15։*

էջ 425, տ. 25. Ոչ սակավ վրդովված էին ~ որ մեզ Պարսկաստանում չխանգարեին։— *Երկու մոգերի ուղղակի խոսքերի հիմքում ընկած է Խորենացու վկայությունը, ըստ որի Միրուժանն ու Վահանը շարախոսում են Զվիթային Շապուհ արքայի մոտ, որ երբ նա «այսր սակս եկն ընդ գերութիւնն, զի խրատեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան» (Դ, գլ. ԼԵ)։*

էջ 426, տ. 20. Իսկ նրա մահը (երբ հանգամանքները ստիպեին մեզ ոչնչացնել նրան).— *Զվիթա երեցը մահվան դատապարտվեց Շապուհի հրամանով զրադաշտականությունը չընդունելու համար (Խոր. Դ, գլ. ԼԵ, Բուզ. Դ, գլ. ԾԶ, ԾԷ)։*

Դ. ԱՐԱՔՍԻ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ

էջ 432, տ. 35. որ կոչվում էր «Իշխանաց կղզի»։— *«Իշխանաց կղզի»-ն պատմի մեջ կիրառված երկրորդ տեղանունն է (առաջինը «Արտասուքի աղբյուր»-ն է), որ վկայված չէ աղբյուրներում, այն ստեղծել է Րաֆֆին, այդ պատճառով էլ, ինչպես առաջին դեպքում («Արտասուքի աղբյուր»), այնպես էլ հիմա տեղանունը գրել է չակերտների մեջ։ «Արձագանք» շաբաթաթերթում, վեպի տեքստի նույն հատվածի մեջ* Իշխանաց *ձևի փոխարեն գրված է* Իշխանական *ձևը (տե՛ս «Բնագրային տարբերությունները» բաժինը)։ Րաֆֆու փոփոխությունը պայմանավորված է մի կողմից կղզու պատկանելության ըն-*

գծումով (Իշխանաց = Իշխաններին պատկանող — այս խմբատի մուտքը պատումի մեջ պատճառաբանելու համար Րաֆֆին ավելացրել է «և որի մեջ Սյունյաց իշխաններից մեկը բաց էր թողել վայրենի անասուններ» շարույթը), մյուս կողմից պատմական տեղանուններին բաղադրյալ ձևերի (ք—հոգնակերտով վերջացող) սովորական կիրառություններ աղբյուրներում (օր. Սիսիք—Սիսնաց աշխարհ, Գամիրք — Գամրաց երկիր, Բզնունիք— Բզնունեաց ծով՝ ուստի և Իշխանիք—Իշխանաց կղզի՝ որպես պատմականորեն հարազատ ձև՝ իր իսկ ստեղծած անվան համար)։

էջ 433, ա. 26. Մի ժամանակ այդ կողմերում ~ Հայաստան գերի բերված միջագետցիներ[2]։— *Երբ Երվանդյան Տիգրանը հաղթում է Աժդահակին, նրա առաջին կնոջը՝ Անույշին և ուհմակիցներից 1 0000 հոգու գերի է վարում Հայաստան և մի մասին բնակեցնում է Արաքս գետի և Արարատ լեռան միջև ընկած տարածքում. «բնակեցուցանէ յարևելից ուստի մեծի լերին մինչև ի սահմանս Գողթան ... և որ այլք առ եղերբ գետոյն» (Խոր. Ա, գլ. Լ)։*

Մի ժամանակ — *ըստ Չամչյանցի՝ 552 թ. մ. թ. ա.։*

էջ 434, ա. 3. ամենահին ավանդությունը, ըն հայ մարդը ~ սկսյալ այն օրից, երբ Նոյը Արարատ լեռան ստորոտում տնկեց աշխարհի առաջին այգին[3]։ ~ որ ոգևորում էր Գողթնյաց երգիչներին[4]։— *Այս ավանդության համար հիմք է ծառայել Աստվածաշնչի վկայությունը. «Եւ սկսաւ Նոյ՝ այր հողագործ, գերկիր գործել և տնկեաց այգի։ Եւ արբ ի գինւոյն եւ արբեցաւ» (Ծնունդք, Թ, 20—21)։ Նոյի տնկած այգին, ըստ հայկական ավանդության, գտնվում էր Գողթան գավառի Ակոռի գյուղում՝ Արարատ լեռան լանջին։ Գողթան գավառի ընտիր գինիների մասին վկայում է Խորենացին. «Յայտնեն զայս Հրաշարտայէս և Թուլեացն երգք, զոր պահեցին անմոռանալով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեէտ գաւառին Գողթանն» (Ա, գլ. Լ)։ Տե՛ս Ինճիճեան, Հնախօսութիւն, Հ. Ա, էջ 71, 274, Ստորագրութիւն, էջ 212—217։*

էջ 434, ա. 28. Հռիփսիմյան կույսերի խումբը երկար պատսպարված էին Վաղարշապատի այգիների հնձաններում[5]։— *Ըստ Ագաթանգեղոսի և Խորենացու վկայությունների Հռիփսիմյան կույսերը՝ փախչելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից, գալիս են «յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք ... Այնուհետև եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանեայն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսէ» (Ագաթ., էջ 90, 92)։ Մանրամասն տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 297—325, «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանցն» և «Ի հէշատակի Սրբոցն Հռիփսիմեաց եւ նորուն վկայակցացն» երկերը։*

էջ 436, ա. 12. Այս տեսակ անդունդներից մեկի մեջ ~ Արտաշեսի ավերի մոտ[7]։— *Հմմտ. «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա ... Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի, որսալ կինճս և իշավայրիս զակամբք գինայ, և աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածեալ երիվարաւն՝ անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի» (Խոր., Բ, գլ. ԿԱ)։*

էջ 441, ա. 9. Խալիս էր Սյունյաց իշխանը ~ նարնջեր պարում կին[12] ~ ալիկալ

խռախության մեջ:— *Այս հատվածը գրելիս Րաֆֆին օգտագործել է Սյունյաց Բակուր նահապետի ընթրիքի նկարագրությունը. «Եւ եղև յաւուր միում կոչել զնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց. և յուրախանալն գինւով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ» (Բ, գլ. ԿԳ)։*

էջ 443, տ. 32. Վազելու սովորած էր նա սկսյալ մանկությունից ~ գլխավոր նրաճանցներից մեկն էր եղած[14]:— *Եղջերու որսալու այս տեսարանը նկարագրելիս Րաֆֆին նկատի է ունեցել Ղազար Փարպեցու վկայությունը՝ հայ իշխանաց պատանիների որսորդության մասին. «ոմանք զհետ ցռուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն ևեթ բաբբառեցին» (Ղազար, էջ 24)։ Ըստ Ղուկաս Ինճիճյանի վերլուծությունների որսորդությունն առհասարակ հայ նախարարների որդիների ֆիզիկական դաստիարակության մեջ մեծ նշանակություն ուներ։ Խոսրով Փոքրի և Երվանդ Արշակունու տնկած անտառները նա համարում է յուրատեսակ մարզաններ և կրթարաններ «ի պէտս կրթութեան մարմնոյ շարժման, որ կարի հարկաւոր էր վասն պատերազմականացն, մանաւանդ մեծացն. առ որ պէտս ունէին առաւել մանկունք նախարարաց մերոց ուսկս անդադար ի վերայ կալոյ պատերազմաց» (Հնախօսութիւն, հ. Գ, էջ 138)։*

էջ 445, տ. 37. Այդ առաջին անգամն էր, որ նրանք գտնվում էին միասին և այս տեսակ մեկուսացած առանձնության մեջ:— *Սամվելի և Վահանի «մեկուսացման» մասին վկայում է Թովմա Արծրունին. «Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցեն ինչ վասն որոց եկեալ էին, իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից» (Արծր., էջ 106)։ Պատումի շարունակության մեջ Վահանի և Սամվելի երկխոսության աղբյուրային հիմքը Արծրունու այս հատվածի «Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր» և «իբր այն թէ խորհիցեն» շարույթների արտահայտած ընդհանուր իմաստն է, ըստ որի Րաֆֆին ստեղծել է պատումնային իրավիճակը։ Մյուս կողմից, Րաֆֆին նկատի է ունեցել Ղուկաս Ինճիճյանի վերլուծությունը, ըստ որի «Եւ արդարև այս արուեստ որսորդութեան ի բազում աղետալի պատահարս ետ մատնել զոմանս. և եղև արուեստ ինչ՝ մանաւանդ թէ որոգայթ սպանանելոյ զարս երևելիս» (Ինճիճեան, Հնախօսութիւն, հ. 3, էջ 139)։ «Որսորդությունը երևելի մարդկանց սպանելու որոգայթ» իմաստը Րաֆֆին զուգադրել է Արծրունու վկայության հետ՝ այդ սպանությունը ընթերցողին ներկայացնելով իր «պատմական» ձևի մեջ։ Այլ կերպ ասած, Սամվելն իր հորը սպանում է «պատմականորեն» ամենատարածված ձևով, դա է պատճառը, որ նախորդ գլխի վերջում հեղինակը գրում է. «Սամվելը ոչինչ չէր խոսում։ Նա արդեն յուր ցանկությունը հասած էր համարում» այն բանից հետո, երբ Արտավազդը որսորդության մասին «խոսք է նետում» և Մեհրուժանը խոստանում է «որսորդության կազմակերպել»։*

էջ 449, տ. 12. Արյաց արքայից արքան յուր դուստրերից մեկը նրան կնության տա, այն բազմաճարտար օժիտով ~ փեսան լինելու:— Բազմաճարտար օժիտ — *ըստ Խորենացու Շապուհը Որմիզդուխտին կնության տալով Մեհրուժանին՝ բազում շեներ և դաստակերտներ պարգևեց նրան (Գ, գլ. ԼԶ)։*

Էջ 450, տ. 13. **Նույն օրհասը, որ վիճակվեցավ քաջի Արտաշեսի չար որդուն[16] ~ մինչև այսօր տանջվում է նա:**— *Րաֆֆին մշակել է Արտաշեսի անեծքի տեքստը՝ ուղղված Արտավազդին. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զլոյս մի տեսցես»։ Զրուցեն զմանէ և պատմեն, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք» (Խոր. Բ, գլ. ԿԱ)։*

Էջ 456, տ. 10. **Բայց որդու սուրը արյան մերկացած էր: Նա շողշողաց և կայծակի նման մխվեցավ հոր սրտի մեջ: Նա ընկավ.**—*Րաֆֆին մշակել է Արծրունու տեքստի վերջին մանրամասնությունը՝ Սամվելի՝ հորը սպանելու մասին. «իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիզղնին՝ աղեղոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց» (Արծր., էջ 106)։*

Ե. ՄԱՅՐԸ

Էջ 459, տ. 29. **«Հռաքէլ լայր ~ ոչ էին» Մատթէոս:**— *Տե՛ս Աւետարան ըստ Մատթէոսի, Բ. 18։ Հռաքելը կամ Ռաքելը, ըստ Աստվածաշնչի, հրեական նահապետներից Հակոբի կինն էր, Հովսեփ գեղեցիկի մայրը։ Երբ Աստվածամայրը մանուկ Հիսուսին փախցնում է Եգիպտոս, բարկացած Հերովդեսը կոտորել է տալիս Բեթղեհեմի և նրա շրջակայքի 2 տարեկանից փոքր բոլոր մանուկներին։ Ավետարանիչը Բեթղեհեմի կամ հրեա մայրերի վիշտը բնութագրելիս նրանց անվանում է Հակոբի կնոջ՝ Հռաքելի անունով, քանի որ վերջինիս գերեզմանը գտնվում էր Բեթղեհեմի մոտ («Հռաքել լայր»՝ այսինքն — «Բեթղեհեմի մայրերը կամ հրեա մայրերը ողբում էին իրենց զավակների մահը և չէին ցանկանում մխիթարվել, քանի որ նրանք չկային»)։ Տե՛ս նաև Աստվածաշունչ, Գիրք Երեմիայի մարգարէի, ԼԱ, 15։*

Էջ 471, տ. 6. **Նա հրեշավոր Նեռն է, որ հայտնվել է մեր խաղաղ աշխարհում ~ յուր ապականությունները մեր աշխարհում:— Նեռ** *կամ* **դերաքրիստոս** — *ըստ Պողոս առաքյալի թղթի տեքստի (Աւետարան, Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ, Բ, 3—11) Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ հայտնվելու է սատանայի առաքյալը, անօրենության մարդը, «որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ Աստուած կամ պաշտօն. մինչև նստել նմա ի տաճարին Աստուծոյ, և ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ»։ Նա շեղելու է մարդկանց ճշմարիտ հավատի ուղուց դեպի մեղքի ուղին, ապականելու է աշխարհը, իսկ հետո ոչնչվելու է Աստուծո կամքով՝ հայտնվելով Քրիստոսից («զոր տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ»)։ Նրա տիրապետությունը աշխարհում տևելու է երեք և կես տարի, այսինքն մոտ այնքան, որքան անցել էր Մերուժան Արծրունու դավաճանության ժամանակից (ըստ Ջամչյանցի Մերուժանը Շապուհի մոտ գնաց 377-ին և սպանվեց 381-ին՝ Ձիրավի ճակատամարտում։ Րաֆֆու նկարագրած դեպքերը, ըստ Ջամչյանցի, պետք է որ տեղի ունենային 380-ից մինչև 381-ը ընկած ժամանակահատվածում)։ Քրիստոնեական աստվածաբանությունը Դերաքրիստոս կամ Նեռ էր համարում մի կողմից բոլոր հերձվածողներին, մյուս կողմից քրիստոնեության հալածողներին։ Ըստ այդմ Հակաքրիստոսի հետ է նույնացվել Ներոն (54—68) կայսրը, Մուհամեդը, նոր ժամանակներում Նապոլեոն առաջինը, երրորդը և այլն։ (Տե՛ս Նոր բառգիրք, հ. 2, էջ 1413)։*

Էջ 490, տ. 30. **Շուտ իջեք ձիերից և ձեր վահանները դնելով վիրավորի վրա, պահպանեցեք նրան:**— *Րաֆֆին թարգմանաբար օգտագործել է Բուզանդի տեքստը. «Իջէք և*

դիր զվահանսդ ի վերայ նորա, և պահեցէք» (Ն, գլ. ԼԷ)։ Այս խոսքերն արտասանում է Համազասպյան սեպուհը, երբ Մանուել Մամիկոնյանի և Վարազդատի միջև ծագած կռվի ժամանակ վիրավորված Գարեգին Ռշտունին նրանից օգնություն է խնդրում։

Ձ. ՈՂԱԿԱՆ ԱՄՐՈՑԸ

Էջ 491, տ. 7. «Ատրուշանս շինէին ~ զմայր իւր»... Փաւստոս — *Վեպի բնագրում «և բազում յինքեանց սեփհականան շինէին ատրուշանս» շարույթը բաց է թողնված։ Տվյալ դեպքում Րաֆֆին «վերականգնել» է այն, քանի որ սույն գլխում այդ հատվածը անմիջականորեն մշակված է (հմմտ. «այժմ նույն եկեղեցու տեղում շինված էր մի պարսկական ատրուշան»)։ Վեպի բնագրի համեմատությամբ հեղինակը «եհար սատակեաց» շարույթից հետո բաց է թողել «զՎահան զհայր իւր» հատվածը, քանի որ այն արդեն մշակվել է «Արքայի որդայինները» գլխում և «եւ Որմիզդուխտ ... զքոյր Շապուհ Պարսից թագաւորին» հատվածը։ Բուզանդի տեքստում «յինքեանց սեփհականան շինէին ատրուշանս» շարույթի մեջ* յինքեանց *ձևի փոխարեն գրված է* յիւրեանց *ձևը։*

Էջ 491, տ. 31. Ողական ամրոցը տանում էր Գարնանամուտք, որ ~ էր պարսից տաշեմուտք[2]։— *Պարսից Գարնանամուտի տոնը (նեվրուզ) համընկնում է գարնանային գիշերահավասարին (մարտի 21)։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հառաջաբան 5
Առաջին գիրք 11
Փակագծի մեջ 149
Երկրորդ գիրք 188
Երրորդ գիրք 388
Բնագրային տարբերություններ 501
Ծանոթագրություններ 507

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա

ՐԱՖՖԻ

Երկերի ժողովածու 12 հատորով

Հատոր ութերորդ

ՍԱՄՎԵԼ

Академия наук Армянской ССР
РАФФИ
Собрание сочинений в 12-ти томах
Том восьмой
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1986

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլհակյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Պ. Պոտոյան

ИБ 5160

Հանձնված է շարվածքի՝ 12. 08. 1986։ Ստորագրված է տպագրության՝ 24. 11. 1986 թ.։ Չափսը $60\times84^1/_{16}$։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը բարձր, 35,34 պայմ. տպ. մամ., 35,1 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 2052։ Գինը՝ 3 ռ. 40 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Тяряна, 91.

A ii/74390